Հայերի դատը
մարդկության դատն է ...

Այն ժողովուրդը,
որ չի ուզում մեռնել,
երբեք չի մեռնի:

Արնասու Փրանս

Franz Werfel

DIE VIERZIG TAGE DES MUSA DAGH

ROMAN

YEREWAN «LUIS» 1990

Ֆրանց Վերֆել

ՄՈՍԵՍԻ ԼԵՌԻՆ ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԸ

ՎԵՊ

ԵՐԵՎԱՆ «ԼՈՒՅՍ» 1990

ԳՄԴ 84.4Ավ
Վ. 541

Առաջաբանը՝ Մ. Դուդինի
Վերջաբանը՝ Մ. Փիրումովայի

Վերֆել Ֆ.

Վ. 541 *Մուսա լեռան քառասուն օրը։ Վեպ/Ֆրանց Վերֆել; [Գերմ. թարգմ. Պ. Միքայելյանը։ Առաջաբանը՝ Մ. Դուդինի։ Վերջաբանը՝ Մ. Փիրումովայի]. — Եր.։ — Լույս, 1990. — 919 էջ։*

Արևմտահայաստանի Սուեդիայի շրջանի հայ գյուղերի բնակչության՝ երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության դեմ կյանքի ու մահու օրհասական պայքարն է արտացոլված Ֆր. Վերֆելի այս գրքում։

Վեպի հիմքում ընկած պատմական հերոսամարտը Մուսա լեռան վրա, որ տևեց քառասուն օր, ի հայտ բերեց հայ ժողովրդի ազատասեր ու հերոսական ոգին, ապրելու և գոյատևելու անկոտրում կամքը։ Սա մի սովորական վեպ չէ՝ սովորական իմաստով, այլ մի դյուցազներգություն, որի իսկական հերոսը հայ ժողովուրդն է։

Իր գաղափարական ուղղվածությամբ ու բուն նպատակադրումով այն միաժամանակ ունի նաև խիստ արդիական հնչեղություն։

Վեպը հասցեագրված է ընթերցող լայն հասարակությանը։

Վերահրատարակվում է ըստ «Հայպետհրատի» 1964 թ. հրատարակության։
Առաջաբանը, վերջաբանը և ծանոթագրությունները վերցված են «Խորհրդային գրական» 1984 թ. ռուսերեն հրատարակությունից։

Վ 47030100100 (8) 184. 1990 / 702 (01) 1990 ԳՄԴ 84.4Ավ

Франц Верфель

СОРОК ДНЕЙ МУСА-ДАГА

Роман

(на армянском языке)

Ереван «Луйс» 1990

© *«Լույս» հրատարակչություն, առաջաբանի, վերջաբանի, ծանոթագր. թարգմ., ձևավորելու համար, 1990*

Արվեստագետի բարդությունը

Արվեստագետի ուղին երբեք դյուրին չի լինում։ Եվ որքան մեծ է արվեստագետը, այնքան ավելի բարդ է այդ ուղին և ողբերգական, քանի որ արվեստագետը, գործ ունենալով բովանդակ աշխարհի հետ, պատասխան է տալիս ամեն ինչի համար,— դա իր պարտքն ու պարտականությունն է իր համոզմունքի ու խղճի առաջ, դա իր ճակատագիրն է, կարեկցանքն ու օգնությունը, իր իմացությունն է և նախազգուշացումը,— ամրապնդված իր կրած հարվածներով, իր ապրած ողբերգության փորձով։

Արվեստագետը տվայտում է մեն-մենակ, բայց նրա անհատականության ճակատագիրը համապարփակ է։

Ինձ այսպես է ներկայանում նաև Ֆրանց Վերֆելի մեծաշնորհ անհատականությունն իր բոլոր ճառագումներով ու տառապանքներով՝ դեպի իր ստեղծագործական սխրանքի բարձունքը տանող ճանապարհին և իր տրորված կյանքում՝ քսաներորդ դարի արնաներկ ջրապտույտների մեջ։

Ֆրանց Վերֆելը ծնվել է Պրագայում, 1890-ին, հրեա հարուստ վաճառականի ընտանիքում։ Գիմնազիան ավարտելուց հետո ուսանել է Լայպցիգում և Համբուրգում։

Ճշմարտության որոնումների մեջ նրա մտերիմներն են եղել Կաֆկան և էգոն Էրվին Կիշը։

Նա շատ վաղ է հիվանդացել «Աշխարհը բոլոր մարդկանց հոգևոր նորոգման ճանապարհով վերափոխելու» անբուժելի անհանգստությամբ։

Նա քրիստոնեությունից նետվել է դեպի մարքսիզմը։ Եվ այդպես էլ, մինչև իր ստեղծագործական հանճարի վերջին մարումը, հաստատուն հող չի գտել իր անհանգիստ որոնումների համար։

Նա գրել է բանաստեղծություններ ու դրամաներ, ակնարկներ ու խոհագրություններ, վեպեր ու պամֆլետներ և բոլոր ժանրերում ասել է

իր խոսքը, թողել իր արտասովոր անհատականությունը, որ այսօր էլ հետաքրքրում է ոչ միայն գրականության պատմաբանին։

Նա վախճանվել է Կալիֆորնիայում, 1945-ին, և վտարանդու հիասթափությունների մշուշը, լույսի ցոլք առած հաղթանակի հրավառությունից, ի վերջո իջել է նրա աճյունի վրա օտար հողում։

Նա որոնող խառնվածք էր, օժտված կանխազգացման հաղվագյուտ ձիրքով և կոահման պայծառատեսությամբ։

Նա պատկանում է քսաներորդ դարի եվրոպական մշակույթի լավագույն գլուխների թվին, Ռոմեն Ռոլանի և Թոմաս Մանի, Լիոն Ֆեյխտվանգերի և Պեր Լագերկվիստի հետ միաժամանակ նա առաջինն է սկսել իր անձնական կռիվը ֆաշիզմի դեմ։ Դաժան կռիվ էր դա, մահու և կենաց կռիվ։

Եվ ինչպես ամեն մի արվեստագետ, որ ջանում է սեփական ճակատագրով ըմբռնել իր ժամանակը, իր ստեղծագործական անհատականությամբ անցյալը կապել ապագային, Ֆրանց Վերֆելն ունեցել է իր ողբերգությունը և իր բարձունքը նույնպես։

Եվ այդ բարձունքն անմահացրեց նրան։

Ես խոսում եմ «Մուսա լեռան քառասուն օրը» էպիկական վեպի մասին։

Այդ գիրքը 1933-ին է գրվել։ Դա առաջին կրակոցներից, առաջին նախազգուշացումներից մեկն էր իր արյունռուշտ էությամբ նողկալի ֆաշիզմի հայտնվելու մասին՝ ուղղված և՛ Գերմանիային, և՛ բովանդակ մարդկությանը։

Գիրքը հստակ ու համոզիչ խոսում էր այն մասին, որ Հիտլերն ու Մուսոլինին քսաներորդ դարում ունեցել են իրենց նախորդները, զգուշացնում էր Եվրոպային և ամբողջ աշխարհին, որ այդ աշակերտներն իրենց ուսուցիչներից ավելի հեռուն կգնան և՛ ընդգրկման մասշտաբներով, և՛ իրենց արյունալի գործերի կատարելագործումով։

Գիրքը մարդկանց զգոնության էր կոչում։ Դա ոչ միայն Ցեղասպանության հուշարձան էր, այլև ամենից առաջ դիմադրության դասագիրք։ Գիրքը դիմակազերծ էր անում և՛ մարդկության դահիճներին, և՛ նրանց արյունոտ փիլիսոփայությունը։

Ֆրանց Վերֆելը գիտեր, որ դահիճը, ամեն ինչից բացի, զարշելի և վտանգավոր է ևս մի հատկությամբ՝ մի անգամ առնելով մարդկային արյան համը, նա այլևս չի կարող ապրել առանց դրա։

Ավելի քան կես դար Ֆրանց Վերֆելի գիրքը մաքառել է մարդկության դահիճների դեմ և շարունակում է իր պատմական ազնիվ առաքելությունը մինչև օրս։ Գիրքը թարգմանվել է եվրոպական գրեթե բոլոր լեզուներով, դաստիարակել է մարդու այն կարողությունը, որ իր ճակատագրի դժվար ժամին սեփական անձը հանուն եղբայրների զոհաբերելն է։ Սովորեցրել է այդ բարձրագույն սխրանքը, և ֆաշիզմի՝ քսաներորդ դարի այդ ամենանողկալի, ամենից ահավոր չարիքի ջախջախման մեջ գիրքը գուցե և ունի դեռևս ըստ արժանվույն չգնահատված ծառայություն։

Այս գիրքը հիմա էլ մարտական շարքի մեջ է։ Նա շարունակում է Ֆրանց Վերֆելի ոգու վսեմ գործը, և նրա ներգործության հորիզոններն անսահման են դեռևս։ Եվ այն, ինչ մի ժամանակ ասել է Ֆրիդրիխ Շիլլերը, թե այն մարդը, որ պետք է իր ժամանակի լավագույն մարդկանց՝ պետք է նաև բոլոր ժամանակներին, ամբողջովին վերաբերում է Ֆրանց Վերֆելի և՛ ճակատագրին, և՛ նրա «Մուսա լեռան քառասուն օրը» բարձունքային գրքին։

Թվում է ինձ, որ Յուլիուս Ֆուչիկի վերջին խոսքը, որ նա ասել է ի լուր աշխարհի՝ «Մարդիկ, ես սիրում եմ ձեզ։ Զգո՛ն եղեք», հնչում է իբրև ստույգ մի բնորոշում իր ավագ գրչակից Ֆրանց Վերֆելի գրքի համար, քանի որ և՛ մեկի, և՛ մյուսի ձեռքը շարժել է միևնույն համոզմունքը, միևնույն հավատարմությունը մարդկային եղբայրությանը, միևնույն վստահությունն առ այն, որ դահիճները պարտելի են, որքան էլ անողոք լինեն, մանավանդ, որ դաժանությունն այլ բան չէ, քան երկչոտության հակառակ երեսը։

Երևանում, Հրազդանի գահավեժ ափին կա մի վշտալից հուշարձան Ցեղասպանության զոհերի հիշատակին՝ Թուրքիայի պատմության ամոթանքի հուշարձանը։ Սանձազերծ ազգայնամոլության գործած ոճրի հուշարձանը, կարելի է ասել՝ հուշարձանը քսաներորդ դարում ֆաշիզմի գործած առաջին արարքի, որ 1915-ին ոչնչացրեց հայության կեսը։ Դաժանության հուշարձանը։ Աշխարհիս երեսին ապրող բոլոր ժողովուրդներին նախազգուշացնող հուշարձանը։

Երբ ես լինում եմ այնտեղ, լսում եմ Կոմիտասի ողբը, շվարմունքի և տագնապի խորաթափանց ողբը, մարդկային ոգու և տիեզերքի ողբը՝ իր անլռելի հնչողությամբ ուղղված գալիք ժամանակների մարդկային բոլոր հոգիներին՝ այդ ողբը իմ հոգու մեջ միահյուսվում է Մայդանեկի և Օսվենցիմի, Կլոոգի և Բուխենվալդի ողբին, Լիդիցեի և Խատինի մանուկների ճիչերին։

Բայց Ֆրանց Վերֆելը իր գրքում դիմում է ոչ այնքան զոհերին, որ-

քան հերոսներին, դահիճներին քաջաբար դիմադրելու օրինակին, կոչ է անում ոչ թե հլու ենթարկումի, այլ անվեհեր դիմադրության։

Նրա գրքի հերոսը Գաբրիել Բագրատյանն է, հարուստ ծնողների զավակ, որ հումանիտար փայլուն կրթություն է ստացել Եվրոպայում։ Թուրքական բանակի սպա է նա, պատերազմական գործողությունների բալկանյան թատերաբեմում պարգևներ է ստացել քաջության համար, իր ֆրանսուհի կնոջ և տղայի հետ Փարիզից վերադարձել է Թուրքիա, իր հանգուցյալ եղբոր կալվածքն՝ իբրև ժառանգ, եկել է Մուսա լեռան ստորոտը, իր մանկության երկիրը, իր ազգակից հայերի աշխարհը։

Նա ամեն ինչ ունի։ Դրամ։ Ընտանիք։ Հիանալի տուն, իր հողը և հաստատուն դիրք հասարակության մեջ։

Բայց բարեկեցության այդ ամբողջ թվացյալ աշխարհը, երերալով, փուլ է գալիս անկահելի դեպքերի ճնշման տակ։

Այն ժամանակվա Թուրքական կառավարության ղեկավարներից մեկը՝ Էնվեր փաշան, դիմելով խաբեության, հայերից հավաքում է զենքը և, օրենքից դուրս հայտարարելով հայերին, մուշեռանդ կրոնավորների ատելությունը հրահրում է նրանց դեմ, և ազգայնամոլության ու կրոնամոլության այդ սանձարձակության մեջ սկսվում է հայերի գլխովին ոչնչացումը հրով ու սրով՝ ծրագրված և լավ մշակված։

Եվ Թուրքական բանակի փայլուն սպա, քաջության համար Թուրքական պարգևներ ստացած Գաբրիել Բագրատյանի վրայից թոթափվում է եվրոպական կոսմոպոլիտիզմի շուքը, և նա դառնում է իր ժողովրդի զավակը։ Հենց դեպքերն են նրան դարձնում դիմադրության պարագլուխ։ Նա գիտե ռազմի գործը։ Նա հավաքում է շրջակա գյուղերի հայ բնակչությանը և հովտից բարձրացնում Մուսա լեռը։

Նա զենք ու համախոհներ է գտնում և պաշտպանություն կազմակերպում ամրաշինական խստիվ կանոններով։

Նա ժամանակ չուներ մտածելու, թե ինքն ինչպես դարձավ Լեոնիդաս*, իսկ իր ազգակիցներն ինչպես նմանվեցին Թերմոպիլեսի ճակատամարտի հույներին։

Թուրքիայի ողջ տարածքով մեկ ծավալվում է հայերի կոտորածը։ Նրանց կողոպտում են և բռնի ուժով արտաքսում իրենց հայրենիքից, վաղուց ի վեր բնակված վայրերից և Թուրքիայի բոլոր ճանապարհներով քշում դեպի մահաբեր անապատները, որ նրանք սովամահ լինեն կիզիչ արևի տակ։

Այդպես էլ քառորդ դար անց էսէսականները Հիտլերի հրամանով Բուխենվալդ և Օսվենցիմ, Ռավենսբրյուկ և Կլոոգու կքշեն հրեաներին ու լեհերին, ռուսներին ու գնչուներին,— բոլոր անցանկալի մարդկանց,— գազախցերը և փոսերը կլցնեն, կայրեն, գնդակահար կանեն կանանց, երեխաներին, ծերերին, և ամբողջ Եվրոպայից մարդկային մսի խանձահոտ կգա։

Ամբողջ Թուրքիայում կոտորում են հայերին, բայց կանգուն է Մուսա լեռը՝ հայոց արիության անմատչելի լեռը։ Նրա կայազորը հետ է մղում Թալիաթի կանոնավոր գումարտակների գրոհները։ Արնաքամ է լինում, բայց դիմանում է Մուսա լեռը, նրա կայազորն ուրիշ ելք չունի։ Եվ նա պահում է իր սահմանները։ Հետ է մղում գրոհը և ինքն է նետվում գրոհի։ Խելագարության բոցերով բռնված ամբողջ երկրում մենամենակ՝ չի հանձնում իր մարդկային ոգու արիության բարձունքը։

Այդօրինակ համառությամբ քառորդ դար անց կմաքառեն Բրեստի և Գանգուտայի պաշտպանները, Աջիմուշկայի և Օդեսայի պաշտպանները, Լենինգրադի և Մոսկվայի պաշտպանները։ Քաջության եղբայրներ են բոլորը, մարդկային արժանապատվության համար մղվող ճակատամարտի բոլոր հերոսները։

Կանգուն է լեռն Մուսա։ Քառասուն օր ու դիշեր առանց հացի ու վառոդի։ Կանգուն է և կանգուն կմնա իբրև աննկուն ոգու օրինակ աշխարհիս բոլոր ժողովուրդների, համայն մարդկային եղբայրության համար։

Եվ մահ չունեն Մուսա լեռան հերոսները, նրանց սխրանքը կմնա դարերում՝ ժամանակի բուն ոգու մեջ։

Այդ սխրանքը բոլոր ժամանակների և բոլոր ժողովուրդների համար իր սրտի կարեկցանքով, իր ոգու արիությամբ, իր տաղանդի վարպետությամբ պահել է գրող Ֆրանց Վերֆելը։

Նա այդ գիրքը գրել է 1933-ին։ Գրել է իբրև նախազգուշացում ամբողջ Եվրոպային և բովանդակ աշխարհին առ այն, որ երկրագնդում հայտնվել է Հիտլերը, նրա հետևից աղետ է գալիս՝ մասշտաբով ավելի մեծ և կատարելագործված դաժանությամբ ավելի նենգ։

Ֆրանց Վերֆելը չէր սխալվում, և նա իր իսկ ճակատագրով հատուցեց այդ բացահայտման համար։ Հիտլերը Վերֆելին արտաքսեց Ավստրիայից։ Գրողը տեղափոխվեց Փարիզ։ Հիտլերը նրան արտաքսեց Փարիզից։ Նա Թոմաս Մանի հետ գաղտնաբար անցավ Իսպանիա, հետո՝ Պորտուգալիայի միջով՝ Ամերիկա։ Հիտլերը կամենում էր նրան թափառական դարձնել, բայց նա հողագնդի զավակը դարձավ, երգիչն այն մարդկանց, որոնք ոչ մի բանից երկյուղ չունեն, եթե պատրաստ են ամեն րոպե մեռնել միմյանց համար։

Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» արիությանը ձոն-

ված երգ է։ Բացարձակ տաղանդով գրված գիրք։ Դրա հերոսներից ամեն մեկն իր բնավորությունն ունի և իր ձայնը։ Խելացի գիրք է և հեռատես։

Գիրքը կունենա նախանձելիորեն երկար կյանք, քանի որ հոգուց բխած խոսքը, այն խոսքը, որ հագեցած է կրքով, հարատև է ավելի, քան նույնիսկ այն մարմարը, որի վրա փորագրված է։

Այս գրքում ապրում և գործում են ճանաչման իմաստությունը, կենսափորձի դառնությունը և կանխագուշակման անողոքությունը, և, ինչպես վայել է մեծ արվեստագետին, գրված է ոչ թե ձանձրալի, այլ բնական ճշմարտության այն չափով, որ գիրքը դարձնում է ժամանակի հոգևոր երևույթ։

Հրազդանի ափին բարձրանում է Ցեղասպանության վշտալից հուշարձանը։ Այնտեղ, կռացած սյունաշարի ներսում, ասես հավերժության քարակոփ ափերի մեջ, բոցկլտում է հիշողության անմար կրակը, և հընչում է մարդկային հոգին լուսավորող խորաթափանց երաժշտություն։

Այդ հուշարձանից բացի, քաղաքից դուրս, էջմիածնի ճանապարհին, հենց այն գյուղի մոտ, ուր ապրում են Մուսա լեռան պաշտպանների հետնորդները, կա մեկ ուրիշ հուշարձան՝ Մուսա լեռան հերոսների հուշարձանը։ Իբրև անվեհերության աշտարակ կանգնած է կարմրատուֆ բարձունքի վրա, ճակատի կողմից երևում է արծվի բարձրաքանդակը՝ մարդկային ոգու քաջության և գեղեցկության խորհրդանիշը։

Այս հուշարձանն ինքը ժողովուրդն է կառուցել։ Եվ ամեն տարի, Մուսա լեռան Հաղթանակի օրն այստեղ են հավաքվում հերոսների հետնորդները և լռելյայն երդվում են արիության դրոշը տանել մարդկային եղբայրության ճանապարհով։

Խնամքով տաշված կարմիր տուֆաքարերի շարվածքի վրա Մուսա լեռան հերոսներից ոչ մեկի անունն առայժմ չի փորագրված։

Կփորագրվե՛ն, այդ անունները կփորագրվե՛ն։ Բոլորը՝ անուն առ անուն։ Եվ այդ անունների մեջ ես կուզենայի տեսնել Ֆրանց Վերֆելի՝ այդ սխրանքը բոլոր մարդկանց, բոլոր ժամանակների համար վերստեղծող մարդու անունը։

Նա արժանի՛ է դրան։

ՄԻԽԱՅԻԼ ԴՈՒԴԻՆ
Բանաստեղծ, Սոցիալիստական աշխատանքի հերոս

Գիր սուրբ

ԳԱԼԻԼԵԱՅ

«Մինչև ե՞րբ Տէր սուրբ և ճշմարիտ,
ոչ դատես
և խնդրես զվրէժ արեան մերոյ ի
բնակչաց երկրի»։
ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆՈՒ
Գլ. Զ., 10



ԳԼՈՒԽ ՏՈՒՆՔԻՆ

Թնգիրե[1]



Նշպե՞ս եկա այստեղ։

Գաբրիել Բագրատյանն այս բառերն արտասանում է հատ-հատ, ինքնաբերաբար։ Դա ոչ թե հարց է, այլ ինչ-որ անորոշ հանդիսավոր զարմանք, որ համակել է նրա ամբողջ էությունը։ Դա, թերևս, իր պատճառն ունի մարտ ամսի կիրակնօրյա այս լուսացնցուղ վաղորդայնին, երբ սիրիական գարունը Մուսա լեռան լանջերն ի վար, մինչև Անտիոքի* խորդուբորդ հարթավայրը, առաջն արած քշում է կարմիր, փարթամ պուտերի երամները։ Ամենուրեք արոտավայրերից բխում է հողի հիասքանչ արյունը, խեղդում ամոթիած սպիտակությունը խոշոր նարգիզների, որոնց ժանակը նույնպես եկել է։ Լեռը պարուրված է հազիվ լսելի ոսկեհունչ թընդյունով։ Արդյոք Քեբուսիեի փեթակներից դուրս թռած անթի՞վ-անհամար մեղվապարսե՞րն են ժխորում, թե՞ հեռվում Միջերկրական ծովն է ափերին բախվում, կրծում Մուսա լեռան լերկ թիկունքը՝ օրվա ամենաջինջ, ամենաանվրդով պահին։

Խալխալ պարիսպների արանքով անհարթ ճանապարհը ոլորվում է դեպի վեր։ Որտեղ դրանք վերջանում են անկանոն քարակույտերով, ճանապարհը նեղանում է, դառնում հովվական արահետ։

Ահա և բարձունքը։

Բագրատյանը շրջվում է։ Վիթխարի մարմինը ձգվում է, լսողությունը լարվում։ Հագին տուրիստական տնահյուս փափուկ, թավամաղ զգեստ կա։ Խոնավ ճակատից փոքր-ինչ ետ է տանում ֆեսը։ Բիբերը լայնանում են։ Աչքերն ավելի բաց գույն ունեն, բայց նույնքան խոշոր են, որքան առհասարակ հայերի աչքերը։

Այժմ Գաբրիելը տեսնում է, թե որտեղից է գալիս։

Այգում, էվկալիպտների արանքից երևում է տունն իր վառվռուն

---

[1] թնգիրե (Թրք.)— անձնագիր

պատերով և տափարակ տանիքով։ Կիրակնօրյա առավոտյան արևը ողողել է նաև ախոռն ու օժանդակ շինությունները։ Բագրատյանին այդտեղից բաժանող հեռավորությունն ավելի քան կես ժամվա ճանապարհ է, բայց կալվածքն այնքան մոտ է թվում, կարծես կրնկակոխ հետևում է իր տիրոջը։

Հովտում ծվարած Յողոնօլուքի եկեղեցին ևս նրան է մտերմորեն ողջունում իր ահագին գմբեթով ու կողքի սրածայր աշտարակով։ Այդ ծանրանիստ, խոժոռ եկեղեցին և Բագրատյանների ամառանոցը աշխարհ են եկել միասին։ Երկուսն էլ հիսուն տարի առաջ կառուցել է Գաբրիելի պապը՝ առասպելական շինարարն ու բարեգործը։

Հայ գեղջուկներն ու արհեստավորներն այսպիսի սովորույթ ունեն։ Ապրուստի համար պանդխտելուց հետո օտար երկրներից, անգամ Ամերիկայից, վերադառնում են իրենց հարազատ օջախը։ Սակայն մեծահարուստ բուրժուաներն այլ կերպ են վարվում։ Նրանք իրենց շքեղ ամառանոցները հիմնում են Քաննի ծովեզերքին, Հելիոպոլիսի այգեստաններում կամ առնվազն Լիբանանի լեռնալանջերին, Բեյրութի շրջակայքում։

Ներունի Ավետիս Բագրատյանը շատ բանով էր տարբերվում այդ նորելուկներից։ Նա Ստամբուլում հիմնել էր առևտրական աշխարհահռչակ մի տուն, որը բաժանմունքներ ուներ Փարիզում, Լոնդոնում և Նյու Յորքում, սակայն, երբ թույլ էին տալիս ժամանակն ու գործերը, տարիներով ապրում էր Մուսա լեռան ստորոտում, Յողոնօլուքից վերև ընկած իր ամառանոցում։ Ոչ միայն Յողոնօլուքը, այլև Սուեդիայի շրջանի հայկական վեց գյուղը վայելում էին Բագրատյանի արքայական ներկայությունը, որը նրանց համար կատարյալ օրհնություն էր։ Եթե մոռացության տրվեն եկեղեցիներն ու դպրոցական շենքերը, ամերիկացի ուսուցիչներ վարձելը, ապա դարձյալ բավական կլինի վկայակոչել միայն այն նվերը, որը բոլոր իրադարձություններից հետո էլ մինչև օրս մնում է մարդկանց հիշողության մեջ։ Խոսքը նավով բերած կարի «Զինգեր» կոչվող մեքենաների մասին է, որ Ավետիս Բագրատյանը առանձնապես հաջողակ մի տարի բաժանեց շրջակա գյուղերի հիսուն չքավոր ընտանիքներին։

Գաբրիելն իր սեռուն հայացքը դեռևս չի կտրում ամառանոցից։ Նա տեսել է իր պապին։ Չէ՞ որ հենց այդ տանն է ծնվել և մանուկ հասակում, մինչև տասներկու տարեկան դառնալը, շատ ամիսներ է այդտեղ անցկացրել։ Այժմ անցած-գնացած կյանքն այնպիսի գերբնական հուզմունք է պատճառում, որ նա դրեթե ֆիզիկական ցավ է զգում։ Կարծես ունեցել է իր ծննդյանը նախորդող մի այլ գոյություն, և այժմ դրա հետ

կապված հուշերը անցանկալի սարսուռով ծվատում են հոգին։ Իրո՞ք տեսել է պապին, թե՞ նրա մասին կարդացել է մանկական գրքերում։ Կամ գուցե նկա՞ռն է տեսել։ Դա սպիտակաբեղ, փոքրամարմին մարդ էր։ Մետաքսե դեղնասև, շերտավոր բաճկոն էր կրում։ Կուրծքն ի վար շղթայով կախված էր ոսկեշրջանակ ակնոցը։ Կարմիր կոշիկներով անցուդարձ էր անում այգու դալարիքի մեջ։ Բոլորը խոնարհաբար գլուխ էին տալիս։ Ներունական նուրբ մատները շոյում էին մանկան այտերը։ Դա իրականությո՞ւն էր, թե՞ ենոտի պատրանք։

Պապի հետ կապված մտորումները Բագրատյանի վրա ներգործեցին ճիշտ այնպես, ինչպես Մուսա լեռը։ Մի քանի շաբաթ առաջ, երբ նա կրկին տեսավ իր մանկության սարը, որն իրիկնային երկնքում աղջամուղջով էր վարագուրվում, նրան տիրեց մի անկարագրելի զգացում՝ թե՛ երկյուղ ազդող, թե՛ միաժամանակ սրտապարար։ Այդ զգացումն այնքան խորն էր, որ կանխեց խորհրդածությունների հեղեղը։ Եվ Գաբրիելն իսկույն հրաժարվեց դատողություններ անելուց։ Ի՞նչ էր դա՝ նախազգացման առաջին սարսո՞ւռը, թե՞ քսան-երեք տարվա հետևանք։

Քսաներե՞ք տարի Եվրոպայում, Փարիզում։ Լիակատար ձուլման քսաներե՞ք տարի։ Դրանք ազդեցին կրկնակի և եռակի ուժով։ Ամեն ինչ ջնջեցին։ Ներունու մահից հետո ընտանիքը ցաքուցրիվ եղավ։ Ազատվելով տան նահապետի նեղ հայրենասիրությունից, բոլորը հեռացան իրենց արևելյան անկյունից։ Ֆիրմայի հիմնական կենտրոնը մնաց դարձյալ Ստամբուլը, բայց Գաբրիելի ծնողներն իրենց երկու որդու հետ արդեն ապրում էին Փարիզում։ Ավագ եղբայրը, որը տասնհինգ տարով մեծ էր Գաբրիելից և որի անունը նույնպես Ավետիս էր, վաղ հեռացավ։ Իբրև ներմուծման կառավարչի օգնական, նա վերադարձավ Թուրքիա։ Իզուր չէր կրում իր պապի անունը։ Եվրոպան նրան չէր հրապուրում։ Դա մենություն սիրող տարօրինակ մարդ էր։ Յողոնօլուքի ամառանոցը, երկար տարիներ լքված մնալուց հետո, վերստացավ իր երբեմնի շքեղը։

Ավետիսի միակ թուլությունը որսորդությունն էր։ Այս նպատակով նա հաճախ էր բարձրանում Տավրոսի լեռները, թափառում Հորանում։

Գաբրիելը, որն իր եղբոր մասին աղոտ պատկերացում ուներ, Փարիզում գիմնազիա ավարտելուց հետո ուսանեց Սորբոնում։ Ոչ ոք նրան չպարտադրեց վաճառականի մասնագիտություն, որի համար, ի զարմանալի տարբերություն ամբողջ տոհմի, երիտասարդը նվազագույն չափով անդամ պիտանի չէր։

Նա հնարավորություն ստացավ ապրելու որպես գիտնական և գեղարվեստասեր, որպես հնէաբան, արվեստի տեսաբան, փիլիսոփա։ Ի

դեպ տարեկան եկամուտն այնքան էր, որ նա կարող էր վարել ազատ, բարեկեցիկ կյանք։ Տակավին պատանի էր, երբ ամուսնացավ Ժուլիեթի հետ։ Այս ամուսնությունը նրա կյանքում շատ խորը փոփոխություն առաջացրեց։ Ֆրանսուհին նրան իր կողմն էր քաշում։ Գաբրիելն արդեն ավելի շուտ ֆրանսիացի էր։ Նա որոշ չափով հայ էր միայն ակադեմիական իմաստով։ Այնուհանդերձ գլուխը լրիվ չէր կորցնում և հայոց թերթերում երբեմն տպագրում էր իր գիտական հոդվածները։ Դրանից բացի, իր տասնամյա որդու՝ Ստեփանի, համար հայոց լեզվի ուսուցիչ վարձեց՝ մի հայ ուսանողի, որպեսզի սա իր որդուն կրթեր իրենց նախնիների լեզվով։ Ժուլիեթն սկզբում դա համարում էր խիստ ավելորդ, նույնիսկ վտանգավոր։ Բայց քանի որ Սամվել Ավագյանը վարվեցողությամբ հաճելի երիտասարդ էր, ֆրանսուհին, նահանջողական մի քանի ճակատամարտ մղելուց հետո, այլևս չդիմադրեց։ Ամուսնական գժտությունները շարունակ արմատներ էին գցում թե՛ մեկի և թե՛ մյուսի մեջ։

Որքան էլ Բագրատյանը փորձում էր օտարանալ, ժամանակ առ ժամանակ տարվում էր իր ժողովրդի քաղաքականությամբ։ Քանի որ լավ տոհմից էր սերում, հայ առաջնորդներից մի քանիսը Փարիզում եղած ժամանակ նրան այցելում էին։ Նույնիսկ դաշնակցական կուսակցության մանդատ առաջարկեցին։ Գաբրիելն այս անհիմն առաջարկը սոսկումով մերժեց, թեև մասնակցեց այն հայտնի կոնգրեսին, որը 1907 թվականին միավորեց «Երիտասարդ թուրքերին» և հայ ազգային կուսակցությունը։ Ստեղծվելու էր մի նոր պետություն, որտեղ բոլոր ազգերը կողք կողքի ապրելու էին հաշտ ու խաղաղ, առանց ոտնահարելու միմյանց պատիվը։ Նման մի նպատակ կարող էր ոգեշնչել նույնիսկ օտարացածին։ Այդ օրերին թուրքերը հայերի հասցեին շռայլում էին ամենաընտիր հաճոյախոսությունները և սեր էին բացատրում։

Հավատարմության ուխտը Բագրատյանն ընկալեց յուրովի՝ առավել լրջորեն, քան ուրիշները։ Այդ էր պատճառը, որ երբ Բալկաններում պատերազմ ծագեց, նա կամավոր դրվեց։ Ավարտելով Ստամբուլի պահեստային սպաների կարճատև դասընթացները, որպես հոբիցային մարտկոցի հրամանատար, մասնակցեց Բուլայիրի ճակատամարտին։ Դա միակ դեպքն էր, երբ նա իր հարազատներից բաժանվեց կես տարով։ Խորապես տառապում էր։ Թերևս երկյուղ էր կրում, թե Ժուլիեթից կարող է զրկվել։ Զգում էր, որ կնոջ վերաբերմունքն ինչ-որ չափով խաթարված է, թեև դրա համար իրական ոչ մի հիմք չկար։

Փարիզ վերադառնալով, Գաբրիելը հրաժարվեց այն բոլոր գործերից, որոնք հոգևոր կյանքի հետ չէին առնչվում։ Չէ՞ որ նա մտածող էր,

իրական կյանքից վերացող, իր մեջ ներանձնացող մարդ։ Նրա ի՞նչ գործն էր, թե ովքեր են թուրքերը, ովքեր են հայերը։ Նա ձգտում էր դառնալ ֆրանսիական պետության քաղաքացի։ Դրա համար պետք է ամենից առաջ երջանկացներ Ժուլիեթին։ Սակայն ի վերջո նրան սկսեց կաշկանդել ինչ-որ ծանր զգացում։ Չէ՞ որ իր կամքով էր պատերազմին մասնակցել։ Եթե չէր սիրում իր հայրենիքը, ապա չէր էլ կարող ուրանալ։ Դա իր հայրերի երկիրն էր։ Նախնիները արհավիրքներ են ապրել, սակայն տեղի չեն տվել։ Գաբրիելը չէր տառապել։ Սպանությունների և կոտորածների մասին միայն պատմություններ էր լսել, գրքեր կարդացել։ Միևնույն չէ՞, թե ի՛նչ հող ու ջրի է պատկանում վերացական մարդը, մտածում էր նա։ Եվ մնաց օսմանյան պետության հպատակ։

Երկու երջանիկ տարի ապրեցին Քլեբեր ավենյուի վրա, հիասքանչ բնակարանում։ Թվում էր, թե բոլոր առեղծվածները լուծված են, գտնված է վերջնական կենսաձևը։ Գաբրիելը երեսունհինգ տարեկան էր, Ժուլիեթը՝ երեսունչորս, Ստեփանը՝ տասներեք։ Անհոգ գոյություն, ոչ մի առանձին փառասիրություն, մտավոր աշխատանք և բարեկամական հաճելի շրջապատ։ Ինչ վերաբերում է վերջինիս, ապա դա Ժուլիեթի տարերքն էր։ Դրա հիմնական առհավատչյան այն էր, որ Գաբրիելը հետզհետե դադարում էր շփվել իր վաղեմի հայ ծանոթների հետ (ծնողները վաղուց էին մահացել)։ Ժուլիեթը կարծես ձգտում էր վավերացնել իր արյան գերակշռությունը, թույլ չտալով ոչ մի զիջում։ Միայն իր որդու աչքերը չէր կարող փոխել։ Բայց թվում էր, թե Գաբրիելը ոչինչ չի նկատում։

Ավետիս Բագրատյանի շտապ նամակը ճակատագրական հեղաշրջում կատարեց։ Ավագ եղբայրը պահանջում էր մեկնել Ստամբուլ։ Նա ծանր հիվանդ էր և այլևս չէր կարող կառավարել գործերը։ Շաբաթներ առաջ ձեռք էր առել բոլոր միջոցները ֆիրման բաժնետիրական ընկերություն դարձնելու համար։

Գաբրիելը պետք է ներկայանար, պաշտպաներ իր շահերը։ Ժուլիեթը, որ քիչ չէր պարծենում իր շրջահայեցությամբ, անմիջապես հայտնեց, թե ուզում է ամուսնուն ուղեկցել և գործերը կարգավորելու ընթացքում աջակցել։ Չէ՞ որ դա շատ լուրջ գործ էր լինելու։ Մինչդեռ Գաբրիելը միամիտ մարդ էր, միանգամայն անտեղյակ հայ վաճառականների խորամանկություններին։

1914 թվականի հուլիս։ Տաղնապալից աշխարհ։

Գաբրիելը վճռեց իր հետ տանել ոչ միայն Ժուլիեթին, այլև Ստեփանին ու նրա ուսուցիչ Ավագյանին։ Թող ուսումը կիսատ չմնա։ Գործը

կարող է ձգձգվել, իսկ աշխարհում տիրող իրադրությունը հույս չի ներշնչում։

Երկու շաբաթ անց ընտանիքը հասավ Կոստանդնուպոլիս։

Ավետիս Բագրատյանը նրանց սպասել չէր կարողացել։ Իտալական նավով մեկնել էր Բեյրութ։ Վերջին օրերին թոքերի հիվանդությունը սոսկալի արագությամբ սրվել էր, և նա այլևս ի վիճակի չէր շնչելու Ստամբուլի օդը։ (Զարմանալի է, որ եվրոպացի Գաբրիելի եղբայրը գնացել էր մեռնելու ոչ թե Շվեյցարիայում, այլ Սիրիայում։)

Այժմ Գաբրիելը գործ ուներ ոչ թե Ավետիսի, այլ դիրեկտորների, փաստաբանների, նոտարների հետ։ Նա չէր կարող չխոստովանել, որ անծանոթ եղբայրն իր մասին հոգ էր տարել ամենանուրբ և ամենազգուշավոր ձևով։ Առաջին անգամ ամենայն խորությամբ գիտակցեց, որ այդ տարեց հիվանդն այն Ավետիսն է, ով իր համար աշխատում էր, ում ինքը երախտապարտ էր իր բարեկեցությամբ։ Ի՜նչ անհեթեթություն. եղբայրներն իրար այդպես էլ պետք է օտար մնան։ Գաբրիելը սոսկում էր «առևտրականի», «արևելցու» հանդեպ ունեցած իր այն ամբարտավանությունից, որ թաքցնում էր ոչ միշտ։ Այժմ նրան համակել էր մի ցանկություն. շտկել անարդարությունը, քանի դեռ շատ ուշ չէ։ Զգում էր նաև մի թեթև կարոտ։

Ստամբուլի շոգն, իրոք, անտանելի էր։ Արևմուտք վերադառնալն արդեն թվում էր աննպատակահարմար։ Պետք է սպասեին, մինչև փոթորիկն անցներ։ Դրա փոխարեն կարելի էր ծովային փոքրիկ շրջագայություն կատարել և թարմանալ։ Քեդիվալ Մայիլի նորագույն նավերից մեկը, որը ճանապարհվում էր Ալեքսանդրիա, մտնելու էր Բեյրութի նավահանգիստը։ Լիբանանի արևմտյան լեռնալանջերին կարելի էր վարձել ժամանակակից ամառանոցներ։ Դրանք կբավարարեին նույնիսկ ամենահանդուգն պահանջները։ Գիտակ մարդկանց հայտնի է, որ երկրագնդի ոչ մի մասում այդքան գեղեցիկ դաշտանկար չկա։ Բայց համոզելու համար հարկ չեղավ պերճախոսության արվեստին դիմելու. Ժուլիեթն անմիջապես համաձայնեց։ Նրա մեջ վաղուց ի վեր բույն էր դրել ինչ-որ անորոշ անհամբերություն։ Շարունակ հրապուրվում էր նոր բան տեսնելու հեռանկարով։

Գաբրիելի ընտանիքը դեռևս բաց ծովի վրա էր, երբ պայթեց արհավիրքը։ Պետությունները միմյանց պատերազմ էին հայտարարում։ Երբ ճանապարհորդները Բեյրութի նավահանգստում ափ էին իջնում, Բալկաններում և Գալիցիայում արդեն սկսվել էին առաջին ճակատամարտերը։ Ֆրանսիա վերադառնալու մասին մտածելն անգամ ավելորդ էր։ Պետք է մնային։

Թերթերը հաղորդում էին, թե Բարձր Դուռը դաշինք է կնքելու կենտրոնական տերությունների հետ։ Փարիզն արդեն թշնամի երկրի քաղաք էր։ Ուղևորության ամենահիմնական նպատակը ձախողվեց։ Ավետիս Բագրատյանին երկրորդ անգամ էլ չվիճակվեց տեսնել իր կրտսեր եղբորը։ Բեյրութից հեռացել էր մի քանի օր առաջ։ Վտանգի ենթարկելով կյանքը, Հալեպով ու Անտիոքով վերադարձել էր Յողոնօլուք։ Լիբանանում մեռնելը նույնպես չէր գոհացնում։ Վերջին հանգրվանը պետք է լիներ Մուսա լեռը։ Բայց Ավետիսի նամակը, որով նա Գաբրիելին հայտնում էր իր մոտալուտ մահվան լուրը, տեղ հասավ միայն աշնանը։

Մինչ այդ Բագրատյանները քաղաքի վերին թաղամասերում մի սքանչելի տուն էին վարձել։ Ժուլիեթի կարծիքով կյանքը Բեյրութում տանելի էր։ Այնտեղ ֆրանսիացիներ շատ կային։ Տիկնոջը զանազան հյուպատոսներ էին այցելում։ Նա ամեն տեղ էլ կարողանում էր շրջապատ ստեղծել։ Գաբրիելը երջանիկ էր. տարադրությունը կնոջ վրա առանձնապես ծանր չէր ազդել։ Ուրիշ ելք չկար։ Համենայն դեպս, Բեյրութն ավելի ապահով տեղ էր, քան եվրոպական քաղաքները։ Սակայն Գաբրիելի միտքը շարունակ պտտվում էր Յողոնօլուքի տան շուրջը։ Ավետիսն իր թախանձալից նամակով ամառանոցը թողել էր եղբոր խղճին։ Նամակն ստանալուց հինգ օր հետո եկավ բժիշկ Ալթունու հեռագիրը։ Ավետիսը վախճանվել էր։ Այժմ Գաբրիելն արդեն ոչ միայն մտածում, այլև անվերջ խոսում էր իր մանկության տան մասին։ Բայց նա սարսափեց, երբ Ժուլիեթը հանկարծ հայտնեց, թե պետք է անհապաղ տեղափոխվել ժառանգություն ստացած տունը, որի մասին ամուսինը պատմում է արդեն վաղո՞ւց, կարծես մի ամբո՞ղջ հավիտենականություն։ Ժուլիեթը համառորեն հերքում էր Գաբրիելի առարկությունները։ Գյուղական ամայությո՞ւն։ Կնոջ համար առավել բաղձալի վայր լինել չի կարող։ Աշխարհից կտրված կյա՞նք, շքեղության պակա՞ս։ Ինչ որ կարևոր լինի, ինքը ձեռք կբերի։ Ա՜յ, հենց այդ խնդիրը Ժուլիեթին առանձնապես հրապուրում է։ Չէ՞ որ նրա ծնողները ամառանոց ունեին, որտեղ և նա հասակ էր առել։ Երբ ինքը կահավորի սեփական տունը, տնտեսությունը վարի իր ուզած ձևով, ապա իրականություն կդառնա իր փայփայած երազանքներից մեկը։ Միևնույն է, թե դա ո՞րտեղ կլինի, աշխարհի ո՞ր ծայրին։

Չնայած այս ցնծալից պատրաստակամությանը, Բագրատյանը դեռևս պաշտպանվում էր, պատճառ բերելով անձրևային եղանակը։ Ավելի խո-

հեմ վարված չի՞ լինի, եթե բոլոր ջանքերը գործադրելով՝ ընտանիքը տանի Շվեյցարիա։ Սակայն Ժուլիեթն իր ասածն էր պնդում։ Դա հնչում էր գրեթե իբրև պահանջ։ Գաբրիելը չէր կարողանում վանել կարոտին խառնված ինչ-որ տարօրինակ մի նախազգացում։

Արդեն դեկտեմբեր ամիսն էր, երբ փոքրաթիվ ընտանիքը ճանապարհ ընկավ դեպի Բագրատյանի հայրենիքը։ Ճանապարհորդությունը մինչև Հալեպ տանելի էր, չնայած գնացքը լեփ-լեցուն էր տեղափոխվող զորքով։ Հալեպում վարձեցին երկու աննկարագրելի ավտոմեքենա և ցեխոտ ճանապարհով մի կերպ, կարծես աստվածային հրաշքով հասան Անտիոք։

Որոնտեսի կամրջին արդեն սպասում էր տնտեսվար Քրիստափորը։ Նա բերել էր տան որսորդական կառքը և երկու եզասայլ՝ իրերը տեղափոխելու համար։ Մինչև Յողոնօլուք երկու ժամ տևեց։ Ժամանակն ուրախ անցավ։ Ժուլիեթի կարծիքով առհասարակ ամեն ինչ այնքան էլ վատ չէր...

— Ինչպե՞ս եկա այստեղ։

Շրջապատն այս հարցին սպառիչ պատասխան տալ չէր կարող։ Սակայն Բագրատյանի հանդիսավոր զարմանքը չնվազեց, թեև դրան միախառնվեց ինչ-որ թեթև անհանգստություն։ Այն ամենը, ինչ անցել գնացել և փարիզյան քսաներեք տարվա ընթացքում կորցրել էր իր ուժը, այժմ կրկին քաղաքացիություն էր ստանալու։ Գաբրիելը հազիվ կարողացավ տնից հեռացնել զմայլանքով լի հայացքը։

Ժուլիեթն ու Ստեփանը երևի դեռ քնած էին։ Յողոնօլուքի եկեղեցու զանգերը նույնպես դեռ չէին ավետել կիրակի օրվա գալուստը։

Գաբրիելը նայեց հովտի հյուսիսային մասում ընկած հայկական գյուղերին։ Կանգնած տեղից կարող էր տեսնել Ազիրը՝ շերամապահների գյուղը, բայց ոչ Քեբուսիեն, որն այդ կողմի վերջին բնակավայրն էր։ Ազիրը դեռևս քնած էր թթենիների մուգ կանաչ մահճում։ Այնտեղ, Մուսա լեռան վրա հենված փոքրիկ բլրի գագաթին երևում էր մի ավերակ վանք։ Սուրբ Թովմաս Առաքյալն էր դրել այդ մենաստանի հիմքը։ Քարերի վրա ուշադրության արժանի փորագրություններ կային։ Դրանց մի մասը գալիս էր Սելևկյանների* դարաշրջանից և հնագետի համար հազվագյուտ նշանակություն ուներ։ Անտիոքը, որը մի ժամանակ աշխարհի թագուհին էր, ձգվում էր մինչև ծովը։ Այստեղ ամենուրեք հնությունները սփռված էին լերկ հողի վրա կամ իսկույն հայտնվում էին, երբ հնախույզը գործի էր դնում իր բահը։ Մի քանի շաբաթվա ընթացքում Գաբրիելը բավականաչափ թանկարժեք նմուշներ էր հավաքել իր տանը։ Այստեղ նրա գլխավոր զբաղմունքն այդ պեղումներն էին։ Սակայն դեռևս

սիրտ չէր անում բարձրանալ բլուրը, որտեղ սուրբ Թովմասի վանքի ավերակներն էին (սրանց պահապանները խոշոր օձեր էին՝ պղնձագույն և բոժոժավոր։ Եթե մեկնումեկը սրբազան քարերը տաներ տուն շինելու համար, ապա բեռը կմնար մեջքին կպած, և մեղապարտը գերեզման կիջներ քարը շալակին)։ Ո՞վ էր նրան այս ավանդությունը պատմել։ Մի ժամանակ իր մոր սենյակում, որն այժմ Ժուլիեթն էր զբաղեցրել, հավաքվում էին դեմքները տարօրինակ ձևով ներկած պառավ կանայք։ Թե՞ սա միայն երևակայության արդյունք է։ Մի՞թե Յողոնօլուքում և Փարիզում տեսած մայրը միևնույն կինն էր։

Գաբրիելը վաղուց էր մտել ստվերաշատ ծառաստանը։ Լանջն ի վեր, մինչև լեռան գագաթը ձգվում էր մի լայն, գրեթե ուղղահայաց հեղեղատ։ Բարձունքը կոչվում էր Կաղնուտ։ Հաղթահարելով խիտ մացառուտները, Գաբրիելը դժվարությամբ բարձրանում էր, երբ հանկարծ նրա մտքով անցավ. ժամանակավորն ավարտվեց, գալու է բախտորոշը։

Ժամանակավո՞ր։

Գաբրիել Բագրատյանն օսմանյան հրեատանային գնդի պահեստային սպա էր։ Թուրքական բանակները չորս ռազմաճակատում կենաց և մահու գոտեմարտեր էին մղում։ Կովկասում՝ ռուսների դեմ, Միջագետքի անապատում՝ անգլիացիների ու հնդիկների դեմ։ Ավստրալիական զորամասերը Գալիպոլի թերակղզում դեսանտ էին իջեցրել՝ դաշնակից զորքերի հետ Բոսֆորի դարպասից ներս խուժելու նպատակով։ Սիրիայում և Պաղեստինում չորրորդ բանակը նոր հարված էր նախապատրաստում Սուեզի ջրանցքի դեմ։ Այս բոլոր ճակատներում դիմանալու համար գերմարդկային ջանքեր էին հարկավոր։ Էնվեր փաշան՝ այդ աստվածացված զորավարը, ձմռանը դեպի Կովկաս կատարած խելացնոր արշավանքի ժամանակ կորցրել էր երկու զորաբանակ։ Ամենուրեք զգացվում էր սպաների պակաս։ Ռազմամթերքը չէր բավարարում։

Բագրատյանի համար արդեն անցել էին 1908 և 1912 թվականների խոստումնալից օրերը։ Իթթիհադը*՝ «Երիտասարդ թուրքերի» «Միասնության և առաջադիմության կոմիտեն» հայ ժողովրդին հույսեր էր տալիս միայն ու միայն իր նպատակին հասնելու համար, քանի որ նա հետագայում դրժեց իր բոլոր երդումները։ Այնպես որ Բագրատյանն իր հայրենասիրական խիզախությունը դրսևորելու, ինքնակամ մեջ ընկնելու ոչ մի հիմք չուներ։ Այս անգամ իրադրությունը բոլորովին այլ էր։ Նրա կինը ֆրանսուհի էր։ Թերևս ստիպված լիներ կռվել մի ազգի դեմ, որին ինքը սիրում էր, որին խորապես երախտապարտ էր և որի հետ կապված էր ամուսնությամբ։ Բայց Բագրատյանն արդեն ներկայացել էր Հալեպի

զինվորական հավաքակայանը՝ հաշվառման ենթարկվելու։ Դա նրա պարտականությունն էր։ Այլապես կարող էին համարել դասալիք։ Հետաքրքիր հանգամանք. կադրերի բաժնի գնդապետը սպայի կարիք չուներ։ Բծախնդիր ճշգրտությամբ նա աչքի անցկացրեց փաստաթղթերը, ապա ազատ արձակեց։ Բագրատյանը կարող էր մեկնել իր բնակավայրը, կազմ ու պատրաստ սպասել զորահավաքի։ Այն ժամանակ նոյեմբեր ամիսն էր։ Իսկ այժմ մարտը վերջանալու վրա է, մինչդեռ զորահավաքի հրամանը Անտիոքից դեռևս չի եկել։ Արդյոք դրա տակ անթափանցելի դիտավորությո՞ւն կար քողարկված, թե՞ պատճառը օսմանյան զինվորական ատյաններում տիրող գրասենյակային քաոսն է։ Սակայն այս վայրկյանին Գաբրիելին թվում է, թե այսօր իսկ հայտնի է դառնալու բախտորոշը։ Կիրակի օրը փոստն Անտիոքից բերել էր ոչ միայն նամակներ ու լրագրեր, այլև կայմակամության կառավարական հրամանները՝ ուղղված համայնքներին ու հպատակներին։

Գաբրիելին մտահոգում է միայն իր ընտանիքը։ Իրադրությունը խճճված է։ Եթե ռազմաճակատ մեկնի, ապա ի՞նչ կլինի Ժուլիեթի ու Ստեփանի վիճակը։ Ցողոնօլուքում մնալը որոշ իմաստով ձեռնտու է։ Ժուլիեթը հրճվում է, որ տունուտեղի տեր է դարձել, ունեն այգի, բանջարանոց, վարդերի պարտեզ։ Իբրև տանտիրուհի նա իրեն հիանալի է զգում։

Օրինավոր, պատվարժան մարդիկ էլ կան։ Գաբրիելը մանկուց է ճանաչում ծերունի բժիշկ Ալթունուն և դեղագործ Գրիգորին, որի գիտելիքներն ուղղակի զարմանալի են։ Հապա Ցողոնօլուքի քարոզչապետ և Սուեղիայի ամբողջ թեմի առաջնորդական փոխանորդ Տեր-Հայկազուն վարդապե՞տը։ Հապա Բիթիասի բողոքական քահանա Հարություն Նոխուդյա՞նը, ուսուցիչնե՞րը, երևելիներից մի քանի՞սը։ Կանանց նկատմամբ, իհարկե, պետք է փոքր-ինչ ներողամիտ լինել։

Այս արժանավոր հյուրերին Բագրատյան ամառանոցում առաջին անգամ հյուրասիրություն ցույց տալուց հետո Գաբրիելը Ժուլիեթին այն միտքը հայտնեց, թե նման հանգամանքներում Պրովանսի որևէ արվարձանում ապրող մարդիկ ոչ մի առավելություն չունեն սիրիական այս ծովեզերքի բնակիչների համեմատությամբ։ Ժուլիեթը հանդուրժեց այս հավաստիացումը, առանց դրսևորելու իր սովորական հեգնանքը այն ամենի նկատմամբ, ինչ հայկական է, արևելյան։ Իր հեգնանքով նա հաճախ էր ամուսնուն վշտացրել։ Այնուհետև բազմիցս կրկնվեցին հրավերքները։ Այսօր էլ, մայիսյան այս կիրակի օրը, նման երեկույթ է լինելու։ Ժուլիեթի ներողամտությունը Գաբրիելին երջանկացնում է։

Այնուհանդերձ այս ամբողջ բարեպատեհությունը չի փոխում մի իրողություն. առանձին մնալով՝ կինն ու որդին իրենց զգում են աշխարհից կտրված։

Բագրատյանը Կաղնուտից հեռանում է, առանց այս հարցի պատասխանը գտնելու։

Բանուկ արահետը ձգվում է դեպի հյուսիս, կորչում լեռան թիկունքը ծածկող մաթուղենիների ու մրտավարդերի թփուտներում։ Մուսա լեռան այս մասը լեռնականներն անվանում են Դամլաջրք։ Գաբրիելը դեռևս հիշում է բոլոր անունները։ Դամլաջրքն այնքան բարձր չէ, որ գագաթներն անուններ ունենան։ Հարավային երկու ցցունքն էլ ծովի մակերևույթից մոտ ութ հարյուր մետր են բարձր։ Դրանք լեռնապարի վերջին կատարներն են, լեռնապար, որն իր հսկայական ժայռակույտերով անսպասելիորեն ու անկանոն ձգվում, ասես փուլ է գալիս Որոնտեսի դաշտավայրում։ Այստեղ, հյուսիսում, որտեղ անցորդը կարող է ճանապարհ գտնել, Դամլաջրքն ավելի ցածրադիր է և թամբաձև կիսվում է երկու մասի։ Սա ծովափնյա լեռնաշղթայի ամենանեղ կետն է, Մուսա լեռան մեջքը։ Սարահարթը մի քանի հարյուր մետրի չափ նեղանում է, իսկ լեռան գահավեժ կողմի ժայռաքառսը ձգվում է հեռու։

Գաբրիելին թվում է, թե ինքն ամեն քար ու թուփ ճանաչում է։ Նրա հիշողության մեջ այս վայրը մանկության հետ կապված բոլոր մտապատկերներից ավելի խորն է դրոշմված։ Ահա հովանոցաձև նույն սոճիները, որոնցից այստեղ մի ամբողջ պուրակ է գոյացել։ Ահա նույն գետնատարած ասեղնավոր թփերը, որ քարերի արանքից դուրս են ցցել իրենց փշերը։ Բաղեղն ու այլազգի պատուտակները փարվել են սպիտակ ապառաժների պարանոցին, որոնք բնության ծերակույտին պատկանող հսկաների նման ընդհատում են իրենց խորհուրդը, հենց որ արձագանք են տալիս անկոչ հյուրի ոտնաձայները։ Ճանապարհ ընկնելուց առաջ ծիծեռնակների երամն իր ճռվողյունով խզում է անդորրը։ Եթերի կանաչավուն լիճը լցվում է զվարթ խայտանքով։ Կարծես մոխրագույն ձկներ են լողում։ Արագ թափահարվող թևերը նման են բացվող ու փակվող թարթիչների։

Ձեռքերը գլխի տակ դնելով, Գաբրիելը փռվում է փարթամ կանաչի վրա։ Մինչ այդ երկու անգամ բարձրացել էր Մուսա լեռը՝ սոճիներն ու ժայռակույտերը տեսնելու, բայց երկու անգամ էլ դրանք չէր գտել։ Կարծում էր, թե այլևս չկան։

Փակում է հոգնաբեկ աչքերը։ Երբ մարդ վերադառնում է աշխարհայեցման ու հոգևոր կյանքի վաղածանոթ վայրերը, նրան իսկույն շրջապատում են այն ոգիները, որոնց մի ժամանակ ինքն է գոյության կոչել, ապա հրաժեշտ տվել։

Բագրատյանին ևս պաշարում են մանկության ոգիները։ Նրանք կարծես քսաներեք տարի հավատարմորեն սպասել են այս հոգեպարար ամայության մեջ, սոճիների ու ժայռերի տակ։ Բայց դրանք չափազանց ռազմաշունչ ոգիներ են, ամեն հայ պատանու աչքին երևացող ահասարսուռ ուրվականներ։ (Եվ մի՞թե կարող է այլ կերպ լինել)։ Արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը քրիստոնյաների դեմ ֆերման[1] էր արձակել։ Մարգարեի մոլեռանդ երկրպագուները՝ թուրքերը, քրդերը, չերքեզները, հավաքվում էին կանաչ դրոշի տակ՝ հայոց գյուղերը հրդեհելու, կողոպտելու, հայ ժողովրդին բնաջնջելու նպատակով։ Սակայն թշնամիները Բագրատյանին նկատի չէին ունեցել։ Նա համախմբում էր յուրայիններին, տանում լեռները, աննկարագրելի հերոսությամբ դիմադրում գերակշռող ուժին, ետ շպրտում։

Գաբրիելը չի կարողանում մոռացության տալ այս մանկական ոգորումները։ Նա՝ փարիզցին, ժուլիեթի ամուսինը, գիտնականը, ժամանակակից պատերազմի էությանը քաջատեղյակ սպան, որը շուտով, իբրև թուրքական բանակի ռազմիկ, կատարելու է իր պարտքը, այս պահին կարծես նույն մանուկն է, իր ազգի թշնամու դեմ հնավանդ ատելությամբ լեցուն տղան։ Ո՞ր հայ պատանին չի երազել նույնը։ Միայն մի ակնթարթ Գաբրիելը զարմանում է, հոգնաբար ժպտում, ապա քուն մտնում։

Վախեցած արթնանում է։ Քնած ժամանակ մեկը նրան նայել էր սևեռուն հայացքով։ Հավանաբար երկար։ Գաբրիելը նայում է իր որդի Ստեփանի լուռ բոցավառվող աչքերին։ Չգիտես ինչու, նրան համակում է ինչ-որ տհաճ, անորոշ զգացում։ Տղան չպետք է հանկարծակիի բերեր քնած հորը։ Դրանով վիրավորանք է հասցվում բարոյական ինչ-որ խորիմաստ օրենքի։

Գաբրիելն իր խոսքին տալիս է խստության երանգ.

— Ի՞նչ ես անում այստեղ։ Որտե՞ղ է պարոն Ավագյանը։

Ստեփանը միայն հիմա է ջփոթվում. ինչո՞ւ խանգարեց հոր քունը։ Տղան չգիտե, թե ուր թաքցնի ձեռքերը։ Զորեղ շրթունքները բացվում են։

[1] ֆերման—հրովարտակ

Դպրոցական համազգեստ, լայն օձիք, կիսագուլպաներ։ Խոսելիս խաղում է բաճկոնի հետ.

— Մայրիկն ինձ թույլ տվեց, որ մենակ զբոսնեմ։ Պարոն Ավագյանն այսօր ազատ է։ Կիրակի օրերը չենք պարապում։

— Ստեփան, սա Ֆրանսիա չէ, սա Սիբիա է,— ազդու բացատրում է հայրը։— Մյուս անգամ առանց հսկողության սար չբարձրանաս։

Ստեփանը հետաքրքրությամբ նայում է հորը. կարծես այս փոքրիկ հանդիմանությունից բացի, լսելու է ավելի կարևոր խրատներ։ Բայց Գաբրիելն այլևս չի խոսում։ Նրան ինչ-որ ծիծաղելի շփոթություն է համակում։ Կարծես կյանքում առաջին անգամ է երես առ երես հանդիպում իր որդուն։ Յողոնջուք գալուց ի վեր նա գրեթե հոգ չի տարել տղայի մասին և ավելի շատ տղային տեսել է սեղանի առաջ նստած ժամանակ։ Մինչդեռ Փարիզում և արձակուրդների ժամանակ Շվեյցարիա մեկնելիս Գաբրիելը որդու հետ հաճախ էր դուրս գալիս շրջազայելու։ Բայց մի՞թե մարդ կարող է միայնակ լինել Փարիզում, Մոնթրևոյում կամ Շամոնիքսում։ Մուսա լեռան հստակ օդը կարծես այն լուծիչ տարրն է, որ երկուսի միջև ստեղծում է աննախընթաց մտերմություն։ Գաբրիելը քայլում է առջևից, իբրև բոլոր կարևոր տեղերին ծանոթ ռահվիրա։ Ստեփանը լուռ ու սպասողաբար հետևում է նրան։

Հայր ու որդի արևելքում։ Սա չի կարելի համեմատել եվրոպացի ծնողների ու զավակների մակերեսային փոխհարաբերությունների հետ։ Ով իր հորն է տեսնում, նա տեսնում է աստծուն։ Չէ՞ որ հայրը նախնիների այն հարատև շղթայի վերջին օղակն է, որով մարդն առնչվում է Ադամի, դրանով իսկ՝ արարչագործության ծագման հետ։ Բայց և որդուն տեսնողն էլ աստծուն է տեսնում։ Չէ՞ որ որդին ամենամերձավոր օղակն է, որը մարդուն կապում է վերջին դատաստանի, ամենայն ինչի վախճանի և փրկության հետ։ Նման սրբազան պարագայում մի՞թե կարելի է վարանել կամ խոսքի մեջ ժլատ լինել։

Հայրը վճռում է խոսել լրջորեն, ինչպես հարկն է.

— Հիմա ի՞նչ առարկաներ ես սովորում պարոն Ավագյանից։

— Վերջերս սկսել ենք հունարեն կարդալ, հայրիկ։ Ֆիզիկա էլ ենք անցնում, պատմություն, աշխարհագրություն։

Բագրատյանը գլուխը բարձրացնում է։ Ստեփանը հայերեն է խոսում։ Արդյոք ի՞նքն էլ հայերեն հարցրեց։ Իրար հետ սովորաբար խոսում են ֆրանսերեն։ Որդու հայերեն խոսակցությունը տարօրինակու-

թյան չափ հուզում է հորը։ Որքան գիտեր, Ստեփանն իր աչքին ավելի շուտ ֆրանսիացի պատանի էր, քան հայ։

— Աշխարհագրություն,— կրկնում է Գաբրիելը։— Հիմա ո՞ր աշխարհամասն եք անցնում։

— Փոքր Ասիայի և Սիրիայի աշխարհագրությունը,— ոգևորված պատասխանում է Ստեփանը։

Գաբրիելը, ի նշան հավանության, շարժում է գլուխը. կարծես ավելի խելացի բան չէր սպասում։ Ապա փորձում է խոսակցությունը մանկավարժորեն ավարտել, փոքր-ինչ շեղվելով բուն նյութից.

— Կարո՞ղ ես այստեղ գծագրել Մուսա լեռան քարտեզը։

Ստեփանն անչափ երջանիկ է, որ հայրն իրեն այդպիսի բան է վստահում։

— Օ՜, այո՛, հայրիկ։ Քո սենյակում դեռ կախված է հորեղբայր Ավետիսի քարտեզը՝ Անտիոքն ու ծովեզերքը։ Մնում է միայն, որ մասշտաբը մեծացնեմ և լրացնեմ պակասը։

Միանգամայն ճիշտ է։ Մի ակնթարթ Գաբրիելին ուրախացնում է Ստեփանը, բայց այնուհետև մտքերը պտտվում են զորահավաքի հրամանի շուրջը, որը երևի ճանապարհին է, գուցե Հալեպի Թուրքական գրասեղաններից մեկի վրա կամ, նույնիսկ, շրջապտույտ է կատարում Ստամբուլում։

Անխոս թափառում են։ Ստեփանն ամբողջ հոգով նոր խոսակցություն է փափագում։ Չէ՞ որ սա հայրիկի հայրենիքն է։ Ինչպե՞ս կուզենար լսել հոր մանկությանը վերաբերող պատմությունները, այն խորհրդավոր բաները, որ երբեմն հասնում էին իր ականջին։ Բայց հայրը կարծես որոշակի նպատակ ունի։ Ահա բացվում է անսովոր դարավանդը, ուր և նա ուզում էր գալ։ Լեռնակողից գոյացած տափարակը ձգվում է առաջ, կախվում անդունդի վրա։ Ժայռեղեն զորավոր մի ձեռք չոված մատներով բարձր բռնած պահում է դարավանդը, իբրև սկուտեղ։ Քարածածկ մի սարահարթ՝ այնքան ընդարձակ, որ կարող է երկու տուն տեղավորել։ Ծովի գրոհները, որոնք այստեղ հեշտությամբ են ծավալում իրենց խաղը, հազիվ են հանդուրժում մի քանի թփերի և կաշվի պես ամուր մի պերճածաղկի գոյությունը։ Օդում կախված հարթությունն այնքան առաջ է ձգվում, որ ինքնասպանություն կատարողը դրա եզրից չորս հարյուր մետր խորության վրա ծփացող ծովն ընկնելով, կանհետանա՝ ջրի մեջ առանց որևէ խութի բախվելու։ Ստեփանը, ինչպես ամեն մի տղա, ուզում է վազել դեպի դարավանդի եզրը։ Բայց հայրը

թափով ետ է քաշում և ջղաձգորեն բռնում որդու ձեռքը։ Աջ ձեռքով, որն ազատ է, ցույց է տալիս աշխարհի կողմերը.

— Ա՛յ, այնտեղից, հյուսիսային կողմից, մենք կկարողանայինք տեսնել Ալեքսանդրեթի ծովախորշը, եթե չլիներ Ռես էլ Խընզըր[1] հրվանդանը։ Հարավից էլ կերևար Որոնտեսի գետաբերանը, բայց լեռը աղեղի նման ծռվում է...

Ստեփանն ուշի-ուշով հետևում է հոր ցուցամատին, որը երևակայական գծի մեջ է առնում ալեհույզ ծովի կիսաշրջանը։ Բայց ինչ տղան է հարցնում, տեղագրության հետ ոչ մի առնչություն չունի.

— Հայրի՛կ, իսկապե՞ս պիտի պատերազմ գնաս։

Գաբրիելը չի զգում, որ դեռևս երկյուղով բռնած պահում է Ստեփանի ձեռքը։

— Այո։ Ամեն օր հրամանի եմ սպասում։

— Եվ պիտի գնա՞ս։

— Ուրիշ ելք չկա, Ստեփան։ Թուրքական բոլոր պահեստային սպաները պետք է ծառայության անցնեն։

— Բա մենք Թուրքե՞ր ենք։ Իսկ ինչո՞ւ միանգամից չկանչեցին։

— Իբր թե առայժմ բավականաչափ թնդանոթ չկա։ Երբ նոր մարտկոցները տեղադրվեն, այն ժամանակ բոլոր սպաներին էլ կկանչեն։

— Իսկ քեզ ո՞ւր են ուղարկելու։

— Ես Սիրիայում և Պաղեստինում գործող չորրորդ բանակից եմ։

Դա Գաբրիելի համար մխիթարական հեռանկար էր. որոշ ժամանակ կարող էր լինել Հալեպում, Դամասկոսում կամ Երուսաղեմում։ Թերևս հնարավորություն ստեղծեր իր հետ տանելու նաև Ժուլիեթին ու Ստեփանին։

Ստեփանը կարծես զուշակում է հոր մտատանջությունը։

— Բա մե՞նք, հայրիկ...

— Հենց դա է խնդիրը...

Հոր խոսքի վրա տղան թախանձանքով ասում է.

— Հայրիկ, մեզ թող այստեղ, խնդրում եմ, թող այստեղ։ Մայրիկին էլ դուր է գալիս մեր տունը։

Այս հավաստիացմամբ Ստեփանն ուզում է հորը հանգստացնել. չէ՞ որ մայրն այստեղ իրեն կարող է համարել օտար։ Նուրբ հոտառու-

---

[1] Ռես էլ Խընզըր (Թրք.)— խոզի գլուխ

թյամբ տղան իր ծնողների ամուսնության մեջ տեսնում է երկու աշխարհի ներսն ու դուրսը։

Գաբրիելը մտածմունքի մեջ է ընկնում.

— Ամենից լավն այն կլիներ, եթե ձեզ կարողանայի Ստամբուլով հասցնել Շվեյցարիա։ Բայց Ստամբուլը հակառակի պես արդեն դարձել է պատերազմի թատերաբեմ...

Ստեփանը ձեռքերը բռունցք դարձրած՝ սեղմում է կրծքին.

— Ո՛չ, Շվեյցարիա գնալ պետք չէ։ Հայրիկ, մեզ թող այստեղ...

Գաբրիելը զարմացած նայում է որդու աղերսալից աչքերին։ Տարօրինակ է։ Այս տղան, որ երբեք չի եղել իր նախնիների հայրենիքում, խորապես կապված է պապենական հողի հետ։ Այն, ինչ ապրում է Գաբրիելի մեջ, ինչով Բագրատյանների տոհմը կապված է Մուսա լեռան հետ, Փարիզում ծնված Ստեփանը ժառանգել է արյան հետ, առանց սեփական զգացմունքի փորձառության։ Հայրը գրկում է որդու ուսերը, բայց միայն այսքանն է ասում.

— Տեսնենք։

Երբ նորից բարձրացան Դամլաջրքի սարահարթը, նրանց ականջին հասավ Յողոնօլուքի զանգերի վաղորդյան զողանջը։ Մինչև հովիտ իջնելը մի ժամ տևեց։ Պետք է շտապեին, որ պատարագի գեթ երկրորդ կեսից չուշանային։

Ազիրում՝ շերամագյուղում, Բագրատյաններին սակավաթիվ մարդիկ էին հանդիպում, բարի լույս մաղթում։ Ազիրցիներն շտապում էին Յողոնօլուքի եկեղեցին։ Տասնհինգ բոպեի ճանապարհ էր։ Տներից շատերի առաջ սեղաններ էին դրված։ Դրանց վրա խոշոր տախտակներ էին շարված։ Տախտակների վրա բոժոժներ էին փռված՝ սպիտակավուն մի զանգված, որից ձագեր էին դուրս գալու։ Ստեփանը հորից իմացավ, որ իր նախապապ Ավետիսը եղել է մետաքսագործի որդի և վաղ հասակում, տասնհինգ տարին չլրացած, կյանքի ասպարեզ է մտել. գնացել է Բաղդադ շերամի բոժոժ գնելու։

Յողոնօլուք չհասած՝ նրանց պատահեց ծերունի ոստիկան Ալի Նազիֆը։ Այս արժանավոր զափթիեն այն տասը թուրքերից էր, որոնք տարիներ շարունակ ապրել էին գյուղերում բնակվող հայերի մեջ և պետք է ասել՝ խաղաղ ու բարեկամաբար։ Սրանից բացի, հինգ ստորադրյալ ոստիկաններ էլ կային, որոնք հաճախակի փոփոխվում էին, մինչդեռ Ալի Նազիֆը միշտ մնում էր իր տեղում, Մուսա լեռան պես անսասան։

Իր ընտանիքով այստեղ էր ապրում նաև մի սապատավոր փոստատար՝ սուլթանի ներկայացուցիչը։ Սա չորեքշաբթի ու կիրակի օրերը Անտիոքից բերում էր նամակներ ու լրագրեր։ Ալի Նազիֆն այսօր տագնապահար և մտահոգ է թվում։ Օսմանյան իշխանության այս գիսախոիվ պաշտոնյան ինչ-որ շտապ գործով տեղ է գնում։ Հնամաշ փափախի տակ պըսպըղում է քրտնքի մեջ կորած ծաղկատար դեմքը։ Հեծելազորային մարտական սուրը, տարուբերվելով, բախվում է նրա ծուռտիկ, սմքած սրունքներին։ Բագրատյան էֆենդիին հանդիպելիս նա միշտ էլ խոր հարգանքով պատվի էր առնում։ Սակայն այսօր բարևում է խստադեմ, մատնելով իր շփոթությունը։ Նրա օտարոտի վարմունքը Բագրատյանին այնքան տարօրինակ է թվում, որ նա երկար ժամանակ նայում է ոստիկանի ետևից։

Յողոնօլուքի եկեղեցու հրապարակում միայն մի քանի հոգի են երևվում։ Հեռու տեղերից են եկել և արդեն ուշացել են։ Նախշուն գլխաշորերով ու ծալավոր շրջազգեստներով կանայք, լայն շալվար ու էնթարի հագած տղամարդիկ։ Նրանց դեմքերին լուրջ, ինքնամփոփ արտահայտություն կա։ Արևն արդեն ամառային ուժ ունի. վառ շողերի տակ հուրհրատում են կրի պես սպիտակ տները։ Դրանք մեծ մասամբ միհարկանի են, նոր ներկած։ Այդտեղ են ապրում Տեր-Հայկազուն վարդապետը, բժիշկը, դեղագործը։ Այդտեղ է նաև համայնքի վարչության տունը, որ պատկանում է Յողոնօլուքի մեծահարուստ մուխթար[1] Թովմաս Քեբուսյանին։

Լայն գետնախարսխի վրա հանգչում է «Հրեշտակապետաց» եկեղեցին։ Շքամուտքը ձգվում է մինչև մայր դուռը։ Հիմնադիր Ավետիս Բագրատյանի կամքով ընդօրինակվել էր Կովկասում գտնվող ազգային հայտնի սրբավայրը՝ ավելի փոքր ծավալով։ Բաց դռնից դուրս է հորդում դպրախմբի երգը, որի հնչյունների տակ կատարվում է պատարագը։ Հոծ բազմության վերևում, մոմերի դալուկ լույսով պսակված՝ երևվում է կիսախավար խորանը։ Տեր-Հայկազունի կարմիր պատմուճանի վրա ճաճանչվում է ոսկե լանջախաչը։

Գաբրիելն ու Ստեփանը մայր դռնից ներս են մտնում։ Նրանց դիմավորում է տնային ուսուցիչը՝ Սամվել Ավագյանը։ Անհամբեր սպասում էր։

— Իսկույն տուն գնացեք, Ստեփան,— դիմում է նա իր սանին։— Ձեր մայրը Ձեզ է սպասում։

---

[1] մուխթար — գյուղապետ

Այնուհետև, երբ Ստեփանն անհետանում է բազմության մեջ, Ավագյանը դիմում է պարոնին.

— Կուզենայի Ձեզ հայտնել, որ պահանջեցին Ձեր արտասահմանյան և տեղական անձնագրերը։ Անտիոքից եկել էին երեք պաշտոնյա։

Գաբրիելն ուշադիր զննում է ուսանողի դեմքը, ուսանող, որ երկար տարիներ եղել է իր ընտանեկան կյանքի մասնակիցը։ Հայ մտավորականի դեմք։ Բարձր, փոքր-ինչ ետ թեքված ճակատ։ Ակնոցի տակ փայլող զգոն, խորաթախիծ աչքեր։ Ճակատագրի հանդեպ ունեցած հավիտենական հնազանդության արտահայտություն, միաժամանակ՝ սրաթափանց հայացք, որի վրա դրոշմված է թշնամու հարվածները միշտ ետ մղելու անհերթ պատրաստակամություն։ Մանրակրկիտ զննությունից հետո Բագրատյանը հարցնում է.

— Եվ դուք ինչպե՞ս վարվեցիք։

— Տիկինն ամեն ինչ հանձնեց պաշտոնյաներին։

— Տեղական անձնագի՞րն էլ։

— Այո, արտասահմանյանն էլ, տեղական էլ՝ թեզքերեն։

Բագրատյանը եկեղեցու սանդուղքով ցած է իջնում, գլանակ վառում և ծուխը մի քանի անգամ մտամոլոր ներս քաշում։ Տեղական անձնագիրն այն փաստաթուղթն է, որն ընձեռում է օսմանյան կայսրության գավառներում անարգել շրջագայելու իրավունք։ Առանց այս թղթի կտորի, սուլթանի հպատակներից ոչ մեկը տեսականորեն իրավունք չունի նույնիսկ գյուղից գյուղ գնալու։ Գաբրիելը դեն է նետում գլանակը, գլուխը շեշտակի բարձրացնում.

— Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ այն, որ այսօր-վաղը ինձ Հալեպ կկանչեն, սպայական բաժանմունք։

Ավագյանը հայացքը հառում է խոր դրոշմված անվահետքերին, որ վերջին անձրևը չի կարողացել ջնջել եկեղեցու հրապարակի կավահողի վրայից։

— Պարոն, չեմ կարծում, որ դա Ձեզ Հալեպ կանչելու նշան է։

— Ուրիշ պատճառ լինել չի կարող։

Ավագյանն իր ձայնը բոլորովին իջեցրեց.

— Ինձանից էլ անձնագիր պահանջեցին։

Բագրատյանն ուզում է ծիծաղել, բայց իսկույն զսպում է իրեն.

— Սիրելի Ավագյան, դա նշանակում է, որ պետք է գնալ Անտիոք՝ զինվորական հաշվառման։ Այս անգամ արդեն կատակ չեն անում։ Բայց թե անհոգ եղեք։ Ձեր զինվորական ծառայության փրկագինը նորից կտանք։ Դուք ինձ պետք եք Ստեփանի համար։

Ավագյանը հայացքը չի հեռացնում անվահետքերից.

— Ասենք թե ես երիտասարդ եմ, բայց չէ՞ որ բժիշկ Ալթունին, դեղագործ Գրիգորը, տեր Նոխուդյանը զինապարտ չեն։ Նրանցից էլ պահանջել են թեզքերեները։

— Հաստա՞տ գիտեք,— հետաքրքրվում է Գաբրիելը։— Ո՞վ էր պահանջողը։ Իրավասու պաշտոնյանե՞ր էին, ինչի՞ հիման վրա։ Առհասարակ որտե՞ղ են այդ պաշտոնյաները։ Մեծ բավականությամբ կխոսեի դրանց հետ։

Ավագյանը պատասխանում է, որ այդ պաշտոնյաները ոստիկանների հեծյալ շոկատի ուղեկցությամբ մեկուկես ժամ առաջ հեռացել են Սուեդիայի կողմը։ Նրանց վարմունքից կարելի է կռահել, որ դա վերաբերում է միայն անվանի մարդկանց։ Չէ՞ որ հասարակ գյուղացին կամ արհեստավորը ոչ մի անձնագիր էլ չունի։ Լավագույն դեպքում նա կարող է ձեռք բերել Անտիոքի շուկա գնալու արտոնագիր։

Գաբրիելը լայն քայլերով մի քանի անգամ ետ ու առաջ է շարժվում, մոռացության տալով տնային ուսուցչի գոյությունը։ Այնուհետև ազդու եղանակով ասում է.

— Ավագյան, առայժմ գնացեք եկեղեցի։ Շուտով ես էլ կգամ։

Բայց նա ոչ մի մտադրություն էլ չունի ներկա լինելու պատարագի մնացած մասին, չնայած սրտապարար խմբերգն այժմ հնչում է առավել ուժգնությամբ։ Գլուխը մտասույզ խոնարհած՝ նա դանդաղ դեգերում է հրապարակում, փոքր-ինչ քայլում փողոցի երկայնքով, ապա հեռանում, նկատելով ամառանոց տանող ճանապարհը։ Առանց տուն մտնելու, ախոռի մոտ կանգ է առնում, պատվիրում թամբել այն ձիերից մեկը, որոնք Ավետիս եղբոր պարծանքն էին։ Ափսոս, Քրիստափորն այնտեղ չէ, որ ուղեկցի։ Հետը տանում է պատանի ձիապանին։ Դեռևս պարզորոշ չգիտե, թե ինչ է լինելու իր անելիքը։

Համենայն դեպս, ձին եռանդով քշելու դեպքում, միջօրեից առաջ կարող է հասնել Անտիոք։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Բոնաբ[1] համամ[2] սելամլըք[3]

Ստամբուլի հյուքյումեթը[4], ինչպես կոչվում էր կայմակամի[5] կառավարական քոնաքը, գտնվում էր միջնաբերդի ներքևում։ Դա կեղտի մեջ կորած և չափից դուրս ընդարձակ շենք էր, քանի որ Անթաքիեի քաղաքն[6] Սիրիայի ամենամարդաշատ գավառներից է։

Գաբրիելը ծառային ձիերի հետ թողել էր Որոնտեսի կամրջի մոտ և երկար ժամանակ սպասում էր քոնաքի դիվանատան մեծ սրահներից մեկում։ Հույս ուներ, թե իրեն կընդունի հենց ինքը՝ կայմակամը։ Այցետոմսն արդեն ուղարկել էր։ Թուրքական պաշտոնատունը Գաբրիելին վաղուց էր ծանոթ։ Խոնավ, ծեփաթափ պատերից մեկի վրա սուլթանի անճաշակ յուղանկարն էր, Ղուրանի ասույթներից երկուսը՝ շրջանակի մեջ առնված։ Պատուհանների գրեթե բոլոր ապակիները ջարդված էին, փոխարինված բարակ տախտակներով։ Փայտե կեղտոտ հատակը ծածկված էր թքով ու ծխախոտի մնացորդներով։

Դատարկ գրասեղանի առաջ նստած էր ինչ-որ ցածրաստիճան պաշտոնյա, որը ծպացնում էր բերանը և անքթիթ հայացքով նայում առաջ։ Ցուրտ մսաճանճերի մի ամբողջ լեգեոն անարգել տալիս էր իր վայրիվերո, քստմնելի համերգը։ Պատերի երկայնքով ցածրիկ նստարաններ էին դրված։ Երկու հոգի էլ էին սպասում՝ մի թուրք և մի արաբ գյուղացի։

---

1 Բոնաբ — ընդունարան
2 համամ — բաղնիք
3 սելամլըք — հյուրասրահ
4 հյուքյումեթ — դիվանատուն, վարչություն
5 կայմակամ — գավառապետ
6 քազա — գավառ

Դրանցից մեկը, առանց ուշադրություն դարձնելու շրջապատող նողկանքին, հատակին փռել էր լայն արխալուղը և ծալապատիկ նստել. կարծես այդ ձևով կարող էր զերծ մնալ աղտեղությունից։ Սենյակը լցված էր քրտինքի, հում ծխախոտի, մեղկության ու թշվառության տհաճ հոտով։ Գաբրիելը գիտեր, որ տարբեր ժողովուրդների պետական ատյանները ունեն իրենց սեփական հոտը։ Բայց ընդհանուր է երկյուղի ու հնազանդության այս արտաշնչումը, որով փոքր մարդիկ պետական իշխանության ուժն ընդունում են իբրև բնական աղետ։

Վերջապես նախշուն զգեստով դռնապանը Գաբրիելին գոռոզաբար առաջնորդեց դեպի մի այլ, ավելի փոքր սենյակ, որը մյուս սրահներից տարբերվում էր իր պատուհանների անվթար ապակիներով, պաստառներով, թղթառատ գրասեղանով և որոշ մաքրությամբ։ Պատից կախված էր ոչ թե սուլթանի պատկերը, այլ նժույգ հեծած Էնվեր փաշայի լուսանկարը։ Գաբրիելն իր դիմաց տեսավ շիկակարմիր մազերով, անգլիական կարճ բեղերով պեպենոտ մի երիտասարդ։ Սա կայմակամը չէր, այլ մյուդիրը[1], որ վարում էր ծովեզերյա գավառի, Սուեդիայի նահիյեների[2] գործերը։ Մյուդիրի արտաքինի մեջ ամենացայտունը նրա չափազանց երկար, խնամքով ներկած եղունգներն էին։ Մոխրագույն համազգեստ էր կրում, որը նույնիսկ նրա չոր ու ցամաք մարմնի վրա փոքրինչ նեղ էր թվում։ Փողկապը կարմիր էր, իսկ թելավոր երկայնաճիտ կոշիկները՝ դեղին։

Բագրատյանն իսկույն հիշեց Սալոնիկը։ Դրա համար այլ ապացույց պետք չէր. երիտասարդի արտաքինը բավական էր։ Սալոնիկը «Երիտասարդ Թուրքերի» ազգային շարժման, մոլեռանդ արևմտապաշտության, Եվրոպական առաջադիմության բոլոր ձևերի անզուսպ մեծարման ծննդավայրն էր։ Մյուդիրը, անկասկած, Իթթիհաթի համակիրներից էր, գուցե և նույնիսկ անդամներից մեկը։ Իսկ դա խորհրդավոր «Միավորման և առաջադիմության կոմիտեն» էր, որն այն ժամանակ անսահմանափակ իրավունքներով իշխում էր խալիֆի կայսրությունում։ Նա հյուրին ընդունեց արտասովոր քաղաքավարությամբ, իր ձեռքով մի աթոռ քաշեց գրասեղանի մոտ։ Բոլոր շիկահերներին հատուկ բորբոքված, նոսր թարթիչները նա ուղղեց Բագրատյանին, թեև մեծ մասամբ նայում էր կողքանց։ Գաբրիելը մի անգամ էլ ադղու շեշտով արտասանեց իր ազգանունը։ Մյուդիրը փոքր-ինչ խոնարհեց գլուխը.

---

1 մյուդիր — կառավարիչ
2 նահիյե — գավառի մի մասը

— Բագրատյանների մեծահամբավ տոհմը մեզ ծանոթ է։

Չի կարելի ուրանալ, որ Գաբրիելի շարժումն ու խոսքերը հաճելի տպավորություն գործեցին։ Ձայնը մեծ վստահությամբ էր հնչում։

— Մեր հայրենիքի քաղաքացիներից ոմանց, այդ թվում նաև իմ անձնագրերն այսօր ետ են վերցրել։ Դա ձե՞ր ատյանի կարգադրությամբ է կատարված։ Այդ բանը ձեզ հայտնի՞ է։

Մյուդիրը երկար մտածելուց և պաշտոնական թղթերը թերթելուց հետո հայտնեց, թե իր պարտականություններն այնքան շատ են, որ ամեն մանրուք իսկույն հիշել չի կարող։ Հանկարծ նրա միտքը լուսավորվեց.

— Ա՜խ, այո։ Իհարկե։ Տեղական անձնագիրը։ Դա ոչ թե քաղաքի ինքնուրույն տնօրինությունն է, այլ նորին գերազանցություն ներքին գործոց մինիստրի հրամանը։

Տպագիր մի թուղթ գտնելով՝ դրեց առաջը։ Թվում էր, թե ցանկության դեպքում կարելի է կարդալ մինիստր Թալիաթ բեյի հրամանը։ Գաբրիելն ուզեց տեղեկանալ, թե գա արդյո՞ք ընդհանուր միջոցառում է։ Պատասխանը փոքր-ինչ խուսափողական էր։ Հրամանը հազիվ թե ժողովրդական լայն զանգվածներին վերաբերեր, քանի որ տեղական անձնագրեր մեծ մասամբ ունեին միայն հարուստ վաճառականները, առևտրականները և նման անձինք։

Բագրատյանն անթարթ նայում էր մյուդիրի երկար եղունգներին։

— Ես իմ կյանքն անց եմ կացրել արտասահմանում, Փարիզում։

Պաշտոնյան կրկին թեթևակի խոնարհեց գլուխը։

— Դա մեզ հայտնի է, էֆենդի[1]։

— Ուստի և այնքան էլ սովոր չեմ ազատազուրկ լինելու...

Մյուդիրը ներողամտաբար ժպտաց.

— Այս գործին շատ եք կարևորություն տալիս, էֆենդի։ Մենք պատերազմի մեջ ենք։ Ի դեպ, այս օրերին որոշ անսովոր բաներ կարող են պատահել նաև գերմանացի, ֆրանսիացի, անգլիացի քաղաքացիների հետ։ Հիմա ամբողջ Եվրոպայում էլ նույնն է դրությունը, ինչ-որ մեզ մոտ։ Կխնդրեի այսուհետև մտածել այն մասին, որ մենք գտնվում ենք չորրորդ բանակի թիկունքային շրջանում, ուրեմն և ռազմաճակատային գոտում։ Անպայման պետք է հսկողություն սահմանել հաղորդակցության վրա։

[1] էֆենդի — պարոն

Այս պատճառաբանությունն այնքան հիմնավոր էր, որ Գաբրիելը թեթևություն զգաց։ Այսօր առավոտյան տեղի ունեցած իրադարձությունը, որը նրան ստիպեց գալ հասնել Անտիոք, իսկույն կորցրեց իր սուր ազդեցությունը։ Պետությունը պետք է պաշտպանվի։ Շարունակ լուրեր էին շրջում լրտեսների, դավաճանների, դասալիքների մասին։ Յողոնօլուքի անկյուններում նստած մարդը չպետք է դատապարտի նման միջոցառումները։ Մյուդիրն իր մյուս ակնարկություններով էլ փորձեց փարատել հայի թերահավատ անհանգստությունը։ Ճշմարիտ է, մինիստրը ետ է պահանջել անձնագրերը, բայց դա չի նշանակում, թե անհրաժեշտության դեպքում նորերը տրվել չեն կարող։ Դրա համար վիլայեթն[1] իրավասու իշխանություն ունի Հալեպում։ Բագրատյան էֆենդին ինքն էլ, անշուշտ, գիտե, որ նորին գերազանցություն Ջելալ բեյ վալին ամբողջ կայսրության ամենաբարեհաճ և ամենաարդարադատ նահանգապետն է։ Եղածի վերաբերյալ, տեղական իշխանության հավանությամբ, կարելի է խնդրագիր ուղարկել Հալեպ։ Մյուդիրն իր խոսքն ընդհատեց.

— Էֆենդի, եթե չեմ սխալվում, դուք զինվորական ծառայության մեջ եք...

Գաբրիելը համառոտ պատմեց իրողությունը։ Դեռևս երեկ ինքը նույն պաշտոնյային գուցե խնդրեր հետաքննություն կատարել, թե ինչու իրեն չեն կանչում, բայց մի քանի ժամվա ընթացքում ամեն ինչ հիմնովին փոխվեց։ Պատերազմին, Ժուլիեթին ու Ստեփանին վերաբերող մտորումները նրան խորապես ընկճում էին։ Իբրև թուրքական սպա, նա իր պարտքի զգացումը համարում էր հալված-վերացած։ Հույս ուներ, թե Հալեպի ռազմական բաժանմունքը մոռացել է իրեն։ Մտադիր էլ չէր հիշեցնելու իր գոյությունը։ Բայց այժմ տեսնում էր, թե Անտիոքի իշխանությունները որքա՜ն իրազեկ են այն ամենին, ինչ վերաբերում է իրեն։

Մյուդիրն իր բոցկլտուն աչքերով հանգստացուցիչ հայացք նետեց Բագրատյանին.

— Տեսնո՞ւմ եք, Դուք զինվորական եք, արձակուրդի մեջ։ Ձեր ինչի՞ն է պետք թեզքերեն։

— Բայց կինս ու որդիս...

Մյուդիրի համար անհասկանալի այս բառերն արտասանելիս Գաբրիելն առաջին անգամ զգաց, որ խեղդվում է.

«Մենք թակարդի մեջ ենք»։

Հենց այդ վայրկյանին բացվեց հարևան սենյակի երկփեղկ դուռը։

[1] վիլայեթ — նահանգ

Ներս մտան երկու պարոն։ Մեկը բարձրաստիճան սպա էր, մյուսը՝ անկասկած, կայմակամը։ Գավառապետը գորշ, ճմռթված սերթուկով տղամարդ էր՝ հաղթամարմին, կարծես փչած։ Աչքերի տակ գոյացած սևագորշ տոպրակները ծանրորեն կախված էին լերդախտավոր, գունաթափ, լխկած դեմքին։

Բագրատյանն ու մյուդիրը ոտքի ելան։ Կայմակամը հային ամենաչնչին ուշադրության անգամ չարժանացրեց։ Նա իր ստորադրյալին ինչոր բան հանձնարարեց, ձեռքն անտարբեր մոտեցրեց ֆեսին և մայորի ուղեկցությամբ դուրս եկավ դիվանատնից. հավանաբար աշխատանքային օրն արդեն ավարտված էր։ Գաբրիելն իր հայացքը սևեռել էր դռանը։

— Մի՞թե սպաների մեջ տարբերություն կա։

Մյուդիրն սկսեց իր գրասեղանը կարգի բերել։

— Էֆենդի, չեմ հասկանում, թե ի՞նչ նկատի ունեք։

— Ուզում եմ ասել տարբեր վերաբերմո՞ւնք կա թուրքերի և հայերի հանդեպ։

Թվաց, թե այդ հարցից մյուդիրը սոսկալի վախեցավ.

— Օրենքի առաջ օսմանյան բոլոր քաղաքացիներն էլ իրավահավասար են։

Այնուհետև նա այն միտքը հայտնեց, թե հենց դա էր 1908 թվականի հեղափոխության ամենակարևոր նվաճումը։ Եթե նախորդ ժամանակներից որոշ սովորություններ պահպանվեն (ինչպես, ասենք, հասարակական և զինվորական ասպարեզում օսմանցի բուն ժողովրդին գերապատվություն տալը), ապա դրանք այն երևույթներն են, որ ի պաշտոնե վերացվել չեն կարող։ Ժողովուրդներն այնպես արագ չեն փոխվում, ինչպես սահմանադրությունները, և բարեփոխությունները թղթի վրա ավելի արագ են կիրառվում, քան իրականում։ Եվ նա այսպես եզրափակեց իր պետական-քաղաքական դատողությունները.

— Պատերազմը բոլոր ասպարեզներում փոփոխություն կառաջացնի։

Գաբրիելն այս խոսքերն ընկալեց իբրև բարեպաշտ մարգարեություն։

Բայց մյուդիրը հանկարծ բարձրացրեց իր պեպենոտ, դարչնագույն դեմքը, որն առանց պատճառի ատելությունից այլայլված էր.

— Պետք է հուսալ, որ կառավարությանը որևէ դիպված չի ստիպի բնակչության որոշ մասի նկատմամբ ցուցաբերել իր անխնա խստությունը։

Երբ Գաբրիել Բագրատյանը դուրս եկավ Անտիոքի շուկայի փողոցը, երկու վճիռ էր կայացրել։ Առաջինը. զորակոչի դեպքում կանգ չառնել որևէ զոհողության առաջ, փրկագին տալ և ազատվել զինվորական ծառայությունից։ Երկրորդը. Յողոնօլուքի տան խաղաղավետ անդորրությանից մեջ սպասել մինչև պատերազմի վերջը՝ աննկատ և անվրդով։ Քանի որ 1915 թվականի գարունն էր, ապա մի երկու ամիս էր պետք, մինչև ինքվեր ընդհանուր զինադադարը։ Դա կլիներ սեպտեմբերին կամ հոկտեմբերին։ Կողմերից ոչ մեկը չէր հանդգնի ձմեռային նոր արշավանք ձեռնարկել։ Մինչ այդ կարելի էր մի կերպ գլուխ պահել, իսկ այնուհետև հնարավորին չափ շուտափույթ վերադառնալ Փարիզ։

Նրան հրապուրեց շուկան, այն հախուռն հորձանքը, որ ո՛չ աճապարանք գիտե, ո՛չ ավելանում է, ո՛չ պակասում, ինչպես եվրոպական քաղաքների երթևեկությունը, այլ անդիմադրելի համաչափությամբ առաջ է գլորվում, ինչպես ժամանակը՝ հավիտենականության մեջ։

Շուկայում վերուվար հոսող հանդիպակաց կողմերն այնքան հորդառատ էին, որ մարդ կարող էր հավատալ, թե ինքը ոչ թե աստծո աչքից ընկած գավառական Անթաքիե քաղաքումն է, այլ Հալեպում կամ Դամասկոսում։ Եվրոպական զգեստներ հագած թուրք վաճառականներ և պաշտոնյաներ՝ գավազաններով, օսլայած օձիքներով ու ֆեսերով։ Հայեր, հույներ, սիրիացիներ։ Սրանք նույնպես աչքի էին ընկնում եվրոպական հագուստներով, թեև տարբեր գլխանոցներ ունեին։ Շարունակ հանդիպում էին քրդեր, չերքեզներ՝ իրենց տարազով։ Նրանցից շատերը բացեիբաց զենք էին կրում։ Կառավարությունը քրիստոնյաների մոտ հայտնաբերած գրպանի դանակն անգամ կասկածի տակ էր առնում, բայց հանդուրժում էր, երբ լեռնական անհանգիստ ցեղերը հետևակային արդիական հրացաններով էին շրջում։ Նույնիսկ ինքն էր նվիրում։ Շրջակայքից եկած արաբներ։ Նույնիսկ հարավից այստեղ հասած մի քանի բեդվին՝ երկար, բազմածալ վերարկուներով, անապատի գույներով, շքեղ գլխանոցներով, որոնց մետաքսաթել ծոպերն իջնում էին մինչև ուսերը։ Ջաղրաներով՝ մահմեդական կնոջ ամոթխածության քողերով պարուրված կանայք։ Անսքող դեմքերով կանայք՝ ազատագրված, ոտքերը չծածկող զգեստներով, մետաքսե գուլպաներով։ Երբեմն մարդկային բազմության մոտով, գլուխը մինչև գետին խոնարհած, քարշ էր գալիս ծանրաբեռ մի ավանակ՝ կենդանական աշխարհի այդ անմխիթար պրոլետարը։ Գաբրիելին թվում էր, թե շարունակ նույն ավանակին է տեսնում, որը փոքր-ինչ հեռվից, գլուխը տմբտմբացնելով անցնում է, նույն ցնցոտիավոր պատանուն, որը նրա սանձից բռնած՝ առաջ է տանում։

Բայց այս ամբողջ աշխարհը՝ տղամարդիկ, կանայք, թուրքերը, արաբները, հայերը, քրդերը, եռուզեռին խառնված հողագեմ զինվորները, ավանակներն ու այծերը, բոլորը միաձուլվել, իրենց նույնանման ընթացքով աննկարագրելի միասնություն էին կազմել։ Դա երկարաձիգ, դանդաղ և օրորուն ընթացք էր, որն անզուսպ կերպով մղվում էր դեպի ինչ-որ անորոշ մի նպատակ։

Եվ Գաբրիելը ճանաչեց իր մանկության բույրերը՝ ամանների մեջ եռացող կտավատի ձեթի հոտը, որը կափարիչների տակից դուրս հորդելով, ողողում էր փողոցը. բացօթյա կրակի վրա տապակվող գառան միսը, որի հետ առատորեն սխտոր էր խառնած. նեխած բանջարեղենի հոտը և այդ բոլորի վրա իշխող հոտն այն մարդկանց, որոնք գիշերները քնում էին ցերեկային նույն զգեստներով։

Նրան ծանոթ էին նաև շրջիկ առևտրականների երգեցիկ եռանդուն կանչերը. «Յա ռեզա՜ք, յա քերի՜մ, յա ֆեթթա՜հ, յա ալիմ»[1]։ Նույն ձևով պատանիները դես-դեն ընկած՝ տոպրակներից դուրս էին բերում օղաձև ապիտակ հացեր, առաջարկում անցորդներին. «Ո՜վ ամենքին կերակրող, ո՜վ ամենաբարի, ո՜վ ամեն դուռ բացող, ո՜վ ամենագետ»։ Վաղածանոթ եղանակով գովաբանում էին արմավը. «Ո՜վ դու թխորակ, ո՜վ դու անապատի թխություն, ո՜վ աղջնակ»։ Կոկորդային ձայներով նույնն էին պնդում նաև սալաթավաճառները. «Էդ դաիմ ալլահ, ալլահ էդ դաիմ»[2]։ Եթե մշտնջենականն աստվածն է, եթե աստվածն է մշտնջենականը, ապա դրանով կարող էր սփոփվել ապրանքին նայող գնորդը։

Գաբրիելը գնեց մի բերդակի՝ բլիթ, որի վրա խաղողի օշարակ էր քսված։ Նույնիսկ այդ «ծիծեռնակի կերի» հետ մանկական հուշեր էին կապված։ Բայց առաջին իսկ պատառը զզվանք պատճառեց, և նա թխվածքը նվիրեց մի փոքրիկ տղայի, որն ակնապիշ նայում էր իր բերանին։ Գաբրիելը մի պահ փակեց աչքերը, և նրա սիքտն այնպե՞ս ճմլվեց։ Ի՞նչ էր պատահել, աշխարհը շո՞ւտ էր եկել։ Չէ՞ որ այդ երկրում էր ծնվել։ Այդտեղ իրեն պետք է զգար հայրենի հողում։ Բայց ինչպե՞ս։ Շուկայի մարդկային անզուսպ, համաչափ հորձանքը դիտելիս հայրենիքը նրա աչքին գառնում էր վիճելի։ Զգում էր, թեև ինքնամփոփ դեմքերն անցնում էին միանգամայն անտարբեր։ Իսկ երիտասարդ մյուդի՞րը։

[1] յա ռեզաք, յա քերիմ, յա ֆեթթահ, յա ալիմ—ո՜վ բարիքներ շնորհող, ո՜վ ողորմած, ո՜վ հացթող, ո՜վ իմաստուն

[2] էդ դաիմ ալլահ, ալլահ էդ դաիմ— հավիտենակա՞ն է աստված, աստվա՞ծն է հավիտենական

Նա իրեն վերին աստիճանի կիրթ և քաղաքավարի պահեց։ «Բագրատյանների մեծապատիվ տոհմը»։ Բայց Գաբրիելն այժմ ներքուստ զգում էր, որ այդ ամբողջ քաղաքավարությունը, տոհմի հասցեին ուղղված հաճոյախոսությամբ հանդերձ, պարզապես լկտի ծաղր էր։ Այլ բան չէր, քան ատելություն, նրբակիրթ ձևերով քողարկված ատելություն։ Այստեղ էլ նրա շուրջը նույն ատելության հորձանուտն էր ծփում։ Դա այրում էր նրա մաշկը, վիրավորում թիկունքը։ Հիրավի, հանկարծ նա իր մեջքին սարսուռ զգաց. կարծես հետապնդում էին, և չկար մի մարդ, որին ապավիներ։ Յողոնօլուքի մեծ տանը, յուրայինների շրջանում, այս ամենի մասին ոչ մի պատկերացում չուներ։ Իսկ առա՞ջ, Փարիզո՞ւմ։ Չնայած ամբողջ բարեկեցությանը, Գաբրիելն այնտեղ իրեն զգում էր սառնությամբ շրջապատված տարագիր օտարականի վիճակում, օտարական, որը մի տեղ արմատ է գցել։ Այստեղ արմատ ունի՞ գցած։ Մինչև այժմ իր հայրենիքի այս խղճուկ շուկայում լրիվ չափեց իր բացարձակ օտարության աստիճանը։ Օտարություն ամբողջ աշխարհում։ Հայ։ Նրա մեջ կար հնադարյան արյուն, հնադարյան ժողովուրդ։ Բայց ինչո՞ւ նա ավելի հաճախ ֆրանսերեն էր մտածում, քան հայերեն, ինչպես այժմ։ (Այսօր առավոտյան որքա՞ն ուրախացավ, երբ որդին իր հարցերին հայերեն պատասխանեց)։ Արյուն և ժողովուրդ։ Արժանապատվություն։ Մի՞թե սրանք սնամեջ գաղափարներ էին։ Բոլոր դարերում էլ մարդիկ կյանքի դառնահամ ճաշի վրա գաղափարների համեմունքներ են ցանել, այն դարձրել առավել անմարսելի։

Շուկայի մի կողմի վրա նեղ փողոց բացվեց։ Խանութների դռներին, ցուցափեղկերի առաջ մեծ մասամբ հայեր էին կանգնած՝ դրամափոխներ, գորգավաճառներ, ակնավաճառներ։ Մի՞թե սրանք էին Գաբրիելի եղբայրները, խորամանկ դեմքերով, կայծկլտուն աչքերով հաճախորդներին դարանակալող այդ մարդիկ։ Ո՜չ, նման եղբայրությունից շնորհակալ է։ Դա միանգամայն խորթ էր նրա հոգուն։ Արդյոք ծերունի Ավետիս Բագրատյանը տարբերվո՞ւմ էր, ավելի լա՞վն էր շուկայի այս առևտրականներից, եթե նույնիսկ ավելի հեռատես էր, ավելի ընդունակ ու եռանդուն։ Եվ Գաբրիելն արդյոք իր պապին չէ՞ր պարտական, եթե նման չէր սրանց։

Ցհաճությամբ համակված, նա շարունակեց իր ճանապարհը։ Գիտակցում էր նաև իր կյանքի մեծագույն դժվարություններից մեկը. շատ քան տեսնում էր ժուլիեթի աչքերով։ Մարդկանց հետ շփվելիս խոսուն զգում էր, որ ինքն օտարական էր ոչ միայն աշխարհում, այլև նույնիսկ

իր մեջ։ Հիսուս Քրիստոս, մի՞թե հնարավոր չէ մարդ լինել, անկախ այլոց գոյությունից։ Հեռանալ այս կեղտոտ, խորթ խաժամուժից, ազատ լինել, ինչպես այսօր առավոտյան Մուսա լեռան բարձունքներում։ Ոչինչ այնքան չէր կարող նրան ջլատել, ինչպես սեփական փորձի վրա խարբսխված իրականության զգացումը։

Գաբրիելը փախավ Ուզուն չարչուից, որ թուրքերեն նշանակում է երկար շուկա։ Այլևս չկարողացավ դիմանալ օտար եռուզեռին։ Գնաց նորակառույց շենքերի արանքում ընկած հրապարակը։ Այստեղ կար մի գողտրիկ շենք։ Դա համամն էր՝ բաղնիքը։ Թուրքիայում ամենուրեք կան սեփական շռայլությամբ կառուցված այսպիսի շենքեր։ Դեռևս վաղ էր ծերունի աղա Ռիֆաաթ Բերեքեթին այցելելը։ Եվ քանի որ Գաբրիելը ցանկություն չուներ կասկածելի ճաշարանները գնալու, մտավ բաղնիք։

Քսան րոպե նա մնաց ընդհանուր քրտնասրահում, դանդաղ վեր բարձրացող գոլորշու ամպերի մեջ, որոնք ոչ միայն մյուս լողացողների մարմիններն էին ուրվականաձև հեռացնում, այլև սեփական մարմինը։ Դա կարծես կարճատև մահ էր։ Գաբրիելն զգում էր անցնող օրվա անթափանց նշանակությունը։ Ջրի կաթիլների հետ հեռավոր թվացող նրա մարմնի վրայից ցած էր գլորվում նաև այն հոգնաբեկ հավատը, որին ինքը մինչ այդ վստահորեն ապավինել էր։

Կողքի զով սրահում Գաբրիելը պառկեց ազատ թախտերից մեկին՝ կատարելու մնացած արարողությունը։ Նրան այնպես էր թվում, թե ինքը հիմա ավելի մերկ է, քան մինչ այդ գոլորշու մեջ եղած ժամանակ։ Մի քիսաչի վրա ընկավ, բոլոր կանոններով ի ցույց հանեց իր արվեստը, որի էությունը կեղտ հանելն էր։ Նա համաչափ հարվածներ էր տեղում լողացողի մարմնի վրա, կարծես թմբուկ էր զարկում։ Այս գործողությունը կատարելիս՝ նա հևալով երգ էր մրմնջում։

Հարևան թախտերի վրա նույն մշակմանն էին ենթարկվում նաև մի քանի թուրք բեյ։ Նրանք հլու-հնազանդ հանձնվել էին քիսաչիների մոլեգնաթափ եռանդին և բավականությունից հոգոց էին հանում։ Միևնույն ժամանակ զրուցում էին։ Խոսակցությունը երբեմն ընդհատվում էր լողացողների այս կամ այն բացականչությունից։ Սկզբում Գաբրիելը ոչ մի տրամադրություն չուներ ունկնդրելու։ Բայց քիսաչու՝ խոշտանգման այդ ոգու, մրմունջների հետ ձայներն անխուսափելիորեն հասնում էին նրա ականջին։ Այդ ձայներն այնքան արտասովոր ինքնատիպություն ունեին, այնքան խիստ էին միմյանցից զանազանվում, որ Գաբրիելին թվաց, թե տեսնում է դրանք։

Առաջինը ճարպոտ բաս էր։ Դրա տերը, անկասկած, ինքնավստահ բնավորություն ուներ և ամենամեծ կարևորությունը տալիս էր ամեն անցուդարձ իմանալուն, հնարավորության սահմաններում՝ ավելի վաղ, քան իրավասու պաշտոնյաները։ Ամեն ինչի քաջատեղյակ այդ մարդը, թերևս, ուներ իր գաղտնի աղբյուրները։

— Անգլիացիք նրան տորպեդանավով Կիպրոսից ուղարկել են ծովափ... Օշլաքիի մոտերքը... Այդ մարդը փող և զենք է բերել, գյուղը յոթ օր ոտքի հանել... Ջափթիեները, ի՜նչ խոսք, բանից անտեղյակ են եղել... Նույնիսկ անունը դիտեմ... Այդ պիղծ խոզի ազգանունը Քյոշքերյան է...

Երկրորդ ձայնը բարձր էր և երկչոտ։ Դա երևի ավելի տարեց, խաղաղաբարո մարդ էր, որը չարիքի նկատմամբ թերահավատ էր։ Այդ ձայնը մյուսներից որոշակիորեն «կարճահասակ» էր, բայց վերևից էր նայում։ Նա իր հեշտալից թառանչները համեմում էր Ղուրանի վերամբարձ խոսքերով.

— Լա իլա՜հ իլա լլա՜հ... Մեծ է աստված... Այսպես չի լինի... Գուցե և դա հեշտ չէ... Լա իլա՜հ իլա լլա՜հ... Շատ են խոսում... Գուցե ասեկոսե է...

Ճարպոտ բասն արհամարհանքով առարկեց.

— Ձեռքիս են բարձրաստիճան մի անձնավորության... իմ հավատարիմ բարեկամի չափազանց լուրջ նամակները։

Երրորդ ձայնը։ Ճղճղան, խառնակիչ և քաղաքական դավեր սարքող, որը լիասիրտ ուրախանում է, երբ աշխարհում ամեն ինչ տակնուվրա է լինում։

— Այդ բանը չի կարելի ինքնահոսի մատնել... Պետք է վերջ տալ։ Ի՞նչ է մտածում կառավարությունը... Ի՞նչ է մտածում Իթթիհաթը... Դրժբախտությունը զինվորական պարտադիր ծառայությունն է... Խաժամուժն էլ են զինել... Հիմա տեսեք, թե գլխներիդ ինչ է գալու... Պատերազմ է։ Արդեն մի քանի շաբաթ է, ինչ կոկորդս պատռելով՝ այդ մասին եմ խոսում...

Չորրորդ ձայնը՝ մտահոգությամբ.

— Իսկ Զեյթո՞ւնը։

Խաղաղաբարո ծերուկը.

— Զեյթո՞ւնը։ Ինչպե՞ս թե... Ամենակա՜լ տեր... Ի՞նչ կա Զեյթունում։

Խառնակիչը՝ խորհրդավոր եղանակով.

— Զեյթունո՞ւմ... Լուրը կախված է հյուքյումեթի ընթերցասրա-

հում... Ամեն մարդ էլ կարող է համոզվել...

Ամեն ինչի իրազեկ բառը.

— Այդ ընթերցասրահներում, որ ամենուրեք գերմանացի հյուպատոսներն են հիմնադրել...

Ամենահեռավոր թախտից նրան ընդհատեց հինգերորդ ձայնը.

— Ընթերցասրահները մենք ինքներս ենք հիմնադրել։

Անհասկանալի ակնարկությունների թանձր մշուշ. «Քյոշքերյան... Զեյթուն... Պետք է վերջ տալ...»։ Բայց Գաբրիելը հասկացավ նույնիսկ առանց մանրամասնություններին իրազեկ լինելու։ Երբ քիսաչին բռունցքներով շաղափում էր նրա ուսերը, թուրքական ձայները ջրի պես աներևաբար լցվում էին ականջների մեջ։ Ամո՜թ, հազա՜ր ամոթ. քիչ առաջ ուհաճությամբ նայելով շուկայի հայ առևտրականներին, հեռացել էր։ Այժմ իրեն պատասխանատու էր զգում և ձուլված էր իր ժողովրդի ճակատագրին։

Այդ պահին ամենահեռավոր թախտին պառկած պարոնը հառաչելով տեղից բարձրացավ։ Նա վերցրեց բուռնուզը[1], որը լողաթիկնոցի դեր էր կատարում, և ծուռտիկ ոտքերով մի քանի քայլ արեց լողարանում։ Գաբրիելը նոր միայն տեսավ, որ դա հազթահասակ, հաստամարմին տղամարդ է։ Տիրաբար խոսելու եղանակը և ուրիշների առարկություններն անտեսելը վկայում էին, որ դիմացինը իշխանավոր մարդ է։

— Կառավարությանն անտեղի են մեղադրում։ Քաղաքականությունն անհամբերություն չի սիրում։ Իրադրությունը միանգամայն այլ է, քան պատկերացնում է անտեղյակ ժողովուրդը։ Պայմանագրեր, զինաթափություններ, նկատառումներ, արտասահման։ Բայց ես բեյերին, իբրև գաղտնիք, կարող եմ հայտնել, որ ռազմական մինիստրությունից, նորին գերազանցություն Էնվեր փաշայից զինվորական ատյաններին հրաման է տրված զինաթափ անել մելուն էրմենի միլեթը[2], այսինքն՝ զինվորագրվածներին ետ բերել ճակատային գծից և ստիպել, որ կատարեն միայն ստորին աշխատանքներ՝ ճանապարհներ նորոգել կամ բեռներ կրել։ Սա է ճշմարտությունը։ Բայց այդ մասին հարկ չկա խոսելու։

«Սա իրավունք չունեմ կուլ տալու, չեմ կարող հանդուրժել»,— ասաց Բագրատյանն ինքն իրեն։ Ներքին ձայնը շշնջաց. «Քեզ էլ կհալածեն»։ Բայց անհայտ մի ուժ, որը նրան բարձրացրեց թախտի վրայից, վճռեց

[1] բուռնուզ — արաբական թիկնոց (սպիտակ, բարակ կտորից, գլխանոցով)
[2] մելուն էրմենի միլեթ — հայ զինվորական ազգ

ճակատամարտի ելքը։ Գաբրիելը քիսաչուն մի կողմ հրեց, թափով վեր կացավ, կանգնեց սալաքարին։ Սպիտակ շորով ծածկեց մինչև ազդրերը։ Զայրույթից բռցկլտուն աչքերը, թաց, թափթփված մազերը, զորեղ իրանը կարծես այլևս ոչ մի առնչություն չունեին նախկին պարոնի հետ, որն անգլիացի տուրիստի կոստյում էր կրում։ Նա վայրկենապես հայտնվեց իշխանավորի առաջ։ Աչքերի տակ կախված սևագորշ տոպրակներից ճանաչեց կայմակամին։ Բայց այդ բանն ավելի բորբոքեց նրա զայրույթը.

— Նորին գերազանցություն Էնվեր փաշային իր շտաբի հետ Կովկասում փրկել է հայկական մի զորախումբ։ Նրան ռուսներն արդեն գերի էին վերցնում։ Այդ բանը դուք էլ ինձ պես գիտեք, էֆենդի՜։ Գիտեք նաև, որ այդ դեպքից հետո նորին գերազանցությունը Սիսի* կաթողիկոսին, թե Կոնիայի* եպիսկոպոսին հզած նամակով երախտագիտությամբ հուշակեց սագիքա էրմենի միլեթի[1] քաջությունը։ Այդ գրությունը կառավարության հրամանով ամենուրեք փակցվեց պատերին։ Սա է ճշմարտությունը։ Ով թունավորում է այս ճշմարտությունը, հերյուրանքներ է տարածում, նա թուլացնում է երկրի ռազմական հզորությունը, պառակտում է միասնությունը, նա կայսրության թշնամին է, պետական դավաճան։ Այդ ե՛ս եմ ձեզ ասում, Գաբրիել Բագրատյանը՝ թուրքական բանակի սպան։

Խոսքն ընդհատելով՝ սպասեց պատասխանի։ Բայց կատաղի պոռթկումից ապշած բեյերը ձայն չհանեցին։ Պապանձվել էր նաև կայմակամը, որն իր մերկությունը ավելի եռանդուն էր ծածկում բուռնուզով։ Գաբրիելը լողարանից դուրս եկավ հաղթանակած, թեև հուզմունքից դողում էր։ Հագնվելիս գլխի ընկավ, որ այդ պոռթկումն իր կյանքում թույլ տված ամենամեծ հիմարությունն էր։ Անտիոքի ճանապարհը նրա առաջ այսուհետև փակվելու էր, մինչդեռ դա էր աշխարհի հետ կապող ելումուտի միակ ուղին։ Կայմակամին վիրավորանք հասցնելուց առաջ նա պետք է մտաբերեր Ժուլիեթին և Ստեփանին։ Համենայն դեպս, իրենից այնքան էլ դժգոհ չէր։

Գաբրիելի սիրտը դեռևս թպրտում էր, երբ աղա Ռիֆաաթ Բերեքեթի ծառան նրան առաջնորդեց հյուրասրահը՝ թուրքական զով տան սենյակը։ Կիսախավար սենյակում, լայնաձգանց փափուկ, վիթխարի գորգի վրա, Գաբրիելը ետ ու առաջ էր քայլում։ Ժամացույցը, որն անմտո-

[1] սագիքա էրմենի միլեթ — հայ հավատարիմ ազգ

ռեն դեռևս եվրոպական ժամանակով էր աշխատում, ցերեկվա ժամը երկուսն էր ցույց տալիս։ Դա ընտանեկան այն սրբազան ժամն էր, ետճաշյա անձեռնմխելի հանգստության պահը, երբ ամեն մի այցելություն համարվում էր սովորության դեմ կատարված ծանր հանցանք։ Գաբրիելը շատ էր շտապել։ Աղան, որը թուրքական հնավանդ ձևականությունների անկաշառ ջատագովն էր, պատվիրեց սպասել։ Հյուրը շարունակեց չափչփել ամայի սենյակը, որտեղ բացի երկու բազմոցից, ոչինչ չկար, եթե չհաշվենք ածխամանն ու փոքրիկ թեյասեղանը։ Գաբրիելն արդարացնում էր իր անքաղաքավարությունը. «Ինչ-որ բան է կատարվում։ Հաստատ չգիտեմ, թե ինչ, բայց ոչ մի րոպե կորցնելու իրավունք չունեմ. պետք է պարզեմ»։

Ռիֆաաթ Բերեքեթը Բագրատյանների տոհմի վաղեմի բարեկամն էր՝ ծերունի Ավետիսի փառավոր օրերից ի վեր։ Այդ մարդու հետ էին կապված երկյուղածություն ներշնչող ամենապայծառ հիշողությունները, և Գաբրիելը Ցողոնօլուք գալուց հետո արդեն երկու անգամ այցելել էր նրան։ Աղան ոչ միայն օգնում էր կարևոր գնումներ կատարելիս, այլև երբեմն մարդկանց միջոցով նրա հնությունների հավաքածուի համար ուղարկում էր պեղածո թանկարժեք նմուշներ՝ ծիծաղելիորեն էժան գներով։

Գաբրիելն ինքն իր հետ խոսում էր և հանկարծակիի եկավ, երբ այծի կաշվից կարած բարակ մաշիկներով անշշուկ ներս մտավ տանտերը։ Աղա Ռիֆաաթ Բերեքեթը յոթանասունն անց, սպիտակամորուք, դալկադեմ, կիսախուփ աչքերով և փոքրիկ, ձյունաթույր ձեռքերով ծերունի էր։ Ֆեսի շուրջը մետաքսյա դեղին շոր էր փաթաթված։ Դա նշանակում էր, որ տվյալ մահմեդականն իր կրոնական պարտքն ավելի ճշմարիտ է կատարում, քան հասարակ ժողովուրդը։ Ծերունին դանդաղ, հանդիսավոր ողջունեց, փոքրիկ ձեռքը դնելով իր սրտին, բերանին և ճակատին։ Նույն հանդիսավորությամբ պատասխանեց Գաբրիելը, կարծես նրա նյարդերը բնավ էլ չէին պրկվել անհամբերությունից։ Ապա ծերունին մոտեցավ, աջ ձեռքը պարզեց դեպի հյուրի սիրտը, և նրա մատների ծայրերը թեթևակի հպվեցին Գաբրիելի կրծքին։ Դրանով վավերացվեց «սրտերի կապը», անձնական ջերմ մտերմություն դրսևորելու մի եղանակ, միստիկ մի սովորույթ, որն աստվածավախ մարդիկ ընդօրինակել էին դերվիշների միաբանությունից։ Սելամլըքի դուրեկան կիսախավարում փոքրիկ ձեռքն այդ պահին ավելի սպիտակ թվաց։ Գաբրիելի մտքով անցավ, որ այդ ձեռքն էլ կարծես դեմք լիներ, թերևս ավելի նուրբ, ավելի զգայուն։

— Իմ բարեկա՜մ և իմ բարեկամի որդի՜,— հեռվից սկսվող զրույցի այս ձևը միշտ էլ հյուրընկալման արարողության մի մասն էր,— քո այցետոմսը, որով քիչ առաջ անակնկալի բերիր, ինձ համար հաճելի ընծա էր։ Եվ ահա քո ներկայությունից գեղեցկանում է օրը։

Գաբրիելը կողմնորոշվեց, թե ի՜նչ խոսքեր են պետք, և դտավ համապատասխան ձև.

— Իմ լուսահոգի ծնողներն ինձ վաղաժամ թողեցին միայնակ։ Բայց քո մեջ ապրում է նրանց հիշատակի և գորովանքի կենդանի վկան։ Որքա՜ն երջանիկ եմ, որ դու ինձ համար երկրորդ հայր ես։

— Ես քո հանդեպ պարտք ունեմ։— Ծերունին հյուրին տարավ դեպի բազմոցը։— Այսօր դու ինձ երրորդ անգամ ես արժանացնում պատվի։ Վաղուց արդեն պարտավոր էի քեզ այցելել քո տանը։ Բայց տեսնում ես, որ ես ծերացած, տկար մարդ եմ։ Ցողոնօլուքի ճանապարհն էլ երկար է, դժվար։ Առանց այն էլ ինձ սպասում է մեծ ու անհետաձգելի մի ճամփորդություն, որի համար պետք է խնայեմ անդամներս։ Ուրեմն՝ ներիր ինձ։

Սրանով ընդունելության ծեսն ավարտվեց։ Նստեցին։ Փոքրիկ սպասավորը բերեց սուրճ և սիգարիկներ։ Տանտերը լուռ խմում էր ու ծխում։ Ավանդական կարգը պահանջում էր, որ ավելի երիտասարդ հյուրը, ինչ խնդրով էլ եկած լիներ, սպասեր մինչև ավագ խոսակիցը զրույցին տար ցանկալի ուղղությունը։ Բայց աղան երևի մտադիր չէր իր կիսախավար աշխարհից անցնել առօրյա որևէ իրողության։ Սպասավորին նշան տվեց, և սա տիրոջը մեկնեց պատրաստ բռնած կաշվե մի տոպրակ։ Ռիֆաաթ Բերեքեթը դա բացեց, ծերունական եռանդուն մատներով շոյեց թավիշը, որի վրա հնադարյան երկու մետաղադրամ կար՝ մեկը ոսկե, մյուսը՝ արծաթե։

— Դու շատ ուսյալ մարդ ես, սովորել ես Փարիզի համալսարանում, գրագետ ես և գրություններ վերծանող։ Իսկ ես միայն հնության մի անուսում սիրահար եմ, քեզ հետ չափվել չեմ կարող։ Բայց արդեն երկու օր է, ինչ այս երկու մանրուքը պատրաստել եմ քեզ համար։ Մեկը, արծաթե դրամը, հազար տարի առաջ հատել է տվել այն հայ թագավորը, որը ձեր տոհմի անվանակիցն է՝ Աշոտ Բագրատունին։ Վանա լճի մոտերքից է բերված և պեղելիս հազվադեպ է պատահում։ Ոսկե դրամը հելլենական ծագում ունի։ Առանց խոշորացույցի էլ կարող ես կարդալ գեղեցիկ ու խորիմաստ մակագրությունը.

Բագրատյանը ոտքի ելավ, վերցրեց նվերը.

— Հա՛յր իմ, դու ինձ ամաչեցնում ես։ Գիտեմ, թե ինչպես երախտահատույց լինեմ։ Մենք շարունակ հպարտացել ենք, որ մեր աղգանունները նույն ձևով են հնչում։ Ի՞նչ համաչափ է գլուխը։ Իսկական հայի դեմք։ Հունական դրամը հավանաբար պարանոցներից կախել են իբրև թալիսման։ «Առ անմեկնելին ի մեզ և ի վեր քան զմեզ»։ Ի՞նչ փիլիսոփա մարդիկ են եղել, եթե նման դրամով են առևտուր արել։ Որքա՞ն խորն ենք գահավիժել։

Պահպանողական այս մտքից լիովին գոհ մնալով, աղան գլխով համաձայնության նշան արեց.

— Իրավացի ես. որքա՞ն խորն ենք գահավիժել։

Գաբրիելը դրամները նորից դրեց սեղանը։ Բայց ոնքաղաքավարություն կլիներ անմիջապես վերջ տալ նվերին վերաբերող խոսակցությանը.

— Քեզ շատ ու շատ կխնդրեի, որ դու էլ իմ հավաքած հնություններից մի բան ընտրես, իբրև փոխադարձ նվեր։ Բայց գիտեմ, որ քո հավատն արգելում է ստվեր գցող որևէ քանդակ վերցնել։

Այս խոսքի վրա ծերունին անժխտելի բավականությամբ փոքր-ինչ լռեց.

— Այո, և այս իմաստուն օրենքի պատճառով եվրոպացիներդ խորշում եք մեր օրբազան Ղուրանից։ Մի՞թե վսեմ խորաթափանցություն չկա ստվեր գցող քանդակներն արգելելու մեջ։ Արարչին և արարչագործությունը կապկելուց է սկսվում այն անդուսպ ամբարտավանությունը, որը տանում է դեպի անդունդ։

— Ժամանակն ու այս պատերազմը վկայում են մարգարեի և քո իրավացիությունը, աղա։

— Այո՛, այդպես է։ Մարդը, որպես արարչին հանդգնորեն կապկող, որպես արվեստագետ, ընկնում է անաստվածության գիրկը։ Սա է իսկական դրդապատճառն այս պատերազմի, որ մեր վզին փաթաթեցին եվրոպացիները։ Դա մեզ համար գժբախտություն է։ Ի՞նչ ենք շահելու պատերազմից։

Բագրատյանը կատարեց հետևյալ քայլը.

— Եվ նրանք Թուրքիան վարակեցին ամենավատանգավոր սիրտով՝ ժողովուրդների փոխադարձ ատելությամբ։

Ռիֆաաթ Բերեքեթը գլուխը փոքր-ինչ ետ գցեց։ Նրա փափուկ մատները հոգնաբեկ խաղում էին սաթե համրիչի հատիկների հետ։ Թվում էր, թե ծերունու ձեռքերն ի վեր հառնում է ինչ-որ կաթնագույն լուսապսակ։

— Ամենաչարամիտ վարդապետությունն այն է, երբ սեփական մեղքը որոնում են հարևանի մեջ։

— Աստվա՞ծ օրհնի քեզ։ Սեփական մեղքը որոնում են հարևանի մեջ։ Այդ վարդապետությունը Եվրոպայում տիրապետող է։ Բայց ես այսօր ցավով իմացա, որ դա իր համակիրներն ունի նաև Թուրքերի և մյուս մահմեդականների շրջանում։

— Ո՞ր Թուրքերին նկատի ունես։— Աղայի մատները սեղմած պահեցին համրիչի հատիկները։— Նկատի ունես ստամբուլյան կապկողների՞ն, այդ կապկողների կապկողների՞ն, սերթուկ ու սմոկինգ հագած կապիկների՞ն, այդ դավաճանների՞ն, այդ աստվածուրացների՞ն, որոնք արարչի աշխարհը կործանում են ի սեր սեփական իշխանության և փողի։ Դրանք ո՛չ Թուրքեր են, ո՛չ մահմեդականներ, այլ միայն գաստարկապորտ զրպարտիչներ ու դրամաշորթներ։

Գաբրիելը ձեռքն առավ սուրճի փոքրիկ գավաթը, որի մեջ մնացել էր միայն հաստ շերտով նստած մրուրը։ Դժվար կացության մեջ ընկած մարդու շարժում։

— Խոստովանում եմ. տարիներ առաջ աղուհաց եմ կերել այդ մարդկանց հետ, որովհետև նրանցից բարի գործեր էի սպասում։ Այդ մարդկանց համարում էի իդեալիստներ, և գուցե այն ժամանակ նրանք այդպիսիք էին։ Երիտասարդները միշտ էլ հավատում են այն ամենին, ինչ նոր է։ Բայց, ցավոք սրտի, այսօր ես ստիպված եմ ճշմարտությունը տեսնել այնպես, ինչպես դու ես տեսնում։ Քիչ առաջ բաղնիքում լսեցի մի խոսակցություն, որն ինձ խորապես վրդովեց։ Սա եղավ այս անպատեհ ժամին իմ այստեղ գալու պատճառը։

Պայծառամիտ աղան կարիք չզգաց առավել որոշակի ակնարկության.

— Խոսքն այն ռազմական գաղտնի հրամանի մասի՞ն է, որով հայերին ստորացնում են, իջեցնում բեռներ կրելու և ճանապարհների վրա աշխատելու աստիճանին։

Գաբրիելը վերծանում էր իր ոտքերի տակ փռված գորգի ծաղկաքանդակը։

— Դեռևս այսօր առավոտյան ես սպասում էի ծանուցագրի, որ

մեկնեմ իմ զորագունդը... Խոսում էին նաև Զեյթուն քաղաքի մասին։ Օգնիր ինձ։ Ի՞նչ է կատարվում։ Ի՞նչ է պատահել։

Սաթե համրիչի հատիկները անվրդով գլորվում էին աղայի մատների արանքում։

— Ինչ վերաբերում է Զեյթունին, տեղյակ եմ։ Պատահել է այն, ինչ ամեն օր պատահում է լեռներում։ Ավազակախմբի, դասալիքների և զափթիեների հետ կապված ինչ-որ պատմություն։ Դասալիքներից երկուսը հայեր են։ Առաջներում ոչ ոք նման բաների հետ հաշվի չէր նստի...

Ավելի դանդաղ ավելացրեց.

— Բայց ի՞նչ ասել է դեպք։ Ավելի կարևորը դրա լուսաբանումն է։

Գաբրիելը ուզեց տեղից վեր թռչել.

— Այդ է, որ կա։ Իմ տան առանձնության մեջ ես այդ մասին ոչինչ չեմ իմացել։ Ստոր մեկնաբանություններ են արվում։ Ի՞նչ մտադրություն ունի կառավարությունը։

Իմաստուն ծերունին ձեռքի թույլ շարժումով մի կողմ վանեց Գաբրիելի հուզումնալից խոսքերը։

— Իմ բարեկա՜մ և իմ բարեկամի որդի՛, քեզ մի բան պիտի ասեմ։ Ձեր գլխին ճակատագրական մեծ աղետ է կախված, քանի որ ձեր բնակավայրի մի մասը ռուսաց կայսրությանն է պատկանում, մյուս մասը՝ մեզ։ Պատերազմը ձեզ բաժան-բաժան է անում։ Ցրված եք երկրից երկիր... Բայց քանի որ աշխարհում ամեն ինչ միահյուսված է, մեզ էլ է բաժին ընկնում ձեր ճակատագիրը։

— Ավելի լավ չէ՞ր լինի, եթե ձգտեինք փոխադարձ համաձայնության և հաշտության, ինչպես դա փորձեցինք 1908 թվականին։

— Հաշտությո՞ւն։ Դա նույնպես աշխարհի խելոքների հնարած սնամեջ բառերից մեկն է։ Աշխարհում հաշտություն չկա։ Այստեղ մենք ապրում ենք անկման և սեփական իրավունքների վավերացման պայմաններում։

Այս եզրակացությունը համոզիչ դարձնելու նպատակով աղան ընդունված երգեցիկ առոգանությամբ մեջ բերեց տասնվեցերորդ սուրահի* մի տողը.

«Եվ ինչ նա արարեց ի վերա երկրի, տարբեր գույն ուներ։ Տե՛ս, դա հիրավի մի նշան էր այն մարդկանց համար, որոնք ուզում են նախազգուշանալ»։

Գաբրիելն այլևս չէր կարողանում մնալ բազմոցին նստած։ Ոտքի

ելավ։ Բայց այդ ինքնագլուխ վարմունքին ծերունին նայեց զարմացական կշտամբանքով և աչքերով հյուրին ստիպեց նորից նստել։

— Ուզում ես իմանալ կառավարության մտադրությո՞ւնը։ Ես միայն այն գիտեմ, որ Ստամբուլի անաստվածներն ազգային ատելությունը գործադրում են սեփական նպատակներին հասնելու համար։ Չէ՞ որ աստվածուրացության ամենախոր էությունը երկյուղն է և տանուլ տված խաղի նախազգացումը։ Դրա համար էլ ամեն մի փոքրիկ քաղաքում ասեկոսեի սրահներ են հիմնել, որ տարածեն իրենց չար մտադրությունները... Լավ արիր, որ ինձ մոտ եկար։

Գաբրիելն աջ ձեռքով ջղաձգորեն սեղմում էր դրամաքսակը.

— Եթե բանը միայն ինձ վերաբերեր... Ինչպես քեզ հայտնի է, ես միայնակ չեմ։ Իմ եղբայր Ավետիսն անզավակ մեռավ։ Հետևաբար իմ տասներեքամյա որդին մեր տոհմի վերջին շառավիղն է։ Դրանից բացի, ֆրանսուհու հետ եմ ամուսնացել, և անմեղ կինս չպետք է կրի իրեն չվերաբերող տառապանքը։

Այս փաստարկն աղան հերքեց ոչ առանց խստության.

— Եթե օտարի հետ ես ամուսնացել, ուրեմն՝ կինդ այսուհետև պատկանում է քո ժողովրդին և պետք է կրի նրա ճակատագիրը։

Ապարդյուն կլիներ այդ արմատացած արևելյուն բացատրել եվրոպացի կնոջ էությունն ու ինքնորոշումը։ Ուստի և Գաբրիելն այդ կշտամբանքը չլսելու տվեց.

— Ես կուզենայի մերոնց ուղարկել արտասահման կամ, ծայրահեղ դեպքում, Ստամբուլ։ Բայց մեր անձնագրերը հետ են վերցրել, և ես կայմակամից ոչ մի լավ բան չեմ սպասում։

Թուրքն իր փափուկ ձեռքը դրեց հյուրի ծունկին.

— Ուզում եմ լրջորեն նախազգուշացնել, որ ընտանիքդ Ստամբուլ չտեղափոխես, եթե նույնիսկ հնարավորություն ունենաս։

— Ի՞նչ նկատի ունես։ Ինչո՞ւ։ Ստամբուլում ես շատ բարեկամներ ունեմ՝ բոլոր խավերում, նույնիսկ կառավարության անդամների մեջ։ Այնտեղ է մեր առևտրական տան կենտրոնը։ Իմ ազգանունը շատ հայտնի է։

Գաբրիելի ծունկին դրված ձեռքը ծանրացավ.

— Քանի որ ազգանունդ շատ է հայտնի, ուստի խորհուրդ կտայի, որ մայրաքաղաքում չմնաս նույնիսկ կարճատև ժամանակով։

— Դարդանելի պատերազմի պատճառո՞վ։

— Ո՛չ, դա չէ պատճառը։

Աղայի դեմքն անորոշ արտահայտություն ընդունեց։ Ծերունին, կարծես ինչ-որ ներքին ձայն ունկնդրելով, շարունակեց.

— Ոչ ոք չգիտե, թե կառավարությունը հետագայում ինչպես կվարվի։ Բայց մի բան հաստատ է։ Ձեր ժողովրդի մեծամեծներն ու ականավոր մարդիկ կտուժեն։ Հաստատ է և այն, որ նման դեպքերում մեղադրանքներն ու ձերբակալություններն սկսվում են մայրաքաղաքում։

— Ենթադրո՞ւմ ես, թե՞ նախազգուշացման համար որոշակի հիմք ունես։

Աղան իր լայն թևքի մեջ գցեց համրիչը, որը և այտնեղ անհետացավ.

— Այո՛, որոշակի հիմք ունեմ։

Գաբրիելն այլևս չկարողացավ համբերել և տեղից վեր թռավ.

— Ի՞նչ ունես։

Քանի որ հյուրը կանգնած էր, տանտերը նույնպես ոտքի ելավ.

— Եթե իրավունք ունեմ քեզ խորհուրդ տալու, ապա վերադարձիր Յողոնօլուք, խաղաղությամբ ապրիր այնտեղ, սպասիր մինչև խառնակության վերջը։ Նման հանգամանքներում քեզ և ընտանիքիդ համար հազիվ թե ավելի հարմար տեղ գտնեիր։

— Խաղաղությա՞մբ,— հեգնանքով գոչեց Գաբրիելը,— դա արդեն բանտարկություն է։

Ռիֆաաթ Բերեքեթը երեսը շուռ տվեց. վիրավորվեց, որ այդքան բարձր ձայն հնչեց սելամլըքի անդորրության մեջ.

— Ողջամտությունդ չկորցնես։ Ինձ ցավ է պատճառում, որ անկեղծ խոսքով քեզ անհանգստացրի։ Մտահոգվելու ոչ մի հիմք չունես։ Հավանաբար ամեն ինչ բարեհաջող կանցնի։ Մեր վիլայեթում վատ բան լինել չի կարող, քանի որ վալին, փա՜ռք աստծո, Ջելալ բեյն է։ Նա ոչ մի չափազանցություն չի հանդուրժի։ Բայց ինչ էլ պատահի, կլինի սահմանափակ և ինքնամփոփ, ինչպես ծիլը, ծաղիկն ու պտուղը սերմնահատիկի մեջ։ Ինչ որ աստված կամենա, այն էլ կկատարվի։

Գաբրիելը աստվածաբանական այս հնամաշ, զարդարուն, ճոռոմ եղրակացությունից սրտնեղած՝ ամեն մի ձևականություն մոռացավ և սկսեց սենյակում ետ ու առաջ վազվզել.

— Ամենասոսկալին այն է, որ մարդ դրա դեմ չի կարող միջոցներ ձեռք առնել, չի կարող պայքարել։

Աղան մոտեցավ շփոթված հյուրին, ամուր բռնեց նրա ձեռքերը.

— Բարեկա՛մս, մի՛ մոռացիր, որ քո կոմիտեի զրպարտիչները չնչին

փոքրամասնություն են կազմում։ Մեր ժողովուրդը շատ բարի ժողովուրդ է։ Եվ եթե բարկության պահերին արյուն է թափվել, ապա դուք էլ պակաս մեղք չեք ունեցել։ Հետո էլ, շատ աստվածապաշտներ կան թեքքեներում[1], որոնք սուրբ գրքի ընթերցումով պայքարում են հանուն ապագայի մաքրության։ Կամ նրանք հաղթանակ կտանեն, կամ ամեն ինչ կկործանվի։ Իբրև գաղտնիք քեզ պիտի հայտնեմ, որ հայկական հարցով մեկնելու եմ Անատոլիա և Ստամբուլ։ Աստծո անունով խնդրում եմ, գաղտնիքը չհայտնես։

Ծերունու փոքրիկ ձեռքերը ուժ գտան Գաբրիելին հանգստացնելու.

— Իրավացի ես, կհետևեմ քո խորհրդին։ Ամենալավն այն կլինի, որ փակվենք մնանք մեր Յողոնօլուքում և տեղից չշարժվենք, մինչև պատերազմը վերջանա։

Բայց աղան դեռևս չէր թողնում, որ Գաբրիելը հեռանա.

— Խոստացիր, որ տանն այս խնդրի շուրջը ոչ մի խոսք չես ասի։ Ի՞նչ միտք ունի։ Ամեն ինչ կմնա իր նախկին վիճակում, իսկ մարդիկ իզուր տեղը սարսափահար կլինեն։ Եթե որևէ անախորժություն պատահի, ապա դժվար չէ դրա առաջն առնելը։ Միտքս հասկանո՞ւմ ես։ Հավատա և լռիր։

Հրաժեշտի պահին նա կրկնեց ազդու շեշտով.

— Հավատա և լռիր... Շատ ու շատ ամիսներ ինձ չես տեսնի։ Բայց իմացիր, որ այդ ժամանակամիջոցում ձեր գործով եմ զբաղվելու։ Քո նախնիներից շատ բարիք եմ տեսել։ Տա աստված, որ այս տարիքում կարողանամ երախտահատույց լինել։

---

[1] թեքքե — մենաստան

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Յողնօղուքի երեկոները

Մինչև տուն հասնելը շատ ժամանակ անցավ, քանի որ Գաբրիելը ձին երբեմն էր վարգով քշում։ Մեծ մասամբ ճանապարհն անցնում էր ամենադանդաղ ընթացքով։ Մերթընդմերթ շեղվում էր կարճ ճանապարհից, դուրս գալիս Որոնտեսի երկայնքով ձգվող մայրուղին։ Միայն այն ժամանակ, երբ Սուեդիայի ու էլ Էսքելի տների հետևում երևաց հեռավոր ծովահորիզոնը, հեծյալն սթափվեց իր մտորումներից, իսկույն թեքվեց հյուսիս, դեպի այն հովիտը, որտեղ հայկական գյուղերն էին։ Արդեն սկսվել էր գարնանային երկարատև մայրամուտը, երբ Գաբրիելը դուրս եկավ յոթ գյուղ իրար հետ կապող գլխավոր ճանապարհը, եթե կարելի է այդպես անվանել ողորմելի սայլուղին։ Յողոնօղուքը գրեթե դրանց մեջտեղն էր ընկած։ Տուն հասնելու համար նա պետք է անցներ Վաքքֆ, Խրդրը Բեգ, Հաջի Հաբիբլի գյուղերը, մի բան, որ մինչև մութն ընկնելը հազիվ թե կարողանար։ Բայց նա չէր էլ շտապում։

Այդ պահին շրջակայքի բնակիչները սքանչանում էին Մուսա լեռան տեսքով։ Կիրակի օրվա վերջալույսի հմայքը մարդկանց իրար մոտ էր բերել։ Մարմինները, աչքերն ու բառերը իրար էին որոնում, որպեսզի ընտանեկան շաղակրատանքով և ընդհանուր դժվարություններից տրրտունջալով վավերացնեին գոյության բավականությունը։ Խմբվել էին ըստ սեռի և հասակի։ Տարեց կանայք իրար կողքի կանգնած էին միմյանց խեթող հայացքներով, դեռատի կանայք՝ տոնական զգեստներով զուգված և անտարբեր, իսկ մատաղ աղջիկները՝ միմյանց հեգնելով։ Դրամե զարդերը զնգզնգում էին։ Նրանք ցույց էին տալիս իրենց հոյակապ ատամները։ Գաբրիելի աչքովն ընկավ զորակոչային հասակ ունեցող, բայց դեռևս բանակ չկանչված պատանիների բազմությունը։ Տղաները ծիծաղում էին, խենթություն անում. կարծես նրանց համար ոչ մի էնվեր փաշա գոյություն չուներ։ Խաղողի այգիներից և մրգատու ծառաստաններից լսվում էին թառի՝ հայկական կիթառի ոնգային հնչյունները։

Փութաջան տղամարդկանցից մի քանիսը նախապես կարգի էին բերում աշխատանքային գործիքները։ Մայրամուտից հետո թուրքական օրը համարվում էր ավարտված, դրա հետ նաև՝ կիրակնօրյա հանգիստը։ Ամենաբարո աշխատավորները քնելուց առաջ բավականությամբ շրջագայում էին։

Թուրքական անունների փոխարեն գյուղերը կարելի էր անվանել այն գլխավոր արհեստով, որը բնորոշ էր նրանց համար։ Գինեգործությամբ և այգեգործությամբ զբաղվում էին բոլորը։ Հացահատիկ գրեթե չէին ցանում։ Բայց մեծ համբավ էին վայելում արհեստներով։ Հաջի Հաբիբլին, օրինակ, փայտագործների գյուղ էր։ Տղամարդիկ կարծր փայտից ու ոսկորից պատրաստում էին ոչ միայն ընտիր սանրեր, ծխամորճեր և առօրյա գործածության պիտույքներ, այլև քանդակում էին խաչելության արձանիկներ, տիրամայրեր, սրբապատկերներ, որոնք արտահանվում էին մինչև Հալեպ, Դամասկոս, Երուսաղեմ։ Այս քանդակները ռամկական կոշտ ու կոպիտ իրեր չէին. ունեին իրենց ինքնատիպությունը և կարող էին կատարելագործվել միայն իրենց հայրենի լեռան հովանու տակ։ Վաքքֆը ժանյակների գյուղ էր։ Այստեղի կանանց ասեղնագործած նուրբ ծածկոցներն ու թաշկինակները գնորդներ էին գտնում մինչև Եգիպտոս, թեև այդ մասին հարտարուհիները գուցե գաղափար էլ չունեին. իրենց ապրանքը նրանք հասցնում էին մինչև Անտիոքի շուկան, այն էլ տարին մեկ-երկու անգամ։ Ազիրի՝ շերամագյուղի մասին հարկ չկա նորից խոսելու։ Խրդրը Բեգ գյուղում մետաքսաթել էին մանում։ Յողոնօղուքում և Բիթիասում՝ այս երկու խոշորագույն բնակավայրերում, գոյություն ունեին բոլոր արհեստները։ Իսկ Քեբուսիեն՝ ամենահյուսիսայինը, ամենահեռավորը, փեթակների գյուղ էր։ Քեբուսիեի մեղրն իր նմանը չուներ աշխարհում, ինչպես պնդում էր Գաբրիել Բագրատյանը։ Մեղուներն այդ մեղրը պատրաստում էին՝ ծծելով Մուսա դաղի ծաղիկների հյութը, բնության այն կախարդական բարիքը, որով այդ լեռը տարբերվում է երկրի մյուս բոլոր մելամաղձոտ լեռներից։ Ինչո՞ւ հենց այդ լեռան ընդերքից են դուրս ժայթքում անհամար աղբյուրներ, որոնցից շատերը թափվում են ծով, իբրև քողարկված ջրվեժներ։ Ինչո՞ւ նա, ոչ թե մահմեդական լեռները, ինչպես, ասենք, Նաուլու դաղը կամ Ջեբել Աքրան։ Հիրավի, դա նման էր հրաշքի։ Կարծես ջրի աստվածը խորհրդավոր, անհիշելի ժամանակներում անապատի որդուց՝ Իսլամից, վիրավորված, ետ էր քաշվել այդ լերկ, ողորմություն աղերսող բարձունքներից, իր շնորհները շռայլել քրիստոնյա լեռան վրա։ Բարեբեր լանջերի

ծաղկազարդ մարգագետինները, բազմածալ թիկունքին սփռված հյութալի արտոները, ստորոտում բուրող խաղողի, ծիրանի և նարնջի այգիները, ջրերի միալար մրմունջներով լեցուն մթին կիրճերի կաղնիներն ու նոճիները, խորհրդավոր տեղերում աճող ալպյան վարդերի, մրտենիների և լեռնավարդերի բերկրալից պոռթկումները, պահապան հրեշտակի շընչով լի անդորրությունը, որի գրկում հոտերն ու երիտասարդ հովիվները զորովալից երազում էին, այս ամենը վկայում էր, որ շրջակայքը քիչ էր տուժել մեղսագործության հետևանքներից, մինչդեռ մնացած Փոքր Ասիան հեծում էր գառը տրտմության ներքո։ Թվում էր, թե տիեզերքի աստվածային կարգ ու կանոնի մեջ թույլ տրված ինչ-որ աննշան սխալի հետևանքով, որևէ հայրենասեր քերովբեի բարեհոգի կողմնապահության շնորհիվ, Մուսա լեռան շրջակայքում մնացել է դրախտի մրուրը, արտացոլումը, համը։ Աստվածաշնչի աշխարհագետ մեկնաբանները հենց այստեղ էլ, սիրիական ծովեզերքին, Միջագետքի խորքերը չհասած, սիրով գտնում են եդեմի այգին*։

Ինքնին հասկանալի է, որ լեռան շուրջը սփռված յոթ գյուղն էլ անմասն չէին այդ օրհնությունից։ Դրանք չէր կարելի համեմատել այն խղճուկ գաղութների հետ, որոնց Գաբրիելը հանդիպեց հարթավայրը ձիով անցնելիս։ Այստեղ չկային այն կավաշեն հյուղերը, որ հնարավոր չէ մարդկային օթևաններ համարել։ Դրանք ցածրիկ հողաթմբեր էին, ուր մարդիկ անցքեր էին բացել ապրելու, օջախ վառելու և անասուններ պահելու համար։ Այստեղ անները մեծ մասամբ քարաշեն էին, բաղկացած մի քանի սենյակից։ Պատերի շուրջը փոքրիկ պատշգամբներ կային։ Գոնեքն ու պատուհանները մաքրությունից փայլում էին։ Միայն հնագույն ժամանակներից մնացած մի քանի խրճիթ կար, որոնք արևելյան սովորության համաձայն զուրկ էին փողոցի վրա բացվող պատուհաններից։ Մինչև այնտեղ, ուր հասնում էր Դամլաջրքի որածայր ստվերը, տիրում էր այս կենսուրախությունը, այս բարձր կենսամակարդակը։ Ստվերի հակառակ կողմում սփռվում էր ամայությունը։ Որոշ տեղերում խաղողի թփերը, մրգատու ծառերը, թթենիները, խրար հաջորդող գարավանդները, որոշ տեղերում էլ եգիպտացորենի և բամբակի միապաղաղ դաշտերը մասամբ ծածկում էին լերկ տափաստանը, ինչպես մուրացկանն է իր մարմինը ծածկում ցնցոտիներով։

Բայց տա միայն լեռան վրա իջած օրհնանքի արդյունք չէր։ Կես գոր հետո էլ տակավին պտուզ էր տալիս ավագ Ավետիս Բագրատյանի ձեռանդը, ուրն այն միակ ձեռներից մարդու, որը հայրենի մի կտոր հողի վրա բոլորանվեր կենտրոնացրել էր իր ամբողջ ուշադրությունը, ի հեճուկս աշխարհում եղած բոլոր գայթակղությունների։ Թոռը զարմանքով էր նայում այդ մարդկանց, որոնք նրան տարօրինակության չափ գեղեցիկ էին թվում։ Գաբրիելին նկատելով, խմբերը լռեցին, շրջվեցին դեպի ճանապարհը և բարձրաձայն հայտնեցին իրենց իրիկնային բարեմաղթությունը.

— Բարի իրիկուն։

Գաբրիելը հավատացած էր (կամ գուցե դա նրա երևակայության արդյունքն էր), որ մարդկանց աչքերում մի պահ փայլատակող պայծառությունը, երախտապարտ հրճվանքի շողը ոչ թե իրեն է վերաբերում, այլ հանգուցյալ բարերարին։ Կանայք և աղջիկները զննող հայացքներով հետևում էին ձիավորին, թեև այդ պահին նրանց ճարպիկ ձեռքերի մեջ թափով պտտվում էին իլիկները։

Այս մարդիկ պակաս օտար չէին, որքան շուկայի բազմությունը։ Նրանց հետ ի՞նչ առնչություն կարող էր ունենալ Գաբրիելը, որ մի քանի ամիս առաջ դեռևս շրջագայում էր Բուայում, հաճախում փիլիսոփա Բերգսոնի* դասախոսություններին, բանավիճում էր գրքերի շուրջը և հոդվածներ տպագրում գեղարվեստական շքեղ հանդեսներում։ Բայց այդ մարդկանցից արտաբխում էր ինչ-որ մեծ անդորրություն։ Գաբրիելը նրանց հանդեպ հայրական ջերմություն զգաց, քանի որ ինքն իրազեկ էր այն սպառնացող արհավիրքին, ինչ ոչ մեկի մտքով չէր անցնում։ Մանր հոգսի տակ էր ընկել. մեն-մենակ պետք է մարդկանց փորձանքից հեռու պահեր, որքան ուժը պատեր։ Մերունի Ռիֆաաթ Բերեքեթը դատարկ երազանքով տարված մարդ չէր և իր ողջամտությունը իզուր չէր համեմում զարդարուն ատյաններով։ Նա իրավացի էր։ Պետք է մնային Յողոնօլուքում և սպասեին։ Մուսա լեռն աշխարհից դուրս էր։ Եթե փոթորիկ էլ լիներ, այնտեղ չէր հասնի։

Հայրենակիցների հանդեպ զգացած ջերմությունից Գաբրիելի տրամադրությունը բարձրացավ. «Երանի՜ այդպես երկար ուրախանայիք վաղը, մյուս օրը...»։

Եվ ձիու վրայից նա ձեռքի ծանրաբարո շարժումով պատասխանեց գյուղացիների ողջույնին։

Ջով, աստղափայլ աղջամուղջով լցված այգու ճանապարհով Գաբրիելը բարձրացավ ամառանոց։ Խոտ ծառաները տիրոջը շրջապատեցին, ինչպես երանափառ «վերացական կացությունը», «ինքնապարփակ մարդը», որանցից անցնող օրը նրան զատեց, զգացնել տալով նման

գաղտնակեցության անհեթեթությունը։ Հոգնածության հետ գլուխ բարձրացրեց հաճելի նախապաշարումը։

Գաբրիելը մտավ տան մեծ սրահը։ Առաստաղից կախված երկաթյա հինավուրց լապտերն իր կաթնագույն լույսով նրա սիրտը համակեց բերկրանքով։ Գիտակցության անհասկանալի զուգորդությամբ դա հիշեցրեց մորը։ Ո՞չ այն տարեց կնոջը, որը փարիզյան դիմազուրկ բնակարանում որդուն դիմավորեց համբույրով, երբ նա գիմնազիայից վերադարձավ, այլ երազի պես անիրական թվացող անցած օրերի անմոռուն քաղցրությունը...

— Հոգո՞ւդ մատաղ, քեզ ղուրբա՞ն։

Իրո՞ք մայրը երեկոյան, մանկական օրորոցի վրա խոնարհված՝ շշնջացել էր այդ բառերը...

Անցած-գնացած ժամանակներից մի նվիրական հուշ էլ էր մնացել՝ սանդուղքի մոտ, որմնախորշում, Տիրամոր պատկերի տակ վառվող կանթեղը։ Մնացած բոլորը պատկանում էին կրտսեր Ավետիս Բագրատյանի ժամանակաշրջանին։ Իսկ դա եղել էր որսի և պատերազմի ժամանակաշրջան։ Համենայն դեպս, այդ էր վկայում սանդղասրահը։ Պատերից կախված էին հաղթանշաններ, զենքեր, բեղվինական հին, երկարափող հրացանների մի ամբողջ հավաքածու։ Ճանապարհորդության ժամանակ գնած հոյակապ իրերից մի քանիսը, Ժուլիեթի հիացմունքին սրժանացած պահարանները, գորգերը, ջահերը վկայում էին, որ տարօրինակ տանտերը չի ունեցել միայն կոշտ ու կոպիտ հակումներ։

Երբ Գաբրիելը ինքնամոռաց վիճակում սանդուղքով բարձրանում էր երկրորդ հարկը, ներքևի սենյակներից նրա ականջին հասան ինչ-որ ձայներ։ Արդեն հավաքվել էին Յողոնօլուքի երևելիները։

Իր սենյակում Գաբրիելը երկար ժամանակ պատուհանի առաջ կանգնած՝ անթարթ նայում էր Դամլաջրքի սև ուրվագծին, որն այդ պահին զորավոր հսկայի պես վեր էր խոյանում։ Տասը րոպե հետո զանգ տվեց ծառան՝ Միսակը։ Սրան էլ, ինչպես տնտեսվար Քրիստափորին, խոհարար Հովհաննեսին և տան մյուս սպասավորներին, Գաբրիելը եղբոր մահից հետո պահել էր իր մոտ։

Տանտերը ոտքից գլուխ լվացվեց, փոխեց շորերը։ Այնուհետև գնաց Ստեփանի սենյակը։ Տղան արդեն անկողնում պառկած էր։ Մանկաբար այնքան խորն էր քնել, որ գրպանի լապտերի ծակող շողն անգամ չկարողացավ նրան արթնացնել։ Պատուհանը բաց էր, և դրսում սոսիների տերևները շարժվում էին չարագուշակ դանդաղկոտությամբ։ Այստեղից,

սենյակի ներսից էլ երևում էր Մուսա լեռան սևասքող բարձունքը։ Գագաթի սանրաձև գիծը մեղմ բոցկլտում էր. կարծես ծովի փոխարեն լեռնաթիկունքում ինչ-որ լուսատու կար թաքնված։ Գաբրիելը նստեց մահճակալի մոտ դրված աթոռին։ Եվ ինչպես առավոտյան որդին էր քնած հորը նայում, այնպես էլ այժմ հայրն էր նայում քնած որդուն։ Բայց դա այս անգամ կարելի էր։

Ստեփանի ճակատը, որ տեղով-տեղ Գաբրիելի ճակատն էր. թափանցիկ էր, շողշողուն։ Փակ աչքերի ստվերները նման էին երկու տերևի, որ կարծես քամին դրսից բերել, իջեցրել էր տղայի դեմքին։ Ի՞նչ խոշոր էին աչքերը։ Դա պարզ երևում էր, չնայած երեխան քնած էր։ Սուր, նեղլիկ քիթը հորը չէր պատկանում։ Այդ օտար քիթը Ժուլիեթից էր ժառանգել։ Ստեփանն արագ էր շնչում։ Քունքերի տակ թրթռուն կյանք էր սքողված։ Բռունցքները սեղմել էր մարմնին. կարծես ձգում էր սանձերը, որ չփախչեին երազների քառատրոփ արշավող նժույգները։

Տղայի քունը դարձավ ավելի անհանգիստ։ Հայրը չէր շարժվում։ Նա կարծես ներծծում էր որդու պատկերը։ Վախենո՞ւմ էր Ստեփանի ճակատագրից։ Ուզում էր հաստատե՞լ իր և իր որդու արարչաստեղծ միասնությունը։ Չգիտեր։ Գլխում ոչ մի միտք չկար։

Վերջապես վեր կացավ, չկարողանալով զսպել հառաչանքը. իրեն զգում էր ջարդված։ Երբ անվստահ, խարխափելով ուզում էր դուրս գնալ, բախվեց սեղանին։ Գիշերը չափազանցրեց այդ փոքրիկ աղմուկը։ Գաբրիելն անշարժ կանգնեց։ Վախեցավ, թե Ստեփանին արթնացրեց։ Մթության մեջ հնչեց քնաթաթախ տղայի ձայնը.

— Ո՞վ է... Հայրի՛կ... դո՞ւ ես...

Բայց շնչառությունը նորից հանդարտվեց։ Գաբրիելը, որն իսկույն հանգցրել էր ձեռքի լապտերը, շուտով կրկին վառեց, ձեռքը պահելով լույսի դեմ։ Աչքն ընկավ սեղանին, այնտեղ դրված թղթի թերթերին։ Ահա՛ թե ինչ. Ստեփանն արդեն կատարել էր աշխատանքը և հոր ցանկության համաձայն անվարժ ձեռքով ուրվագծել Մուսա լեռան քարտեզը։ Կարմիր թանաքով Ավագյանի կատարած ուղղումներն առատորեն խաչաձևում էին գծերը։ Սկզբում Գաբրիելը չհիշեց առավոտյան հանդիպման ժամանակ որդուն տված հանձնարարությունը։ Սակայն հետո պատկերացրեց, թե տղան ի՞նչ փութորկուն անհամբերությամբ է իրեն ոբոնել, որ ցույց տա, համոզի։ Խզբզած ուրվագիծը դարձավ խորհրդանշան։

Յողոնօլուքի Բագրատյան ամառանոցի ընդարձակ հյուրասրահի առաջ, սանդղասրահին կից, կար մի մեծ դահլիճ։ Ամայի էր և միջանցիկ սենյակի դեր էր կատարում։ Ավագ Ավետիսն իր տունը կառուցելիս նկատի էր ունեցել բազմաթիվ ժառանգներ ունենալու հանգամանքը։ Այնպես որ տարօրինակ մենակյացը, ինչպես նաև հետագայում Գաբրիելն իր փոքրիկ ընտանիքով, զբաղեցնում էր սենյակների միայն մի մասը։ Միջանցիկ սենյակում վառվում էր առաստաղից կախված նավթի լապտերը։ Գաբրիելը մի ակնթարթ կանգ առավ, ականջ դրեց մոտերքում հնչող ձայներին։ Լսեց ժուլիեթի ծիծաղը։ Ուրեմն՝ գեղջուկ հայերի հիացմունքը նրան բավականություն էր պատճառում։ Առաջադիմություն էր։

Հենց այդ պահին դուռը բացեց ծերունի բժիշկ Պետրոս Ալթունին։ Ուզում էր գնալ։ Վառեց իր լապտերի մոմը, վերցրեց աթոռի վրա դրված կաշվե պայուսակը։ Տանտիրոջը նկատեց միայն այն ժամանակ, երբ սա կամացուկ ձայն տվեց.

— Հայրի՛կ Պետրոս։

Բժիշկը հանկարծակիի եկավ։ Դա ալեխառն, անգլանոն մորուքով, փոքրամարմին, սմքած մարդ էր։ Նա այն հայերից էր, որոնք, ի տարբերություն նոր սերնդի, իրենց կորացած ուսերին կրում էին հալածված ազգի ամբողջ բեռը։ Իբրև Ավետիս Բագրատյանի հովանավորյալը, երիտասարդ հասակում նրա հաշվին բժշկություն էր սովորել Վիեննայում և աշխարհ տեսել։ Այն ժամանակ Յողոնօլուքի բարերարը մեծ ծրագրեր ուներ։ Նույնիսկ մտադիր էր մի փոքրիկ հիվանդանոց բացել։ Բայց բանը վերջացավ գավառական բժիշկ նշանակվելով, քանի որ ընդհանուր պայմանների համեմատությամբ դա չափազանցություն էր։ Գաբրիելը ողջ մնացածների մեջ ամենից լավ հիշում էր ծերունի բժշկին, քանի որ սա եղել էր իր մանկաբարձուն։ Բժշկի հանդեպ խոր ակնածանք ուներ։ Բոլոր դեպքերում դա մանկական զգացմունքների հետ կապված ժառանգություն էր։ Բժիշկ Ալթունին հաճնում էր մահուդե մի վերարկու, որ կարծես մնացած լիներ դեռևս Վիեննայի համալսարանում ուսանած ժամանակներից։

— Տղա՛ս, էլ չէի կարող քեզ սպասել... Դե, ասա՛. ի՞նչ լուր ես բերել հյուրյումեթից։

Գաբրիելը նայեց ծերունու թառամած, փոքրիկ դեմքին։ Ծերունու մոտ ամեն ինչ մաշված էր՝ շարժումները, ձայնը, նույնիսկ սակավաթիվ սրախոսությունները։ Արտաքուստ թե ներքուստ մաշվել ու սպառվել էր։ Յողոնօլուքից Փայտագյուղ և Մեղվագյուղ գնալը սոսկալի է, երբ

մարդ այդ ճանապարհը մի քանի անգամ պետք է կտրի անցնի ավանակի կոշտ մեջքին նստած։ Գաբրիելը ճանաչեց կաշվե այն հավերժական պայուսակը, որտեղ կպչուն սպեղանուց, ջերմաչափից, վիրաբուժական գործիքներից և 1875 թվականին լույս տեսած գերմաներեն բժշկական ձեռնարկից բացի, կար նաև անդրջրհեղեղյան շրջանի մանկաբարձական մի նշտար։ Բժշկի այս պայուսակը տեսնելով, Գաբրիելն իր ներքին պոռթկումը զսպեց, որ չպատմի Անտիոքում իմացածը։

— Ոչ մի առանձին բան,— պատասխանեց նա արհամարհանքով։

Ալթունին լապտերը ամրացրեց գոտուց և կապեց մեջքին.

— Կյանքումս առնվազն մի յոթ անգամ դիմել եմ նոր թեզքերե ստանալու համար։ Ծտ են վերցնում, որ նորը տալու ժամանակ փող վաստակեն։ Հայտնի բան է։ Բայց ինձանից այլևս ստանալիք չունեն։ Այս աշխարհում ինձ նոր անձնագիր պետք չէ...— Եվ անատամ լնդերը ցույց տալով, ավելացրեց.

— Առաջներում էլ դրա կարիքը չունեի. քառասուն տարվա մեջ ոչ մի հեռու տեղ չեմ գնացել։

Բագրատյանը գլուխը դարձրեց դռան կողմը.

— Ի՞նչ ժողովուրդ ենք, եթե ամեն բան լուռումունջ կուլ ենք տալիս։

— Կո՞ւլ ենք տալիս։— Բժիշկը ծոր տվեց այդ բառերը։— Երիտասարդներդ չգիտեք, թե ինչ բան է կուլ տալը։ Դուք ուրիշ ժամանակներում եք մեծացել։

Բայց Գաբրիելը կրկնեց իր հարցը.

— Ի՞նչ ժողովուրդ ենք։

— Սիրեցյա՛լ զավակս, դու կյանքդ Եվրոպայում ես անցկացրել։ Երանի ես էլ մնայի Վիեննայում։ Ինձ համար մեծ դժբախտություն էր, որ Վիեննայում չմնացի։ Ինձանից երևի մի բան դուրս գար։ Բայց տեսնո՞ւմ ես, պապդ էլ եղբորդ պես խենթ էր. աշխարհից կտրվել էր և գրքից ոչինչ չէր ուզում իմանալ։ Ես գրավոր պարտավորություն էի ստանձել, որ պետք է վերադառնամ։ Դա էր իմ դժբախտությունը։ Ավելի լավ կլիներ, եթե ոչ մի տեղ էլ չուղարկեր...

— Մարդ միշտ չի կարող ապրել օտարների մեջ, որպես օտարական։

Փարիզեցի Գաբրիելին զարմացրին իր խոսքերը։

Ալթունին խռպոտ ձայնով ծիծաղեց։

— Իսկ այստեղ, այստեղ մարդ կարո՞ղ է ապրել՝ աշխարհից անտեղյակ։ Դու երևի այլ կերպ ես պատկերացրել։

Հանկարծ Բագրատյանի մտքով անցավ. պետք է նախապատրաստական որևէ միջոց ձեռք առնել։ Բայց Ալթունին պայուսակը նորից դրեց աթոռին.

— Գրողը տանի։ Ինչե՞ր ենք խոսում։ Բերանիցս հին-հին պատմություններ ես դուրս քաշում։ Ես բժիշկ մարդ եմ և աստծո հանդեպ առանձնապես մեծ հավատ չունեմ։ Առաջներում աստծո հետ շատ եմ վիճել։ Մարդ կարող է լինել ռուս, թուրք, հոտենտոտ, աստված գիտե, թե էլ ինչ, բայց հայ լինելն անհնարին է...

Թափով ետ քաշվեց անդունդից, որի եզրին էր հասել.

— Վե՛րջ։ Թողնենք։ Ես բժիշկ եմ։ Մնացած բոլոր բաներն ինձ չեն վերաբերում։ Քիչ առաջ ինձ մի շատ պատվական ընտանիք էր կանչել։ Հարսը երկունքի մեջ էր։ Տեսնո՞ւմ ես, շարունակ հայ երեխաներ են աշխարհ գալիս։ Դա խելագարությո՞ւն է։

Նա վրդովված վերցրեց պայուսակը։ Հեռու տանող խոսակցությունը ծերունուն հավանաբար դառնացրել էր.

— Իսկ դո՞ւ, դու ի՞նչ ես ուզում։ Ջնաշխարհիկ կին ունես, հիանալի որդի, ոչ մի հոգս չունես, մեծահարուստ մարդ ես։ Էլ ի՞նչ ես ուզում։ Ապրիր քեզ համար։ Դատարկ բաների մասին մի՛ մտածիր։ Եթե թուրքերը պատերազմի մեջ են, ասել կուզի՝ մեզ հանգիստ կթողնեն։ Դա հնուց ի վեր հայանի բան է։ Իսկ երբ պատերազմը վերջանա, կվերադառնաս Փարիզ, կմոռանաս մեզ էլ, Մուսա լեռն էլ։

Գաբրիելը ժպտաց. կարծես ինքն էլ լրջորեն չընդունեց իր հարցը.

— Հայրի՛կ, իսկ եթե հանգիստ չթողնե՞ն։

Գաբրիելը մի քանի վայրկյան, աննկատ մնալով, կանգնեց մեծ հյուրասենյակի դռան առաջ։ Տասը-տասներկու մարդ կար հավաքված։ Փոքրիկ սեղանի շուրջը կողք կողքի, լուռումունջ նստած էին երեք տարեց կին։ Ժուլիեթի պատվերով նրանց էր ընկերացել ուսանող Ավագյանը։ Բայց խոսակցություն բացելու ուղղությամբ ոչ մի ջանք չէր թափում։ Այդ պատկառելի կանանցից մեկը՝ բժիշկ Ալթունու կինը, Գաբրիելի մանկության հետ կապված կենդանի դեմքերից էր։ Տանտերը նրան Մայրիկ Անթառամ էր ասում։ Տիկինը մետաքսե սև զգեստ էր հագել։ Ճակատի մոտից երկու մասի բաժանված մազերը դեռևս լրիվ չէին ճերմակել։ Խոշոր դիմագծերով ոսկրոտ դեմքը համարձակ արտահայտություն ուներ։ Չէր խոսում, մարդկանց նայում էր անվրդով, անկաշկանդ, զննող

հայացքով։ Նույնը չէր կարելի ասել նրա երկու հարևանուհիների՝ Բիթիասի պատվելի Հարություն Նոխուդյանի և Յողոնիոլուքի մուխթար Թովմաս Քեբուսյանի կանանց մասին։ Նկատելի էր, որ սրանք նեղվում էին և իրենց ազատ չէին զգում, չնայած իրենց հանդերձանքից բավականաչափ արդուզարդ էին դուրս հանել ֆրանսուհուն դուր գալու համար։

Տիկին Քեբուսյանի վիճակն ամենածանրն էր։ Չնայած սովորել էր Մարշալի ամերիկյան միսիոներների դպրոցում, ֆրանսերեն ոչ մի բառ չգիտեր։

Աչքերը ճպճպացնելով, նա նայում էր մոմաջահերի առատ լույսին և մոմակալներին, դրանք համարելով ավելորդ շռայլություն։ Ա՜խ, տիկին Բագրատյանն ի՞նչ կարիք ուներ խնայողություն անելու։ Որտեղի՞ց էին ճարել այդքան հաստ մեղրամոմեր։ Երևի բերել էին Հալեպից կամ նույնիսկ Ստամբուլից։ Քեբուսյանը գավառի ամենահարուստ հողատերն էր, բայց նրա տանը, նավթի լամպերից բացի, գործածում էին միայն բարակ ճարպամոմեր և ոչխարաճարպի ճրագներ։ Այստեղ էլ, դաշնամուրի մոտ, բարձր ջահակալների մեջ դրված գույնզգույն մեղրամոմեր էին վառվում, ինչպես եկեղեցում։ Մի՞թե դա չափազանցություն չէր։

Նույն հարցն էր իրեն տալիս նաև երեցկինը, որը խիստ ընկճված էր։ Բայց, ի պատիվ տիկնոջ, պետք է ասել, որ նրա սրտում ո՛չ նախանձ կար, ո՛չ ընչաքաղցություն։ Ձեռքերը բացահայտ ափսոսանքով գոգն էր առել։ Երևույթի պատճառով տանն էր թողել ձեռագործը, որը սովորաբար երբեք վայր չէր դնում։

Երեցկինը և մուխթարի տիկինը նայում էին իրենց ամուսիններին, զարմանում այդ ծերուկների վրա։

Հիրավի, թե՛ մեղմաբարո պատվելին, թե՛ հաղթամարմին գյուղապետը փոխվել, բոլորովին այլ մարդիկ էին դարձել։ Նրանք կազմում էին տղամարդկանց այն խմբի անբաժանելի մասը, որոնք շրջապատել էին Ժուլիեթին։ (Սա հենց այդ պահին հավաքվածներին բացատրություններ էր տալիս Գաբրիելի հայտնաբերած և պահարանում ցուցադրված մի քանի հնությունների մասին։) Երկու ծանրակշիռ պարոնն էլ իրենց կանանց կողմն էին արել թիկունքները, խոնարհվել այնպես, որ երևում էին հնաձև, ծառայամտորեն ձգված սերթուկների աստառները։ Մանավանդ պատվելին, որ կարծես լարված զսպանակի նման պատրաստ սպասում էր անվերապահորեն կատարելու Ժուլիեթի որևէ պահանջը։ Բայց ֆրանսուհին ոչինչ չէր պահանջում։ Պատվելին կանգնած

էր որոշ հեռավորության վրա, քանի որ Ժուլիեթին շրջապատել էին երիտասարդները։ Դրանցից երկուսն ուսուցիչներ էին։ Մեկը Հաբեթ Շատախյանն էր։ Սա մի քանի շաբաթ անց էր կացրել Լոզանում և հմուտ ֆրանսագետի անուն էր հանել։ Ոգևորված էր. բաց չէր թողնում իր արվեստը ցուցադրելու հիանալի առիթը։ Մյուս ուսուցիչը Հրանտ Ոսկանյանն էր, փոքրամարմին մի երիտասարդ, որի սև մազերը սկիզբ էին առնում ճակատի մեջտեղից։ Հակառակ եռանդագին շաղակրատող ընկերոջը, նա բացարձակ լռություն էր պահպանում։ Այս լռությունը լարված էր, պատրաստ պայթելու։ Շարունակ իրար էին հաջորդում հանդուգն թեթևամտությունն ու քմկական արժանիքը։ Այս անգամ Ոսկանյանի սանձահարող լռությունը կորցրել էր իշխանությունը։ Երբ Գաբրիելը ներս մտավ, ըսեց սեփական առոգանությամբ հիացած ուսուցչի զրընգուն ֆրանսերենը.

— Օ՜, տիկի՜ն, մենք որքա՜ն երախտապարտ ենք ձեզ, որ Դուք քաղաքակրթության ճառագայթ եք բերել այս անապատը։

Այսօր Ժուլիեթի սրտում տեղի էր ունեցել մի ներքին փոքրիկ պայքար։ Առիթը զգեստն էր, որով պետք է ընդուներ իր նոր հայրենակիցներին։ Մինչ այդ, պայմաններից ելնելով, նա միշտ չափազանց պարզ էր հագնվում, քանի որ տնպատշաճ, ավելորդ բան էր համարում «այդ չտես կիսավայրենիներին» կուրացնելը։ Բայց վերջերս նկատել էր, որ հյուրերի վրա թողած մոգական տպավորությունն իր վրա էլ է անդրադառնում։ Գայթակղությանը չդիմանալով՝ պահարանից հանեց իր տոնական լավագույն զգեստը։ «Ա՜խ, անցյալ տարվա գարնանից է մնացել,— մտածեց նա շորը փորձելիս։— Եթե փարիզյան տանը լինեինք, չէի համարձակվի սրանով երևալ մարդկանց աչքին»։ Փոքր-ինչ տարակուսելուց հետո դուրս բերեց նաև շքեղ զգեստին վայել զարդերը։ Ծկրզբնական մտահղացումը, որից մինչ այդ ամաչում էր, նրան հանկարծակի բերեց։ Գեղեցիկ ֆանտից շրջապատում գեղեցիկ լինելը վեհացնող զգացում է, բայց դա երկարատև գոհացում չի տալիս։ Մարդ միայն մեկն է շատերից։ Արևմտյան հեռավոր աշխարհի զբոսավայրերում, թատերական սրահներում ու ռեստորաններում կինը մեծաթիվ դերակատարների հետ խաղացող գեղեցիկ ստատիստուհի է։ Բայց այստեղ, օտարազգի հավատացյալների շրջապատում, այս խոշորաշյա, ամաչկոտ հայերի համար լինել անհատանելի սրբապատկեր, Աթենաս-Պալլաս, միակ ոսկեհեր, խարտյաշգեղ տիրուհի— սա արդեն սովորական ճակատագիր չէ,

այլ այնպիսի մի իրադարձություն, որից երիտասարդորեն շիկնում են կնոջ այտերը, բոցավառվում շուրթերը, փայլատակում բիբերը։

Գաբրիելը Ժուլիեթին տեսավ շրջապատված հլու-հնազանդ երկրպագուներով, որոնք նրա հանդեպ որևէ ցանկություն դրսևորել չէին հանդգնի։ Նկատեց, որ կնոջ այտերը շառագունել են, իսկ շուրթերը վառվում են. կարծես քսանամյա աղջիկ լիներ։ Երբ Ժուլիեթը շարժվեց, Գաբրիելը ճանաչեց նրա «հրացայտ քայլվածքը», ինչպես դա ինքն էր մի անգամ անվանել։ Թվում էր, թե ֆրանսուհին Յողոնօլուքում գտել է ամուսնու հասարակ հայրենակիցների սրտի ճանապարհը, նա, որ Եվրոպայում հաճախ էր առարկում ամենաուսյալ և ընտրելագույն հայերի հետ շփվելու դեմ։ Ի՞նչ հետաքրքիր բան. Բեյրութում, երբ համաշխարհային իրադարձությունները վրա հասան, և վերադարձի հնարավորությունը վերացավ, Գաբրիելը երկյուղ էր կրում, թե կինը հայրենիքի կարոտից հալումաշ կլինի։ Ֆրանսիան մղում էր իր պատմության մեջ ամենադժվարին պայքարը։ Եվրոպական լրագրերն այդ անկյունը չէին հասնում։ Ոչինչ հայտնի չէր։ Աշխարհից կտրված էին։ Երկար-բարակ շրջաններ գործելուց հետո միայն մի նամակ էր ընկել նրանց ձեռքը, այն էլ գրված նոյեմբերին։ Ժուլիեթի մորից էր։ Մեծ բախտավորություն էր, որ նա եղբայրներ չուներ, թե չէ հոգսի տակ կընկներ։ Ժուլիեթն իր երկու քույրերի հետ առանձնապես մտերիմ չէր։ Օտարազգու հետ ամուսնանալով՝ խորթացել էր ընտանիքին։ Ինչ էլ լինեք, նրա անտարբերությունը, նույնիսկ թեթևամտությունը Գաբրիելի համար լիակատար անակնկալ էր։ Ապրում էր ներկայով։ Հազվադեպ էր մտաբերում հայրենիքը։ Թվում էր, թե ամուսնության տասնչորսերորդ տարում անհուսալին գլուխ էր եկել այստեղ՝ Յողոնօլուքում։ Ժուլիեթը ոտք էր դրել Գաբրիելի աշխարհը։ Մի՞թե երկուսին միացնող և բաժանող լարվածությունն այդ երեկո գտել էր իր լուծումը։

Հիրավի, ինչ-որ նոր բան կար ամուսինների էության մեջ, երբ Ժուլիեթը փարվեց Գաբրիելին.

— Վերջապես, բարեկամս։ Արդեն շա՜տ էի անհանգստացել։

Նա իսկույն, գրեթե չափազանցված ձևով հոգ տարավ, որ ամուսինը հագեցնի իր քաղցն ու ծարավը։ Բայց Գաբրիելը ուտելու ժամանակ չուներ։ Ամբողջ էությունը նրան ստիպում էր հայտնել Անթաքիեում պատահածը։ Մուխթար Քեբուսյանը վիզը երկարացրած՝ ջանում էր՝ ոչ մի բառ բաց չթողնել. աչքերը մի փոքր շեղ էին, և դա ավելի էր ընդգծում նրա գեղջկական դեմքի թերահավատությունն ու երկչոտությունը։ Դրժ-

վար էր հավատալ, որ այդ օրվա կառավարական միջոցառումը չէր ազդել մարդկանց տրամադրության վրա։ Հենց այն փաստը, որ Թուրքական իշխանությունը այդ բանի համար ընտրել էր կիրակին, այն էլ պատարագին նախորդող ժամը, ուրեմն՝ դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ նողկալի դիտավորության և թշնամության նշան։ Ճիշտ է, 1896 և 1909 թվականների արյունալի դեպքերի ժամանակ Մուսա լեռան շրջակա գյուղերը դրեթե անվթար էին մնացել, բայց այնպիսի մարդիկ, ինչպիսիք էին Քերուսյանն ու Բիթիուսի փոքրամարմին պատվելին, նուրբ լսողություն ունեին և ամեն կասկածելի հնչյուն լսելիս ականջները սրում էին։ Նրանք ամբողջ օրը մտահոգության մեջ էին անցկացրել։ Միայն երեկույթը և Ժուլիեթի ճառագայթող ներկայությունը կարողացան փարատել նրանց անհանգիստ մտայլությունը։ Բայց երբ Բագրատյանը, իր խոստման համաձայն, կրկնեց մյուդիրի ասածը, թե եղածը պատերազմական ժամանակաշրջանին հատուկ ընդհանուր կարգադրություն է, Նոխուդյանը, Քեբուսյանը և ուսուցիչները հայտարարեցին, թե իրենք այդ առեղծվածի լուծումն արդեն գտել են։ Ջրոս կողմ ծավալվեց լուսավոր լավատեսություն։ Դրա ամենահամոզված ներկայացուցիչը ուսուցիչ Շատախյանն էր։ Սկսեց եռանդուն շաղակրատել.

— Անցել է միջնադարը,— ասաց նա, իր բոցաշունչ խոսքերն ուղղելով տիկին Բագրատյանին։— Քաղաքակրթության արևն այժմ ճառագայթում է նաև Թուրքիայի վրա։ Պատերազմը միայն արշալույսի արնագույն ցոլքն է։ Մեկընդմիշտ վերջ է տրված ճնշմանը, արհավիրքին, սպանդին։ Առաջադեմ աշխարհը չի հանդուրժի նման բաներ։ Եվ Թուրքական կառավարությունը իր գաշնակիցների հսկողության տակ է։

Շատախյանը հուսավառված նայեց Ժուլիեթին։ Արդյոք իր անթերի ֆրանսերենով ինքը ծառայություն չէ՞ր մատուցել առաջադիմությանը։ Ներկա գանվողները կարծես հասկացան նրա ասածը և հավանություն տվին նրա հայացքներին։ Միայն լռակյաց ուսուցիչ Ոսկանյանը աբհամարհանքով ըրթմնջաց։ Դե, նա միշտ էլ այդպես էր վարվում, երբ իր բարձիթողի պերճախոսությամբ տարվելով, չափը կորցնում էր։

Եվ ահա հնչեց մի նոր ձայն.

— Ուզո՞ւմ եք Թուրքերին։ Նոսանք ավելի կարևոր բաներից։

Ասողը դեղագործ Գրիգորն էր, ամենանշանավոր դեմքն այս հասարակության մեջ։

Նույնիսկ հագնելաձևից երևում էր, որ դեղագործ Գրիգորն առանձնահատուկ անձնավորություն է։ Բոլոր տղամարդիկ եվրոպական տարազներ էին կրում (Յողոնօլուքում Լոնդոնից վերադարձած մի դերձակ էր ապրում), մինչդեռ Գրիգորը բաց դեղին գույնի ռուսական բլուզ էր հագնում՝ նուրբ մետաքսից։ Չնայած վաթսուն տարեկան էր, դեմքը դորկ էր, անկնճիռ։ Սպիտակ այծամորուք ուներ, փոքր-ինչ շեղ աչքեր։ Խունացած թուղթ հիշեցնող մաշկով նա ավելի շատ նման էր իմաստուն մանդարինի, քան հայի։ Խոսում էր բարձր, միևնույն ժամանակ մի տեսակ խուլ ձայնով. կարծես ուժասպառ էր եղել իր մեծ գիտելիքների ծանրությունից։ Եվ իրոք, Յողոնօլուքի դեղագործը ոչ միայն ուներ մի գրադարան, որի նմանը Սիրիայում չկար, այլև ինքն էլ հենց կենդանի գրադարան էր, աշխարհի ամենաանհայտ հովիտներից մեկն ընկած ամենանագետ։ Մուսա լեռան բուսական աշխարհի, անապատների երկրաբանական հատկանիշների, Կովկասի պակասող թռչնատեսակների, պղնձահանույթի, օդերևութաբանության, հոգևոր հայրերի, Ղուրանի, հաստատուն աստղերի, ուղտաղրի արտահանման քանակի, պարսկական վարդայուղ պատրաստելու գաղտնիքների կամ ճաշատեսակների, ամեն ինչի մասին Գրիգորը միշտ էլ խուլ ձայնով տեղեկություններ կարող էր տալ, այն էլ մի քիչ անտարբեր ձևով. կարծես մարդիկ նրան չէին հարցնում, եթե պահանջում էին լուծել նման չնչին հարցեր։ Ամենագետ լինելը տարածված բան է։ Միայն դա չէր դեղագործի ստեղծագործական առանձնահատկությունը։ Ո՛չ, Գրիգորը նման էր իր գրադարանին։ Վերջինս բաղկացած էր մի քանի հազար հատորից, թեև դրանց գերակշռող մասը գրված էր դեղագործի համար անհասկանալի լեզուներով։ Այսպես, օրինակ՝ Բրոքհաուզի խոսակցական բառարանի շատ հին հրատարակությունը։ Բավարարվում էր հայերեն տեղեկագրական որևէ աղքատիկ աղբյուրով։ Նախախնամությունը նրա մոլության ճանապարհին ծանր խոչընդոտ էր դրել։ Հայերեն և ֆրանսերեն գրքերը, որոնք Գրիգորին մատչելի էին, նրա գրական գանձերի ամենաթույլ մասն էին կազմում։ Բայց մեր դեղագործը ոչ միայն գիտնական էր, այլև նույնքան գրասեր։ Իսկական գրասերը ձևից ու բովանդակությունից ավելի սիրում է գրքի գոյությունը, թեկուզ բնավ էլ չկարդա։ (Մի՞թե ամենամեծ սերը այդպիսին չէ։) Դեղագործը հարուստ մարդ չէր։ Նա ի վիճակի չէր մեծածախս պատվերներ ուղարկել Ստամբուլի կամ արտասահմանի գրավաճառներին և հնավաճառներին։ Հազիվ թե կարողանար վճարել ճանապարհածախսը։ Ստիպված առնում էր, ինչ ձեռքն էր ընկնում։ Հիմքը

դրված էր, ինչպես ինքն էր պնդում, դեռևս մանկության և շրջագայության տարիներին։ Գործակալներ ու հովանավորներ ուներ Աթենքում, Ալեքսանդրիայում, Հալեպում, Դամասկոսում, որոնք երբեմն խոշոր ծրարներ էին ուղարկում։ Ի՞նչ տոն էր նման ընծաներ ստանալը։ Դրանք արաբերեն, եբրայերեն մեծածավալ գրքեր լինեին, թե ֆրանսերեն վեպեր կամ, առհասարակ, ինչ-որ հնամաշ ժողովածուներ, միևնույն է, գրքեր էին, տպագրված թղթեր։ Նույնիսկ օրվա լրագրերը հավաքում, բծախնդրորեն կազմում էր դրանց ցանկը, գրանցելով գներն ու հայտարարությունները։ Այս մարդու մեջ կարծես մարմնավորված էր ամբողջ հայ ազգի գորովանքը հանճարի հանդեպ, բոլոր հին ժողովուրդների այդ զաղտնիքը, որ հավերժում է, հաղթահարելով դարերը։ Ինչպես մեխակի միակ սերմը արմատ է գցում լերկ ժայռի վրա, այդպես էլ Գրիգորի գրագարանն արմատ էր գցել Յողոնօլուքում։ Այս տարօրինակ, մեծ մասամբ չընթերցված գրադարանը հազիվ թե դեղագործի հսկայական գիտելիքների համար բավարար հիմք լիներ։ Այստեղ նրան օգնության էր հասնում ամեն ծակուծուկ մտնելու ստեղծագործական եռանդը։ Գրիգորը լրացնում էր իր աշխարհում եղած պակասը։ Աստվածաբանությունից սկսած մինչև վիճակագրություն, բոլոր հարցերին պատասխանում էր լիակատար իմացությամբ։ Ի դեպ, երբեք չէր ստում։ Գիտությանը վերաբերող ծանրակշիռ բառերն արտասանելիս նրա հոգին ողողվում էր բանաստեղծական անմեղ երանությամբ։ Ինքնին հասկանալի էր, որ նման մի մարդ պետք է սաներ ունենար։ Հասկանալի է նաև, որ այդ սաները յոթ գյուղի ուսուցիչներն էին։ Գրիգորին համարում էին զարմանալի պատգամախոս, և խստաբարո Ոսկանյանը երբեք չէր կասկածում, որ դա հիմնավոր իմաստություն է։ Դեղագործ Գրիգորը Մուսա լեռան Սոկրատեսն էր, մանավանդ երբ իր սաների հետ գիշերները դուրս էր գալիս փիլիսոփայական շրջագայությունների։ Այդ հանգամանքը հնարաւորություն էր տալիս մշտապես խորացնելու սաների հարգանքը։

Գրիգորը մատն ուղղում էր դեպի աստղազարդ երկինքը.

— Հարեթ Շատախյան, ճանաչո՞ւմ ես այն կարմրավուն աստղը։

— Ո՞րը։ Այն մե՞կը։ Պետք է, որ մոլորակ լինի։ Ինչպե՞ս։

— Սխալ է, վարժապետ։ Դա Ալդեբարան աստղն է։ Իսկ գիտե՞ս, թե ինչու է կարմրափայլ։

— Ինչո՞ւ։ Երևի... մեր մթնոլորտը...

— Սխալ է, վարժապետ։ Ալդեբարան աստղը բաղկացած է մագնեզային հալած երկաթից, ուստի և կարմրավուն փայլ ունի։ Նույն կարծիքին է նաև հռչակավոր Քամիլ Ֆլամարիոնը, որն այդ մասին է գրել ինձ ուղարկած վերջին նամակում։

Մեծ աստղագետի նամակն էլ սնապարծություն չէր։ Դա իրողություն էր։ Միայն թե Քամիլ Ֆլամարիոնի կողմից Գրիգորն ինքն էր իրեն նամակ գրել։ Նման նամակագրությամբ, անշուշտ, հազվադեպ էր զբաղվում, ամենահանդիսավոր պահերին։ Սաներն այդ մասին ոչինչ չգիտեին։ Գրիգորը նամակագրություն ուներ ոչ միայն ժամանակակից կամ նոր վախճանված հսկա հանճարների հետ։ Նույնիսկ Վոլտերը և հայ մեծ գրող Բաֆֆին առանց հապաղելու բազմիցս պատասխանել էին նրա նամակներին։ Այսպիսով, Գրիգորի մեջ ապրում էր Ոլիմպոսի թղթակիցանդամը։

Զարմանալին այն էր, որ չնայած ամբողջ աշխարհով հետաքրքրվում էր, Յողոնօլուքից ոչ մի անգամ ոտքը դուրս չէր դրել։ Մարդիկ նման դեպք չէին հիշում։ Մուսա լեռան բոլոր ուսումնական մարդիկ տարին առնվազն մի անգամ ճանապարհորդում էին թեկուզ մինչև Հալեպ կամ Մարաշ՝ այցելելու ամերիկյան, գերմանական, ֆրանսիական միսիոներների դպրոցները, որտեղ իրենք ստացել էին բարձրագույն կրթություն։ Ներունիներից շատերը վերջին տարիներին Ամերիկայից էին վերադարձել և անդորրության մեջ սպառում էին իրենց վաստակածը։ Պատերազմից ոչ շատ առաջ թափառասերների մի խումբ նորից կտրեց անցավ օվկիանոսը։

Միայն դեղագործ Գրիգորն էր խուսափում տեղափոխությունից։ Նույնիսկ հարևան գյուղերը շատ հազվադեպ էր հյուր գնում։ Պնդում էր, թե երիտասարդ հասակում սեփական աչքով բավականաչափ տեսել է հողագնդի վրա գտնվող տեսարժան բաները։ Երբեմն նկարագրում էր դեպի արևելք և արևմուտք կատարած իր շրջագայությունները, ասելով, թե ինքն սկզբունքորեն հրաժարվել է երկաթուղուց։ Հայտնի չէր, թե դա էլ նույնն էր, ինչ-որ Ֆլամարիոնից ստացած նամակը։ Գրիգորի խոսքերը և պատմությունները մազաչափ անգամ փչոց չէին կամ երևակայության արդյունք։ Դրանք բացահայտ ճշմարտություն էին, այնպես որ, Գաբրիելի պես մարդն անգամ չէր կասկածում։ Բայց թե ամեն առիթով դեղագործը հավաստիացնում էր, որ ճանապարհորդելու ձգտումն իր համար անհասկանալի է։ Ալթունին, այդ հանրահայտ փնթփնթանը, զառնացած զանգատվում էր, թե իր կյանքն իզուր կորավ սեփական գյուղում։ Մինչդեռ Գրիգորը գոհ էր Յողոնօլուքից, Յողոնօլուքում ապրելուց։ Բոլոր վայրերն էլ նման են իրար, քանի որ արտաքին աշխարհի էու-

թյունը ներքին աշխարհն է։ Հասկացողը տեղից չի շարժվի, ինչպես ճառագայթաձև ոստայնի մեջտեղում նստած սարդը, որը ցանց է հյուսում՝ իրեն զգալով տիեզերքի վերևում։ Բայց երբ խոսակցությունը վերաբերում էր քաղաքակրթությանը, պատերազմին, ժամանակի հրատապ խնդիրներին, դեղագործն անհանգստանում էր։ Նման բաներ իմանալ չէր սիրում։ Աշխարհը արտաքին կախման և ներքին խարդավանքների խաղադնդակ դարձնելը առաջ է բերում նվաստացուցիչ ավերածություն։ Աշխարհն արժեք է ստանում միայն այն դեպքում, երբ ընթանում է դեպի անձնուրաց հայեցողության հեռուն։ Ոգու հետի՜ն ամբարտավանություն։ Իր ի՞նչ գործն է, թե իրադարձություններն ինչպիսիք են խոր թիկունքում, Ստամբուլում, Հալեպում կամ Միջագետքում։ Նա արհամարհում էր գիրք չդարձած պատերազմները։ Այս տեսակետից դեղագործի սրտով չէին նաև ուսուցիչ Շատախյանի քաղաքական հայտարարությունները։ Գրիգորն իր միտքն ավարտեց այսպես.

— Չեմ հասկանում, թե ինչո՞ւ մեկը մյուսին շարունակ խեթ-խեթ է նայում։ Պատերազմ, անկարգություններ, վալի, կայմակամ։ Թող թուրքերն անեն, ինչ ուզում են։ Երբ դուք նրանցով չհետաքրքրվեք, նրանք էլ ձեզնով չեն հետաքրքրվի։ Մենք այստեղ ունենք մեր սեփական հողը։ Եվ այդ հողը նույնիսկ նրբաճաշակ երկրպագուներ ունի։ Խընդրեմ...

Այս ասելով Գրիգորը տանտիրոջը ներկայացրեց անծանոթ հյուրին, որը մինչ այդ կամ մյուս տղամարդկանց ետևն էր նստած կամ, պարզապես, ոչ մեկի աչքով չէր ընկել։ Դեղագործն օտարականի հնչեղ անունն արտասանեց ծոր տալով.

— Գոնզագ Մարիս։

Երիտասարդի տեսքից և շարժումներից երևում էր, որ նա եվրոպացի է կամ, առնվազն, խիստ եվրոպականացած արևելցի։ Սև, փոքրիկ բեղերն ու չափազանց սիրալիր դեմքը նույնքան ֆրանսիական էին, որքան անունը։ Ամենից շատ աչքի էին ընկնում հոնքերը, որ ճակատի վրա բուռ անկյուն էին կազմել։

Գրիգորն օտարի համար շարունակեց հերոլդի դեր կատարել.

— Պարոն Գոնզագ Մարիսը հույն է։

Բայց անմիջապես ավելացրեց, կարծես չկամենալով նվաստացնել հյուրին.

— Ոչ թե թուրքահպատակ, այլ զտարյուն հույն, եվրոպացի։

Օտարականը շատ երկար թարթիչներ ուներ։ Այդ խոսքի վրա նա ժպտաց, կանացիորեն խոնարհելով աչքերը.

— Հայրս հույն էր, մայրս՝ ֆրանսուհի, ինքս ամերիկացի եմ։

Բագրատյանի վրա հաճելի տպավորություն թողեցին երիտասարդի համեստությունն ու ամաչկոտությունը։ Նա գլուխն օրորեց.

— Ներեցեք, այդ ո՞ր գիժ քամին է ֆրանսուհի մայր ունեցող մի ամերիկացու բերել այստեղ, այո՛, այստեղ։

Գոնզագը նորից ժպտաց, խոնարհելով թարթիչները.

— Շատ պարզ։ Մի քանի շաբաթ գործ ունեի Ալեքսանդրեթում։ Այնտեղ էլ հիվանդացա։ Բժիշկն ինձ ուղարկեց բարձր տեղ՝ Բեյլան։ Բայց Բեյլանում ինձ լավ չզգացի...

Դեղագործ Գրիգորը խրատաբար բարձրացրեց ցուցամատը.

— Օդի ճնշում։ Բեյլանում օդի ճնշումը միշտ էլ սովորականից ցածր է։

Գոնզագ Մարիսը խնամքով հարդարված գլուխը երախտագիտությամբ թեքեց դեղագործի կողմը.

— Ալեքսանդրեթում ինձ այնքա՜ն բաներ պատմեցին Մուսա լեռան մասին, որ հետաքրքրությունս բորբոքվեց։ Ինձ համար հաճելի անակնկալ էր այս անհրապույր արևելքում գտնել նման գեղեցկություն, այսքան բարեկիրթ մարդիկ, այնպիսի հյուրընկալություն, ինչպիսին ինձ ցույց տվեց իմ տանտերը՝ պարոն Գրիգորը։ Սիրում եմ այն ամենը, ինչ անծանոթ է։ Եթե Մուսա լեռը Եվրոպայում լիներ, մեծ համբավ կվայելեր։ Բայց հիմա ուրախ եմ, որ դա միայն ձե՛զ է պատկանում։

Դեղագործն անտարբեր, խուլ ձայնով, ինչպես վարվում էր կարևոր նորություններ հաղորդելիս, ազդարարեց.

— Նա գրող է և այստեղ, իմ տանը, շարունակելու է գրել։

Այս խոսքից Գոնզագը կարծես ամաչեց.

— Ես գրող չեմ։ Երբեմն ամերիկյան որևէ թերթի մանր-մունր լուրեր եմ ուղարկում։ Ուրիշ ոչինչ։ Ես նույնիսկ իսկական լրագրող չեմ։

Ձեռքի անորոշ շարժումով նա ցույց տվեց, որ այդ զբաղմունքը ոչ մի նպատակ չի հետապնդում, բացի հաց վաստակելուց։ Բայց Գրիգորը չէր հրաժարվում իր զոհից, որով կուզենար հպարտանալ.

— Այնուհանդերձ դուք նաև արվեստագետ եք, երաժիշտ, վիրտուոզ, համերգներ եք տվել, այնպես չէ՞։

Երիտասարդը ձեռքը բացասաբար շարժեց.

— Այդ բոլորն էլ ճշմարիտ չէ։ Ես սոսկ դաշնամուրային նվագակցող եմ եղել։ Մարդ ամեն բան պետք է փորձի։

Նրա հայացքը Ժուլիեթից օգնություն էր հայցում։ Սա զարմանք հայտնեց.

— Աշխարհը փոքր է։ Տարօրինակ չէ՞, որ այստեղ երկու հայրենակից գտնում են իրար։ Այո, կիսով չափ դուք իմ հայրենակիցն եք։

Ուսուցիչ Շատախյանը դարձյալ չկարողացավ սանձահարել իր զեղումները.

— Եվ արդյոք տարօրինակ չէ՞, որ մենք այսքան ընտիր շրջապատ ենք մտել, որ մենք՝ հայ խեղճ գյուղացիներս, տիկնոջ բարության շնորհիվ վայելում ենք նրա նրբաշուք մտերմությունը։

Բորբոքված Ոսկանյանը թողեց, որ իր լռությունը կուտակվի, և խոժոռ վեհությամբ մի կողմ քաշվեց։ Դրանով հասկացրեց, որ բնավ էլ տարօրինակ չէ, եթե այստեղ հարգանքով են ընդունում իր նման մի անձնավորության։ Չէ՞ որ Ոսկանյանը Մուսա լեռան շրջակայքում համարվում էր ոչ միայն առաջնակարգ բանաստեղծ, որն իր հայրենակիցներին ամեն ուրախ կամ տխուր հանդեսների առթիվ մատուցում էր նրանց պատվիրած ոտանավորները, այլև գեղագիր էր և նկարիչ։

Դեղագործ Գրիգորն իր սան Շատախյանին մի անգամ էլ թեթևակի դաս տվեց.

— Մենք՝ հայերս, ունենք ճակատագրական մի թերություն։ Դա փոքրոգություն է, որը մեզ հաճախ տանում է դեպի ինքնանվաստացում։ Մոռանում ենք, որ եղել ենք աշխարհի ամենահին և ամենաքաջաքակիրթ ժողովուրդներից մեկը։ Տիկինը, իբրև մեր Գաբրիել Բագրատյանի ամուսինը, անշուշտ, գիտե, որ մեր հնագույն ազգը Հռոմից առաջ քրիստոնեությունն ընդունել է իբրև պետական կրոն*։ Մենք փառահեղ պետություն ենք ունեցել, մայրաքաղաք Անի, որն իր հազար եկեղեցիներով համարվել է աշխարհի հրաշալիքներից մեկը։ Հայ ազգի արքաներն են կառավարել Բյուզանդիան։ Այն ժամանակ, երբ Ֆրանսիան գեռևս նիրհում էր ծայրահեղ բարբարոսության գրկում, մենք դասական գրականություն ունեինք։ Ես ինքս էլ նմուշներ ունեմ այնպիսի զոր ավոր հեղինակների գործերից, ինչպիսիք են Ղազար Փարպեցին և Մովսես Խորենացին։ Բայց այսօր էլ հարկ չկա ամաչելու։ Նույնիսկ այստեղ, այս խուլ գյուղում, որտեղ անգամ կարգին փողոց չկա, ժամանակի ընթացքում ստեղծվել է պատկառելի մի գրադարան... ուրեմն, տիկինը թույլ կտա, որ իր առաջ չամաչենք...

Այս հիանալի ճառը դեղագործն արտասանեց մանդարինին վայել անվրդով հանդարտությամբ։ Ժուլիեթի դեմքին չէր նայում։ Իբրև սոկրատեսյան իմաստուն, Գրիգորը կանանց հանդեպ խիստ առաքինի էր և զուսպ։ Սակայն դրա փոխարեն իր լույսի շուրջն էր հավաքում երիտասարդ տղաներին, որպեսզի նրանք բթամիտ չմնային։ Անշուշտ, այդ ձգողական ուժի արդյունքն էր և այն, որ երիտասարդ Գոնզագ Մարիսը նրա տանն էր իջևանել, չնայած մուխթարը մի գեղեցիկ սենյակ էր առաջարկել։

Գրիգորի խոսքի վրա գինովցած Ժուլիեթն սկսեց հայերեն թոթովել։ Այդ բանը նա արեց հմայիչ ձևով.

— Հապա ի՞նչ էիք ուզում... ինքս էլ հայուհի եմ, քանի որ հայի հետ եմ ամուսնացել... օրենքով... կամ երևի թրքուհի եմ... օ՜հ, ինձ բոլորովին չեմ ճանաչում...

Լեզվափորձությունը չորս կողմից դիմավորեցին հիացական ծափահարությամբ։ Գաբրիելն իր ամբողջ կյանքում կնոջ բերանից միայն մի քանի հայերեն բառ էր լսել։ Այս նոր առաջադիմությունը նրան զարմանք և երանություն կպատճառեր, բայց առիթը բաց թողեց, քանի որ այդ պահին անթարթ զննում էր Միհրդատի գլխի քանդակը, որ պատկանում էր հետքրիստոնեական ժամանակաշրջանի երկրորդ հարյուրամյակին և դուրս էր բերվել Սուեդիայի մոտ գտնվող Սելևկիայի ավերակներից։ Բայց Գաբրիելի մտորումները կարծես բնավ էլ չէին վերաբերում այդ գլխին։ Հավաքվածներից ոչ մեկը չհասկացավ տանտիրոջ միտքը, երբ նա հանկարծ զայրացած գոչեց.

— Երբ մի կենդանի արարած այլևս չի հավատում, որ կարող է իրեն պաշտպանել, կործանվում է։ Այդպես է եղել բնության և պատմության մեջ։

Եվ չգիտես ինչու, գլխի պատվանդանը նախկին տեղից հրեց մի փոքր դեպի ձախ։

Ժուլիեթի զվարթ տրամադրության շնորհիվ երեկույթը շատ հաջող անցավ. ոչ մի կերպ չէր կարելի համեմատել Բագրատյան ամառանոցի նախկին հավաքույթների հետ։ Տեղացի հայերը մեծ մասամբ զուտ արևելյան կյանք էին վարում. հանդիպում էին միայն եկեղեցում և դրսում։ Միմյանց այցելում էին միայն հանդիսավոր առիթներով։ Թեյատներ չկային, թեև դրանք կային թուրքական նույնիսկ ամենափոքր գյուղերում։ Տնտեսական այս անշրջետի պատճառը կնոջ բանտային վիճակն էր։ Բայց դա հեռահետ վերանում էր։

Երեցկինը մոռացել էր ամուսնուն հիշեցնել, թե գնալու ժամանակն է, չնայած եռանդով հետևում էր, որ պատվելու կյանքը երկարատև լիներ, և քունը չկրճատվեր։ Մուխթարի կինը Ժուլիեթին մոտենալով, փորձառու մատներով շոշափում էր մետաքսե զգեստը։ Մայրիկ Անթառամն անսպասելիորեն անհայտացել էր։ Ամուսինը մի տղայի միջոցով նրան կանչել էր, որ ծննդաբերության ժամանակ իրեն օգնի և վանի այն ոգիներին, որոնք նման դեպքերում միշտ էլ պաշարում են ծննդկանի տունը, միջամտում իրենց կախարդանքով։ Տիկին Ալթունին տասնյակ տարիներ եղել էր բժիշկ ամուսնուն արժանավոր օգնականը, մասամբ թեթևացնելով նրա բազմազբաղ գործունեության ծանրությունը։

— Ինձանից շատ է գործ անում,— պնդում էր ծերունին։

Սկսեցին գովաբանել Մայրիկ Անթառամին։ Ուրի՞շ կին էր։ Իրեն զոհում էր։ Բոլոր կանանց՝ ծեր թե երիտասարդ, նեղության մեջ օգնում էր մայրական կամ քույրական խորհուրդներով։ Նույնիսկ դրսից նամակներ էր ստանում։ Դրա պատճառը, թերևս, այն էր, որ սմբողջ գավառում նա էր Ազգանվեր հայուհիների ընկերության ներկայացուցիչը։ Միայն տիկին Քեբուսյանը քննադատաբար հիմնավորեց Անթառամի հոգու բարությունը.

— Անզավակ կին է։

Մուխթարն այդ ժամանակ ծանրացած գլխով և շեղ աչքերով հետևում էր Գրիգորի խոսքերին, որը չինական մետաքսամշակության առավելություններն ամենայն մանրամասնություններով հակադրում էր տնայնագործությանը։ Քեբուսյանը ձեռքով խփեց իր ծունկին.

— Ինչպե՞ս, սա մեր Գրիգո՞ն է։ Քանի՞ տարի է, որ դեղատուն ենք գնում, նավթ ու լուծողական ենք առնում, բայց մտքներովս էլ չի անցել, թե ինչ մարդ է։

Ամենից շատ աշխուժանալու կարիք զգում էր տանտերը։ Դրա համար մի ակնթարթ էր պետք։ Դժգոհությամբ աչքի անցկացրեց մեծ սեղանը, որտեղ թխվածքներով լի ափսեներ էին դրված, թեյի, սուրճի գավաթներ և երկու սրվակ օղի։ Նա ոտքի թռավ.

— Բարեկամնե՛րս, եկեք ավելի լավ բան խմենք։

Եվ Քրիստափորի ու Միսակի հետ գնաց մառան՝ գինի բերելու։

Կրտսեր Ավետիսն ընտիր գինիներ էր պատրաստում և պահելու մասին լավ հոգ տանում։ Այդ գործը հանձնարարված էր տնտեսվարին։ Իհարկե, Մուսա լեռան թունդ գինիները երկար չէին դիմանում։ Պատճառը երևի այն էր, որ պահում էին ոչ թե տակառներով, ինչպես ընդունված է պապենական սովորությամբ, այլ փակ կարասներով։ Դա Լիբանանի Քսարայի գինիները հիշեցնող չափազանց թանձր, մուգ ոսկեգույն խմիչք էր։ Երբ մարդիկ լի գավաթները դատարկեցին, տեղից բարձրացավ Բագրատյանը, կենաց առաջարկեց։ Բաժակաճառը նույնքան մշուշապատ էր, անորոշ, որքան այդ օրվա նրա ամբողջ վարքագիծը։ Ասաց, թե երջանկություն է, երբ իրար հետ նստած սրտանց ուրախանում են։ Ո՞վ գիտե, թե մյուս անգամ էլ կունենան նույն անհոգ տրամադրությունը։ Բայց այս պահին հարկ չկա նման խորհրդածություններով պղտորելու ուրախությունը. ի՞նչ օգուտ դրանից։

Բաժակաճառը, որն ավելի շուտ քողարկված նախազգուշացում էր, Գաբրիելն ասաց հայերեն։ Ժուլիեթը դիմացից ողջունեց ամուսնուն, բարձրացնելով գավաթը.

— Քեզ լրիվ հասկացա, ամեն մի բառը... բայց ինչո՞ւ այդքան ընկճված տրամադրությամբ, ի՛մ բարեկամ։

— Ես շատ վատ հռետոր եմ,— արդարացավ Գաբրիելը։— Մի երկու տարի առաջ դաշնակցական կուսակցությունն ինձ աշխատանք առաջարկեց։ Ես մերժեցի ոչ թե այն պատճառով, որ քաղաքականության հետ գլուխ չունեմ, այլ այն պատճառով, որ բազմամարդ ժողովներում խոսել չէի կարողանա։ Այնպես որ, դա մեծ կորուստ չէր. ինձանից ազգային գործիչ դուրս չէր գա։

— Ռափայել Պատկանյանը,— Ժուլիեթի կողմը շրջվելով՝ բացատրեց դեղագործը,— մեր ժողովրդի ամենամեծ գործիչներից մեկը, որը, հիրավի, արթնացնում էր մեր ազգային ոգին, շատ վատ հռետոր էր։ Մտածելու բան է։ Ավելի անհաջող է թոթովել, քան Դեմոսթենեսը երիտասարդ հասակում։ Բայց հենց դա էր բանաստեղծի խոսքը դարձնում առանձնապես ազդու։ Տարիներ առաջ նրա հետ ծանոթանալու և խոսքը լսելու բախտը ես էլ եմ ունեցել։ Երևանում։

— Ուրեմն,— ծիծաղեց Գաբրիելը,— ինչ որ չկա, դեռ կարող է լինել։

Թանձր գինին իր գործը կատարեց։ Զայներն աշխուժացան։ Միայն ուսուցիչ Հրանտ Ոսկանյանն էր քար լռություն պահպանում։ Դա էլ, իհարկե, իր դրդապատճառն ուներ։ Աստծո ծառան՝ Նոխուդյանը, որը շուտ էր գինովանում, փորձում էր գավաթն ազատել գրոհի նետվող կնոջից, մինչդեռ սա ամեն կերպ ուզում էր այն խլել։ Պատվելին շարունակ կրկնում էր.

— Բայց չէ՞ որ տոն է, ա՛յ կին։ Իրավ չէ՞։

Երբ Գաբրիելը գիշերային խավարը դիտելու համար պատուհաններից մեկը բացեց, զգաց, որ Ժուլիեթը կանգնած է կողքին։

— Հը՞, սքանչելի չէ՞ գիշերը,— մրմնջաց Ֆրանսուհին։

Գաբրիելը ձեռքը դրեց կնոջ մեջքին.

— Դրա համար ո՞ւմ եմ շնորհակալ, եթե ոչ քեզ։

Բայց այս սիրազեղ խոսքին չէր համապատասխանում ընկճված ձայնը։ Գինու ազդեցության տակ ծնվեց երաժշտություն լսելու ցանկություն։ Մի քանիսը մատնացույց արին մի երիտասարդ ուսուցչի։ Դա Գրիգորի սաներից էր, Ազայան ազգանունով։ Թելի պես բարակ ուսուցիչը դուրեկան ձայն ուներ և լավ էր հիշում հայրենի երգերը։ Բոլոր երգիչների նման Ազայանն սկսեց կոտրատվել, թե առանց նվագակցության մարդ չի կարող երգել, իսկ իր տունը հեռու է. հնարավոր չէ թառը բերել։ Ժուլիեթն արդեն մոտաղիր էր բերել իր գրամոֆոնը։ Տեխնիկայի այս հրաշքի մասին Յողոնօլուքի բնակիչներից քչերն էին լսել։ Բայց Գրիգորը հարցը լուծեց, նշանակալից հայացք նետելով հյուրի կողմը.

— Բայց չէ՞ որ մեզ մոտ երաժիշտ կա։

Գոնզագ Մարիսն առանց համառելու նստեց գաշնամուրի առաջ։

— Սիրիայում եղած տասներկու դաշնամուրներից մեկը,— հայտարարեց Գաբրիելը։— Քառորդ դար առաջ մորս համար բերել են Վիեննայից։ Բայց Քրիստափորն ինձ պատմել է, որ եղբայրս՝ Ավետիսը, դաշնամուրը լարելու համար Հալեպից մասնագետ է կանչել։ Իր կյանքի վերջին շաբաթներին հաճախ է նվագել։ Մտքովս էլ չէր անցնում, թե երաժշտական հակումներ է ունեցել։

Գոնզագը մեկ-երկու ակորդ նվագեց։ Բայց, ինչպես երևաց, երաժիշտը չգտավ այն եղանակը, որ համապատասխան լիներ այդ ուշ ժամին, ունկնդիրների անսովոր ականջներին, թարմանալու ցանկությանը։ Անփույթ, գլուխն ստեղներին խոնարհած, սիգարիկը բերանին՝ նստած էր Մարիսը, բայց մատները շարունակ մխրճվում էին ազդեցիկ մեղեդու խորքերը։ «Վատ է լարված, սոսկալի վատ է լարված»,— մրմնջում էր նա և գուցե այդ պատճառով էլ ոչ մի կերպ չէր կարողանում պոկվել ողբաձայն հնչյուններից։ Ջանքերի և հոգնածության մշուշ իջավ նրա դեմքին, որը քիչ առաջ այնքան գեղեցիկ էր։ Բագրատյանը մեկուսի դիտում էր Մարիսի դեմքը։ Դա արդեն զուրկ էր մանկական ամոթխածությունից, երկիմաստ էր և թառամած։ Նա դառնալով՝ նկատեց Ժուլիեթին, որն իր աթոռը մոտեցնում էր դաշնամուրին։ Նրա դեմքն էլ

հանկարծ թվաց ծերունական և հյուծված։ Ի պատասխան ամուսնու հարցական հայացքին, նա կամացուկ խոստովանեց.

— Գլխացավ ունեմ... այդ գինուց...

Գոնզագն իսկույն ընդհատեց նվագը և փակեց դուռը։

— Ներեցեք, խնդրեմ,— ասաց նա։

Թեև ուսուցիչ Շատախյանն իր երաժշտական ունակությունը ցուցադրելու մտադրությամբ մասնագիտական դարձվածքներով դրվատեց օտարականի նվագը, մարդկանց զվարթությունը չքացել էր։ Քիչ հետո պատվելի Նոխուդյանի կինը բացեց տուն գնալու ճանապարհը։ Ճիշտ է, գիշերելու էին Յողոնօլուքում, իրենց բարեկամի տանը, բայց արևածագին գնալու էին Բիթիաս։ Ամենից շատ դանդաղում էր ուրբաթախոս Սոկանյանը։ Երբ մյուսներն արդեն պարտեզ էին իջել, նա ետ դարձավ, իր կարճլիկ ոտքերով խստաբարո և վճռականորեն դեպի Ժուլիեթը շարժվեց այնպես, որ Ֆրանսուհին նույնիսկ վախեցավ։ Բանաստեղծը նրան մեկնեց տարբեր թանաքներով և հրաշալի ձեռագրով հայերեն գրված թղթի մի մեծ թերթ, ապա հեռացավ։

Դա սիրո երկրպագությանը ձոնված խանդավառ բանաստեղծություն էր։

Երբ գիշերը հանկարծ Ժուլիեթին արթնացավ, տեսավ, որ Գաբրիելն անկողնում նստած է։ Երևի մոմը ձեռքին՝ երկար ժամանակ դիտել էր քնած կնոջ դեմքը։ Ժուլիեթն զգաց, որ իրեն քնից արթնացնողը ոչ թե լույսն էր, այլ ամուսնու հայացքը։

Գաբրիելը շոյեց նրա թևը.

— Քեզ չէի ուզում արթնացնել։ Ծգտում էի, որ ինքդ արթնանաս։

Ժուլիեթը գլխի շարժումով մազերը ետ նետեց։

Դեմքը թարմ էր, սիրաթաթավ։

— Դու հանգիստ խղճով կարող էիր ինձ արթնացնել։ Դա ինձ չէր վնասի։ Ինչպես գիտես, գիշերային զրույցների համար միշտ էլ պատրաստ եմ։

— Մտքովս շատ բաներ անցան...— բացատրեց Գաբրիելն անորոշ եղանակով։

— Իսկ ես ասոփածավայել քնեցի։ Գլխացավիս պատճառը հայկական գինին չէր, այլ խա... comment dire?— demi — compatriote[1]-ի դաշնամուրային նվագից։ Սիծաղելի բան։ Յողոնօլուքն ընտրել իբրև բուժավայր և վարձով ապրել պարոն Գրիգորի տանը։ Առավել ծիծաղելի է

[1] comment dire?—demi—compatriote (Ֆրանս.) — ինչպե՞ս ասեմ. կես-հայրենակից

այն փոքրամարմին, թխադեմ ուսուցիչը, որն ինձ թղթի մեջ ոլորած ձոն մատուցեց։ Հապա մյուս ուսուցի՞չը, որն այնքան դանդաղ արձակում է ռնգային ռոնոցներ։ Երևի նրան թվում է, թե դա շատ հաճելի ֆրանսերեն է, մինչդեռ դա իրար բախվող քարերի ձայնի և շան կաղկանձի խառնուրդ է։ Բոլոր հայերն էլ տարօրինակ առոգանություն ունեն։ Դու ինքդ էլ դրանից զերծ չես, բարեկամս։ Բայց թե չպետք է խստապահանջ լինել. բոլորն էլ հաճելի մարդիկ են։

— Խե՜ղճ, խե՜ղճ մարդիկ են։

Գաբրիելի սրտից դուրս պոռթկացող այս բառերը լի էին տառապանքով։

Ժուլիեթի ձայնը մեղմացավ.

— Նեղացել եմ. տեղ գնացիր առանց ինձ ասելու։ Ուտելիք կտայի ճանապարհի համար...

Գաբրիելը կարծես չէր էլ լսում կնոջ հոգատար խոսքերը.

— Ոչ մի վայրկյան չեմ քնել։ Շա՜տ բաներ մտաբերեցի։ Պրոֆեսոր Լըֆեվրի տան ճաշկերույթը։ Քեզ ուղարկածս առաջին նամակը...

Ժուլիեթը Գաբրիելի մոտ սենտիմենտալության հետք անգամ երբևէ չէր նկատել։ Այդ պատճառով էլ խիստ զարմացավ։ Անխոս նայեց ամուսնուն։ Մոմը լուսավորում էր թիկունքից. դեմքը չէր երևում։ Միայն մարմնի վերին մասն էր ուրվագծվել, որպես մի խոշոր, սև զանգված։ Մինչդեռ Գաբրիելն իր դիմաց տեսնում էր քնքշանք ճառագայթող մի պայծառ էակ, քանի որ Ժուլիեթի դեմքին թրթռում էր ոչ միայն մոմի բոցը, այլև բացվող արշալույսի աղոտ ցոլքը. «Հոկտեմբերին լրանում է տասնչորս տարին։ Իմ կյանքի ամենամեծ պարգևը, բայց և իմ գործած մեծագույն մեղքը։ Չպետք է քեզ խլեի հարազատ հողից, չպետք է նետեի օտար ճակատագրի հարվածների տակ... Իրավունք չունեի...»։

Ժուլիեթն ուզեց վերցնել լուցկին, մոմը վառել։ Գաբրիելը բռնեց ձեռքը, չթողեց։ Կինն ամուսնու ձայնը դարձյալ լսեց պղտոր մթության միջից.

— Ամենալավ բանն այն կլիներ, որ փրկվեիր... Մենք պետք է բաժանվենք։

Ժուլիեթը երկար ժամանակ լուռ մնաց։ Մտքովն էլ չանցավ, թե այդ անխոհեմ, միանգամայն անընդունելի առաջարկն արվեց լրջորեն։ Նա մոտեցավ Գաբրիելին.

— Քեզ վշտացրե՞լ եմ, վիրավորե՞լ, խանդի առի՞թ եմ տվել...

— Իմ հանդեպ երբեք այնքան բարի չէիր եղել, որքան այս երեկո։

Տարիներ են անցել, բայց քեզ երբեք այսքան չեմ սիրել... Եվ դա ավելի է սոսկալի։

Գաբրիելը տեղից փոքր-ինչ բարձրացավ, և նրա մարմնի մութ զանգվածն ավելի օտարոտի ձև ստացավ։

— Ժուլիեթ, ասածս լրջորեն ընդունիր։ Տեր-Հայկազունն ամեն ինչ կանի, որպեսզի հնարավորին չափ արագ գլուխ բերի մեր ամուսնալուծությունը։ Նման դեպքերում թուրքական իշխանությունները դժվարություններ չեն հարուցում։ Դու ազատ կլինես, քեզ այլևս հայուհի չեն համարի, և դու կխուսափես իմ ժողովրդին սպառնացող այն արհավիրքից, որին կարող ես զոհ գնալ իմ հանցանքով։ Կմեկնենք Հալեպ։ Իբրև եվրոպացի կդիմես որևէ հյուպատոսի պաշտպանությանը՝ ամերիկյան, շվեյցարական. միևնույն է։ Այնուհետև ապահով կլինես, որտեղ ինչ էլ պատահի։ Ստեփանը կգա քեզ հետ։ Առանց արգելքների թուրքերից կհեռանաք։ Իմ ունեցվածքն ու եկամուտները, իհարկե, կհաստատեմ ձեր անունով։

Նա խոսեց ջղաձգորեն և արագ, որ կինը չընդհատի, բայց Ժուլիեթի դեմքը գրեթե հպված էր նրա դեմքին.

— Եվ այս ցնորամտությունը լրջորե՞ն ես ասում։

— Երբ ամեն ինչ անցնի, և ես կենդանի մնամ, կգամ ձեզ մոտ։

— Դեռևս երեկ միանգամայն հանգիստ խոսում էինք, թե ի՞նչ կպատահի, եթե քեզ բանակ կանչեն...

— Երե՞կ։ Երեկ ամեն ինչ կեղծ էր։ Մինչ այդ աշխարհն արդեն փոխվել էր։

— Ի՞նչն է փոխվել։ Անձնագրերի պատմությո՞ւնը։ Նորերը կստանանք։ Ինքդ էիր ասում, թե Անտիոքում ոչ մի վատ բան չեմ իմացել։

— Ընդհակառակը, վատ բաներ շատ իմացա, բայց խոսքն այդ մասին չէ։ Այն, ինչ իրոք փոխվել է, երևի մեծ բան չէ։ Բայց դա գալիս է հանկարծ, ինչպես անապատային փոթորիկ։ Անանուն նահատակված նախահայրերս, որոնք ապրում են իմ մեջ, այդ բանն զգում են։ Ամբողջ էությամբ զգում եմ։ Ո՛չ, Ժուլիեթ, դու չես կարող դա հասկանալ։ Ում չեն ատել ազգության համար, այդ բանը նրա համար անընդունելի է։

Ժուլիեթն անկողնուց ցած թռավ, նստեց Գաբրիելի կողքին, բռնեց ձեռքերը.

— Իսկ և իսկ Ստեփանն ես։ Հենց որ վատ երազ է տեսնում, քունը կլխին արթնանում է և մի ամբողջ ժամ տխրում։ Ինչո՞ւ մե՛զ պետք է վտանգ սպառնա։ Ես հիշում եմ քո թուրք բարեկամներին՝ այդ հմայիչ,

բարեկիրթ մարդկանց, որոնց Փարիզում հաճախ հյուր էինք կանչում։ Հանկարծ ուխտադրուժ գազաններ՞ն են դարձել։ Ո՛չ։ Դուք՝ հայերդ, միշտ էլ թուրքերի հանդեպ անարդար եք։

— Ես նրանց հանդեպ անարդար չեմ։ Նրանց մեջ հիանալի մարդիկ կան։ Պատերազմի ժամանակ ես ճանաչեցի հասարակ ժողովրդին։ Տեսա, թե նա որքան համբերատար է, բարի։ Ժողովուրդը մեղավոր չէ, մենք էլ, բայց դրանից ի՞նչ օգուտ։

Արշալույսը հետզհետե պայծառանում էր, և ննջարանից երևացող Մուսա լեռան ուրվագիծը դառնում էր ավելի ցայտուն։ Գաբրիելի հայացքը կառչեց լեռան բարձունքից.

— Ես մտածում եմ, թե ինչ զարմանալի բան կատարվեց։ Մենք Ավետիսին էինք հետևում, իսկ նա միշտ խուսափում էր։ Կարծես իր մահով ուզում էր մեզ հրապուրել, բերել Յողոնօլուք... Ո՛չ։ Փաստորեն դո՛ւ պնդեցիր, որ գանք այստեղ։

Ցրտեց։ Ժուլիեթի մերկ ուսերը մրսեցին։ Հաշտարար ձայնով նա ասաց.

— Տեսնո՞ւմ ես։ Իմ քմահաճույքով եկանք։ Խիղճդ կարող է հանգիստ լինել։

Բայց Գաբրիելի մտորումներն այլ ուղղություն ունեին։

— Երեկ ես մի ակնթարթ ապրեցի ժայռի պես հաստատուն այն զգացումը, թե ինձ առաջ է մղում գերագույն մի ուժ, և աստված ինձ հետ ինչ-որ հաշիվ ունի։ Դա, հիրավի, ժայռի պես հաստատուն զգացում էր, բայց արագ անցավ... Իմ վարած կյանքը թերևս ճշմարիտ չէր։ Այնպե՞ս հաճելի է պատկերացնել, թե դու արտասովոր անձնավորություն ես, նշանավոր հյուլե, որը կաշկանդված չէ ձգողականության ուժով և կարող է առանց որևէ պարտականության դեգերել տիեզերքում։ Բայց աստված Ավետիսի միջոցով և քո կամքով ինձ ետ բերեց այս հնադարյան երկիրը...

Լռեց։ Ժուլիեթը երկար ժամանակ զննում էր ամուսնու անմեկնելի հայացքը։

— Առաջին անգամ եմ տեսնում, որ դու վախենում ես։

Գաբրիելն իր հայացքը դեռևս չէր հեռացնում Մուսա լեռան բարձունքներից։

— Վախենո՞ւմ։ Այո՛, ինչպես գերբնական ուղեփոց։ Մանուկ հասակում հաճախ էի պատկերացնում, թե ինչպես երկնքում որևէ փոքր

աստղ հանկարծ մեծանում է, ուռչում, մոտենում է, մոտենում և ճզմում երկիրը...

Գաբրիելը ցնցվեց, վերջապես գտնելով ինքնատիրապետումը։

— Ժուլիե՛թ, ինձ համար չեմ անհանգստանում, այլ քեզ և Ստեփանի համար։

Կինը սաստիկ զայրացավ.

— Քո երկյուղին չեմ հավատում։ Սա 1915 թվականն է։ Ես Թուրքիայում, ինչպես ամբողջ աշխարհի բոլոր վայրերում, տեսել եմ միայն հյուրընկալություն և կիրթ վարվելաձև։ Բայց եթե, իրոք, մի բան պատահի, մի՞թե կարծում ես, թե ես այնքան վախկոտ, այնքան ստոր կգտնվեմ, որ քեզ այստեղ թողած կփախչեմ... Այդպես չէի վարվի, եթե նույնիսկ քեզ այլևս չսիրեի։

Գաբրիելն ուրիշ ոչինչ չասաց և աչքերը փակեց։ Ժուլիեթն արդեն ուզում էր կամացուկ վեր կենալ, բայց գլուխը դրեց ամուսնու կրծքին։ Գաբրիելի ճակատը սառն էր, խոնավ։

Հանկարծ պոռթկաց թռչունների վաղորդյան կվարթ կանչերի հորձանքը։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Ստանձին խրատարություններ

Գուլության և հուսահատության այս նոպան նույնքան արագ անցավ, որքան արագ եկել էր։ Բայց Անտիոք գնալու օրից Գաբրիելն այլևս նույն մարդը չէր։ Առաջ իր սենյակում նստած՝ ժամերով աշխատում էր, իսկ այժմ մեծ մասամբ տուն էր գալիս գիշերները։ Ջափազանց հոգնած էր լինում և քնում էր մեռելի պես։ Այլևս չէր խոսում արհավիրքի մասին, չնայած դրանից վերջին կիրակնօրյա գիշերն այնպե՞ս խորն էր ազդված։ Ժուլիեթը նույնպես խուսափում էր այդ առթիվ խոսելուց։ Հավատացած էր, որ դրա տակ ոչ մի վտանգավոր բան չկար թաքնված։ Իրենց ամուսնության ընթացքում նա Գաբրիելի մոտ արդեն երեք թե չորս անգամ հոգեկան այսպիսի ճգնաժամ էր նկատել։ Շաբաթներ տևող ծանր, անհիմն ընկճվածության, մտատանջության օրեր։ Եվ դա մտերմական ոչ մի հնարքով չէր փարատվում, տեղի չէր տալիս նախկին կենսուրախության։ Ժուլիեթն այդ բանը գիտեր։ Նման դեպքերում ամուսինների միջև պատ էր բարձրանում՝ օտարությունը, անհաղթահարելին, և ֆրանսուհին սոսկում էր իր մանկական վարմունքից. ինչո՞ւ գայթակղվեց, ինչո՞ւ իր կյանքը կապեց այս ծանր արյան տեր մարդու հետ։ Փարիզում, իհարկե, այլ էր դրությունը։ Սեփական աշխարհը, որտեղ Գաբրիելն օտարական էր. Ժուլիեթի մեջքին կանգնած էր իբրև զորավիգ։ Սակայն այստեղ՝ Յոզոնօլուքում, վիճակը փոխվել էր, և միանգամայն հասկանալի էր, թե նա ինչու, հեգնելով հանգերձ, ջանում էր առանձնապես բարյացակամ լինել «կիսավայրենիների» նկատմամբ։

Գաբրիելին պնդում է հանգիստ թողներ։ Անցած գիշերվա տանջալից խոստովանության մեջ Ժուլիեթը կրկին տեսնում էր իրեն արդեն ծանոթ մթագնումը։ Անհամեմատ ապահովության մեջ հասակ առած ֆրանսուհին ամենաչնչին չափով անգամ ի վիճակի չէր պատկերացնելու, թե Գաբրիելն ի՞նչ էր անվանում անապատային փոթորիկ։ Եվրոպան ուզմաբեմ էր դարձել։ Դա նշանակում էր, որ մարդիկ Փարիզում օդային հարձակումների պատճառով ստիպված են գիշերները պաշտպանվել նկուղներում։ Իսկ ինքն այստեղ ապրում էր դրախտային դարձան դրկում։ Մի երկու ամիս հիանալի կարող էր դիմանալ։ Այնուհետև վաղ թե ուշ վերադառնալու էին Ավենյու Քլեբեր։ Իսկ մինչ այդ Ժուլիեթն զբաղմունք շատ ուներ, և աշխատանքը գեղեցկացնում էր նրա օրերը։ Երկար-բարակ խորհրդածելու ժամանակ չուներ։ Նրա մեջ արթնացել էր տանտիրուհու և կալվածատիրուհու փառասիրությունը։ Սպասավորները պետք է քաղաքակիրթ լինեին։ Ներկայացավ առիթը, և նրան զարմացրեց հայ ժողովրդի բնածին տաղանդը։ Խոհարար Հովհաննեսը մի քանի շաբաթվա ընթացքում դարձավ իսկական ֆրանսիացի ճաշագետ։ Միսակը՝ ծառան, այնքան բանիմաց էր, որ Ժուլիեթը վճռեց հետը տանել Ֆրանսիա։ Տանը ծառայող երկու աղջիկն էլ կատարյալ նաժիշտներ դառնալու հույս էին ներշնչում։ Ամառանոցը նույնպես սքանչելի էր, բայց և այնպես նա կանացի սուր աչքով նկատում էր, որ շատ բան բարձիթողի է արված, մատնված անտերության։

Արհեստավորներ էին գալիս։ Վարպետը մի արժանավոր մարդ էր՝ Թովմասյան ազգանունով։ Ստանձնել էր ատաղձագործական ամբողջ աշխատանքը, բայց նրան միայն հյուսն համարել չէր կարելի։ Ինքն իրեն անվանում էր շինարար-կապալառու։ Ժամացույցի ոսկե ծանր շղթայից մեդալիոն էր կախված։ Մեջը դրված էր հանգուցյալ կնոջ փոքրիկ նկարը, որի հեղինակը ուսուցիչ Ոսկանյանն էր։ Թովմասյանը ոչ մի առիթ բաց չէր թողնում, որ բոլորին ասեր, թե իր երկու զավակները՝ որդին և դուստրը, ուսանել են Ժնևում։ Ամեն ինչ բացատրում էր հոգնեցուցիչ մանրամասնություններով և Ժուլիեթի միտքը խճճում երկարբարակ զրույցներով։ Բայց դրա փոխարեն կարճ ժամանակամիջոցում նրան հաջողվեց ոչ միայն նորոգել տան վնասվածքները, այլև այնպիսի կարևոր փոփոխություններ մտցնել, որոնք անհրաժեշտ էին եվրոպական մթնոլորտ ստեղծելու համար։ Արհեստավորներն աշխատում էին եռանդով և զարմանալիորեն անաղմուկ։ Ապրիլ ամսի սկզբին Ժուլիեթն արդեն հպարտությամբ կարող էր պնդել, թե աշխարհից կտրված սիրիական ծովեզերքին ինքն այնպիսի տուն-տեղ ունի, բացառությամբ պարզունակ լուսավորության և ջրի հետ կապված հարմարությունների, որը հանգիստ կարող էր մրցել եվրոպական ամեն մի ամառանոցի հետ։

Բայց Ժուլիեթի ամենամեծ ուրախությունը բանջարանոցն ու պտղատու այգին էին։ Այստեղ ֆրանսուհու մեջ խոսում էր նախորդների արյունը։ Չէ՞ որ ամեն ֆրանսիացի ի բնե այգեպան է։ Հայերն էլ բնածին

այգեգործներ են, հատկապես մուսալեռցիները։ Այս տեսակետից տնտեսվար Քրիստափորը վարպետ էր։ Ժուլիեթը նման այգի երազել անգամ չէր կարող։ Տարին բոլոր թերք էին հավաքում։ Ով չի փորձել, չի կարող երևակայել, թե ի՞նչ համ, ի՞նչ քաղցրություն ունի հայկական ծիրանը։ Այստեղ էլ՝ Տավրոսի ջրբաժան գծից այս կողմ ընկած հողում, այդ միրգը պահպանել էր իր հայրենիքի՝ այգեշատ Վանա լճի ամբողջ թարմությունը։

Ժուլիեթն իրենց այգում միշտ էլ տեսնում էր նոր մրգեր, բանջարեղեն և ծաղիկներ, որոնց մասին երբեք չէր լսել։ Բայց նա գրեթե իր ամբողջ ժամանակը անց էր կացնում վարդանոցում՝ սոմբրերոն գլխին և Քրիստափորի մեծ մկրատը ձեռքին։ Վարդի խենթ սիրահար էր։ Նրա համար դա անզուգական արբեցում էր։ Լայնարձակ տարածություն, միահյուսված ցողուններ ու թփեր, որոնք ոչ թե եվրոպական ձևով էին շարված, այլ մուգ կանաչ ալիքների վրա օրորվող գույների ու բույրերի մի թանձրախիտ քաոս էին կազմում։ Դամասկոսը մոտ էր, Պարսկաստանն էլ հեռու չէր։ Այս երկրների բուսական հազարավոր ցեղեր իրենց զավակներին այստեղ էին ուղարկել, և երբ Ժուլիեթն այգու նեղ արահետով կտրում անցնում էր այս ծովը, բոլոր վարդաբույլերն անհամար հայացքներով և անուշաբույր շնչով ողջունում էին նրան։ Դեղագործ Գրիգորը խոստացել էր (եթե, իհարկե, Ժուլիեթը մի քանի զամբյուղ դամասկոսյան իսկական մշկավարդ տար) պատրաստել մի փոքրիկ սրվակ այն վարդայուղից, որի գործածությունը հարյուրամյակների պատմություն ունի։ Դեղագործը մի լեգենդ էլ էր պատմել։ Այդ յուղի մի կաթիլն այնպիսի զորություն ուներ, որ եթե մեռածի մազերին քսեին, մինչև հարության օրը կմնար անուշահոտությունը և կառինքներ ահեղ գատաստանի հրեշտակին։

Երբեմն Ժուլիեթը Ստեփանի հետ ձիով դուրս էր գալիս շրջագայության։ Ավելիս Բագրատյանից հետո չորս ձի էր մնացել։ Դրանցից մեկը, որ հեզաբարո, փոքրիկ նժույգ էր, նվիրել էին տղային։ Այս զբոսանքների ժամանակ, երբ կամ Սուեզիայի հարթավայրն էին դուրս գալիս, կամ Ազիրն ու Բիթիասն անցնելով հասնում մինչև Մեղրագյուղ, նրանց ուղեկցում էր ախոռապետը, որի համար Ժուլիեթը մտադիր էր գույնզգույն համազգեստ պատվիրել։ Ժուլիեթը գեղեցկության և շքեղության էր ձգտում ոչ միայն իր համար, այլև շրջապատի։ Հետագայում, երբ նա Ստեփանի և նախշուն համազգեստ հագած ուղեկցողի հետ հայտնվում էր եկեղեցու հրապարակում կամ Յողոնօլուքի գլխավոր փողոցում, իրեն զգում էր այդ հեքիաթային աշխարհի տիրուհին։ Երբեմն հիշում էր Փարիզում ապրող մորն ու քույրերին։ Որքա՜ն ավելի նախանձելի էր թվում իր կյանքը։ Ուր գնում էր, ամենուրեք ընդունում էին խոր պատկառանքով, նույնիսկ մահմեդական գյուղերում, որոնց մոտով անցնում էր իր երկարատև շրջագայությունների ժամանակ։ Ուրեմն՝ պարզ էր. խեղճ Գաբրիելը նորից հոգեկան ճգնաժամի մեջ էր։ Ժուլիեթը ոչ մի կերպ չէր կարող պատկերացնել, թե աշխարհն իրոք փոխվել է։

Ամեն առավոտ Գաբրիելը դուրս էր գալիս տնից։ Բայց այլևս չէր թափառում Մուսա լեռան բարձունքներում, այլ գյուղից գյուղ էր անցնում։ Մանկության աշխարհի պատկերները տեսնելու, դրանց կարոտն առնելու տենչանքը տեղի էր տվել այրական մի ցանկության. ուզում էր ամենայն ճշգրտությամբ ուսումնասիրել այդ աշխարհի մարդկանց, իմանալ նրանց օրն ու կյանքը, հոգսերն ու ցավերը։

Միաժամանակ բազմաթիվ նամակներ էր գրում Ստամբուլ՝ այնտեղ ապրող իր հայ բարեկամներին և այն երիտասարդ թուրքերին, որոնց մի ժամանակ լավ էր ճանաչում։ Կասկածում էր, որ Անտիոքի կայմակամության գրաքննիչները կարող են դժվարացնել այդ նամակների գործը, բայց ենթադրում էր, որ դրանցից մի քանիսն անպայման տեղ կհասնեն։ Կարծում էր, թե դրանցից է կախված ապագայի բախտը։ Եթե մայրաքաղաքում ամեն ինչ նույնն էր մնացել, և եղածը զուտ ռազմական տնօրինության հետևանք էր, ապա, չնայած Ռիֆաաթ Բերեքեթի նախազգուշացմանը, կարելի էր թողնել տունը, մեկնել մայրաքաղաք առանց անձնագրի։ Իսկ եթե վատ պատասխան ստանար կամ բոլորովին չստանար, ուրեմն՝ կարդարանար ծերունի թուրքի երկյուղը, որոգայթը կփակվեր, կխափանվեր վերադարձի ճանապարհը։ Միայն մի հույս կմնար. հայ ժողովրդի բարեկամ Ջելալ բեյ վալին թերևս իր վիլայեթում որևէ «գեպք» թույլ չտար կամ գուցե քաղաքից հեռու, Մուսա լեռան ստորոտում կորած գյուղերը զերծ մնային հրդեհից, որը սովորաբար բռնկվում է խոշոր քաղաքներում։ Այդ դեպքում Յողոնօլուքի ամառանոցը, ինչպես ասում էր Բերեքեթն էր ասում, կլիներ ամենաերազելի ապաստարանը։ Ինչ վերաբերում էր իրեն բանակ չկանչելուն, ապա Գաբրիելին թվում էր, թե ինքը գուշակում է օսմանյան գլխավոր շտաբի նկատառումները։ Հայկական զորախմբերը ռազմաճակատից ետ էին բերում և զինաթափ անում։ Ինչո՞ւ։ Թուրքերը երկյուղ էին կրում, թե այնպիսի զորեղ մի փոքրամասնություն, ինչպիսին արդիական զենքերով զինված հայերն էին, կարող էին որոշակի իրավունքներ ներկայացնել բուն ժողովրդին, եթե պատերազմն ստանար թուրքերի համար

անցանկալի ընթացք։ Իսկ որտեղ հայ զինվորներ չկային, հայ սպաները պետք է շատ սակավաթիվ լինեին, այլապես հարմար պահին դրանք հրամանատարությունը կարող էին վերցնել իրենց ձեռքը։

Գաբրիելը ոչ մի րոպե հանգստանալ չէր կարողանում, թեև այս բացատրությունը թվում էր գոհացուցիչ։ Սակայն այդ տագնապն արդեն նյարդային գրգռվածություն չէր. արգասավոր էր և նպատակասլաց։ Նա իր մեջ հայտնաբերեց մի բծախնդրություն, որ մինչ այդ նկատել էր միայն իր գիտական աշխատություններում։ Բայց իրական հանգամանքներն ուսումնասիրելիս դա բարենպաստ ազդեցություն էր թողնում։ Այս անգամ նա իր առաջ այն խնդիրը չէր դնում, թե ինչ նպատակի էր նվիրաբերելու իր ջանքերը և ում էր մտադիր օգնելու։ Աստված գիտեր, թե այդ հովտում քանի ամիս էր տևելու նրա կյանքը։ Ուզում էր ամեն ինչ իմանալ հայ գյուղերի, հայ մարդկանց մասին։ Եղբայրական պատասխանատվությամբ։

Առաջին գործն այն եղավ, որ դիմեց Յողոնօլուքի գյուղապետին։ Ամենամեծ գյուղի գրասենյակը վարում էր նաև մյուս գյուղերի այն գործերը, որոնք մեծ մասամբ առնչվում էին պետական իշխանությունների հետ։

Մուխթար Քեբուսյանը ներկա չէր։ Քարտուղարը, խոր գլուխ տալով, ներս հրավիրեց Գաբրիելին։ Բագրատյանների առասպելական տոհմի պարագլխի այցելությունը նրա համար մեծ պատիվ էր։

Կայի՞ն արդյոք ծխամատյաններ։

Քարտուղարը պարծանքով մատնացույց արեց փոքրիկ սենյակի պատին հենված փոշոտ դարակը։ Անշուշտ, կային այդպիսի ծխամատյաններ։ Ամեն շունչ միայն իր եկեղեցու մատյանում չի գրանցված։ Հոքդեր կամ քոչվորներ չէի՞ն. քրիստոնյա մարդիկ էին։ Մի քանի տարի առաջ նախորդ մուխթարները ինքնագլուխ կերպով մարդահամար էին անցկացրել։ Հենց 1909 թվականին «Երիտասարդ թուրքերի» դեմ ուղղված ռեակցիայից և Ադանայի* մեծ ջարդից հետո հայ գործիչներից հրաման ստացվեց՝ յոթ գյուղում մարդահամար կատարել։ Վայրիվերո հաշվումներով գրանցված էր վեց հազար քրիստոնյա։ Եթե պարոնը կամենում է, կարող է մի քանի օր հետո իմանալ ավելի ճշգրիտ թիվը։ Գաբրիելը ցանկություն հայտնեց։ Այնուհետև հետաքրքրվեց, թե զորակոչային տարիքի քանի՞ երիտասարդ կա։

Այդ գործն արդեն ավելի բարդ էր։ Քարտուղարն այստեղ իր պետի՝ մուխթարի պես սկսեց աչքերը շլել։ Զորահավաքի հրամանով արդեն

կանչվել էին զինվորական ծառայության համար պիտանի բոլոր երիտասարդները, քսանից-երեսուն տարեկանները ներառյալ, թեև օրենքով քսանյոթամյա հասակը համարվում էր զորակոչային սահման։ Գավառի հայկական գյուղերից կանչվածների թիվը հասնում էր մոտավորապես երկու հարյուրի։ Դրանցից հավանաբար հարյուր հիսունը պետք է որ բեդել[1] վճարած լինեին, մի բան, որ զինվորական ծառայությունից խուսափողների համար նախատեսված էր օրենքով (քսան ֆունտ յուրաքանչյուրից)։ Պարոնը հավանաբար գիտե, որ տեղի բնակիչները պետք է խնայող լինեն։ Հայերից շատերը, իրենց որդիների ծնունդից անմիջապես հետո նախապատրաստում են փրկագինը, որ նրանց ազատեն թուրքական զինվորի ճակատագրից։ Ամեն նոր զորահավաքի ժամանակ Յողոնօլուքի մուխթարը ոստիկանության ներկայացուցչի հետ հավաքում էր փրկագները և անձամբ հանձնում Անթաքիեի հյուպատոսին։

— Բայց ինչպե՞ս է պատահել,— շարունակեց Գաբրիելն իր հարցափորձը,— որ վեց հազար հայից միայն երկու հարյուրն են զինապարտ։

Պատասխանը նրա համար նորություն չէր։ Անշուշտ, պարոնը կարծում է, թե զինապարտ երիտասարդների պակասը անցյալի ժառանգությունն է, արյունահեղ կորուստների ծանր հետևանքը, մի աղետ, որ ամեն տասնամյակը մեկ գալիս է հայ ժողովրդի գլխին։

Դա միայն ճոռոմ խոսելաձև էր։ Գաբրիելը երկու հարյուրից ավելի երիտասարդ տղաներ էր տեսել գյուղերում։ Չէ՞ որ կարելի էր զինվորական ծառայությունից խուսափել նաև առանց վճարելու լրիվ փրկագինը։ Ծաղկատար դեմքով զափթիեն՝ Ալի Նազիֆը, շատ լավ էր ծանոթ այդ միջոցին։ Գաբրիելը վերադարձավ նախկին խնդրին։

— Այդպես։ Հիսուն հոգի գնացել էին Անթաքիե քննության։ Ի՞նչ եղավ նրանց գործը։

— Քառասունին վերցրել են ծառայության։

— Իսկ ո՞ր գնդերում, ո՞ր ռազմաճակատումն են ծառայում այդ քառասունը։

Դա հայտնի չէր։ Անհանգստացած ընտանիքները շաբաթներով ու ամիսներով լուր չէին ստանում։ Դե, թուրքական դաշտային փոստը հայտնի է իր «հուսալի» գործունեությամբ։ Երևի Հալեպի զորանոցներում են, որտեղ գեներալ Ջեմալ փաշան նոր է կազմավորել իր բանակը։

---

[1] բեդել (թրք.)— փրկագին

— Գյուղերում ոչինչ չե՞ն խոսում այն մասին, թե հայերին ուզում են դարձնել ինչաթ թաբուրի՝ շինարար զինվորներ։

— Գյուղերում շատ բան են խոսում,— փոխվելով արձագանքեց քարտուղարը։

Գաբրիելը նայեց փոքրիկ դարակին։ «Օսմանական կայսրության օրենսգրքի» հրատարակության կողքին դրված էին մի ծխամատյան և նամակներ կշռելու ժանգոտած մի կշեռք։ Իսկույն ետ դարձավ.

— Իսկ դասալիքնե՞րը։

Հարցաքննվող քարտուղարը խորհրդավոր ձևով գնաց դեպի դուռը, բացեց և դարձյալ խորհրդավոր ձևով փակեց։ Ինքնին հասկանալի է, որ դասալիքներ էլ կան, ինչպես ամենուրեք։ Ինչո՞ւ հայերը դասալիքություն չպետք է անեն, եթե թուրքերն են օրինակ ցույց տալիս։ Քանի հոգի՞ են, Տասնհինգ-քսան։ Այո։ Նրանց հետապնդում են։ Մի քանի օր առաջ էր։ Զափթիեներից և հետևակային զինվորներից կազմված պահակախումբ եկավ՝ մյուլազիմի[1] գլխավորությամբ։ Իբրև թե ամբողջ Մուսա լեռը խուզարկել են։ Ա՜յ քեզ ծիծաղելի բան։

Աչքերը ճպճպացնող մարդուկի սուր դեմքին հանկարծ փայլատակեց վայրագ և չարաճճի մի արտահայտություն.

— Ծիծաղելի է, պարոն։ Ախար մեր տղերքն իրենց սարին լա՜վ են ծանոթ։

Երեցտունը, որտեղ ապրում էր Տեր-Հայկազունը, մուխթարի բնակարանի և դպրոցի շենքի մոտ էր։ Դա Յոզոնօլուքի եկեղեցու հրապարակի տներից ամենահոյակապն էր։ Միհարկանի էր։ Իր տափարակ տանիքով և հինգ պատուհանով կարող էր զարդարել հարավային Իտալիայի ամեն մի փոքրիկ քաղաքը։ Պատկանում էր Հրեշտակապետաց եկեղեցուն։ Երկուսն էլ յոթանասունամյա հասակում կառուցել էր ավագ Ավետիքը։

Տեր-Հայկազունն ամբողջ գավառի լուսավորչական հավատի առաջնորդն էր։ Նրա իշխանության ոլորտում էին նաև խառը բնակչություն ունեցող գյուղերը և Սուեդիայի ու էլ էսքելի թուրքական ավանների հայ սակավաթիվ համայնքները։ Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոսը նրան կարգել էր թեմի վարդապետ, առանձին եկեղեցիների և ամուսնացյալ հոգևոր հայրերի առաջնորդ։

[1] մյուլազիմ — լեյտենանտ

Տեր-Հայկազունը ուսանել էր Էջմիածնի ճեմարանում առ ոտս կաթողիկոսի, ի դեմս որի հայոց քրիստոնեությունը մեծարում է իր գերագույն հովվապետին։ Այդ իսկ պատճառով էլ Տեր-Հայկազունը բոլոր հիմունքներով իր ամբողջ գավառի պաշտոնական փոխանորդն էր։

Իսկ պատվելի Հարություն Նոխուդյա՞նը։ Այդ բողոքականներն ինչպե՞ս էին հանկարծ ընկել ասիական այդ անկյունը։ Ի՞նչ կա որ։ Անատոլիայում և Սիրիայում բավական թվով բողոքականներ կային։ Այդ նորադավանների համար ավետարանական եկեղեցին պարտական էր գերմանական և ամերիկյան միսիոներներին։ Բարեսիրտ Նոխուդյանին սրտացավ հայրերը ուղարկել էին արևելյան Գերմանիայի Դորպատ քաղաքը՝ աստվածաբանություն ուսանելու։

Տեր-Հայկազունի տնօրինությանը ենթակա էին նաև այն բոլոր գործերը, որոնք հեռու էին հոգևոր խնդիրներից։ Քանի որ ժողովրդի գլխին հարատև սպառնալիք էր կախված, դավանանքների դոգմատիկ տարբերությունները վճռական դեր չէին խաղում, և հոգևոր առաջնորդի գահերեցությունը անքննադատելի էր, անվիճելի։ (Տեր-Հայկազունը այդպիսին էր բառիս ամենաճշգրիտ իմաստով)։

Մերունի տիրացուն Գաբրիելին տարավ Տեր-Հայկազունի աշխատասենյակը։

Դա ամայի սենյակ էր։ Հատակին հսկայական գորգ էր փռված։ Պատուհանի մոտ դրված էր փոքրիկ գրասեղան։ Կողքին կար ծղոտե հնամաշ բազկաթոռ՝ այցելուների համար։

Տեր-Հայկազունը տեղից վեր կացավ և մի քայլ ընդառաջ եկավ Բագրատյանին։ Քառասունյոթ-քառասունութ տարեկան կլիներ, բայց կուրծքն ի վար աջ ու ձախ կողմերից կախված էին մորուքի հաստ, սպիտակ փնջերը։ Խոշոր աչքերը (գրեթե բոլոր հայերի աչքերը խոշոր են, հազարամյա տառապանքից լայնացած) երկչոտ մոլորվածության և միաժամանակ վճռական աշխարհընկալման արտահայտություն ունեին։ Վարդապետը պարեգոտ էր կրում։ Գլխին վեր ցցված վեղար կար։ Ձեռքերը մերթ ընդ մերթ թևքերի մեջ էր պահում։ Թվում էր, թե մրսում է, չնայած գարնանային ջերմաշունչ օր էր։ Դա կարծես հնազանդության սարսուռ էր։

Բագրատյանն զգուշորեն նստեց խարխուլ բազկաթոռին.

— Մեծարգո տեր, ես անչափ ցավում եմ, որ ոչ մի անգամ Ձեզ իմ հարկի տակ չեմ ողջունել։

Վարդապետն աչքերը խոնարհեց և երկու ձեռքով ներողամտություն հայցող շարժում արեց.

— Ես առավել եմ ցավում, պարոն։ Բայց միակ ժամանակը, որ կարող ենք մեր ցանկացած ձևով տնօրինել, դա միայն ու միայն կիրակնամուտն է։

Գաբրիելն իր շուրջը նայեց։ Ենթադրում էր, թե այդ հոգևոր ատյանում կտեսնի վավերագրեր, թղթերի կույտեր։ Ամենևին։ Միայն գրասեղանի վրա մեկ-երկու գրություն կար։

— Ձեր ուսերին ծանր լուծ է դրված։ Ես այդ բանը պարզ եմ պատկերացնում։

Տեր-Հայկազունը չժխտեց.

— Հեռավոր տարածություններ են. շատ ժամանակ և ջանք են խլում։ Ես նույնպես դժվար կացության մեջ եմ, ինչպես մեր բժիշկ Ալթունին։ Ի վերջո, էլ էսքելում և Արսուսի վերևում ապրող մեր հայրենակիցները նույնպես պետք է հովվապետ ունենան։

— Ս՛, որքա՜ն հեռու տեղեր եք հասնում,— արձագանքեց Գաբրիելը մտացրիվ։— Արդեն հասկանում եմ, որ մտերմական հավաքույթների համար ո՛չ ժամանակ կունենաք, ո՛չ ցանկություն։

Տեր-Հայկազունը նայեց առաջ. կարծես իր ասածը սխալ հասկացվեց.

— Ո՛չ, ո՛չ։ Ես գիտեմ պատվո և հարգանաց արժեքը և անպայման ձեզ մոտ կգամ, պարոն, հենց որ փոքր-ինչ թեթևություն զգամ...

Խոսքն ընդհատեց. կարծես «թեթևություն» բառից այն կողմ չէր ուզում անցնել.

— Հույժ ողջունելի է, որ դուք մեր մարդկանց Ձեր շուրջն եք հավաքում։ Նրանք այստեղ շատ բաներից են զուրկ։

Գաբրիելը փորձեց այնպես անել, որ վարդապետը նայի իր աչքերին.

— Տե՛ր-Հայկազուն, արդյոք չե՞ք կարծում, որ նման մտերմական հավաքույթների համար ժամանակը այժմ հարմար չէ։

Վարդապետը նայեց շեշտակի, խորազնին հայացքով.

— Ընդհակառակը, պարոն։ Ամենահարմար ժամանակն է, որ մեր մարդիկ համախմբվեն։

Այս չափազանց խորիմաստ խոսքին Գաբրիելն սկզբում չպատասխանեց։ Ահագին ժամանակ անցավ, մինչև նա ասաց.

— Մարդ ուղղակի զարմանում է, որ կյանքն այստեղ նույն հանդարտությամբ է ընթանում, և թվում է, թե ոչ մեկը հոգս չունի։

Վարդապետն իր հայացքը նորից հառեց գետնին, կարծես պատրաստ էր լսելու ամեն մի հանդիմանություն։

— Մի քանի օր առաջ գնացել էի Անտիոք,— դանդաղ սկսեց Գաբրիելը,— այնտեղ շատ բաներ իմացա։

Տեր-Հայկազունի սառչող ձեռքերը դուրս սահեցին պարեգոտի թևքերի միջից։ Մատներն իրար մեջ հագցրեց.

— Մերոնք շատ հազվադեպ են Անտիոք գնում։ Եվ դա լավ է։ Նրանք ապրում են իրենց սահմաններում և քիչ բան գիտեն դրսի աշխարհից։

— Իսկ մինչև ե՞րբ կարող են ապրել իրենց սահմաններում, Տեր-Հայկազուն։ Օրինակ, ի՞նչ կլինի վիճակը, եթե Ստամբուլում ձերբակալեն մեր բոլոր գործիչներին և նշանավոր մարդկանց։

— Արդեն ձերբակալված են,— շատ հանգիստ պատասխանեց հովվապետը։— Երեք օր է, ինչ նստած են Ստամբուլի բանտերում։ Եվ շա՜տ, շա՜տ են նրանք։

Գաբրիելն իսկույն հասկացավ, որ Ստամբուլի ճանապարհը փակված է։ Բայց այդ պահին նրա վրա այնքան չազդեց ահավոր նորությունը, որքան Տեր-Հայկազունի սառնասրտությունը։ Ձէր կասկածում, որ լուրը հավաստի է։ Չնայած դաշնակցական կուսակցության գոյությանը, հոգևորականությունը ժողովրդի աչքին ամենահեղինակավոր իշխանությունն էր և միակ իրական կազմակերպությունը։ Աշխարհիկ համայնքներն ապրում էին հեռուներում սփռված գյուղերում և մեծ մասամբ աշխարհի իրադարձությունների մասին իմանում էին միայն այն ժամանակ, երբ արդեն հորձանուտի մեջ էին ընկնում։ Սակայն հովվապետը կարճ ու գաղտնի ճանապարհներով ավելի շուտ էր իրազեկ լինում որևէ սպառնալից եղելության, քան լուրը կարող էին մայրաքաղաք հասցնել թերթերը։ Գաբրիելը մի անգամ էլ ուզեց համոզվել, թե արդյոք ճի՞շտ է հասկացել լսածը.

— Իրո՞ք բանտարկված են։ Ովքե՞ր։ Դա ստո՞ւյգ է։

Տեր-Հայկազունը գրությունների վրա դրեց իր անկենդան ձեռքը, որի մատնեմատի վրա մի խոշոր մատանի կար.

— Միանգամայն ստույգ։

— Եվ դուք, որպես յոթ համայնքի հովվապետ, այսքան անվրդո՞վ եք։

— Անհանգստությունը ինձ օգուտ չէր բերի, իսկ համայնքներին միայն վնաս կտար։

— Ձերբակալվածների մեջ հոգևորականնե՞ր էլ կան։

Տեր-Հայկազունը փորձեց գուշակել, թե ինչ կա թաքնված այդ հարցի տակ։ Նա լրջանալով կախեց գլուխը.

— Առայժմ յոթ հոգևորական։ Այդ թվում՝ Հմայակ արքեպիսկոպոսը և երեք բարձրաստիճան առաջնորդ։

Չնայած ցնցող լուրին, Բագրատյանն այլևս չկարողացավ զսպել ծխելու ցանկությունը։ Վարդապետից վերցրեց սիգարիկ և լուցկի։

— Տեր-Հայկազուն, ես Ձեզ մոտ պետք է ավելի շուտ գայի։ Դուք չգիտեք, թե ինչքա՞ն եմ տանջվել, որ կարողանամ լռել։

— Ճիշտ եք վարվել, որ լռել եք։ Այսուհետև էլ պետք է լռենք։

— Ավելի ձեռնտու չի՞ լինի, եթե մարդկանց նախապատրաստենք ապագայի համար։

Տեր-Հայկազունի մոմի պես դալուկ դեմքը ոչ մի հուզմունք չարտահայտեց.

— Ես չգիտեմ, թե ինչպիսին է ապագան։ Բայց գիտեմ, թե իմ համայնքներին ինչ վնաս կբերեն երկյուղն ու խուճապը։

Քրիստոնյա հովվապետը ասաց գրեթե այն խոսքերը, ինչ ասաց բարեպաշտ մահմեդական Ռիֆաաթ Բերեքեթը։ Այդ վայրկյանին Գաբրիելի մտքով մի տեսարան կայծակեց, արթմնի մի երազ։ Վիթխարի մի շուն, մեկն այն անտերունչ կենդանիներից, որոնք ամբողջ Թուրքիան գարձնում են անապահով։ Ճանապարհին մի ծերունի է կանգնած։ Շան ահից քարանում է, դոփում է մոլորված և հանկարծ պոկվում է տեղից, դիմում փախուստի։ Բայց կատաղի շունը վրա է հասնում, նետվում ուսերին, պատառոտում...

Գաբրիելը ձեռքը դրեց ճակատին։

— Երկյուղը,— ասաց նա,— ամենահաստատ միջոցն է, որով կարելի է թշնամուն մղել մարդասպանության... Արդյոք մեղանչում չէ՞ և առավել վտանգավոր չէ՞ ժողովրդից թաքցնել նրա ճակատագրին վերաբերող ճշմարտությունը։ Մինչև ե՞րբ կարելի է գաղտնի պահել այդ ճակատագիրը։

Տեր-Հայկազունը կարծես ինչ-որ հեռավոր ձայներ էր ունկնդրում։

— Այս ամբողջ եղելության մասին լրագրերը տակավին չեն գրի, որ արտաստահմանը ոչինչ չիմանա։ Իսկ վաղ գարնանը սկսվում է աշխատանքային շրջանը, և մեր հավատացյալները ժամանակ չեն ունե-

նա տեղից տեղ գնալու։ Այսպիսով, ստծո օգնությամբ, թերևս, մի ժամանակ հեռու մնանք արհավիրքից։ Սակայն երբևէ դա կլինի։ Վաղ թե ուշ։

— Ի՞նչ կլինի։ Ինչի՞ց գիտեք։

— Ես ոչինչ չգիտեմ։

— Մեր զինվորները զինաթափ են արված, մեր ազգային գործիչները ձերբակալված են։

Տեր-Հայկազունը ձերբակալվածների անունները սկսեց մեկ-մեկ թվել նույն անտարբերությամբ, կարծես իրեն և այցելուին վշտացնելով՝ լուռ սփոփանք էր վայելում։

— Ձերբակալվածների մեջ է նաև Վարդգեսը՝ Թալիաթի և էնվերի սրտակից բարեկամը։ Մի մասն աքսորված է։ Դուցե արդեն մեռած։ Հայկական բոլոր թերթերի տպագրությունը դադարեցված է, առևտրական տներն ու խանութները՝ փակված։ Հենց այս պահին, երբ մենք այստեղ իրար հետ զրուցում ենք, սերասքերիաթի առաջ, հրապարակում, կախաղաններից տասնհինգ անմեղ հայ է կախված։

Բագրատյանն այնպիսի թափով վեր թռավ, որ ծղոտե բազկաթոռը շուռ եկավ։

— Ի՞նչ է նշանակում այս խելագարությունը։ Ո՞վ կարող է հասկանալ։

— Ես միայն այնքանն եմ հասկանում, որ կառավարությունը մեր ժողովրդի դեմ այնպիսի մի հարված է ծրագրում, որ չէր համարձակվի իրագործել նույնիսկ Աբդուլ Համիդը։

Գաբրիելը Տեր-Հայկազունի վրա այնպես չարացած ֆշշաց, կարծես դիմացինը թշնամի էր, իթթիհաթի անդամներից մեկը.

— Եվ մենք, ուրեմն, իրո՞ք բոլորովին անզոր ենք, իրո՞ք պետք է լուռումունջ գլուխներս կախենք։

— Անզոր ենք։ Գլուխներս պետք է կախենք։ Գոռալ, երևի, կարողանանք։

Անիծյալ արևելքը ճակատագրի հանդեպ ունեցած իր հնազանդությամբ, կրավորականությամբ շանթահարում էր Բագրատյանին։ Միաժամանակ նրա գիտակցության մեջ ծայր առավ անունների, հարաբերությունների, հնարավորությունների մի թոհուբոհ։ Տասնյակ քաղաքագետներ, դիվանագետներ, ֆրանսիացիներ, անգլիացիներ, գերմանացիներ, սկանդինավցիներ։ Պետք է ամբողջ աշխարհը ոտքի հանել։ Բայց ինչ-

պե՞ս։ Որոգայթը փակված էր։ Մշուշը կրկին փարատվեց։ Բերանից շատ անվստահ դուրս թռավ.

— Եվրոպան այս բանը չի՛ հանդուրժի։

— Մեզ օտարի աչքով են նայում։— Տեր-Հայկազունի անվրդովությունը պարզապես անտանելի էր։— Այսօր երկու Եվրոպա կա։ Գերմանացիներն ավելի են զգում թուրք կառավարության կարիքը, քան վերջինս՝ նրանց կարիքը։

Գաբրիելը սևեռուն հայացքով նայում էր վարդապետին, որի ակնարքարե խելացի դեմքը ոչ մի կերպ չէր փոխում իր անտարբեր արտահայտությունը.

— Դուք բազմահազար մարդկանց հոգևոր հովիվն եք,— Բագրատյանի ձայնը գրեթե ռազմական հրամանի նման խիստ էր հնչում,— և ձեր ամբողջ արվեստն այն է, որ նրանցից թաքցնում եք ճշմարտությունը, ինչպես երեխաներից ու ծերունիներից են թաքցնում դժբախտությունը՝ նրանց խնայելու նպատակով։ Սա՞ է այն ամենը, ինչ Դուք անում եք Ձեր հոտի համար։ Ուրիշ ի՞նչ եք անում։

Գաբրիելն այս գրոհով հավանաբար խորապես վիրավորեց հովվապետին։ Սեղանին դրված ձեռքերը դանդաղ բռնցքվեցին։ Գլուխը կախվեց կրծքին։

— Աղոթում եմ...— մրմնջաց Տեր-Հայկազունը։ Կարծես ամաչում էր բախտի քմահաճույքին թողնել այն հոգևոր պայքարը, որ ինքն աստծո հետ գիշեր-ցերեկ մղում էր հանուն իր հոտի փրկության։

Թերևս, Ավետիս Բագրատյանի թոռը ազատամիտ էր և ծաղրուծանակի սիրահար։ Բայց Գաբրիելը, ծանր շնչելով, ետ ու առաջ էր քայլում։

Հանկարծ նա ձեռքով այնպես ուժգին խփեց պատին, որ ծեփը թափվեց.

— Աղոթեցե՛ք, Տեր-Հայկազուն։

Եվ ապա գերագույն հրամանատարի ոճով ավելացրեց.

— Աղոթեցե՛ք... Բայց աստծո՛ւն էլ պաշտպան է պետք։

Առաջին իրադարձության լուրը տեղ հասավ նույն օրը, և Յողոնօլուքն իմացավ ամբողջ եղելությունը, որ մինչ այդ թաքցնում էին։

Ապրիլ ամսի ուրբաթն էր, տաք, ամպամած մի օր։

Գաբրիելն Ստեփանի խնդրանքով ամառանոցի այգում պատրաստել էր տվել մարմնամարզական կոշտ ու կոպիտ հարմարանքներ։ Վարժություններ կատարելու մեջ տղան շատ աչքաբաց էր։ Մասնակցում էր նաև հայրը։ Ամենից շատ սիրում էին սկավառակ նետել։ Իհարկե, Ժուլիեթը լավագույն դեպքում կարող էր կրոկետ խաղալ։ Այսօր Գաբրիելը, Ավագյանն ու Ստեփանը ճաշելուց անմիջապես հետո (տանտերն ուտելիս ոչ մի բառ չարտասանեց) գնացին հրաձգային վարժության։ Նշանառության վայրը այգու պարսպից դուրս էր, անտառապատ բարձունքի վրա։ Այստեղ մոտ հիսուն քայլ լայնությամբ քառակուսի փոս կար, որ հեղեղատ էր հիշեցնում։ Գաբրիելի պատվերով կտրատել էին թփերը։ Բարձր կաղնու տակ դրված էր մի թախտ, որը փայտե ցցով ամրացված էր ծառին։ Կարելի էր վրան պառկած՝ լավ նշան բռնել փոսի մյուս ծայրի ծառաբնին ամրացված թիրախին։ Կրտսեր Ավետիսն իր եղբորը մի ամբողջ արկղ ընտիր զենք էր թողել՝ տարբեր տրամաչափի որսորդական ութ հրացան, մարտական երկու մաուզեր հրացան և մեծ քանակությամբ ռազմամթերք։

Գաբրիելը բավականաչափ լավ էր կրակում, բայց հինգ գնդակից միայն մեկը դիպավ թիրախի մեջտեղին։ Ավագյանը, որ չափազանց կարճատես էր, խուսափում էր մրցումից, չկամենալով սանի մոտ փորձության ենթարկել իր հեղինակությունը։ Բայց Ստեփանը հմտորեն էր կրակում. որսորդական փոքրիկ հրացանից արձակած յոթ գնդակից վեցը խփեց կենտրոնին՝ խաղաթղթին, ընդ որում չորսը դիպան նկարին։ Հոր դեմ տարած հաղթանակը անսահման հուզել էր Ստեփանին։ Ինչ խոսք, հրազեն գործածելու վարպետությունը, փակաղակ բացելը, փամփուշտները թափով առաջ մղելը, նշան բռնելը, կրակելը և հետադարձ հարվածը՝ ռազմական բնույթ կրող այս առնական գործը ամեն մի պատանու համակում է գլխապտույտ խանդավառությամբ։ Պատանին իր նեղլիկ ուսերի վրա չէր զգում խզակոթի պատճառած ցավը և տղամարդուն վայել այս խաղը ոգևորությամբ կշարունակեր մինչև երեկո, եթե հայրը հանկարծ ձեռքով չաներ.

— Բավակա՛ն է։

Գաբրիելի մոտ սկսվել էր ինչ-որ անծանոթ հոգեվիճակ։ Որքան հիշում էր, այդպիսի բան երբեք չէր պատահել։ Տարտամ էր ինքնազգացումը։ Լեզուն ծանր էր ու չոր։ Ձեռքերն ու ոտքերը սառն էին։ Գլխում ամայություն էր տիրում։ Բայց դրանք արտաքին նշաններն էին այն ապրումների, որոնց մեջ էր նրա կյանքի ամբողջ նպատակը։ «Հիվանդ չեմ,— մտածում էր նա, քանի որ մի ժամանակ կարծում էր, թե իր հետ ինչ-որ բան է պատահել։— Հիվանդ չեմ, միայն թե կուզենայի սեփա-

կան մաշկս պատռել ու դուրս գալ միջից, ինքս ինձ փոխել։ Բայց միևնույն ժամանակ անմիտ ցանկություն էր զգում՝ վազել, փախչել, որքան հնարավոր է հեռու։

— Մի քիչ զբոսնենք, Ստեփան,— վճռեց նա։

Գաբրիելը միայնակ մնալ չէր ուզում։ Կարծում էր, թե հանկարծ արագ քայլերով կգնա հեռո՞ւ, հեռո՞ւ, այլևս ետ չի դառնա, մինչև հասնի աշխարհի ծայրը։

Ավագյանն ուսին դրեց հրացանները, որ տուն տանի։ Իսկ հայր ու որդի այգուց դուրս եկան, իջան Յողունօլուք։ Գյուղը մոտ էր, տասը բոպեի ճանապարհ։ Գաբրիելն իրեն հանկարծ զգաց զառամյալ ծերունի։ Մարմինն այնպես ծանրացավ, որ հենվեց Ստեփանի ուսին։ Եկեղեցու հրապարակը դեռ չհասած՝ լսեցին տագնապալից աղմուկ։ Ի հակադրություն արարների և արևելքի մյուս աղմկասերների, հայերը միատեղ հավաքվելիս խաղաղ են, ինքնամփոփ։ Ավանդական ճակատագիրը նրանց ետ է պահում նման աղմկալի ցույցերի խառնվելուց կամ այդպիսիք սարքելուց։ Բայց այժմ հավաքվել էին գրեթե երեք հարյուր գյուղացի, կիսաշրջանաձև պաշարել եկեղեցին։ Տղամարդկանցից, կանանցից, հողագործներից և արհեստավորներից մի քանիսը կոկորդները պատռելով հայհոյանքներ էին տեղում, թափահարում բռունցքները։ Նզովքը, հավանարար, ուղղված էր զափթիեներին, որոնց ոչխարենի հնամաշ փափախները այստեղ-այնտեղ երևում էին գլուխների վրայից։ Հավանաբար կարգ հաստատողներն ուզում էին հավաքվածներին ետ մղել եկեղեցուց, որ ազատեն մուտքի սանդուղքը։ Գաբրիելը բռնեց Ստեփանի ձեռքը և բազմության մեջ ճանապարհ բացելով՝ առաջ շարժվեց։ Նախ՝ տեսան բարձրահասակ, ցնցոտիավոր մի երիտասարդ, որն իր սև գբլեխարկի շուրջը ծղոտե պսակ էր փաթաթել, իսկ աջ ձեռքով թափահարում էր կարճ կտրած մի արևածաղիկ։ Ամենայն լրջությամբ, կարծես ինչ-որ ներքին ռիթմի անսալով, նա պարում էր հոգնած ու խարխափելով։ Բայց դա բնավ էլ հարբած մարդու պար չէր։ Իսկույն նկատվում էր, որ արևածաղկով պարողին բազմությունը ոչ մի ուշադրություն չի դարձնում։ Այլ տեսարանով էր տարված։

Եկեղեցու սանդուղքին չորս հոգի էին նստած։ Մի տղամարդ, երկու գեռատի կին և տասներկու-տասներեք տարեկան մի աղջիկ։ Մարդավերակներ, որոնց նմանը Գաբրիելն իր կյանքում տեսած չկար։ Դրանք կենդանի մարմնով քարացած դիակներ էին։ Կարծես երկու հազար տարի լավայի փոշու տակ թաղված մնալուց հետո դուրս էին բերվել լույս աշխարհ։ Գաբրիելը շշնջաց.

— Կարծես թե կենդանի են։

Զորսն էլ բութ, անորոշ հայացքներն ուղղել էին դեպի հեռուները և ոչինչ չէին նկատում, ո՛չ խռոչահույզ ամբոխը, ո՛չ էլ դեղագործի հանդիպակաց տունը։ (Ի՞նչ բան է հայացքը։ Աչքի չնչին փոփոխություն, պղտոր կամ պայծառ երանգավորում, բայց և թևավոր մի էակ, մի հրեշտակ, որին մարդը իր պատգամով է դուրս բերում առաքելության։ Մինչդեռ այս հրեշտակներն իրենց պատգամով սավառնում անցնում էին բոլորի մոտով, թևերը թափահարում բոլորի հայացքի տակ։)

Երիտասարդ տղամարդը նեղ դիմագծեր ուներ, մազակալած դեմք։ Հագին գորշ սերթուկ կար՝ երկար ու պսպղուն, ինչպիսիք այս կողմերում կրում էին բողոքական քահանաները։ Ծղոտե լայնեզր գլխարկը սանդուղքից ցած էր գլորվել։ Անդրավարտիքն ամբողջովին քրքրված էր։ Պատառոտված կոշիկները, դեմքին և սերթուկին նստած փոշու հաստ շերտը վկայում էին, որ այդ մարդը ոտքով երկար ճանապարհ է անցել, գուցե մի քանի օր։

Կանայք նույնպես եվրոպական զգեստներով էին, այն էլ ոչ անճաշակ՝ նույնիսկ այդ վիճակում։ Պատվելու մոտ նստած կինը (հավանաբար ամուսիններ էին) չկարողացավ այլևս դիմադրել ուշագնացությանը կամ ջղաձգության նոպային։ Նա հանկարծ ամբողջ մարմնով ետ-ետ գնաց։ Գլուխը կխփեր սանդուղքի քարերին, եթե հոգևորականը չբռներ։ Դա խմբի առաջին շեշտակի շարժումն էր։ Մյուս կինը, որը տակավին շատ էր երիտասարդ, գեղեցիկ էր նույնիսկ այդ վիճակում։ Փոքրիկ դեմքը գունատ էր, նիհար, բայց աչքերում տենդոտ փայլ կար։ Նուրբ բերանը բաց էր. ագահորեն օդ էր ներծծում։ Պարզ երևում էր, որ ցավից տանջվում է։ Կամ վիրավորված էր, կամ վնասվածք ուներ, քանի որ ձախ ձեռքը վիրակապով կախված էր կրծքին։ Գուցե հոդից դուրս էր ընկել։ Փոքրիկ աղջիկը՝ ճնճղուկ հիշեցնող այդ երկչոտ արարածը, հագին ուներ շերտավոր էնթարի[1], ինչպիսիք սովորաբար հագնում էին մանկական ուղղիչ տներում։ Էնթարու տակից նա ջղաձգորեն առաջ էր պարզում բոբիկ ոտքերը, ջանում, որ դրանք որևէ բանի չկպչեն։ «Հիվանդ գազանիկի նման փռել է վիրավոր ոտքերը»,— անցավ Գաբրիելի մտքով։ Հիրավի, խեղճ երեխայի ոտքերն ուռած էին, կապտած ու սևացած, բաց

[1] Էնթարի—երկար վերնաշապիկ

վերքերով ծածկված։ Միանգամայն անվթար և ուժերի լիակատար պաշարով էր ներկայանում միայն արևածաղկով պարողը։

Հրապարակը վազելով անցնելով՝ մոտեցավ մի տարեց մարդ։ Երևվում էր, որ աշխատանքի տեղից է եկել. հագին բաց կապույտ գոգնոց կար։ Ստեփանը ճանաչեց։ Դա վարպետ Թովմասյանն էր, որը ղեկավարում էր ամառանոցի վերանորոգումը։ Տղան հաճախ էր հետաքրքրություն ամառանոցի վերանորոգումը։ Տղան հաճախ էր հետաքրքրությամբ պտտվում վարպետի շուրջը։ Թովմասյանը հպարտությամբ նրան պատմել էր, թե Արամ անունով որդի ունի, որը Զեյթուն քաղաքում նշանավոր դեմք է՝ քահանա և որբանոցի տնօրեն։ Ստեփանը գուշակեց, որ իրենց դիմաց կանգնած անծանոթ քահանան հենց վարպետի որդին է։ Սերունի Թովմասյանը, ձեռքերը տարակուսանքով բարձրացրած՝ կանգնեց հյուծված խմբի առաջ։

Պատվելի Արամը հոգնատանջ ետ դարձրեց մտացրիվ հայացքը, շինծու թեթևությամբ վեր թռավ, փորձեց անհոգ ժպտալ, իբրև թե ոչ մի առանձին բան չի պատահել։ Կանայք երկուսն էլ վեր կացան, թեև մեծ դժվարությամբ, քանի որ մեկի թևը չէր շարժվում, իսկ մյուսը հղի էր։ Միայն շերտավոր էնթարիով աղջիկը մնաց նստած։ Աչքերը չոռած՝ տարակուսանքով նայում էր իր տառապանքի ընկերներին։ Ողջագուրանքի անսպասելի բացականչություններից, ախուվախից ու հարցերի տարափից ոչ ոք ոչինչ չէր հասկանում։ Բայց երբ պատվելի Արամը հորը գբրկեց, նույն ակնթարթում կորցրեց ինքնատիրապետումը։ Գլուխը դրեց ծերունու ուսին, և լսվեց տառապալից մի հեկեկանք, անզուսպ մի փրղձկոց։ Դա մի վայրկյան էլ չտևեց։ Կանայք լուռ էին։ Բայց շուտով հոծ բազմության միջով կարծես էլեկտրական հոսանք անցավ։ Ծայր առան լացուկոծ, հեկեկանք ու հառաչանք։ Ցավին այսքան լավ հաղորդակից կարող են լինել միայն հալածված և ճնշված ժողովուրդները։ Մեկի գլխին եկած փորձանքը բոլորին է վերաբերում։ Յողոնօլուքի եկեղեցու առաջ երեք հարյուր հայրենակիցներ համակվել էին մի վշտով, որի պատմությունը դեռևս չգիտեին։ Գաբրիելը՝ այդ օտարը, փարիզեցին, աշխարհաքաղաքացին, որը վաղուց ի վեր ձեռք էր քաշել իր ծագումից, նույնպես աշխատում էր զսպել ինչ-որ խեղդող մի բան, որ գլուխ էր բարձրացնում իր ներսում։ Նա գողունի նայեց Ստեփանին։ Հմուտ հրաձգի դեմքի գույնը թռել էր։ Ժուլիեթը կսարսափեր, եթե տեսներ ոչ միայն տղայի գունատությունը, այլև դեմքին դրոշմված անբացատրելի սոսկման անզուսպ արտահայտությունը։ Կսարսափեր, եթե Ստեփանին տեսներ այսքան հալածած։ Շուտով հայտնվեցին բժիշկ Ալթունին, նրա կին Անթառամը,

դպրոցից կանչված երկու ուսուցիչ, մուխթար Քեբուսյանը և, ի վերջո, Տեր-Հայկազունը, որն ավանակով հենց այդ ժամանակ վերադառնում էր Բիթիաս կատարած ուղևորությունից։

Հովվապետը, ձայնը բարձրացնելով, թուրքերեն ինչ-որ բան ասաց զափթիե Ալի Նազիֆին։ Բազմության մեջ կանգնածներից ոչ մեկը չպետք է եկեղեցի մտներ։ Վարդապետն ինքը մայր դռնով ներս տարավ Թովմասյանի ընտանիքը և փոքրիկ աղջկան։ Նրանց հետևեցին բժիշկը, Անթառամ մայրիկը, մուխթարը և ուսուցիչները։ Գաբրիելն իր որդու հետ նույնպես ներս մտավ։ Դրսում ետմիջօրեի բարկ արևի տակ մնաց մարդկային բազմությունը։ Արևածաղկով պարողը նստեց սանդուղքի քարերին և քնեց։

Տեր-Հայկազունը տանջահար խումբը տարավ սարկավագանոց՝ ընդարձակ, լուսավոր մի սրահ, որտեղ բազմոց կար, բավականաչափ նըստարաններ։ Ժամկոչը գնաց գինի և տաք ջուր բերելու։ Բժիշկն իր կնոջ հետ իսկույն գործի անցավ։ Վիրավոր թևով դեռատի կնոջը՝ Իսկուհի Թովմասյանին, որը պատվելու քույրն էր, Ալթունին քննեց։ Աչքի անցկացրեց նաև Զեյթունից բերված փոքրիկ որբուհու՝ Սաթոյի վերքերը։ Իբրև օտարական կամ դեռևս օտար, Գաբրիելը Ստեփանի ձեռքից բռնած՝ կանգնել էր փոքր-ինչ հեռու և լսում էր հարց ու պատասխանի ժխորը։ Այս ձևով, չնայած կցկտուր, անկանոն նկարագրությանը, նա իմացավ Զեյթուն քաղաքի, պատվելի Արամի ու նրա յուրայինների տխուր պատմությունը։

Զեյթուն է կոչվում Կիլիկյան Տավրոսի արևմտյան մասում ընկած հնադարյան, բարձրադիր մի լեռնաբույն։ Այստեղ ևս, ինչպես Մուսա լեռան շրջակա գյուղերում, հայերն ապրում են անհիշելի ժամանակներից։ Դա երեսուն հազար բնակիչ ունեցող շատ հայտնի քաղաք էր, և թուրքական կառավարությունն այնտեղ պահում էր զգալի թվով զափթիեներ ու զորամասեր, սպաներ ու պաշտոնյաներ՝ իրենց ընտանիքներով հանդերձ։ Այդպես էր վարվում ամենուրեք, որտեղ հարկ էր համարում հսկողություն սահմանել ոչ թուրք բնակչության վրա, զգուշանալով նրա թվական գերակշռությունից։ Սա ամբողջ աշխարհին հայտնի տակտիկա է այն բոլոր պետություններում, որտեղ, այսպես կոչված, պետական ժողովուրդն իշխում է ազգային փոքրամասնությունների վրա։ Այս բանն առանձին վայրագությամբ էր կիրառվում Թուրքիայում, քանի որ օսմանցիները, որոնք թմբկահարում են իրենց ազնվական առավելու-

թյունը, երբեք թվական գերակշռություն չեն ունեցել մյուս ազգություն-ների՝ «միլեթների», համեմատությամբ։ Մինչև այդ գարունը միայն Փարիզում կամ այլ մայրաքաղաքներում ապրած մարդիկ կարող էին իդեալիստական հույսեր փայփայել, թե հակասությունների միավորումը, արյան թշնամանքի վերացումը, ճշմարտության հաղթանակը հնարավոր կլիներ «երիտասարդ թուրքերի» դրոշի ներքո։ Գաբրիելը ճանաչում էր բազմաթիվ փաստաբանների և ժուռնալիստների, որոնք հեղափոխության շնորհիվ բարձր դիրքի էին հասել։ Դավադրության օրերին նա այդ մարդկանց հետ Մոնմարտրի սրճարաններում գիշերներ էր լուսացնում, մասնակցում բանավեճերին։ Թուրքերն ու հայերը այդ ժամանակ հավերժական հավատարմության, ապագա մեսիական դավանանքի հավաստիացումներ էին փոխանակում։ Գաբրիելն արդեն ամուսնացած էր, բայց ի սեր վերափոխվելիք հայրենիքի (չնայած այդ հայրենիքի հետ շատ քիչ առնչություն ուներ), նա ընդունվեց ռազմական ակադեմիա, մասնակցեց մի պատերազմի, որը Փարիզում գտնվող թուրք հայրենասերներին մազաչափ անգամ չէր հետաքրքրում։

Իսկ ա՞յժմ։ Մտովի տեսնում էր նրանց դեմքերը, զգում տակավին չմարած հուշերի ջերմությունը, զարմացած հարցնում.

— Ինչպե՞ս, մի՞թե վաղեմի բարեկամներն այսօր իմ մահացու թշնամիներն են։

Զեյթունի դեպքերն այդ հարցի կոպիտ պատասխանն էին։

... Զեյթո՜ւն։ Պատկերացրեք վայրի միջնաբերդով պսակված երկնաձիգ, ճաքճքված մի ժայռակարկառ, որի մեջ ներծծվել են հինավուրց քաղաքի մեղրախորիսխները։ Իրար գլխի աշտարակված նեղ փողոցների խրոխտ, գրոհազուսպ մի բուրգ, որը հարթավայրի հետ միայն իր նորակերտ թաղամասերով է կապված։

Զեյթունը վաղուց ի վեր եղել է թուրքական ազգամոլության մարմնի մեջ մխրճված սեպ։ Եթե աշխարհում կան սրբավայրեր և կրոնական ուխտատեղիներ, որոնք մարդկային հոգին երկյուղածությամբ են պարուրում, ապա կան նաև վայրագության ու ատելության վայրեր, որոնք բորբոքում են զանազան մոլեռանդների արյունը։ Զեյթունի հանդեպ գոյություն ունեցող ատելությունը նույնիսկ իր պարզ դրդապատճառներն ուներ։ Ամենից առաջ, քաղաքն ընդհուպ մինչև տասնիններորդ դարի խորքերը ուներ ազատ ինքնավարություն, մի հանգամանք, որ պետական ժողովրդին շարունակ հիշեցնում էր նրա երբեմն կրած տհաճ ձախողումները։ Դրանից բացի, Զեյթունի հայերը պահպանել էին իրենց պատ-

մական անցյալի անկախության ոգին, և դա հաճախ զգացնել էին տալիս վիրավորական ձևերով։ Սակայն ատելության ամենաաններելի պատճառն այն հիշողությունն է, որ կապված է 1896 թվականին դրսևորած ապշեցուցիչ վերաբերմունքի հետ։ Դեռևս այդ ժամանակ «բարի» սուլթան Աբդուլ Համիդը բաշիբոզուկներից բացի, վարձել էր նաև համիդիեներ՝ բանտից ազատված հանցագործների, ավազակների ու քոչվորների հրոսակախմբեր։ Նրա նպատակն էր ձեռքի տակ ունենալ առաջնորդել եռանդուն մի զորաբանակ, որը պատրաստ լիներ առանց խղճի խայթի սանձազերծելու արյունահեղ ջարդեր։ Սուլթանը հույս ուներ, թե այդ ձևով մեկընդմիշտ կփակի հայ ժողովրդի բարեփոխումներ պահանջող բերանը։ Այն ժամանակ, երբ բաշիբոզուկները ամենուրեք հաջողություններ էին ձեռք բերում, Զեյթունում արյունալի պարտություն կրեցին, չնայած նրանց խոստացել էին, թե այնտեղ ևս ջարդերը լինելու են զվարճալի և եկամտաբեր։ Ամենամեծ խայտառակությունն այն էր, որ օգնության շտապող կանոնավոր մի գումարտակ սոսկալի կորուստներ կրելով, մահակների հարվածների տակ նահանջեց, դուրս շպրտվեց քաղաքի նեղ փողոցներից։ Այս պարտությունից հետո թուրքերը Զեյթունը պաշարեցին առավել մեծաթիվ զորաբանակով, բայց ոչ մի արդյունքի չհասան։ Զեյթունը մնաց անառիկ։ Երբ, ի վերջո, եվրոպական դիվանագիտությունը պաշտպան կանգնեց հայ քաջարի ժողովրդին, և դեսպանները լիակատար ներումն պահանջեցին ամոթահար Բարձր Դռնից, թուրքերն ատամներն էին կրճտացնում, իրենց զգում անսահմանորեն նվաստացած։ Ոչ միայն օսմանյան կայսրությունը, այլև բոլոր ռազմատենչ պետությունները հանդուրժում են իրենց պարտությունը, եթե թշնամին հավասարազոր է։ Բայց ջարդ ուտել մի ազգից, որին խորթ է զենքի իդեալը, ստորանալ վաճառականների, արհեստավորների, գրաճիճունների առաջ, դա ռազմական արժանապատվություն ունեցող ժողովուրդը երբեք չի մոռանա։

Այսպիսով, հնին հաջորդած նոր կառավարությունը ժառանգեց Զեյթունից կրած պարտությունը և նրա հանդեպ կուտակված ատելությունը։

Ուրիշ ի՞նչ ավելի բարենպաստ առիթ կարող էր լինել վրեժխնդիր հաշվեհարդարի համար, քան մեծ պատերազմը։ Հայտարարվեց արտակարգ դրություն, ռազմական ռեժիմ։ Երիտասարդները մեծ մասամբ կամ ռազմաճակատում էին, կամ հեռավոր զորանոցներում։ Մնացած բնակչությունն անմիջապես առաջին իսկ օրերին բազմիցս խուզարկության

ենթարկվեց, լրիվ զինաթափ արվեց։ Միայն մի բան էր պակասում. առիթը։

Զեյթունի քաղաքագլուխը Նազարեթ Չաուշն էր, մի իսկական հայ լեռնցի։ Նիհար էր, կորամեջք, գունատ, թավաբեղ, արծվաքիթ։ Արդեն ո՛չ երիտասարդ էր, ո՛չ էլ առանձնապես առողջ։ Երկար ժամանակ խուսափում էր պատասխանատու պաշտոն ստանձնելուց։ Նա արդեն զգում էր գալիքի խանձահոտը։

Քթարմատի վերևում ամեն օր խորանում էին կնճիռները, երբ գահավեժ ճանապարհով բարձրանում էին հյուրյումեթ, ստանալու կայմակամի նոր հրահանգները։ Կոպիտ գավազանը ջղաձգորեն սեղմող ձեռքը հոդացավային կոշտուկներից այլանդակվել էր։ Նազարեթ Չաուշի խելացի գլխում կարող էր տեղավորվել միայն մի քաղաքականություն. նախապատրաստված լինել ամեն պրովոկացիայի, գաղափարական ոչ մի ծուղակի մեջ չընկնել և, ի սեր աստծո կամ սատանայի, լինել օսմանացի օրինավոր հայրենասեր։ Ի դեպ, նա էլ իր սրտում Թուրքիայի դեմ նույնքան քիչ ոխ ուներ, որքան և զեյթունցի մյուս հայերը։ Դա ազգի ճակատագիրն էր։ Մարդ չի կարող թշնամանալ այն հողի հետ, որտեղ ապրում է, այն օդի հետ, որ շնչում է։ Ազատագրման մանկական երազանքներ չէր փայփայում, քանի որ սուլթանական և ցարական կայսրությունների միջև ընտրություն կատարելը որքան դժվար էր, նույնքան էլ ավելորդ։

Այս հանգամանքը միանգամայն որոշակի էր դարձնում, թե ինչպիսին պետք է լինի վերաբերմունքը թուրքական կառավարության հանդեպ։ Դրա շատագով Նազարեթ Չաուշի կենդանի օրինակը բնակչության մեջ ստեղծել էր երկաթյա կարգապահություն։ Երկար ժամանակ կառավարությունը չէր կարողանում առիթ գտնել իրագործելու իր գաղտնի, նենգ դիտավորությունները։ Քննող հանձաժողովը հաշմանդամներին ու հիվանդներին հայտարարում էր ռազմական ծառայության համար պիտանի։ Լավ։ Առանց աչք թարթելու ենթարկվում էին։ Կայմակամն ապօրինի տուրքեր և ռազմական հարկեր էր գանձում։ Լավ։ Ամեն ինչ տեղը-տեղին կատարում էին։ Նույն կայմակամը զանազան անհեթեթ առիթներով կարգադրում էր հաղթանակի հանդեսներ, հայրենասիրական շքերթներ կազմակերպել։ Լավ։ Ժողովուրդը խնդագեմ դուրս էր գալիս, թուրքական զինվորական նվագախմբի երաժշտության տակ երգում կառավարության կարգադրած հիմներն ու հաղթանակ փառաբանող երգերը։

Այս ձևով հաջողվում էր խուսափել ընդհարումներից։ Բայց որտեղ մեծ պրովոկացիան ձախողվում էր, փոքրը կարող էր հաջողվել։

Հանկարծ շուկայում, սրճարաններում ու իշևանատներում, բոլոր փողոցներում ու հասարակական վայրերում հայտնվեցին ինչ-որ անծանոթ, շողոքորթ հայեր։ Միշամտում էին զրույցներին, թուղթ և նարդի խաղացողների համար ցավաքաշություն անում, նույնիսկ սողոսկում ընտանիքները, որտեղ առանձնապես խոր հառաչելով գանգատվում էին անտանելի վիճակից, հետզհետե սաստակացող բռնությունից։ Դավաճանության համար այդ կեղծավոր լրտեսներն այնքան վարձ էին ստանում, որ չէր ծածկում նույնիսկ օրվա ծախսերը։

Այսպես եկավ պատերազմի առաջին տարվա ձմեռը, և թուրքական կառավարությունը Զեյթունի խաղաղ ջրերում ոչ մի փոքրիկ ձուկ անգամ որսալ չկարողացավ, թեև դա նրա մեծագույն փափագն էր։ Կայմակամը ստիպված ինքն ստանձնեց պրովոկատորի դերը։

Նազարեթ Չաուշի բարերախտությունը կամ ավելի շուտ դժբախտությունն այն էր, որ կայմակամը միանգամայն անճարակ հակառակորդ էր։ Սա արյունարբու բռնակալ չէր, այլ հնաոճ միջակ պաշտոնյա, որը մի կողմից ուզում էր հանգիստ ապրել, մյուս կողմից՝ արժանանալ «վերևի» հովանավորությանը։ Այդ «վերևը» ամենից առաջ Մարաշի սանջակի[1] Մյութեսարրֆն[2] էր, որին ենթարկվում էր Զեյթունի գավառը։ Մյութեսարրֆն արտակարգ դաժան մարդ էր, Իթթիհաթի վայրագ անդամներից մեկը։ Նա պատրաստ էր անողորմաբար իրագործելու Էնվերի և Թալիաթի ծրագրերը «անիծյալ ազգի» վերաբերյալ, թեկուզ դրանով դեմ գնար իր վերադասի՝ Հալեպի վալի[3] Ջելալ փաշայի հրամաններին։ Մյութեսարրֆը կայմակամին հեղեղում էր հրամաններով, նախազգուշացումներով և խարազանող հանդիմանություններով։ Այս ամենի ճնշման տակ Զեյթունի հաստամարմին կայմակամը, որը գուցե կգերադասի հայերի հետ հաշտ ու խաղաղ ապրել, իրեն պարտավորված էր զգում մեղադրանքի ենթակա փաստ գտնել որևէ նշանավոր հայի դեմ։ Անգույն պաշտոնյայի էությունն այն էր, որ նա, զուրկ լինելով սեփական բնավորությունից, իր պետերի կամքի հայելին էր։ Նա մտերմացել էր մուխթար Նազարեթ Չաուշի հետ, ամեն օր տուն էր հրավիրում, շռայլում իր հյուրասիրությունը, նույնիսկ ձեռնտու պաշտոններ առաջարկում։ Չաուշը ոչ միայն առհասարակ ճշտապահ մարդ էր թվում, այլև դեմքի անկեղծ արտահայտությամբ ցույց էր տալիս, որ իր համար շահավետ են կայմակամի պաշ-

---

[1] սանջակ—գավառ

[2] մյութեսարրֆ—գավառի կառավարիչ

[3] վալի—նահանգապետ

տոնական առաջարկությունները։ Նման հանդիպումները, բնականաբար, մտերմացնում են, գրույցը դարձնում առավել սրտաբաց։ Կայմակամը հավաստիացնում էր, որ հայերի նկատմամբ ինքը բարեկամական ջերմ զգացումներ է տածում։ Սակայն մուխթարը թախանձագին խնդրում էր չչափազանցնել բարյացակամությունը։ Բոլոր ժողովուրդներն էլ իրենց թերությունները ունեն, այդ թվում նաև հայերը։ Իրենց հայրենիքում, իհարկե, դիրք են ձեռք բերել միայն մատուցած ծառայության շնորհիվ։ Ի՞նչ թերթեր է կարդում մուխթարը՝ ճշմարիտ իրազրությանն իրազեկ լինելու համար։ Միայն «Թանինը»՝ պաշտոնական լրագիրը, պատասխանեց Զաուշը։ Ինչ վերաբերում է ճշմարտությանը, ապա մարդիկ ապրում են աշխարհով մեկ բորբոքված պատերազմի պայմաններում, երբ ճշմարտությունը նույնպես արգելված զենք է։ Կայմակամն իր անճարակ միամտությունն ավելի պարզորոշ դրսևորեց, երբ սկսեց ամբաստանել Իթթիհաթը՝ իշխանության գլխին կանգնած այդ իշխանությունը (գուցե և դա նրա սրտովն էր)։ Նազարեթ Զաուշը նկատելիորեն սարսափեց.

— Նրանք մեծ մարդիկ են, իսկ մեծ մարդիկ միայն բարի գործեր կարող են կատարել։

Կայմակամն իրեն ծաղրված համարելով, կատաղեց.

— Իսկ Էնվեր փաշա՞ն։ Ի՞նչ կարծիքի ես Էնվերի մասին, մուխթա՛ր։

— Էնվեր փաշան մեր ժամանակի մեծագույն ռազմագետն է։ Բայց թե ես ի՞նչ եմ հասկանում նման բաներից։

Կայմակամն արդեն սկսեց աչքերը ճպճպացնելով խնդրել.

— Մուխթա՛ր, ինձ հետ անկեղծ եղիր։ Գիտե՞ս, որ ռուսներն առաջ են շարժվում։

— Ի՞նչ ես ասում, էֆենդի։ Չեմ հավատում։ Թերթում այդպիսի բան չկա։

— Դե, ասում եմ, էլի։ Անկեղծ եղիր, մուխթար։ Մի՞թե դրանով հարցը չի լուծվի...

Նազարեթ Զաուշը լեղապատառ ընդհատեց նրան.

— Չեղավ, էֆենդի։ Դու բարձր դիրքի տեր մարդ ես։ Այդպիսի բաներ էլ չխոսես, ի սեր աստծու։ Դա պետական դավաճանություն կլինի։ Բայց մի՛ վախենա. ինձանից խոսք դուրս չի գա։

Նուրբ խորամանկությունը չանցավ։ Գլուխ բարձրացրեց բացահայտ կոպտությունը։

Ինքնին հասկանալի է, որ Զեյթունում և միամիտ շրջակայքում նույնպես «տարբեր» կային։ Որքան պատերազմը երկարաձգվում էր, այնքան

սրանց թիվը ավելանում էր դրսից եկող համալրման հաշվին։ Մարաշի զորանոցներից փախչողների մեջ ոչ միայն հայեր կային, այլև մահմեդականներ, գուցե նույնիսկ ավելի շատ։ Ըստ զորանոցներից եկող լուրերի, բոլոր դասալիքներն էլ ապահով ապաստան էին գտել Սյա Քայա լեռան խորխորատներում։ Նրանց միացել էին նաև մի քանի տաքդլուխ երիտասարդներ, ավելի քան մեկ տասնյակ հանդուգն ավազակներ, որոնք կամ խղճների վրա ինչ-որ մեղքեր ունեին, կամ այլևս չէին ցանկանում շնչել քաղաքի անառողջ օդը։ Այս վայրենացած խմբի անդամները գիշերով հայտնվում էին փողոցներում՝ սնունդ հայթայթելու, իրենց ընտանիքներին այցելելու նպատակով։ Բացի մի քանի անմեղ զողությունից, ոչ ոքի վնաս չէին պատճառում, աշխատում էին չգրգռել հասարակության զայրույթը։

Բայց մի օր լեռներում սոսկալի ծեծեցին ինչ-որ թուրք իշապանի։ Հաստատ հայտնի չէր, թե դա էլ դասալիքների արած գործն է։ Գյուղերից ոմանք պնդում էին, թե այդ ոջլոտն ինքն է իրեն գանահարել, որ օսմանյան կառավարությունից լիուլի բախշիշ[1] ստանա։ Բայց կատակը մի կողմ. մարդը, իրոք, ամոթալի վիճակում ընկած էր ճամփեզրյա փոսի մեջ։ Ինչևէ, դա բաղձալի առիթ էր։ Մյուդիրների և ստորին պաշտոնյաների աչքերից կրակ էր թափվում։ Փողոցներում պարեկություն էին անում զափթիեները, որոնց թիվն արդեն կրկնապատկված էր։ Կայմակամը Նազարեթ Զաուշին այս անգամ ոչ թե հրավիրեց, այլ կանչեց։

Նա գանգատվեց, որ հեղափոխական դավադրությունները գլուխ են բարձրացնում։ Իր պետերը, առանձնապես մյութեսարրիֆը, պահանջում են վճռական միջոցներ ձեռնարկել։ Եթե դրությունն այդպես շարունակվի, իր բանը բուրդ է։ Միակ հույսն իր բարեկամ Զաուշի օգնությունն է, քանի որ մուխթարը շրջանի ամենահեղինակավոր մարդն է։ Ի՞նչ դժվար է, ի սեր հայ ժողովրդի, արդարադատության ձեռքը հանձնել խառնակիչներից ու ոճրագործներից մի քանիսին, որոնք պատսպարված են քաղաքի ներսում կամ շրջակայքում։

Այստեղ խելոքն ընկավ հիմարի թակարդը։ Նա պետք է ասեր.

— Էֆենդի։ Ես նորին մեծություն մյութեսարրիֆի և քո ծառան եմ։ Հրամայի՛ր. ի՞նչ անեմ։

Սրա փոխարեն առաջին անգամ անհեթեթ պատասխան տվեց.

— Էֆենդի, ոճրագործներից և հեղափոխականներից տեղյակ չեմ։

[1] բախշիշ — պարգև

— Ուրեմն՝ չգիտե՞ս, թե որտեղ է թաքնվում այդ ավազակախումբը, որն օրը ցերեկով հարձակվում է աղնիվ քաղաքացիների վրա։

— Ո՛չ ավազակախումբ եմ տեսել, ո՛չ էլ տեղը գիտեմ։

— Ցավում եմ։ Բայց ամենից վատն այն է, որ ուրբաթ օրը պետության թշնամիներից երկուսին ինքդ ես հյուրընկալել քո սեփական տանը։

Նազարեթ Չաուշը, բարձրացնելով հոդացավից այլանդակված մատները, երդվեց և հերքեց։ Բայց դա այնքան էլ համոզիչ չթվաց։ Կայմակամի միտքն այստեղ լուսավորվեց, և դա ոչ թե խարդախության հետևանք էր, այլ լիովին բխում էր մարդու խաղաղաբարո էությունից, որն առհասարակ խորշում էր դաժանությունից.

— Գիտե՞ս ինչ, մուխթար։ Մի բան եմ խնդրում։ Քեզ հետ ունեցածս այս բոլոր անախորժություններն էլ դեմ են իմ սրտին։ Ես խաղաղասեր մարդ եմ, ոչ թե ոստիկանության շուն։ Ինձ ազատիր այս հոգսից։ Աղաչում եմ. գնա Մարաշ, ինքդ էլ խոսիր մյութեսարրֆի հետ։ Դու ես քաղաքի հայրը, դու էլ պատասխան տուր։ Եղելությանը վերաբերող զեկուցագիրս մյութեսարրֆի ձեռքին է։ Երկուսով կվճռեք, ինչ-որ հարկն է։

— Ասածդ հրամա՞ն է, էֆենդի։

— Ասացի, որ անձնական խնդրանք է։ Կարող ես մերժել, բայց կվշտանամ։

Կայմակամն ուզում էր երկու բան շահել։ Չաուշից կազատվեր, նախքան ինքն իր ձեռքով նրան կբանտարկեր և, միաժամանակ, մյութեսարրֆի տնօրինությանն էր թողնում, թե պաշտոնապես ի՞նչ պատիժ պետք է կրի քաղաքի ամենաանվանի մարդը։

Նազարեթ Չաուշը երկար մտորեց։ Քթարմատի լայնակի կնճիռները բարձրացան ճակատն ի վեր։ Գավազանին հենվելով, ոտքի ելավ։ Ողջախոհ մարդուց նա կարծես միանգամից վերածվեց թանձրամիտ ծերունու։

— Եթե Մարաշ գնամ, գլխիս փորձանք կգա...

Կայմակամը նրան բարեսրտորեն հանգստացրեց.

— Փորձա՞նք։ Ինչո՞ւ։ Ճանապարհն ապահով է։ Քեզ իմ սեփական կառքը կտամ։ Երկու զափթիե քեզ կուղեկցեն իբրև պահապաններ։ Կտամ նաև մյութեսարրֆին ուղղված երաշխավորական մի նամակ, որ դու նախապես կարող ես կարդալ։ Եթե ուրիշ ցանկություն էլ ունես, կկատարեմ։

Հայ լեռնականի խորշոմնազարդ դիմագծերը դարձան բոլորովին գորշ։ Նա կանգնած էր ծերացած և կորամեջք, ինչպես Զեյթունի ժայռերը։ Վհատված էր և առարկություն էր որոնում, բայց թավ բեղերի տակ սեղմված շուրթերը չէին շարժվում։ Մի անհայտ ուժ կաշկանդել էր նրա կամքը։ Հազիվ գլուխ տվեց։

Հաջորդ օրը նա ընկճված հրաժեշտ տվեց յուրայիններին։ Փոքրիկ շրջագայություն։ Մի շաբաթ հազիվ մնար։

Ավագ որդին ուղեկցեց մինչև կայմակամի կառքը։ Ոտքերի և ձեռքերի տկարության պատճառով դժվարանում էր բարձրանալ։ Որդին օգնեց։ Երբ ծերունին մի ոտքը արդեն դրել էր փայտե աստիճանին, կիսաձայն, հանդարտ, այնպես, որ կառապանը չլսի, շշնջաց.

— Ջավակս, էլ ետ չեմ դառնա։

Իրավացի էր։ Մարաշի մյութեսարրֆը ձևականությունների չդիմեց։ Չնայած երաշխավորական ջերմ նամակին, Չաուշն ընդունվեց իբրև հանցավոր, ենթարկվեց խիստ հարցաքննության, ի վերջո նետվեց Օսմանիե բանտը, որպես պետության դավաճան և պետական հեղաշրջման ձգտող դավադրական կազմակերպության անդամ։ Երբ նրանից ոչ մի կերպ որևէ բան չկարողացան իմանալ ո՛չ հայ դավաճանական գաղտնի կազմակերպության, ո՛չ էլ նույնիսկ Զեյթունում ապաստանած դասալիքների մասին, անցան գանահարության։ Արնաթաթախ ոտքերին թունդ քացախ լցրին։ Չաուշն արդեն չէր զգում իր մարմինը։ Աննկարագրելի տանջանքից մի ժամ հետո նա մեռավ։ Բանտի պատուհանի տակ ենիչերիները նվագում էին։ Թմբուկի և զուռնայի ձայնով ուզում էին խլացնել ներսում խոշտանգվողի աղաղակները։

Մարտիրոսված Նազարեթ Չաուշի մահը նույնպես չտվեց ցանկացած արդյունքը։ Նախ, ոչինչ տեղի չունեցավ։ Միայն ժողովրդի վիշտն ու վհատությունը դարձան առավել շոշափելի, առավել ցայտուն։ Մթագնած քաղաքի վրա ծանրացավ նաև մարդկային հոգու խավարը, որը շնչահեղձ էր անում, ինչպես թանձր մշուշը։

Մոտենում էր մարտ ամիսը, երբ, վերջապես, երկու միջադեպ առիթ հանդիսացան, որ կառավարությունն ավելի եռանդուն իրագործի իր մտադրությունը։ Առաջին դեպքը պատուհանից արձակած մի գնդակ էր։ Երբ քաղաքի ենի Դյունյա թաղամասում հերթապահող ոստիկանը անցնում էր տանջամահ արված Չաուշի տան մոտով, պատուհանից կրակեցին նրա վրա և թեթևակի վիրավորեցին։ Օրինական հետաքննություն կատարելու փոխարեն, կայմակամը միայն հայտարարեց, թե Զեյթունում

իր կյանքը սպառնալիքի տակ է, չորս կողմ հեռագրեր ուղարկեց, տեղափոխվեց քաղաքից դուրս գտնվող զորանոցներից մեկը։ Այս վարմունքը նույնպես բխում էր նրա բուն էությունից, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ բուռ խորամանկության և հանգիստ կյանքի երկչոտ ցանկության խառնուրդ։ Միաժամանակ, ի պաշտպանություն մահմեդական բնակչության, «քաղաքազոր» ստեղծեց։ Շուտափույթ կերպով իրար գլխի հավաքվեցին մի խումբ խուլիգաններ, թևերին կանաչ ժապավեններ կապեցին։ Զինվեցին մաուզերյան հրացաններով ճիշտ այնպես, ինչպես դա արվում էր Աբդուլ Համիդի օրով։ Զեյթունում ապրող թուրք օրինավոր քաղաքացիները, որոնք ազնիվ մարդիկ էին, ավելի շուտ զայրացան իրենց շնորհված այդ պաշտպանության դեմ։ Գնացին կայմակամի մոտ, պահանջեցին վերացնել հսկողությունը։ Ապարդյուն։ Իշխանությունն անողոքաբար հոգ էր տանում նրանց ապահովության մասին։ «Քաղաքազորը», վերջապես, առիթ տվեց իսկական միջադեպի, որին և վճռական ընթացք տրվեց։

Քաղաքի էսքի Բոսթոն կոչվող փոքրիկ զբոսայգում կեսօրից հետո հանգստանում էին հայ կանայք և աղջիկները։ Հինավուրց նոճիների հովանու տակ, սքանչելի աղբյուրի շուրջը երկու նստարան կար դրված։ Աղբյուրի մոտ խաղում էին երեխաները։ Կանայք նստարաններին նըստած՝ զրուցում էին, գուլպա գործում։ Օշարակ վաճառողն իր սայլակն էր ման ածում։

Հանկարծ այգի ներխուժեցին «քաղաքազորի» ամենալկտի անդամները։ Փնչալով վրա պրծան հայուհիներին, սկսեցին խեղդել, պատառոտել հագուստները։ Այդ մարդկանց մեջ որքան մեծ էր «անիծյալ ցեղի» տղամարդկանց սպանելու փափագը, նույնքան մեծ էր նրանց կանանց՝ հյութալի շուրթերով և օտար աչքերով այդ քնքշագեղ արարածներին տիրանալու խենթությունը։ Օդը լցվեց աղիողորմ աղաղակներով և մանկական ճիչերով։ Բայց իսկույն հասավ օգնությունը։ Հայ տղամարդկանց ահագին մի խումբ, որը վատ բան նախազգալով, գաղտնի հետևել էր «քաղաքազորին», առաջ նետվեց, սկսեց դրանց ջարդուփշուր անել բռունցքներով, կաշվե գոտիներով, մահակներով և, իհարկե, սեփական անձը վտանգի ենթարկելով, խլեց բոլոր հրացաններն ու սվիները։

Բացահայտ ապստամբություն պետական իշխանության դեմ։ Արդեն անհերքելի իրողություն էր օժանդակ ոստիկանության զինաթափումը խռովարարների ձեռքով։ Նույն օրվա երեկոյան կայմակամը հրապարակեց ձերբակալվողների ցուցակը, ուր գրանցված էին հատկապես այն բնակիչները, որոնց անունները, իբր թե, փավառի իշխանությանը հայտնել էր համայնքի խորհուրդը։ Կատաղած ու դառնացած տղամարդիկ մտահոգ հավաքվեցին, երդում ընդունեցին և իրամատավորվեցին մի հին թեքքեում՝ քաղաքից փոքր-ինչ դեպի արևելք ընկած մի ամայի վանքում, որտեղ իջևանում էին դերվիշները և ուխտագնացները։ Լուրն ստանալուն պես դասալիքների մի մասն Ալա Քայայից ու մոտակա լեռներից ցած իջավ, միացավ փախստականներին։ Փոքրիկ ամրոցում ընդամենը հարյուր մարդ հավաքվեց։

Մարաշի մյութեսարրիֆը և Ստամբուլի կառավարության պարագլուխները հասան իրենց նպատակին։ Մանր ընդվզումների ժամանակն անցել էր, և լիակատար ըմբոստությունն իր բուն ծաղկումն էր ապրում։ Զեզոք և դաշնակից հյուպատոսներն այլևս չէին կարող աչք փակել հայկական դավադրությունների առաջ։ Երկու օր չանցած ռազմական օգնություն ուղարկվեց, առայժմ երկու հետևակ վաշտ։ Հրամանատար կապիտանը՝ յուզբաշին, իսկույն սկսեց պաշարումը։ Բայց նա կամ իսկական հերոս էր, կամ հիմար։ Երբ ձիով զորախմբի առաջն ընկած՝ «անկեղծ սրտով» սլացավ դեպի թեքքե՝ բերդը հանկարծակի, շիշտակի թափով գրավելու, իր վեց զինվորների հետ ցած գլորվեց։ Կրակոցները դիպուկ էին։

Դա, հիրավի, ավելին էր, քան պետք էր։ Յուզբաշու հերոսական մահը փողհարությամբ անհապաղ ազդարարվեց կայսրության բոլոր քաղաքներում։ Իթթիհադը տենդագին գործում էր, որ զայրույթի փոթորիկ բարձրացնի։

Կես շաբաթ չանցած, Զեյթունը դարձավ բանակատեղի։ Չորս գումարտակից և հրետանային երկու մարտկոցից բաղկացած մի զորաբանակ կանչվեց, որ հաշվեհարդար տեսներ մի խումբ խռովարարների ու դասալիքների հետ։ Եվ դա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Զեմալ փաշայի չորրորդ բանակում զգացվում էր յուրաքանչյուր մարդու, յուրաքանչյուր թնդանոթի կարիքը։ Չնայած զորքի պատկառելի քանակին, պաշարված վանքն ուղարկվեց մի բանագնաց, որպեսզի կորստյան դատապարտվածները անձնատուր լինեին։ Տրվեց հնավանդ պատասխանը.

— Եթե մեռնելու ենք, թող մեռնենք կռվելով։

Բայց ամենից անսպասելին այն էր, որ նրանք չպետք է մեռնեին։ Վանքը պաշարող հրետանին հազիվ էր չորս ապարդյուն արկ նետել կիսավեր շենքի վրա, երբ հանկարծ ինչ-որ խորհրդավոր ուժի ազդեցությամբ կրակը դադարեց։

Արդյոք այս անլուր մարդասիրության միակ պատճառը այն սակավաթիվ մահմեդականնե՞րն էին, որ միացել էին պաշարվածներին։ Բայց ինչ էլ լիներ դրա շարժառիթը, ծիծաղելիորեն մեծաթիվ զորքն ավելի քան

Մի ժամ անգործության էր մատնվել դաշտում՝ ընդդեմ մի բուռ դասալիքների և կանացի պատվո պաշտպանների։ Զինվորներն զբաղված էին միայն ճաշ եփելով, ձի շրելով, ծխելով ու թղթախաղով։ Զեյթունի բնակիչներն այդ ճնշող անդորրության մեջ իրավացիորեն ինչ-որ նենգամիտ խարդավանք էին տեսնում։ Սարսափահար լինելով՝ պատվիրակներ ուղարկեցին կայմակամի մոտ, խնդրելով, որ քաջարի զորքն իրենց շուտ ազատի նզովյալ խռովարարներից։ Իրենք դրանց հետ գործ չունեն։ Եթե այդ չարագործներից մեկնումեկը քաղաք փախչի, առանց խնայելու կհանձնեն իշխանությանը։

Կայմակամը տխրությամբ հայտնեց, որ շատ ուշ են խելքի եկել։ Արդեն բոլոր որոշումները կայացնում է ռազմական հրամանատարությունը։ Ինքը երկրորդական դեր է խաղում։ Պատվիրակները թախանձեցին, որ նա դիմի Հալեպ՝ նորին գերազանցություն Ջելալ բեյի միջամտությանը։ Եթե կա մեկը, որ ստեղծված բարդ իրադրությունը կարող է լուծել հօգուտ ընդհանուր բարօրության, ապա դա վալին է՝ այդ արծանավոր և գթասիրտ մարդը։ Կայմակամի լեզուն կապ ընկավ։ Նա միայն կարող է խորհուրդ տալ, որ Ջելալ բեյի անունը գործին չխառնեն։ Մյութեսարրիֆը կապ ունի բոլորովին ուրիշ մարդկանց հետ։ Եվ Հալեպում նստած նորին գերազանցությունն այս տեսակետից հավասար է մեռածի։ Այլ կերպ չի էլ լինի, երբ մարդ չափից ավելի բարի է հայ ժողովրդի հանդեպ։ Ինքը՝ կայմակամն էլ այդ երգին լավ է ծանոթ։

Մարտ ամսի արևաշող առավոտներից մեկն էր, երբ քաղաքում սոսկալի լուր տարածվեց, թե պաշարվածները գիշերով փախել են լեռները, անհետացել։ Երկուսն են սպանվել, բայց նրանց դարձրել են անճանաչելի։ Այն զեյթունցիները, որոնք հրաշքների չէին հավատում, հարցնում էին, թե զզզված շորերով, խեղճ ու կրակ այդ մարդիկ հարյուր հոգով ինչպե՞ս են կարողացել ճեղքել ավելի քան չորս հազար փորձված զինվորների շղթան և անհետ չքանալ։ Հարցնողները գիտեին, թե ինչ է լինելու դրա հետևանքը։ Եվ ինչից սարսափում էին, կատարվեց նույն օրվա կեսօրին։ Զորքի հրամանատարն ու կայմակամը հայտարարեցին, թե հարյուր հոգու փախուստի համար պատասխանատու է քաղաքի ամբողջ բնակչությունը։ Պետությանը դավաճանած զեյթունցիները սատանայական որևէ հնարքով պահակներից խույս են տվել, փախստականներին դուրս բերել խոր քուն մտած զինվորների օղակից։ Ոճրագործության լուրը ստանալուն պես Մարաշից հապճեպ ժամանեց ինքը՝ մեծապատիվ Մյութեսարրիֆը։

Մյունադիրները[1] փողոցից փողոց էին անցնում, քաղաքը լցնում շեփորների ու թմբուկների խուլ որոտով։ Նրանց հետևում էին բազմաթիվ գզիրներ։ Սրանք Զեյթունի ավագներին ու երևելիներին հրավիրում էին «իրադրությանը նվիրված կոնֆերանսին՝ մյութեսարրիֆի և զորապետի մասնակցությամբ»։ Հրավիրվածները, մոտ հիսուն անվանի մարդիկ՝ բժիշկներ, ուսուցիչներ, հոգևորականներ, վաճառականներ ու ձեռնարկատերեր, անհապաղ ներկայացան։ Շատերը նույնիսկ աշխատանքային հագուստներով էին։ Միայն սակավաթիվ հեռատեսներն էին հետները փող վերցրել։ Կոնֆերանսը, ըստ էության, այն էր, որ գռեհիկ ենթասպաները այդ տարեց, հարգարժան մարդկանց քշեցին զորանոցի բակը, սկսեցին հաշվել, ինչպես անասունների։ Վերջապես հայտնեցին, թե բոլորն էլ Մարաշ—Հալեպ ուղղությամբ նույն օրը «գաղթելու» են Միջագետքի Դեյր էս Զոր անապատը։ Մարդիկ լուռ նայեցին իրար։ Ո՛չ նոպա, ո՛չ լաց։ Դեռևս կես ժամ առաջ պատկառանք ներշնչող նրանց փառահեղ դեմքերը մի հարվածով փոխվեցին գունաթափ, կամաղուրկ հողաբեկորների։ Նոր մուխթարը աքսորվողների կողմից ընկճված ձայնով միայն խնդրեց, որ հանուն աստծո ողորմության, իրենց ընտանիքներին Զեյթունում թույլ տրվի ապրել խաղաղ ու ապահով։ Իրենք համբերությամբ կկրեն իրենց ճակատագիրը։ Պատասխանը սարսափելի հեգնական էր։ Ո՛չ, թուրքերը հայերին լավ են ճանաչում, և ոչ ոք մտադիր չէ ընտանիքների պատվավոր հայրերին բաժանել սիրելի հարազատներից։ Անպայման կթույլատրվի յուրայիններին գրավոր տեղեկացնել, որ վաղը, արևածագից երկու ժամ հետո, պարեն-պաշարով ներկայանան ճանապարհ ընկնելու համար։ Բոլորը՝ կանայք, տղաներ, աղջիկներ, մեծ ու փոքր։ Ստամբուլի հրամանով ամբողջ հայ բնակչությունը մինչև վերջին կրծքի երեխան պետք է տարագրվի։ Այդպիսով, Զեյթունը պետք է դադարի գոյություն ունենալուց, կոչվի «Սուլթանիեհ»։ Թող ոչ մի հիշողություն չմնա այն վայրից, որը համարձակվեց գլուխ բարձրացնել օսմանացի հերոս ժողովրդի դեմ։

Հաջորդ օրը, նշանակված ժամին, իրոք, շարժվեց առաջին տխուր թափորը։ Դրանով սկսվեց մեկն այն ամենազարհուրելի ողբերգություններից, որի բովով երբևէ անցել է աշխարհի որևէ ժողովուրդ պատմական որևէ դարաշրջանում։ Պահակազորը հետևում էր աքսորյալներին, և հանկարծ բոլորի համար պարզ դարձավ, որ փախստականներին պաշարող

[1] մյունադիր—մունետիկ

վիթխարի գորամասին օժանդակ առաջադրանք էր տրված՝ փոքր, բայց ստոր։ Ամեն առավոտ կրկնվում էր սրտակեղեք խաղը։ Հիսուն նշանավոր ընտանիքին հաջորդեց հարյուր սակավ նշանավոր ընտանիք։ Որքան իջնում էր աքսորվողների դասակարգային և ունևորության աստիճանը, այնքան ավելանում էր նրանց թիվը։ Անշուշտ, Եվրոպայի ճակատամերձ հսկայական մարզերից, բոլոր քաղաքների ու գյուղերի բնակիչներն էլ այդ ձևով դուրս բերվեցին. որքան էլ ծանր լիներ հայրենապուրկ եղած մարդկանց վիճակը, միևնույն է, դա չէր կարող համեմատվել գեյթունցիների ճակատագրի հետ։ Ռազմական էվակուացիայի ենթարկվողները մահվան գոտուց հեռացվում են իրենց իսկ ապահովության համար։ Նույնիսկ հակառակորդ երկրում նրանց ցույց է տրվում օգնություն և հոգատար վերաբերմունք։ Այս մարդիկ չեն կորցնում այն հույսը, որ տխուր, բայց կարճատև ժամանակից հետո կկարողանան վերադառնալ իրենց տները։ Բայց հայերին չէր սպասում ո՛չ ապահովություն, ո՛չ օգնություն, ո՛չ հույս։ Թշնամու ձեռք չէին ընկել, որ փոխադարձ հիմունքներով հարգեին միջազգային իրավունքը։ Ընկել էին անհամեմատ անսանձ մի թշնամու՝ սեփական պետության ձեռքը։

Բնակարան փոխելն անգամ ոմանց տխրություն է պատճառում։ Մարդ կարծես իր սեփական կյանքի մի բեկորն է այնտեղ թողնում։

Ամեն մարդու համար էլ դժվարին հարց է հարազատ քաղաքը մի ուրիշ քաղաքով, հայրենի երկիրը մի ուրիշ երկրով փոխարինելը։ Նույնիսկ սովորական ոճրագործը դժվարությամբ է հեռանում գերության զնդանից։ Հապա որքան ծանր է լինել իրավազուրկ, քան ոճրագործը, որը դեռևս օգտվում է օրենքի հովանավորությունից։ Տարագրվել օրեր շարունակ, հեռանալ բնակարանից, աշխատանքից, այն ամենից, ինչ ստեղծել ես երկարամյա ջանասիրությամբ։ Դառնալ ատելության առարկա։ Անգեն նետվել ասիական ճանապարհների վրա, հաղարավոր մղոններ անցնել փոշու, քարերի, ճահճուտների միջով։ Դիտակցել, որ այլևս մարդավայել անկողին չես մտնի, երբեք մարդավայել սեղան չես նստի։ Բայց սա դեռ չարյաց փոքրագույնն է։ Ազատազուրկ լինել, ինչպես դատապարտյալ, լինել օրենքից դուրս հայտարարված, որին ամեն մարդ կարող է անպատիժ սպանել։ Լինել չորս կողմից շրջապատված, դանդաղ քարշ եկող թշվառների նախրի մեջ, համակենտրոնացման շրջիկ ճամբարում, որտեղ առանց թույլտվության ոչ ոք իրավունք չունի կատարելու նույնիսկ իր բնական պահանջները։

Ո՞վ կհանդգնի ասել, թե ինքը կարող է չափել այն տառապանքները, որ կրեցին գեյթունցիները առաջին և վերջին քարավանների միջև ընկած

դար թվացող մեկ շաբաթում... Նույնիսկ այնպիսի մի երիտասարդ մարդ, ինչպիսին պատվելի Արամ Թովմասյանն էր և որը Զեյթունում ծնված չլինելով, ավելի լավ հեռանկար ուներ, յոթ օրվա ընթացքում դարձել էր գոնթե ուրվական։

Պատվելի Արամը (նրան միայն անունով էին դիմում) արդեն մի տարուց ավելի ապրում էր Զեյթունում, որպես բողոքական համայնքի հովիվ և մեծ որբանոցի տնօրեն։ Եթե մոտ երեսունամյա երիտասարդին այդպիսի գործ էր վստահված, ուրեմն՝ Մարաշի ամերիկյան միսիոներներն Արամին համարում էին իրենց լավագույն սաներից մեկը և նրա հետ մեծ հույսեր էին կապում։ Թոշակ նշանակելով՝ Արամին երեք տարով ուղարկել էին Ժնև, որպեսզի երիտասարդն այնտեղ լրացնի իր կրթության պակասը։ Դրա շնորհիվ նա սահուն խոսում էր ֆրանսերեն, նույնքան լավ՝ գերմաներեն և անգլերեն։ Որբանոցը ամերիկյան միսիոներ հայրերի հիսնամյա կուլտուրական գործունեության ամենահաճելի առհավատչյան էր։ Ընդարձակ, լուսավոր սրահներում ապաստան էին գտել ավելի քան հարյուր երեխա։ Որբանոցին կից դպրոց կար, որտեղ սովորում էին նաև քաղաքի պատանիները։ Ձեռնարկությունը որոշ չափով զբաղվում էր նաև գյուղատնտեսությամբ։ Այնպես, որ այծի կաթի, բանջարեղենի և այլ կարգի սննդամթերքների պաշարն իրենք էին ապահովում։ Որբանոցի վարչությունը պահանջում էր ոչ միայն ուսումնական առաջադիմություն, այլև գործնական ձեռներեցություն։ Պատվելի Արամն աշխատում էր խանդավառությամբ, քանի որ ամեն երիտասարդ մարդու էլ շոյում է ինքնիշխանությունը։ Նա մի սքանչելի և արգասավոր տարի անցկացրեց, կազմեց նորանոր ծրագրեր։ Անցյալ տարի գարնանը, իր բարձր պաշտոնին անցնելուց ոչ շատ առաջ, ամուսնացավ։ Օվսաննան՝ նրա անդրանիկ սերը, մարաշցի աղջիկ էր, բողոքական քահանայի դուստր, տեղական դպրոցի առաջին շրջանավարտներից մեկը։ Հայուհիները սովորաբար նրբակազմ և միջահասակ են, Օվսաննան բարձրահասակ էր, մարմնեղ։ Դանդաղաշարժ էր, սակավախոս, հաճախ սառնարյուն մարդու տպավորություն էր թողնում։ Բայց Իսկուհին մի անգամ եղբոր մոտ պնդել էր, թե Օվսաննան այնքան է հեզաբարո, որ դա երբեմն մեղմացնում է նրա կամակորությունն ու հիշաչարությունը։ Բայց կատակով տրված այս բնորոշումն առանձնապես դիպուկ չէր. ո՞ր կամակոր կինն իր տան մեջ կհանդուրժի տալի ներկայությունը։ Բայց թե տասնիններամյա Իսկուհու բանն ուրիշ էր։ Արամը երկրպագում էր իր դեռատի քրոջը։ Մոր մահից հետո, երբ աղջիկն արդեն ինը տարեկան էր, եղբայրը նրան բերեց Յողոնօլուքից, քնդունել տվեց Մարաշի միսիոնե-

բանակ դպրոցը։ Այնուհետև ուղարկեց Լոզան, որտեղ Իսկուհին մի տարի սովորեց գիշերթիկում։ Արամը հոգում էր փոքրիկ քրոջ բարձրաշխարհիկ փառասիրության ծախսերը, իր չքավորությունը ուրիշների մոտ խելացիորեն պատճառաբանելով ինչ-որ մտացածին զրկանքներով։ Նա իր կյանքն առանց Իսկուհու չէր կարող պատկերացնել։ Օվսաննան այդ բանը գիտեր և հաշտվել էր երեքով ապրելու հետ։ Երիտասարդ աղջիկն ստանձնեց որբանոցի ուսուցչուհու օգնականի պաշտոն, ֆրանսերեն էր դասավանդում։ Եվ զարմանալի չէր, որ նա վայելում էր ոչ միայն եղբոր, այլև բոլորի սերը։ Հիասքանչ աչքերից բացի, նա արտասովոր գեղեցիկ բերան ուներ։ Շառագույն շուրթերի վրա թրթռում էր խոնավ, ծիծաղկոտ բիբերի փայլը։ Թվում էր, թե աղջիկը շուրթերով էլ կարող է տեսնել։ Երեքով էին ապրում, և նրանց կյանքը գողտրիկ էր, ոչ սովորական։

Պատվելու տունը որբանոցն էր։ Օվսաննայի ձեռքի տակ իսկույն փարատվեց տան ամայությունը։ Տանտիրուհին գեղարվեստական ճաշակ ուներ, գեղեցիկն զգալու լավ հոտառություն։ Շրջում էր քաղաքով մեկ, գյուղից գյուղ անցում, տեղացի կանանց հետ սակարկելով առնում հին, շքեղ գործվածքեղեն, փայտե քանդակներ, տնային զանազան զարդեր և դրանցով կենդանություն տալիս իրենց սենյակներին։ Այդ գործունեությունը հաճախ նրանից շաբաթներ էր խլում։

Բայց Իսկուհին ավելի շատ հակված էր դեպի գրքերը։

Արամը, Օվսաննան և Իսկուհին ապրում էին բոլորովին մեկուսացած։ Որբանոցն ու դպրոցն այնքան ինքամփոփ աշխարհներ էին, որ այս երեք դեռափթիթ երիտասարդները հազիվ էին զգում Զեյթունի վրա կախված ամպրոպի ճնշող մթնոլորտը։ Իր կիրակնօրյա ժամասացությունների ժամանակ պատվելին մինչև մարտի կեսերն էլ խրախուսիչ կենսուրախություն էր քարոզում, մի բան, որ ավելի շատ վերաբերում էր անձնական խաղաղ երջանկությանը, քան կառավարության դիտավորությունների սուր դատապարտմանը։

Հարվածն այնքան ահավոր էր, որ նա ցնցվեց։ Իր գործը կորած էր համարում։ Բայց դեռ փայփայում էր այն սնոտի հույսը, թե կառավարությունը չի հանդգնի որբանոցը փակել։ Նա արագ սթափվեց։ Տարագրման առաջին իսկ օրը Օվսաննան մի խոսք ասաց, որից նա կրկին գոտեպնդվեց։ Քրիստոնյա հոգևորականության դերը կարևոր է հենց այսպիսի փորձության օրերին։ Ահա՛ թե ինչ ասաց պատվելու դուստրը։ Կշռադատելով այս հիշեցումը, Արամ Թովմասյանը գերմարդկայնորեն լարեց իր ավյունը։ Ոչ միայն գիշեր-ցերեկ բաց էր պահում իր եկեղեցին, որ տարագրվող առանձին խմբերի ուժ ներշնչեր շարշարանաց ուղին անցնելու համար, այլև տնից տուն էր գնում, իր հոգևոր զավակների մոտ, ընտանիքից ընտանիք, այցելում որբացողներին, օգնում իր ունեցած դրամական բոլոր միջոցներով, թափորների մեջ կարգ ու կանոն մտցնում, օգնության կոչեր ուղարկում տարագրման ճանապարհին ընկած միսիոներական բոլոր միաբանություններին, աղերսագրերով դիմում թուրք պաշտոնյաներին, որոնց բարեսրտության հետ հույս էր կապում, դիմումներ ու վկայագրեր էր շարադրում, փորձում էր ոմանց տարագրումը հետաձգել, սակարկում էր թուրք ջորեպանների հետ, մի խոսքով՝ անում էր այն ամենը, ինչ հնարավոր էր այդ զարհուրելի պայմաններում։ Իսկ երբ ոչինչ անել չէր հաջողվում, երբ չէր կարողանում սփոփել Աստվածաշնչում նկարագրված տառապանքներով, լուռ նստում էր վշտից քրացած մարդկանց կողքին, փակում էր աչքերը, մատները խաչում և հոգու խորքում աղաղակում առ Քրիստոս։

Քաղաքն օրեցօր ամայանում էր, մինչդեռ Մարաշի ճանապարհը լեփ-լեցուն էր մարդկային երկար, օձագալար թափորով, որը կարծես առաջ չէր շարժվում։ Միջնաբերդի վերևից մարդ կարող էր պարզ տեսնել, թե ինչպես է բազմությունը լեռն ի վեր ձգվում, և նրան ոչինչ այնպես խոր զարհուրանք չէր պատճառի, ինչպես այդ մահվան թափորի սողացող լռությունը, որը զինված դահիճների գոռոզությունից ու ծիծաղից դառնում էր առավել զարհուրելի։

Զեյթունի մեռած փողոցները երբեմն կենդանություն էին ստանում, երբ հայտնվում էին արտաքսման մասնակից դատարկապորտները, պատահական կողոպտիչներն ու գոռոզությունը արհեստ դարձրած ստահակները, քաղաքի տականքն ու շրջակա գյուղերի ավարամոլ բնակիչները։ Գրավում էին լքված տները կամ առնվազն տնտղում։ Շուտով սկսվեց աշխույժ հռուզեռ։ Հայտնվեցին սայլեր, կառքեր, ծանրաքաշ գրաստներ։ Հանգիստ բեռնում էին գորգեր, հագուստեղեն, սպիտակեղենի հակեր, մահճակալներ, կահ-կարասի, հայելիներ։ Կարծես տեղի էր ունենում կազմակերպված վերաբնակություն։ Իշխանությունը չէր արգելում այդ արարքը։ Կարծես դրա համար ներքուստ նույնիսկ խրախուսում էր թուրք խաժամուժին, միայն թե հայերի վտարումը սուսուփուս անցնի։ Գրեթե բարբարոսական հեքիաթ է հիշեցնում այն, որ «Սուլթանիեհում» պետք է ամեն արհեստից վեցական հոգի մնային, այլապես ամենօրյա կյանքը կմնար բարձիթողի վիճակում։ Այս բախտավորներին ընտրում էր ոչ թե իշխանությունը, այլ համայնքը։ Դա պատժի հնարամիտ խստացման ձև էր, քանի որ մարդկանց փորձության էին ենթարկում նոր տառապանքներով։

Արդեն հինգերորդ օրն էր, բայց պատվելի Արամին դեռևս չէին կանչել։ Միայն ոչ տեղացի մահմեդական մի մոլլա հայտնվեց, պահանջեց եկեղեցու բանալիները։ Քաղաքավարությամբ տեղեկացրեց, որ բողոքական եկեղեցին նախքան իրիկնային աղոթքը, վերածվելու է մզկիթի։ Բայց Թովմասյանի սրտում չմեռավ այն հույսը, թե որբանոցը հանգիստ կթողնեն։ Պատվիրեց, որ ոչ ոք տնից դուրս չգնա, թուրքերի աչքին չերևա, ո՛չ ուսուցիչները, ո՛չ էլ երեխաները։ Կարգադրեց նաև, որ ցերեկները պատուհանները փակ պահեն, գիշերները ոչ մի լույս չվառեն, բարձրաձայն չխոսեն։ Կենսուրախ տունը թաղվեց մեռելային լռության մեջ։ Ի՞նչ արած. երբ աստվածն անգամ ծաղրուծանակի առարկա էր դարձել, հարկ չկար ճակատագրին ընդդիմանալու։

Հետևյալ, վեցերորդ օրը Արամի մոտ եկավ մեկն այն գրիրներից, որոնք հոգևոր հրեշտակների պես, սարսափ տարածելով, քաղաքի մի ծայրից մյուսն էին սլանում։ Պահանջեց, որ պատվելին անհապաղ ներկայանա քաղաքի պարետին։

Արամը ներկայացավ հոգևորականի հագուստով։ Նրա աղոթքը տեղ էր հասել. երկյուղի կամ հուզմունքի ոչ մի նշույլ չնվաստացրեց հային։ Սպային մոտեցավ հաստատաքայլ, հանդարտ։ Բայց, ցավոք սրտի, դա տվյալ դեպքում հարմար կեցվածք չէր։ Բինբաշին[1] սիրում էր, երբ իր առաջ լալկան արարածներ էին կանգնում։ Նման դեպքերում պատրաստ էր աշքակապություն անել, բարեսրտություն խաղալ, լավ մարդ ձևանալ։ Արամի վճռականությունը նրա մեջ խեղդեց ամեն մի բարյացակամություն, որ բխում էր սեփական մեծության և ողորմություն աղերսող որդի միջև եղած հակադրությունից.

— Դուք բողոքական հովիվ Արամ Թովմասյա՞նն եք՝ ծնված Յողոնօլուքում, Ալեքսանդրեթի մոտ։

Մայորը ձերբակալման հրամանն աղմուկով ցած դրեց, ապա վրա պրծավ իր զոհին.

— Վաղը վերջին քարավանի հետ ճանապարհ կընկնեք՝ Մարաշ—Հալեպ ուղղությամբ։ Հասկացա՞ք։

— Ես պատրաստ եմ։

— Ձեմ հարցնում՝ պատրաստ՞ եք, թե՞ ոչ... Ձեր կինը և ընտանիքի մյուս անդամներն էլ ձեզ հետ են գալու։ Իրավունք չունեք ավելի շատ

[1] բինբաշի—հազարապետ, մայոր

իրեր վերցնելու, քան ինքներդ կարող եք տանել։ Հնարավորության սահմաններում կստանաք օրապահիկ՝ հարյուրական դիրեմ[1] հաց։ Մնացածը կարող եք ապատ գնել։ Շարասյունից ինքնագլուխ կերպով դուրս գալու համար քարավանապետի կողմից պատիժ է սահմանված։ Կրկնվելու դեպքում՝ գնդակահարություն։ Կառքից կամ սայլից օգտվելն արգելված է։

— Կինս երեխայի է սպասում,— կամացուկ շշնջաց Արամը։

Այս խոստովանության վրա մայորը քմծիծաղ տվեց.

— Ժամանակին մտածեիք։

Ապա նորից հայացքը գամեց իր թղթերին.

— Որբանոցի սաները, որպես հայ երեխաներ, անշուշտ, բացառություն չեն կազմում և ենթակա են արտաքսման։ Պետք է ճիշտ ժամին կազմ ու պատրաստ լինեք՝ ձեր ձեռնարկության ամբողջ անձակազմով հանդերձ։

Պատվելի Արամը կես քայլ ետ գնաց.

— Կարելի՞ է հարցնել, թե այդ հարյուր անմեղ երեխաների մասին հոգ տարվելո՞ւ է։ Շատերը տասը տարեկան էլ չկան և երբեք ոտքով երկար ճանապարհ չեն անցել։ Երեխաներին կաթ է հարկավոր։

— Պաստոր, դուք ոչ մի հարց չպետք է տաք,— գոռաց բինբաշին,— այլ պետք է կատարեք իմ հրամանները։ Արդեն մի շաբաթ է, ինչ դուք գտնվում եք ճակատային գոտում։

Եթե Թովմասյանն այս ոռնոցից կուչ գար, ահից լեղապատառ լիներ, թերևս բինբաշին իր ինքագոհության բարձունքից թույլ տար, որ նա այծերը տաներ իրենց հետ։ Բայց պատվելին հանդարտ համառությամբ շարունակեց.

— Ուզում եմ քարավանի հետ տանել մեր տան այծերի հոտը, որ երեխաները խմելու կաթ ունենան։

— Պաստոր, փակե՛ք ձեր հանդուգն բերանը և հնազանդվեք։

— Էֆենդի, ես հետագայում ձեզանից պատասխան կպահանջեմ որբանոցի ճակատագրի համար։ Որբանոցն ամերիկյան դեսպանի հովանավորության տակ գտնվող քաղաքացիների անձեռնմխելի սեփականությունն է։

Բինբաշին սկզբում ոչ մի պատասխան չէր գտնում։ Սպառնալիքը հավանաբար ազդեց։ Այս կարգի աստվածների լեզուն կարճանում է,

[1] գիրեմ-կամ գիրեհեմ—օքայի (ծանրության թուրքական չափ=1 կգ 282 գ) մեկ չորհարյուրերորդական մասը

երբ հայտնվում են գերագույն աստվածները։ Բինբաշին երկարատև, իր համար ամոթալի լռությունից հետո դողահար ձայնով ասաց.

— Գիտե՞ք, որ ես կարող եմ ձեզ միջատի պես ճզմել։ Փչեմ՝ կդադարեք գոյություն ունենալուց։

— Այդ բանում ես ձեզ չեմ խանգարի,— պատասխանեց Արամը։ Բինբաշու խոսքերն ընդունեց լրջորեն, քանի որ այդ պահին նրան համակեց մեռնելու մի անսահման ցանկություն։

Եթե Արամին, Օվսաննային, Իսկուհուն հարցնեին, թե նրանց համար արտաքսման ո՞ր պահն էր առավել սոսկալի, ապա երեքն էլ կպատասխանեին.

— Այն պահը, երբ քարավանը դեռ չէր շարժվել։

Դա մի պահ էր, երբ իրական թշվառության սրությունը մարդիկ միայն կիսով չափ էին գիտակցում։ Դա նման էր տանջալից մղձավանջի, սարսափն արյամբ ընկալելու հնազանդ զգացմանը, որը երևի գալիս է այն հեռավոր դարերից, երբ մարդը դեռևս չէր հասել նստակյաց կյանքի, չէր վավերացրել իր իրավունքները։ Իրար գլխի կիտված հազարավոր մարդկանց պատվազուրկ, անօգնական զանգվածն այժմ զգում էր ոչ միայն իր ամբողջ ունեցածի վերջնական կորուստը, այլև իր կյանքին սպառնացող մոտալուտ արհավիրքը։ Նա իրեն զգում էր մի ամբողջություն, մի ժողովուրդ, որը հազարամյակներ շարունակ ջանք է թափել հանուն վերելքի, հանուն քաղաքակրթության նվաճումների։

Պատվելի Արամն ու երկու կանայք համակված էին այս համազգային վհատությամբ, որի խորությունն անչափելի էր։

Ամպամած օր էր։ Զեյթունի լեռները ցածրասահ ամպերով շղարշել էին իրենց հարազատ գագաթները։ Առաջ շարժվելու համար դա ավելի էր բարենպաստ, քան արևոտ եղանակը։ Բայց օրվա մռայլությունից ավելի էին կորանում աքսորյալների մեջքերը, քան այն բեռներից, որ նրանց թույլատրված էր շալակած տանել։ Առաջին քայլն ինչ-որ մեծ բան էր, սրբազան, բայց և ահավոր, մարդու հոգին սարսռեցնող։ Ընտանիքներն իրար էին սեղմվում։ Ո՛չ խոսք էր լսվում, ո՛չ նույնիսկ մանկական լաց։ Բայց կես ժամ հետո, երբ քաղաքի արվարձանների վերջին տունն էլ տեսողությունից կորավ, մարդիկ իրենց ավելի լավ զգացին։ Որոշ ժամանակ հաղթեց մարդկանց բնածին մանկականությունը, ամեն ինչ մոռացության տվող հուզիչ թեթևամտությունը։ Ինչպես արշալույսի անդրանիկ պահին նախ հնչում է մի հատիկ համեստ դայլայլ, ապա պոռթկում

 Է մի ամբողջ համերգ, այնպես էլ տարագիրների գլխին շուտով տեղաց մանկական սուր ձայների տարափը։ Մայրական սփոփիչ հորդորները։ Տղամարդիկ ձայն էին տալիս սրան-նրան։ Տեղ-տեղ խեղդված ծիծաղ էր լսվում։ Կանանցից և տարեց տղամարդկանցից շատերը գնում էին ավանակներ նստած, որոնք առանց այդ էլ բեռնավորված էին ներքնակներով, վերմակներով ու պարկերով։ Ուղեկցող սպան թույլ էր տվել։ Կարծես իր պատասխանատվությամբ և սեփական կյանքը վտանգի ենթարկելով, նա ուզում էր մեղմացնել արտաքսման հրամանի խստությունը։ Արամը նույնպես իր կնոջ համար մի ավանակ էր ճարել։ Բայց Օվսաննան մեծ մասամբ ոտքով էր գնում, քանի որ վախենում էր ցնցումներից։ Որբանոցի սաները շարժվում էին թափորի պոչից, թեև ավելի խելացի վարված կլինեին, եթե նրանք քայլեին առջևից։ Երեխաներին հետևում էր այծերի հոտը, որ պատվելին առանց տատանվելու և առանց հաշվի առնելու տեղի ունեցած խոսակցությունը, պատվիրել էր քշել-բերել։ Երեխաներն ամբողջ իրողությունը սկզբում համարում էին հաճելի տեղափոխություն, իբրև իսկական արկած։ Իսկուհին, որ նրանց հետ էր քայլում, ամեն կերպ ջանում էր հրահրել այդ զվարթությունը։ Ոչ ոք չէր ասի, թե երեխաները հուզվել կամ անքուն գիշերներ են լուսացրել։ Դեմքերին դրոշմված էին ներկա պահի զվարթությունն ու կենսուրախությունը։ Թեև նրանց մարմինները քնքուշ և թույլ էին թվում, պայմաններին հարմարվելու մանկական զորավոր ուժն ամեն ինչ հաղթահարեց։ Իսկուհին նույնիսկ փորձեց խրախուսել երեխաներին, որ երգեն։ Դա գողտրիկ երգ էր, որ աղջիկը լսել էր դեռևս Յողոնօլուքում։ Մարդիկ երգում էին խաղողի այգիներում և մրգաստաններում աշխատելիս։ Իսկուհին դա իր հետ տարել էր Զեյթունի դպրոցը։

Զախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան։
Դառն ցավերը մարդու վերա չեն մնա երկար,
Որպես հաճախորդ շարվե-շարան կուգան ու կերթան։

Բայց Արամն անմիջապես վրա հասավ, արգելեց երգը։ Երիտասարդ պատվելին երկու-երեք անգամ ավելի շատ էր ճանապարհ անցնում, քան մյուսները։ Հայտնվում էր մերթ առաջին, մերթ վերջին շարքերում, ուստի վար կախած դդմե սրվակով աջ ու ձախ օղի առաջարկում։ Նա ևս աշխատում էր ուրախ երևալ, սրամտում էր, հարթում տարակարծությունները, փորձում էր նույնիսկ ստեղծված պայմաններում գտնել այնպիսի կենսաձև, որ ամեն մեկն իր անելիքն ունենար։ Օրինակ, կոշկակարնե-

րի պարտականությունն էր՝ դադարի պահերին շուտափույթ նորոգել պատառոտված կոշիկները։ Մյուս արհեստավորները նույնպես պարապ չէին նստում։ Չնայած քարավանի մեջ բողոքականները շատ սակավաթիվ էին, Արամը բոլորի համար միակ հոգևորականն էր։ Լուսավորչական և կաթոլիկ եկեղեցու բոլոր հայրերին արդեն տարել էին տարագրության առաջին երկու օրը։ Ուստի և պատվելին ստանձնել էր բոլորի հոգևոր հովվությունը։ Նա կիրառում էր սեփական տակտիկան, որպեսզի աքսորյալներին կարողանար զերծ պահել հուսալքությունից։ Ինքն էլ գիտեր, թե ինչ անտանելի բան է, երբ մարդ ոչ մի նպատակ չունի։

Հուսադրող, ուրախ եղանակով շարունակ կրկնում էր.

— Վաղը կեսօրին կհասնենք Մարաշ։ Այնտեղ ամեն բան կփոխվի։ Հավանաբար երկար կմնանք, մինչև ստանանք տուն վերադառնալու հրամանը։ Եվ մենք կվերադառնանք, անպայման։ Ստմրուլի կառավարությունը եղածի հետ չի կարող հաշտվել։ Վերջ ի վերջո այնտեղ երեսփոխաններ ունենք, ազգային ժողով։ Հյուպատոսներն էլ մեծ աղմուկ կբարձրացնեն։ Երկու-երեք շաբաթում նորից ամեն ինչ բարեհաջող կլինի։ Ամենակարևորն այն է, որ ողջ-առողջ հասնենք Մարաշ։ Ձեզ ուրախ և տոկուն պահեք։

Նման խոսքերը հուսադրում էին նույնիսկ նրանց, ովքեր ի բնե հոռետես էին կամ այնքան շրջահայաց, որ չէին հավատում կենտրոնական իշխանության անմեղությանը։ Պարզվում էին ընկճված դեմքերը։ Հրաշք էր գործում ոչ միայն ապագայի բարենպաստ հեռանկարը, այլև այն որոշակի, հաստատ նպատակը, թե վաղը կլինեն Մարաշում։ Երկարատև դադարի ժամանակ երիտասարդ սպան՝ թուրքական պահակախմբի հրամանատարը, հիանալի մարդ դուրս եկավ։ Երբ զինվորները ճաշեցին, նա պատվելուն տրամադրեց խոհանոցային ազատ սպասքը։ Հյուծվածների և տկարների համար կարելի էր տաք ճաշ պատրաստել։ Տոկուններն էլ իրենց պարենը չխնայեցին, քանի որ վաղը հասնելու էին մեծ քաղաք։ Այս հանգամանքի շնորհիվ հաջորդ ժամերին քայլելը դարձավ ավելի գյուրին և տանելի։ Երեկոյան, երբ բաց դաշտում կանգ առան գիշերելու, և մարդիկ սոսկալի հոգնած ու ամեն ինչի հանդեպ անտարբեր դարձած՝ մեկնվեցին վերմակների տակ, նրանք պետք է գոհություն հայտնեին աստծուն, քանի որ առաջին օրն այդքան մեղմ անցավ։

Բացօթյակից ոչ հեռու կար Թուլիսրք անունով մի գյուղ։ Գիշերը յայլաչիներից (լեռնաբնակներից) մի քանիսը եկան թուրք պահակախմբին այցելելու։ Մարդիկ արժանավայել ձևով նստեցին իրար կողքի, սկսեցին ծանրաբարո ծխել։ Թվում էր, թե լրջորեն զրուցում են։ Առավոտյան, երբ զեյթունցիներն արթնացան և ուղեցին ավանակներն ու այծերը ջրել, տեսան, որ կենդանիներն անհայտացել են։

Դա դժվարին օրվա սկիզբն էր։ Ճանապարհ ընկնելուց երկու ժամ չանցած մահացության դեպք եղավ։ Մի ծերունի հանկարծ փռվեց գետնին։ Թափորը կանգ առավ։ Մինչ այդ բարյացակամ երիտասարդ սպան ձիով վրա հասավ, բարկացած գոչեց.

— Առա՛ջ։

Մի քանիսը փորձեցին ծերունուն բարձրացնել և հետները քարշ տալով տանել։ Բայց շուտով ստիպված եղան հրաժարվել։ Մի զափթիե ոտքով հրեց ընկածին.

— Վե՛ր կաց, վե՛ր կաց, խաբեբա՛։

Բայց երբ ծերունին չոված աչքերով և բաց բերանով մնաց ընկած, զափթիեն դիակը գլորեց ճամփեզրյա փոսի մեջ։ Սպան շտապեցնում էր.

— Կանգնած մի՛ մնացեք։ Արգելված է։ Առա՛ջ, առա՛ջ։

Ո՛չ Արամի թախանձանքը ներգործեց, ո՛չ էլ ծերունու ընտանիքի աղիողորմ լացուկոծը։ Սպան թույլ չտվեց հանգուցյալին հետները տանել կամ տեղնուտեղը թաղել։ Միայն թույլ տվեց ծերունու գլուխը փոքր-ինչ բարձրացնել և կողքերին մեկական խոշոր քար դնել։ Ձեռքերը կրծքին խաչելու ժամանակ չեղավ, քանի որ զափթիեները հանկարծ հայհոյանք տեղալով, մահակներով ու մտրակներով վրա պրծան դանդաղողներին։ Քարավանի մեջ իրարանցում ընկավ։ Մարդիկ դեսուդեն փախան և հանդարտվեցին միայն այն ժամանակ, երբ բավական հեռացել էին հանգուցյալից, որի վերևում արդեն պտտվում էին Տավրոսի գիշակեր թռչունները։

Հազիվ էր մեղմացել առաջին զոհի հետ կապված զարհուրանքը, երբ թափորի առաջը կտրեց ինչ-որ յայլի՝ երկձի տձև մի կառք։ Նեղ ճանապարհով տարագիրները եկել, դեմ էին առել ճահճոտ դաշտերին։ Կառքում նստած էր մոտ քսանհինգամյա, հաստամարմին մի երիտասարդ, որի մատների վրա բազմաթիվ մատանիներ կային։ Պճնազարդ ձեռքն անտարբեր առաջ պարզելով, նա կառքի միջից սպային երկարեց ինչ-որ թուղթ։ Պետական կնիք կրող այդ գրությունը իրավունք էր տալիս մեկ կամ մի քանի հայուհի ընտրել իր տանն աշխատելու նպատակով։ Քանի որ կառքը որբանոցի սաների արանքումն էր, նրա հոգնած, բարյացակամ հայացքը կանգ առավ Իսկուհու վրա։ Ձեռնափայտը բարձրացրեց և ժպտադեմ ցույց տվեց ուսուցչուհու կողմը։ Պատկառելի մարդը ավելի շատ կանանց փրկագործի տպավորություն

էր թողնում, քան թե կնագողի։ Նա պատրաստ էր այս տարաբախտ արարածներից մեկին կեղտոտ ճակատագրից ազատելու, տանելու իր մոտ՝ օրինավոր մի ընտանիք, քաղաքային բարեկեցիկ մի տուն։ Բայց որքա՜ն զարմացավ, երբ գեղեցկուհին փոխանակ երջանկությունից իր փրկարարի գիրկը նետվելու, գոչեց «Արա՛մ» և փախավ։ Կառքը հետևեց նրան։ Երևի չօգնեին այն բոլոր պատճառաբանությունները, որոնցով պատվելին փորձում էր քրոջը պաշտպանել։ Եթե վկայակոչեր աղջկա եվրոպական կրթությունը, ապա դա կլիներ ճակատագրական սխալ. բարերարի ցանկությունը ոչ թե կսառչեր, այլ ավելի կբորբոքվեր։ Միայն երիտասարդ սպայի կտրուկ միջամտությունը վերջ տվեց այդ առևտրին։ Սա առանց երկար-բարակ մտածելու պատառոտեց եռանդուն խնամախոսի մեկնած թուղթը։ Տարագիրների ճակատագիրը տնօրինելու իրավունք ունի միայն ինքը, որպես պատասխանատու պարետ։ Եթե էֆենդին իսկույն չհեռանա, ապա տեղնուտեղը կձերբակալվի, կառքն էլ հետը։ Ի հաստատումն իր ասածի, նա մտրակով հարվածեց ձիու գավակին։ Բարի գործով եկած հաստամարմինը վիրավորված շտապեց հեռանալ տեսադաշտից։

Այս միջադեպից շատ չանցած, Իսկուհին հանգստացավ։ Շուտով դա նրան թվաց իրեն չվերաբերող կատակ, այնպես, որ կոմիկական առանձին մանրամասնություններ հիշելով՝ բարձրաձայն քրքջում էր։ Բայց շուտով աղջկա ծիծաղն ընդհատվեց։ Կեսօրից հետո սկսվեց երեխաների տառապանքը։ Զարմանալին այն էր, որ փոքրիկ տարագիրների ոտքերի ցավը երևան եկավ ոչ թե աստիճանաբար, այլ հանկարծ, այն էլ բոլորի մոտ միանգամից։ Ընդհանուր լացուկոծ, ճիչեր, որոնցից կանանց սիրտը կտոր-կտոր էր լինում։ Բայց բարեսիրտ երիտասարդ սպան այս անգամ զիջումներ չարեց։ Մինչև հետևյալ դադարը ոչ մի տեղ չպետք է կանգ առնեին կամ դանդաղեին։ Նրան հրամայված էր մինչև երեկո քարավանը հասցնել Մարաշ։ Եթե ամեն ինչ տնօրինում էր իր հայեցողությամբ, դեմ գնալով տրված կարգադրություններին, ապա այս մի հարցում ուզում էր հրամանը կատարել ճշտորեն։ Փառասիրական այդ ձգտումն ամուր նստած էր նրա գլխում։ Ավելորդ էր մտածել դադարի, վիրավոր ոտքերի ցավը յուղով կամ ամոքիչ այլ միջոցներով հանգստացնելու մասին։

— Ոչ մի բան չի օգնի։ Երբ հասնենք Մարաշ, ամեն ինչի ճարն էլ կտեսնեք։ Առա՛ջ։

Ուրիշ ելք չկար. ստիպված եղան երեխաների մի մասը տանել շալակած։ Այստեղ էլ աչքի ընկավ նրբակազմ Իսկուհին։ Քիչ հետո ինքն էլ գոհ դարձավ ծանր շարագործության։

Եղբայրը բազմիցս զգուշացրել էր, որ նա չգնա քարավանի վերջից, այն էլ որբերից հետո։ Դա թափորի ամենավտանգավոր տեղն էր. աղջկան պարզ տեսնում էին թշնամաբար տրամադրված զինվորները և սարսափելի դեմքերով ամեն տեսակ մարդիկ, որ հետաքրքրությունից վազում-գալիս էին մոտակա գյուղերից։ Բայց Իսկուհին պնդում էր իր ասածը. երեխաներին հսկելն իր պարտականությունն է, մանավանդ, որ նրանք քառորդ ժամը մեկ հոգնում էին, ուժասպառ լինում։ Որբանոցի մյուս ուսուցիչները հաճախ իրենց հեռու էին պահում, և օրիորդ Թովմասյանը մնում էր մեն-մենակ, փորձում առաջ տանել փոքրիկների ողբաձայն բազմությունը։ Երեխաները շարունակ սայթաքում, ծղրտոցով վայր էին ընկնում, հաճախակի կանգնեցնելով քարավանը։ Նման խաթարումներից թափորը մասնատվում էր, առաջին և վերջին շարքերի միջև գոյացնելով բաց տարածություն։ Երբ մի անգամ էլ բազմության արանքում ճեղք բացվեց, Իսկուհին զգաց, որ մեկն իր մեջքը գրկեց։ Աղջիկը ճչաց, փորձեց ազատվել։ Նա տեսավ իր վրա կախված զարհուրելի մի դեմք՝ կեղտոտ ու մազակալած։ Թուրքը սոսկալի փնչում էր, աչքերը ոլորում, գարշահոտություն արձակում։ Իսկուհին մի անգամ էլ ճչաց, ապա սկսեց լուռ դիմադրել թուրքին։ Սրա փսլինքը կաթում էր աղջկա դեմքին, իսկ գարշնագույն թաթերը պատռոտում էին զգեստը, փորձում կառչել մերկ ստինքներից։ Իսկուհին ուժասպառ էր լինում։ Թուրքի կերպարանքը լեռնանում էր, դառնում ինչ-որ դժոխային տեսիլք, շարունակ նորանոր ձևեր ընդունում։ Աղջիկն իր երեսին զգում էր քստմնելի շնչառությունը։

Իսկուհու բախտից երիտասարդ սպան ձին քշեց դեպի երեխաները, որոնք սոսկալի վայնասուն էին բարձրացրել...

Դարշնագույն թաթերն իրենց զոհին տապալեցին...

Հանկարծ թուրքը փորձեց փախչել, բայց սպան սրի բութ կողմով հարվածեց նրա ծոծրակին։

Իսկուհին վեր թռավ։ Լաց լինել չէր կարողանում։ Սկզբում թվաց, թե ձախ ձեռքը լարված դիմադրությունից ընդարմացել է։ Այս բանը մտածելիս նա կարծես երազում լիներ։ Սակայն հանկարծ սոսկալի, այրող ցավ զգաց։ Այդ ցավից աղջիկը կորցրեց խոսելու ունակությունը, եղբորը ոչինչ չկարողացավ բացատրել։ Օվսաննան և Արամը նրան տարան։ Ոչ մի խոսք։ Իսկուհու մոտ ամեն ինչ քարացել էր, բացի ոտքերից, որ աղջկան առաջ էին տանում մանրիկ, արագ քայլերով։ Թե ինչպես կարողացավ հասնել Մարաշ, մնաց առեղծված։

Երբ հեռվում երևաց քաղաքը, Թովմասյանը հուսահատ մոտեցավ

սպային, համարձակվեց հարցնել, թե տարագիրները որքա՞ն են մնալու Մարաշում։ Սպան անկեղծորեն պատասխանեց, թե դա կախված է միայն և միայն մյութեսարիֆից, քանի որ նախորդ քարավանների մեծ մասը դեռևս մնում է քաղաքում։ Թերևս վերադասավորում լինի։ Արամը թախանձագին բարձրացրեց ձեռքերը.

— Դուք տեսնում եք, թե ինչ վիճակում են կինս և քույրս։ Շատ եմ խնդրում. թույլ տվեք այս երեկո գնանք ամերիկյան միսիոներություն։

Երիտասարդը երկար ժամանակ տատանվում էր։ Բայց թշվառ Իսկուհու նկատմամբ այնպիսի կարեկցանք զգաց, որ ի վերջո պաշտոնական զգուշավորությունը տեղի տվեց։ Թամբի վրա գրեց մի անցաթուղթ պատվելի Արամի և երկու կանանց համար։

— Ես իրավունք չունեմ ձեզ ազատ արձակելու։ Եթե ձեզ բռնեն, ինձ պատասխանատվության կենթարկեն։ Հրամանի համաձայն, պետք է ամեն օր ներկայանաք քարավան, զեկուցեք ինձ։

Միսիոներ հայրերն իրենց երեք հովանավորյալներին և սաներին ընդունեցին տխրահույզ սիրով։ Նրանք իրենց կյանքը նվիրաբերել էին հայ քրիստոնյա ժողովրդին։ Եվ ահավասիկ վայր իջավ շանթի այն հարվածը, որ մեծ արհավիրքի փոքր նախագուշակն էր։ Անհապաղ բժիշկ կանչվեց, որը դժբախտաբար շատ էր երիտասարդ և անփորձ։ Իսկուհու ձեռքը շուռումուռ տվեց, քաշքշեց։ Այդ քննության պատճառած դժոխային ցավերից և ճանապարհին կրած զրկանքներից աղջիկն այնպես թուլացավ, որ մի քանի րոպե կորցրեց գիտակցությունը։ Բժիշկը հայտարարեց, թե ինքը ոսկրային ոչ մի ջարդվածք չի հայտնաբերել, բայց թևը բավականաչափ ոլորված է, ճխլված։ Ցավն ուսի մեջ է։ Երկար վիրակապով թևն ամուր կապեց, տվեց ցավերը մեղմացնող դեղ։ Իհարկե, լավ կլիներ, խորհուրդ տվեց նա, եթե թևն առնվազն երեք շաբաթ մնար անշարժ վիճակում։

Այդ գիշեր Իսկուհին ոչ մի վայրկյան աչքը չփակեց։ Մինչդեռ Օվսաննան կանանց համար առանձնացված սենյակում իսկույն քնեց, և դա ճման էր ուշագնացության։ Բայց Արամը միսիոներների հետ սեղանի շուրջը նստած՝ խորհրդակցում էր, թե ինչ է լինելու։ Քվեարկությունն անցավ միաձայն։ Վերապատվելի տեսուչ Է. Ք. Վուդլին հայտնեց վճիռը.

— Ինչ էլ պատահի, դու այլևս չպետք է քարավանի հետ գնաս։ Օվսաննան և Իսկուհին ձեռքից կգնան Հալեպ չհասած։ Դրանից բացի, դու բնավ էլ զեյթունցի չես։ Մենք ենք քեզ այնտեղ առաքել։

Պատվելի Արամի հոգում սկսվեց նրա կյանքի ամենածանր պայքարը խղճի դեմ։

— Ես ինչպե՞ս կարող եմ իմ հոտը լքել նրա ամենաազետյալ ժամին։

Հարցրին, թե տարագիրներից քանիսն են բողոքական։ Արամը պատասխանեց, որ չնչին բացառությամբ, բոլորն էլ պատկանում են հայոց հին եկեղեցուն կամ կաթոլիկներ են։ Բայց դա նրա խիղճը չհանգստացրեց.

— Նման հանգամանքներում իրավունք չունեմ կառչելու դատարկ ձևականություններից։ Նրանց միակ հոգևոր հայրը ես եմ։

Է. Ք. Վուդլին հանգստացրեց.

— Նրանց հետ մեկ ուրիշին կուղարկենք։ Իսկ դուք կմեկնեք ձեր ծննդավայրը։ Այնտեղ կսպասես մինչև քեզ նոր պաշտոնի կարգենք։

— Հապա ի՞նչ կլինի երեխաների վիճակը,— հառաչեց Արամը։

— Երեխաներին չես օգնի, եթե նրանց հետ գնաս մեռնելու։ Զեյթունի որբանոցը մեր հաստատությունն է։ Դու նրանց Մարաշ բերելով, լիովին կատարել ես քո պարտականությունը։ Մնացածը ինքներս կհոգանք։ Դու այլևս անելիք չունես։

Արամի ներսում չէր լռում տառապանքի ձայնը.

— Մի՞թե ես պարտավոր չեմ անելու ավելին, քան իմ պարտականությունն է։

Ծերունի Վուդլին անհանգիստ շարժում արեց, թեև հոգու խորքում սքանչանում էր իր սանով։

— Արամ Թովմասյան, դու համենայն դեպս չես հավատում, որ մենք կկարգավորենք մեր որբանոցի գործը։ Մենք դեռ չենք ասել մեր վերջին խոսքը, թե ինչ է լինելու երեխաների ճակատագիրը։ Բայց դու մեր ճանապարհը փակում ես, սիրելի երիտասարդ։ Իբրև Զեյթունի հոգևոր հայր, դու վարկաբեկված ես։ Հասկացա՞ր։ Լավ, այս առթիվ քեզ պաշտոնապես ազատում եմ որբանոցի տնօրենի պարտականություններից։

Արամն զգում էր, որ եթե ինքը մի քանի րոպե ևս իր ասածը պնդեր, Վուդլին այլևս չէր առարկի իր ինքնակամ որոշմանը, այլ կօրհներ վասն քրիստոնեական զոհաբերության։ Մինչդեռ պատվելին տեղի չտվեց այս հստակ զգացմանը, ոչինչ չասաց, խոնարհվեց միսիոներ հոր բերած փաստարկների առաջ։ Հավատացած էր, որ այս բանն անում է ի սեր Օվսաննայի և Իսկուհու։ Բայց երբ արթնացավ մղձավանջային անհանգիստ քնից, իսկույն գիտակցեց, որ ծանր պարտություն է կրել, մեղանչել իր կոչման դեմ, ցուցաբերել բնավորության ամոթալի թուլություն։

Հաջորդ առավոտյան վերապատվելի Վուդլին հյուպատոսարանի

քարտուղարի ուղեկցությամբ գնաց մյութեսարբֆի մոտ՝ միջնորդելու, որ Թովմասյան ամուսիններին և Իսկուհուն անցագիր տրվի մինչև Յողոնօլուք։ Անցագիրը միայն տասնհինգ օրվա համար էր. այդ ժամանակամիջոցում ճանապարհորդները պետք է տեղ հասած լինեին։

Չնայած Իսկուհու ծանր վիճակին, ստիպված եղան ճանապարհ ընկնել երրորդ օրը։ Կարող էին ընտրել Բաղչեի՝ անատոլիական երկաթուղու ամենամոտ կայարանի միջով անցնող կարճ ճանապարհը։ Խորհուրդ տվեցին կտրականապես հրաժարվել դրանից։ Տավրոսյան երկաթուղին հեղեղված էր Ջեմալ փաշայի չորրորդ բանակի զինվորներով։ Պետք էր զգույշ լինել, խուսափել զինվորականներից, մանավանդ, երբ խոսքը վերաբերում էր հայ կանանց։ Քանի որ պատվելին ամեն ինչում արդեն ապավինել էր միսիոներ հայրերին, ապա ճանապարհի ընտրությունն էլ թողեց նրանց հայեցողությանը։ Երկաթուղային կարճ ուղևորության փոխարեն պետք է օրեր շարունակ անցնեին դժվարին, անվերջանալի մի ճանապարհ։ Նախ՝ լեռնաշղթայով դեպի Այնթաբ, ապա՝ Տավրոսի ոլորապտույտ, ամայի ճանապարհով մինչև Հալեպ։ Միսիոներ հայրերը Արամին տրամադրեցին երկձի մի մեծ կառք և լրացուցիչ մի ձի, որ անհրաժեշտության դեպքում կարող էին հեծնել։ Միաժամանակ հեռագրեցին Այնթաբ, իրենց ներկայացուցչին, որպեսզի տեղում պատրաստ պահեին նոր կառք։

Ճանապարհորդները Մարաշի արվարձանն էլ չէին անցել, երբ ձիերի դոփյունը խլացավ փնչոցից և աղեկտուր կանչերից։ Գլուխները կորցրած՝ վազեվազ գալիս էին որբուհի Սաթոն և Գևորգը՝ տան սպասավորը։ Բարեբախտաբար վաղ առավոտ էր, ճանապարհին ոչ ոք չկար, և ոչ ոք վկա չեղավ այս տեսարանին։ Որքան էլ դա անախորժ լիներ, պատվելին ստիպված էր ընդունել անցանկալի համալրումը։ Երկուսն էլ արատավոր էին։ Փոքրիկ, վտիտ Սաթոն դաստիարակության համար պիտանի չէր և համարվում էր Ջեյթունի որբանոցի պատիժը։ Տարին չորս անգամ Սաթոյի շրջմոլիկության նոպան բռնում էր։ Անհետանում էր, երկար ժամանակ կորչում, ապա կիսավայրենի վիճակում, կեղտի մեջ կորած ու ոջլոտած, բոլորովին խեղճացած ետ գալիս։ Նոպան բռնելիս անհնար էր առաջն առնել։ Կորցնում էր կանոնավոր խոսելու ունակությունը, մոռանում այն ամենը, ինչ դաստիարակության շնորհիվ ձեռք էր բերել մեծագույն դժվարությամբ։ Ներսում փակելը նույնպես անօգուտ էր։ Ուրվականի նման դուրս կգար անգամ պատերի միջից։ Եթե չհաջողվեր ծլկել, ապա Սաթոն դիվահար կլիներ, ամբողջ տունը սարսափահար կաներ խենթություններ անելու, վնասներ պատճառելու իր հանճարեղ հնարա-

մտությամբ։ Միայն Իսկուհու ազդեցության շնորհիվ մեղմացավ այս հիվանդությունը, գուցե նույնիսկ վերացվեց։ Բայց դա բնավ էլ արդյունք չէր դաստիարակչական ինչ-որ յուրահատուկ եղանակի։ Իսկուհին մանկավարժությունից քիչ բան էր հասկանում։ Բայց փոքրիկ խենթուկը երիտասարդ աղջկա հետ կապված էր խելահեղ սիրով։ Այս սերը Սաթոյի հիվանդոտ ուղեղում խանդի ծայրահեղ քաոս էր ստեղծել, հասցրել ամենասոսկալի զգացմանը՝ սեփական անձն արհամարհելուն։

Երկար կիտելի մեջ օրորվելով, նա անդադար գոչում էր.

— Քյուչո՞ւք հանում, հոգո՞ւդ մեռնեմ, Սաթոյին մենակ մի՛ թող։

Մարդկության այդ խղճուկ զավակը, այդ հյուծված ոչնչությունը աղերսում էր մահվան սարսափով լի, բայց և հանդուգն աչքերով, որոնց մեջ կար վճռականություն, ինչ-որ անդիմադրելի ուժ։ Իսկուհին և Օվսաննան Սաթոյի նկատմամբ ակամա խորշանք էին զգում, երբեմն՝ նույնիսկ սարսափ։ Այդ աղջիկը մաքուր լվացված և սանրված պահերին էլ ֆիզիկական զզվանք էր պատճառում։ Բայց հիմա, ինչքան էլ ճանապարհորդներին նեղություն պատճառեր, փոքրիկը պետք է տեղավորվեր։ Նստեց կառքի մի անկյունում։ Սպասավորը՝ Գևորգը, տեղավորվեց կառապանի կողքին։ Ադանացի էր։ Երբ դեռ անչափահաս տղա էր, բազմաթիվ «դեպքերից» մեկի ժամանակ մահակով հարվածել էին գլխին։ Դարձել էր անվնաս ապուշ։ Խոսել կարող էր միայն կակազելով։ Սաթոն շրջմոլիկության նոպաներ ուներ, իսկ սա՝ պարելու։ Նման պահերին ոչ ոք նրան չէր կարող սաստել։ Այս հանդիսավոր խենթությունը, որի համար Պարող մականունն էր ստացել, խաղաղ, միանգամայն անվնաս նոպա էր։ Հազվադեպ էր սկսվում, հատկապես հուզմունքից։ Չնայած դրան, Գևորգը խիստ պարտաճանաչ էր վառարան վառելիս, ջուր բերելիս, փայտ կտրելիս, այգում աշխատելիս։ Լուռումունջ, բայց եռանդով երկու մարդու գործ էր կատարում։

«Որքա՜ն երեխաներ և չափահաս մարդիկ կարող էին փրկվել,— անցավ Արամի մտքով,— բայց աստված ինձ մոտ ուղարկեց մի փոքրիկ շարագործի և մի ապուշի»։ Պատվելուն թվում էր, թե դա, իրոք, արժանի հատուցումն է իր այն անտարբեր և պարտազանց վերաբերմունքի, որ ինքը ցույց տվեց տարագիր զեյթունցիներին։ Հակառակի նման էլ բռնեց Սաթոյի անզուսպ ու հրեշավոր աշխուժության նոպան։ Ամբողջ օրն իր սուր ծնկները սեղմում էր Իսկուհուն, ծիծաղում, հավի պես կչկչում, կարծես աշխարհի տոնական ամենասքանչելի ընծան տարագրությունն էր։ Երևի կառք երբեք չէր նստել։ Խոշոր, այլանդակ եղունգներով զինված ձեռքը կողքից դուրս էր հանել և հրճվանքով ակոսում էր զովասուն օդը։

Այս անտեղի կենսուրախությունը ճանապարհորդների մոտ միայն դժգոհություն և զայրույթ էր առաջացնում։ Իսկուհին նրա ծնկները մի կողմ հրեց։ Կառքի կողքից ձիով ընթացող պատվելին սպառնաց, որ եթե Սաթոն հանգիստ չնստի, ապա առանց խնայելու կամ կառքից դուրս կնետի կամ, լավագույն դեպքում, ձեռքերը կկապի։

Մինչև Այնթաբ հոգենցուցիչ ուղևորությունը (երկու գիշեր քնեցին Խանեն կոչվող աղքատիկ գյուղում) անցավ առանց միջադեպի։ Այնթաբում մնացին երեք օր։ Հայ համայնքը Վուդլիի հեռագրի հիման վրա արդեն պատրաստ պահում էր նոր ձիեր։ Մի օր առաջ քաղաք էր մտել Զեյթունի առաջին քարավանը, Այնթաբի հայերը սեփական աչքերով տեսել էին թշվառներին և այժմ մոլորված սպասում էին իրենց վախճանին։ Տներից գրեթե դուրս չէին գալիս։ Զարհուրելի լուրեր էին շրջում։ Ասում էին, թե կառավարությունը Այնթաբի հետ հաշիվը մաքրելու է ավելի կարճ ու կտրուկ. քաղաքի հայկական թաղամասն ուղղակի հրդեհելու է, իսկ բնակիչներին՝ գնդակահարելու։ Բայց և այնպես համայնքը պատվելուն և կանանց ընդունեց դրկաբաց։ Կարծես տեսնելով այդ մազապուրծ զոհերին, իրենք էլ էին տոգորվում փրկության հույսով։ Արամը Սաթոյին ուզեց թողնել քաղաքում։ Բայց աղջիկն այնպես զարհուրած կառչեց Իսլուհուց, որ պատվելին ստիպված եղավ նորից թողնել կառքում իբրև ապաշխարություն՝ իր գործած մեղքերի համար։

Մինչև Հալեպ ամեն ինչ դեռևս բարեհաջող էր, թեև չորս օրում հազիվ կտրեցին անցան Տավրոսի լեռնանցքը, հանգրվաններում ահագին դժվարությամբ կարողացան ձիերը փոխել և երկու գիշեր քնեցին լքված մարագներում։ Բայց մեծ քաղաքն իր հսկայական շուկայով, սալարկված փողոցներով, պետական ու ռազմական բազմաթիվ պալատներով, գեղատեսիլ այգիներով, միսիոներական շքեղ շենքերով, հյուրանոցներով ու իշևանատներով փրկություն թվաց հոգով ու մարմնով ընկճված այս մարդկանց։ Չնայած քաղաքի սահմանի մոտ զափթիները խստորեն ստուգում էին փաստաթղթերը (Սաթոյին և Գևորգին մեծ դժվարությամբ հաջողվեց ներս խցկել իբրև ծառաների), անվրդով անցնող մարդկանց հեղեղը, փողոցի ամբողջ տեսարանը այդ ազատասիրների հոգին լուսավորեց ազատության պատրանքով։

Միսիոներներն ու համայնքի ներկայացուցիչները ճանապարհորդներին բնավ էլ այնպես չընդունեցին, ինչպես Մարաշում և Այնթաբում։ Այստեղ միսիոներներն այնքան էին զբաղված, այնքան էին ծանրաբեռնված, որ բյուրոկրատական վերաբերմունք տեսնելով, Արամը հրաժարվեց նրանց օգնությունից։ Միայն երկու համեստ սենյակ խնդրեց իր և իր ընտանիքի համար։

Հայ համայնքը, ի՛նչ խոսք, շատ հարուստ էր, հետևաբար և քարասիրտ, ավելի երկչոտ, քան Այնթաբի հասարակ բնակիչները։ Այստեղ մարդիկ իրենց ճակատագրի համար ավելի էին անհանգստացած, քանի որ ավելի շատ բան ունեին կորցնելու։ Դրանից բացի, երբ պատվելին խոսեց Զեյթունի մասին, իսկույն նկատեց, որ օրենքից դուրս հայտարարված այդ բնակավայրի անունը տհաճություն է պատճառում մեծ քաղաքում ապրող իր եղբայրներին։ Նրանք չէին ուզում իշխանության աչքի առաջ որևէ գործ ունենալ այն մարդկանց հետ, որոնք անրաստանվում էին իբրև անզուսպ խռովարարներ։ Զեյթունի պատվելու ներկայությունն իրենց եկեղեցում կարող էր դժվար կացություն ստեղծել։

Այժմ ի սեր սեփական փրկության նրանք պետք է միմյանց գերազանցեին պետության հանդեպ մոլեռանդ հավատարմություն ցուցադրելու մեջ, խուսափեին կասկածի տեղիք տվող շփումից։ Պատվելուն դրամական օգնություն առաջարկեցին, ուրիշ ոչինչ անել չէին կարող։ Արամը մերժեց, հայտնելով իր շնորհակալությունը։

Ժամանակ չկար սպասելու, և Թովմասյանն ստիպված ինքը վարձեց մեկն այն բազմաթիվ յայլիներից, որ կանգնած էին մեյդանում։ Սկզբում կառապանը չհամաձայնեց. ճանապարհը ձեռնտու չէր (մինչև ծովեզերք, ապա Անտիոքից այն կողմը)։ Այդ խենթությունից սարսափած՝ նա ձեռքը տարավ դեպի ֆեսը։ Երբ պատվելին գինը բարձրացրեց, գործը մի կերպ գլուխ եկավ։ «Ինշալլահ»[1] և «ալլահ բիլիր»[2] ասելով, թուրքը փողի երկու երրորդը պահանջեց վճարել կանխիկ։ Արամը տվեց. գիտեր, որ բոլոր կառապաններն էլ այդպես էին վարվում։ Ընտրեց Ալեքսանդրեթի ճանապարհը, չնայած սա ուղիղ չէր և երկար շրջագիծ էր կատարում։ Հույս ուներ, որ կարգին գնալու դեպքում մեկուկես օր չանցած կհասնեն Անտիոքի երկաթուղային ճյուղավորումը, իսկ այնտեղից էլ քսանչորս ժամ հետո կլինեն տանը։

Բայց առաջին իսկ օրը, իրիկնագեմին, կառապանն իջավ, խոժոռված աչքի անցկացրեց ձիերի սմբակները, անիվները, սոնակը և հայտարարեց, թե բավական է ինչքան եկան. ձիերի հոգին դուրս է եկել, կառքը չափից դուրս է ծանրաբեռնված, և ինքը իսկի էլ պարտավոր չէ ինչքան հայ կա բոլորին աշխարհով մեկ ման ածել։ Ասաց, թե պետք է

[1] ինշալլահ — փառք աստծո

[2] ալլահ բիլիր — աստված գիտե

խսկույն ետ դառնա, ժամանակին հասնի Թուրոնթ. այնտեղ ազգականներ ունի։ Ոչինչ չօգնեց՝ ո՛չ խնդրանք, ո՛չ գնի բարձրացում։ Թուրքն արժանապատվությամբ հայտնեց, թե իր բաժինն արդեն ստացել է, ավելին չի ուզում։ Բայց կարող է լավություն անել՝ միանգամայն ձրի ետ տանել մինչև Թուրոնթ, որտեղ ուղևորները կարող են հիանալի գիշերել իր ազգականների շքեղ բնակարանում, մարդավայել անկողինների մեջ։ Պատվելին վերցրեց մահակը և կջարդեր անամոթի կողերը, եթե Օվսաննան ձեռքը չբռներ։ Այս բանից հետո Թուրքն իրերը դուրս նետեց, կառքը քշեց՝ հինգ հոգի թողնելով ամայի ու անմարդաբնակ դաշտում։

Մեր ճանապարհորդները մի ամբողջ ժամ ոտքով շարունակեցին առաջ շարժվել։ Հույս ունեին, թե որևէ գյուղ կամ փոխադրական միջոց կգտնեն։ Բայց շրջակայքում ո՛չ գյուղ կար, ո՛չ տուն, ո՛չ մարագ, ո՛չ էլ կառք։ Դարձյալ բաց երկնքի տակ պետք է մնային ամբողջ գիշերը, որն ավելի դանդաղ էր անցնում, քան նախորդը (չէ՞ որ ոք ոք չէր սպասում, թե այդպիսին կլինի գիշերը)։ Լուսնի աղոտ ցոլքի տակ ճանապարհի ոլորանը փայլում էր իբրև յաթաղանի ահավոր շեղբ։ Այդ պատճառով էլ մի կողմ քաշվեցին, պառկեցին չոր գետնին։ Բայց ամենամայր հողն անգամ հայերի հետ վարվեց թշնամաբար։ Վերմակներից խոնավություն էր թափանցում, իսկ գլխավերևում մոծակներն այնպես էին իրենց թունավոր երգը ծոր տալիս, այնպես էին բզզում, որ կարծես ճահճային օդում զանգակներ էին կախված։ Գևորգն ու պատվելին հսկում էին։ Արամը ձեռքից վայր չէր դնում որսորդական հրացանը, որն իբրև զենք ստացել էր Մարաշի միսիոներ հայերից։

Սակայն ձախորդության ամբողջ ծանրությունը զգացվեց վերջին հիսուն ժամում, մինչև թափառականները հասան Յողոնօլուք։ Ուղղակի աստվածային հրաշք էր, որ Օվսաննայի հետ որևէ դժբախտություն չպատահեց կամ Իսկուհին չմնաց ճանապարհին։ Պատվելին սխալ վարվեց։ Փոխանակ մեծ ճանապարհով գնալու, շտապեց թեքվել դեպի հարավ ձգվող ինչ-որ սայլուղի։ Մի քանի մղոն անցնելուց հետո այդ ճանապարհը վերջացավ։ Սկսվեցին տանջալից որոնումներ ու դեգերումներ։ Այս վերջին փշոտ ճանապարհն անցնելիս Գևորգը ցուցաբերեց ֆիզիկական անընկճելի ուժ։ Հերթով շալակում էր կանանց, տանում ահագին տեղ (իրերից վաղուց էին ձեռք քաշել)։ Պատվելին առաջ էր շարժվում և միայն մի մտահոգություն ուներ. գնալ ծովափնյա լեռնաշղթայի վրա կախված ամպերի ուղղությամբ։ Շարունակ սայլուղիներ էին հանդիպում։ Փոքր-ինչ գնալուց հետո դրանք դեմ էին առնում մի առվի, որի վրա,

իբրև կամուրջ, փտած տախտակներ էին գցված։ Տեղ-տեղ օգնում էր որևէ եղասայլ։ Ահագին տեղ նստած գնում էին։ Մարդիկ որևէ վատություն չէին անում։ Այդ սակավաթիվ մահմեդական գյուղացիները օտարականների հետ վարվում էին բարեկամաբար. խմելու ջուր էին տալիս, պանիր։ Եթե որևէ վատ բան պատահեր, հայերը պաշտպանվել չէին կարողանա։ Իրենց ջարդված մարմինների, արյունոտված ոտքերի ցավին անղգա՝ քարշ էին գալիս ասես թմրության, ուժասպառության մշուշում։ Նույնիսկ Արամը, որ ուժեղ տղամարդ էր, հաղիվ էր ոտքի վրա մնում։ Գլխում արդեն քաոս էր տիրում, և նա դեգերում էր հեղհեղուկ տեսիլների աշխարհում։ Երբեմն ինքն իրեն բարձրաձայն ծիծաղում էր։ Ցավերին դիմանալու զարմանալի կամք ցուցաբերեց Սաթոն։ Վերքերի մեջ կորած, կապտած ու սևացած ոտքերով նա վազում էր Իսկուհու ետևից։ Կարծես հենց դրան էր վարժվել, երբ որբանոցից փախչում էր ու թափառում։

Երբ Գաբրիել Բագրատյանը տարագիրներին տեսավ եկեղեցու սանդուղքի վրա, նրանք դեռևս ուժասպառ էին, հոգնած ու ջարդված։ Բայց շուտով թշվառները սթափվեցին, և նրանց ծայրահեղ ընկճվածությունն իսկույն տեղի տվեց բուռն կենսուրախության, որովհետև երիտասարդ էին, հանկարծ տոգորվել էին փրկված լինելու կենարար գիտակցությամբ, պարզ տեսնում էին Արամի հոր, վարդապետի, բժշկի ծերունական դեմքերը, լսում սրտահույզ խոսքեր, պարուրում իրենց ծննդավայրի ջերմությամբ...

Պատվելի Արամ Թովմասյանը շարունակ պնդում էր.

— Հին ջարդերը մոռացեք։ Սա ավելի վատթար, ավելի ողբալի, ավելի անողոք է, քան մյուս բոլոր ջարդերը. ավելի դանդաղ է կատարվում՝ գիշեր-ցերեկ...

Բռունցքները սեղմում էր քունքերին.

— Մտքիցս չեն հեռանում... Միշտ աչքիս առաջ են երեխաները։ Երանի՜ Վուդլին նրանց կարողանար փրկել։

Բժիշկ Ալթունին անխոս զննում էր Իսկուհու թևը։ Տղամարդիկ խոսքի էին բռնվել Արամի հետ։ Տրվում էին միայն գործին վերաբերող հարցեր.

— Ջեյթունում մարդ մնալո՞ւ է։

— Այնթաբի համայքն այս ժամին ճանապարհ չի՞ ընկել։

— Ի՞նչ լուր կա Հալեպից։

— Ի՞նչ լուր կա մյուս վիլայեթներից։

— Հապա մե՞նք...

Բժիշկը, որ Իսկուհու վիրակապը քանդել և այժմ աղջկա կարմրագորշ թևն էր լվանում, ծիծաղեց՝ բացելով անատամ բերանը։

— Էլ ո՞ւր աքսորեն։ Մուսա լեռան ստորոտում աքսորված ենք ու աքսորված։

Դրսից լսվում էր հրապարակում հավաքված բազմության ժխորը։ Ասուլիսն ընդհատեց Տեր-Հայկազունը։ Նա Բագրատյանին հառեց իր վախվորած, բայց և վճռականությամբ լի աչքերը.

— Պարոն Բագրատյան, բարի եղեք մի երկու հանգստացուցիչ խոսք ասել դրսում հավաքվածներին, որ թողնեն տուն գնան։

Ինչո՞ւ Տեր-Հայկազունն այդ խնդրանքով դիմեց հենց Գաբրիելին՝ այդ փարիզցուն, որը գեղջուկների հետ ոչ մի առնչություն չուներ։ Դա ավելի շուտ Քեբուսյանի գործն էր։ Թող նա՛ խոսեր յուրայինների հետ։ Կամ գուցե վարդապետն այդ խնդրանքով որևէ գաղտնի նպատա՞կ էր հետապնդում։ Գաբրիելը վախեցավ, շփոթվեց։ Այնուհանդերձ լսեց Տեր-Հայկազունին, բռնեց Ստեփանի ձեռքը։ Հայերենը, ի՛նչ խոսք, նրա մայրենի լեզուն էր, բայց հասարակությանը դիմելու առաջին րոպեներին (արդեն մոտ հինգ հարյուր հոգի էր հավաքվել) թվաց, թե իր արածն ինքնակոչություն է, անթույլատրելի միջամտություն։ Նա ավելի շատ ընտելացած էր թուրքերեն ռազմական լեզվին։ Բայց կաշկանդված էր միայն առաջին բառերն արտասանելիս։ Այնուհետև հայերենը հնչեց ավելի սահուն. Բագրատյանի ներսում հնադարյան լեզուն սկսեց ծիլեր արձակել, վերընձյուղվել։ Նա յողոնօլուքցիներին և մոտակա գյուղերից եկածներին խնդրեց հանգիստ ցրվել իրենց տները։ Ասաց, որ միայն Զեյթունում են եղել անկարգություններ, և դրանց իսկական պատճառը անպայման ի հայտ կբերվի։ Ամեն հայ գիտե, որ Զեյթունը միշտ էլ եղել է բացառություն։ Մուսա լեռան հայերը բոլորովին այլ շրջանի մարդիկ են, քաղաքականության հետ երբեք որևէ կապ չեն ունեցել, ուստի և նրանց ոչ մի վտանգ չի սպառնում։ Բայց նման դեպքերում կարգն ու կանոնը ավելի են անհրաժեշտ, քան երբևէ։ Ինքը՝ Բագրատյանը, հոգ կտանի, որ այսուհետև բոլոր իրադարձություններին մարդիկ մշտապես իրազեկ լինեն։ Հարկ եղած դեպքում բոլոր համայնքները ժողով կգումարեն, կքննեն ապագայի հարցը։

Գաբրիելը զարմանքով զգում էր, որ խոսում է վստահ, գտնում է համապատասխան բառեր, և այդ բառերը ունկնդիրներին տոգորում են խաղաղեցնող ուժով։ Մեկը նույնիսկ գոչեց.

— Կեցցե՛ Բագրատունյաց տունը։

Միայն ինչ-որ կին մղկտաց.

— Աստվա՛ծ իմ, ի՞նչ է լինելու մեր վերջը։

Ճիշտ է, մարդիկ հրապարակից չհեռացան, բայց բաժանվեցին մանր խմբերի և այլևս չէին շրջապատում եկեղեցին։ Զափթիեներից միայն Ալի Նազիֆն էր պարապ թրև գալիս։ Նրա մյուս երկու ընկերներն արդեն գնացել էին։

Գաբրիելը մոտեցավ ծաղկատար դեմքով թուրքին։ Սա վերջերս դժվարանում էր կողմնորոշվել. էֆենդին իր համար մեծ պարո՞ն է, թե՞ խընզըր քյաֆիր[1], որը նոր իրադրության պայմաններում առհասարակ արժանի չէ անգամ պատասխանի։ Հենց այդ անորոշության պատճառով էլ Բագրատյանը նրան դիմեց չափազանց ամբարտավան եղանակով.

— Դու գիտե՞ս, թե ով եմ ես. քո վերադասն եմ և իմ աստիճանով քեզանից բարձր։ Ես բանակի սպա եմ։

Ալի Նազիֆն զգաստ կեցվածքով ձգվեց։ Բագրատյանը խոստումնալից շարժումով ձեռքը տարավ գրպանը։

— Սպան բախշիշ չի տալիս, բայց ես քեզ կտամ այս երկու մեջիդիեն[2] իբրև կանխավճար մի առաջադրանքի, որ կապ չունի քո ծառայության հետ. դա իմ հանձնարարությունն է։

Ալի Նազիֆն ավելի ձգվեց։ Բագրատյանն ասաց, որ կարող է կանգնել աղատ.

— Վերջերս ձեր զափթիեների մեջ նոր մարդիկ եմ տեսնում։ Համալրո՞ւմ եք ստացել։

— Մենք շատ քիչ ենք, էֆենդի. ծառայությունը դժվար է, ճանապարհներն էլ՝ երկար, հեռու։ Դրա համար էլ հսկիչների թիվն ավելացրել են։

— Դա՞ է իսկական պատճառը։ Լավ, այդ առթիվ ինձ ոչ մի պատասխան պետք չէ։ Բայց ինձ ասա, թե ինչպե՞ս ես ստանում զանազան հրահանգներ, զափթիեների վարձը, ինչպե՞ս ես լուծում մյուս հարցերը։

— Նրիտասարդներից մեկնումեկն ամեն շաբաթ ձիով գնում է Անթաքիե՝ հրահանգ ստանալու։

— Ուրեմն՝ լսիր, Ալի Նազիֆ, թե քո ծառայությանը չվերաբերող ինչ առաջադրանք եմ քեզ տալիս։ Հենց որ քո վերադասից մեր շրջանին վերաբերող որևէ հրաման ստանաս կամ որևէ կարևոր բան իմանաս,

[1] խընզըր քյաֆիր — անհավատ խոզ
[2] մեջիդիե — արծաթադրամ՝ 20 ղուռուշ

անմիջապես կգաս իմ տունը, հասկանո՞ւմ ես։ Նման դեպքում եռապատիկ վարձ կստանաս։

Բագրատյանը նույն արժանապատվությամբ, որով սկսեց խոսակցությունը, հեռացավ, կանգնած թողնելով զափթիեին, և վերադարձավ եկեղեցի։

Ալթունին քննությունն ավարտել էր։ Հեգնանքով ասաց.

— Մարաշում դրանք մեծ հիվանդանոց ունեն, գործիքներ, վիրահատման սրահ, բժշկական գրադարան, և այդ պաշտոնյա ավանակը թևն իր տեղը չի գցել։ Էլ ի՞նչ կարելի է պահանջել ինձնից, երբ ես ատամի ունելուց զատ, ուրիշ օգնական չունեմ։ Թևը պետք է տախտակներով կապել. վիճակը լավ չէ։ Հաճելի սենյակ է պետք, անկողնային երկարատև հանգիստ, խնամք։ Ինքնին հասկանալի է, որ նույնը հարկավոր է նաև քո տիկնոջը, Արամ։

Ներունի վարպետ Թովմասյանն իրեն կորցրեց.

— Տունը որ ծախեցինք, տեղներս նեղացավ։ Ինչպե՞ս յոլա գնանք։

Գաբրիելն անմիջապես հայտնեց, որ ինքն իր տան սենյակներից մեկը կտրամադրի օրիորդ Թովմասյանին, մի սենյակ, որտեղից լեռնային գեղեցիկ տեսարան է բացվում։ Հիվանդին էլ կխնամեն այնպես, ինչպես պատվիրի Ալթունին։ Բժիշկը սրտանց ուրախացավ.

— Գոհ եմ, բարեկամս։ Այս տարաբախտ արարածին՝ Սաթոյին էլ տեղ տուր, որ բոլոր մեծապատիվ հիվանդներս միասին լինեն։ Իմ ծերացած ոսկորները քեզ երախտապարտ կմնան։

Այդպես էլ եղավ։ Արամն ու Օվսաննան գնացին ծերունի Թովմասյանի հետ։ Տարան նաև Գևորգին՝ Պարողին։ Սա կարող էր աշխատել թե՛ տանը, թե՛ արհեստանոցում։

Գաբրիելը Ստեփանին նախապես տուն ուղարկեց նորությունը Ժուլիեթին հայտնելու։ Տղան շնչասպառ ներս ընկավ.

— Մայրի՛կ, մայրի՛կ, թե իմանա՞ս ինչ է եղել։ Մեր տունը հյուրեր են գալու՝ օրիորդ Իսկուհին, զեյթունցի պաստորի քույրը, հետո էլ արյունոտված ոտքերով մի փոքրիկ աղջիկ։

Այս անակնկալից Ժյուլիեթը նկատելիորեն սրտնեղեց։ Առանց հարցնելու Գաբրիելը երբեք մարդ չէր բերում տուն։ Ամուսնու և կնոջ փոխհարաբերության մեջ ինչ-որ անվստահություն էր նկատվում, երբ հյուրեր էին ընդունում, մանավանդ հայ ազգակիցներին։ Բայց երբ տասը րոպեից հետո Գաբրիելը հայտնվեց Իսկուհու, Ալթունի ամուսինների և Սաթոյի հետ, Ժյուլիեթը դարձավ բարության մարմնացում։ Գեղեցիկ տիկիններից շատերի պես նա էլ իսկույն գայթակղվեց կանացի հմայքով,

մանավանդ, երբ դրանով օժտված էր ավելի մատաղ մի էակ։ Խեղճ Իսկուհու տեսքը նրան հուզեց։ Ժուլիեթն աղջկան քույրաբար օգնելու պատրաստակամություն զգաց։ Անհրաժեշտ կարգադրություններն անելուց հետո նա հայտնեց իր հիացմունքը. Իսկուհին յուրահատուկ աղջիկ է։ Հայերի մեջ նման նուրբ դեմքեր հազվադեպ են լինում։ Աղջիկը հաճելի տպավորություն էր գործում նույնիսկ ցնցոտիներով։ Դրանից բացի, հայուհու համար մեծ բան էր այդքան լավ ֆրանսերեն խոսելը։

Սենյակն իսկույն կարգավորվեց։ Ժուլիեթն իր ձեռքով բերեց ինչ որ պետք էր, նույնիսկ իր ժանեկավոր գիշերանոցներից մեկը։ Առանց տատանվելու տվեց նաև օծանելիքներ, չնայած այդ գանձերի կորուստն անփոխարինելի էր, և դրանք ձեռք բերելու խնդիրը թողնվում էր բախտի քմահաճույքին։

Ալթունին մի անգամ էլ աչքի անցկացրեց Իսկուհու թևը, կատաղի հարձակումներ գործելով մեծ քաղաք Մարաշի բժիշկների դեմ։

— Ցավո՞ւմ է, աղջիկս։

Ոչ, Իսկուհին այլևս ցավ չէր զգում, այլ ուներ ինչ-որ անորոշ զգացում (աղջիկը որոնում էր հարմար բառը), անզգայության զգացում։ Ներունի բժիշկը համոզված էր, որ իր գիտությունն այնքան էլ չի օգնի աղջկան։ Բայց քանի որ չէր հասկանում, թե ուրիշ ինչ կարելի է անել, ստիպված եղավ մի մեծ վիրակապ դնել՝ ուսից մինչև վիզը։ Պարզվեց, թե բժշկի ծերունական արևախանձ ու կնճռոտված մատները դեռևս որքա՜ն զորեղ են, որպիսի՜ վստահությամբ են գործում։

Քիչ հետո Իսկուհին արդեն պառկած էր փափուկ անկողնում՝ մաքրված ու խաղաղված։ Ժուլիեթը, որ ամեն բանում օգնել էր նրան, ուզեց գնալ։

— Անուշի՛կս, եթե որևէ բանի կարիք լինի, Ձեր ուզածի պես թափահարեցեք այս մեծ զանգը։ Կուտեք անկողնում պառկած։ Բայց մինչ այդ էլի կանցնեմ։

Իսկուհին բարերարուհու կողմը դարձրեց իր ժողովրդի աչքերը, որոնց մեջ տակավին ցոլանում էր զարհուրելի հեռուն, բայց ո՛չ հաճելի վերադարձը։

— Օ՜, շնորհակալ եմ, տիկի՛ն... Էլ ոչ մի բանի կարիք չունեմ... Շնորհապարտ եմ, տիկի՛ն...

Եվ պատահեց այն, ինչ չէր պատահել ո՛չ Զեյթունում անցկացրած սոսկալի շաբաթվա ընթացքում, ո՛չ էլ տարագրության կամ ուղևորության օրերին... Աչքերից արցունքներ հորդեցին։ Դա ջղաձիգ պոռթկում էր, լաց առանց հեկեկանքի, լաց առանց հովիտների ու լեռների, քարա-

ցածության լիցքաթափում, ինչ-որ հեռավոր ու անսփոփ մի բան, անսրփոփ, ինչպես արևելքի այն տափաստանը, որտեղից նա էր եկել։ Իսկուհին լուռ լալիս էր, շարունակ կրկնում նույն խոսքերը.

— Ներեցե՛ք, տիկի՛ն... Ես չէի ուզում...

Ժուլիեթն ամենայն գորովանքով ծունր կիջներ Իսկուհու առաջ, կհամբուրեր և հրեշտակ կանվաներ, բայց կար մի բան, որ սովորական ամեն մի քնքշանք դարձնում էր անհնարին։ Դա աղջկան դեռևս պարուրող ինքնամոռացումն էր, դեռևս կաշկանդող հուզումը։ Ժուլիեթը չէր կարող տեղի տալ իր ներքին ջերմ մղումին։ Բավականացավ այնքանով, որ ձեռքով թեթևակի շոյեց Իսկուհու մազերը, ապա անխոս կանգնեց գլխավերևում, մինչև արտասվող աղջկա աչքերը փակվեցին, և նա ընկղմվեց ամոքիչ անէության գիրկը։

Մինչ այդ Անթառամ Մայրիկը հոգ էր տարել Սաթոյի մասին, կապել վերքերը։ Այնուհետև փոքրիկին տարան ծառաներին հատկացված սենյակներից մեկը և անկողին դրին։ Բայց հազիվ էր խորը քուն մտել, երբ հանկարծ սկսեց սուր ճիչեր արձակել։ Վերջին օրերին երկյուղի ոչ մի նշան ցույց չէր տվել, իսկ այժմ, երբ կյանքը կրկնվում էր երազում, այնպես էր աղաղակում, կարծես հարյուրավոր խարազաններով ծեծում էին։ Ցնցեցին, որ արթնանա, բայց ոչինչ չէր օգնում։ Չէր սթափվում, շարունակում էր քնել և քիչ անց նորից սկսում էր հեկեկալ, խլացուցիչ ձայնով աղաղակել։ Երբեմն այնքան երկար էր ծղրտում, կարծես ուզում էր կառչել ինչ-որ մեկի փրկարար ձեռքից. «Քյուչյուք հանըմ»։

Երբ հեռավոր սենյակից սարսափելի ձայներ լսվեցին, Ժուլիեթը դուրս եկավ և հանդիպեց իր որդուն, որը հենց այդ պահին ցած էր իջնում տան մեծ սանդուղքով։ Ստեփանի աչքերը վառվում էին։ Նորը, անծանոթը, սպառնալին պատանուն համակել էր փոթորկալից հուզմունքով։ Նոյեմբերին լրացել էր տասներեք տարին։ Սկսվել էր այն հասակը, երբ ամեն մի տղայի հոգին արտակարգ երևույթներից կրակվում է։ Պատուհանից այնպիսի բորբոքուն անձկությամբ էր դիտում ամպրոպն ու տեղատարափ անձրևը, կարծես ուր որ է ինչ-որ արտասովոր բան էր տեղի ունենալու։ Հիմա էլ ականջը ձայնի էր պահել՝ հավանաբար սարսափով։

— Մայրի՛կ, լսո՞ւմ ես, թե ինչպես է ճչում Սաթոն։

«Իսկուհու աչքերն են, նույնն են որդուս և Իսկուհու աչքերը»,— անցավ Ժուլիեթի մտքով, ու մի ակնթարթ նրա գիտակցությանը հասավ կյանքի անդնդախոր թոհուբոհը։ Առաջին անգամ Ստեփանի ճակատագիրը նրան համակեց զարհուրանքով։ Տղային տարավ իր սենյակը, սեղ-

մեց կրծքին, մինչդեռ խաղաղ տունը դեռևս թնդում էր Սաթոյի հեռավոր ճիչերից։

Ուշ երեկոյան Գաբրիելն իր մոտ հրավիրեց Տեր-Հայկազունին, բժիշկ Ալթունուն և դեղագործ Գրիգորին։

Պարոնները հյուրասենյակում առանձնացած՝ աղոտ լույսի տակ ծխամորճ և սիգարիկներ էին ծխում։ Գաբրիելն այս երեք ուսյալ և արժանապատիվ երևելիներից ուզում էր իմանալ, թե սրանք ի՛նչ լույսի տակ են տեսնում իրադրությունը, թե ի՛նչ են մտադիր անելու, եթե աքսորի հրաման տրվի, և ի՛նչ միջոցներով Մուսա լեռան գաղութը կարող է խուսափել մահացու արհավիրքից։ Ամեն ջանք անցավ ապարդյուն։ Տեր-Հայկազունը համառորեն լռում էր։ Բժիշկն ասաց, որ ինքը վաթսունութ տարեկան է, և իրեն հասանելիք երկու-երեք տարին մի կերպ քարշ կտա ինչ էլ լինի։ Եթե իր վախճանը դրանից ավելի վաղաժամ գա, ավելի լավ։ Սիծաղելի է, եթե մարդ մի երկու խեղճ ու կրակ ամսվա համար ահ ու սարսափի մեջ է ընկնում։ Առհասարակ ամբողջ կյանքի համար էլ շարժե անհանգստանալ։ Ամենաէականն այն է, որ մարդիկ հնարավորին չափ երկար ժամանակ զերծ լինեն ահ ու սարսափից։ Դրա մեջ է նա տեսնում իր հիմնական պարտականությունը, որը և բոլոր հանգամանքներում ինքն աշխատում է կատարել։ Մնացածն իրեն չի վերաբերում։

Դեղագործ Գրիգորն անխռով հանգստությամբ նարգիլե էր ծխում, որը հեռատեսորեն բերել էր տնից։ Նա մտասույզ ընտրում էր իրեն դուր եկած շիկացած ածխաբեկորները և մերկ մատներով դրանք դանդաղ հրում դեպի ջրամորճի տակ դրված ծխախոտը։ Կարծես կենդանի օրինակով ուզում էր մյուսներին ցույց տալ, որ ինքը մերկ ձեռքերով կարող է կրակ բռնել առանց այրվելու։ Մանդարինի գլխով և այծի մորուքով այդ շեղակն մարդը կարծես ամենայն հանդիսավորությամբ իր ուշադրությունը կենտրոնացրել էր, որ նարգիլեի թանձր ծխով լիուլի պարուրի իր ներսը, խույս տա այն ամենից, ինչ խախտում է հոգու անխռով անդորրությունը։ Հոգին է, որ իրավունք է շնորհում իրականությանը, ոչ թե ընդհակառակը։ Մարդ ինչո՞ւ պետք է ուզի մի բան կատարել։ Ամեն արարք ինքնին մեղանչում է, բայց միտքը գործում է մշտնջենաբար։ Գրիգորը չգիտեր, թե ինչ էր լինելու։ Նա այն տեսակետին էր, թե կյանքի բոլոր հանգամանքներում մարդ պետք է թողնի, որ գա, իր մոտով անցնի ինչ որ պատահական է, աննշան, և եթե նույնիսկ դա շատ անողոք փոփոխություն է։ Ի վավերացումն այս հիրավի փիլիսոփայական իդեալի, որին հույս

ուներ դեռևս ծառայություն մատուցել իր կյանքի վերջին օրերին, նա հիշատակեց թուրքական մի առած, որը նույն հաջողությամբ կարող էր հնչել ծերունի Ռիֆաաթ Բերեքեթի բերանից.

— Քըսմեթդեն զիադե օլմազ[1]։

Այդ խոսքերով նա ուզում էր կտրվել օրվա հրատապ հարցերից, անցնել առավել վսեմ խնդիրների, որոնց շնորհիվ մարդ վերանում է առօրյա ատելի հոգսերից, խնդիրներ, որոնք նույնքան սառն են, ինչքան աստվածային կյանք բովանդակող գրքի էջերը։ Եվ դեղագործը խուլ ձայնով սկսեց պատմել, թե ինչ տարբերություն կա կրոնական ուսմունքների միջև, թե քրիստոնյաներն ինչպե՞ս են վերաբերվում իսլամին, ո՞վ է Գրիգոր Լուսավորիչը, ի՞նչ բան է Քաղկեդոնի ժողովը, ի՞նչ առավելություն ունի համածին ուսմունքը հռոմեական կաթոլիկ աշխարհայացքի համեմատությամբ*։ Հենց միայն այս բառերն արդեն արբեցնում էին։ Հոգևոր հայրը զարմանում էր, թե ինչ-որ մի դեղագործ որքա՞ն է առաջադիմել աստվածաբանության ասպարեզում։ Տեր-Հայկազունի ականջին հասան մի քանի հոգևոր հայրերի անուններ, թվականներ և կրոնական տարօրինակ կարծիքներ, որոնց մասին ինքը չէր լսել ուսանողական տարիներին։ Չէր էլ կարող լսած լինել, քանի որ դրանք իրենց գոյությամբ պարտական էին Գրիգորի ստեղծագործական հանճարին...

Գաբրիելն այստեղ ինչպե՞ս չհուսահատվեր։ Անքաղաքավարությամբ ոտքի ելավ, սկսեց ծանրաքայլ անցուդարձ անել։ Նրա մեջ նստած եվրոպացին այդ պահին ատում էր այս բոլոր քնածներին և շաղակրատներին, որոնք ցեխոտվելուն պես անպաշտպան նետվում են մահվան գիրկը։ Ձեռքի արհամարհական շարժումով նա ընդհատեց Գրիգորին.

— Պարոնա՛յք, ես կկամենայի ձեր դատաստանին ներկայացնել իմ այսօրվա մտահղացումը։ Դա իմ գլխում ծնվեց, երբ խոսում էի զափթիե Ալի Նազիֆի հետ։ Վերջին հաշվով ես թուրքական բանակի սպա եմ, ճակատային, Բալկանյան վերջին պատերազմին մասնակցելու համար պարգևատրված եմ շքանշաններով։ Ի՞նչ կասեք, եթե հագնեմ համազգեստս և մեկնեմ Հալեպ։ Գեներալ Ջեմալ փաշային տարիներ առաջ մի անգամ ծառայություն եմ մատուցել...

Ծերունի բժիշկը գրեթե չարախնդությամբ վրա բերեց.

— Ջեմալ փաշան վաղուց ի վեր իր շտաբը տեղափոխել է Երուսաղեմ։

Բագրատյանը չնահանջեց.

[1] Ոչինչ չի պատահում առանց նախախնամության։

— Հոգ չէ։ Ջելալ բեյն ավելի կարևոր մարդ է, քան Ջեմալ փաշան։ Ես վալուն չեմ ճանաչում, բայց բոլորս էլ գիտենք, թե ինչ մարդ է, գիտենք, որ իր կարողության չափ ուզում է մեզ օգնել։ Եթե ներկայանամ, հիշեցնեմ, որ Մուսա լեռը աշխարհի ծայրին է, հետևաբար մենք ոչ մի առնչություն չունենք որևէ քաղաքականության հետ, երևի...

Գաբրիելն իր խոսքը թողեց անավարտ, ականջը ձայնի պահեց։ Շուրջն անվրդով լռություն էր։ Միայն երբեմն ջուրն էր կլկլում Գրիգորի նարգիլեի մեջ։ Ահագին ժամանակ անցավ, մինչև Տեր-Հայկազունը մի կողմ դրեց իր ծխամորճը։

— Վալի Ջելալ բեյը,— նա ինչ-որ բան էր որոնում,— իրոք մեր ազգի մեծ բարեկամն է։ Մեզ համար մի քանի անգամ բարի գործ է կատարել։ Նրա իշխանության ոլորտում կարելի էր չվախենալ, թե կարող են վատ բաներ պատահել։ Բայց, դժբախտաբար, այդ բարեկամությունը այնքան էլ վրան չեկավ...

Տեր-Հայկազունն իր երկար թևքի միջից դուրս քաշեց ծալծլված մի լրագիր.

— Այսօր շաբաթ է։ Երեքշաբթվա «Թանինն» է։ Տեղեկությունը մանրը տառերով է տպագրված, այն էլ աչքի չընկնող տեղում։

Նա լրագիրը բռնեց իր աչքերից բավական հեռու.

— «Ինչպես հաղորդում է ներքին գործոց մինիստրությունը, Նորին վսեմություն Ջելալ փաշան՝ Հալեպի վալին, ուղարկված է երկարատև հանգստյան»։ Ահա բոլորը։

ԳԼՈՒԽ ՉԻՆԳԵՐՈՐԴ

Աստվածների վրեժխնդիրը

Հոմերոսի հերոսները մարտնչում էին Սքեյական դարպասի շուրջը, և նրանցից յուրաքանչյուրը երևակայում էր, թե հաղթանակի կամ պարտության պատճառն իր զենքն է։ Մինչդեռ հերոսների գոտեմարտը միայն արտացոլումն էր այն պայքարի, որ նրանց գլխավերևում մղում էին օգնության կանչված աստվածները՝ մարդկանց ճակատագիրը վճռելու համար։ Սակայն աստվածներն անգամ չգիտեն, որ իրենց բախումը ևս միայն արտացոլումն է Ամենաբարձրյալի կրծքի տակ վաղուց արդեն ավարտված պատերազմի, և Տիրոջ սրտից են բխում խաղաղություն թե արհավիրք։

Հենց այն պահին, երբ դոկտոր Յոհաննես Լեփսիուսը կառապանին շտապեցնելով հասավ այգեզարդ Բերայից Ստամբուլ տանող մեծ կամրջին, հնչեց ավտոմատ զանգասարքը, ուղեփակոցն իջավ, կենդանի էակի պես կամուրջն սկսեց դողդողալ, ճռնչալով մեջտեղից կիսվեց, երկաթակուռ զանգվածները դանդաղ վեր բարձրացան, որ ճանապարհ տան Ոսկեղջյուր կոչվող ներքին նավահանգիստը մտնող մի ռազմանավի։

— Սա արդեն սոսկալի բան է,— գերմաներեն բարձրաձայն ասաց Լեփսիուսը և աչքերը փակած՝ հենվեց կառքի հնամաշ բարձին, դրանով իսկ կարծես հրաժարվելով պայքարից։ Բայց հետևյալ ակնթարթին ցած թռավ, կառապանի ձեռքը դրեց մի քանի պիաստր, որ պետք է մինչ այդ վճարած լիներ, սանդուղքն ի վար վազեց դեպի կառամատույց, ուր երկու փոքրիկ մակույկ սպասում էին հաճախորդի։ Վազելիս ոտքի տակ ինչ-որ մրգի կեղև ընկավ, դոկտորը սայթաքեց և քիչ մնաց վայր գլորվեր։ Երկար-բարակ ընտրություն կատարելու հարկ չկար, քանի որ երկու ծեր, սառնարյուն նավավարներն էլ իրենց մակույկներում պառկած՝ երազում էին և կարծես փող վաստակելու մտադրություն չունեին։ Յոհաննես

Լեփսիուսը ցատկեց մակույկներից մեկի մեջ, ձեռքը հուսահատաբար մեկնելով դեպի Ստամբուլ։ Նշանակված ժամին սերասքերիաթ[1] հասնելու համար դեռևս վեց րոպե կար։ Եթե նույնիսկ նավավարն ամբողջ ուժով թիավարեր, ծովաշերտը կտրել-անցնելու համար տասը րոպե էր հարկավոր։ «Նավամատույցի մոտ պետք է որ մի քանի կառք կանգնած լինի»,— մտածում էր անհամբեր դոկտորը։ Այնտեղից ամենաշատը հինգ րոպեում կհասներ մինիստրություն։ Եթե ամեն ինչ բարեհաջող անցներ, ուրեմն՝ տասնհինգից հանած վեց. կհասնի ինը րոպե ուշացումով։ Շատ է անախորժ, բայց և այնպես ներելի է։— Ամեն ինչ, անշուշտ, անհաջող ընթացք է ստանում։ Նավավարը վենետիկցու պես իր մակույկը թիավարելիս անդրդվելի էր. ո՛չ մի գոռգոռոց, ո՛չ մի հորդոր չէր ազդում նրա ծանրաբարո հանդարտության վրա։ Մակույկը պարում էր, բայց առաջ չէր շարժվում։

— Մակընթացություն է, էֆենդի, ծովը ներս է լցվում,— ալևոր թուրքը այսպես բացատրեց ստեղծված վիճակը, որի դեմ ինքն անզոր էր։

Ի լրումն այդ ամենի, ձկնորսական մի նավ անցավ մակույկի քթի մոտով, որը նույնպես երկու րոպեի կորուստ էր։ Լիովին հուսահատված, ինչպես կարող է հուսահատվել միայն ջրի վրա օրորվող մարդը, գերմանացին խորասուզվեց իր մտորումների մեջ։ Այդ մի հատիկ ժամի համար տանջալից ճանապարհ էր անցել, Պոտսդամից եկել Կոստանդնուպոլիս, օրերով անխոնջ գրոհում էր գերմանական դեսպանատան վրա, դիմում ոչ միայն իր երկրի, այլև բոլոր չեզոք պետությունների ներկայացուցիչներին։ Այդ մի հատիկ ժամի համար նա որոնում ու գտնում էր ամեն մի գերմանացու կամ ամերիկացու, որտեղ էլ դրանք իջևանած լինեին, կորզում իր ուղած մանրամասնությունները։ Այդ մի հատիկ ժամի համար նա օրերով նստում էր ամերիկյան Բայբլ-Հաուզ ընկերության գրասենյակում, նեղություն պատճառում միաբանության տարբեր մարդկանց, լրտեսներից խուսափելու նպատակով զանազան զարտուղի ճանապարհներով գնում, գաղտնի սենյակներում հանդիպում էր հայ բարեկամների հետ։ Եվ այդ ամենն անում էր նրա համար, որ պատրաստ լիներ այս մեծ տեսակցությանը։ Իսկ այժմ ճակատագիրը նրան ծաղրում էր. ժամկետը խախտվում էր։ Որքա՞ն չարչարվեց գերմանական ռազմական միսիային պատկանող նավի պատվարժան հրամանատարն այս ընդունելությունը գլուխ բերելու համար։ Երեք անգամ խոստացան և երեք

[1] սերասքերիաթ — ռազմական մինիստրություն

անգամ էլ մերժեցին։ Էնվեր փաշան օսմանյան կայսրության պատերազմի աստվածն է։ Ի՞նչ գլխացավանք կարող է նրան պատճառել Յոհաննես Լեփսիուսի պես աննշան մի հակառակորդ։

Եվ այսպես, տասը րոպե անցավ։ Էնվերը կհրամայի այլևս ներս չթողնել այդ գերմանացի աղմկարարին։ Գործը տանուլ տվեց։ Փույթ չէ։ Հայրենի ժողովուրդը պայքարում է իր կյանքի համար։ Նրա գլխավերևում էլ կանգնած է սև ձիավորը՝ կշեռքը ձեռքին։ Վերջին հաշվով ինքն ի՞նչ գործ ունի հայերի հետ։ Յոհաննես Լեփսիուսն այս շինծու ինքնահանգստացումը եզրափակում է սնամեջ, թեթև հառաչանքով։ Բայց ոչ, նա հայերի հետ առնչություն ունի. եթե իր սիրտը քննի ամենայն անողոքությամբ, ապա կտեսնի, որ ինքը նրանց հետ ավելի շատ է առնչված, քան նույնիսկ իր սեփական ժողովրդի հետ, ինչքան էլ դա մեղսալից և անխոհեմ թվա։ Աբդուլ Համիդի օրերից, 1896 թվականի ջարդերից, երկրի ներսում կատարած առաջին ուղևորությունից ի վեր, իր միսիոներական գործունեության սկզբից ևեթ զգացել է, որ ինքն առաքված է այդ տարաբախտների մոտ։ Նրա՛նք են իր երկրային գործունեության նպատակը։ Նրա աչքի առաջ իսկույն հառնում են դրանցից մի քանիսի դեմքերը։ Եվ բոլորն էլ նայում են իրենց հայկական խոշոր աչքերով։ Այդպիսի աչքեր ունեն միայն այն էակները, որոնք ստիպված են դառնության գավաթը խմել մինչև մրուրը։ Ո՞վ գիտե, գուցե խաչված Հիսուսն էլ այդպիսի աչքեր ուներ։ Երևի հենց դրա համար է Լեփսիուսն այդքան սիրում այդ ժողովրդին։ Տակավին մի ժամ առաջ նա նայում էր պատրիարքի՝ Թուրքիայի հայկական թեմի առաջնորդի աչքերին, ավելի ճիշտ՝ խուսափում էր արժանապատիվ Զավենի հուսահատ վառվող աչքերից։ Ի դեպ, ուշանալու պատճառը պատրիարքի մոտ երկար մնալն էր։ Բոլոր դեպքերում անխոհեմություն էր, երբ ինքը երկրորդ անգամ գնաց Բերա, Թոքաթլյան հյուրանոցը, շորերը փոխելու։ Լավ, իբրև բողոքական քահանա, պատրիարքին պետք է ներկայանար սև, երկար պարեգոտով։ Բայց չէ՞ որ հենց այդ հանգամանքը չէր ուզում ի ցույց հանել Էնվեր փաշայի մոտ. ցանկանում էր այդ ճակատագրական հանդիպմանը ներկայանալ առանց հանդիսավոր ձևականությունների։ Լավ էր ճանաչում Իթթիհաթի մարդկանց՝ իր հակառակորդներին։ Տոնական մոխրագույն կոստյում, անփույթ խոսելաձև, ինքնավստահ կեցվածք, թիկունքում ունեցած զորության ակնարկություն— ահա բախտախաղի սիրահարների հետ վարվելու ճիշտ եղանակը։ Բայց հիմա ամբողջ ձախորդության պատճառը հենց այդ տոնական մոխրագույն կոստյումն էր։

Պատրիարքի մոտ այդքան երկար չպետք է մնար։ Մի քանի րոպե հետո պետք է հրաժեշտ տար։ Բայց, դժբախտաբար, բծախնդիր նպատակասլացությունը երբեք չի եղել Լեփսիուսի ուժը։ Նույնիսկ համիդյան ջարդերից հետո իր ձեռնարկած հայկական օգնության գործը նա գլուխ բերեց ոչ այնքան շրջահայաց քաղաքականությամբ, որքան դոնեդուռ վազվզելով։ Պատահական չէր, որ դեռևս այս կամ այն առիթով տուրք էր տալիս ոտանավորներ գրելու երիտասարդական մոլությանը. «Մեռելապար», «Հավիտենական հրեան», «Ջոն Բուլ» և նման այլ բաներ։ Ինքն էլ գիտեր, որ իր տարերքը հանկարծակի պոռթկումն է, վայրկենական տպավորությունը։ Այսօր էլ չկարողացավ ազատվել իր մեջ նստած դյուրազգաց հոգևորականից։

— Մի ժամ հետո կկանգնեք Էնվերի առաջ,— գերապատիվ Զավենի մեղմ ձայնի մեջ կարելի էր տեսնել անքուն անցկացրած բոլոր գիշերների շղթան, ձայն, որ կարծես մեռնում էր իր ժողովրդի հետ։— Կներկայանաք այդ մարդուն։ Աստվա՜ծ օրհնի Ձեզ։ Սակայն ո՛չ մի բան Ձեզ չի հաջողվի։

— Սրբազա՛ն, ես այդքան վհատված չեմ,— փորձեց սփոփել Լեփսիուսը։ Բայց ձեռքի ցավատանջ, առարկություն չվերցնող մի շարժում ընդհատեց նրա խոսքը.

— Մեզ այսօր հայտնի դարձավ, որ Զեյթունից, Մարաշից, Այնթաբից և այլ վայրերից հետո տարագրության սպառնալիք է կախված նաև արևելյան Անատոլիայի վիլայեթների գլխին։ Բացի Փոքր Ասիայի արևմտյան մասից, մինչև այժմ անվթար են մնում միայն Հալեպը և Ալեքսանդրեթի ծովեզերքը։ Դուք բոլորից էլ լավ գիտեք, որ աքսորը սոսկալի, երկարատև ու տառապալից մահ է։ Զեյթունի բնակիչներից ոչ մեկը կենդանի չի մնա։— Պատրիարքի աչքերը կաշկանդում էին Լեփսիուսին, թույլ չէին տալիս առարկելու։— Անկարելին մի կողմ թողեք և Ձեր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեք հնարավորի վրա։ Ձեմ հավատում, բայց գուցե Ձեզ հաջողվի հետաձգել Հալեպի և ծովեզերքի հայության աքսորը։ Ամեն մի օրը մեզ համար նվաճում է։ Պարծանքով վկայակոչեցեք գերմանական հասարակայնությունը և Ձեր տնօրինության տակ գտնվող թերթերը։ Ամենից առաջ խուսափեցեք մի բանից. բարոյախոսական քարոզից։ Դրանով կարող եք միայն ծիծաղ առաջացնել այդ մարդկանց մոտ։ Քաղաքական իրադրությունից չհեռանաք։ Տնտեսությանը վերաբերող սպառնալիքներ տվեք։ Դա ամենից շատ է ազդում։ Իսկ այժմ ընդունեցեք իմ օրհնանքը, սիրեցյա՛լ զավակ, օրհնո՛ւմ եմ Ձեր ազնիվ առաքելությունը։

Լեփսիուսը խոնարհվեց, և պատրիարքը խաչակնքեց նրա կուրծքը։

Եվ ահա դոկտորը նստած է ծանրաշարժ մակույկի մեջ, Ոսկեղջյուրի ալիքների քմահաճույքին հանձնված, նավավարն անտարբեր ու մտասույզ թիավարում է, իսկ երբ վերջապես ափ են հասնում, անցնում է ավելի քան քսան բոպե։

Առաջին իսկ հայացքից Լեփսիուսը տեսավ, որ նավամատույցում ոչ մի կառք չկա։ Վրդովմունքից քմծիծաղ տվեց, քանի որ իրար հաջորդող այս նուրբ ու նենգավոր խոչընդոտների ետևում ավելին էր թաքնված, քան պատահականությունը։ Չար ոգիներն արգելքներ էին հարուցում. չէ՞ որ ինքը միջամտելու էր հայկական հարցին և կարող էր խափանել դրանց անկաշկանդ սլացքը։

Դոկտորն այլևս կառք չէր որոնում։ Սկսեց վազել, թեև հաղթամարմին էր, ծեր, կարող էր դառնալ բոլորի ուշադրության առարկան։ Բայց դրությունը դրանով չէր փրկվի։ Հին Ստամբուլի հրապարակներն ու նեղ փողոցները լեփ-լեցուն էին տոնականորեն տրամադրված հոծ բազմությամբ։ Դրոշակազարդ տների, խայտաբղետ խանութների և սրճարանների մոտով, իրար բախվելով ու իրար հրհրելով անցնում էին մոլեռանդորեն աղաղակող հազարավոր մարդիկ՝ ֆեսերով ու չալմաներով։ Ի՞նչ էր պատահել։ Արդյոք դաշնակիցներին ե՞տ էին մղել Դարդանելից։ Լեփսիուսը մտաբերեց գիշերները հաճախակի լսվող թնդանոթային հեռավոր որոտը։ Անգլիական նավատորմի հրետանին ցանկանում էր որոտաձայն մուտք գործել Կոստանդնուպոլիս։ Ապա գլխի ընկավ, որ երևի «Երիտասարդ Թուրքերի» հեղափոխության որևէ արժանահիշատակ օր էր տոնվում։ Թերևս նշվում էր այն օրը, երբ կոմիտեն իր ճանապարհը քաղաքական հակառակորդներից մաքրեց սպանության միջոցով՝ վերջնական իշխանություն նվաճելու համար։ Ինչ տոն էլ լիներ, միևնույն է, ամբոխը գոռում էր, մոլեգնում։

Ինչ-որ առևտրատան առաջ վիթխարի բազմություն էր խռնվել։ Երիտասարդները պատրաստակամ մարդկանց ուսերի վրա բարձրանալով՝ մագլցեցին քիվն ի վեր և նույն բոպեին գետին շպրտեցին ֆիրմայի մեծ ցուցանակը։ Լեփսիուսը, որը մխրճվել էր մարդկային կծկի մեջ, դիմեց իր անֆես հարևանին, ուզեց իմանալ տեղի ունեցածի իմաստը։ Ոչ ոք այլևս չի հանդուրժի օտար լեզուներով գրված հայտարարություններ։ Թուրքիան Թուրքերին։ Ճանապարհների, փողոցների և առևտրական տների ցուցանակները պետք է գրված լինեն միայն մի լեզվով՝ Թուրքերեն։ Եվ հարևանը (հավանաբար հույն կամ Մերձավոր արևելքում ծնված եվրոպացի) չարախնդությամբ ծիծաղեց.

— Բայց այս անգամ մեր դաշնակիցներին են ջարդուփշուր անում։ Սա գերմանական առևտրատուն էր։

Կանգ առած տրամվայներն իրար հետևից առաջ շարժվեցին։

Լեփսիուսը մտածեց, որ միևնույն է, թե ինքը ե՞րբ տեղ կհասնի. ամեն ինչ արդեն ջուրն է ընկել։ Բայց և այնպես հավաքեց ուժերը, մարդկանց դեսուդեն հրելով, սկսեց ճանապարհ բացել բազմության միջով։ Կողքի նեղ փողոցն անցնելուց հետո դուրս եկավ հրապարակ։ Ահա սեբասքերիաթի վիթխարի դղյակը։ Վեր էր խոյանում Մահմուդ Երկրորդի աշտարակը։ Պատվելին այլևս չէր շտապում։ Քայլում էր դանդաղ, որ շնչասպառ չմտնի առյուծի որջը։ Անվերջանալի սանդուղքներն ու ճեմասրահներն անցնելուց հետո հալումաշ եղած՝ իր այցետոմսը հանձնեց ռազմական մինիստրության գրասենյակը։ Բարեկիրթ և արտակարգ սիրալիր սպան հայտնեց իր ափսոսանքը. նորին վսեմություն Էնվեր փաշան շատ էր ցավում, որ այլևս ի վիճակի չէր ավելի երկար սպասելու, բայց խնդրեց, որ պարոնը շնորհ բերի Սերալ՝ ներքին գործոց մինիստրություն։

Յոհաննես Լեփսիուսն այժմ պետք է կտրեր անցներ ավելի երկար ճանապարհ։ Բայց այս անգամ կախարդանքը լիովին փարատված էր, չար ոգիները փոխել էին իրենց միտքը, որոշ չափով բարենպաստ պայմաններ ստեղծել։ Դարպասի առաջ սպասում էր հենց նոր ազատված մի կառք։ Կառապանն ընտրեց ամենահարմար ճանապարհը, խուսափեց մարդաշատ փողոցներից, և հեքիաթային արագությամբ մարտիկ-պատվելին՝ միանգամայն հանդարտված և իր համար անըմբռնելի ինքնավստահությամբ տոգորված, հասավ Սերալի խաղաղավետ աշխարհը։ Արդեն ձիերն իրենց սմբակներով թնդացնում էին գետաքարե սալարկը, սլանում դեպի մինիստրության շենքը։

Այստեղ նրան սպասում էին։ Նախքան այցետոմսը ցույց կտար, պաշտոնյան հարցրեց.

— Դոկտոր Լեփսիո՞ւս։

Ի՜նչ բարեխոստում նախանշան։ Դարձյալ սանդուղքներ և մի երկար միջանցք։ Այս անգամ լավ կանխազգացում ուներ։ Հավատով ու թեթևաքայլ առաջ գնաց։ Ներքին գործոց խաղաղ մինիստրությունը՝ Թալիաթ բեյի ամրոցը, հաճելի, երազային տպավորություն էր թողնում։ Գրեթե հեքիաթային պատրանք էին ստեղծում պաշտոնասենյակները, որոնք անդուռ էին, ծածկված միայն ուռուցիկ վարագույրներով։ Այս հանգամանքը ևս հայտնի չէ, թե ինչու, Լեփսիուսին հանգստացրեց, իբրև լավ նախանշան։

Երբ հասան միջանցքի ծայրը, դոկտորին տարան մի առանձին սրահ։ Դա Էնվեր փաշայի գլխավոր պաշտոնատեղին էր ներքին գործոց մինիստրությունում։ Հավանաբար այս երկու սենյակում էլ վճռվելու էր հայ ժողովրդի ճակատագիրը։

Մի ընդարձակ սենյակ, հավանաբար ընդունարան և նիստերի դահլիճ, կողքին՝ առանձնասենյակ, որտեղ դրված էր մի վիթխարի, դատարկ գրասեղան։ Առանձնասենյակի վարագույրը ետ էր քաշված։ Լեփսիուսը գրասեղանի վերևում տեսավ երեք նկար։ Աջ կողմում Նապոլեոնն էր, ձախ կողմում՝ Ֆրիդրիխ Մեծը, իսկ մեջտեղում՝ ինչ-որ թուրք գեներալի մեծադիր լուսանկարը։ Դա երևի հենց ինքն էր, Էնվեր փաշան՝ պատերազմի նոր աստվածը։

Լեփսիուսը նստեց պատուհանի մոտ։ Ակնոցի վրայից դուրս նայեց։ Կարծես հայացքով անդորրություն էր ներծծում ավերակների գեղեցիկ տեսարանից, փլված գմբեթներից և մարմարի բեկորներից, որոնք վարագուրված էին իտալական սոճիներով։ Հեռվում, Բոսֆորի ջրերը ճեղքելով, առաջ էին սուրում խաղալիքներ թվացող շոգենավերը։ Պատվելու կարճատես, դեպի հեռաստանը սևեռված երկնագույն աչքերից, մանկական բերանից, որ կամարաձև սեղմված էր փափուկ, մոխրագույն կարճ մորուքի վերևում, աճապարանքից ու չարչարանքից կարմրած խոժոռ այտերից հառնում էր տառապանքի և մոլեռանդության մի արտահայտություն, մոլեռանդություն, որ անողոք է անգամ սեփական անձի հանդեպ։

Սպասավորը պղնձե մատուցարանով սուրճ բերեց։ Լեփսիուսն իրար հետևից ագահորեն ըմբշխնեց երեք թե չորս գավաթ։ Սուրճը նրան աշխուժացրեց, նյարդերն զգաստացան, երակներից թարմ արյունը բարձրացավ դեպի գլուխը։

Երբ Էնվեր փաշան ներս մտավ, Լեփսիուսը վերջին գավաթն էր դատարկում։

Դեռևս Բեռլինում Յոհաննես Լեփսիուսին նկարագրել էին Էնվեր փաշայի արտաքինը։ Բայց և այնպես հանկարծակիի եկավ, երբ տեսավ, որ թուրք Մարսը՝ աշխարհի կենաց և մահու յոթ թե ինը տնօրեններից մեկը, այդքան փոքրամարմին է, անբարետես։ Իսկույն հասկացավ Նապոլեոնի և Ֆրիդրիխ Մեծի նկարների իմաստը։ Դրանք 1 մետր 60 սանտիմետրանոց հերոսներ էին, հանճարեղ երեսառածներ, որոնք, ի հեճուկս իրենց մարմնական ձախորդության, հաջողություն էին ձեռք բերել։ Լեփսիուսը գրազ կգար, որ Էնվեր փաշան բարձրակրունկ կոշիկներ

է հագնում։ Պարսկական թասակը, որ գլխից երբեք վայր չէր դնում, բոլոր դեպքերում համազգեստին կցված էր բարձր երևալու նպատակով։ Մարշալական (կամ երևակայական) ոսկեծոպ հանդերձանքը վրան հիանալի էր նստում, պիրկ ու զուսպ գրկում իրանը, ստեղծում բարձրահասակ տղամարդու պատրանք, իսկ կրծքից կախված երկշարք փայփլելուն շքանշաններով նա թողնում էր թեթևամիտ պատանու և խիզախ պճնամոլի տպավորություն։ «Դնչու բարոն»,— անցավ Լեփսիուսի մտքով և, չնայած սիրտն սկսեց արագ-արագ բաբախել, հիշեց իր հեռավոր երիտասարդության օրերին լսած կրակոտ վալսի խոսքերը.

Սա էլ, սրանից ավելին անգամ,
Կանեմ, բարեկամ...

Բայց շողշողուն համազգեստի առթիվ մտաբերված երգի բառերը լիակատար հակադրությունն էին երիտասարդ գեներալիսսիմուսի էությանն և արտաքինի։ Էնվեր փաշան շփոթված, նույնիսկ ամոթխած դեմք ուներ, աչքերը թարթում էր աղջկա նման։ Նեղ կոնքեր ուներ, կախ ընկած ուսեր, բայց շարժուձևը նուրբ էր, աշխույժ։ Լեփսիուսն ինքն իր աչքին անճոռնի թվաց։

Թշնամու առաջին գրոհն այն անակնկալ համակրանքն էր, որ նա այցելուների մեջ սովորաբար առաջացնում էր, երբ հայտնվում էր պարոդի նման։ Ողջունելուց հետո փաշան պատվելուն չտարավ կողքի առանձնասենյակը, այլ խնդրեց նստել, նիստերի սեղանի մոտից իսկույն մի աթոռ էլ իր համար բերեց, դրեց պատուհանի առաջ, առանց ուշադրություն դարձնելու լուսավորությանը, որը նրա համար աննպաստ էր։

Յոհաննես Լեփսիուսը զրույցն սկսեց (իր մարտական ծրագրում այդպես էր նախատեսել) այն բանից, որ գեներալին հաղորդեց գերմանացի մի երկրպագուհու ողջույնը։ Փաշան ժպտաց իրեն հատուկ ամոթխածությամբ և արտաքինի հետ լիովին ներդաշնակվող հաճելի տենորով ու լավ գերմաներենով խոստովանեց.

— Ես շատ բարձր հարգանք ունեմ գերմանացիների նկատմամբ։ Դա, անկասկած, աշխարհի ամենազարմանալի ժողովուրդն է։ Այս պատերազմում գերմանացիներն անզուգական գործեր են կատարում։ Ես անձամբ միշտ ուրախանում եմ, երբ կարողանում եմ այստեղ ողջունել գերմանացի որևէ պարոնի։

Պատվելի Լեփսիուսին շատ լավ հայտնի էր, որ Էնվեր փաշան կոմիտեում ներկայացնում էր ֆրանսիասեր կուսակցությունը (և գուցե դեռ

գաղտնի ներկայացնում էր)։ Նա երկար ժամանակ դիմադրում էր, պահանջում, որ համագործակցեն ոչ թե գերմանացիների հետ, այլ մյուս դաշնակիցների։ Բայց քանի որ տվյալ պարագայում այդ հարցը ոչ մի դեր չէր խաղում, Լեփսիուսը շարունակեց քաղաքավարական ձևերի փոխանակումը.

— Ձերդ վսեմությունը Գերմանիայում բազմաթիվ անձնվեր հիացողներ ունի։ Մարդիկ Ձեզանից աշխարհասասան գործեր են սպասում։

Էնվերն աչքերը բարձրացրեց։ Ձեռքի թեթև շարժում, որով կարծես հոգնաբեկ պաշտպանվում էր այդ շոյող պահանջներից։ Լռություն, որ մոտավորապես նշանակում էր. «Տեսնենք, սիրելիս, թե ինձ ինչպես պիտի գցես քո թակարդը»։ Ականջը ձայնի պահած՝ Լեփսիուսը գլուխը դարձրեց պատուհանի կողմը, որտեղից ոչ մի հնչյուն ներս չէր թափանցում, բացի Բոսֆորի երթևեկության սուլոցներից ու զնգոցներից։

— Ես նկատեցի, որ Ստամբուլում մարդկանց տրամադրությունը շատ է խանդավառ։ Մանավանդ այսօր շատ ազդեցիկ աշխուժություն էր տիրում։

Գեներալն իր հաճելի, բայց արդեն անտարբեր ձայնով, հայրենասիրական հայտարարության ոճով ծանրաբարո ասաց.

— Պատերազմը ծանր բան է, բայց մեր ժողովուրդը գիտակցում է իր պարտքը։

Գերմանացու առաջին հարձակումը.

— Երկրի ներսո՞ւմ էլ, Ձերդ վսեմություն։

Էնվերն ուրախ նայեց դեպի հեռու-հեռուները։

— Անշուշտ, ներսում մեծ գործեր են կատարվում։

— Ձերդ վսեմություն, ես այդ մեծ գործերին ծանոթ եմ։

Ռազմական մինիստրը թեթևակի զարմանքով չհասկանալու տվեց։ Նրա դեմքի գույնը հսկայական կայսրության առաջին մարդու համար չափից ավելի երիտասարդական էր։

— Կովկասյան ռազմաճակատում դրությունն օրեցօր բարելավվում է։ Ջեմալի և Ձեր հայրենակից Քրեսի հարավային բանակի մասին խոսելը դեռևս վաղաժամ է։

— Շատ ուրախալի է, Ձերդ վսեմություն։ Բայց ես երկրի ներս ասելով հասկանում եմ ոչ թե ռազմաճակատը, այլ խաղաղ վիլայեթները։

— Երբ մի պետություն պատերազմ է մղում, ապա երկրի բոլոր շրջաններն էլ այս կամ այն չափով ռազմական գոտու մեջ են մտնում։

Այս նախադասությունը կամը կալից փոքր-ինչ հանեց։ Նախնական հրաձգությունն ավարտվեց ի վնաս դոկտորի, որը և ստիպված անցավ ճակատային գրոհի.

— Ձերդ վսեմությանը, անշուշտ, հայտնի է, որ ես այստեղ եկել եմ ոչ թե սեփական քմահաճույքով, այլև իբրև գերմանական արևելյան միաբանության նախագահ, և իմ միաբանությանը պետք է տեղեկություն հաղորդեմ ճշգրիտ եղելության վերաբերյալ։

Էնվերը զարմացած բարձրացրեց աչքերը։ Այդ ի՞նչ բան է արևելյան միաբանությունը։

— Արտաքին գործոց մինիստրությունը և անգամ ռայխսկանցլերը խիստ հետաքրքրվում են իմ առաքելությամբ։ Երբ վերադառնամ, ռայխստագում պատգամավորների և գերմանական մամուլի համար զեկուցում եմ տալու հայկական հարցի շուրջը։

Էնվեր փաշան, որն իր սովորության համաձայն այցելուին լսում էր հայացքը գետնին հառած, «հայկական հարց» բառերը լսելուն պես գլուխը բարձրացրեց։ Մի ակնթարթ նրա դեմքն ամպեց սրտնեղությունից, և նա նմանվեց երես առած այն երեխային, որը միշտ էլ լուրջ մարդկանց զահլան տանում է իր անմտություններով։ Բայց իսկույն ամեն ինչ հունի մեջ մտավ, թեև Լեփսիուսի սիրտը բերանն էր գալիս.

— Ձերդ վսեմություն, ձախորդությանս մեջ ես Ձեզ եմ դիմում, քանզի համոզված եմ, որ Ձեր աստիճանի մի զորավար, մի հերոս, չի անի այնպիսի բան, որ պատմության մեջ կարող է ստվեր գցել իր անվան վրա։

— Պարոն Լեփսիուս,— խոսք վերցրեց Էնվեր փաշան ամենաբարյացակամ ներողամտությամբ,— գիտեմ, այստեղ եք եկել և այս տեսակցությունն եք փափագել նրա համար, որ բացատրություններ պահանջեք հայտնի գործի վերաբերյալ։ Թեև հաղարավոր անհետաձգելի գործեր ունեմ, պատրաստ եմ հիմա ևեթ ժամանակս Ձեզ նվիրել, տալ Ձեր ցանկացած ամեն մի տեղեկությունը։

Այս զոհողության համար Լեփսիուսը շարժուձևով հայտնեց իր խորին շնորհակալությունը։

— Այն օրից ի վեր, ինչ երկիրը կառավարում ենք ես և իմ բարեկամները,— սկսեց գեներալը,— միշտ էլ ձգտել ենք հայ ազգին ցույց տալ ամենայն օժանդակություն, նրա հանդեպ լինել անվերապահորեն արդարադատ։ Հին հաշիվներ կան։ Ձեր հայ բարեկամներն ամենաջերմ իանդավառությամբ ողջունեցին մեր հեղափոխությունը, տվին բոլոր հնարավոր երդումները, որ մեզ հավատարիմ կմնան։ Մի օր չանցած՝

դրժեցին իրենց ուխտը։ Աչքերս փակեցինք, չտեսնելու տվինք այնքան ժամանակ, քանի դեռ օսմանյան ազգը՝ պետական ժողովուրդը վտանգված չէր։ Համենայն դեպս, մենք ապրում ենք Թուրքիայում, այնպես չէ՞։ Բայց երբ պատերազմն սկսվելուց հետո պետական դավաճանության, ուխտադրժության դեպքերը և քայքայիչ տրամադրությունները բազմապատկվեցին, երբ դասալքությունը սոսկալի տարածվեց, երբ բանը հասավ բացահայտ ապստամբության (հիշատակեմ հենց թեկուզ Զեյթունի մեծ խռովությունը), այն ժամանակ ստիպված եղանք դիմել փոխադարձ միջոցառումների, այլապես կզրկվեինք մեր իրավունքից, մեր կառավարությունը կկորցներ իր ժողովրդականությունը, մենք ի վիճակի չէինք լինի պատերազմ մղելու։

Լեփսիուսը գլխով համաձայնության նշան արեց, իբր թե դա իրեն սպառիչ կերպով համոզեց.

— Ձերդ վսեմություն, ինչո՞վ են դրսևորվել դատարանով ապացուցված դավաճանության և ուխտադրժության դեպքերը։

Էնվեր փաշան ձեռքով այնպիսի շարժում արեց, որ իբր թե դրանք անհնարին է հաշվել.

— Ռուսաստանի հետ ունեցած գաղտնի կապերը։ Պետերբուրգի Դումայում հայերի հասցեին Զասոնովի շռայլած գովեստը։ Դավադրական հետագա կապերը Ֆրանսիայի և Անգլիայի հետ։ Խարդավանք, լրտեսություն, ամեն բան, ինչ որ կարող է անցնել մարդու մտքով։

— Եվ այս ամենի կապակցությամբ օրինական դատավարությո՞ւն է տեղի ունեցել։

— Իհարկե, ռազմական դատարանում։ Ձեզ մոտ էլ այլ կերպ չէին վարվի։ Վերջերս առավել անհանդուրժելի հանցագործությունների առթիվ դատավարություն եղավ, և տասնհինգ հոգի հրապարակայնորեն մահապատժի ենթարկվեցին։

«Պարզունակ լկտիություն»,— ներքուստ աներկբա վճիռ կայացրեց Լեփսիուսը։ Մեջքն աթոռին հենելով, փորձեց տիրապետել դողդոջուն ձայնին.

— Որքան ինձ հայտնի է, այդ տասնհինգ հայն էլ ձերբակալված էին պատերազմից շատ առաջ, հետևաբար դժվար է դավաճանության համար նրանց դատապարտել ռազմական օրենքով։

— Մենք հեղափոխության ծնունդ ենք,— նյութից շեղվելով պատասխանեց գեներալը և իր ասածով հիացավ այն տղայի նման, որը հանկարծ մտաբերում է իր ծիծաղաշարժ չարաճճիությունները։— Մենք շատ լավ գիտենք, թե դա ինչպես է արվում։

Լեփսիուսն ուզեց հեղափոխության հասցեին թունդ խոսք ասել, բայց ասելիքը կուլ տվեց, հազաց և անցավ նոր հարցի.

— Իսկ այստեղ, Ստամբուլում ձերբակալված և աքսորված երևելիների ու մտավորականների դավաճանությունը նույնպե՞ս ապացուցված է։

— Դուք պետք է նկատի ունենաք, որ Դարդանելի ռազմաճակատի մոտակայքում մենք չենք կարող հանդուրժել նաև հավանական դավաճաններին։

Լեփսիուսը չվիճեց, այլ հանկարծակի պոռթկումով նետվեց գլխավոր խնդրի վրա.

— Հապա Զեյթո՞ւնը։ Ձե՛րդ վսեմություն, ես այնպե՞ս կցանկանայի իմանալ Ձեր կարծիքը Զեյթունի մասին։

Էնվեր փաշայի կայծակնափայլ սիրալիրությունը հանդիսավոր կերպով խամրեց.

— Զեյթունի ապստամբությունը թուրքական կայսրության պատմության մեջ ամենամեծ և ամենաստոր դավադրությունն է։ Խռովարարների դեմ կռվելիս մեր զորքերը, ցավոք սրտի, մեծ կորուստներ կրեցին, և ես հիմա դրանց թիվը բանավոր հայտնել չեմ կարող։

— Ձերդ վսեմություն, Ձեր և իմ ստացած տեղեկությունները տարբեր են,— Լեփսիուսն այս հարվածը հասցրեց՝ բառերը հատ-հատ արտասանելով։— Ըստ իմ լուրերի, այնտեղի, բնակչությունը ոչ մի ապստամբություն չի բարձրացրել։ Ընդհակառակը, նահանգական և գավառական իշխանությունները ամիսներ շարունակ իրենց պահանջներն են ներկայացրել, ճնշում գործադրել։ Ոչ մի այնպիսի բան չի կատարվել, որ նույնիսկ զգացվեր ոստիկանական միջամտության կարիքը։ Մինչդեռ ամեն մի արդարամիտ մարդու համար էլ պարզ է, որ մի քանի հազար հոգուց բաղկացած զորամաս ուղարկելը կանխամտածված դիտավորություն էր։

— Ձեզ շինծու տեղեկություններ են տվել,— անհույզ քաղաքավարությամբ վրա բերեց գեներալը։— Պարո՛ն Լեփսիուս, կարո՞ղ եմ իմանալ, թե որտեղից եք քաղել Ձեր տվյալները։

— Մի քանի անուն կտամ, բայց նախապես հայտնում եմ, որ դրանց մեջ հայկական աղբյուրներ չկան։ Դրանց փոխարեն ինձ քաջ հայտնի են գերմանական տարբեր հյուպատոսների զեկուցագրերը, ձեռքիս տակ են գրառումներն այն միսիոներների, որոնք ականատես են եղել չափազանց զարհուրելի իրողության։ Եվ, վերջապես, իրադրության մասին ես ճշգրիտ պատկերացում եմ կազմել ամերիկյան դեսպանի՝ պարոն Մորգենթաուի* միջոցով։

— Պարոն Մորգընթաուն,— անբարտավանությամբ վրա բերեց Էնվերը,—հրեա է, իսկ հրեաները միշտ էլ մոլեռանդորեն պաշտպան են կանգնում փոքրամասնությանը։

Անմատչելի մնալու նուրբ խորամանկությունն ապշեցրեց Լեփսիուսին։ Ձեռքերն ու ոտքերը սառույց կտրեցին.

— Ձե՛րդ վսեմություն, կարևորը Մորգընթաուն չէ, այլ իրողությունը։ Իսկ իրողությունը Դուք չեք ժխտի, չեք էլ կարող ժխտել։ Հարյուր հազարավոր մարդիկ արդեն տարագրության ճանապարհն են բռնել։ Իշխանությունները միայն գաղթից են խոսում։ Բայց ես կպնդեմ, որ դա, մեղմ ասած, բառի չարաշահում է, ուրիշ ոչինչ։ Կարելի՞ է գրչի մի հարվածով հողագործներից, արհեստավորներից, քաղաքաբնակ մարդկանցից ու մտավորականներից կազմված մի ժողովուրդ աքսորել Միջագետքի անապատը, օվկիանոսի պես անծայրածիր, ամայի վայրեր, որտեղից նույնիսկ բեդվին ցեղերն են փախչում... Եվ դա միայն պատրվակ է։ Տեղական իշխանություններն այնպես են իրագործում աքսորը, որ թշվառներն առաջին իսկ ութ օրվա ընթացքում արդեն սովից, ծարավից, հիվանդություններից մեռնում են կամ խելագարվում։ Եթե ոչ զինվորականները, ապա քրդերն ու ավազակները սպանում են պաշտպանունակ պատանիներին ու տղամարդկանց, իսկ մատաղ աղջիկներին ու կանանց բռնաբարում են, առևանգում...

Գեներալն ունկնդրում էր քաղաքավարի հետաքրքրությամբ, բայց հոգնած դեմքին, կարելի էր կարդալ. «Այդ անհամ երգը ես օրական տասներկու անգամ եմ լսում»։ Կանացի սպիտակ ձեռքով թևքի միջից դուրս քաշեց թեզանիքը, որը երևի նրա համար ավելի կարևոր էր։

— Շատ ցավալի բաներ են, բայց մի մեծ պետության գերագույն հրամանատարը պարտավոր է ապահովել իր երկրի ռազմաճակատային գոտու անվտանգությունը։

— Ռազմաճակատային գոտի՞,— գոչեց Լեփսիուսը, բայց իսկույն իրեն զսպեց, փորձեց ընդօրինակել Էնվերի հանդարտ խոսելաձևը։— Ռազմաճակատային գոտի՞։ Դա միակ նոր նրբերանգն է։ Մնացած բոլոր բաներն էլ՝ Ձեյթունը, պետական դավաճանությունը, դավադրությունները, ասված ու լսված բաներ են։ Աբդուլ Համիդը վարպետորեն էր այդ միջոցը կիրառում, ինչպես ստիպված եղան համոզվել հայերը։ Ձե՛րդ վսեմություն, ես ավելի տարեց մարդ եմ, քան Դուք, և ամեն ինչ սեփական փորձով գիտեմ։ Բայց երբ խորհում եմ տարագրության մասին, ապա ներումն եմ շնորհում ծերուկ մեղավորին։ Նոր մեթոդների համեմատությամբ նա անճարակի մեկն էր, միամիտ երեխա։ Եվ ձեր կուսակցությունը, Ձե՛րդ վսեմություն, իշխանություն նվաճեց միայն այն բանի շնորհիվ, որ ծեր սուլթանի արնաթաթախ ժամանակաշրջանն ուզեց ջնջել արդարությամբ, միաբանությամբ, առաջադիմությամբ։ Նույնն է արտահայտում նաև Ձեր կոմիտեի անունը։

Այս հարվածը հանդուգն էր, սակայն անխոհեմ։ Լեփսիուսին մի վայրկյան թվաց, թե ռազմական մինիստրը վեր կկենա, և զրույցը դրանով էլ կփակվի։ Սակայն Էնվերը մնաց հանգիստ նստած, և նրա բարեհաճության վրա նվազագույն ստվեր անգամ չընկավ։ Փաշան նույնիսկ մտերմաբար թեքվեց առաջ.

— Ես Ձեզ փոխադարձաբար մի հարց տամ, պարո՛ն Լեփսիուս։ Գերմանիան բարեբախտաբար ոչ մի ներքին թշնամի չունի կամ դրանց թիվը շատ չնչին է։ Բայց, դիցուք, այլ պայմաններում ունենար ավելի շատ թշնամիներ, ինչպես, ասենք, Էլզասի ֆրանսիացները, լեհերը, սոցիալ-դեմոկրատները, հրեաները, այն էլ այնպիսի քանակությամբ, ինչպես տվյալ դեպքում։ Պարոն Լեփսիուս, մի՞թե դուք չէիք գործադրի ամեն միջոց, որպեսզի արտաքին թշնամիների աշխարհով պաշարված, ծանր պատերազմի մեջ քաշված ձեր ազգը ազատեիք ներքին թշնամուց։ Այն ժամանա՞կ էլ զարհուրելի կհամարեիք, երբ պատերազմի ելքի համար բնակչության վտանգավոր մասը պարզապես մի տեղ հավաքեին և արտաքսեին հեռավոր, անմարդաբնակ վայրեր...

Յոհաննես Լեփսիուսը երկու ձեռքով իրեն բռնեց, որ վեր չցատկի, չապտակի.

— Եթե իմ երկրի ղեկավարները,— գոչեց նա բարձրաձայն,— իրենց այլազգի կամ այլ համոզմունքներ ունեցող հայրենակիցների հետ անարդարացի, ապօրինի, անմարդկային (քիչ մնաց ասեր հակաքրիստոնեական) ձևով վարվեին, ես նույն վայրկյանին կհրաժարվեի Գերմանիայից, կհեռանայի Ամերիկա։

Էնվեր փաշան երկար ժամանակ նայեց վեր.

— Ցավալի է Գերմանիայի համար, եթե մյուսներն էլ են Ձեզ պես մտածում։ Դա նշան է այն բանի, որ Ձեր ժողովուրդը զուրկ է իր ազգային կամքն անվերապահորեն առաջ տանելու ուժից։

Այստեղ պատվելու վրա սոսկալի հոգնածություն եկավ։ Դա հետևանք էր այն զգացման, որ փոքրամարմին, ծածկամիտ մարդն իր տեսակետից իրավացի էր։ Ուրեմն՝ աշխարհի չար իմաստությունը միշտ էլ արդարանում է ընդդեմ Քրիստոսի։ Բայց ամբողջ ցավն այն էր, որ այդ պահին Էնվերի իրավացիությունը խանգարում էր Լեփսիուսին, ջլատում

պայքարելու կորովը։ Հոգու վրա սարի պես ծանրացավ սեփական հայրենիքի հեղհեղուկ ճակատագիրը։ Նա շշնջաց.

— Համեմատությունը տեղին չէ։

— Անշուշտ, համեմատությունը տեղին չէ։ Բայց մեր օգտին է։ Մեզ՝ թուրքերիս համար հարյուրապատիկ դժվար է վավերացնել մեր իրավունքները, քան ձեզ՝ գերմանացիներիդ համար։

Տանջված ու մտացիր Լեփսիուսը գրպանից հանեց թաշկնակը և պահեց ձեռքին, իբրև բանագնացի դրոշակ։

— Այստեղ խոսքը ոչ թե ներքին թշնամուց պաշտպանվելու մասին է, այլ մի ուրիշ ազգի պլանաչափ բնաջնջման։

Այս խոսքերը նա ասաց պոռթկումով, ընդարմացած։ Այլևս չկարողանալով տանել էնվերի սառնարյունությունը, նա աչքերը հառեց առանձնասենյակում կախված հերոսապատկերներին։ Արդյոք Զավեն սրբազանը՝ պատրիարքը, այնտեղ կանգնած չէ՞ր։ Լեփսիուսն իսկույն հիշեց, որ պետք է խոսի «տնտեսության» շուրջը։ Արագ սթափվեց, ի մի հավաքեց ուժերը.

— Ես չեմ հանդգնի Ձեր ժամանակն սպանել դատարկ խոսակցությամբ։ Բայց համարձակվում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել որոշ անբարենպաստ հանգամանքների վրա, որոնց էությունը դեռևս չեք պարզել։ Դա ինքնին հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք գերագույն հրամանատարի բազմազբաղ գործունեությունը։ Երկրի ներսը՝ Անատոլիան, Սիրիան ես երևի Ձեզանից ավելի լավ գիտեմ, քանի որ այս շրջանում տարիներ շարունակ աշխատել եմ ծանր պայմաններում։

Եվ հապճեպ սկսեց զարգացնել իր տեսությունը, զգալով, որ ժամանակը թռչում է։ Թուրքական կայսրությունն առանց հայ ժողովրդի կորած է տնտեսապես, կուլտուրապես, հետևաբար և ռազմական տեսակետից։ Ինչո՞ւ։ Խոսքն առևտրի մասին չէ, որի իննսուն տոկոսը գտնվում է քրիստոնյաների ձեռքին։ Նորին վսեմությունը նույնքան լավ գիտե, որ ապրանքների ամբողջ ներմուծումն իրականացվում է հայկական առևտրական ընկերությունների միջոցով, որ պատերազմը վարելու կարևորագույն ճյուղերից մեկը՝ երկիրը հումքով և ֆաբրիկատներով ապահովելու գործը գլուխ է բերվում այդ ընկերությունների շնորհիվ։ Կարելի է հիշատակել թեկուզ միայն Ավետիս Բագրատյանի հետնորդների առևտրական աշխարհահռչակ տունը, որը եվրոպական տասներկու քաղաքներում ունի մասնաճյուղեր, գրասենյակներ, ներկայացուցիչներ։ Նման մի կազմակերպություն ոչնչացնելը ավելի քիչ ջանք է պահանջում, քան այն փոխարինելը։ Ինչ վերաբերում է երկրի ներսին, ապա ինքը՝ Լեփսիուսը, տարիներ առաջ կատարած շրջագայության ժամանակ համոզվել է, որ Անատոլիայի հայկական գյուղատնտեսության և թուրք սակավաթիվ գյուղացիության արածի միջև սարեր ու ձորեր կան։ Դեռևս այն ժամանակ կիլիկիացի հայերը Եվրոպայից հարյուրավոր կալսիչ մեքենաներ և շոգեգութաններ էին բերում, որպեսզի այդ ձևով թուրքերին հիանալի առիթ տան ջարդերի համար. չէ՞ որ թուրքերը ոչ միայն տասը հազար ադանացի սպանեցին, այլև ջարդուփշուր արին նաև կալսիչ մեքենաներն ու շոգեգութանները։ Ուրեմն՝ ամբողջ շարիքի արմատն այստեղ է, ոչ թե մի այլ տեղ։ Հայ ժողովուրդը՝ օսմանյան բնակչության ամենակիրթ և ամենագործունյա խավը, հարյուրամյակներ շարունակ հսկայական ջանքեր է գործադրել, որպեսզի պետությունը դուրս բերի հնաձև բնատնտեսության վիճակից, տանի դեպի ժամանակակից հողագործության և արմատավորվող արդյունաբերության նոր աշխարհը։ Եվ հենց այդ նախակարապետական օրհնյալ գործի համար նա ոչընչացվում է, դառնում տեր ու տնօրեն կարգված դատարկապորտների վրիժառության զոհը։

— Ձե՛րդ վսեմություն, ընդունենք, թե արհեստավորներին, ջուլհակներին, տնայնագործ արդյունաբերողներին, որոնք բոլորն էլ երկրի ներսում հայեր են, կարելի է փոխարինել թուրքերով։ Բայց ո՞վ կփոխարինի այն բազմաթիվ հայ բժիշկներին, որոնք ուսանել են Եվրոպայի լավագույն համալսարաններում և օսմանցի հիվանդներին նույնքան հոգատարությամբ են խնամում, որքան իրենց ցեղակիցներին։

Ո՞վ կփոխարինի բազմաթիվ ինժեներներին, փաստաբաններին, մասնագետ ուսուցիչներին, որոնց անխոնջ աշխատանքի շնորհիվ երկիրն առաջ է ընթանում։ Թերևս Ձերդ վսեմությունը պնդի, թե հարկ եղած դեպքում կարելի է ապրել նաև առանց մտավորականների՞։ Բայց մարդ չի կարող ապրել առանց ստամոքսի։ Եվ հիմա հենց թուրքիայի ստամոքսն են կտրատում, հուսալով, թե վիրահատությունը հաջող կանցնի։

Գլուխը մի կողմի վրա մեղմորեն խոնարհած՝ էնվեր փաշան այս խոսքերը խորին հարգանքով լսեց մինչև վերջ։ Նրա աշխույժ, չափածձևած և միայն թեթև ամոթխածությամբ շղարշված ամբողջ էության վրա ոչ մի ծալք չհայտնվեց, ինչպես համազգեստի վրա։ Մինչդեռ պատվելին, ընդհակառակը, լրիվ կերպարանափոխվել էր։ Քրտնել՛ էր, փողկապը մի կողմի վրա էր ծռվել, իսկ բաճկոնի թևքերը վերև էին քաշվել։ Գեներալը խաչեց իր կարճ, բայց բարեձև ոտքերը։ Հեծելազորային երկարաճիտ փայլփլուն կոշիկները կարծես կաղապարների վրա էին հագցված։

— Ստամոքսից եք խոսում, պարոն Լեփսիուս,— բարեհաճ ժպտաց փաշան։— Ի՞նչ արած, Թուրքիան պատերազմից հետո տկար ստամոքս է ունենալու։

— Ստամոքս այլևս չի՞ ունենա, Ձե՛րդ վսեմություն։

Առանց վիրավորվելու գեներալիսսիմուսը շարունակեց.

— Գոյություն ունի քառասուն միլիոն Թուրք ժողովուրդ։ Հիմա Դո՛ւք եղեք մեր տեղը, պարո՛ն։ Մի՞թե քաղաքական մեծ և արժանավոր ծրագիր չէր լինի այդ քառասուն միլիոնը համախմբել, հիմնել ազգային մի պետություն, որն Ասիայում նույն դերը կխաղար, ինչ որ Գերմանիան՝ Եվրոպայում։ Պետությունն սպասում է։ Մնում է միայն, որ ձեռնամուխ լիննք։ Հայերի մեջ, ի՞նչ խոսք, սոսկալի շատ են մտավորականները։ Մի՞թե դուք կողմնակից եք այդ կարգի մտավորականության, պարոն Լեփսիուս։ Ես կողմնակից չե՞մ։ Մենք՝ Թուրքերս, նման մտավորականություն քիչ ունենք։ Սակայն դրա փոխարեն մենք այն հին ու հերոսական ցեղն ենք, որը կոչված է մեծ կայսրություն հիմնելու և լինելու այդ կայսրության տերը։ Դրա համար էլ խոշընդոտներ հաղթահարելով պետք է բարձրանա՞նք։

Լեփսիուսը ջղաձգորեն սեղմեց ձեռքերը, բայց ոչ մի բառ չասաց։ Բախտախաղի մեջ հաջողակ և երես առած տղան վիթխարի կայսրության բացարձակ տիրակալն էր։ Նրա նրբակերտ և գայթակղիչ փոքրիկ գլուխն այնպիսի թվեր էր թխում, որ իրականությանն իրազեկ ամեն մարդ զարմանքից կապշեր։ Պատվելուն խաբել չէր կարող. սա հաստատ գիտեր, որ Անատոլիայում հազիվ թե վեց միլիոն զտարյուն Թուրք լիներ։ Եթե Հյուսիսային Պարսկաստանի, Կովկասի, Քաշգարի, Թուրքեստանի ցրված վրանաբնակ ժողովուրդները և Եվրոպայի կեսի չափ տարածություն գրավող տափաստաններում թափառող ձիագողերը միանային, ապա հազիվ թե քսան միլիոն ստացվեր։ «Նման երազանքին,— մտածեց Լեփսիուսը,— ծնունդ է տալիս ազգամոլության թմրադեղը»։ Բայց միևնույն ժամանակ ինչ-որ կարեկցանք էր զգում պատերազմի քնքշաղեմ առտծո, այդ մանկամիտ Նեռի հանդեպ։ Լեփսիուսը, իրադրության ամբողջ ծանրությունը գիտակցելով, ցածրաձայն ասաց.

— Ձե՛րդ վսեմություն, ուզում եք հիմնել մի նոր կայսրություն, բայց նրա պատերի տակ է մնալու հայ ժողովրդի դիա՞կը։ Մի՞թե դա կարող է բարիք բերել։ Մի՞թե այժմ հնարավոր չէ գտնել խաղաղ ճանապարհ։

Այստեղ Էնվեր փաշան առաջին անգամ մերկացրեց ճշմարտությունն իր ամբողջ խորությամբ։ Այլևս ամոթխածությամբ չէր ժպտում։ Աչքերը

դարձան սևեռուն և սառը։ Շուրթերը ետ գնացին, ի ցույց հանելով խոշոր, գիշատիչ ատամները.

— Մարդը և ժանտախտի բացիլը բարեկամներ լինել չե՞ն կարող,— ասաց նա։

Լեփսիուսն անմիջապես վրա բերեց.

— Ուրեմն՝ խոստովանո՞ւմ եք Ձեր մտադրությունը. պատերազմն ուզում եք օգտագործել ամբողջ հայ ժողովուրդը բնաջնջելո՞ւ համար։

Ռազմական մինիստրը, անկասկած, շատ հեռուն էր գնացել։ Շտապեց փոխել խոսակցության եղանակը, նորից քաշվեց իր բարյացակամ անբարյացակամության անառիկ բերդը։

— Իմ անձնական կարծիքներն ու դիտավորությունները լիովին արտացոլված են այն կոմյունիկեներում, որ մեր կառավարությունը հրապարակել է այս գործի կապակցությամբ։ Մենք այսպես ենք վարվում, քանի որ մեզ ստիպում են պատերազմը և ինքնապաշտպանության անհրաժեշտությունը։ Իսկ մինչ այդ մենք դիտում և սպասում էինք։ Այն քաղաքացիները, որ ձգտում են կործանել պետությունը, ամենուրեք պատժվում են օրենքի ամբողջ խստությամբ։ Ըստ այնմ էլ մեր կառավարությունը գործում է օրենքով։

Հասան այնտեղ, ինչից սկսել էին։ Լեփսիուսը չկարողացավ զսպել հառաչանքը։ Կարծես լսում էր Ջավեն սրբազանի ձայնը. քարոզի տեղ չէ՞։ Պետք է փաստերի՞ց կառչել, իրողությունի՞ց։ Օ՜, երանի՜ թե կարողանար չհեռանալ թրի նման սուր փաստերից։ Բայց քանի որ իրավունք չուներ վեր ցատկելու, պետք է մնար աթոռին գամված, ուստի և նյարդերը թուլացան, վհատվեց։ Նա, որ բնածին քարոզիչ էր և հռետոր, նեղվում էր տեղում նստած, ուզում էր ազատ շարժվել։

— Ձե՛րդ վսեմություն,— նա ձեռքը սեղմեց իր գեղեցիկ ճակատին,— ես այժմ Ձեզ չեմ ասի այն, ինչ ինքնին հասկանալի է, ոչ էլ այն, որ առանձին մարդկանց խարդավանքների պատճառով չի կարելի դատապարտել մի ամբողջ ժողովուրդ, չեմ հարցնի, թե ինչու կանայք և երեխաները, փոքրիկ մանուկները, ինչպիսին ինքներդ էլ եք մի ժամանակ եղել, պետք է ամենագազանային մահվան ենթարկվեն քաղաքականության հետևանքով, մի քաղաքականություն, որից նրանք ոչինչ չեն հասկանում։ Ես ուզում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել Ձեր իսկ սեփական ժողովրդի ապագայի վրա, Ձե՛րդ վսեմություն։ Պատերազմը մի օր կավարտվի, և Թուրքիան կկանգնի հաշտության բանակցություններ վարելու անհրաժեշտության առաջ։ Երանի՜ այդ օրը բոլորիս համար էլ բախտավոր լիներ։ Իսկ եթե դա ձախորդ օր լինի, այն ժամանակ ի՞նչ կստացվի,

Ձերդ վսեմություն։ Իր ժողովրդի ճակատագրի համար պատասխանատու առաջնորդը արդյոք չպե՞տք է նախապես հոգա իր անելիքը, եթե պատերազմն ունենա աննպաստ վախճան։ Բանակցությունների ժամանակ ի՞նչ վիճակի մեջ կընկնի հաշտության օսմանյան հանձնաժողովը, եթե նրան ընդունեն այսպիսի հարցով. «Որտե՞ղ է քո եղբայր Աբելը»։ Շատ անախորժ կլիներ կացությունը։ Եվ հաղթանակած տերությունները, աստված մի արասցե, մեծ հանցանքը նկատի ունենալով, անվերապահորեն կբաժանեն ավարը։ Գեներալ Էնվեր փաշան՝ տվյալ պարագայում իր ժողովրդի մեծագույն մարդը, որն իր վրա է վերցրել ամբողջ պատասխանատվությունը, որի կամքն ամենազոր է, ինչպե՞ս է արդարանալու իր սեփական ժողովրդի առաջ։

Էնվեր փաշան երազկոտ աչքերով, առանց կատակի ասաց.

— Շնորհապարտ եմ Ձեզ հիանալի խորհուրդների համար։ Բայց ով քաղաքականության ասպարեզ է մտնում, պետք է երկու առանձնահատկություն ունենա։ Նախ՝ իսկական թեթևամտություն կամ, այլ կերպ ասած, արհամարհանք մահվան հանդեպ, որը վերջին հաշվով նույն բանն է, և ապա՝ անսասան հավատ սեփական որոշումների նկատմամբ, եթե դրանք մի անգամ արդեն կայացվել են։

Այստեղ Լեփսիուսը ոտքի ելավ։ Գրեթե արևելցու նման ձեռքերը խաչեց կրծքին։ Հայ ժողովրդի աստվածառաք պահապան հրեշտակի վիճակը ողբերգական էր։ Գրպանից կախվել էր թաշկինակը, անդրավարտիքը ծնկներն էր ընկել, փողկապն ավելի էր ծռվել մի կողմի վրա։ Թվում էր, թե ակնոցի ապակիներն անգամ պղտորվել են։

— Ձե՛րդ վսեմություն, աղերսում եմ։— Պատվելին խոնարհվեց նրստած փաշայի առաջ։— Բավականացեք մինչև այսօր եղածով։ Դուք, ի խրատ այլոց, պատժել եք ներքին մի թշնամու, որը գոյություն չունի, որի նմանը երբեք չի գտնվի պատմության մեջ։ Արևելքի ճանապարհներին հարյուր հազարավոր մարդիկ են տանջվում ու մեռնում։ Այսօրվանից վե՛րջ տվեք։ Հրամայեցեք, որ նոր տարագրության վերաբերյալ կարգադրությունները չկատարեն։ Ես գիտեմ, որ դեռ բոլոր վիլայեթներն ու գավառները դատարկված չեն։ Խնայեցեք Հյուսիսային Սիրիան, Հալեպը, Ալեքսանդրեթը, Անտիոքը և ծովեզերքը։ Ասացեք, որ բավական է։ Եվ ես Գերմանիա վերադառնալով, կփառաբանեմ Ձեր անունը։

Գեներալիսսիմուսը ձեռքի համբերատար շարժումով բազմիցս ցույց տվեց աթոռը, բայց պատվելին չէր նստում.

— Դուք գերագնահատում եք իմ իրավասությունը, պարոն Լեփսիուս,— հայտարարեց նա վերջապես։— Կառավարական նման որոշումների կիրառումը տնօրինում է ներքին գործոց մինիստրը։

Գերմանացին կարմրած աչքերից հեռացրեց պենսնեն։

— Խոսքն էլ հենց այդ կիրառման մասին է։ Որոշումները կիրառում են ո՛չ վալին, ո՛չ մինիստրը, ո՛չ մյութեսարրֆը, այլ գռեհիկ, անսիրտ ստորադրյալներն ու կրտսեր ենթասպաները։ Մի՞թե Ձեր կամ մինիստրի կամքն է, որ կանայք բաց ճանապարհներին ցած փռվեն, ապա մտրակներով առաջ քշվեն։ Արդյոք Ձե՞ր կամքն է, որ երկրի չորս կողմը ապականվի նեխած դիակներից, որ Եփրատը մեռելներով լցվի ու բարձրանա։ Այդ կիրառում կոչվածին ծանո՞թ եմ։

— Ես գնահատում եմ Ձեր գիտելիքները մեր երկրի ներքին գործերի վերաբերյալ,— արձագանքեց փաշան,— բավականությամբ կընդունեմ սույն գործի կարգավորմանը նպաստող Ձեր գրավոր առաջարկությունները և հանգամանորեն կստուգեմ։

Բայց Լեփսիուսն առաջ պարզեց թևերը.

— Ի՞նձ ուղարկեցեք այդ գործն ստուգելու։ Ահա իմ առաջին առաջարկությունը։ Նույնիսկ ծեր սուլթանը չմերժեց իմ խնդրանքը։ Լիազորեցեք, որ ինքս կասմակերպեմ աքսորյալների քարվանները։ Աստված ինձ ուժ կշնորհի, իսկ իմ փորձառությունը ոչ ոք չունի։ Օսմանյան պետությունից ոչ մի պիաստր չեմ պահանջի։ Դրամական բոլոր անհրաժեշտ միջոցները ի՛նքս ձեռք կբերեմ։ Գերմանական և ամերիկյան նպաստամատույց ընկերությունները կանգնած են իմ թիկունքին։ Ես մի անգամ արդեն նպաստի հետ կապված մեծ գործ եմ գլուխ բերել։ Ինձ հաջողվեց հիմնել բազմաթիվ որբանոցներ ու հիվանդանոցներ, իմ օգնությամբ վերականգնվեցին ավելի քան հիսուն տնտեսական ձեռնարկություններ։ Չնայած պատերազմին, ես կանեմ նույնը և դեռ ավելին։ Մի երկու տարի հետո ինքներդ ինձանից շնորհակալ կլինեք, Ձե՛րդ վսեմություն։

Էնվեր փաշան այս անգամ լսում էր ոչ թե սովորական հետաքրքրությամբ, այլ ամենայն լարվածությամբ։ Բայց Լեփսիուսն այս անգամ տեսավ ու լսեց այն, ինչ ո՛չ տեսել էր, ո՛չ լսել։ Գեներալի պատանեկան դեմքի արտահայտությունը փոխվեց, բայց ո՛չ հեգնական դաժանությունից, ո՛չ էլ ցինիզմից։ Ո՛չ, Լեփսիուսն այժմ տեսնում էր արկտիկական հայացքն այն մարդու, որը «հաղթահարել էր բոլոր սենտիմենտալությունները», հայացքն այն մարդու, որը գործ չունի ո՛չ մեղքի, ո՛չ էլ մեղքի պատճառած տառապանքների հետ։ Նա տեսնում էր անծանոթ, բայց դուրեկան ցեղի պատկանող կանոնավոր, գեղեցիկ մի դեմք, տեսնում

էր կատարյալ անաստվածության շարագուշակ, գրեթե անմեղ պարզունակությունը։ Եվ ի՞նչ ուժ ունի այդ անաստվածությունը, որ մարդ չի կարողանում ատել։

— Ձեր թանկարժեք դիտողություններն ինձ հետաքրքրում են,— հարգալիր ասաց Էնվերը,— բայց, ինքնին հասկանալի է, որ պետք է մերժեմ։ Հենց Ձեր ցանկությունը ցույց է տալիս, որ մինչև հիմա մենք միմյանց սխալ ենք հասկացել։ Եթե ես մի օտարականի արտոնեմ, որ մի՛մյանց սխալ ենք հասկացել։ Եթե ես մի օտարականի արտոնեմ, որ նա հայերին օգնություն ցույց տա, ապա դրանով կստեղծեմ այն կարծիքը, թե մենք ընդունում ենք այլազգի անձանց, հետևաբար և արտասահմանյան տերությունների միջամտությունը։ Դրանով ես իմ ամբողջ քաղաքականության հիմքերը կխարխլեմ, քաղաքականություն, որը հայ ժողովրդին պետք է սովորեցնի, թե ինչի է հանգում օտարների միջամտության կարոտը։ Հայերն իրենք էլ կապակողմնորոշվեն։ Նախ՝ պատժում եմ պետական դավաճանության վրա խարսխված երազանքներն ու հույսերը, ապա՝ նրանց մոտ ուղարկում եմ իրենց ամենաազդեցիկ բարեկամներին, որպեսզի կրկին կյանքի կոչեմ այդ հույսերն ու երազանքները։ Ո՛չ, պարոն Լեփսիուս, դա անհնարին է։ Ես չեմ կարող թույլ տալ, որ մի օտարերկրացի այդ մարդկանց համար բարեգործություն անի։ Հայերը միայն մե՛ր միջ պետք է տեսնեն իրենց բարեգործներին։

Պատվելին փլվեց աթոռին։ Ամեն ինչ կորած էր։ Ամեն ինչ հօդս ցնդեց։ Խոսելն արդեն ավելորդ էր։ Երանի՜ այդ մարդը չար լիներ, դև՜։ Բայց ո՜չ չար էր, ո՜չ էլ դև։ Մանկաբար համակրելի էր այդ մեծ, անողոք ժողովրդասպանը

Լեփսիուսը խոր մտորումների մեջ էր, այնպես որ անմիջապես չըմբռնեց Էնվերի զվարթ, բարյացակամ եղանակով արած առաջարկը՝ իր ամբողջ լկտիությամբ հանդերձ.

— Պարո՛ն Լեփսիուս, ես էլ իմ հերթին Ձեզ մի առաջարկ անեմ։ Փող հավաքեցեք, որքան կարող եք, շա՜տ փող հավաքեցեք Ձեր ամերիկյան ու գերմանական ընկերությունների միջոցով։ Այնուհետև գումարը բերեք ինձ մոտ։ Ես դա կօգտագործեմ Ձեր գաղափարի և Ձեր ցանկության համաձայն։ Բայց նախազգուշացնում եմ, որ չեմ հանդուրժի որևէ վերահսկողություն՝ ո՛չ գերմանացիների, ո՛չ էլ այլ օտարերկրացիների կողմից։

Եթե այդ խոսքից Լեփսիուսն ապշած չլիներ, ապա քահ-քահ կծիծաղեր։ Այնքա՜ն զավեշտական էր Էնվերի առաջարկած ճանապարհը, որով նրա հավաքած փողը պետք է Թուրքիա մտներ։ Պատվելին լռեց։ Նա ջախջախված էր։ Թեև զրույցից առաջ էլ մեծ հույս չէր տածում, բայց

միայն այժմ հասկացավ, որ աշխարհը փուլ է եկել։ Գլուխը լրիվ չկորցնելու համար պատվելին իրեն հավաքեց, փոքր-ինչ կարգի բերեց արտաքինը, թաշկինակն ամբողջ ուժով մի քանի անգամ քսեց պսպղուն ճակատին և տեղից վեր կացավ.

— Ձե՛րդ վսեմություն, հույս ունեմ, որ ինձ նվիրված այս ժամը բոլորովին ապարդյուն չի անցել։ Հյուսիսային Սիրիայում և ծովեզերքին հարյուր հազարավոր քրիստոնյաներ են ապրում, որոնք ոչ մի առնչություն չունեն պատերազմի հետ։ Ձերդ վսեմությունն անշուշտ հակված է կասեցնելու այն հրահանգները, որոնք որևէ նպատակ չեն հետապնդում։

Երիտասարդ Մարսը մի անգամ էլ ցույց տվեց իր ծիծաղկոտ ատամները.

— Պարոն Լեփսիուս, համոզված եղեք, որ մեր կառավարությունը կխուսափի ամեն մի ավելորդ խստությունից։

Դա երկուստեք դատարկ ձևականություն էր, անիմաստ ձեռնածություն, որով և քաղաքական զրույցը այդ կարգի բոլոր խոսակցությունների նման սուզվեց անորոշության գիրկը։ Էնվեր փաշան մազաչափ անգամ զիջում չարեց։ Թե ո՛ր խստություններն էին ավելորդ, դա արդեն նրա գործն էր։ Լեփսիուսն ինքն էլ էր գիտակցում, որ իր խոսքերը ոչ այլ ինչ են, եթե ոչ «ձայն բարբառո հանապատի», բայց ասաց իբրև վերջաբան։

Ի հակադրություն պատվելու, գեներալն այժմ թվում էր առանձնապես բարեձև, ավելի ձգված։ Նա ետ քաշվեց, որ հյուրն առաջ անցնի։ Նույնիսկ մի քանի քայլ ուղեկցեց, ապա իրեն հատուկ թեթև, անթափանցելի զարմանքով նայեց երերուն քայլերով հեռացող պատվելուն, որը երկար ու ձիգ միջանցքով, քամու շնչից ալիքվող վարագույրների մոտով անցնում էր խարխափող կույրի նման։

Էնվեր փաշան մտավ թալիաթ բեյի գրասենյակը։ Պաշտոնյաները վեր թռան։ Նրանց դեմքերը խանդավառություն էին ճառագայթում։ Տակավին չէր սպառվել այն գրեթե միստիկ սերը, որ պատերազմի քնքշատիպար աստծո հանդեպ տածում էր գրասեղաններին գամված թղթասույզ բազմությունը։ Ինչպես ամենուրեք, այստեղ ևս հարյուրավոր հրաշապատում առասպելներ էին շրջում նրա հանդուգն խիզախության մասին։ Ալբանիայում վարած պատերազմի ժամանակ, երբ հրետանային գնդերից մեկն ապստամբվեց, փաշան, սիգարը բերանին, կանգնեց հաուբիցի առաջ և ձայն տվեց խռովարարներին, թե կարող են հանգիստ վառել պատրույգը։ Ժողովուրդը նրա մետաքսային դիմագծերում տեսնում էր

մեսիական լուսապսակ։ Նա էր այն աստվածառաք մարդը, որ պետք է հարություն տար Օսմանի, Բայազիդի և Սոլեյմանի կայսրությանը։

Գեներալը պաշտոնյաներին ողջունեց զվարթ ձայնով, որը սովորաբար անասելի հիացմունք էր պատճառում։ Անհամար ձեռքեր փաշայի առաջ թափով բաց արին դռները, որոնք դիվանատան բազմաթիվ սենյակների միջով առաջնորդում էին դեպի Թալիաթ բեյի աշխատասենյակը։

Վիթխարամարմին մինիստրի համար առանձնասենյակը շատ նեղ էր թվում։ Երբ հսկան ոտքի էր կանգնում, ինչպես այժմ, թիկունքով ծածկում էր պատուհանը, սենյակը մթնեցնում։ Թալիաթի վիթխարի գլխի վրա սպիտակին էին տալիս ալեխառն քունքերը։ Արևելցու ուռած շրթունքների վերևում խաղում էին ձյութի նման սև փոքրիկ բեղերը։ Ուղղաձիգ օձիքի միջից դուրս էր ցցված պարարտ կրկնակզակը։ Բամբակե սպիտակ բաճկոնակը, որպես սրտաբուխ անկեղծության խորհրդանիշ, պարուրել էր աղեղնաձև վեր խոյացող որովայնը։ Թալիաթ բեյը երկիշխանության համակառավարչին տեսնելիս միշտ էլ պահանջ էր զգում իր զորավոր արջաթաթը հայրաբար դնելու այդ շնորհաշատ երիտասարդի ուսին։ Բայց ամեն անգամ այդ մտերմական մերձեցմանը խանգարում էր Էնվերի դեմքին դրոշմված սառցային օտարոտիությունը։ Թալիաթը ծուվ եռանդի տեր աշխարհիկ մարդ էր, հռետոր, որը կարող էր իր կարկաչուն պերճախոսությամբ միաժամանակ հինգ դիվանագետի գլուխ լվանալ, մինչդեռ Էնվերը՝ արքայադստեր ամուսինը, մեծ ընդունելությունների ժամանակ հաճախ կարողանում էր կես ժամ երաշներով տարված և մտամոլոր կանգնել-մնալ։ Թալիաթն իր մոտ, վիթխարի ձեռքը ցած իջեցրեց, բավականացավ միայն մի հարցով.

— Ուրեմն՝ գերմանացին քեզ մո՞տ էր։

Էնվեր փաշան հայացքը հառեց դեպի Բոսֆոր, դեպի ալեծածան ջրերը, որտեղ օրորվում էին սրընթաց շոգենավերն ու փոքրիկ մակույկները, ուր օրվա այդ ժամին առատ լույսի պատճառով վատ էին արտացոլվում նոճիներն ու ավերակները։ Ապա հայացքը ետ դարձրեց, աչքի անցկացրեց դատարկ սենյակը, մինչև նկատեց գորգածածկ փոքրիկ սեղանի վրա հանգչող հեռագրական մի հին սարքավորում, որն այնտեղ դրված էր իբրև հազվագյուտ գանձ։ Այդ խղճուկ գործիքի վրա մի ժամանակ փոստի և հեռագրատան ստորին պաշտոնյա Թալիաթը մատնահարում էր Մորզեի այբուբենը, երբ դեռ Իթթիհատի հեղափոխությունը նրան չէր բարձրացրել մինչև խալիֆայական կայսրության առաջին մարդու աստիճանը։ Այս իրեղեն ապացույցը տեսնելիս ամեն այցելու չէր կարող

առանց զարմանքի խորհել գլխապտույտ վերելքի մասին։ Էնվեր փաշան ևս բարյացակամությամբ նայեց Մորզեի նշանավոր գործիքին, նախքան կմտաբերեր Թալիաթի տված հարցը.

— Այո, ինձ մոտ էր գերմանացին։ Փորձեց մի քիչ սպառնալ Բայիստագով...

Այս արտահայտությունն ապացուցեց, թե որքա՞ն իրավացի էր Ջավեն սրբազանը։ Պատվելու մարդկային բոլոր թախանձանքները ի սկզբանե պայքարի սխալ եղանակ էին։

Քարտուղարը մի կապոց հեռագրեր բերեց։ Թալիաթը ոտքի վրա սկսեց ստորագրել։ Խոսելիս վերև չէր նայում.

— Այդ գերմանացիները մեզ հետ հավասար պատասխանատվություն կրելու ամոթից են միայն վախենում։ Բայց հայկական հարցից հետո դրանք դեռ մեզ շատ ուրիշ առիթներով կդիմեն։

Հավանաբար դրանով էլ կավարտվեր այդ օրվա խոսակցությունը աքսորի վերաբերյալ, եթե Էնվերն իր հայացքը հետաքրքրությամբ չսևեռեր հեռագրերի կողմը։ Թալիաթ բեյը նկատեց այդ հայացքը և թղթերը խշխշացնելով շուռումուռ տվեց.

— Մանրակրկիտ հրահանգներ Հալեպի վերաբերյալ։ Մինչև տեղ հասնեն, իմ կարծիքով, ճանապարհները նորից դատարկված կլինեն։ Առաջիկա մի քանի շաբաթվա ընթացքում կմաքրվեն Հալեպը, Ալեքսանդրեթը, Անտիոքը, ամբողջ ծովեզերքը։

— Անտիոքը և ծովեզերքը,— կրկնեց Էնվերն այնպես, որ այդ առթիվ կարծես ուզում էր դիտողություն անել։ Բայց ոչ մի բառ չասաց, այլ մտասևեռ նայեց Թալիաթի հաստ մատներին, որոնք ասես անզուսպ գրոհի էին նետվում, թղթերի տակ անդադար դրոշմելով բեյի ստորագրությունը։ Կեղծավորն իր բիրտ մատներով ստորագրեց բոլոր վալիներին և մյութեսարրֆներին ուղղված անթվակիր մի հրաման. «Տարագրության նպատակը ոչնչացումն է»։ Արագ-արագ շարվող տողերը անառարկելի, աներկբա համոզմունք էին դրսևորում։

Վերջապես մինիստրն ուղղեց իր կոշտ ու կոպիտ իրանը, որը մինչ այդ կռացած էր.

— Այսպե՞ս։ Աշնանն այդ բոլոր մարդկանց կկարողանամ ամենայն անկեղծությամբ պատասխանել. «La question arménienne n'existe pas»[1]։

---

[1] Հայկական հարց գոյություն չունի (ֆր.)։

Էնվերը նայում էր պատուհանից դուրս։ Նա ոչինչ չլսեց։ Արդյոք խորհում էր խալիֆայական իր կայսրությա՞ն մասին, որ տարածվելու էր Մակեդոնիայից մինչև Մերձավոր Հնդկաստան, թե՞ նրան մտահոգում էր բանակին ռազմամթերք հասցնելու խնդիրը։ Կամ գուցե երազում էր նոր զարդարանք ձեռք բերել Բոսֆորի ափին վեր խոյացող իր հեքիաթային ապարանքի համար։ Մեծ սրահում դրել էր իր հարսանյաց գահը, որն իբրև օժիտ բերել էր Նաջիե սուլթանադուստրը։ Զորս արծաթյա ոսկեջրած սյուների վերևում հանգչում էր բյուզանդական կերպասից հյուսված աստղահուռ մի երկինք։

Յոհաննես Լեփսիուսը դեռևս դեգերում էր Ստամբուլի փողոցներում։ Միջօրեն վաղուց էր անցել։ Ճաշելու մասին պատվելին չէր էլ մտածում։ Սիրտ չէր անում գնալ տուն՝ Թոքաթլյան հյուրանոցը։ Սարսափ և հուսալքություն էր այնտեղ տիրում՝ սկսած հյուրանոցի տիրոջից, հյուրերից, վերջացրած մատուցողներով ու լիֆթավար պատանիներով։ Նրանք գիտեին իր գնալիք ճանապարհները, գիտեին իր համարձակ նախաձեռնությունը։ Եթե տուն վերադառնար, բոլորն ակնապիշ կնայեին իր երեսին։ Լրտեսներն ու գաղտնի խուզարկուները, որոնք Թալիաթի կարգադրությամբ ամենուրեք նրան հետևում էին, ամեն ինչ կարող էին նկատել։ Բայց վատն այն էր, որ բարեկամները նախապես որոշված ապահով մի տեղ արդեն քանի՞ ժամ սպասում էին։ Դրանց մեջ էր Դավթյանը՝ Հայ ազգային ժողովի նախկին նախագահը, ձերբակալվածներից մեկը, որը, սակայն, փախել էր և գաղտնի ապրում էր Պոլսում։ Լեփսիուսն այդ մարդկանց աչքին երևալու ո՛չ ուժ ուներ, ո՛չ էլ քաջություն։ Եթե չգնար, իրողությունը կգուշակեին և հավանաբար կցրվեին։ Նույնիսկ ամենաթունդ հոռետեսները (ի դեպ, բոլորն էլ բնականաբար ծայրահեղ հոռետեսներ էին դարձել) բնավ էլ անհնարին չէին համարում այն, որ պատվելին կստանա երկրի ներսում շրջագայելու արտոնագիր։ Դա արդեն մեծ նվաճում կլիներ։

Պատվելին հասավ քաղաքային զբոսայգի։ Այստեղ ևս տոնական տրամադրություն էր տիրում։ Նստարանների վրա ծաղկեշղթաներ էին օրորվում։ Ձողերի և լապտերասյուների վրա փողփողում էին մահիկազարդ դրոշներ։ Մարդկային մեծաթիվ, անախորժ զանգվածը, փոքրիկ մարգագետինները տրորելով, հրհրոցով մղվում էր դեպի խճուղի։ Ընդարմացած ու երերաքայլ պատվելին մի նստարան նկատեց։ Նստածների կողքին տեղ գտավ։ Դիմացը գունագեղ մի կիսաշրջան կար։ Դա երաժշտական տաղավարն էր։ Հենց այդ պահին թուրքական զինվորական նվագախումբը կատարում էր ենիչերիական* ինչ-որ երգ։ Շվիներ, սրընգափողեր, ականջ ծակող կլառնետներ, որոտաձայն ծնծղաներ։ Այս բոլորը դանակի նման սուր միաբանություն կազմած՝ թնդացնում էին շրջակայքը։ Դրանց մեջընդմեջ ձայնակցում էին շեփորների շնային մոլեռանդ ոռնոցը, փայտե ձողերի խլացուցիչ ճարճատյունը, ծնծղաների ֆշշացող ատելությունը։

Յոհաննես Լեփսիուսն այս երաժշտության մեջ խորասուզված՝ իրեն զգում էր ապակու կտորներով լեփ-լեցուն լոգարանում։ Բայց չէր ուզում ապատագրվել, ուզում էր տառապել. զույգ ձեռքով մարմնին էր սեղմում ապակու բեկորները։ Այժմ շնորհվել էր այն, ինչ էնվեր փաշան մերժեց։ Իրեն ապավինած ժողովրդի աքսորյալ քարավանների երկար ու ձիգ շղթային ձուլված՝ ինքն էլ մտովի քարշ էր գալիս Անատոլիայի քարքարոտ, ճահճոտ ճանապարհներով։ Արդյոք նրան չէի՞ն ամբաստանի յուրայինները, որոնք հոշոտվում էին Արգոնների խրամատներում, Պոդոլիայի, Գալիցիայի դաշտերում, ծովերում, օդում։ Մի՞թե վիրավորներով ծանրաբեռնված անվերջանալի գնացքաշարն ավելի սահմռկեցուցիչ քարավան չէր, որին նայողն անկարող էր չաղաղակել։ Գերմանացի վիրավորներն ու մահամերձներն իրենց աչքերը սարսափից չէի՞ն շռում հայերի նման։ Լեփսիուսն ուզում էր, որ ենիչերիական երաժշտությունն ավելի խորը մխրճվի խառնաշփոթ մտորումներից ծանրացած իր հոգնատանջ գլխի մեջ։ Նա կոչված էր օգնելու ոչ թե յուրայիններին, այլ օտարներին։

Ոռնոցանման պոռթկուն երաժշտությանը խառնվեց ինչ-որ նոր աղմուկ, որոտ հիշեցնող հոնդյուն, որը հետզհետե ուժգնանում էր։ Ստամբուլի վերևում ճախրում էր թուրքական օդային մի էսկադրա, թռուցիկներ շաղ տալիս։ Սպիտակ, փոքրիկ ամպերի նման օրորվելով, դրանք ցած էին իջնում։ Լեփսիուսը չգիտեր, թե ինչու, բայց նրա համար պարզ դարձավ, որ ինքնաթիռներին կարելի է տալ այսպիսի անուն՝ ժառանգական մեղք և այդ մեղքի սավառնումները սեփական գլխի վերևում։ Այդ հայտնագործության մեջ սկսեց խարխափել, ինչպես հսկայական տան մեջ, ինչպես ներքին գործոց մինիստրության շենքում։ Դռների փողփողուն վարագույրները բոցավառվեցին, և նա կրկնեց Հայտնության այն հատվածը, որն ուզում էր մեջբերել հաջորդ բանախոսության ժամանակ։ «Եվ մորեխները նման էին կռվի նետվող ձիերի... և զրահ ունեին, և նրանց թևերի շառաչը նման էր մարտակառքերի դղրդյունի... Եվ կարիճների նման պոչեր ունեին, և խայթոցներ կային պոչերի վրա, և մարդկանց հինգ ամիս շարունակ վնաս հասցնելու զորություն ունեին»։

Լեփսիուսը վախեցած վեր թռավ։ Հարկավոր էր նոր միջոցներ գտնել, նոր ուղիներ։ Եթե գերմանական դեսպանությունը մերժեց, ապա ավստրիական մարկգրաֆ Պալավիչինին, ճանաչված մի մարդ, թերևս, ավելի մեծ հաջողության հասներ։ Ինքն էլ կարող էր իր հերթին սպառնալ. չէ՞ որ մահմեդական բոշնաքները ավստրո-հունգարական քաղաքացիներ էին։ Պապի նախազգուշացումներն էլ ապարդյուն անցան։

Հենց այդ պահին պատվելու աչքի առաջ կանգնեց Էնվեր փաշան՝ իր անմոռանալի ժպիտը դեմքին։ Ո՛չ, արդեն ամոթխածություն չկար պատանեբար կամ աղջկաբար ժպտացող այդ մեծ մարդասպանի խոսքերում. «Պարո՛ն Լեփսիուս, մենք մեր շահերից բխող քաղաքականությունը մինչև վերջ առաջ կտանենք։ Մեր ճանապարհը կարող է փակել միայն մի զորություն, որը բարձր է բոլոր շահերից և չի խառնվում խողությունների։ Եթե դիվանագիտական օրացույցում պատահմամբ այդպիսի իշխանություն գտնեք, ապա մի անգամ էլ կարող եք գալ ինձ մոտ՝ մինիստրությունն»։

Լեփսիուսն այնքան անհանգիստ շարժվեց, որ կողքին նստած չադրայավոր հարևանուհիները վախեցած հեռացան։ Պատվելին այդ բանը նույնիսկ չնկատեց։ Նրան համակեց մի խոր համոզմունք. ոչ մի բան անել հնարավոր չէ։ Այլևս փրկություն չկա։ Այն, ինչ շաբաթներ առաջ Յողոնօլուքում գիտեր Տեր-Հայկազունը, համոզիչ թվաց նաև պատվելի Յոհաննես Լեփսիուսին. միայն մի բան էր մնում՝ աղոթել։

Եվ տոնախմբության դուրս ելած խառն բազմությամբ շրջապատված, կանացի քրքիջներից ու մանկական ճիչերից գոյացող ժխորի տակ, դեպի ենիչերիական ոռնացող երաժշտությունը մղվող հորձանուտում, երբ փակ աչքերն ու անզոր գլուխը ցած էին թեքվում, պատվելին ձեռքերը խաչեց կրծքին (կամ գուցե այդպես թվաց)։ Հոգում ցանկություն ծնվեց մրմնջալու. «Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո...»։

Բայց ինչպե՞ս էր այլափոխվել «Հայր մերը»։ Յուրաքանչյուր բառը մի անդունդ էր, որ անհնար էր հայացքով չափել։ «Մեր» բառն արտասանելիս պատվելու գլուխը պտտվեց։ Ո՞վ իրավունք ունի ասելու «մեր», եթե Քրիստոսը, որն առաջին անգամ շաղկապեց, արարեց «մենք»-ը, երրորդ օրը երկինք համբարձվեց։ Առանց Նրա ամենայն ինչ փլատակների, ոսկորների ժանտահոտ մի լեռ էր միայն, որը ձգվում է, լցնում այս տիեզերքի կեսը։ Լեփսիուսը մտաբերեց իր մոր օրագիրը, հատկապես այն նախադասությունը, որ գրվել էր իր մկրտության առթիվ, հիսունվեց տարի առաջ. «Թող որդուս անունն ինձ շարունակ հիշեցնի, որ իմ մեծ, սրբազան պարտքն է՝ նրան դաստիարակել, դարձնել իսկական

Յոհաննես։ Թող նա դառնա այնպիսի մարդ, որը, հիրավի, սիրում է Տիրոջը և ընթանում է նրա հետքերով»։ Արդյոք դարձե՞լ էր իսկական Յոհաննես՝ Հովհանն, բոլորանվեր տոգորվա՞ծ էր նույն աներեր հավատով։ Ավա՜ղ, այդ հավատը կարող էր փշրվել, երբ տկար էր մարմինը։ Շաքարախտը նորից էր գլուխ բարձրացրել։ Սնվելու մեջ պետք է զգույշ լիներ։ Ո՛չ քաղցրավենիք, ո՛չ կարտոֆիլ։ Երևի Էնվերը կանխեց ցավերի սաստկացումը, երբ թույլ չտվեց մեկնել Անտիոք։

...Բայց այնտեղ ի՞նչ գործ ուներ Թոքաթլյան հյուրանոցի դռնապանը։ Այդ երբվանի՞ց էր սպայական մորթե գդակ կրում։ Էնվե՞րն էր ուղարկել։ Ահա, դռնապանը քաղաքավարությամբ նրան մեկնեց երկրի ներսում շրջագայություն կատարելու թեզքերեն։ Դա Նապոլեոնի լուսանկարն էր սեփական ստորագրությամբ։ Հիրավի, հյուրանոցի պտտվող դռների առաջ իրեն էր սպասում աքսորյալների քարավանը։ Բոլոր բարեկամներն այնտեղ էին՝ Դավթյանը և մյուսները։ Ուրախացած մոտ էին կանչում։ Մարդիկ, ինչպես թվաց պատվելուն, հիանալի տեսք ունեին։ Ամենազարհուրելի իրողությունն անգամ իր մեջ ինչ-որ հաշտարար բան ունի, եթե ուղիղ աչքերին ես նայում։ Ինչ որ գետի եղերքին, գահավեժ կախված ժայռերի տակ կանգ առան։ Հետները նույնիսկ վրաններ էին բերել։ Թերևս Էնվերը գաղտնաբար որոշ զիջումներ էր արել։ Երբ բոլորը պառկեցին, մի վիթխարահասակ հայ ցեխոտված շորերով մոտեցավ պատվելուն։ Կոտրատված գերմաներենով հանդիսավոր եղանակով ասաց. «Նայիր, այս կատաղի գետը Եփրատն է։ Սրանք էլ իմ երեխաներն են։ Պառկիր մի ափից մինչև մյուս ափը, կամուրջ դարձիր զավակներիս համար»։ Լեփսիուսը կարծեց, թե կատակում է։ «Դու և երեխաներդ,— ասաց նա,— մի քիչ էլ սպասեցեք, մինչև հասակս երկարի»։ Բայց նույն վայրկյանին դոկտորն, իրոք, ձգվեց, սկսեց զարմանալի արագությամբ խոշորանալ։ Ձեռքերն ու ոտքերն անսահմանորեն երկարեցին դեպի հեռուները։ Այժմ արդեն հանգիստ կարող էր կատարել հայ մարդու խընդրանքը։ Բայց բանը դրան չհասավ, քանի որ Լեփսիուսն արդեն կորցրեց հավասարակշռությունը և քիչ մնաց՝ գլորվեր նստարանի վրայից։ «Սա, հիրավի, սոսկալի է»,— ինքնիրեն մրմնջաց արդեն երկրորդ անգամ։ Զգաց, որ ամենից շատ տանջվում է ծարավից։ Ցնցվելով վեր կացավ, վազեց մոտակա կրպակը, ագահորեն սկսեց խմել սառն ըմպելիքը, ուշադրություն չդարձնելով բժիշկների տված խորհուրդներին։ Իրեն լավ զգաց, և իսկույն գլխում ծնվեցին նոր, համարձակ ծրագրեր։ «Չպետք է զիջեմ»,— ինքն իրեն ծիծաղեց մտացրիվ։ Եվ այս չկշռադատված ծիծաղով նա պատերազմ հայտարարեց Էնվեր փաշային։

Նույն պահին Թալիաթ բեյի անձնական քարտուղարը փոստի և հեռագրատան գլխավոր պաշտոնյային սեփական ձեռքով հանձնեց Հալեպին, Ալեքսանդրեթին, Անտիոքին և ծովեզերքին վերաբերող հայտնի հեռագրերը։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Ահ ժողովի

Այն օրից ի վեր, ինչ Ջելալ բեյը՝ Հալեպի պատվարժան վալին, հրաժարվեց աքսորի կառավարական հրամանները իր տնօրինության շրջանակներում կատարելուց, գարնանային այդ օրից ի վեր Էնվերի և Թալիաթի հայկական քաղաքականության մեջ այլևս տեղի չունեցավ որևէ խափանարար միջադեպ կամ անախորժ հապաղում։ Որոշակի, կշռադատված կարգով մինիստրության ծանուցագրերն առաքվում էին կուսակալներին։ Դրանց անմիջապես հետևում էին կատարողական հրամանները։ Բյուրոկրատական մեքենան գործում էր բացառիկ, զարմանալի ճշտությամբ, պաշտոնյաների սրտերը լցնում հրճվանքով։ Առանձին երկրամասերի կուսակալները (վալիները) ծանուցագիր ստանալուն պես իրենց վիլայեթների կազմի մեջ մտնող սանջակների մյութեսարրֆներին իսկույն հրավիրում էին արտակարգ կոնֆերանսի։ Մասնակցում էին նաև տրվյալ երկրամասերի զինվորական պետերը։ Նիստի ժամանակ յուրաքանչյուր նորին վսեմություն վալի փաշա հայտարարում էր մոտավորապես հետևյալը.

— Հրահանգն ի կատար ածելու համար էֆենդիներին տրվում է տասնչորսօրվա ժամկետ։ Մինչ այդ պետք է աքսորվող բնակչության վերջին քարավանը վիլայեթի սահմաններից դուրս բերված լինի՝ մեռած թե կենդանի։ Հրահանգը եռանդուն և անհապաղ կատարելու պատասխանատվությունը դնում եմ ձեզ վրա, քանի որ ինքս էլ պատասխանատու եմ ներքին գործոց մինիստրի առաջ։

Այնուհետև կոնֆերանսի քննարկմանն էր ներկայացվում կուսակալի կազմած ծրագիրը, որտեղ նշված էր արտաքսման հերթականությունը։ Մյութեսարրֆները հայտնում էին իրենց առարկություններն ու բարեփոխումները, իսկ գեներալը խոսում էր ուղեկցող զորքերին ու ոստիկանությանը տրվելիք կարգադրության շուրջը։ Մոտ մեկ ժամ հետո մարդիկ արդեն կարող էին գնալ բաղնիք կամ սրճարան, եթե վալին ճաշկերույթի հրավիրած չլիներ։ Մյութեսարրֆները վերադառնում էին իրենց պաշտոնավայրերը։ Ապա կրկնվում էր նույն խաղը։ Նրանք էլ իրենց հերթին էին կոնֆերանս հրավիրում, կանչում կայմակամներին։ Դարձյալ մասնակցում էր զինվորական պարետը, որը, իհարկե, արդեն գեներալ չէր։ Քննարկվում էին կուսակալի ծրագիրը, ելնելով տեղական պայմաններից։ Սանջակների նիստերն ավելի երկար էին տևում։ Դուրս գալուն պես էֆենդիները շտապում էին սրճարան կամ բաղնիք, գոհհիկ թուրքերենով հայհոյում հայազգի խաժամուժը, որն իրենց այսքան նեղություն էր պատճառում պատերազմի հենց կեսին։ Այնուհետև գալիս էր կայմակամների հերթը։ Գավառակենտրոն քաղաքներում սրանք ժողովի էին հրավիրում մյուդիրներին՝ իրենց շրջանների պարագլուխներին։ Այս նիստերն արդեն հանդիսավոր ձևով «կոնֆերանս» չէին կոչվում։ Գրեթե բոլոր մյուդիրներն էլ երիտասարդ մարդիկ էին։ Եթե մեկ-մեկ ալեհեր պաշտոնյաներ էին երևում, ապա դրանք քաղաքացիական ծառայության մեջ առաջադիմության չհասածներն էին։ Կայմակամը նրանց հայտնում էր այն, ինչ վալին հայտնել էր մյութեսարրֆին, սա էլ՝ կայմակամին։ Բայց սա, անշուշտ, ասում էր ոչ այնքան ընտիր ճառով.

— Այսքան, այսքան ժամանակ ունեք։ Մինչ այդ պետք է պիղծ խոզերի նախիրը դուրս քշեք մեր քաղաքի սահմաններից։ Գործը պետք է գլուխ բերել։ Դրա համար ինձ պատասխան եք տալու։ Վա՜յ նրան, ով թերանա։ Ոչ մի ցանկություն չունեմ ուրիշների պատճառով հեռացվելու և թոշակառու դառնալու։

Չհաշված գործի հետ անմիջական առնչություն ունեցողներին, այդ մյուդիրների վրա էր ընկնում ողբերգական միջոցառման ամբողջ ծանրությունը։ Նրանց տնօրինության տակ գտնվող խոշոր գավառներում գրեթե երկաթուղիներ չկային, հեռագրատները սակավաթիվ էին, իսկ սարսափելի ճանապարհներն ու լեռնային արահետները կառքով անցնելն արդեն տառապանք էր։ Մնում էր միայն մի միջոց։ Գիշեր-ցերեկ ձիով գյուղից գյուղ պետք է անցնեին, այն բոլոր աննշան բնակավայրերը, որտեղ հայեր էին ապրում, ժամանակին ոտքի հանեին։ Ժամանակի՞ն։ Երբեմն դա լինում էր կեսգիշերին, քարավանը շարժվելուց առաջ։ Վա-

լին, մյութեսարրֆը, կայմակամը հեշտ ու հանգիստ հրամայում էին, պատասխանատվության տակ դնում։ Քաղաքներում դա խաղ ու պար էր։ Բայց ովքեր իրենց իրավասության տակ ինքնությունի գյուղ ունեին, ավաններ, գյուղակներ ու ագարակներ, նրանց գործը բարդանում էր։ Մյուդիրներից ոմանք, որոնք ո՛չ կախարդական ձիրքով էին օժտված, ո՛չ էլ տառակերական եռանդ ունեին, ստիպված էին այս կամ այն աննշան գյուղը պարզապես անտեսել։ Շատերն էլ այդպես էին վարվում բարեհոգի ծուլության պատճառով, մի բան, որն այնքան հատկանշական է մարդկային գործունեության համար։ Մի մասն էլ համատեղում էր հաճելի դյուրությունն ու հետին, խորամանկ մտադրությունը։ «Անտեսումը» դարձնում էին եկամուտի աղբյուր, քանի որ հայ ամենաշարքային արհեստավորը և նույնիսկ երկրագործն ընչազուրկ չէ։ Նման գործարքները վտանգավոր էին միայն այն վայրերում, որտեղ ոստիկանական ուժեղ հսկողություն կար։ Զափթիեներն ուզում էին իրագործել իրենց սեփական գործարքը։ Իսկ ի՞նչ գործարք կարող է ավելի եկամբտաբեր լինել, քան օրինական կողոպուտը, որի առաջ տեղական իշխանություններն աչք էին փակում։ Չէ՞ որ օրենքի համաձայն արտաքսվողների ունեցվածքը պատկանելու էր պետական գանձարանին։ Բայց այդ գանձարանը հաստատ գիտեր, որ ինքը բավականաչափ միջոցներ չունի իր պատվավոր պահանջներն իրագործելու համար, մինչդեռ ավելի գերադասելի էր գործադիր օրգանների եռանդն արթուն պահելու անհրաժեշտությունը։

Գավառական սելամլըքներում, սրճարաններում, բաղնիքներում, ժողովարաններում արդիական աշխարհը (այսինքն՝ բոլորը, ովքեր լրագրեր էին կարդում, օտար լեզուների համեստ բառապաշար ունեին, ովքեր կարագյոզ կոչվող թուրքական հին ստվերախաղի փոխարեն Զմյուռնիայում կամ Ստամբուլում ֆրանսիական մեկ-երկու կատակերգություն էին դիտել կամ, այլ կերպ ասած, լսել էին Բիսմարկի* ու Սառա Բեռնարի* անունները), այսպես կոչված ուսյալների առաջադեմ միջնախավը, անվերապահորեն խրախուսում էր էնվերի հայահալած քաղաքականությունը։ Միանգամայն այլ վերաբերմունք էին դրսևորում թուրք հասարակ մարդիկ՝ գեղջուկներն ու քաղաքաբնակ ստորին դասը։ Շրջագայող մյուդիրները հաճախ զարմանում էին, երբ տեղահանման հրաման ստացած որևէ գյուղում թուրքերն ու հայերը իրար գլխի հավաքված՝ լացուկոծ էին անում։ Ապշում էին, երբ հայի տան առաջ թուրք հարևանի ընտանիքը ախուվախ էր անում, նայելով, թե ինչպես տարաբախտները չորացած արցունքներով, քարացած, առանց ետ նայելու հեռանում էին իրենց պապենական օջախից։ Ապշում էին, երբ թուրքերը ոչ միայն նրանց ետևից գոչում էին. «Ալլա՜հը ձեզ ողորմի», այլև ճանապարհի պարեն էին տալիս, ահագին նվերներ, նույնիսկ այծեր ու ջորիներ։ Մյուդիրները տեսնում էին նաև, որ թուրք հարևանները թշվառներին ուղեկցում էին, հետները քայլում բազմաթիվ մղոններ։ Մյուդիրներն իրենց աչքով էին տեսնում, թե ինչպես իրենց ցեղակիցներն ընկնում էին իրենց ոտքերը, աղերսում.

— Թողեք մեզ մոտ մնան։ Ճշմարիտ հավատ չունեն, բայց բարի են։ Մեր եղբայրներն են։ Թողեք մեզ մոտ մնան։

Բայց ի՞նչ օգուտ։ Ամենաբարեգութ մյուդիրն անգամ բացառություն կարող էր անել միայն մի քանի կորած-մոլորած գյուղակում և գաղտնորեն թույլ տալ, որ անիծյալ ազգի որևէ մնացորդ պատսպարվի իր հովանու տակ, ստեղծելով մահացու սպառնալիք։

Թափորը սայթաքելով անցնում էր գյուղամերձ արահետները, թեքվում դեպի սայլուղիները, դուրս գալիս գյուղամիջյան ճանապարհները, օրերով քարշ գալիս, մինչև վերջապես հասնում էր մեծ խճուղին, որը Հալեպի միջով ձգվում էր դեպի հարավ-արևելք, դեպի անապատը... Մանրորեն շարժվող միլիոնավոր ոտքերի այդ ռիթմը նորություն էր աշխարհի համար։ Այս բանակի առաջխաղացումը ծրագրված էր և կիրառվում էր ռազմագիտական հույժ խորիմացությամբ։ Գաղտնաբար գործող զորավարները միայն մի բան էին բոլորովին մոռացել. պարենավորումը։ Առաջին օրերին դեռևս կարողացան հաց ու ձավար ճարել, թեև սեփական պարենը դեռևս չէր սպառվել։ Այդ առաջին օրերին ամեն մի չափահաս աքսորյալ իրավունք ուներ օնբաշուց՝ քարավանի դրամական հաշիվները տնօրինող ենթասպայից, ստանալու իր օրական հասանելիքը՝ տասներկու փարա, մոտ տասնչորս կոպեկ։ Բայց շատերն զգուշանում էին նման պահանջ ներկայացնելուց, որով կարող էին միայն բորբոքել ամենազոր մի անձավորության ատելությունը։ Առանց այդ էլ թանկություն էր տիրում. տասներկու փարայով կարելի էր առնել մեկ-երկու նարինջ կամ հավի ձու։ Ժամ առ ժամ աքսորյալների դեմքերը փոս էին ընկնում, և միլիոնավոր ոտքերի ընթացքը դառնում էր ավելի երերուն։ Շատ չանցած, հազիվ քարշ եկող այդ արարածներից ոչ մի ուրիշ ձայն դուրս չէր գալիս, բացի հառաչանքներից, հազից, լացուկոծից, մերթ էլ վայրի, ջղաձիգ գոռոցից։ Ժամանակի ընթացքում այդ արարածներից շատերը վայր էին ընկում, գլորվում փոսերի մեջ, շունչները փչում։ Ետ ընկնող շարքերի մեջքին իջնում էին զափթիեների մտրակները։ Ոստիկան-

ները կատաղում էին։ Շան չարչարանք էին կրում, մինչև տարագիրներին հանձնում էին հետևյալ քաղաքի սահմանագլխին կանգնած ոստիկանախմբին։ Սկզբում ցուցակներ կային։ Բայց երբ հիվանդության և մահացության դեպքերը չափ ու սահման անցան, երբ մեռածներին ու կիսամեռներին ստիպված գլորում էին փոսերի մեջ, մանավանդ երեխաներին, ապա ցուցակներ պահելը դարձավ միանգամայն ավելորդ զբաղմունք, և օնբաշին հրամայեց ձեռք քաշել այդ թղթային ձևականությունից։ Ո՞վ էր հարցնելու, թե ճանապարհին նեխողներն ովքեր են՝ Սարգի՞սը, Աստղի՞կը, թե՞ Հաբեթը, Անո՞ւշը, Վարդուհի՞ն, թե՞ Խորենը։ Բոլոր զափթիեները գիշատիչ գազաններ չէին։ Նույնիսկ պետք է խոստովանել, որ դրանք մեծ մասամբ բարի մարդիկ էին։ Բայց ի՞նչ կարող էր անել զափթիեն։ Նրան խստագույնս հրամայված էր ամբողջ նախիրն այսինչ ժամին այսինչ տեղը հասցնել։ Նրա սիրտը միանգամայն լավ էր հասկանում ողբացող մորը, որն աշխատում էր փոսից դուրս քաշել երեխային, նետվում էր ճանապարհի փոշու մեջ, ճանկռում հողը։ Ոչ մի հորդոր չէր օգնում։ Բոպեներն անցնում էին, իսկ մինչև հետևյալ կայանը դեռևս տասներկու կիլոմետր ճանապարհ էր մնում։ Թափորն առաջ էր շարժվում։ Բոլոր դեմքերն այլայլված էին։ Հազարավոր բերաններից պոռթկում էին խելացնոր աղաղակները։ Բայց ինչո՞ւ այդ բազմությունը (որքան էլ ուժասպառ լիներ) չէր նետվում զափթիեների ու նրանց ընկերների վրա, զինաթափ չէր անում, չէր հոշոտում։ Զափթիեները երևի վախենում էին կատաղության նման բռնկումից, որը վերջ կտար նրանց գոյությանը։ Երբեմն մեկնումեկը կրակում էր։ Ոմանք էլ դուրս էին քաշում յաթաղանները, սուր կողմով հարվածում անպաշտպան մարդկանց։ Երեսուն-քառասուն տղամարդ ու կին գալարվում էին սեփական արյան մեջ։ Բայց արյուն տեսած կատաղի զափթիեների մեջ արթնանում էր մի այլ գինովություն՝ ավանդական կիրքը ատելի ցեղի կանանց հանդեպ։ Բախտի քմահաճույքին հանձնված կանանց բռնաբարելով՝ նրանք կարծես բռնաբարում էին ավելին, քան մարդկային էությունն էր. բռնաբարում էին թշնամու աստծուն։

Այնուհետև զափթիեներն իրենք էլ չէին հասկանում, թե այդ ամենը ինչպես տեղի ունեցավ։

Թափառական մի գորգ՝ հյուսված ճակատագրի արնաներկ թելերից։

Միշտ նույնն էր կրկնվում։ Առաջին թափորն ուղարկելուց հետո բոլոր երիտասարդ տղամարդկանց առանձնացրին։ Լավ հագնված մի ինժեների, որ կլիներ քառասուն-քառասունվեց տարեկան, զափթիեներն ընտանիքից

կարողացան բաժանել միայն մահակների հարվածներով։ Փոքրիկ երեխան մեկուկես տարեկան չկար։ Առանձնացրին ճանապարհաշինական վաշտ ուղարկելու համար։ Տղամարդկանց երկար շղթային միացած՝ նա խելագարի նման օրորվում էր, իրեն-իրեն մղկտում.

— Բայց ես ամբողջ փրկագինը վճարել էի... ամբողջ փրկագի՞նը։

Հանկարծ նա ամուր բռնեց հարևանի թևը։ Ցնցվում էր ինչ-որ ցնորական ցավից. «Այդքան գեղեցիկ երեխա տեսած չկաս։ Գիտե՞ս ինչ խոշոր աչքեր ունի աղջիկս։ Երանի՜ կարողանայի օձի պես սողալ դրանց փորն ի վեր»։ Դարձյալ սկսեց օրորվել, մնաց մեն-մենակ, իր արցունքների մեջ ներանձնացած։

Երեկոյան մարդիկ փռվեցին լեռան լանջին։ Կարծես ինժեներն էլ քնեց։ Կեսգիշերին նա արթնացրեց նույն հարևանին։

— Բոլորն էլ արդեն մեռած են,— ասաց միանգամայն հանգիստ։

Ահա մի այլ քարավան։ Սիրահարված մի զույգ է թափառում։ Դեռևս շատ են երիտասարդ։ Փեսացուի վերին շրթունքը նոր է ազվամազով ծածկվել։ Մոտ է այն ահավոր ժամը, երբ ուժեղ ու տոկուն տղամարդկանց պետք է առանձնացնեն։ Հարսնացուն հանկարծ գլխի է ընկնում, որ իր սիրեցյալին կարող է կանացի զգեստ հագցնել։ Կեղծիքը հաջող է անցնում։ Զույգը մանկաբար հրճվում է. բախտավոր կերպարանափոխություն է։ Սակայն մյուսները նախազգուշացնում են, որ հաղթանակ տոնելը վաղաժամ է։ Ինչ-որ խոշոր քաղաքի մոտակայքում ընդառաջ են գալիս անծանոթ չեթեներ*՝ զինված բաշիբոզուկներ։ Բոլորն էլ վավաշոտ կնոջներ են։ Ի թիվս մյուսների, ընտրությունն ընկնում է նաև հարսնացուի վրա։ Սա կառչում է փեսացուից.

— Ի սեր աստծո, ինձ թողեք նրա մոտ. քույրս խուլ ու համր է։ Առանց ինձ կկորչի։

— Ջանըմ, դա ի՞նչ պատճառ է։ Թող այդ սիրունիկն էլ գա։

Զույգին տանում են մի կեղտոտ խրճիթ։ Իրողությունը իսկույն պարզվում է։ Չեթեները նույն վայրկյանին սպանում են երիտասարդին, սեռական օրգանները կտրում, դնում բերանը։ Տղայի շրթունքները հինայով կարմիր էին ներկված, որ ավելի շատ նմանվեր կնոջ։ Գազանաբար բռնաբարելուց հետո մերկ հարսնացուին կապում են տղայի դիակից՝ գլուխգլխի, այնպես, որ մեռածի արյունոտ անդամը քսվի աղջկա դեմքին...

Ճակատագրի ձեռքով հյուսված թափառական գորգ, որը ոչ ոք չի կարող քանդել...

...Ահա նորից այն մայրը, որն իր սովամահ եղած մանկանը պարկի մեջ դրած, շալակած տանում է, մինչև ազգականները դիմում են զափ-

թիեներին. այլևս չեն կարող տանել մեռելի հոտը։ Ահա քեմախցի խելագարված մայրերը, որոնք շարականներ երգելով՝ իրենց երեխաներին ժայռի գլխից նետում են Եփրատը։ Նրանց աչքերն այնպես են փայլատակում, կարծես ինչ-որ աստվածահաճո գործ են կատարում։ Ահա և մի եպիսկոպոս, մի վարդապետ, որը նետվում է մյուդիրի ոտքերը, լալիս.

— Էֆենդի, գթա այս անմեղներին։

Մյուդիրը պատասխանում է, առանց հրահանգից շեղվելու.

— Քաղաքական գործերին մի՛ խառնվիր։ Ես քեզ հետ կարող եմ խոսել միայն եկեղեցական հարցերի շուրջը։ Կառավարությունը հարգում է եկեղեցին։

Որոշ քարավաններում ոչ մի առանձին բան տեղի չի ունենում, ոչ մի արտակարգ դաժանություն. միայն քաղց, ծարավ, վիրավորված ոտքեր, հիվանդություն։

Միայն մի անգամ Մարաշում այսպիսի դեպք տեղի ունեցավ։ Հիվանդանոցի առաջ կանգնած էր մի գերմանուհի։ Նա այստեղ նոր էր ծառայության անցել իբրև գթության քույր։ Տան առջևից անցնում էր հայերի երկարաձիգ, լուռումունջ շղթան։ Գերմանուհին ուզում էր ներս մտնել, բայց չկարողացավ տեղից շարժվել։ Սպասեց, մինչև հեռացավ վերջին մարդը։ Գթության քրոջ հետ կատարվեց մի բան, որ ինքն էլ չհասկացավ։ Դա ո՛չ կարեկցանք էր, ո՛չ սարսափ։ Ինչ-որ անծանոթ, մեծ, գրեթե վեհություն հիշեցնող մի բան։ Երեկոյան իր ազգականուհուն գրեց.

«Ինձ հանդիպեց աքսորյալների մի մեծ թափոր։ Նոր էին հեռացել իրենց գյուղերից և դեռ լավ տրամադրություն ունեին։ Երկար կանգնեցի, մինչև անցան։ Այդ պահը երբեք չեմ մոռանա։ Մեծ մասամբ կանայք և երեխաներ էին. տղամարդիկ քիչ կային։ Շատերը խարտյաշ մազեր ունեին, երկնագույն խոշոր աչքեր։ Նայում էին սոսկալի լուրջ, անհասկանալի վեհանձնությամբ։ Կարծես ահեղ դատաստանի հրեշտակներ լինեին»։

Եվ այդ ահեղ դատաստանի խեղճ հրեշտակները գալիս էին Զեյթունից, Մարաշից, Այնթաբից, Ադանայի վիլայեթից։ Գալիս էին հյուսիսից, Սվազի, Տրապիզոնի, Էրզրումի գավառներից, գալիս էին արևելքից, Խարբերդից, քրդաբնակ Դիարբեքիրից, Ուրֆայից և Բիթլիսից։ Տավրոսի թիկունքում, Հալեպ չհասած, այս բոլոր թափորները միահյուսվում, վեր էին ածվում մարդկային անծայրածիր, գետնաքարշ գորգի։ Ո՛չ Հալեպում որևէ բան պատահեց, ո՛չ էլ վիլայեթի բազմաժխոր սանջակներում ու քաղաքներում։ Խաղաղ ու անխռով փռված էր ծովեզերքը, անդորր նիրհում էր նաև Մուսա լեռը։ Կարծես դրանք անտեղյակ էին այն զարհուրելի անցուդարձին, որ տեղի էր ունենում փոքր-ինչ հեռվում։

Երկար շաբաթներ։ Յողոնօլուքում, ինչպես ընդունված է ասել, կյանքն ընթանում էր իր խաղաղ հունով։ Բայց այստեղ այդ դարձվածքը տեղին չէր լինի, եթե ունենար միայն մակերեսային իմաստ։ Մարդիկ «այն բանի մասին» շատ չէին խոսում, բայց սարսափելին էլ հենց այդ էր, որ գրեթե ոչինչ չէին խոսում։ Դաշտերում ու այգիներում, դաղգահների ու ճախարակների առաջ, թերևս, ավելի եռանդուն էին աշխատում, ավելի տենդագին։ Նույնիսկ առևտրականները գնում էին Անտիոքի կիրակնօրյա շուկան, սովորականի պես վաճառում իրենց ապրանքը։ Հնավանդ սովորությամբ թուրք գնորդները գալիս էին գյուղերը, անվրդով սակարկում ամեն փարայի համար, կարծես ոչ մի առանձին բան չէր պատահել։ Ամեն ինչ նույնն էր մնացել, բայց և բոլորովին փոխվել էր։ Կարծես մարդկանց վրա հիպնոսային քուն էր եկել. կանոնավոր ձևով կատարում էին իրենց գործերը, բայց արթուն չէին։ Բոլորն էլ ամեն ինչ գիտեին։ Գիտեին, որ իրենց գոյությունը շաբաթների հարց է։ Գիտեին, բայց և չգիտեին։ Արդյոք արհավիրքը կարո՞ղ է անցնել Մուսա լեռան զավակների մոտով. չէ՞ որ մինչ այդ վնաս չէր տվել։ Արդյոք շրջակայքի մեկուսացած դիրքը չէ՞ր կարող պատճառ հանդիսանալ, որ իշխանավորները մոռացության տային այդ կողմերում ապրող հայերի գոյությունը։ Խոր անդորրության գրկում պատսպարված լինելն արդյոք բարեխոստում նշան չէ՞ր։ Սակայն ամեն մարդ այդ անդորրությունը խորացնում էր իր լռությամբ։ Մարդկային ոգին չէր արթնանում, խորասուզվում էր առօրյա հոգսերի թմրության մեջ, և բոլորին թվում էր, թե իրենք լող են տալիս մշտնջենական ապահովության գրկում։

Այսպես էին վարվում հատկապես բժիշկ Ալթունին, դեղագործ Գրիգորը, նույնիսկ Տեր-Հայկազունը։ Ավանակին բաղված՝ բժիշկը շարունակում էր այցելել հիվանդներին, անիծում էր իր ձախորդ ճակատագիրը, կարծես ավելի վատթար վիճակ չէր կարող լինել։ Գրիգորը, ուսուցիչներին իր շուրջը հավաքած, կատարում էր սոկրատեսյան իրիկնային շրջագայություններ, թվարկում աստղերի անունները, հաստատ հեռավորությունը, հայտնում քանակը, և ոչ ոք չէր առարկում։ Եթե մարդիկ օդում բիլիոն մղոն էլ սուրան, ապա որևէ աղետի ամենաչնչին արձագանք անգամ չեն լսի։ Իր իսկ մկրտած աստղերի թևերով, լույսի արագությամբ, Գրիգորը տիեզերքից վերադառնում էր։ Բայց հենց որ գլուխը բարձրացնում էր, հայացքից պարզ զգացվում էր, որ այդ ամենն անում

է ստիպված։ Հավանաբար ինքն էլ չէր հավատում իր ասածին։ Իրեն հուզող խնդրի շուրջը սևով սպիտակի վրա գրված որևէ բան կարդալ չէր կարող։ Հայերեն լրագրեր այլևս չէին ստացվում, իսկ Թուրքերենում միայն երկու անգամ տպագրվեցին պաշտոնական կիսաբերան հայտարարություններ։ Տեր-Հայկազունը ևս շարունակում էր իր գործունեությունը, առանց շուրջը նայելու, ինչպես միշտ։ Դասավանդում էր դրպրոցում, հանդիսավոր պատարագներ տալիս, կատարում սովորական թեմական շրջագայություններ։ Հովվապետը պնդում էր, թե այս տարի ևս պետք է ուխտագնացություն կատարվի դեպի Սուրբ Թովմասի հինավուրց վանքը, գառ մատաղ արվի ավանդական սովորությամբ։ Միայն թե այս անգամ անտեսվեց ժողովրդական մեծ տոնախմբությունը, երբ մինչև լույս մարդիկ երգում ու պարում են։ Տեր-Հայկազունը չհայտնեց պատճառը։

Զարմանալի չէ, որ երկու եվրոպացի օտարականները՝ Ժուլիեթն ու Գոնզագը, տեսնելով տեղական հոգևոր հայրերի անխոով վարմունքը, իրենց պահում էին միանգամայն անհոգ։ Մի օր Ժուլիեթն ամուսնուն հայտնեց.

— Սիրելիս, մինչև աշուն այստեղ չեմ մնա։ Կամաց-կամաց ինձ սկսում է մտահոգել Ֆրանսիան։ Վերջին օրերս հաճախ եմ հիշում մայրիկիս։

Գաբրիելի սևեռուն, առեղծվածային հայացքից հասկացավ, որ իր ասածն անհեթեթություն էր, անխոհեմություն։

Բագրատյանը շարունակում էր գյուղից գյուղ անցնել, տեղեկություններ հավաքել։ Նույնիսկ ընդարձակեց իր ուսումնասիրությունների ոլորտը։ Հարավում շրջագայելիս հաճախ գնում էր, հասնում Սուեդիա, իսկ մի անգամ, հյուսիսում, ձին ժամերով քշեց, մինչև հասավ Բեյլան՝ Ալեքսանդրեթի հարուստ հայերի լքված ամառանոցը։ Մի ուրիշ անգամ հանդգնեց գնալ Անտիոք։ Որոնտեսի կամրջին արդեն կանգնած էին մի քանի զափթիե։ Գաբրիելից փաստաթուղթ չպահանջեցին և անտարբեր թույլ տվին, որ անցնի։ Մի ակնթարթ նա նույնիսկ երևակայեց, թե Ժուլիեթի ու Ստեփանի հետ կարող է գալ կառքով, առանց այլևայլության կտրել անցնել պետության բոլոր պահակախմբերի շղթան, ինչպես այստեղ։ Հավանաբար կարելի էր ավելի դյուրին փրկվել, քան ինքն էր պատկերացնում։ Բայց հենց որ մտավ հյուրքյումեթի ընդունարանը, պատին փակցրված խոշոր հայտարարությունը նրան թևաթափ արեց։ Այնտեղ ասված էր, որ ոչ մի հայ երկաթուղով կամ փոստակառքով ճանապարհորդելու իրավունք չունի։ Բայց ահա ավելի սոսկալին՝ բառ առ բառ.

«Հայ ազգին պատկանող ամեն մի անձնավորություն իր բնակավայրից դուրս առանց անձնագրի կամ ճամփորդական արտոնագրի հայտնաբերվելու դեպքում ձերբակալվում է և տարվում աքսորյալների մերձավոր ճամբարը»։ Այս խիստ հրամանագիրը, որտեղ մի քանի հոդված կար, ստորագրել էր Մուսթաֆա Աբդուլ Հալիլ բեյը՝ խիզախ Ջելալի հլու-հնազանդ հաջորդը։ Չնայած սպառնալիքին, Բագրատյանը շրջեց շուկայում։ Երբեմնի լեփ-լեցուն նեղլիկ փողոցը գրեթե ամայի էր և ուներ տխուր, վախվորած տեսք։ Թեև այստեղ դեռևս չէր սկսվել տարագրությունը, հայ առևտրականներն իրենց խանութները փակ էին պահում, իսկ իրենք կարծես գետնի տակն էին անցել։ Բայց մահմեդական բնակչության երեսին էլ ծիծաղ չկար։ Հայերի դեմ գործած մեղքի պատճառով կայսրության վրա ստվեր էր ընկել։ Դրա առաջին ապացույցն այն էր, որ թուրքական թղթագրամները հանկարծ արժեզրկվեցին։ Վերջերս վաճառականները միայն ոսկե և արծաթե դրամ էին վերցնում, բայց այդ ամոթխած, առաքինի մետաղները բոլոր շուկաներից միաժամանակ անհետացան։ Ստամբուլի մինիստրություններում նստած տնտեսագետները խառնաշփոթ ձևով էին մեկնաբանում այդ անհիմն, անակնկալ արժեզրկումը։ Մինչև օրս էլ ոչ մի տնտեսագետ չի հանգել այն եզրակացությանը, որ փողի շրջանառությունը կարող է կախում ունենալ բարոյական աշխարհի շուկայական փոխհարաբերություններից։ Անտիոքում Թուրքերը տարտամ, ընկճված քայլերով չափչփում էին շուկան, որն իր խանդակներով, ջրափոսերով և աղբակույտերով քաղաքի ծայրամասում ընկած խուլ փողոց էր հիշեցնում։

Գաբրիելը աղա Ռիֆաաթ Բերեքեթի հնաոճ տան դարպասը փակ տեսավ։ Մրճիկով մի քանի անգամ բախեց պղնձապատ դուռը, բայց ոչ ոք չերևաց։ Ուրեմն՝ աղան դեռևս չէր վերադարձել Անատոլիա կատարած իր ուղևորությունից։ Թեև Գաբրիելը գիտեր, որ այդ ուղևորությունը կատարված էր հօգուտ հայ ժողովրդի, բայց և այնպես նրան տխրությամբ համակեց հոր բարեկամի բացակայությունը։

Տուն վերադառնալուց հետո Գաբրիելը վճռեց, որ իր հեռավոր շրջագայությունները կատարելիս այլևս դուրս չի գա Մուսա լեռան սահմաններից։ Պատճառն այն կախարդական, խաղաղավետ ազդեցությունն էր, որ նրա վրա թողնում էր հայրենի լեռը։ Եվ որքան ժամանակ էր անցնում, այնքան ուժեղանում էր այդ ազդեցությունը։ Միշտ, երբ առավոտյան պատուհանը բացում, ողջունում էր լեռը, նրան համակում էր

նույն հանդիսավոր, անընմբռնելի զարմանքը։ Մուսա լեռան վիթխարի զանգվածը, որն ամեն ժամ կերպարանափոխվում էր, մերթ ինքնամփոփ խոժոռվում, մերթ արևափայլ մշուշի ծվեններից ազատագրվում, իր բոլոր քմայքներով, իր հավերժական տեսքով Գաբրիելին կարծես ուժ էր ներշնչում, տոգորում արիությամբ՝ դիմանալու այն տառապալից խոհերի քաոսին, որը պատվելի Արամի գալուց հետո նրան քուն ու դադար չէր տալիս։ Եթե նա հեռանար Մուսա լեռան ստվերից, ապա իսկույն կզրկվեր այդ մտորումներին դիմադրելու արիությունից։ Պետք է ասել, որ նրա եռանդուն շրջագայություններն արդեն լավ արդյունք էին տալիս։ Նա ոչ միայն ձեռք էր բերում իր փափագած մանրակրկիտ տեղեկությունները հողագործների, այգեպանների, մետաքսագործների, մեղվաբույծների, փայտանկարիչների կյանքի ու գործունեության վերաբերյալ, այլև հետաքրքրվում էր նրանց ընտանեկան փոխհարաբերություններով, հոգու փակ գաղտնարաններով։ Անշուշտ, դա միշտ դյուրին չէր գլուխ գալիս։ Հայրենակիցներից շատերը նրա մեջ ամենից առաջ տեսնում էին մեծատոհմ օտարականի, թեև նույն հողի ու ջրի զավակներ էին։ Կրտսեր Ավետիս Բագրատյանն իրենց ավելի մոտ կանգնած մարդ էր, թեև սակավախոս էր, տարօրինակ, ոչ ոք նրան չէր հետաքրքրում՝ ո՛չ Գրիգորը, ո՛չ Տեր-Հայկազունը, ո՛չ ուսուցիչները։ Երևի գյուղերն էլ չէր գնում։ Ինչ էլ լիներ, նա հանգչում էր Յողոնօլուքի գերեզմանոցում, իրենց հանգուցյալների հետ։ Բայց ժամանակի ընթացքում Գաբրիելը հետզհետե շահեց մարդկանց վստահությունը։ Նրա հետ նույնիսկ ինչ-որ գաղտնի հույսեր էին կապում։ Պարոնը, անշուշտ, զորավոր մարդ է, արտասահմանում ճանաչված։ Նրա հեղինակությունից թուրքերը վախենում են։ Քանի դեռ նա Յողոնօլուքից չի հեռացել, գուցե և գյուղի գլխին փորձանք չգա։ Ոչ ոք իրեն հաշիվ չէր տալիս, թե ինչ իրական հիմք ունեն այդ հույսերը։ Բայց ինչ-որ ուրիշ բան էլ էին կռահում։ Երբ ապագայի մասին Գաբրիելը ևս մյուսների նման քիչ էր խոսում, նրա աչքերում, նրա անհանգստության, հարցերի, գրառումների մեջ նպատակասլաց խորհուրդ էին տեսնում, զգում ինչ-որ առանձնահատուկ նախաձեռնություն։ Առհասարակ Գաբրիելը բոլորից տարբերվում էր։ Հենց որ նա հայտնվում էր, մարդիկ ակնապիշ նայում էին։ Շատերն էին տուն հրավիրում։ Թեև սովորության համաձայն սենյակները բավականաչափ դատարկ էին, բայց և այնպես Գաբրիելին զարմացնում էր դրանց կոկիկ մաքրությունը։ Կավածեփ հատակին մաքուր խսիրներ էին փռված։ Նստելու համար կային ընտիր գորգերով ծածկված բազմոցներ։ Միայն ամենաչքավորների տներում կարելի էր տեսնել ննջասենյակներին կպած ախոռներ։ Պատերը բոլորովին

մերկ չէին։ Սրբապատկերների կողքին երբեմն կախված էին լինում հինավուրց նկարներ, օրացույցներից պոկված պատկերազարդ թերթիկներ։ Տանտիրուհիներից շատերը (հաղվագյուտ երևույթ արևելքում) իրենց բնակարանները զարդարում էին թարմ ծաղիկներով, որ մեծ մասամբ դնում էին տափակ ամանների մեջ։ Հենց որ հյուրը նստում էր, առաջն էին դնում մի հաստ կոճղ, բերում անագեպատ մի ահագին ափսե՝ մեջը տեսակ-տեսակ թխվածքներ, մեղրահաց, համեղ պանիր։ Այդ ընտիր քաղցրավենիքի համը Գաբրիելի բերանում մնացել էր դեռևս մանկությունից։ Դա արգելված վայելք էր. ծնողները չպետք է իմանային, որ իրենց տան ծառաները փոքրիկ Գաբրիելին հետները տանում են գյուղական խրճիթները։ Իսկ այժմ շռայլ հյուրասիրությունից Գաբրիելն ուղղակի շփոթվում էր, մանավանդ, երբ թխվածքներից բացի, մատուցում էին նաև սեխի շերտեր, շաքարի պես քաղցր մրգեր։ Հյուրասիրությունից հրաժարվելը մահացու վիրավորանք էր։ Նման դեպքերում օգնության էին հասնում երեխաները։ Դրանց ամենուրեք ներկայացնում էին Գաբրիելին, և նա փոքրիկներին էր հրամցնում քաղցրավենիքը, մի քանի պատառ էլ դնում իր բերանը։ Սրտառուչ էր այն հանգամանքը, որ բոլոր երեխաները, առանձնապես փոքրերը, սիրված ու փայփայված էին։ Նրանց վերնաշապիկների, կիտելների ու գոգնոցների մաքրությունը մայրերի ամենամեծ պարծանքն էր։ Իհարկե, երբ տղաները հասակ էին առնում, մայրերն արդեն չէին կարող նրանց ղսպել, արգելք հանդիսանալ տուրուդմբոցներին և Դամլաջրքի ձորերում միրգ գողանալուն։ Իր հաճախակի այցելությունների շնորհիվ Գաբրիելը շատերի հետ բարեկամացավ։ Դրանցից ամենավստահելին Զաուշ Նուրհանն էր՝ ծանրաբարո մի մարդ։ Այս Զաուշ Նուրհանը (Սերժանտ Նուրհան) Յողոնօլուքի հարավային ծայրին հայտնի արհեստանոց ուներ, որը զիջում էր միայն շինարար-կապալառու Թովմասյանի արհեստանոցին։ Այստեղ կար հյուսնարան, դարբնոց, թամբագործական բաժանմունք, կառաշինարան, որտեղ պատրաստում էին այդ կողմերում ընդունված ձևի կառքեր ու սայլեր։ Վերջապես, կար նաև մի գաղտնի «սրբարան», որտեղ Նուրհանն աշխատում էր առանց վկաների։ Գործին տեղյակ մարդիկ գիտեին, որ նա այդտեղ վերանորոգում է որսորդական հրացաններ, լիցքավորում դատարկ պարկուճներ։ Անբարենպաստ պայմաններում այդ գործունեությունը պետք է հեռու մնար զափթիե Ալի Նազիֆի աչքից։ Զաուշ Նուրհանը պարտադիր ժամկետից ավելի երկար էր բանակում ծառայել։ Յոթ տարի անց էր կացրել պատերազմում և Բրուսայի հետևակային գնդի մեծ զորանոցում։ Որ նա իր ամբողջ էությամբ զինվոր էր, այդ էին վկայում

տեսքը, ալեխառն երկար, սրածայր բեղերը, զինվորական խոսելաձևը, թունդ արտահայտությունները, որոնցից երբեք չէր հրաժարվում, և ամենից առաջ Բագրատյանի հանդեպ ունեցած հարգալիր վերաբերմունքը։ Այդպես հարգալիր նա ձգվում էր միայն սպաներին և վերադասներին ողջունելիս։ Երևի Գաբրիելի մեջ նույնիսկ ինչ-որ առանձնահատկություն էր տեսնում, մի բան, որ Գաբրիելի մտքով չէր էլ անցնում։ Զաուշ Նուրհանը կրտսեր Ավետիս Բագրատյանի համար աշխատել էր և այժմ սիրով ստանձնեց Բագրատյանների տան բազմաթիվ զենքերի ստուգումն ու կարգավորումը։ Հրացանները գաղտնի բերեց իր արհեստանոցը, որ քանդի, մաքրի, յուղի, ապա կրկին հավաքի։ Այս առթիվ Գաբրիելը նրան ավելի հաճախ էր տեսնում։ Ստեփանին էլ էր հետը բերում։ Երկուսով զրուցում էին իբրև ռազմական գործի կրքոտ մասնագետներ։ Զաուշը գռեհիկ, ծիծաղաշարժ պատմությունների շտեմարան էր, և արվեստագետ Գաբրիելը չէր հոգնում դրանք լսելուց։ Այսպես, տարագրության ամիսներին երկու հայ մարդիկ, որքան էլ դա անհավատալի թվա, եռանդով փորփրում էին թուրքական բանակի զինվորական կյանքի հետ կապված իրենց հիշողությունները, կարծես հայրական տունն էին մտաբերում։

Զաուշ Նուրհանը մի տուն լիքը անչափահաս երեխաներ ուներ։ Դրանց ինքն էլ երևի իրարից չէր տարբերում։ Իր հետնորդների մասին բնավ հոգ չէր տանում։ Երկյուղ ներշնչող բեղերով զինված նախկին զինվորի մեջ բթացել էր բարեսրտությունը իր իսկ արյունը կրող հորդայի նկատմամբ։ Հանգիստ խղճով նա փոքրիկներին թողնում էր երեսի վրա։ Կիրակնամուտին, երբ առանձին արհեստանոցների վարպետները բանալիները բերում հանձնում էին Նուրհանին, սա ո՛չ երեխաներով լեփ-լեցուն տունն էր մտնում, ո՛չ էլ հարևաններից մեկնումեկի դուռն էր բախում։ Մի ձեռքին՝ գինու սափորը, մյուս ձեռքին՝ թուրքական հետևակազորի շեփորը (պահեստից էր գողացել) գնում էր իր ծիրանենիների այգին։ Այնուհետև իրիկնային աղջամուղջով պարուրված օդը թընդում էր շեփորի վայրիվերո ոռնոցից։ Գյուղացիներին դա լավ էր հայտնի։ Կակազելով ու կաղկանձելով՝ շեփորը հնչեցնում էր թուրքական բանակի ազդանշանները։ Թվում էր, թե Զաուշն այդ խառնաշփոթ այգանվագով ուզում էր ամբողջ հովիտը ոտքի հանել, նախքան վրա կհասներ գիշերը։

Ի դեպ, դպրոցական երեխաների պատճառով գյուղերի միջև ծագեց կրթության քաղաքականությանը վերաբերող մի փոքրիկ տարաձայնություն։ Հայոց միացյալ ընկերության՝ ուսումնական վերադաս վարչության կարգադրությամբ տարին պետք է ավարտվեր ամռան առաջին իսկ շոգ օրերին, մոտավորապես մայիս ամսի կեսերին։ Սակայն Տեր-Հայկազունը, որպես դպրոցների ավագ վերակացու, հանկարծ կարգադրեց պարապմունքները վերսկսել ութնօրյա կարճատև արձակուրդից անմիջապես հետո։ Հոգևոր հայրը դա պատճառաբանում էր, ասելով, թե ամբողջ բնակչության աշխատանքային եռանդը բթացել է։ Զրհեղեղի ժամանակներն են։ Ամեն ինչի մոտալուտ փլուզմանն ու ոչնչացմանը պետք է հակադրել կրկնակի կարգ ու կանոն, լիակատար և անխուսափելի հուսալքությանը՝ ծայրահեղ կարգապահություն։ Դրանից բացի, այդ նեղ ու կրակ օրերին արձակուրդ ստացած երեխաների անզուսպ աղմուկն ու անտեղի գզվռտոցները ժողովրդի գլխին անտանելի փորձանք կդառնան։ Բոլորը Տեր-Հայկազունի հետ համաձայն կլինեին, եթե ուսուցչական կազմը կատաղի հակագրոհի չանցներ։ Ուսուցիչները (և ամենից առաջ Հրանտ Ոսկանյանը) չէին ուզում զրկվել իրենց արձակուրդից, որն ապահովված էր պայմանագրով։ Դիմեցին մուխթարների հովանավորությանը, ծնողներին համոզեցին, թե խեղճ երեխաների ուղեղները դերլարվածությունից, այն էլ այրող շոգին, կարող են լրջորեն խախտվել։ Հակակյաց Ոսկանյանը ատելության արշավանք կազմակերպեց ընդդեմ Հայկազուն վարդապետի։ Ոչինչ չօգնեց։ Հովվապետը մնաց անդրդվելի։ Նա հրավիրեց յոթ գյուղի մուխթարներին, համոզեց առանց երկար-բարակ խոսելու։ Ուսումնական նոր տարին անմիջապես հաջորդեց անցած տարվան, չնայած սկսվել էին ամռան շոգերը։ Իբրև վերջին միջոց, ուսուցիչները փորձեցին պայքարի մեջ ներգրավել նաև Բագրատյանին։ Շատախյանն ու Ոսկանյանը լուրջ պատրվակ գտնելով՝ գնացին ամառանոց։ Սակայն Գաբրիելը լիովին կողմնակից էր դասերը շարունակելուն։ Նա ողջունում էր այդ միջոցառումը՝ ելնելով ոչ միայն ընդհանուր, այլև սեփական շահերից. մտադիր էր իր որդի Ստեփանին ուղարկել պարոն Շատախյանի մոտ, որպեսզի տղան ընկերանար իր հասակակից և ցեղակից երեխաներին։ Ուսուցիչ Շատախյանը գլուխ տվեց, պատասխանեց իր ծեքծեքուն ֆրանսերենով։ Այդ հակիրճ ճառով նա վեր հանեց ժամանակակից առողջապահության և ազատության պահանջները ի հակադրություն գիտության հնացած խստությունների։ Երբ նա իր խոսքն ավարտեց, Գաբրիելը չափազանց զարմանալի հարց տվեց.

— Իսկ ինձ հետ ինչո՞ւ եք ֆրանսերեն խոսում։

Հաբեթ Շատախյանը վիրավորված պաշտպանվեց.

— Միայն Ձե՛զ համար, պարոն։

Բայց Հրանտ Ոսկանյանը կատաղած բզեց ընկերոջ մեջքը, կարծես ուզում էր ասել. «Տեսնո՞ւմ ես, պարծենկոտությունդ ամեն ինչ փչացրեց»։ Ճարներն ի՞նչ. ստիպված էին ընդունել իրենց պարտությունը։ Համենայն դեպս, Ուրբաթախոսը Տեր-Հայկազունի հանդեպ ունեցած իր ատելությունն արտահայտեց ծաղրական երկարաշունչ ոտանավորով։ Մի անգամ երեկոյան, Գրիգորի գլխավորությամբ զբոսնելիս, նա իր հանգավոր պամֆլետը տվեց կարդալու Ասայանին՝ թելի պես բարակ այդ երգչին։ Ուսուցչի ձայնը ցասումնալից հուզմունքից դողում էր։ Նա միաժամանակ պաշտոնավարում էր նաև եկեղեցում, որպես երգչաց դասի խմբավար, և Տեր-Հայկազունի անողոք իշխանության ներքո ավելի էր տառապել, քան մյուսները։ Մարտական շնչով տոգորված ստեղծագործությունն ավարտվում էր հետևյալ սպառնալից տողերով.

Քո փարաջան մութ ամպի պես դեմքն է ծածկում արևի,
Քո հայացքից գուցե հանկարծ արևն անգամ փշրվի...

Արևն այստեղ, անշուշտ, այլաբանորեն նշանակում էր հոգևոր լույս։ Մ՛իայն թե պարզ չէր. դասերն ավելացնելու դեպքում Տեր-Հայկազունի սքեմը ինչո՞ւ պետք է ծածկեր արևի դեմքը։ Գրիգորն իր սանի այդ փառասիրական փորձի վրա գլուխն օրորեց։ Խմբովին նստած էին Խդրը բեգի խաղողի այգեստանների մոտ, լուսնի ցոլքով ողողված բլրալանջին։ Դեղագործը ձեռքն առավ ոտանավորը։ Երգիծանքում ձաղկված հերոսի մասին ոչինչ չասաց։ Առհասարակ նա միշտ էլ շեղվում էր նյութից։ Անորոշ սառնասրտությամբ ազդարարեց.

— Հրանտ Ոսկանյան, սա շփոթ է։ Ա՛յ, հնում ուրի՞շ բանաստեղծներ կային...

Ոչ միայն բանաստեղծներն էին հնին պատկանում, այլև մեծ գործերը, պատերազմները, պետական գործիչները, հերոսները։ Ամբողջ աշխարհն առհասարակ կարող էր նշանավոր լինել միայն իբրև պատմություն։ Բայց սանին լրիվ թևաթափ չանելու համար՝ Գրիգորը գլխով արեց.

— Գրելը մի՛ թող։ Բայց դեռ շա՜տ բան ունես սովորելու, վարժապետ։

Որոշված օրը Գաբրիելը Ստեփանի ու նրա խաղընկերուհի Սաթոյի հետ, որի ոտքերն արդեն ապաքինվել էին, գնաց Յողոնօլուքի դպրոցը։ Մինչ այդ, փոքրիկ տարաձայնություն էր եղել Ժուլիեթի հետ։ Ֆրանսուհին վախենում էր, որ իր որդին խառնվելու էր այդ անլվա երեխաներին, այն էլ արևելյան, ինչ-որ ախոռում։ Նույնիսկ Փարիզում նա թույլ չէր

տալիս, որ Ստեփանը սովորի թաղային դպրոցում, չնայած այնտեղ ավելի քիչ կարելի էր երկյուղ կրել զանազան վարակիչ հիվանդություններից ու ոջիլներից։ Գաբրիելն իր տեսակետի վրա մնաց։ Խնդրին լրջորեն մոտենալիս մարդ չպետք է հաշվի առնի չափազանցված սպառնալիքը։ Ինքը, իբրև հայր, շատ ավելի կարևոր է համարում այն, որ իր որդին վերջապես ճանաչի իրենը, այն էլ հիմնովին։ Եթե ժամանակն ու կյանքի հանգամանքներն այլ լինեին, Ժուլիեթը հարյուր պատասխան կգտներ։ Սակայն այժմ իսկույն նահանջեց, լռեց։ Դա լուռ զիջում էր, որից ինքը ոչինչ չէր հասկանում։ Գիշերային այն խոսակցությունից հետո, երբ Գաբրիելն այնքան հուսալքված էր, ինչ-որ առեղծվածային բան էր պատահել։ Ամուսնական կյանքի ջերմությունը, որը տասնչորս տարի շարունակ հիանալի պտուղներ էր տվել, հետզհետե նվազում էր, չքանում։ Երբեմն գիշերները, արթնանալիս, Ժուլիեթին թվում էր, թե իր և կողքին քնածի միջև ոչ մի ընդհանուր բան չկա։ Ինչ ընդհանուր բան կար, մնաց այնտեղ, Փարիզում, Եվրոպայի լուսաշող քաղաքներում։ Դա արդեն անդառնալի էր, այլևս նրանց չէր պատկանում։ Ի՞նչ էր պատահել։ Գաբրիե՞լն էր փոխվել, թե՞ ինքը՝ Ժուլիեթը։ Դեռևս կարևորություն չէր տալիս հնարավոր անակնկալների։ Գրեթե ծիծաղելի էր թվում, որ ջրհեղեղն անգամ իր՝ ֆրանսուհու առաջ պատկառանքով կանգ չառնի։ Ուրիշ ելք չկար. պետք է մի երկու շաբաթ համբերեր։ Այնուհետև ամեն բան իր հունի մեջ կմտներ։ Այն ամենը, ինչ այդ շաբաթների ընթացքում տեղի ունենար կամ չունենար, նրան այլևս չէր հուզի։ Այս նկատառումով էլ լռեց, երբ Գաբրիելը վճռեց Ստեփանին դպրոց ուղարկել։ Բայց երբ հոգու խորքում կշռադատում էր իր անտարբեր նահանջը. «Է՜հ, իմ ի՞նչ գործն է», ապա սարսափում էր, խորապես վշտանում ոչ միայն իր, այլև ավելի շատ Ստեփանի համար։

Նորությունը կարծես պատանուն ոգևորել էր։ Նա հորը խոստովանեց, որ ինքը բարի պարոն Ավագյանի դասերն ավելի մեծ ուշադրությամբ չէր լսում։ Լատիներեն և հունարեն ուսումնասիրած փարիզցի գիմնազիստը շատ ավելի մեծ բավականությամբ էր հաճախում հայկական գյուղական դպրոցը։ Բայց դրա պատճառը միայն այն չէր, որ տղան Ավագյանի դասերից ձանձրանում էր։ Իսկուհու և Սաթոյի գալուց հետո նրա հոգում գլուխ էր բարձրացրել ինչ-որ շփոթություն, ինչ-որ լարվածություն։ Արդեն պատահել էր Սայոթի հետ կապված մի անախորժություն։ Մի անգամ, վաղ առավոտյան, Ստեփանն ու Սաթոն հանկարծ անհետացան և հայտնվեցին միայն կեսօրից հետո։ Աղջկան տհաճ բացատրությունից ազատելու նպատակով տղան ասպետորեն իր վրա վերց-

րեց մեղքը, պնդեց, թե Դամլաջրքի լանջերին զբոսնելիս մոլորվել էին։ Ժուլիեթն իր բարկությունը թափեց ոչ միայն Ավագյանի, այլև Գաբրիելի գլխին, իսկ երբ որդին վերադարձավ, արգելեց Սաթոյի հետ նույնիսկ խոսել։ Շրջմոլիկ աղջկան լրիվ հեռացրին ընտանեկան շրջանակից։ Տանը եղած ժամանակ նա պարտավոր էր մնալ իր սենյակում։

Այս դեպքից հետո Ստեփանն սկսեց ավելի հաճախ այցելել Իսկուհուն, իհարկե, գաղտնի։ Ուսուցչուհին անկողնուց արդեն վեր էր կացել, բայց չէր ապաքինվել։ Երբ Իսկուհին պառկում էր երկար թիկնաթոռին, Ստեփանը նստում էր նրա ոտքերի մոտ, գետնին։ Տղայի սրտում շատ հարցեր կային։ Իսկուհուն ստիպում էր պատմել Զեյթունից։ Հենց որ մայրը հայտնվում էր, դավադիրների նման ընդհատում էին խոսակցությունը։ «Ինչպե՞ս են տղային բոլորն իրենց կողմը ձգում»,— մտածում էր Ժուլիեթը։

Յողոնօլուքի դպրոցը պատկառելի հաստատություն էր. Մուսա լեռան շրջակայքում դա ամենամեծն էր և ուներ չորս դասարան։ Տեր-Հայկազունը տնօրեն էր կարգել Շատախյանին։ Սա իր սեփական նախաձեռնությամբ ավելացրել էր ևս մի դասարան, որտեղ ինքը ֆրանսերեն և պատմություն էր դասավանդում, իսկ Ոսկանյանը՝ գրականություն և գեղագրություն։ Բայց դրանով չէին բավարարվել. մեծահասակների համար բացել էին իրիկնային դասընթացներ։ Այստեղ արդեն իր գիտելիքների լույսն էր շռայլում համաշխարհային այնպիսի մի գիտնական, ինչպիսին դեղագործ Գրիգորն էր։ Նա դասախոսում էր աստղերի, ծաղիկների, կենդանական աշխարհի և քարերի, հնագույն ժողովուրդների, բանաստեղծների և իմաստունների մասին։ Դասավանդում էր յուրօրինակ եղանակով։ Հնարամիտ հեքիաթասացն ամեն ինչ իրար էր խառնում, վերածում ֆանտաստիկ պատմության։ Իր բանախոսությունները համեմում էր այնպիսի խորհրդավոր բառերով ու թվերով, որ ունկնդիրները ոչինչ չհասկանալով՝ ապշած ճպճպացնում էին աչքերը։ Բայց նա իր ժողովրդի ուսման ծարավը պարուրում էր պայծառ լույսով։ Զէ՞ որ տարեց մարդիկ, մեծ մասամբ արհեստավորները, որոնք միայն աշխարհի մի բեկորն էին տեսել, աշակերտական նեղ նստարանների վրա հավաքված՝ նոր բան էին ուզում լսել ու սովորել իրենց կյանքի մայրամուտին։

Հաբեթ Շատախյանը Ստեփանին ընդունեց լրացուցիչ դասարանը, որտեղ 12—15 տարեկան երեսուն երեխա էր սովորում։ Ուսուցիչը մի կողմ քաշեց Գաբրիելին.

— Պարոն, ինձ համար այնքան էլ պարզ չէ Ձեր մտադրությունը։ Ձեր որդին ի՞նչ կարող է մեզ մոտ սովորել։ Երևի շատ բան ավելի լավ գիտե, քան ես։ Ճիշտ է, Շվեյցարիայում բավական երկար ժամանակ ուսանել եմ, բայց տարիներ շարունակ հետադիմում եմ այս անապատում։ Հապա նայեցեք այս երեխաներին։ Կարծես վայրենի նեգրեր լինեն։ Չեմ կարծում, թե արդյունքը լավ կլինի...

— Վարժապե՛տ Շատախյան, հենց այդ արդյունքից է, որ երեխային չեմ ուզում զրկել,— բացատրեց Գաբրիելը, և ուսուցիչը զարմանում էր հոր համառության վրա, որը բարեկիրթ եվրոպացուն ուզում էր անպայման դարձնել արևելցի։

Դպրոցը լեփ-լեցուն էր երեխաներով և ծնողներով, որոնք եկել էին իրենց զավակների գործերը կարգավորելու։ Մի պառավ կին փոքրիկ տղայի ձեռքից բռնած՝ մոտեցավ Շատախյանին.

— Վարժապետ ջան, միսը քեզ, ոսկորն ինձ։ Մենակ թե շատ չծեծես։

— Ինքներդ լսեցիք,— Գաբրիելին դիմեց Շատախյանը և հառաչեց, հիշելով այն հետամնացությունը, սնոտիապաշտությունը, խավարամտությունը, որոնց դեմ ստիպված էր ինքը պայքարել։

Պայմանավորվեցին, որ Ստեփանը շաբաթական չորս անգամ հաճախելու է դպրոց, մեծ մասամբ ընտելանալու է հայերեն բանավոր և գրավոր լեզվին։

Սաթոյին ընդունեցին ամենաստորին դասարանը։ Այստեղ աղջիկներ շատ կային։ Բոլորն էլ ավելի կրտսեր էին, քան զեյթունցի վտանգավոր որբուհին։

Երկրորդ օրն իսկ Ստեփանը տուն եկավ դառնացած։ Այլևս թույլ չի տա, որ իր անգլիական անպետք կոստյումի պատճառով վրան ծիծաղեն։ Ուզում է այնպես հագնվել, ինչպես մյուս տղաները։ Բորբոքված պահանջեց, որ գյուղական դերձակներից մեկի մոտ պատվիրեն սովորական էնթարի, գոտիով, ապա նաև անդրավարտիք։ Այդ ցանկությունը տեղի տվեց մեծ վիճաբանության։ Մայրիկը զայրացավ։ Օրեր անցան, բայց խնդիրը մնաց չլուծված։

Սամվել Ավագյանը Ստեփանի հետ պարապելու փոխարեն ստացավ նոր, բոլորովին այլ բնույթի հանձնարարություն։ Գաբրիելը նրան տվեց իր բազմաթիվ ցանուցիր գրառումները, որ կատարել էր վերջին շաբաթների ընթացքում։ Ուսանողը, տարբեր տվյալները հանրագումարի բերելով, պետք է դրանց տար վիճակագրական ընդհանուր տեսք։ Թե ինչ էր այդ աշխատանքի նպատակը, նրան հայտնի չէր։ Ամենից առաջ պետք է ճշտեր հարավային ծայրամասի Վաքքֆ գյուղից մինչև հյուսիսային

սահմանը կազմող Քեբուսիեն (Մեղվագյուղ) ընկած տարածության վրա ապրող հայերի թիվը։ Պետք է կարգի բերեր և ստուգեր այն բոլոր տեղեկությունները, որ Բագրատյանը վերցրել էր մուխթարի քարտուղարից և մյուս վեց ավագներից։

Հետևյալ օրը Ավագյանն արդեն կարող էր Բագրատյանին հանձնել հետևյալ ճշգրիտ ցուցակը.

Յոթ գյուղի բնակչության թիվը, ըստ սեռի և տարիքի՝

583	ծծկեր և փոքր երեխաներ	4 տարեկանից ցածր
579	աղջիկ	4—12 տարեկան
823	տղա	4—14 տարեկան
2074	կին	12 տարեկանից բարձր
1550	տղամարդ	14 տարեկանից բարձր
5609	հոգի	

Այս մարդահամարի ժամանակ հաշվի էր առնված նաև Բագրատյանի ամբողջ ընտանիքը։ Թվական տվյալներից բացի, կային մանրակրկիտ ցուցակներ, որտեղ նշված էին առանձին գյուղերի ընտանիքների թիվը, արհեստն ու զբաղմունքը, մի խոսքով՝ այն ամենը, ինչ կարևոր էր։ Բայց Բագրատյանը միայն մարդկանցով չէր հետաքրքրվում։ Փորձում էր իմանալ, թե շրջակայքում որքան անասուն կա։ Դա այնքան էլ դյուրին գործ չէր և նվաղ հաջողությամբ պսակվեց։ Նույնիսկ մուխթարները չէին կարողանում ստույգ տեղեկություն տալ։ Սակայն մի բան հաստատ էր. խոշոր եղջյուրավոր անասուններ՝ եզներ ու կովեր բոլորովին չկային։ Ձիեր նույնպես։ Քիչ թե շատ բարեկեցիկ ամեն ընտանիք ուներ մեկ-երկու այծ, ավանակ կամ ջորի՝ հեծնելու և բեռներ կրելու համար։ Առանձին ոչխարատերերի կամ համայնքին պատկանող ստվար հոտերը, լեռնականների մոտ ընդունված սովորության համաձայն, արածում էին խաղաղ արոտավայրերում։ Հոտերը պահպանում էին հովիվներն ու նրանց օգնականները։ Դա տևում էր մինչև ոչխարներին հաջորդ անգամ խուզելը։ Ոչխարների մոտավոր քանակն իմանալն իսկ անհնար դուրս եկավ։ Եռանդուն Ավագյանը, որը ոչ մի աշխատանքից խորշել չգիտեր, գյուղից գյուղ էր վազվզում։ Շուտով Բագրատյանի առանձնասենյակը նա վերածեց տեղեկատու բյուրոյի։ Բայց հոգու խորքում զարմանում էր, թե ինչպես մի ուներ կալվածատեր այդքան տագնապալից ու անապահով շրջանում ձանձրույթն ուզում է ցրել նման խրթին ժամանց-հանելուկներ լուծելով։ Ոչ մի բան ավելորդ չէր թվում

այդ ծայրահեղ բծախնդիր մարդուն. հավանաբար մտադիր էր գիրք գրել Մուսա լեռան շրջակայքում ապրող հայության կյանքի մասին։ Նույնիսկ ուզում էր իմանալ, թե քանի թոնիր կա գյուղում։ Հետաքրքրվում էր հացաբույսերի բերքով և մտահոգվում, որ լեռնականները հարթավայրերում ապրող մահմեդականներից են գնում եգիպտացորեն կամ սիրիական կարմրավուն ցորենը։ Պակաս չէր անհանգստացնում այն, որ ջրաղաց չկար ո՛չ Յողոնօլուքում, ո՛չ Բիթիասում, ո՛չ էլ որևէ այլ հայաբնակ վայրում։ Մինչև անգամ սիրտ արեց ստուգել Գրիգորի դեղորայքի վիճակը։ Սա, որի կարծիքով Բագրատյանն ավելի շուտ իր գրադարանը կգա, քան թե դեղատունը, հիասթափված մատնացույց արեց նկուղը։ Տախտակե երկու փոքրիկ հենակների վրա շարված էին օտարոտի ձեռագրով նախշված զանազան երկարուկ և տափակ սրվակներ։ Դա էր այն ամբողջ հարստությունը, որ դեղատուն էր հիշեցնում։ Գրիգորի գործունեության առավել պերճախոս վկաներն այլ բան էին՝ անկյունում դրված նավթի երեք խոշոր ամանները, աղի պարկը, ծխախոտի մեկ-երկու հակը, ավել կապելու բարակ պարանները։ Դեղագործն իր ոսկրոտ մատներով արժանապատվությամբ թմբկահարեց խորհրդավոր սրվակներից մեկը.

— Բոլոր դեղամիջոցները, ինչպես արդեն ասել է Հովհան Ոսկեբերանը*, սկիզբ են առնում յոթ նախնական նյութից։ Դրանք են՝ կիրը, ծծումբը, բորակը, յոդը, կակաչը, ուռենու խեժը, դափնեհյութը։ Նույն նյութը հարյուրավոր ձևեր է ընդունում։— Մատով ամանը կամացուկ զնգացրեց։ Ուզեց ասել, որ Հովհան Ոսկեբերանի դեղագործական բոլոր նախանյութերի նմուշներն ունի։ Ժամանակակից դեղագիտության շուրջը ծավալված նման ատենաբանությունից հետո Գաբրիելն այլևս չշարունակեց իր հարցուփորձը։ Բարեբախտաբար ինքն էլ տանը բավականաչափ սեփական դեղորայք ուներ։ Անշուշտ, ավելի կարևոր էր զենքի հետ կապված պատմությունը։ Բարեկամը՝ Զաուշ Նուրհանն այդ առիթով արդեն անորոշ ակնարկ էր արել։ Բայց հենց որ Գաբրիելն այս հարցով դիմում էր համայնքի ավագներին, սրանք խուսափողական պատասխաններ էին տալիս։ Մի օր էլ նա Յողոնօլուքի մուխթարին հանկարծակիի բերեց նրա բնակարանում, կառչեց օձիքից.

— Թովմաս, անկեղծ եղիր ինձ հետ։ Ինչքա՞ն և ի՞նչ տեսակի զենք ունեք։

Մուխթարը վախվորած շլեց աչքերը, տմբտմբացրեց ճաղատ գլուխը.

— Հիսո՜ւս Քրիստոս։ Պարոն, ուզում ես գլխներիս փորձա՞նք բերել։

— Ինչո՞ւ ինձ չեք վստահում։ Արժանի չե՞մ։

— Ո՛չ կինս գիտե, ո՛չ զավակներս, ո՛չ վարժապետները։ Ո՛չ ոք։

— Իսկ իմ եղբայր Ավետիքը գիտե՞ր։

— Աստված հոգին լուսավորի։ Իհարկե, գիտեր։ Բայց ոչ մեկին չէր ասում։

— Ասել կուզի՝ նման չե՞մ գաղտնիք պահող մարդու։

— Եթե իմացվի, բոլորս էլ ոտով-գլխով կորած ենք։

Քեբուսյանը, տեսնելով, որ ո՛չ աչք շլելն է օգնում, ո՛չ էլ գլուխ ամբամբացնելը, հյուրից ազատվելու համար վերջապես սենյակի դուռը կրկնակի կողպեքով փակեց։ Տագնապալից շշնջյունով խոստովանեց ճշմարտությունը։ 1908 թվականին, երբ իթթիհաթը Աբդուլ Համիդի դեմ հեղափոխություն սկսեց, «Երիտասարդ Թուրքերի» պատվիրակները պետության բոլոր շրջաններին և համայնքներին զենք բաժանեցին, հատկապես հայ բնակչությանը, որն այն ժամանակ ապստամբության հիմնական նեցուկն էր համարվում։ Ինքնին հասկանալի է, որ էնվեր փաշան գիտեր այս բանը, և երբ բռնկվեց համաշխարհային առաջին պատերազմը, նրա առաջին գործն այն եղավ, որ շտապեց արագ զինաթափ անել հայ բնակչությանը։ Այս հրամանը կատարելիս բնականաբար մեծ դեր խաղացին այն ժամանակվա պաշտոնյաների բնավորությունն ու տրամադրությունը։ Եթե վիլայեթներում, ինչպես Էրզրումում կամ Սվազում տիրապետում էին իթթիհաթական տաքգլուխները, ապա պատահում էր, որ անզեն բնակչությունը ոստիկաններից զենք էր գնում՝ դա կառավարության նոր հրամանն ստացվելուն պես հանձնելու պայմանով։ Նման վայրերում զենք չունենալը դիտվում էր իբրև դավադրական շքմեղացում։ Չնայած բեյի վիլայեթում այս գործը, ինչպես և պետք էր հուսալ, գլուխ էր գալիս ավելի դյուրին։ Այս պատվաբժան կուսակալը, որի մարդկայնությունը ծառանում էր Ստամբուլի պատերազմի փառապանծ աստծո միջոցառումների դեմ, մեծ վերապահությամբ էր կատարում նրա հրամանները, եթե առհասարակ դրանք չէր կարողանում թղթերի զամբյուղը նետել։ Նրա գթասրտությունը փոխանցվում էր նաև ստորադաս պաշտոնյաներին, բացառությամբ Մարաշի անողոք մյութեսարրֆի։ Հունվարյան մի օր Յողոնօլուքում ևս զինաթափության գործով հայտնվեց շիկահեր մյուդիրը Անտիոքի ոստիկանապետի հետ։ Երբ մարդիկ ծիծաղելի հավաստիացումներ արին, ժխտեցին, թե որևէ զենք են գնել, առանց այլևայլության նրանք ետ դնացին։ Բարեբախտաբար մուխթարը ժամանակին կոմիտեի պատվիրակներին ստացական չէր տվել զենքի վերաբերյալ։

— Շատ լավ է,— գովեց Գաբրիելը մուխթարին,— իսկ հրացանները շա՞տ են։

— Հիսուն մաուզեր-հրացան, երկու հարյուր հիսուն հունական «քարա» հրացան։ Ամեն մեկի համար երեսուն փամփշտակալ, այսինքն հարյուր հիսուն կրակոց։

Գաբրիելը մտածմունքի մեջ ընկավ։ Եղածը մի բան չէր։ Արդյոք գյուղացիները հրազեն չունե՞ն։ Քեբուսյանը դարձյալ ասատանվեց.

— Դա իրենց գործն է։ Շատերն են որսի գնում։ Բայց ի՞նչ արժեք ունեն մի երկու հարյուր կայծքարավոր հրացանները։

Գաբրիելը ոտքի ելավ, ձեռքը մեկնեց մուխթարին.

— Շնորհակալ եմ քեզանից, Թովմաս, շնորհակալ եմ վստահությանդ համար։ Բայց հիմա, երբ արդեն ամեն բան ասել ես, կուզենայի իմանալ, թե որտեղ եք պահել զենքը։

— Անպայման ուզում ես իմանա՞լ, պարոն։

— Ոչ, բայց ես հետաքրքրասեր եմ և չեմ հասկանում, թե ինձանից ինչո՞ւ պիտի թաքցնես այդ մի բանը։

Մուխթարի մեջ ներքին պայքար սկսվեց։ Թաքստոցի տեղը, իրոք, ոչ ոք չգիտեր, բացի նրա պաշտոնակիցներից՝ Տեր-Հայկազունից և ժամկոչից։ Բայց Բագրատյանի մեջ ինչ-որ մի բան կար, որին Քեբուսյանն ընդդիմանալ չէր կարողանում։ Հուսահատական երդումներից հետո նա հայտնեց գաղտնիքը։ Հրացաններով ու ռազմամթերքով լի աթոռները թաղված էին Յողոնօլուքի գերեզմանատանը, որոշակի փոսերում, որոնց վրա մտացածին անուններ էին գրված։

— Հիմա, պարոն, իմ հոգին Ձեր բռան մեջ դրի,— հառաչեց մուխթարը և դուռը բացեց, որ հյուրը գնա։

Գաբրիելն առանց ետ նայելու ասաց. «Շատ էլ լավ արիր, Քեբուսյան»։

Գիշեր-ցերեկ Գաբրիելին այնպիսի մտորումներ էին պաշարում, որ ինքն էլ էր սոսկում։ Դրանք այնպես էին նրա հոգին ցնցում, որ ոչ մի կերպ խուսափել չէր կարողանում։ Չնայած տարված էր միանգամայն իրական կյանքի բծախնդիր ուսումնասիրությամբ, այդ խորհրդածությունները վերանում էին դեպի երազային մի աշխարհ, հիշեցնում Ալպյան լեռների ստորոտում անցկացրած ամբողջ կյանքը։ Գաբրիելն իր առաջ միայն մի ելք էր տեսնում, միայն մի խաչուղի, որտեղ ճանապարհները բաժանվում էին։ Հինգ քայլ այն կողմ մշուշ էր, խավար։ Երևի ամեն մարդու էլ որևէ վճիռ կայացնելուց առաջ թվում է, թե ոչինչ այն-

քան անիրական չէ, որքան իր նպատակը։ Բայց արդյոք հնարավո՞ր էր, որ Բագրատյանն իր փոթորկուն եռանդը շարժման մեջ դներ միայն այս նեղ հովտում, հրաժարվեր ամեն մի ելքից, եթե այդպիսին դեռևս կար։ Որտե՞ղ մնաց ներքին ձայնը՝ «Ինչո՞ւ ես վարանում, Բագրատյան։ Ինչո՞ւ ես թույլ տալիս, որ օրերը կորչեն։ Լավ անուն ունես, կարողության տեր ես։ Երկուսն էլ կշեռքի նժարի վրա դիր։ Եթե քո դեմ ծառանան վտանգն ու անհաղթահարելի դժվարությունները, փորձիր գոնե Ժուլիեթի ու Ստեփանի հետ մի կերպ հասնել Հալեպ։ Սա վերջին հաշվով մեծ քաղաք է։ Այնտեղ կապեր ունես։ Ծայրահեղ դեպքում կնոջդ ու որդուդ կարող ես հանձնել հյուպատոսների պաշտպանությանը։ Ամենուրեք երևելիներին բանտարկել են, աքսորել, խոշտանգել, կախաղան բարձրացրել։ Բոլոր դեպքերում ուղևորությունը հանդգնություն է, բայց մի՞թե պակաս հանդգնություն է մնալը։ Այլևս մի՛ սպասիր, փորձիր փրկվել, քանի ուշ չէ»։ Այս ձայնը միշտ չէր լռում, հնչում էր գողունի։ Խաղաղ էր Մուսա լեռը։ Ոչինչ չէր փոխվել։ Այդ աշխարհին նայողը կհավատար, որ իրավացի էր աղա Ռիֆաթ Բերեքեթը։ Իրադարձությունների շունչն անգամ այստեղ չէր թափանցում։ Մնդավայրը, որը տակավին մանկական հինավուրց հեքիաթ էր թվում, իր գիրկն էր քաշում Բագրատյանին։ Ժուլիեթի պատկերը նրա աչքին կորցնում էր իր հստակությունը։ Երևի ցանկության դեպքում էլ նա չկարողանար հեռանալ Մուսա լեռից։

Գաբրիելը հանդիսավոր երդում էր տվել, որ ղենքի մասին ոչ մեկին չի հայտնի։ Իր խոստումը կատարեց։ Ավագյանը նույնպես ոչինչ չգիտեր։ Ընդհակառակը, սա հանկարծ նոր առաջադրանք ստացավ։ Նրան հանձնարարվեց քարտեզ գծել։ Դամլաջրքի այն ուրվագիծը, որ Ստեփանը դեռևս մարտ ամսին իր անվարժ ձեռքով կազմել էր հոր ցանկությամբ, այժմ իմաստավորվեց։ Ավագյանը պետք է գծեր լեռան ճշգրիտ քարտեզը՝ մեծ մասշտաբի, երեք օրինակ։ «Հովտի մարդկանց և անասունների գործը վերջացավ,—մտածում էր ուսանողը,—հերթը հասավ լեռներին...»։

Ինչպես հայտնի է, Դամլաջրքը Մուսա լեռան բուն կորիզն է։ Եթե հյուսիսում լեռան առանցքը բաժանվում է բազմաթիվ թևերի, որոնք Բեյլանի հովտի դիմաց վեր են ածվում բնական հեքիաթային ամրոցների ու դարավանդների, եթե հարավում անկանոն և կարծես անակնկալ գահավիժում է Որոնտեսի գետահովիտն ի վար, ապա կենտրոնում գոյացնելով Դամլաջրքը, ի մի է բերում իր բովանդակ ուժն ու վեհությունը։ Այստեղ լեռն իր ժայռակոփ բոունցքներն առաջ պարզած՝ կրծքին է ուզում սեղմել յոթ գյուղի հովիտը իբրև բազմածալ ծածկոց։ Այստեղ, Ցողնուլուքի և Հաջի Հաբիբլիի վերևում, ուղղաձիգ ծառս են լինում լեռան երկու ամենաբարձր գագաթները, միակ կետերը, որ ծածկված են ոչ թե ծառերով, այլ ցածրիկ խոտերով։

Դամլաջրքի թիկունքը բավական ընդարձակ սարահարթ էր։ Ամենալայն տեղում, Կաղնուտի կիրճի և ծովեզերքի գահավեժ ժայռապարսպի արանքում ավելի քան երեք կիլոմետր բաց տարածություն կար (Ավագյանի հաշվով)։ Բայց Գաբրիելի միտքն ամենից շատ զբաղեցնում էին սարահարթի տարօրինակ կերպով սուր եզրերը, որ ինքը բնությունն էր գծել։ Ամենից առաջ այստեղ աչքի էր ընկնում հյուսիսային բացվածքը, կուչ եկած նեղ ու թամբաձև մի կիրճ, ուր հասնում էր հովիտն ի վեր ձգվող լեռնային բանուկ արահետը։ Սակայն վերջինս կորչում էր մացառուտների մեջ, քանի որ ոչ մի կերպ հնարավոր չէր ծովեզերք դուրս գալ պարսպի պես կանգնած ապառաժների վրայով։ Դրան հակառակ, հարավում, որտեղ լեռը վերջանում էր, ամայի, գրեթե բուսականությունից զուրկ կիսաշրջանաձև քարակարկառների մոտ վեր էր խոյանում հիսուն ոտնաչափ ժայռակերտ, ծանրանիստ մի աշտարակ։ Բնության ձեռքով կառուցված այս ամրոցն իշխում էր ծովեզերյա հովտի և թուրքաբնակ գյուղերով ծածկված Որոնտեսյան հարթավայրի վրա՝ մինչև Ջերել Աբրայի լերկ բարձունքները։ Երևում էին կանաչ բաղեղով պարուրված սելևկյան հզոր տաճարների և ջրատար պարիսպների ավերակները։ Երևում էին Անտիոքից էլ էսքել և Սուեդիա տանող բանուկ ճանապարհի անվահետքերը։ Հուրհրատում էին այս փոքրիկ քաղաքի սպիտակ խորանարդները։ Ծովափից ոչ հեռու, Որոնտեսի աջ ափին, պարզ երևում էր ոգելից խմիչքների հսկա գործարանը, որը նույնպես ողողված էր արևով։ Ռազմական մտածողություն ունեցող ամեն ոք իսկույն կկռահեր, թե պաշտպանական ի՞նչ իդեալական դիրք ունի Դամլաջրքը։ Եթե անտեսենք հովտի դժվարանց կողմը, որն ուղևորներին ուժասպառ էր անում հոգնեցուցիչ վերելքով, ապա հավանական հարձակում կարելի էր սպասել միայն հյուսիսային նեղ, թամբաձև կիրճից։ Բայց պաշտպանվողին տեղանքը հարյուրավոր առավելություններ էր շնորհում։ Շատ կարևոր էր այն հանգամանքը, որ ծառաթփերով, լեռնային սոճիներով ու զանազան մացառներով ծածկված զառիթափը անհաղթահարելի խոչընդոտ էր ստեղծում։

Ավագյանի քարտեզագրական գործունեությունը երկար ժամանակ չէր գոհացնում Բագրատյանին։ Սա շարունակ նորանոր թերություններ ու սխալներ էր հայտնաբերում։ Ուսանողը երկյուղ էր կրում, որ իր տանտիրոջ ցնորական երևակայությունը կարող է կամաց-կամաց տանել դեպի խելագարություն։ Դեռևս ոչինչ չէր կռահում։ Ամբողջ օրն անց էին

կացնում Դամլաջրքի բարձունքին։ Բագրատյանը, իբրև բալկանյան պատերազմի հրետանային սպա, դեռևս պահում էր հեռադիտակ, անկյունաչափ, կողմնացույց և տեղագրական նման գործիքներ, որոնք այժմ հարգ ու պատվի էին արժանացել։ Աննահանջ եռանդով հետևում էր, որ քարտեղի վրա նշանակված լինի ամեն աղբյուրի ընթացքը, ամեն բարձր ծառ, ամեն աչքի ընկնող ապառաժ։ Բայց բանը չէր վերջանում միայն կարմիր, կանաչ և կապույտ գծերով. պետք էին նշանակալից բառեր, թվեր։ Լեռնագագաթների և հյուսիսային թամբաձև կիրճի արանքում կար մի ահագին, շեղ տափարակ։ Քանի որ այստեղ հիանալի խոտ էր աճում, միշտ կարելի էր տեսնել սև ու սպիտակ ոչխարների հոտեր։ Հովիվները ամառ-ձմեռ իրենց յափնջիների մեջ փաթաթված՝ քնելով էին անցկացնում իրենց օրերը, ինչպես հինավուրց առասպելներում։

Գաբրիելն ու Ավագյանը քայլելով չափում էին արոտավայրի սահմանները։ Գաբրիելը մատնացույց արեց երկու աղբյուր։ Դրանք մարգագետնի վերևի եզրին ճանապարհ էին բացել փարթամ ձարխոտերի միջով։

— Սա մեծ երջանկություն է,— ասաց նա,— ամենավերևում գրեցեք Քաղաքաձոր։

Նման խորհրդավոր նշումները վերջ ու ծայր չունեին։ Գաբրիելը կարծես ինչ-որ առանձին եռանդով որոնեց ու գտավ մի տեղ, որն աչքի էր ընկնում իր շոյող ու զովասուն գեղեցկությամբ։ Սա նույնպես առվի եզերքին էր ընկած, ծովից ավելի հեռու, որտեղ սարահարթի և ժայռապարսպի արանքում ձգվում էր մրտենիների ու դափնեվարդերի մուգ կանաչ գոտին։

— Սա էլ նշանակեցեք, Ավագյա՛ն, և կարմիր մատիտով գրեցեք Երեք վրանի հրապարակ։

Ավագյանը չդիմացավ, հարցրեց.

— Ի՞նչ ասել է Երեք վրանի հրապարակ։

Բայց Գաբրիելն արդեն առաջ էր անցել։ Ձլսեց։ «Երաշխորդին պետք է օգնեմ երազելիս»,— մտածեց ուսանողը։ Իսկ թե ինչ էր նշանակում Երեք վրանի հրապարակը, իմացավ երկու օր հետո։

Երբ բժիշկ Ալթունին քանդեց Իսկուհու թևի և ուսի վիրակապը, խոժռվելով քրթմնջաց.

— Մտքովս անցնում էր։ Եթե մեծ քաղաքում լինեինք, ամեն ինչ բարեհաջող կվերջանար։ Պետք է մնայիր Հալեպում, աչքիս լույս, հիվանդանոց գնայիր։ Բայց երևի լավ ես արել, որ այստեղ ես եկել։ Ի՞նչ

ժամանակ է. ոչ ոք չգիտե, թե ինչ է իր գլխին գալու։ Միայն մի՛ հուսահատվիր, հոգիս։

Իսկուհին հանգստացրեց ծերունուն.

— Ես չեմ էլ հուսահատվում, բժիշկ։ Բայց, իհարկե, բարեբախտություն է, որ ձախ ձեռքս է վնասված։

Իսկուհին չէր հավատում Ալթունու կիսաբերան սփոփանքին։ Գողունի նայեց իրեն։ Թևը թուլացած, բարակած և կարճացած կախվել էր ուսից։ Շարժել չէր կարող։ Բայց աղջիկը գոհ էր, որ այլևս չէր տառապում ցավերից։ Հավանաբար այդպես էլ խեղանդամ էր մնալու։ Սակայն դա ավելի փոքր զոհողություն չէ՞ր, եթե Իսկուհին մտաբերեր այն քարավանի ճակատագիրը, որի հետ ինքը միայն երկու թռուցիկ օր էր ճանապարհ անցել։ Ինչևէ, աղջիկը սրտի խորքում հավատացած էր. ինքն էլ զարհուրելի կերպով զուրկ է որևէ հեռանկարից, ինչպես ամբողջ ժողովուրդը։ Գիշերները նրա աչքերի առաջ հառնում էին սահմռկեցուցիչ տեսարաններ, ականջին հասնում էին ինչ-որ ձայներ։ Հազարավոր ոտքերի դոփյուն, տրոփյուն, մերթ ծանրաքայլ ընթացք, մերթ խառնիխուռն վազք։ Հոգնատանջ, մղկտացող, վայր գլորվող երեխաներ։ Ջնայած թևը ջարդված էր, ինքը՝ Իսկուհին ստիպված էր երկու-երեք հոգի միանգամից բարձրացնել գետնից։ Թափորի առջևից խելահեղ ճիչեր էին լսվում։ Կատաղությամբ վրա էին պրծնում արնակալած աչքերով զափթիեները, թափահարում մտրակները։ Ամենուրեք տեսնում էր բռնաբարողի դեմքը։ Դա կարծես ոչ թե մեկ, այլ երեսուն դեմքից կազմված զանգված էր։ Դեմքերից շատերը ծանոթ էին և բնավ էլ նողկալի չէին։ Բայց այն կեղտակուր, մազակալած, արյունարբու դեմքը հաճախ էր վրան կախվում շղված աչքերով։ Ուռած, հաստ շրթունքների վրա պայթում էին թքի պղպջակները։ Այնքան պարզ էր տեսնում սովորական մարդուց խոշոր կալեյդոսկոպային այդ զանգվածը, որը թեքվեց իր վրա, ամեն ինչ ծածկեց սխտորի սուր գարշահոտության բթացնող ամպով։ Աղջիկը պաշտպանվեց, ատամները խրեց կապկային մազմղոտ ձեռքերի մեջ, որ սեղմում էին իր ստինքները։ Բայց ի՞նչ օգուտ։ «Հիմա ես մի ձեռք ունեմ»,— մտորում էր Իսկուհին։ Կարծես դա լիներ մեղմացուցիչ դեպք հանցանաց, քանի որ հանձնվել էր հրեշին, կորցրել գիտակցությունը։

Այսպիսի գիշերներին հաջորդող ցերեկները նման էին ճահճատենդով տառապող հիվանդի օրերին, երբ մարմնի ջերմությունն ամենաբարձր աստիճանից առանց անցման միանգամից իջնում է մինչև ցածրագույնը։ Իսկուհու միտքը պարուրվում էր մշուշով։ Երևի դա էր պատճառը, որ նա իր դժբախտությունն այնքան դյուրին տարավ։ Խեղված թևը

խղճալիորեն կախված էր ձախ ուսից։ Չնայած դրան, նրա երիտասարդական կենսահորդ մարմինն օրեցօր ծաղկում էր։ Առանց նկատելու, ընտելացել էր ամեն ինչ անել աջ ձեռքով։ Խորապես գոհ էր, որ այլևս կարիք չուներ կողմնակի օգնության։

Բավական երկար ժամանակ էր անցել այն օրից, ինչ Իսկուհին բնակվում էր Բագրատյանի տանը։ Վերջերս պատվելի Արամը եկավ շնորհակալություն հայտնելու քրոջը ցույց տված հյուրընկալության համար, ասելով, թե արդեն ուզում է տանել. հոր տան մոտ կարգի էր բերել ինչ-որ դատարկ բնակարան։ Գաբրիել Բագրատյանը սաստիկ վիրավորվեց.

— Պատվելի՛, ինչո՞ւ եք ուզում մեր մոտից տանել օրիորդ Իսկուհուն։ Բոլորս էլ նրան սիրում ենք, հատկապես կինս։

— Օտար մարդիկ տանը երկար մնալով բեռ են դառնում։

— Շատ հպարտ տեսակետ է։ Դուք գիտեք, որ օրիորդ Իսկուհին, ցավոք սրտի, քիչ է զգացնել տալիս իր ներկայությունը. այնքա՞ն սուսիկ-փուսիկ է, այնքա՞ն ամոթխած։ Դրանից բացի, մի՞թե այստեղ բոլորիս ճակատագիրն էլ նույնը չէ։

Արամը մի պահ նայեց Գաբրիելին.

— Ես հուսով եմ, որ մեր ճակատագիրը Ձեր աչքին ավելի վարդագույն չէ, քան իրականում։

Այս քննադատական խոսքի մեջ կար թեթև նախատինք այն օտարացածների և մեծահարուստների հասցեին, որոնք կարծես լիովին անհաղորդ էին դրսում տեղի ունեցող արհավիրքին։ Սակայն պատվելու այդ զուսպ թերահավատությունը Բագրատյանի մեջ մտերմական զգացում առաջացրեց։ Նրա ձայնը հնչեց խիստ ջերմորեն.

— Շատ եմ ափսոսում, որ Դուք էլ մեզ մոտ չեք ապրում, պատվելի։ Բայց, խնդրում եմ, հաճախակի եկեք, հենց որ ցանկություն կունենաք։ Այսօրվանից մեր սեղանի առաջ միշտ Ձեզ համար երկու տեղ պատրաստ կլինի։ Իմ խնդրանքը թող Ձեզ չվիրավորի։ Մեզ կուրախացնեք, եթե, իհարկե, դա Ձեր տիկնոջ համար դժվար չէ։

Ժուլիեթն ավելի սրտնեղեց, երբ իմացավ, որ Իսկուհին տեղափոխվելու է։ Այս երկու կանանց միջև յուրահատուկ մտերմություն էր ստեղծվել։ Դժվար էր ուրանալ, որ Ժուլիեթն ուղղակի սիրաշահում էր դեռատի հայուհուն։ Նման դեպքերում իրողության բուն էությունը կարելի էր միայն աղոտ կերպով կռահել, և «սիրաշահել» բառն այստեղ միայն հեռավոր առնչություն ուներ ճշմարտության հետ։ Որքան էլ տարօրինակ թվա, Իսկուհին դեռևս հասունացած չէր, թեև արդեն տասնինը տարեկան

էր, մանավանդ որ արևելքում աղջիկները վաղ են արբունքի հասնում։ Հանձին տիկին Բագրատյանի նա տեսնում էր մի փառահեղ կնոջ, որն անսահմանորեն բարձր էր կանգնած գեղեցկությամբ, ծագումով, կյանքի իմացությամբ, ամբողջ էությամբ։ Երբ երկուսով մտերմորեն նստում էին վերնահարկում, Ժուլիեթի սենյակում, դարձյալ Իսկուհին չէր կարողանում լիովին ազատվել ինչ-որ կաշկանդվածությունից։ Նման պահերին թերևս նեղվում էր այն անգործությունից, որին ինքը դատապարտված էր։ Ժուլիեթը նույնպես նրա ներկայությամբ իրեն առանձնապես ազատ չէր զգում, թեև սիրով էր աղջկան ընկերակցում։ Դա գրեթե անբացատրելի էր, բայց իրողություն էր։ Կան մարդիկ, որ նշանավոր չեն ո՛չ դիրքով, ո՛չ աստիճանով, մինչդեռ նրանց ներկայությամբ մեզ քաշված ենք զգում, կեղծ վիճակում, կարծես պտուտակով ձգված, չնայած դրա համար ոչ մի բավարար հիմք չկա։ Հանավարար այլ կերպ չէր կարելի բացատրել Ժուլիեթի զվարթ զրուցասիրությունը օրիորդ Թովմասյանի ներկայությամբ։

Մի անգամ Ժուլիեթը սևեռուն հայացքով նայեց Իսկուհուն, ապա ասաց.

— Գիտե՞ս, ես առհասարակ բոլոր արևելուհիներից խորշում եմ նրանց ծուլության, դանդաղաշարժության պատճառով։ Տանել չեմ կարողանում, երբ այդ սևուկները մեզ մոտ են գալիս։ Բայց դու, Իսկուհի, բոլորովին արևելցի չես։ Լույսի տակ նստած ժամանակ աչքերդ երկնագույն են...

— Եվ այդ ասողը Դո՞ւք եք, տիկին, Դուք, որ այդպիսի աչքեր ունեք, խարտյաշ մազեր։

— Սիրելիս, քանի՞ անգամ պետք է խնդրեմ, որ ինձ տիկին չասես, այլ Ժուլիեթ։ Խոսիր «դու»-ով։ Միշտ ուզում ես երեսո՞վս տալ տարիքս։

— Օ՜, ո՛չ, իհարկե, չեմ ուզում... Ներեցե՛ք... Ների՛ր...

Ժուլիեթն ակամա ծիծաղեց աղջկա պարզամտության վրա, որն այդ սեթևեթ կատակն ընդունեց լրջորեն, գրեթե սարսափահար աչքերով։

Իսկուհին իր ամբողջ ունեցած-չունեցածը թողել էր Ձեյթունում։ Փոքրիկ կապոցը, որ քույր ու եղբայր զափթիեների թույլտվությամբ հետները վերցրել էին աքսորվելու ժամանակ, ստիպված եղան թողնել մեծ քաղաքից դուրս, անհյուրընկալ դաշտերում։ Աղջիկն այժմ ոչինչ չուներ, բացի իր հագի մաշված շորերից, պատառոտված կոշիկներից ու գուլպաներից, որոնցով մի կերպ հասել էր Յողոնօլուք։ Ժուլիեթը ոտքից գլուխ փոխել էր նրա հագուստը։ Ինքն էլ էր սրտանց ուրախացել։ Վերջապես պետք եկավ հագուստեղենով լեփլեցուն այն ճամպրուկը, որն

անվթար Փարիզից եկել հասել էր Ստամբուլ, թեյրութ, ապա այս ճգնաբանը (ո՞ւմ մտքով կանցներ)։ Կանանց հագուստեղենի գործը նման է ամառային տերևների. մոդայի աշնանը զգեստներն իսկույն թափվում են՝ կերպաս լինեն թե մետաքս, դեռևս նոր թե թանկարժեք։ Ժուլիեթն այլևս տեղեկություն չուներ, թե որքան է առաջադիմել փարիզյան մոդան։ Ստիպված էր հայտնագործություններ անել «հեռատեսությամբ»։ Դուրս էր բերում իր հանդերձանքի գանձերը, կտրատում, ձևափոխում, զգեստներ կարում իր և Իսկուհու համար։ Միջօրեից առաջ աշխատում էր տանը, այգում, իսկ այնուհետև ամբողջ եռանդը նվիրում այդ զբաղմունքին։ Օրերն անցնում էին միանգամայն խմաստավորված։ Ժուլիեթը շունչ քաշելու ժամանակ չուներ։ Դատարկ սենյակներից մեկը դարձրել էր նորաձևության սրահ։ Յողոնօլուքցի երկու աշքաբաց աղջիկ օգնում էին։ Գյուղերում խոսում էին այդ մասին։ Շարունակ ինչ-որ կանայք էին գալիս, վաճառում մետաքսյա և ժանեկավոր գործվածքեղեն։ Ժուլիեթն այնպիսի պաշար էր կուտակել, որ կարող էր զգեստներով ապահովել մի ամբողջ պարահանդես։ Առանց ընդօրինակելու, իրեն հատուկ կախարդական ներշնչմամբ, թղթի վրա ուրվագծում էր իր ցանկացած ձևերը։ Դրանցից շատերն իրականացվում էին։ Կոնկրետ նպատակ չկար։

Եղբ Իսկուհին կարող էր միայն դիտել։ Բայց թե Ժուլիեթի աթվեստի համար նա հիանալի «կազապար» էր։ Աղջկան ամենից շատ սազում էին անփայլ գույները։ Շարունակ հարկ էր լինում փոքձելու այս կամ այն զգեստը, մազերը քանդելու, հյուսելու, շուռումուռ գալու։ Այդ ամենը կատարում էր ոչ առանց բավականության։ Ձեյթունի ճակատագրի հետևանքով խաթարված կենսուրախությունն սկսում էր խայտալ։ Թեթևակի վարդագունել էին աղջկա այտերը։

— Ա՛յ թե սուտլիկն ես, փոքրի՛կս,— խոստովանեց մի անգամ Ժուլիեթը։— Կարելի էր կարծել, թե ոչինչ չես տեսել, բացի ձեր այդ էնթարի կոչվածից, գուցե և թուրքական չադրա ես գցել դեմքիդ։ Բայց ահա այնպես ես իմ զգեստները հագնում, այնպես ես շարժվում, որ կարծես ամբողջ կյանքումդ միայն արդուզարդի մասին ես մտածել։ Լոգանում տեսածդ կուլտուրայի հոտը գալիս է։

Մի երեկո Ժուլիեթը պահանջեց, որ Իսկուհին փորձի իր «մեծ», լանջաբաց, անթև զգեստը։ Աղջկա դեմքը մթնեց.

— Բայց դա անհարիր է։ Ինչպե՞ս կարող եմ այս թևով։

Ժուլիեթը մտահոգ նայեց նրան.

— Իսկապես... Որքա՞ն պետք է շաբաթակվի այս պատմությունը։ Երկու, երեք ամիս։ Այնուհետև նորից կլինենք Եվրոպայում։ Իսկուհի, քեզ

էլ մեզ հետ կտանեմ։ Խոսք եմ տալիս։ Փարիզում և Շվեյցարիայում կան հայաստաններ, որտեղ նման բաներ բուժում են։

Գրեթե միևնույն պահին, երբ Բագրատյանի կինն այսքան խիզախ հույսեր էր փայփայում, բազմաշարշար տարագիրների առաջին թափորները տեղ հասան՝ Միջագետքի անապատը, Դեյր էս Զոր (Դեր Զոր)։

Իսկուհին միշտ այդպես ինքնամփոփ և լռակյաց չէր։ Երբ զարհուրելի տեսարանների տպավորությունը թուլացավ, երբ կալեյդոսկոպային դեմքը մոռացվեց, արդեն կարողանում էր հանկարծ ծիծաղել, բավականությամբ զանազան զվարճալի դեպքեր պատմել Ձեյթունի կյանքից։ Բայց որ նա լավ ձայն ուներ, դա հայտնագործեց Ստեփանը։ Տղան այդ օրը ճաշից հետո չէր հեռանում կանանց աշխատանոցից։ Ժուլիեթը դարձյալ շոշափում էր մի նյութ, որով հաճախակի դառնացնում էր ամուսնուն։ Որքան էլ տարօրինակ թվա, Գաբրիելի ոգով ասված ինչ-որ խոսքի պատճառով նա այնպես վրդովվեց Իսկուհու դեմ, որ սկսեց հայ ժողովրդի հասցեին անբարյացակամ դիտողություններ անել, գաղիական քաղաքակրթության ճաճանչափայլ ծովը հակադրել հայկական կիսախավար գետնախորշին։

— Հին ժողովուրդ եք,— բորբոքվեց նա,— լա՜վ։ Քաղաքակիրթ ժողովուրդ եք։ Չեմ ժխտում։ Բայց թե ինչո՞վ կապացուցեք, որ այդպիսին եք։ Գիտեմ, իհարկե, անուններ կթվեք, որ ես ամեն օր ստիպված եմ լսել՝ Աբովյան, Բաֆֆի, Սիամանթո։ Բայց ո՞վ է ճանաչում այդ մարդկանց։ Ձեզանից բացի, աշխարհում ոչ ոք նրանց մասին չգիտե։ Եվրոպացին երբեք չի հասկանա ձեր լեզուն, երբեք չի խոսի ձեր լեզվով։ Ո՜չ Ռասին եք ունեցել, ո՜չ Վոլտեր, ո՜չ Քաթուլ Մենդես*, ո՜չ Պիեռ Լոթի*։ Հոգյակս, ի՞նչ ես կարդացել Պիեռ Լոթիի գործերից։

Այս դառնացնող խոսքերից վիրավորված՝ Իսկուհին գլուխը մտամոլոր բարձրացրեց.

— Ո՜չ, տիկին... ոչինչ չեմ կարդացել։

— Հեռավոր երկրներ նկարագրող գրքեր են դրանք,— կշտամբանքով վրա բերեց Ժուլիեթը, կարծես դա բավական էր, որ աղջիկը ճանաչի այդ Պիեռ Լոթիին։

Ժուլիեթի կողմից վեհանձնություն չէր նման նվաստացուցիչ համեմատություններ անելը։ Բայց նա մեն-մենակ էր ավելի զորավոր միջավայրում, ուստի և ուզում էր յուրայիններին պաշտպանել։ Եվ դա, անշուշտ, անհասկանալի չէր։

Իսկուհու աչքերին նայելն իսկույն կզգար, որ աղջիկը շատ ասելիք ունի։ Բայց փոքր-ինչ լռելուց հետո նա միայն մի խոսք ասաց.

— Մենք հին երգեր ունենք. շա՞տ են սքանչելի։

— Օրիորդ, մի բան երգեցեք,— խնդրեց Ստեփանը, որը մի անկյունում կուչ եկած՝ դիտում էր Իսկուհուն։ Սա տղային երևի չէր էլ նկատել։ Այդ պահին աղջկա համար առաջին անգամ պարզվեց, որ Ֆրանսուհու որդին իսկական հայ տղա է՝ զերծ այլազգի էության որևէ նշույլից։ Գունատ ճակատի տակ վառվում էին իր ժողովրդին հատուկ աչքերը, որոնք տակավին միայն լավն ու բարին էին տեսել։ Թերևս այդ զգացման շնորհիվ Իսկուհին զսպեց ընդդիմանալու ներքին ցանկությունը, վճռեց երգել։ Նա երգելու էր ոչ թե Ժուլիեթի տարակուսանքը փարատելու, հայոց երգերի արժանիքն ապացուցելու նպատակով, այլ միմիայն Ստեփանի համար։ Կարծես իր պարտքն էր համարում օտարացած պատանուն վերադարձնել հարազատ աշխարհը։ Իսկուհին կրծքային նուրբ ձայն ուներ։ Դա ավելի շուտ փոքրիկ աղջկա ձայն էր, քան կանացի գեղեցիկ սոպրանո։ Բայց տխրածոր, ներդաշնակ մեղեդին ծավալող այդ ձայնը ոչ միայն մանկունակ էր, այլև ավելի շատ քրմական ինչ-որ երանգ ուներ։ Դա այն երգն էր, որ Յողոնօլուքից ինքն էր տարել Զեյթունի որբանոցը՝ «Կուգան ու կերթան»-ը։ Դա ոչ այնքան իմաստուն խոսքերի, որքան սրտահույզ եղանակի շնորհիվ դարձել էր յոթ գյուղի աշխատանքային երգը.

Ցախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան։
Դառն ցավերը մարդու վերա չեն մնա երկար,
Որպես հաճախորդ, շարվե-շարան կուգան ու կերթան։

Փորձանք, հալածանք և նեղություն ազգերի գլխից,
Ինչպես ճանապարհի քարավան, կուգան ու կերթան։
Աշխարհը բուրաստան է հատուկ, մարդիկը՝ ծաղիկ,
Որքա՞ն մանուշակ, վարդ, բալասան կուգան ու կերթան։

Ոչ ուժեղը թող պարծենա, ոչ տկարը տխրի,
Փոփոխակի անցքեր զանազան կուգան ու կերթան։
Արևը առանց վախենալու ցայտում է լույսը,
Ամպերը դեպի աղոթարան կուգան ու կերթան։

Երկիրը ուսյալ զավակին է փայփայում մոր պես,
Անկիրթ ցեղերը թափառական կուգան ու կերթան։
Աշխարհը հյուրանոց է, Ջիվան, մարդիկը հյուր են,
Այսպես է կանոնը բնական, կուգան ու կերթան։

Երգը լսելիս Ժուլիեթը պարզ զգաց Իսկուհու մեջ նստած այն անթափանցելին, որ նվերներ մերժելիս ամոթխածության և տխրության կերպարանքով ծառանում էր իր բոլոր ջանքերի դեմ։ Քանի որ խոսքերի

մեծամասնությունը չհասկացավ, թարգմանել տվեց։ Վերջին տողը լսելուց հետո հաղթական եղանակով ասաց.

— Դարձյալ զգացվում է, թե ինչքան ամբարտավան մարդիկ եք։ Ուսյալ զավակը, որին մայր երկիրը փայփայում է, հայությունն է, իսկ անկիրթ ազգերը մյուսներն են...

Ստեփանը պահանջեց գրեթե տիրաբար.

— Մի բան էլ, Իսկուհի։

Ժուլիեթն ուզում էր բորբոքուն երգ լսել, այնպիսի մի բան, որ ո՛չ մտատանջություն պատճառի, ո՛չ էլ վերաբերի ուսյալ կամ անկիրթ ցեղերին.

— Իսկական սիրերգ, Իսկուհի։

Իսկուհին անշարժ նստած էր աթոռին՝ փոքր-ինչ առաջ խոնարհված։ Ձախ ձեռքի կուչ եկած մատները ծոցն էր դրել։ Թիկունքը դարձրել էր պատուհանի կողմը, որը լցված էր մայր մտնող արևով։ Դիմագծերն անորոշ էին, ստվերով պարուրված։ Մի պահ անցնելուց հետո կարծես ինչ-որ բան պեղեց, դուրս բերեց հիշողության խորքերից.

— Սիրային մեկ-երկու երգ գիտեմ։ Այս կողմերում տարածված են։ Լսել եմ այն ժամանակ, երբ դեռ շատ փոքր էի ու ոչինչ չէի հասկանում։ Ոչ մի առանձին բան։ Բացարձակ խենթություն։ Ճիշտն ասած, այս երգը պետք է տղամարդ երգի, թեև կենտրոնական դեմքն աղջիկն է։

Աղջկա և քրմուհու ձայնը հնչեց ասես ամայության խորքից։ Վայրի տողերը լիակատար հակադրությունն էին անխռով ձայնի.

Աղջիկ տեսա այգու եզրին,
Ոտքից գլուխ՝ շաղ ու բույր,
Սեղմած կրծքի զույգ նուներին
Ծառից քաղած երկու նուռ։

Նուռն ինձ տվեց... Ա՜խ, ես չառա...
Արմանք-զարմանք նայեց լուռ,
Ջարկե՞ց սրտին իր անարատ՝
Աչքերի մեջ ծո՞վ մրմուռ։
Սե՞ր տուր, անո՞ւշ, ոչ թե նուռ...

— Մի անգամ էլ,— պահանջեց Ստեփանը։

Բայց Իսկուհին չարձագանքեց, քանի որ այդ պահին Գաբրիելը զգուշորեն դուռը բացեց և ներս մտավ։

Վերջերս Բագրատյանի տանը մեծ աշխուժություն էր տիրում։ Գրեթե ամեն օր հյուրերի հետ էին ճաշում։ Ժուլիեթն ու Գաբրիելը գոհ էին

եռուզեռից։ Այժմ նրանց համար ծանր էր իրար հետ առանձին մնալը։ Ժամանակն էլ աննկատելի էր անցնում։ Յուրաքանչյուր անցած օրը հազիվ էր. ամրապնդվում էր այն հույսը, թե արհավիրքը դուրս խափանվի։ Հուլիս ամիսն էր մոտենում։ Որքա՞ն կարող էր տևել վտանգը։ Մոտալուտ հաշտության հոտն զգացվում էր։ Իսկ դա փրկություն էր։ Այժմ պատվելի Արամը նույնպես հաճախակի հյուր էր դառել։ Օվսաննան, որը դեռևս լիովին չէր կազդուրվել, ամուսնուն խնդրում էր հոգ տանել Իսկուհու մասին։ Գիտեր, որ քրոջ հետ նա կապված էր սրտի բոլոր լարերով, անհանգստանում էր, եթե մեկ-երկու օր չէր տեսնում։

Թովմասյանից բացի, շատերն էին Գաբրիելի հետ սեղան նստում։ Գլխավոր խումբը Գրիգորն ու նրա արբանյակներն էին։ Սրանց ընկերակցում էր նաև դեղագործի կենվորը՝ Գոնզագ Մաբիսը։ Երիտասարդ հույնը միայն իր գաշնամուրային նվագի համար չէր սիրված։ Նա գեղեցկության և վայելչության նուրբ գիտակ էր։ «Նկատում էր»։ Իսկ Գաբրիելն այլևս չէր նկատում, կամ նկատում էր հազվագեպ։ Ժուլիեթի դերձակային արվեստը, տնեցիների աչքին միայն հայրենիքը հիշեցնող անընդատակ ժամանց էր, մինչդեռ ուշադիր Գանզագի հիացմունքն էր շարժում։ Առանց սնամեջ հաճոյախոսություններ շաղակրատելու, որևէ նպատակասլաց խոսք էր ասում ոչ միայն Ժուլիեթի արտադրանքի, այլև հայանագործությունների վերաբերյալ, հայանագործություններ, որոնցով հմայված էր նաև Իսկուհին։ Գոնզագը խոսում էր ոչ թե իբրև միջամիտ հիացող, այլ իբրև գործի գիտակ արվեստագետ։ Նման պահերին իրար միացած խիտ հոնքերը հարցականորեն վերև էր բարձրացնում։ Այսպիսով, Գոնզագի բարձր ճաշակի շնորհիվ Ժուլիեթի աշխատանքն իմաստավորվում էր, դարարում ժամանց համարվելուց։ Երիտասարդի գեղարվեստական ճաշակն զգացվում էր նաև նրա արտադրանքից։ Ճիշտ է, նա չքավոր էր և, հավանաբար, վարդագույն անցյալ նույնպես չէր ունեցել։ Բայց այս մասին չէր խոսում։ Ժուլիեթի հարցերից խուսափում էր ձեռքի արհամարհական շարժումով։ Ցույց էր տալիս, թե իբր ո՛չ գաղտնապահություն է խաղում, ո՛չ էլ թաքցնելու որևէ բան ունի, այլ անցած-գնացածը կարևոր չէ։ Չնայած իր սահմանափակ միջոցներին կամ, թերևս, հենց այդ պատճառով, Բագրատյանի տունը դարձել էր միշտ լավ հագեցված։ Քանի որ առաջիկայում իր եվրոպական հագուստեղենի պաշարը լրացնել չէր կարող, ուստի զգեստների հետ վարվում էր բծախնդիր խնամքով։ Գոնզագի վարվելաձևը և հանդերձանքը Ժուլիեթի վրա հաճելի տպավորություն էին թողնում, առիթ շտալով որևէ այլ նկատառման։ Սակայն երկու ուսուցիչների՝ Շատախյանի և Թոխանյանի ստացած տպավորությունը

այդքան հաճելի չէր. վիրավորվում էր նրանց փառասիրությունը, բորբոքվում երկրպագուական խանդը։ Հրանտ Ոսկանյանը, այդ գաճաճը, ուղղակի խանգահաթ էր լինում, կատաղությունից իրեն ուտում։ Ոչ մի կերպ նրան չէր հաջողվում տիկին Բագրատյանի ուշադրությունը բևեռել իր խորհրդավոր դիրքի, իր ներքին արժանիքների վրա՝ ո՛չ բանաստեղծագեղագրական մագաղաթաթերթերով, ո՛չ էլ իր վեհապանծ լռությամբ։ Մինչդեռ ծերքերքուն խառնածքնը միայն դատարկ ցուցամոլությամբ իր կույն նվաճեց այդ ուշադրությունը։ Ոսկանյանը վճռեց այդ ասպարեզում դուրս գալ անհավասար գոտեմարտի։ Վազեց դերձակի մոտ, որը մի կես դար առաջ երկու տարի աշխատել էր Լոնդոնում։ Այս «անգլիացի» վարպետն իր արհեստանոցի պատերից կախել էր շիկ լորդերի ժամանակներից մնացած տարազի նմուշներ։ Կտորեղենից, իհարկե, խեղճ էր։ Միայն ինչ-որ բարակ, մոխրագույն կտոր կար, որ բավական պատկառելի տարիքի էր հասել և հազիվ թե արժանի լիներ վերարկուի աստառ դառնալու։ Այնուհանդերձ Ոսկանյանն ընտրեց լորդերից մեկի տարազը։ Լորդի հոյակապ պատկերն ամփոփված էր գորշ գույնի երկար, ծիծեռնակապոչ սերթուկի մեջ։ Փորձելիս պարզվեց, որ սերթուկը գաճաճի կրունկներին է հասնում։ Բայց թե Ոսկանյանը դա հաշվի չառավ, չնայած դերձակի տարակուսանքին։ Երբ գործը գլուխ եկավ, բանաստեղծը, լորդին ընդօրինակելով, կոճակի օղակի մեջ սպիտակ ծաղիկ անցկացրեց։ Սակայն, ցավոք սրտի, նա եղածը էլատաբելագործեց սեփական երևակայությամբ. Գրիգորի գեղատնից սուր հոտ արձակող օծանելիք գնեց, կես արվակը շաղ տվեց նոր սերթուկի վրա։ Եվ, հիրավի, առաջին խոկ պահին գրավեց տիկին Բագրատյանի, ինչպես նաև բոլորի ուշադրությունը։ Հետևանքն այն եղավ, որ Գաբրիելը նրան մի կողմ կանչեց, բարեկամաբար խնդրեց, որ մեկ-երկու ժամով հագնի իր սեփական սերթուկներից մեկը, իսկ հայատեսիլ գորշ սերթուկը կախի այգում՝ հոտը քամուն տալու համար։

Հիշյալ հյուրերից բացի, երբեմն գալիս էին նաև տարեց զույգեր, ինչպես, ասենք, Պետրոս Այթունին ու Մայրիկ Անթառամը, պատվելի Նախուդյանն ու նրա երկչոտ կինը։ Սակայն Տեր-Հայկազունը միայն մի անգամ էր հյուր եկել։

Հավիտյան գեղեցիկ միջօրե էր, երբ Գաբրիելն առաջարկեց մի երեկո և մի գիշեր անցկացնել Մուսա լեռան գագաթին, վայելել արևածագը դիտելու հաճույքը։ Դա խիստ նվրոպացու առաջարկություն էր, առաբիատի սրտից բխած ներշնչում, առաբիատ, որն ամբողջ կյանքն անց է կացնում բեռտնն պատերի և գործնական նամակների կույտերի մեջ։ Իսկ

այստե՞ղ։ Սեղանակիցները միանգամայն տեղին զարմացան։ Միայն երբեք մեջքի վրա չընկնող Շատախյանը գովաբանեց գիշերը բացօթյա անցկացնելու բավականությունը։ Բայց Բագրատյանը նրան հիասթափեցրեց.

— Կարիք չունենք բացօթյա քնելու։ Մեր տան խորդանոցում երեք վրան եմ հայտնաբերել, երեքն էլ կարգին-սարքին։ Հանգուցյալ եղբայրս է օգտագործել որսորդական մեծ ուղևորություններ կատարելիս։ Երկուսը միանգամայն արդիական են, արշավախմբերի համար։ Անգլիայից են բերված։ Յուրաքանչյուրը երկու-երեք հոգու համար է։ Երրորդը շեյխական շատ մեծ ու փառահեղ վրան է։ Կամ Ավետիսն է իր ճանապարհորդություններից մեկի ժամանակ հետը բերել, կամ մեր պապից մնացած ժառանգություն է...

Քանի որ Ժուլիեթն այդ փոփոխությունը ողջունեց ոչ առանց հրճվանքի, իսկ Ստեփանն ուրախությունից սկսեց թռչկոտել, վճռեցին ճանապարհ ընկնել վաղը, շաբաթ օրը։ Ամեն ինչ տեսած ու փորձած դեղագործ Գրիգորը, որի համար աշխարհում ոչ մի նորություն գոյություն չուներ՝ մուրաբաներից մինչև համեմատական աստվածաբանությունը, յուրայիններին հաղորդակից էր դարձնում բաց երկնքի տակ մի ժամանակ անցկացրած իր օրերի փորձառությանը։ Նրա շիլ աչքերն այդ պահին սևեռված էին դեպի անորոշ տարածություն, իսկ խուլ միապաղաղ ձայնից զգացվում էր, թե ծերունու աչքին որքա՜ն ընչին են իր ձեռք բերած գիտելիքների պատառիկները։ Դեղնած դեմքի վրա ոչ մի շարժում չկար։ Միայն այծային մորուքն էր ռիթմիկ ելևէջում։ Տարիներ առաջ նա շաբաթներով մնում էր Մուսա լեռան բարձունքին։ Նույնիսկ երեկոները հովիտ չէր իջնում։ Ով լեռը լավ է ճանաչում (իսկ ո՞վ է իրականում այդ լեռը ճանաչում), գիշերելու համար այնքան ապահով ապաստարաններ կարող է գտնել, որ վրանի կարիք չի էլ զգա։ Գրիգորը, իհարկե, նկատի չուներ միայն Քեբուսիեի վերևի հանրածանոթ քարանձավները։ Ժողովրդական ավանդության մեջ հիշատակվում էր Սուրբ Սարգիսը։ Հեթանոսների դեմ կռվելիս սա իր նժույգով Դամլաջրքի գլխից ցած էր թռել, լեռան վրա թողնելով ձիու զորավոր սմբակների հետքերը, իբրև քարանձավներ։ Բայց եթե իրականում Մուսա լեռը ոչ մի առնչություն չուներ Սուրբ Սարգսի հետ, ապա անմիջական կապ ուներ Սուքիասյանների՝ ճգնավորների, մեկուսացած վանականների հետ, որոնք դարեր առաջ իրենց համար բնակավայր էին ընտրել այդ այրերը։ Իր ճգնության շաբաթներին Գրիգորը մտադիր էլ չէր ուսումնասիրել հիշյալ քարանձավա-

բնակների հոգևոր հիմունքները։ Ընդհակառակը, այն ժամանակ նրան ոչինչ չէր հրապուրում, բացի բնությունը ճանաչելուց։ Մուսա լեռան բուսական աշխարհի լիակատար հավաքածուի գոյության համար նա պարտական էր այդ շաբաթների բուսաբանական պրպտումներին։ Ծաղկաստաններն իր ցանկում կարող էին գտնել աղվեսագի և կապարարմատ կոչվող բույսերը, որոնց մասին նույնիսկ հռչակավոր Լիննեյը* ոչինչ չի ասել։ Նա կարող էր վկայակոչել բազմաթիվ ակադեմիաների ղեկավար անձանց հետ այդ առթիվ ունեցած նամակագրությունը։ Դժբախտաբար երիտասարդությունը բնավ չի հետաքրքրվում բուսական աշխարհով և բույսերի դասակարգմամբ, կյանք է մտնում առանց որևէ ջերմ խանդավառության։ (Ուսուցիչներն էին մեղավոր)։ Սակայն Գրիգորը կարող էր դեղագործական իր ունակություններով հավաստիացնել, որ ինքն իր ունեցած սուղ միջոցներով հանդերձ ի վիճակի է Մուսա լեռան դեղաբույսերից պատրաստել բոլոր անհրաժեշտ դեղերը։ Քինինի, զանազան հաբերի կամ դեղափոշիների պակասը լրացնելու համար ինքը բնավ էլ կարիք չուներ գնալու Անտիոք, դիմելու պետական հիմնարկներին։ (Այդ խոսքն ուղղված էր Բագրատյանի դեմ, որն իմաստուն Գրիգորի դեղատանը նայել էր միայն կասկածանքով)։

Բացի տիկին Նոխուդյանից, որը սարսափով էր մտածում, թե իր փափկասուն, վատառողջ Հարությունը կարո՞ղ է մասնակցել նման հակառողջապահական ավելորդ ցոփության, միայն Իսկուհին հրաժարվեց խմբին ընկերանալուց։ Ի՞նչ կար զարմանալու։ Աղջիկն արդեն բաց դաշտում, պարզ երկնքի տակ ճաշակել էր անագորույն բարբարոսության համը։ Այն, ինչ ուրիշները բավականություն էին համարում, նրա համար վիրավորանք էր։ Նա իրեն այնպես էր զգում, ինչպես կուշտ մարդկանց նայող սովատանջը, որի աչքի առաջ ուտելիքը պատուհանից դուրս են նետում։ Արևելքում, յոթանասուն մղոն հեռավորության վրա ճանապարհն էին չափչփում մեռնող բազմությունները։ Բագրատյանի անսիրտ խաղն աղջկան դառնացրել էր։ Այդ խաղի ետևում նա որևէ դիտավորություն չէր տեսնում։

— Ես կուզենայի տանը մնալ,— խնդրեց նա։

Գաբրիելը դիմեց Իսկուհուն ոչ առանց խստության.

— Վճռված է, Իսկուհի։ Ես Ձեզ այդքան անմարդամոտ չեմ համարում։ Ժուլիեթի հետ կլինեք շեյխական վրանում։

Իսկուհին աչքերը հառեց սփոռցին. հարմար բառեր էր որոնում.

— Ես... վախենում եմ... Ամեն գիշեր ուրախանում եմ, որ կարող եմ քնել տանը։

Գաբրիելը փորձեց որսալ աղջկա հայացքը.

— Հենց Ձեզ եմ նկատի ունեցել։

Իսկուհին գլուխը դեռևս չէր բարձրացնում, սեղմում էր շուրթերը։ Այդ փոքրոգությունից Գաբրիելը սաստիկ բորբոքվեց.

— Ես պնդում եմ, Իսկուհի՛։

Աղջկա դեմքն արդեն սկսեց դողդողալ։ Ժուլիեթն ամուսնուն աչքովունքով հասկացրեց, որ նրան հանգիստ թողնի և այլևս ուշադրություն չդարձնի։ Հասկացրեց նաև, որ իրեն, գուցե, հաջողվի կոտրել աղջկա դիմադրությունը։ Բայց դա ավելի դժվարին խնդիր դուրս եկավ, քան Ժուլիեթը կարծում էր։ Գործի դրեց կանացի այն իմաստությունը, թե բոլոր տղամարդիկ էլ վերջին հաշվով երեխաներ են։ Եթե կինն ուզում է կյանքում տեր ու տնօրեն լինել, ապա պետք է կատարի, երբ հնարավոր է, տղամարդկանց փոքր ցանկությունները։ Ամենաչնչին լավության համար իսկական տղամարդը մնում է երախտապարտ, զառնում զիջող։ Կենսական մեծ խնդիրներ լուծելիս կարելի է սեփական կամքը գրսևորել, եթե փոքր հարցերում մարդ կարողանա զիջել։

Այս իմաստությունը կարծես հենց իր համար մտաբերեց Ժուլիեթը՝ ամուսնացած կինը։ Բայց ի՞նչ առնչություն ունեն Գաբրիելի տղամարդկային փոքր ցանկությունները Իսկուհու հետ։ Եվ խռովահույզ աղջիկը հայացքը թեքեց մի կողմ.

— Դրանք ինձ համար փոքր բաներ չեն։

— Ամեն ինչ լավ կվերջանա։ Թող մի անգամ էլ ինչ-որ նորություն լինի...

— Այդ նորության հետ շա՜տ հիշողություններ են կապված։

— Սգաբարդ՝ պատվելին, բնավ չառաքեց...

Իսկուհին խոր թառանչ արձակեց.

— Սա կամակորություն չեմ անում...

Ժուլիեթը կարծես հաշտվեց այդ մտքի հետ.

— Եթե դու տանն ես մնալու, ես էլ չեմ գնա։ Ինձ համար ոչ մի բավականություն չէ այդքան տղամարդկանց մեջ լինել միակ կին արարածը։ Ավելի լավ է՝ ինքս էլ այստեղ մնամ։

Իսկուհին լուռ ու երկար նայեց Ժուլիեթին.

— Ոչ, դա անհնարին է։ Այդպես չի կարելի։ Եթե ուզում ես, ի՞նչ արած, ես էլ կգամ։ Վախի զգացումն արդեն հազթահարեցի։ Քեզ համար սիրով կանեմ այդ բանը։

Ժուլիեթը հանկարծ սոսկալի հոգնած տեսք ընդունեց.

— Մինչև վաղը, կեսօրից հետո, ժամանակ շատ ունենք։ Կարելի է տասն անգամ կշռադատել։

Ձեռքը տարավ դեպի ճակատը, աչքերը փակեց։ Ձգիտես ինչու, գլուխը պտտվեց. կարծես Իսկուհու հիշողությունները գրոհեցին իր սեփական հոգու վրա.

— Իսկուհի, երևի քո այդ [illegible]ացումը տեղին է։ Բոլորս էլ այնքա՜ն միամիտ ենք ապրում...

Հետևյալ օրը մարդիկ շատ վաղ արթնացան։

Կանանց ցանկությամբ ընտրեցին ոչ թե Կաղնուտի կարճ արահետը, այլ Հյուսիսային լեռնաթամբի վրայով անցնող հարմար, սակայն ոլորապտույտ, երկար ճանապարհը։ Այդտեղ հասնելու համար պետք է Ազիրից Բիթիաս տանող սայլուղով կես մղոն առաջ անցնեին։

Մուսա լեռն այդ օրը, չնայած իր անդունդներին, ժայռակերտ ամրոցներին, վայրի ամայությանը, լեռնային ակնապարար մարգագետնի տպավորություն էր թողնում։ Կարծես ասրն ի վեր բարձրացողների առաջ ուզում էր ցուցադրել իր գեղեցկությունը։

Իսկուհու լռությունը խորասուզվել էր ընդհանուր զվարթության հատակը։ Հետզհետե նա էլ սկսեց աշխուժանալ։

Բագրատյանը նկատում էր, որ Ստեփանը Շատախյանի դպրոցը հաճախելուց հետո գլխապտույտ արագությամբ հրաժարվում է եվրոպական կիրթ շարժուձևից։ «Բոլորովին անճանաչելի է դարձել»,— վաղուց ի վեր ասում էր Ժուլիեթը։ «Պետք է ուշադրություն դարձնել. իր «սքանչելի» ուսուցչի նման սկսել է խոսել հայկական փայտե Ֆրանսերենով»։ Ստեփանն արդեն Դամլաջրքը նույնքան լավ էր ճանաչում, ինչքան հայրը։ Նույնիսկ ուզում էր ուղեցույցի դեր կատարել։ Ճանապարհով չէր քայլում։ Մարմնամարզիկի ճարպկությամբ արագ կողմնորոշվում էր, եռանդուն մագլցում ժայռերն ի վեր։ Կամ շատ առաջ էր ընկնում, կամ շատ ետ, այնպես որ, երբ կանչում էին, ձայնը հազիվ էր լսվում։ Ետ կամ առաջ ընկնելն իր հիմնավոր պատճառն ուներ։ Ինքնին հասկանալի էր, որ Սաթոյին թույլ չէին տվել զբոսանքին մասնակցելու, թեև Ստեփանը միշտորդել էր։ Այս վայրերի և անհանգիստ արարածի անկարգությունը ոչ ոք չէր կարող հաստատել, բայց աղջկա «կեղտոտ» աչքերը բոլորին վանում էին։ Քանի որ տանը Ստեփանի միակ հասակակիցը Սաթոն էր, տղան նրա նկատմամբ «դասակարգային» զգացում ուներ։ Այժմ հավատացած էր, որ աղջիկը հավատարիմ մնալով իր տարօրինակ ծածկամտությանը, գաղտնի հետևում էր խմբին։ Այդ պատճառով էլ ամեն րոպե

սպասում էր նրա հայտնվելուն։ Ուզում էր, որ միասին քայլեն։ Տղայի համար միշտ էլ դժվար էր Սաթոյի հետ խոսելը։ Սա որոշ ժամանակ հարցերին պատասխանում էր խելամտորեն, միանգամայն հիանալի։ Բայց այնուհետև այծերը գալիս էին, և բերանից դուրս էին հորդում անիմաստ, անախորժ հնչյուններ։

Գեղատեսիլ սարալանջը հասան ավելի շուտ, քան Գաբրիելը կարծում էր։ Ավագյանի հսկողությամբ Քրիստափորը, սպասավոր Միսակն ու պատանի ախոռապանը ահագին գործ էին կատարել։ Վրաններն արդեն պատրաստ էին, հողին ամրացված։ Շեյխական կամ Ավետիս պապի վրանի վերևում նույնիսկ ծածանվում էր մի դրոշ, որի վրա հին հայկական զինանշան կար՝ Արարատը, տապանը և կենտրոնում սավառնող աղավնին։

Հիրավի, փառահեղ էր վրանը՝ հաջողակ և պանծալի ժամանակների առհավատչյան։ Ութ քայլ երկարություն ուներ, յոթ քայլ՝ լայնություն։ Առաստաղը հենվում էր ընտիր փայտից պատրաստած ձողերի վրա։ Ներսի պատերը ծածկված էին գեղեցիկ գորգերով։ Միայն մի մեծ պակասություն ուներ. զգացվում էր քաֆուրի և հնության սուր հոտը։ Վրանի պատերը ծալված, դրված էին ջվալների մեջ, կարված։ Տնտեսվար Քրիստափորը ժամանակ առ ժամանակ առատորեն քաֆուր և միջատասպան փոշի էր շաղ տալիս։ Արշավախմբային նոր վրանները, որ կրտսեր Ավետիսը մի քանի տարի առաջ Լոնդոնից բերել էր Յողոնսլուք, ավելի մեծ հիացմունքի էին արժանանում, թեև պատրաստված էին հասարակ կտորից։ Դրանց մեջ կար այն ամենը, ինչ կարող էր անցնել հմուտ, հեռատես որսորդի, աշխարհիկ մարդու մտքով։ Ավետիսը, նախքան սաստկացող հիվանդությունը նրան անկողնուն կգամեր, ծրագրել էր անգլիացի երկու բարեկամի ուղեկցությամբ ուղևորություն կատարել դեպի լեռնային ու տափաստանային գրեթե կուսական վայրերը։ Վրանները պատրաստելիս ոչինչ չէին մոռացել։ Ծալովի մահճակալներ, որ այնքան էլ կոշտ չէին, մետաքսյա քնապարկեր, իրար մեջ ագուցվող, փետուրի պես թեթև սեղաններ ու աթոռներ, խոհանոցային սպասք, թեյի ամանեղեն, գդալներ ու ափսեներ։ Եվ այդ բոլորն էլ ալյումինից։ Ռետինե լվացարան, լոգարան՝ խողովակով։ Մոռացված չէին անգամ նավթի ու սպիրտի հոսքամակայուն լապտերները։

Բանը հասավ տեղաբաշխման։ Ժուլիեթը հրաժարվեց շեյխական վրանից, իր և Իսկուհու համար ընտրեց նոր վրաններից մեկը։ Գրիգորին ու Գոնզագին բաժին ընկավ մյուսը։ Ուսուցիչ Ոսկանյանն անհայտ պատճառներով և Ժուլիեթի կողմը խստությամբ նայելով, հայտարարեց,

թե ինքը գերադասում է գիշերն անցկացնել մեն-մենակ, մարդկային հասարակությունից հեռու, ինքն իր հետ։ Այս հայտարարությունն անելիս նա գանգրահեր գլուխը փոքր-ինչ ետ գցեց, կարծես սպասում էր, թե ամեն կողմից գովեստներ կտեղան իր հասցեին՝ հպարտ ու խիզախ վճռի համար, իսկ կանացի փաղաքուշ մի ձայն կփորձի կասեցնել այդ վճիռը։ Բայց Ժուլիեթը ո՛չ գազանների մասին էր մտածում, ո՛չ էլ դասալիքների, որոնք կարող էին փորձանք բերել Ոսկանյանի գլխին։ Վիճաբանելու հարկ չկար, եթե մարդն ուզում էր առանձնության մեջ զրուցել իր սեփական հոգու հետ։ Նա ամբարտավան արհամարհանքով շրջվեց, գնաց երեկոյի մնացորդը ձոնելու իր խորախորտ մտորումներին։ Այլևս չէր կարող հրաժարվել անիմաստ վճռից։ Գաբրիելը, Ստեփանը, Ավագյանն ու Շատախյանը մտան փառահեղ վրանը՝ իրենց գիշերային օթևանը, որի վերևում փողփողում էր դրոշը։

Բագրատյանն այդ երեկոն մտովի համարում էր գլխավոր փորձ։

Ամեն ինչ անցավ առանց որևէ արկածի, շատ սովորական ձևով։ Ոչ մի ռոմանտիկ բան տեղի չունեցավ, եթե նկատի չունենանք այն, որ խոհարար Հովհաննեսը ճաշ պատրաստեց բացօթյա օջախի վրա։ Ի դեպ Միսակը՝ ահ ու սարսափ չիմացող այդ տղան, մի քանի օր առաջ հանդգնել էր գնալ Անտիոք և զինվորական մթերքներ մատակարարող ծանոթներից գնել մի ամբողջ ջորեբեռ անգլիական պահածոներ, որոնց համն այսօր փորձում էին։

Հաց ուտելիս Ստեփանը հաճախակի վեր էր կենում, լավաշի մեջ փաթաթած տանում իր բաժնի մի մասը, տալիս քաղցած Սաթոյին, որը թաքնված էր կրակի մյուս կողմում։ Խումբը բոլորվել էր օջախի շուրջը, խսիրների վրա։ Միսակը հարմար տեղում սփռոց էր բացել, վրան ափսեներ շարել։

Երեկոն շնչում էր շոյող թարմությամբ։ Լուսինը դեռ չէր բոլորել։ Կրակը մեղմ ճարճատում էր։ Տնական գինի և թթի օղի էին խմում։ Բայց չկար իսկական բավականություն, չկար սրտաբաց հրճվանք։ Ժուլիեթը շուտով վերջ տվեց երեկույթին։ Նա իրեն տարօրինակ կերպով ճնշված էր զգում։ Նոր միայն հասկացավ, թե ինչու էր Իսկուհին դիմադրում։ Ամենուրեք դարանակալ սպասում էր անհյուրընկալ հողն իր ահարկու լրջությամբ։ Հիրավի, գուցե դա չար խաղ էր, որ հնարեց Գաբրիելը։ Ժուլիեթն ու Իսկուհին գնացին իրենց վրանը։ Մյուսները նույնպես միմյանց բարի գիշեր մաղթեցին։ Ոսկանյանը գլուխը բարձր պահած՝ հեռացավ, որ սառնաշունչ գիշերվա գրկում, սպասավորների ճամբարի մոտակայքում քավի իր անբարտավանության մեղքը։ Գաբրիելը կարգավորում էր

գիշերային պահակության գործը։ Երեք ժամը մեկ պետք է երկու հոգի հսկեին վրանները։ Բագրատյանը նրանց հրացաններ տվեց, որոնցից փամփուշտներ։ Քրիստափորը և Միսակը եղել էին հանգուցյալ Ավետիսի որսակիցները։ Այնպես որ լավ գիտեին զենքի հետ վարվելու ձևը։

Գաբրիելը անկողին մտավ բոլորից հետո։ Բայց քունն աչքերին մոտ չէր գալիս։ Քնած չէր նաև Իսկուհին։ Աղջիկն աչքերը լայն բացած՝ անշարժ պառկած էր։ Չէր շարժվում, որ Ժուկեթին չարթնացնի։ Գաբրիելը ընդհակառակը, ժամերով շուռումուռ էր գալիս։ Քաֆուրի և բորբոսի հոտից խեղդվում էր։ Վերջապես հագնվեց, դուրս եկավ։ Գիշերն արդեն կիսավում էր։ Պահակներին՝ Միսակին ու խոհարարին, ուղարկեց քնելու։ Դանդաղ ետ ու առաջ քայլելով, շարունակեց մեն-մենակ հսկել Երեք վրանի հրապարակը։ Երբեմն վառում էր գրպանի լուցկիները, լուսավորելով միայն խավարի մի փոքրիկ պատառ։ Գիշերն իր մեջ ոչ մի վառնգավոր բան չուներ։ Խավարշտին հովիտն ահուդողի մեջ պահող վայրենացած շներից ոչ մեկը չհայտնվեց, չհրապուրվեց վառվող լույսերով։ Ոչ մի սարսափելի ձայն։ Թանձր մութը ճեղքելով սուրում էին շղթիկները։ Երբ ամպը ճանապարհ տվեց դեպի ծովը սահող լուսնին, մեռյալ անդորրության մեջ հանկարծ գայլայլեց սոխակը՝ այնքան որոտաբուխ, այնքան ներշնչված, որ Գաբրիելը ցնցվեց։ Փորձեց խորհրդածել, պարզել, թե ինչպես իր ներաշխարհում պարփակված խոհերն այդքան հստակ մարմնավորում ստացան։ Ահավասիկ դրանք երեք վրան դարձած, կանգնած են գիշերային երկնքի ներքո։ Ինչպե՞ս եղավ։ Այժմ ի վիճակի չէր մտածելու։ Հոգին չափից ավելի էր լեցուն։

Գաբրիելը նոր գլանակ վառեց։ Իրենից ոչ հեռու նկատեց մի ուրվական, որ նույնպես ծխախոտ էր վառում։ Ուրվականի գլխին թուրք զինվորի փափախ կար, իսկ ձեռքին մարտական հրացան։ Դեմքը պարզ չէր երևում, բայց պետք է որ շատ հյուծված լիներ, ինչպես մատնում էր ծխախոտի ազոտ լույսը։ Գաբրիելը ձայն տվեց։ Բայց ուրվականը տեղից չշարժվեց, չաղաղակեց ո՛չ երկրորդ, ո՛չ էլ երրորդ կանչին։ Գաբրիելը դուրս քաշեց տարճանակը, ուժեղ չխկացրեց ձգանը։ Դա ավելորդ ձեռնարկություն էր. համոզված էր, որ զինվորը չար մտադրություն չունի։ Անծանոթը մի պահ ևս մնաց անշարժ կանգնած, ծորուն ու հեգնական քրքիջ արձակեց, ապա ինքն էլ, վառվող ծխախոտն էլ անհայտացան։

Գաբրիելը Քրիստափորին ցնցեց, արթնացրեց.

— Այստեղ ինչ-որ մարդիկ կան։ Կարծեմ դասալիքներ են՝

Տնտեսվարը բնավ չզարմացավ.

— Իհարկե, դասալիքներ են։ Եղբ՝ ողերքը նեղության մեջ են։

— Ես միայն մեկին տեսա։

— Երևի Սարգիս Կիլիկյա՞նն էր։

— Ո՞վ է Սարգիս Կիլիկյանը։

— Տեր աստված,— Քրիստափորը ձեռքը հուսահատ թափ տվեց, կարծես դժվար էր պատմել, թե ով է Սարգիս Կիլիկյանը։

Գաբրիելն արթնացած բոլոր յուրայիններին ասաց.

— Գնացեք, գտեք այդ Կիլիկյանին։ Մի քիչ ուսելիք տարեք։ Մարդը քաղցած է։

Քրիստափորն ու Միսակը մեկ-երկու տուփ պահածո և մի լապտեր վերցնելով, ճանապարհ ընկան։ Բայց շատ չանցած ձեռնունայն վերադարձան։ Երևի վերջին բոպեին վախեցել էին։

Եթե երեկոն ընկճվածություն բերեց, ապա առավոտը հիասթափեցրեց։ Աշխարհը վարագուրված էր մշուշով։ Բոլորն անհանգստացան։ Արևածագն անցավ անեկատելի։ Բայց և այնպես բարձրացան լերկ լեռնագագաթներից մեկը։ Այստեղից երևում էին քիչ առ քիչ մշուշի միջից դուրս լողացող ցամաքն ու ծովը։

Բագրատյանը պտտվեց իր առանցքի շուրջը.

— Այստեղ մեկ-երկու շաբաթ կարելի է դիմանալ։

Ասաց այնպես, կարծես ուզում էր Մուսա լեռան գեղեցկությունը պաշտպանել անարգարացի ամբաստանությունից։

Գրիգորն անվրդով հանդարտությամբ դիտում էր ծածանվող ծովը։

— Առաջ, երբ ջահել էի, պարզ օրերին այստեղից կարելի էր ամեն ինչ տեսնել մինչև Կիպրոս։

Այդ խոսքի վրա ոչ ոք չծիծաղեց։ Միայն հարցրին, թե Կիպրոսը Միջերկրական ծովի ավելի հեռավոր խորքերում չէ՞, հարավ-արևմուտքում, որտեղ անգլիացիները իրենց նավատորմային բազան էին հիմնել։ Բագրատյանի միտքը ևս սկսեց պտտվել Կիպրոսի շուրջը.

— Որոնտեսի գետաբերանից մինչև Անդրե հրվանդանը քառասուն ծովային մղոն կլինի։ Բայց այստեղ գալուցս ի վեր ծավեզերքից ո՛չ անգլիական ռազմանավ է երևացել, ո՛չ էլ ֆրանսիական։

— Բայց և այնպես Կիպրոսում նստած են։

Այս անխռով խոսքից հետո Գրիգորն իր մեջքը դարձրեց դեպի Կիպրոս, սկսեց անտարբեր դիտել հարավում ու արևելքում ծավալվող անսահման ցամաքը, որ տարիներ ի վեր չէր տեսել։ Փարատվող մշուշի միջից դուրս էին ցցվել Սելևկիայի հռոմեական ջրատար պարիսպները։ Դամլաշրջիից արևելք ընկած վտիտ լեռների վրա կախվել էր արնաքամ,

ժանգագույն արևը։ Բլուրները գորշ և դարչնագույն ալիքների նման ձգվում էին դեպի Անթաքիե։ Անհասկանալի էր, թե այդ ամայի լեռնածալքերում, այդ քնած տափարակների վրա ինչպե՞ս էին ապրում հարյուր հազարավոր մարդիկ։ Անապատային խաղաղ տեսարանը դեղագործին դրդեց ակնարկելու այնպիսի բաներ, որոնց մասին գիտակցաբար լռում էր։ Նա իր ծերունական ցուցամատը պարզեց դեպի ամայությունը.

— Նայեցեք։ Ամեն ինչ նույնն է մնացել։ Աբդուլ Համիդի օրոք էլ հաճախ բոցավառվում էր ամբողջ հորիզոնը։ Ինչևէ, ծերացանք։

Մարիս Գոնզագը, անկասկած, զբոսանքի բոլոր մասնակիցներից ավելի լավ էր քնել. թարմ, առույգ տեսք ուներ։ Ցույց տվեց Սուեզիայի մոտակա սպիրտի մեծ գործարանը, որի ծխնելույզն արդեն ծուխ էր արձակում։ Գործարանը պատկանում էր արտասահմանյան ընկերությանը, հայտնեց նա։ Դիրեկտորը հույն էր, որին Գոնզագը ճանաչում էր Ալեքսանդրեթից։ Երկու օր առաջ հետը խոսել էր, կարևոր նորություններ իմացել։ Առաջին. Ամերիկայի պրեզիդենտի և Հռոմի պապի խաղաղասիրական ջանքերը հաջող ընթացք են ստանում։ Երկրորդ. ինչ վերաբերում է հայերի տեղահանությանը, ապա դա լինելու է միայն Անատոլիայի վիլայեթներում։ Դա ոչ մի առնչություն չունի Սիրիայի հետ։ Գոնզագը չէր կարող ստուգել, թե այդ լուրերը որքան են հավաստի, բայց գործարանի դիրեկտորը երևելի մարդ էր, ամեն ամիս Հալեպի կուսակալի հետ անձամբ բանակցում էր պետական մթերումների շուրջը։

Գաբրիելն այդ խոսքերը լսելուց հետո տոգորվեց այն բուռն հավատով, թե ամբողջ վտանգն արդեն անցել է, արհավիրքը հեռացել ու վերացել։ Նա իրեն այնպես էր զգում, կարծես փախուստի էր մատնել ճակատագիրը։ Նրա երախտապարտ սրտից դուրս պոռթկաց.

— Ասացեք ինքներդ, մի՞թե գեղեցիկ չէ այս լեռնաշխարհը։

Ժուլիեթը պնդեց, որ տուն վերադառնան։ Անտանելի էր. վաղ առավոտից շրջապատված էր օտարներով, այն էլ տղամարդկանցով։ Նրա կարծիքով առավոտները լավ տեսք ունեն միայն այլանդակ կանայք։ Ժամը վեցին իսկական տիկիներ գոյություն ունենալ չեն կարող։ Դրանից բացի, ուզում էր պատարագից առաջ կես ժամ հանգստանալ։ Կաթոլիկուհի էր, բայց ի սեր Գաբրիելի ընդունել էր հայ լուսավորչական դավանանք։ Դա այն զոհողություններից մեկն էր, որ լուրջ գժտությունների ժամանակ երևսին էր տալիս։ Յուրովի կշտամբում էր նաև հայ եկեղեցին։ Սա Ֆրանսուհու աչքին չափից ավելի անփայլ ու անզարդ էր։ Անտրրամաբանական և անընդունելի էր համարում այն, որ ժողովրդական եկեղեցին ավելացած գումարները հատկացնում էր դպրոցին։ Ժուլիեթը

հայ քահանաներին առանձնապես պախարակում էր նրանց երկար մորուքների համար։ Մորուքավոր մարդկանց տանել չէր կարողանում։

Տուն վերադարձան Կաղնուտից մինչև Յողոնօլուք ձգվող լեռնային արահետով։ Մեկ ժամում տեղ հասան։

Գրիգորը, Գաբրիելն ու Շատախյանը գնում էին առջևից։ Ստեփանը քայլում էր Իսկուհու հետ։ Հրանտ Ոսկանյանը առանձնացել էր։ Սևակնած ուսուցիչն իր անմատչելի տեսքով հասկացնում էր, թե ինքն իրեն զգում է աշխարհի հետ գժտված։ Երբեմն, ներքուստ կատաղած, ոտքով հարվածում էր ճանապարհին ընկած քարերին, կարծես ուզում էր վրեժ լուծել իրենից առաջ ընթացողներից։

Բոլորից հետո գնում էին Ժուլիեթն ու Գոնզագը։ Ավագյանը փոքր-ինչ ուշանալու էր։ Առիթից օգտվելով՝ ուզում էր քարտեզի վրա ուղղումներ կատարել։

Գաբրիելը պատվիրել էր վրաններն առայժմ չքանդել։ Ախոռապաններից մեկնումեկը միշտ մնալու էր Դամլաջրքի բարձրունքի վրա և հրսկելու էր դրանք։ Երևի շուտով նորից զբոսանքի գնան։ Այդ կարգադրության հիմքում ընկած էր այն նախապաշարումը, թե նման նախապատրաստություններով կրեկվի ճակատագրի ուժը։

Խղճուկ արահետը, որտեղից ջորին հազիվ անցներ, տեղ-տեղ սուզվում էր ցածրիկ թփերի կամ փլվածքների տակ։ Ժուլիեթի նազելի ոտքերը, որ նուրբ կոշիկների մեջ էին ամփոփված, այդ խոչընդոտներից մեկի առաջ հանկարծ սոսկումով ու վարանած կանգ առան։ Գոնզագն ամուր բռնեց ձեռքը։ Այդ պահին երկուսի միջև տեղի ունեցավ կցկտուր, անորոշ խոսակցություն.

— Մտքիցս չի հեռանում այն, որ այստեղ միայն մենք ենք օտար, տիկին։

Ժուլիեթը վախեցած ստուգեց կոշիկների ներբանները։

— Դուք գոնե հույն եք... Այնքան էլ օտար չեք...

Գոնզագը թողեց, որ Ժուլիեթն առանց իր օգնության կարգի բերի կոշիկները.

— Ի՞նչպես թե... Ես դաստիարակվել եմ Ամերիկայում... Մինչդեռ Դուք երկար ժամանակ ամուսնացած եք հայի հետ...

— Այո, ես այստեղ ապրելու պատճառ ունեմ... Իսկ Դո՞ւք...

— Իմ պատճառները կյանքում միշտ էլ ուշ են հայտնվում։

Տեղը զառիվայր էր։ Փոքր-ինչ վազեցին։ Ժուլիեթը կանգ առավ, որ շունչը տեղը բերի։

— Երբեք չեմ կարողացել հասկանալ, թե այստեղ ինչ եք որոնում։

նման գործերում այնքան էլ սրտաբաց չեք... Մի ամերիկացի, որը ո՛չ դառան մորթու, ո՛չ բամբակի, ո՛չ էլ գխտորի առևտուր է անում, ի՞նչ գործ ունի Այեքսանդրեթում։

— Ինչքան էլ սրտաբաց չլինեմ... խնդրեմ, ուշադիր լսեք... Ձեզ սիրով կհայտնեմ... Նշանակված էի շրջիկ երաժշտախմբի դաշնակահարնվագակցող... Ողորմելի պատմություն է... Թեև ինձ հյուրընկալող Գրիգորը մեծ կարծիք ունի այդ մասին...

— Մի՞թե... Իսկ այնուհետև Ձեր արվեստակցուհիները Ձեզ անգթորեն լքեցի՞ն... Որտե՞ղ է այժմ խումբը...

— Պայմանագրեր ունի Հալեպի, Դամասկոսի և Բեյրութի հետ...

— Եվ Դուք ձե՞ռք քաշեցիք...

— Շատ ճիշտ վարվեցի... բացահայտ փախուստ էր... Դա իմ հիվանդություններից մեկն է...

— Փախո՞ւստ... Այնպիսի ծաղկահասակ մի երիտասարդ, ինչպիսին Դուք եք... Ուրեմն՝ պատճառը պետք է շա՜տ հիմնավոր լինի...

— Այնքան էլ ծաղկահասակ չեմ, ինչպես կարծում եք...

— Աստվա՜ծ իմ, այս ի՞նչ ճանապարհ է... Կոշիկներս քարերով են լցվել... Տվեք Ձեր ձեռքը, խնդրում եմ... Այդպես...

Ժուլիեթը ձախ ձեռքով կառչեց Գոնզագից։ Աջ ձեռքով թափահարեց կիսակոշիկը։ Բայց հույնը վերադարձավ նախկին հարցին.

— Ձեր կարծիքով ես քանի՞ տարեկան եմ... Գուշակեցեք...

— Դրա համար տրամադրություն չունեմ...

Գոնզագը վրա բերեց լրջորեն, գրեթե խղճի խայթով.

— Երեսուներկու տարեկան եմ։

Ժուլիեթը թոուցիկ ծիծաղեց.

— Տղամարդու համար շա՞տ է...

— Տիկին, ես հավանաբար ավելի շատ եմ աշխարհ տեսել, քան Դուք... Երբ մարդ ընկնում-ելնում է, տեսնում է, թե ինչ բան է ճշմարտությունը...

— Աստված գիտե, թե մյուսները ուր հասան... Հե՜յ... Նրանք էլ կարող էին պատասխանել...

— Տեղ կհասնենք ճիշտ ժամին։

Երբ ճանապարհը կրկին դարձավ գահավեժ, և կրկին թփուտներ երևացին, Ժուլիեթը դարձյալ կանգ առավ.

— Ես նման տեղերում մագլցելու սովոր չեմ... Ոտքերս ցավում են... Մի քիչ կանգ առնենք...

— Նստելու տեղ չկա...

— Գոնզագ, խորհուրդ կտայի, որ Յողոնջուքից հեռանայիք... Ի՞նչ կարող է Ձեզ պատահել... Դուք ամերիկյան քաղաքացի եք... Հայի էլ բնավ նման չեք...

— Հապա՞... Ֆրանսիացո՞ւ...

— Երևակայության հետևից մի՛ ընկեք...

Կաղնուտով հոսող առուն հատում էր ճանապարհը։ Տեղ-տեղ ծառաբներ էին ափից ափ գցված իբրև կամուրջ։ Գոնզագը գրկից, բարձրացրեց Ժուլիեթին, թեթևորեն իջեցրեց առվի մյուս կողմը, չնայած Ֆրանսուհին բավական մարմնեղ էր։ Ոչ որի մտքով չէր անցնի, թե Գոնզագն իր նեղ ուսերի մեջ այդքան ուժ ունի։ Ժուլիեթն իր ազդրերի շուրջն զգաց օտար տղամարդու մատների տհաճ սառնությունը։

Արահետը դարձավ հաճելի, և նրանք արագացրին քայլերը։ Գոնզագը շոշափեց ամենաէական հարցը։

— Իսկ Գաբրիե՞լը։ Ինչո՞ւ է մնում։ Մի՞թե Թուրքիայից հեռանալու ոչ մի հնարավորություն չունի։

— Պատերազմի ժամանա՞կ... Ո՞ւր... Մենք թուրքահպատակներ ենք... Գաբրիելը գինապարտ է... Մեր անձնագրերը վերցրել են... Ո՞վ է հասկանում այս վայրենիների մտադրությունը...

— Բայց Դուք, Ժուլիեթ, իրոք բավականաչափ նման եք Ֆրանսուհու... Ոչ, ավելի ճիշտ՝ նման եք անգլուհու...

— Ֆրանսուհո՞ւ... Անգլուհո՞ւ... Ի՞նչ եք ուզում ասել...

— Եթե մի քիչ համարձակ լինեք, Դուք, այո, Դուք ամեն տեղ էլ կգնաք...

— Ես կին եմ և մայր։

Ժուլիեթն այժմ այնքան արագ էր քայլում, որ Գոնզագը ետ էր մնում։ Ժուլիեթին թվաց, թե ինքն զգաց այդ խոսքերի թաքուն իմաստը. «Կյանքը կյանք է»։ Նա կտրուկ ետ նայեց.

— Եթե այդ կարծիքին եք, ապա ինչո՞ւ եք մնում Ասիայում։

— Ե՞ռ։ Այժմ աշխարհի բոլոր տղամարդկանց համար էլ պատերազմ է։

Ժուլիեթն այլևս չէր շտապում։

— Գոնզագ, Ձեր գործը այնքա՜ն դյուրին է։ Երանի չէ՞ր, որ մենք էլ ամերիկյան անձնագրեր ունենայինք։ Առանց այլևայլության կարող եք գնալ Դամասկոս կամ Բեյրութ, միանալ Ձեր խմբին։ Ի՞նչ եք համառորեն կառչել աստծո աչքից ընկած այս հողաբեկորից։

— Ինչո՞ւ— Գոնզագն արդեն կարող էր քայլել Ժուլիեթի կողքից։— Ինչո՞ւ։ Եթե հաստատ իմանայի, գոնե Ձեզ, Ժուլիեթ, հավանաբար կատեի։

Հետևյալ ոլորանի մոտ սպասում էր Ոսկանյանը։ Սեփական գոռոզությունը հաղթահարելով, նա միացավ զույգին։ Երբեմն-երբեմն մթագնած, սաստող հայացքով խժռում էր Ժուլիեթին։ Մինչև ամառանոցի այգու դուռը գրեթե ոչ մի բառ չարտասանեց։

Հիրավի, Գաբրիել Բագրատյանն իր գլխավոր փորձը թողել էր վերջին ժամին։ Դա, երևի, նախախնամության ներշնչումն էր։

Դարպասի մոտ սպասում էր Ալի Նազիֆը՝ ծաղկատար դեմքով ոստիկանը։

— Էֆենդի, եկել եմ մեջիդիեներս ստանալու. մի փոքրիկ կանխավճար արդեն տվել եք։

Գաբրիելը դրամապանակից դուրս բերեց մի խոշոր թղթադրամ, մեկնեց Ալուն այնքան անվրդով, կարծես ամեն ինչ կարգին էր, և ինքը համբերությամբ կարող էր լսել բանավոր տեղեկությունը։ Ծերունի զափթիեն զգուշորեն վերցրեց փողը.

— Օրենքիս դեմ ծանր հանցանք եմ գործում։ Բայց ինձ չմատնես, էֆենդի։

— Փողը վերցրիր։ Հայտնիր բերածդ լուրը։

Ալի Նազիֆն սկսեց աչքերը ցավագին ճպճպացնել.

— Երեք օր հետո մյուդիրն ու ոստիկանապետը գալու են գյուղերը։

Գաբրիելն իր գավազանը դրեց անկյունը, իջեցրեց ուսից կախված զինվորական հեռադիտակը։

— Մի՞թե։ Իսկ ոստիկանապետն ու մյուդիրն ի՞նչ լավ բանի համար են գալու գյուղերը։

Ժանդարմն սկսեց քշփորել իր մազակալած ծնոտը.

— Էֆենդի, բոլորդ պետք է էստեղից թողնեք հեռանաք։ Վալին ու կայմակամն էդպես հրաման են տվել։ Զափթիեները ձերոնց պիտի հավաքեն, Սուեդիայից ու Անթաքիեից տանեն արևելք։ Էնքանը կարող եմ քեզ ասել, որ ձեզ թույլ չեն տա Հալեպում մնաք։ Հյուպատոսների երեսից։

— Ալի, դո՞ւ էլ պետք է լինես այդ զափթիեների հետ։

Ծաղկատարը սարսափից աչքերը չռեց.

— Ինշալլա՜հ։ Չէ՜։ Բա ես տասներկու տարի ձեր մեջ չե՞մ ապրել, իբրև ամբողջ շրջանի պարետը։ Ոչ մեկի քեֆին չեմ կպել։ Գիշեր-ցերեկ կարգ ու կանոնին եմ հետևել։ Իսկ հիմա ձեր պատճառով զրկվում եմ իմ լավ պաշտոնից։ Ա՜խ, ապերախտնե՜ր։ Մեր պահականոցը բոլորովին վերացնելու են։

Խեղճ մարդուն մխիթարելու համար Բագրատյանը մի քանի սիգարիկ դրեց նրա ձեռքը.

— Հիմա ասա, Ալի, ե՞րբ են քո պահականոցը վերացնելու։

— Հրաման եմ ստացել, որ հենց էսօր գնամ Անթաքիե։ Հետո մյուդիրը մի ամբողջ վաշտ առած՝ կգա էստեղ։

Մինչ այդ տուն հասան Ժուլիեթը, Իսկուհին, Ստեփանը։ Ալի Նազիֆին տեսնելով՝ ոչ մի կասկածելի բան չմտածեցին։ Գաբրիելը զափթիեին դարպասի մոտից տարավ տան առջևի խճածածկ հրապարակը.

— Ալի, քո ասածից երևում է, որ գյուղերը երեք օր մնալու են առանց հսկողության։

Դա Գաբրիելին կասկածելի էր թվում։ Ժանդարմը վախվորած իջեցրեց ձայնը.

— Օ՜, էֆենդի։ Եթե մատնես, ինձ կախաղան կհանեն, կրծքիս էլ մի տախտակ կկպցնեն, վրան գրելով՝ «Պետության դավաճան»։ Բայց թե քեզ ամեն բան էլ կասեմ։ Երեք օր գյուղերում ոչ մի զափթիե չի լինի։ Հետո էլ ձեզ մի քանի օր ժամանակ կտան, որ գործներդ կարգավորեք։

Գաբրիելն ուշադիր նայեց տան պատուհաններին։ Կարծես երկյուղ էր կրում, որ Ժուլիեթը կարող է դիտել ու լսել։

— Ալի, բնակիչների ցուցակները պետք է ներկայացնե՞նք։

Ծաղկատարը, աչքերը ճպճպացնելով, Գաբրիելի դեմքին նայեց անկեղծ նենգությամբ.

— Էֆենդի, բանդ բուրդ է։ Հարուստների և ուսյալների հետ առանձնապես խիստ են վարվում։ Ասում են՝ «Մեզ ի՞նչ օգուտ, եթե աղքատ ու աշխատասեր հայերը սատկեն։ Բայց ուրիշ բան է, եթե երկրում մնան էֆենդիները, մեծահարուստներն ու փաստաբանները»։ Քո նկատմամբ առանձնապես վատ են տրամադրված։ Քո անունը բոլորից առաջ է գրված, էֆենդի։ Հա՜, քո մասին են խոսում։ Մտքովդ չանցնի, թե ընտանիքդ կխնայեն։ Շատ հաստատ են վճռել։ Մինչև Անթաքիե միասին կլինեք, հետո կբաժանեն։

Բագրատյանը զափթիեին նայում էր գրեթե գոհունակությամբ։

— Երևի մեծամեծների և գործին տեղյակ մարդկանց հետ մոտ ես։ Մյուդի՞րը քեզ մոտ սիրտը բացեց, Ալի։

Սա հանդիսավոր ձևով շարժեց գլուխը։

— Էֆենդի, քեզ համար շատ նեղություն քաշեցի. հյուքյումեթի դիվաններն ընկած՝ ականջս ձայնի էի պահում։ Քո խաթեր համար։ Օ՜, էֆենդի, քո էս խեղճ ու կրակ թղթադրամից բացի, էն աշխարհում դու ինձ էլի պարտք ունես տալու։ Էս օրվա օրը ի՞նչ արժեք ունի թղթե փողը։

Եթե բազարում մանրես, առհասարակ կխաբեն։ Ինձնից հետո եկողներին ավելի շատ բաժին կհասնի, քան հարյուր ֆունտ ոսկի, քան բոլոր գյուղերի ունեցած մեջիդիեները։ Քո տունն իր ունեցածով-չունեցածով նրանց ձեռքն է անցնելու, քանի որ հետդ ոչ մի բան վերցնելու իրավունք չեն տա։ Քո ձիերն էլ դրանցը կլինեն։ Քո այգին էլ՝ իր ամբողջ բերքով...

Գաբրիելն ընդհատեց այդ զարդարուն թվարկումը.

— Անուշ լինի։

Գլուխը բարձրացրեց։ Ալի Նազիֆը տխուր էր և տեղից չէր շարժվում։

— Մի կտոր թղթի երեսից քեզ ամեն ինչ ծախեցի։

Օձիքն ազատելու համար Գաբրիելը գրպանից դուրս բերեց իր ունեցած բոլոր ղուռուշները։

Երբ Գաբրիելը գնաց Առաջնորդարան, ի մեծ զարմանս իր, իմացավ, որ Ալի Նազիֆն արհավիրքի լուրը մի քանի ժամ առաջ արդեն հայտնել էր Տեր-Հայկազունին։ Նեղ սենյակում հավաքվել էին Թովմաս Քեբուսյանը, մյուս վեց մուխթարները, գյուղերից եկած երկու ընտանիքավոր քահանա և Բիթիասի պատվելի Նոխուդյանը։ Խոժոռ, մեղրամոմի պես դալկահար դեմքեր։ Ամպրոպային որոտից ոչ թե փարատվել, այլ ավելի էին խտացել այն հիվանդագին թմրության ամպերը, որոնցով պարուրված էին մարդիկ վերջին շաբաթները։ Անկենդան կեցվածքով կանգնել էին պատերին սեղմված. կարծես պատերի միջից էին դուրս եկել։ Միայն Տեր-Հայկազունն էր նստած։ Գլուխը ետ էր գցել, հայացքը խոժոռ էր։ Սակայն գրասեղանին անվրդով հանգչող ձեռքերի վրա բոցկլտում էր արևի անշարժ ճառագայթը։ Եթե մեկնումեկը որևէ բան էր ասում, ապա շշնջում էր առանց շրթունքները բացելու։ Տեր-Հայկազունը նույնպես կիսաձայն դիմեց Բագրատյանին.

— Մուխթարներին կանչել եմ, որ գյուղերը վերադառնալուն պես համայնքը բերեն այստեղ։ Հենց այսօր, որքան հնարավոր է, արագ, բոլոր չափահասները, Վաքըֆից մինչև Քեբուսիե, պետք է գան Յողոնօլուք։ Մեծ ժողով կգումարենք, կվճռենք, թե ինչ միջոցներ պետք է ձեռք առնել...

Անկյունից լսվեց պատվելի Նոխուդյանի դողդոջուն ձայնը.

— Ոչ մի միջոց չկա, որ ձեռք առնենք...

Բիթիասի մուխթարը փոքր-ինչ առաջ շարժվեց.

— Միջոց կա թե չկա, մեկ է. ժողովուրդը պետք է հավաքվի, խոսք լսի, խոսք ասի։ Վիճակն ավելի կթեթևանա։

Տեր-Հայկազունը հոնքերը կիտեց, համբերությամբ հանդուրժեց իրեն

ընդհատողին։ Ապա Գաբրիելին ավելի հանգամանորեն բացատրեց իր մտադրությունը.

— Այս ժողովում համայնքները պետք է հուսալի մարդիկ ընտրեն, որոնք կստանձնեն ղեկավարությունը։ Կարգապահությունը մեր միակ զենքն է։ Եթե գրսում էլ կարգ ու կանոն հաստատենք, գուցե և չմեռնենք...

«Գրսում» բառն արտասանելիս Տեր-Հայկազունը բարձրացրեց կիսափակ թարթիչները, խորազնին նայեց Գաբրիելին։ Թովմաս Քեբուսյանն օրորեց ճաղատ գլուխը.

— Եկեղեցու հրապարակում ժողով գումարել չի կարելի։ Ոչ էլ եկեղեցում։ Ջանդարմները վխտում են։ Ուրիշներն էլ կան։ Աստված գիտե, թե ով կարող է ներս սողոսկել, ականջ դնել, մատնել։ Դրանից բացի, եկեղեցին բոլորի համար նեղ է։ Բայց որտե՞ղ։

— Որտե՞ղ։ Շատ պարզ,— առաջին անգամ խոսակցությանը մասնակցեց Գաբրիելը։— Իմ այգին շրջապատված է բարձր պարսպով։ Միայն երեք փակվող դարպաս ունի։ Տասը հազար մարդու տեղ կա։ Կփակվենք ինչպես զորավոր բերդում։

Գաբրիելի այս առաջարկությամբ հարցը լուծվեց։ Ոչ ոք չկարողացավ առարկել. ո՛չ նրանք, ովքեր հուսահատության կամ անգործունյա թուլամորթության պատճառով գերադասում էին մեռնել, քան չարչարվել, ո՛չ էլ նրանք, ովքեր ամեն ինչ բարդացնում են։ Ի վերջո, ի՞նչ լուրջ առարկություն կարող էր լինել, երբ ժողովրդի համար օրհասական այդ պահին հայկական հովտի բնակիչներն ուզում էին համագործակցել, ավագներ ընտրել, երբ սրանք էլ կարող էին նույնքան անօգնական լինել, որքան նրանք, ում ղեկավարելու էին։ Հավաքատեղին հաստատ վճռվեց, և ոչ ոք երկյուղ չէր կրում հնարավոր պատժից։ Թերևս դեր խաղաց նաև այն նախապաշարմունքը, թե Բագրատյանների ընտանիքը ծանոթություն ուներ իշխանավորների հետ, իսկ դա կարող էր բարենպաստ ազդեցություն ունենալ յոթ գյուղի ճակատագիրը վճռելիս։

Մուխթարները խոստացան, որ անհապաղ ոտքի կհանեն իրենց համայնքները, այնուհետև վշտից կարկամած, քայլամոլոր դուրս գնացին։ Քանի որ Յողոնօլուքն ընկած էր գյուղերի կենտրոնում, ապա մարդիկ ամենաուշը ցերեկվա ժամը չորսին կարող էին լինել Բագրատյանի այգում։ Մուխթարները ցանկություն հայտնեցին անձամբ պահակություն անել դարպասների մոտ, որպեսզի ոչ մի կողմնակի մարդ չկարողանար ներս թափանցել։

Տեր-Հայկազունը տեղից վեր կացավ։ Զանգերն արդեն ղողանջում էին։ Պետք է պատրաստվեր աստծուն ծառայելու։

Քրիստոնեական դավանանքի բոլոր ժամասացություններից ամենաերկարատևը հայկական պատարագն է։ Ժամամուտից մինչև «օրհնեալ Եղերուքը» լավագույն դեպքում կարող է ձգվել մեկ-մեկուկես ժամ։ Ոչ մի գործիք։ Միայն զանգակներն ու ծնծղաներն են ձայնակցում երգչաց դասին, որը կիրակի օրերին անհամբերությունից արագացնում է երգի տեմպը, շտապեցնում քահանային, կրճատում ժամասացության տևողությունը։

Այսօր այդ բանը ձախողվեց։ Տեր-Հայկազունը, չափից ավելի խորասուզված լինելով իր խոհերի մեջ, սովորականից ավելի երկար էր կանգ առնում սրբազան հատվածներից ու արարողություններից յուրաքանչյուրի վրա։ Արդյոք իր աղոթքը երկարացնում էր ի սեր անակնկալ փրկության հրաշքի՞։ Արդյոք ուզում էր հետաձգե՞լ այն պահը, երբ անտեղյակ համայնքի գլխին ճայթելու էր կայծակը։ Բայց տակավին շատ էր վաղաժամ, երբ նա տվեց վերջին օրհնությունը հետևյալ բառերով.

«Երթա՛յք ի խաղաղութիւն և Տէր եղիցի ընդ Ձեզ»։ Նստարանները, ճռճռացնելով արդեն սկսել էին ցրվել, երբ Տեր-Հայկազունը կանգնեց խորանի աստիճանների եզրին, ձեռքերը տարածեց, գոչելով.

— Կատարվեց, ինչից սոսկում էինք։

Եվ շարունակեց ընկճված, հանդարտ ձայնով։ Ոչ ոք չպետք է ապարդյուն հուզվի կամ չափազանցությունների մեջ ընկնի։ Այս վայրկյանին տիրող գերեզմանային լռությունը պետք է անփոփոխ մնա առաջիկա օրերին։ Ամեն մի անխոհեմ քայլ, ամեն իրարանցում ու լացուկոծ ոչ թե կօգնի, այլ միայն կվատթարացնի վիճակը։ Արհավիրքին կարելի է դիմանալ միայն միաբանությամբ, հաստատակամությամբ, կարգապահությամբ։ Դեռևս ժամանակ կա կշռադատելու յուրաքանչյուր քայլը։ Տեր-Հայկազունը համայնքը հրավիրեց Բագրատյանի տան առաջ կայանալիք մեծ ժողովին։ Ոչ մի չափահաս և խելամիտ մարդ, կին թե տղամարդ, չպետք է բացակայի։

Այդ ժողովում համայնքները ոչ միայն պետք է վճռեին իրենց ապագա անելիքը, այլև ավագներ ընտրեին, որոնք իշխանության առաջ լինելու էին ժողովրդի լիազոր ներկայացուցիչները։ Այս անգամ բաց քվեարկությամբ կատարվող սովորական ընտրությունը բավարար լինել չէր կարող։ Յուրաքանչյուր մարդ հետը պետք է բերեր թուղթ ու մատիտ, ընտրեր ավելի ազատ։

— Այժմ հանգիստ գնացեք ձեր տները,— բազմությանը դիմելով, թախանձեց վարդապետը,— մի՛ խոնվեք, իրար դլխի մի՛ հավաքվեք։ Գուցե ձեզ հետևելու համար լրտեսներ ուղարկած լինեն։ Զափթիները չպետք է կռահեն, որ դուք նախապատրաստված եք։ Զմոռանաք թուղթ բերել։ Ժամանակին եկեք։ Միայն թե առանց իրարանցման։

Հարկ չեղավ երկրորդ անգամ նախազգուշացնելու։ Մեռյալների կամ մահապարտների նման մարդիկ լուռումունջ օրորվում էին արևի տակ, բայց չգիտեին՝ գիշե՞ր է, թե՞ ցերեկ։

Մարդ մինչև փորձության չենթարկվի, չգիտե, թե ով է ինքը։

Ահա Բագրատյանի կենսավկայականը առ այսօր։ Լավ ընտանիքի զավակ։ Բարօրության մեջ մեծացած։ Կյանքն անց էր կացրել Եվրոպայում, Փարիզում, հոգևոր հայեցողության մթնոլորտում։ Երկար ժամանակ կտրված էր ժողովրդից, պետությունից, հասարակությունից։ Մեկուսացած, վերացական մի մարդ։ Արտաքին հենարաններ քիչ ուներ։ Ավագ եղբայրը՝ անտեսանելի, անշոշափելի մի բուրեգործ, իբրև ընտանիքի ղեկավար, հոգում էր տան բոլոր կարիքները։ Այնուհետև տեղի ունեցավ բավական ուշագրավ մի երևույթ, որով առաջին անգամ ընդհատվեց նրա ինքնամփոփ, ներանձնացած, սեփական զգացմունքների մեջ պարփակված գոյությունը։ Ռազմական դպրոցի և պատերազմի հետ կապված միջադեպեր։ Հայրենասիրական դժվարըմբռնելի իդեալիզմ, որը հանկարծ ներխուժեց հայեցողական գաղափարների աշխարհը։ Թուրք և հայ երիտասարդության քաղաքական մեծ եղբայրացումը նա անբավարար հստակությամբ էր պատկերացնում։ Երևի այդ խաղի տակ այլ բաներ կային քողարկված։ Գաղտնի անհանգստություն։ Փորձեց հրաժեշտ տալ չափից ավելի հարթ կյանքին։ Բայց կարճատև արշավանքի ժամանակ իր մեջ հայտնաբերեց նոր, անծանոթ ունակություններ։ Զգաց, որ ինքը միայն սեփական ներաշխարհում սահմանափակված մարդ չէ, ինչպես մինչ այդ կարծում էր։ Գործունեության ծարավ, ոգու բռնկում, շրջահայեցություն։ Զարմանալիորեն աչքի էր ընկնում իր արիությամբ, ավելի շատ, քան նրա արևելցի ընկերները։ Արագ առաջ գնաց, բազմիցս պարգևատրվեց, անունը հիշատակվեց զինվորական հրամանատարության զեկուցագրերում։ Այս ամենը հետագայում գնաց դեպի անկում, դարձավ գրեթե անտրամաբանական հիշողություն, քանի որ դարձյալ տիրապետող դուրս եկավ նախկին բնավորությունը։ Նա դարձավ առավել հավասարակշռված, առավել հասուն։ Բայց այսօր հուլիսի քսանչորսն է, և այս մի հատիկ օրվա առաջ նրա կյանքի բոլոր տարիները թվում են դժգույն նախերգանք։

Ամենից շատ զզվեց Սամվել Ավագյանը, երբ տեսավ, թե ինչպես պարապմունքից ձանձրացող մի մարդու շաբաթներ տևած ցնորքները ստանում են ռազմական մեծ ծրագրի իմաստալից պատկեր։

Նստում էին Բագրատյանի աշխատասենյակում, դուրը փակում։ Ով էլ կանչեր կամ բախեր, չէին բացի։ Քարտեզի վրա եղած խորհրդավոր նշանները, խաչերն ու ալիքաձև գծերը, որ ուսանողի ծիծաղն էին շարժում իբրև ցնորական հանելուկներ, այժմ վերածվում էին խորապես կշռադատված պաշտպանական սիստեմների։ Հյուսիսային լեռնաթմբի ներքևում ծվարած կապույտ գիծը երկար ու ձիգ խրամատ էր, որ գնում հասնում էր մինչև ժայռակոփ բարձրադիր (նշանակված էր դարձնագույն մատիտով)։ Իսկ դրա ներքևի կապույտ, բարակ գծերը օժանդակ խրամատներ էին, որանց կողքին, աջակողմյան անկյունում, ընկած էին թեվային ամրություններ և գազանի դիտակետեր։ Դամլաջրքի հովտակողմյան եզրին սփռված 2—11 թվերը նույնպես իմաստավորվեցին. ոչինչ չատող համարներից վերածվեցին լավ կշռադատված պաշտպանական հատվածների։ Զարգվեց մի շարք մակագրությունների նշանակությունը՝ Քազաքաձոր, Գնակաձև դարատափ, Հրամանատարական բարձունք, 1-ին, 2-րդ, 3-րդ դիտակետ, Հարավարևելյան։ Ինչ վերաբերում է վերջինիս, ապա դա պաշտպանական սիստեմի մեծագույն երաշխիքն էր։ Քսան հոգով այստեղից կարելի էր պարապմունք մատնել ամեն մի զորեղ հակառակորդի։ Հարձակումները կարող էին ետ մղել նույնիսկ կանայք։ Գաբրիելի դեմքը ոգևորությունից բացվառվում էր։ Նա երբեք այդքան նման չէր եղել իր որդի Սահակին։

— Աշխարհի բոլոր հույսերն ինձ են տվել,— Ստեփանի կարկինով չափում էր հեռավորությունները— Թուրք զինվորներին ճանաչում եմ։ Լավագույնները ռազմաճակատ են ուղարկված։ Ինչ վերաբերում է թիկունքայիններին, զափթիեներին և Անտիոքի զորանոցներում եղած ոչ մշտական զորքերին, ապա գրանք թափթփուկներ են, պիտանի միայն անվտանգ հանցագործությունների համար։

Ավագյանը, որն իբրև հանկարծ տեսնում էր ռազմական օտարոտի գործերի մեջ խորամուխ եղած, Բագրատյանի հակապատկերն էր։ Նրա քաջաբարոյությունը, փաքր-ինչ ետ ընկած ճակատը գունատվել, պանրի գույն էր առացել.

— Լավագույն դեպքում կարող ենք նկատի ունենալ հազար հոգի։ Իսկ թե ինչքան հրացան և ռազմամթերք ունենք, չգիտեմ։ Թուրքական ամեն մի բնի մեջ զինվոր կա նստած՝ ոչ միայն Անթաքիեում, այլև ամենուրեք...

— Մենք հինգուկես հազար հոգուց բաղկացած ժողովուրդ ենք,— վրա բերեց Բագրատյանը։— Ոչ մի գթություն վրա չպետք է հույս դնենք։ Մեզ սպասում է դանդաղ մահ։ Բայց այնքան էլ դյուրին գործ չէ Մուսա լեռան պաշարումը։

Ավագյանը թմրած հայացքով դուրս նայեց պատուհանից.

— Բայց այդ հինգուկես հազար հոգին նույն բանը կկամենա՞ն, պարոն։

— Եթե չեն կամենա, ուրեմն՝ արժանի են Միջագետքի աղտեղության մեջ ստոր մահով մեռնելու... Իսկ ես չեմ ուզում ապրել, չեմ ուզում փրկվել։ Ուզում եմ կռվել։ Ուզում եմ այնքան թուրք սպանել, որքան փամփուշտներ ունենք։ Եթե հարկ լինի, ես մեն-մենակ կմնամ Դամլաջրքի բարձունքներում։ Դասալիքների հետ։

Բագրատյանի աչքերը բոցկլտում էին ոչ թե ատելությունից, այլ սրբազան, միաժամանակ կենսահաստատ ցասումից։ Կարծես ուրախ էր, որ մեն-մենակ կարող է կանգնել Էնվեր փաշայի միլիոնանոց բանակի դեմ։ Անելահեղ պոռթկումով բռնված՝ տեղից վեր թռավ, սկսեց վազվզել սենյակում։

— Ոչ թե ապրել եմ ուզում, այլ մարդկային արժանիք ունենալ։

Ընկճված Ավագյանը դեռևս տեղի չէր տալիս.

— Լավ։ Միաժամանակ կպաշտպանվենք։ Բայց հետո՞...

Գաբրիելն ընդհատեց իր կատաղի վազվզոցը, նորից գործի անցավ.

— Բայց հետո... քանչորս ժամում անթիվ-անհամար հարցեր ունենք լուծելու։ Որտե՞ղ են լինելու սպանդանոցը, ռազմամթերքի պահեստը, հիվանդանոցը։ Ի՞նչ ձևով ենք դասավորելու մեր ուժերը։ Աղբյուրներ բավականաչափ կան, բայց ո՞րն է շրի մատակարարման լավագույն եղանակը։ Այստեղ մի քանի թուղթ կա, որտեղ ուրվագծել եմ, թե ինչ կարգով պետք է հսկողություն կատարվի։ Մաքուր արտագրեցեք, Ավագյան։ Դրանք մեզ պետք կգան։ Առհասարակ բոլոր նշումները կարգի բերեք։ Չեմ կարծում, թե շատ բան մոռացած լինեմ։ Ամեն ինչ դեռևս տեսականորեն է ճիշտ, բայց հավատացած եմ, որ մեծ մասը կարելի է իրագործել։ Մենք՝ հայերս, միշտ էլ այնքա՜ն մեծ կարծիք ունենք մեր հոգևոր գերազանցության մասին։ Դրանով դատեցրել ենք, պղտորել դրանց արյունը։ Իսկ այժմ, իրոք, պետք է ապացուցենք մեր առավելությունը։

Ավագյանը ցնցված էր։ Ժողովրդին սպասնացող արհավիրքից առավել ուսանողին շփոթության էր մատնում այն անդիմադրելի ուժի հեղեղը, որը դուրս էր պոռթկում Գաբրիելի ներսից։ Կարծես նրա էության մեջ ոչ թե

լուսավորող, այլ բռնկվող նյութ էին լցրել։ Եվ որքան քիչ, որքան ավելի հանդարտ էր խոսում, այնքան ավելի էր թանձրանում այդ նյութը։ Սամվել Ավագյանն այնքան խորն էր ազդվել, որ չէր կարողանում կենտրոնանալ, իր կասկածներն արտահայտելու համար բառեր չէր գտնում, ակնապիշ նայում էր ռազմական քարտեզի վրա մտասույզ խոնարհված Գաբրիելի գլխին։ Սա, չնայած անշարժ նստած էր, նույնիսկ չլսեց իրեն ասված խոսքերը։ Այնպես որ Գաբրիելն անհամբեր կրկնեց իր պատվերը.

— Ավագյան, այժմ գնացեք ներքև, ասացեք, որ ճաշի չեմ գա։ Թող Միսակի հետ մի բան ուղարկեն։ Ոչ մի բոպե իրավունք չունեմ կորցնելու։ Դրանից բացի, ժողովից առաջ ոչ մի մարդու չեմ ուզում տեսնել, հասկանո՞ւմ եք, նույնիսկ կնոջս։

Կեսօրից շատ չանցած ժողովուրդն սկսեց հավաքվել։ Մուխթարները, ինչպես արդեն պայմանավորվել էին, անձամբ հսկում էին այգու պարըսպի երեք դռան մոտ, ստուգում ժողովի յուրաքանչյուր մասնակցին։ Բայց նախազգուշական այս միջոցառումը բոլորովին ավելորդ էր, քանի որ Ալի Նազիֆն իր պահակախմբով անսպասելիորեն արդեն բռնել էր Անթաքիեի ճանապարհը՝ առանց հրաժեշտ տալու այն մարդկանց, որոնց հետ երկար տարիներ ծանոթ էր։ Դրանից բացի, գաղտնորեն Յողոնօլուք եկածներին ո՛չ թուրք նամակատարներն էին միացել, ո՛չ էլ մահմեդական հարևաններից որևէ մեկը։ Նշանակված ժամից շատ ավելի կանուխ դարպասներից ներս մտան վերջին խմբերը։ Այնուհետև մեծ շքամուտքը և այգու երկու դարպասը փակվեցին։ Բազմությունը հավաքվեց ամառանոցի առաջ ընկած լայն հրապարակում։ Մոտ երեք հազար մարդ։ Տան ձախ թևում օժանդակ շենքերի ընդարձակ բակն էր, որը Տեր-Հայկազունի ցանկությամբ մնաց ազատ և իրար հանգուցված պարաններով անջատվեց։ Երևելիները հավաքվեցին տան բարձր սանդղահարթակի վրա։ Փոքրիկ սանդուղքը խոսողների համար իսկական ամբիոն էր։ Դրա ներքևում Յողոնօլուքի համայնքի քարտուղարը մի փոքրիկ սեղան դրեց, որպեսզի կարևոր որոշումներն արձանագրի։

Գաբրիելը հնարավորին չափ երկար մնաց իր սենյակում։ Բազմության կողմը բացվող պատուհանները փակ էին։ Չէր ուզում կցկտուր խոսքեր լսելով՝ վաղաժամ կոտորակել իրեն համակած հախուռն հուզմունքը։ Տնից դուրս եկավ միայն այն ժամանակ, երբ Տեր-Հայկազունը մարդ ուղարկեց կանչելու։ Իր առաջ տեսավ գունաթափ, վհատ դեմքեր՝ ոչ թե երեք հազար, այլ միայն մեկ։ Տարագրության անհույս դեմքը, որը

նույնն էր այդ պահին թե՛ այստեղ, թե՛ հարյուրավոր այլ վայրերում։ Բազմությունը կանգնած էր, չգիտես ինչու, այնպես տառապագին սեղմված, որ ավելի սակավաթիվ էր թվում։ Միայն հեռվում, որտեղ հինավուրց ծառերի արանքում բացատ էր գոյացել, մի քանիսը բազմությունից առանձնացած՝ նստել էին ծալապատիկ, հենվել ծառաբներին, պառկել։ Կարծես այլևս նրանց չէր վերաբերում սեփական կյանքը։

Երբ Գաբրիելը նայեց ժողովրդին, իր հարազատ ժողովրդին, հանկարծ համակվեց զարհուրանքով։ Սիրտը սարսափից թպրտաց։ Դարձյալ իրականությունը միանգամայն այլ դուրս եկավ, քան ինքն էր պատկերացնում։ Կարծես նույն մարդիկ չէին, որոնց ինքն ամեն օր տեսնում էր գյուղերում, և որոնք իր խիզախ ծրագրի հենարանն էին։ Զուված աչքերից մահասարսուռ խստություն և դառնություն էր հառնում։ Չորս կողմից նայող դեմքերը կարծես կծղած մրգեր լինեին։ Նույնիսկ երիտասարդների այտերը թվում էին կնճռոտ, թառամած։ Գաբրիելը շրջագայում էր գյուղերի կյանքն ուսումնասիրելու նպատակով, մտնում էր տները, արհեստանոցները, բայց երևի ճշմարտությունը նույնքան քիչ էր իմանում, որքան այս կամ այն վայրով անցնող ճանապարհորդը՝ կառքի միջից։ Այժմ, այս հույժ տագնապալի ժամին, առաջին անգամ տեղի ունեցավ ժողովրդից կտրված որդու և ժողովրդի շփումը։ Այն ամենը, ինչ մտածել ու կշռադատել էր, հօդս էր ցնդում։ Այնքա՜ն օտար, այնքա՜ն խորթ էին մարդկանց հայացքները, որոնց ուղում էր իր հետ տանել դեպի փրկություն։ Ահա կանայք՝ կիրակնօրյա զգեստներով ու մետաքսյա գլխաշորերով, պարանոցներից կախված դրամազարդերով ու թևերին անցկացրած շխկշխկացող ապարանջաններով։ Շատերը թրքուհիների տարազ էին կրում։ Լայն վարտիքներ էին հագել, իսկ ճակատներին ֆերիջեներ[1] կապել, թեև բարեպաշտ քրիստոնուհիներ էին։ Այդ արտաքին նմանությունը հարևանության հետևանք էր՝ առանձնապես տարածված հեռավոր գյուղերում, ինչպես ասենք, Վաքրֆում, Քեբուսիեում։

Գաբրիելը նայում էր տղամարդկանց՝ մուգ գույնի էնթարիներով, ֆեսերով կամ մորթե գդակներով, թավ բեղ-մորուքներով։ Քանի որ շոգ էր, ոմանք արձակել էին վերնաշապիկների կոճակները, բացել կրծքները։ Գեղջկական արևախանձ, չորացած պարանոցների համեմատությամբ, տարօրինակ կերպով սպիտակ էր նրանց պսպղուն մաշկը։ Այստեղ-այնտեղ բազմության միջից դուրս էին լողում մարգարեներ հիշեցնող կույր մուրացկանների ալեզարդ գլուխները, որոնք կարծես հետա-

[1] ֆերիջե—մարգարիտ

քրքրությունից մղված՝ եկել էին ահեղ դատաստանի։ Բոլորից առաջ կանգնած էր Գեորգը՝ արևածաղկով պարեղը։ Նույնիսկ այդ ապուշի դեմքի արտահայտությունից ոչ թե եռանդուն թռթռվանք էր հառնում, այլ այս աշխարհից մինչև անդրաշխարհը հասնող նախատինք։

Գաբրիելը սառույց կտրած ձեռքով շոշափեց իր անգլիական կոստյումը։ Մատները կարծես եղինջի դիպան։ Եվ իսկույն հարց ծագեց. «Ինչո՞ւ հատկապես ինքս։ Ինչպե՞ս եմ հետները խոսելու»։ Ստանձնած պարտականությունը, իբրև արևի խավարում, նրա միտքը վարագուրեց իր չղջկային թևերի սավանով։ Ի՞նչ ողորմելի միտք. հեռանալ այստեղից, հենց այսօր։ Միևնույն է, թե ուր։

Տեր-Հայկազունն իր առաջին խոսքերն սկսեց դանդաղ գամել բազմության գիտակցության մեջ։ Դրանք ավելի ու ավելի պարզ էին հնչում Գաբրիելի ականջին, իմաստավորվում։ Նրա երկնքից փարատվեց արևի խավարումը։

Տեր-Հայկազունն անշարժ կանգնած էր բարձր սանդուղքին։ Խոսելիս միայն շրթունքներն ու կրծքին կախված խաչն էին թեթևակի շարժվում։ Սրածայր վեղարն ավելի խոժոռ արտահայտություն էր տալիս նրա մոմագույն գեմքին։ Քունքերի խոր փոսիկներն ի վար հորդահոս բջնում էր սև մորուքն իր զույգ ալեխառն փնջերով։ Փակ աչքերը գոյացրել էին առեղծվածային երկու ստվեր։ Կարծես այդ պահին նա ոչ թե արհավիրքի սկիզբն էր ապրում, այլ անցել էր տառապանքի բոլոր պարունակները և այժմ նպատակին հասնելով՝ կարող էր վերջապես պոկել ու հանգստանալ։

Թեև հայերենը արևելյան բոլոր լեզուների նման հարուստ է հանդիսավոր ու պատկերավոր արտահայտություններով, Տեր-Հայկազունը խոսում էր անպաճույճ, գրեթե չոր լեզվով.

— Հարկ է, որ կառավարության դիտավորությունը ճիշտ հասկանանք։ Այստեղ հավաքված տարեց մարդկանց մեջ չկա մեկը, որ տեղյակ չլինի նախկին ջարդերին։ Եթե սեփական մաշկի վրա չի զգացել, ապա գիտե, թե ինչ մահացու տառապանքների ենթարկվեցին Անատոլիայում ապրած իր ազգակիցները։ Մինչև Քրիստոսը յուր ողորմածությունը հովանի էր դարձրել Մուսա լեռան վրա, չնայած մենք արժանի չէինք։ Օրհնյալ տարիներից ի վեր մեր գյուղերում խաղաղություն էր տիրում, մինչդեռ միևնույն ժամանակ Աղանայում և այլուր տասնյակ հազարներով սրի էին քաշվում մեր հայրենակիցները։ Բայց հարկ է, որ միմյանցից տարբերենք ջարդերն ու տարագրությունը։ Ջարդերը տևում էին չորս, հինգ, վատթարագույն դեպքում՝ յոթ օր։ Քաջը միշտ էլ կարողանում էր

իր կյանքը թանկ ծախել։ Կանանց և երեխաների համար իսկույն պատրաստարաններ էին պատրաստում, մոլեգնած զինվորականների արյան ծարավը շուտով հագեցնում էր, ամենաանասնաբարո զափթիեներն անգամ իրենց արածից նողկում էին։ Անշուշտ, կառավարությունն ինքն էր հրահրում այս ջարդերը, բայց երբեք ցույց չէր տալիս։ Ամեն ինչ տարերայնորեն սկսվում էր, տարերայնորեն էլ վերջանում։ Բայց այդ խժդժությունների մեջ տարերայնությունը, թերևս, բարեբախտություն էր։ Ամենահավոր ճակատագիրը մահն էր։ Տարագրությունն այլ բան է։ Բախտավորություն կլինի, եթե մարդիկ կարողանան ազատվել շարաչար մահվան գնով։ Տարագրությունը երկրաշարժի պես չի գալիս ու անցնում։ Երկրաշարժը խնայում է մարդկանց և տների մի մասը։ Տարագրությունը տևում է այնքան, մինչև որի քաշվի ժողովրդի վերջին մարդը, սովամահությունից վայր տապալվի ճանապարհի վրա, անապատում մեռնի ծարավից, շունչը փչի խոլերայից և բծավոր տիֆից։ Այս անգամ գլուխ են բարձրացրել ոչ թե տարերային կամայականությունն ու բորբոքված արյունարբությունը, այլ առավել զարհուրելի մի բան՝ պետականորեն մշակված ծրագիրը։ Ամեն ինչ իրագործվում է Ստամբուլի մինիստրություններից մեկի կազմած պլանով։ Ինքը՝ Տեր-Հայկազունն այդ ծրագրի մասին իմացել էր ամիսներ առաջ, երբ դեռ չէր սկսվել Զեյթունի աղետը։ Գիտեր նաև, որ ապարդյուն էին անցել կաթողիկոսի, պատրիարքի, եպիսկոպոսների բոլոր ջանքերը, հյուպատոսների և դեսպանների խնդրանքն ու սպառնալիքները։ Միակ բանը, որ կարող էր անել խեղճ ու կրակ վարդապետը, դա լռությունն էր, գիտակցական, տանջալից լռությունը։ Չէր ուզում թունավորել իր հոգևոր անմեղ հոտի վերջին լավագույն օրերը։ Հիմա այդ օրերն արդեն սպառված են։ Ամեն մարդ, առանց ինքնախաբեության, պետք է նայի ճշմարտության աչքերին։ Ոչ ոք խոսելիս թող անմտորեն չառաջարկի խնդրագիր ուղարկել իշխանություններին կամ նման այլ բաներ։ Իզուր ժամանակ կսպանենք։ «Մարդկային զուտ այլևս չկա։ Խաչված Քրիստոսը պահանջում է հետևել յուր շարշարանքին։ Ուրիշ ի՞նչ կարող ենք անել, եթե ոչ մեռնել...»։

Այստեղ Տեր-Հայկազունը շունչ առավ, ապա միանգամայն փոխված ձայնով եզրափակեց.

— Միայն թե հարց է ծագում՝ ինչպե՞ս։

— Ինչպես մեռնե՞լ...— գոչեց պատվելի Արամ Թովմասյանը և շտապեց Տեր-Հայկազունի մոտ։— Ես գիտեմ, թե ինչպես պետք է մեռնեմ։ Ո՛չ իբրև անպաշտպան ոչխար, ո՛չ Դեյր Զորի ճանապարհին, ո՛չ քարավանային ճամբարների աղտեղության մեջ, ո՛չ քաղցից, ո՛չ էլ գարշա-

հոտ համաճարակից։ Ո՜չ, ես կմեռնեմ իմ տան շեմքին, զենքը ձեռքիս, և ինձ զորավիգ կլինի Քրիստոսը, որի խոսքն եմ քարոզում։ Թող ինձ հետ մեռնի կինս, դեռևս չծնված երեխաս...

Այս պոռթկումից հազիվ չպայթեց Արամի կուրծքը։ Ձեռքը դրեց սրտին, որ շունչ առնի։ Հանգստացավ, սկսեց նկարագրել տարագիրների ճակատագիրը, որն իրեն էլ բաժին էր ընկել, թեև ամենամեղմ ձևով.

— Ոչ ոք նախապես չգիտե, թե դա ինչ է, ոչ ոք չի կարող պատկերացնել։ Այդ բանը մարդ ըմբռնում է, երբ սպան հրամայում է ճանապարհ ընկնել, երբ ետ նայողը տեսնում է, թե ինչպես հետզհետե փոքրանում են տներն ու եկեղեցին, ապա այլևս չեն երևում...

Արամը նկարագրեց անծայրածիր ճանապարհը՝ կայանից կայան, պատմեց, թե ինչպես են արյունոտվում ոտքերը, ուռչում մարմինները, վայր ընկում և մնում ընկած, անվերջ քարշ գալիս, աստիճանաբար անասնանում, մեկ շաբաթվա մեջ շունչները փչում մտրակների ամենօրյա հարվածների տակ։ Նրա խոսքերը բազմության գլխին իջնում էին հենց այդ մտրակների շառաչուն հարվածների պես։ Բայց ի՜նչ զարմանալի բան։ Հազարավոր խոշտանգված հոգիների պատմությունը լսելիս ոչ ոք չաղաղակեց, ոչ մեկը չբռնվեց խելագարության նոպայով։ Տան առաջ, բարձր սանդուղքի վրա կանգնած խմբին մարդիկ անթարթ նայում էին իբրև ողբերգություն ներկայացնող ապաշնորհ դերասանների, որոնք իրենց չվերաբերող ինչ-որ բան էին ցուցադրում։ Այդ խաղողագործները, այգեպանները, ատաղձագործները, սանրագործները, մեղվաբույծները, շերամապահները, մետաքսագործները, որոնք այնքան երկար սպասում էին մոտալուտ աղետին, ոչ մի կերպ չէին կարողանում գիտակցել արդեն վրա հասած արհավիրքը։ Ընկճված մարդկանց դիմագծերը հետզհետե ավելի էին խստանում։ Կենսական ուժը փորձում էր պատռել վերջին ժամանակի հիվանդոտ պատյանը։ Արամ Թովմասյանը գոչեց.

— Երանի՜ մեռյալներին, որոնք բոլոր չարչարանքներից արդեն ազատվել են։

Այստեղ առաջին անգամ բազմությունը աննկարագրելի վայնասուն բարձրացրեց։ Դա ոչ թե լացուկոծ էր, այլ երկարաձիգ, երգանման հեծեծանք, հետզհետե ուժգնացող հառաչանք։ Կարծես ոչ թե մարդիկ էին հառաչում, այլ տառապող երկրագունդը։

— Մենք պետք է հնարավորության չափ արագացնենք մահը։ Դրա համար էլ պետք է պաշտպանենք մեր օջախը, որպեսզի շուտափույթ մեռնենք բոլորս՝ տղամարդիկ, կանայք, երեխաները։

— Իսկ ինչո՞ւ մեռնենք։

Այս խոսքը դուրս թռավ Գաբրիելի բերանից։ Ինչ-որ լույս նրա հոգու ընդերքում հարց տվեց. «Այդ մի՞թե ես եմ»։ Սիրտը հանդարտ էր բաբախում։ Վհատության նոպան մեկընդմիշտ անցավ։ Ներսում գլուխ բարձրացրեց մեծ հավատը։ Մկանների լարվածությունն անցավ։ Իր ամբողջ էությամբ զգում էր, որ հանուն այս պահի արժեր ապրած լինել։ Միշտ, երբ գյուղերում նա զրուցում էր մարդկանց հետ, իր հայրենին իրեն թվում էր արհեստական, շինծու։ Բայց այժմ Գաբրիելն ինքը չէր խոսողը, այլ այն զորությունը, որ նրան այստեղ էր բերել հարյուրամյակների երկար ու ոլորապտույտ քառուղիներով և նրա սեփական կյանքի կարճ ճանապարհով։ Զարմանքով ունկնդրում էր այդ զորության ձայնին, որն այնքա՜ն բնականորեն էր նրանից դուրս քաշում հետևյալ խոսքերը.

— Իմ եղբայրներ և քույրեր, ես ձեր մեջ չեմ ապրել... Դա ճշմարիտ է... Բոլորովին օտարացել էի հայրենիքիս և ձեր մասին ոչինչ չգիտեի... Բայց արարիչն այս ժամի համար ինձ արևմուտքի մեծ քաղաքներից բերեց պապիս հինավուրց տունը... Եվ ես այլևս կես-օտարական չեմ, հյուր չեմ, քանի որ իմ ճակատագիրն էլ նույնն է, ինչ որ ձերը... Ձեզ հետ կապրեմ կամ կմեռնեմ... Կառավարությունն ինձ ավելի քիչ է խնայելու, քան ուրիշներին, գիտեմ... Առավել մեծ վրեժխնդրությամբ են ատում ու հետապնդում ինձ նմաններին... Ձեզ բոլորիդ նման ես էլ հարկադրված եմ պաշտպանել իմ հարազատների կյանքը... Այդ նպատակով արդեն քանի՜ շաբաթ ծանր ու թեթև եմ արել մեր ունեցած բոլոր հնարավորությունները։ Եվ գիտե՞ք ինչ. սկզբում հուսահատված էի, բայց հիմա այլևս չեմ վհատվում... Սիրտս լեցուն է հույսով... Եթե աստված մեզ օգնի, մենք չենք մեռնի... Այս բանը ձեզ ասում եմ ոչ թե իբրև թեթևամիտ մի խենթ, այլ իբրև պատերազմի բովով անցած մի մարդ, իբրև սպա...

Խոսքերն իրար ավելի ու ավելի հստակորեն էին հաջորդում։ Վերջին օրերի եռանդուն աշխատանքը նրան օգուտ էր բերել։ Առանձին հարցերի լիակատար կշռադատումը ներքին վստահություն էր ներշնչում։ Եվրոպայում ձեռք բերած սիստեմատիկ մտածողությամբ նա բարձր էր կանգնած ճակատագրի պարզունակ, հնազանդ հպատակներից։ Ուժի այս թևավորող զգացումը նրան համակում էր պատանեկան տարիներին, երբ քննություններ հանձնելիս հարցերին տալիս էր սպառիչ պատասխան, դրսևորելով տվյալ գիտության մեջ խորամուխ լինելու ունակություն։

Գաբրիելն անդրադարձավ Արամի հուսահատական ճառին, առանց տալու նրա անունը։ Անմտություն կլիներ զափթիեներին դիմադրություն ցույց տալ փողոցներում ու գյուղական տներում։ Գուցե առաջին ժամերին անսպասելի հաջողության հասնեն, բայց բանը կվերջանա ոչ թե շուտափույթ, այլ երկարատև մարտիրոսական մահով, երիտասարդ կանանց բռնաբարությամբ ու առևանգումով։ Ինքը՝ Բագրատյանը ևս կողմնակից է մինչև արյան վերջին կաթիլը պայքարելուն, միայն թե դրա համար կան ավելի լավ տեղեր, քան հովիտն ու գյուղերը։ Նա ձեռքը մեկնեց դեպի Մուսա լեռը, որը վեր էր խոյանում տան հետևում և իր բարձունքներով այնպես էր նայում տանիքին, կարծես ինքն էլ էր մասնակցում ժողովին։ Թող բոլորը հիշեն հին պատմությունները. չէ՞ որ Դամլաջրքը հալածված հայորդիներին ապաստան է տվել, պատսպարել։

— Դամլաջրքը պաշարելու և գրավելու համար հարկավոր է մեծաթիվ զորք։ Ջեմալ փաշային այդ զորքերը պետք են այլ նպատակի համար, որն ավելի կարևոր է, քան մեկ-երկու հազար հայ այնտեղից դուրս քշելը։ Զափթիեների հետ հաշիվ մաքրելը դժվար չէ։ Լեռը պաշտպանելու համար բավական է գործի դնել մի քանի հարյուր հաստատակամ մարդ, նույնքան էլ զենք։ Թե՛ մարդիկ ունենք, թե՛ զենք։

Ձեռքը բարձրացրեց երդվելու համար.

— Ձեզ խոստանում եմ պաշտպանության գործն այնպես ղեկավարել, որ մեր կանայք և երեխաներն ավելի երկար ժամանակ մահից հեռու լինեն, քան տարագրության մեջ։ Կարող ենք շաբաթներով, ամիսներով դիմանալ։ Ո՞վ գիտե, գուցե և աստծո կամքով մինչ այդ պատերազմը վերջանա։ Այդ դեպքում անպայման կփրկվենք։ Եթե խաղաղություն չլինի, համենայն դեպս, մեր թիկունքում կլինի ծովը։ Մոտ է Կիպրոսը, որտեղ անգլիական ու ֆրանսիական ռազմանավեր կան։ Մի՞թե չենք կարող հուսալ, որ այդ նավերից մեկը կանցնի ծովեղերքի մոտով, կլսի մեր օգնության կանչերն ու ազդանշանները։ Եթե այս երջանիկ դիպվածներից ոչ մեկը տեղի չունենա, և աստված կանխորոշած լինի մեր կործանումը, ապա մեռնելու համար ժամանակ միշտ էլ կունենանք։ Եվ այդ դեպքում ինքներս մեզ չենք արհամարհի իբրև անպաշտպան ոչխարների։

Այնքան էլ պարզ չէր, թե այս ճառն ինչ ազդեցություն գործեց։ Կարծես բազմությունն առաջին անգամ թոթափեց իր կաշկանդվածությունը, լիովին գիտակցեց իր ճակատագիրը։ Գաբրիելն սկզբում կարծեց, թե կամ իր ասածը չհասկացան, կամ ժողովուրդը իր ծրագիրը մերժում է կատաղի գոռգոռոցներով։ Բազմության խիտ զանգվածը քանդվեց։ Կանայք ողբ բարձրացրին։ Տղամարդկանց թունդ խոսքերն իրար բախվեցին մուրճերի նման։ Սկսվեց փոթորկահույզ մի վիճաբանություն։ Ի՞նչ եղան գեղջկական աստվածավախ, վշտահար դեմքերը, ի՞նչ եղավ նրանց վրա սփռված մեռելային լռության քողը։ Վեճը կարծես փոխվում էր կռվի։ Տղամարդիկ իրար վրա էին նետվում, գոռգոռում, քաշքշում միմյանց հագուստից, նույնիսկ բեղ-մորուքից։ Համենայն դեպս սա կարծիքների բախում չէր, այլ մոլեգնության պոռթկում, մահվան հանդեպ անզոր լինելու գիտակցության ընդվզում, որը ծառս եղավ հավատքի և ուժի առաջին իսկ խոսքից։

Ինչպե՞ս։ Մի՞թե շղթայված հուսահատությամբ վայրիվերո գոռգոռացող այս հազարների մեջ չկար մեկը, որ հասկանար մի պարզ գաղափար, այն էլ այսքան երկար սպասումից հետո։ Մի գաղափար, որ մարդկանց սրտին այնքան մոտ էր և գալիս էր դեռևս հնադարյան ավանդություններից։ Մի՞թե այդ գաղափարը հայտնելու համար պետք է լույս ընկներ մի օտարական, եվրոպացի մի պարոն։ Անշուշտ, հազարների մեջ շատերն էին ասածն ըմբռնել, բայց համարում էին անիրագործելի ցնորք։ Նույնիսկ երբ երկու հոգի զրուցում էին, ոչ մեկի բերանից դուրս չէր գալիս այդ գաղափարին վերաբերող որևէ բառ։ Դեռևս մի քանի ժամ առաջ, արհեստական թմրության մեջ խարխափելով, կանխազգում էին, որ եթե իրենք պատսպարվեն Մուսա լեռան բարձրունքներում, ապա մեծ արհավիրքը սողալով կգա և կանցնի՝ ներս քաշած իր ճիրանները։ Եվ ովքե՞ր էին այդ մարդիկ։ Խեղճ ու կրակ, բախտի երեսից ընկած գեղջուկներ, հալածանքի ենթակա, կղզի նետված, տեղահան եղած մի ցեղ, որն իր թիկունքում ոչ մի քաղաք չուներ։ Անտիոքում հայեր քիչ կային, եղածներն էլ դրամափոխներ էին, շուկայի առևտրականներ, հացահատիկի առուծախով զբաղվող չարչիներ։ Դրանք ո՛չ ապստամբվողներ էին, ո՛չ էլ պայքարի զինակիցներ։ Ալեքսանդրեթում ևս փոքրաթիվ հայեր կային։ Դրանք, ինչպես Բեյրութի հայերը, շքեղ ամառանոցներում ապրող մեծահարուստ դրամատերեր էին, ռազմամթերք մատակարարողներ։ Սարսափահար դրամաջոջերը բնավ էլ չէին մտածում Մուսա լեռան մի բուռ բնակչության մասին։ Դրանց մեջ ավագ Ավետիս Բագրատյանի պես մարդիկ չկային։ Բոլորն էլ փակում էին իրենց ամառանոցների պատուհանները, քաշվում ամենամութ անկյունները։ Մի քանիսն իրենց կյանքն ու կայքը փրկելու համար թուրքացել էին, հանձնվել մոլլայի թլփատող դանակին։ Օ՜, որքա՜ն ավելի դյուրին էր վերևում, հյուսիս-արևելքում ապրող վանեցիների և ուրֆացիների վիճակը։ Վանը և Ուրֆան հայկական մեծ քաղաքներ էին, որտեղ առատորեն կար թե՛ զենք, թե՛ հինավուրց անընկճելիություն։ Այնտեղ խելացի մարդիկ կային, որոնք կարող

էին ղեկավարել ժողովրդին։ Այնտեղ ավելի դյուրին էր դիմադրության մասին մտածել և գործը գլուխ բերել։ Այդպիսի հանդգնություն ո՞ւմ մտքով կանցներ խեղճ ու կրակ Յողոնօլուքում։ Դիմադրել պետական և ռազմական իշխանությա՞նը։ Այնտեղ ծնված, այնտեղ ապրող ամեն մարդ իր արյան մեջ կրում էր պետության՝ ժառանգական հին թշնամու հանդեպ ունեցած սարսափախառն պատկառանք։ Պետությունը զափթիեն էր, որն առանց որևէ պատճառի կարող էր ծեծել ու կալանավորել։ Պետությունը հարկահավաքներն էին, կապալառուները, որոնք ներխուժում էին տները, կողոպտում, տանում ինչ իրենց դուր էր գալիս։ Պետությունը սուլթանի պատկերն ու Ղուրանի առածները կրող քարե թքոտ հատակով կեղտոտ դիվանատունն էր, որտեղ փրկագին էին գանձում։ Պետությունը զորանոցն էր՝ իր ամայի բակով, որտեղ զինվորները ծառայում էին, որտեղ չաուշն ու օնբաշին մարդկանց բռնցքահարում էին, հայորդիների համար պատրաստ պահում յուրահատուկ գելարան։ Եվ, չնայած այս ամենին, հայորդիները զերծ չէին այս «բարեբարո» պետության հանդեպ ունեցած վախի ու նվիրվածության ինչ-որ շնավայել զգացումից։ Ահա թե ինչու ավելի քան հասկանալի էր դառնում այն, որ ինքապաշտպանության առաջին ծրագրված գաղափարը, բացառությամբ պատվելի Թովմասյանի անխոհեմ պոռթկման, ժողովրդին տվեց ոչ թե որևէ տեղացի, այլ մի ազատամիտ օտարական։ Որովհետև միայն այս ազատամիտն ուներ հիշյալ գաղափարն արտահայտելու անհրաժեշտ անմեղությունը։ Բայց ժողովուրդը երկար ժամանակ չէր կարողանում կողմնորոշվել։ Վիճաբանությունը, գնալով կարծես բորբոքվում էր. գոռգոռում էին, բռունցք թափահարում, մի բան, որ վայել չէր ո՛չ երկչոտ կանանց, ո՛չ ծանրաբարո տղամարդկանց։ Դժվար չէ պատկերացնել, թե մայրերի գրկին կամ շալակին կուչ եկած փոքրիկ երեխաներն իրենց ճիչերով որքա՞ն էին սաստկացնում ընդհանուր իրարանցումը։ Գուցե այդ պահին նրանց անմեղ հոգիները ևս նախազգում էին վտանգը, սուր աղաղակներով պաշտպանվում մոտալուտ մահից։

Գաբրիելը լուռ դիտում էր խառնաշփոթ հուզումը։ Տեր-Հայկազունը մոտեցավ նրան։ Զույգ ձեռքի մատների ծայրերը հպեց նրա ուսերին։ Դա գրկախառնության սաղմն էր, վճռական փորձը։ Օրհնության, միաժամանակ իր վրա գործադրած մեծ ճիգ ու ջանքի շարժում։ Նրա հնազանդ և խստահայաց աչքերի խորքում թերևս կարելի էր կարդալ. «Առանց խոսքի համաձայնության եկանք։ Այդ բանը ես սպասում էի քեզանից»։

Գաբրիելը Տեր-Հայկազունին հանդիպելիս միշտ այն զգացումն ուներ, թե վարդապետն իր մոտ սիրտը չի բացում, նույնիսկ անհայտ պատճառներով խույս է տալիս։ Եվ այժմ հովվապետի գրկախառնությունից հանկարծակիի եկավ, մնաց անշարժ կանգնած։ Տեր-Հայկազունի տառապանքներից բարակած մատները ցած սահեցին Գաբրիելի ուսերից։

Այդ միջոցին պատվելի Հարությունն Նոխուդյանը փորձում էր բազմությանը հանդարտեցնել։ Այս փոքրամարմին, վտիտ մարդն ստիպված եղավ ընդհարվել իր կնոջ հետ, որը հուզված վրա հասավ, ուզեց ամուսնուն արգելել, կանխել հնարավոր անախորժությունը։ Պատվելին կարելույն չափ բարձրացրեց իր տկար ձայնը.

— Քրիստոս խստագույնս մեզ պատվիրել է հնազանդվել իշխանությանը, չարիքին չընդդիմանալ։ Իմ պարտքը ավետարանին հետևելն է։ Ես, իբրև իմ հոտի հովիվը, համաձայն չեմ ոչ մի դիմադրության։

Բագրատյանի տանը հիվանդոտ մարդուկի տպավորություն թողնող պատվելին իր տեսակետը հիմնավորելիս դրսևորեց մեծ հաստատակամություն։ Նա նկարագրեց զինված ապստամբության հետևանքներն այնպես, ինչպես ինքն էր պատկերացնում։ Դա կառավարությանը միայն լիակատար իրավունք կտար տեղահանության անիծյալ հրամանը փոխելու անվերապահ վրիժառության։ Հետո էլ մահն արդեն կլիներ ոչ թե Տիրոջ չարչարանքներին հետևելու արժանի վարձ, այլ ապստամբության համար տրվող օրինական պատիժ։ Եվ աստծո առաջ ոչ միայն այստեղ հավաքվածների հոգիները ծանրաբեռնված կլինեին խռովության մեղքով, այլև դրա հետևանքով կտուժեր բովանդակ ազգը, հայ ժողովրդի բոլոր ուստերն ու դուստրերը։ Այս հանգամանքը ամբողջ աշխարհի աչքի առջև տիրապետողների համար ցանկալի պատրվակ կլիներ, որ հայ ժողովուրդը հայտարարվեր պետական միասնությունը ուխտադրժորեն քայքայող, խարանվեր իբրև պետական դավաճան։ Լավ տանտիրուհին չպետք է իր օջախը լքի, թողնի բախտի քմահաճույքին, եթե ամուսինը նրա հետ դաժանորեն է վարվում։ Սա էր Հարություն Նոխուդյանի տեսակետը, չնայած նրա տան իրադրությունը միանգամայն հակառակն էր (կողակցուհին բռնակալություն էր անում ո՛չ միայն առողջապահական հարցերում)։ Նրա ձայնը լարվածությունից հազիվ չէր խզվում.

— Ո՞վ կարող է հաստատել, որ մեր տարագրությամբ ամեն ինչ կվերջանա, ինչպես գուշակություն են անում Տեր-Հայկազունն ու Արամ Թովմասյանը։ Մի՞թե նրանց համար ևս անքննելի չեն աստծո խորհուրդները։ Մի՞թե Տերը չի կարող մեզ զորավիգ առաքել ամեն կողմից։ Մի՞թե ամենուրեք չկան գթառատ հոգիներ՝ անգամ թուրքերի, քրդերի և արաբների մեջ։ Արդյոք օտարության մեջ ևս աստծո ողորմածությամբ չե՞նք գտնի օթևան և հաց։ Չի՞ կարող պատահել, որ հենց այժմ, երբ

մեզ համակել է վհատությունը, փրկությունն արդեն կեսճանապարհին է։ Եթե այդ փրկությունը մեզ այստեղ չգտնի, ապա կգտնի Հալեպում։ Եթե Հալեպում էլ ոչինչ տեղի չունենա, կհուսանք, որ տեղի կունենա մյուս հանգրվաններում։ Մեր մարմինները դառնորեն կտվայտեն, սակայն մեր հոգիները կլինեն ազատ։ Եթե մենք պետք է ընտրություն կատարենք անմեղ և մեղսալից մահերի միջև, ապա ինչո՞ւ ընտրենք մեղսալից մահը։

Հարություն Նոխուդյանն այլևս չկարողացավ խոսել. նրա նվազ ձայնը խլացավ կանացի ազդու, վճռական բացականչության տակ։ Մի՞թե տանտիրուհու սև զգեստով և մարտական կեցվածքով մոտեցողը Անթառամ Մայրիկն էր՝ ծեր բժշկի կինը։ Մի՞թե, իրոք, Անթառամ Մայրիկն էր՝ բոլորին օգնողն ու խրատողը, մայրերի մայրը, որի բերանից երբեք այդքան երկարաշունչ խոսք չէին լսել նույնիսկ նրանք, ում նա օգնում էր գործով ու խորհուրդներով։ Ժանեկավոր սև գլխանոցը հուզմունքից ցած էր սահել ալեխառն, մեջտեղից «բախտ բաց արած» մազերի վրայից։ Շառագունած դեմքի վրա աչքի էր ընկնում բարեձև քիթը։ Լայն ազդրեր ուներ, կենսահորդ ուժով լի մարմին։ Բարձր պահած գլուխը փոք-ինչ ետ էր թեքվել։ Պայծառ, երկնագույն աչքերը շրջանակված էին հազարավոր անհաշտ խորշոմներով, բայց և այնպես Անթառամ Ալթունին զորավոր ցասումից երիտասարդացել էր։

— Ես կին եմ,— լիահունչ ձայնն առաջին իսկ վայրկյանին բազմության մեջ կատարյալ լռություն հաստատեց։— Ես կին եմ և դիմում եմ այստեղ հավաքված բոլոր կանանց։ Տանջանք, ինչքան ասեք, տեսել եմ։ Շատ անգամ է սիրտս մեռել։ Վաղուց ի վեր մահվան հանդեպ անտարբեր եմ։ Եթե մահը գա, աչքս էլ չեմ թարթի։ Բայց չեմ ուզում շունչս փչել ստորացված, սատկել ճանապարհին, փտել բաց դաշտում։ Չեմ ուզում։ Բայց չեմ էլ ուզում կենդանի մնալ տարագրության ճամբարում՝ շրջապատված պատվազուրկ մարդասպաններով, պատվազուրկ եղած զոհերով։ Չեմ ուզում։ Մենք՝ կանայքս, չենք ուզում այս ամենը, ո՛չ, բոլորս էլ չենք ուզում։ Իսկ եթե տղամարդիկ այդքան վախկոտ են, ի՞նչ արած, ինքներս կզինվենք, կբարձրանանք Մուսա լեռը... Գաբրիել Բագրատյանի հետ։

Այս մոլեռանդ կոչը այնպիսի ժխոր առաջացրեց, որ նախորդ իրարանցումը մոռացվեց։ Թվում էր, թե խելակորույս մարդիկ ահա ուր որ է դանակներ քաշած՝ կսկսեն իրար սպանել, կանխելով թուրքերին։ Ուսուցիչները Շատախյանի գլխավորությամբ արդեն ուզում էին նետվել բազմության մեջ, բաժանել կռվողներին, հարկադրված կատարել ոստիկանների դեր։ Տեր-Հայկազունը հազիվ նկատելի ձևով նրանց ետ կանչեց։ Նա իր ժողովրդին ավելի լավ էր ճանաչում, քան ուսուցիչներն ու մուխթարները։ Այդ պոռթկումը կռիվ չէր։ Պարապ բորբոքում։ Տարագրության հրամանի ազդեցության տակ գտնվող հազարավոր մարդկանց դիտակցությունը պետք է դանդաղ մարսեր հռետորների որոտընդոստ խոսքերը։ Վարդապետի հայացքն ասում էր. «Հանգիստ թողեք»։ Նա համբերությամբ դիտում էր քառսը, որտեղ Անթառամի խոսքերից հուզված կանանց ձայները հետզհետե դառնում էին գերակշռող։ Տեր-Հայկազունը արգելեց նաև, որ ուրիշ հռետորներ ևս խոսեն, թեև ցանկացողներ կային, ինչպես, օրինակ, Ոսկանյանը։ Նա իրավացի էր։ Աղմուկը նոր սնունդ չստանալով՝ ավելի շուտ դադարեց, քան կարելի էր կարծել։ Մի քանի րոպե չանցած, իրարանցումն ինքնիրեն հանդարտվեց։ Միայն մոլտոց և հեկեկանք էր լսվում։ Արդեն Տեր-Հայկազունի խոսելու ժամանակն էր։ Նա պետք է կարճ ու կտրուկ պարզաբաներ իրադրությունը, ելք ցույց տար։ Աջով հանդարտվելու նշան արեց.

— Ամեն ինչ պարզ է,— ասաց առանց ձայնը բարձրացնելու, բայց շեշտելով յուրաքանչյուր վանկը, որպեսզի խոսքերը գամվեն բազմության բթացած գիտակցության մեջ։— Երկու առաջարկ արվեց։ Դրանք մեզ երկու ճանապարհ են ցույց տալիս, որոնցով կարող ենք գնալ։ Այլ ճանապարհ մեր համար չկա։ Մեկը պատվելի Նոխուդյանի ճանապարհն է, որը մեզ զափթիեների հսկողությամբ կտանի արևելք, մյուսը Գաբրիել Բագրատյանի ճանապարհն է, որով զենքը ձեռքներիս պետք է բարձրանանք Դամլաջրք։ Ձեզանից ամեն մեկը իրավունք ունի լիովին ազատ ընտրություն կատարել, ինչպես նրան կթելադրեն բանականությունն ու կամքը։ Այլևս հարկ չկա խոսելու. բոլոր ճշմարիտ խոսքերն արդեն ասվեցին։ Վճիռ կայացնելու համար շատ պարզ ձև եմ առաջարկելու։ Թող պատվելի Հարություն Նոխուդյանը բարեհաճի անցնել պարանի մյուս կողմը, որտեղ ազատ բակն է։ Ով կողմնակից է պատվելուն, ով ուզում է տարագրվել, թող մոտենա նրան։ Իսկ ով կողմնակից է Գաբրիել Բագրատյանին, թող մնա տեղում կանգնած։ Շտապելու հարկ չկա։ Ժամանակ ունենք։

Հանկարծ խոր լռություն տիրեց։ Միայն տիկին Նոխուդյանի աղեկտուր լացն էր լսվում, որը գրեթե ոռնոց էր հիշեցնում։ Ծերունի պատվելին գլխին էր քաշել կլոր գլխանոցը։ Մտորումների ծանր բեռան տակ նրա իրանը թեքվել, կռացել էր մինչև գետին։ Այդ մտամոլոր վիճակում նա երկար մնաց։ Այնուհետև ոտքերը շարժվեցին։ Մանրիկ, դանդաղ քայլերով գնաց դեպի Տեր-Հայկազունի ցույց տված տեղը։ Կանեփե պարանը

բարձրացրեց ձեռքի անճարակ շարժումով, անցավ մյուս կողմը։ Օժանդակ բակը տաքածվում էր մինչև ամառանոցը։ Դրանց արանքում միայն մագնոլիայի թփերից գոյացած մի ցանկապատ կար։ Ընդարձակ բակը բոլորովին ամայի էր։ Ժողովի էին գնացել ոչ միայն ծառաները, այլև ախոռապանները։ Նոխուդյանն իր կարճլիկ ոտքերով չափեց բաժանարար ամբողջ ճանապարհը, հասավ մագնոլիայի թփերին և մեջքը բազմության կողմն արած՝ կանգ առավ։ Լացից ցնցվող կինը հետևեց ամուսնուն։ Դարձյալ տիրեց լռություն՝ այս անգամ ավելի երկարատև։ Ո՞չ մի ձայն, ո՞չ մի խոսք։ Այնուհետև բազմության կենտրոնից անջատվեցին երկու հոգի, նույնպես ծանրաքայլ ու մտասույզ գնացին Նոխուդյանի կողմը, կանգ առան նրա ետևում։ Նույնն արեցին սակավաթիվ բիթիաստցիները՝ բողոքական համայնքների ավագներն իրենց կանանց հետ։ Հետզհետե տարագրության կողմնակիցները շատացան, մինչև վերջապես պատվելու շուրջը հավաքվեց գրեթե ամբողջ հոտը՝ ծեր թե երիտասարդ։ Սրանց միացան մյուս գյուղերից եկած մի քանի հոգի։ Բայց դրանք բոլորն էլ ծերացած, հաշմանդամ մարդիկ էին, որոնք դիմադրելու ուժ չունեին կամ իրենց կյանքի իրիկնամուտին, իրոք, չէին ուզում շարժել երկնքի զայրույթը։ Ձեռքները կրծքին խաչած, ինչպես աղոթելիս, նրանք կատարեցին շարշարանաց ճանապարհը դուրս գալու առաջին քայլը։ Ամեն ինչ կատարվում էր այնպիսի լրջությամբ, ներքին համոզմունքով, որ կարծես դա կրոնական ինչ-որ արարողություն էր և ոչ թե ծանր հետևանքների հանգող վճիռ։ Կարծես մարդկանց հնարավորություն էր շնորհված սեփական ոտքով գերեզման իջնելու, նախքան մեռնելը։ Մի հոգի։ Եվս մի ուրիշը։ Մի զույգ։ Այնուհետև շատերը։ Նոխուդյանի շուրջը հավաքվեցին մոտ չորս հարյուր հոգի, բացառությամբ համայնքի այն անդամների, որոնք հիվանդության կամ այլ պատճառներով մնացել էին տանը։ Այսպիսով, պատվելու կողմն անցավ Բիթիասի՝ հովտում իր նշանակությամբ երկրորդը համարվող գյուղի բնակչության մեծագույն մասը։ Վիթխարի բազմությունը բռնեց իր հայրենակիցների ընտրած դժվարին ուղին, հայրենակիցներ, որոնք փակ աչքերով վճռեցին հնազանդվել։ Ոչ մի խոսք, ոչ մի ձայն։ Սակայն վերջին մարդը, որը Նոխուդյանի կողմը գնաց ուշացումով, զառամյալ ծերունի էր։ Ձեռնափայտին հենված՝ նա քայլում էր հարբածի նման, ինքն իր հետ խոսում։ Քեբուսիեցի հանրածանոթ այդ կատակաբանը հավանորեն չէր հասկացել, թե ինչն ինչոց է, և բազմության մեջ զվվանքի ու արհամարհանքի խլրտում սկսվեց։ Առաջներում «գյուղի գժին» տեսնելով՝ սովորաբար զվարճանում էին, բայց այստեղ գլուխ բարձրացրեց ամբարտավանությունը.

— Էստեղ քաջերն են, էնտեղ՝ վախկոտները։ Էստեղ ուժեղներն ու առողջներն են, էնտեղ՝ կիսատ-պռատները։

Մի պատանի բարձրաձայն ինչ-որ ծաղրական բառ ասաց, որի վրա ծիծաղն ալիք տվեց բազմության մի ծայրից մյուսը։ Տեր-Հայկազունը տեղից վեր թռավ, նետվեց դեպի խիտ բազմությունը, ձեռքերով մարդկանց դեսուդեն հրելով սկսեց ճանապարհ բացել։ Կարծես ուզում էր թափանցել համայնքի կենտրոնը, բռնել անպատկառին, պատժել։ Բարկությունից իրեն ուտում էր։ Գլխանոցը ետ էր ընկել, ի ցույց հանել կարճ, ալեխառն մազերը։ Աչքերից կրակ էր թափվում.

— Ո՞ր շունը համարձակվեց։ Ո՞ր սատանաներն էին հոհոում։

Նա բռունցքը մի քանի անգամ թափով խփեց իր կրծքին։ Թվում էր, թե ծաղրողների փոխարեն իրեն է պատժում, որ իջեցնի բարկությունը։ Այնուհետև լուռումունջ գնաց Նոխուդյանի ու նրա խմբի կողմը, որոշ հեռավորության վրա կանգ առավ, խոր գլուխ տվեց և հոգևոր հոր ազդու ձայնով ասաց.

— Մեզ համար դուք միշտ սրբություն կլինեք։ Երանի՜ մենք էլ ձեզ համար սրբություն լինեինք։

Բագրատյանի միտքը գործում էր տենդագին։ Հղացումների անպատնեշ հեղեղը նրան տանում էր հեռո՜ւ, հեռո՜ւ։ Սրտի խորքում պաշտպանության մեծ գործը թափով առաջ էր ընթանում։ Քանի որ վճիռն արդեն կայացված էր, ուստի և անցուդարձին հետևում էր մատների արանքով։ Թթանված ուղեղով նա միաժամանակ խորհում էր և դիտում։ Ի՜նչ պատկառելի հսկա էր այդ Տեր-Հայկազունը, որը մարդկանց հետ խոսելիս սովորաբար խոնարհում էր աչքերը։ «Անգնահատելի բախտավորություն է,— կայծակեց նրա միտքը,— որ պայքարի մեջ իմ թիկունքին կանգնած է լինելու այս անսասան հեղինակությունը։ Մեզ համար երջանիկ պատահականություն է և այն, որ բարի Նոխուդյանն ու ոչ մարտունակ մի քանի հարյուր հոգի այլ վճիռ կայացրին։ Նրանց կարևոր խնդիրն է՝ զափթիեներից մինչև վերջին վայրկյանը թաքցնել մեր մտադրություններն ու շարժումը։ Գյուղերը բոլորովին չպետք է դատարկվեն։ Թուրքերը պետք է միայն այն ժամանակ կասկածեն, երբ մենք արդեն պատրաստ կլինենք հարձակմանը»։

Գաբրիելի միտքը շարունակ պտտվում էր իր ծրագրի շուրջը։ Աշխարհից կտրված թոռը, կյանքից անտեղյակ իդեալիստը, որին հեռավոր ազգականները՝ այդ խորամանկ վաճառականները, շարունակ ծաղրում էին, ժառանգել էր իր նախնիների հաշվենկատ դատողությունը և Ավետիս պապի խելքը։ Հավ կշռադատված յուրաքանչյուր իրական փաստից

առանձնացնում, քանդում էր հետևանքների խճճված կծիկը, որտեղ ոչ մի թել ավելորդ չէր։ Բագրատյանին համակել էր ծայրահեղ պատվախնդրություն։ Այդ կիրակի օրվանից երեք օր հետո, ըստ Ալի Նազիֆի խոստովանության, պետք է գար մյուդիրն իր մարդկանցով։ Մինչև չորեքշաբթի օրը հարկավոր էր ամեն ինչ հիմնովին նախապատրաստել, իսկ մնացած ժամանակամիջոցում զբաղվել շինարարական հարցերով։ Հիմա արդեն հասել էր այն ժամը, երբ պետք է ստուգեր իր ամբողջ կյանքի հավատամքը, թե հոգին հաղթանակ է տանում նյութի, ինչպես և նյութական բոլոր երևույթների բարձր ձևերի, ընության ու պատահականության դեմ։

Եվ զարմանալի չէր, որ նա իր ծրագրերով ու երևակայությամբ տարված, սեփական արժանապատվության արբեցուցիչ զգացմամբ տոգորված՝ մոռացել էր կին ու երեխա, չէր հետաքրքրվում արտաքին անցուդարձով։ Այդ ամենը, իհարկե միայն ժամանակի կորուստ կլիներ։

Ժողովրդի կողմից խոսեցին մի քանի հոգի ևս։ Բայց նրա աչքին ի՞նչ արժեք ունեին դրանց դատարկ, անճարակ խոսքերը, երբ մեծ վճիռը վերջնականորեն կայացված էր։ Պայքար հրահրող ճառն արդեն արտասանված էր։ Հակառակ կողմի օգտին ոչ մի ձայն այլևս չհնչեց։ Տեր-Հայկազունը բավական ժամանակ տվեց, որ վճռի խիզախ ոգին խոր թափանցեր ամբոխի մեջ, փարատեր վարանումն ու կասկածը։ Բայց վախենալով, որ մարդիկ կարող են հոգնել, վարդապետն առաջ եկավ, ընդհատեց ճառամարզանքը, կարգադրեց անցնել ավագների ընտրությանը։ Ցողունօլուքի համայնքի քարտուղարը զամբյուղն առած՝ շրջում էր, հավաքում քվեաթղթերը։ Այնուհետև ուսուցիչներն առանց ժամանակ կորցնելու, Ավագյանի օգնությամբ սկսեցին հաշվել ձայները։

Ձայների մեծամասնությունը բնականաբար շահեց Տեր-Հայկազունը։ Նրան հաջորդեցին բժիշկ Ալթունին, ապա յոթ մուխթարները և գյուղական երկու քահանա՝ իրենց համայնքի քվեով։ Սրանցից հետո հիշատակվեցին դեղագործ Գրիգորի և ուսուցիչներից մի քանիսի, իհարկե, առաջին հերթին Շատախյանի ու Ոսկանյանի անունները։ Գաբրիելը գրեթե այնքան ձայն շահեց, որքան պատվելի Արամը։ Անպաշտոն բնակիչներից ձայներ էին շահել ծերունի Թովմասյանը և Ջաուշ Նուրհանը՝ բանակում երկար ժամանակ ծառայած ենթասպան։ Սրանք պետք է մասնակցեին ավագների խորհրդակցություններին։ Ահագին ձայներ շահեց նաև Անթառամ մայրիկը, մի բան, որ այս կողմերում նորություն էր։ Բայց նա կտրականապես հրաժարվեց։

Ուսուցիչ Շատախյանն ավարտեց ընտրության արդյունքների ընթերցումը։ Դրանից հետո ընտրվածները տուն մտան քննարկելու իրենց

անելիքները։ Գաբրիելը Քրիստափորին ու Միսակին պատվիրել էր, որ հյուրասրահում նախապատրաստեին այն ամենը, ինչ անհրաժեշտ էր նիստի համար՝ թեթև ճաշ, գինի և սուրճ։ Բազմությունը, այդ թվում նաև այն մայրերը, որոնք փոքրիկ երեխաների պատճառով պետք է տուն վերադառնային, մնաց հրապարակում, տեղավորվեց ընդարձակ այգում։ Մարդ ուղարկեցին Յողունօլուք՝ ուտելիք բերելու։ Տանտերը ջուր, գինի, մրգեր և ծխախոտ բաժանել տվեց։ Շուտով, ընդհանուր ասուլիսի հետ իրիկնային երկինքն ի վեր սկսվեց բարձրանալ սիգարիկների ու ծխամորճների խաղաղավետ ծուխը։ Կարծես ոչինչ չէր պատահել։ Պատվելի Նոխուդյանի կողմնակիցները այգուց դուրս եկան, որ վերադառնան Բիթիաս։ Դա լուռ ու տխուր ուղևորություն էր։ Երիտասարդներից մի քանիսը այգու մուտքից ետ դարձան, միացան ժողովրդի մեծ բազմությանը, որի կենսասիրությունը թմրության շաբաթներից հետո կրկին արթնացել էր։ Առօրյայի և անասելի հանդգնության միջև ընկած կարճատև ժամանակամիջոցում բոլորի հոգին համակվել էր անընմբռնելի բավականությամբ։ Ինչո՞ւ։ Որովհետև նրանց առջևում արդեն միայն տառապանքները չէին, այլ գործը՝ տառապանքի մեջ և տառապանքից վեր։

Մուսա լեռան գիշերն արագ ծծեց հուլիսյան մթնաշաղը։ Արևելքում կիսալուսինը դանդաղորեն պոկվեց Ամանոսի գահավեժ բարձունքներից և ազատ սողաց տիեզերքում։ Բագրատյանի ամառանոցի դարպասը կրնկի վրա բաց էր։ Հետաքրքրասերներն անարգել ելումուտ էին անում։ Մեծ հյուրասրահում ժողովրդի ավագները խորհրդակցում էին։ Այդ խորհուրդը, որին մասնակցում էին մոտ քսան հոգի, սկզբում անխորհուրդ տպավորություն էր թողնում։ Օտար գյուղապետները, հոգևորականները և ուսուցիչները, որոնք առաջին անգամ էին ոտք դրել այդ տունը, անխոս նստած կամ կանգնած էին։ Շատերը նոր էին գիտակցում այն ամբողջ խենթությունը, որ նրանց վզին փաթաթվեց մեծ ժողովի անսպասելի ընթացքի հետևանքով։ Գաբրիելն իսկույն զգաց, որ հավաքվածների մի մասից վհատության խանձահոտ է փչում։ Դա հարկավոր էր կանխել, թույլ չտալ, որ անտարբերներն «ուշքի գային», բարձրաձայն հայտնեին իրենց սկզբունքային «բայց»-ը կամ «եթե»-ն։ Ժողովուրդն իր օրինական վճիռը կայացրել էր, այլևս չէր կարելի հանդուրժել որևէ տարակուսանք։ Ինքնապաշտպանության կրակը պետք է վառվեր պայծառ բոցով։ Իբրև տանտեր, Գաբրիելը պարտավոր էր վերջ տալ այդ սառած մարդկանց անձև տատանմանը, խորհրդակցությունն աշխույժ ընթացքի մեջ դնել, աշխատանքը դարձնել արդյունավետ։ Նա պետք է ի հայտ

բերեր դաստիարակության և եվրոպական փորձառության գերազանցությունը։ Նա արեց միակ հնարավոր բանը։ Հանդիսավոր ձևով դիմեց Տեր-Հայկազունին.

— Տեր-Հայկազուն, Դուք ձայների մեծամասնությունը շահեցիք ոչ միայն դրսում գտնվող ժողովրդի, այլև մեր բոլորի կամքով, որը և ես ահա արտահայտում եմ։ Մենք Ձեզ խնդրում ենք դառնալ մեր պայքարի գերագույն առաջնորդը։ Խաղաղ ժամանակ Դուք արդեն հոգևոր առաջնորդ էիք և մինչև այսօր էլ, իբրև հովվապետ, Ձեր պարտքը կատարել եք անձնվիրաբար։ Աստծո կամքն է, որ մարդկային բարբարոսության պատճառով Ձեր իշխանությունն ավելի ընդարձակվի։ Ուզում ենք ամեն ինչ հանձնել Ձեր ձեռքը, որպեսզի որոշումներ կայացնելիս, միջոցառումներ գործադրելիս անվերապահորեն ենթարկվենք Ձեր վճռական խոսքին։ Ավագների կայացրած որոշումներն օրինական ուժ կստանան և ամբողջ ժողովրդի համար պարտադիր օրենք կդառնան միայն Ձեր համաձայնությամբ։

Բագրատյանն իր հակիրճ ճառով արտահայտեց այն, ինչ ինքնին հասկանալի էր։ Գերագույն աստիճանին ոչ ոք այնքան արժանի չէր, որքան Տեր-Հայկազունը։ Այս անհերքելի իրողության վրա նույնիսկ ուսուցիչ Հրանտ Ոսկանյանը չհանդգնեց դեմքը գաղտնի ծամածռել։ Գաբրիելի խոսքերը ներկաների վրա հաճելի տպավորություն թողեցին, նույնիսկ նրանց, ովքեր տանտիրոջը դեռևս համարում էին օտար, վերաբերվում էին կասկածամտությամբ։ Այս հաճելի ներգործությունը երկու պատճառ ուներ։ Շատերը ենթադրում էին, թե հայրենիքից կտրված «ֆրանկը», իր եվրոպարկան անբատավանությանը հետևելով, կձգտի իր ձեռքը վերցնել առաջնորդի դերը։ Եվ ապա (այս պատճառն ավելի կարևոր էր) Բագրատյանի ելույթը հանդիսավոր ձևով, իր ուղղամիտ բովանդակությամբ ստեղծեց այն միակ հողը, որի վրա կարող էր խարսխվել ամբողջ ապագան։ Այդ սակավաթիվ խոսքերից աննկատելիորեն բխեց նոր, կազմավորվող հասարակության հիմնական օրենքը։ Ի նշան պաշտոնը և ծանր պատասխանատվությունն ստանձնելու, Տեր-Հայկազունը լուռ խաչակնքեց երեսը։ Այդ պահից սկսած, գոյություն ուներ երկու օրինական իշխանություն՝ ավագների խորհուրդը և ժողովրդական առաջնորդը, որը թեև խորհրդի նախագահն էր, բայց նրա որոշումները օրենքի ուժ էին ստանալու միայն այդ խորհրդի հավանությամբ։

Բոլորը մեկ առ մեկ մոտեցան Տեր-Հայկազունին, ավանդական ձևով համբուրեցին աջը, ի նշան հարգանքի և հանդիսավոր երդման։ Միայն այդ արարողությունից հետո նստեցին իրար միացված սեղանների շուրջը։ Գաբրիելն իր առաջ դրել էր ռազմական քարտեզն ու բոլոր գծագրերը։ Կողքին նստեց Սամվել Ավագյանը, որ հարկ եղած դեպքում օգնի։ Գաբրիելը հայացքով ձայն խնդրեց, ապա տեղից վեր կացավ.

— Իմ բարեկամներ, երկու ժամ առաջ արևը մայր մտավ։ Վեց ժամ հետո կրկին կծագի։ Բոլոր ներքին գործերը կարգավորելու համար մենք միայն վեց կարճատև ժամ ունենք։ Այս գիշերն անցնելուց հետո, երբ երևանք ժողովրդի աչքին, ոչ մի անորոշ բան չպետք է մնա։ Մեր կամքը պետք է լինի պարզ ու հասկանալի։ Բայց ամենակարևորն այն է, որ վաղը, առավոտյան առաջին ժամերին բոլոր երիտասարդ, առողջ և ուժեղ տղաները բարձրանան Դամլաջրը, հողե պատնեշներ պատրաստեն։ Խնդրում եմ խնայել ժամանակը։ Մեզ համար առավելություն է, որ պաշտպանության բոլոր հարցերը վաղուց եմ մշակել և այժմ կարող եմ ձեզ ներկայացնել իմ առաջարկները։ Հավատացած եմ, որ այս խորհրդակցության ժամանակ էլ դուք կառաջնորդվեք նույն կանոնով, ինչով առաջնորդվեցիք քվեարկելիս։ Այժմ Տեր-Հայկազունին խնդրում եմ թույլ տալ պարզաբանելու իմ ծրագրերը...

Տեր-Հայկազունը, իր սովորության համաձայն, աչքերը փակեց։ Դեմքն ստացավ հոգնած, տանջալից արտահայտություն.

— Լսում ենք Գաբրիել Բագրատյանին։

Գաբրիելը բացեց Ավագյանի քարտեզներից ամենագեղեցիկը.

— Մենք հազարավոր խնդիրներ ունենք լուծելու, բայց եթե դրանք լավ պատկերացնենք, ապա կտեսնենք, որ բոլոր մանրամասնությունները հանգում են երկու հիմնական խնդրի։ Առաջին և ամենասրբազան անելիքը բուն կռիվն է։ Երկրորդ խնդիրը ևս՝ մեր ներքին կյանքի կազմակերպումը, ամենից առաջ ծառայում է կռվին։ Այս առթիվ էլ ուզում եմ խոսել։

Պատվելի Արամ Թովմասյանը ձեռքով արեց, խնդրելով, որ իրեն թույլ տրվի խոսողին ընդհատել.

— Ամենքս էլ գիտենք, որ Գաբրիել Բագրատյանը, իբրև սպա, ռազմական հարցերը հասկանում է ավելի լավ, քան որևէ մեկը։ Նա պետք է լինի մեր պայքարի առաջնորդը...

Բոլոր ձեռքերը վեր բարձրացան ի նշան համաձայնության։ Բայց պատվելի Արամը դեռևս չէր ավարտել իր խոսքը.

— Գաբրիել Բագրատյանը պաշտպանության ծրագրերին երկար ժամանակ նվիրել է իր ամբողջ ավյունը։ Դիմադրության նախապատրաստումն ամենից լավ նա է գլուխ բերել սեփական ձեռքով։ Բայց պայ-

քարելու համար մարդն ամենից առաջ պետք է ապրի։ Ուստի ես առաջարկում եմ ռազմական կոնկրետ ծրագրի քննարկումը հետաձգել այնքան ժամանակ, մինչև մենք պարզ պատկերացնենք, թե ինչ միջոցներով և որքան ժամանակ հինգհազարանոց մի ժողովուրդ կարող է ապրել Դամլաջրքի բարձունքներում՝ աշխարհից կտրված։

Գաբրիելը, որն արդեն բավականաչափ ոգևորվել էր, հիասթափված վայր գցեց քարտեզը.

— Ես իմ ելույթում հենց այդ հարցն էի շոշափելու, քանի որ քարտեզի վրա նշանակված է այն ամենը, ինչ անհրաժեշտ է ապրելու համար։ Բայց և այնպես պատվելի Թովմասյանի ցանկությամբ ես պատրաստ եմ հետաձգել պայքարի կազմակերպական քննարկումը...

Բժիշկ Ալթունին երկար չկարողացավ նստել իր պառլամենտական աթոռին։ Քրթմնջալով շափշփում էր սրահը, երևի հասկացնելով, որ ինքը ահավոր աղետի ժամին ամեն տեսակի խորհրդակցությունները, քվեարկություններն ու ելույթները համարում է տղամարդկանց ավելորդ խաղ։ Նրա փնթփնթան անհանգստությունը միանգամայն հակառակ բևեռն էր դեղագործ Գրիգորի վեհաշուք անտարբերության։ Սա անշարժ նստել և կարծես ուզում էր հարց տալ. «Արդյոք այս տանջալից ու բարբարոսական ընդհատումից հետո ե՞րբ կկարողանամ անարգել վերադառնալ մարդկային գոյության ամենավսեմ երևույթներին, որոնց միայն ե՛ս եմ հասու»։

Բժիշկը բարկացած ետ ու առաջ էր շրջում, երբ հանկարծ գործին չվերաբերող հարց տվեց.

— Հինգ հազար հոգին հինգ հազար հոգի է, արևահարությունն ու տեղատարափ անձրևն էլ՝ արևահարություն և տեղատարափ անձրև։

Գաբրիելը, որ Քաղաքածորի, պատսպարվելու, առողջապահական հարցերի և երեխաների խնամքն ապահովելու վրա անքուն գիշերներ էր լուսացրել, ընդունեց բժշկի դիտողությունը.

— Ցանկալի կլիներ, եթե գոնե երկուսից-յոթ տարեկան երեխաներին մի տեղ հավաքած պահեինք, որպեսզի ավելի ապահով լինեին։

Մինչ այդ լուռումունջ նստած Տեր-Հայկազունն աշխուժացավ, մեծ վճռականությամբ մերժեց Գաբրիելի մտահղացումը.

— Գաբրիել Բագրատյանի առաջարկությունը կլիներ վտանգավոր անկարգության սկիզբ։ Մենք չպետք է իրարից զատենք այն, ինչ միացրել են աստված և ժամանակը։ Ընդհակառակը։ Հույժ կարևոր է, որ առանձին համայնքներ, առանձին ընտանիքներ հնարավորության սահմաններում տեղավորվեն միմյանցից որոշ հեռավորության վրա։ Ամեն տոհմ,

ամեն գյուղ թող ունենա իր սեփական հանգրվանը։ Ինչպես միշտ, մուխթարները նրանց համար պատասխանատու կլինեն մեր առաջ։ Որքան հնարավոր է, պետք է քիչ փոփոխություն մտցնել այն ապրելակերպի մեջ, որին ընտելացել ենք։

Չորս կողմից ջերմ հավանություն տվին։ Դա Բագրատյանի համար որոշ ձախողում էր։ Տեր-Հայկազունը խոստանում էր սովորական կյանքի մոտավոր պատկերը։ Այս հեռանկարից խորապես գոհ կմնային տարաբախտները։ Չէ՞ որ ամեն արհավիրք, որ կարող է գալ գյուղացի մարդու գլխին, պարունակում է այդ «փոփոխություն» բառը։ Բայց Գաբրիելը շուտ պարտվողներից չէր։ Նա Քաղաքածորի քարտեզը տվեց, որ բոլորը հերթով աչքի անցկացնեն։ Ո՞վ չգիտեր գյուղական մեծ արոտավայրերի տեղը։ Ամեն մեկն իսկույն համոզվեց, որ հանգրվանի համար այդ խոտավետ, քարազուրկ սարահարթն ամենահարմար վայրն է։ Այստեղ ոչ միայն հազար, այլև երկու հազար ընտանիք կարող էր տեղավորվել։ Գաբրիելը ճարպկորեն ընդառաջեց Տեր-Հայկազունի ցանկությանը։ Ասաց, որ ընտանիքների և համայնքների դասավորությունը հեշտությամբ կարող է իրականացվել հովվապետի նախընտրած ձևով։ Ինքը ևս կողմնակից է այդ տեսակետին։ Բայց և այնպես հարկավոր էր նկատի ունենալ, որ հազար ընտանիքից յուրաքանչյուրը չի կարող առանձին վարել իր տնտեսությունը, չի կարող յոլա գնալ առանց մեծ, ընդհանուր տնտեսության։ Չափազանց կարևոր է իմանալ, թե որքա՞ն սնունդ և ռազմամթերք կարող ենք խնայել, որքա՞ն աշխատող ձեռքեր կարող են ազատ լինել։ Եթե այս հանգամանքը հաշվի չառնեն, երկար դիմանալու ոչ մի ուրիշ առհավատչյա չեն ունենա։ Պետք է որոշակի կարգով անասուններ մորթել, հաց ու ալյուր բաժանել, երեխաներին ու հիվանդներին այծի կաթ տալ։ Ինչ վերաբերում է ունեցվածքի բաժանմանը, դա շատ կնճռոտ հարց է և դժվար է լուծել, եթե նույնիսկ հնարավոր լինի առանձնացնել ընտանիքները։ Ինչպես ինքը՝ Բագրատյանը, հասարակությանը կտրամադրի իր ամբողջ սեփականությունը՝ իր տնտեսության մեջ ունեցած բոլոր անասունները, տանը և նկուղում ունեցած բոլոր կարևոր պաշարները, այդպես էլ պետք է վարվի յուրաքանչյուրը։ Հանգամանքները հրամայաբար պահանջում են ստեղծել ընդհանուր սեփականություն։ Ամեն մի տնտեսություն չպետք է մորթի իր ոչխարները։ Կաթը պետք է բաշխել կարիք ունեցողներին, ոչ թե կերած-խմած առողջ մարդկանց, որոնք պատահաբար կարող են մեկ-երկու այծ ունենալ։ Ոմանք պատկերացնում են, թե Դամլաջրքի վրա կարող են փողով առևտուր անել, շահույթ ստանալ։ Դա մանկական երազանք է։ Երբ հասարակությունը լիովին բարձրա-

նա, փողը կդադարի որևէ արժեք ունենալուց։ Պետք է խստիվ արգելել նաև ապրանքափոխանակությունը, քանի որ ամբողջ ունեցվածքն այսօրվանից համարվելու է ժողովրդական սեփականություն և ծառայելու է կյանքի փրկության համար մղվող պայքարին։ Ով մեկընդմիշտ պարզ պատկերացնի, որ ունեցվածքից հրաժարվելն ավելի լավ է, քան տարագրությունը, նա, անշուշտ, երբեք չի առարկի Մուսա լեռան պահանջներին։

Բայց շատ չանցած պարզվեց, որ Բագրատյանն իր արդարացի կարծիքը հայտնելիս ծայրահեղ մոլորության մեջ է։ Նույն գեղջուկները, որոնք մի քանի ժամ առաջ տարագրությունն ու մահն անառարկելիորեն համարում էին անխուսափելի, այժմ ոչ մի կերպ չէին ուզում հաշտվել այն մտքի հետ, թե իրենց սեփականությունն այլևս իրենց չի պատկանելու։ Մուխթարները թթված դեմք ընդունեցին։ Բայց դրա պատճառը ոչ միայն նրանց կամակորությունը գրգռող կորուստն էր, այլև Բագրատյանի խոսքերում պարունակված անողոք կարգապահությունը, «եվրոպականությունը»։ Յողոնօլուքի մուխթար Թովմաս Քեբուսյանը, շիլ աչքերը Տեր-Հայկազունին գամած, հանգամանորեն խոսեց այդ առթիվ.

— Մեր վարդապետը գիտե, որ ես միշտ էլ կարողությանս չափով բարեգործություն եմ արել, առանց միջոցներս ափսոսալու օգնել չքավորներին, եկեղեցուն ու դպրոցին։ Մեր շրջանում ամենից շատ ես եմ մասնակցել նման բաների։ Հյուսիսում, թե արևելքում ապրող մեր հայրենակիցների համար հանգանակություն անելիս իմ անունը միշտ եղել է ցուցակների վերևում։ Անհաջողության տարիներին էլ խոշոր գումարներ եմ նվիրել։ Էս բանը չեմ ասում ինձ փառաբանելու համար։ Ո՛չ-ո՛չ, ես չեմ ուզում ինձ փառաբանել...

Այստեղ նրա մտքի թելը կտրվեց, ուստի և նա մի քանի անգամ պնդեց իր համեստությունը...

— Չեմ էլ ժխտում, որ արոտավայրերում եղած ամենախոշոր և ամենալավ հոտերը իմն են։ Իսկ ինչի՞ շնորհիվ ունեմ։ Էն բանի շնորհիվ, որ ոչխարաբուծությունից խելքս կտրում է։ Որովհետև աշխարհ տեսած մարդ եմ։ Իսկ հիմա հանկարծ ոչ մի ոչխար չեմ ունենալու, կամ ունենալու եմ էնքան, ինչքան, ասենք, ինչ-որ մի փայտանկարիչ, որը կաղնուց ու ընկուզենուց բացի, բան չի հասկանում, կամ ինչ-որ մի մուրացկան։

— Կամ ինչպես ես՝ ինչ-որ մի վարժապետ...— գոչեց փոքրամարմին Ոսկանյանը, խայթող հեգնությամբ ընդհատելով միապաղաղ դատարկաբանությունը։ Ուրբաթախոսն այդ վշտալից օրն անգամ հագել էր իր լորդական մոխրագույն բաճկոնը, որով հույս ուներ նսեմացնել անթերի արտաքինի տեր պարոն Գոնզագին։ Նրա սնափառությունն իր զորությամբ չէր զիջի նույնիսկ Թալիաթ բեյի հրամանին։

Ոսկանյանի բացականչությունը զայրացրեց մյուս մուխթարներին։ Նրանք էլ հանդես եկան իրենց պաշտոնակից եղբոր սեփականատիրական ոգով։ Սկսվեց ժամանակ սպանող անտեղի վեճ, թեև ոչ մեկն իր գեղջկական հաստագլխությամբ Բագրատյանի առաջարկած ճանապարհից ավելի լավ ելք գտնել չէր կարող։ Մտքերի փոխանակությունն այնքանով օգտակար եղավ, որ դժգոհությունները մեջտեղից վերացան։

Տեր-Հայկազունը դեռևս սպասում էր։ Շեշտակի հայացքով Գաբրիելին հասկացրեց, որ այդ մարդկանց պետք է որոշ զգուշությամբ համոզել, երբ ամեն ինչ ինքնին հասկանալի է։ Այնուհետև ընդհատեց դատարկ շաղակրատանքը.

— Մենք պետք է սարը բարձրանանք, ապրենք այնտեղ։ Շատ բան ինքնիրեն կարգի կգա. ի՞նչ կարիք կա նախապես վիճաբանելու։ Ավելի լավ կլիներ, եթե դուք, մուխթարներ, խորը մտածեիք ամենակարևորի մասին. արդյոք մեզ կհաջողվի՞ բավականաչափ պարեն ձեռք բերել, ձեռք բերածը քանի՞ շաբաթ կբավարարի, կա՞ հնարավորություն դրա պակասը լրացնելու։

Այստեղ Արամ Թովմասյանը նոր, չափազանց խելացի առաջարկություն արեց։ Տեր-Հայկազունի առաջ քաշած երեք հարցը առհասարակ այն կարևորագույն հարցերն են, որոնց հետ պետք է հաշվի նստել։ Ամեն ինչ կախված է դրանց պատասխանից։ Բայց այդ պատասխանը չի կարող տրվել այս խորհրդակցության ընթացքում։ Թողնենք, որ մուխթարներն իրենք հավաքվեն, քննեն խնդիրը, կազմեն սնունդ մատակարարելու ծրագիրը։ Նույնն են պահանջում նաև մյուս բոլոր խնդիրները։ Այլապես այստեղ գումարվող խորհուրդներն անշարժության կդատապարտվեն։ Գործն առաջ կգնա ոչ թե ճառերով ու վեճերով, այլ աշխատանքով։ Դրա համար էլ Արամ Թովմասյանն առաջարկեց, որ կյանքի յուրաքանչյուր ասպարեզ զատված լինի մյուսներից, ունենա իր առանձին կոմիտեն։ Ամեն կոմիտե պետք է ունենա մի ղեկավար, որին կնշանակի ինքը՝ Տեր-Հայկազունը։ Այնուհետև այդ ղեկավարները կհավաքվեն, կստեղծեն սահմանափակ խորհուրդ, որը և կկարգավորի բոլոր գործերը։ Կա հինգ ասպարեզ։ Առաջինը պաշտպանությունն է։ Երկրորդը իրավաբանական ասպարեզն է, որի միակ գիտակը Տեր-Հայկազունն է։ Ապա գալիս է ներքին կարգապահությունը, իսկ այնուհետև՝ առողջության ու

հիվանդության հետ առնչվող բոլոր հարցերը։ Ամենավերջինը տարբեր համայքների այն գործերն են, որ հանդես են գալիս միատեղ։ Երիտասարդ պատվելու այս առաջարկին խանդավառությամբ հավանություն տվեց Գաբրիելը։ Նույնիսկ բժիշկն առաջին անգամ արտահայտեց իր գոհունակությունը։ Ոչ ոք չառարկեց։ Տեր-Հայկազունը, որն Արամ Թովմասյանի պես տանել չէր կարողանում մեծ հավաքույթի համար անխուսափելի շաղակրատանքը, անհապաղ գործադրեց սահմանադրական սկզբունքը։ Ռազմական հրամանատար Գաբրիել Բագրատյանի օգնականներ նշանակվեցին Զաուշ Նուրհանը, ուսուցիչ Շատախյանը և երկու երիտասարդ տղա՝ Տեր-Հայկազունի ընտրությամբ։ Արամ Թովմասյանը ևս մտնում էր պաշտպանության կոմիտեի կազմի մեջ։ Նույն ձևով էլ Գաբրիելն էր կապված ներքին կարգապահության կոմիտեի հետ, որի ղեկավարը պատվելին էր։ Կոմիտեն պատասխանատու էր այն ամենի համար, ինչ առնչվում էր պարեն հայթայթելու, բաշխելու հետ։ Ուստի և կոմիտեի անդամներ նշանակվեցին նաև Թովմաս Քեբուսյանն ու մյուս մուխթարները։ Հատուկ պաշտոն ստացավ հայր Թովմասյանը՝ շինարար ձեռնարկատերը։ Նա պետք է ղեկավարեր ապաստարանների կառուցումը։ Հարկ չկա հիշատակելու, որ առողջապահության հանձնաժողովի մեջ էին մտնում բժիշկ Ալթունին և անտարբեր դեղագործը։

Այսպիսով, աշխատանքի բաշխումն ընդհանուր առմամբ լավ գլուխ եկավ։ Առաջիկա ժամերին առանձին խմբեր արդեն պետք է հնարավորության սահմաններում գործի անցնեին։ Լուսադեմին մեծ խորհրդի կարճատև նիստը բավական կլիներ արդյունքները վավերացնելու համար։ Մուխթարները տնից դուրս եկան, որ գյուղացիներին հարցափորձ անելով ճշտեն պաշարների քանակը։ Քիչ հետո դուրս էր գալու նաև Գաբրիելը։ Մուխթարների օգնությամբ ուզում էր ընտրել երիտասարդ, ուժեղ տղաների առաջին ջոկատը, վաղ առավոտյան բարձրանալ Հյուսիսային լեռնաթմբը, փորել պաշտպանական մեծ խրամատներ։ Մինչ այդ քարտեզի վրա Տեր-Հայկազունին, Արամ Թովմասյանին և մյուսներին բուռն խանդավառությամբ բացատրում էր պաշտպանության ծրագիրը։ Նույնիսկ Գրիգորն սկսեց հետաքրքրվել։ Մոտեցավ Գաբրիելին։ Ձեռքերը կրծքին խաչած, մեկուսի կանգնել էր միայն Հրանտ Ոսկանյանը։ Թխադեմ ուսուցիչը դարձյալ տառապում էր նվաստացման պատճառով։ Պաշտոնները բաշխելիս նրան ոչ մի ղեկավար դերի չարժանացրին, նույնիսկ երկրորդական պաշտոնի։ Այն ժամանակ, երբ նրա պաշտոնակից Շատախյանն ընտրվեց պաշտպանության կոմիտեի անդամ, Տեր-Հայ-

կազունը, որպես պատիժ, լռակյացին խոր ատելությամբ նշանակեց դրպրոցի կարգ ու կանոնի վերակացու։ Նա պետք է հսկեր, որ երեխաները անկիրթ արարքներ թույլ չտան։ Նախանձոտ վարդապետը վրեժ էր լուծում այն բանի համար, որ համայքները հարյուր ձայն էին տվել Հրանտ Ոսկանյանի՝ իրենց բանաստեղծի օգտին։ Ոսկանյանն արդեն մտադիր էր ամբարտավան սառնությամբ ժողովից հեռանալ և գնալ տուն, բայց հպարտությամբ գիտակցեց, որ իրեն ընտրող ժողովուրդը լիահույս իրեն է նայում, և որ վարդապետն իր ներկայությամբ ավելի պետք է նեղվի, քան բացակայությամբ։

Կեսգիշերն արդեն անցել էր, երբ հանկարծ ստիպված եղան խորհրդակցությունն ընդհատել։ Ինչպես հաճախ է պատահում նման դեպքերում, մոռացել էին, որ հողի տակ է թաղված այն, ինչից կախված էր ամբողջ ապագան։ Հիսուն մաուզեր և երկու հարյուր հիսուն «քարա» սիստեմի հրացան դեռևս մնում էին գերեղմանատան շիրմափոսերում։ Պետք է անհապաղ դուրս բերեին ռազմամթերքի հետ, գիշերով տեղափոխեին Դամլաջրը։ Եթե Գաբրիելը նույնիսկ հավատ ընծայեր Ալի Նազիֆի առածներին, դարձյալ հնարավոր էր, որ քսանչորս ժամվա ընթացքում հայտնվեին նոր զափթիեներ, միանգամից վրա տային, զենք որոնեին գյուղերում։ Վեց հոգուց կազմված մի ջոկատ անմիջապես շտապեց Յողոնօլուքի գերեղմանատունը, որը գյուղից դուրս էր, Հաբիբլիի ճանապարհի վրա։ Լապտերը ձեռքին՝ առջևից գնում էր տիրացուն։ Նրան հետևում էր Տեր-Հայկազունը Զաուշ Նուրհանի և Հաբիբլիի քահանայի ուղեկցությամբ։ Թափորը վերջանում էր երկու գերեղմանափոր երիտասարդներով։ Նուրհանի՝ զինագործ վարպետի, հոգատարության շնորհիվ զենքերը թաղված էին քարապատ փոսերի մեջ։ Հրացաններն ամփոփող դագաղները հերմետիկորեն փակ էին, լաթերի մեջ փաթաթված և հարդով ծածկված։ Այդ վիճակում հրացաններն սպասում էին իրենց հերոսական հարությանը։ Զաուշ Նուրհանը չորս շարաթ առաջ գիշերով ջահի լույսի տակ հապճեպ ստուգել էր, հավաստիացրել, որ ամեն ինչ լավ է։ Ոչ մի փակաղակ չէր ժանգոտվել։ Նվազադույն չափով չէր տուժել նաև ռազմամթերքը։

Այդ գիշերը տասնհինգ ծանր արկղն էլ մեկընդմիշտ դուրս բերվեցին փոսերից։ Աշխատանքը քրտնեցրեց բոլորին։ Քանի որ եկողները սակավաթիվ էին, Տեր-Հայկազունը դեն նետեց սքեմը, միացավ նրանց։ Շուտով գյուղերից բերին երկու ուժեղ, թավամազ ավանակ, բեռնեցին արկղները, և, վերջապես, լուսադեմին խորհրդավոր քարավանը Զաուշ

Նուրհանի գլխավորությամբ, Ազիր և Բիթիաս մեռյալ գյուղերի միջով ճանապարհ ընկավ դեպի հյուսիսային լեռանցքը։

Արևածագից միայն մի ժամ առաջ Տեր-Հայկազունը վերադարձավ Բագրատյանի ամառանոցը։ Այգին նման էր վիթխարի ռազմադաշտի, որտեղ ցաքուցրիվ սփռված էին մարդկային մարմիններ։ Ցողոնջուքցիները տուն չէին գնացել։ Տեր-Հայկազունը անշարժ քնածների արանքով անցավ, ինչպես զորավարը՝ զոհված ռազմիկների շարքերի միջով։

Առանձին ջոկատներ՝ Գաբրիելի խանդավառությամբ վարակված, կատարում էին իրենց առաջադրանքը։ Կյանքի և պայքարի պայմանները կոպիտ նախագծերի համաձայն արդեն վճռված էին։ Կովողների անունները արդեն ցուցակագրված էին, մոտավոր ճշտությամբ հաշվի էին առնված ձեռք բերված սննդամթերքների քանակն ու տեսակները։ Նախատեսված էր կառուցել թեթև տնակների մի փոքրիկ քաղաք, հիվանդանոց, կառավարական մի մեծ տաղավար։

Տեր-Հայկազունի վերադառնալուն պես մեծ խորհուրդ նորից գումարվեց։ Գաբրիելը հակիրճ խոսքերով ժողովրդական առաջնորդին հայտնեց իրենց կայացրած որոշումները։ Նրան հաջողվեց օրինականացնել իր գրեթե բոլոր մտահղացումները։ Այս բանում նրան եռանդուն աջակցություն ցույց տվեց Արամ Թովմասյանը։ Տեր-Հայկազունը որոշումները վավերացրեց կիսափակ աչքերով և մտացրիվ դեմքով։ Կարծես չէր հավատում, որ նոր կյանքը կարող է ամփոփվել որոշումների մեջ։ Մոմերն ու մարդիկ արդեն հանգչելու վրա էին, սակայն բոլորի աչքերն էլ ավելի շատ հուզմունք էին արտահայտում, քան հոգնածություն։ Երբ աստվածային օրն սկսեց նշուլվել, ամեն ինչ սուզվեց խոր լռության մեջ։ Մարդիկ նայում էին պատուհանից դուրս, քնքշածոր լույսին, վաղորդայնի բողբոջներին, որ թերթ առ թերթ բացվում էին պարզ ու տեսանելի։ Բոլորի աչքերի բիբերը տարօրինակ ձևով լայնացել էին։ Այն սենյակում, որտեղ անքուն անց էին կացրել ամբողջ գիշերը, ոչ մի ձայն չէր լսվում, բացի Ավագյանի ու գյուղական քարտուղարի մատիտների քըստքըստոցից։ Սրանք կարևորագույն որոշումների արձանագրությունն էին կազմում։

Երբ սենյակը ողողվեց արևի ոսկով, տանտերն ընդհատեց լուռ երազանքը.

— Համոզված եմ, որ այս գիշեր մենք կատարեցինք մեր պարտքը։ Ոչ մի բան մոռացված չէ...

— Ո՛չ։ Մի բան մոռացել ենք, այն էլ ամենակարևորը։

Տեր-Հայկազունն այս խոսքն ասաց առանց վեր կենալու։ Վարդապետի լիահունչ ձայնը ստիպեց ետ դառնալ նրանց, ովքեր արդեն վեր էին կացել։ Հովվապետի աչքերը լայնորեն բացվեցին։ Նա շեշտեց յուրաքանչյուր վանկը.

— Խորանը։

Եվ հանդարտ գործնականությամբ ավելացրեց, որ նոր գաղթականների կենտրոնում պետք է կանգնեցնել փայտաշեն մի խորան, իբրև աստծո երկրպագության և աղոթքի սրբավայր։

Ժամը հինգին, երբ արևն արդեն բավականաչափ բարձրացել էր, Գաբրիելը մտավ Ժուլիեթի սենյակը, որը գտնվում էր վերնահարկում։ Այնտեղ ահագին բազմություն էր հավաքվել։ Գիշերն անց էին կացրել տիկին Բագրատյանի հետ։ Ստեփանն անկողին չէր մտել, չնայած մայրը թախանձել էր, ստիպել։ Այժմ տղան բազմոցին պառկած՝ մուշ-մուշ քնած էր։ Ժուլիեթը վրան վերմակ էր գցել։ Ինքը թիկնել էր բաց պատուհանի գոգին, մեջքն արել մյուսների կողմը։ Այն տպավորությունն էր ստացվում, որ սենյակում նստած ամեն մարդ ինքն իր հետ է, իր խոհերով տարված։ Իսկուհին նստած էր քնած տղայի կողքին։ Օվսաննան՝ պատվելի Արամ Թովմասյանի կինը, լուսադեմին վախից ներս էր եկել, տեղավորվել բազկաթոռներից մեկի վրա և անթարթ նայում էր մի կետի։ Անթառամ Մայրիկը, որը գիշերային տառապանքներից ավելի քիչ էր հոգնել, քան մյուսները, բաց դռան մոտ նստած՝ ականջ էր դնում խորհրդակցության ձայներին։ Սենյակում կար նաև մի տղամարդ։ Պարոն Գոնզագ Մարիսը երկարատև գիշերն անց էր կացրել կանանց ընկերակցությամբ։ Թեև այժմ ոչ ոք նրան ուշադրության չէր արժանացնում, համենայն դեպս, միայն նա էր, որ ներանձնացած չէր թվում։ Գիշերային անքնությունից և իրադարձություններից անվթար մնացած ուղիղ սանրվածքը պսպղում էր։ Հոնքերի բութ անկյան տակ փայլող թավշյա ուշադիր, լարված աչքերը դեգերում էին կանանց արանքում։ Կարծես ուզում էր կարդալ քնաթաթախ, գունատ դեմքերին դրոշմված ամեն մի ցանկություն, որպեսզի անհապաղ կատարեր ասպետական պատրաստակամությամբ։

Գաբրիելը երկու քայլ արեց դեպի Ժուլիեթը, սակայն կանգ առավ, նայեց Գոնզագին.

— Դուք իրո՞ք ամերիկյան անձնագիր ունեք։

Երիտասարդ հույնի բերանի շուրջը կատակախառն արհամարհանքի ժպիտ սահեց.

— Անձնագի՞րս եք ուզում տեսնել, պարոն։ Գուցե ստուգեք նաև ժուռնալիստական վկայագի՞րս։

Եվ սրածայր, անփույթ մատները տարավ գրպանը։ Գաբրիելը դա չնկատեց։ Բռնել էր Ժուլիեթի ձեռքը։ Այդ ձեռքը ոչ միայն սառն էր, այլև անկենդան կամ, ավելի ճիշտ՝ մեռած։ Բայց, դրան հակառակ, ավելի կենսաթրթիռ էր աչքերի խաղը։ Այդ աչքերի մեջ կային հեռավորն ու մերձավորը, մակընթացություն ու տեղատվություն, ինչպես միշտ, երբ ընդհարվում էին։ Ռունգերը լարված էին։ Գաբրիելին լավ էր ծանոթ դիմադրության այդ նշանը։ Քսանչորս ժամվա ընթացքում նրա գլխին առաջին անգամ կախվեց հոգնածության ամպը։ Օրորվեց։ Ներսում դատարկություն էր, ամայություն։ Այր ու կին անթարթ, խորաղնին նայում էին միմյանց աչքերի մեջ։ Որտե՞ղ էր Գաբրիելի կինը։ Իր ափի մեջ Գաբրիելը դեռևս զգում էր Ժուլիեթի ձեռքը, իբրև հախճապակյա անծանոթ մի իր, բայց նախկին կինն այլևս չկար. կարծես օրեր շարունակ ճանապարհ էր անցել ծովով ու ցամաքով, իրենից հեռացել... Բայց այդ վիթխարի հեռավորությունը մի ակնթարթում սոսկալի չափեր ընդունեց ոչ միայն Գաբրիելի, այլև Ժուլիեթի աչքին։ Ամուսինը ևս կնոջ համար օտար էր, հեռու։ Ահավասիկ կնոջ սլացիկ, հոյակազմ մարմինը. այնքան մոտ, այնքան հարազատ։ Գաբրիելը հազար անգամ գրկել էր այդ մարմինը։ Նրա համբույրների հետքերն էին կրում այդ մարմնի բոլոր մասերը՝ երկար պարանոցը, ուսերը, կուրծքը, կոնքերը, ազդրերը, ծնկները, մինչև իսկ ոտքերի մատները։ Այդ մարմինն իր մեջ կրել էր Ստեփանին, տառապել Բագրատյանների արյան ապագայի համար։ Իսկ ա՞յժմ։ Գաբրիելն ի վիճակի չէր այդ մարմինը ճանաչելու։ Կորցրել էր դրա մերկությունը պատկերացնելու կարողությունը։ Այդպես է լինում, երբ մարդ մոռանում է իր սեփական անունը։ Բայց բանն այն չէր, թե դիմացը կանգնած էր մի ֆրանսուհի, որի հետ նա երբևէ համատեղ կյանք էր վարել։ Այդ կինը թշնամի էր՝ հակառակ կողմում կանգնած, բնաջնջման վճիռը կայացնող խորհրդի մասնակից, թեև հայ մանկան մայր։ Գաբրիելն զգաց, թե ինչպես կոկորդն ի վեր բարձրացավ ինչ-որ խոշոր, կլոր, աննկատելի մի բան, որը միայն վերջին վայրկյանին սկսեց նրան խեղդել, ապա փոխվեց հառաչանքի.

— Ո՛չ... անկարելի է... Ժուլիե՛թ...

Կինը մոայլված մի կողմի վրա թեքեց գլուխը.

— Ի՞նչն է անկարելի... Ի՞նչ ես ուզում ասել...

Գաբրիելն ակնապիշ նայում էր պատուհանից դուրս, դիտում գույների ցնծությունը։ Ոչինչ չէր կարողանում զանազանել։ Քանի որ ժամեր

շարունակ հայերեն ճառեր էր արտասանել, ֆրանսերենը գիտակցության մեջ վիրավորական չափերով ետ էր մղվել։ Սկսեց տարօրինակ առոգանությամբ թոթովել, որով կարծես ավելի սառեցրեց կնոջը.

— Կարծում եմ... Դու իրավունք ունես... Ես հավատում եմ... Դու չպետք է կործանվես... Ինչո՞ւ մնացիր... Հիշիր այն անգամվա մեր խոսակցությունը... Չեմ կարող թույլ տալ... Պետք է հեռանաս... Ստեփանի հետ...

Ժուլիեթը բառերն արտասանեց հատ-հատ, կարծես կշռելով.

— Շատ լավ եմ հիշում այդ խոսակցությունը... Որքան էլ զարմանալի թվա, ձեր ճակատագիրն ինձ էլ բաժին ընկավ... Այն ժամանակ ես այսպես ասացի...

Ժուլիեթը երբեք չէր ասել այդ բանը, բայց դա կարևոր չէր։ Նա կշտամբալից, խոժոռ հայացք նետեց Իսկուհու և Օվսաննայի կողմը։ Կարծես դրանք էին իր ձախորդության պատճառը։ Գաբրիելը երկու անգամ տրորեց աչքերը, կրկին դարձավ անցյալ գիշերվա մարդն ու ղեկավարը.

— Քեզ և Ստեփանի համար կա միայն մի ելք... Ո՛չ դյուրին է, ո՛չ էլ անվտանգ... Բայց դու, Ժուլիեթ, ուժեղ կամք ունես։

Ֆրանսուհու աչքերն ստացան սուր, զննող արտահայտություն։ Այդպես նայում են խրտնած կենդանիները, երբ մարդուց կամ որևէ այլ վտանգից ուզում են աղատվել հուժկու ոստյունով։ Այդ պահին Ժուլիեթի մեջ բույն դրած բոլոր բնազդները կուչ էին գալիս ցատկելու համար։ Բայց Գաբրիելը նոր էր սկսում խոսել, երբ Ժուլիեթի դեմքից անհետացավ լարված, դարանամուտ արտահայտությունը։ Նա կրկին դարձավ նույն անվստահ, վիրավորված և չարացած կինը։

— Գոնզագ Մարիսն այսօր-վաղը մեզանից կհեռանա,— հրամանատարի առարկություն չընդունող եղանակով ասաց Գաբրիելը։— Նա հյուսիս-ամերիկյան անձնագիր ունի։ Նման պայմաններում դա անգնահատելի երջանկություն է։ Մարիս, անշուշտ, չեք ղլանա և Ժուլիեթին ու Ստեփանին ապահով մի տեղ կհասցնեք։ Կվերցնեք որսորդական կառքը։ Հիմա ամառ է. հովտի ճանապարհները տանելի են։ Կտանեք նաև չորս ձի և պահեստային անիվներ։ Կառապանի հետ ձեզ կուղեկցի Քրիստոֆորը։ Ձեր շնորհիվ այդ երկուսն էլ կփրկվեն։ Զանդարանի և էլ Մաղարայի վրայով հինգ-վեց ժամ հետո կհասնեք Արսուս։ Իմ հաշվով, ճանապարհի մեծագույն մասը կանցնեք դանդաղ ընթացքով։ Արսուսի ծովեզերքից մինչև Ալեքսանդրեթ տասնհինգ անգլիական մղոն անցնելը չնչին բան է. ավաղոտ ափով ժամեր շարունակ կարող եք սլանալ վար-

գով։ Արսուսում հավանաբար զինվորական փոքրիկ պահակակետ կլինի։ Մարիսի համար դժվար չէ օնբաշուն իր անձնագրով վախեցնելը...

Ներս մտավ տնտեսվար Քրիստափորը տիրուհուց հրահանգներ ստանալու։ Գաբրիելը իսկույն դիմեց նրան.

— Քրիստափոր, հնարավո՞ր է տասը ժամում կառքով Արսուսից հասնել Ալեքսանդրեթ։

Քրիստափորն աչքերը չռեց.

— Պարոն, դա կախված է թուրքերից։

Բագրատյանի ձայնը խստացավ.

— Քրիստափո՛ր, ես քեզ ուրիշ բան եմ հարցնում։ Կրկնում եմ, կարո՞ղ ես տիկնոջը, որդուս և ամերիկացի այս պարոնին հասցնել Ալեքսանդրեթ։

Տնտեսվարի ճակատը քրտնեց։ (Նա թեև քառասուն տարեկան էր, բայց ծերունու արտաքին ուներ)։ Հայտնի չէր, թե ինչն է նրա հուզմունքի պատճառը՝ հանդուգն քայլ կատարելու երկյո՞ւղը, թե՞ սեփական փբրկության անակնկալ հեռանկարը։ Հայացքով մերթ Բագրատյանին էր ղընում, մերթ Գոնզագին։ Հետո դեմքը ցնցվեց, թերևս անզուսպ ուրախության նոպայից։ Բայց իսկույն զսպեց այդ հուզմունքը, հայտնի չէ՝ տանտիրոջ հանդեպ ունեցած պատկառանքի՞ց, թե՞ իրեն չմատնելու համար.

— Կարող եմ, պարոն։ Եթե պարոնն անձագիր ունի, զափթիեները մեզ ոչինչ չեն ասի....

Այս հավաստիացումից հետո Գաբրիելը տնտեսվարին ուղարկեց խոհանոց, որ բոլորի համար առատ նախաճաշ պատվիրի։ Ապա Մարիսին ավելի մանրամասնորեն բացատրեց իր մտադրությունը։ Ալեքսանդրեթում դժբախտաբար ամերիկյան հյուպատոս չկար։ Կային միայն գերմանական և ավստրո-հունգարական փոխհյուպատոսներ։ Վաղուց ի վեր այս երկու մարդկանց վերաբերյալ նա տեղեկություններ էր ձեռք բերել։ Գերմանացու անունը Հոֆման էր, ավստրիացու անունը՝ Բելֆանթե։ Երկուսն էլ եվրոպացի բարեմիտ վաճառականներ էին, որոնցից ամեն օժանդակություն կարելի էր հուսալ։ Բայց քանի որ խոսքը թուրքերի դաշնակիցներին էր վերաբերում, ապա անհրաժեշտ էր գործել մեծագույն զգուշությամբ.

— Որևէ պատմություն հնարեցեք... Ժուլիեթը շվեյցարուհի է։ Ճանապարհին դժբախտ պատահարի պատճառով կորցրել է անձնագիրը... Փոխհյուպատոսները տեղի զինվորական պարետի մոտ կբարեխոսեն, որպեսզի ձեզ երկաթուղային անձնագիր տրվեն։ Թուրքաք Քալեհի կողմերում մոտ օրերս երկաթուղին կբացվի... Հոֆմանը և Բելֆանթեն երևի

կիմանան՝ պարետը կաշառակե՞ր է, թե՞ ոչ... Այդ դեպքում ամեն ինչ լավ կլինի։

Փախուստի հետ կապված այս բոլոր մանրամասնությունները կըշռադատելու վրա Գաբրիելը անքուն գիշերներ էր լուսացրել, ծանրութեթև արել, մերթ հրաժարվել, մերթ կրկին հավանություն տվել։ Կային փախըստյան բազմաթիվ եղանակներ՝ մեկը դեպի Հալեպ, մյուսը դեպի Բեյրութ։ Բայց և այնպես կցկտուր նախադասությունները հնչում էին իբրև անմիջական հայտնագործություններ։ Ժուլիեթն ապշած նայում էր. կարծես ոչ մի բառ չէր հասկանում։

— Մարիս, պետք է մի լավ պատմություն հնարեք... Այնքան էլ դյուրին չէ հավաստիացնել, թե ճանապարհին իրոք դժբախտություն է պատահել, և անձնագիր է կորել... Բայց դա չէ գլխավորը... Գլխավորն այն է, որ դու, Ժուլիեթ, իբրև եվրոպացի կին, ոչ մի կասկած չներշնչես, թե մեզ հետ որևէ կապ ունես։ Հենց դրա մեջ է փրկությունը... Քեզ կհամարեն արկածախնդիր կին, կամ, վատթարագույն դեպքում, քաղաքական գործակալուհի... Այս վտանգը անպայման նկատի ունեցիր... Այնպես որ անախորժությունների կհանդիպես, գուցե նույնիսկ տանջվես... Բայց այդ տանջանքը մերի հետ համեմատած չնչին բան է... Շարունակ աչքի առաջ ունեցիր մեծ նպատակդ՝ հեռո՛ւ այստեղից։ Հեռո՛ւ աստծո անեծքը կրողներից, որոնց ճակատագիրը նաև իմ ճակատագիրն է։

Գաբրիելն այս խոսքերն ասաց ավելի բարձր, և նրա դեմքը կորցրեց իր կարկամած արտահայտությունը։ Ժուլիեթն իրանը փոքր-ինչ ետ թեքեց, կարծես այդ ակամա շարժումով նպատակ ուներ կատարելու ամուսնու ցանկությունը։ Գոնզագ Մարիսն անխոս մի քայլ արեց դեպի ամուսինները։ Դրանով կարծես ուզում էր ասել, թե ինքը պատրաստ է, բայց չէր կամենա կանխել վճիռը։ Մյուսները փորձում էին չափազանցնել իրենց անկեղծան մտամոլորությունը, որպեսզի մեղմացնեն ակամա վկաներ լինելու հանգամանքը։ Բայց Գաբրիելը վերագտավ իր ինքնատիրապետումը.

— Տարբեր համազգեստներ կրող զինվորականներ են երթևեկում... Ամեն տեղ պետք է կաշառեք երկաթուղային սպաներին... Դրանք մեծ մասամբ ծեր մարդիկ են, որոնք հին ձևով են ապրում և ոչ մի ընդհանուր բան չունեն Իթթիհադի հետ... Եթե մի անգամ արդեն գնացք նստեք, շատ բանի հասած կլինեք... Ջարշարանքը սոսկալի է... Բայց դեպի Ստամբուլ կատարած յուրաքանչյուր քայլ կբարելավի ձեր վիճակը... Եվ կհասնեք Ստամբուլ, եթե նույնիսկ շաբաթներ անցնեն... Ժուլիեթ, իս-

կույն կգնաս պարոն Մորգնթաուի մոտ... Հիշո՞ւմ ես նրան.... ամերիկյան դեսպանին...

Գաբրիելը գրպանից դուրս բերեց հանդիսավոր ձևով կնքած մի նամակ։ Դա նրա կտակն էր, որ պատրաստել էր շաբաթներ առաջ։ Ժուլիեթն այդ մասին ոչինչ չգիտեր։ Անխոս մեկնեց նամակը։ Բայց Ժուլիեթը դանդաղ ետ տարավ ձեռքերը, թաքցրեց մեջքի ետևում։ Գաբրիելը գլխի թեթև շարժումով ցույց տվեց պատուհանից երևացող Մուսա լեռը, որը վաղորդյան հզոր արևից կարծես հալչում էր.

— Պետք է բարձրանամ այնտեղ... Աշխատանքն սկսվում է... Հույս չունեմ, թե այսօր կվերադառնամ...

Նամակն առաջ պարզող ձեռքը ցած իջավ։ Այդ ի՞նչ արցունքներ են։ Ժուլիեթը չի՞ զսպում դրանք։ Գաբրիելը զարմացավ. «Ի՞նչ համար է լալիս, թե՞ ինձ համար»։ Արդյոք դա հրաժե՞շտ էր։ Գաբրիելն զգում էր կնոջ տվայտանքը, բայց չէր հասկանում։ Թուցիկ նայեց բոլոր լողողներին, որոնք դեռևս շունչներն իրենց քաշած սպասում էին, թե բանն ինչով կվերջանա։ Գաբրիելը կարոտեց մի քայլ հեռավորության վրա կանգնած Ժուլիեթին։ Խոսեց պարզ ու համոզիչ ձայնով, ինչպես մեկը, որն իր սիրած էակի առաջ իրենց բաժանող հեռավոր երկրից հեռախոսով բացում է սիրտը.

— Ժուլիեթ, գիտեի, որ այս բանը լինելու է... Բայց չգիտեի, որ այսպես է լինելու... մեր մեջ...

Պատասխանը հնչեց խուլ, սրտի խորքից, բարկացայտ, ոչ առանց հառաչանքի.

— Եվ դու իրո՞ք այդ ամենը պահանջում ես ինձանից։

Թե երբ էր Ստեփանն արթնացել, ինչ չափով էր ծնողների խոսակցությունը լսել, հայտնի չէր։ Միայն Իսկուհին հանկարծ վախեցած վեր կացավ։ Ժուլիեթը գիտեր, հաճախ էր զարմանում, որ ամուսնու և որդու զգացմունքներն իրար նկատմամբ որքան խորը, այնքան էլ զուսպ են։ Սովորաբար ասող-խոսող, թովան Ստեփանը հոր ներկայությամբ դառնում էր սուսիկ-փուսիկ։ Գաբրիելը նույնպես չափից ավելի զուսպ էր, լուրջ, սակավախոս, երբ որդու հետ էր։ Եվրոպայում անցկացրած երկարամյա կյանքից երկու Բագրատյանների հոգու մեջ նվազել, բայց չէր մարել ասիական կրակը։ (Յոթ գյուղում էլ որդիները, ինչ տարիքի էլ լինեին, ամեն առավոտ և երեկո համբուրում էին իրենց հայրերի ձեռքը։ Նույնիսկ կային ավանդությանը խստորեն հետևող ընտանիքներ, որտեղ ոչ թե կանայք, այլ ավագ որդին էր սպասարկում հորը։ Հայրն էլ իր կողմից ավելի քնքշորեն էր վերաբերվում ավագ որդուն։ Դա հնավանդ

սովորույթ էր։ Մեկը մյուսի մեջ տեսնում էր հավիտենականության մշուշապատ սանդուղքի մերձավոր աստիճանը)։ Այդ փոխհարաբերությունը Գաբրիելի և Ստեփանի միջև հաստատվել էր ո՛չ տարերայնորեն։ Կար ինչ-որ զսպվածություն, որը երկուսին կաշկանդում էր, իրարից զատում։ Գաբրիելն էլ նույն ձևով էր վերաբերվում իր հորը։ Նա էլ իրենց մտերմության մեջ շարունակ զգում էր հանդիսավոր, կաշկանդող լարվածություն։ Երբեք սիրտ չէր անում հորը քնքշանքի որևէ խոսք ասել կամ ողջագուրել։ Այդ պատճառով էլ Գաբրիելը ցնցվեց, երբ որդին ճչաց՝ իմանալով, որ իրենց գլխին կախված է բաժանման սպառնալիքը։ Տղան վերմակը դեն գցեց, նետվեց հոր կողմը, ամուր կառչեց նրանից.

— Ո՛չ, ո՛չ... հայրի՛կ... Մեզ մի՛ ուղարկիր։ Ուզում եմ քեզ մոտ մնալ... քեզ մոտ մնալ....

Ի՞նչ էին հորն ասում տղայի նշձև աչքերը։ Նա արդեն երեխա չէր, որի ապագան դժվար էր կանխորոշել, այլ իր կամքի և արյան մղումով ղեկավարվող լիարժեք մարդ, լիովին ձևավորված մի ճակատագիր, որն այլևս կարիք չուներ հունցվելու։ Այդ օրերին Ստեփանը մեծացել էր, հասունացել։ Սակայն մեր այս վկայությամբ չսպասվեց այն, ինչ ճառագայթում էին Ստեփանի աչքերը։ Գաբրիելը կիսաբերան մերժեց.

— Ստեփան, ինչ որ լինելու է, մանկական խաղ չէ...

Տղայի սարսափահար ճիչը վերածվեց անզիջում՝, կամակոր պահանջի.

— Ես ուզում եմ քեզ մոտ մնալ, հայրի՛կ... Ես ո՛չ մի տեղ չեմ գնա։

Ե՞ս, ե՞ս, ե՞ս։ Ժուլիեթը բորբոքվեց ցասումնալից խանդով։ Ա՜խ, այդ երկու հայը։ Ինչպե՞ս են իրարից կառչում։ Կարծես ինքը գոյություն չունի։ Չէ՞ որ երեխան հորը պատկանում է այնքան, որքան և մորը։

Ժուլիեթը չէր ուզում որդուն կորցնել։ Եթե նույն ակնթարթում նա չպաշտպաներ իր իրավունքները, ապա Ստեփանից կզրկվեր։ Վճռական, գրեթե կատաղի մի քայլ կատարեց դեպի հայրն ու որդին։ Բռնեց Ստեփանի ձեռքը, որ իր կողմը քաշի։ Գաբրիելը նոր միայն հասկացավ, որ Ժուլիեթը վերադարձավ։ «Եվ դու իրո՞ք այդ ամենը պահանջում ես ինձանից»։ Զայրույթով լի այդ հարցի մեջ դեռևս կար դարանակալ անորոշություն։ Բայց կնոջ վճռական քայլն ամեն ինչ դարձրեց պարզ ու որոշ։ Գաբրիելը գրկեց կնոջն ու որդուն.

— Հիսուս Քրիստո՞սը մեզ զորավիգ լինի։ Երևի այսպես ավելի լավ է։

Երբ Գաբրիելն իրեն ուզում էր այդ խոսքով հանգստացնել, նրան հանկարծ սարսափ տիրեց. կարծես օգնության կանչված փրկիչը նույն

վայրկյանին Ժուլիեթի ու Ստեփանի առաջ դուռը փակեց... Գլխավոր հրամանատարը ձեռքերն իջեցրեց, թեև գրկախառնությունից դեռ չէր սթափվել, չէր վերադարձել իրական աշխարհը։ Շուռ եկավ, գնաց։ Շեմքին կանգ առավ.

— Մարիս, ինքնին հասկանալի է, որ ճանապարհվելու համար Ձեզ կտրամադրեն իմ ձիերից մեկը։

Գոնզագը ժպտաց, բայց այս անգամ նրա ժպիտը խորհրդաստ էր, սևեռուն.

— Շնորհակալությամբ կընդունեի Ձեր մեծահոգի բարությունը, եթե այլ ցանկություն չունենայի։ Խնդրում եմ թույլ տաք մասնակից լինելու ձեր այն կյանքին, որով ապրելու եք վերևում, Մուսա լեռան բարձունքներում։ Դեղագործ Գրիգորի հետ արդեն խոսել եմ։ Իմ կողմից նա դիմել է վարդապետ Տեր-Հայկազունին և մերժողական պատասխան չի ստացել...

Գաբրիելը փոքր-ինչ մտածեց.

— Դուք երևի պարզ պատկերացնում եք, որ հետագայում Ձեր ամերիկյան սքանչելի անձնագիրը այլևս չի օգնի։

— Պարոն Բագրատյան, երկար ժամանակ է, ինչ ապրում եմ այստեղ։ Ինձ համար այնքան էլ դյուրին չէ ձեզ լքելը։ Դրանից բացի, իբրև Ցուռնալիստ, ես ունեմ նաև իմ երկրորդ նպատակը։ Նման հնարավորություն ոչ մի թղթակցի երկրորդ անգամ չի ներկայանա։

Գոնզագի էության մեջ կար մի բան, որ Բագրատյանի վրա թշնամական, անգամ քստմնելի տպավորություն էր թողնում։ Նա փորձեց պատրվակ գտնել, որպեսզի մերժի այդ մարդու ցանկությունը.

— Միայն թե հարց է. հետագայում հնարավորություն կունենա՞ք այդ հոդվածներն ուղարկելու։

Գոնզագը պատասխանեց ոչ միայն Բագրատյանին, այլև սենյակում գտնվող բոլոր մարդկանց.

— Կանխագուշակության իմ ձիրքով ես կյանքում լավ փորձառություն եմ ձեռք բերել։ Այդ նախազգացումն այժմ ինձ հաստատ հուշում է, որ ձեր գործը հաջող կգնա, պարոն Բագրատյան։ Դա, իհարկե, միայն նախազգացում է, բայց ես հավատ եմ ընծայում նման զգացումներին։

Մարիսի թավշյա լարված հայացքը Օվսաննայից անցավ Իսկուհուն, Իսկուհուց՝ Ժուլիեթին և վերջինիս դեմքին էլ մնաց գամված։ Կարծես նրա աչքերը տիկին Բագրատյանին հարցնում էին, թե արդյոք իր հիմնավորումը բավականաչափ համոզի՞չ է։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Հագերի թաղումը

Գաբրիելը երկու ցերեկ և երկու գիշեր մնաց Դամլաջըքի լանջին։ Դեռևս անցյալ երեկո Ժուլիեթին լուր էր ուղարկել, որ իրեն չսպասեն։ Բազմաթիվ պատճառներով նա ստիպված էր երկար մնալ լեռան բարձունքին։

Դամլաջըքը կարծես միանգամից փոխվեց։ Չնայած իր վայրի տեսարաններին, դա այլևս այն հովվերգական լեռը չէր, որ Գաբրիելը շարունակ տեսնում էր իր երազային դեգերումների, ապա ռազմագիտական շրջագայությունների ժամանակ։ Լեռն առաջին անգամ ցույց էր տալիս իր իսկական, անսքող դեմքը։ Աշխարհում ոչ միայն մարդը, այլև ամեն ինչ իր իսկական դեմքը ցույց է տալիս միայն այն դեպքում, երբ հետամուտ ես լինում։ Նույնն էր և Դամլաջըքը։ Դրախտային ցոլքը՝ աղբյուրների կարկաչյունով կենսավորող առանձնության ժպիտը, չքացել էր նրա կնճռոտված, դաժանացած դեմքից։

Բագրատյանի ընտրած պաշտպանական տարածությունը ընդգրկում էր մի քանի քառակուսի կիլոմետր։ Այդ սարահարթը մինչև տափարակ քաղաքաձորը բլուրների ու հովիտների, գագաթների ու խորխորատների դժվարանց վերելք ու վայրէջք էր։ Դա առանձնապես զգացվում էր այն ժամանակ, երբ օրվա ընթացքում բազմիցս ստիպված էին լինում հետազոտել տարբեր կետեր։ Գաբրիելն ուզում էր խուսափել հովիտն իջնելու համար ավելորդ ուժ և ժամանակ վատնելուց։ Համենայն դեպս նա իր կյանքում ֆիզիկական աշխատանք կատարելու նման հակում երբեք չէր զգացել։ Ամբողջ եռանդով աշխատանքի լծված մարմինն առաջին անգամ էր ցույց տալիս, թե ինքը ինչի է ընդունակ։ Բալկանյան ռազմաճակատում անցկացրած շաբաթները սրա համեմատությամբ դժգույն էին, տարտամ։ Այն ժամանակ զինվորը մահվան սպառնալիքի տակ գտնվող մարդկային տիղմ էր, որը բնական ինչ-որ զորության շնորհիվ կամ առաջ էր մղվում, կամ, դարձյալ մահվան սպառնալիքի տակ, առանց սե-

փական թելադրանքի ետ շպրտվում։ Վերջին տարիներին Գաբրիելը հաճախ էր տառապում սրտի թուլությունից և ստամոքսային ցավերից։ Քնքշացած մարմնի այս նոպաները միանգամից անհետ կորան։ Այլևս չէր զգում, թե սիրտ և ստամոքս ունի։ Չէր էլ նկատում, որ տակը և վրան միայն մի վերմակ գցելով ու երեք ժամ քնելով միանգամայն բավարարվում է, որ մի կտոր հաց ու մի քիչ պահածո ուտելով՝ իրեն ամբողջ օրը կուշտ էր զգում։ Եթե այս մասին շատ էլ չէր մտածում, ապա ուժի այս գիտակցումը Գաբրիելին հսկայակում էր երջանիկ հպարտությամբ։ Դա այն հպարտությունն էր, որ մեր միսն ու արյունը միշտ այն ժամանակ է բոցավառվում, երբ ոգին մեր մարմնի համար պարտություն է նախապատրաստում։

Բայց առավել կարևոր դուրս եկավ մի այլ հանգամանք։ Ռազմիկների մեծագույն մասն արդեն դիրքավորվել էր լեռան վրա։ Նրանց օգնում էին նաև մի խումբ տոկուն կանայք և անչափահաս տղաներ։ Մյուս բոլոր մարդիկ, շրջահայաց զգուշությունից ելնելով, մնացել էին հովտում։ Պետք է ստեղծվեր այն տպավորությունը, թե շարունակվում է առօրյա խաղաղ կյանքը, այլապես թուրքերն իսկույն կառնեին գյուղերի ամայացման հոտը։ Դրանից բացի, գյուղացիներին հանձնարարված էր ամեն գիշեր, գաղտնի, հնարավորության սահմաններում ավելի շատ պարենամթերք բարձրացնել լեռը։ Ամեն ինչ, իհարկե, հնարավոր չէր տեղափոխել ավանակներով։ Օրինակ, հայր Թովմասյանի արհեստանոցից նրա օգնականները ուսներին դրած էին բարձրացնում երկար տախտակներ ու գերաններ։ Դրանցով կառուցելու էին խորան, կառավարական տաղավար, հիվանդանոց։ Գաբրիելի հետ Դամլաջրքի վրա մնացել էին ավելի երիտասարդ ավագները, ամենից առաջ՝ Արամ Թովմասյանն ու ուսուցիչները։ Մեծ խորհուրդը Տեր-Հայկազունի գլխավորությամբ հովտում վարում էր իր գործերը։

Այդ օրերին լեռան բարձունքին բանակած մարդկանց թիվը հասնում էր մոտ հինգ հարյուրի։ Այս ընտիր և հարվածային զորախմբի մեջ անհրաժեշտ էր ծայրահեղորեն բարձրացնել ոչ միայն աշխատանքային ավյունը, այլև պայքարի խանդավառ ոգին, որն արդեն բոցկլտում էր մարդկանց սրտում, ավելի ու ավելի բորբոքվում։ Երբ իրիկնադեմին հոգնած ու ջարդված հավաքվում էին Քաղաքաձորում վառվող խարույկի շուրջը, պատվելի Արամը երկար-բարակ խոսում էր, գրեթե քարոզի չդիմելով, լուսաբանում ռազմական նախաձեռնության իմաստը։ Փառաբանում էր ինքնապաշտպանության աստվածային իրավունքը, խոսում հայ ժողովրդի անցած ճանապարհի մասին, որն անհիշելի ժամանակներից

եղել է անընդմեջելիորեն արյունոտ, խոսում էր իրենց հանդգնության արժանիքների մասին, որը կարող էր օրինակ ծառայել, ոտքի հանել բովանդակ ազգը, փրկության դուռ բացել։ Ապա նկարագրում էր տարագրության մանրամասնությունները, իր սեփական աչքով տեսածը, ինչպես նաև ուրիշներից լսածը։ Տարագրությունը ներկայացնում էր որպես հայաբնակ հովտի հինգ հազար հոգու անխուսափելի վախճանը, վճռականորեն փարատում ամեն մի տարակուսանք։ Բոլորին միավորող վսեմ գործը ավարտվելու էր հաղթանակով ու ազատությամբ։ Թե ինչպես պետք է նվաճեին այդ հաղթանակն ու ազատությունը, երբեք չէր ասում։ Ոչ ոք չէր էլ հարցնում։ Երիտասարդության ոգին բորբոքելու համար հարկ չկար պատկերացնելու, թե ի՞նչ է թաքնված այդ մեծադղորդ խոսքերի ետևում։ Այնքանն էլ բավական էր, որ նման խոսքեր հնչեին։ Երբեմն պատվելու ջանքերի մի մասն իր վրա էր վերցնում Գաբրիելը։ Ի հակադրություն Արամ Թովմասյանի, նա խուսափում էր վերամբարձ խոսքերից, հիշեցնում, որ չի կարելի ապարդյուն վատնել ո՞չ մի վայրկյան, որ պետք է խնայել հացի յուրաքանչյուր պատառը, սրտի ամեն մի տրոփյունը նվիրաբերել նպատակին։ Ավելի շատ պետք է մտածեին ոչ թե անխուսափելի դժբախտության, այլ այն անպատվության մասին, որով թուրքական կառավարությունն արատավորեց հայ ժողովրդի անունը։

— Եթե գեթ մի անգամ մեզ հաջողվի թուրքերին սարից ցած շպրտել, ապա ոչ միայն լուծած կլինենք անպատվության վրեժը, այլ մեկընդմիշտ խայտառակած ու ստորացրած կլինենք դրանց։ Չէ՞ որ մենք թույլերն ենք, իսկ իրենք՝ ուժեղները։ Երևակայում են, թե մենք առևտրականներ ենք, իսկ իրենք՝ ռազմիկներ։ Եթե մի անգամ ջարդենք, դրանց գոռոզամտությունը կթունավորենք այնպես, որ երբեք ուշքի չեն գա։

Ինչ էլ իրողության մասին մտածեին, միևնույն է, Գաբրիելն ու Արամը շարունակ խոսում էին դիմադրության փառավոր ելքից, երիտասարդության պատրաստակամ հոգիների մեջ արծարծում մոլեռանդ հավատ, մոլեռանդ կարգապահություն, որը պակաս կարևոր չէր։

Եթե Գաբրիելի մտքով քիչ էր անցնում, թե իր մարմինը պողպատյա տոկունություն ունի, ապա ավելի քիչ էր պատկերացնում, որ ինքը կազմակերպչական ձիրք ունի։ Մինչ այդ նրա ապրած կյանքի աշխարհում «գործնական ունակությունը» նույնն էր, ինչ որ, ասենք, տափակ, շահադիտական մտածողությունը։ Այդ պատճառով էլ նա միշտ հաջողակ պատվախնդրությամբ հարում էր այն ամենին, ինչ գործնական չէր։ Բայց այժմ, նախապատրաստական աշխատանքի շնորհիվ, նրան հաջողվեց առաջին իսկ ժամերին կատարել զորքի խելացի տեղաբաշխում,

ընտրել հարմար մարդիկ, որոնց հետագայում հեշտությամբ կարող էին միանալ հովտից եկածները։ Երեք հիմնական խումբ կազմեց՝ առաջին էշելոնը, պահեստային մեծաթիվ մի գունդ և տասներեքից-տասնհինգ տարեկան պատանիների զորախումբը, որը կռվին մասնակցելու էր միայն ծայրահեղ դեպքերում, երբ կորուստները մեծ լինեին կամ ռազմաճակատը ճեղքվեր։ Իսկ առհասարակ պետք է կատարեին հետախույզների, բանբերների և սուրհանդակների դեր։ Առաջին գծի վրա պետք է լինեին ութ հարյուր վաթսուն հոգի։ Բացառությամբ տկարների, անաշխատունակների և կարևոր մասնագիտության տեր մարդկանց, տասնվեցից-վաթսուն տարեկան բոլոր տղամարդիկ մտնում էին դրանց կազմի մեջ։ Պահեստային զորախմբի մեջ պետք է մտնեին ոչ միայն մնացած ծերունիները, այլև աշխատունակ տղամարդիկ, ինչպես նաև մեծ քանակությամբ կանայք ու աղջիկներ։ Այնպես որ այս երկրորդ զորախմբի մեջ մտնողների թիվը տատանվում էր հազարի և հազար հարյուրի միջև։ Երրորդ զորախումբը՝ պատանիների հետախուզական ջոկատը, Դամլաջրքի «հեծելազորը», բաղկացած էր ավելի քան երեք հարյուր հոգուց։

Երկրորդ օրվա առավոտյան Գաբրիելն իր համհարզ Ավագյանին ուղարկեց ամառանոց՝ Ստեփանին բերելու։ Հույս չուներ, թե Ժուլիեթն առանց այլևայլության թույլ կտար այդ բանը։ Սակայն ճիշտ ժամանակին ուսանողը վերադարձավ երջանկությունից ճառագայթող պատանու հետ։ Հայրը որդուն անմիջապես ուղարկեց պատանեկան ջոկատը։

Բուն զորքի ութ հարյուր վաթսուն հոգուց միայն երեք հարյուրը կարող էին զինվել հետևակային հրաձգենով։ Դժբախտաբար մեծ մասն ստիպված եղավ բավարարվել որսորդական և ռոմանտիկ ժամանակներից մնացած հրացաններով։ Իսկ այդպիսիք գրեթե ամեն տուն ուներ։ Գաբրիելը պատվիրեց բաժանել իր եղբոր արկղում եղած բոլոր պիտանի զենքերը։

Ուղղակի բարեբախտություն էր, որ ոչ միայն թուրքական բանակում ծառայողները, այլև բոլոր տղամարդիկ գիտեին զենք գործածել։ Համենայն դեպս, հիմնական զորքի սպառազինությունը ողբալի էր։ Հետևակային չորս կանոնավոր դասակ, նույնիսկ առանց գնդացրի, նրանց կարող էր նեղը լծել։ Բայց, իհարկե, հայերի զորախումբը դիմազուրկ զանգված չէր։ Ըստ Գաբրիելի ռազմական ծրագրի, զինվորները բաժանված էին հաստատուն միավորումների, որոնց մեջ մտնում էին տասական մարդ։ Դրանք, այսպես ասած, փոքրաթիվ գումարտակներ էին, որ կարող էին ինքնուրույն կերպով շարժվել ու գործել։ Ստորաբաժանում կատարելիս Գաբրիելը հաշվի էր առնում նաև այն, որ այս տասնյակներից յուրաքանչյուրը կազմված լինի համագյուղացիներից, հնարավորության դեպքում՝ անգամ ազգականներից։ Մտերմությունը նրանց ավելի կհամախմբեր։ Հրամանատարների հարցն արդեն շատ էր դժվար, քանի որ յուրաքանչյուր միավորման տասը հոգուց մեկին պետք է հանձնարարվեր ղեկավարությունը։ Հրամանատարների կարիք էին զգում թե՛ փոքր, թե՛ խոշոր ստորաբաժանումները։ Գաբրիելը հրամանատարներ նշանակում էր տարբեր հասակի պատկանող մարդկանց, որոնք բանակում երբևէ ծառայել էին։ Աննման Զաուշ Նուրհանը միաժամանակ ստանձնեց զորքի գեներալի, զինանոցի վերակացուի, բերդաշինարար ինժեների և զինամարդիչի պարտականությունները։ Փշալարեր հիշեցնող ալեխառն ցից բեղերի ծայրերը դողդողում էին, դարչնագույն բարակ վզի վրա վեր ու վար էր ոստոստում խոշոր ադամախնձորը։ Տարագրության համար Նուրհանը կարծես երախտապարտ էր թուրքերին. այնքան բուռն եռանդով էր կպել ռազմական գործին, որից երկար ժամանակ կտրված էր։ Աշխատանքից ազատ մարտիկներին ժամերով վարժեցնում էր, հանգստից զրկելով թե՛ նրանց, թե՛ իրեն։ Խելքին փչել էր, թե հայկական սուր և ճկուն մտքի շնորհիվ մի քանի օրում կարելի է յուրացնել թուրքական շարային վարժությունների կանոնագիրքը, որը նախատեսված էր մեկ տարվա ուսուցման համար։ Մեծ մասամբ սահմանափակվում էր զինավարժության, շարքերի բացազատման, «պառկիր», «վեր կաց»-ի, թաքստոց գտնելու, արագ խրամատավորվելու, տեղանքից օգտվելու, հարձակում գործելու կանոններով։ Մեծ տհաճությամբ իմացավ, որ Բագրատյանն արգելում է հրաձգային վարժությունները։ Պատճառը, իհարկե, միայն ռազմամթերքի խնայողությունը չէր։ Զնայած տարիքն առած մարդ էր, ամբողջ թափով սլանում էր մի խմբից մյուսը, առանձին-առանձին խրատում տասնապետներին, քրթմնջում, հայհոյում զորանոցային ամենակեղտոտ թուրքերենով։ Սրով, ատրճանակով, հրացանով, փամփշտակալով մինչև ատամները զինվել էր, կախել նաև բանակից թոցրած հետևակային շեփորը, որի կակազահունչ ազդանշաններով ամեն վայրկյան ոգեշնչում էր իր զորքին։ Բագրատյանը Հյուսիսային լեռնաթամբից ահագին տարածություն կտրեց, վազեվազ եկավ վարժությունների հրապարակը՝ խստորեն արգելելու այդ խելացնոր փողահարությունը։ Մի՞թե հարկ կար, ի լուր զափթիեների և մահմեդական գյուղերի, որոտաձայն ազդարարելու, որ Դամլաջրքի բարձունքներում զինավարժություններ են կատարվում։

Հենց առաջին օրը Մուսա լեռան դասալիքները միացան մարտիկներին։ Երկու օրվա ընթացքում բավական պատկառելի թիվ կազմեցին.

դարձան վաթսուն հոգի։ Նուրհանի շեփորը տղաներին հրապուրել, բերել էր մոտակա լեռներից՝ Ահմեր դաղից, լերկ Ջեբել էլ Աքրայից։ Գաբրիելի համար դրանց գալուստը և՛ ցանկալի էր, և՛ անցանկալի, չնայած բոլորն էլ լավ էին զինված։ Անկասկած, սրտաճմլիկ տեսք ունեցող այդ մարդկանց մեջ կային ոչ միայն սովորական դասալիքներ, դաժան վարմունքի ղոհեր, աղատամիտներ կամ վախկոտ զինվորներ, այլև մութ անձնավորություններ, որոնք զինվորական դատավորից ավելի շատ սոսկում էին քաղաքացիական դատավորից։ Մի խոսքով՝ թոկից փախածներ, որոնք շինծու կերպով պաճուճվում էին դասալիքային արժանապատվությամբ, մինչդեռ ըստ էության ավազակներ էին և ոչ թե Անթաքիեի, Ալեքսանդրեթի կամ Հալեպի զորանոցներից էին մաղապուրծ եղել, այլ, թերևս, Փայասի բանտից։ Թե, իրոք, ինչ կոչման տեր էին այս վաթսուն նորեկները, չափազանց դժվար էր ենթադրել, քանի որ բոլորն էլ միանման վախվորած, խարդախ, հալից ընկած մարդկանց արտաքին ունեին։ Դա միանգամայն բնական էր, քանի որ բանտից փախածները ստիպված էին գիշեր-ցերեկ խուսափել ոստիկանության հետապնդումներից։ Գիշերվա ժամը երկուսից կամ երեքից շուտ երբեք չէին համարձակվում ոտք դնել գյուղերը, մի կտոր հաց մուրալ իրենց սարսափահար հայրենակիցներից։ Դասալիքների սովալլուկ ոսկորները (մարմինների մասին խոսք լինել չէր կարող) ամփոփված էին ցնցոտիների վերածված զինվորական գունաթափ համազգեստների մեջ։ Բեղ-մորուքների ոչլոտ մացառուտները, որ մի կերպ կարելի էր դեմքերի տեղ ընդունել, արևից խանձված էին, կեղտի մեջ կորած։ Նրանց հայկական աչքերը ոչ միայն համազգային մեծ վիշտ էին ճառագայթում, այլև, ի լրումն դրա, չարաշար տառապանք այն հալածվածների, որոնք գիշերները լուսացնում էին թաքստոցներում և դանդաղ իջնում դեպի անասնացում։ Այդ խաժամուժը կարծես մարդկության մերժված բեկորն էր։ Թերևս նույնը չէր կարելի ասել դասալիք Սարգիս Կիլիկյանի մասին, չնայած նա մյուսներից ավելի անողորմ ձևով էր զրկվել մարդկային ապահով գոյությունից։ Գաբրիելն առաջին իսկ հայացքից իմացավ, որ Երեք վրանի հրապարակում տեսած գիշերային ուրվականը հենց նա էր։

Անմիջապես չէր կարող լուծվել այն հարցը, թե այդ վաթսուն անցանկալի մարդկանց ինչպես պետք է բաժանեին տառնյակների վրա՝ առանց վնասելու կարգապահությունը։ Առայժմ նրանք, չնայած իրենց զարմացական ծամածռություններին, հանձնվեցին Զաուշ Նուրհանի երկաթյա տնօրինությանը։ Այստեղ հաց ու ջուր վաստակելու համար

ստիպված էին կատարել ռազմական նույն քրտնեցնող գործը, որից փախել էին։

Բայց աշխատանքային խանդավառության այդ օրերի ամենաէական խնդիրը ոչ թե Զաուշ Նուրհանի ղեկավարած զինավարժություններն էին, այլ խրամատներ փորելն ու ամրություններ պատրաստելը։ Ավագյանի քարտեզի վրա Գաբրիելի նշանակած կապույտ և դարչնագույն գծերն այժմ պետք է վերածվեին իրականության։

Քանի որ Դամլաջրքում ավելի շատ աշխատող ձեռքեր կային, քան բահեր, բլունգներ ու լինգեր, ապա գործը կատարվում էր երկու հերթով. Գաբրիելն աշխատավորական բանակ էր համարում պահեստայիններին, այսինքն՝ տղամարդկանց և կանանց, այն հազար հարյուր հոգուն, որոնք իրենց դիրքերում պետք է լինեին միայն ճակատամարտի ժամանակ, իսկ առհասարակ կատարելու էին իրենց արհեստի և ընդհանուր ծառայության հետ առնչված գործերը։ Բայց պահեստային համարվողները դեռևս ներքևում էին, գյուղերում։

Գաբրիելի կարծիքով կար հարձակման տասներեք կետ, որտեղից Դամլաջրքին կարող էր վտանգ սպառնալ։ Ամենախոցելի տեղը գտնվում էր Հյուսիսում, որտեղ Հյուսիսային լեռնաթամբի նեղ հատվածով Դամլաջրքը բաժանվում էր Մուսա լեռան մյուս, դեպի Բեյլան ձգվող մասերից։ Երկրորդ, թեև նվազ վտանգավոր տեղը Յողոնօլուքի վերևում ընկած Կաղնուտի լայն ելքն էր։ Սրան փոքր-ինչ նման էին լեռան արևմտյան եզրին ընկած վտանգավոր գոտիները, հատկապես այնտեղ, որտեղ գահավեժ լանջերի թեքությունը մեղմանում էր, և որտեղ հովիվներն ու հոտերը արահետներ էին բացել։ Բացառություն էր կազմում հարավում վեր խոյացող ժայռակերտ հզոր աշտարակը, որը քարտեզի վրա կոչվում էր Հարավաբերդ։ Դա իշխում էր Որոնտեսի հարթավայրից խորդուբորդ սանդուղքների ու դարատափերի ձևով մինչև բարձունքները ելնող երկարաձիգ քարակարկառների վրա։ Ներքևում, հարթավայրում, տարածվում էր մարդկային մի վիթխարի, կործանված աշխարհ՝ Սելևկիայի հռոմեական ավերակները, որոնց տեղում դաշտեր էին գոյացել։ Եվ լեռն իր հարավային թևի կիսաշրջան կազմող սանդղաձև ժայռակուլտերով կարծես կբկնել էր կործանված քաղաքակրթության քարացած ծովի տեսարանը։

Սամվել Ավագյանի հսկողությամբ Գաբրիելի գծագրած ձևով ահագին քարաբեկորներից բարձր պատեր շարեցին ոչ միայն ժայռե աշտարակի վրա, այլև աջ ու ձախ կողմերում։ Ուսանողը զարմանում էր, որ պատսպարվելու համար այդքան հաստատուն պատեր են կանգնեցնում։

Նրա ռազմական երևակայությունն առաջին օրերին դեռևս շատ անճարակ էր, և նա միայն երբեմն էր կռահում Գաբրիելի մտադրությունները։

Ամենածանր աշխատանքը, անշուշտ, կատարվելու էր հյուսիսում՝ պաշտպանության ամենախոցելի տեղում։ Գաբրիելն իր ձեռքով ցցեր էր տնկել խրամատի երկարությամբ, որն իր բոլոր գոգավորություններով մի քանի հարյուր մետր տարածություն էր գրավում։ Արևմուտքում խրամատը դեմ էր առնում ծովակողմյան ժայռակույտին, իսկ սա իր պատնեշներով, ստորգետնյա անցքերով, հողաթմբերով ու քարանձավներով լաբիրինթոսային մի ամրոց էր գոյացրել։ Արևելյան կողմից Բագրատյանը խրամատն ապահովել էր առաջապահ պահակազորով և կտրատված ծառերի ցանկապատով։ Բարեբախտություն էր և այն, որ այստեղ գետնի մակերեսը մեծ մասամբ փափուկ հող էր։ Բայց և այնպես բահերը հաճախ էին դեմ առնում խոշոր կրաքարերի ու դոլոմիտների։ Դա բավականաչափ կաշկանդում էր աշխատանքի առաջընթացը։ Դժվար էր հուսալ, թե խրամատի գործը գլուխ կգա մի չորս օրում։ Չլուտ տղամարդիկ և գեղջկուհիներից մի քանիսը հող էին փորում, իսկ պատանիները մանգաղներով ու դանակներով որոշակի տեղերում կտրատում էին խիտ թփերն ու մացառները, մաքրում կրակադաշտը։

Բագրատյանն ամբողջ օրը չէր հեռանում աշխատողներից։ Շարունակ վազում էր Լեռնաթամբի բարձունքը, կանգնում կոճղերին, տարբեր տեղերից դիտում խրամատը։ Հրամայել էր դուրս բերված հողը հավասարեցնել գետնին։ Ուշադիր հետևում էր, որ ջրի լայն առուն բոլորովին քողարկվեր, իսկ խիտ թփուտներով ծածկված կողքի լեռնալանջն այն տպավորությունը թողներ, թե դրան մարդկային ձեռք չի դիպել։ Եթե նկատի ունենանք, որ օժանդակ խրամատից բացի, մոտերքում ևս տասներկու փոքր դիրք էր փորվելու, ապա գործիմաց ամեն մարդ կզարմանար, թե ինչ նպատակ է հետապնդում Բագրատյանը համառ միակողմանիությամբ։

Պատվելի Արամ Թովմասյանին ևս զարմացնում էր գլխավոր հրամանատարի կատարած աշխատանքային յուրօրինակ բաժանումը։ Նա, իբրև ներքին կարգապահության տնօրեն, նկատի էր ունեցել, որ միաժամանակ սկսելու են նաև ապաստարանների կառուցումը։ Այնինչ դեռևս չէին ձեռնարկել ո՛չ ծրագրած հիվանդանոցին, ո՛չ կառավարական տաղավարին, ո՛չ էլ ժողովրդի համար նախատեսված ժամանակավոր խրճիթներին։ Միայն Քաղաքաձորում խորանի վրա էին աշխատում տիրացուն, գերեզմանափորը և մի քանի բարեպաշտ մարդիկ։ Տոսախի ճյուղերից հյուսված խորանի բարձր պատի շրջանակը դեռևս դրված էր աղո-

թարանի ետևում։ Արամ Թովմասյանի կրոնական զգացմունքներին ավելի մոտ կլիներ, եթե բնական խորան դարձնեին բաղեղապատ, սեղանաձև բազմաթիվ ժայռերից մեկը։ Բայց Տեր-Հայկազունը նման ռոմանտիկայի սիրահար չէր։ Խորանը պատրաստող գյուղական քահանան Արամ Թովմասյանի առաջարկության վրա միայն ուսերը վեր քաշեց։ Պատվելին այլևս ոչինչ չասաց. իբրև բողոքական քարոզիչ, նա պետք է զգուշորեն վարվեր լուսավորչական եկեղեցու ներկայացուցիչների հետ։

Երեկո էր։ Գաբրիելը հոգնած պառկած էր գետնին և անթարթ նայում էր անավարտ խորանին, որը նրա աչքին չափից ավելի խոշոր էր թվում։ Կիսաքուն վիճակում զգաց, որ այդպես սևեռուն նայում են նաև իրեն։ Սարգիս Կիլիկյանն էր՝ դասալիքը։ Երևի Գաբրիելից ավելի երիտասարդ լիներ, հազիվ երեսուն տարեկան, բայց հալումաշ եղած հիսնամյա տղամարդու սուր, թոշնած դիմագծեր ուներ։ Մեռելային, հեգնող դեմքի շուրջն ամուր ձգված բարակ մաշկը գունատ էր, թեև արևախանձ։ Այտերը կարծես փոս էին ընկել ոչ այնքան տառապանքի, որքան մոլեռանդորեն վատնած կյանքի հետևանքով։ Աշխարհից հագեցել էր, հագեցել մինչև կոկորդը — ահա թե ինչ էր գրված այդ դեմքին։ Մյուս դասալիքների հագուստի պես նրա համազգեստը ևս վերածվել էր ցնցոտիների, բայց թողնում էր խաթարված վայելչության կամ վայելուչ խաթարման տպավորություն։ Դրա հիմնական պատճառն այն էր, որ նա իր գործակիցների մեջ միակ մաքուր սափրված մարդն էր։

Հողի սառնությունն զգալով՝ Գաբրիելը վեր կացավ։ Կիլիկյանին սիգարիկ մեկնեց։ Սա անխոս վերցրեց, գրպանից հանեց բարբարոսական ժամանակներից մնացած մի հրահան, կայծեր թոցրեց, մինչև բազմաթիվ անհաջող փորձերից հետո վերջապես խծուծը բռնկվեց, ապա սկսեց ծխել այնպես մեծամտորեն, կարծես ամեն օր Բագրատյանի տված այդ թանկարժեք ծխախոտն էր գործածում։ Այժմ երկուսն էլ լուռ նայում էին իրար, ընդ որում Բագրատյանի տհաճությունը հետզհետե աճում էր։ Ռուսն իր մեռած, բայց և արհամարհանքով լի հայացքը չէր հեռացնում Բագրատյանի. սպիտակ ձեռքերից։ Սա այլևս չհամբերեց, տիրական ձայնով հարցրեց.

— Հը՞, ի՞նչ ես ուզում ինձանից։

Սարգիս Կիլիկյանը բաց թողեց ծխի ահագին քուլան, բայց մազաչափ անգամ չփոխեց դեմքի արտահայտությունը։ Ամենաանտանելին այն էր, որ նա հայացքը չէր թեքում Բագրատյանի ձեռքերից։ Կարծես խորախորհուրդ մտորում էր մի աշխարհի մասին, որտեղ այնքան փափուկ ու

անվթար ձեռքեր կային։ Վերջապես նա բացեց անշրթունք բերանը, թ ցույց հանելով իր ոսկեղ, սևացած ատամները։ Խուլ ձայնի մեջ ավելի քիչ ատելություն կար, քան խոսքերի.

— Այս գործը փափկասուն պարոնների համար չէ...

Բացատրությանը ոտքի թռավ։ Ուզեց ազգու պատասխան տալ։ Բայց խոր ահաճությամբ զգաց, որ առհասարակ ոչ մի պատասխան չի գտնում։ Ռուսը շրջվեց, բավական բարեհունչ ֆրանսերենով կարծես ինքն իր հետ խոսելով՝ ասաց.

— On verra ce qu'on pourra durer.[1]

Երբ մարդիկ բոլորվեցին խարույկի շուրջը, Գաբրիելը տարբեր մարգկանցից տեղեկություններ հավաքեց Սարգիս Կիլիկյանի մասին։ Սա չորս ամսում արդեն հայտնի էր դարձել Մուսա լեռան ամբողջ շրջակայքում։ Տեղական դասալիքներից չէր, բայց և այնպես զափթիեները նրան շատ էին հետապնդում։ Գաբրիելը Շատախյանից իմացավ Ռուսի կյանքի պատմությունը։ Քանի որ յոթ գյուղի ուսուցիչներն էլ աչքի էին ընկնում իրենց վառ երևակայությամբ, Գաբրիելը գրեթե կասկածեց, թե Շատախյանը, բավարար չհամարելով Կիլիկյանի անվան հետ կապված սարսափը, այդ հայ մարդու ճակատագրին սեփական քմահաճույքներով ավելացնում էր մի քանի զարհուրելի գծեր։ Սակայն Զառուշ Նուրհանը նստած էր մոտակայքում և ամեն մանրամասնության վրա գլխով լրջորեն համաձայնության նշան էր անում։ Նուրհանը վատ համբավ ուներ, իբրև դասալիքների հովանավոր և նրանց կյանքի պատմության գիտակ։ Բայց ինչ վերաբերում է հնարանքներին, ոչ ոք չէր հավատա, թե նա կողմնակից կլինի նման բաների։

Սարգիս Կիլիկյանը ծնվել էր Դյորթ Յոլում՝ Ալեքսանդրեթից հյուսիս ընկած Իսոսի դաշտավայրի խոշոր գյուղերից մեկում։ Նա նոր էր բոլորել իր կյանքի տասնմեկ տարին, երբ Անատոլիայում և Կիլիկիայում սկսվեցին Աբդուլ Համիդի ծրագրած կլասիկ ջարդերը՝ անսպասելի, ինչպես անամպ երկնքից ճայթող կայծակ։ Կիլիկյանի հայրը ժամագործ էր, սակերչ։ Նա փոքրամարմին, խաղաղաբարո մարդ էր, կաշվից դուրս էր գալիս, որ իր հինգ երեխաները պատշաճ դաստիարակություն և լավ կրթություն ստանան։ Կարողության տեր էր։ Ավագ որդուն՝ Սարգսին, ուղարկել էր հոգևոր ճեմարան։

Դյորթ Յոլի գլխին սև բերած այդ օրը նա իր խանութը փակեց կեսօրին։ Բայց ի՞նչ օգուտ։ Նոր էր առն մտել ճաշելու, երբ վրա տվին

[1] Տեսնենք, թե մինչև ե՞րբ կտևի։

անկոչ հյուրերը, ներս խուժեցին։ Տիկին Կիլիկյանը՝ կովկասցի, մարմնեղ, խարտիշահեր մի հայուհի, պատրաստվում էր ճաշ մատուցել, երբ կավճի պես գունաթափ դեմքով մի թուրք մոտեցավ խանութին, ուզեց դուռը բացել։ Ժամագործը կնոջը հանգստացրեց, ասելով, թե դա չարյաց փոքրագույնն է. թող խանութը կողոպտեն, միայն թե փրկվի իրենց սեփական կյանքը։ Հետևյալ բոպեները Սարգսի հիշողության մեջ դրոշմվեցին, որպեսզի հարատևեն այնքան, ինչքան այս աշխարհում մարդկային հոգին կարող է փորձությունների բովով անցնելուց հետո չկորցնել իր ինքնուրույնությունը։ Տղան հոր ետևից վազեց արհեստանոցը։ Այստեղ անծանոթ մարդիկ էին խռնվել՝ Նորին Մեծություն սուլթանի համիդիեների[1] խայտաբղետ մի գրահախումբ։ Պարագլուխը վարդագույն դեմքով, կերած-խմած մի երիտասարդ էր, հավանաբար ստորին պաշտոնյայի որդի։ Հաստամարմին թուրքն ամենից շատ աչքի էր ընկնում մի բանով. բաճկոնն ամբողջովին ծածկված էր ատրճանակի կրծքանշաններով ու մեդալներով։ Մինչ երկու լրջագեմ, գործնական քուրդ առանց ժամանակ կորցնելու վրա տվին, դարակների պարունակությունն սկսեցին զգուշորեն դատարկել իրենց խուրջինների մեջ, ստորին պաշտոնյայի պճնազարդ որդին ցույց էր տալիս, թե ինքն իր առաքելությունն իբրև ընկալում է զուտ քաղաքական տեսակետից։ Նրա գունատ, անխորհուրդ դեմքը բացավառվում էր այդ համոզմունքից, երբ ժամագործի վրա գոռաց.

— Դու վաշխառո՛ւ ես, արյուն ծծո՛ղ։ Բոլոր հայ խոզերդ էլ վաշխառուներ եք, արյուն ծծողներ։ Մեր ժողովրդի թշվառության պատճառը գո՛ւք եք՝ պիղծ գյաուրնե՛ր։

Վարպետ Կիլիկյանը հանգիստ ցույց տվեց իր աշխատասեղանը, որի վրա գրված էին խոշորացույց, ունելիներ, անվակներ ու զսպանակներ.

— Ինչո՞ւ ես ինձ վաշխառու անվանում։

— Սա կեղծիք է, որի ետևում դու թաքցնում ես քո վաշխառական մութ գործերը։

Խոսակցությունը չավարտվեց, քանի որ նեղ, ցածրիկ սենյակում արոտաց երկու կրակոց։ Փոքրիկ Սարգիսն առաջին անգամ առավ վառոդի սուր հոտը։ Սկզբում գլխի չընկավ, թե ինչ կատարվեց, երբ հայրը թեքվեց սեղանին, ինչպես աշխատելիս, բայց իսկույն փռվեց գետնին, իր հետ շուռ տալով նաև սեղանը։ Սարգիսն առանց ծպտուն հանելու ետ վազեց, իրեն գցեց բնակարանը։ Պատի տակ արձանացած կանգնել էր

[1] Համիդիե — սուլթան Համիդի ստեղծած քրդական գնդերին պատկանող զինվոր

խարտիշահեր մայրը։ Շունչը պահած սպասում էր։ Զույգ ձեռքով կառչել էր երկու և չորս տարեկան փոքրիկ աղջիկներից։ Աչքերը գամել էր ծրծկեր մանկան օրորոցին։ Յոթնամյա Մեսրոպը պլշած աչքերով նայում էր ոչխարի հիասքանչ խորովածին, որը սեղանի վրա դեռևս խաղաղ գոլորշի էր արձակում։ Բայց ահա ներխուժեցին զինված մարդիկ։ Սարգիսը խորովածով լի ափսեն վերցրեց, հուսահատ թափով նետեց հաստամարմին պարագլխի վարդագույն դեմքին։ Խիզախ երիտասարդը ճչաց, կուչ եկավ, կարծես վրան նռնակ նետեցին։ Շքեղ բաճկոնն ի վայր հոսեց խորովածի դարչնագույն հյութը։ Առաջին հարվածին հաջորդեց կավե մեծ սափորը։ Սա ավելի լավ ազդեցություն գործեց։ Հրոսակապետի քիթ-բերանից արյուն ցայտեց, բայց նա ցավատանջ ոռնոցով առաջ մղեց յուրայիններին։ Փոքրիկ Սարգիսը մսի դանակով զինված՝ պաշտպան կանգնեց մորը։ Տասնմեկամյա երեխայի ձեռքին փայլող այդ ողորմելի զենքը բավական էր, որպեսզի անպարտելի համիդիեները խուսափեին ձեռնամարտից, թեև կինը դեռևս երիտասարդ էր, գեղեցիկ։ Նրանցից մեկը վախվխելով նետվեց դեպի օրոցքը, վերմակի տակից դուրս քաշեց թրնկթրնկացող մանկանը, ամբողջ թափով հարվածեց պատին և ջախջախեց գանգը։ Սարգիսը սեղմվեց մոր քարացած մարմնին։ Կնոջ ամուր փակված շուրթերի միջից տարօրինակ հնչյուններ էին դուրս նետվում։ Ապա հրացանները որոտաձայն ուղղվեցին մի կնոջ և չորս երեխայի դեմ, բացելով այնպիսի կրակ, որը բավական էր մի ամբողջ զորագունդ փախուստի մատնելու համար։ Սենյակը ծխով էր լցվել, բայց այդ անասունները վատ էին նշան բռնում։ Ճակատագրի սատանայական կախարդանքով Սարգսին ոչ մի գնդակ չդիպավ։ Ամենից առաջ սպանվեց յոթնամյա Մեսրոպը։ Երկու փոքրիկ աղջիկների դիակները թուլացած կախվել էին մոր թևերից։ Խեղճ կինը դեռևս գրկած պահում էր նրանց։ Հոյակապ դեմքը ձգված էր, կարկամած։ Աջ թևին գնդակ դիպավ։ Սարգիսն իր թիկունքով զգաց շեշտակի հարվածը, որից մայրը ցընցվեց։ Երկու այլ կրակոց ջախջախեցին մոր ուսերը։ Նա մնաց անշարժ կանգնած, դարձյալ բաց չթողեց երեխաներին։ Միայն այն ժամանակ, երբ ևս երկու գնդակ ծվատեցին դեմքի կեսը, նա երերալով առաջ թեքվեց, խոնարհվեց Սարգսի վրա, որն ուզում էր մորը պահել, որդու մազերը ողողեց իր մայրական արյամբ, ապա փլվեց տղայի վրա և իր մարմնով պատսպարեց նրան։ Սարգիսը մնաց լուռ պառկած մոր տաք, հևասպառ մարմնի ծանրության տակ։ Եվս չորս կրակոց պարպվեց պատի վրա։ Ապա դալկադեմ երիտասարդն իր գործը համարեց ավարտված։

— Թուրքիան թուրքերի՞ն,— ծղրտաց նա, բայց ոչ ոք չարձագանքեց նրա հաղթական կանչին։

Սարգիսն ապահով պառկած էր մոր մարմնի տակ։ Ծայրահեղ լարումից նրա զգայարանները սրվել էին։ Տղան լսեց մի խոսակցություն, որից կարելի էր կռահել, թե սենյակի մի անկյունում ինչ զազրելի գործով է զբաղված հրոսակապետը։

— Ինչո՞ւ ես այդ բանն անում,— հնչեց նախատական մի ձայն,— չէ՞ որ մեռած են։

Ազգային համոզմունքի ջատագովը հրամայեց չխանգարել և ֆշշաց։

— Մեռած վիճակում էլ դրանք պետք է իմանան, որ մենք տերեր ենք, իսկ իրենք՝ աղտեղություն։

Երկար ժամանակ խոր լռություն տիրեց, մինչև արնաթաթախ Սարգիսը համարձակվեց մոր տակից դուրս սողալ։ Այդ շարժումից տիկին Կիլիկյանն սթափվեց։ Դեմք այլևս չուներ։ Բայց ձայնը նույնն էր, այնքա՜ն հանդարտ.

— Ջուր բեր, տղաս։

Սափորը ջարդված էր։ Սարգիսը մի գավաթ վերցնելով քարշ եկավ դեպի բակի ջրհորը։ Երբ վերադարձավ, մայրը դեռևս շնչում էր, բայց ոչ խմե՛լ կարողացավ, ո՛չ խոսել...

Հարուստ ազգականները տղային տարան Ալեքսանդրեթ։

Մի տարի հետո ամեն ինչ կարծես անցավ, բայց Սարգիսը դժվարությամբ էր հաց ուտում, և ոչ ոք (նույնիսկ բարեսիրտ որդեգրողները) չէր կարողանում նրա բերանից խոսք դուրս քաշել, բացի հատուկենտ անհրաժեշտ բառերից։

Ուսուցիչ Շատախյանն այս ամենին լավ իրազեկ էր, քանի որ նրան նույն ալեքսանդրեթցիներն էին ուղարկել Շվեյցարիա։ Այնուհետև Սարգսին ճանապարհեցին Ռուսահայաստան՝ Էջմիածնի Հայոց աստվածաբանական խոշորագույն ճեմարանում ուսանելու։ Այս հռչակավոր հաստատության սաների առաջ բաց էին հայոց լուսավորչական եկեղեցուն վերաբերող ամենաբարձր պաշտոնների դռները։ Հոգևոր ուսման պայմաններն ավելի շուտ մեղմ էին, քան խիստ։ Բայց և այնպես Սարգիս Կիլիկյանը փախավ, քանի որ նրա մեջ դանդաղ գլուխ էր բարձրացնում ազատության ինչ-որ վայրագ, նույնիսկ հիվանդագին մղում։ Ուսման երրորդ տարին դեռևս չէր ավարտել։ Իր ծննդյան տասնութամյակի նախօրեին արդեն թափառում էր Բաքվի կեղտոտ փողոցներում։ Ոչինչ չուներ, բացի ճեմարանական պարեգոտից և չորսօրյա քաղցից։ Մտքով չանցավ, թե կարող է իրեն որդեգրած ազգականներին լուր ուղարկել և

փող խնդրել։ Էջմիածնից փախչելու օրից ի վեր բարեսիրտ մարդկանց հովանավորյալը նրանց համար մնաց իբրև անհայտ կորած։ Սարգիսն այլ ելք չուներ, բացի աշխատանք որոնելուց։ Եվ գտավ այն միակ աշխատանքը, որ Բաքվում միշտ էլ առատորեն կա՝ Կասպից ծովի ամայի ափին սփռված վիթխարի նավթահանքերի ստրկական աշխատանքը։

Մի քանի ամիս չանցած Սարգիս Կիլիկյանի մաշկը նավթից ու բնական գազից դեղնեց, թառամեց։ Մարմինը չորացած ծառի պես սմքեց։ Եթե նկատի ունենանք կրթությունն ու բնավորությունը, ապա զարմանալի չէ և այն, որ նա հարեց սոցիալ-հեղափոխական շարժմանը։ Վերջինս այն ժամանակ տիրապետող էր դարձել ռուսական կողմնորոշում ունեցող բանվորների՝ վրացիների, հայերի, թաթարների, թուրքերի, պարսիկների շրջանում։ Ցարական կառավարությունը շարունակում էր իրար դեմ գրգռել առանձին ազգեր, բայց նավթատերերի դեմ ուղղված միասնական շարժումը ճնշել չէր կարողանում։ Գործադուլները տարեցտարի դառնում էին ավելի ծավալուն, ավելի հաջող։ Նման խռովություններից մեկի ժամանակ բանվորների և կազակների ընդհարումն ավարտվեց սոսկալի արյունահեղությամբ։ Ի պատասխան այդ բանի, նահանգապետը՝ իշխան Գալիցինը, շրջագայության ժամանակ սպանվեց։ Դավադրության և մահափորձի մեջ մեղադրվողներից էր նաև Սարգիս Կիլիկյանը։ Դատավարության ժամանակ նրա դեմ հարուցված ոչ մի մեղադրանք չապացուցվեց։ Կիլիկյանը հավանաբար զարմանալի քաղաքագետ էր դարձել։ Ոչ ելույթներ էր ունեցել, ոչ էլ ընդունվել ընդհատակյա որևէ կազմակերպության մեջ։ Ոչ մեկը նրա մասին որոշակի բան ասել չէր կարող։ Բայց նա «հոգևոր ճեմարանից փախած սան» էր։ Դա արդեն մի խավ էր, որի ներկայացուցիչներն ամենամոլի խռովարարներն են։ Այդքանն էլ բավական էր։ Սարգիսը պետք է ցմահ տաժանքի ենթարկվեր Բաքվի քանտերում։ Աղտեղության և առնետների այդ քաղաքում նա վերջնականորեն կփտեր, եթե նախախնամությունը զորավիգ չլիներ իր անակնկալ բարությամբ։ Սպանված Գալիցինին հաջորդեց իշխան Վորոնցովը։ Ամուրի փոխարքայի հետ Բաքու ժամանեց նրա քույրը, որը նույնպես ամուսնացած չէր, և տիրավորվեց կառավարական պալատում։ Իշխանադուստր Վորոնցովան իր թոշնած օրիորդությունն անց էր կացնում ծարահեղ խստակենցաղությամբ։ Անողոք էր նույնիսկ սեփական անձի նկատմամբ։ Լինելով գործունյա, բարյացակամ կին, իր եղբոր իրավասության տակ գտնվող յուրաքանչյուր պաշտոնավարում հիմնում էր հոգեփրկիչ յուրօրինակ հաստատություններ։ Իր հանգիստ խստաբարո լինելով, ավելի պահանջկոտ էր ուրիշների նկատմամբ։ Ժամանակի ընթացքում բարձրաստիճան օրիորդը մերձավորին սիրելու մեջ գտածով կատարյալ սագիտուհի։ Ուր էլ գնար, առաջին հերթին իր բարեպաշտ հայացքն ուղղում էր բանտերին։ Ռուսաց աշխարհի մեծ բանաստեղծներն ասուցանել են, որ աստծո թագավորությունից մինչև մեղքերի ճահիճը մի քայլ է միայն։ Բանտերն առավելապես լցված էին երիտասարդ մտավորականներով, քաղաքականներով, որոնք և բորբոքում էին իշխանադստեր եռանդը։ Այդ ընտիր հասարակության հետ Սարգիս Կիլիկյանին ևս ամեն առավոտ տանում էին դատարկ զորանոցներից մեկը, որտեղ Իրինա Վորոնցովայի ուսումնական ծրագրի համաձայն և ամենիրական մասնակցությամբ նա ևս ենթարկվում էր փրկարար ապաքինության փորձերին։ Դա կատարվում էր մասամբ շարայնին հոգնեցուցիչ վարժություններով, մասամբ էլ՝ բարոյախրատական քարոզներով։ Հանձին երիտասարդ հայի, իշխանադուստրը տեսնում էր ատամանի հիասքանչ արդյունք։ Արժեր այդ հոգու համար մաքառել։ Դրա համար էլ օրիորդն ամենամբ իր ձեռքն առավ Կիլիկյանի սանձը։ Ատամանի վտիտ մարմինը մի քանի ժամ տևող շարայնին տանջալից վարժություններով տանձահարելուց հետո անցնում էր հոգու ապաքինմանը։ Իրինա Վորոնցովան մեծագույն ուրախությամբ շուտով նկատեց, որ Կիլիկյանն անհավատալի առաջադիմություն է ցուցաբերում ճշմարիտ ճանապարհ գտնելու ուղղությամբ։ Ուրբաթախոս ատամանի հետ անցկացրած ժամերն սկսեցին լուսավորել նաև իշխանադստեր միտքը։ Նա հաճախ գիշերները վերհիշում էր դասերի ժամանակ տրված հարցերն ու պատասխանները։ Ինքնին հասկանալի է, որ բանտարկյալ աշակերտը պետք է վարձահատույց լիներ։ Իշխանադուստրը շարունակ մտքնորդում էր, որ նրան հեռագիտեն որոշ ազատություն տրվի։ Դա ոգևորեց Կիլիկյանին շղթայազերծ անելով և ավարտվեց նրանով, որ կալանավորին թույլ տրվեց բանտի փոխարեն ապրել դատարկ զորանոցի փոքրիկ խցերից մեկում։ Դժբախտաբար նա երկար չօգտվեց իր այդ լավ ազատատարանից։ Տեղափոխվելուց հետո երրորդ օրվա առավոտյան անհետացավ, հարստացնելով սատանայի դեմ իշխանադուստր Վորոնցովայի մղած պատերազմի դատը փորձառությունը։

Մարդ ո՞ւր կարող է փախչել ռուսահպատակ Կովկասից. թուրքահպատակ Կովկաս։ Մի ամիս հետո Սարգիսն ատիզված եղավ համոզվել, որ իր հաշիվների մեջ սխալվել է, դրախտը փոխարինել դժոխքով։ Երբ էրզրումում, արդեն քաղցից կիսամեռ եղած, աշխատանք էր որոնում, ոստիկանները բռնեցին։ Քանի որ նա ժամանակին ո՛չ զորակոչին էր ներկայացել, ո՛չ էլ օրինական փրկագին էր վճարել, ապա դաշտային դատարանը նրան մեղադրեց իբրև դասալիքի և դատապարտեց եռամյա

ծանր բանտարկության։ Հազիվ էր ռուսական տաժանակրությունից ազատվել, երբ նրան գրկաբաց ընդունեց թուրքական բանտը։ Էրզրումի զնդանում շնչավոր էակների անքննելի քանդակագործը վերջին անգամ իր ձեռքը դրեց Կիլիկյանի գլխին։ Աշխարհ եկավ այն խորհրդավոր անտարբերությունը, որ Գաբրիել Բագրատյանն արդեն նկատել էր գիշերային ուրվականին հանդիպելիս, մի անտարբերություն, որի իմաստն այս բառով միայն թեթևակիորեն շոշափվում է, բայց ոչ սպառվում։ Մի քանի ամիս հետո, երբ բռնկվեց մեծ պատերազմը, բանտարկությունը վերջացավ։ Թեև քննող բժիշկը Կիլիկյանին դուրս բերեց ոչ պիտանի, նրան զորակոչիկների հետ իսկույն ուղարկեցին Էրզրումի հետևակային գունդը։ Այժմյան վիճակը կարծես ավելի քիչ էր տարբերվում մարդկային կյանքից։ Պարզվեց նաև, որ նրա ծայրահեղ հյուծված մարմինն օժտված է անխորտակելի ուժով ու տոկունությամբ։ Զինվորական կյանքը, չնայած իր ամբողջ կաշկանդվածությանը, ամենից ավելի մոտ էր Կիլիկյանի հոգուն։

Պատերազմի առաջին իսկ ձմեռը Կիլիկյանի գունդը մասնակցեց Էնվեր փաշայի վարած կովկասյան այն արժանահիշատակ ճակատամարտին, որտեղ պատերազմի քնքշագեմ աստվածը ոչ միայն մի ամբողջ զորաբանակ կորցրեց, այլև հազիվ գերի չընկավ ռուսներին՝ իր շտաբով հանդերձ։ Շտաբի փախուստն ապահովող և Էնվերի ազատությունն ու կյանքը փրկող ջոկատը գերազանցապես կազմված էր հայերից։ Այդ հայերից մեկն էլ գեներալիսիմուսին շալակած դուրս բերեց կրակային գծից։ (Հենց որ Շատախյանը Կիլիկյանին այս հայերին խառնեց, Գաբրիելը, որը երկյուղ էր կրում առասպելական պաճուճանքների հանդեպ ուսուցչի ունեցած թուլությունից, զննող հայացքով նայեց ծերունի Զաուշ Նուրհանին։ Բայց սա ծանրաբարո լրջությամբ գլխով էր անում)։ Կիլիկյանն այդ քաջերի հետ էր թե ոչ, միևնույն է. բոլոր դեպքերում ճշմարիտ էր, որ Էնվեր փաշայի փրկությանն անմիջապես հետևեց հայ ամբողջ ժողովրդին հայտնած նրա երախտագիտությունը։

Ցրտահար եղած զինվոր Սարգսի վերքերը կիսով չափ էլ չէին ապաքինվել, հազիվ էր նրա անկողինը լեփ-լեցուն հիվանդանոցի սալահատակից նորից տեղափոխվել լեփ-լեցուն զորանոցի սալահատակը, երբ հրապարակեցին ռազմական հրամանը։ Բոլոր հայերը պետք է խայտառակ ձևով վտարվեին վաշտերից, զինաթափ արվեին և, իբրև նվաստացում, ուղարկվեին ինշաաթ թաբուրու[1] այդ արհամարհված զորամասը։

[1] ինշաաթ թաբուրու—շինարարական զոմարտակ

Բոլոր անկյուններից հայ զինվորներին հավաքեցին մի տեղ, հրացանները խլեցին և խղճուկ բազմությունը քշեցին դեպի հարավ-արևելք, Ուրֆայի բլրաշատ կողմերը։ Այստեղ հայ զինվորները քաղցից տանջվելով և ամեն ժամ գանահարության սպառնալիքի տակ գտնվելով, Հալեպ տանող նոր ճանապարհը շինելու համար պետք է շալակով քարեր բերեին։ Հատուկ հրամանով նրանց արգելված էր սրածայր բեռներից պաշտպանվելու համար համետներ կրել, չնայած հոգեհան աշխատանքի առաջին իսկ ժամերին բոլորի ուսերն ու մեջքերը քերծվել էին, արյունոտվել։ Չկար մեկը, որ ախուվախ չաներ, չտնքար, բայց Սարգիս Կիլիկյանն անմռունչ քաշ էր գալիս ճանապարհից քարհանք, քարհանքից՝ ճանապարհ։ Կարծես նրա մարմինը վաղուց ի վեր մոռացել էր, թե ինչ բան է ցավը։

Մի օր կապիտանը հրամայեց շարքի կանգնեցնել բոլոր ինշաաթ թաբուրուների անձնակազմը։ Հայերի հետ կային նաև մի քանի մահմեդականներ, որոնք այստեղ էին ընկել կամ պատահմամբ, կամ պատրժված էին։ Սրանց դուրս բերին շարքերի միջից։ Անդեն հայերի բազմությունը երկու սպայի գլխավորությամբ գրեթե մի ժամ ճանապարհ անցավ, հեռացավ իր կայանից, հասավ երկու բլրի արանքում սեղմված մի գեղանկար հովիտ։

— Զարմելիքի բլուրնե՞րն են,— գոչեց պարզամիտ մի երիտասարդ, որն այդ կողմերից էր և անկաշկանդ հրճվում էր այդ օրվա ազատությամբ։

Բայց թավշածուփ մարգագետնում հայ զինվորներին դիմավորեցին ոչ միայն ծոթրինն ու խնկունին, խոլորձը, անիսոնն ու մեղրախոտը, այլև (տարօրինակ բան) կովի կաղմ ու պատրաստ մի վաշտ։ Հայերը ոչինչ չկասկածեցին։ Երբ նրանց հրամայեցին երկար շարք կազմել բլրի առաջ, դարձյալ ոչինչ չկռահեցին։ Ապա թուրքերն առանց այլևայլության, առանց որևէ նախապատրաստության աջ թևից հանկարծ կրակ բացեցին։ Օդը թնդաց աղաղակներից։ Դա ավելի շուտ հետևանք էր անսահման զարմանքի, քան մահվան սարսափի։ (Ունկնդիրների հետ նստած մի կին ընդհատեց Շատախյանին. «Մեռնե՞մ աստծուն. բա նա իր հրեշտակներով կարո՞ղ է մոռանալ խեղճերի ձայնը»։ Եվ սկսեց լացուկոծ անել։ Նա մեծ դժվարությամբ կարողացավ զսպել իր պոռթկացող հուզմունքը)։ Սարգիս Կիլիկյանն իրեն չկորցնելով, նետվեց գետին։ Գնդակները սուլոցով անցան վրայից։ Երկրորդ անգամ խուսափեց թուրքերի ձեռքով սպանվելուց։ Դիակների և հոգեվարքի մեջ անօգնական տանջվողների կողքին մնաց պառկած, սպասեց մութն ընկնելուն։ Բայց իրիկնամուտից դեռևս շատ

առաջ էնվերի ազգային քաղաքականության ծաղկազարդ սպանդանոցն արժանացավ նոր այցելության։ Շրջակայքի դիակողոպտիչները չէին ուզում ձեռքից բաց թողնել պետական այն ապրանքը, որ իրենց վրա էին կրում «մահապատժի ենթարկվածները»։ Աչք ունեին հատկապես զինվորական դիմացկուն կոշիկների վրա։ Իրենց դժվարին գործը կատարելիս տխրաձայն երգում էին տարագրության մասին հորինված երգերից մեկը։ Դա սկսվում էր բնական ձայնի պատրանք ստեղծող տողով.

«Քեսե, քեսե, սյուրյուր յարլարա»։
(«Սպանելով, սպանելով գուրս են քշում»)։

Հերթը հասավ Կիլիկյանի կոշիկներին։ Դիակ ձևանալու համար մարդասպանները այնպես ձգեց, քիչ մնաց՝ կտրվեին։ Մեռել կողոպտողները կատաղորեն քաշքշում էին նրա ոտքերից։ Ուզեցին կացնով կտրել սրունքները, կոշիկները հանել, բայց բարեսիրտ հաճախորդները հրաժարվեցին այդ բանից, ծոր տալով մի նոր երգ.

«Հեփ գիթդի, հեփ բիթդի»։
(«Բոլորը գուրս, բոլորը հեռու»)։

Այդ գիշերվանից սկսվեցին Սարգիս Կիլիկյանի սոսկալի թափառումները։ Ցերեկներն անց էր կացնում ամայի թաքստոցներում, իսկ գիշերներն անհայտ արահետներով ճողոպրում էր, անցնում տափաստաններ ու ճահճուտներ։ Ոչ մի պատառ հաց չկար, որ բերանը դներ։ Սընվում էր միայն բանջարով։ Միայն երբեմն, այն էլ խոր մթության մեջ համարձակվում էր որևէ գյուղ մտնել, բախել հայերից մեկնումեկի դուռը։ Այժմ արդեն կարելի էր լիովին համոզվել, որ Սարգսի սատանայական մարմնի մեջ գերմարդկային ուժ կար ծվարած։ Չոր կաշվի տակ պրկված այդ կմախքը չմնաց ճանապարհին, չմեռավ։ Ապրիլի առաջին օրերին հասավ Դյորք Յոլ՝ իր ծննդավայրը։ Ոչ մի վտանգ հաշվի չառնելով, գնաց ուղիղ իր հայրական տունը, որտեղից նրան քսան տարի առաջ ինչ-որ լացող մարդիկ տարան հեռո՜ւ, հեռո՜ւ։ Տունը հավատարիմ էր մնացել հոր արհեստին։ Այնտեղ բնակվում էր մի ժամագործ-ոսկերիչ։ Խանութից լսվում էր խարտոցի և փոքրիկ մուրճի ծանոթ աղմուկը։ Սարգիսը ներս մտավ։ Սարսափած ժամագործն արդեն ուզում էր եկվորին դուրս վռնդել, երբ սա տվեց նրա անունը։ Նոր տանտերը խորհրդակցեց իր ընտանիքի անդամների հետ։ Փախստականին գիշերելու տեղ տվին այն մեծ սենյակում, որտեղ կատարվել էր ահավոր ոճիրը։ Քսան տարի հետո էլ պատի վրա երևում էին գնդակների հետքերը։

Կիլիկյանը երկու օր մնաց այս թաքստոցում։ Ժամագործը նրա համար ճարեց հրացան և փամփուշտներ։ Այն հարցին, թե փախստականին ուրիշ ինչո՞վ կարելի է օգնել, Կիլիկյանը միայն ածելի խնդրեց։ Մութն ընկնելուն պես անհայտացավ։ Երկրորդ գիշերը Գոմեյդան գյուղում հանդիպեց երկու դասալիքի։ Սրանք իբրև տեղանքի փորձված և աներկբա գիտակներ, խորհուրդ տվին ապավինել ամենահուսալի ապաստարանին՝ Մուսա լեռանը։

Ահավասիկ Սարգիս Կիլիկյանի՝ Ռուսի, անցած ուղին, որը Բագրատյանի զգայուն հոգու մեջ դրոշմվեց այնպես, ինչպես այն ներկայացրին ուսուցիչ Շատախյանի պատմությունը, Չաուշ Նուրհանի հավանություն տվող լռությունը, մյուս ունկնդիրների առարկություններն ու հավելումները։ Եվրոպացին սոսկաց մարդկային այդ ճակատագրի դժնդակությունից և երկյուղածությամբ համակվեց այն ուժի հանդեպ, որը տեղի չի տվել։ Սակայն երկյուղածությանը գալիս խառնվում էին վախը և բանտերի ու զորանոցների զոհից հնարավորության չափ հեռու մնալու ցանկությունը։

Գիշերը Չաուշ Նուրհանի հետ երկար խորհրդակցելուց հետո Բագրատյանը վճռեց Ռուսին և մյուս դասալիքներին ընդունել Հարավաբերդի պաշտպանների շարքը։ Այս ամրությունը ընդհանուր պաշտպանության ամենաապահով տեղն էր և, դրանից բացի, ժողովրդի բնակավայրից ամենահեռու կետը։

Երրորդ օրվա առավոտյան բոլորը վերադարձան իրենց գյուղերը։ Միայն մի քանի վստահելի պահապաններ մնացին Դամլաջրքի վրա՝ սննդամթերքը և զենքերը հսկելու։ Տեր-Հայկազունն ինքն էր այդպես կարգադրել։ Զափթիեները զենք որոնելիս չպետք է դատարկ կամ կիսադատարկ տներ տեսնեին։ Երիտասարդների աչք ծակող պակասը հնարավոր չէր քողարկել ո՛չ պատվելի Նոխուդյանի Բիբիաս վերադարձած աստվածավախ համայնքով, ո՛չ էլ մյուս գյուղերում մնացած մարդկանցով։ Գաբրիելն ղգում էր, որ Տեր-Հայկազունը նման կարգադրություն կանի։ Դա հավանաբար դաստիարակչական նպատակ էր հետապնդում։ Մուսա լեռան երիտասարդները մինչ այդ բոլոր բարբարոսությունների մասին գաղափար էին կազմել միայն լսածով, ուստի և այժմ պետք է սեփական աչքով տեսնեին կենդանի իրականությունը, որպեսզի կռվեին ամենայն վճռականությամբ։

Ալի Նազիֆի հայտնած ճիշտ ժամին զափթիեները մտան Յողոնօլուք՝ մոտ հարյուր հոգի։ Դա բացարձակ արհամարհանք էր, քանի որ տեղական իշխանությունը այդքան սակավաթիվ զինվորներով վճռել էր հաշիվ

մաքրել մի մեծ շրջանի հետ. հայ ոչխարները սպանդանոց տարվելիս ոչ մի դիմադրություն ցույց չեն տալիս։ Հատուկենտ ապստամբվողները՝ կառավարության համար ցանկալի առիթ ստեղծողները, դրությունը չեն փոխում։ Առևտրականների մի տկար ժողովուրդ ինչպե՞ս կարող էր չափվել սպառազեն հերոս ժողովրդի հետ։ Այս հարցի պատասխանը Յողոնօլուք ուղարկված հարյուր զափթիեներն էին։ Բայց սրանք Աբդուլ Համիդի ժամանակվա բարեհոգի ջարդարարներից չէին։ Չկար այն ծաղկատար դեմքերից ոչ մեկը, չկար աչքերի այն ահարկու, բայց և միամիտ ճպճպոցը, որից սիրտ առած՝ կարելի էր համապատասխան հատուցում խոստանալ, հետները լեզու գտնել։ Այժմ վայրագությունն ուղղակի էր, առանց կողմնակի նպատակների։ Զափթիեները ոչ քոսոտ փափախներ էին կրում, ինչպես առաջ, ո՛չ էլ բարեհիշատակ հին ժամանակների զինվորական համազգեստի ու քաղաքացիական ինչ-որ արտառոց հագուստի խառնուրդ։ Նրանց մարմիններն ամփոփված էին դեղնադարչնագույն նոր համազգեստների մեջ։ Բեգվինների նման գլուխների շուրջը սպիտակ շորեր էին կախված՝ արևից պաշտպանվելու և քրտինք սրբելու համար։ Այդպես նրանք ստանում էին եգիպտական սֆինքսների անագորույն տեսք։ Շարքով շարժվելիս ընթանում էին ոչ արևմտյան մեքենայական քայլվածքով, ոչ էլ արևելյան օրորուն եղանակով։ Ստամբուլից հեռու ընկած Անտիոքի զափթիեները նույնպես Իթթիհաթի ազդեցության տակ էին, որը կարողացավ կրոնական հին ու դյուրաբորբոք մոլեռանդությունը ճարպկորեն վերածել ազգային սառը, հարատև մոլեռանդության։

Աքսորող զորախմբի հրամանատարը Անտիոքի ոստիկանապետն էր։ Նրան ուղեկցում էր արտևանունքներից զուրկ, կարմրագույն աչքերով երիտասարդ մյուդիրը։ Դեմքն ու ձեռքերը ծածկված էին պեպեններով։ Միջօրեին Յողոնօլուքի եկեղեցու հրապարակը լցվեց զափթիեների ջոկատով, որի գալստյան լուրը սուրհանդակների միջոցով վաղուց էր տեղ հասել։

Խլացուցիչ ձայնով հնչեցին թուրքական շեփորները, որոտացին թմբուկները։ Չնայած այս տիրական ազդարարությանը, հայերը մնացին իրենց տներում։ Տեր-Հայկազունը յոթ գյուղի բնակիչներին խստիվ պատվիրել էր կարելվույն չափ քիչ երևալ, խուսափել իրար գլխի հավաքվելուց, տեղի չտալ որևէ գրգռման, չընկնել որոգայթի մեջ։ Մյուդիրը զափթիեների, սրանց ուղեկցող մի քանի հոգու և եկեղեցու փակ պատուհանների առաջ հրապարակեց աքսորի երկարաշունչ հրամանը, որը միաժամանակ փակցվեց եկեղեցու, թաղապետարանի, դպրոցի պատերին։

Պետական այս արարողությունից հետո զափթիեները պատրաստվեցին ճաշելու։ Նստոտեցին գետնին, աթարով և ոչխարի ճարպի մեջ թաթախած բակլայի ցողուններով կրակ վառեցին, վրան դրին կաթսաները։ Շատ չանցած մսաջրի միջից հացաբլիթներով արդեն դուրս էին բերում իրենց բաժին միսը, պպզած ծամում և ծույլ-ծույլ դիտում շրջակայքը։

Ի՜նչ սիրուն տներ են՝ բոլորն էլ քարաշեն, հաստատուն տանիքներով, փայտե պատշգամբներով։ Հարո՜ւստ մարդիկ են այդ հայերը, ամեն տեղ էլ հարուստ են։ Իսկ իրենք իրենց գյուղերում ի՞նչ տներ ունեն, կուրախանան, եթե հին, խարխլված ու մրից սևացած փայտաշեն խրճիթներն արագիլի բույնի ծանրության տակ փուլ չգան։ Հապա այդ կեղտոտ խողերի եկեղեցի՞ն. բերդի պես հաստ ու բարձր պատեր ունի, ատամնավոր է, որմնախորշեր ու ցցվածքներ ունի։ Բա ի՞նչ անի ալլահը, որ դրանց վրա չբարկանա գոռողության համար։ Ամեն բանի մեջ քթները խոթում են։ Ստամբուլում տեր-տիրական են դարձել, փողը կոտով են չափում։ Այնքան են երես առել, որ համբերելու տեղ չի մնացել։

Մյուդիրն ու մուավինն[1] էլ էին հիանում գյուղի գողտրիկ հրապարակով։ Թերևս մի պահ ոստիկանապետին համակեց բարբարոսին հատուկ այն անվճռականությունը, որ նա կարող էր զգալ գերակշիռ քաղաքականության դեմ հանդիման կանգնած։ Բայց կրկնակի ատելությամբ նրա սիրտը թունդ հանեց Թալիաթ բեյի այն նշանավոր խոսքը, որ կայմակամը երեկ, ջոկատը ճանապարհելիս, հիշեցրեց. «Կամ դրանք կշնչվեն, կամ՝ մենք»։

Եկեղեցու հրապարակը լիքն էր զինվորներով, բայց շրջակայքում չարագուշակ լռություն էր։ Դրությունը չէր փոխվում նաև մի քանի բերանբացների ներկայությունից, որոնք եկել էին տարագրությունը դիտելու և միացել էին զափթիեներին։ Անթաքիեի և խոշոր գյուղերի մարդկային կոյուղին չորս կողմից իր կեղտաջրերն ուղղել էր դեպի յոթ գյուղի հովիտը։ Բոբիկ, կեղտածեփ ոտքերով գաղտագողի գալիս էին Մենջիլլեից, Համբլասից, Բոսթանից։ Գալիս էին Թումամից, Շահսինիից, Այն Երաբից, անգամ հեռավոր Բելեդ էս Շեյխից։ Անզուսպ ընչաքաղցությամբ լի աչքերով խժռում էին տները։ Հարավից, էլ Աքրա լեռնային շրջանից եկած արաբ գյուղացիներն իրենց կրունկների վրա հանգիստ պպզած՝ սպասում էին յուղալի դեպքերի։ Լույս էին ընկել նույնիսկ մի փոքրիկ խումբ անսարիներ՝ մարգարեի ամենաստորին, ամենաչիրավազուրկ

[1] մուավին—տեղակալ

խավը, կիսաարաբ ազգազուրկ ճորտերի խաժամուժը, որին ընձեռվել էր այլ մարդկանց հանդեպ սեփական գերազանցությունն զգալու մի հազվագյուտ հնարավորություն։ Կազմ-պատրաստ սպասում էին նաև մի քանի մուհաջիր[1] պատերազմից խույս տված դասալիքներ, որոնց կառավարությունն ուղարկել էր երկրի խորքը, իսկ այժմ բարեկամաբար հրավիրել էր տիրանալու հայերի ունեցվածքին, հատուցելու իրենց կրած վնասները։ Այս «սրտաբաց» հասարակության կողքին (ի՞նչ տարօրինակ տեսարան) շրջան կազմած՝ կանգնել էին թանձր չաղրաներով պարուրված կանայք։ Նրանց աչքերը երկչոտ էին, բայց հրացայտ։ Անկասկած, պատկանում էին լավագույն խավերին։ Առաջին իսկ հայացքից դա կարելի էր գուշակել։ Այդ էին վկայում գլխներին քաշած թանկարժեք շղարշները, չաղրաների գործվածքը, նեղլիկ մաշիկները կամ փայլուն կիսակոշիկները, որոնց մեջ ամփոփված էին նրանց օղակաղարդ ոտքերը։ Այս կանայք եռանդուն կերպով մասնակցելու էին նպաստավոր ահուրդին, որին և անհամբեր սպասում էին։ Դեռևս շաբաթներ առաջ Սուեդիայի և էլ էսքելի կանայք իրենց սենյակներում քչփչում էին.

— Ա՜հ, բա չե՞ք իմացել։ Էդ քրիստոնյա չեղածներն իրենց տներում արմանք-զարմանք բաներ ունեն։ Ո՛չ տեսել ենք, ո՛չ էլ կարող ենք հեշտ ու հանգիստ գնել։

— Իսկ դու հեչ եղե՞լ ես հայերից մեկնումեկի տանը։

— Ինքս չեմ եղել, բայց մոլլայի կինն ամեն բան էլ տեղը տեղին պատմել է։ Էնտեղ կգտնեք համ պահարաններ, համ էլ հանդերձարաններ։ Դրանց վրա փոքրիկ աշտարակներ կան, փոքրիկ սյուներ ու պսակներ։ Շատ քիչ խսիրներ ունեն, որոնց վրա մարդիկ սովորաբար գիշերները քնում են, իսկ ցերեկները փռում գետնին։ Իսկական մահճակալներ ունեն՝ ծաղիկներով ու մանկական գլխիկներով զարդարված, մի բան, որ աստված արգելում է։ Դրանք տղամարդու և կնոջ համար են՝ մեծ, ոնց որ վալու կառքը։ Կգտնեք ժամացույց, որի վրա ոսկեզօծ արծիվ կա նստած, կամ թե միջից կկու է դուրս թռչում ու կանչում։

— Տեսնո՞ւմ եք, դա էլ ապացույց է, որ հայերը դավաճաններ են։ Թե չէ էդպիսի կահ-կարասի ո՞նց պիտի կարողանային բերել Եվրոպայից։

Կանանց ուշքն ու միտքը կահ-կարասին էր, չնայած ձանձրացել էին ամենաշքեղ գորգերից, արույրե պնակներից և պղնձե տապակներից։

[1] մուհաջիր — գաղթական, վերաբնակիչ, փախստական

Զարագուշակ լռությունը հանկարծ պայթեց։ Ոստիկանապետը, որն արդեն վաղուց զոհի էր սպասում, նետվեց գյուղի բնակիչներից մեկի կողմը։ Սա անզգուշաբար կանգնել էր իր տան շեմքին։ Գեղջուկին քարշ տվին հրապարակ։

Ոստիկանապետի դեմքին նայողն իսկույն կնկատեր, որ նրա աչքերն իրարից տարբերվում են։ Աջը խոշոր էր, անթարթ, իսկ ձախը՝ փոքր, կիսով չափ ուռած։ Որքան էլ ռազմատենչ ու սպառնալից թվային ոստիկանապետի ֆելդֆեբելական բեղերը, որքան էլ առաջ ցցված ծնոտը նրան մարդասպանի տեսք տար, միևնույն էր, նա իր անհամաչափ աչքերով դատապարտված էր ահավոր ծիծաղելիության կամ ծիծաղելի ահավորության։ Մշտապես գիտակցելով իր թերությունը, վախենում էր ծիծաղելի տպավորություն թողնելուց և այդ պատճառով էլ չափազանցության աստիճան ընդգծում էր իր էության ու արհեստի սարսափելիությունը։ Ի բնե զոհիկ լինելուց բացի, ստիպված էր նաև դաժանություն խաղալ։ Նա փորձեց իր անթարթ աջը ոլորել, երբ հայի վրա գոռաց.

— Ի՞նչ է ձեր վարդապետի անունը։ Ի՞նչ է ձեր մուխթարի անունը։

Գյուղացին լրջամիտ հայտնեց նրանց անունները։ Հետևյալ վայրկյանին հարյուր հոգին էլ հրապարակով մեկ ոռնացին.

— Հե՜յ, Հայկազո՛ւն, որտե՞ղ ես թաքնվել։ Քեբուսյա՛ն, դո՛ւրս արի։ Հե՜յ Հայկազո՛ւն հե՜յ Քեբուսյա՛ն։

Տեր-Հայկազունը եկեղեցում սպասում էր այդ ազդանշանին։ Այսօրվա հանդիսավոր պատարագից հետո իր սարկավագների հետ ծընրադիր մնացել էր խորանի առաջ, առանց սրբազան հանդերձանքը հանելու։ Նա դափթիներին ուղում էր ներկայանալ իր պաշտոնի ամբողջ շուքով ու վեհությամբ։ Այս նկատառման մեջ լավագույն ձևով դրսևորվում էր Տեր-Հայկազունի էությունը։ Արտաքին հանդիսավորությամբ նա հոգեբանական նպատակ էր հետապնդում։ Միսական թափորներն ու հոգևոր հանդերձանքի շքեղությունը ամեն մի արևելցու համակում են սրբազան սարսուռով։ Տեր-Հայկազունը հույս ուներ, որ իր վարդապետական տեսքով կմեղմացնի դափթիների գոռհկությունը։ Եկեղեցու մայր դռնից նա դանդաղ դուրս եկավ՝ ոսկեզարդ և ծիրանափայլ։ Գլխին շողշողում էր եպիսկոպոսի հունական բարձրադիր թագը, իսկ աջ ձեռքին հայկական ծեսի վարդապետական գավազանն էր։

Հիրավի, Տեր-Հայկազունի վեհաշուք տեսքն ազդեց ոստիկանապետի վրա։ Նրա մարդակերական հաչոցն արդեն հնչում էր անվստահ.

— Դո՞ւ ես քահանան։ Ամեն բանի համար պատասխանատու ես։ Ամե՛ն բանի։ Ասածս հասկացա՞ք։

Ի պատասխան, Տեր-Հայկազունը խոնարհեց անարյուն դեմքը, որը պայծառ արևի տակ թվում էր կրծքի վրա լուռ հանգչող մի կտոր խունկ։ Ոստիկանապետն զգաց, որ իրեն սպառնում է քաղաքավարությունը, այսինքն՝ թուլամորթությունը։ Սկսեց ճպճպացնել նաև ուռած ձախ աչքը։ Այս երկու հանգամանքը նրա մեջ առաջացրին անզուսպ կատաղություն։ Ճիշտ ժամանակն էր մյուդիրի, ոստիկանների, վարդապետի աչքի առաջ ցուցադրելու իր կործանարար, ամենազոր ուժը։ Բռունցքները բարձրացրած գնաց դեպի Տեր-Հայկազունը, բայց, մեծագույն անախորժություն զգալով հանդերձ, կանգ առավ ամոթալիորեն պատշաճ հեռավորության վրա։ Փորձեց սարսափ ազդել գեթ ձայնով, ինչպես պարտավորեցնում էր հրամայող անձնավորություն լինելու հանգամանքը.

— Պետք է հանձնես զենքերը, ձեր բոլո՛ր զենքերը։ Ասածս հասկանո՞ւմ ես։ Ինչքան էլ բազարի մեյմուն ձևանաս, մեկ է. դու ինձ պատասխան կտաս գյուղերում գտնված ամեն մի դանակի համար։

— Մեր գյուղերում զենք չկա։

Տեր-Հայկազունն այս ճշմարտությունն ասաց շատ հանդարտ և որոշակի։

Մինչ այդ մուխթարի տան մութ նախասենյակում ներկայացվում էր մի փոքրիկ տրագիկոմեդիա։ Դրա վերջն այն եղավ, որ համայնքի ծեր քարտուղարը, խորամանկ մորուքը ցնցելով, դուրս նետվեց։ Դարպասը նրա ետևից իսկույն փակվեց։ Այսպիսով, մուխթար Քեբուսյանն իր երկարամյա ծառայության ամենածանր պարագայում, ոչ այնքան փափկասրտորեն նրան վստահեց իր պաշտոնը։ Դժբախտ կեղծ-մուխթարը կավճի գույն ստացած՝ թպրտում էր զափթիեների թևերի մեջ, որոնք ծերունուն քարշ տալով տանում էին իրենց հրամանատարի մոտ։

Նա թոթովելով կրկնեց Տեր-Հայկազունի խոսքը.

— Մեր գյուղերում զենք չկա։

Կարծեցյալ մուխթարի դողահար անձնավորությունը ոստիկանապետին շատ հարմար թվաց։ Դա նրան անվերապահորեն համոզեց, որ ինքը աստվածատիպ շանթարձակ է։ Օդում շաչեց նրա ոստիկանական կաշվե մտրակը.

— Ավելի վատ ձեզ համար, եթե զենք չունեք։

Այստեղ առաջին անգամ միջամտեց կարմրավուն աչքերով մյուդիրը։ Սալոնիկցի երիտասարդն անասելի ցանկություն զգաց քրիստոնյա քահանայի ներկայությամբ ցուցադրել, որ իր և պետության ամենահետամնաց գավառի ոստիկանական այդ թափթփուկի միջև անդունդ կա ընկած, և ինքը նրանից այնքան է հեռու, ինչքան երկինքը՝ երկրից։ Իթթիհաթն այլևս չի կազմակերպում հնաոճ ջարդեր։ Իթթիհաթը նուրբ քաղաքականություն է վարում։ Իթթիհաթը երկաթյա կամքով իրագործում է պետական անհրաժեշտությունը, ըստ կարելվույն խուսափելով անտեղի խստություններից։ Մարդիկ դաստիարակված են արդիական ոգով, թշնամի են ամեն առիթով բռունցք գործադրելու եղանակներին, նույնիսկ գնահատում են «նյարդեր» ունենալը։

Մյուդիրը թոուցիկ հայացք նետեց վարպետորեն հարդարած իր երկար եղունգներին, ապա խիստ հարգալից դիմեց վարդապետին՝ այն վտանգավոր սիրալիրությամբ, որ հիանալի կարողանում էին կիրառել կենաց և մահվան տնօրեն բոլոր պաշտոնյաները.

— Գիտե՞ս, թե ինչ է որոշված ձեր վերաբերյալ։

Վարդապետը լուռ ու խորազնին նայեց նրան։ Մյուդիրը, այդ համարձակ հայացքից փոքր-ինչ շփոթված, մատնացույց արեց ծանուցագրերը.

— Կառավարությունը որոշել է ձեզ տեղափոխել։ Ձեզ տրվելու է նոր բնակավայր։

— Իսկ որտե՞ղ է լինելու այդ նոր բնակավայրը։

— Դա ո՛չ իմ գործն է, ո՛չ էլ ձեր։ Իմ անելիքը միայն ձեզ հավաքելն է, իսկ ձեր անելիքը՝ միայն քայլելը։

— Ե՞րբ ենք ճանապարհ ընկնելու։

— Միայն ձեր վարմունքից է կախված, թե ձեզ ինչքան ժամանակ կտամ, որ գործներդ կարգի բերեք և պատրաստ լինեք հրամանի համաձայն ճանապարհ ընկնելու։

Համայնքի քարտուղարը, որն արդեն վերագտել էր ինքնատիրապետումը, շինծու հնազանդությամբ հարցրեց.

— Իսկ ի՞նչ կարտոնեք հետներս տանենք, էֆենդի։

— Միայն այն, ինչ կարելի է տանել ձեռքով կամ շալակած։ Մնացած բոլորը՝ ձեր արտերը, այգիները, կալվածքները, տներ՝ անշարժ թե շարժական գույքով, այս տարվա նիսան[1] ամսի տասնհինգից, մինիստրության հրամանով, պատկանելու են պետությանը։ Մայիսի հինգի վերաբնակության վերաբերյալ օրենքով ձեզ նախկին հողերի դիմաց տրվելու են նոր հողեր։ Ամեն տնատեր կարող է խնդրագիր ներկայացնել, հատուցում պահանջել մայր մատյանով հաստատված իր սեփականության դիմաց։ Խնդրագրի համար հինգ ղուռուշի[2] դրոշմանիշ է հարկավոր։ Դա էլ կարելի է ճարել ոստիկանական վարչությունում։

[1] Նիսան—ապրիլ

[2] ղուռուշ—պիաստր (Թուրքական լիրայի մեկ հարյուրերորդական մասը)

Այս պաշտոնական նեղբոցն այնքան անուշ ու նիրզաչնակ հոսեց շիկահերի շուրթերից, կարծես խոսքը վերաբերում էր այնպիսի-ինչ-որ կարգադրության։ Մյուդիրը բարյացակամորեն բարձրացրեց ցուցամատը.

— Ձեզ համար ամենից լավն այն կլինի, եթե գործը շարունակեք, ոչինչ չավերեք, ոչինչ չփչացնեք, այլ ինչպես որ կա, հանձնեք պետությանը։

Տեր-Հայկազունը զույգ ձեռքը մեկնեց գեպի սալոնիկցի դիվանագետ երիտասարդը.

— Մեզ ոչինչ էլ հարկավոր չէ, մյուդիր։ Դա մեզ ինչո՞վ կօգնի։ Վերցրեք ինչ որ գտնեք, գտները քաց են։

Առաջնությունը խլող մյուդիրի մեջ խոսելաձևը ռասիկանադետին գրգռեց։ Չէ՞ որ վերջին հաշվով ինքն էր տարաբերության միակ տնօրենը, իսկ այդ թուղթ մրոտողը կայմակամի կողմից նշանակված ուղեկցող է, ուրիշ ոչինչ։ Եթե այդ գրասենյակային քաղցրաբերանը մկանը թույլ տա երկար-բարակ խոսելու, ապա ոչ ոք այլևս չի հավատա, թե ինքն է Անթաքիե քաղաքի ռասիկանադետը։ Նա անթարթ աչքը լռեց, նմանեցրեց գոմեշի արնակալած աչքի, երկու լայն քայլ արեց գեպի Տեր-Հայկազունը, կառչեց շքեղ, նախշակար շուրջառից.

— Հենց հիմա կբերես, առաջ կգնես վեց հարյուր հրացանը։

Տեր-Հայկազունը երկար նայեց գետնին, այնուհետև, ուր պետք է դներ հրացանները, ապա հանկարծ այնպես կտրուկ նա քաշվեց, որ քիչ մնաց կապիտանը վայր ընկներ։

— Ես քեզ արդեն ասացի, որ մենք գյուղերում ոչ մի հրացան չունենք։

Մյուդիրը ժպտաց։ Հերթը նորից հասավ նրան։ Առանց աչքերը ոլորելու, առանց գոռգոռալու, միայն քաղաքական խորամանկությամբ պետք է մոռանար նպատակին։ Նրա ձայնը հնչեց մտահոգ բարյացակամությամբ, պատրաստ էր հայերի համար գանձել փրկության որևէ ելք։

— Տեր-Հայկազուն, ներիր հարցիս համար։ Որքա՞ն ժամանակ է, որ դու վարդապետ ես այս կողմերում։

Անորոշ սիրալիրությունն անհանգստացրեց Տեր-Հայկազունին։ Նա կիսաձայն պատասխանեց.

— Աշնանը, վարդավառից հետո, կլրանա տասնհինգ տարին։

— Տասնհինգ տարի՞։ Սպասիր։ Ուրեմն՝ մեծ հեղափոխության ժամանակ դու արդեն ութ տարի ծողոնօլուքումն էիր։ Հապա, քրքրիր հիշողությունդ։ Այդ թվականին մի՞թե դու հրաշենով լիքը մի քանի արկղ չստացար, որ ձեզ տրամադրվեց հին կառավարության դեմ պայքարելու համար։

Մյուդիրը ծառայության էր անցել պատերազմն սկսվելուց հետո։ Հետևաբար այդ հարցը առաջ էր կամ ինքնաբերաբար, կամ նկատի ունենալով, որ Իթթիհադը Սիրիայում ևս դաշնակիցներ որոնած կլինի, ինչպես Մակեդոնիայում ու Անատոլիայում։ Չգիտեք, որ ճիշտ նպատակին է խփել։

Տեր-Հայկազունը գլուխը գաղտնեց իր հոգևոր օգնականների կողմը։ Սրանք դեռևս չէին համարձակվում ցած իջնել եկեղեցու սանդուղքից։ Վարդապետը թեռցիկ շարժումով վեր կացավ նրանց.

— Մյուդիր, ձեր հոգևորականները գուցե զենքով գործ տեսնեն, բայց մեզ մոտ դրա կարիքը չկա։

Այդ վտանգավոր պահին համայնքի քարտուղարը ելնեամբանքով լի ոգը բարձրացրեց.

— Ախր միշտ խաղաղ ապրել ենք, և սա է մեր հայրենիքը հավիտենական ժամանակներից ի վեր։

Տեր-Հայկազունը մտամոլոր նայում էր մյուդիրին և կարծես, իրոք, ստուգում էր սեփական հիշողությունը.

— Ճշմարիտ է, մյուդիր։ Այն ժամանակ նոր կառավարությունը կայսրության տարբեր բնակավայրերում հրացաններ բաժանեց, այդ թվում նաև հայերին։ Եթե տարիքդ ներում է, պետք է հիշես, որ զենք հանձնողներին բոլոր համայնքները ստացականներ էին տալիս։ Կայմակամն այն ժամանակ քեզ պես մյուդիր էր և ինքն էր ղեկավարում հրացաններ բաժանելու գործը։ Պետք է որ այդպիսի մի ստացական պահած լինի, քանի որ նման կարևոր բաները դեն չեն գցում։ Հավատացած եմ, որ քեզ առանց ստացականի մեզ մոտ չէր ուղարկի, եթե մենք, իրոք, զենք ունենայինք։

Տեր-Հայկազունի առարկությունն անհերքելի էր։ Հիրամի, հյուրյումեթի արձանագրական բաժինը վերջին օրերին տակնուվրա էին արել այդ ստացականի պատճառով։ Նահիյեներից շատերի տված ստացականները գտնվեցին։ Սուեդիան բացառություն էր, և կարծես 1908 թվականին, իրոք, ոչ մի զենք չէր ստացել։ Կայմակամը հակառակն էր պնդում, բայց ոչ մի ապացույց չկար։ Տեր-Հայկազունը ստանստրտորեն հասավ իր նպատակին։ Նրա առավելության պատճառով թունավորվեց մյուդիրի դիվանագիտական հիանալի հանդարտությունը։ Սալոնիկցին ձայնը հեգնաբար խստացրեց.

— Ի՞նչ բան է ստացականը։ Ինչոց։ Այսքան տարի հետո ի՞նչ կարող է հաստատել։

Տեր-Հայկազունը ձեռքն անտարբերությամբ թափահարեց.

— Եթե մեզ չեք ուզում հավատալ, ինքներդ փնտրեցեք։

Ավելորդ, ձանձրալի սակարկությանը վերջ տալու մտադրությամբ կապիտանն իր ոստիկանական թաթը ծանրորեն իջեցրեց վարդապետի ուսին.

— Հա՜, կփնտրենք, շա՜նորդի։ Բայց երկուսիդ էլ կալանքի տակ եմ առնում՝ քեզ ու մուխթարին։ Ոնց որ ուզեմ, էնպես էլ հետներդ կվարվեմ։ Ձեր կյանքը կախված է իմ քեֆից։ Եթե հրացանները գտնենք, ձեզ կմեխենք եկեղեցու դռանը, իսկ եթե չգտնենք, կհրամայեմ, որ ձեզ կախեն կրակի վրա։

Երկու զափթիե շղթայեցին Տեր-Հայկազունի և քարտուղարի ձեռքերը։ Մյուդիրը գրպանից դուրս բերեց մի փոքրիկ խարտոց և սկսեց կարգավորել իր երկար եղունգները։ Կարծես այդ ձևով նա իր ափսոսանքն էր հայտնում պետականորեն անհրաժեշտ խստության առթիվ, միաժամանակ ցույց տալով, որ ինքը, իբրև քաղաքացիական պաշտոնյա, զինված իշխանության դեմ ոչինչ անել չի կարող։ Բայց և այնպես չմոռացավ նախազգուշացնել ձանձրացած մարդու ձայնով.

— Գերեզմանատները չմոռանաք։ Հրացանների ու փամփուշտների համար դրանք շատ ապահով թաքստոցներ են։

Այս բանն ասելուց հետո մյուդիրը գնաց զբոսնելու, մնացածը թողնելով անհամաչափ աչքերով մուավինին։ Զարդանդ տարածողի հրամանով անձնակազմը բաժանվեց մանր ջոկատների։ Ձերբակալվածների մոտ մնացին միայն մի քանի պահակ։ Տեր-Հայկազունն ստիպված եղավ իր մետաքսյա չծալվող շուրջառով նստել հրապարակի կավահողին։ Զափթիեներն այդ պահին կատաղի գոռգոռոցներով գրոհում էին տների վրա։ Պատերի ետևում իսկույն ծայր առավ դղրդյուն, աղմուկ-աղաղակ։ Թափով բացվում էին պատուհանները, ներսից դուրս էին թռչում գորգեր, վերմակներ, բարձեր, ներքնակներ, ծղոտե աթոռներ, սրբապատկերներ, հարյուրավոր այլ իրեր։ Այդ բարիքներին սպասող խաժամուժը վրա պրծավ։ Սկսվեց մի կատաղի տուրուդմբոց։ Ապա ցած նետվեցին ջարդվող իրեր՝ հայելիներ, նավթի լամպեր, լուսամփոփներ, գավաթներ, վազաներ, ամանեղեն։ Դրանք փշրվում էին ընչաքաղց կանանց հառաչանքների տակ։ Թրքուհիները հավաքում էին կտորները, լցնում չարշաֆների[1] մեջ։

[1] չարշաֆ—սավան, ծածկոց

Աղմուկն ու ավերածությունը դանդաղ պտույտ էին գործում եկեղեցու շուրջը։ Այնուհետև շարժվեցին դեպի գյուղի երկար ճանապարհը։

Շղթայվածները երեք զարհուրելի ժամ մնացին գետնին պպզած, մինչև զափթիեները վերադարձան իրենց ռազմական արշավանքից։ Ավարն ավելի քան ողբալի էր՝ երկու հին ատրճանակ, հինգ ժանգոտված սուր, երեսունյոթ դաշույն, ավելի ճիշտ՝ այգի էտելու դանակներ, խոշոր գրչահատներ։ Զափթիեները գերեզմանատունը չէին պղծել հավանաբար գործիքների պակասի և ծուլության պատճառով։ Ոստիկանապետը փրփրել էր։ Խորամանկ խոզ-վարդապետը նրան խաբել էր, զենքի մասին սխալ տեղեկություն էր տվել։ Ի՞նչ ամոթանք Անթաքիեի ոստիկանության համար։ Տեր-Հայկազունին բարձրացրին, առաջ հրեցին։ Անթարթ և ուռած աչքերը վրա պրծան։ Վարդապետի դեմքին խփեց ոստիկանապետի շընչառության ալիքը, որից ատելություն և ոչխարի վատ մարսված ճարպի գարշահոտություն էր փչում։ Տեր-Հայկազունը զզվանքից ծամածռվելով՝ գլուխը շուռ տվեց, բայց հետևյալ ակնթարթում դեմքի վրա զգաց կաշվե խարազանի կոշտ գլխի երկու հարված։ Մի քանի վայրկյան գիտակցությունը կորցրեց, ուշքի եկավ, զարմացավ, սպասեց արյունահոսության։ Վերջապես քթից ու բերանից դուրս հորդեց արյունը։ Վարդապետի ներսում պոռթկաց տարօրինակ, բայց և երանելի զգացում, երբ նա առաջ թեքվեց, որ իր չնչին արյամբ շաղարտվի Քրիստոսի քարոզչի հանդերձանքը։ Նրա ուղեղում հրեշտակային հեռավոր ձայնի պես երգեցիկ հնչեց. «Այս արյունը բարի՜ է»։

Եվ, հիրավի, բարի էր այդ արյունը։ Զբոսանքից հենց այդ պահին վերադարձած երիտասարդ մյուդիրը զգալիորեն ազդվեց։ Նա բնաջնջման մոլի ջատագով էր, բայց ականատես լինելու ոչ մի ցանկություն չուներ։ Իթթիհաթականների մեջ նա բնավ էլ ամենադաժանը չէր։ Միջամտեց, խուսափելով փափկասիրտ թվալուց։ Ժամանակ չկար. դեռևս վեց գյուղում գործ ունեին։ Առանց այդ էլ Տեր-Հայկազունի պատիժը լիակատար հագուրդ էր տվել մուավինի փառասիրությանը, իշխանություն ցուցադրելու մարմաջին։ Եվ նա վեհանձնորեն գլխով արեց։ Վարդապետի և քարտուղարի շղթաներն արձակեցին։ Նրանց իրավունք տրվեց տուն գնալու։

Օրը Յողոնօլուքի համար անցավ բավական մեղմ, ավելի մեղմ, քան այդ կարգի օրերը՝ հայ ժողովրդի մյուս քաղաքներում ու գյուղերում։ Զափթիեները սպանել էին միայն երկու տղամարդ, որոնք տները խուզարկելիս դիմադրել էին, բռնաբարել երկու դեռատի կին։

Գաբրիել Բագրատյանն ուղիղ քսանչորս ժամ սպասեց, մինչև հերթը հասավ իրեն և իր տանը։

Դարձյալ տնեցիներն ու մերձավորներն իրար գլխի հավաքված՝ ամբողջ գիշերը արթուն անցկացրին։ Կարծես քուն ասած բանն այլևս գոյություն չուներ։ Հոգնածությունը մարդկանց մարմինների մեջ թափանցում էր ինչ-որ փոփոխ զանգվածի նման, որն օդում դանդաղ կարծրանում է։ Ոտնկ ծալելը, ձեռք բարձրացնելը, գլուխ թեքելը, այս ամենը կամքի անմատչելի շռայլություն էր։ Բայց մարդիկ պետք է գնահատեին այդ հոգնածությունը, քանի որ դա վերացնում էր իրականությունից, մշուշային ամոքիչ անջրպետ կանգնեցնում աշխարհի ու սեփական տառապանքի միջև։ Այդ անջրպետն ամենից ավելի սփոփում էր Ժուլիեթին։ Կենսուրախ կինը, որը դեռևս մի քանի օր առաջ իր վարդերով ու մոտաքոս գործվածքներով շրջապատված՝ երանություն էր վայելում, ընտրյալ ազգի դուստրը, որն իր ֆրանսիական բարձունքից քամահրանքով նայում էր ցած՝ իր ամուսնու ցեղին, այդ անհոգ կինը, որը հնարավոր չէր համարում, թե ինքը լրջորեն կարող է ընկնել կիռավայրենիների հանդեպ ցուցաբերվող ատելության հորձանքի մեջ, Ժուլիեթը այժմ շշմել էր, ինչպես մահվան հարվածից։ Աչքերը, որ այնքան վճիռ էին, արդեն ջրալի արտահայտություն էին ստացել, իսկ դեմքը խամրել էր։ Մազերը մի տեսակ չոր էին, ամբողջ գիշերը ցանուցիր թողնված։ Հանդին ճանապարհորդական նույն ճերմկած զգեստն էր, որով մասնակցեց վրանների փորձարկմանը։ Անդադար աստիճացող և մեղմացող մարմնական ծանր ցավի պես նույն միտքն էր պտտվում նրա հոգնատանջ ուղեղում. «Նա հայ է, ես՝ ֆրանսուհի։ Այստեղ երկվություն կա, չնայած ամուսնության սուրբ խորհրդին։ Մի՞թե ես, իրաք, պետք է կործանվեմ, քանի որ նա հայ է։ Իսկ ինչո՞ւ նա չի կարող փրկվել, եթե ես ֆրանսուհի եմ»։

Ժուլիեթն ուզեց զայրանալ կնոջ ճակատագրի դեմ, քանի որ ամուսնանալիս նա զոհաբերում է իր անունը, ազգությունը, բայց այդ պահին նման բաներ կշռադատելու համար այդքան հոգեկան ուժ չուներ։ Ամեն անգամ այդ միտքը նրա ուղեղում ցամաքում էր, ինչպես ջուրը՝ ավազի մեջ։ Հիշողությունն ակամա և ծուլորեն թերթում էր միևնույն պատկերը։ Ժուլիեթը մտաբերում էր Քլեբեր ավենյուի սրահը՝ մարմարյա խոշոր, կարմրավուն կթակաքանով, որտեղից ինքը սեփական կամքով վաղուց արդեն հեռացել էր։ Երբեմն նրա ներսում եռում էր ինչ-որ քնքշանք, մեղքի գիտակցում։ Նա ջանում էր իր մեջ հաբատև զարգացնել այդ քնքշանքի, մեղքի գիտակցման զգացումը։

Այդ միջոցին Ժուլիեթը դրկեց իրեն հենված Ստեփանին, սեղմեց կրծքին.

— Պառկիր և քնիր, Ստեփան։

Նայում էր տղայի հոգնածությունից շաղված աչքերին, և մեղքի գիտակցումն ու քնքշանքը ներսից հարցրին. «Ո՞վ ես դու, բոլորովի՞ն օտար զավակ»։

Մեծ հյուրասրահում հավաքվել էին բոլոր տնեցիներն ու մտերիմները։ Իսկուհու կողքին նստել էր նաև Օվսաննան։ Սա Ժուլիեթի մոտ էր տեղափոխվել, քանի որ պատվելի Արամը գնացել էր Բիթիսս իր հոգևոր եղբայր Նախշդյանին և բողոքական համայնքին ճանապարհվելուց առաջ օժանդակություն ցույց տալու։ Գոնզագի ներկայությունն այլևս աչքի չէր ընկնում։ Վերջին օրերը նա մեծ մասամբ անց էր կացնում ամառանոցում։ Հույն երիտասարդի ասելով, իր տանտերը՝ դեղագործ Գրիգորը, մեծ ժողովից հետո հոգեկան ծայրահեղ խռովություն էր ապրում։ Բան ու գործ երեսի վրա էր թողել, համբարձին ապագա կյանքի համար ո՞չ սենգամթերք էր նախապատրաստում, ո՞չ գործիքներ, աչքաթող էր արել հասարակության մասին հոգալու իր նվիրական պարտքը, չնայած ավագների խորհրդի ընտրյալ անդամ էր։ Դեղատանն ամեն ինչ տակնուվրա էր եղել։ Հաճախորդներին սպասարկում էր խուլ ծառան։ Սա էլ ամեն ինչ իրար էր խառնում։ Մարդիկ շարունակ պաշարում էին նկուղը, որ օգտվեն Գրիգորի աղքատիկ դեղագանձարանից, ժամանակին գնեն նավթ, սպիրտ, կանեփե պարաններ, ավելներ և նման այլ ապրանքներ։ Վաճառքի այս անհեթեթ եռանակի պատճառով լրջորեն ընդհարվեցին Գրիգորի և Պետրոս Ալեքսանու նման վաղեմի բարեկամները։ Բժիշկը մեծ աղմուկ բարձրացրեց, կպավ նրա սրբությունն սրբոցին, ասելով, թե չի կարելի թույլ տալ, որ մի բթամիտ գոմեշ ծառայի միջոցով խանութում եղածշեղածը ծախի եռամսյա ստահակներին։ Գրիգորն իրավունք չուներ յոգի ծիծաղելիորեն չնչին պաշարը բաժանելու Բաղդասարին, Օվսաննային, Տիգրանին, Պարսամին և նման այլ ժլատների։ Մի՞թե Գրիգորը չգիտեր, որ իր խղճուկ դեղորայքը հասարակական սեփականություն է, ինչպես աղը, համեմունքները, նավթը, առանձակ տարբեր ի ցույց դրված մյուս բոլոր ցածրարակ ապրանքները։ Հակառակ իր բնավորության, դեղագործը սաստիկ հուզվել էր, գոռգոռացել, թե ինքը շահամոլ չէ, թե ինքը տանջակ տարբեր զոհաբերել է իր անձը, քանի որ դեղատան այդ ամբողջ աղբը իր գոյության նվաստացումն է։ Եվ ապացուցելու համար, թե բժիշկն ում հետ գործ ունի, Գրիգորը արժանապատվությամբ բացել էր պատուհանը (մի բան, որ հաճախակի չէր կատարվում) և այդ օրվա

ամբողջ շահույթը՝ փարաները[1], զուռուշներն ու մեթելիքները[2] շպրտել եկեղեցու հրապարակը, այնտեղ խաղացող տղաներին։ Այդ արքայավայել վարմուքից բժիշկը բնավ չէր ցնցվել, այլ դեղագործին դրդել էր փողերի հետ դուրս նետել նաև գրադարանի գրքերը, մանավանդ որ պատուհանն արդեն բաց էր։ Դրանով բարի գործ արած կլիներ թե՛ իր, թե՛ ուրիշների համար։

Գոնզագ Մարիսը պատմում էր, թե իրեն ծայրահեղ դժվարությամբ հաջողվեց հաշտեցնել կվող ծերունիներին։ Այսօր Գրիգորն իր դեղատունը փակել էր մեկընդմիշտ։ Խորասուզվել էր նախանձոտ Ալթունու ամբաստանած գրքերի մեջ և կարդո՜ւմ էր, կարդո՜ւմ։ Ոչ, դա լիովին ճշմարիտ չէր լինի. Գրիգորը բնավ էլ չէր ընթերցում, այլ տենդագին պեղում էր իր գանձերը, աննպատակ բացում էր, փակում, թերթում կամ միայն դրսից շոշափում, կարծես հրաժեշտից առաջ ուզում էր իր գրադարանը լրիվ ըմբոշխնել։ Այստեղ թերևս կար նաև տվայտանքն այն անորոշության, որ մարդ կուզենար վերծանել։ Հիրավի, ի՞նչ էր վիճակվելու Գրիգորի անզուգական գրադարանին։ Այս իմաստով դեղագործի խենթանալն այնքան էլ խենթություն չէր։

Իր տանտիրոջ պատմությունը Գոնզագը կարողացավ ներկայացնել այնքան զվարճալի ձևով, որ Գաբրիելը մի պահ ամեն ինչ մոռացավ, ծիծաղելով նայեց Ժուլիեթին։ Տարօրինակ չէ՞ր. երիտասարդ հույնն իր անձի համար հայ ժողովրդի ճակատագիրը դարձրել էր արկածախնդրության առարկա։ Այդ մտադրությունը (լրագրությունն էլ վրան ավելացրած) այնքան էլ Գաբրիելի սրտովը չէր, և նա Գոնզագին երկար տար

դնչուհի)։ Նոր զգեստը Սաթոյի հոգեբանության վրա զարմանալի ազդեցություն գործեց։ Աղջիկը ջանք էր թափում, որ իր շարժուձևով թվա քաղաքակիրթ։ Առաջին իսկ օրից ոտքից գլուխ զարհուրելի կեղտի մեջ լողում էր, բայց այժմ հպարտ-հպարտ քայլում էր, գովեստ հայցող հայացքը հառում բոլորին։ (Դրան հակառակ, Ստեփանը ժամանակին պնդելով, մորն ստիպել էր իր համար գեղջկական զգեստ կարել)։ Հաշվի առնելով Թիթեռնիկային իր շքեղ զգեստը, որը նրա համար դիրքի ու աստիճանի անօրինակ բարձրացում էր, Սաթոն երևի կարծում էր, թե իր սիրելի Իսկուհին այլևս չի կարողանա դիմադրել իր փաղաքշանքներին։ Նա կուչ եկավ օրիորդ Թովմասյանի ոտքերի առաջ և թույլ չտվեց, որ իրեն վանդեն։ Իսկուհու զարմանքը շարժելու և սիրտը շահելու համար այնքան խաղաց իր փեշերի ու ժապավենների հետ, այնքան բարձրացրեց, իջեցրեց, լայն բաց արեց, ծալքերն իրար վրա բերեց, մինչև բոլորին համբերությունից հանեց։ Երբ այդ ձևով չհաջողվեց արժանանալ որբանոցի ուսուցչուհու հայացքին, աղջիկը դեղնավուն դեմքը ծամածռեց, գլուխը կատաղությամբ սեղմեց Իսկուհու ոտքերին. «Քյուչյո՛ւք հանում»։ Պարզվեց, որ եվրոպական զգեստի քաղաքակրթիչ զորությունը բավական չէր Սաթոյի վայրենությունը սանձահարելու համար։ Հազիվ էր Գոնզագ Մարիոն սկսել իր աշխույժ նվագը, երբ փոքրիկ աղջկա սարսափի նոպան բռնեց։ Նույն ձևով են վարվում գայլազգիները. երգին ու երաժշտությունը արձագանքում են իրենց թանձրախավար հոգիների տանջալից ոռնոցով։ Բոլոր ատրքին աստիճանի արարածներն էլ մահացու սարսափ են զգում չափ և ներդաշնակություն ունեցող հնչյուններից։ Սաթոն որոշ ժամանակ աչքերը չռած՝ լսում էր Գոնզագի դաշնամուրային նվագը։ Նկատելի էր, որ աղջիկն ամեն ջանք գործադրում է իրեն զսպելու համար։ Մարմինը տաքապատին գետուղեն էր նետում։ Հուսահատ կառչեց Իսկուհուց։ Հանկարծ իրեն կորցրեց։ Լայն բացված բերանից պոռթկաց շնագայլի ոռնոց և բորենու կաղկանձ հիշեցնող մի ձայն, իսկ մարմինը ցնցվեց ներսում արթնացած ինչ-որ ուժից։ Բոլորը փշաքաղվեցին։ Աղջկա այտերից գլորվող մանկական խոշոր արցունքները բնավ չմեղմացրին մարդկանց խորշանքն ու սարսուռը։

Գաբրիելը նշան ավեց, և Ավագյանը Սաթոյի ձեռքից բռնելով՝ նրան սենյակից դուրս տարավ։

Գոնզագն ամբողջ թափով մատնահարում էր սեղները, որպեսզի գրսից լսվի դիվահար աղջկա ազիոզորմ ոռնոցը։

Ինչպես արդեն ասվեց, այդ գիշեր տնեցիներից ոչ մեկն անկողին չէր մտել։ Մերթընդմերթ ննջում էին նստած տեղերում։ Իրենց իզուր էին տանջում. զափթիեները գալու էին ոչ շուտ, քան հաջորդ օրվա առավոտյան կամ կեսօրին։ Համենայն դեպս ոչ մեկը մտադիր չէր նահանջելու և անկողին մտնելու։ Անկողինը, փափուկ բարձերով հարուստ, ճանճերից ու մոծակներից ծալքավոր վարագույրներով պաշտպանող հանգստավետ անկողինը, այդ սիրագորով մայրը, քաղաքակիրթ մարդու ամենահարազատ հանգրվանը որքա՜ն հեռու էր թվում, որքա՜ն անմատչելի։ Ինքնամոռաց երջանկության ոչ մի հավակնություն այլևս չունեին։ Երբ վաղ առավոտյան խոհարար Հովհաննեսը ճենապակե գեղեցիկ սկուտեղով թարմ սուրճ, ձու և հավի սառը մթս ուղարկեց հյուրասրահ, մարդիկ, չնայած քաղցած էին ու ծարավ, մնացին գրեթե տարակուսած։ Շտապշտապ կերան, խմեցին. կարծես տունը փուլ էր գալու։ Դեռևս իրավունք ունեի՞ն նախկին սովորությամբ, առանց խղճի խայթի համեղ ուտելիքներ վայելելու։ Այդ ձևով չէի՞ն վատնի համայնքին պատկանող սնունդը։ Մտովի բոլորն էլ արդեն տպրում էին Դամլաջրքի բարձունքներում։

Գաբրիելը թուրք սպայի համազգեստ էր հագել, կապել թուրը, կախել շքանշանները։ Ուզում էր զափթիեներին դիմավորել իբրև բարձրաստիճան սպա։ Գոնզագն ամեն կերպ խորհուրդ էր տալիս հրաժարվել այդ մտադրությունից.

— Ձեր զինվորական դիմակահանդեսը կարող է գրգռիչ ազդեցություն գործել։ Ձեմ հավատում, թե դա ինչ-որ օգուտ բերի։

Գաբրիելը մնաց անդրդվելի.

— Ես օսմանյան բանակի սպա եմ։ Ինչպես կարգն է, ներկայացել եմ իմ գունդը։ Առայժմ ինձ ոչ ոք չի աստիճանազրկել։

— Ավելի վատ Ձեզ համար։

Մարիսը դա ասաց բարձրաձայն, բայց մտքում ավելացրեց. «Այս հայերին խոսք հասկացնելն անհնար է. դրանք եղել են և մնում են զարմանալի խենթեր»։

Ճաշից առաջ, մոտ ժամը տասնմեկին, Իսկուհին հանկարծ իրեն վատ զգաց։ Կարճատև ուշաթափությունից հետո բռնեց ուժեղ դողի նոպան։ Դժվարությամբ դուրս եկավ սենյակից։ Երբ ուզեցին օգնել, կտրականապես մերժեց։ Ժուլիեթը հետևեց նրան։ Օվանեսյան ձեռքի շարժումով կանխեց.

— Հանգիստ թողեք... Ջեյթունի հետևանքն է... Սարսափը... Ուզում է առանձնանալ... Երկրորդ անգամ ենք ականատես լինում...

Պատվելու երիտասարդ կինը դեմքը ծածկեց։ Նրա ծանր մարմինը ջղաձիգ հեկեկանքից ցավագին ցնցվում էր։

Հենց այդ պահին մի խումբ զափթիեներ ոստիկանապետի և մյուդիրի գլխավորությամբ մոտեցան Բագրատյանի տանը։ Գաբրիելի կարգած պահակները շնչակտուր ներս ընկան, հայտնելով չարագույժ լուրը։ Զափթիեներից վեցը պաշարեցին շրջապարիսպը, վեցը՝ այգին, ութը՝ օժանդակ բակը։ Մյուդիրը, մուավինը և չորս զափթիե ներս մտան։

Թուրքական զորախումբը հոգնած էր երևում։ Քսանչորս ժամ շարունակ գյուղերը կատաղորեն տակնուվրա էին արել, տները կողոպտել կամ ավերել, տղամարդկանց ձերբակալել, ծեծելով արնաքամ արել, «մի քիչ» բռնաբարությամբ զբաղվել և դրանով իսկ մասամբ իրագործել կառավարության վսեմ ծրագիրը։ Այնպես որ այդ ժամին երջանիկ պատահականությամբ հրոսակախմբի արյան առաջին ծարավը հագուրդ էր ստացել։

Ավետիս Բագրատյանի տունն իր հաստ պատերով, զով սենյակներով, աղմուկը խլացնող գորգերով և չորս կողմ շարված արտասահմանյան իրերով, անշուշտ, թուրքերի վրա ուժեղ տպավորություն թողեց, մեղմացրեց նրանց վայրագությունը։ Պատուհանների կարմիր վարագույրներն իջեցված էին, և զավթիչները հայտնվեցին շքեղ սրահի կիսախավարում, եվրոպացի տիկինների և պարոնների դեմ հանդիման, որոնց պատկառանքով շրջապատել էին սպասավորները։ Անշարժ ու ձգված սպասում էին իշխանավորները։

Ժուլիեթը կառչեց Ստեփանի ձեռքից։ Գոնզագը սիգարիկ վառեց։ Գաբրիելը մի քայլ արեց դեպի պատվիրակությունը, սպայական կանոնների համաձայն ձախ ձեռքով թուրը փոքր-ինչ բարձրացրեց։ Զինվորական համազգեստը, որ ճանապարհվելուց առաջ կարել էր տվել Բեյրութում, նրան ազդու տեսք էր տալիս։ Այդ պահին ներկա գտնվողների մեջ նա ամենապատկառելի անձնավորությունն էր թվում ոչ միայն իր վիթխարի հասակով, այլև իր ամբողջ արտաքինով։ Գոնզագը կարծես հիասթափված էր։ Գաբրիելի զինվորական տեսքը տպավորություն գործեց։ Ոստիկանապետը տարակուսանքով նայում էր շքանշանակիր սպային։ Այդ ի՞նչ էր նշանակում։ Ահարկու մի աչքը խամրեց, իսկ մյուսը՝ ուռածը, լրիվ փակվեց։ Իր դերում իրեն լավ չէր զգում նաև պեպենոտ մյուդիրը։ Փայտանկարիչների ու շերամապահների անշուք տներում անմատչելի վերակացու-աստծո դեր խաղալը շատ ավելի դյուրին էր։ Այստեղ, քաղաքակիրթ միջավայրում, երիտասարդ սալոնիկցու ուխտադրուժ նյարդերը դավաճանեցին։ Փոխանակ, իբրև Իթթիհաթի և պետության ներկայացուցիչ, նզովյալ ազգին պատկանող այս տունը անգթորեն քարուքանդ անելու և գրավելու, խոնարհվեց, ձեռքը տարավ դեպի ֆեսը։ Դժկամությամբ մտաբերեց դիվանատանը Բագրատյանի հետ ունեցած իր զրույցը։ Բարոյական այս նահանջը ժամանակ խլեց, և մյուդիրը պատշաճ սկիզբ չգտավ։ Բագրատյանն արհամարհական այնպիսի լրջությամբ էր հայացքը նրան գամել, որ սպառնալիք ստեղծվեց, թե դերերը կարող են փոխվել։ Կարմրամազ, անբարետես օսմանցիների դեմ ռազմատենչ կեցվածքով կանգնած էր բարձրահասակ Հայաստանը։ Գաբրիելը հետզհետե ավելի հաղթանդամ էր թվում, և մյուդիրին տանջում էր սեփական խղճուկ արտաքինը, որն իր ազգի հերոսական էությունն այնքա՜ն անբավարար էր մարմնավորում։ Ուրիշ ոչինչ չէր մնում անելու։ Գրպանից դուրս բերեց պաշտոնական ահագին գրությունը, ակնհայտ կերպով ապավինեց դրան, հնարավոր խստությամբ թմբկահարեց իր գործի էությունը.

— Գաբրիել Բագրատյան, ծնյալ ի Յողոնօլուք։ Դուք այս տանտերն եք և ընտանիքի ղեկավարը։ Որպես օսմանյան կայսրության քաղաքացի, ենթարկվում եք Անտիոքի կայմակամի հրամաններին և կարգադրություններին։ Սուեդիայի Մուսա լեռան շրջանի ամբողջ բնակչության օրինակով, մոտ օրերս (ժամկետը դեռևս պետք է որոշվի) ճանապարհ կընկնեք դեպի արևելք՝ Ձեր ամբողջ ընտանիքով հանդերձ։ Տեղահանության ընդհանուր միջոցառման դեմ որևէ ձևով բողոքելու իրավունք չի տրվում ո՛չ Ձեզ, ո՛չ Ձեր կնոջը, ո՛չ Ձեր որդուն, ո՛չ էլ Ձեր ընտանիքին պատկանող որևէ այլ անձնավորության...

Մյուդիրը, որը ցույց էր տալիս, թե իբր գրությունն է կարդում, աչքը շլելով նայում էր թուղթն ի վեր.

— Ձեր ուշադրությունը հրավիրում եմ այն բանի վրա, որ Ձեր անունը քաղաքականապես անվստահելի ճանաչվածների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում։ Դուք դաշնակցական կուսակցությանը մոտ կանգնած մարդ եք։ Ուստի ուղևորության ընթացքում ևս Ձեզ վրա սահմանվելու է ամենօրյա խիստ հսկողություն։ Փախուստի որևէ փորձ, կառավարության հրամանների և գործադիր օրգանների դեմ ուղղված ամեն մի ըմբոստություն, տեղահանության կարգ ու կանոնի դեմ կատարվելիք ամեն ոտնձգություն անհապաղ կավարտվի ոչ միայն Ձեր, այլև Ձեր բոլոր մերձավորների մահապատժով։

Գաբրիելը նշան արեց, որ ուզում է պատասխանել։ Բայց մյուդիրը թույլ չտվեց խոսելու։ Արևելյան ճոխ լեզվին այնքան խորթ պաշտոնական խճողված լեզուն նրան երևի արտակարգ բավականություն էր պատճառում.

— Նորին գերազանցության Հալեպի կուսակալի լրացուցիչ կարգադրությամբ տեղահանվողներին չի թույլատրվում սեփական քմահաճույքով օգտագործել կառքեր և կենդանիներ՝ բեռներ տեղափոխելու կամ նստելու նպատակով։ Անհրաժեշտության դեպքում ինքս տեղական մի կառք կամ ավանակ կտրամադրեմ տկարներին և հիվանդներին։ Այս բարյացակամության առթիվ որևէ ասելիք ունե՞ք։

Գաբրիելն իր թրի պատյանն ամուր սեղմեց ազդրին։ Բառերը բերանից դուրս եկան քարերի նման.

— Ես կգնամ մեր ժողովրդի ճանապարհով։

Մյուդիրն արդեն լիովին հաղթահարել էր իր սկզբնական կաշկանդվածությունը։ Իր խոսքերին արդեն կարող էր տալ բարյացակամ հոգատարության շեշտ.

— Որպեսզի զերծ մնաք վտանգավոր գայթակղությունից, ո՛չ ժամանակից շուտ մեկնեք, ո՛չ էլ ուրիշներից առանձնանաք, ես անմիջապես կբռնագրավեմ Ձեր կառքը, ձիերն ու մյուս գրաստները։

Այնուհետև եղավ այն, ինչ սովորաբար պատահում էր, միայն թե սկզբում դա կատարվեց զուսպ ձևերով։ Ոստիկանապետը, որը դեռևս չգիտեր, թե ինչպես վարվի բնաջնջման ենթակա հայի համազգեստի, թրի և շքանշանների հետ, մոլտալով մեջտեղ քաշեց զենքի հարցը։ Գաբրիելը Քրիստափորի և Միսակի միջոցով բերել տվեց բեդվինական երկայնափող հրացանները։ Դրանք, իբրև հինավուրց զարդեր, կախված էին սանդղամերձ սրահում։ (Դա, անշուշտ, աչքակապություն էր, քանի որ բոլոր պիտանի զենքերն արդեն տարել էին Դամլաջրք)։

Ոստիկանապետի բերանից հեգնական քրքիջը ֆշշոցով դուրս նետվեց, ինչպես եռացող կաթսայի միջից։ Մյուդիրը ներողամտաբար մատներով թմբկահարեց ռոմանտիկ հրացանները.

— Էֆենդի՛, արդյոք չե՞ք պնդի, թե այս առանձնության մեջ առանց զենքի եք ապրում։

Գաբրիելը որսաց թարթիչներից զուրկ մյուդիրի հայացքը, կառչեց դրանից.

— Իսկ ինչո՞ւ չէ։ Այս տունն իր հիմնադրման օրից, այսինքն՝ 1870 թվականից, այսօր առաջին անգամ է հարձակման ենթարկվում։

Պեպենոտն ափսոսանքով վեր քաշեց ուսերը, իբր թե նման ամբարտավանությունից հետո ինքը Բագրատյանի օգտին այլևս ոչինչ անել չի կարող և ստիպված է ասպարեզը զիջել ռազմական իշխանության պաշտոնական խիստ միջոցառումներին։ Տան խուզարկություն՝ զենք գրտնելու նպատակով։ Մուավինը նշանացի վեր քաշեց թևքերը, թեև իրավազուրկ հայի սպայական համազգեստը նրա ֆելդֆեբելական հոգին դեռևս պղտորում էր տագնապալի, զայրացուցիչ հարցերով։ Աջ անթարթ աչքը չէր կարողանում կտրել Գաբրիելի կրծքի շքանշաններից։ Չէ՞ որ դրանք մարտական գովելի ծառայության առհավատչյա էին։ Ոչ մի կերպ գլուխ չէր հանում, թե օսմանյան կայսրության պաշտոնյաները ինչպես կվարվեն տարագրման ենթակա այդ «պտուղի» հետ։ Իր վեհերոտ կասկածանքը քողարկելու համար տան խուզարկությունը կատարել տվեց մեծ աղմուկ-աղաղակով։ Նա զափթիեների հետ առաջ էր մղվում։ Ետ չէր մնում անմեղսակից ձևացող մյուդիրը։ Ապա շարժվում էին Գաբրիելը, Ավագյանն ու Քրիստափորը։ Թուրքերը խցկվում էին ամեն անկյուն, թխկթխկացնում պատերը, կահույքը տակնուվրա անում, ջարդուփշուր անում ինչ հնարավոր էր։ Բայց երևում էր, որ միջանկյալ կամ կիսատ-պռատ վանդալությունից նրանց հպարտությունը վիրավորվում է։ Նրանք ընտելացել էին լիարժեք, բացահայտ ավերածության։ Մառանում հրացանների խզակոթերով չափազանց անտրամադիր և առանց իսկական եռանդի էին ջարդում գինու սափորները, յուղամաններ, ղշեր, կճուճներ, պնակներ, ինչ որ պատահեր։ Ամենակարևոր սննդամթերքներն ու իրեղենն արդեն ավելի ապահով տեղ էին տարված։ Հիասթափված զափթիեները հույս ունեին, թե այդ պալատի մառանն ավելի հարուստ է լինելու։ Ուրիշ ոչինչ չգտնելով, նրանք մի քանի դատարկ նավթաման վերցրին, քանի որ արևելցին առանձին թուլություն ունի թիթեղյա ամանների նկատմամբ։

Այնուհետև քրտնաթոր զորախումբը գրոհի նետվեց սանդուղքն ի վեր, դեպի վերնահարկը։ Ամենից առաջ մտան Ժուլիեթի ննջարան-հանդերձարանը։ Սենյակի անուշահոտությունը թուրքերին հեռվից այնպես հրապուրեց, որ նրանք մոռացան մյուս սենյակների գոյությունը։ Հագուստեղենի մեծ պահարանի դուռը ջարդեցին։ Դարչնագույն կեղտոտ ձեռքերով դուրս թափեցին նախորդ տարվա փարիզյան մոդելները, նրբաճաշակ զգեստները։ Դրանք այժմ ճմրթվում և օձաձև խրձերով գետին էին շպրտվում։ Առանձնապես խոժոռ դեմքով մի ժանդարմ բարձրացավ զգեստների վրա, ոտքերի համաչափ հարվածներով սկսեց տրորել դրանք, կարծես եվրոպական այդ քաղցրահամ սողուններին ուզում էր հողին հավասարեցնել։ Նույն ճակատագրին արժանացան գիշերանոցները, բատիստե շապիկները, ժանյակներն ու գուլպաները։ Ոստիկանապետը կանացի սպիտակեղենին նայելով՝ իրեն կորցնում էր։ Զույգ ձեռքով վերցնում էր սպիտակ և վարդագույն փրփուրները, դրանց մեջ թաղում ընտ-

կուլզկոտրիչ հիշեցնող իր դեմքը։ Մյուդիրը երազկոտ հայացքով նայում էր պատուհանից դուրս, դիտում այգին, ձևացնելով, թե քաղաքացիական իշխանությունը ոչ մի առնչություն չունի զինվորական իշխանության հետ։ Հույժ եռանդուն զափթիեներից մեկը նետվեց կոկիկ անկողնու վրա, ատամներով պատառոտեց բարձերի մետաքսը, քանի որ այլ բան անել հնարավոր չէր։ Ո՞վ իմանա, գուցե և հաստ բարձերի ներսում ռումբ կար թաքցրած։ Չէ՞ որ շարունակ խոսում էին հայկական ռումբերից։ Մի այլ զափթիե մահակով հարվածեց արդուզարդի սեղանին։ Շխկոցով հատակին թափվեցին բյուրեղապակյա շշեր, խեցիներ, սրբվակներ ու տուփեր, չորս կողմ տարածելով օծանելիքի սուր հոտ։ Մահակը դիպավ հայելուն, և բեկորները չորս կողմ թռան։

Գաբրիելն իր կնոջ պսակազերծումը դիտում էր անտարբեր սառնությամբ։ Խե՜ղճ Ժուլիեթ։ Բայց ի՞նչ էր այս ամբողջ ավերածությունը հետագա ժամերի, օրերի, շաբաթների համեմատությամբ։ Նրան ավելի խոր հոգսեր էին ճնշում։ Պարզ տեսնում էր Իսկուհուն, որն իր սենյակում, անկողնու մեջ կուչ եկած՝ լուռումունջ սպասում էր։ Նրանց միջև որևէ մտերմություն չկար, բայց Գաբրիելը գիտեր, որ այդ աղջիկը բոլորից խեղճ է։ Այդ անասունների երեսից հաշմանդամ դարձած թշվառը կվերապրեր ամբողջ զարհուրանքը։ Գաբրիելը մտածում էր, թե ի՜նչ հնարքով կարող է այնպես անել, որ մուավինն ու զափթիեները Իսկուհու դռան մոտով չանցնեն։

Նախախնամությունը այս անգամ կարծես բարյացակամ էր։ Իսկուհին անկողնում կուչ էր եկել, ինչպես գերեզմանում։ Լսեց մոտեցող քայլերի որոտը՝ մահվան խուլ, ահավոր թնդյունը։ Շեշտակի ձգվեց, աջ ձեռքով կուրծքը ծածկեց, շունչը պահեց, և կալեյդոսկոպային մազակալած դեմքը դարձյալ կախվեց վրան։ Սակայն բռնաբարողը միայն մի պահ հոտոտեց, ապա չքացավ։ Քայլերի որոտն ու խուլ թնդյունը հեռացան, իջան սանդուղքն ի վար, կանգ առան առաջին հարկում, մնացին օդում կախված։ Ապա հանկարծ բացարձակ լռություն տիրեց։ Գնացի՞ն։

Իսկուհին անկողնուց դուրս եկավ։ Գուլպաներով մոտեցավ դռանը, փոքր-ինչ բացեց։ Հիսո՜ւս Քրիստոս. իրոք, հեռացել էին։ Բայց նոր էր ետ դարձել, երբ կարծես մտրակի հարվածներ իջան աղջկա ականջներին։ Այդ հարվածները տղամարդկանց ձայներ էին։ Նա ճանաչեց Գաբրիելի գոռգոռոցը։ Հաշմանդամ ձեռքն ամուր բռնած՝ վազեց դեպի սանդուղքը։ Ներքևում կատարվում էր հետևյալը։

Կարծելով, թե խայտառակությունն արդեն անցավ, Գաբրիելը նախասրահում ինքնավստահ կանգ առավ։ Դիմեց մյուդիրին.

— Տեսնո՞ւմ եք, ձեզ ոչ մի բան չմերժեցինք։ Ուրիշ ի՞նչ է պետք։

Սալոնիկցի պեպենոտ մյուդիրը, այդ ազնվազարմ քաղաքագետը իր պարտքը համարում էր կատարված։ Հոգ էր տարել, որ հայ էֆենդին իր ընտանիքով ոչ մի կերպ չկարողանա փախչել։ Կայմակամը Բագրատյան տոհմի վերաբերյալ հատուկ կարգադրություն էր արել, որի համաձայն տարագրության առաջին քարավանի հետ, խիստ հսկողության ներքո, ամբողջ ընտանիքը պետք է հասցվեր Անթաքիե։ Այստեղ գավառական իշխանությունն արդեն, իր արտահայտությամբ «տնտղելու» էր յուրովի։ Մյուդիրն այն կարծիքին էր, թե պաշտոնական գործողությունը պետք է ընդհատել, այլապես նշանավոր զոհը կարող է վաղաժամ հուսահատ քայլի դիմել։ Անհրաժեշտ էր, որ այդ զոհը կատարյալ վստահություն տածեր կառավարության անքննելի նպատակների հանդեպ։ Անհրաժեշտ էր նաև որոշ չափով բարձր պահել մարդկանց տրամադրությունը, նախքան վրա կհասնեին մոտալուտ փորձությունները։ Այսօր հարկավոր է քաղցրությամբ վարվել։ Մյուդիրը դեռևս տատանվում էր. հայացքն իր քնքշախնամ եղունգներին հառած՝ մտորում էր, թե գործն ի՜նչ ազդեցիկ ձևով ավարտի։ Դժբախտաբար մոռացության էր տվել ոստիկանապետի գոյությունը։ Սրա պղտոր ուղեղը ոչ մի կերպ չէր կարողանում մարսել այն, որ փաղիշահի համազգեստ հագած ամբարտավան գյաուրը փաղիշահի շքանշաններով ու թրով «նազ է ծախում»։ Միայն թե չգիտեր՝ ի՜նչ ձևով գործն ավելի լավ գլուխ կգա։ Դեռևս չէր անցել ամոթալի կաշկանդվածությունը։ Եվ քանի որ մտքով ավելի հաջող բան չանցավ, փորձեց շարժման մեջ դնել իր անթարթ աչքը, ապա ցասկոտ ու սպառնալից ցցվեց Բագրատյանի առաջ.

— Մենք ամեն բան չտեսանք... Վերևում... մի քանի դռան մոտով անցանք...

Եթե Գաբրիելն իրեն զսպեր, երևի ամեն ինչ լավ վերջանար։ Բայց նա թռավ կանգնեց սանդուղքի վրա, ձեռքերով ճանապարհը փակեց և գոչեց.

— Արդեն բավակա՛ն է։

Մուավինը վերջապես իրեն զգաց իր տարերքի մեջ։ Արդեն իր անեծքը պարզ պատկերացնելով, առաջ մղվեց, բռունցքը պահեց Բագրատյանի քթի տակ.

— Ի՞նչն է բավական, հա՛յ խոզ։ Մի անգամ էլ ասա՝ ի՞նչն է բավական, կեղտո՛տ խոզ։

Բագրատյանի հոգում ճգնաժամ սկսվեց։ Դա մեկն էր այն անվերջանալի թվացող և չափազանց բարդ ակնթարթներից, որոնց ընթացքում

մարդկային ճակատագրեր են վճռվում։ Դա շատ լուրջ ակնթարթ էր։ Գաբրիելը համոզված էր, որ իր կյանքը (և ոչ միայն իր) մազից է կախված։ Պետք է նահանջել, մտածեց նա, ետ քաշվել, ճանապարհն ազատել և վերևում տասը ֆունտ դնել այդ անասունի բուռը... Մինչ բանակցությունը գործում էր սառը հստակությամբ, հանկարծ նա ավելի բարձր, քան առաջ, գոչեց.

— Ե՛տ, ոստիկա՛ն, ես ճակատային սպա՞ եմ։

Մուավինի ուզածն էլ այդ էր.

— Սպա՞ ես։ Դու ինձ համար շան հոտած լեշ էլ չես։

Թափով կառչեց հայի արծաթե մեդալից, պոկեց համազգեստի կրծքից։ Գաբրիելը հետագայում պնդում էր, թե ինքը զենքի չդիմեց, բայց ճշմարտությունն այն էր, որ նրան վայրկենապես գետին տապալեցին։ Թուրը շրխկոցով դիպավ պատին։ Զափթիեներից մեկը ծունկը դրեց Գաբրիելի կրծքին, իսկ մյուսները վրայից քաշեցին, հանեցին համազգեստը։

Հյուրասրահից դուրս թափվեցին կանայք և Գոնզագը։ Ստեփանի ճիչերը խառնվեցին դիմադրող հոր հևոցին։ Մի րոպե չանցած՝ Գաբրիելը մերկ էր մինչև կոշիկները։ Վրան մի քանի քերծվածք կար։ Դրանցից արյուն էր հոսում։ Նրա կյանքն արդեն ոչ մի կոպեկ չարժեր։ Եվ այդ կյանքը կորած կլիներ, եթե նույն պահին Գոնզագն ուշադրությունն իր կողմը չգրավեր։ Նրա շարժումները դանդաղկոտ էր, բայց խիստ ազդու։ Զայնը նույնպես տպավորիչ էր, որը գրգռված մթնոլորտին սառցեղեն հանդարտություն հաղորդեց։ Առաջ մեկնեց իր փաստաթղթերը և բարձր բռնած պահեց։ Այդ շարժումն իր կողմը գրավեց բոլոր հայացքները։

Մյուդիրը շփոթված նայեց։ Ոստիկանապետը շրջվեց։ Նույնիսկ զափթիեները բաց թողեցին Գաբրիելին։ Գոնզագն Իթթիհաթի գաղտնի գործակալի առավելությունը գիտակցելով, արժանապատվությամբ բացեց թղթերը, որոնցով նրան արտոնություն էր տրված գաղտնի դիտելու տեղական իշխանությունների գործելակերպը.

— Սա Միացյալ Նահանգներին պատկանելուս անձնագիրն է, որ հաստատված է Ստամբուլի գլխավոր հյուպատոսարանում։— Նա միանգամայն հասկանալի այս բառերը շեշտեց սպառիչ սրությամբ, կարծես դրանցով բացահայտում էր Թուրքիայի համար վճռական նշանակություն ունեցող դիվանագիտական ինչ-որ գաղտնի առաքելություն։— Սա էլ երկրի ներսում ճանապարհորդելու անձնագիր է՝ Նորին վսեմության կողմից անձամբ ստորագրված։ Դուք ինձ կհասկանաք, էֆենդի։

Բագրատյանի կյանքը փրկեց ոչ թե այդ փաստաթղթերի հետ կապված դատարկ սպառնալիքը, այլ հանդուգն հնարամտությունը, թուրքերի ուշադրության հանկարծակի շեղումը։ Դա մի պահ շփոթության մատնեց մյուդիրին։ Տեղահանության հրահանգներում բազմիցս մատնացույց էր արվում, թե միջոցառումները պետք է քողարկել դաշնակից և չեզոք հյուպատոսությունների ներկայացուցիչների աչքից։ Հիրավի, առաջին պահին մյուդիրը կարծեց, թե գործ ունի ամերիկյան դեսպանության գաղտնի գործակալներից մեկի հետ։ Բայց անձնագրին մի հայացք նետելուց հետո համոզվեց, որ այդպիսի վտանգ չկա։ Այնուամենայնիվ չափազանց գոհ էր, որ օտարականի միջամտության շնորհիվ արյունահեղությունը կանխվեց։ Նա փաստաթղթերը Գոնզագին վերադարձրեց հեգնական պարծենկոտությամբ.

— Ինչի՞ս են պետք Ձեր փաստաթղթերը։ Լավ կանեք՝ այստեղից կորչեք գնաք։ Թե չէ կհրամայեմ ձերբակալել։

Բայց ոստիկանապետի շփոթությունն այնքան էլ շուտ չանցավ։ Արյունը նրա վրա շատ ավելի աննշան տպավորություն թողեց, քան թուղթը։ Իր ծառայության ընթացքում մուավինը գրությունների երեսից մի քանի անգամ տուժել էր։ Այնպես որ դառը փորձ ուներ։ Նման դեպքերում մարդ չի կարող դուշակել, թե բանն ինչով կվերջանա։ Ուստի վճռեց, որ այդ Բագրատյանից առայժմ պետք է ձեռք քաշել. թող կենդանի մնա։ Ճանապարհին գործը կարելի է գլուխ բերել շատ ավելի հասարակ ձևով, առանց ամերիկյան փաստաթղթեր ունեցող վկաների։

Եվ մուավինը կրակելու պատրաստ ատրճանակը նորից դրեց պատյանի մեջ, մի անգամ էլ իր մեծ ու փոքր աչքերով նայեց մերկ սպային, ամբողջ թափով թքեց և կտրուկ հրաման տվեց իր զափթիեներին.

— Իսկ հիմա դուրս բերեք ձիերն ու էշերը։

Մյուդիրը զրկվեց գործը տպավորիչ ձևով ավարտելու հնարավորությունից։ Ստիպված էր բավարարվել այնքանով, որ ինքը ջրից դուրս եկավ միանգամայն չոր՝ առանց իր անունը գործին խառնելու։ Բազմական իշխանության հետևից դուրս գնաց երախտապարտ և անտարբեր։

Գաբրիելը ծանր հևալով վեր կացավ։ Գիտակցության վրա մուրճի պես անընդհատ հարվածներ էր տեղում ամոթանքի զգացումը։ Այդ քստմնելի տեսարանը ի՞նչ ապրումներ էր պատճառելու Ժուլիեթին, Ստեփանին։ Հայացքով որոնեց գտավ կնոջը, որն առանձնացած շուտ էր տվել դեմքը։ Գաբրիելը երերաց, իրեն պահեց, որ չընկնի։ Թիկունքից սարսուռ զգաց։ Իսկուհին էր։ Վերքերն սկսեցին այրվել։ Բայց դրանք միայն թեթև քերծվածքներ էին։ Գուլպաներով սանդուղքն ի վար անշշուկ

իջնում էր Իսկուհին։ Բոլորովին մոտ էր։ Աղջիկն աղերսանքով նայեց Ավագյանին։ Ուսանողը մի վերարկու բերեց, ծածկեց Գաբրիելի քրտնաթոր մարմինը։

Բարենպաստ հանգամանք։ Մյուդիրը, ոստիկանապետը և զափթիեների մեծ մասը նույն օրն ևեթ հեռացան գյուղերից, որպեսզի պաշտոնական նույն փորձանքը բերեին Սուեդիայի և էլ էսքելի հայերի գլխին։ Աքսորի թուրքական տակտիկայի խորիմաստ նրբություններից մեկն էլ այն էր, որ նախապես չէին հայտնում տեղահանության օրն ու ժամը։ Քանի որ խոսքը վերաբերում էր պետական միջոցառումն զգուշորեն կիրառելուն (ինչպես իրենք էին խոստովանում) և դրամական հատուցմանը (դա արդեն չէին խոստովանում), ապա «հանկարծակիության» հանգամանքը անհրաժեշտ էր դառնում երկու տեսակետից։ Այդ «հանկարծակիությունը» յուրահատուկ համ ու հոտ էր տալիս կաշառքին։

Համենայն դեպս պատվելի Հարությունն Նոխուդյանը ահագին գումար տալուց հետո կարողացավ պարզել, որ առաջին քարավանը ճանապարհ է ընկնելու հուլիսի երեսունմեկին։ Մինչ այդ հարյուրավոր նոր զափթիեներ էին միանալու նախորդներին։ Հուլիսի երեսունմեկը շաբաթ օր էր։ Մնում էր միայն երկու օր։

Ավագների խորհուրդը վճռեց, որ ժողովուրդը պետք է Դամլաջըք բարձրանա ուրբաթ օրվա լույս շաբաթվա գիշերը։ Սա իր հիմնավոր պատճառն ուներ։ Շաբաթը մահմեդականների հանգստյան օրն էր։ Հայտնի բան էր, որ քրիստոնյա գյուղերում գտնվող զափթիեները գնալու էին դաշտավայրի թուրք-արաբական գյուղերը։ Այնտեղ կային մզկիթներ, ազգականներ, կանայք և զվարճություն։ Զափթիեների հետ անհետացավ նաև կողոպուտի տենդով բռնված խաժամուժը։ Անկոչ հյուրերը զգուշանում էին. մեկ էլ տեսար այդ անզեն հայորդիները վրա տվին գերանդիներով, կացիններով, մուրճերով և առոք-փառոք այն աշխարհն ուղարկեցին։

Ուրեմն, ժամանակը ճիշտ էր ընտրված, քանի որ հանգամանքները բարենպաստ էին։ Ավագների խորհուրդն այսպես էր պատկերացնում դեպքերի ընթացքը։ Վերադարձող և նոր ուղարկված զափթիեները շաբաթ օրվա առավոտյան ամբողջ ժողովրդի փոխարեն գտնելու էին միայն Բիթիասի պատվելի Նոխուդյանին՝ իր հինգ հարյուր բողոքականներով։ Գաբրիելի ռազմական խորամանկության համաձայն, սա մյուդիրին երկար-բարակ բացատրելու էր, որ, չնայած իր աղաչանք-պաղատանքին, տարբեր համայնքներ վերջին գիշերը դիմել են կամավոր տարագրության։

Պատճառը եղել է զափթիեների, հատկապես ոստիկանապետի հանդեպ ունեցած սարսափը։ Ճանապարհը ցույց տալ չի կարող, քանի որ մարդիկ հեռացել են փոքր խմբերով և տարբեր ուղղություններով. մի մասը՝ դեպի Արսուս և Ալեքսանդրեթ, մի մասն էլ՝ դեպի հարավ։ Եվ բոլորն էլ մտադիր էին խուսափել բնակելի վայրերից։ Կարևորագույն խումբն ուզում էր գնալ Հալեպ՝ մեծ քաղաքում պաշտպանություն գտնելու նպատակով։

Պատվելի Նոխուդյանին մեղմ բնավորության և քրիստոնեական հնազանդության պատճառով շատերը համարում էին փափկասիրտ վախկոտ, բայց այստեղ նա իրեն դրսևորեց իբրև ազնիվ հոգու տեր մարդ։ Խաբեբայական այդ խաղը նրա համար մահվան անմիջական սպառնալիք էր ստեղծում։ Հենց որ ռազմական խորամանկությունը բացվեր, նույն պահին խեղճը կյանքին հրաժեշտ էր տալու։ Պատվելին ուսերն էր վեր քաշում. իսկ ի՞նչը մահվան սպառնալիք չէ։ Լեռան բարձունքներում մարտնչողները պետք է ժամանակ շահեին։ Մինչև հնարանքը մերկացվեր, մի քանի օր կանցներ։ Դա բավականաչափ ժամանակ էր պաշտպանական գործերը կարգավորելու համար։

Ավագների խորհուրդը ժողովի հավաքվեց Տեր-Հայկազունի առաջնորդարանում։

Վարդապետի դեմքին մնացել էին մտրակի հարվածների հետքերը։ Աջ աչքը և այտը դեռևս ուռած էին։ Ճակատն ի վեր, մինչև կեսը, ձգվում էր մանուշակագույն մի բիծ։ Տեր-Հայկազունը երկու սեղանատամ էր կորցրել և պարզ երևում էր, որ ցավից տառապում է։

Գաբրիելի թեթև վերքերը Ալթունու դրած սպեղանու շնորհիվ գրեթե աչքի չէին ընկնում։ Մարմնական ծաղրուծանակի ենթարկվելուց, այդ դիպվածի անլուր ծանրությունն զգալուց հետո, մի բան, որ նորություն էր նրա բարձրախորհուրդ և անձեռնմխելի գոյության ընթացքում, հայրենակիցներն ավելի հարազատ էին թվում, ինքն էլ՝ հայրենակիցներին։

Խորհրդակցության ժամանակ ավագներին մտահոգություն էր պատճառում չարաբաստիկ մի առեղծված, որի լուծումը դժբախտաբար արդեն ուշացրել էին։ Խաղաղ տարիներին հայկական գյուղերի բնակիչները սովորաբար հնձից հետո, հուլիս ամսին, ճանապարհ էին ընկնում դեպի թուրքական կամ արաբական գյուղերը հացահատիկ գնելու, քանի որ իրենք հողագործությամբ գրեթե չէին զբաղվում։ Այս տարի արհավիրքի պատճառով գլուխները լրիվ կորցրել էին, ձմեռվա պաշար չէին պատ-

բաստել։ Այդ թերացումն այժմ վրեժ էր լուծում։ Գյուղերում ալյուր, կարտոֆիլ և եգիպտացորեն շատ քիչ կար։ Ավելի երկար դիմանալու համար պետք է ծայրահեղ խնայողությամբ ապրեին։ Բայց քանի որ հայերը սովորաբար ավելի շատ հաց են ուտում, քան միս, ապա այդ հարցը ղեկավարներին մեծ հոգս էր պատճառում։ Ի լրումն դրա, առաջին օրերին Դամլաջրքում հաց թխել չէին կարող. պետք է թոնիրներ պատրաստեին։ Պատվելի Արամն առաջարկեց գյուղի բոլոր թոնիրները մինչև ուրբաթ երեկո վառ պահել, օգտագործել ամեն մի ժամը, կարելիությունն չափ ավելի շատ թխել լավաշ և բոքոն։

Նիստի վերջում Տեր-Հայկազունը հայտնեց, թե վաղը, ուրբաթ օրը, կլինի հանդիսավոր ժամերգություն։ Պատարագից հետո եկեղեցու աշտարակից երկու զանգը կիջեցնեն, մեծ թափորի ուղեկցությամբ կտանեն գերեզմանատուն, կթաղեն հողի տակ։ Այնուհետև ժողովուրդն աղոթելով հրաժեշտ կտա նախահայրերի շիրիմներին։ Տեր-Հայկազունը հայտարարեց նաև, որ մտադիր է Դամլաջրք տանել մի քանի զամբյուղ սրբազան շիրմահող։ Կռվի մեջ կամ մահճում մեռնողները բոլորովին լքված չեն լինի անսիրտ ամայության գրկում, այլ իրենց գլխի տակ մի բուռ հին, սրբազան ու մշտնջենական հող կունենան։

Ուրբաթ առավոտյան, իրոք, բոլոր զափթիեներն էլ ջհաննամվեցին մահմեդական գյուղերը, մյուդիրն ու մուավինը՝ Անթաքիե։

Նշանակված ժամից շատ առաջ Հրեշտակապետաց եկեղեցին լցվեց բազմությամբ։ Օծման օրից ի վեր այստեղ երբեք այդքան ժողովուրդ չէր հավաքվել։ Գավիթը, միջնակամարի տակի քառանկյունին, եզրային երկու որմնադասերը և բարձր խորանի բեմը լեփ-լեցուն էին։ Քանի որ հնավանդ սովորությամբ եկեղեցին պատուհան չուներ, արևի սաթագույն սուր նիզակները ներս էին թափանցում պատերի հրակնատաձև ճեղքերից։ Դրանք կարծես սուրբ երրորդության աչքերն էին։ Արևի խաչաձևող շեղերը ներսը չէին լուսավորում, այլ խլելով մոմերի ամբողջ լույսը, բազմության վրա սփռում էին թրթռուն, տարօրինակ ըստվերների մի շղարշ։

Այդ օրը Յողոնօլուքի պատարագին եկել էին ոչ միայն փոքր գյուղերի հավատացյալները, այլև բոլոր քահանաները, դպիրները, որպեսզի ամենայն հանդիսավորությամբ վերջին ժամերգությանը մասնակցեին «հաստատուն հողի վրա»։

Երգչաց դասը երբեք այնքան լիահունչ և սրտառուչ ծոր չէր տվել այն օրհներգը, որ ավետում է քահանայի հանդերձավորումը խորանի ներքո.

Խորհուրդ խորին, անհաս անսկիզբն.
Որ զարդարեցեր զվերին պետութիւնս
Ի յառաջաստ անմատոյց լուսոյն։
Գերապանծ փառօք զդասս հրեղինաց։

Տեր-Հայկազունը երբեք այդպես ջերմեռանդորեն երկրպագություն չէր արել, երբեք այդպիսի սարսուռով մեղքերի թողություն չէր հայցել իր հոտի առաջ։ Նրա ոսկեհուռ թագի տակ ճակատն այրվում էր մտրակի դրոշմած ամոթալի խարանից։ Հավատացյալների հոգիները երբեք այդպես սրբորեն չէին շաղկապվել ո՛չ խաղաղության համբույրով, ո՛չ քրիստոնեական միաբանությամբ։ Անցյալում, երբ ողջակեզի աղոթքից հետո սարկավագը «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան» բառերով բուրվառը մոտեցնում էր դպրապետի (ուսուցիչ Ասայանի) շրթունքներին, երբ սա համբուրում էր կողքին կանգնած երգչին, և երբ ողջագուրանքը երգչաց դասից փոխանցվում էր ժողովրդին, ապա դա մեծ մասամբ անհույզ ձևականություն էր, մարդկանց առերևույթ շփում։ Սակայն այսօր ամեն մեկն էլ գրկում էր մյուսներին, ամուր սեղմում կրծքին, իսկական համբույրներ տեղում նրանց այտերին, շրթունքներին։ Շատերը լալիս էին։ Իսկ հաղորդությունից հետո, երբ Տեր-Հայկազունի ազդանշանով սկսեցին խորանը մերկացնել, անզուսպ, անսպասելի մի ցավ ամբողջ համայնքը ծունկի բերեց։ Անդիմադրելի ողբը, լացն ու հեկեկանքը հառնեցին սավերների խուսափուկ խայտանքն ի վեր, արևի հրեշտակապետական խաչաձևված սրերն ի վեր, դեպի սլացիկ կամարը։ Սրբազան սպասքից յուրաքանչյուրը օգում բարձր բռնած պահում էին, նոր միայն դնում ծղոտե զամբյուղի մեջ՝ սկիհ, մկրտյան ավազան, մասնատուփ, մեծ ավետարան։ Լուսարարը բուրվառները, արծաթյա կանթեղներն ու խաչելությունը դրեց մի այլ զամբյուղի մեջ։

Տեր-Հայկազունը երեսը վերջին անգամ խաչակնքեց, մի պահ վարանմունքով ծածկոցի վրա կախեց եկեղեցու մոմերի պես դալուկ մատները, ապա շեշտակի շարժումով այն պոկեց խորանի վրայից։ Մնաց քարե լերդ սեղանը, որը մի օր հատել էին Մուսա լեռան գորշ կրաժայռերից։ Նույն պահին վարպետ Թովմասյանի գործավորները ճախարակավոր ամբարձիչներով եզրային աշտարակից իջեցրին մեծ և փոքր զանգերը։ Նանր մետաղը ահագին դժվարությամբ բարձրացրին, զանգերից յուրաքանչյուրը դնելով մի դիակառքի վրա։ Դրանց լծվեցին ութական տղամարդ։

Թափորի առջևից քայլում էին եկեղեցու փոքրավորները՝ բարձրակոթ խաչերով։ Այնուհետև օրորվելով շարժվում էին զանգերով բեռնված

դիակառքերը։ Դրանց հետևում էին Տեր-Հայկազունն ու հոգևոր մյուս հովիվները։ Երկար ժամանակ անցավ, մինչև սգո թափորը հասավ Յողոնօլուքի գերեզմանատունը։ Հուղարկավորները կարծես, իրոք, թաղելու էին տանում պատվարժան հանգուցյալների։

Թմրաբեր տոթ էր։ Զովաշունչ սյուքը Միջերկրական ծովից միայն երբեմն էր մագլցում Մուսա լեռն ի վեր, որ փոքր-ինչ գթություն շնորհի սիրիական ամռանը։ Թափորի առջևից վազող պտուտահողմի գոյացրած փոշու սյունը նման էր հեքիաթային պարող ուրվականի։ Դա կարծես խղճուկ կապկումն էր այն երկնահաս ծխասյունի, որն անապատում դարձավ Իսրայելի որդոց ռահվիրան։

Գերեզմանատունը բավական հեռու էր, Հաբիբլի գյուղի ճանապարհի վրա։ Արևելքի մյուս հանգստարանների նման սա ևս հանգչում էր բլրի թեք լանջին։ Շրջապարիսպ չուներ։ Այս հանգամանքը, ինչպես և գետնին տապալված կամ հողի մեջ շեղակի խրված կրաքարե շիրմասալերը, որոնց վրա կոշտ ու կոպիտ քանդակված էին խաչեր ու տապանագրեր, ստեղծում էին Փոքր Ասիայի թուրքական կամ հրեական գերեզմանատան տպավորություն։

Երբ հուղարկավորողների թափորը տեղ հասավ, դամբարանների և շիրմաքարերի ետևից բարձրացան չղջիկագույն արարածներ։ Դրանք պառավ կանայք էին։ Սրանց ցնցոտիներն իրենց գույությունը կարող էին շարունակել միայն կեղտի ու փոշու շնորհիվ։ Ծեր կանանց միշտ էլ հրապուրում են նման վայրերը։ Արևմուտքում ևս հայտնի են մահվան այս համբերատար, մշտական հյուրերը, հող դառնալու այս վկաներն ու պահապանները, որոնք մուրացկանություն են անում միայն համատեղության կարգով։ Իհարկե, Յողոնօլուքում ևս կար գերեզմանատան մոտերքում բույն դրած թաղում սիրող կանանց, եղերամայրերի, դայակների սահմանափակ մի դասակարգ, որոնք գյուղերի սոցիալական պայմաններից ելնելով, ապրում էին հասարակության եզրին։ Դրանցից էին բիբլիական մարգարեների գլուխներով երկու ծերունի կույր մուրացկաններ, ինչպես նաև մի քանի հաշմանդամներ, որոնց ֆանտաստիկ այլանդակությունը կարող էր ծնվել միայն արևելքում։ Ժողովուրդն իր այս սեփական տականքից օձիքն ազատում էր նրանով, որ համապատասխան հաստատություններ չունենալով, սրանց աքսորում էր և՛ սուրբ համարվող, և՛ սուրբ չհամարվող այս վայրը։ Այնպես որ ոչ ոք չսարսափեց, երբ երկու խելագար կին աղեկտուր ճիչերով փախան գերեզմանատան բլուրն ի վեր, թաքնվեցին։ Այսպիսով հանգստարանն ու շրջակայքը ոչ միայն Յողոնօլուքի հիվանդանոցը, ծխական համայնքը և գժանոցն էին,

այլև չար ոգիների աքսորավայրը։ Բժիշկ Ալթունու, Գրիգորի, Շատախյանի և նրանց նախորդների վառած լուսավորության ջահերը կախարդանքը գյուղի սահմաններից դուրս էին քշել, բայց լիովին չէին ոչնչացրել։ Եղերամայրերը՝ Նունիկի, Վարդուկի, Մանուշակի գլխավորությամբ, բժիշկի ատելությունից հալածված, ծվարել էին այստեղ, բայց ավելի հեռուն չէին նահանջել։ Նրանց գործը ոչ միայն պահակություն անելն ու մեռելներ լողացնելն էր, այլև հյուծված հիվանդներին ու ծննդկաններին դարմանելը, որոնք Ալթունու գիտական բուժամիջոցներին ավելի քիչ էին հավատ ընծայում, քան Նունիկի, Վարդուկի, Մանուշակի պատրաստած բուսաջրերին, դյութանքին ու ապաքինող աղոթքներին։ Այս հինավուրց պայքարում գիտության գործն այնքան էլ հաջողակ չէր։ Սա անուրանալի էր։ Սնոտիապաշտությունը որոշ դեղերի և բուժման ձևերի շնորհիվ ավելի մեծ համարում ուներ։ Այստեղ որոշ մեղք ուներ ինքը՝ բժիշկն իր անտարբեր բնավորությամբ։ Լատիներեն բառերից դուրս ոչ մի վերամբարձ, սփոփիչ խոսք չէր ասում։ Նունիկը նրա հակապատկերն էր։ Այդ արարածի գիտելիքները վերջ ու սահման չունեին, և նա երբեք գլուխ չէր խոնարհում մահվան առաջ։ Եթե այդ կնոջ գեղջուկ հիվանդներից մեկը մեռներ, ուրեմն՝ ինքը՝ հանգուցյալն էր մեղավոր։ Ինչո՞ւ էր վճռական պահին հրավիրում Ալթունուն և Նունիկի ամբողջ չարչարանքը ջուրը գցում։ Իր արվեստով Նունիկը հրաշագործ ապաքինության կենդանի խորհրդանշան էր։ Գյուղացի կանայք իբրև առասպել պատմում էին, թե նա ավագ Ավետիս Բագրատյանի ժամանակ էլ դարձյալ յոթանասուն տարեկան է եղել։ Լուսավորության ջատագովները կախարդուհիներին ու հեքիմներին հալածանքի էին ենթարկել, վտարել հասարակությունից։ Բայց դա չէր խանգարում, որ Նունիկն իր պաշտոնական եղերամայրությանը զուգընթաց, գիշերները լքեր մեռյալների օթևանը, իր գաղտնի գործերը գլուխ բերեր բոլոր յոթ գյուղերում։

Սակայն որոշակի ժամերին բոլորն էլ հավաքվում էին գերեզմանատանը, որ կույրերի ու խեղանդամների հետ իրենք ևս ողորմությամբ ստանան իրենց բաժինը։

Երբ զանգերի սգո թափորը մոտեցավ գերեզմանատանը, Սաթոն տեղից պոկվեց, վազեց առաջ։ Նա այստեղ վաղուց արդեն բարեկամներ ուներ։ Ծայրամասում ապրողները հրապուրել էին այս ծայրահեղ հոգին։ Աղջիկն այստեղ իրեն ավելի լավ էր զգում։ Մինչդեռ նրա համար այնպես ծանր էր ապրել Բագրատյանի տանը։ Մեծ խանումի նվիրած զգեստը շոյում էր աղջկա սնափառությունը, բայց թե իրականում կոշիկներ ու գուլպաներ, ավելի մաքուր սենյակ, ինչպես նաև մանյակ ունենալու

ցանկությունից մեռնում էր։ Մուրացկանների, եղերամայրերի և խելագարների հետ Սաթոն կարող էր անկաշկանդ խոսել, գործածել բառեր, որ գոյություն չունեն։ Ա՜խ, ի՞նչ երջանկություն է մեծերի լեզուն նեղ կոշկի պես հանել, դեն նետել և խոսել ռաբոբիկ։ Նունիկը, Վարդուկն ու Մանուշակն այնքան խորհրդավոր բաներ էին պատմում, որ Սաթոյի հոգին լցնում էին հաճելի սարսափով։ Կարծես դրանք հենց ինքն էր իր հետ աշխարհ բերել նախահայրերի կյանքից։ Աղջիկը կարող էր սուսուփուս նստել, ժամերով լսել, մինչ կողքին փռված կույր մուրացկաններն զգայուն մատներով ուշի-ուշով շոյում էին նրա մանկական վտիտ մարմինը։ Եթե Իսկուհին չլիներ, Սաթոն մյուսների հետ Դամլաջրքը բարձրացողը չէր. կգար ու կապրեր գերեզմանաբնակների հետ, ազատության գրկում։ Այդ երջանիկների համար նեղ էր լեռնային պատսպարանը։ Ավագների խորհուրդը միաձայն կայացրել էր այս վճիռը։ Դեմ էր միայն Գաբրիել Բագրատյանը։ Նա չէր ուզում, որ ժողովրդի որևէ խավը դուրս մնա, թեև իբրև գլխավոր հրամանատար բոլորից ավելի պարզ էր պատկերացնում, թե ամեն մի ավելորդ բերան ինչքան է նվազեցնելու պայքարի հզորությունը։ Դուրս մնացողները կարծես իրենց ոչ դժբախտ էին զգում, ոչ էլ առանձնապես թուրքերից էին վախենում։ Հայրենակիցներին իրենց ձեռքերն ու ձախորդությունը երկարում էին մուրացկանային նույն լացուկոծով, ինչպես միշտ։

Մերկ երկինքն այնպես էր տոչորվում, որ ամպի մեն-մի քուլան անգամ կարող էր թվալ անհավատալի հեքիաթ։ Կարծես անողորմ կապտությունը ջրհեղեղի ժամանակներից ի վեր անձրևի երես չէր տեսել։

Բոլոր մարդիկ մղվում էին դեպի բաց գերեզմանը՝ Յողոնօլուքի զանգերին հրաժեշտ տալու։ Խաղաղ օրերին գրեթե ոչ ոք ուշադրություն չէր դարձնում տովորական դարձած զողանջին։ Այժմ կարծես համրանալու էր իրենց սեփական կյանքը։ Երբ մեծ և փոքր զանգերը շիրիմ իջեցրին, մարդիկ շունչները պահեցին։ Ցած թափվող հողակոշտերից առաջացած պղնձյա խուլ զնգոցը ժողովրդին մարգարեաբար հուշում էր, որ գնացողների համար չկա վերադարձ, մեռյալների համար՝ հարություն։

Տեր-Հայկազունի կարճատև ազոթքից հետո բաղմությունը լռելյայն ցրվեց ընդարձակ գերեզմանատնով մեկ։ Առանձին ընտանիքներ գնացին այցելելու իրենց հարազատների շիրիմները։ Գաբրիելն ու Ստեփանն էլ մտան Բագրատյանների տոհմական գամբարանը։ Դա փոքր, ցածրիկ, կամարակապ շինություն էր։ Նման էր թյուրբեի, որտեղ թուրքերն ամփոփում են իրենց սրբերին ու իշխանավորներին։ Պապը՝ Ավետիս Բագրատյանը, դա կառուցել էր իր և կնոջ համար։ Տոհմական փառքի հիմ-

նադիրը, հայկական հնավանդ սովորությամբ, միայն պատանքով թաղված էր քարասալերի տակ, որոնք վեր էին կարկառված, որպես աղոթող ձեռքեր։ Այդ զույգից բացի, այստեղ միայն մի մարդ էր հանգչում՝ Գաբրիելի եղբայր Ավետիսը, Յողոնօլուքի հավատարիմ որդին, որը վերջերս էր մահացել։ «Տեղ այլևս չկա»,— ավելի շուտ հեգնանքով, քան հանդիսավոր տխրությամբ մտածեց Գաբրիելը։ Ստեփանը ձանձրույթից դոփում էր տեղում, իբրև մեկը, որը մահից դեռևս հեռու է մի ամբողջ հավիտենականություն։

Տեր-Հայկազունը՝ մարդկանց փոքրաթիվ խմբով շրջապատված, կանգնած էր բլրի եզրին, որտեղ հանգուցյալների աշխարհն առաջ էր պարզել իր վերջին սլաքները։ Մի քանի հոգի եղբայրական գերեզման հիշեցնող քառանկյուն փոս էին փորում։ Դուրս բերած հողը լցրին հինգ զամբյուղի մեջ։ Տեր-Հայկազունը հերթով մոտենում էր դրանից յուրաքանչյուրին, խաչով օրհնում։ Վերջին զամբյուղի մոտ կանգ առավ, խոնարհվեց վրան։ Դա սևահող չէր, այլ փխրուն, անքերրի հող։ Տեր-Հայկազունը ձեռքն իջեցրեց զամբյուղի մեջ, դուրս բերեց մի բուռ օրհնված հող, մոտեցրեց դեմքին, ինչպես հողի տեսակն ստուգող գյուղացին։

— Երանի՜ բավականացներ,— խոսեց ինքն իրեն, ապա մատահոգ նայեց դեպի գերեզմանատունը, որն արդեն գրեթե գատարկվել էր։

Մարդիկ վաղուց էին վերադարձել իրենց գյուղերը։ Կեսօրը մոտենում էր։ Նման ծեսեր կատարվում էին նաև մյուս խոշոր բնակավայրերում, ինչպես, ասենք, Հաբիբլիում և Բիթիասում։ Ավագների խորհրդի որոշմամբ լեռը պետք է բարձրանային արևամուտից հետո։

Գաբրիելը Ժուլիեթին շրջապատել էր ամենաքնքուշ հոգատարությամբ։ Հայկական անդունդը գլորվելուց հետո Ֆրանսուհին հազվադեպ էր կարոտում իր աշխարհը. հանգամանքները թույլ չէին տալիս։ Երևի նույն միջոցին նրա եվրոպական այդ աշխարհը ևս զբաղված էր սպանդով, որի առաջ կարոտը դառնում էր անճարակ, անպատեհ մի բան։ Չնայած նոր ժամանակների ամբողջ պերճանքին, գիտության առաջադիմությանն ու վերջին նվաճումներին, թոհուբոհը իրագործվում էր մտավորական անասունների մաթեմատիկական ճշգրիտ հաշվումներով և ոչ թե անբան բարբարոսների միամիտ արյունարբությամբ։ «Եթե ապրեինք Փարիզում,— կարող էր ասել Բագրատյանը,— մեր տունը չէր լինի սիրիական լեռան լերկ ու քարքարոտ գագաթի վրա։ Կոնենայինք զուգարան, լոգարան, բայց դրա փոխարեն գիշերներն ու ցերեկները հաճախակի

ստիպված կլինեինք սողոսկել մութ նկուղները, պատսպարվել ծանր ավիառումբերից։ Փարիզում էլ Ստեփանի և Ժուլիեթի կյանքին սպառնացող վտանգն ինձ հանգիստ չէր տա»։ Բայց այս ամենը Գաբրիելը մտածել չէր կարող այն պարզ պատճառով, որ ամիսներ ի վեր եվրոպական լրագրեր չէր կարդացել, պատերազմի մասին ճշգրիտ պատկերացում չուներ։

Դեռևս նախորդ երեկոյան Ավագյանին ու Քրիստափորին մյուս յուրայինների հետ ուղարկել էր Դամլաջրք, որպեսզի Ժուլիեթի նոր բնակարանը կարգի բերեին, անեին այն ամենը, ինչ հնարավոր էր։ Երեք վրանի հրապարակը պետք է ունենար իր առանձին խոհանոցը, լվացարանն ու մյուս հարմարությունները։ Գաբրիելը վճռել էր երեք վրանն էլ տրամադրել Ժուլիեթին։ Թե դրանցից որն էր դառնալու բնակարան, այդ արդեն թողել էր տանտիրուհու հայեցողությանը։ Մեծ դժվարությամբ Դամլաջրք բարձրացրին ոչ միայն գորգեր, կրակարաններ, բազմոցներ, սեղաններ ու աթոռներ, այլև զարմանալի քանակությամբ այնտեղ տարան աշխարհիկ կյանքի համար անհրաժեշտ ծանրոցներ, ճամպրուկներ, կաշվե պսպղուն պայուսակներ, ամանեղենի և սեղանի սպասքի պահարաններ, արդուզարդի պարագաների ու դեղորայքի, ջերմապահ սրվակների և թերմոսների մի ամբողջ հավաքածու։ Գաբրիելը ցանկանում էր, որ եվրոպական իրերի ներկայությունը Ժուլիեթին տոգորեր ճակատագրին դիմանալու արիությամբ։ Թող Ֆրանսուհին իրեն երևակայեր մի իշխանուհի, որն արկածներով հրապուրված՝ մեծաթիվ շքախմբով ճանապարհորդում է անհյուրընկալ վայրերում։ Բայց դրա փոխարեն իր՝ Գաբրիելի անձնական կյանքը, որն ընթանալու էր ժողովրդի աչքի առաջ, պետք է լիներ կրկնակի դժվարին, կրկնակի ժուժկալ։ Հաստատ վճռել էր, որ ո՛չ վրանում կքնի, ո՛չ էլ կօգտվի Երեք վրանի հրապարակի խոհանոցից։

Գերեզմանատնից վերադառնալով՝ յողոնօլուքցիները մի անգամ էլ մտան իրենց տները, որոնց տերերն արդեն իրենք չէին։ Յուրաքանչյուրին սպասում էին կապած-կապկպած ահագին բեռներ։ Դրանք տանելը մի մարդու ուժից վեր էր։ Խավարչտին անորոշության տակ կքած՝ ետ ու առաջ էին քայլում իրենց հարկի տակ, սպասում մթնելուն։ Մի տեղ դեռևս ընկած էր խսիրը, մի այլ տեղ՝ ճրագը, Հիսուս Քրիստոսի պատկերը։ Ահա և անկողինը, թանկագին մահճակալը, որ հաջողակ մի տարի առել էին խնայած միջոցներով։ Չէ՞ որ պետք է մարդավայել ձևով ապրեին, հաստատուն պահեին իրենց ամուսնական և ընտանեկան ամրոցը։ Մինչդեռ դա պետք է մնար լքված, դառնար թուրք և արաբ խաժամուժի բաժին։

Ժամերը դանդաղ անցնում էին։ Եվ անվերջանալի պահերին կապոցներից այս կամ այն ավելորդ բանը դուրս էին բերում, տեղավորում մի այլ բան։

Ամենախարխուլ կավախցերին անգամ մարդիկ սրտի կսկիծով էին հրաժեշտ տալիս, քանի որ այդ հնոտիների հետ էին կապված և՛ երազանք, և՛ սեր։

Բոլորի նման Գաբրիելը ևս միջօրեից հետո թափառում էր իր տան սրահներում։ Դրանք մեռած էին, ամայի։ Ժամեր առաջ Ժուլիեթը տնեցիների և տան բարեկամ Մարիս Գոնզագի հետ արդեն բարձրացել էին լեռը։ Քանի որ անտանելի շոգ էր, Ֆրանսուհին փափագեց ժամանակից շուտ վայելել լեռնային բարձունքի զով շունչը։ Դրանից բացի, չէր ուզում խառնվել գյուղացիների վայրիվերո բազմությանը։

Գաբրիելը սովորաբար ինչ-որ սենտիմենտալ թեթև ափսոսանքով էր հեռանում նույնիսկ հյուրանոցում կարճատև ժամանակով զբաղեցրած սենյակից (չէ՞ որ մարդ ամենուրեք իրենից հետո իր մի մասն է թողնում, իբրև հարազատ հանգուցյալի)։ Բայց այժմ լիովին անտարբեր էր, սառնասիրտ։ Պապենական տունը, մանկական հիշողությունների օրրանը, վերջին ճակատագրական ամիսների օթևանը նրա սրտին ոչինչ չեն ասում։ Գաբրիելին զարմացնում էր զգացմունքների այդ բթացումը։ Բայց փաստը մնում էր փաստ։ Միակ բանը, որ փոքր-ինչ ցավ էր պատճառում, դա հնությունների հավաքածուն էր, Յողոնօլուքում անցկացրած առաջին երջանիկ շաբաթների ուրախությունը։ Նորից ու նորից մոտենում էր Ապոլլոնին, Արտեմիսին ու Միհրին, փափուկ ձեռքով շոյում աստվածների գլուխները։ Ի վերջո թափով շրջվեց դեպի հյուրասրահի դուռը, և տունը իր բոլոր խորհուրդներով տեղի տվեց առհավետ։ Այլևս ոչինչ չէր ուզում տեսնել։ Բոլոր խոհերը ներծծեց, դուրս եկավ դռնից։

Տան ձախ կողմում, օժանդակ բակում նկատեց մի անսովոր տեսարան։ Յողոնօլուքի տականքը, որին իրավունք չէր տրված լեռը բարձրանալու, հավաքվել էր այստեղ։ Եղերամայրերը, մարգարեակերպ մուրացկանները և թոկից փախած մի քանի անապատան փսլնքոտներ հուզված խռնվել էին։ Ինքնին հասկանալի է, որ Սաթոն՝ զեյթունցի որբուհին, նրանց հետ էր։ Փոքրաթիվ խմբի մեջ իր բարձր հասակով աչքի էր ընկնում մի անձնավորություն, որի տիրական ուժը չէր կարող չիոստովանել

նույնիսկ Գաբրիելը։ Դա պառավ Նունիկն էր՝ հեքիմ և գրբաց կանանց պարագլուխը։ Այդ կին Աղասֆերի ծննդյան թվականը գնում, կորչում էր անհիշելի ժամանակների խորքերում։ Խոժոռ դեմքն աչքի էր ընկնում ոչ միայն կիսատ-պռատ քթով, այլև այն սոսկալի եռանդով, որը Նունիկին դարձրել էր կաստայի անվիճելի տիրուհին։ Անշուշտ, փչոց էր այն պատմությունը, թե նա հարյուր տարեկան է, նույնիսկ ավելի ծեր։ Ինքը՝ Նունիկն էլ շահագիտական նպատակներով հրահրում էր դրա հավաստիությունը։ Ժամանակի հպատակությունից դուրս եկած իր ծերունական դեմքը ցուցադրում էր իբրև ապացույց իր դեղերի զորության, դեմք, որը, հակառակ զրկանքներով լի գոյության, չէր խաթարվում։ Նունիկն իր ձողանման չոր ազդրերի մեջ մի փոքրիկ սև գառ սեղմած՝ գանակով կըտրում էր իր հոտը կորցրած կենդանու կոկորդը։ Ինչպես երևում էր, պառավը մորթելու մեջ վարպետ էր. ձեռքը հանգիստ էր շարժում։ Շուրթերը բացվել էին, և պառավի գայլային սարսափելի քթի տակ պսպղում էր երիտասարդական անվթար ատամնաշարը։ Դա մի տեսակ չարախինդ բավականության տպավորություն էր թողնում և Բագրատյանին այնպես դայրացրեց, որ նա դիմեց հավաքվածներին.

— Ի՞նչ եք անում այստեղ, ստո՛ր գողեր։

Մարգարեներից մեկը խարխափելով առաջ եկավ, ծայրահեղ արժանապատվությամբ ու խրատաբար ազդարարեց.

— Արյուն ենք փորձում, պարոն, ձեր ողջության համար։

Գաբրիելը քիչ մնաց նետվեր խաժամուժի վրա.

— Ումի՞ց եք գառը գողացել։ Զգիտե՞ք, որ ժողովրդի սեփականությունը հափշտակողներին կընդակահարեն կամ կկախեն։

Մարգարեն այդ վիրավորական ապառնալիքը լսեց մեծահոգի ներողամտությամբ.

— Պարոն, ավելի լավ է՝ նայիր, թե արյունը ո՛ր կողմն է հոսում. սարի՞ կողմը, թե՞ տան։

Գաբրիելը նայեց։ Գառնուկի թանձր արյունը ցայտելով առաջ հոսեց, հարթ գետնի վրա լճացավ, շրջանաձև բարձրացավ, մինչև ցած ընկան վերջին խոշոր կաթիլները։ Այնուհետև լճակն անշարժացավ. կարծես վարանմունքով սպասում էր մեկի խորախորհուրդ հրահանգին։ Ահա երեք փոքրիկ լեզվակ անվճռականորեն և կարծես ետ կանչող հրահանգ

լսելով՝ իսկույն առաջ ձգվեցին, քարացան։ Բայց հանկարծ նյարդային մի շիթ օձանման հապճեպ գալարումով նետվեց դեպի տունը։ Խումբը վայրի հուզմունքով աղաղակեց.

— Գո՜հ ենք։ Արյունը տո՜ւն հոսեց...

Նունիկը մինչև գետին խոնարհվեց արյան լճակի վրա, կարծես հոսանքի ձևով ու տեղողությամբ ճշգրիտ կարող էր իմանալ գիտական արժեք ներկայացնող ինչ-որ գաղտնիք։ Երբ գլուխը կրկին բարձրացրեց, աղավաղված դեմքին նույն չարախինդ արտահայտությունն էր, որը և Բագրատյանին զայրացրեց։ Բայց ահա խոսեց ծերունական զարմանալի փափուկ, կարծես ուրիշի պատկանող ձայնով.

— Պարո՜ն, լեռան ժողովուրդը կփրկվի՜։

Նույն վայրկյանին Գաբրիելը հիշեց այն երկու մետաղադրամը, որ նվեր էր ստացել աղա Ռիֆաաթ Բերեքեթից և թողել էր տանը։ «Անպայման պետք է վերցնեմ,—մտածեց նա,—ափսոս են»։ Վերադարձավ ամառանոց, դռան մոտ վարանեց (տեղ գնալիս ետ դառնալը վատ նշան է), ապա սանդուղքն ի վեր վազեց, մտավ իր սենյակը, տուփի միջից դուրս բերեց ոսկե և արծաթե դրամները։ Ոսկե դրամը պահեց լույսի տակ։ Սքանչելի մանրաքանդակից հառնեց Աշոտ Բագրատունու հայկական գլուխը։ Իսկ արծաթե դրամի վրա շրջան էր գծում հունարեն գրեթե անվերծանելի փորագրությունը, որի տառերն իրարից չէին զատված.

«Առ անիմանալին ի մեզ և ի վեր քան զմեզ»։

Երկու մետաղադրամն էլ դրեց գրպանը։ Այգու արևմտյան դարպասից դուրս եկավ առանց ետ նայելու։ Մի քանի քայլ շարած՝ կանգ առավ, նայեց ժամացույցին, որը մեծամտորեն դեռևս աշխատում էր եվրոպական ժամանակով։ Արևն արդեն կախվել էր Դամլաջրքի վրա։ Գաբրիելը ճշտեց ժամն ու րոպեն, երբ սկսվելու էր նոր կյանքը։

Արևը նոր էր մայր մտել, երբ յոթ գյուղի բնակիչները տոհմերով ու ընտանիքներով, ծանր բեռները շալակած՝ զանազան ճանապարհներով, երբեմն էլ մոտակա արահետներով, բարձրացան լեռն ի վեր։ Թեև հովտաբնակները չքավոր չէին, բայց շատ քիչ ընտանիքներ ունեին սեփական ավանակներ։ Հաճախ մի կենդանին պատկանում էր երկու ընտանիքի։ Սուեդիայի կամ Անթաքիեի շուկաները գնալիս ավանակատերերը տանում էին նաև չունևոր հարևանների բեռները։ Իրար օգնելը հինա-

վուրց սովորություն էր։ Ծովի եզրին, իսլամի եզրին մեկուսի ապրող մուսալեռցիները հաղորդակցության ավելի զորեղ միջոցներ չունեին, քանի որ տեղափոխում էին այնպիսի թեթև բեռներ, ինչպիսիք են մեռաքսաթելը, փայտե իրերը, մեղրը։ Սակավաթիվ եզասայլերն ու գրաստները միանգամայն բավական էին։ Իսկ այս գիշեր ավանակների միայն մի չնչին մասն էր սեփական տերերին սպասարկում։ Եղբայրական զգացմունքից մղված՝ գյուղացիները պատվելի Նոխուդյանի աղքատ համայնքին թամբով ու սարքով տրամադրել էին հարյուր հիսուն ուժեղ գրաստ։

Գաբրիելը սայլուղու շեղ եզրին կանգնած՝ նայում էր իր մոտով տընքալով անցնող խմբերին, որոնք բեռների ծանրության տակ կռացել էին մինչև գետին։ Թմրության կարճատև նոպաների ժամանակ ցնցվում էր, շարունակում ընդունել թշվառության շքերթը։

Հյուսիս-արևելքում, Ամանոսի գահավեժ, գորշ ու լերկ ժայռակույտերի ետևից ծագեց բռունցքի պես ամուր սեղմված, անհավատալիորեն մետաղակերպ մի լուսին։ Նկատելիորեն մոտենում էր. կպած չէր երկնակամարին։ Սև հեռաստանները հետզհետե պարզվում էին։ Գաբրիելի համար երկիրն այլևս նույն հաստատուն հանգրվանը չէր, այլ տիեզերքում հոլովվող մի փոքրիկ սայլ, որպիսին և է իրականում։ Այդ լուսապայծառ տիեզերքը ծավալվում էր ոչ միայն արձանագեմ լուսնի ետևում, այլև իջնում էր մինչև հովիտը, զովությամբ լցնում նիրհող երկրի բոլոր ճեղքերը։

Լուսինն արդեն կտրել, անցել էր երկնքի կեսը, բայց Բագրատյանի մոտով դեռևս անցնում էին տնքացող բազմությունները։ Տեսարանը շարունակ նույնն էր մնում. առջևից գնում էր ընտանիքի հայրը՝ խոժոռ, մահակը ձեռքին, բեռը շալակին։ Բարկացայտ կանչեր, լացակումած պատասխաններ։ Կանայք բեռների տակ երերում էին, կռանում մինչև գետին։ Միաժամանակ պետք է հետևեին, որ այծերը չփախչեն։ Բայց և այնպես, չնայած բեռների ծանրությանը, երբեմն այստեղ-այնտեղ փայլատակում էին դեռատի աղջիկների աչքերի կայծակները, պոռթկում էր նրանց կենսաթրթիռ ծիծաղը։

Գաբրիելը վախեցած սթափվեց վայրկենական նինջից։ Ներքևում ծայր առավ մանկական համատարած լացուկոծ։ Հարյուրավոր երեխաներ վայնասուն բարձրացրին. կարծես բոլորն էլ հանկարծ նկատեցին

իրենց ծնողների բացակայությունը։ Դրան հաջորդեցին պառավ կանանց բարձրաձայն կշտամբանքն ու դժգոհ քրթմնջոցը։ Բայց դրանք ոչ թե լքված երեխաներ էին, այլ Յողոնօլուքի, Ազիրի և Բիթիասի կատուները։ Կատուն ունի յոթ հոգի, իսկ ամեն հոգին ունի իր ձայնը։ Այդ պատճառով էլ կատվին պետք է յոթ անգամ սպանել, որ սատկի։ (Այս իմաստությունը Սաթոն վաղուց էր իմացել Նումիկից)։ Իրականում Յողոնօլուքի, Ազիրի և Բիթիասի կատուները իրենց տերերի գաղթի հանդեպ մնացին միանգամայն անտարբեր։ Չէ՞ որ կատուն իր յոթ հոգով ծառայում է տանը, ոչ թե մարդուն։ Այդ լացը թերևս նրանց սիրո անկաշկանդ ազատության ուրախ խմբերգն էր։ Սակայն շները, իրոք, տառապում էին։ Սիրիական գյուղերի վայրենացած շներն անգամ մարդկանցից չեն հեռանում։ Նրանք չեն կարող վերադառնալ իրենց նախկին վիճակին, որի մեջ են աղվեսը, շնագայլը, գայլը։ Եթե այդ շները վայրենացել են նույնիսկ անհամար սերունդների գոյության ընթացքում, միևնույն է, դարձյալ մնում են քաղաքակրթության վտարված սպասարկուներ։ Կարոտից տանջվելով դարան են մտնում մարդկանց բնակավայրերի շուրջը՝ ոչ միայն մի կտոր ոսկոր մուրալու, այլև նախկին ստրկությանը, մոռացված ծառայությանը անցնելու հույսով։

Գյուղերի վայրենացած շներն ամեն ինչ գիտեին։ Դամլաջրքի ապաստարանի տեղը գտել էին։ Հասկանում էին նաև, որ, ի տարբերություն գյուղական ճանապարհների, հանգրվանի մուտքն իրենց համար խստիվ արգելված է։ Մոլորված և հուսահատ նետվում էին արգելված լեռն ի վեր, փորսող տալիս ցածրիկ թփուտների միջով, մրտենիների ու մաթուզենիների տակ գալարվում օձերի պես։ Շներից ոչ մեկի մտքով չէր անցնում այն փրկարար գաղափարը, թե կարելի է գնալ մահմեդական մոտակա գյուղերը, ոսկոր հայթայթել Զալըխանում կամ Այն Երաբում։ Մնացին կապված անհավատարիմ ժողովրդին, որը հեռացել էր բոլոր բնակավայրերից։ Նրանց հոգիները մորմոքում էին վայրի ցավից, սակայն ոչ մեկը չէր հանդգնում արձակել իր միավանկ հաչոցը, որը վաղուց է զրկված ընտանի շան լեզվի մշակված ճկունությունից և հարուստ բառապաշարից։ Նրանց հոգու ամբողջ տագնապը բարձրացել, լցվել էր աչքերի մեջ։

Գաբրիելն ամենուրեք մթության մեջ տեսնում էր այդ շների զմայլված աչքերում վառվող կանաչ կրակը։ Նայում էին, բայց չէին հանդգնում անցնել կախարդական շրջագիծը։

Լուսինը չքացավ Մուսա լեռան թիկունքում։ Տիեզերքի ընդերքից ծիլ արձակեց մի դալուկ զեփյուռ։

«Բոլորն արդեն վերևումն են»,— մտածեց Գաբրիելը, որի մոտով վերջին ընտանիքն անցել էր ավելի քան մի ժամ առաջ։ Բայց նա գիշերային դիտակետից չէր կարողանում հեռանալ. հոգնա՞ծ էր, թե՞ կարիք էր զգում առանձնանալու։ Չգիտեր, թե այնուհետև իր ամբողջ կյանքում մի անգամ էլ կկարողանա՞ր լինել ինքն իր հետ։ Արդյոք այդ մենությունը միշտ էլ չի՞ համարել երկնքի մեծագույն շնորհը։ Կես ժամ ևս գերերկրային խաղաղության առաջ իր սիրտը բացելուց հետո Գաբրիելն ուզեց արագ բարձրանալ հյուսիսային դիրքերը, հսկել խրամատներ փորելու աշխատանքը, շտապեցնել։ Մեջքը կաղնու բնին հենած ծխում էր։ Հանկարծ մթության միջից դուրս լողաց մի ուշացած ուղևոր։ Գաբրիելը սմբակների ձայն և գլորվող քարերի աղմուկ լսեց։ Ասյա տեսավ մի լապտեր, մի տղամարդ և ծանրաբեռ մի ավանակ։ Ամեն մի քայլը անելիս խեղճ կենդանու մեջքը երկտակվում էր։ Բայց թե մարդու մեջքին էլ մի ահագին պարկ կար, որը նա երկու բոպեն մեկ փնչալով գետին էր դնում։ Գաբրիելը դեղագործին ճանաչեց միայն այն ժամանակ, երբ պարկը թմփաց իր ոտքերի մոտ։ Գրիգորի դեմքն այլայլված էր, մանդարինյան անտարբեր դիմակը վեր էր ածվել բարբարոս ծամածռության։ Քրտինքը ողորկ այտերից ցած էր հոսում, լցվում այծային երկար մորուքի մեջ, որն անշունչ վեր ու վար էր ճոճվում։ Դեղագործը կարծես տառապում էր ուժեղ ցավից, կորացնում ուսերը։

Գաբրիելն զգացնել տվեց իր ներկայությունը.

— Դեղորայքի պարկը կարող էիք ուղարկել մերոնց միջոցով։ Ի՞նչ կարիք կար դեղատան եղած-չեղածը մեն-մենակ շալակելու։

Գրիգորի շունչը դեռևս տեղը չէր եկել։ Այնուհանդերձ կարողացավ իր խոսքին տալ արհամարհական երանգ.

— Սա դեղորայքի հետ ոչ մի առնչություն չունի։ Դեղորայքը քանի՞ ժամ առաջ եմ ուղարկել։

Գաբրիելն արդեն նկատել էր, որ թե՛ ավանակը և թե՛ դեղագործը բեռնավորված են միմիայն գրքերով։ Չգիտես ինչու, դա զայրացրեց Գաբրիելին, և նա իսկույն ցանկություն զգաց Գրիգորին փոքր-ինչ ծաղրելու.

— Ներեցեք մոլորության համար, դեղագործ. արդյոք սա Ձեր ամբողջ պարե՞նն է։

Գրիգորի դեմքը հանդարտվեց։ Աչքերն անտարբեր գամվեցին Գաբրիելին.

— Այո՛, Բագրատյան, սա իմ պարենն է, բայց, դժբախտաբար, ո՛չ լրիվ...

Հազի նոպան ծերունուն ցնցեց։ Նա նստեց Գաբրիելի կողքին, վիթխարի թաշկինակով սկսեց սրբել քրտինքը։ Մթնշաղը պսպղում էր։ Ավանակը իքսաձև ոտքերով տխուր ու գլխիկոր կանգնել էր կածանի եզրին։ Անցավ մի քանի բոպե։ Գաբրիելը զղջաց իր անպատշաճ կատակի համար։ Բայց Գրիգորի ձայնի մեջ կրկին հնչեց սեփական վսեմ գերազանցության շեշտը.

— Գաբրիել Բագրատյան, Դուք իբրև փարիզցի գիտնական, և ես, իբրև յողոնօլուքցի դեղագործ, օգտվել ենք բոլորովին տարբեր աղբյուրներից։ Այսուհանդերձ կան բաներ, որ Ձեր գիտելիքների սահմաններից դուրս են, իսկ ինձ ծանոթ են։ Այնպես որ հազիվ թե լսած լինեք գերապատիվ Գրիգոր Նազիանզացու* ասույթը և հեթանոս Թերթուլիանոսի* պատասխանը...

Ի՞նչ կա զարմանալու, եթե Գաբրիելը ծանոթ չէր Գրիգոր Նազիանզացու ասույթին։ Այդ մարդու գոյությունը հայտնի էր միայն ու միայն դեղագործին։ Իրեն հատուկ անշփոթ եղանակով սկսեց պատմել դեսից-դենից, թեև հոգևոր հայր Թերթուլիանոսին համանուն հեթանոսի հետ շփոթելը պարզապես վրիպում էր...

— Մի անգամ գերապատիվ Գրիգոր Նազիանզացուն իր մոտ ճաշի էր հրավիրել նշանավոր հեթանոս Թերթուլիանոսը։— Բագրատյա՛ն, մի՛ սարսափեք. սա հակիրճ և խորիմաստ պատմություն է։— Խոսում էին լավ բերքից, հիասքանչ ցորեն հացից, որ հենց այդ ժամանակ ուտում էին։ Սեղանին ընկել էր արևի մի շող։ Գրիգոր Նազիանզացին հացը ձեռքն առավ և Թերթուլիանոսին ասաց. «Հյո՛ւր բարեկամ, մենք որքա՞ն երախտապարտ ենք արարչին իր գաղտնիքների համար. այս անուշահամ հացը ոչ այլ ինչ է, եթե ոչ արեգակի այս դեղին ճառագայթը, որը դաշտում փոխակերպվել է, դարձել ցորեն»։ Սակայն Թերթուլիանոսը ոտքի ելավ, գրադարանից բերեց բանաստեղծ Վիրգիլիոսի գիրքը և Գրիգորին ասաց. «Ողբա՛յր իմ, եթե մենք հացի համար աստծուն պետք է գոհություն հայտնենք, ապա դրանից առաջ պետք է նրան փառաբանենք այս գրքի՛ համար։ Նայի՛ր, այս գիրքը փոխակերպված լուսահորդ ճառագայթն է մի այլ արևի։ Այդ արևը շատ ավելի վսեմ է, քան այս արևը, որի ճառագայթները մարդ կարող է տեսնել սեղանին»։

Քիչ անց Գաբրիելը տխուր կարեկցանքով հարցրեց.

— Հապա Ձեր ամբողջ գրադարա՞նը, դեղագործ Գրիգոր։ Սա, թերևս, մի չնչին բեկորն է միայն։ Գրքերը թաղել եք հողի տա՞կ։

Գրիգորը շեշտակի վեր կացավ, ինչպես վիրավորված հերոս.

— Չեմ թաղել։ Գրքերը հողի տակ մեռնո՞ւմ են։ Թողել եմ այնպես, ինչպես որ կային։

Գաբրիելը վերցրեց լապտերը, որ դեղագործը մոռացավ գետնին։ Արդեն լուսանում էր, և Գրիգորը չէր կարող թաքցնել իր դեղնած, անտարբեր այտերի վրայով հոսող արցունքները։ Գաբրիելը շալակեց ծերունու գրքերի պարկը.

— Դեղագո՛րծ Գրիգոր, արդյոք հավատո՞ւմ եք,— ասաց նա,— որ ես ծնվել եմ մառզերյան հրացանի, փամփշտակալի և խրամատի համար։

Զնայած Գրիգորը մի քանի անգամ առարկեց, բայց Գաբրիելը գրքերի հսկայական պարկը հասցրեց Հյուսիսային լեռնաթամբը։

Գիրք երկրորդ

ՏԿԱՐԴԵՐՈՒ ՄԱՔԱՌՈՒՄԸՆԵՐԸ

«Եւ կոխեցաւ հնձանն արտաքոյ քաղաքին.
և եկաւէր 'ի հնձանէն արիւն
մինչև 'ի սանձս ձիոցն»։

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆՈՒ, 14, 20

ԳԼՈՒԽ ՍՈՒՅԶԻՆ

Մեր օրվանը լեռան բարձունքն է

Ուստա դա՜ղ, Մովսեսի լե՜ռ։ Մովսեսի լեռան գագաթին, վաղորդյան աղջամուղջում, իր բանակատեղին հիմնեց ողջ ժողովուրդը։ Լեռնային բարձունքը, զովաշունչ օդը, ծովի ծփանքը — այս ամենն այնքան էր կենարար, որ մարդիկ կարծես մոռացության էին տվել գիշերային վերելքի տառապանքը։ Ջկային հոգնաբեկ և ընդարմացած դեմքեր։ Կար միայն հուզմունք։ Քաղաքաձորում ու մոտակայքում ժխոր էր, եռուզեռ։ Ոչ ոքի չէր ճնշում իրական կացության գիտակցությունը։ Բոլորին համակել էր ինչ-որ անհանդիստ, ոգեշունչ ավյուն։ Բոպեի հրատապ հոգսը ծովային հզոր ալիքի նման իր տակ ծածկում էր ընդհանուր ճակատագրին վերաբերող ամեն մի խորհրդածություն։ Նույնիսկ Տեր-Հայկազունը, որը ճամբարի կենտրոնում կարգավորում էր փայտե խորանը, դրանով իսկ վավերացնում հավերժը, անհամբերությունից կշտամբում էր իրեն օգնող տղամարդկանց։

Գաբրիելը բարձրացել էր իր ընտրած գլխավոր դիտակետը։ Դամլաջրքի այս ժեռուտ բարձունքից պարզ երևում էին ծովը, Որոնտեսի դաշտավայրը, մինչև Անտիոք հասնող ալիքաձև լեռնապարը։ Կարելի էր տեսնել նաև հովիտը՝ Խրդըր բեգից մինչև Բիթիաս։ Ծայրամասի գյուղերը մնացել էին ճանապարհների ոլորանների ետևում։ Այս գլխավոր դիտակայանից բացի, անշուշտ, կար նաև հետախուզական տասը-տասներկու կետ։ Դրանք ենթակա էին վտանգի, բայց այդտեղից կարելի էր դիտել հովտի առանձին հատվածները։ Մինչդեռ վերևից, ապահով ժայռացցվածքների ետևից նայողը ամբողջ հովիտը կընդգրկեր ընդհանուր գծերով։ Այդ իսկ պատճառով էլ ճշմարիտ իրադրությունն ամենայն ուժգնությամբ խոցում էր միայն Բագրատյանի սիրտը։ Հետզհետե

նեղացող բանակավայրի դիտանոցում կանգնած՝ նա ամեն ինչ պարզ տեսնում էր։ Այնտեղ, հյուսիսում, արևելքում, հարավում, մինչև Անթաքիե, ո՜չ, մինչև Հալեպ, ո՜չ, մինչև Մոսուլ և Դեյր էս Զոր դարանակալ սպառնում էր անխուսափելի բնաջնջումը։ Միլիոնավոր մահմեդականներ շուտով միայն մի նպատակ էին հետապնդելու. հող ու մոխիր էին դարձնելու Մուսա լեռան հայկական հանդուգն բույնը։ Մյուս կողմում անկարեկից Միջերկրական ծովն էր, որ քնատ բախվում էր լեռան գահավեժ թիկունքին։ Եթե Կիպրոսը հարյուրապատիկ ավելի մոտ լիներ, միևնույն է, ֆրանսիական կամ անգլիական ո՞ր նավը մազաչափ անգամ կհետաքրքրվեր ռազմանավատից հեռու ընկած սիրիական ծովեզերքի այդ չոր ու ցամաք մասով։ Նավատորմերը գործում էին միայն վտանգավոր տեղերում, Սուեզի և հյուսիս-աֆրիկյան ծովեզերքի դիմաց, ամենայն հավանականությամբ միշտ ետևում թողնելով Ալեքսանդրեթի մեռյալ ծովախորշը։

Գաբրիելն ամայի ծովը դիտելիս հասկացավ, որ ինքը մեծ ժողովում անպատասխանատու դեմագոգություն է արել, խաբել իրեն և մյուսներին։ Իզուր էր բոլորին հուսադրում, թե օգնության կգան փրկարար ռազմանավերը։ Ծովի հեգնող, թափուր հորիզոնը նոր էր նրան խելքի բերում։ Զորս կողմն անծայրածիր մահ, փրկության ո՜չ մի ելք. ահա ճշմարտությունը։ Այս մահով անդառնալիորեն պաշարված գեղջուկ մի ժողովուրդ՝ խեղճ, փոքրաթիվ։ Եվ սա դեռ բոլորը չէր։ Եթե նույնիսկ արտաքին մահը բարյացակամորեն ծուլանար, մի բան, որ խենթին էլ հավանական թվալ չէր կարող, եթե ոչ մի հարձակում տեղի չունենար, ոչ մի գնդակ չարձակվեր, միևնույն է, մի այլ մահ ներսից գլուխ կբարձրացներ, կկործաներ ճամբարը։ Որքան էլ խնայողաբար մորթեին անասունները, որքան էլ ժուժկալ լինեին մթերքների գործածության մեջ, դրանց պակասը երբեք չէր լրացվելու, և վաղ թե ուշ ամեն ինչ սպառվելու էր։ Երբ դեռևս ներքևում էին, Դամլաջրքը բարձրանալու մտահղացումը թվում էր փրկարար ելք, քանի որ դառը վհատության հասած մարդու համար շարժվելու ձգտումը, ամեն մի հնարավոր փոփոխության հեռանկարը ամոքիչ սպեղանի է։ Բայց հիմա ժողովուրդն անշարժ նստած էր։ Ամոքիչ սպեղանին այլևս չէր օգնի։

Գաբրիելն իրեն զգում էր ժամանակից ու տարածությունից դուրս նետված։ Մի պահ ընդունում էր, թե անխուսափելին կարող է հետաձգվել։ Բայց չէ՞ որ ձեռքից բաց էր թողել պատահական փրկության հարյուրավոր մանր առիթներ։ Ավելի իմաստուն չվարվե՞ց Հարություն Նոխուդյանն իր հոտի հետ։ Սառցեղեն մի բոունցք սեղմեց Գաբրիելի

կոկորդը։ Ի՞նչ անքավելի մեղք գործեց Ժուլիեթի և Ստեփանի դեմ։ Փախուստի լավագույն հնարավորությունից մեկընդմիշտ զրկված էին։ Ոչ մի անգամ նա չէր փարատել Ժուլիեթի անխոհեմ լավատեսությունը, թեև մարտ ամսի այն հեռավոր կիրակի օրից ի վեր գիտեր, որ թակարդի մեջ են։ Իր անբացատրելի հանցանքն ընդունելուց հետո Գաբրիելը հանկարծ թուլություն զգաց, գլխապտույտ։ Ծովի և ցամաքի հորիզոններն սկսեցին պտտվել։ Ամբողջ աշխարհը դարձավ պտտվող սկավառակ, իսկ Մուսա լեռը՝ դրա մեջտեղում անշարժ ընկած մեռյալ մի կետ։ Սակայն այդ կետի կենտրոնը Գաբրիելի մարմինն էր, որն ինչքան էլ բարձր լիներ կանգնած, դարձյալ իր շուրջը գալարվող անդիմադրելի ջրապտույտի ամենաստորին խութն էր։ «Ողջ մնալ ենք ուզում, ո՛չ թե ապրել»,— սարսռաց նա։ Բայց և նույն ակնթարթում լուռ զարմացավ. «իսկ ինչո՞ւ»։

Գաբրիելը փախավ Քաղաքաձոր։

Ավագների խորհրդի առանձին կոմիտեներն արդեն հավաքվել էին, քանի որ առաջին օրվա բազմազան անելիքներն աշխատանքի բաժանման կարիք ունեին։ Գաբրիելը պահանջում էր, որ բոլոր աշխատունակ մարդիկ՝ կին թե տղամարդ, անհապաղ ձեռնամուխ լինեն խրամատներ փորելու և արգելքներ պատրաստելու։ Խրամատավորման ամբողջ աշխատանքը պետք է ավարտված լիներ հաջորդ օրը։ Ի՞նչ իմանային, թե հենց երրորդ օրը տեղի չի ունենա թուրքերի առաջին հարձակումը։ Գաբրիելը նորից ու նորից հայտնեց, թե պաշտպանությունը և դրան վերաբերող մյուս գործերը, ինչպես, ասենք, զինավարժություններն ու ռազմիկների տեղաբաշխումը, պետք է գլուխ բերել ամեն ինչից առաջ։ Եթե իրեն՝ Գաբրիել Բագրատյանին, պաշտպանության ղեկավար են կարգել, ապա անհրաժեշտ է, որ նա ստանձնի նաև գերագույն հրամանատարի իրավասությունը, իրեն ենթարկի ոչ միայն առաջին գծի վրա մարտնչողներին, այլև պահեստային բոլոր ուժերը, այսինքն՝ ռազմիկներին և աշխատողներին, այլ խոսքով՝ ամբողջ ճամբարը։

Արամ Թովմասյանը չափազանց զգայուն մարդ էր, բայց, դժբախտաբար, առարկեց, պնդելով, թե ոչ պակաս կարևոր է ճամբարի ներքին դրության կարգավորումը։

Առայժմ հեղհեղուկ անիշխանություն էր տիրում։ Ընտանիքները միմյանց նախանձում էին իրենց բաժին ընկած տեղերի համար։ Առանձին գյուղերի համայնքները դժգոհում էին գաղթականի այս կամ այն մասից։

Գաբրիելն ընդդիմացավ պատվելու առարկությանը։ Դժգոհություն

առհասարակ չպետք է լինի. վիճակը ծայրահեղ է, պատերազմական։ Քրթմնջացողները խստիվ կպատժվեն։

Թովմաս Քեբուսյանն ու մյուս մուխթարներն իսկույն անցան պատվելու կողմը։ Նույնիսկ Պետրոս Ալթունին համառորեն պնդեց, թե ամենից առաջ պետք է հոգալ ժողովրդի մարմնական կարիքները, անհապաղ կառուցել հիվանդանոց, որպեսզի հիվանդների և տկարների դրությունը չվատթարանա։ Այնուհետև իրար հետևից հանդես եկան մուխթարներն ու ուսուցիչները, սկսեցին երկար-բարակ ապացուցել իրենց իրավասությանը ենթակա անհետաձգելի գործերի անհրաժեշտությունը։

Գաբրիելը սարսափով զգաց, թե խորհրդակցական կազմակերպության մեջ որքա՜ն դժվար է օրինականացնել այն, ինչ միանգամայն պարզ է, ինքնին հասկանալի։ Ծայր առան սնամեջ, անհեթեթ վիճաբանություններ։ Սակայն մի քանի րոպե չանցած իր առավելությունը ցույց տվեց սահմանադրական այն կարգը, որ ավագների խորհրդին ներկայացրել էր Գաբրիելը։ Տեր-Հայկազունը տարաձայնություններ ծագելու դեպքում օրինական հեղինակությամբ կարող էր կարճ ու կտրուկ ասել իր վճռական խոսքը։ Նա այդ հեղինակությունը գործադրեց այնքան իմաստուն, աննկատելի և ճարտար ձևով, որ ոչ ոք այլևս որևէ առաջարկություն չարեց, դրությունը չբարդացրեց վտանգավոր քվեարկությամբ։ Գաբրիելը միանգամայն իրավացի էր. բոլոր պարտականությունները պետք է ստորադասել պաշտպանության գործին։ Օրեր առաջ խորհրդին ներկայացված կանոնադրությունը պետք է անհապաղ ընթերցել տասնապետների մոտ և նույն ժամին ուժի մեջ դնել։ Գլխավոր հրամանատարին ամեն ոք պետք է ենթարկվի առանց այլևայլության։ Քանի որ Բագրատյանը, իբրև խիզախ սպա, ռազմական փորձ ունի, իսկ դա բոլոր ընտրյալների համեմատությամբ կարևոր առավելություն է, ապա խորհուրդը նրա անվերապահ իրավասությանն է հանձնում այն ամենը, ինչ վերաբերում է ճակատամարտերին, ռազմական նախապատրաստություններին, կարգապահությանը։ Բագրատյանը և նրան օժանդակող ռազմական հանձնաժողովը պարտավոր չեն իրենց կայացրած որոշումները համաձայնեցնել ընդհանուր խորհրդի հետ։ Ուստի և պատվելի Արամ Թովմասյանը պետք է լինի ռազմական հանձնաժողովի մեջ, իսկ Գաբրիել Բագրատյանը՝ ներքին կարգապահության հանձնաժողովի։ Այս ձևով կարելի է խուսափել անհարկի գժտություններից։ Գլխավոր հրամանատարը, անշուշտ, ունի նաև պատիժներ սահմանելու ինքնուրույն իրավունք։ Անհնազանդներին և ծառայության մեջ թերա-

ցողներին նա կարող է զրկել սննդից, շղթայել, մեղմ կամ խիստ գանահարության դատապարտել ըստ իր հայեցողության։ Մահապատժի կարող է ենթարկել միայն Տեր-Հայկազունը՝ խորհրդի միաձայն վճռից հետո։ Ռազմական օրենքի լրջությունը պետք է առաջին իսկ ժամերին բացատրել նաև ճամբարի ժողովրդին։ Ներքին կոմիտեի գլխավոր խնդիրն է՝ խստիվ հետևել կարգ ու կանոնին, դժվարին հանգամանքները ներկայացնել իրական պատկերով, գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի լեռան բարձունքներում սովորական, առօրյա կյանքն ընթանա ճիշտ այնպես, ինչպես հովտում։ Տեր-Հայկազունը ցուցումներ տալիս առանձնապես շեշտեց «սովորական» և «առօրյա» բառերը։ Կարծես այդ անտեսանելի ուժերից ավելի շատ էին կախված դիմադրության թափն ու տևողությունը, քան արտասովոր սխրագործություններից։ Ոչ մի աշխատող ձեռք այսուհետև չպետք է մնա պարապ։ Երեխաներն էլ չպետք է թրև գան, ժողովրդի կենաց և մահու պայքարը համարեն հաճելի արձակուրդ։ Այդ նպատակով պետք է որոշակի տեղում դպրոց հիմնել, դասերը շարունակել ամենայն խստությամբ, ընդունված կարգով։ Ծառայությունից ազատ ժամերին ուսուցիչները պետք է հերթով պարապեն։ Նեղ վիճակից մարդկանց կարող է դուրս բերել միայն անխոնջ աշխատանքը։ Տեր-Հայկազունը եզրափակեց այս խոսքերով.

— Ուրեմն՝ ի գործ, ո՛վ մարդիկ։ Եկեք հնարավորին չափ քիչ ժամանակ սպանենք խորհրդակցությունների պատճառով։

Մուխթարներն իրենց համայնքները հավաքեցին խորանի մեծ հրապարակում, Քաղաքաձորի կենտրոնում։ Գաբրիելը պատվիրեց շարքի կանգնեցնել ութսունվեց առաջապահ տասնյակները՝ Զաուշ Նուրհանի գլխավորությամբ։ Նորակոչիկների արքան հոգ տարավ, որ իր բանակը համաչափ քառանկյունի կազմի դեռևս չօծված խորանի շուրջը։ Այնուհետև խորանի բեմը բարձրացավ Տեր-Հայկազունը։ Բեմը հրապարակից բարձր էր հինգ աստիճան և բավական լայն էր։ Վարդապետն ավագներից իր մոտ կանչեց միայն Բագրատյանին, ապա դիմեց քառանկյունաձև շարված տասնյակներին, հնչեղ ձայնով կարդաց Սամվել Ավագյանի կազմած զինվորական կանոնադրությունը։ Երբ ավարտեց, իր կողմից մի քանի սպառնական խոսք ավելացրեց։ Ով դերագույն հրամանատարի կամքին ընդդիմանա կամ մոռացության տա իր պարտքը, կենթարկվի անողոք դատաստանի։ Դա հատկապես վերաբերում է թուրքական զորանոցներից փախած ոչ տեղացի զինվորներին։ Ճամբար ընդունելը, ժողովրդի հաշվին կերակրելը ոչ թե անհրաժեշտություն է, այլ եղբայրական օգնություն, և եկվորները պետք է

ձգտեն արժանի լինել այդ բարությանը։ Տեր-Հայկազունը վերցրեց զոհասեղանին դրված խաչելությունը, Բագրատյանի հետ իջավ, կանգնեց քառանկյունու կենտրոնում։ Դանդաղ արտասանեց երդման խոսքերը, որ ձեռքները վեր մեկնած՝ կրկնում էին զինվորները.

— Երդվում եմ աստծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու առաջ, որ ես մինչև իմ արյան վերջին կաթիլը կպաշտպանեմ ժողովրդիս հանգրվանը, կույր խոնարհությամբ կհնազանդվեմ գերագույն հրամանատարին, կկատարեմ նրա բոլոր կարգադրությունները, կճանաչեմ ընտրյալ ավագների խորհրդի իշխանությունը և երբեք ինքնագլուխ չեմ լքի լեռը։ Թող ինձ զորավիգ լինի և փրկություն շնորհի մեր Տերն աստված։

Երդման արարողությունից հետո առաջին գծի զինվորներն անցան խորանի հետևը։ Հազար հարյուր պահեստայինները, որոնք քսաներկու խմբի էին բաժանված, հնազանդության և աշխատանքի պատրաստակամության ավելի հակիրճ երդում տվին։ Պահեստայինների վրա էր ընկնում խրամատներ փորելու և շինարարության հիմնական բեռը։ Եթե ճակատամարտին մասնակցելու առիթ լիներ, ապա նրանք ոչ մի այլ զենք չունեին, բացի հետները բերած գյուղատնտեսական գործիքներից։

Ի վերջո խորանի առաջ հայտնվեց երեք հարյուր անչափահաս տղաներից կազմված «թեթև հեծելազորը»։

Տեր-Հայկազունը նրանց խրատական մի քանի խոսք ուղղեց, ապա Գաբրիելը բացատրեց, թե պատանիներն ի՞նչ պարտականություններ ունեն, իբրև հետախույզներ, սուրհանդակներ, կապավորներ, ազդանշան տվողներ։ Նա տղաներին «աչքաչափով» բաժանեց երեք մեծ խմբի։ Առաջին խումբը պետք է ապահովեր հետախուզական և դետքային կետերը, երկու ժամը մեկ լուրեր հաղորդեր շտաբ։ Այս գործի համար առանձնացվեցին առավել չափահաս, առավել վստահելի հարյուր տղա։ Նրանց պարտականությունների մեջ էր մտնում նաև այն, որ գիշերցերեկ պետք է պնակաձև դարավանդից հսկեին, իրենց պատանեկան սրատես աչքերով ճիշտ ժամանակին նկատեին մոտերքից անցնող նավերի բարակ ծուխը (ի՞նչ ծիծաղելի հույս)։ Երկրորդ խմբի վրա Գաբրիելը դրեց կապավորների պարտականություններ։ Այս հարյուր տղաները պետք է շարունակ լինեին շտաբի մոտակայքում, հրամանատարների հրահանգները տեղ հասցնեին բոլոր ուղղություններով, կապ պահպանեին պաշտպանության առանձին հատվածների միջև։ Կապի զորաբաժնի պետ կարգվեց գլխավոր համհարզ Սամվել Ավագյանը։ Ստեփանը մտնում էր այս խմբի մեջ։ Երրորդ հարյուրյակը դրվեց պատվելի Արամ Թովմասյանի տրամադրության տակ։ Այս խումբը

պետք է ապահովեր ներքին ծառայությունը և առաջին հերթին սնունդ հասցներ կրակային գիծը։

Գեղջուկ ժողովրդի մեջ Բագրատյանի կատարած գործաբաշխումն անմիջապես ի հայտ բերեց իր առավելությունը։ Զինվորները տոգորված էին ռազմիկ լինելու կարևորագույն զգացումով, տասնապետներին շոյում էր հրամայելու բավականությունը, բոլորը համակված էին մարտական շարքերում լինելու մանկական հրճվանքով։ Մարդկային այս բոլոր հատկանիշների ետևում, խաղի բարերար խանդավառության շնորհիվ, քողարկվում էր անագորույն իրողությունը։ Երբ դասակները զանազան ուղղությամբ գնացին խրամատներ փորելու, տեղ-տեղ ծայր առան հովտում տարածված երգի հնչյունները.

Զախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան։
Դառն ցավերը մարդու վերա չեն մնա երկար,
Որպես հաճախորդ, շարվե-շարան կուգան ու կերթան։

Գաբրիելն իր մոտ կանչեց Զաուշ Նուրհանին և առավել մեծ միավորումների հրամանատարներին։

Տեր-Հայկազունը խորանի հրապարակից հեռացավ, քայլերն ուղղեց դեպի Երեք վրանի հրապարակը։ Դա գտնվում էր մի մեծ աղբյուրի կողքին, շրջապատված էր տոսախի ծառերով, երեք կողմից պաշտպանված էր բաղեղնածածկ ժայռերով ու մրտենու թփերով։ Սա հիանալի ապացույց էր, թե Գաբրիելն ի՞նչ քնքուշ հոգատարությամբ է վերաբերվում իր ընտանիքին։ Վարդապետը ցանկանում էր խոսել Ժուլիեթ հանըմի հետ։ Քանի որ Քրիստափորը, Միսակը, Հովհաննեսն ու մյուս սպասավորները մոտերքում զբաղված էին խոհանոցային գործերը կարգավորելով, նա իր ցանկությունը չկարողացավ որևէ մեկին հայտնել, բացի Գոնզագ Մարիսից, որը հրապարակում շտապ-շտապ ետ ու առաջ էր քայլում, ինչպես շարժվելու պահանջ զգացող ուղևորը՝ նավի նեղ տախտակամածի վրա։ Երիտասարդ հույնը մոտեցավ Ժուլիեթի վրանին, քաշեց մուտքի վերևից կախված փոքրիկ զանգը։ Հանըմին շատ երկար սպասեցին։ Երբ տիկինը վերջապես հայտնվեց, Գոնզագին խնդրեց, որ սա վրանից մի աթոռ բերի Տեր-Հայկազունի համար։ Սակայն վարդապետը մերժեց. ցավոք սրտի, ժամանակը սուղ էր։ Նա ձեռքերը քաշեց պարեգոտի լայն թևքերի մեջ, աչքերը խոնարհեց։ Ինչ որ կարողացավ հայտնել իր կոշտ ֆրանսերենով, լի էր հանդիսավոր ձևականությամբ։ Տիկնոջ բարությունը հայտնի է։ Ուստի և նրան խնդրում է պատիվ ցույց տալ ժողովրդին, կատարել հետևալ հանձնարարությունը։ Անհրաժեշտ է, որ դուրս ցցված ժայռոտ դարատափի վրա, լեռան գահավեժ կողմում, ծովն ի վար ծածանվի կարմիր խաչ կրող սպիտակ, վիթխարի մի դրոշ, աղետի ազդանշան լինի աստծո ողորմածությամբ ուղարկվելիք նավերի համար։ Դրոշի վրա պետք է լինի նաև ֆրանսերեն և անգլերեն մակագրություն. «Քրիստոնյաներն աղետի մեջ են։ Օգնեցե՛ք»։

Տեր-Հայկազունն այս խոսքի վրա գլուխ տվեց, կարծես ուզում էր հարցնել, թե արդյոք Ժուլիեթը համաձա՞յն է մյուս կանանց հետ պատրաստել դրոշը։

Ժուլիեթը խոստացավ, բայց այնքա՜ն անտարբեր, այնքա՜ն անզգա։ Ֆրանսուհին չտեսնելու տվեց այն պատիվը, որին Տեր-Հայկազունը նրան արժանացրեց իր այցելությամբ և նրբակիրթ խնդրանքով։ Այդ կինը դարձյալ խուլ էր ձևանում այն ամենի հանդեպ, ինչ հայկական էր։ Միայն երբ Տեր-Հայկազունը գլխի թեթև շարժումով շտապ հեռացավ, նա հանկարծ անհանգստացավ, որոնեց, գտավ երկու մեծ սավան, որոնցից կարելի էր կարի մեքենայով պատրաստել ցանկալի դրոշը։

Գաբրիելը Զաուշ Նուրհանին և մյուս կրտսեր հրամանատարներին մի անգամ էլ հիշեցրեց երկաթյա կարգապահության անհրաժեշտությունը։ Այսուհետև ոչ ոք իրավունք չունի առանց թույլտվության հեռանալու իր նշանակված տեղից։ Չի կարելի հանդուրժել, որ առաջին գծի վրա գտնվողները գիշերեն իրենց ընտանիքների հետ, Քաղաքաձորում։ Բոլորը պետք է քնեն խրամատներում, բացառությամբ առանձին դեպքերի, երբ դա անհրաժեշտ կհամարեն հրամանատարները։

Գաբրիելն իր շտաբի համար ընտրեց առավել հարմար հրապարակ։ Այստեղ ամեն օր, մայրամուտից երկու ժամ առաջ, լսելու էր առանձին միավորումների և խմբերի հրամանատարների զեկույցները։ Այդ ժամանակամիջոցում ընթացք էր տալու նաև դիմումների, բողոքների, խնդրանքների, օգնություն էր ցույց տալու, արձակելու էր հաջորդ օրվա հրամանները։

Այսպիսով, հիմնականում ստեղծվեց ռազմական կուռ կազմակերպություն։ Հարկավոր էր միայն հունի մեջ դնել մարդկանց պատրաստակամությունն ու եռանդը։

Գաբրիելը քարտեզը վերցնելով, մի անգամ էլ խոսեց պաշտպանության տասներեք հատվածների մասին։ Սրանցից միայն երեքն էին կարիք զգում հատուկ հսկողության, մնացած տասը հատվածներից

յուրաքանչյուրի պահակության համար լիովին բավական էին տասը, նույնիսկ հինգ հոգի։ Բայց միայն Հյուսիսային լեռնաթամբի ժայռապարիսպների և խրամատների պաշտպանության համար Գաբրիելն առանձնացրեց քառասուն ջոկ, երկու հարյուր ընտիր հրացան։ Այս կարևոր հատվածի հրամանատարությունն ստանձնեց ինքը։ Տեղակալ նշանակեց Ջաուշ Նուրհանին, որը միաժամանակ կարգված էր Կաղնուտի վերևում ընկած խրամատների հրամանատար, ինչպես նաև բոլոր զինված ուժերի հրահանգիչ։ Այս պաշտոնին ամենից առաջ վերաբերում էին ռազմամթերքի լրացումն ու զենքերի պատշաճ վիճակը։

Անգնահատելի մարդ էր Ջաուշ Նուրհանը։ Միաժամանակ կարող էր լինել տասը տեղում։ Ամեն ինչ արդեն նախապատրաստել էր, որ հիմնի փամփուշտներ արտադրող արհեստանոց։ Անհրաժեշտ հումքն ու գործիքները Յողոնօլուքի գաղտնարանից բերել էր Դամլաջըք։ Առայժմ լուծված չէր միայն հարավային ամրության անձնակազմի հարցը։ Սա ամենահեռավոր հատվածն էր և պահանջում էր տասնհինգ ջոկ։ Հայտնի պատճառներով իսկական և շինծու դասալիքները մտնում էին այս զորախմբի մեջ, որի պահպանմանը հանձնված ամրոցանման հատվածն առանձնահատուկ կարևորություն ուներ։ Առայժմ այնտեղի հրամանատարն էր Խըդըր բեգ գյուղի բնակիչներից մեկը, որը ծառայել էր բանակում։ Սակայն Գաբրիելն այլ մտադրություն ուներ։ Սարգիս Կիլիկյանը խիզախ զինվոր էր, մասնակցել էր կովկասյան ճակատամարտերին, փորձառություն ուներ։ Դրանից բացի, կրթված, ողջախոհ մարդ էր։ Թուրքերի պատճառով անլուր տառապանքներ էր կրել և եթե տակավին սիրտ ու հոգի ուներ, ապա պետք է տոչորվեր անմարդկային վրիժառության ծարավից։ Գաբրիելը մտադիր էր որոշ ժամանակ հետևել Կիլիկյանի վարքին, և եթե նա արդարացներ իր սպասելիքները, նշանակեր հարավային ամրության հրամանատար։ Շախմատային այս քայլը կատարելով, գլխավոր հրամանատարը ոչ միայն ուզում էր նվաճել արժեքավոր մի ուժ, այլև իր բռի մեջ հավաքել մյուս անվստահելի դասալիքներին։ Այնպես որ, ջոկերը ճանապարհելուց հետո, Գաբրիելը Ռուսին պահեց իր մոտ։

Կիլիկյանն ամբողջ ժամանակ Բագրատյանին նայում էր համառ սառնությամբ, որը հասնում էր լկտիության։ Նավթային ստրկությունից, բանտարկությունից և հազարավոր սոսկալի արկածներից հյուծված այս մարդը, որն իր գլխով նման էր երիտասարդ մեռելի, չնայած գեմքի դաբաղած կաշուն և հագի ցեխոտ ցնցոտիներին, ուներ ազդեցիկ, նույնիսկ տիրական հայացք։ Իր փայլուն, արհամարհանքով լի աչքերը

Գաբրիելին գամած՝ նա հավանաբար մտածում էր, թե այդ փափկասուն, շփացած պարոնն ինչ-որ չափով խոնարհվում է իր առաջ։ Դա, թերևս, համարում էր երկյուղ, պատկառանք իր զարհուրելի ճակատագրի և այն ուժի հանդեպ, որը տակավին մնացել էր։ Բայց հենց այդ զգացումը, ինչպես նաև այն, որ այդ հագած-կապած պարոնն իր կյանքում երբեք, մի բոպե անգամ չի տեսել ո՛չ սարսափ, ո՛չ զրկանք, ո՛չ անպատվություն, բորբոքեց Կիլիկյանի չարությունը։ Գաբրիելը հրամայական չոր տոնով գոչեց.

— Սարգի՛ս Կիլիկյան։ Երկու ժամ հետո եկ Հյուսիսային լեռնաթամբ, ներկայացիր ինձ։ Քեզ աշխատանք եմ հանձնարարելու։

Ռուսի աչքերը, որ դեռ սևեռուն զննում էին Գաբրիելին, ագաթի բութ փայլ ստացան։ Նա ալարկոտ ծիծաղեց.

— Գուցե գամ, գուցե չգամ։ Դեռ հաստատ չգիտեմ, թե սիրտս ի՞նչ կուզի։

Գաբրիելն զգաց, որ ամեն ինչ կախված է իր պատասխանից։ Նույն բոպեին պետք է արդարացներ իր դիրքն ու աստիճանը։ Նա մեկընդմիշտ կկորցներ իր հեղինակությունը, եթե նույն վայրկյանին խստությամբ չվարվեր և կարճ չկապեր։

Բոլորը լարված սպասում էին։ Ոմանց մեջ գլուխ բարձրացրեց գաղտնի չարախնդությունը։

Գաբրիելն իր Ավետիս եղբոր որսորդական կոստյումից, որը գրեթե չէր հագել հանգուցյալը, համազգեստ էր կարել։ Ոտքերին կաշվե փաթաթաններ կային, գլխին՝ արևադարձային լայնեզր գլխարկ։ Մտախոհ և ծանրաքայլ շարժվեց դեպի Ռուսը։ Ծղոտե գլխարկով Գաբրիելն ավելի բարձրահասակ էր թվում։ Ձեռնափայտով փաթաթաններին թեթև հարվածներ տեղալով՝ վճռականորեն մոտեցավ Կիլիկյանին, և սա ստիպված եղավ մի քայլ ետ քաշվել։

— Սարգի՛ս Կիլիկյան, ինձ լսիր և խելքդ գլուխդ հավաքիր։

Գաբրիելը մի վայրկյան լռեց։ Զգաց, որ ձայնն այնքան էլ հանդարտ չհնչեց։ Սիրտը թպրտում էր։ Այդ հուզումը հակառակորդի համար առավելություն էր։ Ուստի, առանց հայացքը Ռուսից թեքելու, սպասեց մինչև իր ամբողջ էությունը տոգորվեց հստակ, սառը վճռականությամբ.

— Կիլիկյա՛ն, ես քեզ իրավունք եմ տալիս, որ ուզածդ անես։ Բայց մինչև մեջքս քեզ դարձնելը պարտավոր ես վճռել անելիքդ... Ազատ ես, կարող ես գրողի ծոցը գնալ, ոչ ոք ձեռքդ չի բռնում։ Քեզ նման մարդիկ մեզ պետք չե՛ն...

Գաբրիելը դարձյալ մի պահ լռեց։ Երևի կարծում էր, թե Կիլիկյանը այս պահանջին տեղի կտա, իր հեգնական դանդաղկոտությամբ կհեռանա, առանց նույնիսկ մի անգամ նայելու Դամլաջրքի ժողովրդի կողմը։ Սակայն Ռուսը մնաց իր տեղում մեխված։ Նրա աչքերի մեռյալ, քարեղեն փայլի մեջ ինչ-որ հետաքրքրական կայծ էր դեգերում։ Գաբրիելի ձայնը հնչեց սառն ափսոսանքով.

— Կիլիկյան, ես մտադիր էի քեզ ղեկավար դեր հանձնել, կարծելով, թե զինվոր ես եղել, ավելի շատ ես թուրքերի երեսից տուժել, քան այստեղ եղածներից որևէ մեկը։ Կարծում էի, թե կուզենաս արյան գնով լուծել քո և ընկերներիդ վրեժը... Բայց քանի որ չգիտես՝ ցանկություն կունենա՞ս, թե՞ ոչ, քանի որ իրականում դու միայն բարոյապես ընկած, վախկոտ մի դասալիք ես, մոռանում ես քո ժողովրդի հանդեպ ունեցածդ պարտքը, դրժում ես հնազանդության երդումդ, ուրեմն՝ գնա՛, հեռացի՛ր և այլևս այս կողմերում չերևաս։ Մենք չենք կարող հանդուրժել կանանց ու երեխաների բաժին հացը լափող ինչ-որ լպիրշ, պորտաբույծ ստահակի։ Եթե հանդգնես մի անգամ էլ աչքներիս երևալ, կհրամայեմ, որ քեզ գնդակահարեն։ Գնա թուրքերի մոտ։ Նրանց վաշտերը շուտով այստեղ կլինեն։ Քեզ են սպասում։

Մի այնպիսի մարդու համար, ինչպիսին Ռուսն էր, կար միայն մի հնարավորություն. նետվել այս նրբակիրթ պարոնի, այս «կապիտալիստի» վրա, բռունցքով ջարդել մռութը։ Բայց Կիլիկյանը տեղից չշարժվեց։ Աչքերը կորցրին իրենց անտարբեր հանդարտությունը և արդեն կարեկցություն էին հայցում շուրջը կանգնած մարդկանցից։

Գաբրիելը սպասեց հինգ վայրկյան, որը նրա հեղինակությունն ալիքի պես վեր բարձրացրեց, ապա հանկարծ անողոք ձայնով գոռաց.

— Տեսնում եմ, որ անելիքդ վճռեցիր։ Ուրեմն՝ հեռացի՛ր։ Զքվի՛ր։

Զարմանալի էր, թե ինչպես մտրակի նման շաչող այս հնչյունները Ռուսին մի ակնթարթում տվին ծեր հանցագործի տեսք։ Գլուխը քաշեց ուսերի մեջ, ներքևից վերև նայեց հակառակորդին, որն իրենից անհուսալիորեն բարձր էր։ Սակայն Կիլիկյանի ամբողջ թուլությունը մտքի պայծառությունն էր, որով նա կշռադատում էր իր վիճակը։ Պարզ պատկերացնում էր, թե ի՞նչ գծուծ, ի՞նչ նողկալի է պահը։ Չէ՞ որ ուժ կարելի է գործադրել միայն այն դեպքում, երբ ատելության արբեցած ոգին չի ընկճվում հետևանքները կանխատեսելուց հետո։ Կիլիկյանը մեղապարտի նման կանգնած՝ իսկույն գիտակցեց, թե ինչ է կորցնելու։ Արդեն չորս ամիս ազատ, ապահով ապրում էր Մուսա լեռան լանջին։ Ապրուստի միջոց հայթայթելու համար այլևս չէր գնում գյուղերը, ողորմություն

չէր խնդրում։ Վիճակն ավելի բարելավվեց, երբ ժողովուրդն ինքն էլ քաշվեց լեռան բարձունքները։ Բայց եթե ճամբարից վտարվեր, կկտրվեր մարդավայել սնունդ ճարելու վերջին հնարավորությունը։ Հովտում այլևս չէր կարող մարդկանց աչքին երևալ։ Շրջակա բոլոր բնակավայրերը թուրքերն անմիջապես գրավել էին։ Մահը, որ հաճախ էր նրան հեգնելով խնայել, այս անգամ կարող էր իրեն չզրկել բավականությունից։ Թուրքերը Կիլիկյանին առնվազն մորթազերծ կանեին, մարմնի ամեն մի մասը կսպանեին առանձին-առանձին։ Այս ամենը վայրկենապես կայծակեց դասալիքի գիտակցության մեջ, և այս հանգամանքն ավելի զորեղ դուրս եկավ, քան հպարտությունը, ատելությունը կամ համառությունը։ Ռուսը մի անգամ էլ փորձեց քմծիծաղ տալ, բայց ստացվեց ամոթալիորեն խղճուկ մի բան։ Գաբրիելը մազաչափ անգամ չզիջեց.

— Հը՞, ի՞նչ ես կանգնել մնացել։

Կիլիկյանն իր կուչ եկած գլուխը մեղապարտի նման թեքեց մի կողմի վրա.

— Ուզում եմ...

— Ի՞նչ ես ուզում։

Ռուսի աչքերը նոր արտահայտություն ստացան։ Ագաթի աղոտ, անկենդան փայլը տեղի տվեց պատանեկան անհամարձակ հայացքին։ Գաբրիելը մտաբերեց տասնմեկամյա տղային, որը խրհանոցային դանակով զինված՝ պաշտպանում էր մորը։ Ահագին ժամանակ անցավ, մինչև Կիլիկյանը մրմնջաց պարտվածի վճռական խոսքը.

— Ուզում եմ մնալ։

Գաբրիելը մտածեց, որ չարժե մարդուն լրիվ ծունկի բերել, ստիպել, որ զինվորների ներկայությամբ աղերսագին ներումն հայցի, տա հնազանդության երդում։ Ոչ միայն կարեկցանքը (տասնմեկամյա պատանու պատկերը), այլև ներքին բնազդը նրան ետ պահեց։ Վերադաս հրամանատարին վայել չէր լիովին ըմբոշխնել տկարի դեմ տարած հաղթանակը, սեփական ռազմադաշտը ծանրաբեռնել նվաստացած թշնամու ներկայությամբ։ Ուստի և սպայական չոր խոսելաձևին տվեց բարության երանգ.

— Կիլիկյա՛ն, ներում եմ առաջին և վերջին անգամ։ Առայժմ կտեսնեմ, թե քեզ ինչպես կպահես։ Բայց դու քեզ ամենաչնչին չափով անգամ պատասխանատու զգալու ընդունակ չես։ Զգուշացի՛ր. քեզ մարդիկ կհետևեն։ Գնա՛։

Գաբրիելի հաղթանակն այնքան զորավոր էր, որ պատժվողը զին-

վորական ձևով ձեռքը տարավ դեպի մորթե փափախը, պատվի առավ, ապա աննկատելիորեն ծլկեց։

Կամակոր դասալիքի պարտությամբ, դասալիք, որից բոլորը վախենում էին, առաջին անգամ, իրոք, վավերացվեց գլխավոր հրամանատարի հեղինակությունը։ Զաուշ Նուրհանն ու մյուս կրտսեր հրամանատարներն ակամա ձգվեցին։ Շատերի աչքերում կարելի էր կարդալ. «Պարզ երևում է, որ մարդը բնածին իշխանավոր է»։

Ռազմական կոմիտեի անդամներ Արամ Թովմասյանից և Հաբեթ Շատախյանից բացի, այս անախորժ տեսարանին ներկա էր նաև ուսուցիչ Հրանտ Ոսկանյանը։ Սա, ինչպես միշտ, իրադարձությանը նայում էր խոժոռված, աշխարհամերժ ամբարտավանությամբ։ Գաբրիելն այսօր առանձնապես ուշադիր զննեց ուսուցչի թուխ դեմքը։ Ինքնահավան, ամեն ինչ հերքող հայացքի տակ ավյուն և վճռականություն կար թաքնված։ Որքան էլ Ոսկանյանը փոքրամարմին լիներ, կարող էր սաստել ոչ միայն երեխաներին, այլև չափահաս մարդկանց։ Հարավային ամրության զինվորների կեսը դասալիքներ էին։ Ինչպես ցույց տվեց Կիլիկյանի հանդգնությունը, նրանք կարիք ունեին դաստիարակի և վերակացուի։ Դրանց մարմնի մեջ հարկավոր էր թունավոր խայթոց խրել։ Բագրատյանը համոզված էր, որ թզուկ Ոսկանյանը հենց այդ թունավոր խայթոցն է։ Դրանից բացի, այժմ ներկայացել էր հարմար ուրիթը, երբ կարելի էր քավել Ոսկանյանի հասցրած վիրավորանքը։ Չէ՞ որ Տեր-Հայկազունը Ուրբաթախոսին ոչ մի հանձնաժողովի անդամ չէր նշանակել և, դպրոցի տնօրինությունից բացի, ոչ մի կարգին պաշտոնի արժանի չէր համարել։ Այդ պատճառով էլ Գաբրիելը տխրադեմ ուսուցչին առաջարկեց հարավային ամրության կոմիսարի պաշտոն։ Ոսկանյանը պետք է խիստ կարգապահություն հաստատեր, ծառայության անբասիր եղանակ, ամենից առաջ ի հայտ բերեր նվազագույն զանցանքն ու անհնազանդությունը։

Հրանտ Ոսկանյանը կնճռոտեց իր նեղլիկ ճակատը, և նրա սև, թավ հոնքերը քթի վերևում ուղիղ գիծ կազմեցին։ Կարծես ծանրաբարո խորհրդածում էր, թե արդյոք իր բարձր արժանիքներին վայե՞լ է մասամբ դաստիարակի, մասամբ էլ ոստիկանական լրտեսի այդ առաքելությունը։ Վերջապես առաջարկեց իր պայմանը.

— Պարոն Բագրատյան, եթե ստանձնեմ հարավային ամրության հսկողությունը, պետք է շատ լավ զինված լինեմ։ Տղաները պետք է տեսնեն, որ ինձ հետ կատակ անել չեն կարող։

Ուսուցիչ Ոսկանյանը զինանոցի կառավարիչ Զաուշ Նուրհանին հասկացրեց, որ իրեն պետք են ոչ միայն «քարա» հրացանն ու հինգ փամփշտակալները, այլև ազդեցիկ մի ատրճանակ և լայնշեղ դաշույն։ Մինչև ատամները զինված Ոսկանյանն անմիջապես բռնեց Երեք վրանի հրապարակի ճանապարհը։ Այստեղ նա ծանրաքայլ մոտեցավ Ժուլիեթին, որ հայտնի իր նոր պաշտոնի լուրը։ Գոնզագին ուշադրության չարժանացրեց, հավատացած լինելով, որ այդ տափակ փափկասունն իր՝ ռազմիկի համեմատությամբ ոչնչություն է։

Մուսա լեռան առաջին իսկ օրը խրամատային աշխատանքները մեծ թափ ընդունեցին։ Հույս կար, որ մինչև գիշեր կավարտվեն ամրության առավել կարևոր գործերը։ Աշխատանքային ավյունը մարդկանց այնպես էր ոգեշնչել, որ նրանք երգում էին, ծիծաղում, կարծես մոռացության էին տվել անցյալն ու ապագան։

Տրամադրությունը Քաղաքաձորում այդքան խանդավառ չէր։ Տեր-Հայկազունն ու պատվելի Արամը գլուխ քորելու ժամանակ չունեին։ Ամեն րոպե մի նոր խնդիր էր լույս ընկնում, պահանջում իր լուծումը։

Ավագների առաջին իսկ խորհրդակցության ժամանակ Բագրատյանն առաջ էր քաշել սեփականության հարցը, դժգոհություն պատճառելով Քեբուսյանին, մյուս մուխթարներին, հարուստներին։ Սեփականությունը միս ու արյուն դարձած այս գյուղացիներն այժմ տեսնում էին, որ առանց անասունները համայնացնելու Դամլաջրքում ապրել հնարավոր չէ։ Ամեն օր որոշակի քանակությամբ պետք է ոչխարներ ու այծեր մորթեին, և միանգամայն անհնար էր որևէ կողմնապահություն անել այս կամ այն սեփականատիրոջ նկատմամբ։ Ամեն խելացի մարդ հասկանում էր, որ մսագործները անասուններ պետք է մորթեն որոշակի տեղում, որ ավագների խորհրդի պատվիրակությունն ամեն օր պետք է ստուգի, թե միսն ինչպես է բաշխվում ընտանիքներին և զինվորներին, այլապես կարող էին լինել անարդարություն, խլրտումներ։ Քանի որ ամեն ինչ իրար հետ կապ ուներ, մուխթարներն ստիպված եղան նույնիսկ ընդունել մսի հասարակական բաշխման առավելությունը։ Բայց այդքանը բավական չէր։ Նրանց պարտքն էր ոչ միայն գիտակցել անհրաժեշտը, այլև գիտակցածը հաղորդել ժողովրդին, այն դարձնել հաճելի։ Դավանափոխների համար գյուրին չէր ջատագովել այն կարգը, որի բնածին հակառակորդներն էին։

Բնակարանային հարցում եղած տարաձայնությունները հարթվեցին ավելի դյուրին։ Տեր-Հայկազունը միշտ էլ այն կարծիքին էր, թե չափից

ավելի կամակոր, անժուժկալ հասարակությունը կենսունակ չէ և վաղ թե ուշ կկործանվի։ Առանց բարդություններ թույլ թալու, պետք է ընտելանալ նոր կենսաձևին— ահա այն նշանաբանը, որին վարդապետը հավատում էր։ Այս իսկ պատճառով պետք է ծավալել բնակարանների շինարարությունը։ Վաղը ևեթ, երբ խրամատային աշխատանքներից հետո աշխատող ձեռքերն ու գործիքներն ազատ կլինեն, վարպետ Թովմասյանը իր որդի Արամի հատակագծի համաձայն կսկսի փայտյա խրճիթներ շինել։ Քանի որ Դամլաջրքում մոտ հազար ընտանիք կա, ուրեմն՝ հարկավոր է այդքան էլ բնակարան կառուցել, որոնց ծավալը կախված է ընտանիքների մեծությունից։ Պատրաստի գերաններ և ճյուղեր կային, ինչքան ասես։ Բագրատյանը թույլ էր տվել, որ պահեստայինների մի մասը գաղութի համար այսուհետև ծառեր կտրի։

Մեծ դժվարություններ կային, բայց ամենամեծ դժվարությունը Ծագեց հացի և ալյուրի խնդիրը լուծելիս։ Տեր-Հայկազունը մնաց անգրդվելի, պնդելով ծայրահեղ խնայողությամբ ապրելու անհրաժեշտությունը։ Առանձին ընտանիքների ունեցած ամբողջ հացահատիկը՝ ցորեն, ձավար, եգիպտացորեն, կարտոֆիլ, ինչպես նաև թոնիրներում թխած և հետները բերած հացը, առանց այլևայլության պետք է հանձնվեին պահեստ։ Համայնացված պարենից ամեն ընտանիք կեսօրից առաջ, միսը բաշխելիս, կստանար մի փոքրիկ բաժին։ Արդեն չէր կարելի ազատ գործածել ոչ միայն ալյուր, այլև աղ, սուրճ, ծխախոտ, բրինձ, համեմունքներ, այլ խոսքով՝ այն ամբողջ արժեքավորը, ինչ ընտանիքները ահագին դժվարությամբ ու իմաստուն հեռատեսությամբ բերել էին իրենց հետ։

Այս խիստ որոշման դեմ ժամերով առարկեցին։ Ի վերջո Արամ Թովմասյանն ու մուխթարները այնքան համոզեցին, այնքան կշտամբեցին, մինչև ընտանիքների առաքինի հայրերից մի քանիսը երկար մտտանվելուց հետո իրենց հացն ու ալյուրը, սուրճն ու ծխախոտն առած՝ շարժվեցին դեպի պահեստը, որտեղ հանձնված ապրանքները հաշվառման էին ենթարկում, գրանցում մատյանի մեջ։

Այս անձնազոհ հերոսներին հետևեցին մյուսները, որոնց թիվը հետզհետե աճում էր։ Մարդիկ պարզապես ամաչում էին. որևէ բան բաց համբարում թաքցնել անհնարին էր։

Ալյուրի և եգիպտացորենի պարկերը դիզում էին իրար մոտ։

Վարպետ Թովմասյանին հանձնարարվեց վաղն ևեթ շտեմարան պատրաստել, հացահատիկը ապահով տեղ պահել, քանի դեռ եղանակը չի վատացել։ Պահեստի մոտ հինգ հոգի պահակ նշանակվեցին։ Այս

ծառայությունը Տեր-Հայկազունը հանձնարարեց ամենաչքավոր ընտանիքների զավակներին։

Երբ այս հրատապ, ծանրակշիռ հարցերը կարգավորվեցին, վարդապետն զգաց, որ ինքը պետք է սփոփի գաղթականների ժողովրդի ճնշված և ընկճված հոգին։ Ոչ միայն ավետեց բազմաթիվ թոնիրներ պատրաստելու լուրը, այլև շեշտեց «հարիսա» բառը։ Դա ժողովրդի վրա հանդարտեցնող ազդեցություն գործեց։

Հարիսան հայերի ազգային ճաշն է անհիշելի ժամանակներից։ Սերունդների հիշողության մեջ դրոշմված ամեն հնության նման, այս ճաշն ու դրա պատրաստման եղանակը ևս պարուրված են կրոնական ու հանդիսավորության շնչով։ Այդ իսկ պատճառով հենց միայն «հարիսա» բառի հիշատակումը վհատված ժողովրդին հուսադրեց։

Ինչպես մարդկային խոհանոցի բոլոր ճաշատեսակները, հարիսան ևս ուներ բաղկացուցիչ պարզ, սակավաթիվ մասեր՝ գառան մսի մանր կտորներ, ճարպ, կտրատված կրճիկ և կորկոտ՝ կեղևահան ցորեն։ Այդ բոլորը եփում են իրար խառնած։ Բայց ամենակարևորը ոչ թե նյութական կողմն էր, այլ այն, որ հարիսան տոնական ճաշ էր։ Ամեն տարի եփում էին հունձքի, կալի շաբաթներին՝ սեպտեմբերից մինչև վարդավառ*։

Տեր-Հայկազունը հոգ էր տանում, որ Դամլաջրքում ևս ժողովուրդը զրկված չլինի իր սակավաթիվ հաճույքներից, չնայած տեղահանության ու փախուստին։

Հարիսայի հաճույքը ոչ միայն ուտելու մեջ էր, այլև ճաշը պատրաստելու երկարատև արարողության։ Մարմանդ կրակի վրա ամբողջ գիշերը պետք է դանդաղ եփվեր։ Մինչև առավոտ պուտուկի միջի ջուրը գոլորշանում էր, մնում էր միայն պինդ զանգվածը։ Սկսվում էր երիտասարդների բավականությունը։ Տղաներն ու աղջիկները կանուխ վեր էին կենում, հարիսան զարկում թնթոցով[1], որն ամեն տան մի անկյունում պահված էր լինում։ Զանգվածը պետք է լավ տրորել, ինչպես ուրիշ երկրներում մանրում են չորացրած ձողաձուկը։ Սա, իհարկե, միայն մի փոքրիկ, դժգույն մասն էր հարիսայի տոնի հետ կապված ավանդական հայտնի բավականության։

Տեր-Հայկազունի խոստումների շնորհիվ Մուսա լեռան ժողովուրդը, հակառակ ստեղծված իրադրության, հավատով սպասում էր այդ տոնին։

Վարդապետը գործնական մարդ էր և միաժամանակ հոգեբան։

[1] թնթոց — երկար, ողորկ փայտ, որով հարիսա են խառնում

Դրանով շատ ու շատ նպատակներ էր հետապնդում։ Առաջին. գիտեր, որ մարդը կործանվում է, եթե զուրկ է թեկուզ ամենաչնչին բավականությունից։ Երկրորդ. հարիսան զուտ միս չէ, կօգնի հացը խնայելուն, բավարարելով վերջինիս պահանջը։ Երրորդ. հարիսան չի փչանում. կարելի է ուտել թե՛ տաք, թե՛ սառը վիճակում։ Ջափաղանց սննդարար ճաշ է, հետևաբար «զինվորական» ամենահարմար ուտելիքը։ Չորրորդ. հայ գյուղացին ու արհեստավորն աշխարհի որևէ անկյունում իրենց երբեք չեն զգա հարազատ հարկի տակ, եթե թոնիր չկա։ Պատճառը թերևս այն է, որ թոնիրը մի ժամանակ եղել է կրակապաշտության խորան, և մինչև օրս տակավին գոյություն ունի այն հավատը, թե թոնրի մեջ կա աստծո օրհնությունը։ Տեր-Հայկազունը կաշվից դուրս էր գալիս, միայն թե ամայության մեջ և մահվան բովում գտնվող իր հոտին ներշնչեր այս պատրանքը. «Մենք մեր տանն ենք»։ Ուրեմն՝ ամեն զոհողության և զրկանքների գնով պետք է թոնիրներ պատրաստել, հարիսա եփել։

Այս բանը ծրագրելուց հետո խելացի վարդապետն իր մտադրությունը հայտնեց ժողովրդին։ Նոր էր բերանը բացել, երբ գոհունակության մի ալիք պայծառացրեց բոլոր խոժոռված դեմքերը։

Տեր-Հայկազունը, Գաբրիելը և ավագների խորհուրդը առանց ինքնախաբեության պարզ պատկերացնում էին կործանումը, որն սպառնում էր աշխարհի չորս կողմից։ Բայց մի այլ կողմից սպառնացող վտանգ մինչև այդ հաշվի չէին առել։ Եվ հենց այդ կողմից էլ մայրամուտից առաջ փորձանք եկավ, անուղղելի չարիք։

Ամբողջ օրն աշխատանքը լավ էր ընթանում, որովհետև արևը վարագուրված էր մշուշով։ Ամառային կիզիչ ճառագայթները չէին ընկնում խեղճ գեղջուկների մեջքերին, և ոչ ոք արևից պաշտպանվելու առիթ չուներ։ Չնայած արևը չէր երևում, երկնքում ոչ մի ամպ չկար։ Չէր էլ կարելի ասել, թե զով է։ Օդը լցված էր ամպանման պղտոր նյութով, տիեզերքի կեղտաջրագույն մրուրով, որի մեջ ինչ-որ չարագուշակ բան կար։ Ուղղակի այրող շոգի փոխարեն ամեն ինչի վրա ժայռի պես ծանրացել էր տոթը։ Ծովը հայելու պես ողորկ էր։ Երբեմն արևմուտքից գալիս էր հրեղեն մի շունչ, բայց ջրի մակերևույթը մնում էր անկնճիռ։

Չնայած այս ծանր անշարժությանը, կեսօրից հետո ծովը ծառս եղավ, ալեկոծվեց, անզուսպ կատաղությամբ սկսեց բախվել ժայռերին։ Իրենց հոգսերով տարված մարդիկ ոչ մի ուշադրություն չդարձրին եղանակի խենթությանը։ Բայց երկինքը հանկարծ հարձակման անցավ։

Ջորս, հինգ անգամ վրա տվեց փոթորիկը. կարծես կարճ ու կտրուկ պատերազմ հայտարարեց։ Ամբողջ Դամլաջրքը, ամեն ապառաժ, ամեն ծառ, ամեն մրտենի և դափնեվարդ, ամեն ինչ սարսափից սարսռաց։ Ահա և ահարկու որոտի համազարկերը։ Հարավային կայծակնասույր, կայծակնառատ ամպրոպը շաչ ու շառաչով գրոհի նետվեց, ամեն ինչ ծածկեց իր թանձր, հեղձուցիչ փոշով։ Խսիրները, վերմակները, ներքնակները, բարձերը, սավանները, կճուճները, սափորները, լամպերը, ծանրն ու թեթևը, ամեն ինչ զնգում էր, ճռնչում, շուռ էր գալիս, պտտվում էր տեղում կամ նետվում առաջ։ Մարդիկ ևս գոռգոռում էին, վազում «չարամտորեն» փախչող իրերի ետևից, իրար հրում, տրորում ուրիշի գույքը։ Իրարանցման ժխորը խլանում էր փոքրիկ երեխաների ողբաձայն բողոքից։ Կարծես առաջին անգամ էին հասկանում երկնային պատժի խորհրդավոր իմաստը։

Նոր էր սկսվել թռչող իրերի վայրագ որսը, երբ վրա տվեց այնպիսի մի կարկուտ, որի նմանը լեռնականներից ոչ ոք չէր տեսել։ Ապարդյուն դիմադրությունից հետո շատերը բերանքսիվայր պառկեցին գետնին, մեջքները հանձնելով տարերային գանահարության։ Մարդիկ հողն էին կրծում, ուզում էին մնոնել... Հանկարծ մեկը գոռաց.

— Զինամթե՛րքը։

Գաբրիելը բարեբախտաբար կարգադրել էր, որ փամփուշտներով լցված արկղները տեղափոխեն շեյխի վրանը, իսկ Զաուշ Նուրհանը հոգ էր տարել վառոդը չոր պահելու մասին։ Երկրորդ բանը, որ մտաբերեցին, սննդամթերքներն էին։ Տղամարդիկ գոռգոռոցով նետվեցին դեպի պահեստ։

Շատ էր ուշ։ Լավաշները վեր էին ածվել լպրծուն խմորի, բոքոնները՝ ուռած սպունգների։ Ալյուրի բոլոր պարկերը հանգած կրի նման գոլորշի էին արձակում։ Այս ավերածությունն ամենամեծ աղետն էր։ Աղի մեծ մասը հալվել, ներծծվել էր հողի մեջ։ Ոմանք հիշեցին այն հինավուրց սպառնալիքը, թե մարդ մի օր, վերջին դատաստանի ժամանակ, իր մեղքով ցանուցիր արած աղը ստիպված կլինի հավաքել աչքերի թարթիչներով։

Աղետը տեսնելով՝ մարդիկ պայքարից հրաժարվեցին։ Մինչև ոսկորները թրջված, կարկտածեծ՝ նստեցին ճահճացած գետնին, ոչ մի ուշադրություն չդարձնելով տեղատարափ անձրևին, որը նրանց մտրակահարում էր իր մատնաչափ շիթերով։ Կանայք այլևս չէին լալիս, չէին հեծեծում։ Ամեն մարդ լուռ տարվեց իր մտորումներով, ամեն մարդու մեջ թուխս նստեց մենությունը... Բոլորն էլ անասելի ոխով էին

լցվել Տեր-Հայկազունի և ավագների խորհրդի դեմ, որոնց խղճի վրա էին ծանրանում պահեստն ու համայնացման անիծյալ հրամանը։

Ձախորդության մեջ ոչ մի բան այնպես չի թեթևացնում մարդկային սիրտը, այնպես չի սփոփում, որքան (նույնիսկ տարերային աղետի դեպքում) չարիքի համար որոշակի մարդկանց մեղադրելն ու կշտամբելը։ Դամլաջրքի զայրացած ժողովուրդն էլ բավական ուշ գլխի ընկավ, որ հացն ու ալյուրը հանձնելու հրամանի և աղետի միջև ոչ մի առնչություն չկա։ Չէ՞ որ սննդամթերքները դարձյալ չէին փրկվի, եթե պատկանեին մասնավոր տերերի։ Բայց գյուղացիների աչքերից երևում էր, որ դա նրանք համարում էին երկնային անողոք պատիժ՝ համայնացման և նոր կարգ ու կանոնի համար։

Դավանափոխ մուխթարները շեղաշ Թովմաս Քեբուսյանի գլխավորությամբ իսկույն հեղափոխվեցին, իրենց դժգոհությունը միացրին վարդապետի դեմ ուղղված նախատինքներին, գանգատներին և նզովքներին։

Տեր-Հայկազունը դադարող անձրևի տակ կանգնած՝ հանդուրժում էր թշնամական այս կատաղի լուտանքը։ Պարեգոտը թրջվել, կպել էր մարմնին, ջուրը թափվում էր մորուքից։ Հացն ու ալյուրը անդառնալիորեն կորած էին։ Վարդապետը ոչ մի կերպ չէր կարողանում ազատվել այն զարհուրելի հարցից, թե ինչո՞ւ աստված տասը րոպեում իրար խառնեց անմեղ հալածվածների մարդկային հաշիվները։ Այն էլ իսկույն, երբ չէր ավարտվել Մուսա լեռան առաջին օրը։

Փոթորկային գրոհին եռանդուն շրջահայեցությամբ դիմադրեց միայն մի անձնավորություն, որը և պաշտպան կանգնեց իր հացին, անշուշտ հոգևոր։ Քամու առաջին իսկ հոսանքը թոցրեց տարավ ծերունի Գրիգորի հատորներից մի քանիսը։ Բայց նա խելոք մարդ էր. զոհերի ետևից չվազեց։ Իր ամբողջ ծանրությամբ պառկեց գիրք-աղյուսներից գոյացած պատի վրա, կառչեց ձեռքերով ու ոտքերով։ Չնայած այս ողբալի վիճակին, դեղագործը չկորցրեց իր արիությունը, քաշեց, մոտ բերեց վրանի երկու պաստառ և մի վերմակ, ծածկեց իր գանձերի մեծագույն մասը, մինչև օգնության հասավ խուլ ծառան։

Մայրամուտի վերջին շողերն էին մարում, բայց Գրիգորը մանդարինական անվրդով արժանապատվությամբ պրպտում էր ամեն թփի, ամեն քարի ետևը, որոնում փոթորկի տարած գրքերը։ Այդ ձևով փրկեց բոլորը։

Արևն անցավ խայտաբղետ, երկնաձիգ լեռների թիկունքը, որոնք անհաղորդ էին եղելությանը։ Միայն թռչուններն էին անդուլ աղմկում։

Նրանց ժխորը շարունակվեց մինչև լույսի վերջին թրթիռը. կարծես իրենց կանաչով ինչ-որ բան էին ուզում ետ բերել։ Մարդիկ սուզվել էին խոր լռության մեջ։ Տղամարդիկ, կանայք, երեխաները կիսամերկ վիճակում դես-դեն էին վազվզում։ Տանտիրուհիները ծառերի արանքում պարաններ էին կապում, չորացնելու համար կախում ջրի մեջ կորած ամբողջ ունեցվածքը։ Ոչ մեկն այլևս չէր ուզում մնալ գետնին պառկած։

Լուսինը դեռ չէր ծագել, երբ ամռան ծարավ հողը ծծեց, իր խորքերը քաշեց վերջին խոնավությունը։ Բայց խարույկները դժվարությամբ էին վառվում. փայտն ու խոտը հորդառատ անձրևից ջուր էին դարձել։ Առանձին ընտանիքներ կուչ էին եկել կրակի շուրջը, մեջքներն անտրրամադիր և անբարյացակամորեն դարձրած մյուսների կողմը։ Այնուհետև քնեցին գետնին՝ առանց ներքնակների, առանց վերմակների ու բարձերի. մինչև հաջորդ երեկո դրանք հազիվ չորանային։ Քնեցին խումբ-խումբ, իրար կպած, քանի որ ձախորդության մեջ մարդ ուզում է զգալ մյուսների մոտիկությունը, մեկի տխրությունը ամոքվում է մյուսների տխրությամբ։

Առաջին գծի զինվորները քնեցին նոր փորած խրամատներում, այնտեղ լցված ջուրը դուրս թափելուց հետո։ Գաբրիելը պատվիրեց, որ իր համար մի ներքնակ և վերմակ տանեն Հյուսիսային լեռնաթամբը։ Թեև սաստիկ հոգնած էր, բայց հաստատ վճռեց մաղաչափ անգամ չբարելավել իր կյանքը, ապրել այնպես, ինչպես իր մարտիկները։ Ժուլիեթին ամբողջ օրվա ընթացքում մի րոպե անգամ չէր տեսել։

Գաբրիելը պառկեց, երբ բոլորն արդեն քնել էին։

Անքուն մնացին միայն պահակները։ Պաշտպանության այս հատվածում յուրաքանչյուր խրամատ հսկում էին երկուական հոգի։

Կեսգիշերից առաջ Ամանոսի սրածայր գագաթն ի վար գահավիժեց մի զարմանալի ասուպ։ Երկնային մողեսներն ու օձերը փայլարձակ ոլորտներից կատաղորեն ցած նետվեցին և բարձր լեռան բութ, գորշ կատարը ծածկեցին ոսկեհյուս ոստայնով։ Հոգնածությունից արբեցած պահակներն այդ հրաշքը և՛ տեսան, և՛ չտեսան։

Լուսադեմին սաղարթների մեջ մնացած անձրևի նեխած կաթիլներից, վաղորդյան աղջամուղջից և ծխացող տաք մշուշից աշխարհեկան փոքրիկ, կարմրավուն ճանճեր, որոնք ամպերի պես պտտվում էին, ագահորեն իջնում քնած մարդկանց դեմքերին, ձեռքերին։ Խայթոցներն այրում էին, թողնելով բորբոքիչ, զզվելի հետքեր։

Պատվելի Արամ Թովմասյանը նստած էր հետախուզական դիտա-

նոցներից մեկում։ Կապավոր աղաները դա հաստատել էին հինավուրց կաղնու կատարին։ Այստեղից կարելի էր պարզ տեսնել Բիթիասի եկեղեցու հրապարակն ու գյուղամիջյան ճանապարհը։ Պատվելին բերել էր Գաբրիելի հեռադիտակը, և ահա նրա աչքերի առաջ փռվել էին եկեղեցու փոշոտ հրապարակը, ճանապարհը։

Նոխուդյանի բողոքական համայնքը եկեղեցու առաջ հավաքված՝ կազմ-պատրաստ սպասում էր ճանապարհ ընկնելու։ Մարդկային բազմությունը բավական մեծ էր։ Երևի շատ համախոհներ գաղտնի միացել էին Նոխուդյանին։ Մինչև Բիթիաս հայաբնակ բոլոր գյուղերը դատարկված տեսնելով՝ մյուդիրն ու ոստիկանապետը հավանաբար հանկարծակիի էին եկել։ Հենց այդ պատճառով էլ, անշուշտ, տեղահանության ժամկետը շաբաթ օրվանից հետաձգել էին մինչև կիրակի։

Զափթիեները ետ ու առաջ էին վազում, թափահարում մտրակները կամ հրացանները։ Դժվար էր դանդազանել։ Փոքրիկ կերպարանքների զիգզագը դուրս էր տեսադաշտից։ Հավանաբար ոստիկանները մարդկանց մտրակներով ծեծում էին։ Բայց այստեղ չէին հասնում ոչ վրդովմունքի ձայները, ոչ էլ լացուկոծը։ Հեռավորության պատճառով սոսկալին ստանում էր անհամոզիչ պատկեր։ Թովմասյանը միայն ներքուստ էր գիտակցում, որ հեռադիտակի շրջանակում տեղի ունեցող երևույթը ոչ թե իրեն չվերաբերող տիկնիկային ներկայացում է, այլ իր սեփական ճակատագիրը։ Արամին նորից ու նորից թվաց, թե ինքը փախել է, լքել հովտում, փոշու ամպերի մեջ մահվան երթի դուրս եկած տարագիրներին, որպեսզի իր երկրային գոյությունը երկարաձգի մի քանի օրով։ Այստեղ, վերևում, կաղնու կատարին այնքա՞ն զով է, այնքա՞ն հաճելի։ Ամբողջ մարմինը տոգորված է խաղաղավետ երանությամբ։ Հովտի իրողությունը լուծվում է, դառնում աղոտ հուզմունք. տեսողությունը լարվում է, բայց սիրտը մնում է անտարբեր, ինչպես երազում։

Պատվելի Թովմասյանը տարտաց, գիտակցելով իր հանցավոր քարասրտությունը։ Ինքը պետք է այնտեղ լիներ, ոչ թե այստեղ։ Աչքերի առաջ կանգնեց Մարաշի միջոցներական տունը։ Գերապատիվ Ուդլին՝ աստծո կողմից իր մոտ առաքված այդ քննիչը, մի անգամ էլ տվեց գունագեղ որոգայթ հիշեցնող հարցը. «Արդյոք երեխաներին օգնած կլինե՞ս, եթե նրանց հետ գնաս դեպի մահ»։ Այժմ էլ Բիթիասում երկրորդ անգամ ձեռքից բաց է թողնում այն առիթը, երբ կարելի էր ապացուցել Քրիստոսի համար տառապելու իր պատրաստակամությունը։

Երկար, տանջալից կերպով երկար ժամանակ անցավ, մինչև ճանապարհ ընկավ Արամի ծերունազարդ և արդարադատ պաշտոնակցի՝

Հարությունի Նոխուդյանի թափորը։ Ի դեպ, պետենտա մյուդիրը տարագիրներին որոշ արտոնություն էր տվել։ Բազմության հետ շարժվում էին բեռնավորված ավանակներ, նույնիսկ երկու սայլ՝ փոշու ամպերի մեջ ոստոստող անիվներով։

Պատվելի Արամը տեսավ այն, ինչ դեյթունյան վերջին յոթ օրվա ընթացքում այնքան հաճախ էր տեսնում... Մարդկային շղթան հիվանդ, մահամերձ որդի դողդոջուն շոշափուկներով, մազմզուկներով ու բարակ ոտքերով սև թրթուրի պես տրորված գալարվեց դաշտանկարի վրա, առանց տեղից շարժվելու։ Բախտի քմահաճույքին հանձնված վիրավոր կենդանին իզուր էր ապաստան փնտրում հովտի բաց ծալքերի մեջ։ Որդային ցնցումներով շարժում էր առջևի օղակները, ապա ջղաձգորեն մոտեցնում վերջինները։ Խոր կտրվածքներ էին գոյանում, և սողացող թրթուրը հաճախակի բաժանվում էր բազմաթիվ մասերի, որոնք իրենց հազիվ տեսանելի խաշտանգողների ստիպմամբ մի կերպ միանում էին՝ հաղիվ սպիացած տեղում դարձյալ կտրատվելու համար։ Թրթուրը ոչ թե սովորական ձևով սողում էր, այլ օրհասական պայքար մղում, վերջին անգամ օղակվում, ճկվում, ջղաձգվում, մինչև լեշակեր միջատները վրա էին տալիս բաց վերքերին...

Ուզզակի հրաշք էր, որ այդ թրթուրի և գյուղերի միջև հետզհետե ինչ-որ տարածություն գոյացավ, թեև անտանելի դանդաղ։

«Հզի կանայք էլ կան»,— մտածեց պատվելի Արամը։ Եվ սրտի կսկիծով իսկույն հիշեց Օվսաննային։ Բոլոր նշաններից երևում էր, որ կնոջ երկունքն արդեն մոտ է։ Հարկ եղած միջոցները ձեռք չէր առել, չէր էլ կարող։ Անդրանիկ որդին աշխարհ էր գալու վայրի բնության գրկում, ինչպես Մուսա լեռան որևէ կենդանի։ Դա այնքան էլ լավ բան չէր խոստանում։ Արամն ակամա սոսկաց իր մեղքով մոր արգանդում տառապող էակի ճակատագրից։ Թվաց, թե ահա կուշաթափվի։ Նա հեռադիտակը բաց թողեց, երկու ձեռքով ամուր կառչեց հաստ ճյուղերից, որոնց արանքում նստած էր։ Քիչ հետո, երբ հեռադիտակը նորից մոտեցրեց աչքերին, տեսարանը փոքր-ինչ փոխվել էր։ Այժմ որդը գալարվում էր Աղիրի՝ Շեքամազյուղի միջով։ Սակայն մի խումբ զափթիեներ առանձնացան, քայլեցին դեպի հյուսիս-արևելք։ Բիթիասը ետևում թողնելով, շարժվեցին Քերուսեթի կողմը։

Արամն իսկույն սուրհանդակ ուղարկեց շտաբ։ Վտանգն արագորեն հեռանում էր։ Զափթիեները Դամլաջրքի Հյուսիսային լեռնաթամբը թողած՝ շարժվեցին դեպի հովտի հակառակ ծայրը։ Պատվելի Նոխուդ-

յանը թուրքերին մոլորության մեջ էր գցել, և սրանք շինծու հետքեր էին որոնում։

Չորս կողմ անդորրություն էր տիրում։ Լքված գյուղերի հրապարակներում և ճանապարհների վրա թրև էին գալիս մի քանի հարյուր մահմեդական՝ հյուսիս-արևմուտքից եկած փախստականները և դաշտավայրի բնիկ խաժամուժը, որոնց հրապուրել էր կողոպուտի հոտը։ Ինչպես երևում էր, խուժանը դեռևս չէր տիրացել տներին։ Թերևս նրանց ախորժակը զսպում էր կառավարական ինչ-որ հրաման։ Ալարկոտ իշամեղուների պես պտտվում էին տների շուրջը։

Քեբուսիե չհասած՝ ոստիկանախումբը չքացավ արևելյան կողմի ինչ-որ հովտում։ Դա ապացույց էր, որ թուրքերը դեռևս ոչինչ չէին կասկածում։ Արամի սրտում հանկարծ հույս ծնվեց։ Գուցե և ժողովրդին վիճակվի շա՜տ ու շատ օրեր ապրել խաղաղ, գուցե և թուրքերը առհասարակ աչքաթող անեն Մուսա լեռը։

Պատվելի Արամը ցած թռավ իր դիտակետից։ Թավ Կաղնուտի բոլոր կողմերից լսվում էր ծառ կտրող կացինների թխկոցը։ Ուրեմն, Քաղաքաձորում հայրն արդեն սկսել է շինարարությունը։ Նկատի ունենալով զափթիեների մոլորությունը, Բագրատյանն առաջին գծի անձնակազմին և պահեստայիններին պատվիրել էր ամբողջ օրը նվիրել փայտե խրճիթներ պատրաստելուն։ Արամն զգաց, որ հասել է նաև իր գործունեության ժամը։ Իսկույն վճիռ կայացրեց։ Դա չէր հասնում իր վսեմ պարտքի բարձունքին, բայց դժվար էր գայթակղությանը դիմադրել նույնիսկ այս չնչին ասպարեզում։ Պետք է մեկընդմիշտ հաղթահարեր երկբայությունը, իրեն հանցավոր համարելու տանջալից նոպաները։ Եթե չապացուցեց, որ ինքը Տիրոջ օծյալն է, ապա կապացուցի, որ Քրիստոսի զինվորն է, կարող է օգտակար գործ կատարել։ Լայն քայլերով կտրեց անցավ ահագին ճանապարհը, վերադարձավ ճամբար, որպեսզի ոչ մի րոպե չկորցնի իր պարտքը կատարելու գործում։ Այստեղ աշխատանքային աննկարագրելի եռուզեռ էր տիրում։ Գլխահակ գալիս էին կաղնու, սոճու, եղևնու ճյուղերով ծանրաբեռնված ավանակների երկար շարանները։ Սայլերով ծանր քարեր էին հասցնում տների հիմքը գցելու համար։ Վարպետ Թովմասյանի աշակերտները երկար ժապավենով չափչփում էին փողոցները, ձողերով նշանակում առանձին խրճիթների տեղերը։ Որոշ բնակարանների կմախքը արդեն պատրաստ էր։ Ընտանիքներն իրար հետ մրցում էին արագության մեջ։ Աշխատում էին ոչ միայն տղամարդիկ և կանայք, այլև երեխաներն ու զառամյալ ծերունիները։ Ահագին բարձրացել էին հանրային շենքերը՝ մեծ պահեստը և

հիվանդանոցը, որի շինարարությանը աչալուրջ հետևում էր Պետրոս Ալթունին։ Բայց վարպետ Թովմասյանի ուշադրության կենտրոնը կառավարական տաղավարն էր, որի կառուցումը նա իր սրտին մոտ գործ էր համարում։ Դա մի ընդարձակ սրահ էր, եզրային երկու որմնախորշերով, որոնց դռնակները ապահովության համար փակվելու էին կողպեքներով։

Մինչ այդ, Ժուլիեթը Երեք վրանի հրապարակում հունի մեջ էր դնում իր կյանքը։ Գաբրիելը նրան որոշակիորեն խնդրել էր չքաշվել որևէ բանից կամ որևէ մեկից, նույնիսկ իրենից։ Մյուս բոլորը նույն ժողովրդին էին պատկանում, ստիպված էին կրել իրենց ճակատագրի բեռը, ինչպես թելադրեր ստեղծված վիճակը։ Մինչդեռ Ժուլիեթը այդ ամենի հետ ոչ մի առնչություն չուներ. անմեղ զոհ էր, իրավունք ուներ ներկայացնելու ամեն պահանջ, գոհացում ստանալ գոնե կիսով չափ։

Այս հարցը Գաբրիելը քննության դրեց նույնիսկ ավագների խորհրդում.

— Կինս իրավունք ունի Դամլաջրքում ևս վարելու այն կյանքը, որին ընտելացել է, ապրելու առանձին, իր ցանկացած ձևով։ Ամուսնությունն արյունակցություն չէ։ Բոլորս իրար հետ կապված ենք արյամբ, հետևաբար մեզ համար պարտադիր են այստեղ սահմանված օրենքները։ Բայց այդ օրենքները նրան չեն վերաբերում։ Նա ֆրանսուհի է, օտար, ավելի բախտավոր ժողովրդի դուստր, որը ճակատագրի բերումով ստիպված է մեզ հետ տառապել։ Ուրեմն՝ նա պետք է վայելի մեր ժողովրդի վեհանձն հյուրասիրությունը։

Խորհրդի բոլոր անդամներն իսկույն կռահեցին, թե Գաբրիելն ինչու է հյուրասիրության կոչ անում։ Միայն Ժուլիեթին տրամադրված Երեք վրանը, իրար վրա շարված ծանրոցները, առանձին խոհանոցը, անկախ տնտեսությունը, ծառաները, առանձին պարենը, հոլանդական երկու կովը (Գաբրիելի հանգուցյալ եղբայր Ավետիսն էր գնել), այս ամբողջ բացառիկ կարողությունն այնպիսի արտոնյալ բարիք էր, որ կարող էր գրգռել ժողովրդի ախորժակը։ Գաբրիելը պատվիրել էր կաթի մեծ մասը, ինչպես նաև խոհանոցային «ետ գցած» բոլոր մթերքները բաժանել ճամբարի երեխաներին։ Բայց, ցավոք սրտի, այս բարեգործությունը խարսխված էր տիկնոջ թերմացքի վրա։ Եթե թշնամիները և անբարյացակամորեն տրամադրված մարդիկ համայնական տնտեսության օգտին Գաբրիելի արտասանած ճառերը համեմատեին Երեք վրանի հրապարակում տիրող լիության հետ, ապա ակնհայտ կդառնար վար-

դապետության ու ապրելաձևի միջև գոյություն ունեցող ցավալի հակասությունը։ Չէր կարելի ժխտել, որ գլխավոր հրամանատարը քնում էր ոչ թե վրանում, այլ խրամատում, սնվում էր իր բոլոր զինվորների նման, որ նրա չափ գույք և մթերք շատ քչերն էին տրամադրել հասարակությանը, բայց չէր կարելի ուրանալ, որ, ի սեր Ժուլիեթի, իր ունեցվածքի ընտիր մասը չէր հանձնել։ Այս հակասության մեջ կար ընդհարման վտանգ։ Առայժմ կարծես ավագներից ոչ մեկի մտքով այդպիսի բան չէր անցնում։ Բայց Յողոնօլուքի մուխթար Քեբուսյանի գլխին կինը մի ժամ առաջ թունդ քարող էր կարդացել Երեք վրանի հրապարակի մասին։ Ի՞նչ է, ինքը՝ Մարաշի միսիոների սանուհին, պակա՞ս կին է, որ մուխթարի ամուսինը լինելով հանդերձ՝ պետք է այդքան ստորանա ֆրանսուհու առաջ, մյուս հասարակ կանանց պես ապրի ճյուղերից պատրաստած ինչ-որ քոսոտ խրճիթում։ Ասել էր, թե Թովմասը՝ իր ամուսինն էլ խեղճ ու կրակի մեկն է, որ ոչ մի տարբերություն չկա նրա և մուրացկան Տիգրանի կամ Միքայելի միջև, այնինչ գոռոզ Բագրատյանի և գյուղապետի միջև սարեր ու ձորեր կան։

Կնոջ տված այս թունավոր դեղահատիկն ապարդյուն չանցավ։ Քեբուսյանը զարտուղի խորամանկությամբ հասավ այն բանին, որ նրա ընտանիքի համար վճռեցին պատրաստել ոչ թե քամու առաջ բաց, ճյուղաշեն մի խրճիթ, այլ քարե ընդարձակ մի տուն՝ խորանի մոտակայքում։ Քեբուսյանը մտադիր էր մուտքի վերևում ցուցանակ փակցնել, վրան գրել «Թաղապետարան», դրանով իսկ տունը զերծ պահել չար աչքից։ Գիտակցելով իր խաղացած խաղը, այժմ գլուխը տմտմբացնում էր, հավանություն տալիս Բագրատյանի հյուրասիրական կոչին։

Ուսուցիչ Շատախյանը՝ «ֆրանսիացին», առիթից օգտվելով, մի ազնվածոր հայտարարություն արեց։ Տիկնոջ՝ իսկական փարիզուհու, ներկայությունը Մուսա լեռան ժողովրդի համար պատիվ է, միաժամանակ հերոսության խթան։ Հայորդիները պետք է իրար հետ մրցեն, որպեսզի չնաշխարհիկ Ֆրանսիայից եկած հյուրի կյանքը հնարավորության սահմաններում դարձնեն տանելի, տիկնոջը պաշտպանելու համար չխնայեն իրենց արյունը։

Հաբեթ Շատախյանի այս խոսքի վրա ուսուցիչ Ոսկանյանը հրացանի խզակոթով խփեց գետնին (առանց զենքի արդեն ոչ մի քայլ չէր կատարում)։ Պարզ չէր, ընկերոջ ճառի վերաբերյալ իր հավանությո՞ւնն էր հայտնում, թե՞ դժգոհում էր հանդիսավոր պոռոտախոսությունից։

Տեր-Հայկազունը լիահայաց նայեց Բագրատյանին, ապա իր սովորության համաձայն գլուխը իտնարհեց.

— Պարոն Բագրատյան, մենք բոլորս էլ կփափագեինք, որ Ձեր կինը ողջ ու անվթար այստեղից ազատվեր, եթե մեզ վիճակված է վաղ թե ուշ կործանվել։ Երանի՞ թե նա Ֆրանսիայում մեր մասին լավ բան ասեր։

Ժուլիեթն ապրում էր ճանապարհորդական վրանում։ Երկրորդում տեղավորել էր Իսկուհուն և Օվսաննային, որը մելամաղձոտ երկյուղով սպասում էր իր երկունքին։ Կիսով չափ մթերանոց և պահեստ դարձած շեյխի վրանում երեք անկողին կար։ Մեկն Ստեփանինն էր, մյուսը պատկանում էր Սամվել Ավագյանին, բայց սա, իբրև գլխավոր համհարզ և շտաբի պետ, գիշերները միշտ լինում էր Գաբրիելի մոտ։ Քանի որ սա որոշակիորեն, նույնիսկ խիստ ստնով հրաժարվել էր հարմարավետ պայմաններից, Ժուլիեթը երրորդ անկողինը տրամադրել էր Գոնզագ Մարիսին։ Նա այս երիտասարդի նկատմամբ իրեն երախտապարտ էր զգում։ Հատկապես վերջին ցավալի դիպվածից հետո տիկնոջ աչքից չէր վրիպում Մարիսի համեստ ուշադրությունը։ Չէ՞ որ նույն Մարիսը փրկեց Գաբրիելի կյանքը։ Դրանից բացի, հույնը միակ եվրոպացին էր Դամլաջքոյում։ Երբեմն հարկադրական ազգակցությունն այնքան զորեղ էր, որ մեկը մյուսին նայում էր իբրև իր համախոհի, իրար համարում էին նույն զնդանը նետված բանտարկյալներ։ Ժուլիեթն զգում էր իր հակումներին ազատություն տալու վտանգավոր պահանջ, իսկ Մարիսը, ինչպես միշտ, կոկիկ էր հագնվում։ Ֆրանսուհին հաճախ կանգնում էր գլխին հենց այն պահին, երբ սա վրանի առաջ ամենայն բծախնդրությամբ կոստյումն էր խոզանակով մաքրում, կտրված կոճակը կարում կամ սրբում կոշիկները։ Ձեռքերը մաքուր էին, եղունգները՝ կտրված։ Ի տարբերություն Գաբրիելի, ամեն առավոտ սափրվում էր։ Այս մանրակրկիտ զբաղմունքը երբեք չէր թողնում աչք ծակող սնափառության տպավորություն։ Դա ավելի շուտ թվում էր թափթփվածությունից և անմաքրությունից խորշող մարդու վարմունք։ Հագուստին ընկած որևէ բիծը, կոշիկներին կպած ցեխի կտորը կարող էր Գոնզագին դժբախտացնել։ Կարծես նրա էությունը տանել չէր կարող որևէ անհեթեթ, անիմաստ բան, և ամեն ինչ պետք է կատարվեր կամքի լույսի տակ, ամեն ինչ պետք է լիներ նպատակասլաց, որպեսզի նա առհասարակ կարողանար ապրել։

Ժուլիեթը հանգամանքներից չընկճվող այս ապրելակերպը համա-

ռում էր օրինակելի վարմունք, անկեղծորեն զարմանում։ Առավել անհասկանալի էր թվում Գոնզագի անտարբեր վճռականությունը. ինչո՞ւ էր իր ուսերին վերցրել օտար ժողովրդի մահախուճապ ճակատագրի բեռը։ Հույնը մեկ-երկու թեթև ակնարկով հասկացրել էր, թե այդ վճիռն ինքը կայացրել է միայն ի սեր Ժուլիեթի։ Բայց ֆրանսուհին դա համարել էր սոսկ կնամեծար քաղաքավարություն։ Գոնզագը ոչ մի անգամ այլ վերաբերմունք ցույց չէր տվել, բացի սիրո հետ առնչություն չունեցող երկրպագությունից, որը բարձրաշխարհիկ տիկնոջ նկատմամբ կարող է զգալ մի երիտասարդ, կնոջ մեջ չտեսնելով կինը, եթե կյանքը նրանց պահում է իրարից հեռու։

Թեև Գոնզագն օրվա մեծ մասն անց էր կացնում Ժուլիեթի կողքին, երկուսի միջև երբեք տեղի չէր ունենում այնպիսի խոսակցություն, որ չվերաբերեր գործերին, ներկա իրադրությանը։ Ժուլիեթը Գոնզագի նախկին կյանքին բացարձակապես անտեղյակ էր։ Խառը հոնքերի տակ ծվարած աչքերի ուշադիր, լարված արտահայտությունը միայն մի բոպե էր տևում։ Բայց հենց այդ անորոշ անցյալն ու ներկան բորբոքում էին Ժուլիեթի անհանգիստ հետաքրքրությունը, երբ հանդիպում էին։

Մի անգամ Գոնզագը կես օր չերևաց։ Ժուլիեթը որոնեց, գտավ նրան.

— Արդեն սկսե՞լ եք մեր կյանքի նկարագրությունը։

Գոնզագը նայեց զարմացած, գրեթե հեգնանքով.

— Ես երբեք նշումներ չեմ անում։ Միակ տաղանդը, որով օժտված եմ, հիշողությունս է։ Երբեք ստիպված չեմ լինի փրկել ինչ-որ խզբզած թղթեր։

Ժուլիեթին բարկացրեց երիտասարդի ինքնավստահությունը.

— Միայն թե հարց է՝ կկարողանա՞ք ազատել Ձեր գլուխն ու հիշողությունը։

Գոնզագը թոուցիկ ձևով ծիծաղեց, բայց դա միայն լուրջ համոզմունքի արտահայտություն էր.

— Ժուլիեթ, Դուք դեռևս չեք հավատում, որ ինձ թուրք զինվորականները կամ որևէ այլ արգելք ետ չեն պահի, եթե ես իրոք ցանկանամ այստեղից հեռանալ։

Պատասխանի եղանակն ու իմաստը ֆրանսուհուն դուր չեկան։ Ինքնավստահ հանդիսավորությունը, որ հույն երիտասարդը հաճախ էր ի հայտ բերում, թվաց վանող։ Բայց և լինում էին պահեր, երբ նա դառնում էր բոլորովին մոլորված մանուկ։ Նման դեպքերում Ժուլիեթի

կրծքի տակ ինչ-որ մայրական զգացում էր խլրտում, որից ինքն էլ էր բավականություն ստանում։

Երեք վրանի հրապարակի մոտակայքում, սոճիների պուրակի մյուս կողմում, Քրիստոֆորն ու Միսակը դրել էին մի սեղան և մի քանի նստարան։ Այս փոքրիկ բացատն այնքան գողտրիկ էր, որ մարդ իրեն զգում էր զրոսայգու ինչ-որ խուլ, հեռավոր մի մասում, համենայն դեպս, մարդկային խնամքի հետքեր կրող շրջանակում, ոչ թե լեռնային անանցանելի բարձունքներում։ Այստեղ Ժուլիեթը ճաշից հետո Օվսանայի ու Իսկուհու հետ նստած՝ հյուրեր էր ընդունում։ Սրանք նույն մարդիկ էին, որոնք հաճախակի այցելության էին գալիս ներքևի ամառանոցում։ Շարունակ այստեղ էին դեղագործ Գրիգորը և ուսուցիչները, երբ ծառայությունից ազատ էին լինում։ Հաբեթ Շատախյանը, իր խոստովանության համաձայն, գալիս էր տիկնոջն ուրախացնելու իր բարեհունչ ֆրանսերենով։ Սակայն Հրանտ Ոսկանյանը հայտնվում էր ոչ այնքան իբրև քերթության ու գեղագրության վարպետ, որքան իբրև երկյուղ ազդող ռազմիկ։ Ներկայանում էր իր լորդական գորշ, պոշավոր բաճկոնով, որի տակից երևում էին երկար թուրն ու ծանր ատրճանակը։ Հրացանը ձեռքից հազվադեպ էր վայր դնում, միայն այն ժամանակ, երբ հանում էր մորթե փափախը, բարևում։ Միշտ նվերներ էր բերում՝ մի փունջ վայրի կարմիր օրքիդեյ կամ աշակերտական ձեռքով կատարված որևէ օրինակելի նկար։ Դրանք կարծես չնչին նախանմուշներն էին ռազմի գալիք արյունոտ ընծաների՝ թուրքերի գլուխների կամ կտրված ձեռքերի։

Սևադեմ թզուկի ներխուժումներն ի վերջո դարձան անտանելի։ Շարունակ լռում էր, չարությամբ կրքոտ հայացքով խժռում Ժուլիեթին։ Բայց, դժբախտաբար, նա չբավարարվեց իր լռության գրոհներով։ Վայրագ սպառազինությունը Ոսկանյանի սրտում կյանքի էր կոչել կովարարության հակում, որը նորություն էր։ Մի անգամ, օրինակ, երբ հավաքվածներն ամենայն հանդարտությամբ խոսում էին օրվա անցուդարձի շուրջը, գովեցին բոլոր տղամարդկանց, հիշատակեցին նրանց կատարած գործերը, մոռացության տալով միայն Ոսկանյանին։ Սա իսկույն ոտքի թռավ, կատաղությունից փրփրած՝ վրա պրծավ Գոնզագին, որը թերթում էր Գրիգորին պատկանող «Ինլյուստրասիոն»-ի հին համարներից մեկը.

— Պարոնը տիկնոջ ներկայությամբ ինձ վրա ծիծաղեց։

Մարիսը փակեց հանդեսը, կատաղածին նայեց սիրալիր զարմանքով.

— Ես այս նկարներից մեկի վրա էի ծիծաղում, ոչ թե Զեզ վրա, ուսուցիչ Ոսկանյան, թեև Դուք, իրոք, ստիպում եք ծիծաղել։

Ոսկանյանը հրացանը սեղմեց, գոռալով.

— Տեսնենք, թե ով ում վրա կծիծաղի։ Ես հրամանատար եմ, իսկ պարոնը՝ պարապ-սարապի մեկը, որին մի կերպ հանդուրժում ենք։ Ես էլ իմ անելիքը գիտեմ։

Առանց ցտեսություն հայտնելու դուրս նետվեց։

Գրիգորը ձեռքով հոգնած և ներողամիտ շարժում արեց.

— Միշտ ուզում է երևալ ավելին, քան է։ Վաղը նորից կգա։

Դեղագործն իր սաներին լավ էր ճանաչում։ Նրա մարգարեությունն արդարացավ։ Բայց ինքն էլ՝ Յողոնօլուքի Սոկրատեսը, կարծես արդեն հաղթահարում էր իր հայեցողական կյանքի ողբերգական ընդհատումը։ Մուսա լեռը բարձրանալու երկրորդ օրն արդեն փորձում էր վերսկսել իր նախկին գոյությունը, ինչպես վայել է իմաստունին։ Նրա դեղին ու ողորկ դեմքին շուք տվող այծային մորուքը դարձյալ համաչափ օրորվում էր, երբ նա իր գիտելիքների անսպառ ծովից քաղվածներ էր բերում, որ ոչ մի կերպ հնարավոր չէ ստուգել, երբ խոսում էր իր հնարած բույսերից, քարերից, տարրերից, սրանց տալիս իր ցանկացած անունները, հայտնագործում ֆորմուլներ։ Բայց ծերունու ուսանելի պերճախոսության մեջ այլևս չկար նախկին հախուռն կորովը։ Վաղեմի ավյունը մեռել էր, իր տեղը զիջել երկյուղ պատճառող լրջությանը։

Ժուլիեթի հետաճշյա հյուրերը ոչ միայն տղամարդիկ էին, այլև երևելիների կանայք։ Ազատ ժամանակ ունենալուն պես գալիս էր Մայրիկ Անթառամը՝ բժշկի կինը։ Ավելի հազվադեպ էր այցելում տիկին Քեբուսյանը, բայց դրա փոխարեն ծանրաբեռնված էր լինում անհագ հետաքրքրությամբ։ Մուխթարի կինն ամեն ինչ ուզում էր տեսնել։ Ժուլիեթին թախանձագին խնդրում էր ցույց տալ ամբողջ բնակարանի ներսը, ներք վրանի մանրամասնություններն ու գաղտնիքները։ Անդուսպ գովեստներ էր շռայլում օջախի հասցեին, որը Հովհաննեսն էր պատրաստել քարերից և հետները բերած սալերից։ Գովում էր այն ամենը, ինչ տեսնում էր եփված, թխած, տապակած։ Նրան զարմացնում էին թեթև, փափուկ անկողինները, կահույքը, ռետինե խողովակները, սեղանի սպասքը, շքեղ ճամպրուկները։ Տիկին Քեբուսյանն առանձնապես երկար և խորն էր քիթը խոթում մթերքների արկղերը, ուշի-ուշով զննում սարդինի և մյուս պահածոների տուփերը, շաքարը, օճառը։ Ժուլիեթը մկան աչքերով ամեն ինչ որոնող, անկյունները պրպտող պատվական տիկնոջից օձիքը կարողանում էր ազատել միայն այն

ժամանակ, երբ մթերքներից բաժին էր հանում, տալիս էր մի սալիկ շոկոլադ կամ մի տուփ պահածո։ Տիկին Քեբուսյանը շնորհակալություն էր հայտնում, հավատարմության երդումներ տալիս, ավելի եռանդուն, քան գովեստներ շռայլելիս։

Մայրիկ Անթառամը, ընդհակառակը, ամեն անգամ ինչ-որ մի բան էր հետը բերում, մի ման մեղր կամ ծիրանի ջեմ՝ այդ կարմրագարշ-նագույն թանձր զանգվածը, որ հայկական գյուղերում համարվում է նախաճաշի զարդը։

— Ջանի՛կս, հենց որ մարդիկ գնան, կե՛ր, հոգիս, սա լավ բան է։ Ինչո՞ւ զուրկ մնաս մեր երեսից...

Երբեմն Մայրիկ Անթառամն իր համարձակ, անխռով աչքերով տխուր նայում էր Ժուլիեթի դեմքին.

— Ա՜խ, սիրունի՛կս, երանի՜ մնայիր էնտեղ, որտեղից որ եկել ես։

Իսկուհին Դամլաջրքում ավելի հազվադեպ էր Ժուլիեթին հանդիպում, քան Յողոնօլուքում։ Աղջիկը Տեր-Հայկազունին խնդրել էր, որ իրեն նշանակի արտահաստիքային ուսուցչուհի։ Վարդապետը սիրով ընդառաջեց նրա ցանկությանը։ Ժուլիեթն այդ առթիվ հայտնեց իր դժգոհությունը։

— Մեզ մոտ հազիվ էիր մի քիչ հանգստացել։ Հիմա ուզում ես քեզ տանջե՞լ։ Հանուն ինչի՞։ Մի՞թե դա մեր պայմաններում որևէ իմաստ ունի։

Իսկուհու և Ժուլիեթի փոխհարաբերությունները միշտ էլ յուրօրինակ էին։ Առաջին իսկ վայրկյանից ցույց տրված գործնական բարությամբ ֆրանսուհին հաղթահարել էր աղջկա համառ երկչոտությունը, ինչպես նաև աղախնային պատրաստակամությունը, որի ետևում Իսկուհին թաքցնում էր իր ներքին աշխարհը։ Մի քանի շաբաթ հետո նա արդեն արտահայտում էր իր քնքշանքը. ամեն առավոտ և ամեն երեկո աղջիկը բարևելիս գրկում, համբուրում էր իր տարեց բարեկամուհուն։ Սակայն Ժուլիեթը որոշակիորեն զգում էր, որ այդ փաղաքշանքը շինծու է, միայն վայելուչ ձևականություն, գրեթե այնպես, ինչպես մեկն օգտագործում է անծանոթ լեզվի որոշակի բանաձևերը, առանց դրանք ճշգրիտ հասկանալու։ Իսկուհու մեջ եղած կարծրությունը՝ ներքին բյուրեղը, անհաղթահարելիորեն օտարոտի էությունը, չէր հալչում։ Չի կարելի թաքցնել, որ Ժուլիեթին տառապանք էր պատճառում այդ հոգու անմատչելիությունը։ Չէ՞ որ տիկնոջ իշխանության զգացումին հասցված ամեն մի վերքը իսկույն ցավ էր պատճառում նրա

սեփական արժանապատվությանը։ Այն, որ Իսկուհին աշխատանքի էր անցել դպրոցում, Ժուլիեթի համար նույնպես պարտություն էր։ Աղջիկն օրվա մի մասը անց էր կացնում այսպես կոչված դպրոցի պուրակում, Երեք վրանի հրապարակից բավական հեռու։ Այստեղ կային մի մեծ գրատախտակ, մի համրիչ, օսմանյան կայսրության քարտեզը, ահագին քանակությամբ այբբենարաններ ու դասագրքեր։ Արդյոք այս ժողովրդի համար սիմվոլիկ երևույթ չէ՞ր, որ նույնիսկ խուճապային փախուստի ժամանակ նա չէր մոռացել իր փոքրիկների ուսման միջոցները։ «Մայր երկիրը փայփայում է յուր ուսյալ որդուն»։

Բացատի ստվերում պպզած, նստած և պառկած վիճակում պարապում էին մի քանի հարյուր երեխա, շարաճճիների մի ամբողջ բանակ, օդը լցնում սուր ճռվողյունով։

Քանի որ բոլոր ուսուցիչները մեծ մասամբ լինում էին խրամատներում կամ աշխատում էին ճամբարի ներսում, Իսկուհին հաճախ ժամերով զբաղվում էր այս անսանձ հրոսակախմբով։ Զորսից տասներկու տարեկան այս անառակներին կարգի հրավիրելը կամ հանդարտեցնելն անհնարին էր։ Իսկուհին նման պայքարում հաղթելու ուժ չուներ։ Երբ ինքն իր սեփական խոսքն այլևս չէր կարողանում լսել, ճակատագրին հնազանդված սպասում էր, մինչև հայտնվեր փորձված տղամարդկանցից մեկը, ինչպես, ասենք, Ոսկանյանը, և փոքրիկ սատանաները վախից սփրթնած սսկվեին։ Որպես երկաթյա ռազմիկ, ինչպիսին որ այժմ էր, հրացանը ձեռքին՝ ուսուցիչը շրջում էր երեխաների բազմության մեջ։ Թվում էր, թե ռազմական օրենքի համաձայն պատրաստ էր և իրավունք էլ ուներ գնդակահարելու ամեն մի անհնազանդ աշակերտի։ Ուռի ճիպոտը, որով, ի լրումն այլոց, նույնպես զինված էր, շառաչում էր թե՛ մեղավորների, թե՛ անմեղների գլխին։ Որևէ տարաբախտ խմբակ ծունկի էր գալիս սուր քարերի վրա, մեկ ուրիշը գլխավերևում ահագին ժամանակ ինչ-որ առարկաներ էր բռնած պահում։ Այնուհետև Ոսկանյանն ամբարտավան արհամարհանքով իրեն փոխարինող ուսուցչուհուն էր հանձնում սպառազեն մանկավարժության պտուղը՝ մեռելային խոնարհ լռությունը։

Առաջին իսկ օրը Ժուլիեթն արդեն նկատել էր, որ նման լարվածությունն Իսկուհու վրա վատ է անդրադառնում։ Այտերը գունաթափվել էին, դեմքը փոքրացել էր, աչքերը նույնքան էին խոշորացել, որքան տարագրության դժոխքից վերադարձած ժամանակ։ Ժուլիեթը դարձյալ եռանդուն ջանքեր գործադրեց, որ աղջկան ետ պահի պարտքի զոհաբերությունից։ Իսկուհին ապշած նայում էր Ֆրանսուհուն։ Ինչպե՞ս կարելի էր այդ չնչին պարտականությունից խուսափել ժողովրդի համար օրհասական պահին։ Ընդհակառակը, Իսկուհին ուզում էր աշխատել նաև կեսօրից հետո։

Ժուլիեթը թշնամաբար մեջքն Իսկուհու կողմը դարձրեց։ Նույնիսկ մտքով անցավ, որ աղջիկը մաշվում է ոչ թե դասերի հետ կապված լարվածությունից, այլ հոգեկան ինչ-որ գաղտնի տառապանքից։ Բայց իսկույն վանեց այդ միտքը։ Ինչո՞ւ է ուրիշների ցավով տապակվում, երբ ինքն ավելի միայնակ է, ավելի դժբախտ, քան մյուսները։

Ժուլիեթն այժմ ցերեկները հաճախ էր ժամերով անկողին մտնում։

Վրանի նեղությունը նրան ճնշում էր։ Դռան վարագույրի ծալքից ներս էին ընկել արևի երկու սուր ճառագայթ և ուղղակի տանջում էին։ Ժուլիեթն ուժ չուներ վեր կենալու, ճեղքը փակելու։ «Երևի հիվանդ եմ,— ուրախացավ նա,— ա՜խ, երանի՜ հիվանդ լինեի»։ Սիրտը տակնուվրա էր լինում, ուզում էր պայթել, երբ մտաբերում էր իր անիրագործելի ցանկությունները։ Կարոտում էր Գաբրիելին, բայց ոչ թե այժմյան, այլ փարիզյան Գաբրիելին, այն նրբազգաց մարդուն, որը քնքուշ վարվելաձևով միշտ մոռացնել էր տալիս անհաղթահարելին։ Կարոտում էր Ավենյու Քլեբերի լուսաշող բնակարանի Գաբրիելին, որն իր հետ պայծառ տրամադրությամբ էր սեղան նստում նախաճաշի։ Կարոտում էր առնական կոստյում հագած այն բարեկիրթ պարոնին, որն իր հետ թատրոն էր գնում, լույսերով ողողված ռեստորանները, միշտ հիանում էր Ժուլիեթով, միշտ նրան առաջ գցում, կարծես կինը շատ ավելի բարձր էր կանգնած, ավելի մեծ արժանիքներ ուներ, քան ինքը՝ հայը։ Աչքի առաջ հառնում էր իր հեռավոր աշխարհը ավտոմոբիլների խուլ հոնգյունով, մետրոյի ստորգետնյա ժխորով, անցորդների երգեցիկ շաղակրատանքով, մեծ ու փոքր խանութների աղմուկով ու բույրերով։

Ժուլիեթը դեմքը թաղեց բարձի մեջ, կարծես դա էր միակ հարազատը, հայրենիքի մի բեկորը, որից դեռ չէր զրկված։ Իրեն էր որոնում այդ քնքուշ բույրերի մեջ։ Ուզում էր հայրենի պատկերները վայելել իր բոլոր զգայարաններով։ Բայց չէր հաջողվում։ Փակ կոպերի միջից թափանցում էին արևի մշտահոլով ճառագայթները։ Այդ գունագեղ շրջանակները կարծես աչքեր լինեին՝ անթարթ, շաղափող բիբերով, տառապող, կշտամբող աչքեր, որ ամեն կողմից գամվել էին Ժուլիեթի դեմքին։ Դրանք կարծես Գաբրիելի և Ստեփանի աչքերն էին, Ֆրանսուհուն ողող աչքերը։

Երբ Ժուլիեթն սթափվեց, այդ աչքերն, իրոք, խոնարհվեցին նրա

վրա։ Օտար, մազակալած դեմք։ Կիսը վախեցած նայեց ամուսնուն։ Գաբրիելը պարուրված էր հեռաստանի շնչով, գիշերներով, հողի բուք, գաղջ հոտով։ Նրա ձայնի մեջ հապճեպություն կար, երկու պարտականություն դատող շեշտ.

— Գո՞հ ես, շեր[1]։ Որքէ բանի կարիք ունե՞ս։ Միայն մի բոպեով եմ եկել, որ քեզ տեսնեմ։

— Ոչ մի բանի կարիք չունեմ։ Քեզնից շնորհակալ եմ։

Ժուլիեթն ամուսնուն մեկնեց ձեռքը, դեռևս չազատված երազանքի տիրապետությունից։ Գաբրիելը մի պահ լուռումունջ նստեց կնոջ կողքին. կարծես ասելիք չուներ։ Ոտքի ելավ։ Ժուլիեթը բարկացած նստեց անկողնում.

— Ինձ այդքան դատարկ, այդքան նյութապաշտ կի՞ն ես համարում, որ միայն արտաքին հոգսերով ես հետաքրքրվում։

Գաբրիելն իսկույն չհասկացավ։ Ժուլիեթը հեկեկաց.

— Այսպես ապրել չեմ կարող...

Գաբրիելն ամենայն լրջությամբ ասաց.

— Ես հասկանում եմ, որ դու այսպես ապրել չես կարող, քանի որ ամեն ինչից քեզ հեռու ես պահում։ Պետք է մի գործով զբաղվես։ Գնա ճամբար, փորձիր մյուսներին օգնել, մարդամոտ եղիր։

— Սա իմ միջավայրը չէ...

— Իմն էլ չէ, Ժուլիեթ, ինչպես գիտես։ Մենք ավելի քիչ ենք պատկանում այն տեղին, ուր եկել ենք, քան այն տեղին, ո ւ ր ո ւ ղ ղ ում ենք գ ն ա լ։

— Կամ ուր չենք ուզում գնալ...— լաց եղավ Ժուլիեթը։

Երբ Գաբրիելը գնաց, նա տեղից վեր թռավ։ Թերևս ամուսինն իրավացի էր։ Այդպես շարունակել չէր կարելի։

Ժուլիեթը Մայրիկ Անթառամին խնդրեց միջնորդել, որ բժիշկը հիվանդապահի գործ տա։ Այս վճիռը կայացնելուն օգնեց այն միտքը, թե տասնյակ հազարավոր ֆրանսուհիներ այժմ նույն գործն են կատարում զինվորական հիվանդանոցներում։

Պետրոս Ալքանին ակզբում զարմացավ, ապա ընդունեց այդ օգնությունը։

Ժուլիեթը նույն օրն ևեթ պատշաճ զգեստով ու թաշակով ներկայացավ մարտ-հիվանդանոցը, որտեղ դեռևս աշխատում էին։ Փառք ասածս, Դամլաջրքում առանձնապես ծանր հիվանդներ չկային։ Մի

[1] շեր (ֆր.) — սիրելիս

քանի հոգի էին տառապում տենդից։ Նրանց հնամաշ սավանները, վերմակներն ու խոիրները դեռևս կրում էին ամպրոպի հետքերը. կոշտացել էին, կեղտոտվել։ Դրանք ծերունիներ էին։ Անհանգիստ շնչառությունն այն տպավորությունն էր թողնում, թե նրանք երկար ժամանակ հետապնդվելուց հետո հենց նոր են այստեղ ճողոպրել։ Գորշ, խամրած դեմքեր, որոնց վրա արդեն իր դրոշմն է դրել ինչ-որ հեռավոր մի աշխարհ։ «Սրանք ինձ օտար են»,— չնչին խղճահարությամբ և մեծ նողկանքով մտածեց Ժուլիեթը։ Զգաց, որ մարդասիրական այդ ծառայությունն իր կոչումը չէ։ Դա նրան թվաց ինքնաժխտում։ Համենայն դեպս հիվանդների համար վրանից բերել տվեց ամբողջ ավելորդ սպիտակեղենը։

Օգոստոսի 4-ը մինչև կեսօր անցավ նախորդ օրերի պես։

Երբ Գաբրիելը վաղ առավոտյան հեռագիտակով զննում էր հովիտը, գյուղերն այնքան խաղաղ էին, այնպես ամայի, որ կարելի էր կարծել, թե ամեն ինչ բարեհաջող կանցնի, շուտով կկնքվի համաշխարհային հաշտություն, և մարդիկ ապահով կշարունակեն իրենց կյանքը։

Գլխավոր հրամանատարը ցած իջավ իր դիտակետից, գնաց անակընկալ ստուգման ենթարկելու պաշտպանության տարբեր հատվածները, ջոկերի ծառայության և աշխատանքի վիճակը։ Կեսօրից առաջ գոհունակությամբ վերադարձավ շտաբ։ Մի քանի բոպե չանցած, բոլոր կողմերից հասպառ ներս ընկան պատանի հետախույզները։ Զեկուցեցին։ Անտիոքից Սուեզիա տանող ճանապարհին փոշու ահագին ամպ է բարձրանում։ Շատ ու շատ են զինվորները։ Չորս ջոկատ։ Զինվորների ետևից գալիս են զափթիեներ և մի մեծ բազմություն։ Թեքվում են դեպի հովիտը։ Արդեն անցնում են Վաքրֆ գյուղի՝ հովտի առաջին բնակավայրի միջով։

Գաբրիելը մեծ աճապարանքով բարձրացավ մոտակա դիտակետը, և նրա առաջ բացվեց հետևյալ տեսարանը։

Գյուղամիջով ձգվել էր հետևակային վաշտի զորասյունը։ Դասակները մեծաթիվ էին, ինչպես սովորաբար լինում է ռազմական շրջանում։ Գաբրիելն իսկույն կռահեց, որ դա կանոնավոր զորախումբ է։ Այդ տպավորությունն էին ստեղծում թե՛ հեծյալ կապիտանը, թե՛ շարային համաչափ քայլերով առաջ շարժվող չորս դասակները, որոնք իրար ետևից գալիս էին որոշ հեռավորության վրա։ Գուցե դրանք Անթաքիեի զորանոցներից բերված դամ Ջեմալ փաշայի նորաստեղծ բանակին պատկանող մարզված, նույնիսկ պատերազմի բոմն անցած զինվորներ էին։ Վաշտից բավական հեռավորության վրա ծուլորեն օրորվում էին մոտ հարյուր զափթիե, մինչդեռ հարթավայրի խուժանը՝ Անթա-

քիեի այդ հոսուն ավազը, փոշի բարձրացնելով, շարժվում էր զորքի երկու կողմից։ Այս չորս հարյուր հրացանավորները (ներառյալ զափթիեները) բաց դաշտում իրենց այնքան ինքնավստահ էին զգում, որ Գաբրիելը երկար ժամանակ հակված էր կարծելու, թե վաշտն այլ նպատակ ունի։ Բայց երբ կարճատև դադարից և սպայական խորհրդակցությունից հետո թուրքերը Բիթիասի մոտից թեքվեցին հյուսիս-արևմուտք, դեպի լեռը, պարզ դարձավ, որ արշավանքն ուղղված է փախստական համայնքների դեմ։ Կամ հարևան գյուղերի բնակիչներն էին մատնել (իրողությունը կարող էին գուշակել ծառահատման աղմուկից), կամ Հարություն Նոխուդյանին այնքան էին խոշտանգել, որ նա ստիպված էր եղել հայտնելու իր հայրենակիցների տեղը։ Ինչ էլ լիներ, թուրքերը ենթադրում էին, թե իրենց անելիքը ոստիկանական սովորական գործ է լինելու, ավելի անվնաս, քան դասալիքներ որսալը։ Կարծում էին, թե իրենց դեմ կանգնած է խեղճ ու կրակ լեռնականների մի բաց ապաստարան, որը պետք է գտնել, շրջապատել և բոլորին ցած քշել։ Այս հանգամանքը նրանց անսահման վստահություն էր ներշնչում։ Առանց այդ էլ նրանք իրոք ավելի զորեղ էին. հայերը միայն երեք հարյուր ընտիր հրացան ունեին, ռազմամթերքի ոչ մեծ պաշար և գրեթե ոչ մի փորձառու զինվոր։

Երբ վաշտը հասավ Յողոնօլուք, Գաբրիելը մեծ տագնապի ազդանշան տվեց, որին արդեն ընտելացել էին թե՛ զինվորները, թե՛ մնացած ժողովուրդը։ Մունետիկները թմբկահարությամբ ոտքի հանեցին ամբողջ Քաղաքածորը։ Պատանի կապավորների ամբողջ զորագունդը չորս կողմ նետվեց, որ խմբապետներին հաղորդի հրամանները։ Տղաներից մի քանիսը հանդգնեցին իջնել մինչև հովիտը՝ հակառակորդ զորքի դասավորությունն ու շարժումը դիտելու։

Տեր-Հայկազունը, յոթ մուխթարները, ավագների խորհրդի առավել տարեց անդամները մնացին գաղթականի ժողովրդի հետ, ինչպես նախապես պայմանավորվել էին։ Բոլորը շունչները պահեցին։ Նույնիսկ ծծկեր երեխաների լացուկոծը դադարեց։ Պահեստայինները զինվեցին կացիններով, քլունգներով ու բահերով, շրջան կազմեցին ճամբարի շուրջը, որպեսզի հարկ եղած դեպքում պատրաստ լինեն։ Գաբրիելը կանգնած էր Զաուշ Նուրհանի և մյուս խմբապետների հետ։ Հարձակումը լիովին նախատեսված էր։ Քանի որ դա առաջին հարձակումն էր, և քանի որ պաշտպանության մյուս հատվածներից ոչ մեկն անմիջական վտանգի ենթակա չէր, Գաբրիելը խրամատներում միայն պահակներ

թողեց, իսկ մարտունակ բոլոր ջոկերը տեղափոխեց Հյուսիսային լեռնաթամբ։

Պաշտպանությունը չորս գիծ ուներ։ Գլխավոր խրամատը ձգվում էր մինչև լեռնաթամբի ձախակողմյան երկճյուղ բարձունքը, փակում Դամլաջրքը։ Մի քանի հարյուր մետրի վրա, ալիքաձև լանջի երկարությամբ ձգվում էր երկրորդ խրամատը։ Այնուհետև գալիս էր լեռան ճակատային կողմը երիզող թևային պաշտպանության խրամատն իր առաջ թեքված փոսերով։ Եվ, ի վերջո, բզկտված կրաժայռերի պարիսպը, որը բարեբախտաբար ճամբարը թաքցնում էր հակառակորդի տեսադաշտից։

Առաջին խրամատը քաշվեցին մոտ երկու հարյուր հոգի։ Նրանք զինված էին լավագույն հրացաններով և առավել հուսալի ռազմիկներ էին։ Խրամատի հրամանատարությունը Բագրատյանն ինքն ստանձնեց։ Ի դեպ, նա այս զորախմբի մեջ չընդգրկեց դասալիքներին՝ ոչ Սարգիս Կիլիկյանին, ոչ էլ մեկ ուրիշի։ Ընտիր զորախմբերի մի մասը Նուրհանի գլխավորությամբ ուղարկեց ժայռապատնեշի ետևում դիրքավորվելու։ Երկրորդ խրամատում տեղավորված էին երկու հարյուր հոգի։ Սրանք միջամտելու էին, եթե ճակատամարտն աննպաստ ընթացք ստանար։ Ամեն զինվորի տրվեց երեք փամփշտակալ՝ տասնհինգ կրակոցի համար։ Գաբրիելը խստագույն պատվեր տվեց.

— Ոչ մի գնդակ իզուր չարձակել։ Եթե ճակատամարտը երեք օր էլ տևի, պետք է ամեն զինվոր յոլա գնա երեք փամփշտակալով։ Խնայեցեք փամփուշտները, այլապես կորած ենք։ Եվ ամենակարևորը. կկրակեք միայն իմ հրահանգով։ Բոլորդ կնայեք իմ կողմը։ Կթողնենք, որ թուրքերը մոտենան մինչև տասը քայլ։ Նրանք ոչինչ չպետք է կասկածեն։ Հանգիստ նշան կբռնեք գլուխներին, հանգիստ էլ կկրակեք։ Մի ժամ չանցած՝ այստեղ, Դամլաջրքում, վրեժ կլուծենք մեր ժողովրդին բնաջնջողներից։ Մի ժամ չանցած թուրքերին կապացուցենք, որ մենք մեր տկարությամբ հանդերձ հարյուրապատիկ բարձր ենք իրենցից։ Այս պահին ձեզանից ամեն մեկը թող մտաբերի այն գազանությունը, որով մեզ հետ վարվեցին թուրքերը։ Ուրիշ ոչ մի բանի մասին մի մտածեք։

Խոսում էր Գաբրիելը, և նրա կրծքի տակ այնպե՞ս էր թպրտում սիրտը։ Ջանք էր թափում, որ ոչ ոք չնկատի իր ներքին խռովքը։ Դա միայն խոր հուզմունք չէր (ո՞վ չի հուզվում ճակատամարտից առաջ)։ Նա գիտակցում էր իր ձեռնարկած անլուր հանդգնությունը, ամբողջ խենթությունը։ Չէ՞ որ ծիծաղելի էր մի բուռ մարդկանցով դուրս գալ վիթխարի կայսրության բանակի դեմ։ Հակառակ մտրակող խոսքերի,

այդ պահին նրա փոթորկահույզ արյան մեջ չէր եռում թուրքերի հանդեպ ունեցած ատելության ու վրեժխնդրության կրակը, որով քիչ առաջ բորբոքում էր հայ զինվորներին։ Նա առհասարակ թշնամուն էր սպասում, և թշնամին արդեն թուրք չէր, ո՛չ էնվեր, ո՛չ Թալիաթ, ո՛չ ոստիկանապետ, ո՛չ մյուդիր, այլ պատերազմի դուրս եկած հակառակորդ, որին մարդ ոչնչացնում է առանց ատելու։ Նույնն էին զգում նաև մյուս հայերը։

Սպասումից արդեն ճմլվում էին սրտերը, երբ պատանի դետքերը թավուտից դուրս լողացին, կատաղի շարժուձևով աղդարարեցին թուրքերի առաջխաղացումը։ Սակայն հուզումը տեղի տվեց ինչ-որ երկաթյա սառնասրտության, երբ թուրք հետևակի ոտնաձայները մացառուտների միջից հետզհետե ավելի պարզ լսվեցին, հետզհետե ուժգնացավ անդգույշ աղմուկը։ Թշնամին ոչ մի վատ բան չէր կռահում։

Վերելքից ուժասպառ եղած թուրք զինվորները, մարտական կարգը խախտելով, խառնիխուռն լցվեցին լեռնաթամբի ճեղքերը։ Հրամանատարը երևի խորապես համոզված էր, որ եղած-չեղածը ոստիկանական միջոցառում է, ոչ թե ինչ-որ ռազմական ընդհարում։ Այլապես աչքաթող չէր անի նախազգուշական ամենատարրական միջոցառումները, որոնք պարտադիր են թշնամու հողում գտնվող զորքի համար։ Առանց պարեկների, առանց առաջապահ, եզրային և վերջապահ հսկողության, հետևակային այս անկազմակերպ բազմությունը շաղակրատելով, ծիծաղելով, ծխելով հավաքվեց լեռնագոգում, որ հանդստանալուց հետո բարձրանա լեռան կատարը։

Խրամատում պառկած Զաուշ Նուրհանը սողաց դեպի Բագրատյանը, շշնջալով և շաժումներով փորձեց համոզել, որ թուրքերին չորս կոմից շրջապատեն, զորախմբերն իրարից զատեն։ Սակայն Գաբրիելն այլայլված դեմքով ձեռքը սեղմեց նրա բերանին, նույնիսկ հարվածեց։

Վաշտի հրամանատարը՝ հաստամարմին, բարեհոգի մի թուրք, հանեց կիսալուսին կրող փափախը, սրբեց ճակատից հոսող քրտինքը։ Երիտասարդ դասակապետները նրան շրջապատեցին։ Մի փոքրիկ քարտեզի նայելով, սկսեցին վիճել հայերի ենթադրյալ ապաստանի շուրջը։

Գաբրիելի համար անցավ մի ամբողջ այրող հավերժություն։

Հաստամարմին կապիտանը նույնիսկ չուզեց նեղություն կրել, ելնել ավելի բարձրադիր մի տեղ, դիտել շրջակայքը։ Ի վերջո, իր շեփորահարներին հրամայեց տալ հավաքվելու ազդանշան, այն էլ ամենայն զորությամբ, որպեսզի հայերի ապաստանի վրա տարածեն վերջին դատաստանի սարսափը։ Զորս դասակն էլ շարվեցին բացազատված գծով, երկուական հոգի իրար ետևից, ինչպես զորանոցի բակում։ Կրտսեր հրամանատարներն առաջ նետվեցին, ղեկուցեցին սպաներին, իսկ սրանք էլ իրենց հերթին մերկացրած սրերով ձգված կանգնեցին կապիտանի առաջ, ղեկուցեցին։

Գաբրիելը թուրք կապիտանին նայում էր ոչ առանց համակրանքի։ Սա լայն, բարեհամբույր դեմք ուներ։ Քթի մեջտեղում հանգչում էր ոսկեդրվագ ակնոցը։ Ահա, նա ևս դուրս քաշեց սուրը, բարձր, բայց տկար ձայնով հրահանգ տվեց.

— Կռվի պատրաստ։

Հրացանների փակաղակները չխչխկացին։ Կապիտանն իր սուրը թափահարեց գլխավերևում, ցույց տալով հայկական լեռնաթամբի թեք լանջը.

— Առաջին, երկրորդ դասա՛կ, շղթայաձև գծով իմ ետևի՛ց։

Իր կոչումով մնացածներից ավագ մյուս հրամանատարը սրով ցույց տվեց հակադիր կողմը, արձագանքի պես կրկնեց կապիտանի հրահանգը.

— Երրորդ, չորրորդ դասա՛կ, շղթայաձև գծով իմ ետևի՛ց։

Թուրքերը դեռևս պարզորոշ չէին պատկերացնում, թե որտեղ է փախստականների ճամբարը՝ Դամլաջրքի՞, թե՞ Մուսա լեռան հյուսիսային բարձունքի վրա։

Հայերը կանգնած էին խրամատում։ Երևում էին միայն կրծքերն ու գլուխները։ Առջևի հաստ հողաթումբը, որի ճեղքերից դուրս էին հանված հրացանները, զինվորներին անտեսանելի էր դարձնում։ Աչքի չէին ընկնում նաև այն տեղերը, ուր կտրատել էին լանջին սփռված թփերն ու մացառները, մաքրել տեսադաշտը։

Շղթա կազմած և ոչինչ չկասկածելով՝ թուրքերը բարձրանում էին։ Առաջին խրամատն այնքան վարպետորեն էր քողարկված, որ կարող էր նկատվել միայն ավելի բարձր տեղից։ Բայց այդպիսի տեղ չկար, բացի հանդիպակաց բարձունքի ամենավիթխարի ծառերից։

Գաբրիելը բարձրացրեց ձեռքը։ Բոլորը նայեցին նրան։

Թուրքերը ցածրիկ թփերի միջով դանդաղ մոտենում էին։ Կապիտանը մի նոր գլանակ վառեց։ Հանկարծ խրտնեց, կանգ առավ։ Այդ ի՞նչ հողաթումբ էր։ Միայն մի քանի վայրկյան հետո գլխի ընկավ, որ դա խրամատ է։ Բայց այս իրողությունն այնքան անհավատալի թվաց, որ դարձյալ ժամանակ կորցրեց, մինչև գոռաց.

— Պառկե՛լ, թաքնվե՛լ։

Արդեն ուշ էր։ Գաբրիելը դեռևս ցած չէր իջեցրել ձեռքը, երբ որո-

տաց առաջին համազարկը։ Հայերը կրակում էին զգույշ և անվրեպ, իրար ետևից, սառնասրտորեն։ Նշան բռնելու ժամանակ ունեին։ Ամեն ոք գիտեր, որ ոչ մի կրակոց չպետք է ապարդյուն անցնի։ Քանի որ նրանց զոհերը մի քանի քայլի վրա էին, ոչ մի գնդակ իզուր չէր կորչում։

Բարեհամբույր դեմքով կապիտանը մի քանի անգամ էլ գոռաց.

— Պառկե՞լ, քողարկվե՞լ։

Ապա անսահման զարմանքով նայեց երկնքին և նստեց։ Ակնոցը քթի վրայից գլորվեց, նախքան նա ցած կընկներ։

Թուրք զինվորներն իրար անցան։ Վայրագ գոռոցներով փախան լեռնաթամբն ի վար, իրենց ետևում թողնելով բազմաթիվ սպանվածներ ու վիրավորներ։ Դրանց մեջ էին կապիտանը, մի դասակապետ և երեք օնբաշի։

Գաբրիելը չէր կրակում։ Հանկարծ նրան համակեց և՛ թեթևություն, և՛ անորոշություն։ Իրականությունն այնքա՞ն անիրական թվաց, ինչպես դա միշտ անիրական է իր ամենաիրական հոլովումների մեջ։

Երկար ժամանակ անցավ, մինչև թուրքերը կարողացան ուշքի գալ։ Սպաներն ու ենթասպաները մեծ դժվարությամբ կասեցրին փախուստը։ Սրերի բութ կողմով և հրացանների խզակոթերով հարվածում էին խուճապահար զինվորներին, ետ դարձնում։ Հրամանատարները կրակի տակ չընկած մյուս երկու դասակները քշեցին առաջ։ Բայց փոխանակ գրոհային գիծ ստեղծելու, նոր զորախումբը շտապեց թաքնվել թփերի և քարերի ետևում, որոնք այդ նպատակի համար բնավ էլ հարմար չէին։ Առանց պատկերացում ունենալու հայկական խրամատների մասին, կատաղած թուրքերն անիմաստ կրակ բացեցին թփերի ու սոճիների վրա, ոչ մի վնաս չպատճառելով թշնամուն։ Միայն մի քանի անգամ պաշտպանների գլխավերևից սուլոցով անցան գնդակները։

Գաբրիելը խրամատով մեկ հրամայեց.

— Չկրակել, լավ պատսպարվել, սպասել մինչև մոտենան։

Միաժամանակ լուր ուղարկեց եղբային խրամատները, որ եթե մեկնումեկը հանդգնի կրակել կամ գլուխը բարձրացնել, կդատվի իբրև դավաճան։ Թուրքերը նվազագույն պատկերացում անգամ չպետք է ունենան պաշտպանության գոտու մասին։ Հայկական լեռնաթամբը դարձյալ մեռած էր թվում, ինչպես քիչ առաջ։ Կարծես բոլոր պաշտպաններին հնձել էր թուրքերի կատաղի կրակը։ Մի ժամ շարունակ ռազմամթերք վատնելուց հետո վաշտը չորս անգամ խելահեղ գրոհի նետվեց։

Հայերն այս անգամ իրենց ուժի վրա ավելի վստահ լինելով, քան

առաջին անգամ, թողեցին, որ թուրքերը մոտենան, ապա սկսեցին կոտորել նրանց ավելի արյունահեղ, ավելի զարհուրելի ձևով։

Հրամանատարներն այլևս չէին կարողանում կասեցնել փախուստը։ Մի ակնթարթում լեռնաթամբը դատարկվեց։ Թփուտներից լսվում էին միայն վիրավորների օգնություն հայցող աղաղակները։ Հայերից մի քանիսն արդեն ուզում էին դուրս սողալ խրամատից։ Գաբրիելը սաստեց. ոչ ոք իրավունք չունի իր դիրքը լքելու։

Քիչ անց թուրք սանիտարները սիրտ արեցին պատգարակներով հայտնվել ծառերի արանքում և սկսեցին թափահարել մահիկավոր կարմիր դրոշակներ։ Գաբրիելը նրանց ընդառաջ ուղարկեց Զաուշ Նուրհանին։ Սա մի քանի քայլ գնաց դեպի սանիտարները, նշան արեց, որ մոտենան, ապա ձայն տվեց.

— Սպանվածներին և վիրավորներին կարող եք տանել։ Հրացանները, ռազմամթերքը, պայուսակները, փամփշտակալները, հացի տոպրակները, ձիերն ու կոշիկները պետք է մնան։

Այնուհետև սանիտարները, իրենց վրա ուղղված հրացանների սպառնալիքի տակ, սկսեցին մերկացնել սպանվածներին ու վիրավորներին, թողնելով միայն ներքնաշորերը։ Ամոթապարտ թուրքերն ամեն ինչ պահանջված ձևով մի տեղ կուտակեցին։ Դա երկար տևեց, քանի որ շարունակ գնում գալիս էին։ Իսկ երբ տարան վերջին զոհերին և այլևս չերևացին, բոլոր զինվորները, ինչպես նաև Զաուշ Նուրհանը, այն կարծիքը հայտնեցին, թե հարձակումն այլևս չի կրկնվի։ Գաբրիելն ուշադրություն չդարձրեց այդ գայթակղիչ խոսքերին։ Հետախույզ պատանիների մի մասին իր մոտ կանչեց։ Սրանց պատվիրեց շտապ հավաքել և բերել ավարը՝ հրացանները, պայուսակները, փամփշտակալներն ու համազգեստները։ Ամենաճարպիկ դետքերից չորսին ուղարկեց հետևելու թուրքական վաշտի շարժմանը։ Կապավորները նոր էին ճանապարհ ընկել, երբ վերադարձավ Հայկ անունով մի տղա (Ստեփանից փոքր-ինչ ավելի չափահաս) և հայտնեց, թե հյուսիսում թուրքերի մի մասը մագլցում է լեռն ի վեր, չնայած այդտեղ ոչ մի անելիք չկա։

Թուրքերն այդ քայլին կարող էին դիմել միայն մի նպատակով՝ ծովի կողմից ճամբարը շրջապատելու մտադրությամբ։ Դա պարզ էր ոչ միայն Գաբրիելի, այլև Զաուշ Նուրհանի ու մյուսների համար։ Գաբրիելը հրամանատարությունը հանձնեց առավել հուսալի մի խմբապետի, իսկ ինքը Զաուշ Նուրհանի հետ դուրս եկավ խրամատից։ Մագլցելով մոտեցան ժայռապատնեշի ետևում կանգնած զինվորներին, որոնք այրվում էին կռվի նետվելու ցանկությունից։ Մուսա լեռան որդիք ճանաչում էին

ամեն ժայռակույտ, ամեն ցցվածք, ամեն քարանձավ, լերկ ու ճաքճքված կրաժայռերի վրա աճող ամեն թուփ ու մացառ։ Դրանց ներքևի գահավեժ, բզկտված քարակարկառները մերթ ուղղահայաց, մերթ սանդղաձև իջնում էին մինչև ծովը, հաճախ երկու-երեք հարյուր մետր խորանում։ Լեռն այսքան լավ ճանաչելու հանգամանքը մուսալեռցիներին վիթխարի առավելություն էր տալիս ընդդեմ ամեն մի զորամասի, թեկուզ և մեծաթիվ։

Բագրատյանն իր զինվորներին այնպես խելացիորեն դասավորեց փոսերի մեջ և ժայռազանգվածների ետևում, որ հաղորդակցությունը նրանց միջև պահպանվի, և ոչ ոք յուրայիններից կրակի տակ չընկնի։ Առաջադրանքը նույնն էր, ինչ որ առաջ։ Մնալ բացարձակապես աննկատելի, մեռելային լռությամբ հակառակորդին հրապուրել, ապա ոչնչացնել։ Բայց թուրքերն այս անգամ արդեն խորամանկություն արին։ Հիմնական ուժերը դանդաղ քաշեցին դեպի Լեռնաթամբի հանդիպակաց բարձունքը և հենց անտառի եզրից, ծառերի ետևում պատսպարվելով՝ մեծ խրամատի վրա վայրիվերո, բայց և անհամարձակ կրակ տեղացին։ Հայ զինվորները այդ բանը հաշվի չէին առել։ Նույն պահին դետքերը հայտնեցին, թե չորս հոգուց բաղկացած հետախուզական մի խումբ վախվխելով առաջ է շարժվում ժայռերի միջով։ Նկատվում էր, որ դրանք լեռնականներ չեն, այլ հարթավայրի բնակիչներ։ Քարակույտերի մեջ անճարակ-անճարակ սողալով, մի թաքստոցից մյուսն էին նետվում։ Զգուշորեն հետազոտում էին տեղանքը, զննում ամեն ճեղք, ամեն ժայռ։ Հայերը բավականությամբ կռահեցին, որ դրանք զափթիեներ են, այն էլ ոչ տեղացի։ Իսկ թե զափթիե ասածն ինչ բան է, դա ամեն ոք գիտեր։ Այժմ հասել էր այն ժամը, երբ հայերը կարող էին վրեժ լուծել թուրք զինվորականության այդ ամենաստոր, ամենաավազակաբարո խավից, այդ վախկոտ անասուններից, որոնք տատիկների մոտ քաջ են ձևանում, իսկ տղամարդկանց առաջ դողում են, եթե սրանք մի երեք անգամ զինաթափ չեն արվել։

Բագրատյանը նկատեց իր զինվորներից շատերի աչքերի մեջ բոցկլտացող խելահեղ, արբեցման հասնող մոլուցքը։ Զափթիեների օնբաշին երևի կարծում էր, թե արդեն անցել է խրամատային գիծը, դուրս եկել հայերի թիկունքը։ Նա անխոս ետ ուղարկեց զափթիեներից մեկին, և սա կարմիր դրոշակը թափահարելով, ազդանշան տվեց։ Երկար ժամանակ անցավ, մինչև երևաց պաշարող զորախումբը։ Թուրք զինվորներն այնպես վախվխելով ու այլթաքելով էին շարժվում, կարծես ոտքները ոչ թե կոշտ ֆրաժայռերի վրա էին դնում, այլ խոցոտած ցրի մեջ։ Զորախմբի կեսը հետևակայիններ էին, կեսը՝ զափթիեներ։ Խառնիխուռն բազմությամբ, երկու սպայի հորդորանքով դրանք հասան մինչև օնբաշու հետազոտած տեղերը։

Հայերը մի ակնթարթում բոլորին չորս կողմից կրակի տակ առան։ Թուրքերից շատ քչերն էին պատսպարված։ Ամբողջ զորախումբը խուճապի մատնվեց։ Զինվորները կարծես մոռացության տվին իրենց հրացանները։ Թուրքը, մանավանդ անատոլիացին, հայտնի զինվոր է։ Բայց այս գնդակոծությունը շատ էր անակնկալ. կարծես գետնի տակից էին կրակում։ Խիզախներն անգամ չգիտեին, թե ինչպես պաշտպանվեն։

Օդն արդեն թնդում էր աղաղակներից ու տնքոցներից, երբ ժայռերի ետևից ու ծերպերից դուրս թռան հայերը։ Զաուշ Նուրհանի գլխավորությամբ իսկույն սեպ խրեցին հետևակայինների և զափթիեների միջև։ Սրանց զգալի մասը ցած գլորեցին ուղղաձիգ ժայռապարսպի վրայից։ Զափթիեները մագլցում էին անողոք ժայռերն ի վեր, սեղմվում իրար, անօգնական սպասում գնդակների կամ կոշտ ու փշոտ թփերից կառչելով՝ մնում հուսահատ կախված։ Շատերը գունդ ու կծիկ դարձած գլորվում էին, ընկնում ծովը։ Թուրքերի մեծամասնությունը փորձում էր ամենակարճ ճանապարհով դուրս գալ ժայռերի լաբիրինթոսից։ Նրանք վազելով, սայթաքելով, հայ ռազմիկների կրակի տակ նետվեցին դեպի լեռնաթամբը։ Հայ զինվորներն արդեն կորցրել էին գլուխները։ Կոկորդային անհեթեթ մռնչյուններ արձակելով՝ հետապնդում էին թուրքերին։ Գաբրիելը ևս կորցրել էր հրամանատարական պարզորոշ ինքնատիրապետումը։ Նրան համակել էր մինչ այդ անծանոթ մի արբեցում, հոգու մեջ հնչում էր հնագույն խելահեղ մի երաժշտություն, որը հառնում էր հավարամյակներ քնած հայկական արյան խորքից։ Գլխավոր հրամանատարի կրծքից ևս պոռթկում էին ռնգային կարճ հնչյուններ։ Դա վայրագության լեզուն էր, որից նա սթափ վիճակում կսոսկար։ Աշխարհի կշիռն արդեն հարյուրապատիկ թեթև էր։ Աշխարհը ոչինչ էր, ավելի չնչին, քան ճպուռի թևերի մանրիկ թրթռումը։ Աշխարհը կարմրագալար, ոստոստուն պար էր և պարողին չէր վնասում։

Այս խելահեղությամբ էր համակված ոչ միայն Գաբրիելը, այլև ժայռապարսպի ռազմիկներին միացած պատվելի Արամը։ Որպես հնադավան մի խաչակիր, նա օգում թափահարում էր խաչելությունը, աղաղակում.

— Քրիստո՛ս, Քրիստո՛ս...

Այս ռազմակոչի ապտակ Քրիստոսը շատ քիչ էր նման խաչված աստվածորդուն, որի ավետարանով էր մինչ այդ ջարձվում պատվելի

Արամը։ Երիտասարդ հոգևորականի քրիստոսագոչ աղաղակներն սթափեցրին Գաբրիելին։ Նա սկսեց դիտել ճակատամարտը. կարծես ո՛չ գլխավոր հրամանատարն էր, ո՛չ էլ դա իրեն էր վերաբերում։

Մինչ այդ, ժայռերի արանքում բարձրացած թոհուբոհի հետ միաժամանակ, ազդանշան տրվեց ճակատային գրոհի անցնելու թուրքերի դեմ, որոնք փորձում էին ամրանալ հանդիպակաց բարձունքի մոտ, անտառի եզրին։ Շարքերն առաջ էին նետվում, օդի մեջ կրակում, փրովում գետնին, դարձյալ կրակում, վեր թռչում, փոքր-ինչ առաջ վազում, նորից պառկում։ Թուրքական զորամասը, որը եկել էր հայերին պաշարելու, այժմ ջախջախված, դուրս էր շպրտված ժայռերի միջից։ Հալածողների կրակը տեղում էր հարձակման ենթարկվող հակառակորդի թևին։

Գաբրիելը կանգնած էր ժայռին։ Չէր կրակում։ Տեսավ, թե ինչպես մի թուրք լեյտենանտ փորձում էր անկանոն նահանջող բազմությունից ստեղծել դիմադրության կենտրոն։ Խումբը փռվեց գետնին, սկսեց կրակել։ Բայց նույն պահին Զաուշ Նուրհանը նետվեց թուրք սպայի վրա, հրացանի խզակոթով ցած գլորեց։ Թուրք զինվորները հրացանները վայր գցեցին. կարծես սատանա տեսան։ Բանակում երկար ծառայած Զաուշը, իրոք, նման էր սատանայի։ Նա ցույց տվեց, թե թուրքական հետևակն ինչ անզուգական սան է կորցրել ի դեմս Զաուշ Նուրհանի։ Դեմքն արնակալած էր։ Ալեխառն, երկար բեղերը ցցվել էին։ Կոկորդից միայն կատաղի կռինչ էր դուրս գալիս։ Բնավ չէր մտահոգվում, թե պետք է պատսպարվել, այլապես կարող են սպանել։ Երբեմն կանգ էր առնում, շեփորը մոտեցնում բերանին, դուրս նետում այն թլվատ, կցկտուր հնչյունները, որոնք սարսափ էին տարածում թե՛ թշնամու, թե՛ բարեկամի վրա։

Երբ Գաբրիելը նկատեց, որ թուրքերն իրենց ճակատն ուզում են ուղղել ժայռերի կողմը, հրացանը թափահարեց գլխավերևում և երկար խրամատում կանգնած զինվորներին տվեց շեշտակի հարձակման ազդանշան։ Հայերը, որոնց հազիվ էր զսպում խմբապետը, գոռում-գոչումով առաջ նետվեցին, գնդակների կարկտով ցաքուցրիվ արին թուրքերի նոր ճակատը՝ առանց գետնին պառկելու, առանց ռազմամթերքը խնայելու։

Սոճիների արանքում վաշտը սեղմվեց աքցանի մեջ։ Առավել փորձառություն և հաստատակամություն ունենալու դեպքում Բագրատյանը կարող էր թշնամուն գլխովին ջախջախել կամ գերի վերցնել։ Բայց թուրքերին հաջողվեց սրընթաց վազքով դուրս պրծնել, թեև հայկական

երկու ջոկ աջ և ձախ թևերից փակեցին ճանապարհը, ապա կրակ տեղացին նահանջողների ետևից։

Թուրքերն այնպես էին լեղապատառ վազում լեռն ի վար, որ չկարողացան կանգ առնել նույնիսկ Դամլաջրքի ստորոտում։ Շունչ առան միայն Բիթիասի եկեղեցու հրապարակում, որտեղ վերջապես ուշքի եկան։

Ինը զինվոր, յոթ զափթիե և մի երիտասարդ սպա ընկան հայերի ձեռքը։ Սրանք սառնասրտորեն գտնում էին, որ միանգամայն բնական կլիներ գերիներին համոզիչ կերպով ցույց տալ, թե ինչ կնշանակի մեռնել հայկական ջարդերի ոճով։ Գաբրիելը ոչ մի կերպ չկարողացավ փրկել զափթիեներից երկուսին, բայց մյուս գերիների առաջը փակեց սեփական մարմնով։ Նրան օգնեցին պատվելի Արամն ու մի քանի տարեց մարդ։ Մինչդեռ Զաուշ Նուրհանն ու ճնշող մեծամասնությունը ոչ մի կերպ չէին հասկանում, թե ինչո՛ւ են խնայում հարյուր հազարավոր հայերի դահիճներին։ Գաբրիելին մեծ դժվարությամբ հաջողվեց հիասթափված զինվորներին բացատրել իր տեսակետը.

— Մենք ոչինչ չենք շահի, եթե սրանց կոտորենք, չենք էլ շահի, եթե պահենք իբրև պատանդ։ Նրանք իրենց գերիներին սպանում են առանց աչք թարթելու, իսկ մենք հաց կտանք։ Բայց մենք կշահենք, եթե սրանց ուղարկենք Անթաքիե իբրև պատվիրակների։

Գաբրիելը դիմեց թուրք լեյտենանտին, որի դեմքը մոխրի գույն էր ստացել։ Սպան հազիվ էր ոտքերի վրա կանգնում.

— Դուք տեսաք, թե ձեզ հետ ինչքան հեշտ մաքրեցինք մեր հաշիվը։ Եթե վաշտերի փոխարեն գնդեր էլ ուղարկեք, մեզ համար միևնույն է. մեր ուժերը կբավարարեն։ Նայի՛ր. արևը դեռ մայր չի մտել։ Եթե ես ուզենայի, ձեզնից ոչ մեկը կենդանի չէր մնա։ Այս բանը հաղորդիր Անթաքիեում նստած վերադասիդ և ասա, որ ձեր հանդեպ մենք գրթափրտ եղանք, թեև դուք արժանի չեք։ Իմ անունից ասա, թող իր վաշտերն ու գնդերը խնայի՝ կայսրության թշնամիների դեմ պատերազմ մղելու, ոչ թե իր երկրի խաղաղ քաղաքացիների դեմ կռվելու համար։ Մենք ուզում ենք այստեղ ապրել, առանց ձեզ նեղություն տալու, ուրիշ ոչինչ։ Այսուհետև մեզ հանգիստ թողեք, եթե չեք ուզում առիթ տալ նոր փորձություններին։

Գաբրիելի պարծենկոտ խոսելաձևը, սպառնալիքի մեջ հնչող ինքնավստահությունը, մահվան սարսափով բռնված գերիների ողբալի տեսքը,— այս ամենը հանդարտեցրեց հայ ռազմիկների մոլուցքը։ Նրանք թուրքերին ստիպեցին ոչ միայն թողնել հրացանները, կոշիկներն ու ձիերը, այլև լրիվ մերկանալ։ Ամոթալի վիճակում ազատ արձակվող-

ները պարտավորվեցին Դամլաջրքի արահետներով ցած տանել երկրորդ ճակատամարտում սպանվածներին ու վիրավորներին։

Օրվա ավարը մեծ էր՝ ինչսուներեք մաուզերյան հրացան, ահագին ռազմամթերք, սվիններ։ Հիսունվեց սակավագեն ջոկերից գրեթե տասն արդեն կարող էին լիովին սպառազինվել։ Դա ներքին ամենազգալի հաջողությունն էր։ Հաղթանակը ձեռք էր բերվել առանց որևէ զոհի, քանի որ հայերից միայն վեցն էին վիրավորվել, այն էլ ոչ ծանր։

Զարմանալի չէ, որ այս ցնցող հաղթանակը զինվորներն ու դաղթականյանի ժողովուրդն ընդունեցին մոլորության մեջ գցող չափազանցված հրճվանքով։ Ճիշտ է, Դամլաջրքում ծվարած, կարգին օթևանից ու սննդից զուրկ խեղճ ու տարագիր գյուղացիները՝ վատ զինված և շարունակ մահվան սպառնալիքի տակ գտնվող այդ մարդիկ, ոչ միայն գլխովին ջախջախել, այլև գրեթե ոչնչացրել էին ռազմի բովով անցած մի ամբողջ վաշտ՝ ամիսներով մարզված, արդիական զենքերով զինված մի քանի հարյուր երիտասարդ զինվոր։ Չորս ժամ էլ չտևեց սոսկալի, բայց և հայերի համար դյուրին ճակատամարտը։ Հաղթանակը ձեռք բերվեց լավ կշռադատված պլանի և պաշտպանական հիանալի ամրությունների շնորհիվ՝ արագ, առանց զգալի կորուստների։ Չնայած հարձակվող թշնամու զորությանը, կռվին մասնակցեց միայն առաջին գծի մի մասը։ Մնացած զորքը խնայվեց, իսկ երկրորդ՝ պահեստային գիծը նույնիսկ մարտական պատրաստության կարիք չզգաց։ Արդյոք այս ամբողջ իրողությունը (հայերը դա երազել անգամ չէին կարող) արևի պես պայծառ ապացույց չէ՞ր, որ յոթ գյուղի բնակչության վիճակը փայլուն էր, և եթե Դամլաջրքի բանակն առանց կորուստներ տալու մի ամբողջ վաշտ գրոդի ծոցն ուղարկեց, ապա կկարողանա դիմադրել նաև չորս վաշտի։ Նույնիսկ ծայրահեղ հոռետեսներն ստիպված էին իրենց հարց տալ, թե կառավարությունը Դամլաջրքի դեմ ուղարկելու համար որտեղի՞ց պետք է գտնի ավելորդ գումարտակներ ու գնդեր, երբ Ջեմալ փաշան ամեն կերպ ջանում է համալրել իր չորրորդ կիսատ-պռատ բանակը։

Եթե հոռետեսներն էին փորձ անում նման բաներ մտածել, ապա ինքնին հասկանալի է, որ լավատեսների կարծիքով այսքան հիմնավոր դաս առնելուց հետո Թուրքերն այլևս չէին կրկնի հարձակումը, և առայժմ փրկված էր Մուսա լեռանն ապավինած հայորդիների կյանքը։

Այս փառահեղ ժամերին ապագայով մտահոգված էին միայն «քաղաքական գլուխները»։ Իսկ հասարակ ժողովուրդն անկարագրելի ցնծության մեջ էր։

Երբ պատանի բանբերները մարաթոնյան շնչակտուր վազքով իրենց գցեցին ճամբար և ավետեցին հաղթանակը, Տեր-Հայկազունը կանչեց մուխթարներին, քահանաներին, ծառայությունից ազատ ուսուցիչներին և ամբողջ ժողովրդի գլուխն անցած՝ շարժվեց դեպի ռազմադաշտ։

Այդ պահին Գաբրիելը Զաուշ Նուրհանի, Ավագյանի և խմբապետների հետ կարգավորում էր գիշերային հերթապահության գործը։ Կռվին մասնակցած զինվորներին փոխարինեցին երկրորդ խրամատի մարդիկ։ Հոգնած ռազմիկներին տրվեց քսանչորսժամյա արձակուրդ։ Այդ ժամանակամիջոցը նրանք կարող էին անցկացնել Քաղաքաձորում, իրենց հարազատների հետ։ Սակայն Զաուշ Նուրհանը չհանդուրժեց, որ հաղթանակած զինվորները ճամբար վերադառնան իբրև «կեղտոտ խոզեր»։ Անդրդվելի Զաուշը հոգնած մարդկանց ստիպեց շարքի կանգնել, խմբերի բաժանեց, կազմեց պատկառելի մի զորասյուն, որը և մայր մտնող արևի շողերի տակ, թմբուկների որոտի և իր շեփորի բարբարոս ոռնոցի ուղեկցությամբ, առաջնորդեց դեպի Քաղաքաձոր։ Բայց ճանապարհի կեսն էլ չէին անցել, երբ իրար հանդիպեցին զինվորներն ու ժողովուրդը։ Նուրհանի պես փորձված գայլն անգամ այլևս չկարողացավ պահպանել կարգ ու կանոնը։ Գեղեցիկ զորասյունը վերածվեց խառնաշփոթ հորձանուտի։

Այդ պահին Գաբրիելի վրա տարօրինակ հոգնածություն եկավ։ Նրան թվաց, թե գոյություն ունի երեք Գաբրիել՝ մտերիմ, վաղածանոթ Գաբրիելը, նոր Գաբրիելը, որը խաբեբայորեն իրեն չվայելող զարհուրելի գործեր է բռնում, ապա՝ երրորդ Գաբրիելը՝ իսկականը, ճշմարիտը։ Բայց սա էլ անմարմին և անհայրենիք երևում էր մյուս երկուսի միջև։ Իսկական Գաբրիելին այնպիսի թմբիր էր պարուրել, որ նա չհասկացավ էլ Տեր-Հայկազունի խոսքերը.

— Ոչ միայն մեր մարդկանց քաջությունը... Այլև Ձեր ռազմական պլանը... Բազմաթիվ շաբաթներ առաջ... Հնարամիտ աշխատանք... Որին երախտապարտ ենք... Խիստ կարգապահությունը մեզ կօգնի նաև հետագայում... Արժանի լինել աստծո շնորհին...

Գաբրիելն իրեն զգաց մեծ իրագործության շեմքին։ Շուրջն ավելի շատ վայրի ցնծություն էր տիրում, քան ընդհանուր հեկեկանք, թերևս այդ երկուսի զարմանալի միաձուլումը, ցնցված սրտերի ընդերքից պոռթկացող ինչ-որ քաղցրագի մի բան։ Հազարավոր մարմիններ էին իր կողմը նետվում, կարոտով հպվում։ Ի՞նչ ամոթխած կանացի դեմքեր, ի՞նչ խոնարհ աղջկական ճակատներ։ Բոլոր կանայք եկել էին իրենց

զուգսերով ու զարդերով, որոնց զնգոցը միախառնվել էր ձայներին։ Ձեռքե՞ր, շարունակ ձեռքե՞ր էին պարզվում իր ձեռքերը բռնելու, շարունակ շուրթե՞ր էին հպվում իր ձեռքերին։ Դա ինչ-որ գերերկրային խոնջենք էր, ինչ-որ մարում։ Ձայների մի ամբողջ անվերծանելի լաբիրինթոս նրան շնորհակալություն էր հայտնում, գլխին տեղում հարյուրապատիկ օրհնանքի տարափ։ Նա մարդկանց ոչ միայն դուրս էր բերել տարագրության սահմաններից, այլև անապատում փրկել էր մահից։ Այժմ էլ ահա մարդկանց տոգորեց անսահման հույսով, կյանքի աներեր հավատով։

Կարճատև, բայց իսկ և իսկ առասպելական թագաղրություն։ Երևի հեռավոր անցյալում հենց այդպես են թագավոր ընտրել հնադարյան ցեղերը՝ ոչ թե ամենազորեղ և ամենադաժան մարդուն, այլ նրան, ով արժանահիշատակ նախնիների շառավիղն է, կատարյալին, որը մոտ է թվում, բայց անհասանելի է, արդեն կիսով չափ օտարացած, որն ամենամտերմական շրջապատում անգամ յուրային չէ, անհասկանալի է, իր դաժանության մեջ՝ մեղմ, մեղմության մեջ՝ դաժան։

Բայց Գաբրիելի ներսում իշխում էր ոչ թե բերկրանքը, այլ երաշխառն մի տվայտանք։ Իր արածի մեջ ոչ մի առանձին արժանիք չէր տեսնում։ Ճակատամարտի ամեն մասնակից էլ նույն ձևով կղեկավարեր Դամլաշքի պաշտպանությունը։ Հաղթանակ բերեց ոչ թե խորաթափանցությունը, այլ տեղանքի բնական առանձնահատկությունը։ Մուխթարներն իրենց ալեհեր գլուխները խոնարհում էին Գաբրիելի առաջ։ Նույնիսկ կամակոր գյուղացիները, որոնք փարիզեցուն միշտ էլ խեթ-խեթ էին նայում, այժմ բռնում էին ձեռքը, համբուրում, իբրև իրենց հոր ձեռքը։ Այս աջհամբույրից Գաբրիելը սոսկում էր։ Նրա աջ ձեռքը հուսահատորեն մաքառում էր։ Ինչպե՞ս կուզենար ձեռքը թաքցնել գրպանում։ Դանդաղ ճանապարհ բացեց հոծ բազմության միջով։ Միայն մի ցանկություն ուներ, անտանելիորեն զորեղ ցանկություն. սափրվել, լողանալ, մաքրվել ոտքից գլուխ, ապա մարմնի վրա զգալ մետաքսե ննջազգեստի փափկությունը։ Բայց բազմությունը հետզհետե ավելի էր նրան օղակում, աջը համբուրում, շնորհակալության խոսքեր հեղեղում։ Օգնություն հայցող հայացքով շուրջը նայեց, որոնեց մտերմիկ մի դեմք։ Վերջապես գտավ Իսկուհուն։ Աղջիկն սկզբից ևեթ հետևել էր նրան, բայց չէր մոտենում։ Գաբրիելը ձեռքն առաջ մեկնեց, կարծես աղջկա փխրուն մարմինը կարող էր իրեն զորավիգ լինել։ Իսկուհին տեսավ, որ նա սոսկալի գունատ է, օգնության կարոտ։ Այդ բանն զգալուն պես կառչեց նրա արմունկից։

— Ժուլիեթն արդեն սպասում է և ամեն ինչ նախապատրաստել է,— մրմնջաց աղջիկը։

Գաբրիելն ավելի շուտ լսեց ոչ թե բառերը, այլ հպումը։ Իսկուհին նրա կողքից քայլում էր իբրև կույր մարդու ուղեկցուհի։

Հանկարծ Գաբրիելը զարմացավ, որ այդքան արյունն ու մահն իր վրա ոչ մի տպավորություն չթողեցին։

Վրանում գյուղական վարսավիրներից մեկը նրան սափրեց, ապա գլխավոր հրամանատարը եռանդով անցավ լոգանքի։ Ժուլիեթն օգնում էր։ Ջուրը տաքացրել էր կաթսայով, լցրել խողովակավոր ջրամանի մեջ, պատրաստ դրել խավոտ սրբիչը, ամուսնու ամենասիրելի ննջազգեստը։ Գաբրիելը լողանում էր, իսկ կինն սպասում էր վրանի առաջ։ Ցնցած երկար տարիներ ամուսնացած էին, բայց նման դեպքերում իրարից դեռևս քաշվում էին։ Ահագին ժամանակ անցավ։ Գաբրիելը կոշտ խոզանակով մաշկն այնքան մաքրեց, մինչև կաս-կարմիր կտրեց։ Որքան եռանդով էր խորասուզվում այդ գործի մեջ, որքան անողոք վճռականությամբ էր իր վրայից քերում թափում անցած օրը, նույնքան դժվարությամբ էր ի մի հավաքում խոհերը։ Նույնիսկ իր մարմնի հիասքանչ մաքրության միջից, մաքրություն, որը նա շուտով վայելեց, այլևս չէր հառնում Յողոնսլուք եկած նախկին «վերացական մարդը»։ Գաբրիելն իր վաղեմի դեմքը տեսնում էր Ժուլիեթի հայելու մեջ, որի երկու կողմում մոմեր էին դրված։ Բայց հոգում ինչ-որ գերլարվածություն կար, ինչ-որ անմեկնելի բան։

Կնոջ մեղմ ձայնը նրան սթափեցրեց.

— Վերջացրի՞ր, Գաբրիել։ Կարո՞ղ եմ ներս գալ։

Եվ Ժուլիեթը ներս եկավ՝ հնազանդ, քան երբևէ, առանց հավակնության, հեզահամբույր, թեև այդ հեզության մեջ ինչ-որ դարանակալ բան կար։

— Ջուրը դուրս տանենք,— ասաց նա պատրաստակամորեն, առանց սպասավորներից մեկնումեկին կանչելու։

Երկուսով դուրս բերին ռետինե լոգարանը, շուռ տվին վրանի ետևում։ Գաբրիելը Ժուլիեթի մոտ նկատում էր քնքշապարար պատրաստակամություն։ Խոր հուզմունքով դիմավորեց, հոգ տարավ, շնորհակալություն հայտնեց, որ ամուսնուն ուրիշներն սպասարկեն։ Թերևս հասել էր այն ժամը, երբ նրա օտարությունը հալվել էր, ձուլվել ամուսնու էությանը, ինչպես Փարիզում։ Գաբրիելն էր իր օտարությունը խոնարհում կնոջ առաջ։ «Բայց որքա՞ն պետք է տևի այս բանը»,— հարցնում էր Գաբրիելն ինքն

իրեն, քանի որ այդ օրվա հաղթանակից հետո այլևս չէր հավատում փրկությանը։

Պարանով փակեց վրանի մուտքը։ Ժուլիեթին դորովանքով քաշեց դեպի անկողինը։ Պառկեցին գրկախառնված, անխոս։ Ժուլիեթը նրան փայփայեց նոր, հլու քնքշանքով։ Արցունքներն այլևս չկարողացավ զսպել, երբ դողդոջուն ձայնով շարունակ կրկնում էր.

— Այնպե՞ս էի վախենում, թե քեզ մի բան կպատահի...

Գաբրիելը նրան նայեց հեռո՞ւ-հեռվից, կարծես չէր էլ զգում կնոջ խանդաղատանքը։ Ինչ-որ բիրտ ուժ խլում էր խոհերը, տանում դեպի խրամատները։ Երանի՞ պահակներն այսօր անհոգ չլինեն, քնով չլինկեն կամ մոռացության չտան հերթափոխությունը։ Ո՞վ գիտե, թե թուրքերը գիշերով չեն հարձակվի։ Գաբրիելն արդեն ո՞չ իրեն էր պատկանում, ո՞չ Ժուլիեթին։

Հաղթանակի տոնախմբությունը տևեց մինչև լույս։ Շա՜տ հարիսա կերան, շա՜տ գինի խմեցին, ինչպես տնօրինել էր ներքին կարգապահության կոմիտեն։ Տեր-Հայկազունը չնկատելու էր տալիս։

Գիշերվա հերոսը Ջաուշ Նուրհանն էր։ Նրան շնորհեցին «էլլեոն»[1] պատվանունը։ Ամենահին ժամանակներից ի վեր հունարեն այս բառով էին մեծարում խիզախ այրերին։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Դրամների տիրապետությունը

Ուսա լեռան բարձունքներում մարտունակ վաշտի կրած խայտառակ պարտությունը ծայրահեղ շփոթություն առաջացրեց Անտիոքի կառավարչատներ։ Թուրքական վահանի վրա դա մնալու էր իբրև ամոթալի բիծ։ Ամեն ռազմամոլ ցեղի հզորության վավերացումը կամ անկումը կապված է տնտեսական անպարտելիության ջուրքն

[1] Էլլեոն (հուն.)— ազատ

ստեղծած մոգական հավատի հետ։ Եվ նա ամեն կերպ ձգտում է անբեկ պահել այդ հավատը։ Անհաջող պատերազմի հետևանքով նման ցեղերը հաճախ տասնամյակներ շարունակ հետադիմում են, մինչդեռ մյուս ժողովուրդները, որոնք առանձնապես չեն հրապուրվում պատերազմներով, շատ ավելի դյուրին, ավելի արիաբար են տանում ռազմական ձախորդությունները։ Բայց ռազմատենչ, իշխող դասակարգի համար զարհուրելի նվաստացում է, եթե նրան արյունալի դաս է տալիս «ներքին թշնամին»՝ առևտրով, արհեստով և կրթությամբ հրապուրվող փոքրամասնությունը։ Զենքով հպարտացողների համար կյանքը կորցնում է իր ամբողջ իմաստը. չէ՞ որ ռազմական արհեստի պատիվը կործանարար չափով խարխլվում է, երբ բնածին հերոսներին հիմնավորապես ծեծկում է այդ ասպարեզից հեռու կանգնած մտավորական, փափկասուն մի ցեղ։

Այնպես որ օգոստոսի չորսի ընդհարումը, անկասկած, նշանակալից իրադարձություն էր։ Դա ավելին էր, քան Վանում և Ուրֆայում թուրքերի գլխին եկած ձախորդությունները։ Չէ՞ որ դրանք հայկական բազմամարդ քաղաքներ էին, որոնց ապստամբությունը ռուսական զորքերի առաջխաղացման արդյունք էր։ Արտաքին քաղաքականության տեսակետից Վանի ճարահատյալ ապստամբությունը թուրքերի համար չափից ավելի ձեռնտու էր։ Չէ՞ որ հենց այդ օրերին առաջ էր շարժվում կայսրության թշնամին, և թուրքերը հիանալի պատրվակ գտան աշխարհի առաջ համոզիչ կերպով արդարանալու, թե հայ ազգի դեմ կատարված ոճրագործությունը հարկադրական է։ Իբր թե ահա, պարզ ապացույց, որ հայերը պետական դավաճաններ են, և թուրքերն ստիպված են ազատվել նրանցից։ Պետությունը նման եզրակացության հանգեց առանց մաղաչափ անգամ իրար հետ բաղդատելու պատճառն ու հետևանքը։ Աշխարհի անագորույն, քարացած խիղճը, այն ժամանակվա պետական խմբավորումներին պատկանող մամուլը, այդ մամուլի ընթերցողների կոտած ուղեղը գործն այնպես շուտ տվեցին, այնպես մեկնաբանեցին, ինչպես կամենում էին։ Վանի մասին գրում էին զայրույթով, առավել զայրույթով կարդում. «Հայերը զենք են բարձրացրել ծանր պատերազմ մղող օսմանցի պետական ժողովրդի դեմ և անցել են ռուսների կողմը։ Հետևաբար, հայաբնակ վիլայեթները պետք է տարագրության միջոցով ազատվեն այդ ժողովրդից»։ Թուրքական հայտարարությունների մեջ կարելի էր կարդալ նման բաներ, բայց ոչ այն նենգափոխությունը, որով քողարկում էին բուն ճշմարտությունը. «Վանի և Ուրֆայի հայերը, երկարատև տարագրությունից հուսահատ-

ված, ինքնապաշտպանության նպատակով, այնքան դիմադրեցին Թուրքական ռազմական իշխանությանը, մինչև ազատագրվեցին ռուսների առաջխաղացման շնորհիվ»։

Բայց, փա՛ռք աստծո, ի՞նչ կարող էին գրել ու կարդալ Մուսա լեռան ապստամբության մասին։ Քաղաքական տեսակետից դա ոչ մի արժեք չէր ներկայացնում, մինչդեռ դրան վերաբերող լուրերը կարող էին վտանգավոր լինել։ Եթե տարբեր վայրերում Բագրատյանի նման մի քանի հոգի էլ լույս ընկնեին և հետևեին Մուսա լեռան օրինակին, կարող էին լուրջ դժվարություններ առաջ կանգնեցնել ամբողջ պետությունը։ Եվ քանի որ ամեն հայ մարդու գլխին մահն էր սավառնում, իսկ ամենուրեք կարելի էր զենք ձեռք բերել, ապա նման բարդություններ կարող էին ծագել նորից ու նորից։

Անտիոքի քաղաքացիներից առայժմ թաքցնում էին խայտառակությունը, բայց նրանք տեսնում էին, որ կայմակամի խորհրդարանում մինչև ուշ գիշեր լույս է վառվում։ Վատ բան էին կռահում։ Կայմակամը հրավիրել էր գավառական մեծ կոնֆերանս, որին մասնակցում էին մոտ տասնչորս հոգի։ Ինքն էր նախագահում։ Ամեն անգամ, երբ շունչ էր քաշում, թվում էր, թե սեղանը նրա փքված մարմնի ճնշումից կարող է տեղահան լինել։ Գավառապետի լերդախտավոր դեմքը, աչքերի տակ գոյացած սևագորշ տոպրակները նավթի լամպի կաթնագույն, խաղաղավետ լույսի տակ թվում էին ավելի դալուկ։

Բորբոքված խորհրդականները երկարաշունչ ճառեր էին արտասանում։ Բայց կայմակամը խորասուզված էր հոգսաշատ մտորումների մեջ։ Խնամքով ածիլված ճապաղ այտերը թույլ-թույլ կախվել էին լայն օձիքն ի վար, իսկ ֆեսը թեքվել էր ձախ քունքի վրա։ Զգացվում էր, որ տրամադրությունն ընկած է, և քունը տանում է։ Աջ կողմում նստած էր Անտիոքի ռազմական պարետը՝ ալեխառն բեղերով մի մայոր։ Դա հին ոճի բինբաշի էր։ Մանր աչքեր ուներ, պատանեկան կարմիր այտեր։ Հեռվից հեռու նկատելի էր, որ այդ մարդը պատրաստ է իր հանգիստն ու հարմարավետ կյանքը հերոսաբար պաշտպանել մինչև արյան վերջին կաթիլը։ Կողքին տեղակալն էր՝ մի երիտասարդ յուզբաշի, մոտ քառասուներկու տարեկան մայոր։ Սա իր պետի հակապատկերն էր, ինչպես սովորաբար լինում է զինվորական ասպարեզում։ Կամք արտահայտող դիմագծերով և խորն ընկած աչքերով բարեկազմ, նիհար տղամարդ էր։ Գողունի հայացքով ներկաներին կարծես հասկացնում էր. «Ի՞նչ դժբախտություն է, որ ստիպված եմ հետս քարշ տալ այս քավթառած ապուշ բինբաշուն։ Ախր ինձ ճանաչում եք և գիտեք, որ ամեն ինչի մեջ ընդունակ եմ։ Ինչ գործի էլ ձեռք զարկեմ, գլուխ կբերեմ։ Չէ՞ որ ես Իթթիհադի սերնդից եմ»։

Ջախջախված վաշտի դասակապետներից մեկը, միակ մյուլազիմը, որն օգոստոսի չորսի ջարդից հետո կենդանի էր մնացել, և որին Գաբրիելը մերկանդամ վիճակում ուղարկել էր Անթաքիե, իբրև պատվիրակ, կանգնած էր խորհրդականների առաջ և տեղեկություններ էր տալիս։ Նրան չէր կարելի մեղադրել, որ իրենց դժբախտությունն արդարացնելու համար հայերի պաշտպանական ուժը նկարագրում էր վերին աստիճանի ահավոր գույներով։ Նրա ասելով, Մուսա լեռան բարձունքներին, հզորագույն ամրություններում, ապաստանել էին տասը-քսան հազար հոգի։ Տարիների ընթացքում պետք է որ ահագին քանակությամբ հավաքած լինեին զենք, ռազմամթերք և պարեն։ Կարող էին դիմադրել անսահմանափակ ժամանակով։ Ինքը՝ մյուլազիմը, սեփական աչքով տեսել էր երկու քողարկված գնդացիր, որոնք և վճռել էին ընդհարման աղետալի ճակատագիրը։ Դրան ավելացրած ուժերի տասնապատիկ գերազանցությունը։

Կայմակամը ոչ մի բառ չէր ասում։ Գլուխն աջ ձեռքին հենած՝ հայացքը հառել էր օսմանյան կայսրության ռազմական քարտեզին, որը փռված էր կոնֆերանսի սեղանին, թեև խոսքն այդքան մեծ գործի չէր վերաբերում։ Բայց թե հյուքյումեթի պաշտոնյաները զվարճանում էին, երբ փոքրիկ դրոշակներ էին տնկում ռազմաճակատի գծերի վրա։ Չնայած նրանց այդ բարյացակամ արվեստին, ապագան այնքան էլ վարդագույն չէր թվում։ Դրոշակները շարունակ մխրճվում էին Թուրքիայի մարմնի մեջ։ Էնվեր փաշայի գլխավորած պատերազմի վիճակով չէր արդարանում գեներալի փառքը։ Կովկասյան բանակի լավագույն զորագնդերը հողին չհանձնված կմախքներով էին ծածկում անանցանելի լեռնաշխարհի հովիտներն ու ծերպերը։ Մինչդեռ ռուսներն արդեն կանգնած էին Պարսկաստանի սահմանագլխին, նայում էին դեպի Մոսուլ, հետապնդում էին Ջեվդեդ փաշային՝ հայտնի ջարդարար գեներալին, Էնվերի քրոջ ամուսնուն։ Անգլիացիներն իրենց հնդիկների ու ղուրքաների* հետ նեղն էին լծել Միջագետքը։ Ջեմալի ձեռնարկած սուեզյան մեծադղորդ արշավանքը ավազի տակ թաղվեց բառիս ամենախկական իմաստով։ Անապատի ավազը կուլ տվեց թե՛ մարդկանց, թե՛ զինամթերքը։ Գալիպոլի թերակղզուց, իրենց նավատորմերի հսկայական հրանոթների պաշտպանությամբ, դաշնակիցներն արդեն մոտենում էին Ստամբուլի դարպասներին։ Նման հանգամանքներում սոսկալի շատ էին վատնվում սպանության միջոցներն ու ռազմական այլ սարքավո-

ռումները։ Մինչդեռ Թուրքիան ռազմական արդյունաբերություն չուներ կամ գրեթե չուներ։ Նրա բախտը կախված էր էսսենցի Կրուպի և պիլզենցի Շկոդի ողորմածությունից։ Մահ արտադրող այս կենտրոններն այլևս չէին կարողանում պատշաճ ձևով բավարարել իրենց մերձավոր պատվիրատուների անչափելի պահանջները։ Ամեն օր վիթխարի քանակությամբ թնդանոթներ էին արտադրվում, հոբիցներ, մորտիրներ, գնդացիրներ, ձեռքի և գազի ռումբեր։ Դրանց միայն մի չնչին մասն էր խնայողաբար արտահանվում Թուրքիա։ Տեղ հասնելուն պես ամեն ինչ անհապաղ ուղարկվում էր տարբեր ռազմաճակատներ։ Պատճառն այն էր, որ պետության ճակատամերձ լայնածավալ շրջանները դատարկվել էին. ո՛չ զորք կար, ո՛չ զենք, ո՛չ զինամթերք։ Ահա թե ինչու Սիրիայում գտնվող չորրորդ բանակի վիճակը վատթարագույնն էր, մանավանդ որ Ջեմալ փաշան նախապատրաստում էր սուեզյան երկրորդ արշավանքը և իր տնօրինությանը հանձնված բոլոր զորքերը դանդաղ քաշում էր Պաղեստին։ Համենայն դեպս, Դամասկոսից և Երուսաղեմից անընդհատ զորքի, ռազմական միջոցների, պարենի հրատապ պահանջ էր գալիս սիրիական քաղաքները։ Գնդացիրներն արդեն դարձել էին անհրաժեշտ երազանք։ Երբ կայմակամն այդ բառը լսեց խեղճ մյուլազիմի բերանից, իր ծանրահայաց աչքերով մտացրիվ նայեց նրան, զարմանքով քրթմնջաց.

— Գնդացի՞ր։

Մանկական կարմիր այտերով բարեհոգի ծեր մայորն ակնոցը դրեց քթին, թեև որևէ բան չէր կարդալու։ Դրանով երևի ուզեց միայն ցույց տալ, որ ինքը բոլորից հեռատես է։

— Դժբախտությունը պատահել է ձեր հիմարության և թերթամտության պատճառով,— գլուխը մյուլազիմի կողմը դարձնելով՝ վրա բերեց նա։— Կարգը պահանջում է, որ մարդ հարձակումից առաջ հետազոտի թշնամու տերիտորիան։ Բայց քանի որ բանը բանից անցել է, կայմակամին ուզում եմ հարց տալ։ Ի՞նչ ես մտադիր անել։ Մեր մարդկանց շարունակենք զոհե՞լ, թե՞ թողնենք, որ այդ անիծվածները իրենց սարի գլխին հանգիստ փչեն շունչները։ Ի՞նչ վնաս կարող են տալ։ Տարագրելը ձեր գործն է, ոչ թե մեր։ Ինքներդ էլ դրանց հաշիվը կփակեք։ Եթե, իրոք, տաքը հազար հոգի կա զինված կամ ավելին...

Շիկահեր մյուդիրը ձայն խնդրելու համար ձեռքը բարձրացրեց։

— Ո՛չ հինգ հարյուր հոգի կա զինված, ո՛չ էլ երեք հարյուր։ Ես պարտավոր եմ այդ բանն իմանալ, քանի որ նահիյեհների գործերը ինքս եմ վարում և եղել եմ գյուղերում...

Մայորն ակնոցն իջեցրեց նույնքան աննպատակ, որքան աննպատակ դրել էր.

— Ամենից լավն այն կլինի, որ խաչ քաշենք այս գործի վրա։ Անիծվածներն իրենք են իրենց տարագրել։ Էլ ի՞նչ եք ուզում։ Ծովեզերքին ի՞նչ մարդիկ առնք, որ չեն ապրում՝ հույներ, արաբներ։ Դրանց աչքի առաջ արժե՞ ծիծաղելի պատերազմ բորբոքել։ Եթե ամբողջ քաղաքի առանձին կայազորներն իրար գլխի հավաքեմ, հազիվ թե չորս կանոնավոր վաշտ ստացվի։ Կարող եմ բերել չեչեններ, քրդեր, ամեն կարգի սրիկաներ, բայց դրանք ավելի շուտ ձեր դեմ կկռվեն, քան հայերի։ Ուստի և հավատացեք ինձ. ամենախելացի բանը լռելն է։

Փոս ընկած աչքերով կատաղած յուզբաշին մի ժամից ավելի ծխում էր գլանակ գլանակի ետևից, բայց ոչ մի բառ չէր ասում։ Այժմ ոտքի ելավ և հարգալիր պատվի առավ իր վերադասին.

— Բինբաշի էֆենդի, թույլ տուր, որ ամենայն խոնարհությամբ զարմանամ խոսքիդ վրա։ Ինչպե՞ս կարող ենք այս ծանր դժբախտությունը լուծության մատնել, երբ սպանվել են մի վաշտապետ, երեք սպա, ավելի քան հարյուր զինվոր։ Արդեն աննեղելի վրիպում է, որ մենք այստեղ մի քանի ժամ ծամծմում ենք ուղարկվելիք զեկուցագիրը։ Կոնֆերանսից անմիջապես հետո և քո հրամանով կկազմեմ գերագույն հրամանատարին ուղղված զեկույցը։

Մայորը սսկվեց։ Այտերն ավելի կարմրեցին։ Նախ, կապիտանն իրավացի էր (նա միշտ իրավացի էր) և, ապա՝ սատանայի մեկն էր։

Կայմակամը կարծես նոր միայն սթափվեց իր մտամոլոր թմրությունից.

— Պատմությանը վերջ կտամ կատարված գործողության շրջանակում։

Սա բյուրոկրատական զգուշավոր արտահայտությունն էր այն բարդ որոշման, որի մեջ մեծ դեր էր խաղում Հալեպի վալու հանդեպ ունեցած երկյուղը։ Ամենօրյա հրամանները պահանջում էին տարագրությունն իրագործել լիակատար և կայծակնային արագությամբ։ Յոթ համայնքի ապստամբությունը կարող էր կայմակամի քթից դուրս գալ, քանի որ դա կիպատ-պռատ զինաթափության, անփույթ հսկողության հետևանք էր։ Եթե ճշգրիտ տեղեկությունները հասնեին վալուն, սա և Իթթիհադը սև կբերեին կայմակամի գլխին։ Այս իսկ պատճառով էլ զեկուցագիրը պետք է մեղմ, կոծկող բնույթ կրեր։ Ներունի մայորը խայթեց.

— Ինչպե՞ս վերջ կտաս, երբ զափթիեներդ տարագրության քարավաններն են ուղեկցում, իսկ զինվորները ռազմաճակատում են։— Աչքերը

կկոցեց և կրճատացող հայացքը գամեց կապիտանի դեմքին։— Բայց քեզ, յուզբաշի, հրամայում եմ. գերագույն հրամանատարին ուղարկվելիք զեկուցագրում պահանջիր չորս գումարտակ, լեռնային մեկ մարտկոց, քանի որ առանց զորքի և հրետանու մենք չենք կարող պաշարել ահագին լեռը։

Յուզբաշին ձևացրեց, թե չի նկատում ծերունու զայրույթը.

— Բինբաշի էֆենդի, ես հասկացա քո հրամանը։ Նորին գերագանցություն գեներալ Ջեմալ փաշան կարգադրել է ամեն խնդրի առթիվ զեկուցել անձամբ իրեն։ Կարող ես վստահ լինել, որ քեզ կընդառաջի։ Հայերի տարագրությունը նրա բարեկամների գործն է։ Նա չի հանդուրժի, որ մի քանի քոսոտ քրիստոնյա գյուղացի խաղ խաղան գլխիդ։

Մեծ մարդու անունը խորհրդականների մոտ առիթ տվեց տարբեր կարծիքների։ Ավելի երիտասարդ մյուդիրներից մեկը նույնիսկ պնդեց, թե Ջեմալ փաշան, չնայած կառավարության մեջ գրված իր բարձր դիրքին, հայկական հարցում այնքան էլ վստահելի մարդ չէ։ Անգամ Ադանայում դաշինք է կնքել այդ հայերի հետ։ Կայմակամը, որին դարձյալ հաղթահարում էր թմբիրը, արդեն կայացրել էր իր վճիռը։ Պետք է միանար առավել զորեղ մարդուն՝ կապիտանին, ամբողջ մեղքը գցեր ծեր բինբաշու վրա։ Բոլոր դեպքերում քավության նոխազը գտնված էր։ Ի՞նչ փույթ, եթե նույնիսկ ստիպված լինեին գործն առաջ շարժել դանդաղ ու համբերությամբ։ Կայմակամը խոր հորանջեց, գավազանի փղոսկրե գլխով հարվածեց սեղանին.

— Նիստը հայտարարում եմ ավարտված։ Բինբաշուն խնդրում եմ մի քիչ էլ մոտս մնա, որ իրար հետ համաձայնեցնենք քաղաքացիական և զինվորական իշխանություններին ուղարկվելիք զեկուցագրերը։ Բինբաշի՛ էֆենդի, ես ուզում եմ, որ այդ զեկուցագրին տաս քո հավանությունը։

Հաջորդ առավոտյան ճանապարհ ընկան երկու երկարաշունչ և ճոռոմ հաղորդագրություն։ Խիստ պատասխան ստացվեց միայն հինգ օր հետո։ Հրամայված էր՝ ունեցած միջոցներով և բոլոր պարագաներում անհապաղ մաքրել Մուսա լեռան հաշիվը։ Բինբաշուն զիջել էին միայն 10 սանտիմետրանոց դաշտային երկու հոբից։ Դրանք Համայից պետք է բերվեին Հալեպ, ապա՝ Անթաքիե։

Հրանոթները տեղ հասան յոթերորդ օրը, օգոստոսի 12-ին։ Սպասարկող անձնակազմի մեջ էին մի շատ երիտասարդ լեյտենանտ, երեք ենթասպա, երեք պահեստային ծեր թնդանոթաձիգ և երկու կեղտոտ սպասավոր։ Այս հոբիցները լեռնային վայրերում կարելի էր օգտագործել մեծ դժվարությամբ։

Ստեփանը, անշուշտ, ավելի ծանր վիճակի մեջ էր, քան հայրը, որն իր մանկական հիշողություններով կապված էր Մուսա լեռան հետ։ Տղան հասակ էր առել Եվրոպայում, ֆրանսիացի երեխաների շրջապատում և մինչև Յողոնօլուք գալը, իր ժողովրդին պատկանող մարդկանցից ճանաչում էր միայն այն հորեղբայրներին, հորաքույրներին, հեռավոր ազգականներին ու բարեկամներին, որոնք Բագրատյան ամուսիններին այցելում էին Փարիզում, Շվեյցարիայում ու Ստամբուլում։ Սրանք բոլորն էլ նման էին եվրոպացիների, Ստեփանի հետ խոսում էին սահուն ֆրանսերենով։ Ուստի և տղային չէր կարող չզարմացնել այն մեծ փոփոխությունը, որը տեղի ունեցավ, երբ տղան առաջին անգամ ոտք դրեց պարոն Շատախյանի դպրոցը։ Կարճ ժամանակամիջոցում կարծես անհետ ջնջվեց Եվրոպայում ապրած տասնչորս տարին, այսինքն՝ Ստեփանի ամբողջ անցյալը։ Եթե կարելի է այսպես ասել, նա վերադարձավ իր ժողովրդի գիրկը, ընկղմվեց նրա էության մեջ՝ տասնապատիկ ավելի խոր, ավելի հիմնավոր ձևով, քան հայրը։ (Զարմանքով պետք է նաև մտածել, որ եթե այս երեխան խորհրդավոր ճակատագրի քմայքով չընկներ Սիրիա, հավանաբար ոչ մի կենդանի պատկերացում չէր ունենա իր ազգային պատկանելության, ուրեմն և իր բուն էության մասին)։ Գաբրիելի բանն այլ էր։ Նոր արմատավորումը հետևանք էր անհրաժեշտության և կամքի։ Այդպես էլ պետք է լիներ։ Նրան առաջ էին մղում իրողության ուժն ու այն զորությունը, որ նա զգում էր իր թիկունքին։ Բայց որքան մոտենում էր իր արյան հայրենիքին, այնքան հեռանում էր, ավելի, քան այդ հայրենիքից լրիվ կտրված Ստեփանը։ Իր ամուսնությամբ նա արդեն կանգնած էր երկու ազգի արանքում։ Սկզբում կարծում էր, թե գոհհկություն արած կլինի, եթե օտարական լինելով՝ տեղացիների վզին փաթաթի իր փրկության ծրագիրը։ Երևի դա էր պատճառն այն հանդիսավոր, բայց և ընկճված ինքնազգացման, որով Գաբրիելը համակված էր օգոստոսի չորսի հաղթանակից հետո։ Ստեփանի ինքնազգացումն այլ էր։ Չնայած երակների մեջ երկու տարբեր արյուն էր հոսում, մայրական կողմը կարծես կորցրել էր իր զորությունը։ Ժուլիեթը, իբրև կին, ավելի շատ էր ազդում Գաբրիելի բնավորության վրա, քան իբրև մայր՝ Ստեփանի բնավորության ձևավորման վրա։ Հաճախ կարելի էր կարծել, թե տարբեր արյունների միախառնումից ոչ թե որդին է օտարացել, այլ հայրը։ Ստեփանի մեջ ամեն ինչ զարգանում էր շատ հստակ։ Նա դարձել էր հայ արևելցի տղա, ինչպիսիք էին շրջապատի բոլոր դպրոցական պատանիները։ Պատճա՞ռը։ Այլ կերպ վարվել չէր կարող։ Ինքնավստահ և միաժամանակ կապկային ճկունությամբ օժտված

անշափահասներին մոգաշափ անգամ հարգանք չէին ներշնչում ո՛չ Ստեփանի նրբակիրթ շարժումները, ո՛չ էլ գիտելիքները։ Ո՛չ գրավոր ու բանավոր գեղեցիկ ֆրանսերենն էր օգնում, ո՛չ այն, որ տղան հիանալի անգիր էր ասում Լաֆոնտենի առակներն ու Վիկտոր Հյուգոյի բանաստեղծությունները, ո՛չ էլ աշխարհագրական փայլուն գիտելիքները։ Ինչ վերաբերում էր աշխարհագրությանը, Յողոնօլուքի տղաներն ու աղջիկներն ունեին իրենց սեփական ըմբռնումը։ Ջիվանու երգի «ուսյալ զավակ» ինքնավստահ արտահայտությունը նրանք շատ տարօրինակ ձևով էին մեկնաբանում։ Երբ Ստեփանը նրանց պատմում էր եվրոպական քաղաքների մասին, ծիծաղում էին վրան, համարում անճարակ, հեքիաթ փչող։ Ծիծաղում էին, երբ տղան դասագրքերը դնում էր թևի տակ և ոչ թե գլխին, ինչպես ընդունված էր հինավուրց սովորությամբ, և որը նրանց միակ թույլատրելի ձևն էր թվում։ Չէ՞ որ կանայք էլ աղբյուրից ջրով լի սափորները բերում էին ոչ թե թևերի տակ, այլ նազանքով գլուխներին կամ ուսերին դրած։ Այ թե դմբո բաներ են այդ եվրոպացիք։ Նման դեպքերում Ստեփանին դիմում էին ժողովրդական հայտնի առածի ոգով.

— Ձերոնք ուղտին գդալո՞վ են ջրում։

Մուսա լեռան կոշտ ու կոպիտ գեղջուկ պատանիները կատարյալ հակապատկերն էին Շատախյանի տիպի մտավորականության, որը երկյուղածությամբ գլուխ էր խոնարհում արևմուտքի ամեն նվաճման, եվրոպական գեղագիտության երանավետ շնչի (Ժուլիեթի) առաջ։ Խորապես համոզված էին, որ իրենց ժողովրդի կենսաձևն ավելի կատարյալ է, ավելի բարձր։ Գոյության ձևերի մասին միշտ էլ կարելի է վիճել։ Մարդ կա՝ թան է սիրում, մարդ կա՝ մածուն։ Նման ձևերի գերակշռությունը կամ թերությունը բնորոշվում է ոչ թե դրանց բացարձակ աստիճանով (բացարձակ աստիճան գոյություն չունի), այլ շրջապատի գերիշխանությամբ։ Ստեփանի միջավայրը, ուսումնական առաջին իսկ ժամին, ծաղրեց նրա անգլիական կոստյումը, լայն օձիքը, թեզանիքները, գուլպաները, թելավոր կոշիկները, հայտարարելով, որ դա ոչ միայն խենթի, այլև ցուցամոլի տարազ է։ Եթե Ստեփանը երես առած փափկասունի մեկը լիներ, հորն իսկույն կխնդրեր, որ իրեն այլևս դպրոց չուղարկի։ Բայց տղան ընդունեց մարտահրավերը։ Արդեն հայտնի է, թե ինչպես օրեր շարունակ մոր հետ վիճելուց հետո նրան հաջողվեց ձեռք բերել տեղական հագուստ կրելու թույլտվություն։ Շուտով արդեն շալվար, էնթարի հագած և լայն գոտի կապած՝ հպարտ-հպարտ պտտվում էր Յողոնօլուքի հրապարակում։ Թելավոր կոշիկները փոխարինել էր հողաթափերով։ Ժուլիեթը սարսափահար էր եղել։ Բայց տղային պաշտպան կտնգնեց Իսկուհին։

— Իսկ ինչո՞ւ չհագնի այդ շորերը,— հարցրեց նա։— Մի՞թե եվրոպական զգեստներից պակաս գեղեցիկ են։

Ժուլիեթը խեթ-խեթ նայեց որդուն.

— Կարծես դիմակահանդեսի համար վարձով բերած լինի...

Ստեփանը, որը գեղեցիկ պատանի էր, իր նոր տարազով նման էր պարսկական հին մանրանկարչության մեջ պատկերված սքանչելի արքայորդու։ Ժուլիեթը դա զգում էր, բայց ավելի շատ զգում էր, որ այդ արքայորդին արդեն ոչ մի ընդհանուր բան չունի իր որդու հետ։ Մայր ու տղա փոխադարձ համաձայնության եկան։ Ստեփանը «դիմակավորված» կարող էր գնալ դպրոց, բայց տանը պետք է հագներ իր «օրինավոր» շորերը։ Դամլաջրք փախչելուց ի վեր խախտվել էր այդ պայմանը։ Քանի որ տուն չկար, ապա «օրինավոր» հագուստի պահանջ լինել չէր կարող։ Այդ օրից տղան առհասարակ էնթարի և շալվար էր հագնում։ Ի դեպ Ժուլիեթը նրան երեք վրանի հրապարակում երբեմն էր տեսնում, այն էլ ճաշելիս և քնելուց առաջ։ Ամեն անգամ տղան հայտնվում էր հուզված, քրտնաթաթավ, անհամբեր։ Մայրն արդեն կորցրել էր իր ամբողջ ազդեցությունը։ Ստեփանը կարծես քաղաքակիրթ կյանքի հոտ անգամ չէր առել։ Ժուլիեթը նրա հետ հաճախ դժվարությամբ էր լեզու գտնում։

Այո՛, Ստեփանը փոխվել էր։ Բայց ոչ ոք չգիտեր, թե այս կերպարանափոխումը, հասարակացումը տղայից որքա՞ն ջանք խլեց։ Արդեն հագուստով նման էր բոլոր պատանիներին։ Բայց այդ հագուստն սկզբում ամոթալիորեն մաքուր էր, առանց պատռվածքների։ Նա գիտեր, որ մաքրությունը թուլություն է, մինչդեռ դա նստած էր իր ներսում։ Ոչ մի կերպ չէր կարողանում իրեն անկաշկանդ զգալ, երբ ցեխոտվում էին ձեռքերն ու ոտքերը, երբ սևանում էին եղունգները կամ սանրված չէին մազերը։ Մի անգամ, դեռևս Յողոնօլուքում, երբ Ստեփանի գլուխը ոջլոտվեց, և մայրը նավթի մեջ թաթախված թաշկինակը զզվանքով քսեց նրա մազերին, տղան իրեն խորապես դժբախտ զգաց։

Գյուղական երիտասարդության աչքին Ստեփանը միշտ էլ մի պակասություն ուներ։ Օրինակ, ոտքերը մնում էին քնքուշ ու սպիտակ, թեև ամեն կերպ ջանում էր ցեխոտել, փոշոտել, ամեն տեղ մագլցելով դրանք վնասել։ Միակ նվաճումն այն էր, որ արևից այրվեց, մաբմնի վրա բշտիկներ ու պալարներ հայտնվեցին։ Դրանց պատճառով ոչ միայն ցավից տանջվեց, այլև ենթարկվեց տնային բանտարկության։ Ինչպես էր նա-

խանձում իր ընկերների անվթար ոտքերին, գազանային դարշնագույն, կոշտ թաթերին, որոնք նրա համար անմատչելի էին։ Տղան դառնորեն տանջվեց, մինչև անցավ իր ընկերների շարքը։ Այդ բոլոր հայկերը, հակոբները, այդ անահիտներն ու սոնաները երկար ժամանակ նրա մեջ տեսնում էին նախկին վայրենուն։ Երբ դրվում է ուժի և իրավահավասարության հարցը, ապա բնության պարզ որդիներն անգամ դրսևորում են արտոնյալ վիճակի հասնելու կաստայական ատելի հակում։ Գեղջուկ տղաները Ստեփանին զգացնել էին տալիս, թե նա, իբր, իրենց հավասար չէ, իբր, նրա հայրական շողշողուն տունը՝ Ավագյանով ու բոլոր սպասավորներով հանդերձ, այնքան հարգանք չի ներշնչում, որ ճանաչեն իր «իսկությունը»։ Ստեփանը՝ այդ տարօրինակ փառասերը, ի՞նչ կարող էր ասպարեզ հանել այս գոտեմարտում. պատվախնդրություն, սեփական մարմնի մեջ ամբարվածից ավելի եռանդ և մի այլ առանձնահատկություն, որից զուրկ էին գյուղացի երեխաները։ Նույնիսկ Հայկը՝ տասնչորս տարին արդեն բոլորած այդ բարձրահասակ, մկանուտ պատանին, գեղջուկ տղաների անվիճելի հրոսակավորը, չուներ այն կուռ, կանոնավոր և նպատակասլաց մտածողությունը, որը Ստեփանն իր հետ բերել էր Եվրոպայից։ Արևելյի երեխաներն իրենց մտադրությունը մեծ մասամբ մոռացության էին տալիս, նախքան դրանք իրագործելը։ Իրենց փութանցիկ մտահղացումների և բնազդական մութ մղումների հորձանուտում գալարվում էին, ինչպես փոթորկի բերանն ընկած տերևներ։ Արձակուրդներին նրանք նման էին խրտնած հոտի, որն անիմաստ ու անծանոթ հուզումներից խթանված շարունակ դեսուդեն է նետվում, առանց որևէ նպատակի։ Երբ հսկողությունից ազատ ժամերին թռչունների երամի պես վրա էին տալիս որևէ այգու, դա դեռևս կարող էր համարվել նպատակասլաց «գործ»։ Բայց մեծ մասամբ շարությունն էին անում, կարծես մեջները սատանա կար նստած։ Մտնում էին լեռնային թավուտները, փովում ծանծաղ լճակների եզերքին կամ դուրս գալիս դաշտ, իրար քաշքշում, թավալվում գետնին։ Այս արշավանքները հաճախ ավարտվում էին կրոնական, ավելի ճիշտ՝ հեթանոսական արարողությամբ, որի մասին, բնականաբար, ոչ մի պատկերացում չունեին։ Շրջան էին կազմում, իրար գրկում, գլուխները օրորելով նախ մեղմ մռմռում, ապա հետզհետե բարձրացնում ձայները, շարժումներն արագացնում, մինչև բանը հասնում էր համատարած ոռնոցի ու զառանցանքի։ Ոմանց վրա այդ արարողությունն այնքան ուժեղ էր ազդում, որ նրանց աչքերն ակնակապիճներից դուրս էին գալիս, իսկ բերաններին փրփուր էր հայտնվում։ Նրանք միամտորեն կապկում էին դերվիշների միաբանությանը,

երկնում նրանց վաղածանոթ փորձը։ Չէ՞ որ դերվիշներն իրենց «ես»-ի էպիլեպտիկ հաղթահարումով փորձում էին խորհրդավոր փոխհարաբերության մեջ մտնել տիեզերական նախաստեղծ ոգիների հետ։ Երեխաները մեծերից այսպիսի բաներ չէին սովորել, բայց նման վերացման անհրաժեշտությամբ էր լցված այդ երկրի օդը։

Էքստազի պահերին եվրոպացի Ստեփանը, իհարկե, մի կողմ էր քաշվում, մոլորված նայում։ Հաղթամարմին, խելահաս Հայկը նույնպես չէր մասնակցում այդ պոռթկումներին։ Պատճառը, երևի, այն էր, որ նա լիովին գիտեր, թե ոգիներն ինչ պտուղ են, մինչդեռ մյուսներն այդ արբեցումը պետք է ըմբռնեին օրորվելով ու ոռնալով։

Հաճախ Ստեփանին հաջողվում էր նպատակասլաց որևէ բան ձեռնարկել։ Մի քանի անգամ հաջողության հասնելուց հետո նա կամացկամաց հեղինակություն նվաճեց։ Բայց ոչ մի կերպ չէր կարողանում իշխել իր հասակակիցների վրա։ Ինչ-որ ուժից զուրկ էր և չէր կարող զուրկ չլինել։ Դա այն ուժն էր, որ ամենազորավորն էր գեղջուկ պատանիների կյանքում՝ մարդու և բնության սրբազնագույն եղբայրացումը։ Այդ ուժը բառերով արտահայտել անհնար է։ Ինչպես լավ լողորդը ջրում կարող է պառկել, նստել, կանգնել, քայլել ու պարել, մարմնական անկարագրելի երանությամբ լինել «իր տարերքի» մեջ, այդպես էլ Մուսա լեռան զավակներն իրենց շրջակայքում հարազատ տարերքի մեջ էին։ Բնությունը չորս կողմից ներհյուսված էր նրանց հետ։ Հովից օրորվող ամեն տերև, ծաղից վայր ընկնող ամեն պտուղ, մողեսի հանած խշխշոցը, հեռու հեռավոր առվակի կարկաչը, բնության բոլոր հազարածալ խորհուրդները ոչ թե արտացոլվում, այլ անմիջականորեն գոյանում էին նրանց զգայարանների մեջ։ Կարծես այդ պատանիներից յուրաքանչյուրը մի Մուսա լեռ էր, որն ամեն ինչ իր ընդերքից էր լույս աշխարհ հանում։ Նրանց մարմինները նման էին նամակատար աղավնիների, որոնք կողմնորոշվում են գերմարդկային բնազդով և երբեք չեն մոլորվում։ Նրանց մարմինները նման էին մոգական բարակ, ճկուն գավազանների, որոնց ցնցող հարվածներով հայտնաբերվում են աշխարհի բոլոր գաղտնի գանձարանները։

Սրանց համեմատությամբ երկար ժամանակ անգործության մատնված Ստեփանի մարմինը բութ էր, չնայած տղան ճարպիկ էր, պատվախնդիր։

Բայց երբ ժողովուրդն ապաստանեց Դամլաջրքի վրա, երբ արդեն դադարեցին դատարկ արշավանքները, երբ երիտասարդներից պահանջվում էր կարգապահություն, նպատակասլաց գործունեություն, Ստեփա-

նի հեղինակությունն սկսեց բարձրանալ։ Իհարկե, որոշ դեր էր խաղում նաև հոր զորավարական աստիճանը, որի փայլն ընկնում էր նաև որդու վրա։

Անչափահասների զորաբանակը կազմված էր տասը-տասնհինգ տարեկան տղաներից։ Սակավաթիվ աղջիկներ էլ կային, որոնց տարիքը տասնմեկից չէր անցնում։ Չէ՞ որ այդ վայրերում տասներկուամյա աղջիկն արդեն համարվում է չափահաս։ Տեր-Հայկազունի հրամանով ազատ ժամերին պետք է դպրոց հաճախեին նաև հասուն տղաները։ Բայց դա չէր հաջողվում. ուսուցիչները, որոնք խրամատներում կամ գազթականում գործով էին զբաղված, պարապմունքներից խուսափում էին, այդ մտադրությունը համարելով միանգամայն ավելորդ։ Բացառությամբ Հաբեթ Շատախյանի հետախուզական խմբի և Սամվել Ավագյանի կապավորների, ավելի քան երեք հարյուր տղա, որոնք մտնում էին թեթև զորագնդի մեջ, մնացել էին գրեթե առանց հսկողության և օրվա մեծ մասը պարապ-սարապ թրև էին դալիս։ Այս պատճառով էլ ամենաուժեղ, ամենահամարձակ տղաները կազմեցին ինքնագլուխ մի հրոսակախումբ, ժամանակն սկսեցին տնօրինել իրենց ուզած ձևով։ Դրանք քսանհինգերեսուն պատանիներ էին, հասարակ ժողովրդի զավակներ՝ մեծամիտ, լի գործունեության ծարավով։ Ոտքի տակ էին տալիս Դամլաջրքի ամբողջ սարահարթը, տակնուվրա անում ամեն զազաթ, ամեն ձոր։ Իրենց շարաճճիությունների սահմանը հանդգնորեն հասցնում էին մինչև խրամատները, պարապ հետաքրքրասիրությամբ նեղություն պատճառում Նուրհան Էլլեոնի խիստ հսկողության տակ մարզվող զինվորներին։ Արգելեցին այդ աննպատակ թափառումները։ Բայց հանդուգն տղաներն իրենց գործունեությունը տեղափոխեցին պաշտպանության ոլորտից դուրս, Լեռնաթամբի մյուս կողմի բարձունքները, հովիտն իջնող լեռնալանջը, ծովեզերքի վրա կախված ժայռաճեղքերն ու հեղեղատները։ Խրամատներն անցնելը Դամլաջրքում դիտվում էր իբրև հանցագործություն, բայց հրոսակախումբն իր օրիններն այնպես էր քողարկում, որ ոչ ոք ոչինչ չէր նկատում։

Ստեփանն ու Հայկը, իհարկե, խմբի մեջ էին։ Սաթոն էլ էր դրանց խառնվել, և տղաները ոչ մի կերպ չէին կարողանում օձիքներն ազատել։ Թեև Բագրատյանի ընտանիքն իր հարկի տակ ապաստանել էր այդ օտար ճիվաղին, ժողովուրդը տհաճությամբ էր հանդուրժում նրա ներկայությունը անչափահասների շրջապատում։ Այնպես որ Սաթոյի բախտը լիովին կախված էր երեխաների քմահաճույքից։ Մի անգամ ձեծում էին, մի այլ անգամ հետները ուտում։ Ինչպես ամենուրեք, այնպես էլ այս-

տեղ, աղջիկը հանգիստ մնալ չէր կարողանում։ Երբ տղաները թուփ ու քար ոտքի տակ տալով դես-դեն էին սլանում, Սաթոն վազում էր նրանց ետևից՝ ոչ թե կողք-կողքի, այլ միշտ որոշ հեռավորության վրա։ Երբ հրոսակախումբը դարան էր մտնում Կաղնուտում կամ ամրություններից դուրս գտնվող որևէ արգելված վայրում և բոլորն սկսում էին գլուխները գովել, նոր օրիններ հնարել կամ սովորականի պես մարմինները մոլեգնաթափ ցնցելով «վեհացնել» իրենց գոյությունը, Սաթոն իր մենության խորքից նայում էր ծարաված աչքերով։ Մշտաթափառ, մեկուսացած աղջիկն իր խոպոտ ձայնով միանում էր խմբին, հեռվից կապկում մարմինները խելահեղորեն ցնցող տղաներին։

Այս խմբի մեջ, Սաթոյից բացի, «կարկտի տակ ընկած» մի ուրիշն էլ կար։ Անունը Հակոբ էր։ Ստեփանը նրան հովանավորում էր։ Այս տղայի աջ ոտքը մի քանի տարի առաջ Անթաքիեում զինվորական բժիշկն անդամահատել էր։ Այժմ պատանին ցատկոտում էր կոշտ ու կոպիտ հենակի օգնությամբ, որը սովորական մահակ էր՝ վրան լայնակի ամրացրած փայտի կտորով։ Չնայած այս անհարմարությանը, Հակոբը շարժվում էր կատաղի թափով և վայրի ճարպկությամբ, ինչպես հատուկ է հաշմանդամներից շատերին։ Երկոտանիներից ետ մնալ չէր ուզում։ Փոթորկային վազքի ժամանակ ընկերներից հազիվ թե մի քայլ ետ մնար։ Հակոբը լավ ընտանիքի զավակ էր, վարպետ Թովմասյանի ազգականներից։ Խոհուն աչքեր ուներ և ոսկեգույն մազեր, մի բան, որ այդ կողմերում հազվադեպ կարելի էր տեսնել։ Հափշտակությամբ կարդում էր ինչ ձեռքն էր ընկնում՝ օրացուցային պատմություններ կամ նման այլ բաներ։ Յողոնօլուքում Ստեփանից գրքեր էր խնդրում կարդալու համար։ Նա ջանասեր աշակերտի համբավ էր վայելում, բայց դա, չնայած դեղագործ Գրիգորի վսեմ օրինակին և ուսումնասեր ժողովրդի բանաստեղծական խառնվածքին, հրոսակախմբի աչքին ոչ մի արժեք չուներ։ Գրքային ասպարեզը չէր հրապուրում տղայի փառասիրությունը։ Նա ուզում էր վազել, խաղալ, մագլցել, ծեծել-ծեծվել, պատերազմի օրերին բանբերի, հետախույզի, գաղտնի դիտորդի կարևոր պարտականությունը կատարել ավելի լավ, քան որևէ մեկը։ Ստեփանը Հակոբի ոսկեգույն մազերի պատճառով նրա նկատմամբ մտերմություն էր զգում, աջակցում ոչ միայն կաբեկցանքից մղված։ Հակոբի փառասիրության ճանապարհը կոպտաբար փակում էր Հայկը։ Սա առանց որևէ սենտիմենտալ ներողամտության շարունակ զգացնել էր տալիս, թե հաշմանդամից բան դուրս չի գա։

Հայկը հետաքրքիր տղա էր։ Տասնչորս-ու կես տարեկան էր, բայց

արդեն լիովին մարմնավորում էր հայ չափահաս լեռնականի մոայլ բնավորությունը։ Նա մկանուտ նիհարությամբ, դանդաղ, փոքր-ինչ առաջ թեքված քայլվածքով, ծանր, խոշոր ձեռքերը ցած կախելու յուրահատուկ ձևով դրսևորում էր իր մեջ ամուր խարսխված հնադարյան ցեղի տիրական ամբարտավանությունը։ Այս հատկությամբ նա զգալիորեն տարբերվում էր իր խմբի տղաներից, որոնք բոլորն էլ օժտված էին արևելցուն հատուկ մարմնական անհանգիստ ավյունով։ Թող քաղաքներում սփռված հայերը Ոդիսևսի նման խորամանկ լինեն (դրա պատճառն այն է, որ «Ոդիսականի» հերոսի բնավորության մեջ միաձուլված են խորամանկությունն ու հայրենազրկությունը), բայց բնիկ և լեռնաբնակ հայը հպարտ է, անզիջում։ Այս գրգռիչ առանձնահատկությունը, իր մեծ աշխատասիրությամբ հանդերձ, նա հակադրում է թուրքերի հայեցողական ծույլ արժանապատվությանը։ Ազգային նման բնավորությունների բախումով շատ բան կարելի է բացատրել։

Հայկենց ընտանիքը սերում էր Հյուսիսից՝ Դոքուզ Բունար լեռնաշղթայի կողմերից, որը մոտ էր Վրաստանի սահմանին։ Մայրը՝ այրի Շուշանիկը, տասնչորս տարի առաջ ծծկեր որդու հետ գաղթել էր, Յողոնօլուքի ու Ազիրի արանքում, երկու գյուղից դուրս, գնել այգի ու շերամատուն։ Այստեղ էլ ապրում էր առանց որևէ մեկի օգնության։ Այդ կապուտաչյա հսկա կնոջը չէին սիրում։ Նրանից խուսափում էին, վախենում։ Թեև երկար տարիներ ապրում էր Մուսա լեռան մոտակայքում, դեռևս համարվում էր գաղթական։ Իսկ Յողոնօլուքի ժողովուրդը գաղթականներին խառնվելու հարցում ծայրահեղ անհանդուրժող էր։ Եկվորները միշտ էլ կասկածելի էին, պարուրված առասպելական ասեկոսեներով։ Շուշիկի մասին պատմում էին, թե իբր մի անգամ նա իր զորեղ ձեռքերով առանց այլևայլության խեղդել է ինչ-որ սրիկայի, որն անվայել բան է պահանջել։ Ճշմարիտ էր թե հնարված, համենայն դեպս, Հայկը հոգով ու մարմնով մոր քթից էր թռել. նույն մկանուտ կազմվածքը, նույն մոայլ, ինքնամփոփ բնավորությունը։

Ամբարտավան մարդիկ միշտ նվաստացնում են ուրիշների արժանապատվությունը։ Հայկն էլ այդպես էր վարվում Ստեփանի հետ։ Նրա մեղքով պատանի Բագրատյանը շարունակ նոր ջանք էր վատնում, որ ապացուցի իր «իսկությունը»։ Խոժոռ ու կասկածամիտ Հայկին համոզելու ցանկությունը տանջալից ձևեր էր ընդունում։ Դա, իբրև կանոն, բնորոշ է այդ տարիքի կրակոտ խառնվածքի տեր երեխաներին։ Ուսուցիչ Շատախյանը՝ պատանեկան զորաբանակի գլխավոր հրամանատարը, ոչ միայն առաջ էր քաշում Ստեփանին, այլև ամեն կերպ հովանավորում

էր տիկին Ժուլիեթի որդուն՝ փոքրիկ Ֆրանսիացուն, քաղաքակրթության առաքյալին, որը վայրենիների մեջ էր ընկել։ Տղային «պարոն Ստեփան» էր ասում։ Մինչդեռ մյուսներին դիմում էր կոպիտ ածականներով։ Թույլ էր տալիս, որ Ստեփանն ինքն ընտրի իր պարտականությունները, պաշտպանում էր, եթե նրան որևէ չնչին վտանգ էր սպառնում։ Սամվել Ավագյանը՝ տնային ուսուցիչը, ևս միշտ աչքը վրան էր պահում, որ իր սանը զերծ մնա անհեթեթ չարություններից և փորձանքից։ Վերադաս մարդկանց հոգատարությունից Ստեփանն ամաչում էր։ Հայկի աչքի առաջ տղային նվաստացնում էին իբրև փափկասուն իշխանազնի, հարցականի տակ դնում դժվարությամբ նվաճած «իսկությունն» ու տոկունությունը։ Բայց ամենավատ բանն այն էր, որ նման արտոնությունների Հայկը ոչ մի նշանակություն չէր տալիս։ Շուշիկի որդու համար արժեք ուներ միայն բուն ճշմարտությունը։ Նրա աչքից ոչինչ չէր վրիպում, և նա դատարկ շողոքորթությամբ խաբվողը չէր։

Հիմա էլ, շեյխի վրանում, Ստեփանն անքուն գալարվում էր, լարում իր բորբոքված ուղեղը. «Աստվա՛ծ իմ, ի՞նչ անեմ, որ Հայկին դուր գա»։ Բայց Հայկի համար պայքարելը միայն մի ճակատն էր այն պատերազմի, որ ի սեր փառքի մղում էր Բագրատյանի որդու պատվախնդիր հոգին։

Այդ ժամանակ, Մուսա լեռը բարձրանալու իններորդ օրը, գաղթականում հացի ու մրգի պակաս զգացվեց։ Միայն միս ուտելն արդեն անախորժ էր։ Հիանալի հարիսան հաղթության տոնի հինգերորդ օրն սպառվել էր։ Թոնիրները մնացել էին թափուր. ավագների խորհուրդը մի շաբաթով դադարեցրել էր փրկված ալյուրի մնացորդի բաշխումը։ Մսի բաժինն ավելացրել էին, բայց դժգոհությունը վերացնել չկարողացան։ Խիստ կարգադրությամբ այծերի ու ոչխարների ցամաքող կաթը տալիս էին հիվանդներին, տկարներին և մինչև տասը տարեկան երեխաներին։ Միայն մի չնչին մասն էին հատկացնում կարագ ու պանիր պատրաստելուն։ Բոլորը հայհոյում էին համայնական տնտեսաձևը։ Հիրավի, ինչ-որ անբացատրելի օրինաչափությամբ ընդհանուր ղեկավարության հետևանքով ժողովրդի ունեցվածքը նվազում էր, ձեռքից գնում, փոխանակ խնայվելու։ Ժուլիեթն Ալթունու մոտ աշխատելուց հետո ահագին քանակությամբ սննդամթերք էր հիվանդանոցին զիջել՝ շաքար, պահածոներ, թեյ ու բրինձ, բայց դեռևս բավականաչափ պաքսիմատ ու թեյ ուներ, կարող էր մեղմացնել իր ընտանիքի ու շրջապատի մարդկանց հացի կարիքը։ Ստեփանը դեռևս որևէ զրկանք չէր զգում։ Մինչդեռ Հայկը գանգատվում էր, թե ոչխարի կարծր մսից զահլան գնացել է։ Ասում էր,

կարգին էլ չեն եփում. կրակի վրա մի քիչ պահում են, արնաթաթախ դնում ձեռքը։ Ճարն ի՞նչ. առանց հացի կուլ է տալիս։

— Գոնե մի քիչ ծիրան կամ թուզ լիներ,— հառաչում էր անձկությամբ։

Ստեփանը նայում էր Մուսա լեռան ստորոտում տարածվող մրգաստաններին, բայց ոչինչ չէր ասում։

Պատանեկան զորագնդի օրվա առաջադրանքները բազմազան էին։ Տասներեք դիրքերի, ինչպես և մեծաքանակ դիտանոցների մոտ պետք է շարունակ պահակություն անեին կապավորները։ Ռուսցիչ Շատախյանն սեմեն օր ստուգում էր իր զորագունդը, երբեմն էլ հանկարծ հայտարարում փորձնական տագնապ։ Այնպես որ տղաները մեծ մասշտաբի ինքնուրույն «արշավանքներ» կարող էին ձեռնարկել միայն գիշերային խավարով քողարկված, այն ժամերին, երբ բոլորն իրենց պարտականություններից ազատ էին, և ոչ ոք նրանց չէր հսկում։

Իններորդ օրը Ստեփանն անմատչելի Հայկին ներկայացրեց իր «ծրագիրը»։ Զարմանալի էր, որ դա անցել էր ոչ թե տեղացու, այլ օտարականի մտքով։ Լեռը բարձրանալու օրից ի վեր արդեն մի քանի խիզախ մարդ երկու թե երեք անգամ սիրտ էին արել, իջնել հովիտ՝ պարենի պակասը լրացնելու, բայց միշտ էլ ձեռնունայն ետ էին եկել, քանի որ գյուղերում գիշեր-ցերեկ պարեկություն էին անում ոստիկանները։ Ստեփանի ծրագրի համաձայն հրոսակախումբը պետք է գիշերային արշավանքի դուրս գար դեպի մրգաստանները, թեթևացներ գաղթականի զրկանքներով լի վիճակը։

Հայկը ոտքից-գլուխ չափեց իր փառասեր մրցակցին, ինչպես հմուտ արվեստագետն է զննում առաջ մղվող սկսնակին, որը լավ չի պատկերացնում իր մտահղացման հետ կապված դժվարությունները։ Այնուհետև գաղտնի հարձակման հրամանատարությունն իր ձեռքը վերցրեց և խորհրդակցության հրավիրեց ավազակախումբը։ Ստեփանը, իհարկե, վախենում էր, որ Հայրն այդ արկածախնդրության մասին իմանալու դեպքում զգալիորեն կսահմանափակի որդու ազատությունը։ Տղան իր տագնապը խոստովանեց։ Հայկն արդեն մոռացել էր, որ ամբողջ պլանն ուրիշի սեփականությունն է, և շատ անտարբեր պատասխանեց (այդ խոսելաձևին վարպետորեն էր տիրապետում).

— Եթե վախենում ես, մնա վերևում։ Քեզ համար դա շատ ավելի լավ կլինի։

Ստեփանի սիրտը խոցվեց, և նա վճռեց ականջի ետև գցել ծնողների մահհոգությունը։

Նույն գիշերն արշավանքի դուրս եկան։ Մոտ իններսուն տղա գոդացան-բերին պարկեր, զամբյուղներ, ինչ ձեռքներն ընկավ։ Ժամը տասին, երբ բոլոր կրակները մարեցին, և բոլորը քուն մտան, փոքր-փոքր խմբերով ճամբարից դուրս սողացին, անցան պահակների մոտով, դուրս եկան պաշտպանության գծի մյուս կողմը։ Լայն ոստյուններով լեռն ի վար գրոհեցին։ Կարծես փոթորկի բերանն էին ընկել. քառորդ ժամում հասան առաջին այգիները։ Մինչև ժամը մեկը, կիսալուսնի քնքուշ ցոլքի տակ կատաղի թափով քաղում էին ծիրան, թուզ, նարինջ։ Ստեփանը ևս դրսևորեց իր մարմնական ուժը, թեև կյանքում առաջին անգամ էր նման գործ կատարում։ Հրոսակավար Հայկին հաջողվել էր ցցերից արձակել և հետը բերել երեք ավանակ։ Սրանց շտապ-շտապ բեռնեցին։ Բայց իրենք էլ ահագին մրգ շալակներն առան։

Արևածագից առաջ մտան ճամբար։ Թոկից փախածներին, որոնք վտանգի մասին ոչ մի պատկերացում չունեին և կարող էին ոտքով-գլխով կորչել, ընդունեցին նախատինքով, հայհոյանքով, նույնիսկ ծեծելով, բայց և հպարտությամբ։

Քաղաքաձոր հասնելուց առաջ Ստեփանը ծլկեց, իրեն գցեց շեյխական վրանը, որտեղ ապրում էր Գոնզագ Մարիսի հետ։ Իրենց որդու վտանգավոր արկածի մասին Գաբրիելն ու Ժուլիեթը ոչինչ չիմացան։

Գիշերային արշավանքով ձեռք բերած ավարը հինգհազարանոց ժողովրդի բերանն էլ չթրջեց։ Բայց այս ասպատակությունն առիթ եղավ, որ արտվելի Արամը երեք օր հետո երկու հարյուր պահեստայինների հետ, երկու տասնյակ զինվորների պաշտպանությամբ, գիշերով կրկնի նույն փորձը։ Դժբախտաբար արդյունքը շատ չնչին դուրս եկավ։ Հենց այդ օրերին մահմեդականները հարևան գյուղերից եկել էին, հավաքել հայկական այգիների բերքը։ Թողել էին միայն խակ և փտած մրգերը։

Առավել խելացնոր, առավել անտեղի էր Ստեփանի հաջորդ արկածը։ Սխալ կլիներ դա համարել հերոսական արիության ապացույց։ Տղան ոչ մի պատկերացում չուներ, թե ինչ փորձանք է իր գլխին բերելու։ Ամբողջ միամտությունը երևում էր հենց թեկուզ այն բանից, որ նա իր համար գործակից էր ընտրել հաշմանդամ Հակոբին։ Թող այդ Հայկը չկարծեր, թե Ստեփանն առանց իրեն կորած է։ Ա՛յ թե ինչն էր ամենից կարևոր։

Բագրատյանի որդին արդեն հասել էր այն տարիքի սահմանագլխին, երբ ձևավորվող մարդը պետք է ինքն իրեն պաշտպանի ոչ միայն սեփական ավիշից, այլև աշխարհի մեծության այն պատրանքից, որն ամեն ոտքի տակ ինչում է զգացնել տալիս հաղթիվ աքինացած «հա»-ի ազնվությունը։ Տղայի սեփական հասունացման տենդը կորձանաքար կեր-

պով խաչաձևվում էր Մուսա լեռան վրա իշխող ընդհանուր տենդի հետ։ Ընկերները՝ այդ գեղջուկ չարաճճիները, կարծես պնդակաշի ժայռաբույսեր լինեին կամ լեռնային զգոն գազանիկներ։ Զորս տարեկան հասակում արդեն կրում են իրենց բնավորության լիակատար դրոշմը, աճում համաչափ, գրեթե անփոփոխ, առանց խաթարումների և ցմահ կրում այդ դրոշմը, որն ի վերջո փոքր-ինչ մաշվում է, գունաթափվում։ Ստեփանը դրանց նման չէր։ Իր մեջ կրում էր հեռավոր ժողովուրդների ժառանգությունը, երեք կորովաշատ սերնդի բարձր մակարդակն ու եռանդը, իր եվրոպական մանկությունը և, իբրև ծանր բեռ, անհագուրդ մի հոգի, որը երբեք ու ոչ մի տեղ հանգիստ գտնել չէր կարողանում։ Մայրը պարզ տեսնում էր, թե որդին ինչպե՞ս է նիհարում, ինչպե՞ս են տղայի դեմքին ստվերներ աճում։ Բայց ի՞նչ կարող էր անել, որտեղի՞ց ճարեր սովորական սնունդը։ Երբեմն Ստեփանին տանում էր իր վրանը, և չնայած տղայի կատաղի դիմադրությանը, ստիպում, որ մեծ բաժակով մի քանի անգամ կաթ խմի։ Ապա օրերով չէր մտահոգվում որդու համար։ «Դեռևս որքա՞ն ենք ապրելու»։ Այս հարցը նա հաճախ էր ինքն իրեն տալիս, թեև դա անկեղծ հարց չէր, քանի որ ֆրանսուհին բնավ չէր պատկերացնում, թե որևէ մեկը, ամենաարյունախում զափթիեն անգամ, կարող է իրեն վնաս տալ, քերծել իր մաշկը։ Բայց հաճելի էր կրկնել այդ հարցը։ Դա ամեն ինչի նկատմամբ գարձնում էր անտարբեր և ներդաշնակվում էր առօրյա կյանքից վերանալու ցանկությանը։ Ներքին խռովքը մեծ թափով առաջ էր ընթանում...

Ահա թե ինչն առիթ տվեց Ստեփանի խելահեղ քայլին։

Իսկուհին հաճախ էր գանգատվում, թե փախստյան խառը ժամանակ այնպիսի բան է մոռացել, որի պակասն այժմ ցավով է զգում. երեք թե չորս գիրք, ի թիվս դրանց՝ սուրբ Վավերամատյանը և փղոսկրյա մի խաչելություն։ Երկուսն էլ Արամն էր նվիրել։ Այդ գանձերը փրկել էր Զեյթունի կոտորածից, մոտն էր պահում տարագրության զարհուրելի օրերին։ Մինչդեռ այժմ դրանք մնում էին ընկած Բագրատյանի ամառանոցում։ Աղջիկը դա տհաճությամբ բացատրում էր իր տկար վիճակով։ Կորուստը նրան տառապանք էր պատճառում. կարծես վիրավորել էր եղբորը։

Միայն Սաթոն չէր, որ շարունակ պատվում էր Իսկուհու շուրջը։ Ստեփանը ևս ոչ մի առիթ բաց չէր թողնում, գողունի մոտենում էր։ Եթե որքանոցի սանուհին աշնան կեղտոտ ճանճի պես անդիմադրելիորեն վրա էր պրծնում կռվորց հիշեցնող «քյուչյուք հանըմ»-ով, կարոտի սարսռեցնող բզզոցով, իր գիշատիչ մագիլներով, ապա Ստեփանը երկյոզածությամբ կուչ էր գալիս գետնին, պատկառելի հեռավորության վրա և լուռ հայացքով կլանում օրիորդ Թովմասյանին։ Հետո տղան հեռանում էր՝ լիուլի արբած ինչ-որ երանավետ դժբախտությամբ։ Հոգու խորքում թևածում էր աղջկա հրաշալի պատկերը։ Ճակատին ծփում էր մի փոքրիկ մազափունջ, իսկ զմայլանքից բացված շուրթերի վրա թրթռում էր խոնավ բիբերի փայլը։ Աջ ձեռքով ծածկում էր հիվանդ թևը. կարծես ամաչում էր։ Փոքրիկ ստինքները նկատելիորեն շնչում էին, իսկ զգեստի տակից երևում էին պաշտպանության կարոտ սլացիկ ոտքերի ծայրերը։ Բայց ամենից սրտահույզն այն պահն էր, երբ Ստեփանի երևակայության մեջ Իսկուհին մտնում էր շեյխական վրանը, մոտենում անկողնում պառկած տղային և երգում։ Ստեփանը ոչ մի կերպ չէր հագենում իր համար երգված խոսքերից.

Աղջիկ տեսա այգու եզրին՝
Ոտքից գլուխ շաղ ու բույր,
Սեղմած կրծքի զույգ նռներին
Ծառից քաղած երկու նուռ։

Բայց տղային շոյող սարսուռ էին պատճառում ոչ այնքան խոսքերը, որքան ձայնը։ Առաջ ինքն այնպե՞ս էր սիրում մայրիկին... Բայց հիմա նա իր ձայնով ինչպե՞ս կարող էր Իսկուհու հետ չափվել։ Մայրիկը չէր երգում, իսկ երբ մեկ-մեկ ֆրանսիական որևէ երգ էր մրմնջում, ապա եղանակը խեղաթյուրում էր, սիրամարգի ձայն հանում։ Մինչդեռ Իսկուհու զով ու վճիտ ձայնի մեջ մարդ կարող էր մեկնվել, ինչպես լոգարանում։

Անցնում էին երազներով բորբոքուն գիշերները, և ահա մի առավոտ Ստեփանը սուլելով մոտ կանչեց Սաթոյին, որը դարան էր մտել «Հայկյան» հրոսակախմբի հավաքավայրի մոտ։

— Ներքևի տանը մարդ կա՞։

Աղջիկն իսկույն հասկացավ նրա միտքը։ Բոլորովին սխալ կլիներ Սաթոյին իր հանած անասնական խռպոտ ձայների և շնագայլային շրջմոլիկության համար ապուշ համարել։ Որձէգ էր, ծայրահեղ արարած, բայց նյարդային ուժեղ զգոնություն ուներ, մանավանդ երբ խոսքը վերաբերում էր մարդկային ինչ-որ կապեր հետախուզելուն։ Ոչ միայն հասկացավ, որ Ստեփանն ուզում էր իմանալ, թե «օրինական ժառանգները» տեղափոխվե՞լ են իր պապենական տունը, այլև կռահեց հարցի իմաստն ու նպատակը։ Ստեփանը մտադիր էր խելահեղ գրոհով ձեռք գցել Իսկուհու գրքերը, եթե դրանք առհասարակ դեռ գոյություն ունեին։

Սաթոն սկսեց դեմքը ծամածռել և աչքերը ճպճպացնել, ինչպես

սովորաբար անում էր գրգռված պահերին։ Մտեփանի համար գաղտնիք չէր. Մուսա լեռան բարձունքներում ապաստանած մարդկանցից այդ աղջիկը միակ արարածն էր, որը կրկնակի կյանք էր վարում։ Հաճախ ցերեկով, մանավանդ գիշերները, անհետանում էր։ Թե ուր, ոչ ոք չգիտեր։ Հովիտն էլ էր իջնում, այցելում իր բարեկամներին, գերեզմանատան մոտ ապրողներին։ Լեռան և հովտի միջև լուրեր փոխանակելն այն թանկարժեք մաղ դրամն էր, որով Սաթոն գնում էր ներքևի բարեկամների, ինչպես նաև վերևի թշնամիների բարեհաճ վերաբերմունքը։ Այս ճանապարհով գաղթականը հուսալի տեղեկություններ էր ստանում գյուղերի դրության և անցուդարձի վերաբերյալ։ Իմացել էին, որ Յողոնօլուքում տասը զափթիե պահակություն են անում։ Նույնն էր վիճակը նաև Բիթիասում ու Հաբիբլիում։ Լսել էին, թե մահմեդական խաժամուժը տները վերից վար սկսել էր սրբել տանել, երբ հանկարծ վրա էր հասել կայմակամի անսպասելի հրամանը, որով նա արգելում էր կողոպուտը։ Միայն Կիլիկիայից գաղթած երեք թուրք ընտանիքի էր իրավունք տրված հայ գյուղում բնակվելու։ Սակայն հարթավայրի խաժանն իր դիրքերն այդքան շուտ զիջողը չէր. գյուղերում սպասում էր բարեհաջող քամու։ Ասում էին, թե վերջին շաբաթը գյուղերում հայտնվել են մի քանի մոլլա, աչքի են անցկացրել եկեղեցիները, քանի որ դրանք հետո վեր էին ածվելու մզկիթների։

Ստեփանն իմացավ, որ իրենց ամառանոցում բազմանդամ ընտանիքով բնակություն է հաստատել մի թուրք մուհաջիր։ Այդ մարդիկ եզասայլով Յողոնօլուք էին եկել մի քանի օր առաջ։ Հիրավի, հայերի տարագրության գործում նուրբ հոտառություն ունեցողները տեղից-տեղ էին ճանապարհորդում և քանի որ ընտրություն կատարողներն իրենք էին, ապա գոհ էլ չէին մնում պատահած առաջին ամենալավ բնակարանից։

Սաթոն տառեր ճշգրիտ մանրամասնություններ էլ գիտեր։ Մուհաջիրի ընտանիքն ապրում էր մեծ հյուրասրահում, բայց հաճելի գիշերները մեծ մասամբ անց էր կացնում բաց օդում, տանիքին։

Ստեփանն այնպես էր դիվահար եղել, որ երկար-բարակ չմտածեց։ Իր գաղտնիքը վստահեց միայն Հակոբին։ Միոտանին աղաչեց, պաղատեց, որ իրեն էլ հետը տանի։ Փառասիրությունը հաղթեց։ Եթե Հակոբն էլ գար, Ստեփանը ոչ միայն իր սխրագործության համար վկա կունենար, այլև լավ դատ կտար տնզիչում Հայկին։ Շլացած պատանին այս դրվարին գործին անցավ, չունենալով ոչ մի այլ զենք, բացի գրպանի էլեկտրական լապտերից։ Իսկ «օժանդակ ջոկը» կազմված էր մի ճիվաղից և մի հաշմանդամից։

Ի դեպ, Սաթոն ճանապարհ ընկավ մթնելուց դեռ շատ առաջ։ Ուզեց տագնապալի լուրը հաղորդել Նունիկին, Վարդուկին, Մանուշակին ու մյուս բարեկամներին։ Որքան էլ տարօրինակ թվա, վերեզմանաբնակներն անձեռնմխելի էին։ Ոչ ոք նրանց չէր նեղում։ Զափթիեներն ու խաժանն այդ մարդկանց շրջանցում էին. կարծես տարագրության հրամանները դրանց չէին վերաբերում։ Թուրքերն ընդունում էին այդ անձեռնմխելիությունը ոչ միայն այն պատճառով, որ կողոպտելու բան չկար, այլև այն պատճառով, որ այդ մարդիկ ապրում էին մահով և մահվան հետ։

Բայց Սաթոն այս գվարդիան ոտքի հանեց ոչ ի սեր Ստեփանի կյանքի ապահովության։ Աղջկան միանգամայն անծանոթ էին այնպիսի զգացումները, ինչպիսիք են մտերմությունը, սերն ու հոգատարությունը։ Նույնիսկ Իսկուհու հանդեպ ունեցած բուռն մղումը միայն անհագ ցանկություն էր, իրեն հիացնող էակի հետ մոտ լինելու, նրան տիրանալու ցանկություն։ Սաթոյին հայանի էր Նունիկի բնավորության հիմնական գիծը։ Եթե աղջիկն իր մեծ բարեկամուհու անզուսպ հետաքրքրասիրությանը պատշաճ սնունդ տար, ապա ձեռք կբերեր բարյացակամության մի ամբողջ դրամագլուխ։ Արհամարհված աղջիկը, որին հասարակության տականքն անգամ հաղիվ էր հանդուրժում, ստիպված դարձել էր մարդկային մոլությունների ճարպիկ գործակալուհին։ Սաթոն գիտեր նաև, թե պատավ Նունիկն ի՞նչ ագահությամբ էր ուզում իմանալ այն ամենը, ինչ վերաբերում էր Բագրատյանի ընտանիքին։

Երբ կեսգիշերից առաջ Ստեփանն ու Հակոբը այգու արևմտյան բաց դարպասով մտան ավազածածկ բակն ու հրապարակը, եղերամայրերը բոլորվել էին ծառերի տակ և քառորդ լուսնի աղոտ ցոլքի տակ հուսահատ նշաններ էին անում։ Հակոբի հենակը ավազին դիպչելով թխթխկում էր, ահավոր ազմուկ հանում։ Ստեփանը կամացուկ բզեց հաշմանդամին, որ սա ծլկի եղերամայրերի մոտ։

Ուղղակի անհասկանալի էր, թե ինչպես այդ պահին Ստեփանի նման զգայուն մի տղա մոռացել էր վախ ասած բանը։ Եթե վտանգը լիովին չէր գիտակցում, ապա նրան պետք է սաբսափահար անեին գիշերը, ուրվականային դժնի կերպարանքները, որոնց ներկայությունը տղային մրլդեցրել էր, մուհաջիրներով լցված տան տեսքը։ Բայց դա հիվանդագին, խռովահույզ հոգեվիճակ էր, մի բան, որ մինչ այդ երբեք չէին նկատել ո՛չ Գարդիեը, ո՛չ էլ Ժուլիեթը։ Ըստ երևույթին, անսահմանորեն

խիզախ պատանին, իր զգայարանների բթացման զոհը դառնալով, այլևս չէր զանազանում շրջապատող աշխարհի իրականությունն ու երազային պատկերը։ Տան դարպասից ներս մտավ այնքան դանդաղ ու հանգիստ, կարծես զբոսանքից էր վերադառնում։ Նրան համակեց հրապուրիչ պատրանքը։ Թվաց, թե ոչինչ չի պատահել, ամեն ինչ մնացել է նույնը։ Տպավորությունն այնքան զորավոր էր, որ տղան սրահում անվրդով կանգ առավ, տարվեց խոհերով։ Քիչ անց վառեց գրպանի լապտերը (հայրը դրա լույսով էր քնած որդուն դիտում), ապա սանդուղքով սառնասրտորեն բարձրացավ վերնահարկը։

Այստեղ ամեն ինչ դեռևս անփոփոխ էր մնացել։ Ավերածության և կեղտի հետքերը հազիվ էին աչքի ընկնում։ Կողոպտիչները միայն թեթև իրերն էին տարել։ Պահարաններն ու մահճակալները մնացել էին իրենց նախկին տեղում։ Ստեփանն ամենից առաջ մտավ իր սենյակը, փեղկահան արված պատուհանից երկա՜ր-երկա՜ր դիտեց հովից օրորվող այգին և Մուսա լեռան սև զանգվածը։ Տղան դարձյալ տարվեց պատրանքով. թվաց, թե երբեք չի եղել վերևում, որտեղ Դամլաջրքի սանրաձև գագաթն ուրվագծվել էր երկնքի կաթնագույն ֆոնին։ Թվաց, թե հայրն ու մայրը քնած են կողքի սենյակում, և ինքն էլ պետք է արդեն անկողին մտնի։

Ստեփանը դժվարությամբ սթափվեց, մտաբերեց իր գալու նպատակը։ Ոչ թե վտանգից խուսափելու, այլ Իսկուհուն չխանգարելու համար մատների ծայրերի վրա ներս մտավ ամայի սենյակը։ Լապտերի աղոտ լույսի շրջանակից դուրս ամեն ինչ լեցուն էր Իսկուհու շնչով։ Լույսն ընկավ մի խարխուլ աթոռի, որը կանգնած էր իբրև մերժված էակ։ Դրա տակ մի քանի գիրք էր ընկած՝ կեղտոտ, բզկտված։ Սուրբ Վավերամատյանն անվթար էր մնացել։ Փղոսկրյա խաչելությունը չկար։ Երջանկությունից պայծառացած Ստեփանը գրքերն ու Աստվածաշունչը կրծքին սեղմելով՝ սանդուղքն ի վար վազեց, որոտաձայն աղմուկ բարձրացնելով անցավ նախասրահը, սլացավ դեպի դարպասը։ Ուղեկիցները հեռվում, պարսպի ստվերին ձուլված՝ սպասում էին։ Տղան նրանց իսկույն չնկատեց։ Հոգևոր խոովքի այդ պահին հույսը միայն աստծո վրա դնելով՝ ուժգին գոչեց.

— Հակո՜բ, Սաթո՜, որտե՞ղ եք։ Տեսե՛ք, բերել եմ։

Գիշերվա դատարկ կամարի տակ այս բառերն այնքան զորեղ արձագանք տվին, որ տանիքի վրա իսկույն շարժում սկսվեց։ Ինչ-որ կերպարանքներ ուրվագծվեցին։ Ինչ-որ մեկը բամբ ձայնով գոռաց։ Կանացի քրթմնջոց լսվեց։ Վհուկների շղթան քանդվեց, հրապարակից հեռացավ։ Հակոբի հենակը տենդագին թխթխկում էր գետնին դիպչելով։ Ստեփանը

կաթվածահարի նման մնաց տան առջևի լուսավոր հրապարակում գամված։ Լապտերի լույսի փոքրիկ կետը խաղաղ պսպղում էր նրա ձեռքին։ Տղան տեղից պոկվեց, լեղապատառ փախավ միայն այն ժամանակ, երբ ականջի տակ մտրակի պես շաչեցին հրացանային կրակոցները, իսկ տան ներսում աղմուկ բարձրացավ։ Բայց ո՞ւր էր վազում։ Իսկույն երևաց, թե Քլեբեր Ավենյուի որդին որքան է զիջում արևելքի ժառանգորդներին, չնայած իր ամբողջ փառասիրական ոգորմանը։ Նույնիսկ միոտանի Հակոբն իր թխթխկան հենակով կարողացավ չքանալ անթափանց անէության մեջ, մինչդեռ Ստեփանը այգու արևելյան դարպասից իրեն դուրս գցելով, խելագարի պես վազեց Յողոնօլուք տանող ճանապարհով։ Քաղաքացի տղային հրապուրեց հարթ ու բանուկ սայլուղին։ Դա կարծես ներքին պահանջ էր, թեև զգում էր, որ անմիտ ուղղություն է վերցրել։ Քիչ մնաց ընկներ զափթիեների ճանկը։ Կրակոցից անհանգստացած թուրքերը եկեղեցու հրապարակից, հրացանները պատրաստ պահած, առաջ սլացան։ Ստեփանը մի կողմ նետվեց, կուչ եկավ փոսում։ Հրաշք պատահեց։ Զափթիեները վազեվազ անցան տղայի մոտով։ Սրանց ընդառաջ եկան մուհաջիրի յուրայինները։ Գոռգոռում էին, ձեռքները կատաղորեն թափահարում։ Բոլոր թուրքերն էլ լեղապատառ էին եղել։ Կասկածում էին, թե հայ ռազմիկներն են հանկարծակի հարձակվել։ Ցնորվածների նման կրակում էին ամեն կողմ՝ թե՛ իրենց սիրտ տալու, թե՛ մոտակա գյուղի պահակներին օգնության կանչելու համար։

Երբ հյուսիս-արևմուտքում աղմուկը դադարեց, Ստեփանին համակեց մահվան կույր, անփարատելի սարսափը։ Վանդակից դուրս փախած, բայց թռչելն արդեն մոռացած թռչունի պես տղան խարխափում էր քարուքանդ պարսպի երկայնքով, փորձում էր դուրս գալ բաց տարածություն։ Ընկավ լքված մի այգի, հազիվ սողոսկեց խիտ մացառուտների միջով, փնչալով կանգ առավ օձանման որթատունկերի ցանցով պատված զառիթափի եզրին, հարյուր անգամ վայր գլորվեց ու վեր թռավ, մինչև վերջապես ազատվեց որոգայթից։ Ընկավ փափուկ հողի մեջ, հետո՝ քարեղեն մի խորխորատ։ Հետո էլ խրվեց անանցանելի մի թավուտ, որը նրան ընդունեց փշերով ու պողպատյա թրերի պես սուր տերևներով։

Դատելու ունակությունից զրկված տղան անանպատակ քարշ էր գալիս։ Հանկարծ զգաց, որ էնթարին խանգարում է առաջ շարժվելուն, վազելիս էլ նենգ թշնամու պես բռնում է, պահում։ Ձեռքերն ու ոտքերը ծածկված էին այրող վերքերով, իսկ դեմքը քրտնքի մեջ կորել էր։ Բացատ դուրս գալով՝ ցած փռվեց։ Չգիտեր, թե որտեղ է Դամլաջրքը, որտեղ է Յողոնօլուքը, որտեղ է ինքը։ Երկու բոպե միտքը մշուշվեց, ուշագնաց

ընկավ։ Բայց ուժասպառությունն իսկույն անցավ։ Մահվան սարսափը չքացավ, տեղի տալով մի զարմանալի անտարբերության։ Հանգիստ ձգվեց, կարծես պատրաստվում էր քուն մտնել։

Գլխավերևում անշարժ ծավալվում էր օգոստոսյան գիշերվա երկինքը։ Միլիարդավոր աստղերից ոչ մեկը չէր պսպղում։ Ստեփանը մենմենակ էր ամբողջ աշխարհում և աշխարհի հետ։ Գիտեր, որ հայրն ու մայրն օգնության գալ չեն կարող։ Առաջին անգամ նրա մանկական հոգին ճաշակեց լիովին կորած լինելու զգացումը, զգացումը բնաջնջման անագորույն հալածանքի, որին տիեզերքը նայում էր իր սառցե անհամար աչքերով։

Հարուստ մարդկանց զավակները, որոնք հասակ են առնում երազանքների կենտրոնում, կամ ընդմիշտ անհաղորդ են մնում այդ զգացմանը, կամ դա շատ ուշ են ճաշակում։ Մինչդեռ նույնը հաղթահարում է ամեն մի հալածված գազանիկ, երբ ձորում կուչ եկած՝ շունչն իրեն է քաշում։

Դա բարի և շատ օգտակար զգացում էր։ Ստեփանն այլևս կարիք չուներ Իսկուհու մասին մտածելու։ Երբ մարդ հանգիստ փոված է, հողին այսպես հպված, բոլորանվեր ձուլված աշխարհին, ապա ամենավատթար բանն էլ այնքան վատ լինել չի կարող։

Տղան անթարթ հայացքով նայում էր երկնքին։ Այնտեղ, վերևում, ինչ-որ շունչ փչեց, ինչ-որ լույս թրթռաց, շրջաններ գծելով մոտեցավ։ Այդ թրթռուն լույսը մեղմորեն բարձրացրեց Ստեփանին, համբուրեց, քանի որ տղան այնքա՜ն տկար էր, այնքա՜ն անպաշտպան, ավելի լքված, քան մեկ ուրիշ արարած։ Ամբողջ աշխարհի բերկրանքը կուտակվեց մի կետում, իսկ այդ կետը տղայի ներսումն էր։ Ստեփանը չիմացավ, թե ինչ պատահեց։ Կյանքում առաջին անգամ զգացմունքների այդպիսի հորձանք զգաց։ Քուն մտավ հողին ձուլված, մեռելային քնով։

Գիշերային խավարում հնչող ձայները նրան արթնացրին։ Հավանաբար զափթիեներն իրենց հետապնդումները հասցրել էին մինչև այդ տեղերը։ Ծառաստանում մի քանի կրակոց էլ որոտաց, ապա լռություն տիրեց։ Ստեփանը չհավատաց, թե թուրքերը հեռացան։ Տղայի տեղն անպայման գտել էին, դարան մտել, սպասում էին, որ նա տեղից բարձրանա։

Երկինքը սև էր, անլուսին։ Ի՜նչ երկար էր քնել։ Սակավաթիվ աստղեր էին երևում՝ խամրած ու ցամաքած. կարծես դրանց վրա ծծողական թուղթ էին դրել, չորացրել։ Աշխարհը նեղ էր, դագաղացած։ Տղային թվաց, թե ինքը ոչ թե գետնին է պառկած, այլ լայծուն խխունջներից

գոյացած, նողկալիորեն առաձգական մի բլրի գագաթին։ Բայց թե չէր կարող ո՛չ շարժվել, ո՛չ էլ տեղից վեր կենալ։ Չէ՞ որ զափթիեները դարան էին մտել։ Իսկ եթե սպասեր մինչև լույս, կրկնակի և եռապատիկ կորած կլիներ։ Վերջապես սիրտ արեց. նախ փորի, ապա ծնկների վրա սողալով առաջ գնաց։ Աշխարհը լեփ-լեցուն էր անդեմ խոչընդոտներով։ Զգուշորեն կանգնեց։ Ոտքերի տակ ինչ-որ կոշտ բան ընկավ՝ սրածայր ու ատամնավոր, իսկ աջ ու ձախ կողմից աչքին ինչ-որ զրահածածկ բան երևաց՝ խայթոցով ու ճիպոտներով զինված։ Տղան դժվարությամբ առաջ շարժվեց փշոտ խավարում։ Ինչ խոսք, թուրքերն արդեն սպանեցին խարտյաշ Հակոբին, և ինքը՝ Ստեփանն է մեղավոր։ Բայց չէ՞ որ ինքն էլ այլևս տուն չի վերադառնա։ Զեռքը, որով Իսկուհու Աստվածաշունչն էր կրծքին ամուր սեղմել (մյուս գրքերը դեն էր գցել), հանկարծ սառեց, չնայած գիշերը տաք էր։

Այդ քաոսային աշխարհում փոքր-ինչ աննպատակ դեգերելուց հետո Ստեփանն իր լապտերը վառեց, սպասելով զափթիեների կրակոցներին։ Ոչինչ չպատահեց։ Լույսը վառ թողեց, բայց կորցրած ճանապարհը չգտավ։ Այնուհանդերձ դա մատնեց նրա տեղը, և փրկարարը մոտեցավ։

Հանկարծ ինչ-որ մեկը գրկեց Ստեփանին։ Հայկն էր։ Սաթոյի մատնության շնորհիվ ժամանակին իմացել էր ընկերոջ խելացնոր արարքը։ Նրան սոսկալի զայրացրել էր Ստեփանի ինքնագլուխ հանդգնությունը։ Ինչպե՞ս էր համարձակվել իրեն բանի տեղ չդնել։ Բայց միևնույն ժամանակ զգում էր, որ ինքը, իբրև ավելի զորավոր և բարձր կանգնած մարդ, պետք է հոգ տանի ամբարտավան պարոնորդու մասին։ Չէ՞ որ նման բաների հումար փոքրիկ ֆրանսիացին դեռևս խակ էր։

Սկզբում Հայկն ուզում էր Ստեփանին թողնել բախտի քմահաճույքին, բայց հետո Դամլաջրքում հանգիստ մնալ չկարողացավ։ Նա հենց այն վտանգավոր պահին իջավ հովիտ, երբ զափթիեներն սկսեցին հետապնդել հայկական կարծեցյալ զորախմբին։ Անսխալ բնազդով ի վերջո արդեն մոտեցել էր Ստեփանին, երբ սա լապտերը վառեց։ Այժմ կատաղած ցնցում էր Բագրատյանի որդուն.

— Հիմա համոզվեցի՞ր, որ պարծենկոտ դմբո ես։

Ստեփանն այնքան ուժասպառ էր եղել, որ չկարողացավ պատվավոր արդարացում գտնել իր ամոթանքը ծածկելու համար։ Ծանրորեն կախվեց ընկերոջ թևերից և թողեց, որ իրեն քաշքշելով տանի։ Բայց քայլ առ քայլ, անպարտելի ախոյանի ներկայության շնորհիվ, տղայի արիությունը վերադարձավ։ Ավարը բռնեց Հայկի քթի տակ.

— Իսկուհի Թովմասյանի Աստվածաշունչն եմ տնից բերել։

Մոտ հիսուն քայլ հեռավորության վրա, ասես անէության խորքից բարձրանում էր մարմրող խարույկի ցոլքը։ Գերեզմանաբնակների հետ նստած էին Հակոբն ու Սաթոն։ Ստեփանը հաղթահարեց իր ընկճվածությունը։ Միայն թե ետ գնային։ Հայկի առաջնորդությունը նրան վստահություն էր ներշնչում։ Մտաբերեց հորը։ Գիշերային արկածը թաքցնել չէին կարող։ Վախենում էր ծնողներից։

Հակառակ Ստեփանի անհամբերության, վերադարձի ճանապարհն անվերջանալի էր։ Շարունակ ստիպված էին լինում կանգ առնել, հանգստանալ, քանի որ Հակոբը դժվարությամբ էր առաջ շարժվում։ Տեղ-տեղ Հայկն ու Ստեփանը կամ Հայկն ու Սաթոն, թևերի տակ մտած՝ ահագին տեղ քարշ տալով տանում էին խեղճ հաշմանդամին։ Հակոբն ամբողջ ժամանակ լալիս էր։ Իր ուժից վեր գործ էր բռնել։ Այլևս ի վիճակի չէր առողջ ընկերների հետ չափվելու։

Արդեն ժամը յոթն էր, երբ խումբը հայտնվեց խրամատների առաջ։ Երեքն էլ նման էին ուրվականների, երեքն էլ վիրավոր էին։

Ստեփանն իսկույն անկողին ընկավ. տենդ ուներ։ Մայրիկը սոսկալի զայրացավ.

— Եթե այսպիսի զզվելի բաներ անես, կդառնաս Սաթոյի նման կեղտոտ շրջմոլիկ։ Քեզ այլևս չեմ սիրի։

Մոր խոսքն անկեղծ էր և որդուն ցավ պատճառեց։ Ժուլիեթի աչքերում զայրույթի արցունքներ կային.

— Ի՞նչ փչեց խելքիդ։ Ինչո՞ւ այդ բանն արեցիր։

Ստեփանը լռում էր. չէր համարձակվում ասել ճշմարտությունը։ Զգում էր, որ դրանով կարող էր ծանր հարված հասցնել մոր և Իսկուհու փոխհարաբերություններին։ Բռնեց մայրիկի մերժող ձեռքը, ներողություն խնդրեց, ինչպես անում էր, երբ փոքրիկ տղա էր և կամակոր չէր։ Բայց վերմակի տակ, ծնկների արանքում սեղմած պահում էր Իսկուհու Աստվածաշունչը։ Վախենում էր, թե մայրը կարող է իմանալ։

Երբ հայր ու տղա մնացին առանձին, և հայրը որդու դեմ հանդիման կանգնած՝ խորազնին, թափանցող աչքերով ուզեց իմանալ ճակատագրական զանցանքի պատճառը, Ստեփանը, ի վերջո, երկար-բարակ ստեր փչելուց ու մտացածին պատմություններ անելուց հետո հայտնեց գաղտնիքը։ Մինչև ականջները կարմրելով՝ վերմակի տակից հանեց Աստվածաշունչը։ Հայրը վերցրեց գիրքը, մտացրիվ թերթեց, փակեց, խիստ ու խոժոռ դեմք ընդունեց։ Ստեփանն արդեն ծանր պատժի էր սպասում։ Բայց դրա փոխարեն հայրիկը վերադարձրեց Աստվածաշունչը, այլևս ոչ մի բառով չակնարկեց տեղի ունեցածը։ Նախքան վրանից դուրս

գալը հրամայեց (ավելի շուտ գլխավոր հրամանատարի պաշտոնական, քան հոր խրատական՝ եղանակով), որ Ստեփանն այսուհետև ամեն օր արթնանալուց հետո և քնելուց առաջ ներկայանա իրեն, որտեղ էլ ինքն այդ ժամին լինի։

Ավագյանին պատվիրեց առաջիկայում ավելի խստորեն հետևել պատանիներին։

Բագրատյանը Թուրքերի շնորհած «որսարգելման» օրերն անգործությամբ չէր անցկացնում։ Հիմա, իրոք, կարելի էր ասել, որ պաշտպանության գործն առաջ է ընթանում բարձր մակարդակով։ Տասնյակների զինվորներն ու պահեստայինները վերջին շաբաթում պակաս չէին տքնել, քան մինչև օգոստոսի 4-ը։ Խրամատները լայնացրել էին, խորացրել, դիմացի բաց տարածությունն ապահովել արգելքներով։ Անցուղիներ էին փորված մինչև երկրորդ խրամատը, ինչպես և դրանց առջևի առանձին փոսերը, որպեսզի առավել խիզախ ռազմիկները կարողանային հարձակվող Թուրքերին հարվածել Թիկունքից կամ մաքրել ետ մնացողների հաշիվը։ Գաբրիելը գիշեր-ցերեկ պլուխ էր կոտրում, որ հարձակման ենթակա բոլոր տասներեք կետն էլ ապահովվեր պաշտպանության խորամանկ, հնարամիտ միջոցներով ու ծուղակներով։ Չէ՞ որ ճակատամարտի ելքը դրանցից ավելի շատ կախում ուներ, քան մարդկային արիությունից։ Այստեղ նրան ավելի քիչ էին օգնում Ստամբուլի սպայական դպրոցում հապճեպ ձեռք բերած գիտելիքներն ու Բուլաիրի ճակատամարտում ստացած հրետանային մկրտությունը, քան ֆրանսիական գլխավոր շտաբի տակտիկական ինչ-որ դասագիրք, որը մի անգամ զավեշտի համար գնել էր հնավաճառի խանութից։ Անակնկալ պատվի արժանացած այս գիրքը Գաբրիելին փիլիսոփայական տարօրինակ զգացում էր ներշնչում (ի՛նչ խոսք, հանիրավի)։ «Տակտիկական այս գիրքը ես ժամանակին առա, չունենալով որոշակի նպատակ։ Գուցե տիտղոսաթերթը դուր եկավ, գուցե անծանոթ նյութը հրապուրեց, թեև այն ժամանակ ռազմական գիտությունն ինձ բնավ չէր հետաքրքրում։ Բայց գիրքը գնելու պահին իմ ճակատագիրը, կամքիս հակառակ, կանխագիտակցաբար ինձ դրդեց այդ բանը կատարելու։ Այո, գիրքն իմ պատրաստի երջանկությունն էր՝ առաջին տառից մինչև վերջինը։ Դեռևս 1910 թվականին Քե Վոլթերի հին գրքերի խանութն իմ ուշադրությունը գրավեց, քանի որ այս գիրքը ինձ պետք էր գալու իմ հետագա նպատակների համար։ Ուրեմն, ես իմ ճակատագրի հարցում միայն դերակատար էի, այնպես, ինչպես Գոքբլենը*, որը կատակերգության մեջ մարքիզի դեր խաղալիս ձեռնոց-

ները մոռանում է սեղանին, ապա վերադառնալով՝ տիկնոջը տեսնում է սիրեկանի հետ։ Բայց թե Գոքըլենը գիտեր իր և մարքիզի միջև եղած տարբերությունը։ Մինչդեռ այս դեպքում իմ անձնավորությունն ու դերը միաձուլված են»։

Ի դեպ, սա փիլիսոփայական միակ խորհրդածությունն էր, որ շաբաթներով պտտվում էր նրա գլխում։ Իսկույն չանում էր թոթափել այդ խորհրդածությունը, իբրև ծանր բեռ։ Դեռևս Յողոնօլուքում, մարտական նախապատրաստության օրերին նկատել էր, որ իր գործնական մտածողությունը դժգունում է, երբ տեղի է տալիս հայեցողական հակումներին։ Այսպիսով, նա եկավ այն եզրակացությանը, որ իրոք գործնական մարդը (ինքն այդպիսին չէր) չպետք է երազող լինի։

Ինչ վերաբերում է տակտիկայի դասագրքին, այնտեղ Գաբրիելը գտավ բազմաթիվ նախազգուշացումներ, ցուցումներ, գծագրություններ, թվաբանական խնդիրներ, որոնք փոքր մասշտաբով կարող էր կիրառել ներկա պայմաններում։ Ջաուշ Նուրհան էլլեոնը և ենթասպաներն ամեն օր իրենց զինվորներին խստորեն վարժեցնում էին։ Գաբրիելը մանևրային բարդ առաջադրանքներ էր տալիս, որպեսզի զինվորներն ընտելանային ամեն քարին ու թփին, և հնարավոր բոլոր հարձակումների դեպքում պաշտպանության գործն ապահովված լիներ։ Վերին աստիճանի կատարելագործել էին տաքնապի ազդանշաններին մեքենաբար արձագանքելը։ Հարկ եղած դեպքում, չնայած վիթխարի տարածությանը, կարող էին մեկ ժամվա ընթացքում գրավել կամ թողնել բոլոր դիրքերը, տեղափոխել մեծ քանակությամբ զինվորներ։

Պակաս զարմանալի չէր նաև Քաղաքաձորում կատարվող աշխատանքը։ Պատվելի Թովմասյանի եռանդը պսակվեց հաղթանակով, ի հեճուկս մանր-մունր վեճերի, նեղմիտ հարևանների չկամության, հասարակական սննդի հետ կապված դժգոհությունների, ինչպես նաև մուխթարների գաղտնի ընդդիմադրության ու քննադատության։ Դարձյալ եվրոպացին էր (երեք տարի ուսանել էր Ժնևում), որ այնպես հաջողությամբ օժանդակում էր Գաբրիելին արևելյան հաշտվողականության դեմ մղվող պայքարում։ Անշուշտ, Տեր-Հայկազունն անհամեմատ ավելի զորեղ անձնավորություն էր, քան սքանչելի Արամը, այնուհանդերձ հայկական հովտի առաջնորդական փոխանորդը հյուսիսում տեսել էր միայն էջմիածինը, հարավում՝ միայն Երուսաղեմը, արևմուտքում՝ միայն Ստամբուլը և լիովին զերծ չէր խոցելի երևույթների հանդեպ ունեցած անտարբերությունից, որն այնքան ծանրացնում էր եվրոպացու կյանքն արևելքում։ Չնայած մարդկանց վրա ունեցած իր անհերկրա ազդեցությանը, Տեր-Հայկազունը հազիվ թե Արամի նման գործն այդքան արագ գլուխ բերեր, Քաղաքաձորի բացօթյա խեղճ ու կրակ ճամբարը տասն օրում դարձներ ավան, թեկուզ դա հիշեցնում էր Հայր-Աբրահամի ու մյուս նախահայրերի ժամանակվա գյուղերը։ Ամեն ընտանիք, աղքատ թե հարուստ, արդեն ուներ ճյուղերով ու տերևներով ծածկված խրճիթ անձրևից ու քամուց պաշտպանված մի քանի քառակուսի մետր տարածություն, որը գորգերի, խսիրների ու անկողինների շնորհիվ բնակարանի տպավորություն էր թողնում։ Հարազատ օջախի այս դժգույն արձագանքը բավական էր, որպեսզի մարդկանց օրորեր սփոփիչ պատրանքով, ներշնչեր այն հույսը, թե այստեղ ևս երկար կտևի իրենց երկրային գոյությունը։ Ոչ միայն գաղթականները համայնքների էր բաժանված, այլև խրճիթներից փողոցներ էին կազմվել, որոնք գալիս, միանում էին մեծ խորանին։ Քաղաքաձորի գետինն անհարթ էր, խորդուբորդ, բայց գաղթականն այնպես էր կառուցված, և ճանապարհներն այնպես էին պատրաստված, որ անհարթությունը բավական մեղմանում էր։ Խորանի հրապարակը՝ պարզունակ, բայց խիտ բնակեցված ավանի կենտրոնը, ազդու տպավորություն էր թողնում։ Երբ մուխթար Քեբուսյանը գլուխ բերեց իր փայտաշեն թաղապետարանը, մյուս վեց պաշտոնակիցները քուն ու դադար կորցրին, մինչև իրենք էլ, իբրև ոչ պակաս արժանավոր համայնապետեր, նման ամրոցիկներ կառուցեցին խորանի հրապարակում։

Վարպետ Թովմասյանի գլուխգործոցը, իհարկե, դարձյալ մնաց կառավարական մեծ շենքը, որը ոչ միայն իսկական դռներ ու պատուհաններ ուներ, այլև ծածկված էր շինարարի հոգեպահուստ բարակ տախտակներով։ Շենքի ամրությունը կարծես խորհրդանիշն էր այն խիզախ հույսերի, որոնցով տոգորված էին լեռան պաշտպանները։ Կառավարչատունը երեք բաժին ուներ՝ միջնասենյակ, խորհրդարան, եզրային երկու փոքրիկ խցիկ։ Աջ եզրախցիկը խորհրդարանից հաստ պատով բաժանված էր։ Դա պետական բանտի դեր էր կատարելու, եթե հարկ լիներ ազատելու որևէ վտանգավոր հանցագործից։ Բայց Տեր-Հայկազունի համոզմունքով այդ պատժարանն ավելորդ էր լինելու։ Ջախակողմյան խցիկը հատկացված էր դեղագործ Դրիգորին։ Սա իր և քաղաքականության արանքում շարել էր գրքերի պատը, որի ետևում իր անկողինն էր։ Ելումուտի համար միայն մի նեղ ճանապարհ էր թողել։ Նախշուն հալոցները, անոթներն ու թորանոցները շարել էր պատի դարակի վրա։ Նավթամանները, ծխախոտի հակերն ու խոզանակները, ի մեծ գոհունակություն ծերունու, չկային, քանի որ գրանք այժմ համայնական սեփականության մեջ էին մտնում։

Այսպիսով, կառավարչատունը ոչ միայն պառլամենտի, նախարարության և դատարանի շենք էր, այլև գրադարան ու համալսարան։ Գրիգորն այստեղ էր ընդունում իր սաներին՝ ուսուցիչներին, նրանց հաղորդում իր գիտելիքները։ Ներունին օրեցօր ավելի ու ավելի հաղվադեպ էր խցից դուրս գալիս։ Սեփական անձն ավելի նեղ շրջանակի մեջ պարփակելով՝ նա հավանաբար ուզում էր մոռանալ Դամլաջրքի մեծ բանտարկությունը։ Հավանաբար ուզում էր չտեսնելու տալ նաև իր կյանքում տեղի ունեցած ամբողջ փոփոխությունը և այդ նպատակով եղելությունը վանում էր տեսողության ոլորտից։ Ժամերով արձանացած նստում էր անկողնում, դարակից մի գիրք վերցնում, բայց կրկին զգուշորեն դնում տեղը։ Մարմինն զգալիորեն կուչ էր եկել։ Կարևոր պաշտոնյաներ դարձած ուսուցիչները նրան հաղվադեպ էին այցելում։ Իսկ երբ գալիս էին, դեղագործն իր սաներին ամեն անգամ ավելի դառնորեն էր հիասթափեցնում. նրանց գիտելիքներն այլևս չէր հարստացնում համաշխարհային գիտության չլսված նվաճումներով, այլ խորիմաստ խրատներով համեմված ինչ-որ մութ պատմություններ էր հրամցնում։ Հենց այդ պատճառով էլ ուսուցիչներն իսկույն թողնում էին, հեռանում։ Հրանտ Ոսկանյանն իր երբեմնի հարգարժան վարպետի հանդեպ նույնիսկ լցվել էր ծայրահեղ հակակրանքով։ Դա բնորոշ էր ներկա ռազմիկի, բայց ոչ նախկին բանաստեղծի համար։

-- Ներուկի խելքն այնքան էլ տեղը չէ,— մի անգամ ճանապարհին ասաց նա Շատախյանին, բայց սա ատամներով պաշտպանեց ամբաստանված դեղագործին։

Ավագների մեծ կամ փոքր խորհրդակցությունների ժամանակ Գրիգորն իր խուցը չէր լքում, թեև ինքն էլ ընտրյալների թվին էր պատկանում։ Մանդարինի դեղին դեմքով և շեղ աչքերով հեռվից էր դիտում խորհրդարանը. կարծես այդ մարդկանց լեզուն առհասարակ չէր հասկանում։ Բայց գիշերներն իր դարանից դուրս էր գալիս, նստում կառավարչատան առաջ։ Անթարթ նայում էր խորանի սրբապատկերի տակ մշտապես վառվող լույսին, հրապարակը լուսավորող երկու լապտերին, դիտում խրճիթների արանքում ոլորվող նեղլիկ փողոցները, որտեղից լսվում էին քնած մարդկանց անորոշ ձայներ։ Կես ժամը մեկ գալիս անցնում էին գիշերային պարեկները, խոսակցում հետը։ Բայց ծերունին չէր պատասխանում, միայն շարունակ գլուխն էր տմտմբացնում։ Թվում էր, թե շարժուձևով անսահման հիացմունք է արտահայտում, այնինչ իրականում դա ֆիզիկական կասկածելի անկման առաջին նշանն էր։

Առանց հուզմունքի դժվար էր տեսնել, թե ինչպես մարդկության հինգ հազար հոգիանոց այդ փոքրիկ բեկորը չափազանց կարճ ժամանակամիջոցում կտրեց անցավ քաղաքակրթության երկար ու ձիգ ուղին։ Ժողովուրդը լեռան բարձունքներում գրեթե ամեն ինչից զուրկ էր։ Նավթի չնչին պաշար, մի քանի մոմ, առավել կարևոր գործիքներ,— ահա այն ամենը, ինչ նա ժառանգել էր քաղաքակրթությունից։ Առաջին իսկ տեղատարափ անձրևը սև բերեց սակավաթիվ վերմակների, ներքնակների, սավանների ու խսիրների գլխին։ Մինչդեռ միայն դրանք էին հարազատ օջախի պատրանք ստեղծում։ Այնուհանդերձ, ամենազոր մահը և ծայրահեղ կարիքը չկարողացան մարդկանց մեջ մեռցնել աստվածահաճո ձգտումը՝ կրոնի, կարգ ու կանոնի, բանականության ու հոգևոր զարգացման հանդեպ ունեցած կարոտը։

Տեր-Հայկազունը նախկին սովորությամբ պատարագում էր կիրակի և տոն օրերին։ Դպրոց-պուրակում ուսուցիչները պարապում էին երեխաների հետ։ Յոթանասունամյա Պետրոս Ալթունին և Մայրիկ Անթառամը հիվանդանոցում օրինակելի կարգ ու կանոն էին ստեղծել։ Բոլոր ավագների հետ վիճում էին, իրենց հիվանդների համար պահանջում ամենալավ սնունդը։ Հովտում ունեցած կենսամակարդակի համեմատությամբ այստեղ բարոյական ընդհանուր վիճակը նույնիսկ ավելի բարձր էր։ Սմքած ու գունաթափված դեմքերին անկեղծ գոհունակություն էր դրոշմված։ Մարդիկ այնքան պարտականություններ ունեին կատարելու, որ օգոստոսյան երկարատև օրերը կարճ էին թվում։ Առավոտյան ժամը չորսին սկսում էին աշխատել։ Կթվորուհիները գնում էին հրապարակ, ուր հովիվներն արդեն բերած էին լինում այծերն ու ոչխարները։ Կաթը մեծ ամաններով տանում էին Քաղաքաձորի արևմտյան սահմանագլուխը, որտեղ արդեն սպասում էր Մայրիկ Անթառամը։ Նա կաթը բաժանում էր ընտանիքներին, հիվանդանոցին, մի մասն էլ առանձնացնում պանիր պատրաստելու համար։ Նույն ժամին կանայք ու աղջիկները երկար շղթա կազմած՝ իրար ետևից ուխտավորների նման իջնում էին դեպի մոտակա աղբյուրները, կավե խոշոր սափորները լցնում վճիտ ջրով։ Այդ ամանների մեջ ջուրն ամռան ամենաշոգ օրերին էլ սառն է մնում։ Բաղմաթիվ աղբյուրներն իրենց հրաշալի ջրով պետք է համարել այն մեծագույն բարիքներից մեկը, որ Մուսա լեռը շնորհում էր իր զավակներին։ Երբ ջուր բերող կանանց ու աղջիկների խումբը տուն էր վերադառնում, յոթ մուխթարները ճանապարհ էին ընկնում դեպի արոտավայրը, ընտրում հաջորդ օրվա մսացու անասունները։ Ինչ վերաբերում է մսի սպառմանը, ապա սկզբում հեռանկարը շատ էր սպառնալից։

Այս կողմերի դմակավոր ոչխարը, հակառակ իր կենդանի կրկնակի քաշին, հազիվ քսան օխա[1] կամ այլ կերպ ասած, մոտ քսանհինգ կիլոգրամ ուտելու միս տա։ Քանի որ ավելի քան հինգ հազար հոգի, որոնցից շատ-շատերը ֆիզիկական ծանր աշխատանք էին կատարում, ստիպված էին ապրել այդ մսով, ապա ամեն օր մորթվող ոչխարների թիվը հասնում էր վաթսուն-վաթսունհինգի։ Այլապես կիսաքաղց կմնային զինվորներն ու աշխատավոր պահեստայինները։ Բայց լեռան վրա կյանքը որքա՞ն ժամանակ կարող էր շարունակվել, եթե հոտերն այսքան սարսափելի չափերով նվազեին։ Այս հաշիվն ամեն մեկն էլ կարող էր անել։

Տեր-Հայկազունն ու պատվելի Արամն արդեն երրորդ կիրակի օրը խիստ կարգադրություն արին. մորթված անասուններից ոչ մի բան չպետք է դեն նետել, նույնիսկ փորոտիքը։ Միաժամանակ իշեցրին ամենօրյա մսի քանակը։ Արդեն մորթելու էին օրը երեսունհինգ ոչխար և տասներկու այծ։ Սակայն դրանով չվերացավ մսացու կենդանիներին սպառնացող մյուս վտանգը։ Քաղաքաձորի զանազան շինություններն ու խրամատները ահագին տարածություն էին գրավել, կրճատել արոտավայրերը։ Առաջին իսկ օրերից նկատվում էր, որ հոտերն զգալիորեն կորցնում են իրենց քաշը։ Իսկ դրանք Հյուսիսային լեռնաթամբի ետևում տարածվող մարգագետիններն ուղարկելը վտանգավոր էր։

Սպանդանոցը Քաղաքաձորից բավական հեռու էր, փոքրիկ անտառի մոտ։ Համենայն դեպս, ամեն առավոտ գաղթական էին հասնում մորթվող անասունների մահասարսուռ ձայները։ Սկզբում մաքրած խոյերն ու մաքիները կախում էին ծառերից, մեկ կամ երկու օր թողնում։ Բայց քանի որ ամռան սաստիկ շոգից միսն արագ փչանում էր, առաջին դառը փորձությունից հետո սկսեցին մորթած անասունները պահել հողի տակ։ Այդպես ավելի հարմար էր, և միսը թարմ էր մնում։ Երբ վաղ առավոտյան մսագործների մի մասն իր աշխատանքն ավարտում էր, անմիջապես վերադառնում էր դիրքերը։ Գործի էր անցնում մյուս մասը։ Գերաններից պատրաստած երկար սեղանների վրա միսը կտրատում էին, կարգավորում։ Խոհանոցում աշխատող կանայք միսն այստեղից առնում էին եփելու։ Բաց օդում տասը քարե օջախների մեջ խոով և փայտի խոշոր կտորներ էին վառվում։ Կրակի վրա օրորվում էին եռոտանի բարձր հարմարանքներից կախված հսկայական կաթսաներ։ Միսը խորովում էին առանձին՝ երկար ձողերի և շամփուրների վրա շարած։ Ճաշը օրական մի անգամ բաժանում էին մուխթարները՝ պատվելի Արամ-

[1] օխա — թուրքական կշռաչափ՝ 1 կգ 283 գրամ

մի ներկայությամբ։ Ամեն գյուղի բնակչության հասանելիքը գարսվում էր գերանե երկար սեղանների վրա, ըստ ընտանիքների։ Օրինակ, ասենք, Բիթիասը, որը Հարությունն Նոխուդյանի բողոքականներին կորցնելուց հետո հարյուր տասներկու ընտանիք ուներ։ Հարյուր տասներկու տանտիկին հերթով մոտենում էին իրենց գյուղի սեղանին, մուխթարից ստանում իրենց բաժինները։ Որևէ պաշտոնյա, մեծ մասամբ գյուղի քահանան կամ ուսուցիչներից մեկնումեկը, ցուցակով ստուգում էր, թե քանի հոգի ճաշ ստացան, և ընտանիքների դիմաց նշան էր անում։ Բաշխման այս եղանակը, անշուշտ, երկար ժամանակ էր խլում, առիթ տալիս տաք վիճաբանությունների։ Բնությունը ոչխար կամ այծ ստեղծելիս արդարության մասին բավականաչափ հոգ չէր տարել։ Ոմանց կրծքի կամ փորի հիանալի միս էր հասնում, ոմանց էլ՝ միայն մկանուտ կամ ոսկրոտ մասերը։ Նեղսիրտ կանայք այս տարբերության պատճառը համարում էին ոչ թե ճակատագիրը, այլ շարակամ մարդկանց հնարած խարդախությունն ու ստոր խորամանկությունը։ Չէ՞ որ այդ կարգի մարդիկ դիտմամբ վատություն են անում։ Պատվելի Արամն իր հաշտարար արվեստի ամբողջ զորությամբ ստիպված էր լինում բորբոքվողներին համոզել, որ դա պատահականության խաղ է։ Որևէ Երանուհու կամ Գոհարի ապացուցում էր, որ եթե նրանց բախտն այսօր երես է թեքել, ապա երեկ ժպտացել է։ Սրանք ընդունակ չէին տրամաբանական նման լուսաբանումներ ըմբռնելու և խեթ-խեթ նայելով հեռանում էին, մտովի կրկնապատկելով իրենց կրած վնասները։

Բնակչության հասանելիքը բաշխելուց առաջ ճաշի լավագույն մասն առանձնացնում էին զինվորների համար, պատանեկան զորախմբի ներկայացուցիչների միջոցով ուղարկում դիրքերը։

Բոլորն էլ պետք է այդքանով յոլա գնային։ Երեկոները պղնձյա նույն կաթսաներում միայն ջուր էր եռում։ Մեջն ինչ-որ արմտիք էին գցում, անհամ բուսաջուրն անվանում «թեյ»։

Պատվելի Արամը սահմանել էր նաև կարգ ու կանոնի մշտական հսկողություն։ Տասներկու հոգի, իբրև ոստիկաններ, զինված հետևում էին Քաղաքաձորի անդորրությանը։ Գիշեր-ցերեկ պարեկային ծանրաշարժ ու սպառնալից քայլերով շրջագայում էին խրճիթների արանքում, բնակիչներին զգացնում, որ ռազմական օրենքն ուժի մեջ է, և ամեն ոք պետք է կրկնակի չափով զուսպ լինի։ Հսկիչները պատասխանատու էին նաև ընդհանուր մաքրության համար, մի բան, որ Թագրատյանը, պատվելի Արամը, Ալթունին, Շատախյանն ու մյուս «եվրոպացիները» մոլեռանդորեն դարձրել էին կենսական մեծ խնդիր։ Գյուղերում անվիճելի

համարվող շատ բաներ այստեղ արգելված էին։ Աղբը դռների առաջ կիտել, կեղտաջուրը փողոց թափել չէր կարելի։ Բնական պետքերի համար մարդիկ պարտավոր էին գնալ ավագների խորհրդի սահմանած տեղերը։ Բաղրատյանն ի տկզբանե փորել էր տվել խոր փոսեր։ Եթե որևէ մեկը կարգապահության օրենքի դեմ ոտնձգություն կատարեր, կպատժվեր. խորհուրդը նրան կդատապարտեր մեկօրյա ծոմի, այսինքն մի անգամ կզրկեր ճաշից։

Նոր պայմաններում առօրյա կյանքով ապրելու անհրաժեշտությունը, որն այնպես իմաստնորեն պնդում էր Տեր-Հայկազունը, իր քաղաքացիական իրավունքները ներկայացրեց շատ ավելի վաղ, քան սպասում էին։ Լեռան առօրյան, իհարկե, զգալիորեն տարբերվում էր հովտի անվրդով առօրյայից և լի էր տարաձայնություններով ու խստություններով։ Որոշ ժամերի, մանավանդ տոն երեկոները, երբ մարդկանց միտքն այլևս աշխատանքով զբաղված չէր, ընտանիքների վրա ծանրանում էին դժգոհությունն ու գրգռվածությունը։ Այդ իսկ պատճառով պատվելի Արամը ավագների խորհրդում այն տեսակետը հայտնեց, թե արտասովոր խստությունները պետք է հավասարակշռել որոշակի միջոցառումներով, որպեսզի իրիկնային պահերին մարդկանց հոգիները փոքր-ինչ ազատվեն կաշկանդվածությունից։ Լավ կլիներ, եթե երկրորդ կամ երրորդ օրվա երեկոն ինչ-որ ուրախալի բան խոստանար։ Ժողովուրդը կարող էր հավաքվել խորանի հրապարակում, լսել ավագներից մեկնումեկի խոսքը։ Դա, անշուշտ, չպետք է վերաբերեր ներկա իրադրությանը, այլ ազգի ընդհանուր վիճակին ու կյանքի ընթացքին։ Այդ հարցերը մարդկանց միտքը կարող էին տանել հեռուները, վեհացնել սրտերը։

Գաբրիելն իսկույն համաձայնեց։ Բայց Տեր-Հայկազունը հազիվ նկատելի ժպիտով աչքերը բացեց, դուրս լողալով իր մտորումների ծովից, ուր հաճախ էր խորասուզվում։ Նա ասաց, որ այդ գեղեցիկ նախաձեռնությունը կրում է չոր ու ցամաք, վարժապետական բնույթ։ Վերամբարձ ճառը, ինչ խոսք, օգտակար է լուրջ և շրջահայաց տղամարդկանց համար, որոնց թիվը, դժբախտաբար, շատ քիչ է, մինչդեռ կանանց, աղջիկների, ամբողջ երիտասարդության սրտին ոչինչ չի ասի։ Իսկ ժողովրդի այդ հեղհեղուկ, զգացմունքներով առաջնորդվող զանգվածից ավելի շատ կախում ունի գաղթականի դիմադրական ուժը, քան չափած-ձևած, լրջաբարո մարդկանցից։ Այնպես որ տառապալից օրերին պետք է հաջորդի որևէ անմեղ զվարճալիք, ուրախ մոռացման երեկույթ։ Գաղթականում բավական թվով կատակաբաններ ու հեքիաթասացներ կային, պարողներ ու նվագողներ։ Երկու մուսալեռցուց մեկն անպայման թառ կամ սազ ուներ։ Քամանչայի, սրնգի վարպետներ էլ կային։ Դհոլչիների մասին խոսելն արդեն ավելորդ էր։ Երաժշտությունը ուսուցիչ և դպրապետ Ասայանի տարերքն էր։ Հենց նա էլ կարող էր գլխավորել տոնական միջոցառումները։

Թելի պես բարակ երգիչը խորապես զարմացավ, որ իր ոխերիմ թշնամին ու խոշտանգողը՝ Տեր-Հայկազունը, իրեն այդպիսի գործ է վստահում։ Ավելի զարմացավ, երբ կոպիտ զվարճությունների հակառակորդ վարդապետը ոչ միայն արտոնել, այլև պատվիրել էր փայտե պարահարթակ պատրաստել, ինչպես Յողոնլուքում։ Բայց չլսված բան էր, որ նա բնավ չառարկեց, երբ վարպետ Թովմասյանն իր աշակերտների հետ կոշտ ու կոպիտ տախտակներից սատանայական բեմ պատրաստեց մեծ հրապարակի եզրին, սրբազան խորանի դեմ-դիմաց։

Հետևյալ երեկոյան կայացավ առաջին պարահանդեսը։

Տեր-Հայկազունի գլխավորությամբ եկան խորհրդի անդամները, բոլոր երևելիները, նաև Գոնզագ Մարիսն ու Ժուլիեթը, որոնց Գաբրիելը դիտմամբ էր հրավիրել։ Պատվելի Արամը հավաքվածներին դիմեց հակիրճ ճառով։ Նա աստծուց ներումն հայցեց այն բանի համար, որ տանջանաց ահավոր օրերին աշխարհիկ պետքերով գայթակղված՝ զվարճություն են փափագել։ Պատվելուն շեփորային իր սուր ձայնով փոխարինեց ուսուցիչ Ասայանը (նայողը նրանից այդպիսի ձայն երբեք չէր սպասի)։ Դպրապետը կատարեց հայրենասիրական մի քանի երգ, որոնցից մեկն ահա այսպիսի բոցաշունչ տողեր ուներ.

Բարձր են լեռներն Հայաստանի...
Հուրն ի՞նչ կանի, սուրն ի՞նչ կանի...

Գեղարվեստական բաժնի հաջորդ մասնակիցը Բաղրատյանի տան գրամոֆոնն էր։ Իրիկնային օդում նախ ծավալվեց «Մարգարեն»-ի խուսոտ քայլերգը, ապա մեղմ հնչեց Էդվարդ Գրիգի «Օզենի մահը» տխրածոր պիեսը։ Հարթակի վրա կիսաշրջանաձև կանգնած հոծ բազմությունը երազների մեջ ընկավ. կարծես նորվեգացին այդ հանդարտահոս երաժշտությունն իր՝ ժողովրդի սրտի խորքից էր պեղել հանել։

Էդվարդ Գրիգից պակաս հաջողություն գտավ ոտքից գլուխ սպառազինված Հրանտ Ոսկանյանը։ Հենց որ երաժշտությունը լռեց, նա բեմ բարձրացավ, որոտաձայն արտասանեց երկու վերամբարձ բանաստեղծություն։ Ձայնի մեջ այնպիսի պոռթկուն ատելություն կար, կարծես մեղադրող դատավորը դիմում էր ինչ-որ ոճրագործի։ Բառերն այնպիսի

մոլեգնությամբ էին իրար բախվում, որ ունկնդիրներից շատ քչերը բան հասկացան։ Առաջին բանաստեղծության տպավորությունն այնքան էլ վատ չէր։ Դա կոչվում էր «Հայկակներուն օրորանը» և ծանոթ էր մարդկանց.

Շինված է ան նոճիով՝
Եվ արյունով ներկված.
Կ'երգեն բվերն իրեն քով.
Կ'օրրե մը բրրիկը կատաղած։

Կամարեն վար կկախվին
Կապույտ, կապույտ ուլունքներ.—
Աչքունքներն են երկնքին՝
Ինկեր ցուրտեն հոն սառեր։

Խոնավության մեջ, մուրին,
Որով խրրհիին է լեցուն,
Լուռ կճոճի օրոցքն հին,
Հին վրեժին պես իմ հոգվույն։

Անդունդ մ'է ան՝ ուր Հայն իր
Վիշապներն հետ կծրնի,
Ուր համբույրներն, վարդերն հիր
Կբուրեն հոան արյունի։

Ոչ մեկ գիրգ ծոց մնոզական
Հոն կբանա իր երկինք.
Խավարներն հոն մայր կ'ըլլան,
Եվ կայծակներն ալ՝ ըստինք։

Ու ճիչերու մեջ, լացի,
Տրժգույն տղան կըմեծնա,
Բարեկամի, դիպվածի
Ձեռքերուն մեջ կըմեծնա։

Եվ գուցե վազն ան ըլլա
Ռազմիկ մ'հրաշյա, շանթող ամպ.
— Մեզ մուրն Հիսուս մը կուտա՝
Իսկ հայ օրոցքն՝ Ապրստամբ...

Ցավոք սրտի, Ուրբաթախոսը չբավարարվեց Վարուժանի այս հալածական բանաստեղծությամբ։ Իրեն էլ գուսան էր համարում։ Ունկնդիր հասարակությանը նա երջանկացրեց նաև իր սեփական երկարաշունչ մի ոտանավորով։ Սրա միակ առավելությունն այն էր, որ կատաղի տեղատարափի նման զարկում էր ու անցնում, չնայած տները բավականաչափ շատ էին։ Երբ շփոթված և բանականությունից զուրկ ամբոխը

ոչ մի ծափահարությամբ չշոյեց գուսանի լսողությունը, նա բարձրացրեց իր մաուզերյան հրացանը (հայտնի չէր՝ ողջունելո՞ւ, թե՞ սպառնալու նպատակով), ապա դոտոզաբար հեռացավ բեմից, իր տեղը զիջելով երաժիշտներին։

Սկսվեց տոնական ծրագրի լավագույն մասը։ Նախ, կոտրատվելով, ասպարեզ մտան երիտասարդները, ապա մի քանի զույգ ցուցադրեցին «Թարս պար», «Բոլոր պար», ինչպես նաև լեռնցիների մյուս, առավել կրակոտ պարերը։ Քիչ անց Գաբրիելը Ժուլիեթին ևս պարողների մեջ քաշեց, ուզեց նրա հետ ինքն էլ փորձել։ Մի քանի րոպե հետո Ֆրանսուհին խնդրեց վերջ տալ, քանի որ նման պարերից ոչինչ չէր հասկանում։

Գոնզագ Մարիսն ու Հրանտ Ոսկանյանն էլ մերժում ստացան։ Բանաստեղծն իրեն մխիթարում էր այնքանով, որ մերժումը վերաբերում էր նաև «պճնամոլին»։ Բայց Իսկուհին «Բոլոր պարը» Գաբրիելի հետ պարեց մինչև վերջ։ Ջահերի թրթռուն լույսի տակ աղջիկը թվում էր կայտառ ու վարդերես, մինչդեռ վնասված թևը երբեք այնպես չէր ցավել, ինչպես պարելիս։

Շուտով Գաբրիելը գնաց Հյուսիսային լեռնաթամբ, իսկ կանայք ըրվեցին։ Բայց ժողովուրդը երկար մնաց, բորբոքելով կրակը։ Որքան էլ տարօրինակ թվա, պարողների մեջ աչքի էր ընկնում Սարգիս Կիլիկյանը՝ Ռուսը։ Ուղղակի պարարվեստի վարպետ էր։ Չնայած անհրապույր արտաքինին, աղջիկները բավականությամբ էին հետը պարում։ Ճկուն ու ճարպիկ մարմինը փոթորկալից շարժումներ էր կատարում, իսկ պարուհիների վերևում հանդիսավոր անտարբերությամբ օրորվում էր երիտասարդ, բայց արդեն կյանքից ձանձրացած մարդու մեռելային գլուխը։

Տկարամիտ Գևորգը զույգերի արանքում պտտվում էր, ինքն իր մեջ խորասուզված։ Այս անգամ ձեռքին ոչ թե արևածաղիկ կար, այլ մրտենու ճյուղ։

Ահա մուսալեռցիների առաջին տասնչորս օրվա կյանքի թռուցիկ նկարագրությունը։ Այդ սաղմն իր մեջ ուներ այն ամենը, ինչ բովանդակում է ամբողջ մարդկության կյանքը։

Ժողովուրդն ընկել էր անապատ, նեռված էր տարածության ամայի գիրկը։ Նրան անդիմադրելիորեն պաշարել էր մահը, և փրկություն հուսալ կարող էին միայն մոլեռանդները։ Ժողովրդի պատմության այդ կարճ հատվածը զարգանում էր նվազագույն դիմադրության բնական օրենքով։ Վերջինս նրան պարտադրեց համայնական դենսաձև, որին մարդիկ ուզած-չուզած համաձայնեցին, թեև անհամեմատ դերադասում էին

նախկին մասնավոր եղանակը։ Հարուստները, մանավանդ խոշոր հողեր ունեցողները, սեփականազուրկ լինելուց հետո խորապես տառապում էին։ Լիովին համոզված էին, որ տարագրության ճանապարհին սեփականությունից շատ ավելի առաջ կորցնելու էին իրենց կյանքը, բայց աղքատանալու դատնությունը խորն էր, և սարսափը չէր սփոփում։ Այժմ էլ, երբ ժողովրդի կյանքը շաբաթների կամ օրերի հարց էր, այդ մարդիկ ամեն ինչ անում էին, միայն թե որոշ բարեկեցությամբ տարբերվեին հասարակ խավերից։ Հակառակ օրվա ծանր պահանջներին, ինքնամոռացման, վայելքի, նույնիսկ ոգու ազատության հանդեպ այս ժողովրդի ունեցած կարոտը նույնքան դժվար էր սանձահարել, որքան աշխարհի մյուս բոլոր օրինավոր քաղաքներում։ Միայն մի մարդ կար՝ դեղագործ Գրիգորը (այդպիսի մարդիկ, իհարկե, ամեն տեղ չկան), որը, իբրև մեծ ստոյիկ, արնաներկ սրի տակ անգամ իր համայնապարփակ գիտությունն ավելի շատ քաղում էր կործանարար անէությունից, քան տիրելի գրքերից։ Անապատի եղերին մահվան դեմ պաշտպանական պատնեշներ էին դրված, բայց այդ պատնեշների ներսում ժողովուրդն իրեն անհասկանալիորեն ապահով ու անխոցելի էր զգում, այնքան, որ նույնիսկ ծիծաղելի վեճերով էր տարվում, նույնիսկ երեկոները երգում էր, պարում։ Կյանքի պահանջները մնում էին անսասան։ Մարդիկ այլևս չէին կարող վերադառնալ հովիտ, դրախտային այն ժամանակները, որտեղից մարդկության այս փոքրիկ բեկորը առանց որևէ մեղք ունենալու վտարվեց կառավարական բարձր շրջանների զարհուրելի հրամանով։ Վերադարձ չկար, բայց դրա փոխարեն կային սքանչելի մարդիկ, որոնց գոյությունը ձախորդության մեջ ընկած ժողովրդի համար աստվածային շնորհ էր։ Այս արժանավոր մարդիկ՝ ժողովրդի անվեհեր առաջնորդները, որոշ չափով իրենց էին ենթարկում Մովսեսի լեռան պայմանները։ Այնպես որ դյուրահավատները բարձր տրամադրության պահերին կարող էին հուսալ. «Ի վերջո ոչ թե ճակատագիրը կհաղթի մեր առաջնորդներին, այլ մեր առաջնորդները՝ ճակատագրին»։

Գաղթականության կենտրոնում խորանն էր։ Գիշերային պահակների վերջին հերթափոխության ժամանակ, լուսաբացից մեկ ժամ առաջ, երբ դեպի հարավ Մեր-Կաթինը շրջան էր գծում խորանի վերևում (կարծես հենց դա էր տիեզերքի կենտրոնն ու պորտը), Տեր-Հայկազունը ծունր էր իջնում սանդուղքի ամենաբարձր աստիճանի վրա, գլուխը սեղմում բաց ժամագրքին։ Վարդապետը կյանքի բովով անցած կասկածամիտ մարդ էր։ Հենց այդ պատճառով էլ աղոթքի ամբողջ զորությունն այնպե՞ս չեր-

մեռանդորեն էր ամբարում իր կրծքի տակ։ Եթե ոչ ոք այլևս չհավատար փրկությանը, ապա ինքը պարտավոր էր, իբրև միակ և վերջին մարդը, տոգորվել գալիք հրաշքի, աներկբա փրկության, մահվան ճիրաններից ազատվելու այնպիսի հավատով, որը կարող է լեռներ շարժել տեղից։ Գաղթականների կյանքից չբխող այս լեռնաշարժ հավատի համար մաքառում էր Տեր-Հայկազունի հոգին, մաքառում էր մենավոր, վեհերոտ աղոթքով։

Ժուլիեթի ապրելակերպն այժմ բոլորովին այլ էր։ Արևածագից առաջ վեր էր կենում, արագ-արագ հագնվում, շտապ գնում օգնելու կաթ բաշխող Մայրիկ Անթառամին, ապա ճանապարհ էր ընկնում դեպի հիվանդանոց։ Նրա կատարածը ողորմածություն չէր, այլ ինչ-որ ավելի ծանր մի բան, բոլորովին օտար միջավայրի ենթարկվելու, համակերպվելու փորձ։ Ուրիշ ելք չկար։ Գաբրիելն իրավացի էր։ Մահվան սպառնալիքի տակ գտնվող մարդկային հասարակության մեջ ոչ ոք չի կարող ապրել իբրև օտարական, առանց որևէ փոխադարձ կապի։

Կողմնակի դիտողը հեշտությամբ կմեղադրեր Ժուլիեթին։ Վերջին հաշվով ի՞նչ էր ուզում այդ բարձրաքիթ կինը։ Ի՞նչ հիմք ուներ այդպես երևակայելու, տասնհինգամյա ամուսնությունից հետո անգամ ասամ կրճատացնելու իր ամուսնու հայրենիքի դեմ։ Մի՞թե միևնույն ժամանակ եվրոպացի բազմաթիվ կանայք չէին ապրում արևելքում և իրենց կյանքը հերոսաբար չէին նվիրաբերում մորթվող, անարգվող հայ ժողովրդին։ Ուրֆայում չէ՞ր Կարեն Եփեն*, որն իր տանը փախստականների էր ապաստանել, ձեռքերը տարածած կանգնել դռան շեմքին, զափթիեների դեմ, մինչև սրանք հեռացել էին, քանի որ չէին հանդգնել սպանել դանիացի կնոջը։ Մի՞թե գերմանացի և ամերիկացի գթության քույրերը ծանրագույն տառապանքների գնով չէին գնում հասնում Դեյր էս Զոր անապատի խորքերը, որպեսզի իրենց տկար օգնությունը ցույց տային սպանվածների սովալլուկ, մոլորված կանանց ու երեխաներին։ Մինչդեռ այս կանայք ոչ մի առնչություն չունեին հայ տղամարդկանց հետ, ոչ մեկը հայ զավակ աշխարհ չէր բերել։

Նման կշտամբանքը և՛ տեղին էր, և՛ անարդարացի։ Ժուլիեթը չէր կարող սառնարյուն կամ ամբարտավան լինել. նա չափից ավելի դժբախտ էր։ Արդեն մուսալեռցի էր, ինքն իր մեջ ևս տառապում էր, չհաշված ընդհանուր տվայտանքը։ Իբրև ֆրանսուհի, բնածին քարացածություն ուներ։ Ռոմանական ցեղի ներկայացուցիչներն օժտված են արտաքին ճկունությամբ, բայց ներքուստ ծանրաշարժ են, ինքնամփոփ։ Ձևի մեջ

նրանք կատարելության են հասել։ Եվ այդ ձևով էլ սահմանափակվել են։ Հյուսիսի բնակիչները հետաքրքրասեր են, շարունակ փոխվում են, կերպարանափոխվում, ինչպես զանազան պատկերներ հիշեցնող հարաշարժ ամպերը։ Մինչդեռ ֆրանսիացիք առհասարակ չեն սիրում դուրս գալ ո՛չ իրենց երկրից, ո՛չ իրենց կաշվից։ Ժուլիեթը մեծ բաժին էր ստացել իր ցեղի քարացածությունից։ Նա զուրկ էր երևույթների էության մեջ ներթափանցելու ունակությունից։ Իսկ դա մեծ մասամբ հեղհեղուկ կասկածամտության ծնունդ է։ Եթե Գաբրիելն ի սկզբանե կնոջը հաստատակամությամբ և դդուշորեն ընդառաջ տաներ իր ցեղի աշխարհին, թերևս արդյունքը բոլորովին այլ լիներ։ Մինչդեռ Գաբրիելն ինքն էլ այն փարիզեցիներից էր, մեկն այն ապազգայնացած մարդկանցից, որոնց համար Հայաստանը դասականորեն ազնիվ, սակայն փոքր-ինչ անիրական բան էր։ Հայերի հետ ունեցած կցկտուր հանդիպումները, թուրքական հեղափոխության տարվա քաղաքական աշխույժ խոսակցությունները, Սամվել Ավագյանին աշխատանքի հրավիրելը,— այս ամենը շատ քիչ էր, որպեսզի Ժուլիեթի նման մի կին իրադրության մասին ճիշտ պատկերացում կազմեր, ուր մնաց, թե Գաբրիելը նրան հայերի կողմը գրավեր։ Տասնհինգ տարվա ընթացքում նա միայն այնքանը գիտեր, որ ինքն ամուսնացել է օսմանյան հպատակի հետ։ Իսկ թե ինչ բան է հայ լինելը, ինչ ճակատագիր ու պարտականություններ են դրա հետ առնչված, դա սարսափով իմացավ միայն մի քանի շաբաթ առաջ։ Այնպես որ Ժուլիեթի մոլորության մեղքը հիմնականում ընկնում էր Գաբրիելի ուսերին։ Այժմ ֆրանսուհուց վրեժ էր լուծում հայի բուռն սիրո թուլությունը, որը միշտ ընդունում էր օտարազգի կնոջ գերազանցությունը և մեծագույն քնքշությամբ էր վանում արյան տարբերությունից ծագող հակասությունները։ Բայց Գաբրիելը Փարիզում ինչո՞ւ պետք է այլ կերպ վարվեր, եթե Յոդոնսելուքում նրա հայությունն արթնացավ միայն իրերի բերումով։ Այժմ նա հաճախ էր մտաբերում աղա Ռիֆաաթ Բերեքեթի խոսքերը. «Եթե ամուսնացել ես հետը, ուրեմն՝ պետք է կրի քո ժողովրդի ճակատագիրը»։ Ժուլիեթը, հիրավի, կրում էր այդ ճակատագիրը, քանի որ առանց Գաբրիելի ու Ստեփանի փրկվելու դեպքում մի՞թե նույնքան դժբախտ չէր լինի կամ ավելի դժբախտ, քան այժմ։

Գաբրիելն ու Ստեփանը միակ հարազատներն էին ամբողջ աշխարհում, մոտ էին հոգուն, բայց և այնքան էին հեռու, կարծես իր և նրանց արանքում մի ամբողջ օվկիանոս էր ընկած։ Ժուլիեթն ինչ-որ անտարբերություն էր զգում. ամուսինն ու որդին նայում էին ինչ-որ քողարկված խստությամբ։ Երկուսից ոչ մեկն իր սերը ցույց չէր տալիս։ Ժուլիեթին

չէին սիրում։ Իսկ մյուս բոլոր մարդի՞կ։ Ժողովուրդը նրան ատում էր։ Ժուլիեթը դա կռահում էր քարեղեն սառնություն արտահայտող դեմքերից, այն լռությունից, որ ամեն անգամ հանկարծ տիրում էր գաղթականությունում, երբ հայտնվում էր ինքը։ Շաղակրատող կանանց մոտով անցնելիս զգում էր, որ նրանց նախանձոտ հայացքներից իր թիկունքն այրվում է։ Մուխթար Քեբուսյանի կինը՝ այդ լրտեսուհին, թող ինչքան կուզի շողոքորթի։ Ժուլիեթը համոզված էր, որ բոլորն էլ իրեն վատաբանում են՝ թե՛ մեկուսացման, թե՛ հիվանդապահության, թե՛ երեք վրանի հրապարակի համար, որի հեքիաթային շքեղության, աշխարհի ամենահամեղ ուտելիքների մասին խոսելիս ընչաքաղցների բերանի ջուրը գնում էր։ Ժուլիեթը բոլոր աչքերի մեջ կարդում էր օտարատյացություն, ծիծաղելի նախանձ։ Այս ամենից հետո ի՞նչ արժեք ուներ Շատախյանի և Ոսկանյանի նման երկու խենթի ցուցամոլությունը, որոնք ֆրանսուհու ներկայությամբ ամեն կերպ կոտրատվում էին, մերթ սիրալիր շաղակրատում, մերթ գոռոզաբար լռում։ Ժուլիեթի հետ լավ էր վարվում միայն Մայրիկ Անթառամը։ Բայց այդ բարությունը չէր գոհացնում։ Դա կանացի մեծ սրտից բխող կարեկցանք էր՝ ձախորդության մեջ ընկած քրոջ նկատմամբ։ Հապա Իսկուհի՞ն։ Տարեց և դեռատի կանանց միջև փոխադարձ օգնության բարեկամություն էր հաստատվել։ Եվ, այնուամենայնիվ, Իսկուհին օտարներից օտար էր, անհաղթահարելի խորթության առանցքը, ավելի օտար, քան գաղթականի որևէ այլ կին։

Ժուլիեթն այդ օրերին աննկարագրելի խռովք էր ապրում։ Նա ամենուրեք իշխում էր, փայլում, իր շուրջը միշտ ջերմություն ու զմայլանք էր ծավալում, իսկ այժմ նրան հաղիվ էին հանդուրժում և (դա ամենասոսկալի բանն էր) այլևս չէին հարգում։ Ժուլիեթին թվում էր, թե ընդհանուր անբարյացակամության պատճառով ինքն օրեցօր տգեղանում է։ Այլևս չէր հետևում իր դեմքին, արտաքինին. արդեն ամաչում էր սովորական արդուզարդից։ Ընկճվում էր նաև հոգնածությունից։ Հապա հալածված լինելու պատրա՞նքը։ Թվում էր, թե հայկական աչքերն ամեն կողմից իրեն են մեղադրում, ամբողջ ձաղորդության պատճառն իրեն են համարում։ Ծայր էր առել նաև մի նոր տառապանք՝ Ֆրանսիան։ Մուսա լեռան հովիտը թափանցող պատերազմական լուրերն առհասարակ տեղ էին հասնում թուրքական թերթերի միջոցով՝ շաբաթներ, ամիսներ տևող ուշացումով։ Այնպես որ Ժուլիեթը տեղյակ էր միայն Ֆրանսիայի պարտությանը, կարծում էր, թե թշնամի բանակները դեռևս իր հայրենիքի սրտումն են կանգնած։ Նա, որ միայն իր անձնական շահերով էր հետաքրքրվում, ձանձրանում էր իրեն չհուզող քաղաքականությանն ու

ընդհանուր ճակատագրին վերաբերող հարցերից, այժմ հանկարծ սկսեց տագնապով խորհել իր հայրենիքի մասին։ Մոր հետ առանձնապես մտերիմ չէր, քույրերի հետ հարաբերությունները գրեթե խզել էր, բայց դրանք արդեն հայտնվում էին երազում, անսահմանորեն մոտ էին, հարազատ։ Այժմ դրանք էին իմաստավորում Ժուլիեթի գիշերները փոքրիկ վրանում։ Մայրը շարունակ պառկած էր լինում մահվան մահճում։ Ինքը դանդաղ-ընթաց, դավաճան գնացքով հասնում էր Գար դը Լ'Էսթ, ցրտից դողահար, ոտաբոբիկ, կիսամերկ, ննջազգեստի վրայից միայն չադրա գցած՝ հարյուրավոր անվերջանալի նրբանցքներ չափչփելուց հետո վազելով ընկնում էր մայրիկի բնակարանը։ Սակայն մահամերձը ճարպկորեն շրջում էր կարկամած դեմքը, չէր ուզում տեսնել դստերը, ինչքան էլ սա դեսուդեն էր նետվում, փորձում որսալ մոր հայացքը։ Ոչ միայն մայրն ու քույրերը, այլև փեսաները, որոնցից մեկը ծովային մինիստրության պաշտոնյա էր, իսկ մյուսը՝ ինժեներ, վիրավորական, մերժող դիրք էին բռնում։ Իհարկե, լիակատար իրավունք ունեին, իբրև ծանր վիրավորված պահեստային սպաներ։ Հանդիպում էր դպրոցական ընկերուհիներին, բայց սրանք չնկատելու էին տալիս, թեև Ժուլիեթը փարվում էր նրանց ծնկներին։ Երբեմն հայտնվում էր հանգուցյալ հայրը՝ ինչպես միշտ, կոկիկ հագնված, սև սերթուկով, սև ձեռնոցներով, կարմիր ժապավենիկը կոճակի օղակի մեջ։ Զարմանքով նայում էր դստերը, կրկնում իր սիրած խոսքը. «Մարդ այդպիսի բան չի անի»։

Որքան ավելի տագնապալից էին անցնում գիշերները, այնքան ավելի ճշտապահ էր դառնում Ժուլիեթն իր աշխատանքում։ Բնավ էլ չէր ուզում «մարդամոտ» լինել, ինչպես խորհուրդ էր տալիս Գաբրիելը։ Ոչ, նա միայն ուզում էր հաղթահարել իր մենությունն ու լքվածությունը։ Ծառայում էր մեծ անձնազոհությամբ։ Սանձահարելով իր հոտառության նյարդերը, ծունկի էր գալիս հիվանդների՝ կոշտ ծածկոցների վրա պառկած կիսաանդգա ծերունիների առաջ, մերկացնում տենդահար մարմինները, մաքրում կեղտը, դեռևս մնացած անուշահոտ ջրերով լվանում այլանդակված դեմքերը։ Այդ օրերին նա շատ բան զոհաբերեց։ Տվեց սեփական սպիտակեղենի մի մասը, իրենց սավաններից կրծքի երեխաների համար խանձարուրներ, իսկ հիվանդների համար կոմպրեսի լաթեր կարեց։ Տան համար թողեց միայն ամենաանհրաժեշտը։

Բայց որքան էլ Ժուլիեթը ջանք էր թափում, տենդահարների ձկնային և առողջների անտարբեր աչքերում անհնար էր կարդալ երախտագիտություն կամ գեթ խրախուսանք։ Մինչդեռ նա օտար կին էր, պարտավոր չէր... Նույնիսկ Գաբրիելը գովեստի ոչ մի խոսք չէր ասում։ Դեռևս տասն

օր առաջ իր կնոջ մասին այնպես ասպետորեն հոգացող ամուսինը նրան կարծես ավելորդ բեռ էր համարում։ Եվ այսպես լքված՝ պետք է մեռներ Ժուլիեթը, առավել միայնակ, առավել թշվառ, քան Մուսա լեռան բարձունքում ապրող ամենաթշվառ մարդը։

Նման պահերին, երբ Ժուլիեթն ինքն իրեն խղճում էր, զգում էր, որ այնքան էլ լքված չէ, թեև այս բանը եռանդով թաքցնում էր անգամ սեփական սրտից։ Գոնզագ Մարիսը նրա կողքից չէր հեռանում այն օրից ի վեր, ինչ նկատել էր կնոջ աչքերից հառնող դժբախտ մոլորվածությունը։ Կրկնապատկել էր իր ուշադրությունը, հոլի նման շուրջը պտտվում էր, որ օգնի, ծառայի, որտեղ և ինչպես կարող է։ Ժուլիեթի աչքին այժմ Գոնզագը, ավելի, քան երբևէ, ֆրանսիացի մոր զավակ էր, իր նման կուլտուրական մարդ, հեռավոր ազգական։ Բայց վերջին օրերս այս անբընդհատ մտերմությունն ինչ-որ չափով խաթարվել էր՝ ոչ միայն Գոնզագի, այլև Ժուլիեթի մեղքով։ Մարիսը դարձյալ չէր խախտում պատշաճության սահմանները, բայց, մազաչափ անգամ չվիրավորելով կնոջ արժանապատվությունը, առաջին անգամ ֆրանսուհուն առիթ տվեց կռահելու իր ցանկությունը։ Սահմանը չխախտող, ձեռքերին ազատություն չտվող հույնի մտերմությունը Ժուլիեթին մատնեց նոր շփոթության։ Գոնզագի մասին շատ էր մտածում։ Այդ երիտասարդը դեռևս վտանգավոր էր, չնայած մայրը ֆրանսուհի էր։ Այն մարդիկ, որոնք կարող են իրենց միշտ զուսպ պահել և անվերջ սպասել, վտանգավոր են։ Գոնզագն էլ դրանցից էր. հուզվելիս ոչ թե կարմրում էր, այլ գունատվում։

Փոփոխությունն սկսվեց նրանով, որ Գոնզագը օրեցօր հրաժարվում էր Ժուլիեթի համար այնքան անհասկանալի գաղտնապահությունից, պատմում էր իր կյանքը։

Ամեն առավոտ Ժուլիեթը երեք կամ չորս ժամ մնում էր հիվանդանոցում։ Հաճախ դա տևում էր այնքան, մինչև հիվանդները ճաշ ստանային։ Տուն գնալիս նրան սովորաբար ուղեկցում էր Գոնզագը։ Եթե հարկ էր լինում, սա սպասում էր մինչև աշխատանքն ավարտվի։ Հույն երիտասարդի ուշադիր հայացքը շարունակ գամված էր ֆրանսուհու դեմքին։ Այդ աչքերը Ժուլիեթի համար զորավիգ էին։ Հիրավի, երբ նա շատ էր գործով տարվում, Մարիսը մոտենում էր, քնքշությամբ շշնջում.

— Բավական է, վերջ տվեք, Ժուլիեթ։ Նման աշխատանքը Ձեզ համար չէ։ Դա Ձեզ կվնասի։

Մեղմ վճռականությամբ Ժուլիեթին ստիպում էր աշխատանքը թողնել, հեռանալ հիվանդանոցից։ Ժուլիեթը բավականությամբ էր նրա հետ քայլում։ Հույնը ոչ մի պարտականություն չուներ և չէր էլ խնդրել, ուստի

իր ժամանակն իմաստավորել էր նրանով, որ Դամլաջրքի ծովակողմյան բարձունքներում հայտնաբերել էր մի քանի գեղահրաշ ծառուղի, տեսարաններ ու հանգստավայրեր։ Գոնզագի պնդումով, դրանք նույնքան սքանչելի էին, որքան աշխարհահռչակ Ռիվիերան։ Այժմ Գոնզագն ու Ժուլիեթն ամեն օր, տարբեր ժամերի, նստում էին բաց օդում կամ քամուց պաշտպանված տեղերում՝ այս Ռիվիերայի լերկ կամ ստվերախիտ որևէ ժայռացցվածքի վրա։ Մրտենիներով, դափնեվարդերով ու մաքուզենիների լայն գոտիով սարահարթից անջրպետված ծովափը ձգվում էր այիքաձև վիթխարի ժայռապարսպի երկայնքով, որը լեռան զանգվածի հետ մտնում էր ծովը։ Երկուսով իրենց անսահման ազատ էին զգում։ Եվ ո՞վ կարող էր նկատել այդ օտար մարդկանց բացակայությունը։

Այսօր՝ օգոստոսի տասնչորսին, Մուսա լեռը բարձրանալու տասնչորսերորդ օրը, Գոնզագ Մարիսը փոխվել, բոլորովին այլ մարդ էր դարձել։ Ժուլիեթը նրան երբեք այդքան տխուր չէր տեսել, պատանեկան մելամաղձությամբ համակված, անտեղի խոժոռված։ Աչքերը կարծես հառել էր անսահմանության խորքը, թեև այդ աչքերի մեջ, նույնիսկ հեռուն դիտելիս, երբեք չէր արտացոլվում հեռավորը։ Մինչդեռ նա ուղղակի նայում էր որոշակի մի կետի, որը հավանաբար ծածկված էր լեռան դուրս ցցված ապառաժներով։ Նրա խոհերը դեգերում էին Որոնտեսի գետաբերանում արևի տակ հուրհրատող սպիտի խոշոր գործարանի շուրջը։ Ժուլիեթը անհաջող հարց տվեց. դա բխում էր իր, բայց ոչ Գոնզագի հոգեվիճակից.

— Գոնզագ, Ձեր հայրենի՞քն եք կարոտել։

Գոնզագը քմծիծաղ տվեց, և Ֆրանսուհին շփոթվեց, զգաց իր ասածի ցավալի անմտությունը։ Հիշեց, որ Գոնզագը անհոգ հեգնանքով կցկտուր պատմել էր իր կյանքի դրվագները։ Պատմել էր այնպես, կարծես դա նրա կենսագրության լավագույն մասը չէր։ Հայրը Աթենքի բանկիրներից էր։ Կապվել էր ֆրանսիացի տնային մի դաստիարակչուհու հետ։ Ծնվել էր Մարիսը։ Տղան չորս տարեկան էլ չկար, երբ դժբախտություն պատահեց։ Հայրիկը ծլկեց Ամերիկա, մորն ու երեխային թողնելով առանց փողի։ Մայրը, որ դեռևս փրում էր փախստականին, մեծ դժվարությամբ ճանապարհ ընկավ փոքրիկ Գոնզագի հետ։ Ամերիկայում նրան չհաջողվեց գտնել «իսկական ամուսնուն», բայց որոնումների ժամանակ, ի վերջո, գտավ մեկ ուրիշին։ Դա տարեց դեթրոյթցի էր, հովանոցներ արտադրող գործարանի տնօրեն։ Մայրիկի հետ ամուսնացավ և տղային որդեգրեց։

— Այնպես որ,— խոստովանում էր Գոնզագը,— ես լիակատար իրավունք ունեմ կրելու երկու ազգանուն։ Բայց գտնում եմ, որ իմ արտաքինի-տեր մարդու համար խիստ անհավանական է հնչում՝ Գոնզագ Մեք Ուորրլի։ Ուստի և ազգանունս թողնում եմ Մարիս։

Իր ազգանվան ընտրությունը նա հիմնավորում էր ամենայն լրջությամբ։ Այս ամուսնությունը խեղճ մայրիկին երկարատև երջանկություն չբերեց։ Բաժանվեցին, նա ստիպված եղավ Դեթրոյթի տնից հեռանալ, և Գոնզագն սկսեց թափառել գիշերօթիկից-գիշերօթիկ, մինչև դարձավ տասնհինգ տարեկան։ Հենց այդ ժամանակ, ճակատագրի բերումով, ծանոթացավ իր իսկական հոր հետ, որն արդեն սնանկացել էր, դարձել համեստ կարողության տեր։ Ծերունին խղճի խայթ զգաց, քանի որ Գոնզագի մայրը մեռել էր Նյու-Յորքի հիվանդանոցներից մեկի չքավորական բաժանմունքում։ Որոշ գումար տալով, որդուն ուղարկեց Աթենք՝ իր ազգականների մոտ։

Հետագա տարիների մասին Գոնզագը պատմում էր կցկտուր, չոր ու ցամաք։ Այդ շրջանը ոչ վատ էր, ոչ լավ, ոչ մի բանով հետաքրքիր չէր։ Ինքն իրեն գտավ շատ ուշ, Փարիզում, թշվառ մանկությունից և նողկալի պատանեկությունից հետո։ Այսինքն՝ իր մեջ հայտնաբերեց մի քանի չափավոր, սովորական ձիրք, որոնց շնորհիվ մի կերպ կարող էր մարդամեջ մտնել։ Տարիներով ապրեց Թուրքիայում, այնուհետև հոր ազգականների օգնությամբ բռնեց Ստամբուլի ու Զմյուռնիայի ճանապարհը։ Ստամբուլում երկրի ներքին կյանքին վերաբերող լուրեր ու կենցաղային նկարագրություններ էր հասցնում ամերիկյան թերթերի թղթակիցներին։ Երբ գործերն այնքան էլ հաջող չէին լինում, միանում էր իտալական օպերային փոքրիկ ընկերություններին և վիեննական օպերետային երգչախմբերին։ Ի վերջո, նրան նույնիսկ վարձեց Բերայի կաբարեներից մեկի կառավարիչը, որպեսզի նա իբրև դաշնակահար ընկերանար Թուրքիայի հեռավոր խորքերն ուղևորվող մի խումբ գործազուրկ շանսոնետուհիների և պարուհիների։

Այս ամենը լիովին նման էր ճշմարտության։ Ամբողջ պատմությունն այնքան դժգույն էր, այնքան սովորական, որ սուտ ասելու կամ գլուխ գովելու հարկ չկար։ Գոնզագն իր ճակատագրի այս աղքատիկ ուրվագիծն այնպիսի անտարբերությամբ էր ներկայացնում, կարծես դրանցից ինքն այժմ արդեն շատ ավելի բարձր էր կանգնած, կարծես դա միայն խղճուկ նախաբանն էր իր իսկական կյանքի, որի մասին խոսում էին նրա աչքերը Ժուլիեթին գգվելիս։ Ֆրանսուհին հավատում էր Գոնզագի պատմածին, բայց ինչ-որ բան անհավանական էր թվում։ Այս անգամ էլ մի վայրկյան մտքով անցավ, թե Գոնզագը հավանաբար ամեն մի կնոջ մոտ հեարում է ուրիշ, նույնքան անգույն անցյալ։

— Քանի՞ կին կար դերասանական այն խմբում, որին Դուք ուղեկցեցիք մինչև Ալեքսանդրեթ,— հետաքրքրվեց Ժուլիեթը։

Այդ խմբի հետ կապված հիշողությունները երևի այնքան ծանր էին, որ հույնը հարցին պատասխանեց գրեթե դժկամությամբ.

— Տասնութ կամ քսան։

— Մեջները հավանաբար երիտասարդներ ու լավիկներ էլ կային։ Մեկնումեկի հետ մոտ չէի՞ք, Գոնզագ։

Այս կասկածը նա հերքեց զարմանքով.

— Դերասանները լուրջ և խոհեմ կյանք են վարում։ Իսկ թեթևաբարո կանանց համար սերն աշխատանք է, որն ավելորդ տեղը չեն վատնում։

Ժուլիեթի հետաքրքրասիրությունն այնքան էլ արագ տեղի չտվեց.

— Մի քանի ամիս մնացել եք Ալեքսանդրեթում՝ նավահանգստային ինչ-որ փոքրիկ, կեղտոտ քաղաքում...

— Ալեքսանդրեթն այնքան էլ ծիծաղելի չէ, ինչքան կարծում եք, Ժուլիեթ։ Այնտեղ հայկական մի քանի ընտանիք կա՝ վերին աստիճանի կուլտուրական։ Գեղեցիկ տներ ունեն՝ ընդարձակ այգիներով...

— Ա՜խ,այդպե՞ս. Ալեքսանդրեթում երկար մնալու պատճառն այդ ընտանիքներից մեկն է եղել...

Գոնզագը չժխտեց, որ Ալեքսանդրեթում իրեն գրավել է դեռատի մի կին։ Այդ իսկ պատճառով չեղյալ է համարել վարիետային ընկերության հետ կնքած պայմանագիրը։ Որքան էլ տարօրինակ թվա, այդ կնոջ մասին խոսելիս Ժուլիեթը պատկերացրեց Իսկուհուն, բայց պճնված, գրիմավորված, զարդեր կախած, մի բան, որ աղջկա դեմքի հետ բնավ չէր ներդաշնակվում։

Գոնզագն այլևս չպատմեց իր հետագա ապրումների մասին, հայտնեց, որ այդ ամենը մոլորություն էր և այժմ արդեն թաղվել է մոռացության գիրկը։ Կյանքն իմաստավորվեց միայն այն ժամանակ, երբ նա Բայլանից եկավ Ցողոնօլուք, Բագրատյանի ամառանոցը։

Երբ Ժուլիեթը կշռադատում էր Գոնզագի ճակատագիրը, ապա սեփական լքվածությունն այնքան էլ ահավոր չէր թվում։ Մի՞թե կարող էր մարդ ավելի անհանգրվան լինել, քան այդ հույն երիտասարդը։ Ի՞նչ տխուր էր նստած իր կողքին։ Գլխին կարծես մենության ու սիրազուրկ լքվածության ապակե կափարիչ էր դրված։ Նա վճռել էր Ժուլիեթի հետ համեստորեն կիսել մահագույժ ճակատագիրը՝ առանց աչք թարթելու, առանց հատուցում պահանջելու։ Կարծես դա սովորական կնամեծար քայլ էր, որի մասին չարժե անգամ խոսել։ Ժուլիեթին որքա՞ն հուզեցին քիչ առաջ արտասանած «հայրենիքի կարոտ» բառերը։ Եթե Գոնզագն

ինչպե՞ս կարող էր տանջվել հայրենիքի կարոտից։ Նրա հայացքի դեմ ծավալվում էր միայն ամայությունը։ Ժուլիեթն արդեն հասկանում էր, թե ինչու իր միկրոսկոպային հիշողությամբ պարծեցող երիտասարդի հուշերն այդքան ցցուտուր էին, այդքան հեղհեղուկ։ Այդ երիտասարդը, որն այնքան զուսպ էր ցուցաբերում իր սիրաթաթավ հոգատարությունը, երբեք սեր չէր ըմբոշխնել։ Փոքրիկ տղայի պես նա նստած էր ֆրանսուհու կողքին, լերկ ժայռի վրա։ Նրանց ուսերն ու ծնկները կարող էին հպվել միմյանց, բայց Գոնզագն իրեն հեռու էր պահում, իրենց արանքում ստեղծելով ազատ տարածության պատրանք։ Առաքինության ու ինքնատիրապետման այս անջրպետը դաշույնի պես սուր էր և գրեթե այրում էր։ Գոնզագը լռում էր։ Բայց Ժուլիեթի սրտում խլրտաց շա՜տ վտանգավոր, անո՜ւշ կարեկցանք։

— Գոնզագ,— շշնջաց Ժուլիեթը և սարսափեց իր ձայնի երգեցիկ շեշտից։

Գոնզագը լուռ շրջվեց նրա կողմը։ Ինչ-որ բան ճառագայթեց։ Ժուլիեթը կամացուկ բռնեց տղայի ձեռքը... միայն շոյելու համար։ Բայց հետո այլևս չկարողացավ դիմադրել ներքին պոռթկումին։ Դևմքն ու բերանը առաջ մղվեցին։ Գոնզագի աչքերին ևս մշուշ իջավ։ Վերջին անգամ նրանց մեջ հորձանք տվեց սպասումով լի գորովանքը, ապա երկուսի հայացքն էլ հանգավ։ Տղան համբերեց, մինչև Ժուլիեթը մոտեցավ, ապա հանկարծ ամբողջ ուժով քաշեց իր կողմը։ Կինը մեղմ հեծկլտաց համբույրի ներքո։ Հավատարիմ կնոջ դեռատիությունն անցավ գնաց, և այդ կինը չգիտեր, թե իր մեջ որքա՜ն օտար տարփանք կարող է արթնանալ։ Բայց իսկույն ծայր առավ մի ցավ, որից գլուխը պայթում էր։ Այդ նույն, գրեթե հիպնոսային գլխացավը նա զգաց այն օրը, երբ Գոնզագը Ցողոնօլուքի հյուրասրահում առաջին անգամ դաշնամուր նվագեց՝ այնքան տխրադեմ։ Ժուլիեթը ետ մղեց օտար տղամարդուն, որ ի մի հավաքի ինքնապաշտպանման ուժերը։ Մի միտք կայծակեց. «Բայց չէ՞ որ ե՛ս բռնեցի նրա ձեռքը, ո՛չ թե նա՝ իմ։ Ես նրա բռի մեջ եմ»։ Ապա հայտնվեց երկրորդ, ավելի կնճռոտ միտքը. «Նա ինձ շաբաթներ ի վեր լիակատար դիտավորությամբ այնքան հեռու տարավ, որ ինքս լինեմ մեղավորը»։ Հետևյալ վայրկյանին ինքնապաշտպանության ուժերը տեղի տվին, քանի որ Գոնզագը Ժուլիեթին իր կրծքին սեղմած՝ համբուրում էր, համբուրում։ Գլխացավը փարատվեց անդիմադրելի երանությունից։ Միրանավառ մթնշաղ և հեռու հեռվում դեռևս փայլող ահասարսուռ լույսի մի հյուլե. «Ես կորած եմ»։ Չէ՞ որ միայն այժմ, համբույրներով, իսկական Գոնզագ դարձավ զուսպ երիտասարդը, քնքուշ հոգատարու-

թյամբ ծառայող ուղեկիցը։ Նա այլևս ոչնչի ճարպիկ որդին չէր, այլ անակնկալ մի ուժ էր՝ ընդունակ երջանկացնելու կամ դժբախտացնելու։ Նրա բերանը կնոջ միջից ծծում էր մի գաղտնիք, որին մինչ այդ կինն անհաղորդ էր, ծծում էր երանություն շնորհող և վրիժառու զորությամբ։

Գոնզագը Ժուլիեթին իր գրկից բաց թողեց միայն այն ժամանակ, երբ սոսկալի գոռոց լսվեց։ Վախեցած ետ քաշվեցին իրարից։ Ժուլիեթի սիրտը թուլացավ, քիչ մնաց շունչը կտրվեր։ «Մազերս գզգզված են», մտածեց նա և փորձեց ձեռքերը բարձրացնել այնպես, կարծես դրանք ծանր գործիքներ լինեին։ Սա ի՞նչ բան է։ Գոնզագը բռնեց կնոջ թևից։

Երկուսով գնացին դժոխային գոռգոռոցի կողմը։ Մի քանի քայլ չարած՝ Գոնզագը կռահեց.

— Ճամբարի էշերն են. կատաղել են։

Հիրավի, երբ Գոնզագն ու Ժուլիեթը մոտեցան այն տափարակին, որտեղ ցցերից ավանակներն ու ջորիներն էին կապված, նրանց աչքերի առաջ մղձավանջ հիշեցնող տեսարան բացվեց։ Հլու-հնազանդ ավանակները կերպարանափոխվել, դարձել էին առասպելական կատաղի արարածներ, կտրում էին սանձերը, ծառս էին լինում, պարում էին ետին ոտքերի վրա, դեսուդեն նետվում։ Բերաններից փրփուր էր կաթում, աչքները դարձել էին ապակիացած զարհուրանք։ Նրանց արձակած երկարածիգ ձայները ավելի շուտ թրթռուն վրնջյուն էին հիշեցնում, քան ավանակային լեզվի խեղճ ու կրակ ելևէջներ։ Երևի ինչ-որ ցնորական տեսիլք էր սարսափահար արել այդ կենդանիներին։ Բայց դա ցնորք չէր։ Անասնական բնազդը կանխել էր վերահաս իրողությունը։ Հեռվից, Հյուսիսային լեռնաթամբի մյուս կողմից լսվեց խուլ պայթյուն, մի քանի ակնթարթ հետո ինչ-որ բան շառաչելով անցավ, ապա լսվեց սուր, հատու ճայթյուն, և Քաղաքաձորի հարավում ձյան պես սպիտակ ամպ գոյացավ։

Ավանակները հանկարծ լռեցին։ Չորս կողմ ծավալվեց ցածրաձայն հծծանք ու բվվոց։ Մարդիկ դուրս թափվեցին խրճիթներից։ Միայն քչերը գիտեին, թե ինչ կատարվեց։ Լեռան գլխին կախված ամպի քուլան արկի բարձրացրած փոշին էր։

Թնդանոթի կրակոցը հանկարծակիի բերեց նաև Բագրատյանին։

Նա հոգնած էր. վերջին գիշերը գրեթե աչք չէր փակել։ Առանձին հատվածներից տագնապալի լուրեր էին ստացվում։ Կասկածից դուրս էր, որ թուրք հետախույզները վերջին երկու գիշերը պտտվում էին խրամատների շուրջը, փորձում էին ճեղքել-անցնել պահակների շղթան։ Այդ իսկ պատճառով հրամայել էր առաջիկա գիշերը դիմավորել ավելի կազմ ու պատրաստ։ Մշտական պաբեկություն էր կարգել։ Ցերեկը, երբ նստեց

շտաբի թախտին մի պահ հանգստանալու, կես-քուն կես-արթուն վիճակում սոսկալի երազ տեսավ։ Ժուլիեթը մեռած էր, պառկած փարիզյան ննջարանի լայն մահճակալին, այն էլ՝ լայնակի։ Նա ավելին էր, քան մեռած. սառել էր, դարձել անփայլ, մսագույն սառույց։ Կնոջ դիակը տաքացնելու համար Գաբրիելը պետք է պառկեր նրա կողքին...

Գաբրիելը դժվարությամբ թոթափեց ցերեկային մղձավանջը։ Պարզ էր. Ժուլիեթի հետ վատ էր վարվում։ Աստված գիտե, թե ինչքան ժամանակ երկյուղով խուսափում էր կնոջից։ Պաշտոնն ու կյանքը ոչ մի ազատ րոպե չէին ընձեռում, բայց նա իր խղճի առաջ արդարանալ չէր կարող։ Ուստի և վճռեց հենց այսօր երեկո հրամանատարությունը հանձնել Նուրհան էլլեոնին, գնալ Ժուլիեթի մոտ։

Գաբրիելը վրանում չգտավ կնոջը։ Հենց այդ պահին իր վրանից դուրս եկավ Իսկուհին։ Եղբայրն Օվսաննայի մոտ էր։ Չէր ուզում խանգարել ամուսիններին։ Գաբրիելն Իսկուհուն խնդրեց, որ աղջիկն իր մոտ մնա մինչև կնոջ վերադարձը։ Նստեցին վրանների առաջ, հնձած խոտի վրա։ Գաբրիելը լարված մտածում էր. ի՞նչն էր Իսկուհուն այդպես փոխել։ Ահա թե ինչ։ Հագին ոչ թե Ժուլիեթի նվիրած զգեստներից մեկն էր, այլ խոշոր ծաղիկներով զարդարված մի լայն շոր՝ բաց գույնի, թեթև, մեջքը բարձր, թևքերն ուռուցիկ։ Դա հնաձևության պատրանք էր ստեղծում, բայց և Իսկուհուն չէր նմանեցնում տեղացի կանանց։ Իսկուհու փխրուն արտաքինը մինչ այդ Գաբրիելին հաճախ թվում էր խեղճ ու հյուծված։ Մինչդեռ լայն զգեստը աղջկան տալիս էր ինչ-որ քնքուշ, եթերային լեցունություն, քողարկում խեղված թևը։ Գաբրիելի մտքով անցավ, որ Իսկուհու փոքրիկ, խոհուն դեմքը երբեք այդպես ազատ չէր լուսավորվել, ինչպես արևից պաշտպանող մետաքսե լայն գլխաշորի տակ։ Զարմանքով նկատեց, որ աղջիկը զորեղ, կրքոտ բերան ունի։ «Գլխին պետք է կարմիր շղարշ դցեր»,— եզրակացրեց Գաբրիելը։ Եվ քանի որ այդ օրը նրա համար խոնջենքի ու երազանքի օր էր, գիտակցության մեջ արթնացան կյանքի վաղնջական պատկերները։

Յողոնօլուք, պապի տունը։ Զբոսայգու փափուկ խոտերին փռված է նախաճաշի սպիտակ, նախշուն սփռոցը։ Բոլորը երկյուղածությամբ սպասում են ծերունի Ավետիս Բագրատյանին, որն ուր որ է կներկայանա օրվա առաջին հանդիսավոր հացկերույթին։ Գոլորշի է արձակում եռոտանու վրա դրված արծաթե թեյամանը։ Զամբյուղներով դրված են ծիրան, խաղող, իսկ տափակ մատուցարանների վրա՝ սեխեր։ Փայտե պնակներով թարմ ձվեր, մեղր, ծիրանի մուրաբա։ Զյունափայլ անձեռոցի տակ լավաշն է. տանտերը դա պետք է կտրատի աղոթքից հետո։ Գաբ-

րիելը ոչ տարեկան է և Ստեփանի նման էնթարի է հագնում։ Երանի՞ նախաճաշը շուտ ավարտվի։ Տղան կգնա Մուսա լեռան բարձունքներում թափառելու, նորանոր գաղտնիքներ կհայտնաբերի։ Գաբրիելն անքթիթ նայում է նախշուն, ծալավոր սփռոցին։ Մարդ ի՞նչ իմանա, թե տակը մի մեծ օձ չի թաքնված։ Ոսկեհունչ մի ղողանջ ավետում է պապի գալուստը։ Բայց այ քեզ զարմանալի բան. ծերունին հենց ինքն է այդ ոսկեհունչ ղողանջը և չի զատվում ղողանջից։ Ոսկեշղթա ակնոցը, սպիտակ մորուքը, առավոտյան դեղնասև սերթուկը, սեկեկարմիր կոշիկները տեսանելի չեն։ Դեմքն էլ չի երևում, թեև ծերունու ներկայությունը անհերքելի է։ Բայց Գաբրիելը տեսնում է, թե ինչպես բոլոր կանայք դանդաղ գլխներին են քաշում շղարշները, հինավուրց ավանդության համաձայն երեսները պատկառանքով շրջում։

Արդյոք սա իրական հիշողությո՞ւն էր, թե՞ հիշողության բեկորներից պոկված շինծու մտապատրանք։ Ի՞նչ իմանար։ Համենայն դեպս, Իսկուհին ինչ-որ անհայտ թելերով ներհյուսված էր այդ հեռավոր անցյալի գորգին։ Աղջիկը նստած էր նրա առաջ, գետնին։ Նա այնպես էր խորասուզվել հայուհու հայացքի մեջ, որ բավական ժամանակ հետո միայն գլխի ընկավ. նման դեպքերում պետք է նաև ինչ-որ բան խոսել։

— Իսկուհի, ի՞նչ էիք ասել Ստեփանին՝ այդ կապը կտրածին։

Աղջիկը բացեց աջ ձեռքի մատները։ Դժգոհության և կշտամբանքի արտահայտություն.

— Պարոն Գաբրիել, ես այնպես սարսափեցի, այնպես հուսահատվեցի, երբ իմացա, որ նա այդ բանն արել է ինձ համար։

Գաբրիելն արձագանքեց ուշացումով.

— Իհարկե ես էլ սարսափեցի։ Անկարելի է պատկերացնել, թե ինչով կարող էր վերջանալ տղայական այդ անհեթեթ արկածը։ Բայց, փառք աստծո, ամեն բան բարեհաջող վախճան ունեցավ։ Դա ինձ համար նախազգուշացում էր։ Ստեփանին պետք է ավելի լավ հետևել։ Միայն թե ինչպե՞ս. վտանգավոր հասակ է։

Իսկուհին ուսուցչուհու նախկին ծանրաբարո տեսքն ընդունեց.

— Այո, Ստեփանի նկատմամբ պետք է ավելի հոգատար լինել։ Աստված գիտե, թե ինչ կարող է խելքին փչել։

— Իսկուհի, այդ բանը գիտե ոչ միայն աստված։ Ես էլ պարզ պատկերացնում եմ, թե ինչ կարող է խելքին փչել... Եթե իմ որդին չիներ, նրա արկածն ինձ դուր կգար...

Այս խոստովանությունից հետո Գաբրիելը փոքր-ինչ լռեց, ապա հարցրեց.

— Իսկ Ձեր Աստվածաշո՞ւնչը, Իսկուհի։ Արժե՞ր, որ Ստեփանն այդ խենթությունն աներ։

Իսկուհին ոտքի ելավ.

— Այդ գիրքը շատ եմ սիրում։ Հենց թեկուզ այն պատճառով, որ Արամն է ինձ նվիրել։ Եթե կամենաք, Ձեզ ցույց կտամ։ Խնդրեմ, սպասեցեք։

Առանց Գաբրիելի համաձայնությունը հարցնելու, աղջիկը վազեց դեպի վրանը, գիրքը բերեց։ Այժմ արդեն շատ մոտ նստեց։ Փափուկ զգեստի տակից ուրվագծվում էին նիհար, սրածայր ծնկները։ Նա ուզեց բացել Աստվածաշունչը, բայց մի պահ վարանեց. կարծես վախենում էր Գաբրիելի խստապահանջ դատաստանից.

— Գեղարվեստական ոչ մի արժեք չունի, պարոն Գաբրիել, բայց նկարները սքանչելի են...

Գաբրիելը սեռուն նայում էր, բայց ոչ թե Աստվածաշնչին, այլ Իսկուհու բերանին.

— Դուք Ձեր եղբորը, անշուշտ, ավելի եք սիրում, քան որևէ մեկին այս աշխարհում, այնպես չէ՞։

Դա հնչեց գրեթե մեղմ հանդիմանության պես։ Իսկուհին համառորեն թերթում էր սիրած գրքի էջերը. կարծես դժկամությամբ էր խոսում իր զգացմունքների մասին.

— Մենք իրար շատ ենք ընտելացել՝ ես ու Արամը։ Կյանքն առանց եղբորս չեմ կարող պատկերացնել։

Աղջիկն ավելի մոտեցավ, ցույց տվեց առաջին նկարը, ուզեց զարմացնել։ Գաբրիելը, որը փոքր-ինչ կարճատես էր, խոնարհվեց անցյալ հարյուրամյակի երկրորդ կեսին պատկանող հանրամատչելի հրատարակության վրա։ Մանկական գունավառ նկարները հիրավի հրապուրիչ էին։ Դրանք իրենց վերամբարձ ֆիգուրներով, շինծու տառապանք արտահայտող դեմքերով, ծաղկազարդ շրջանակներով միջնադարյան ավետարաններ էին հիշեցնում։ Միայն թե այդ նկարները բարեպաշտական լինելուց շատ էին հեռու։ Հայ նկարիչը, հարազատ մնալով իր բազմաչարչար ժողովրդի ոգուն, ավելի շատ էր տուրք տվել ճոռոմ, ճչան, սրտակեղեք թեմաներին, մանավանդ Հին կտակարանում։ Ահա «Արտաքսումը դրախտից»։ Հրեշտակապետի բոցկլտուն սուրը յաթաղան էր, իսկ լուսապսակը նման էր ադամանդազարդ չալմայի։ Կամ «Կայենն սպանում է Աբելին»։ Դրժված խորանի մարմանդ կրակը քսու-սատանայական բոց էր արձակում։

Հենց այն պահին, երբ Գաբրիելն ուզում էր դիտել Իսահակի ողջա-

կեզը, թուրքական առաջին արկը պայթեց Քաղաքաձորից մի քանի հարյուր մետր հարավ, Դամլաջրքի առաջին իսկ բարձունքի տակ։ Գլխավոր հրամանատարը ոտքի թռավ, վազեց դեպի դիրքերը։ Ճանապարհին պատահեց ավանակով անցնող Ալթունուն։ Ներունին ուզեց իջնել, բայց Գաբրիելը մահակով և կոշիկի կրունկով այնպես հարվածեց կենդանուն, որ խեղճն անսովոր թափով քառասմբակ սլացավ դեպի հյուսիսային դիրքերը։

Թուրքերն այս անգամ իրենց հարվածը նախապատրաստել էին ռազմագիտական տեսակետից ավելի հմտորեն, ավելի խորամանկորեն։

Բինբաշին՝ Անտիոքի զինվորական պարետը, մանր, քնկոտ աչքերով և մանկական կարմիր այտերով այդ բարեհամբույր պարոնը, անձամբ էր ղեկավարում արշավանքը։ Որքան էլ տարօրինակ թվա, նրա տեղակալը՝ խստաբարո յուզբաշին, հենց այդ օրերին կարճատև արձակուրդ էր ստացել, մեկնել Հալեպ։ Այնպես որ ոչ մի բանի համար պատասխանատվություն չէր կրելու։ Քանի որ խորհրդի նիստում չէր անցել կայմակամի և յուզբաշու ցանկությանը հակասող հանդարտ ու խոհեմ առաջարկությունը, բինբաշին ստիպված էր անհապաղ պատրաստվել ռազմական գործողությունների և դուրս գալ Մուսա լեռան դեմ։ Այդ հանդարտաբարո մարդը թշնամիների դեմ այնպես էր զայրացել, այնպես էր կատաղել, որ արշավանքին պատրաստվում էր իր համար միանգամայն անսպասելի եռանդով։ Նա գրեթե մի ամբողջ օր անցկացրեց Անթաքիեի հեռագրատանը։ Մորզեի ապարատը լուրեր էր առաքում երեք ուղղությամբ՝ Ալեքսանդրեթ, Հալեպ, Էսքիշեհիր, որպեսզի ոտքի հաներ այդ շրջաններում գործող զինվորական ու ոստիկանական բոլոր փոքրաթիվ ուժերը։ Չորս օրվա ընթացքում ծերունի բինբաշին կազմեց մի ստվար զորաբանակ, որն ուներ մոտ հազար հրացան և երկու թնդանոթ։ Այս զորաբանակը բաղկացած էր Անթաքիեում գտնվող երկու կանոնավոր վաշտից, մանր բնակավայրերից եկած և նույն վաշտին պատկանող երկու դասակից, այդ օրը կայազոր ներկայացած մի կիսամարտկոցից, զափթիեների մի ամբողջ վաշտից և վերջապես Համամ լեռնաշղթայի գյուղերից հավաքված չեթեների խայտաճամուկ բազմությունից։ Միաժամանակ հետախույզները, եթե ոչ հիմնավորապես, ապա մասամբ ուսումնասիրել էին Դամլաջրքի դիրքերը։ Քսան հազար հայերի ու նրանց գնդացիրների շուրջը պտտվող նախապաշարումը փարատվեց։ Ինչ վերաբերում է զինվորական անձնակազմին ու սպառազինությանը, ապա բինբաշին այնպիսի առավելություն ուներ, որ հայերին բնաջնջելը ժամերի

հարց էր։ Տակտիկայի էությունը լիովին քողարկված առաջխաղացումն էր և անակնկալ հարձակումը։ Ամենակարևորը դա էր։ Երկուսն էլ՝ թե՛ գաղտնի առաջխաղացումը, թե՛ անակնկալ հարձակումը, բինբաշին գլուխ բերեց հիանալի կերպով։ Մուսա լեռան բոլոր դետքերը խաբված էին։

Բինբաշին զորաբանակը բաժանել էր երկու գրեթե համարժեք մասի, որոնք պետք է գործեին իրարից անկախ։ Մի կեսը օգոստոսի տասներեքի գիշերը, նախազդուշական բոլոր միջոցները ձեռք առած՝ շարժվեց դեպի Սուեդիա, պատսպարվեց Սելևկիայի ավերակներում, հարավային ամրության պատերի տակ։ Իսկ մյուս կեսը, որտեղ և՛ հրամանատարն էր, և՛ հրետանին, Անթաքիե-Բեյլան ճանապարհով փոքր-ինչ շարժվեց հյուսիս-արևմտյան ուղղությամբ, ապա թեքվեց, նեղ ու գահավեժ կածաններով բարձրացավ լեռն ի վեր։ Այստեղ բինբաշու ռազմական պլանի մեջ բացվեց առաջին ճեղքը։ Ծանր հաուբիցները հազիվ էին առաջ շարժվում, չնայած յուրաքանչյուր անվի ճաղերին երկուական հոգի էին վրա ընկել, իսկ մյուսները լեռնային դժվարին ճանապարհով տասնհինգ մղոն շալակած բարձրացնում էին թնդանոթների քանդված մասերը։ Սկզբում ավանակներ լծեցին, բայց այդ կենդանիները հրետանային գործում բոլորովին անպետք դուրս եկան։ Այս թյուրիմացության հետևանքով տասը ժամ ուշացան։ Զորքի այս մասը, որը մյուսից կես օրով ավելի շուտ էր ճանապարհ ընկել, տեղ հասավ ոչ թե օգոստոսի տասներեքի գիշերը, այլ տասնչորսի միջօրեին։ Կանգ առավ Մուսա լեռան բարձունքին, Լեռնաթամբի հյուսիսային կողմերում։ Կրկնակի հարձակումը, որ պետք է տեղի ունենար արևածագին, ձախողվեց։

Հարավային զորախմբի հրամանատար կապիտանն ու նրա զինվորները, որոնք արևակեզ ավերակների պատերի տակից գլուխները բարձրացնելու իրավունք չունեին, արդեն լիովին ուժասպառ էին եղել։ Պատճառը թե՛ միացյալ հարձակման ազդանշանի (հաուբիցի առաջին կրակոցի) ուշացումն էր, թե՛ անխնա արևի ճառագայթները։ Հյուսիսային զորախմբի վիճակն ավելի վատթար էր։ Տասնհինգ ժամ շարունակ բարձրացել էին լեռն ի վեր, գիշերը չէին հանգստացել, սահմանափակվել էին միայն երեք կարճատև դադարով։ Բինբաշին պետք է որ ինքն իրեն ասեր. «Զինվորներիս այսօր հանգիստ կթողնեմ, յուզբաշուն լուր կուղարկեմ Սուեդիա, իսկ հարձակումը կհետաձգեմ վաղվան»։ Դատելով ծերունու հանդարտ բնավորությունից, կարելի էր գրազ գալ, որ նա հենց այդպիսի վճիռ կկայացնի։ Բայց տեղի ունեցավ հակառակը։ Հանդարտ բնավորության տեր մարդիկ հաճախ նաև անհամբեր են։ Երբ անցանկալի գործ են ձեռնարկում, առանց երկար-բարակ մտածելու

ուզում են վերջացնել։ Բինբաշին հրետանու հրամանատար մյուլազիմին[1] հրամայեց հաուբիցները պատրաստ պահել, բոլորին աճապարանքով շարժման մեջ դրեց և մի ժամ հետո իր զորախումբը մաս առ մաս հասցրեց Լեռնաթամբի մոտերքը, որտեղ հայկական դիրքերն էին։ Այստեղ ամենից առաջ պատկառելի հեռավորության վրա սուսուփուս պատսպարվեցին փոքրիկ ձորակներում, ծառերի և ժայռերի ետևում։ Խաղաղասեր բինբաշին իր զինվորներին չդիմեց կրակոտ ճառով, այլ բավարարվեց անմռունչ նզովքներով։ Նզովում էր կայմակամին ու յուզբաշուն, նզովում էր թիկունքային գեներալին, որը լեռնային քանդվող-հավաքվող հրետանիների փոխարեն ուղարկել էր անշարժ, կոշտ ու կոպիտ հաուբիցներ, ամենից շատ նզովում էր Նորին գերազանցություն Ջեմալ փաշային՝ բանակի հրամանատարին, նրան անվանում կեղտոտ, կուզիկ խաբեբա։ Մերունու կարծիքով, Իթթիհաթի այդ բոլոր քաղաքագետ սպաներն էլ լկտի դավաճանների խաժամուժ էին։ Նախկին սուլթանի դեմ դավ էին նյութել, իսկ նորին էլ բանտարկել էին պալատում։ Դրանք ծիծաղելի ենթասպաներ էին, բայց իրենք իրենց անվանում էին գեներալներ, նորին գերազանցություններ, փաշաներ։ Առաջ այդ տրամաչափի մարդիկ յուզբաշիներ էլ չէին դառնա։ Հայերի հետ կապված խայտառակությունն էլ իթթիհաթական այդ խոզերի արած գործն էր։ Աբդուլ Համիդի ոսկե ժամանակներում, իհարկե, ավելի հաճախ էին ընդհարվում քրիստոնյա շների հետ, բայց այնպիսի կռիվ չէր ծագում, որ ռազմական գործողությունները ղեկավարեր նման բարձրաստիճան մի սպա։

Հոգնաբեկ և զայրացած մարդն այժմ իր սպաների հետ սպասում էր ազդանշան-կրակոցին։ Լեյտենանտին հրամայել էր ամենից առաջ մի քանի համազարկ տեղալ հայերի բնակավայրի վրա։ Ստամբուլի իթթիհաթական խաժամուժի այսպես կոչված գլխավոր շտաբի քարտեզներն իրականությանը չէին համապատասխանում։ Այդ քարտեզներով ղեկավարվելիս արկերն ու ականները նետելու էին Դամլաջրքի թիկունքը։ Բինբաշին հավատացած էր, որ դաղթականների ոմբակոծումը խուճապի կմատնի կանանց ու երեխաներին, կթափանի տղամարդկանց մարտական արիությունը։

Հաշիվը սխալ դուրս չեկավ։ Հաուբիցների հաջողությունն ավելի շուտ պատահական բնույթ էր կրում, քան նպատակային։ Տասներկու արկից միայն երեքն ընկան Քաղաքածորի վրա։ Դրանք ոչ միայն արտաքին վնասներ հասցրին, այլև վիրավորեցին երեք կին, մի ծեր մարդ, երկու երեխա (բարեբախտաբար թեթև)։ Բայց ուղիղ նշանառությամբ արձակված ռումբերից մեկը հիմնահատակ արեց պահեստը, հրդեհ առաջացրեց, ոչնչացրեց ալյուրի վերջին պաշարը, ինչպես նաև ամբողջ ծխախոտը, սուրճը, բրինձն ու շաքարը։ Պահեստը բոցավառվում էր, և միայն աստծո ողորմածության շնորհիվ էր, որ չհրկիզվեցին դրան գրեթե կպած խրճիթները։ Ժողովրդի շփոթությունը նույնքան մեծ էր, որքան և աղետը։ Իսկ զինվորների վրա հրանոթային կրակն ազդեց, ինչպես տասնապատիկ տագնապ։ Ով ծառայությունից ազատ էր, իսկույն նետվեց իր մարտական դիրքը։ Նուրհան էլլեոնը մի քանի րոպեում խրամատները նախապատրաստեց թշնամու հարձակմանը։ Կապավոր և հետախույզ պատանիների զորախումբը խռնվեց կրակային գծից հեռու։ Երբ Գաբրիելն ավանակով հայտնվեց, իր ռազմական մեքենայի բոլոր մասերն իրենց տեղում տեսավ, կազմ ու պատրաստ։ Մի քանի րոպե անց ստացվեց առաջին լուրը Հարավաբերդից։ Թուրքերի հարձակումը լիակատար հաջողությամբ չէր պսակվել։ Գրոհը հանկարծակիի էր բերել, բայց չէր ընկճել հաստատակամ պաշտպաններին։

Սարգիս Կիլիկյանի և Հարավաբերդի համար դա նշանավոր օր էր։

Թշնամին այս ամրության մասին պարզ պատկերացում չուներ։ Թուրք հետախույզները սիրտ չէին արել մոտենալ լեռնատեպի լայն, բուսականությունից զուրկ կիսաշրջանակին, որտեղ այնքան շատ էին ժայռացրվածքներն ու փոսավոր դարատափերը։ Հրամանատար կապիտանը նույնիսկ չգիտեր, թե արդյոք աշտարակաձև ժայռերի ատամնավոր զանգվածների ետևում կա՞ն հայ զինվորներ։ Որոնտեսի դաշտավայրի մահմեդական հոծ բնակչությունը՝ Սուեդիայի, էլ Էսքելի և Եդիջեի գրգռված գեղջուկները պնդում էին, թե ահագին ժամանակ ո՛չ մարդ է երևացել նպառաժների ետևում, ո՛չ էլ գիշերները կրակ է վառվել։ Համենայն դեպս վաշտապետը զգուշացավ, ենթադրեց, որ Դամլաջրքի հարավային եզրին կարող են հայկական խրամատներ լինել, չնայած արտաքին բոլոր նշանները հակառակն էին վկայում։ Սպան իր անձնակազմն արդեն բաժանել էր ճակատից և թիկունքից հարվածող մասերի։ Առաջինի մեջ կանոնավոր զորամասի զինվորներ էին մտնում, երկրորդի մեջ՝ չեթեներ ու զափթիեներ։ Մի զորախումբը պետք է բարձրանար լեռան գագաթը, իսկ մյուսը պետք է թափանցեր հայկական ենթադրյալ դիրքերի թիկունքը, հարձակվեր Հաբասթե կոչվող լեռնախորշի վերևից, որտեղ լեռան կիսաղեղը միանում է ծովին։ Թուրք կապիտանը կարգադրեց, որ վաշտն առաջ շարժվի ոչ թե խիտ շարքերով, այլ իծաշարուկ. անակնկալ կրակի դեպքում զոհեր ավելի քիչ կլինեին։ Սելևկյան մեհյանի ավերակները,

[1] մյուլազիմ — լեյտենանտ

որտեղ զինվորներն էին ապաստանել, հանգչում էին երեք հարյուր մետր բարձր լեռնասանդուղքի վրա։ Այնպես որ հարձակվողները գրեթե նույն բարձրությունն ունեցող լերկ ժայռաշարքն անցնելուց հետո միայն կկարողանային հասնել այն քարուտի եզրը, որտեղ Հարավաբերդն էր։ Քարուտն առանձնապես գահավեժ չէր, և ամեն տեղ կարելի էր պատսպարվել։ Բինբաշու կարծիքով հարձակման համար դա ավելի նպաստավոր վայր էր, քան Դամլաջրքի անտառապատ լանջերից որևէ մեկը, որտեղ ամեն ծառ, ամեն թուփ հայերի համար թաքստոց էր, իրենց համար՝ ծուղակ։ Առանց այդ էլ ամեն կողմից երևացող ճանապարհի վրա անհնարին էր գաղտնի պահել զորքի առաջխաղացումը։

Հարավաբերդի վերաբերյալ Բագրատյանը պարզորոշ կարգադրություն չէր արել, մի բան, որ թերևս նրա ռազմական պլանի վտանգավոր վրիպումն էր։ Բագրատյանի կարծիքով բաց և գահավեժ տեղանքը ավելի քիչ էր սպառնալիքի ենթակա, քան Հյուսիսային լեռնաթամբը կամ Կաղնուտը։ Այդ պատճառով էլ Հարավաբերդի մեծաթիվ պահակազորին էր միացրել բոլոր իսկական և կեղծ դասալիքներին, Դամլաջրքի անվստահելի խառնամբոխը, որպեսզի հնարավորության չափ դրանք հեռու լինեն բուն ժողովրդից։ Այս հատվածի հրամանատարը Խրդրը բեգ գյուղացի փորձառու մի զինվոր էր՝ ալարկոտ, դանդաղաշարժ մի մարդ։ Կամակոր, գյուրագրգիռ դասալիքներից գլուխ չէր հանում։ Ուսուցիչ Ոսկանյանը՝ կոմիսարը և ռազմական կոմիտեի կողմից նշանակված գլխավոր վերակացուն, առաջին իսկ օրից իր վարժապետական խստությամբ ու ամբարտավանությամբ ծաղրի առարկա էր դարձել։ Հավակնոտ գաճաճն այդ աներես, կյանքի բովում կաշինները հաստացրած ստահակներին ոչ մի կերպ չէր կարողանում ներշնչել այն պատկառանքը, որին իր համոզմամբ ինքն արժանի էր։ Մխանգամայն բնականաբար ղեկն ատիճանաբար իր ձեռքը վերցրեց ամենազորեղ անձնավորությունը՝ Սարգիս Կիլիկյանը։

Բագրատյանի հետ ընդհարվելուց և պարտվելուց հետո Ռուսը երևի ներքին փոփոխություն էր ապրել։ Իրեն այլևս սանձարձակ հյուրի պես չէր պահում, մատների արանքով չէր նայում ժողովրդին ու նրա կյանքին։ Այն օրից ի վեր անվերապահորեն ենթարկվում էր ռազմական կարգ ու կանոնին։ Ավելին. իրեն դրսևորեց իբրև բերդաշինարար հնարամիտ ինժեներ։ Խոշոր ժայռաբեկորներից պատրաստված պաշտպանական պարիսպը տքնաջան աշխատանքով գիշեր-ցերեկ բարձրացրեց, հզորացրեց, ստեղծեց պարզ, բայց խորիմաստ մի մեքենա, որով կարելի էր ետ մղել, ոչնչացնել թշնամուն։ Իրարից բավական հեռու շարված այս երեք

պարսպից յուրաքանչյուրի ետևում կար վիթխարի կաղնեբներից պատրաստած մեկական հենարան։ Ամեն հենարանի լայնակի դրված գերանից կանեփե ամուր պարաններով հորիզոնական դիրքով կախված էր մի հաստապինդ բաբան, որի ծայրին հզոր սկավառակ կամ երկաթագամ վահան կար։ Պարանը կարելի էր երկարացնել կամ կարճացնել, հարվածել պարսպի տարբեր մասերին։ Երբ չափազանց ծանր բաբանը ճոճանակի պես օրորվելով շարժվում էր դեպի պարիսպը, ապա դրա հարվածող ուժն այնքան զորավոր էր, որ վեր էր մարդկային ամեն մի հնարավորությունից։

Այն պահին, երբ սկսվեց հաուբիցային կրակը, և դետքերը զեկուցեցին, թե թուրք զինվորների շղթան արդեն մագլցում է հոմեական տաճարի ավերակների մոտակա լանջն ի վեր, Գաբրիելի նշանակած հրամանատարը գլուխը կորցրեց։ Ժայռաբերդի ճեղքից լարված ու անթարթ նայում էր ցած և ոչ մի հրաման տալ չէր կարողանում։ Հրանտ Ոսկանյանը՝ այդ մեծաբերան թզուկը, սպիտակել, դարձել էր կավիճ։ Ձեռքերն այնպես էին դողդողում, որ չէր կարողանում ետ քաշել «քարա» հրացանի փականակը, ներս դնել առաջին փամփուշտը։ Լեղին ջուր էր կտրել, կորցրել էր հավասարակշռության զգացողությունը։ Թխադեմ ուսուցիչը դեռևս կես ժամ առաջ պատերազմի ասված Մարսի նման շուրջը սարսափ էր տարածում, իսկ այժմ ուժ չուներ նույնիսկ սուտուփուս ծլկելու։ Ձայնը փորն էր ընկել։ Շնիկի պես քայլ առ քայլ հետևում էր Կիլիկյանին։ Ատամներն իրար էին զարկվում։ Հսկիչը հսկողության ենթականերից պաշտպանություն էր հայցում։

Ռուսի բութ աչքերի մեջ, ինչպես միշտ, տիրում էր ագաթե հանդարտություն։ Դասալիքներն ու մյուս զինվորներն խսկույն համախմբվեցին նրա շուրջը, նրա մեջ բնականաբար տեսնելով իրենց պարագլխին։ Խրդրբեգյանն ոչ ոք այլևս ուշադրության չէր արժանացնում։ Կիլիկյանն էլ գրեթե ոչինչ չէր խոսում։ Աչքի էր անցկացնում պաշտպանական հարմարանքները, մատնացույց անում այն մարդկանց, որոնք պետք է կրակ տեղային աշտարակաձև ժայռի, պարսպի և եզրային ամրությունների ետևից։ Բաբանների մոտ, բարձր քարակույտի վրա սանդղաձև հարթակներ էին պատրաստել։ Այժմ դրանցից յուրաքանչյուրի մոտ երկուական հոգի էին կանգնել, որպեսզի Կիլիկյանի հրահանգով հարվածեին պարսպին։ Ռուսը հետևեց օգոստոսի չորսին Բագրատյանի կիրառած տակտիկային, սպասեց հարմար վայրկյանի։ Միայն թե նրա անտարբեր, մեռելային համբերությունն անհամանոթեն ավելի մեծ էր թվում, քան Բագրատյանինը։ Երբ թուրքերի առաջապահ զորախումբը հայտնվեց քարուտի

եզրին, Կիլիկյանն իր անդրջրհեղեղյան հրահանով գլանակ վառեց։ Ոսկանյանը նրա կողքին կանգնած՝ դողում էր, մրմնջում.

— Հիմա, հիմա, Կիլիկյան, ժամանակն է...

Ապարդյուն փորձում էր վառել խծուծը։ Կիլիկյանն ազատ ձեռքով ամուր կառչեց ուսուցչից, որպեսզի սա հանկարծ վեր չթռչի, վաղաժամ ազդանշան չտա։

Անվտանգ վերելքից և լեռնային խոր անդորրությունից սրտապնդված թուրքերը քայլում էին, իրար գլխի հավաքվում, խոսակցում, խիտ բազմություն գոյացնում։ Երբ արդեն հասել էին քարուտի կենտրոնը, Կիլիկյանը երկար ու ձիգ սուլեց։ Հզոր բաբանները որոտաձայն բախվեցին խարխուլ պարսպին։ Վերին շերտերի թեթև քարերը փոշի բարձրացնելով և դղրդալով՝ արկերի պես առաջ նետվեցին, իսկ ներքևի կրաքարե ահագին զանգվածները ծանրորեն փուլ եկան, ամեհի թափով վրա ընկան թուրքերին։ Առաջին իսկ ներգործությունը զարհուրելի էր։ Հայոց լեռն ինքն էլ էր մասնակցում գոտեմարտին, ուզում էր թշնամուն բնաջնջել այնքան ահավոր ձևով, որ գաղիք սերունդները ևս չկարողանային մոռանալ սիրիական ծովեզերքի բնական աղետը։ Պարիսպը ձգվում էր աշտարակաձև ժայռապակի միջև։ Բաբանների զորությունից խարխլվեցին նաև կրաքարի բնական զանգվածները։ Վիթխարի բեկորներ էին պոկվում, գլորվում հովիտ։ Այս աննկարագրելի քարատարափին չկարողացավ դիմադրել խոշոր, խախուտ գլաքարերով ծածկված քարուտի առաջամասը։ Խլացուցիչ որոտով ու ճարճատյունով գլորվում էին ժայռաբեկորները, արտասովոր զորությամբ օժտված ալիքի նման տակովն անում թուրքերին, իրենց հետ ցած տանում։ Դա կարծես կրաժայռերի ու կավճաքարերի ահագնաթափ հեղեղ էր, ավելի սոսկալի, քան ձյունահյուսքերի փլուզումը։ Թվում էր, թե Դամլաջրքը պոկվել է իր խարսխից և շարժվում է առաջ։ Բարձունքը գահավիժում էր Սելևկյան մայրաքաղաքի ավերակներն ի վար, տապալում կանգուն մնացած սյուները, քանդում բաղեղածածկ խաղաղ պատերը։ Տասը րոպե հետո այնպես էր թվում, թե լեռը մեծ բավականությամբ շարժվում է դեպի Սուեզիա և Որոնտեսի գետաբերանը։ Թուրքական զորաբանակի արևմտյան խումբը Հաբասթե գյուղի վերևում քարաջարդ եղավ։ Անձնակազմի կեսը միայն փրկվեց, այն էլ ճակատագրի ողորմածությամբ։ Մյուս կեսն սպանվեց, վիրավորվեց։ Գյուղն էլ մասամբ ավերվեց։

Քառորդ ժամ հետո գերեզմանային խոր լռություն տիրեց։ Փլուզված լեռը դավադիր խաղաղությամբ դարձյալ հուրհրատում էր արևի ներքո։

Հյուսիսային լեռնաթամբից գալիս էր հաուբիցային կրակոցների խուլ թնդյունը։

Երբ այլևս ոչ մի քար չէր շարժվում, Կիլիկյանը սուլեց երկրորդ անգամ։ Արձանացած դասալիքներն ու մյուս ռազմիկներն աշխուժացան։ Ռուսի գլխավորությամբ Հարավաբերդի զորախումբը հանգիստ իջավ լանջն ի վայր, սառնասրտորեն մաքրեց բոլոր թուրք վիրավորների հաշիվը և սպանվածներին կողոպտեց տառացիորեն մինչև ներքնաշորերը։ Այս գործարքը կատարվեց ամենայն մանրակրկիտությամբ, չնայած այդ պահին հայ եղբայրները հյուսիսում ծանր ճակատամարտի էին բռնված։ Սարգիս Կիլիկյանն իր ցնցոտիները փոխարինեց թուրք հետևակայինի բոլորովին նոր համազգեստով։ Սպանվածի բաճկոնի վրա թարմ արյուն կար, բայց նա ուշադրություն չէր դարձնում. հպարտ-հպարտ շրջում էր, իրեն զգում նորածնի պես։

Հրանտ Ոսկանյանը բարձրացել էր աշտարակաձև ժայռի կատարը, խելագարի պես գնդակներ էր արձակում օդի մեջ, վավերացնում իր մասնակցությունն այդ մեծ հաղթանակին։ Այս ազդու կրակոցների պահին նա պարզապես զարմանում էր, թե քաջությունը քաջ մարդու համար ի՜նչ հասարակ բան է։

Հարավային զորախմբի զարհուրելի ճակատագրին ո՛չ Գաբրիելն էր տեղյակ, ո՛չ էլ բինբաշին։ Երկուսն էլ լեռան հակառակ կողմում էին։ Ճակատամարտի թեժ պահին երկուսն էլ քարե հեղեղի ձայնը համարել էին հեռավոր որոտ։ Այստեղ, Հյուսիսային լեռնաթամբի մոտ պայքարը հայերի համար խիստ ծանր էր ու աննպաստ։ Հայտնի չէր՝ ճակատագրի բերումո՞վ, թե՞ սեփական արժանիքների շնորհիվ, հաուբիցները գործում էին նպատակասլաց։ Իրողությունն այն էր, որ մի ժամ խափանիչ կրակ տեղալուց հետո թուրքերը ճիշտ նշանառությամբ չորս կրակոցով քանդեցին արգելափակող խրամատի մի մասը, սպանեցին երեք և ծանր վիրավորեցին մի քանի հոգի։ Գաբրիելը հազիվ էր խուսափում ոռնացող արկերի բեկորներից։ Դեմքը նման էր անձրևածեծ կաշվի։ Հաստատ զգում էր, որ օրն իր համար բարեհաջող չէր։ Մտահղացումներն ու վճիռները նրա ներսում նույն դյուրությամբ չէին ծնունդ առնում։ Կարող էր կանխել կորուստները (ինքնակշտամբանքը նրան այրում էր)։ Զաուշ Նուրհանին շատ ուշ տվեց նահանջի հրամանը։ Բայց խոհեմաբար վարվեց, որ վճռեց քաշվել դեպի ժայռերը։ Թուրքերին հաջողվել էր բարձր ծառերից մեկի վրա գիտակետ հաստատել։ Այստեղից դիտորդները կարող էին տեսնել խրամատի մի հատվածը և կարգավորել հրանոթային կրակը։

Աշակողմյան քարապատնեշները նրանց առաջ փակում էին տեսադաշտը։ Օգոստոսի չորսի դառը փորձից ելնելով, թուրքերը սարսափում էին Մուսա լեռան անողորմ ժայռապարիսպներից և այլևս չէին հանդգնում դրանք պաշարել։ Պաշտպանները մեկ առ մեկ դուրս եկան խրամատից և լաբիրինթոսի ապառաժներին ու ցցվածքներին կպած՝ կուզեկուզ մտան օժանդակ խրամատը, որն ընկած էր խոր հողափոսի վերևում։ Երկրորդ խրամատն այդ օրը դատարկ էր. Գաբրիելը չէր համարձակվել որևէ չոկ տեղահան անել լեռան եղրամասի պաշտպանական կետերից։ Գրեթե համոզված էր, որ թուրքերը ինչ-որ երրորդ տեղից էլ կհարձակվեն։ Արյունը սառչում էր երակներում, երբ մտածում էր, թե օժանդակ խրամատը կորցնելու դեպքում անխուսափելի կլիներ հինգ հազար հոգու մարտիրոսական աներևակայելի մահը, մահ, որի նմանն աշխարհը դեռևս չէր տեսել։

Թուրք դետքերի հրամանատարը հավանաբար չէր նկատել հայերի նահանջը։ Ռումբերը դոպեն մեկ ընկնում էին առաջին խրամատի վրա։ Բայց քանի որ այստեղ ոչ մի շարժում չկար, բինբաշին կարծեց, թե հասել է գրոհի պահը։ Դադարը տևեց անվերջանալիորեն երկար, մինչև հանդիպակաց բարձունքի անտառային թավուտում պայթեց շեփորների և թմբուկների որոտը։ Սպաներն ու ենթասպաները ոռնալով առաջ մղեցին զինվորներին։ Ոռնոցին միացան ռազմիկների ոչ այնքան աներկյուղ աղաղակները։ Գրեթե բոլոր զինվորներն էլ նորակոչիկ երիտասարդներ էին, որոնք իրենց անատոլիական արորների մաճը նոր էին թողել և մի քանի շաբաթ զինավարժությունների մասնակցելուց հետո առաջին անգամ էին կռվի մասնակցում։ Բայց երբ սկսնակները տեսան, որ իրենց գրոհը ոչ մի դիմադրության չի հանդիպում, զոռոզացան, տոգորվեցին արիությամբ, ամբոխին հատուկ վայրագ տրբեցումով։ Կատաղությամբ նետվեցին ամենուրեք արգելքներ հարուցող մացառապատ զառիթափն ի վեր և որոտաձայն ցնծությամբ գրավեցին մեծ խրամատը։ Բինբաշին, տեսնելով, որ գործը լավ է առաջ գնում, շուտեց երիտասարդների խանդավառության վրա սառը ջուր լցնել։ Գրաված դիրքը հանձնեց զորքի հետևից ընթացող զափթիեներին, իսկ ինքը արբեցած զինվորներին խիտ շարքերով առաջ տարավ։ Հաուբիցային կրակը շարունակել, իհարկե, չէր կարող. դա վտանգավոր էր թե՛ իր, թե՛ յուրայինների համար։

Ոչ միայն Գաբրիելը, այլև երկրորդ խրամատում դիրքավորված ամեն հայ գիտակցում էր, թե ինչ է բախտախաղի դրված։ Կարծես ամեն զինվորի կյանքը, հոգին ու մարմինը վեր էին ածվել սեսաքող գիշերվա, որտեղ միայն մի բոցավառ կիզակետ կար, անտանելիորեն կուրացուցիչ

մի կետ՝ նշանառության շրջանակը։ Այստեղ արդեն ո՛չ հրամանատար կար, ո՛չ հրաման։ Կար միայն քարի պես հաստատուն այս գիտակցությունը. «Իմ թիկունքում բաց գաղթականն է, կանայք, երեխաները, իմ ժողովուրդը»։ Եվ դա իրողություն էր։

Սովորական ձևով սպասեցին, մինչև թուրքերը մոտեցան այնքան, որ այլևս ոչ մի գնդակ վրիպել չէր կարող։ Առաջին անգամ կրակեցին նաև Գաբրիելն ու Արամը՝ անքիթի հայացքներն իրենց զոհերին հառած, ասես երազում։ Ամեն ինչ կատարվում էր նրանց կամ Զաուշ Նուրհանի կամքից անկախ։ Երեքի կամքն էլ լիովին միաձուլվել էր բոլոր ռազմիկների կամքին։ Երբ արձակեցին փամփշտանոցում եղած հինգական զընդակները, հրացաններն այլևս չլցրին։ Բոլոր հայ զինվորները, կարծես ազդու հրամանով, դուրս եկան խրամատից։ Ամեն ինչ այնպե՛ս տարբերվում էր օգոստոսի չորսի ճակատամարտից։ Ոչ մի վրիժավառ աղաղակ դուրս չպոռթկաց հայորդիների ամուր սեղմված շուրթերից։ Մինչև հիսունը բոլորած տարբեր հասակի չորս հարյուր տղամարդ լուռ ու ծանրորեն վրա ընկան թուրք սարսափահար երիտասարդներին, որոնց գինովությունն իսկույն անցավ։ Սահմռկեցուցիչ, մոլեգնաթափ ձեռնամարտ՝ երես առ երես։ Ի՞նչ օգուտ մաուզերյան հրացանների սվինադաշույներից։ Շատ չանցած դրանցով ծածկվեց ալիքաձև գետինը։ Հայկական ոսկրոտ բռունցքներն անդիմադրելիորեն ձգվում էին դեպի ոխերիմ թշնամիների պարանոցները, զորավոր ատամները գիշատիչ հրայրքով և ինքնամոռացությամբ մխրճվում էին թուրքական կոկորդների մեջ՝ վրեժ լուծելու, արյուն խմելու համար։ Թուրքական վաշտը քայլ առ քայլ նահանջում էր։ Զափթիեները, որոնց ծեր բինբաշին (այտերն այլևս վարդագույն չէին. մանուշակագույն էին դարձել, ասես կաթվածից) ուզում էր ներդրավել ճակատամարտին, նրան լքեցին, թողնելով ճակատագրի քմահաճույքին։ Սպան հայտարարեց, թե ոստիկանությունը ոչ թե մարտական, այլ կարգապահական զորք է, ուստի և պարտավոր չէ հարձակվել զինված թշնամու վրա։ Դրանից բացի, ոստիկանությունը ենթարկվում է ոչ թե զինվորական, այլ քաղաքացիական իշխանությանը։ Մեղմաբարբ բինբաշին փրփրեց, սպառնաց, որ սպային էլ, զափթիեներին էլ գնդակահարել կտա։ Մի հարցնող լինի, թե ո՞վ է մեղավոր հայկական այս ամբողջ կեղտոտ պատմության համար։ Պաշտոնյաներն ու զափթիեների վախկոտ, գարշահոտ ոհմակը, որը քաջ է միայն անպաշտպան կանանց ու երեխաների առաջ և կարող է միայն կողոպտել, սպանել, ոչնչություն անել, բռնաբարել։

Կատաղությունը ծերունուն չօգնեց։ Վիրավորված զափթիեները հեռացան խրամատից, ետ քաշվեցին դեպի հանդիպակաց բարձունքը։

Ոչ ոք չգիտեր, թե ինչով կավարտվեր լարված գոտեմարտը, եթե այդ պահին հայերն օգնություն չստանային։

Երբ քարե հրաշագործ հեղեղի ու թուրքական հարավային զորախմբի լիակատար պարտության լուրը հասավ Քաղաքաձոր և ճակատամարտին չմասնակցող զինվորներին, ամբողջ ժողովուրդը բռնվեց ռազմատենչ մոլեգնությամբ։ Տեր-Հայկազունն ու ավագների խորհուրդն այլևս չկարողացան մարդկանց զսպել։ Ծայրահեղ հանձնապաստանությամբ տոգորված՝ սրանք հաջողությունը վերագրեցին աստվածային ողորմածության։ Հենց այդ ժամանակ բանբերները հայտնեցին, որ թուրքերը նահանջում են հյուսիսում։ Պահեստային զինվորները վրա ընկան իրենց քլունգներին, բահերին, կացիններին։ Տղամարդ թե կին՝ բոլորը ձայն էին տալիս Տեր-Հայկազունին. «Հյուսիսային լեռնաթա՜մբը գնանք, շո՜ւտ»։ Ուզում էին թուրք շների հոգին քթից հանել։ Վարդապետին ոչինչ չէր մնում անելու. անցավ հոխորտացող բազմության գլուխը։ Ազատ տասնյակներն էլ շարժվեցին դեպի հյուսիս։ Ամեն կողմից խելացնոր ոռնոցով անկանոն գրոհող այդ վիթխարի բանակը մի քանի րոպեում վճռեց ճակատամարտի բախտը։ Թուրքերն իրենց գրված խրամատից դուրս շպրտվեցին։

Գաբրիելը Տեր-Հայկազունին գոռգոռոցով հասկացրեց, որ բազմությունը ետ քաշի, տանի գաղթական։ Եթե հաուբիցները հանկարծ կրակ տեղային, մեծ աղետ կպատահեր, իրար գլխի հավաքված մարդկանցից շատերը կզոհվեին։ Վարդապետին ահագին դժվարությամբ հաջողվեց ետ դարձնել սանձազերծ ամբոխը։

Քրտինքի ու արյան մեջ կորած պաշտպանները տենդագին նորոգում էին խրամատի քանդված տեղերը։ Գաբրիելը, որի նյարդերը տանջալից կերպով լարվել էին, ամեն վայրկյան սպասում էր նոր ռումբի պայթյունին։ Մինչև մայրամուտ ավելի քան մեկ ժամ կար։

Այն ենթադրյալ ռումբը, որի շառաչը Գաբրիելն ամբողջ ժամանակ լսում էր, այդպես էլ չհայտնվեց։ Ընդհակառակը, կատարվեց անսպասելին։ Հնչեց շեփորային երկար ու ձիգ մի ազդանշան։ Դիմացի բարձունքին փռված անտառի ետևում աշխույժ իրարանցում սկսվեց։ Քիչ հետո բանբերները հայտնեցին, որ թուրքերը ճողոպրում են, ամենակարճ ճանապարհով իջնում հովիտ։ Վերջալույսի ցոլքերի տակ դեռևս կարելի էր պարզ տեսնել, թե թուրքական զորաբանակի բեկորներն ինչպես են հավաքվում Բիթիասի եկեղեցու հրապարակում, թե բինբաշին, իր շտաբով

հանդերձ, ինչպես է գլխապատառ արշավում դեպի Սուեդիա Յողոնօլուքի ու հարավային մյուս գյուղերի միջոցով։

Օրն ավելի հաղթական էր, ավելի բարեհաջող, քան օգոստոսի 4-ը։ Բայց և այնպես երեկոյան ցնծություն ու խանդավառ տրամադրություն չէր տիրում ո՛չ Քաղաքաձորում, ո՛չ էլ խրամատներում։

Զոհվածներին բերին։ Սավաններով ծածկված, իրար կողքի հանգչում էին զինվորները։ Պառկեցրին այն տափարակ մարգագետնում, որը փափուկ հողի պատճառով Տեր-Հայկազունը գերեզմանատուն էր ընտրել։ Լեռը բարձրանալու օրից ի վեր միայն երեք ծերունի էին մեռել։ Թարմ շիրիմները ծածկող կոշտ կրաքարերի վրա սև խաչեր էին նկարված։ Այժմ միանգամից տասնվեց գերեզման ավելացավ։ Երեք հոգի զոհվել էին հաուբիցային կրակից, ութ հոգի ընկել էին ձեռնամարտում, իսկ հինգ հոգի մահացել էին ծանր վերքերից։ Ամեն դիակի մոտ կուչ էին եկել հարազատները։ Բարձրաձայն չէին ողբում։ Միայն մեղմ հեկեկանք էր լսվում։

Հիվանդանոցի շուրջը պառկած էին վիրավորները՝ կնճռոտված դեմքերով և հարցումնալից աչքերով։ Ներսում շատ քչերը կարող էին տեղավորվել։ Ծեր բժիշկն ահագին աշխատանք ուներ կատարելու, թեև ի վիճակի չէր ո՛չ իր հմտությամբ, ո՛չ էլ ֆիզիկապես։ Մայրիկ Անթառամից բացի, նրան օգնում էին Իսկուհին, Գոնզագն ու Ժուլիեթը։ Առանձին նվիրվածությամբ էր աշխատում Ժուլիեթը, կարծես վիրավորներին ծառայելով ուզում էր մեղմացնել հայ ժողովրդի հանդեպ ունեցած իր սիրո պակասը։ Տանն ունեցած ամբողջ դեղորայքը, որ փարիզեցի տնային բժշկի խորհրդով հետները վերցրել էին արևելք ուղևորվելուց առաջ, Ժուլիեթը բերել էր հիվանդանոց։ Շուրթերը գունատ էին։ Երբեմն օրորվում էր. թվում էր, թե ահա ուր որ է ուշաթափ կլինի։ Հայացքով որոնում էր Գոնզագին։ Սրան նայում էր ոչ թե իբրև իր սիրած երիտասարդին, այլ իբրև մի անողորմ մարդու, որն ստիպում էր անել ավելին, քան ներում էին կանացի ուժերը։ Գրիգորը ևս իր պարտքն էր համարում ներկայանալ իր դեղերով։ Վերքի համար ուներ հիմնականում երկու միջոց՝ մի քանի ծրար արնահոսություն դադարեցնող թանզիֆ և երեք մեծ սրվակ յոդալուծույթ։ Վերջինս առանձնահատուկ կարևորություն ներկայացնող գանձ էր. յոդը կարող էր կանխել թարախակալումն այն վերքերի, որոնց ապաքինումն Ալթունին, քթի տակ քրթմնջալով՝ ստիպված թողնում էր բնության ողորմածությանը։ Դեղագործն այս ամենաբույժ միջոցը վարանելով էր գործում, իսկ երբ լուծույթը պակասում էր, վրան իսկույն ջուր էր ավելացնում։

Ստեփանը Հայկի և ամբողջ հրոսակախմբի հետ թրև էր գալիս երկու ռազմադաշտի, գերեզմանատան ու հիվանդանոցի շուրջը, դիտում այս արտառմլիկ տեսարանը։ Տղան առաջին անգամ էր տեսնում մեռած, խեղանդամ մարդիկ, աղաղակող կամ հեծկլտացող վիրավորներ։ Սոսկալի տեսարանը նրան դարձրել էր ավելի չափահաս, բայց ոչ սառնարյուն։ Վաղաժամ հուզմունքից դեմքն ստացել էր խոժոռ արտահայտություն։ Այժմ, երբ նա անթարթ հայացքն առաջ էր սևեռում, հաճախ նմանվում էր Հայկին, միայն թե հակված էր ծայրահեղություններին։

Գիշերը վրա էր հասնում, երբ Ստեփանը պատվերի համաձայն դարձյալ ներկայացավ հորը, որն այդ ժամին գնացել էր հյուսիսային դիրքերը։ Խորհրդի անդամները բոլորվել էին Գաբրիելի շուրջը։ Ռումբի և արկի խանձոցները ձեռքին՝ ոա բացատրում էր հրանոթային կրակի էությունը։ Ռումբի խանձոցի կտրվածքը «Ա» տառին մոտ էր («Ա»—Aufschlag— պայթյուն հարվածից), մինչդեռ արկի խանձոցինը նշանակված էր «3» թվանշանով։ Այդ երեք հազար մետրն այն տարածությունն էր, որն ընկնում է հրանոթի փողաբերանի և նպատակակետի միջև։ Խանձոցը գտել էին առաջին գծի թիկունքում, մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա։ Ասել կուզի, թուրքերն առանձնապես սխալված չէին լինի, եթե հրանոթները տեղադրած լինեին Լեռնաթամբից երկու հազար մետր այն կողմ։ Գաբրիելը տվեց Մուսա լեռան քարտեզը, որ բոլորն աչքի անցկացնեն։ Նա արդեն նշանակել էր հնարավոր կետը։ Եթե թուրքերն իրենց հաշիվները ճիշտ կատարած լինեին, ապա պետք է դիրքավորվեին միայն լերկ լեռնափոսում, որը ձգվում էր Մուսա լեռան գահավեժ եզրի երկայնքով։ Միայն այս նեղ, բայց ազատ հողաշերտն էր նպատակասլաց կրակի հնարավորություն ընձեռում։ Ամենուրեք ծառախմբերը փակում էին արկերի ճանապարհը։ Իսկ հաուբիցների փողերն այդքան բարձրացնել անկարելի էր։

Ստեփանը, Հայկն ու մյուս պատանիները տղամարդկանց ետևում կուչ եկած, շունչները պահած լսում էին, թե ինչ են խոսում խորհրդի անդամները։ Նուրհան էլլեոնն առաջարկեց հարձակվել թնդանոթների վրա։ Գաբրիելը վճռականորեն մերժեց։ Նրա կարծիքով, կամ թուրքերը կհրաժարվեն իրենց մտադրությունից և այդ դեպքում հաուբիցները նորից հովիտ կիջեցնեն, կամ եթե նոր ծրագիր ունեն, գիշերը կփոխեն իրենց դիրքավորումը։ Երկու դեպքում էլ հարձակման փորձն ավելորդ է և չափազանց վտանգավոր, քանի որ հրանոթային ուժեղ կրակի օգնությամբ հետևակային մի դասակ անգամ կարող էր մեծագույն կորուստներ պատճառել հարձակվողներին։ Թուրքերի փորձից արդեն պարզ էր,

թե ինչով է վերջանում բաց տեղանքում կատարված գրոհը։ Իսկ Բագրատյանը ոչ մի հայի կյանք բախտախաղի դնել չէր ուզում։ Ինքնավստահ Նուրհանը պաշտպանեց իր առաջարկը։ Սկսվեց տաք վիճաբանություն։ Երկար ժամանակ հայտնի չէր, թե ում կարծիքն է անցնելու։ Ի վերջո գլխավոր հրամանատարը խստությամբ ընդհատեց Նուրհանին.

— Զաուշ Նուրհան, դու էլ չափից դուրս հոգնել ես և ոչ մի կարգին բան վճռելու պիտանի չես։ Վերջ տուր։ Գնա քնիր։ Մի քանի ժամ հետո կտեսնենք, թե ինչ ենք անելու։

Սակայն տղաները հոգնած չէին, իրենց ամեն ինչի համար պիտանի էին զգում։ Նրանց մեջ խոսում էր արթնության ոգին։ Ստեփանը թույլտվություն խնդրեց, որ գիշերն անցկացնի խրամատում։ Հայրն արդեն պառկել էր քնելու։ Որդուն զիջեց իր վերմակը։ Անկողնու և սենյակի պահանջ այլևս չէր զգում. կորցրել էր այդ զգացողությունը։ Բայց դժվար էր նաև բաց օդում շնչելը. գիշերը շատ էր տոթ։ Ուժասպառ մարդիկ քուն մտան ուշաթափվածների նման։ Մեկը պառկելուց առաջ դեռևս քչփորում էր կրակը։ Հսկողության անցավ նոր պահակախումբը, որի թիվը կրկնապատկված էր։ Զինվորներն աչալուրջ դիտում էին Լեռնաթամբի մատույցները։ Տղաները թռչունների անձայն երամի պես սահեցին-անցան ժայռապարսպի ետևը։ Օգոստոսյան զորավոր լուսինը նոր էր բոլորել իր երկրորդ քառորդը։ Պայծառ ցոլքի տակ, կավճաժայռերին կողք-կողքի սեղմված՝ տղաները քչփչո՞ւմ էին, քչփչո՞ւմ։ Սկզբում դա լուսնի հուզիչ լույսի տակ կատարված անմիտ ու աննպատակ շարաճճիություն էր։ Բայց նրանց արկածատենչ հոգիներում եռում էր նույն գայթակղիչ խենթությունը, ինչով համակված էր Ստեփանը։ Մանկական հետաքրքրությունը բորբոքված էր։ Ուզում էին թնդանոթներ տեսնել։ Հայկի խմբի մոտ էին հետախույզների լապտերներից մի քանիսը։ Մի՞թե չէր կարելի հետախուզության դուրս գալ առանց Շատախյանի կամ Սամվել Ավագյանի անմիջական հրամանի։ Այս հրապուրիչ հարցն առաջ քաշեց Ստեփանը։ Իսկուհու Աստվածաշնչի հետ կապված պանմության շնորհիվ տղայի հեղինակությունը բարձրացել էր, հասել գրեթե Հայկի ազդեցության աստիճանին։ Սա անպարտելի զորավարներին հատուկ ներողամիտ հեգնանքով հանդուրժում էր Բագրատյանի որդու վերելքը։ Նրա արհամարհոտ հովանավորության մեջ երբեմն նույնիսկ մտերմական մի թույլ շող էր առկայծում։

Հայկը տղաներին նշան արեց, որ սուսուփուս սպասեն, մինչև տեսնի, թե վերևում ինչ ինչոց է։ Իր բնական ճարպկության վրա վստահ՝ ձեռքի վճռական շարժումով մերժեց որևէ մեկի ընկերակցությունը։ Անաղմուկ

չքացավ և հայտնվեց կես ժամ հետո։ Բոցկլտուն աչքերով հայտնեց, թե թնդանոթները կարելի է պարզ տեսնել, ինչպես ցերեկվա լույսով։ Խոշոր, հաստ, ոսկու պես սիրուն բաներ են՝ իրարից վեցական քայլ հեռավորության վրա։ Իր հաշվով քնած հրետանավորները տասնչորս հոգի են, ոչ ավելի։ Ոչ մի սպա չկա։ Միայն մի պահակ է կանգնած։

Հայկը ճիշտ էր հաշվել։ Հաուբիցների ճակատագիրն էլ հենց պատճառ դարձավ, որ մանկական այտերով խեղճ բինբաշին փոխանակ իր ընտրած ուղին ավարտեր իբրև գեներալ-փաշա, դարձավ անատոլիական երկաթուղու զինվորական հաշվառման բաժնի պաշտոնյա։ Համենայն դեպս էժան պրծավ։ Ռազմական դատարանի առաջ հարյուր անգամ երդվեց ողորմած ալլահի անունով, որ ինքը ոչինչ մոռացության չէր տվել. կանոնագրքի համաձայն քողարկել էր հրանոթները։ Բայց ոճրագործ զափթիեներն ու չեթեները առանց թույլտվության ծլկեցին։ Թեև այս ճշմարտությունը դժվար չէր ապացուցել, համենայն դեպս դա գործին չօգնեց։ Նա պարտավոր էր կանոնավոր մի դասակ առանձնացնել և նրա հսկողությանը հանձնել հրետանային մարտկոցը։ Բինբաշու ձախորդությունը սրանով չէր սպառվում։ Հրետանու լեյտենանտը հետևակի նահանջից հետո հաջորդ օրվա ճակատամարտի հրահանգներն ստանալու նպատակով ինքն էր իջել հովիտ, քանի որ ենթասպային չէր վստահել։ Հրանոթները տեղափոխելու համար վարձված իշապանները ևս այն կարծիքին էին, թե գիշերը բոլորն էլ քաշվել են հեռավոր գյուղերը։

Չնայած ռազմական այս զանցառություններին և հարավում տեղի ունեցած սոսկալի աղետին, բինբաշու նկատմամբ անհամեմատ ավելի մեղմ դատավճիռ կայացվեց։ Զարմանալի և երջանիկ պատահականությամբ այս անգամ անձամբ չէր միջամտում Ջեմալ փաշան՝ «կեղտոտ, կուզիկ խաբեբան», թեև սովորաբար բոլոր մանրուքներով հետաքրքրվում էր։ Պատճառը գուցե զորավարի սուեզյան հոգսերն էին, գուցե և այլանդակ Ջեմալի ու Ստամբուլում ամբողջ աշխարհի կողմից աստվածացված Էնվերի փոխհարաբերությունները։

Հայկն ու ամենաճարպիկ դետքերից երկուսը կատվային թեթևությամբ մագլցեցին Լեռնաթամբի երկայնքով, անցան ժայռացցվածքների ետևը։ Ստեփանը հետևեց նրանց։ Փոքր-ինչ ավելի դանդաղկոտ էր։ Ինքնին հասկանալի է, որ Հակոբը՝ միոտանին, ետ մնաց։ Տղայի բարեկամը՝ Ստեփանը, այս անգամ պատվախնդիր հաշմանդամին սաստել էր, որ սա վերջապես հանգիստ մնա։ Այդ գիշեր Սաթոն դարանակալ չէր հետևում խմբին, քանի որ զբաղված էր կարևոր գործով։ Ստեփանն ու Հայկն իրենց հետ հրազեն և փամփուշտներ էին վերցրել։ Բրգաձև շարված հրացաններից երկուսը թոցրել էին, իսկ փամփուշտներն էլ գողացել էին ռազմամթերքի տոպրակների միջից։ Տղաների միջև եղած վեճն այսօր պետք է իր լուծումն ստանար։ Ամեն անգամ, երբ Ստեփանն իր հրաձգային արվեստով պարծենալիս պնդում էր, թե ինքը հիսուն քայլ հեռավորության վրա կարող է խաղաթղթի նկարի գլուխը թոցնել, Հայկը սառնությամբ ու հեգնանքով ասում էր. «Այ տղա, մի գլուխ փչում ես»։ Այժմ ամբարտավան հրոսակավարին կարելի էր վերջապես ցույց տալ, որ ինքը՝ Ստեփանը, ինչքան էլ փչան լինի, համենայն դեպս իզուր չի պարծենում իր անվրեպ նշանառությամբ։ Եվ տղան իր ասածն ապացուցեց սարսափելի ձևով։

Հայկը քաղաքացի տղային դափնեվարդերի խիտ թփուտների միջով տարավ մինչև հրետանային մարտկոցի սահմանը։ Տասը քայլի վրա խոմփում էին թուրք զինվորները։ Պահակն անխմաստ հայացքով դիտում էր լուսնի պայծառությունից անաստղ թվացող գիշերային երկինքը։ Ժամանակն ու տարածությունը ձգվում էին, ծավալվում՝ ամեն ինչի անհաղորդ, համբերությամբ լի... Ստեփանը մի քանի ճյուղ տնտղեց, որ հարմար հենարան գտնի մաուզերյան հրացանի համար։ Երկար և առանց հուզվելու նշան բռնեց. կարծես երևացող դեմքերը ոչ թե միս ու արյուն էին, այլ հրաձգարանի տիկնիկներ։ Եվրոպական քաղաքակրթության որդուն այժմ ոչինչ չէր հուզում, բացի փառասիրությունից. երանի՜ թե կարողանար ճիշտ նշան բռնել լուսնի ցոլքի տակ կանգնած պահակի մարդկային ճակատին։ Տղան աշխարհի ամենասառնասիրտ մարդու հաստատակամությամբ ձգանը քաշեց, լսեց պայթյունը, զգաց հետադարձ հարվածը և գոհունակությամբ տեսավ, թե ինչպես տապալվեց մարդը։ Երբ քնած զինվորները վեր թռան, չիմանալով, թե ինչ է կատարվում, Ստեփանն առանց իրեն կորցնելու իսկույն նշան բռնեց, ձգանը քաշեց երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ անգամ, փակաղակը ետ ու առաջ տանելով ուժերի ծայրահեղ լարմամբ։ Տասնհինգ թուրքն էլ պահեստային զինվորներ էին, տարեց մարդիկ, որոնք երևի այդ արշավանքի նպատակն անգամ չգիտեին։ Գլուխները կորցրին։ Նրանց ընկերներից հինգն արդեն գալարվում էին սեփական արյան մեջ։ Թշնամին անտեսանելի էր։ Հարկադրանքով զինվոր դարձած այս խեղճ ու կրակ գեղջուկները թաքնվելու փոխարեն լեղապատառ փախան անտառի խորքը, կորան, գնացին։ Հայկը նրանց հետևից հինգ գնդակ արձակեց, բայց վրիպեց, ինչպես արդ համարհանքով նկատեց վարպետ հրաձիգ Ստեփանը։ Հաուբիցները, դրանց երկանիվ քարշակները, ռազմամթերքի սայլերը, արկերով լցված արկղները, կարաբինները, գրաստները մնացին իրենց տեղում։

Այնպես տասնչորսամյա մի տղա իր ցեղի մելիքոնապատիկ բնաջնջման վրեժը լուծեց անմեղ, բռնությամբ զենք վերցրած գեղջուկներից, անարդարություն կատարեց, որն իրենց հետ միշտ էլ բերում են պատերազմն ու վրեժը։

Երբ հայ պահապան զինվորները լուսնի լույսով ողողված գիշերային խոր անդորրում լսեցին հյուսիսից եկող կրակոցները, հրամանատարներին արթնացրին։ Ժայռերի ետևում իրենց ընկերներին սպասող պատանիները զարհուրեցին։ Զգացին, որ պատասխան են տալու։ Բարձրաձայն աղաղակելով ու ձեռքները թափահարելով վազեցին դեպի խրամատը։ Հակորը կատաղի թափով ցատկոտեց դեպի Գաբրիելը, որը քնից նոր էր արթնացել և դեռ չէր սթափվել։ Հաշմանդամ տղան հուսահատորեն մատնացույց արեց հանդիպակաց բարձունքը, ընդհատ-ընդհատ գոռալով. «Հայկն ու Ստեփանն են։ Այնտեղ են։ Ստեփանն ու Հայկը»։

Գաբրիելը չհասկացավ, թե ինչ է կատարվել, միայն զգաց, որ Ստեփանը վտանգի մեջ է։ Կատաղած վազեց ցույց տրված ուղղությամբ։ Մոտ հարյուր տղամարդ հրացաններն առած հետևեցին իրենց հրամանատարին։ Զաուշ Նուրհանը, անշուշտ, դրանց հետ էր։

Երբ Գաբրիելը հասավ թուրքական մարտկոցին, տեսավ սպանվածներին և ողջ-առողջ Ստեփանին, ցավ պատճառող զորությամբ որդուն քաշեց իր կողմը, կարծես վտանգն անցնելուց հետո էլ ուզում էր նրան պաշտպանել։ Բոլորը զարմանքից ապշել-քարացել էին։ Ոչ ոք ուշադրություն չէր դարձնում պատանի հերոսներին՝ հրանոթները գրավողներին, որոնք պողպատե և բրոնզե հսկայական խաղալիքներով տարված՝ մոռացել էին սպառնալից ժամանակն ու իրողությունը, անգամ չորս կողմ սփռված արնաշաղախ մահը։ Շնչահեղձ հայերը մի պահ անշարժացան։ Զափից ավելի մեծ էր անհավատալի տպավորությունը, չափից ավելի ցնցող էր հաղթության ավարը։ Այնպես որ ոչ ոք ոչինչ չէր հարցնում կռվի վերաբերյալ։ Պետք է իսկույն տաներին հրանոթները, քանի դեռ թուրքերը հետ չէին եկել։ Պաշտպանության հեռանկարները պայծառացան։ Երկու հարյուր ձեռք գործի անցան։ Լուծը, քարշակները, սրկերով լի արկղները հասցրին բարձունք և հաուբիցները տեղադրեցին հրետանայլակների վրա։ Զինվորները դրանք առաջ էին հրում, քաշում փոկերից կամ կառչում անիվներից։ Բարձրանում էին անճանապարհ, ճաքճքած լեռնաթիկունքով, բայց գիշերը կարծես հալեցնում էր քար ու կոշտ, բոլոր խոչընդոտների դժվարությունը փոխարինում զիջող փափկություն... Երբեմն թվում էր, թե բազուկների խանդավառ ուժից հրանոթների անիվները կտրվում են գետնից։

Երեքուկես ժամ էլ չէր անցել, երբ անհավատալի արգելքներ անցնելուց հետո հրանոթները հասցրին խրամատ, այնտեղ, ուր պետք էր։ Գաբրիելն Ստեփանի արածը կարճ ու կտրուկ պատմել տվեց։ Բայց սարսափից սիրտը դեռևս թպրտում էր, և լեզուն չէր բացվում։ Որդուն գովել չէր կարողանում։ Նրա համոզմունքով, սեփական որդու հանդուգն արարքը կարող էր վտանգավոր օրինակ ծառայել ոչ միայն անչափահասների, այլև զինվորների համար։ Եթե ամեն մարդ ցանկանար ի ցույց հանել իր հերոսական մղումները, ապա գրողի ծոցը կգնային կազմակերպված պայքարն ու կարգապահությունը, այն երկու զորավոր ուժը, որոնք մի առժամանակ կարող էին երաշխավորել ժողովրդի գոյությունը։ Բայց Գաբրիելին ավելի շատ մտահոգում էր Ստեփանը։ Երկու անգամ էլ հույժ ողորմած ճակատագիրը տղային փրկել էր կործանարար փորձությունից, որի էությունը չարաճճին չէր էլ հասկանում։ Ստեփանն իրոք խենթուկ էր։ Վրանում բանտարկել նույնպես չէր կարելի։ Գաբրիելը վանեց այդ մտորումները, քանի որ նրա խոհերի վրա այդ պահին տիրաբար իշխում էին հրանոթները։ Իրազեկ էր հաուբիցների այդ տեսակին, քանի որ Բալկանյան պատերազմի ժամանակ հենց այդպիսի մարտկոցի վրա էր ծառայում։ Դրանք 1899 թվականին արտադրած ավստրո-հունգարական 10-սանտիմետրանոց դաշտային հաուբիցներ էին, որ Թուրքիան ներմուծում էր Շկոդի գործարանից։ Երկրորդ հրանոթի արկերի արկղում դեռևս երեսուն արկ կար։ Գաբրիելը տեսնում էր այն ամենը, ինչի կարիք էր զգում, տեսնում էր այն զենքը, որի գործածությունը բավականաչափ հիշում էր։ Հրետանայլակների արկղներում գտավ փակ նշանառության ապարատը, մարտական հրահանգներն ու բացատրությունները, կրակային աղյուսակները։ Հիշողության մեջ վերականգնեց իր նախկին գիտելիքները, հաշվեց Բիթիասի հեռավորությունը, որոշեց թուրքերի գիշերային բանակատեղին, կարգավորեց նշանացույցը, ճշտեց եզրային ուղղությունը, հաշվի առավ իր կանգնած տեղի բարձրությունը, փոքրիկ անվակով դանդաղ բարձրացրեց հրանոթի փողը, մինչև ջրահարթաչափը հավասարակշռվեց։ Միայն դրանից հետո բացեց արկերի արկղը, դուրս բերեց երկու գլանաձև արկ, հրեց հրանոթի մեջ, փակեց։ Երկար ժամանակ անցավ, մինչև նա անվարժ ձեռքերով գլուխ բերեց այս գործը։ Զաուշ Նուրհանի օգնությունը շատ համեստ էր։

Արևը նոր էր ծագել, երբ Գաբրիելն ստուգեց ուղղությունը, ապա կանոնագրքի համաձայն ծունկի եկավ հրանոթի եզրին։ Նույնն արեց նաև

Նուրհանը՝ երկրորդ Հաուբիցի մոտ։ Շեշտակի, ահավոր դղրդյուն լսվեց, հարվածը հետևեց հարվածին, և օդը ցնցվեց։ Հետադարձ հարվածից հրանոթների անիվները խրվեցին հողի մեջ։ Արկերն ընկան հովտից այն կողմ, Գաբրիելի նշանառությունից շատ հեռու։ Բայց միայն երևույթը բավական էր, որ մահմեդական ամբողջ երկրին ազդարարվեր քրիստոնյաների նոր հաղթանակը, թուրքական հրետանու կորուստը, Դամլաջրքի անառիկությունը, այն բացահայտ իրողությունը, թե հայորդիները դաշինք են կնքել Մուսա լեռան ջինների՝ չար ոգիների հետ։

Չեթեները դեռևս գիշերն էին անհայտացել։ Այս կողմերում չծառայող զափթիեների մի մասն էլ էր նրանց միացել։ Վաշտերից մնացած զինվորները համոզված էին, որ եթե մի ամբողջ դիվիզիա էլ հարձակվի այդ սատանայական լեռան վրա, դարձյալ անօգուտ է։ Բինբաշին չէր հանդգնի նոր հարձակման հրաման տալ. երիտասարդ զինվորները կապստամբվեին։ Նման միջոցառում մտքով էլ չէր անցնում։ Միայն մի երկչոտ հարց տվեց, թե արդյոք սպանվածներով ու վիրավորներով բեռնավորված երկար քարավանը կարողացե՞լ է աննկատելիորեն հասնել Անթաքիե, ինչպես ինքն էր խստորեն հրամայել։ Ներունու դեմքը դարձել էր մոխրագույն։ Երկու գիշեր անքուն մնալուց և ճակատամարտի լարվածությունից այնպես էր ուժասպառ եղել, որ ձիու թամբին ուղիղ նստել չէր կարողանում։ Համոզված էր, որ ոտով-գլխով կորած է։ Նա փորփրում էր իր սասանված հիշողությունը, որը հաջողության օրերին էլ մի բան չէր, թե ինչ հնարքով իր հետ կործանի նաև ալլահի անիծած կայմակամին ու նրա պաշտոնակից աղվեսներին՝ հայկական խայտառակ պատմության հեղինակներին։

Երկու կրակոցի հզոր որոտը Քաղաքաձորում հնչեց իբրև աստվածաշնորհ փրկության հուժկու ազդանշան։ Ամենասառնասիրտ և ինքնապարփակ մարդիկ անգամ գրկախառնվում էին, լալիս։

— Երևի Քրիստոսը մեզ դեռ ուզում է փրկել։

Երբեք այդքան սրտաբուխ չէր մաղթվել հայկական «բարի լույսը»։ Ինչ վերաբերում է Բագրատյաններին, ապա նրանց արքայական աստիճանը վավերացված էր կրկնակի ապացույցով։ Մի քանի հոգի եկան Գաբրիելի մոտ, խնդրեցին, որ թույլ տա իր որդուն ևս շնորհեն հերոսի տիտղոս՝ «էլլեոն»։ Գաբրիելը մերժեց զուսպ բարկությամբ։ Ասաց, որ իր որդին դեռևս երեխա է և ոչ մի պատկերացում չունի վտանգի մասին։ Ինքը չի կամենում բորբոքել տղայի փառամոլությունը, մղել նորանոր խենթությունների, որոնք մի օր սոսկալի վախճան կունենան։ Հոր խստության պատճառով կանխվեց Ստեփանի հրապարակային դրվատումը։ Նա

ստիպված էր բավարարվել մանր-մունր գովեստներով. դրանք հետևյալ օրն ամեն կողմից մարդիկ շռայլում էին տղայի հասցեին։ Հետագայում Դամլաջրքի հերոսամարտերը նկարագրող հայ պատմաբանները հիշատակեցին «մի պատանի հրաձգի հերոսական արարքը», առանց անունը տալու։ Բայց թե Բագրատյանի որդու ինչի՞ն էր պետք հետմահու փառքը, թեկուզ և անուն-ազգանունով...

Գաբրիելը երկար ժամանակ այլ մարդ էր։ Դա պակաս չափով չէր վերաբերում նաև Ստեփանին։ Փափկասուն մարդիկ անպատիժ կերպով չեն կարող արյունոտ գործեր բռնել, թեկուզ և հազարապատիկ արդարացի լինեն։ Մուսա լեռան անագորույն աստվածներից մեկը տղայի նուրբ ճակատին արդեն դրել էր իր սև կնիքը։

Օգոստոսի տասնչորսի այս նշանավոր գիշերը մի իրադարձություն ևս տեղի ունեցավ, անշուշտ, ոչ այնքան արժանահիշատակ։ Սաթոն դեռևս երեկոյան, աղջամուղջով պարուրված նեղ արահետներով իջել էր հովիտ, իր բարեկամների մոտ։ Սրանք պետք է իմանային ճակատագրի ելքը, պետք է լսեին, թե տասնվեց զոհվածներ ինչպես էին պառկած գետնին, սավանների տակ, թե ինչպես էին ուժգնանում վիրավորների հեծեծանքները, երբ անխելք բժիշկ Ալթունին դարչնագույն ջուր էր քսում խեղճ մարդկանց վերքերին։ Լեռնաբնակների և գերեզմանաբնակների կենդանի լրագիրը այսօր կարող էր շատ կարևոր նորություններ հայտնել, երկար ժամանակ ապահովել իր ապրուստը։ Երբ Սաթոն զգում էր իր լուրերի անհրաժեշտությունը, երբ տեսնում էր, որ իր հետ սիրալիր են վարվում, նրա բիբերը դառնում էին լույսի բարձրացող-իջնող ճեղքեր, և աղջիկը կոկորդահունչ կցկտուր բառերով հուզված ու ինքնամոռաց պատմում էր ցնցող նորությունը։ Ինչպես ինքն էր հավաստիացնում, գերեզմանաբնակները լսում էին բավականությամբ՝ թե՛ պառավ Մանուշակը, թե՛ Վարդուկն ու Նունիկը, թե՛ նույնիսկ ամենածեր կինը։ Ի նշան համաձայնության, գլուխներն էին շարժում։ Համակվում էին սեփական արժանապատվության գիտակցությամբ։ Իրենք իրենց աչքին այլևս չէին թվում ավելորդ ու լքված։ Ոչ, արհեստ ունեին՝ անվիճելի, անհիշելի ժամանակներից օրինականացված։ Տասնվեց հանգուցյալ էր հանգչում Դամլաջրքի բարձունքներին։ Մեռյալները նրանց կարիքն ունեին։ Ժողովրդի մեջ ոխերիմ թշնամիներ ունեին, բայց դրանք՝ Պետրոս Ալթունին և մյուս լուսավորիչները, կորցրել էին իրենց ազդեցությունը, այլևս չէին կարող վտարել եղերամայրերին։

Եվ ահա Նունիկը, Վարդուկը, Մանուշակն ու մի խումբ այլ մուրա-

ցիկ կանայք գործունյա, ծանրաբարձ քայլերով շարժվեցին դեպի գերեզմանատան շուրջը սփռված իրենց օթևան-քարանձավները։ Դուրս քաշեցին լեփ-լեցուն, կեղտից կոշտացած պարկերը։ Դրանք նրանց համար նաև բարձեր էին, որոնց վրա գիշերները դնում էին իրենց ոջլոտ գլուխները։ Թե այդ պարկերի վիհերի մեջ փտած զիզի-բիզի բաների ու ապականության ինչ քաոս էր տիրում, դա ո՞չ կարելի է նկարագրել, ո՞չ էլ հասկանալ։ Դրանք դեսից-դենից, տառացիորեն՝ գետնից մի կես դար առաջ հավաքած անպետք բաներ էին։ Հնոտիներ հավաքելու մարմաջը, որը հատուկ է աշխարհի բոլոր ծեր ու աղքատ կանանց, ցեցը կերած ցնցոտիներ պահելը, բորբոսնած թափթփուկներ դիզելը, լաթերից ու փտած իրերից գոյացած մուրացկանային գանձերը մոլեռանդորեն պահպանելը սրանց մոտ վեր էր ածվել աննպատակ ժանտահոտության իսկական գինարբուքի։ Համենայն դեպս, այս պառավ կանանց տոպրակներում լաթերի, կարկատանների, դատարկ տուփերի, քարի պես կարծր հացի ու պանրագնդերի կողքին հանդչում էին նաև նրանց ասեղնագործական արվեստի վկայությունները։

Ահա նրանցից ամեն մեկն իր անհատակ պարկից առանց երկարաբարակ որոնելու դուրս բերեց մի երկար, մոխրագույն շղարշ և թանձր քսուքով լցված մի սրվակ։ Պպզեցին, դերասանուհիների նման սկսեցին ներկել դեմքները։ Դա մուգ մանուշակագույն ներկ էր, որով հարթում էին իրենց խոր կնճիռները, ծերունական դեմքերը վերածում հասակի հետ ոչ մի առնչություն չունեցող անբնական ցայտուն դիմակների։ Հատկապես աչքի էր ընկնում Նունիկն իր գայլային քթով ու խոշոր ատամներով, որ դուրս էին ցցվում անշրթունք մութ դիմակի տակից։ Նա արդարացնում էր իր ռոմանտիկ համբավը. նայողը կհավատար, որ նա Աղասվերին[1] հիշեցնող ինչ-որ վհուկ-հեքիմ է։ Երկար ժամանակ դիմահարդարվում էին։ Բայց հանկարծ ընդհատեցին իրենց հարդարանքը, ճրագի պատրույգն ու ծայրը թաթախեցին առաջները թասով դրված կծվահոտ ձեթի մեջ։ Մոտերքից սմբակների դոփյուն և ձայներ լսվեցին։ Դա այն պահն էր, երբ բինբաշին իր շտաբի հետ արշավում էր դեպի Սուեդիա։ Երբ աղմուկը մարեց Հաբիբլիի կողմերում, կանայք ոտքի ելան, շղարշավորեցին իրենց ցանցառ գլուխները, ձեռքներն առան երկար գավազանները և քրքրված մաշիկներով ճանապարհ ընկան։ Զարմանալի էր, որ ծերունական շոր, դարչնագույն ոտքերը նրանց կարողացան այդքան հեռու տեղ տանել։

[1] Աղասվեր — միջնադարյան բազմաթիվ լեգենդների հերոս թափառական հրեա, որն իբր թե դատապարտված է հավիտենական գոյության և ատանդական կյանքի (իբր թե խաչվող Հիսուսին ապաստան չի տվել)

Սաթոն հպարտ-հպարտ հետևում էր նրանց։ Կիսալուսնի ցոլքի տակ գավազաններին հենված, լուռումունջ ընթացող եղերամայրերը քիչ էին տարբերվում հին հունական ողբերգությունների խառնամբոխին պատկանող կերպարներից։

Որքա՜ն անսպառ էր այս հայ վհուկների կենսական ուժը, որքա՜ն զորեղ էին սրտերը։ Ոչ մեկը շնչահեղձ չեղավ, երբ Կաղնուտի զառիթափ լանջով բարձրացան գաղթականության գերեզմանատան տափարակը։ Մանուշակագեմ եղերամայրերն իրենց այնքան կայտառ էին զգում, որ խսկույն գործի անցան։ Նունիկը, Վարդուկն ու մյուսները կուչ եկան մեռածների կողքին։ Կեղտոտ մագիլներով մերկացրին արդեն կարկամած դեմքերը։ Ապա ծայր առավ վհուկների երգը, որը թերևս ավելի հին էր, քան մարդկության ամենահինավուրց երգերը։ Խոսքերը հյուսված էին միայն զոհվածների անուններից։ Երգն անդադար կրկնվեց, մինչև կանաչավուն երկնքում հալվեց վերջին աստղը։ Որքան խոսքերն աղքատիկ էին, նույնքան հարուստ էին մեղեդու ելևէջները։ Երբեմն դա միայն երկարաձիգ, միապաղաղ մորմոք էր, երբեմն կալարատուրային ողբածոր հնչյունների շղթա, երբեմն երկու նույն հնչյունի խուլ, տանջալիորեն քնաբեր ու քմահաճ խաղ, որը վերջ ու ծայր չուներ, երբեմն էլ՝ խլացուցիչ բողոք։ Եվ այդ ամենը կատարում էին ոչ թե ինքնագլուխ, կամայական ներշընչանքով, այլ հնավանդ կարգ ու կանոնով։ Ոչ բոլոր երգչուհիներն էին օժտված Նունիկի ձայնով ու վաղնջական արվեստի հմտությամբ։ Նրանց մեջ կային նաև միջակ ձիրքի տեր, շահամոլ կանայք, որոնց միտքը աշխատանքի պահին զբաղված էր միայն ու միայն ողջ մնացածների քսակով։ Այստեղ, վերևում, հարուստ մարդկանց ինչի՞ն էին պետք ոսկին ու արծաթը։ Այ, եթե փողերը առատորեն բաշխեին մուրացիկ ժողովրդին, դա ոչ միայն աստվածահաճո բարիք կլիներ, այլև օգտակար գործ։ Եղերամայրերը, կույրերն ու մյուս մերժվածները կարող էին դրամը շրջանառության մեջ դնել մահմեդական գյուղերում, առանց որևէ փորձանքի հանդիպելու։ Այսպիսով, հայերի փողերը չէին կորչի, այլ կսփոփեին աղքատներին, իսկ բարեգործը հեշտ ու հանգիստ կարժանանար երկնային արքայության։ Առանձին երգերի արանքում ընկերուհիները Նունիկին հիշեցրին, որ սա իր ամբողջ պերճախոսությամբ կառչի այս խոհեմ տեսակետից, բարձրացնի ողբասացության ավանդական վճարը։

Այդպիսի հայտնվեցին հանգուցյալների հարազատները, բերին երկար, նրբահյուս պատանքներ։ Դա ընտանեկան հոգեպահուստ էր, որ ոչ մի տեղափոխության դեպքում տանը չէին թողնի։ Այն շապիկները, որոնցով մարդ մի օր պետք է հարություն առնի, համարվում էին տոնա-

կան առանձնահատուկ զգեստ, և ընտանիքի անդամները դա միմյանց նվիրում էին կյանքի ամենահանդիսավոր օրերին։ Նման մի շապիկ կարելու պատվերը դիտվում էր իբրև արտակարգ պատիվ, որին արժանանում էր միայն ազգուտակի ամենաարժանավոր կինը։

Այժմ արդեն եղերամայրերի ողբը հնչում էր ավելի մեղմ, վերածվելով զուսպ մրմունջի։ Այդ ողբն ուղեկցում էր լվացման ու զգեստավորման արարողությանը իբրև անմխիթար մխիթարանք։ Ի վերջո երկար շապիկների ծայրերը հանգուցյալների ոտքերի տակ կապեցին կրկնակի հանգույցով։ Այդ ձևով ոսկորները ցաքուցրիվ չէին լինի, և երբ վերջին փոթորիկը դատաստանի առաջ կանգնող մարդկության ոսկորները մի տեղ հավաքի, ապա խառնաշփոթություն չի ծագի։ Միջօրեից առաջ շիրիմները փորվեցին։ Թաղման համար ամեն ինչ պատրաստ էր։ Ամուր ճյուղերով կապկպված տասնվեց դագաղը խորանի շուրջը երեք անգամ պտտեցրին։ Տեր-Հայկազունը հանգստյան շարականներ էր երգում։ Այնուհետև վարդապետը գերեզմանատան տափարակում մի քանի խոսքով դիմեց ժողովրդին.

— Արյունռուշտ մահը մեղանից խլեց մեր սիրեցյալ եղբայրներին։ Եվ այնուհանդերձ մենք պետք է ամենայն ջերմեռանդությամբ մեր գոհությունը հայտնենք աստծուն՝ Հորը, Որդուն և սուրբ հոգվույն այն ողորմածության համար, որին արժանի չենք։ Պետք է գոհություն հայտնենք նրա համար, որ մեր եղբայրները մեռան պայքարի բովում, վսեմագույն ազատության գրկում և արդ կհանգչեն հողում, իրենց արյունակիցների կողքին։ Այո, մենք տակավին զրկված չենք ազատ ու անկախ մահով մեռնելու շնորհից։ Ուստի մենք պետք է գնահատենք մեզ վերուստ տրված շնորհը, կրկին և կրկին հիշենք այն հարյուր հազարավոր հայերին, որոնք զուրկ են այդ ողորմածությունից, որոնք մեռնում են ամենաամոթալի ստրկության մեջ, անթաղ փտում ճամփեզրյա փոսերում, հեռավոր տափաստաններում կամ կեր են դառնում անգղներին ու բորենիներին։ Եթե աջակողմյա գագաթը բարձրանանք և նայենք արևելք, ապա մեր աչքերի առջև կտարածվի մեր ժողովրդի որդոց դիերով ծածկված դաշտը, որտեղ ո՛չ օրհնյալ հող կա, ո՛չ դագաղ, ո՛չ քահանա, ո՛չ սրբագործություն, այլ կա միայն վերջին դատաստանի հույսը։ Ուստի եկեք այս պահին, երբ հողին ենք հանձնում այս երջանիկներին, գիտակցենք իսկական դժբախտությունը, որը ոչ թե այստեղ է, այլ դրսում...

Այս հակիրճ քարոզը խոր հեկեկանք կորզեց գաղթականների ողջ ժողովրդի սրտից, որը եկել, խռնվել էր գերեզմանատանը։ Հետո Տեր-Հայկազունը մոտեցավ օրհնյալ հողի զամբյուղներին։ Տասնվեց անգամ բռով հող դուրս բերեց և շաղ տվեց ամեն զոհվածի գլխի տակ։ Մարդիկ տեսնում էին, թե վարդապետն ի՞նչ զգուշությամբ, ի՞նչ վարանոտ խնամքով է գործածում թանկագին հողը։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Լրա թատրոն

Նունիկին, Վարդուկին, Մանուշակին և մյուս եղերամայրերին բախտը ժպտաց. նոր գործ բացվեց։

Վայրի հազար կոչվող բույսով դեռևս չէին մաքրել դեմքներին քսած սգո ներկը, երբ նրանց կանչեցին այլ աշխատանքի, որը բոլորովին հակառակ բնույթ ուներ։ Երբ ծննդաբերող կնոջ երկունքի ցավերը երկար էին տևում, ապա կարելի էր երկու անգամ ճաշելու հույս ունենալ։ Եղերամայրերն անսխալ ենթադրում էին, որ հինգ հազար մարդու մեջ ամեն ժամանակ կարող է տեղի ունենալ այն բոլորը, ինչ մարդկային է։ Այդ իսկ պատճառով իրենց զգեստների քրքրված ծալքերում պահում էին ամենաանհրաժեշտ բաները՝ սև սամիթ, ծիծեռնակի ծերտ, կարմիր ձիու պոչի մազ և այս կարգի այլ դեղամիջոցներ։

Դամլաջրքի հողով դեռևս չէին ծածկվել զոհվածները, երբ արդեն սկսվեցին Օվսաննայի երկունքի տառապանքները։ Վրանում, հիվանդի կողքին միայն Իսկուհին էր նստած, քանի որ մնացած բոլորը դուրս էին եկել հուղարկավորության։ Իր հաշմանդամության պատճառով աղջիկը հարսին բավականաչափ օգնել չէր կարող։ Թիկնաթոռ չկար, որ ծննդկանը կարողանար հենվել։ Գլխի և մեջքի տակ դրված բարձերն էլ բավական չէին հարմար դիրք ընդունելու համար։ Մահճակալի վրա ոչինչ չկար, բացի երկաթյա դատարկ շրջանակից։ Իսկուհին ստիպված նստեց այնպես, որ հարսը հենվի իր մեջքին։ Բայց Իսկուհին շատ էր քնքուշ և չէր դիմանում ծննդկանի ծանրությանը։ Ուղղակի ճզմվեց, թեև ջղաձգորեն կառչում էր մահճակալի շրջանակից։ Այդ պահին Օվսաննան հանկարծ ճչաց։ Դա Նունիկի համար ազդանշան ծառայեց։ Սուր բնազդը եղերամայրերին կտրեց թաղման ծեսից։ Նրանք իրենց գործն արդեն ավարտել էին, ստացել շատ ավելի մեծ գումար, քան սպասում էին։ Նունիկի փաստաբանությունն իր ազդեցությունն ունեցավ։ Բարերար մետաղադրամները ոչ թե պետք է ժանգոտվեն Դամլաջրքում, այլ զո-

իրավիճ լինեն ժողովրդի աղքատ ու թշվառ զավակներին։ Ներողամիտ նվիրատուներից մի քանիսը քմծիծաղ էին տալիս, իրար աչքով անում, երբ Նունիկը նկարագրում էր իրենց չքավորությունը։ Ամենուրեք առնապել էր շրջում, թե ոչ միայն Նունիկը, որի քիթը կիսով չափ հոշոտված էր, այլև փոքրամարմին, գիրուկ Մանուշակը, երկուսն էլ քողարկված միլիոնատերեր են։ Ասում էին, թե այդ կեղծավորները գերեզմանատան անկյուններում ոչ միայն փարայի, ղուռուշի ու մեթալիքների գանձեր ունեին թաղած, այլև կճուճներով մեջիդիեներ, նույնիսկ հաստ կապոցներով թղթադրամ։ Այս խորհրդավոր գանձերի պատճառով ցողոնօլուքի գերեզմանատանը երբեմն տեղի էին ունենում մուրացկանային իսկական ճակատամարտեր։ Դրանք Տեր-Հայկազունը մեծ մասամբ հարթում էր սպառնալիքով։ Ահ էր տալիս, թե պղծված գերեզմանատնից անխնա կվռնդի ամբողջ անամոթ ու ընչաքաղց խաժամուժը։ Բայց այդ կանայք իսկական միլիոնատերերի նման շարունակ ախուվախ էին անում, զանգատվում, թե իբր ստիպված են անվերջ շարշարվել, որ օր-ծերության անտեր-անտիրական չկորչեն։ Այդ «օր-ծերության» ոչ ժառանգաբար ձեռք բերվելիք բարեկեցությունը նրանք հավանաբար կապում էին ինչ-որ գերմարդկային թվերի հետ։ Եթե հաստլիկ Մանուշակն ու կռվարար Վարդուկը զուտ շահամոլական նպատակ էին հետապնդում, ապա Նունիկը զարմացնում էր իր մասնագիտական հմտությամբ, իհարկե, միաժամանակ ծառայելով ոչ միայն իր ասպարեզի ոգիներին, այլև ուրիշներին։ Ահա, իր կիսատ քթով նա հոտոտեց օդը։ Ոչ, գաղթականի խրճիթներում ոչինչ չկար։ Այստեղ դեռևս չէր սկսվել հղի կանանց երկունքը։ Այնտեղ միայն մի քանի փոքրիկ երեխաներ էին թնկթնկում։ Հիվանդանոցի առաջ պառկած էին վիրավորները և ծանր հևում էին։ Բայց վճիտ երկնքի տակ ծավալվող տաք օդում ինչ-որ թեթև սարսուռ կար։ Դա Նունիկին ծանոթ էր. ամենուրեք, որտեղ մարդկային մի նոր խակ է աշխարհ գալու, հայտնվում է այդ սարսուռը։ Դրան հետևելով՝ նա շատ չանցած Մանուշակի ու Վարդուկի հետ կանգնեց Երեք վրանի առաջ։ Լսվեց Օվսաննայի ճիչը, և ընկերուհիները խորիմաստ հայացքներ փոխանակեցին։ Ինչպես իսկական երաժիշտը հազվադեպ է տարբեր մեղեդիները շփոթում, այնպես էլ նրանք անսխալ զանազանում էին մարդկային ճիչերը։ Մենդաբերող կնոջ ձայնն իր առանձնահատուկ օրենքն ունի՝ միանգամայն պարզորոշ թանձրություն, սրություն, դաղար, վայրէջք։ Տարբեր էին այրվողի, մահվան սպառնալիքով բռնված հետապնդվողի ճիչերը։ Ականջն զգում էր ճշմարտությունը։ Քիթն զգում էր ճշմարտությունը։ Խաբվել կարող էր միայն աչքը։

Իսկուհին արդեն ուզում էր դուրս գալ, կանչել Մայրիկ Անթառամին, երբ առանց նախազգուշացման ներս մտան մահվան երեք ոգիները։ Մթության մեջ փայլփլում էին նրանց մանուշակագույն քարացած դեմքերը։ Իսկուհին ու Օվսաննան պապանձվեցին։ Բայց վհուկների տեսքից չսարսափեցին։ Ցողոնօլուքում ո՞վ չէր ճանաչում այդ պառավներին։ Վախեցան նրանց թաղման հանդերձանքից, որ դեռ չէին հանել։ Նունիկն իսկույն կռահեց սնոտիապաշտական այդ զարհուրանքի էությունը, հանգստացրեց.

— Քույրիկներ ջան, լավ նշան է, որ մենք հենց էսպես էլ եկանք։ Մահը մնաց մեր ետևում։

Իբրև բժշկական առաջին միջոց, Նունիկը դուրս քաշեց շիշը՝ թոնրի կրակը խառնելու երկաթյա բարակ մի ձող, սկսեց վրանի պատերին մեծ-մեծ խաչեր գծել։ Իսկուհին աչքերը չռած նայում էր.

— Ինչո՞ւ ես խաչեր գծում։

Առանց իր գործն ընդհատելու, Նունիկը բացատրեց խաչերի իմաստը։ Մենդկանի սենյակի շուրջը հավաքվում են աշխարհի բոլոր զորավոր ոգիները։ Չար ոգիներն ավելի մեծաթիվ են, քան բարիները։ Երբ երեխան լույս աշխարհ է գալիս և գլխիկը փորձում է դուրս հանել արգանդից, չար ոգիները վրա են պրծնում, որ ներս լցվեն։ Այդ պատճառով էլ ամեն մարդ կարող է դրանց զոհը դառնալ։ Այդ պատճառով էլ ամեն մարդու մեջ դիվահարություն կա։ Ամեն մարդու մեջ էլ մի կտոր սատանա կա նստած։ Միայն Հիսուս Քրիստոսը՝ մեր Փրկիչն է սատանայությունից զերծ։ Նունիկի կարծիքով, ծննդկանին օգնելու ամենամեծ արվեստը սատանային վանելն է, սատանայության նվազեցումը։ Խաչերն էլ հենց անջրպետող միջոց էին, առասպելական կարանտին։ Իսկուհին վերհիշեց տարագրության գիշերներին իր տեսած երազները։ Աղջկա վրա պառկած էր զարհուրելի սատանան, կալեյդոսկոպային դեմքը։ Ազատ ձեռքով ինքն էլ էր փորձում մեծ-մեծ խաչեր գծել անէության մեջ, վանել սատանային, մանավանդ այն պահին, երբ իր մարմինը տեղի էր տալիս սատանայի զորությանը։ Օ՜, այս աշխարհում որքա՜ն արհավիրքներ կան, որոնց խափանման համար ամեն վայրկյան պետք է պատրաստ կանգնած լինի Հիսուս Քրիստոսը՝ Փրկիչը։ Բայց Նունիկի իմաստուն դատողություններն այդքանով չավարտվեցին։ Նա սկսեց համրացած կանանց բացատրել, որ ներքին օրգանները, առանձնապես սիրտը, թոքերը, լյարդը, անպայման սատանայական ինչ-որ հատկություններ ունեն։ Չար ոգիները փորձում են փոխարինել օրգաններին։ Մենդյան ամբողջ ընթացքը ոչ այլ ինչ է, եթե ոչ գերբնական հակառա-

կորդների գոտեմարտ. ամեն մեկը ջանում է իր կողմը գրավել մանկանը։ Որքան կատաղի է այդ գոտեմարտը, այնքան ավելի դժվարանում է ծնունդը, այնքան ավելի ծանրանում են երկունքի ցավերը։ Ուստի և խոհեմ ծննդկանը պետք է ապավինի Նունիկի տված դեղ ու դարմանին։ Նորածինն իրեն լավ կզգա առաջին վտանգավոր օրերին։ Ապագա մարդը ավելի նախապատրաստված կլինի իր կյանքի ճակատագրական մեծ շրջադարձերին, որոնց ընթացքում միշտ էլ կրկնվելու է ծնընդյան պայքարը։

Նունիկն այս տեղեկությունները հաղորդում էր երգեցիկ ձայնով, իր խոսքերը համեմում հին հայերեն բառերով։ Իսկուհին այդ բառերը չէր հասկանում, թեև Մարաշի միսիոներական դպրոցում իր ժողովրդի դասական լեզուն որոշ չափով ուսումնասիրել էր։ Երբ երկյուղի առաջին նոպան անցավ, երեք գրիմավորված եղերամայրերի ներկայությունը ակնհայտ կերպով բարերար, անգամ թմրեցնող ազդեցություն թողեց։ Օվսաննան քնեց և կարծես չնկատեց, թե Վարդուկն ինչպես մետաքսե բարակ ու երկար թելով կապեց դաստակը, մի այլ թելով՝ ոտքերի կոճերը։ Իսկ Նունիկը մոտեցավ անկողնուն, խրատեց.

— Ինչքան որ փակ մնաս, թող էնքան էլ ուժդ փակ մնա։ Ինչքան ուշ բացվես, թող էնքան օրհնություն մտնի քո մեջ ու դուրս գա քո միջից։

Փոքրամարմին, ծանրաշարժ Մանուշակն այդ պահին վրանի առաջ չոր ճյուղերով կրակ վառեց։ Երկու բոքոնաձև ողորկ ու տափակ քար տաքացրեց։ Այս կախարդանքը չափազանց բանական էր. շորի մեջ փաթաթված տաք քարերը հանգստացնելու էին ծննդկանի ուժասպառ մարմինը։ Կախարդական ապաքինման այս նյութական մասի հետ, ներառյալ սև սամիթով թեյը, որ Մանուշակը կրակի վրա պատրաստում էր, համաձայն կլիներ նաև բժիշկ Ալթունին։ Բայց և այնպես ծերունու ցանցառ մազերը կատաղությունից բիզ-բիզ կանգնեցին, երբ հիվանդի մոտ տեսավ իր ոխերիմ թշնամիներին։ Երիտասարդական ճարպկությամբ բարձրացրեց գավազանը, ծեծելով դուրս վռնդեց պառավներին։ Նա անատամ մարդուն հատուկ ձայնով «հաճոյախոսություններ» էր շռայլում, ընդ որում ամենափաղաքշականը «լեշակեր անգղներ» բառերն էին։

Այստեղից երևում է, որ բժիշկ Պետրոս Ալթունին արևմտյան գիտության մոլեռանդ չատագով էր։ Մի՞թե բարեգործ Ավետիս Բագրատյանը նրան կրթության չէր տվել, ապահովել ապրուստը, երբ նա հինգ տարի ուսանում էր Վիեննայի համալսարանում, հանուն այն բանի, որ

պեսզի հետագայում Ալթունին բանականության ջահը բարձր բռնած՝ փարատեր ժողովրդի նախապաշարումները։ Եվ մի՞թե բժիշկը հավատարիմ չէր մնացել բարերարին տված երդմանը. վճռել էր մինչև իր մահը մնալ Ցողոնօլուքում, չհեռանալ Սուեդիայի յոթ խեղճ ու կրակ գյուղերից։ Ո՞վ կարող էր կարծել, թե այդ երդման կատարումն ու անդրդվելի հավատարմությունը միայն թեթև զոհողություն է։ Ոչ թե տասը, այլ երեսուն անգամ փորձեցին գայթակղել ամենապատվաբեր առաջարկներով։ Անթաքիեի տեղական իշխանությունը հաճախ էր ամենանպաստավոր պայմաններով հրավիրում։ Նույնը կարելի է ասել նաև Ալեքսանդրեթի, անգամ մեծ քաղաք Հալեպի մասին։ Վալու և կայմակամի ձեռքով ստորագրված առաջարկություններ ստացավ. խոստանում էին գավառի պաշտոնական բժշկության ղեկը հանձնել նրան, եթե լքեր ծովեզրյա թշվառ բները։ Ամբողջ կայսրության մեջ մարդկային ոչ մի էակ այնքան ցանկալի չէր, ինչքան եվրոպական որևէ համալսարանի դիպլոմ ունեցող բժիշկը, որն իշխանության աչքին իր քաջով ոսկի արժեր։ Նման բժիշկները հազվագյուտ մարդիկ էին։ Ալթունին վաղուց կարող էր մեծահարուստ մարդ լինել, տուն ունենալ Հալեպում կամ Մարաշում, փառք ու պատիվ վայելել Ստամբուլից մինչև Դեյր էս Զոր, դառնալ տասնյակ հիվանդանոցների բժշկապետը, օսմանյան բանակի գլխավոր շտաբի բժիշկը։ Նեղն ընկած տեղը ոչ մի դեր չէր խաղա հայության արատը, և տարագրության ժամանակ այդ հանգամանքի վրա աչք կփակեին։ Մինչդեռ իրականում ի՞նչ եղավ մարդու վիճակը։ Ճակատագիրն ինչո՞վ հատուցեց այն բանի համար, որ նա կատարեց բարեգործին տված խոստումը։ Պատասխան տալն ավելորդ է։ Ով իր ուսերին է վերցնում իդեալի խաչը, թող այլ բան չսպասի։ Ծերունին իրեն պետք է վարձատրված զգար թերևս այն գիտակցությամբ, որ ամբողջ կյանքում «բարձր էր պահել լուսավորության ջահը»։ Բայց նա ամենայն դառնությամբ էր ծիծաղում հենց այդ արտաքուստ պատվավոր, բայց ըստ էության հոգնեցուցիչ գործունեության վրա. «Հը՛մ, այս ժողովրդի՞ն նայեցեք, խնդրեմ։ Ի՞նչ քիչ բան է սովորել քառասուն տարում, չնայած ամբողջ ժամանակ բժշկություն եմ արել Ցողոնօլուքում։ «Ֆրանկ հեքիմի» նկատմամբ ունեցած թերահավատությունից ձեռք չի քաշում, չնայած մարդիկ իրենց ուզածի չափ կարող են ձևանալ լուսավորված։ Իհարկե, իմ ջանքերն արդեն պտուղ են տվել։ Մահացությունը մեզ մոտ ավելի սակավ է, քան հարևան բնակավայրերում, մանավանդ մահմեդական գյուղերում։ Բայց թե հնար չեղավ վերջ տալու Նունիկին ու մյուս գերեզմանաքնակ վհուկներին։ Ցերեկն ես վռնդում, գիշերն են հայտնը-

վում, քանի որ հիվանդների հարազատներն են դրանց հրավիրում։ Մարդ ինչպե՞ս կարող է նախապաշարման այս կեղտոտ ծովում բարձր պահել գիտության ջահը կամ, իսկ դա ավելի դժվար խնդիր է, պահպանել առողջապահական մաքրություն...»։

Դիպլոմավոր Պետրոս Ալթունուց նման խոսքեր հաճախ կարելի էր լսել։ Բայց այն, ինչ ավելի դառնորեն էր ծերունուն խոցում, չէր խոստովանում։ Երկար տարիների ընթացքում, երբ նա հեզաբարո ավանակին բազմած՝ այցելում էր ոչ միայն հայկական գյուղերը, այլև հաճախ մահմեդականների հրավերով ամբողջ գավառին բժշկական խորհուրդներ էր տալիս, ականատես եղավ զարմանալի երևույթների։ Որքան էլ նրա մեջ ընդվզեր գիտության հանդեպ ունեցած համակրանքը, սա չէր կարող ուրանալ այն մեծաթիվ հաջողությունները, որ շարունակ ձեռք էին բերում կեղտոտ վհուկները հականեխման բոլոր օրենքները ոտնահարող իրենց նոզկալի դեղամիջոցներով։ Հարյուրից ութսուն դեպքում հիվանդության պատճառը համարում էին «չար աչքը»։ Բուժում էին թքով, ոչխարի մեզով, ձիու այրված մազով, թոչնածերտով և այս կարգի ուրիշ դեղորայքով։ Պատահում էր նաև այսպես։ Այն հիվանդները, որոնց բժիշկը համարում էր անհուսալի, կուլ էին տալիս Աստվածաշնչից կամ Ղուրանից պոկված պատառիկներ և ապշեցուցիչ արագությամբ ապաքինվում։ Ալթունին՝ թղթի հրաշագործ ուժին հավատացողը, այդ առթիվ տարակուսանքի մեջ ընկնող ու կասկածներից տանջվող մարդ չէր։ Բայց ի՞նչ օգուտ։ Բուժումը բուժում էր։ Հայկական գյուղերում ևս երբեմն-երբեմն տարածվում էր նման բարեհաջող թերապիայի լուրը։ Շատ անգամ Ալթունու հիվանդները խումբ-խումբ դիմում էին մոտակա արաբ հեքիմներին կամ Նունիկին ու նրա բախտակից «մաքրակենցաղ» քույրերին։ Այս դավաճանների մեջ պակաս չէին նաև լուսավորիչ հորջորջվողները, որոնք այն հավակնությունն ունեին, թե իրենք բարձր են պահում լուսավորության ջահը։ Այդպես էր վարվում, օրինակ, այս կամ այն ուսուցիչը, և դա ավելի էր զայրացնում բժշկին։

Եթե սա էր Ալթունու դառնության պատճառներից մեկը, ապա կար մի այլ պատճառ, որ ծերունին ավելի խորն էր պահում իր սրտի գաղտնարանում։ Գիտություն, լուսավորություն, առաջադիմություն. հիանալի՜ է։ Բայց լուսավորություն, առաջադիմություն տարածելու համար ամենից առաջ մարդ ինքը պետք է լուսավորված լինի և հնարավորություն ունենա առաջ գնալ։ Բայց ո՞վ կարող է առաջադիմել Մուսա լեռան խավարում, առանց հաղորդակից լինելու գիտության նոր նվաճումներին, առանց բժշկական գրքերի ու հանդեսների։ Գրիգորի հետամնաց գրադարանը կարող էր սնունդ հայթայթել ամեն տեսակ խնթությունների, բայց ոչ բժշկական խնդիրների, թերևս հենց այն պատճառով, որ գրադարանի տերը դեղագործ էր։ Պետրոս Ալթունին իր ձեռքի տակ ոչինչ չուներ, բացի 1875 թվականին լույս տեսած գերմանական «Բժշկական ձեռնարկից»։ Ի դեպ, սա հաստափոր գիրք էր, որը պարունակում էր այն ամենը, ինչ անհրաժեշտ է։ Բայց և այնպես սա սահմանափակ աղբյուր էր։ Անագորույն ժամանակը ետ էր թողել ոչ միայն այս ուղեցույցը, այլև Ալթունու գերմանագիտությունը։ Համենայն դեպս բժիշկ Պետրոսը նման չէր դեղագործին։ Այս ընտրյալը թերթում էր իր չիմացած լեզուներով գրված հատորները, նրա մեջ բոցավառվում էր մտքի հուրը, և նա անհասկանալի գրքերից Սիբիլլայի* նման մարգարեական այնպիսի խմաստություններ էր քաղում, որ նույնիսկ թերահավատ, նախանձոտ Ոսկանյանը չէր տարբերում մարգարեությունն ու գիտությունը։ Ի հակադրություն Գրիգորի, Ալթունին ռացիոնալիստ էր, որի մեջ ստեղծագործական աղբյուրը ինքնաբուխ չէր հորդում։ Այդ իսկ պատճառով նա երբեք չէր բացում խուլ ու համր դարձած իր ձեռնարկը, երբեք չէր օգտագործում իբրև բժժանք և կուռք։ Ինչ տասնյակ տարիներ առաջ տեսականորեն ուսումնասիրել էր, հալվել էր, մաշվել, դժգունել։ Նրա համար գոյություն ունեին տասից-քսան էական հիվանդություններ։ Թեև մարդկային տառապանքի անթիվ-անհամար պատկերներ էր տեսել, համենայն դեպս ամեն ինչ աշխատում էր կաղապարել իր իմացած մասնագիտական մի քանի ճյուղի շրջանակում։ Իր խեղճ ինքնագիտակցության խորքում իրեն նույնքան անճարակ էր համարում, որքան հեքիմներին, գրբացներին, եզերամայրերին, որոնց գարշելի դեղն ու դարմանը մեծահոգի բնության օգնությամբ, տարաբախտաբար, հաջողությամբ էին պսակվում։ Հենց այդ ինքնավստահության պակասը նրան լավ բժիշկ էր դարձրել, թեև ծերունու մտքով չէր էլ անցնում։ Չէ՞ որ աշխարհում ամեն մի մեծություն խոնարհվում է անհասանելիի առաջ և խորշում է գուշակությունների վրա խարսխված նվաճումներից։ Այնպես որ հիմնավոր պատճառ ուներ այն կատաղի ատելությունը, որ հիասթափված եվրոպացին շարունակ ղգում էր Նունիկին, Վարդուկին, Մանուշակին տեսնելիս։ Բայց Ալթունու զայրույթը նրան այսօր քիչ օգնեց։ Վոնդված վհուկները Երեք վրանի հրապարակի եզրին կանգնած՝ հեգնանքով նայում էին բժշկի ճողմը։

Օվսաննա Թովմասյանն առաջին կինն էր, որ երկունքի ցավերով էր բռնվել Դամլաջրի բարձունքներում։ Մենդաբերությունը հավատում էլ հասարակական երևույթ հիշեցնող իրադարձություն էր։ Հետևանքին

հուզված սպասում էին թե՛ մերձավոր, թե՛ հեռավոր ազգականները, ներառյալ տղամարդիկ։ Հապա որքա՜ն ավելի հանդիսավոր պետք է լիներ, առավել ևս համաժողովրդական բնույթ կրեր այդ երևույթն այստեղ, լեռան գագաթին. չէ՞ որ զարհուրելի թշվառության պայմաններում, որպիսին ոչ մի ժողովուրդ երբևէ չի տեսել, աշխարհ էր գալու առաջին հայորդին։ Նույնիսկ ռազմական հաջողության արևափայլ հաղթավարը, երկու ոսկեգույն հաուբիցները կորցրին հրապույրի ուժը։ Կեսօրից առաջ դեպի ռազմական սքանչելի ավարն ուխտագնացության դուրս եկած բազմությունը այժմ խոնվել էր վրանների առաջ՝ թշվառության հանգրվանի ամենանշանավոր վայրում։ Վրանի վարագույրները ետ էին քաշված, և խեղճ Օվսաննային տանջում էր նաև անողորմ արևը։ Մենդկանի տառապանքներն իրեն էին պատկանում, բայց ինքն արդեն իրեն չէր պատկանում։ Հետաքրքրասերները ներս ու դուրս էին անում։ Պետրոս Ալթունին շուտով գլխի ընկավ, որ դա իր տեղը չէ։ Քրթմնջալով ասպարեզը զիջեց իր տիկնոջը։ Մայրիկ Անթառամը ծննդաբերությունների ժամանակ հաճախակի էր ամուսնուն փոխարինում։ Սերունին հեռացավ, առանց ուշադրության արժանացնելու եղերամայրերի խոնարհ ողջույնը։ Գնաց հիվանդանոց, վիրավորների մոտ։

Մայրիկ Անթառամը բռունցքներով ու խոսքով դուրս էր քշում ներս խցկվողներին։ Իր գործը կատարում էր ամենայն վճռականությամբ. տասնյակ տարիների փորձ ուներ։ Նա շատ էր ծերացել, բայց ամեն անգամ, որևէ ծննդկանի օգնելիս, չէր կարողանում չհիշել իր սեփական երկու անհաջող ծննդաբերությունը երիտասարդության տարիներին։

Չնայած այրող տոթին, Իսկուհու ձեռքերը սառույց էին կտրել, և նա դրանցով զովացնում էր հարսի ճակատը։ Աղջիկն իր տագնապալից աչքերը հառել էր Մայրիկ Անթառամի դեմքին, որ հանկարծ բաց չթողնի տատմոր որևէ պատվերը։ Ամբողջ եռանդով բժշկի կինն արգելում էր ելումուտը, բայց մարդիկ դարձյալ ներս էին գալիս, հարցուփորձ անում, խրախուսում, խորհուրդներ տալիս։ Հիվանդի վիճակն իմանալու համար եկավ նաև Բագրատյանը։ Չնայած բթացնող եռուզեռին, Իսկուհին նկատեց, թե երեկվանից ինչքա՜ն զունատվել, ներս են ընկել նրա մազակալած այտերը։ Աղջկան զարմացնում էր և այն, որ Ժուլիեթը Օվսաննայի կողքին հազիվ կես ժամ նստեց, այնինչ ահագին ժամանակ ապրում էին մի հարկի տակ, իբրև նույն ընտանիքի անդամներ։ Արամը՝ ամուսինը, տասը րոպեն մեկ հայտնվում էր, իսկույն ետ վազում։ Պընդում էր, թե բացակայել չի կարող. երեկվա հաղթանակից և Թուրքերի նահանջից հետո զինվորները կարող են վտանգավոր անհոգության տրվել։ Մինչդեռ իրականությունն այն էր, որ կնոջ համար հուզվում էր, անհանգստանում և ուղղակի չէր կարողանում մի տեղ կանգնել-մնալ։ Բարեսիրտ հայր-Թովմասյանը հեռվից, օձագալար նեղ ճանապարհով հետևում էր որդուն, որպեսզի սա իր ծայրահեղ ապրումների համար շանթարգել ունենա։ Շինարար վարպետն ուրախությունից հագել էր կիրակնօրյա սև պիջակը. չէ՞ որ աշխարհ էր գալու իր տոհմի շառավիղը։ Ժամացույցի ոսկե շղթան հորիզոնական դիրքով կախված էր որովայնի վրա, որը մսի պակասից դեռևս չէր տուժել։

Ամեն բարեկամ որևէ նվեր էր բերել կամ տնային իր։ Օրինակ, դեղագործ Գրիգորը ծննդկանի սիրտն ու նյարդերը կազդուրելու նպատակով բերել էր մի սրվակ զիհենու հյութ։ Ինքն էր պատրաստել։ Բայց սա շատ համեստ նվեր էր աքլորի ձվի համեմատությամբ։ Երբ գործը դեռևս գլուխ չէր գալիս, և ապարդյուն ցավերը շարունակվում էին, հանկարծ հայտնվեց մի պառավ կին։ Զեռքին չափազանց խոշոր ձու կար։ Պնդում էր, թե դա իրենց աքլորն է նորած լուսնի տակ ածել։ Եթե ծանր երկունքով բռնված կինը առանց կճպելու հում-հում ուտի բնության այդ բարիքը, երեխան վայրկենապես դուրս կգա։ Մայրիկ Անթառամը, որն իր ամուսնուց ավելի լավ գիտեր մարդկանց հետ վարվել, պառավին շնորհակալություն հայտնեց հսկա ձվի համար, խոստացավ իսկույն հետևել նրա խորհրդին և ճանապարհ դրեց։

Հավաքված կանայք Օվսաննային կշտամբում էին, թե ինչու երկունքի ցավերից չի ճչում։ Դա վերագրում էին գոռոզության։ Եվ դա, եթե ուզում եք իմանալ, գոռոզություն էր, ամոթի հետ կապված գոռոզություն։ Նունիկը, Վարդուկն ու Մանուշակը դարձյալ ասպարեզ մտան։ Նունիկը վրանում պպզած՝ մասնագետի ներողամիտ, հեգնոտ աչքերով դիտում էր Մայրիկ Անթառամի ծանր զբաղմունքը։ Այդպես աշխարհահռչակ վիրաբույժն է դիտում գյուղական սափրիչի աշխատանքը։

Ավելի քան ութժամյա տվայտանքից հետո Օվսաննան վերջապես լույս աշխարհ բերեց մի տղա։ Երեխան, որն արդեն մոր արգանդում այնքան ահ ու սարսափ էր ապրել զեյթունյան օրերից ի վեր, ուշագնաց էր և չէր շնչում։ Անթառամը ցնցեց դեռևս արյունոտ ու կեղտոտ փոքրիկ մարմինը, իսկ Իսկուհին փչեց բերանի մեջ։ Նունիկն ու նրա ընկերուհիներն ավելի փորձված էին։ Կայծակնային արագությամբ ճանկեցին ընկերքը, յոթ տարբեր ընտանիքների պատկանող ասեղներ խրեցին մեջը և այդ ամբողջը նետեցին կրակի մեջ։ Մարմնի անկենդան մասից անջատված մանկան կյանքը կրակի շնորհիվ ազատագրվեց, մազապուրծ եղավ հող դառնալու ճակատագրից։ Մի քանի վայրկյան հետո նորա-

ծինն սկսեց թուքը կուլ տալ, ապա շնչել, հետո էլ լաց լինել։ Մայրիկ Անթառամը նրան զգուշորեն սրբում էր դմակի յուղով։ Սսկված բազմությունն ուրախ աղմկեց։ Արևը մայր մտավ։ Պատվելի Արամը սկըսնակ հոր շփոթված և փոքր-ինչ ծիծաղելի հպարտությամբ գիրկն առավ այդ կնճռոտ էակին, որը տակավին մարդ էր դառնալու, և ցույց տվեց հավաքվածներին։ Բոլորը հրճվեցին, գովեցին Թովմասյանին, քանի որ նորածինն արու զավակ էր։ Զինվորները կոշտ ու կոպիտ սրամտեցին։ Ոչ ոքի չէր մտահոգում տապագան։ Հայտնի չէ, թե ով առաջինը նկատեց Մուսա լեռան իսկական որդու կրծքի փոքրիկ, կլոր, հրագույն խալը։ Կանայք սկսեցին դատողություններ անել դրա շուրջը։ Նունիկը, Վարդուկն ու Մանուշակը պետք է կարողանային վերծանել նման խորհրդավոր նշանները, քանի որ դա առնչություն ուներ նրանց մասնագիտության հետ։ Բայց պառավները ոչինչ չասացին, շղարշները փաթաթեցին գլխներին, ստացան իրենց առատ վարձը և ճանապարհ ընկան։

Նրանց ծերունական դարշնագույն ոտքերը կորում անցնում էին տարածությունը։ Նրանք դարձյալ նման էին հին հունական ողբերգությունների պառավներին, երբ նոր ծագած լուսնի ցոլքի տակ քարշ էին գալիս դեպի լքված գերեզմանատունը։

Երեք օր ու գիշեր հազիվ էր անցել, երբ դեռքերը հայտնեցին, թե գյուղերում ինչ-որ անհասկանալի շարժում է սկսվել։

Գաբրիելն իսկույն բարձրացավ դիտակայաններից մեկը։ Հիրավի, հեռադիտակի ոսպնյակում հայտնվեցին իրարից խիստ տարբեր դեմքեր, որոնք աշխույժ եռուզեռի մեջ էին։ Որոնտեսի հարթավայրում բոլոր լայն ու նեղ ճանապարհներով իրար ետևից առաջ էին սողում եզասայլեր։ Գյուղերում կարելի էր տեսնել ֆեսերով ու չալմաներով մարդկանց ահագին բազմություններ։ Դրանք ինչ-որ շտապ գործով դես-դեն էին վազվզում։ Գաբրիելը հեռադիտակով զննեց բոլոր գյուղերը, բայց ոչ մի տեղ զինվոր չտեսավ։ Ձափթիեներ շատ քիչ կային։ Դրա փոխարեն նա նկատեց, որ այդ օրը ևս հեղեղի պես եկել, լքված գյուղերն էր լցվել Անթաքիեի ու շրջակայքի ծանոթ խաժամուժը, բայց մարդկային հորձանքն ավելի ազդու տպավորություն էր թողնում և կարծես ինչ-որ ծրագրված նպատակ ուներ։ Ցողոնօլուքի եկեղեցու հրապարակում անհանգիստ շարժում կար։ Չալմայավոր մարդիկ հրշեջ սանդուղքով բարձրանում էին դեպի թափուր զանգակատունը, մոտենում մեծ զմբեթին։ Ինչ-որ բարձրիկ ձայնի ծորուն ալիքներ լսվեցին (ոչ, դա կարելի էր միայն կռահել), արձագանք տվին ի լուր աշխարհի։ Քրիս-

տոսի օթևանից մարգարեի աղոթասացն իր ողբահունչ կոչն էր ամենուր հղում, կոչ, որ հրապուրում, սարսռեցնում էր ամեն մահմեդականի, իսկ այժմ հավատացյալներին Մուսա լեռան ստորոտն էր հրավիրում ամայի երկրի բոլոր գյուղերից ու ավաններից։ Բարեգործ Ավետիսի կառուցած Հրեշտակապետաց եկեղեցու հաշիվը փակված էր։ Եվ թոռան ուղեղում ծառս եղավ մի անզուսպ ցանկություն՝ հաուրիցային մի քանի համազարկով հանդգնորեն ամեն ինչ ջարդուփշուր անել։ Բայց Գաբրիելը վանեց այդ մղումը հենց որ այն ծնվեց։ Նա չպետք է դրժեր իր նախկին հիմնական վճիռը՝ միշտ պաշտպանվել, երբեք չհարձակվել։ Ներքևում գտնվող թշնամու վրա լեռն ավելի սարսափելի տպավորություն էր թողնում, երբ լուռ էր, մեռած ու խորհրդավոր։ Ավելորդ հանդգնությունը միայն կարող էր վնասել պաշտպանական պայքարին։ Դա թուրքերին, իբրև պետական ժողովրդի, կարող էր ապստամբներին պատժելու բարոյական իրավունք ընձեռել։

Հովտում ծայր առած եռուզեռին նայելով՝ Բագրատյանը մտորում էր, թե տակավին քանի՞ ճակատամարտի կարող են դիմանալ։ Չնայած երկու անգամ հաղթել ու ահագին ավար էին ձեռք բերել, չնայած Ջաուշ Նուրհանը փամփուշտներ էր պատրաստում, ռազմամթերքը սպառվելու վրա էր։ Բագրատյանի սիրտը ճմլվում էր, երբ գիտակցում էր, որ ամենափոքր ձախողումն անգամ կտանի դեպի անխուսափելի կործանում։ Դամլաջրքի ժողովրդի համար միջին աստիճան գոյություն չուներ՝ կամ հաղթանակ, կամ մահ։ Մի խրամատի կորուստն անգամ արդեն հավասար կլիներ վախճանի։ Գաբրիելը հազար անգամ խորհել էր այդ մասին։ Նման կորուստը ոչ միայն վախճան կնշանակեր, այլև ամեն ինչ՝ թե լավ, թե վատ, ինչպես լինում է նման դեպքերում։ Նրա ռազմագիտական արվեստը պետք է միայն հետաձգեր այդ վախճանը, որքան հնարավոր էր։ Հանուն այս նպատակի չպետք է ապարդյուն վատնեին թուրքերին կրկնակի պարտությամբ ներշնչած խուճապային սարսափի դրամագլուխը։

Բոպե առ բոպե ավելանում էր հովտում խռնվող բազմության քանակը։ Երկար դիտելուց հետո Բագրատյանը եկավ այն եզրակացության, որ ռազմական հարձակում չի ծրագրված։ Սակայն այս նորաբնակության նպատակը դեռևս լիովին չէր հասկանում։ Գուցե իրոք, գուցե և ցուցադրաբար թուրք կառավարիչներն ուզում էին քրիստոնյա բնակիչներին փոխարինել մահմեդականներով։ Բագրատյանը Ցողոնօլուքի եկեղեցու բակում զանազանեց եվրոպական զգեստներ հագած պարոնների մի փոքրիկ խումբ։ Գլխի ընկավ, որ դրանք մյուդիրն ու նրա ստորա-

դրյալներն են։ Ուրախացավ. սպաներ չկային։ Ոչ ոք չէր քննարկելու ռազմական իրադրությունը։ Համենայն դեպս նա հրամայեց ուժեղացնել մարտական պատրաստությունը, կրկնապատկել դետքերի թիվը, հետախուզական խմբեր ուղարկել առաջ, մինչև խաղողի այգիներն ու մրգաստանները, անհնարին դարձնել թուրքերի գիշերային անակնկալ հարձակման ամեն մի փորձ։

Գաբրիելն իրական վիճակը ճիշտ էր գնահատել։ Յողոնօլուքի եկեղեցու առաջ կանգնած էր պեպենոտ մյուդիրը։ Բայց այնտեղ ավելի բարձրաստիճան մի պաշտոնյա էլ կար՝ լերդախտավոր կայմակամը։ Անձամբ ժամանել էր ամեն ինչ սեփական աչքով տեսնելու։ Սա հիմնավոր պատճառ ուներ։ Կանոնավոր զորախմբի երկրորդ, ավելի տխուր և ավելի ամոթալի պարտությունից հետո Անտիոքում հավանաբար այնպիսի բան էր տեղի ունեցել, որ անհետևանք թողնել չէր կարելի։

Կայմակամի ու մանկական այտերով խեղճ բինբաշու միջև անմիջապես կենաց և մահու պայքար էր բորբոքվել։ Հնացած հայացքների տեր ռազմիկը, զորանոցի այդ համեստ հայրը, բոլորովին անհաղորդ էր իթթիհաթական նուրբ քաղաքականության նոր ոճին։ Հիմա միայն գլխի ընկավ, թե ինչու իր ոխերիմ թշնամին և տեղակալը, այդ յուզբաշի չեղածը, հենց այդ օրերին արձակուրդ վերցրեց։ Նրան արձակուրդ տալով՝ բինբաշին ընկել էր նույն այդ մարդու որոգայթը։ Յուզբաշին շուտով գրավելու էր իր պետի տեղը։ Դա սկսվեց այն բանից, որ կայմակամը խորամանկորեն կարողացավ ժողովրդին գրգռել բինբաշու դեմ։ Անտիոքում միայն մի հիվանդանոց կար, որ ենթարկվում էր քաղաքացիական իշխանություններին։ Թեթև վիրավորները մնում էին զորանոցում։ Բայց երբ խնամքի ու բժշկական օգնության կարիք էր զգացվում, զինվորական հրամանատարը կայմակամին խնդրում էր ծանր հիվանդներին ընդունել հիվանդանոց։ Կայմակամը խարդախորեն իր օգտին էր գործադրում բյուրոկրատական այս խճճված արարողությունը։ Թեև բինբաշին բոլոր դեպքերում արդեն կորած մարդ էր, բայց թե տվյալների ստուգումն ու հետաքննությունը կարող էին շաբաթներով ձգձգվել, նախքան վրա կհասներ իսկական անկումը։ Ոչ մի ավելորդ քայլ չպետք է կատարվեր։ Գավառում իր քաղաքականությունն իրականացնելու համար կայմակամը պետք է գտներ իթթիհաթական հուսալի մարդիկ։ Նրա ինչի՞ն էին պետք Աբդուլ Համիդի ժամանակներից մնացած դանդալոց քավթառները։ Ինքն ու յուզբաշին ճիշտ էին կանխատեսել իրադարձությունները և միմյանց հետ գաղտնի դաշինք էին կնքել։ Երբ բինբաշին Անթաքիե վերադարձավ, իբրև իր սեփական պարտության գլխիկոր բռնաբարները, մի քանի ժամ առաջ, խոր գիշերով, տեղ էին հասել քարավեժքի ու ճակատամարտի զոհերով՝ սպանվածներով ու վիրավորներով ծանրաբեռնված սայլերի երկար քարավանները։ Հյուքյումեթում լույս չէր վառվում, թեև ամեն ինչ արդեն հայտնի էր։ Երբ վիրավորները կանգ առան հիվանդանոցի մուտքի առաջ, տնօրենը ներս չթողեց և մնաց անդրդվելի։ Նրան խիստ հրաման էր տրված. առանց կայմակամի թույլտվության ոչ մի հիվանդ չընդունել։ Ո՛չ աղաչանք-պաղատանքն օգնեց, ո՛չ հայհոյանքը։ Բաց երկնքի տակ, լուսնի ու նավթի ճրագի լույսով, բժիշկը սպեղանի էր դնում վերքերին։ Նա էլ ո՛չ թույլտվություն ուներ, ո՛չ տեղ և չէր կարող իր նեղ ու խղճուկ հիվանդանոցի խցերում ապաստան տալ երկու հարյուր հոգիանոց վիթխարի զորախմբին։ Ճարահատյալ իր օգնականներից մեկին ուղարկեց կայմակամի մոտ՝ հրահանգ ստանալու։ Ահագին ժամանակ անցնելուց հետո սա ձեռնունայն ետ եկավ։ Կայմակամն այնքան խորն էր քնած, որ անհնարին էր արթնացնել։ Վճռեցին տնքացող ու հեծկլտացող վիրավորներին տանել զորանոց. գոնե գլխներին տանիք կլիներ։

Մինչ այդ արևը ծագեց, խսկույն սկսվեց օրվա եռուզեռը։

Անտիոքի բնակչության վրա արյունոտված սայլերի թողած տպավորությունը դժվար է նկարագրել։ Հենց այդ պահին, ճակատագրի քմահաճույքով, բինբաշին իր շտաբով ներս մտավ քաղաք։ Երբ ուզում էր անցնել Որոնտեսի կամրջով, բազմությունը վրա տվեց քարերով, և բինբաշին իր պաշտոնատեղին հասավ ու իր կյանքը փրկեց անփառունակ, զարտուղի ճանապարհներով։

Միայն այժմ, երբ արդեն հորձանք էր տալիս շուկայի օրվա մարդկային հեղեղը, արշաքուն մտած կայմակամից ստացվեց անհրաժեշտ թույլտվությունը։ Կարգադրել էր հիվանդանոց ընդունել տարաբախտների երկար շարասյունները, բայց խստորեն պատվիրել էր տեղափոխել մեծ շուկայի միջով։ Դեղնած, տանջահար դեմքեր և արնաներկ վիրակապեր տեսնելով՝ ժողովուրդը սաստիկ բորբոքվեց։ Ջայրացած ամբոխը նետվեց դեպի զորանոց, ջարդեց խեղճ բինբաշու պատուհանների ապակիները (այս կողմերում ապակին համարվում էր թանկարժեք ապրանք)։ Սակայն դրանով նա չգոհացավ։ Ռազմական իշխանության մնացորդներին այնպիսի սարսափ տիրեց, այնպիսի փոքրոգություն, որ խաժամուժի ահից կողպեքով փակեցին զորանոցի դարպասը, ինչպես սահմռկած քաղքենիներ։ Հասարակ ժողովուրդն իր մեջ միշտ էլ պետական պաշտոնյաների դեմ անթեղված ունի մի հինավուրց, դյուրաբորբոք ատելություն։ Ամբոխը զորանոցի պատերի ետևում տիրող դերեզմանա-

յին լռությունն ընդունեց իբրև սեփական հաղթանակի նշան և անցավ նոր քարկոծության։ Սպանները բինբաշուն աղերսում էին, որ նա պահակազորին հրամայի հրապարակը մաքրել հորիզոնական դիրքով բռնած լայնշեղը սվիններով։ Բայց ծերունին բազմոցի վրա ընկած՝ ոչ մի խորհուրդ չէր լսում։ Միայն այս բառերն էին կսկիծով պոկվում նրա շուրթերից. «Ես մեղք չունեմ։ Ես մեղք չունեմ»։ Տառապանքներից մեռնելու չափ հոգնած՝ նա լալիս էր, երբ քնած չէր, քնում էր, երբ չէր լալիս։

Ի լրումն այդ ամենի, տեղական զինվորական հրամանատարությունը մի խայտառակություն ևս կուլ տվեց։ Քաղաքացիական իշխանությունը, այսինքն՝ ոստիկանությունն ու զափթիները նրան ազատեցին մոլեգնած ամբոխի ձեռքից։

Այս ուրախալի իրադարձության ժամանակ կայմակամը եղունգ մաքրել-ներկելու մեջ վարպետացած սալոնիկցի մյուդիրի հետ շտապեց քաղաքային հեռագրատունը։ Այս երկու պարոնայք քաղաքական զարմանալի նրբամտությամբ զեկուցագիր հղեցին Նորին պայծառափայլությանը՝ Հալեպի վալուն։ Արտակարգ երկարաշունչ հաղորդագրությունը մատիտով խիտ գրված տասը խոշոր էջ էր կազմում կամ հազար հարյուր հիսուն բառ։ Դա խուսափողական բնույթ ուներ, ինչպես փոքրոգի, բայց փառամոլ փաստաբանի ելույթ, ճոռոմ էր ինչպես ռադիկալ թերթի առաջնորդող հոդված։ Նախ ամենաազդու գույներով նկարագրվում էր ձախողված արշավանքը, տրվում էր ծանր, անտեղի կորուստների թիվը, իբրև ռազմական անլուր կարճամտություն, խարանվում էր բախտի քմահաճույքին թողնված հրանոթների գրավումն ապստամբների կողմից, մի բան, որ իրողություն էր։ Այնուհետև կայմակամը թողնում էր այս տխուր նյութը, հիասթափությամբ հիշեցնելով, թե զինվորական իշխանությունների վրա ազդելու իր փորձերը միշտ էլ սխալ են ընկալվել։ Բայց և այնպես նա առանձնապես շեշտում էր ժողովրդի պոռթկացող զայրույթը, ժողովուրդ, որը կատաղած պահանջում էր կոչումից անհապաղ զրկել հրամանատարին՝ բինբաշուն, սպառնում փողոցային ապստամբությամբ։ Այդպիսի մի ապստամբություն հնարավոր չէր ճնշել ոստիկանության և ժանդարմերիայի միջոցով։ Ուստի անհրաժեշտ էր իսկույն տեղի տալ։ Ցանկալի կլիներ, որ Նորին պայծառափայլությունը ռազմական իրավասու իշխանությունների միջոցով սույն հրամանատարին կոչումից զրկեր և զինվորական դատարանի տնօրինությանը հանձներ՝ պատժելու համար։ Կայմակամը տեղի ունեցած իրադարձությունից հանդում էր այն եզրակացությանը, թե այդ ամենի պատճառը «կրկնակի իշխանությունն» է, քանի որ սիրիական վիլայեթները ենթարկվում են ոչ միայն քաղաքական իշխանություններին, այլև չորրորդ բանակի հրամանատարությանը։ Քանի դեռ գոյություն կունենա այս երկվությունը, ինքը չի կարող երաշխավորել ո՛չ իր գավառի խաղաղության, ո՛չ էլ հայերի տարագրության ցանկալի իրագործման համար։ Կայմակամն իրավաբանորեն պատճառաբանում էր, որ հայ ազգի վտարումը տեղական իշխանության իրավասության մեջ է մտնում։ Այդ գործում զինվորական ամենաբարձրաստիճան ատյաններն անգամ չպետք է ինքնուրույն դեր խաղան։ Տվյալ դեպքում զինվորականները պետք է հանդես գան միայն իբրև «օժանդակողներ»։ Օժանդակության դեպքում էլ, ըստ օրենքի, զորքը պետք է շարժվի միայն ու միայն քաղաքացիական իշխանությունների որոշումների համաձայն։ Այնպես որ ներկա ձևն ապօրինի է, քանի որ գլխավոր հրամանատարությունը գործում է սեփական քմահաճույքով, հաճախ մերժում որևէ օժանդակություն, թշնամաբար է վարվում տեղական կառավարության հետ, նույնիսկ քաղաքացիական իշխանության բաղկացուցիչ մասը հանդիսացող ժանդարմերիան օգտագործում է սեփական նպատակների համար։ Այս վտանգավոր իրողությունը տեսնելով, հայ բնակչությունը սրտապնդվում է, դիմադրություն ցույց տալիս, մի բան, որ անմիջապես ծավալվելու դեպքում լուրջ հետևանքներ կարող է ունենալ ամբողջ պետության համար։

Կայմակամն այս պաշտոնական հաղորդագրությունն ավարտում էր գրեթե սպառնալիքով։ Մուսա լեռան հայերի զինված ապստամբությունը ճնշելու պատասխանատվությունն ինքը կստանձնի միայն մի պայմանով, եթե ամբողջ իշխանությունը կենտրոնացված լինի իր ձեռքին։ Այս նպատակի համար իր տրամադրության տակ պետք է դրվի այնպիսի ուժ և սպառազինություն ունեցող զորաբանակ, որ հնարավոր լինի լեռը մաքրել լիովին ու մեկընդմիշտ։ Միջոցառումը չպետք է իրագործեն տեղական պայմաններին անծանոթ կողմնակի սպաներ։ Ինքը թախանձագին կխնդրեր Անթաքիեի կայազորի գլխավոր հրամանատար նշանակել բինբաշու տեղակալ յուզբաշուն, միայն թե հակահայկական գործերում նա պետք է լիովին ենթարկվի իրեն՝ կայմակամին։ Իսկ եթե այս արդարացի առաջարկներն ընդունելի չեն, ապա ինքը՝ կայմակամը, խոնարհաբար հանդգնում է հայտարարել, որ վերոհիշյալ խայտառակությունը պետք է կուլ տալ առանց հետագա որևէ միջոցառման և Մուսա լեռան ապստամբներին թողնել իրենց ճակատագրի հայեցողությանը։

Քաղաքական և հոգեբանական տեսակետից կայմակամի զեկուցագիրը գլուխգործոց էր։ Եթե նրա ցանկության գեթ մի մասը կատարվեր,

նա կդառնար Սիրիայի ամենաանկախ գավառապետը։ Հին ոճին ընտելացած պաշտոնյան սրտանց կխորշեր այդ հսկայական հաղորդագրության ինքնավստահ տոնից։ Բայց երիտթուրքական ժամանակակից իշխանավորների լսողությունը շոյվում էր նման ամբարտավան տոնից։ Նրանք արևմուտքի երկրպագուներ էին և նախապաշարմունքի հառնող պատկառանք ունեին այնպիսի բառերի հանդեպ, ինչպիսիք էին «նախաձեռնությունն» ու «եռանդը», թեկուզ դրանք արտահայտվեին բողոքի ձևով։

Նույն այդ ժամանակ իր վարդագույն այտերից առհավետ զրկված, կործանված բինբաշին մանրակրկիտ զեկուցագիր ուղարկեց իր վերադաս գեներալին։ Նա երկար-բարակ գանգատվում էր կայմակամից, որն ստիպեց առանց նախապատրաստվելու ձեռնամուխ լինել ձախողված միջոցառմանը։ Բինբաշու ոճն աղաչական էր, հանդիսավոր, երկչոտ, ուստի և անհաջող։ Թշվառը քսանչորս ժամվա ընթացքում ետ կանչվեց, տրվեց դատի։ Հայերի հաջողակ պայքարի այդ ամենաանմեղ զոհը երկարամյա ապահով գործունեության ասպարեզից անհայտացավ գաղտնի, գիշերային խավարում։ Նորին պայծառափայլությունը՝ Հալեպի վալին, կայմակամի ձևակերպումներին այնքան կարևորություն տվեց, որ դրանք ցայտուն դարձնող հավելումներով ուղարկեց ներքին գործոց մինիստրին։ Ստորադրյալն իր նուրբ մատները դրել էր վերադասի այրող վերքին։ Այն օրից ի վեր, ինչ Սիրիայում հրամանատար էր կարգված հռոմեական հյուպատոսի անսահմանափակ իրավասություններով օժտված Ջեմալ մեծ փաշան, բոլոր վալիներն ու մյութեսարրֆները կուչ էին եկել, դարձել թագավորի ստվերներ։ Ջեմալ փաշան խոշոր իշխանավորների հետ վարվում էր այնպես, կարծես դրանք իր բանակի մատակարարներն էին։ Սրանց խստորեն հրամայում էր այստեղ կամ այնտեղ այսքան հազար օխա ցորեն հասցնել կամ մինչև այսինչ տեղը այս ու այն ճանապարհը կարգի բերել հարկ եղածին պես։ Զորավարը քաղաքացիական ամբողջ բնակչությունը դիտում էր իբրև բեռ դարձած պորտաբույծների նախիր, իսկ քաղաքացիական կառավարությունը համարում էր միանգամայն ավելորդ շարիք։ Այնպես որ Հալեպի Նորին պայծառափայլություն վալին ուրախացել էր. վերջապես առնձահարվելու էր երկաթյա փաշան, և Ստամբուլի մեծամեծներն իրազեկ էին լինելու անձնապաստան զինվորականի ողբալի անհաջողությանը։

Թալիաթ բեյը Անտիոքի կայմակամի գլուխգործոցը կարդաց անտրտունջ զգացումով։ Նրա խնդիրն էր ներքին ծառայությունը պաշտպանել զինվորական ոտնձգություններից։ Առանց այդ էլ նրա համար հայերի արտաքսումն ավելի վսեմ նպատակ էր, ավելի կարևոր, քան դժգոհ պարծենկոտների տաղտկալի փառասիրությունը։ Իր սովորության համաձայն զորեղ թաթը մի քանի անգամ վերից վար քսեց սպիտակ քաճկոնին։ Այնուհետև նախկին հեռագրիչը զորեղ թաթի ճարպիկ մատներով իրար միացրեց հեռագրերի թերթերը, մակագրեց. «Խնդրում եմ անհապաղ տալ դրական լուծում»։ Փաստաթուղթն անմիջապես հայտնվեց ռազմական մինիստրի սեղանին։ Էնվեր փաշան սովորաբար Թալիաթ բեյի ոչ մի խնդրանքը չէր մերժում։ Երբ այս երկու պարոնը երեկոյան հանդիպեցին էնչյումենի[1] ժամանակ (մինիստրական սահմանափակ խորհուրդ), Էնվերը մոտեցավ իր բարեկամին։ Պատերազմի երիտասարդ ասպետն ամոթխած ժպտաց իր աղջկական երկար թարթիչներով.

— Մուսա դաղի կապակցությամբ թունդ հեռագիր ուղարկեցի Ջեմալին...

Առանց սպասելու, որ Թալիաթը շնորհակալություն հայտնի, գեմքին նուրբ կատակի արտահայտություն տալով՝ ավելացրեց.

— Բոլորդ ինձնից պետք է շնորհակալ լինեք, որ ես այդ խելագարին քշեցի Սիրիա և զրկեցի հեղինակությունից։

Երուսաղեմում, Ցաֆայի դարպասի մոտ կար արաբական մի հյուրանոց, որի պատուհանները բացվում էին Դավթի միջնաբերդի երկնաձիգ մինարեի կողմը։ Այստեղ ժամանակավորապես իր շտաբն էր հաստատել բանակի գեներալ Ջեմալ փաշան։ Հենց այդ ժամանակ էլ նա ստացավ Էնվերի, Հալեպի վալու և մյուս պաշտոնյաների հեռագրերը։ Նրանք բոլորն էլ խնդրում էին անհապաղ լվալ հայերի հետ կապված խայտառակության ամոթանքը։ (Այդ օրերին երիտթուրքական իշխանավորները միմյանց գրքաչափ հեռագրեր էին ուղարկում։ Պատճառը ոչ միայն հանգամանքներն էին, այլ խառնաշփոթ բառահեղեղից բարբարոսական հաճույք ստանալու գայթակղությունը)։

Ջեմալ փաշան մեն-մենակ նստած էր իր սենյակում։ Իր շտաբի երկու պետերից ոչ մեկը ներկա չէր՝ ոչ Ալի Ֆուադ բեյը, ոչ էլ գերմանացի ֆոն Ֆրանքենշթայնը։ Այնպես որ փաշան կարող էր իրեն ազատ զգալ։ Դուռը կանգնած էր միայն Օսմանը՝ թիկնապահ զորախմբի պետը, հսկայատիպ մի լեռնցի, որը զենքի թանգարանում կարող էր ցուցադրվել իբրև ռազմիկի խորհրդանիշ։ Իր թիկնազորով Ջեմալը երկու նպատակ էր հետապնդում։ Զինվորների ռոմանտիկ հանգերձանքով հագուրդ

[1] Էնչյումեն — հանձնաժողով, կոմիտե, խորհուրդ

էր տալիս ասիացու իր պերճամոլությանը, քանի որ ռազմական պղտոր թոհուբոհի մեջ ծախսերի համար ոչ ոք հաշիվ չէր տալիս։ Միաժամանակ ամոքում էր մի հոգեկան տագնապ, որ հնուց ի վեր ապրել են բոլոր բռնակալները, երկյուղ կրելով սակավ հաջողակ գործակիցներից։ Դա մահափորձի սարսափն էր։ Օսմանն իրավունք չուներ տեղից շարժվելու, մանավանդ այն ժամանակ, երբ Ստամբուլից որևէ պարոն էր ժամանում։ Ջեմալն անհավանական չէր գտնում, որ իր սիրեցյալ եղբայրները՝ Էնվերն ու Թալիաթը, կարող էին իր մոտ առաքել մահվան ճարպիկ մի գործակալ՝ լավագույն բարեմաղթություններով։ Նա հեռագրերը կարդաց ուշի-ուշով, հատկապես Էնվերինը։ Թեև առաջ քաշված խնդիրը մի առանձին նշանակություն չուներ, դեղնավուն դեմքն ավելի դժգունեց, իսկ սև թավ բեղերով ծածկված զորեղ շրթունքները կատաղությունից սպիտակեցին։ Գեներալը տեղից վեր թռավ, սկսեց վազվզել սենյակում։ Էնվերի պես նա էլ փոքրամարմին էր, բայց բնավ նրբակազմ չէր, այլ ավելի շուտ՝ կոշտ ու կոպիտ։ Զախ ուսը փոքր-ինչ վեր էր ցցված։ Անծանոթ մարդիկ նրան համարում էին տձև։ Գեներալական ոսկեթել թևքերի միջից կախված էին ծանր, կարմրավուն ձեռքերը։ Դրանք տեսնելով՝ մարդ հասկանում էր, թե ինչու է տարածվել այն առասպելը, ըստ որի նա իբր Ստամբուլի դահճի թոռն էր։ Էնվեր փաշան ստեղծված էր աշխարհի ամենաթեթև, իսկ Ջեմալը՝ ամենածանր նյութից։ Եթե առաջինի մոտ ամեն ինչ երազկոտ ու քմահաճ էր, ապա սրա մոտ պոռթկուն էր, վայրագ։ Ջեմալ փաշան հասարակ ծագում ունեցող մարդու անսպառ ատելությամբ ատում էր աստվածների նրբակիրթ սիրեցյալին։ Նա դժվարությամբ էր ձեռք բերում այն, ինչ Էնվերի գոգն էր ընկնում հեշտ ու հանգիստ, առանց որևէ վաստակի՝ ռազմական փառք, հաջողություն խաղի մեջ, կանանց բարեհաճությունը։ Ջեմալը մի անգամ էլ ձեռքն առավ հեռագիրը, փորձեց պաշտոնական ոճից առանձնացնել Էնվերի ծեքծեքուն ինտոնացիան։

Այդ րոպեին Մուսա լեռան յոթ համայնքի ճակատագիրը մազից էր կախված ավելի, քան երբևէ։ Ջեմալի պաշտոնական գրությունը բավական էր, որպեսզի Դամլաջքի դեմ ուղարկվեին հեռևակային երկու լրիվ գումարտակ, լեռնային հրետանու մի մարտկոց և մի քանի գնդացիր։ Դրանով մի ժամվա ընթացքում ամեն ինչ կվերջանար, հակառակ Բագրատյանի հմտության և բոլոր հայերի քաջության։ Բայց երբ Ջեմալը մի անգամ էլ հեռագիրը կարդաց, նրա ցասումը հասավ իր գագաթնակետին։ Նա շփոթված Օսմանին մռայլոցով ձայն տվեց, որ իրեն մենակ թողնի, այլևս չհամարձակվի խանգարել, թե չէ գլուխը կթռչի։ Ապա մոտեցավ պատուհանին, բայց իսկույն ետ գարձավ, որ ոչ ոք իրեն չտեսնի հոգեկան այդ ծանր վիճակում։ Երանի՜ կարողանար ոտքի տակ ճզմել, փոշի դարձնել Էնվերին։ Պատերազմի այդ սալոնական տիկնոջը։ Գեղեցիկ աշխարհի այդ փքված տարփածուին։ Այդ կեղծարարին, որը տղամարդուն վայել ոչ մի գործ չի կատարել. հաղթողի փառքին նա հասավ սողալով։ Չէ՞ որ Ադրիանապոլը երկրորդ անգամ գրավելիս նա իր հեծյալներով առաջ մղվեց այն ժամանակ, երբ ամեն ինչ վաղուց արդեն ավարտված էր։ Եվ օսմանյան կայսրության այդ սնամեջ, չնչին խեղկատակ լակոտի առաջ պետք է գլուխ խոնարհի Ջեմալը։ Այդ խորամանկ թեթևսոլիկը Ջեմալին Սիրիայում իշխանություն տալով՝ ուզում է նրան հողին հավասարեցնել։

Ստամբուլի Մարսի դեմ գեներալի զայրույթը բորբոքվեց, ալեկոծելով նրա հոգու ամենահեռավոր խորքերը։ Դրդապատճառը ինչ-որ ծիծաղելի մանրուք էր։ Էնվերի հեռագիրն սկսվում էր հետևյալ խոսքերով. «Խնդրում եմ անհապաղ միջոցներ ձեռք առնել...»։ Գրել էր «Ձերդ պայծառափայլություն», առանց նույնիսկ «փաշա» տիտղոսի։ Այնինչ Ջեմալը ձևականության մեջ հասել էր մոլեռանդության, հատկապես Էնվերի նկատմամբ։ Ձևականությանը նա հանդիսավոր լրջությամբ հետևում էր նույնիսկ մտերմական հանդիպումների ժամանակ։ Հիվանդագին դյուրազգացությամբ հետևում էր, որ Էնվերը ևս պատշաճ հարգանք դրսևորի, իր արժանապատվությունից ոչ մի տառ չպակասեցնի։ Այն, ինչ հեռագրում Էնվերն ամբարտավանորեն մոռացության էր տվել, վերջին կաթիլն էր, որով լցվեց Ջեմալ փաշայի ատելության բաժակը։ Վերջին ամիսներին Էնվերը գեներալին հրեշավոր պահանջներ էր ներկայացնում։ Դրանք Ջեմալը կատարում էր լուռումունջ։ Սկզբում փաշան ստիպված եղավ Ստամբուլ վերադարձնել ութերորդ և տասներորդ դիվիզիաները, ապա՝ նաև քսանհինգերորդը, իսկ ավելի ուշ տասներեքերորդ բանակային ամբողջ կորպուսն ուղարկվեց Բաղդադ և Բիթլիս։ Ներկայումս Սիրիայի ամբողջ ռազմական դիկտատորի տրամադրության տակ կար տասնվեց-տասնութ հազից ընկած գումարտակ, այն էլ, ռազմական խմաստով, մի ընդարձակ տարածության վրա, որը ձգվում էր Տավրոսի լեռնազագաթներից մինչև Սուեզի ջրանցքը։ Այդ ամենը հետևանք էր Էնվեր փաշայի քմահաճույքի և ոչ թե ռազմական ընդհանուր իրադրության։ Ոչ մի արդարացում չկար։ Ջեմալն այդ բանում համոզված էր և ատամներն էր կրճատացնում։ Գեներալիսիմուսն աճպարարի ճարպկությամբ լրիվ զինաթափ էր արել փաշային, դարձրել անվնաս, միաժամանակ զրկել որևէ հաջողություն ձեռք բերելու հնարավորությունից։

Ատելությունից բորբոքված փաշան հիշողության մեջ վերականգնում էր դավաճանական հարյուրավոր մանրամասնություններ, որոնք հայելու պես արտացոլում էին Էնվերի արհամարհական վերաբերմունքն իր նկատմամբ։ Գեներալիսիմուսն ու նրա կլիկը միշտ ջանում էին Ջեմալին հեռու պահել, մասնակից չդարձնել կարևորագույն որոշումները կայացնելուն, չհրավիրել մտերմական խորհրդակցություններին։ Ջեմալի հանդեպ ցուցաբերված վերաբերմունքն ի սկզբանե եղել էր դիտավորյալ նվաստացումների շղթա։ Եվ ամենամեծ նվաստացումն այն էր, որ նա Էնվերի դեմ չկարողացավ իրեն դրսևորել, որ վերջինիս ներկայության ու ազդեցության հետևանքով անդառնալիորեն գլորվեց դեպի երկրորդական աստիճանը, թեև տոգորված էր զորավարի ու ռազմիկի սեփական գերազանցության գիտակցությամբ։

Ջեմալ փաշան, ձախ ուսը վեր-վեր ցցած, վազվզում էր սեղանի շուրջը։ Իրեն լիովին անզոր էր զգում։ Գլխում տղայական տեսիլներ էին կայծակում։ Նոր բանակ կազմած մտնել Ստամբուլ, գերի վերցնել այդ հանդուգն պղպջակին, Բոսֆորը բացել դաշնակից նավատորմի առաջ և ներկա հակառակորդների հետ պայմանագիր կնքել։ Նա երրորդ անգամ հեռագիրը ձեռքն առավ, բայց իսկույն դեն շպրտեց։ Ի՞նչ ձևով թունավորեր Էնվերի ու նրա մտերիմների ծրամագրությունը։ Ջեմալը գիտեր, որ նրանք հայերի բնաջնջումը համարում էին իրենց հայրենասիրական ամենասրբազան գործը։ Ինքն էլ հաճախ նույն կարծիքն էր հայտնում։ Բայց նա երբեք չէր հանդուրժի զուտ էնվերական այդ դիլետանտությունը։ Ինչո՞ւ հենց Սիրիան պետք է դառնա հայերի մահվան հանգրվանը։ Ռազմական մինիստր Ջեմալին հեռատեսորեն չէր հրավիրում տեղահանությանը վերաբերող խորհրդակցություններին։ Այլապես քաղցրիկ Էնվերի ծրագրի բանը բուրդ կլիներ։ Դա նույնպես առիթ ծառայեց, որ վայելչատես ստահակը փաշային հարավ-արևելք քշի։

Ջեմալը վայրագ վրեժխնդրությամբ խորհրդածում էր, թե արդյոք չփակի՞ Սիրիայի սահմանները, ետ չդարձնի՞ Անատոլիա գնացող քարավանները և դրանով իսկ ի դերև չհանի՞ մեծ գործը։

Հենց այդ վայրկյանին շտաբի պետը՝ գնդապետ ֆոն Ֆրանքընշթայնը դուռը բախեց։ Ջեմալն իսկույն իրենից վանեց այն ամենը, ինչ ծնունդ էր պարապ վրդովմունքի։ Դարձավ նույն ողջախոհ, երևույթները գրեթե կասկածամտորեն կշռադատող գեներալը, ինչպես նրան գիտեին ստորադրյալները։ Ասիացու կրքոտ շրթունքները արագ-արագ սողացին թավ բեղերի տակ, թաքնվեցին։ Մանավանդ գերմանացի գնդապետի մոտ միշտ մտահոգ էր ձևանում, որպեսզի թշնամի գժգոհ, բայց և անդիմադրելի տրամաբանության տեր մարդու տպավորություն։ Ֆոն Ֆրանքընշթայնը վարժվել էր այդ բանին։ Ջեմալը նրա աչքին միշտ էլ ամենաանխոով, ամենասառնարյուն զորավարն էր։

Նստեցին սեղանի առաջ։ Գերմանացին բացեց թղթապանակը, միջից դուրս բերեց իր գրառումները, զեկուցեց Սիրիայում նոր զորքեր տեղաբաշխելու մասին։ Նկատեց իր առջև դրված հեռագրերը։ Վրայինը Էնվեր փաշայի հրամանն էր։

— Ձերդ պայծառափայլությունը կարևոր թղթե՞ր է ստացել...

— Մի՛ նեղվեք, գնդապետ,— վրա բերեց Ջեմալը։— Այստեղ կարևոր գործերը կախում ունեն ոչ թե ռազմական մինիստրից, այլ միայն ու միայն ինձանից։

Եվ նա իր կարմրավուն ձեռքով վերցրեց Էնվերի հեռագիրը, կտորկտոր արեց, դուրս նետեց Դավթաբերդին նայող պատուհանից։

Այս թուրք իշխանավորն իր դյուրազգացության հետևանքով ակամա դարձավ Գաբրիել Բագրատյանի դաշնակիցը։ Նա ո՛չ պատասխանեց, ո՛չ էլ մարդիկ, գնդացիր կամ հրանոթ ուղարկեց Մուսա լեռը քարուքանդ անելու։

Ջեմալ փաշայի անգործությունը հայ լեռնականներին փրկեց վերահաս կործանումից, առանց նրանց ազատելու դանդաղ մահվան ճիրաններից։ Եթե Սիրիայի ու Պաղեստինի դիկտատորն ինքը ձեռնպահ մնաց, ապա բավականաչափ կային զինվորական ստորին կենտրոններ, որոնք կարող էին ինքնուրույն վճիռ կայացնել։ Խստաբարո յուզբաշին՝ տարաբախտ բինբաշու հաջորդը, Հալեպի կայազորի պետին համոզել էր, որ սա այդ նպատակի համար ուղարկի մի քանի վաշտ։ Վալին նույնպես մի գրությամբ խոստանում էր հատկացնել զափթիեների մի մեծ զորախումբ։

Այսպիսով, կայմակամը Հալեպում հաջողություն գտավ։ Եվ հաջողությունից բորբոքվեց նրա փառասիրությունը։

Բագրատյանն իր դիտանոցում հաճախ այն զգացումն էր ապրում, թե Դամլաջըքը պտտվող անծայր ոլորտի մեռյալ կետն է, մահացու թշնամության անտեսանելի, սակայն վայրագ հոլովման բացարձակ անշարժ կենտրոնը։ Այսօր, երբ եղասայլերը, գրատներն ու մարդկային բազմությունը հեղեղի պես ընթանում էին դեպի հովիտն ու լեռնային գյուղերը, մեռյալ կետի շուրջը ծավալված շարժումն արդեն շատ պարզ էր երևում։ Այդ ի՞նչ հորձանք էր։

Կայմակամին թվում էր, թե հասել է այն ժամը, երբ ինքը քաղա-

քական գործն օրինակելիորեն գլուխ բերելով՝ կանցնի կուսակցության առաջավորների շարքը։ Դրանով նա հայոց ճակատագրի մահացու ոստայնի վրա մի նոր, ամուր թել ավելացրեց։ Մեջտեղ էր ընկել նաև արաբական ազգային շարժման խնդիրը, որը վերջերս տհագին գլխացավանք էր պատճառում սիրիական իշխանություններին։ Լայնորեն տարածված գաղտնի ընկերությունները, ինչպիսիք էին «Էլ Ահդը» («Ուխտ») և «Արաբ եղբայրները», կրակոտ ու ազդու պրոպագանդա էին մղում Ստամբուլի դեմ։ Նրանք նպատակ ունեին արաբ բոլոր ցեղերը միավորել, ստեղծել ինքնուրույն և անկախ պետություն։ Այստեղ էլ, ինչպես աշխարհի բոլոր մասերում, գործի գլուխ կանգնած էր տիրապետող ազգամոլությունը, որը ձգտում էր գաղափարական, կրոնական պետություն հիմնել բիոլոգիական խղճուկ տարրերի շրջանակում։ Խալիֆայությունն աստվածաշնորհ գաղափար էր, իսկ թուրք, քուրդ, հայ, արաբ լինելը՝ ոչ այլ ինչ էր, եթե ոչ երկրային իրողություն։ Հին ժամանակների փաշաները հաստատ գիտեին, որ խալիֆայության գաղափարը, հոգևոր գերադաս միության գաղափարն ավելի վսեմ է, քան մի քանի դիվահար կարիերիստների առաջադիմական ցնորքը։ Հին կայսրության զրպարտված թմրության, ճակատագրի քմահաճույքին ապավինելու, մեղկ վաճառականության մեջ կար պետական մոտեցման զգուշավոր, իմաստուն, անձնուրաց ողջախոհություն, մի բան, որ արագ ներգործության տվող, կարճատես եվրոպացին բնավ չի կարող հասկանալ։ Նախկին փաշաները նուրբ հոտառությամբ զգում էին, որ ազնիվ, սակայն խարխլված դղյակը բարեփոխումներով չի փրկվի։ «Երիտասարդ թուրքերին» հաջողվեց հարյուրամյակների գործը կործանել մի շնչում։ Նրանք տրին այն, ինչ երբեք չպետք է անեին ժողովրդական պետության կառավարողները։ Իրենց ազգայնական ցնորքներով վարակեցին հպատակ ժողովուրդներին։ Բայց թե հիմարները հաշվից դուրս են։ Որքա՞ն վատ պետք է լինի մարդու տեսողությունը, որ դրամայի ետևում չկռահի հեղինակին։ Մարդիկ ուզում են այն, ինչ պետք է ուզեն։ Պետության մեծ, գերբնական կապերը խզված են։ Դա նշանակում է, որ աստված ինքն իր հետ շախմատ էր խաղում, բայց ֆիգուրները խառնել էր՝ դրանք նոր ձևով դասավորելու համար։

Բոլոր դեպքերում արաբական ազգայնականությունն անցել էր հարձակման։ Սկիզբ առնելով հարավից, դա թափանցում էր թուրքական պետության խորքերը՝ մինչև Մոսուլ, Մերսինա, Ադանա։ Սիրիական վիլայեթներում թուրքերն ստիպված էին լրջորեն հաշվի նստել այդ շարժման հետ, քանի որ չորրորդ բանակի թիկունքում արդեն ծայր էր առել

այն նախանձախնդիր ըմբոստությունը, որը գործող զորքի հրամանատարության համար ծայրահեղ վտանգ էր ներկայացնում։ Անթաքիեի խեղճ բինբաշու գլխին եկած փորձանքը գաղտնի առնչություն ուներ այս խլրտման հետ։ Կայմակամը հայերի դեմ կարողացավ հմտորեն օգտագործել գավառի արաբ վայրիվերո բնակչության տրամադրությունը։ Միաժամանակ հույս ուներ իսլամական Մոլեռանդությունը բորբոքելով՝ հասնել իր նպատակին։ Տեղահանության օրենքի համաձայն հայերի սեփականությունը լիովին պատկանելու էր պետությանը։ Համենայն դեպս այդպես էր թղթի վրա։ Բայց իրականում գավառական իշխանությունները վարվում էին այնպես, ինչպես կամենում էին։ Անթաքիեի կայմակամը պարտության առաջին իսկ օրը իր պաշտոնյաներին ուղարկեց Մուսա լեռան շրջակա բոլոր գյուղերը, որտեղ բավական ստվար էր արաբ բնակչությունը։ Պատվիրեց հայտարարել, թե Սուեղիայի և Ռես էլ Խրնզրի միջև ընկած սիրիական երկրամասը խաղողի այգիներով ու մրգաստաններով, շերամապահությամբ ու մեղվաբուծությամբ, ջրի ու անտառափայտի առատությամբ, իր տներով ու կալվածքներով հանդերձ, ձրի բաշխվելու է նրանց, ովքեր առաջիկա երկու օրում բնակություն հաստատեն հայկական հոլտում։ Մյուդիրները հեռատեսորեն հասկացնում էին, թե թուրքերի համեմատությամբ, առավելություն կտրվի արաբ աշխատասեր երկրագործներին։

Ահա թե ինչն էր անակնկալ գաղթի շարժառիթը։ Գերապատիվ կայմակամն անձամբ ժամանեց, մնաց Յողոնօլուքում՝ բաշխումը հսկելու և արաբ երևելիներին սիրաշահելու։ Իջևանեց Բագրատյան ամառանոցում, այնտեղից վտարելով մուհաջիրին ու նրա գերդաստանը։

Քառասունութ ժամում գյուղերն արդեն առաջվա պես բազմամարդ էին։ Հարստացած արաբներն ու թուրքերը եղբայրացան։ Ավելի սիրուն տներ իրենց կյանքում չէին տեսել։ Ուղղակի ափսոսում էին դրանց մեջ ապրել։ Եկեղեցիներն անմիջապես վերափոխեցին մզկիթների։ Առաջին իսկ երեկոյան երկրպագեցին ալլահին։ Մոլլաները երկնավորին գոհություն հայտնեցին նոր, սքանչելի բարիքների համար։ Նրանց բարբառության վրա մեկայն մի ստվեր էր ընկնում. դեռևս այնտեղ, վերևում, հանդգնորեն ապրում էին քրիստոնյա կեղտոտ խաղերը։ Ամեն հավատացյալի պարտքն էր՝ բնաջնջել դրանց։ Միայն այդ բանից հետո կարելի է բարեպաշտորեն վայելել առատ բարիքները։ Տղամարդիկ մզկիթներից դուրս եկան կայծկլտուն աչքերով։ Նրանք ևս բուռն ցանկություն էին զգում շուտ փակել կողոպտված տանտերերի հաշիվը, որպեսզի իրենց

գեղջկական առաքինի հոգիների խորքից չքանա ներքին տհաճությունը։

Մուսա լեռան պաշտպանները խոժոռ, բայց անտարբեր աչքերով էին դիտում իրենց հայրենիքի կործանումը։

Ի՞նչ էր պատահել ժամանակի հետ։ Քանի՞ հավիտենականություն էր պետք, որ մի հատիկ օրը սողալով գնար, լուծվեր գիշերվա մեջ։ Բայց և որքա՞ն արագատն էր ցերեկը խխունջ-գիշերվա համեմատությամբ։ Որտե՞ղ էր Ժուլիեթը։ Վաղուց ի վեր ապրո՞ւմ էր այս վրանում։ Առհասարակ նա ապրե՞լ էր որևէ հարկի տակ։ Երբևէ ապրե՞լ էր Եվրոպայում։ Ո՞վ էր Ժուլիեթը։ Հավանաբար նա այն էակը չէր, որ լեռնական ժողովրդի հետ տանջվում էր գերության մեջ։ Հավանաբար նա այն էակը չէր, որ ամեն առավոտ քնից արթնանում էր սարսափախառն զարմանքով։ Սպիտակ, հոգնատանջ մարմինը սահելով իջնում էր անկողնուց, կանգնում գորգին, վրան զցում ննջազգեստը, նստում ծալովի աթոռին, հայելավոր փոքրիկ սեղանի առաջ, զննում իր դալուկ, բայց և արևախանձ դեմքը։ Հնարավո՞ր բան էր։ Այդ դեմքը, անփայլ աչքերը, չորացած մազերը, այրված մաշկը ինչպե՞ս կարող էին դուր գալ մի երիտասարդի։ Մի քանի օր էր, ինչ Ժուլիեթն իր սպասուհուն առավոտ կանուխ վրանից դուրս էր ուղարկում, ապա երկչոտությամբ, կարծես ոճիր էր գործում, սկսում էր օծվել իր անուշահոտ յուղերի մնացորդներով։ Վերջապես հագնվում էր, կապում ահագին գոգնոցը, գլխին թասակաձև փաթաթում սպիտակ մի շոր։ Հիվանդանոցում աշխատելու օրից ի վեր ոչ մի այլ զգեստ չէր հագնում։ Թասակով ու գոգնոցով նա իրեն բարոյապես ավելի լավ էր զգում։ Դրանք մի տեսակ համազգեստ էին, որը Դամլաջրքում ունեցած իր դիրքին արտաքուստ ավելի էին հարմար։

Նախքան վրանից դուրս գալը Ժուլիեթը ծունր իջավ անկողնու առաջ, գրկեց բարձերը, մի անգամ ևս իրենից վանեց իրականությունը։ Անցյալում, օրեր (թե՞ տարիներ) առաջ, նա իրեն զգում էր կորած, տարաբախտ։ Բայց այժմ կարոտով էր տենչում այդ անմեղ տարաբախտությունը։ Աշխարհի ստեղծման օրից դեռևս ոչ մի կին իրեն այնպես նվաստացած չէր զգացել, ինչպես նա՝ այդ պատվավոր, գիտակից կինը, որի հետ երկարամյա ամուսնության ընթացքում ոչ մի «դեպք» չէր պատահել։ Մի՞թե հարյուրավոր դեպքերն ու սիրային արկածները Փարիզում ներելի մանրուք չէին համարվի։ Այնինչ այստեղ դա ստոր դավաճանություն էր, այն էլ հուսահատ պայքարի, անխուսափելի մահվան սպառնալիքի պայմաններում։ Փոքրիկ աղջկա պես Ֆրանսուհին մրմնջում էր, դեմքը բարձերի մեջ թաղած. «Ես կանգնել չեմ կարող»։ Ի՞նչ

օգուտ։ Անողոք օտարության մեջ, անհայտ, անբեկանելի վճռով նա տրվեց մի բանի, որը մոտ թվաց հոգուն։ Կարծես իր ներսում հակադիր ուժ ոգեկոչելու համար Ժուլիեթը կիսաձայն գոչեց. «Գաբրիել»։ Բայց Գաբրիելը նույնքան էր բացակա, որքան ինքը՝ Ժուլիեթը։ Ամուսնու ճշմարիտ պատկերը նա ավելի ու ավելի հազվադեպ էր կարողանում դուրս կորզել իր հիշողության գունատ լուսանկարների ալբոմից։ Թուխ բեղմորուքով այդ հայը, որ երբեմն-երբեմն նստում էր իր կողքին, ի՞նչ առնչություն ուներ Գաբրիելի հետ։ Ժուլիեթը սարսափեց իր արցունքներից, աչքերն ուշադրությամբ սրբեց, սպասեց, որ կարմրությունն անցնի, և ինքը տգեղ չերևա։

Պետրոս Ալթունին բարձր ջերմություն չունեցող վիրավորներին ուղարկում էր «տուն»։ Մինչ այդ նա այդ միջոցին չէր դիմում, բայց այժմ ստիպողական պատճառ կար։ Օգոստոսի 14-ի հայկական հաղթանակի լուրը կայծակի արագությամբ տարածվեց Հյուսիսային Սիրիայի դաշտավայրերում ու լեռներում։ Դա առանձնապես մոտակա լեռներում թաքնված դասալիքների սրտովն էր։ Հիրավի, հաջորդ օրն իսկ հայկական առաջապահ գիրքերին մոտեցան քսաներկու նոր դասալիքներ և խնդրեցին իրենց ընդունել մարտիկների շարքերը։ Գաբրիել Բագրատյանը, դավաճանությունից ու լրտեսությունից զգուշանալով, մեկ առ մեկ ստուգեց դրանց։ Քանի որ մարդիկ ներկայանում էին իբրև հայեր, զինված էին մաուզերյան հրացաններով և փամփուշտի առատ պաշար ունեին, քանի որ զոհվածներին փոխարինողներ էին պետք, Գաբրիելը բոլորին էլ ընդունեց գաղթական։ Դրանցից մեկը շատ էր երիտասարդ և մի տեսակ շփոթված, անհանգիստ տեսք ուներ։ Պնդում էր, թե Հալեպի զորանոցից չորս օր առաջ է փախել։ Ոտքով ահագին ճանապարհ է անցել, մեծ դժվարություններ տեսել։ Երեկոյան մեռելի պես գունատ հայտնվեց հիվանդանոցում, Ալթունու աչքի առաջ ինչ-որ անհասկանալի բառեր թոթովեց, ապա ուշաթափ ընկավ։ Բժիշկն իսկույն պատվիրեց հանել շորերը։ Խեղճ տղայի մարմինը տաքությունից այրվում էր, ցընցվում։ Երծքի վրա կարմիր, փոքրիկ կետեր էին դուրս եկել։ Գիշերը դրանք շատացան։ Ալթունին վաղուց օտարացած բժշկական ուղեցույցը ձեռքն առավ։ Բայց հիերոգլիֆներից ոչինչ չհասկացավ։ Ուզեց ֆրանսուհու հետ խորհրդակցել։ Մատնացույց արեց հիվանդին.

— Նայեցեք սրան, սիրելիս։ Ի՞նչ է Ձեր կարծիքը։

Ժուլիեթն այն պարարածներից չէր, որոնք ընտելանում են արհավիրքին ու թշվառությանը։ Ամեն անգամ հիվանդանոց մտնելիս հազիվ էր զսպում սրտխառնությունը։ Ջանք էր թափում, ամեն ինչի ձեռք էր

ալիս, այնինչ զզվանքը ոչ թե մեղմանում, այլ սաստկանում էր։ Բայց այս վայրկյանին ինչ-որ անհասկանալի մղում զգաց։ Կարծես տեղնուտեղը ուզեց քավել իր դավաճանությունը։ Ոտքերի տակ փրփրած բերանով, տենդից ուշաթափ, ցնցվող, քոսոտ, գարշահոտ մարդն իր մեջ մարմնավորում էր Գաբրիելին ու Ստեփանին։ Ժուլիեթը ծունր իջավ, աչքերը փակեց և գլուխը մոտեցրեց հիվանդի ներս ընկած կրծքին։ Թվաց, թե նա էլ է դանդաղ ուշաթափվում։

Միայն Գոնզագի ձայնը նրան սթափեցրեց, թափանցելով մինչև սրտի խորքը.

— Ի՞նչ եք անում, Ժուլիեթ։ Չէ՞ որ դա անմտություն է...

Այստեղ տիկին Բագրատյանի նկատմամբ Ալթունին խղճի խայթ զգաց.

— Ավելի լավ կլիներ, տիկին, եթե հիմա Դուք մեզ մոտ այդքան չշարշարվեիք...

Գոնզագը Ժուլիեթին աչքով-ունքով գողունի դուրս կանչեց։ Ֆրանսուհին հլու-հնազանդ հետևեց նրան։ Գոնզագի հարցում ևս ժամանակը դարձել էր քառասային առեղծված։ Ե՞րբ մտերմացան, ինչքա՞ն ժամանակ էր անցել։ Երբվանի՞ց Ժուլիեթն սկսեց Գոնզագի ետևից անպաշտպան կնոջ պես գնալ, ենթարկվելով նրա ամեն հրավերին։ Որքա՜ն ծանր ու անտանելի էին դարձել դավաճանությունն ու լռությունը։ Բայց Գոնզագը չէր փոխվել։ Նույն ընդգծված ուշադրությունը, նույն հայացքն ու խոհերը, որոնցից Ժուլիեթը խույս տալ չէր կարող։ Գաղթականի կյանքը հույն երիտասարդի արտաքինի վրա բոլորովին չէր անդրադարձել։ Մազերը շարունակ անթերի սանրված էին, բաճկոնը՝ խոզանակով մաքուր սրբված, մարմինը՝ մաքուր, մաշկի գույնը՝ պայծառ, շունչը՝ ախորժելի։ Արդյոք սիրո՞ւմ էր Ժուլիեթը նրան։ Դա ինչ-որ ավելի ահավոր բան էր։ Դժբախտ սերը միշտ ճանապարհ է որոնում, թեկուզ և երազում։ Այս դեպքում ճանապարհ չկար։ Գոնզագն ավելի անմատչելի էր դարձել, քան Գաբրիելը։ Սկզբում ինչ-որ հաճելի բան կար, հարազատ ու մտերմիկ, կարեկցանք շարժող աշխարհում մոլորված մի բան, բայց հետո դա դարձավ սոսկալի անխուսափելիություն, որի դեմ Ժուլիեթն անզոր էր։ Երբ Գոնզագը նրան փայփայում էր, նա զգում էր այն, ինչ երբեք չէր զգացել։ Բայց այդ զգացման հետ աճում էր նաև ատելությունը իր՝ դավաճան կնոջ հանդեպ։ Սովահայաց բարձունքների ծառախիտ ու մացառապատ անկյուններից շատերը դարձել էին նրանց գաղտնի ժամադրավայրերը։ Գործադրելով հպարտության վերջին ճիգերը,

Ֆրանսուհին խորհում էր. «Ես այստե՞ղ, չոր գետնի՞ն, ե՞ս...»։ Բայց Գոնզագը միշտ էլ կարողանում էր հերքել այն ամենը, ինչ տգեղ էր թվում։ Կարծես միակողմանիության հանճար էր և խաղամոլի, հնահավաքի, որսորդի նման իր մեջ չափից ավելի զարգացրել էր միայն մի քանի հակում, մի քանի ունակություն։ Այս կարգի մարդկանց նման նա էլ օժտված էր նպատակասլաց, անընկճելի համբերությամբ։ Դա նրան բերեց Դամլաջրք, ստիպեց ամենայն համեստությամբ սպասել հարմար օրվան։ Գոնզագի հանդարտ էությունը Ժուլիեթի էության մեջ շփոթ առաջացրեց, կաթվածահար արեց կամքը։ Հաճախ այս կինը կորցնում էր կշռադատելու, կողմնորոշվելու կարողությունը։ Նրա ներսում աճում էր զզվելի, մազմզոտ տերևներով թուփ հիշեցնող մի երևույթ, հետզհետե փակում լույսի առաջը։

Երկուսով նստած էին իրենց հանգստավայրերից մեկում, որին «Ռիվիերա» անունն էին տվել։ Գոնզագը մի գլանակ հանեց, բաժանեց երկու մասի, հանդիսավոր ձևով վառեց.

— Միայն հիսուն հատ է մնացել...

Եվ կարծես ծխախոտն սպառվելու հետ կապված մտահոգությունը փարատելու համար ավելացրեց.

— Բայց թե շուտով այստեղ նստած չենք լինի...

Ժուլիեթը մտացրիվ նայեց նրան։ Գոնզագի ձայնը հնչեց նախկին անհոգությամբ.

— Կարծում եմ, որ այստեղից երկուսս կհեռանանք՝ դու և ես։ Ժամանակ դեռ կա։

Ժուլիեթը կարծես դեռ չէր հասկանում Գոնզագի միտքը։ Սա իր ծրագիրը մեկնաբանեց չոր ու ցամաք ճշգրտությամբ։ Նեղություն էին քաշելու միայն առաջին ժամերին։ Լեռնային մի փոքրիկ շրջագայություն, ուրիշ ոչինչ։ Հարկ կլինի ժայռից ժայռ մագլցելով գնալ դեպի հարավ, հասնել Հաբասթե գյուղի աջ կողմում տարածվող Որոնտեսի հարթավայրը, ապա դուրս գալ Սուեզիայի ճանապարհը։ Անցյալ գիշերը Գոնզագն այս ճանապարհն էր հետախուզել, առանց որևէ մեկին հանդիպելու, անվթար հասել սպիրտի գործարանը, դիրեկտորի տունը։ Ժուլիեթին հայտնի էր, որ այս մարդը հույն էր, ազդեցիկ անձնավորություն։ Գոնզագը զարմացել էր, թե որքա՜ն հասարակ, որքա՜ն բնական էր այդ ամենը.

— Դիրեկտորը լիովին մեր տրամադրության տակ է։ Գործարանի փոքրիկ շոգենավը օգոստոսի քսանվեցին բեռնավորված մեկնելու է Բեյ-

ղրուք։ Լաթաքիայում և Տրիպոլիում կարճատև ժամանակով կանգ առնելուց հետո օգոստոսի քսանիններին հասնելու է Բեյրութ։ Շոգենավը ամերիկյան դրոշ է կրելու։ Գործարանը կապված է ամերիկյան ընկերությունների հետ։ Դիրեկտորը պնդում է, որ ամենաչնչին վտանգն անգամ բացառված է, քանի որ կիպրոսյան նավատորմը այս օրերին դարձյալ դուրս է գալու բաց ծով։ Դու առանձին խցիկ ես ունենալու, Ժուլիեթ։ Երբ Բեյրութ հասնենք, խաղն արդեն շահած կլինես։ Մնացածը միայն փողի խնդիր է։ Իսկ դու փող ունես...

Ժուլիեթի աչքերի առաջ սևացավ.

— Հապա Գաբրիելն ու Ստեփա՞նը...

Այդ պահին Գոնզագն իր կոստյումի վրայից փչելով թոցրեց ծխախոտի մոխիրը.

— Գաբրիելն ու Ստեփա՞նը։ Նրանք շատ հայտնի հայեր են։ Դիրեկտորին հարցուփորձ արի։ Մարդը հրաժարվեց որևէ հայի օգնելուց։ Քանի որ թուրքական կառավարության հետ նրա հարաբերությունները շատ լավ են, չի ուզում վտանգավոր քայլի դիմել։ Ամեն ինչ պարզ բացատրեց։ Ցավոք սրտի, Գաբրիելին ու Ստեփանին օգնելն անհնարին է...

Ժուլիեթը ետ քաշվեց.

— Եվ ես պետք է ընդունե՞մ այդ օգնությունը... քեզնից...

Գոնզագը թեթևակի օրորեց գլուխը. կարծես չէր կարողանում հասկանալ կնոջ ծայրահեղ տառապանքն ու խղճի խայթը։

— Ինքը՝ Գաբրիելն էր ուզում քեզ ճանապարհել։ Հիշիր, խնդրեմ։ Այն էլ ինձ հետ։

Ժուլիեթը բռունցքները սեղմեց քունքերին.

— Այո, ուզում էր ինձ ու Ստեփանին հեռացնել... Եվ ես այդ բանն արի... խաբո՞ւմ եմ...

— Ժուլիեթ, դու բնավ էլ չպետք է նրան խաբես։ Ես այդ բանը քեզնից չեմ պահանջում։ Ընդհակառակը։ Ասա ամբողջ ճշմարտությունը։ Թեկուզ հենց այսօր, ավելի լավ։

Ժուլիեթը տեղից վեր թռավ։ Դեմքը կարմրել էր, ջղաձգվել։

— Ի՞նչ։ Սպանե՞մ։ Հինգ հազար մարդու ճակատագիրը նրա ձեռքին է։ Եվ ես հենց հիմա պետք է սպանե՞մ նրան։

— Այդ մեծադղորդ բառերն ամբողջ գործը փչացնում են,— խիստ լրջանալով ասաց Գոնզագը և մնաց նստած։— Մարդիկ սովորաբար կործանում են օտարներին։ Այդ բանը մեզ հետ պատահում է ամեն

օր։ Բայց երբեմն էլ ստիպված ենք լինում կշեռքի վրա դնելու մեր և այսպես կոչված մերձավորների կյանքը... Մի՞թե Գաբրիելն առհասարակ դեռ քո մերձավորն է։ Եվ մի՞թե նրան դու իրոք կապանեց... եթե փրկվես, Ժուլիեթ։

Հույնի հանդարտ խոսքերն ու ինքնավստահ աչքերը դարձյալ առինքնեցին կնոջը։ Գոնզագը բռնեց Ժուլիեթի ձեռքը և խրատական եղանակով սկսեց պարզաբանել իր փիլիսոփայությունը։ Ամեն մարդ մի անգամ է աշխարհ գալիս և ամեն մարդու մի կյանք է տրված։ Ոչ մեկի և ոչ մի բանի առաջ նա պարտականություն չունի կատարելու, բացի այդ կյանքից։ Իսկ ի՞նչ է կյանքն իր էությամբ։ Զգտումների ու ցանկությունների մի երկար շղթա։ Եթե նույնիսկ դրանք մտացածին են, ապա կարևոր է, որ զորեղ լինեն։ Մարդ պետք է անվերապահորեն կատարի կյանքի ձգտումներն ու ցանկությունները։ Ահա կյանքի ամբողջ խորհուրդը։ Այս պատճառով էլ մարդ իրեն վտանգի է ենթարկում, նույնիսկ գնում է մահվան ընդառաջ, քանի որ մեր ցանկությունները բավարարելու մղումից դուրս ոչ մի կյանք գոյություն չունի։

Գոնզագն օրինակ բերեց իրեն, որ արդարացնի իր տրամաբանական, անկեղծ վարքագիծը։ Նա երբեք չէր վարանել, հանուն իր սիրո նետվել էր վտանգի դեմ, չէր խորշել ամենատհաճ գործունեությունից։ Ապա հայտնեց այս արհամարհանքի արժանի եզրակացությունը.

— Բայց այն ամենը, ինչ դու համարում ես գութ, սեր, անձնազոհություն, ոչ այլ ինչ է, եթե ոչ անգործունյա երկյուղ։

Ժուլիեթի գլուխը ծանրորեն ընկավ նրա ուսին։ Կնոջ մեջ դարձյալ ծայր առավ խորհելու, դատելու տանջալից անզորությունը.

— Դու այնքա՜ն չափված-ձևված մարդ ես, Գոնզագ։ Այդպես չափված-ձևված և թափանցիկ մի՛ եղիր, Գոնզագ։ Չեմ դիմանա։ Ինչո՞ւ այնպիսին չես, ինչպիսին էիր առաջ...

Գոնզագի թեթևասահ ձեռքը՝ քնքուշ զգացումներ արթնացնող այդ հրաշքը, հպվեց Ժուլիեթի թևին, կրծքին, իջավ ազդրերն ի վար։ Կնոջ կրծքից անկուսակ հեկեկանք պոռթկաց։ Գոնզագը մխիթարեց.

— Ժուլիեթ, դու դեռ ժամանակ ունես անելիքդ վճռելու։ Յոթ երկար ու ձիգ օր։ Ո՞վ գիտե, թե ինչեր կարող են պատահել մինչև այդ օրը...

Երկար քնդմիջումից հետո Տեր-Հայկազունը մեծ խորհրդի նիստ հրավիրեց։ Տգամարդիկ նստած էին կառավարչատան խորհրդարանի երկար նստարաններին։ Միայն դեզագործ Գրիգորը չէր մասնակցում։ Իր

սովորության համաձայն, ննջարանից հետևում էր խորհրդակցությանը, լսում խոսակցությունը, առանց մի հատիկ բառով միջամտելու։ Կարծես այդ իմաստունը ներքին կատարելության հասնելու համար իր հարաբերությունները գրեթե լիովին խզել էր մարդկանցից։ Ոչ ոքի հետ չէր խոսում, իրենից բացի։ Դա էլ պատահում էր գիշերային մենության ժամերին։ Այդ մենախոսության վկան ոչինչ չէր հասկանա։ Գրիգորը լեզվաբանական մեծագղորդ արտահայտություններ էր շռայլում՝ անկապ, իրար ետևից, ասես երազում։ Մոտավորապես այս ձևով՝ «Հրահեղուկ երկրամիջուկ... Երկնառանցք... Յոթնաստեղյան բույլ... Ծաղկապտղաբերում...»։ Այս հիասքանչ բառերը Գրիգորին վեհացնում էին, իր սեփական անձից վեր բարձրացնում, մոտեցնում բոլոր տարրերի նախապատճառին։ Այդ բառերը նաև օդ էր նետում, և դրանք մնում էին նրա գլխավերևում, ճախրում եթերում։ Դեղագործը դրանցից կերտում էր գիտության փայլարձակ մոզաիկայի կամարակապ մի տաճար, որի կենտրոնում բազմում էր ինքը բուդդայական քուրմի ներքնաշող ժպիտով։ Կա կատարյալ, ճգնավորական հարստության մի աստիճան, երբ ունեցածիդ չպետք է հաղորդակից դարձնես ոչ մի մարդու, քանզի ամեն մի վսեմություն ընկեր չի ճանաչում։ Գրիգորը թերևս հասել էր այդ աստիճանին։ Այլևս մարդկանց չէր ուսուցանում։ Նախկին սաները՝ ուսուցիչները, նրան չէին այցելում, նա էլ այդ մարդկանցով չէր հետաքրքրվում։ Անցել էին այն ունայնաշունչ ժամանակները, երբ գիշերային շրջագայությունների դուրս գալիս նա ոսկանյանների, շատախյանների, ասայանների ու մյուս չնչին մարդկանց համար թվարկում էր աստղային աշխարհները, որոնց վերաբերող բոլոր քմահաճ թվերն ու անունները անսահմանության մարմաջով բռնված նրա մտքի ծնունդն էին։ Այժմ հսկայական աստղերն ու բառերը շրջան էին գծում դեղագործի ներսում, և ծերունին այլևս անզուսպ ցանկություն չէր զգում այդ ամենին խանդավառությամբ հաղորդակից դարձնել ուրիշներին։ Նա գիշերները մեկական ժամ հազիվ էր քնում։ Ինչ-որ զարհուրելի ցավ օրեցօր ավելի անողոք էր կաշկանդում Գրիգորի ջղերն ու հոդերը։ Երբ Ալթունին, իր բարեկամի մարմնական անկումը նկատելով, հարցը քննեց մասնագիտորեն, հիվանդից ստացավ լատիներեն վերամբարձ պատասխան. «Ռևմատիսմուս արտիկուլորում էտ մուսկուլորում»[1]։ Ոչ մի գանգատ չէր լսվում Գրիգորի բերանից։ Հիվանդությունը նրան առաքված էր ոգու ամենազոր ուժը վավերացնելու համար։ Դա մի այլ հետևանք

[1] Հոդերի և ջղերի ցավ (լատ.)

էլ ունեցավ։ Դեղագործի շուրջն ամեն ինչ իմաստազրկվում էր։ Իրականությունը շառաչելով հեռանում էր նրանից։ Այսօր, օրինակ, խորհրդակցող մարդկանց խոսքերին նա խուլ ու համրի նման հետևում էր չոված աչքերով, խոսողների հետ աննպատակ բացում, փակում էր շրթունքները։ Թվում էր, թե այլևս չի ընկալում անգամ հանապազօրյա գործածության բառերը։

Խորհրդակցությունն այս անգամ տևեց մի քանի ժամ։ Մեկուսի նստել էին Ավագյանն ու Ցողոնօլուքի քարտուղարը, արձանագրում էին կարևորագույն որոշումները, ձևակերպում։ Կառավարչատան առաջ պահակ էր կանգնած։ Տեր-Հայկազունն էր կարգադրել։ Քանի որ վարդապետը ձևականություններից խորշում էր, մարդիկ ենթադրեցին, թե նա հեռատեսորեն որևէ վտանգ է նախազգում։ Եթե պահակը ոչ մի այլ անելիք չունենար, բացի կողմնակի մարդկանց մուտքն արգելելուց և աղմուկը կանխելուց, ապա դարձյալ կարելի էր ենթադրել, որ հրամանատարներն առանց պատճառի պաշտպանական միջոցի չէին դիմի։ Ասել կուզի, օրը վտանգավոր էր։

Տեր-Հայկազունը խորհրդակցությունը վարում էր կիսափակ աչքերով, մրսկան, հոգնատանջ մարդու սովորական կեցվածքով։ Օրակարգի առաջին հարցի՝ պարենավորման վիճակի մասին զեկուցում էր պատվելի Արամը, իբրև ներքին գործերի կառավարիչ։ Սա ներկայացրեց ճշգրիտ պատկերը։ Տեղատարափի ժամանակ պատահած դժբախտությունից հետո ռումբերի առաջացրած հրդեհից ոչնչացել էր ոչ միայն ալյուրի մնացորդը, այլև մյուս արժեքավոր մթերքները՝ յուղը, ամբողջ գինին, շաքարը, մեղրը, սուրճն ու ծխախոտը, աղը։ Սուրճից ու ծխախոտից կարելի էր և ձեռք քաշել, բայց առանց աղի յոլա գնալ չէին կարող։ Երեք օր հետո անաղ միս էին ուտելու։ Ինչ վերաբերում է մսին, որից բոլորն արդեն զզվել էին, ապա դա ևս սոսկալի պակասել էր։ Խորհրդակցության մասնակից մուխթարները հաշվել էին անասունները, համոզվել, որ դրանց քանակը լեռը բարձրանալուց հետո մեկ երրորդով նվազել է։ Այդպես շարունակել չէր կարելի, թե չէ կկանգնեին կոտրած տաշտակի առաջ։

Արամ Թովմասյանն իրենից հետո ձայն տվեց Թովմաս Քեբուսյանին, որպեսզի սա, իբրև մասնագետ, նկարագրի հոտերի վիճակը։

Քեբուսյանը ոտքի ելավ, գլուխը դեսուդեն դարձրեց, գեղջկական անհամաչափ աչքերով նայեց բոլորին, բայց ոչ մեկի վրա հայացքը կանգ չառավ։ Սկսեց սրտաշարժ խոսքերով ողբալ իր սքանչելի ոչխարների կորուստը, ոչխարներ, որոնք իր երկարամյա անխոնջ հոգատա-

բության արգասիքն էին։ Նրա սիրեցյալ կենդանիներն արդեն անճանաչելի էին դարձել։ Նախկին կյանքի երջանիկ օրերին հասուն ոչխարը կշռում էր 45—50 օխա։ Հիմա դրա կեսն էլ հազիվ կշռեր։ Մուխթարի կարծիքով այդ անկումը երկու պատճառ ուներ։ Մեկը խիստ սենտիմենտալ բնույթ էր կրում։ Հանրային անիծյալ տնտեսակարգը (ինքը չէր ժխտում դրա անհրաժեշտությունը) վատ էր անդրադառնում ոչխարների վրա։ Խեղճերը նիհարում էին, քանի որ անտեր-անտիրական էին մնացել, ոչ մեկի սեփականությունը չէին, ոչ ոք նրանց մասին չէր հոգում։ Երկրորդ պատճառը սակավ քաղաքական էր և առավել համոզիչ։ Պաշտպանության սահմաններում եղած լավագույն արոտավայրերում, որտեղ արածում էին ոչ միայն ոչխարներն ու այծերը, այլև ավանակները, խոտն սպառվել էր։ Վատ սնվող անասունները կարգին միս քիչ են տալիս, իսկ ճարպ բոլորովին չեն ունենում։ Կաթի բանն էլ բուրդ էր։ Հետզհետե նվազում էր, կորցնում յուղայնությունը։ Կարագի ու պանրի մասին այլևս խոսք լինել չէր կարող։ Քեբուսյանը տխրությամբ գանգատվեց, եզրակացնելով, թե պետք է նոր արոտավայր գտնել, բարելավել ոչխարների վիճակը։ Այդ կարծիքին ամենայն խստությամբ առարկեց Բագրատյանը։ Մարդիկ ապրում են ոչ թե խաղաղ ու բարվոք պայմաններում, այլ (այն էլ լավագույն դեպքում) նոյան տապանում, որի շուրջը արյան հեղեղ է։ Մարդկանց և կենդանիների ազատ տեղաշարժի մասին մտածել անգամ անթույլատրելի է։ Թուրք հետախույզները վրխտում են պաշտպանության շրջագծի չորս կողմը։ Դրանից դենը, Մուսա լեռան հյուսիսային բարձունքներն անասուններ դուրս բերելը պարզապես հանդգնություն է, և ոչ ոք այդպիսի պատասխանատվություն չի ստանձնի։ Սատանան տանի, նոր արոտավայր կարելի է գտնել նաև գաղթականների սահմաններում։ Անասունները կարելի է հանել ավելի բարձր գագաթները։

— Բարձր գագաթների խոտը կարճ է, արևից խանձված,— վիճաբանությանը խառնվեց Հաբիբլի գյուղի մուխթարը։— Այդ խոտն ուղտերն էլ չեն կարող արածել։

Բագրատյանը մնաց անդրդվելի.

— Ավելի լավ է՝ նիհար միս ունենանք, քան առհասարակ չունենանք։

Տեր-Հայկազունը համաձայնեց այդ նախազգուշացմանը և պատվելի Արամին խնդրեց շարունակել իր ելույթը։ Արամն անդրադարձավ հացի պակասությանը, զուտ միս ուտելու հետևանքներին։ Հարյուրավոր պատճառներից ելնելով, ամենից առաջ հոտերի կործանումը կանխելու համար, անհրաժեշտ էր միջոցներ ձեռք առնել, միսը փոխարինել ուրիշ սննդամթերքով։ Գյուղերի վերաբնակեցումից հետո անկմբելի էր հույս դնել հովտում ուտելիք հայթայթելու վրա։ Մյուս կողմից, բժիշկ Ալթունին պնդում էր, թե խառը սննդից զուրկ լինելու հետևանքով վատթարացել է ժողովրդի առողջական վիճակը։ Ավելի ու ավելի են շատանում հյուծված դեմքերն ու սմքած մարմինները։ Ամեն մարդ սեփական փորձով գիտե, թե ինչ անմխիթար դրության մեջ է ինքը։ Սննդի մեջ փոփոխություն մտցնելը բոլոր դեպքերում պարտադիր է։ Այնտեղ պատվելի Արամն առաջարկեց իր ծրագիրը։ Մինչ այդ մարդիկ քիչ են հաշվի առել ծովի գոյությունը։ Որոշակի տեղերից կես ժամում հեշտությամբ կարելի է իջնել ժայռոտ ծովափը։ Ինքը՝ Արամը վերջերս փորձնական վայրէջք է կատարել, հայտնաբերել մի հին, լքված արահետ, որն առանց դժվարության կարելի է կարգի գցել։ Էլ ո՞ր օրվա համար են թե՛ ժողովրդի, թե՛ դասալիքների մեջ եղած ճանապարհաշինարարները։ Երկու օր աշխատելուց հետո ծովի ու գաղթականի միջև կըստեղծվի հարմար հաղորդակցություն։ Այնուհետև հարկավոր է երիտասարդներից, ուժեղ կանանցից ու պատանեկան զորաբանակի չափահաս տղաներից մի խումբ կազմել, ժայռախորշերում հիմնել աղի չորանոց և մի փոքրիկ ձկնարան։ Ծառաբներից պատրաստած լաստերով և ձողաթիերով կարելի է համարձակորեն մի քանի հարյուր մետր ծով դուրս գալ, որս անել ապահով տեղերում։ Այսօրվանից կարելի է գործին տեղյակ կանանց հանձնարարել, որ ձկնորսական ցանցեր հյուսեն, ինչքան կարող են։ Քաղաքաձորում կանեփե պարաններ բավականաչափ կան։ Բանը միայն ձկնորսությունը չէ։ Ինքը՝ Արամ Թովմասյանը, հիշում է, որ պատանի հասակում առաջնակարգ թռչնորս էր։ Պետք է որ յողոնօլուքցի տղաները մոռացած չլինեն այդ արհեստը։ Ուրեմն՝ առա՛ջ ցանցերով ու թակարդներով։ Փոխանակ պարապ-սարապ թրև գան և մարդկանց ոտքերի տակ ընկնեն, թող թռչուններ որսան։ Ցավոք սրտի, որսորդության այլ ձևից օգտվել չեն կարող։

Աղի չորանոց, ձկնարան պատրաստելու և թռչնորսությամբ զբաղվելու վերաբերյալ պատվելու արած առաջարկն ընդունվեց ծափահարություններով, քննության առնվեցին բոլոր մանրամասնությունները։ Ավագների խորհուրդն Արամին հանձնարարեց զլուխ բերել այդ օժանդակ աղբյուրների գործը։

Արամից հետո ելույթ ունեցավ բժիշկ Ալթունին և զեկուցեց առողջապահական վիճակի մասին։ Վերջին ճակատամարտում վիրավորված քառասունմեկ զինվորն էլ, նույնիսկ բարձր տաքություն ունեցող չորս

հոգին, փառք աստծո, արդեն հեռու են կյանքին սպառնացող որևէ վտանգից։ Քսանութին արդեն հանձնել է իրենց ընտանիքների խնամքին։ Դրանք բոլորն էլ շուտով կվերադառնան իրենց մարտական դիրքերը։ Սակայն բժշկին վիրավորների վիճակից ավելի շատ մտահոգում է այն նոր հիվանդությունը, որն իր հետ Հալեպից բերել է երիտասարդ դասալիքը։ Սա երեկ գիշերվանից մաքառում է մահվան դեմ և գուցե արդեն կենդանի չէ։ Բայց բանը դրանով չի վերջանում։ Հիվանդանոցում պառկած մյուս զինվորների մեջ ևս կան վարակիչ ախտի կասկածելի նշաններ՝ շնչարգելության նոպաներ, ուժեղ տենդ, փսխում։ Ուրեմն՝ խոսքն այստեղ այն համաճարակի մասին է, որի շուրջը Հալեպի թերթերը վերջին ամիսներին բազմիցս աղմուկ բարձրացրին։ Ալթունին հիշում է այդ բանը։ Արագ տարածվող համաճարակն այս նեղ գաղթականության համար նույնքան վտանգավոր է, որքան և թուրքերը։ Ուստի այսօր ևեթ, վաղ առավոտյան, ինքը հոգ տարավ, որ կասկածելի հիվանդներն առանձնացվեն մյուսներից։ Քաղաքաձորից հեռու, երկու գագաթների արանքում, ինչպես բոլորն էլ գիտեն, կա հաճարենիների մի փոքրիկ, ստվերախիտ անտառ, որտեղով ջուր է անցնում։ Հենց այդտեղ ինքը վճռել է հիմնել սուր վարակիչ հիվանդանոց, քանի որ այդ կողմերը ոչ զինվորներն են գնում, ոչ էլ գաղթականության ժողովուրդը։ Թող ավագների խորհուրդը հիվանդապահների մի խումբ ընտրի աշխատանքի ու ծառայության հետ առնչություն չունեցող այն մարդկանցից, որոնք այլևս չպետք է շփվեն մյուսների հետ։ Ալթունին տվեց Գևորգի՝ արևածաղկով պարողի անունը։ Սա հիվանդապահ դառնալու հիանալի թեկնածու էր։ Ապա բժիշկը դիմեց Գաբրիելին.

— Բարեկա՛մս, քեզ թախանձագին խնդրում եմ. այնպես արա, որ տիկին Ժուլիեթն այլևս հիվանդանոց չգա, հիվանդներին չխնամի։ Հանձին նրա ես կզրկվեմ մի բարեխիղճ օգնականից, բայց, անկեղծորեն ասած, տիկնոջ առողջությունն իմ աչքին ավելի մեծ արժեք ունի, քան օգնությունը։ Տղաս, ինձ մտահոգում է նաև, որ կինդ կարող է վարակվել։ Մենք դիմացկուն մարդիկ ենք, մի մղոն էլ չենք հեռացել մեր տուն ու տեղից։ Իսկ քո կինը Դամլաջրք գալուց հետո շատ է փոխվել։ Երբեմն խիստ տարօրինակ պատասխաններ է տալիս։ Նրա տառապանքը միայն մարմնական չէ։ Այս կենսաձևին մերված չէ։ Ինչպե՞ս կարող էր այլ կերպ լինել։ Ավելի հոգատար եղիր, ահա իմ խորհուրդը։ Ավելի լավ կլինի, եթե ամբողջ օրն անկողնում պառկած՝ վեպեր կարդա, վերանա մեր իրականությունից։ Բաբեբախտաբար մեր Գրիգորն այնպիսի մարդ

է, որ մի ամբողջ քաղաքի տիկիններին կարող է ֆրանսերեն գրքերով ապահովել, փարատել նրանց հոգեկան ծանր ապրումները։

Ալթունու նախազգուշացումը վախեցրեց Գաբրիելին, և նա իրեն մեղավոր զգաց։ Սիրտը ճմլվեց. երկու օրվա ընթացքում կնոջ հետ գրեթե մի բառ չէր փոխանակել։

Ուսուցիչ Հաբեթ Շատախյանը իր ելույթում բորբոքված գանգատվեց, թե պատանիներն ուղղակի վայրենացել են։ Ուսման գործն արդեն անհնար է կանոնավոր ձևով առաջ տանել։ Այն օրից ի վեր, ինչ Ստեփանն ու Հայկը գրավեցին հրանոթները, տղաներն իրենց լիարժեք ռազմիկներ են համարում, մեծերի մոտ իրենց լկտի են պահում և բոլորովին չեն քաշվում։ Մուխթարները հաստատեցին ուսուցչի խոսքերը։

— Հե՜յ գիտի աշխարհ։ Որտե՞ղ են այն ժամանակները,— հառաչեց Բիթիասի մուխթարը,— երբ ջահելները մեծերի մոտ իրենց պահում էին խոնարհ հարսների պես։

Բայց Տեր-Հայկազունը, որն այժմ պատանիների վարքն ու բարքը ծայրահեղ անհրաժեշտություն չէր համարում, անմիջապես հարց տվեց Գաբրիելին.

— Բագրատյա՛ն, ինչպիսի՞ն է մեր պաշտպանության իրական վիճակը։ Որքա՞ն ժամանակ կարող ենք թուրքերին դիմադրել։

— Տեր-Հայկազուն, այդ հարցին ես չեմ կարող պատասխանել,— արձագանքեց Գաբրիելը։— Պաշտպանությունը միշտ էլ կախված է հարձակումից։

Տեր-Հայկազունն իր վարդապետական երկչոտ, բայց և վճռական հայացքը գամեց գլխավոր հրամանատարի դեմքին.

— Հայտնեցեք Ձեր անկեղծ կարծիքը, իրողությունը, Բագրատյան։

— Տեր-Հայկազուն, ես ոչ մի հիմք չունեմ կարծիքս թաքցնելու, որպեսզի խնայած լինեմ խորհրդի անդամներին։ Հաստատ համոզված եմ, որ մեր գործը հուսահատական է...

Փոքր-ինչ խորհրդածելուց հետո նա մի քանի նախադասությամբ հիմնավորեց իր համոզմունքը։ Մինչ այդ երկու ծանր հարձակում եղ էին մղել արյունահեղ ճակատամարտերով։ Բայց ճակատագրական ամբողջ ազետը հենց այդ հաջողության հետ է կապված։ Ի՞նչ խոսք, թուրքական կառավարությունը կատաղել է, փրփրել։ Եթե պարտության լուրը երկրում տարածվի, պետության ռազմական հեղինակությունը խիստ կտուժի։ Օսմանյան զինվորականությունն այս սոսկալի դասը հեշտությամբ չի մարսի, ինչպես մինչև այժմ։ Ո՞վ գիտե, թե բանակի գեներալ Ջեմալ փաշան անձամբ չի ղեկավարի Դամլաջրքի դեմ մղվելիք պա-

տերազմը։ Ինքը՝ Բագրատյանը, վախենում է, որ դա հենց այդպես էլ կլինի։ Բոլոր դեպքերում երրորդ հարձակումը նախորդներին հեռավոր չափով անգամ չի նմանվելու։ Հավանաբար թուրքերը, հետևակից բացի, կբերեն նաև լեռնային հրետանի և գնդացիրներ՝ Դամլաջրքը փոթորկալից կրակի տակ պահելու համար։ Պաշտպանվողները դրան կարող են հակադրել միայն որոշ փոքր առավելություններ։ Օգոստոսի տասնչորսի փորձառության հիման վրա վերջին օրերին ամրություններն ուժեղացրել են, բարելավել։ Հաուբիցներ ունենալը միայն բարոյական առավելություն է ընձեռում։ Թշնամու հանդեպ Դամլաջրքի ունեցած իսկական գերազանցությունը, ամեն ինչից ավելի, հայ զինվորների մարտունակությունն է։

— Դա մեզ հիմք է տալիս հուսալու, որ աստծո օգնությամբ թերևս մի գրոհ էլ ետ շպրտենք...

Այստեղ Գաբրիել Բագրատյանը խիստ անհրաժեշտ առաջարկություն արեց։ Որքան էլ փրկության երազանքն անհեթեթ թվա, ավագների խորհուրդն իրավունք չունի անխուսափելի ճակատագրին ապավինելու և ձեռքերը ծալած սպասելու։ Ո՛չ, ամե՛ն, ամե՛ն միջոցի պետք է դիմել։ Ծովն այնքան ահավոր կերպով ամայի է, որ կարծես մինչև օրս նավագնացությունը չի հայտնագործված։ Բայց տա աստված, որ, հակառակ ամեն հավանականության ու ակնկալության, դաշնակիցներից մեկնումեկի ականանավը կանգնած լինի Ալեքսանդրեթի խարսխակայանում։

— Մենք պարտավոր ենք հաշվի առնել այս հնարավորությունը։ Մենք իրավունք չունենք դա անտեսելու։ Պետք է փորձենք։ Արդյոք ի՞նչ է մտածում Հալեպում նստած ամերիկյան գլխավոր հյուպատոսը, միստր Ջեքսոնը։ Տեղյա՞կ է Մուսա լեռան քրիստոնյաների պայքարին ու թշվառությանը։ Մեր պարտքն է՝ ամեն ինչ նրան հայտնել և ամերիկյան կառավարությունից պաշտպանություն խնդրել։

Գաբրիելը բացատրեց իր ծրագիրը։ Երկու խումբ սուրհանդակներ պետք է ուղարկել. մեկը՝ Ալեքսանդրեթ, մյուսը՝ Հալեպ։ Ալեքսանդրեթ կգնան լավագույն լողորդները, իսկ Հալեպ՝ լավագույն արագավազները։ Լողորդների խնդիրը շատ ավելի դյուրին էր, քանի որ Ալեքսանդրեթի ծովածոցը հասնելու համար միայն երեսունհինգ անգլիական մղոն պետք է գնային դեպի հյուսիս։ Ճանապարհը կարող էին անցնել լեռնային մեռյալ բարձունքներով։ Հանձնարարության բուն նպատակը ծովածոցում կանգնած ռազմանավին լողալով մոտենալն էր, մի բան, որ պահանջում էր ծայրահեղ վճռականություն և ֆիզիկական ուժ։ Հա-

լեպ գնացողներից այդքան կամք ու խիզախություն չէր պահանջվում, բայց պետք է կտրեին ութսունհինգ մղոն ճանապարհ, այն էլ գիշերային խավարում, առանց դուրս գալու մայրուղիները, խուսափելով մարդկային բնակավայրերից, շարունակ գտնվելով մահվան սպառնալիքի տակ։ Եթե սուրհանդակները հասնեին միստր Ջեքսոնի տունը, ապա, ի՞նչ խոսք, փրկված կլինեին։

Բուռն խոսակցության տեղիք տվեց Բագրատյանի ծրագիրը, որը հանդուգն հույսի հեռանկար էր ստեղծում, դրանով իսկ նվազեցնում մահվան սպառնալիքը։ Վճռեցին ուղարկել երկու լողորդ։ Հալեպի համար մի երիտասարդ սուրհանդակն էլ բավական էր։ Ի՞նչ իմաստ ուներ ավելորդ տեղը մի քանի մարդու կյանք վտանգի ենթարկել։ Երկու հոգին ավելի քիչ աչքի կընկնեին, քան երեքը, մեկն ավելի հեշտությամբ կանցներ մաքսատան աշխատողների ու զափթիեների մոտով, քան երկուսը։ Տեր-Հայկազունի առաջարկով լողորդների և արագավազ սուրհանդակների ընտրությունը պետք է կատարվեր կամավոր սկզբունքով։ Արագավազները (մեկ թե երկու հոգի, դեռևս հայտնի չէր) նամակը պետք է հանձնեին ամերիկյան գլխավոր հյուպատոսին, իսկ լողորդները նույնպիսի մի գրություն պետք է հասցնեին որևէ նավապետի։ Որպեսզի ձերբակալվելու դեպքում նամակները թուրքերի ձեռքը չընկնեին, հարկավոր էր դրանք կարել կաշվե գոտիների ճեղքերում։ Տեր-Հայկազունը սահմանեց կամավոր ընտրության որոշակի օրը, ժամը և կարգը։ Այդ առթիվ նա համայնքի փոքրամարմին քարտուղարին թելադրեց Քաղաքաձորի բնակչությանն ուղղված մի կոչ։ Մունետիկներին հրամայվեց դա տարածել մինչև երեկո։ Գաբրիելը հանձն առավ միստր Ջեքսոնին ուղարկվելիք նամակի շարադրումը։ Արամ Թովմասյանը խոստացավ գրել ռազմանավի հրամանատարին ուղղված դիմումը։ Նա մի կողմ քաշվեց և գործի անցավ, չնայած դեռևս աղմկալից քննարկվում էր օրակարգի մի այլ հարց։ Երբեմն հուզմունքից վեր էր թռչում, բարձրաձայն կարդում, տեղ-տեղ ձեռքը հանդիսավոր ձևով բարձրացնում ու իջեցնում։ Այդ պահին նա իսկ և իսկ բողոքական քահանա էր. կարծես կիրակնօրյա քարոզ էր կարդում։ Շուտով ավարտեց իր դիմումը։ Այդ փաստաթուղթը պահված է իբրև քառասուն օրվա վկայություն.

«Անգլիացի, ամերիկացի, ֆրանսիացի, ռուս, իտալացի որևէ ծովակալի, նավապետի կամ հրամանատարի, որին կհասնի սույն խնդրագիրը։

Սո՛ր, աղերսանքով դիմում ենք Ձեզ հանուն աստծո և մարդկային

եղբայրության։ Մենք, հայկական յոթ գյուղի բնակիչներս, մոտ հինգ հազար հոգի, ապաստանել ենք Մուսա լեռան այն բարձրավանդակի վրա, որը կոչվում է Դամլաջրք և գտնվում է Սուեդիայի ու գահավեժ ծովեզերքի հյուսիս-արևմտյան կողմում։

Մենք այստեղ պատսպարվել ենք, որ զոհ չգնանք թուրքական բարբարոսությանն ու գազանություններին։ Մենք պաշտպանության ենք դիմել մեր կանանց պատիվը անարգանքից փրկելու համար։

Սը՛ր, Քեզ անկասկած հայտնի է մեր ժողովրդի դեմ «Երիտասարդ Թուրքերի» վարած ազգակործան քաղաքականությունը։ Տեղահանության, շինծու վերաբնակության անվան տակ, գոյություն չունեցող ապստամբական ինչ-որ շարժում խափանելու պատրվակով, հայ մարդկանց վտարում են իրենց տներից, բռնագրավում նրանց արտերը, այգիները, շարժական և անշարժ ամբողջ գույքը։ Որքան մեզ հայտնի է, նույն ձևով են վարվել Զեյթունի, երեսուներկու գյուղերի, ինչպես նաև այլ բնակավայրերի հետ...»։

Այնուհետև պատվելին նկարագրում էր իր կրած տառապանքները Զեյթունից մինչև Մարաշ։ Նորից անդրադառնում էր յոթ գյուղի բնակչությանը, սրտաշարժ խոսքերով ներկայացնում Դամլաջրքին ապավինած ժողովրդի ծանր վիճակը։ Խնդրագիրն ավարտվում էր օգնություն հայցող հետևյալ կոչով.

«Սը՛ր, աղերսում ենք Քեզ ի սեր Քրիստոսի։

Մեզ հասցրեք Կիպրոս կամ մի այլ ազատ երկիր։ Մեր մարդիկ թուլամորթներ չեն։ Մեր հանապազօրյա հացը մենք կվաստակենք շարքաշ աշխատանքով, եթե այդպիսին մեզ տրվի։

Եթե մեր խնդրանքը չափազանցություն է, ապա փրկեցեք գոնե մեր կանանց, երեխաներին, ծերերին, իսկ մեզ՝ պաշտպանունակ տղամարդկանց, հաճեցեք շնորհել զենք, ռազմամթերք և պարեն, որպեսզի մենք կարողանանք թշնամու զինված ուժերի դեմ մարտնչել մինչև մեր վերջին շունչը։

Սը՛ր, աղերսում ենք. մի՛ ապասեք այնքան, որ արդեն ուշ լինի։

Բարձունքներում ապաստանած բոլոր քրիստոնյաների անունից՝

Ձեր խոնարհ ծառա

բողոքական հովիվ Ա. Թ.»։

Դիմումը գրվեց երկու լեզվով, մի էջի վրա՝ ֆրանսերեն, մյուս էջի վրա՝ անգլերեն։ Երկու տեքստն էլ ուշի-ուշով խմբագրվեց լեզվի ու ոճաբանության հմուտ գիտակ Հաբեթ Շատախյանի հսկողությամբ։ Սակայն շարադրանքը բարակ թերթերի վրա մանր տառերով արտագրելը, որքան էլ տարօրինակ թվա, հանձնարարվեց ոչ թե բոլոր տառատեսակների ու գեղագրության հռչակավոր վարպետ ուսուցիչ Ոսկանյանին, այլ շատ ավելի համեստ ունակությունների տեր արվեստագետ Սամվել Ավագյանին։ Հրանտ Ոսկանյանը նստած տեղից վեր թռավ, անթարթ հայացքն այնպես գամեց Տեր-Հայկազունի դեմքին, կարծես նրան և բոլոր խորհրդականներին ուզում էր հրավիրել մենամարտի։ Այս նոր նվաստացումը ուսուցչին զրկել էր խոսելու կարողությունից։ Անխոս շարժվում էին շրթունքները։

Տեր-Հայկազունը՝ Ոսկանյանի ոխերիմ թշնամին, բարեհաճությամբ ժպտաց.

— Նստիր, վարժապետ, հանգստացիր։ Սույն դեպքում քո ձեռագիրը չափից ավելի է գեղեցիկ։ Կարդացողը երբեք հավատ չի ընծայի մեր աղետյալ վիճակին, եթե տեսնի, որ մենք տակավին գրում ենք նման ոլոր-մոլոր, զարդարուն տառերով։

Թխադեմ թզուկը գլուխը ցցած՝ եկավ-կանգնեց Տեր-Հայկազունի առաջ.

— Վարդապե՛տ, դու ինձ լավ չես ճանաչում։ Աստված էլ գիտե, որ ես այդ կարգի անմիտ խզբզոցների սիրահար չեմ։

Առանց քաշվելու նա իր՝ ռազմիկի բռունցքը թափահարեց Տեր-Հայկազունի քթի տակ, և անզուսպ ցասումից նրա ձայնը դողդողաց.

— Վարդապե՛տ, այս ձեռքերը վաղուց ի վեր առնչություն չունեն գեղագրության հետ։ Այս ձեռքերն ապացուցել են, որ իրենք այլ գործի համար են, թեկուզ և դա քեզ զայրացնի։

Մինչ այս ծիծաղաշարժ միջադեպը, կարևոր խորհրդակցությունն ընթանում էր խաղաղ, լիակատար միաբանության մթնոլորտում։ Նույնիսկ հոռետես Տեր-Հայկազունը գոհ մնաց։ Նա հույս ուներ, որ առաջիկայում ևս ամեն ինչ բարեհաջող կանցնի, և չի սասանվի ընտրյալ խորհրդականների համերաշխությունը։

Գաբրիելն այսօր էլ խորհրդակցությունից հետո ոչ մի տեղ չգտավ կնոջը՝ ո՛չ վրանում, ո՛չ մշտական զբոսավայր դարձած մրտենիների պուրակում։ Վերջերս այդպես ապարդյուն էին անցնում նաև Ոսկանյանի ու Շատախյանի այցելությունները, երբ նրանք, սովորության համաձայն, գալիս էին իրենց հարգանքը մատուցելու տիկին Բագրատյանին։ Անպատուղ առաքելությունն առանձնապես խոցում էր Ոսկանյանին,

քանի որ ոչ մի կերպ չէր հաջողվում Ժուլիեթին ներկայանալ իբրև Հարավաբերդի առյուծը։ Ատամները կրճատացնելով՝ ուսուցիչն ստիպված էր խոստովանել, որ մոսյո Գոնզագի նման մոդայիկ ինչ-որ պճնամոլ տիկնիկի ներկայությունը կարող է ստվեր գցել վառոդի ծխից սևացած իսկական տղամարդու արժանիքների վրա։ Որքան էլ Ուրբաթախոսն ի բնե կասկածամիտ էր, որևէ անմաքուր բան չէր ենթադրում։ Տիկին Բագրատյանն աստղերի չափ բարձր էր նրանից, և նա երբեք չէր հանդգնի իր ուղեղում տեղ տալ ինչ-որ անպատշաճ պատկերացման։ Այս տեսակետից նա նման էր աշուղի, մինեզենգերի. տիկնոջ մասին խորհում էր անաղարտ երկյուղածությամբ։

Ուսուցիչներին նկատելուն պես Գաբրիելը շեշտակի ետ դարձավ, հեռացավ։ Տարակուսանքով բռնեց «Ռիվիերայի» ճանապարհը։ Մտածում էր, թե այդ ժամին որտեղ կարող էր լինել Ժուլիեթը։ Արդեն թեքվելու էր դեպի Քաղաքաձոր, երբ վազելով նրա առջևից ուզեց անցնել Ստեփանը։ Ինչպես միշտ, պատանին շրջապատված էր Հայկի ամբողջ ավազակախմբով։ Խոժոռադեմ Հայկը մի քանի քայլ առաջ էր ընկել։ Դրանով կարծես ուզում էր ընդգծել, որ իր և ընկերների մեջ տարբերություն կա. չէ՞ որ ինքը խմբի առաջնորդն էր, ինքնուրույն էր, օժտված էր առավելություններով։ Խեղճ Հակոբն ամբողջ ուժերը լարել էր, որ Ստեփանից ետ չմնա։ Մյուսներն անկանոն աղմկում էին, սուրում առաջ։ Սաթոն, իր սովորության համաձայն, շուրջը գողեգող նայելով, քարշ էր գալիս խմբի ետևից։ Տղաները չտեսնելու տվին գլխավոր հրամանատարին, փորձեցին առանց բարևելու, առանց հարգ ու պատիվ ցույց տալու հեռանալ։ Բայց Գաբրիելը խստությամբ ձայն տվեց որդուն։ Հանկարծակիի եկած խմբի միջից, ընկերներից ընդօրինակած գոռոզ կեցվածքով, դուրս եկավ հաուբիցներ գրավողը, մոտեցավ հորը։ Գզգզված մազերը թափվել էին ճակատին։ Դեմքը կարմրատակել էր, քրտնքի մեջ կորել։ Աչքերը պղտորված էին, ասես թունդ գինովությունից։ Էնթարին ծվեն-ծվեն էր եղել։ Գաբրիելը ցասկոտ խստությամբ հարցրեց.

— Ա՛յ տղա, ի՞նչ խենթության ես խելքդ տվել...

Ստեփանն ինչ-որ բան քրթմնջաց, գլուխը դեսուդեն շրջելով։

— Վազվզում ենք... խաղում ենք... Հիմա ազատ ենք...

— Խաղո՞ւմ եք։ Այսքան մեծ-մեծ տղաները խաղո՞ւմ են։ Ի՞նչ եք խաղում։

— Ոչինչ... Հենց այնպես... հայրիկ...

Այս կցկտուր բառերն արտասանելիս տղան վարից վեր այնպես էր

հորը նայում, կարծես հարցնում էր. «Հայրիկ, ինչո՞ւ ես ուզում դժվարությամբ ձեռք բերած հեղինակությունս հողին հավասարեցնել այս տղաների մոտ։ Եթե ինձ նվաստացնես, բոլորն ինձ կծաղրեն»։ Բայց հայրը չհասկացավ որդու այդ հայացքի իմաստը։

— Մարդկային կերպարանքդ կորցրել ես, Ստեփան։ Ինչպե՞ս ես այս վրա-գլխով երևալու մորդ աչքին։

Տղան չպատասխանեց։ Տառապելով նայում էր գետնին։ Դեռ բարին այն էր, որ հայրը ֆրանսերեն էր խոսում։ Բայց, ցավոք սրտի, հաջորդ խիստ խոսքերը հնչեցին հայերեն, և ամբողջ խումբը լսեց.

— Անմիջապես գնա՛ վրան, լվացվի՛ր, շորերդ փոխիր։ Երեկոյան մարդկային կերպարանքով կներկայանաս ինձ։

Գաբրիել Բագրատյանը բարկացած գնաց դեպի հարավ։ Ճանապարհին հանկարծ կանգ առավ։ Տղան արդյոք բանի տեղ դրե՞ց իր խոսքը։ Գրեթե հավատացած էր, որ իր ասածն իզուր է անցնելու։ Եվ հիրավի. երբ նա շատ չանցած վերադարձավ շեյխական վրանը, Ստեփանն այնտեղ չէր։ Գաբրիելը մտածեց, թե ինչ պատիժ սահմանի որդու համար։ Չէ՞ որ տղան ոչ միայն չէր հնազանդվել հարազատ հորը, այլև անտեսել էր գլխավոր հրամանատարի կարգադրությունը։ Բայց թե Դամլաջրքում մարդկանց պատժելն այնքան հեշտ ու հասարակ բան չէր։

Գաբրիելը մոտեցավ վրանում դրված իր ճամպրուկին, դուրս բերեց պատահական մի գիրք։ Նրան ևս հրապուրեց բժիշկ Ալթունու այն խորհուրդը, թե Ժուլիեթը քամնելի իրականությունից վերանալու համար պետք է վեպեր կարդա։ Անշուշտ, նա էլ փափագում էր մեկ-երկու ժամով մոռացության տալ անագորույն աշխարհը, իր անագորույն ետը։ Անցնող օրվա համար անհանգստանալու ոչ մի հիմք չուներ։ Օրն իր խաղաղ հունով առաջ էր ընթանում։ Ամեն ժամ դետքերը բոլոր դիրքերից գալիս էին հայտնելու, որ հովտում ոչ մի նորություն չկա։ Մի խումբ հետախույզներ հանդգնել էին իջնել մինչև Ցողնօլուք, վերադարձել էին և հայտնել, որ ոչ մի տեղ զափթիեի երես չեն տեսել։

Գաբրիելը մի հայացք գցեց դեղնակազմ վեպի տիտղոսաթերթին։ Դա Շառլ Լուի Ֆիլիպի՝ գրքերից էր, որ ժամանակին սիրով էր կարդացել, իսկ այժմ շատ աղոտ էր հիշում բովանդակությունը։ Այդտեղ կար բացօթյա մի փոքրիկ սրճարան՝ փողոցում դրված սեղաններով ու աթոռներով։ Քաղաքային արվարձանի փոշեկոլոլ զբոսայգիների վերևում կախվել էր շոայլաշող արևը։ Նեղլիկ բակ՝ կենտրոնում մի հատիկ ակացիա և մամռակալած կանաչ ջրավազան։ Բայց այս խղճուկ բակն ավելի գարնանաշունչ գարուն էր շնորհում, քան Մուսա լեռան լանջերին մարտ

ամսին բացվող դափնեվարդերի, մբտենիների, կակաչների ու նարգիզների ամբողջ շքեղությունը։ Խավարում կուչ եկած փայտե հինավուրց սանդուղք, որի մաշված տախտակների մեջ խեցանման փոսեր էին գոյացել։ Սանդուղքն ի վար իջնում էր կանացի անտեսանելի ոտքերի կոկտոցը։

Երբ Գաբրիելը գիրքը բացեց, միջից դուրս ընկավ քառածալ մի նամակ։ Դա մի քանի տարի առաջ գրել էր փոքրիկ Ստեփանը։ Այդ ժամանակ, երբ գարձյալ օգոստոս ամիսն էր, Գաբրիելը մասնակցում էր «Երիտասարդ Թուրքերի» և դաշնակցականների փարիզյան մեծ կոնֆերանսին, իսկ Ժուլիեթը երեխայի հետ հանգստանում էր Մոնթռեոյում։ Եղբայրացման այդ նշանավոր և բերկրալի կոնգրեսում վճռվեց երկու ժողովրդի ազատաբաղձ երիտասարդության առաջընթացը նվիրաբերել հայրենիքի բարենորոգման գործին։ Ինչպես հայտնի է, հավատարմության այս ուխտի արդյունքն այն եղավ, որ երբ Թուրքիայի գըլխին պատերազմի սև ամպեր կախվեցին, Բագրատյանը մի քանի այլ իդեալիստների հետ ընդունվեց պահեստային սպաների ակադեմիան։ Ստեփանի նամակը, որն այն տարվա օգոստոս ամսից անփոփոխ դրությամբ հանգչում էր Շառլ Լուի Ֆիլիպի փարիզյան վեպի էջերի արանքում, անհաղորդ էր սոսկալի ապագային։ Գրված էր ֆրանսերեն, մանկական քմահաճ, մանր, հատ-հատ տառերով, ինքնավստահ ջանասիրությամբ.

«Իմ սիրելի՜ հայրիկ, ինչպե՞ս ես։ Փարիզում երկա՞ր ես մնալու։ Ե՞րբ ես մեզ մոտ գալու։ Ես ու մայրիկը քեզ համար շատ ենք անհանգստանում։ Մեր եկած տեղը գեղեցիկ է։ Քեզ բարևում և համբուրում է քո երախտապարտ որդին։

Ստեփան»։

Գաբրիելը նստեց այն անկողնու վրա, որտեղ Գոնզագ Մարիսն էր քնում, անթարթ հայացքով սկսեց զննել մանկական երկչոտ ձեռագիրը։ Անհասկանալի էր, թե ինչպես կոկիկ հագնված այն տղան, որը լուսավոր հյուրանոցում Ժուլիեթի անուշաբույր թղթերից մեկի վրա բարեկիրթ նամակ էր գրել, այսքան շուտ ձուլվեց անտառում ու դաշտում մեծացած մարդկանց։ Գաբրիելն այդ պահին, երբ Ստեփանի անանանական արտահայտություն ստացած անհանգիստ աչքերի և պատանի չաբաճճիների կոկորդային ազճատված լեզվի մասին էր խորհրդածում, մաքով չէր էլ անցկացնում, թե նման փոփոխություն կատարվել է նաև իր հետ։ Նրա հիշողության մեջ հարություն առան օգոստոսյան այն հեռավոր օրվա հարյուրավոր խառնիխուռն մանրուքները, որ կյանքի կոչեց մանկական նամակը։ Ոչ մի արյունալի աբհավիրը, ոչ մի մարտիրոսական մահ այնքան սրտակեղեք չէր թվացել, ինչքան առօրյա կյանքի այդ փոքրիկ, թոշնած տերևը, որին արդեն ոչ մի վտանգ սպառնալ չէր կարող։

Վեպի առաջին հինգ տողը կարդալու ապարդյուն ջանքից հետո Գաբրիելը փակեց գիրքը։ Համոզվեց. ստեղծված իրադրության մեջ այլևս չի կարող ուշադրությունը կենտրոնացնել որևէ գրքի վրա, ինչպես երկաթագործը չի կարող կոշտացած ձեռքերով նուրբ քանդակ կերտել։ Հառաչելով վեր կացավ Գոնզագի անկողնու վրայից, վերմակն ուղղեց։ Հանկարծ նկատեց, որ մահճակալի ծայրին խնամքով դարսված է իր նոր լվացած սպիտակեղենը։ Կողքին կարի պիտույքներ կային՝ մկրատ, բրդյա լաթեր. հույնն ինքն էր նորոգում իր մաշված վերնաշապիկներն ու գուլպաները։ Դրանք տեսնելով, Գաբրիելն ակամա սկսեց մտածել ուղևորության մասին։ Գնաց դեպի իր ճամպրուկը և վեպը ներս գցեց։ Բայց Ստեփանի մանկական նամակը դրեց գրպանը։ Վրանից հեռանալիս հիշեց Մոնթռեոյի կայարանը։ Ժուլիեթն ու փոքրիկ Ստեփանը նրան էին սպասում։ Ժուլիեթն այն ժամանակ կարմիր հովանոց ուներ։

Գաբրիելը կանգ առավ տիկին Թովմասյանի վրանի առաջ։ Դռան ճեղքից հարցրեց, թե որքան է նպատակահարմար իր այցը։ Մայրիկ Անթառամը նրան ներս հրավիրեց։ Դեռատի մորն ու նորածնին խնամելու օրից ի վեր Անթառամը խուսափում էր հիվանդանոց գնալուց. վախենում էր վարակիչ հիվանդությունից։ Պառավ կնոջ կորովի, համարձակ դեմքը շողշողում էր մայրական խանդաղատանքից։ Միշտ շարժման մեջ էր։ Կարծես ծննդկանի ու մանկան խնամքի հետ կապված բազմազան շարչարանքը նրա անձնական երջանկությունն էր, որը լիովին ըմբռշխնել չէր կարողանում։

Չնայած Անթառամի անձնուրաց ջանքերին, երեխան չէր աճում։ Փոքրիկ դեմքը դարձյալ դարչնագույն էր, կնճռոտ ու սեղմված, ինչպես ծնված ժամանակ։ Աչքերը չռված էին, զուրկ որևէ արտահայտությունից։ Բայց ամենաերկյուղալին այն էր, որ երեխան գրեթե ձայն չէր հանում։ Օվսաննան խիստ ընկճված տեսք ուներ։ Դա ոչ միայն ծանր ծննդաբերության հետևանք էր, որը պարզ դրոշմված էր նրա դեմքին, այլև անբարյացակամ նեղսրտության հիվանդագին արտահայտություն։ Երիտասարդական ամբողջ պայծառությունը չքացել էր դիմագծերից, տեղի տվել ինչ-որ ինքնամփոփ խստության։

Երբ Գաբրիելը մոտեցավ Օվսաննայի անկողնուն, սա բացեց իր մանկան կուրծքը, դառնությամբ ցույց տվեց սրտի մանիշակագույն խալը, որն արդեն կես մեջիդիեի մեծություն ուներ։

— Հա՜ մեծանում է...— տարօրինակ հանդիսավորությամբ հայտնեց նա, իբրև երկնառաք պատժի գուշակ։

Բայց Մայրիկ Անթառամը անհամբեր խստությամբ ընդհատեց.

— Աղջիկս, քեզ բախտավոր զգա և փառք տուր աստծուն, որ խալը կրծքի վրա է, ոչ թե դեմքի։ Էլ ի՞նչ ես ուզում։

Օվսաննան չարացած փակեց աչքերը, կարծես արդեն հոգնել էր դատարկ սփոփանքներին առարկելուց և իր իմացածը պնդելուց.

— Բա ինչո՞ւ է կաթն այդքան վատ ուտում։ Ինչո՞ւ չի լալիս։

Անթառամը տաք քարի վրա խանձարուրներ էր չորացնում։ Առանց իր գործն ընդհատելու ձայն տվեց.

— Այ աղջի, համբերիր մի երկու օր, մինչև մկրտությունը։ Շատ երեխաներ միայն մկրտվելուց հետո են ձայները գլուխները գցում։

Օվսաննայի դեմքը թերահավատորեն ջղաձգվեց.

— Եթե մինչև մկրտվելն ապրի...

Բժշկի կինը խիստ զայրացավ.

— Ա՜յ աղջի, տեղով-տեղ հոգեառ հրեշտակ ես թե՛ քո, թե՛ ուրիշների գլխին։ Ո՞վ գիտե, թե Դամլաջրքում երկու օր հետո ինչ կլինի՝ մկրտությո՞ւն, թե՞ մահ։ Ինքը՝ պարոն Բագրատյանն էլ հաստատ չգիտե, թե երկու օր հետո ինչ կլինի մեր ճակատագիրը։

— Քանի որ ապրում ենք և կանք,— ժպտաց Գաբրիելը,— վրանների առաջ մկրտվողի ու նրա մոր պատվին մի փոքրիկ տոնախմբություն կսարքենք։ Այդ առթիվ պատվելու հետ արդեն խոսել եմ։ Տիկին Թովմասյան, թվեցեք այն մարդկանց անունները, որոնց կկամենայիք հրավիրել։

Օվսաննան դժկամությամբ ասաց.

— Տեղացի չեմ... Ծանոթներ չունեմ...

Իսկուհին նստած էր իր մահճակալին և ամբողջ ժամանակ լուռ նայում էր հյուրին։ Գաբրիելի հայացքը նույնպես հաճախակի շրջվում էր նրա կողմը։ Գլխավոր հրամանատարն այն տպավորությունն ստացավ, որ Իսկուհին ավելի է կարոտ կարեկցանքի ու օգնության, քան ծննդկանը։ Սա լիուլի վայելում էր իր վիճակին պատշաճ հոգատարությունը, բայց տոգորված էր հազվագյուտ անբարյացակամությամբ Մա-

տաղ ազգականուհին՝ տալը, վրանում նստած էր ինչպես գերի։ Գաբրիելը դգվող հայացքով նայեց Իսկուհուն.

— Իսկուհի, չէիք՞ համաձայնի ինձ ընկերանալ մի քիչ տեղ։ Կինս անհայտացել է։ Ուզում եմ որոնել։

Իսկուհին հարցական հայացքով նայեց Օվսաննային։ Սա լացակումած ձայնով և վիրավորված շեշտով խորհուրդ տվեց ուղեկցել պարոն Բագրատյանին։

— Իհարկե, Իսկուհի, գնա։ Դու ինձ պետք չես։ Անկողնում շարժվելիս ինձ օգնել չես կարող։ Դրսում սիրտդ կբացվի։

Իսկուհին տատանվեց. հարսի խոսքերի մեջ չարամտություն զգաց։ Բայց նույն պահին միջամտեց Մայրիկ Անթառամը.

— Լավ կանես, եթե մաքուր օդ շնչես, սիրելիս։ Մինչև երեկո չերևաս։ Այս կարգի կյանքը քեզ համար չէ։

Վրանից չհեռացած՝ Գաբրիելը զարմանքով հարցրեց.

— Իսկուհի, ի՞նչ է պատահել Ձեր հարսին։

Աղջիկը մի պահ կանգ առավ, խուսափեց Բագրատյանի հայացքից.

— Երեխայի վիճակը վատ է։ Օվսաննան վախենում է, թե կարող է մեռնել։

Բայց քիչ անց Գաբրիելին նայելով ավելացրեց.

— Երևի ուրիշ պատճառ էլ կա... Գուցե ծննդաբերությունից հետո երևան է գալիս իսկական բնավորությունը...

— Իսկ առաջ այդ բնավորությունը հիշեցնող որևէ բան չէի՞ք նկատել։

Աղջիկը մտաբերեց Ձեյթունի որբանոցը, տունը, մանր ընդհարումները։ Միշտ էլ զգացել էր, որ Օվսաննան ի բնե չոր է, կամակոր։ Բայց ի՞նչ կարիք կար նրա մասին խոսելու։ Գաբրիելի հարցին տվեց թռուցիկ պատասխան.

— Մեկ-մեկ...

Գնացին դեպի Քաղաքաձոր, թեև Ժուլիեթը հազիվ թե այնտեղ լիներ։ Այնքան ճյուղաշեն խրճիթների արանքով ձգվող նեղլիկ փողոցները։ Մարդիկ նստած էին դռների առաջ։ Օդն այստեղ ավելի դուրեկան էր, ավելի զով, քան հովտում։ Զգացվում էր ծովի լիաթոք, կենարար շունչը։ Չորս կողմ եռում էր աշխատանքը։ Կանայք սպիտակեղեն և զգեստներ էին կարկատում։ Տղամարդիկ արհեստով էին զբաղված. կոշիկ էին նորոգում, տախտակ էին տաշում, ոչխարի և այծի մորթիներ մշակում։ Նուրհան Էլլեոնի դարբնոցը, կաշվի ու փամփուշտի արհեստանոցը

եռուզեռի մեջ էին։ Այս գործարանը, որը դեսուդեն կայծեր նետող բարձր կրակի պատճառով հիմնված էր գաղթականությունից դուրս, այսօր թնդում էր մուրճերի հարվածներից և հնոցի բվվոցից։ Ամբողջ թափով գործի էին կպել Նուրհանն ու նրա քսան օգնականները։ Մեխի ու սեպերի սուր պահանջ կար։ Պետք է շտապ նորոգեին ջարդված բահերն ու մյուս գործիքները, մանավանդ վնասված զենքերը։ Նման հանդարտ օրերին խաղաղ աշխատանքի ժխորը մարդկանց մոտ այն պատրանքն էր ստեղծում, թե Դամլաջրքի բարձունքներում ոչ թե մահվան արհավիրքն է իշխում, այլ վերաբնակիչների առօրյան։ Թվում էր, թե բոպեն չգիտակցելու մարդու այդ մանկական հատկության շնորհիվ փարատվում է երեկվա և վաղվա հանդեպ ունեցած երկյուղը։ Հոգնածությունը, սննդի պակասն ու անքնությունը իրենց դրոշմն էին թողել մարդկանց դեմքերին, բայց Գաբրիելին ու Իսկուհուն բարևելիս բոլորն էլ ժպտում էին։

Զույգը հեռացավ։ Հատուկենտ բառեր էին փոխանակում։ Անտարբեր հարցեր, անտարբեր պատասխաններ։ Կարծես մեկը մյուսի նժարի վրա նռան հատիկի չափ հոգի էր դնում, մի շնչին բեկոր, որպեսզի չխախտվեր հիասքանչ հավասարակշռությունը։ Քայլում էին դեպի արևմուտք, լեռնագագաթի երկայնքով։ Այստեղ ամեն ինչ լերկ էր։ Սարահարթի գեղանկար տեսարանը ետ էր քաշված։ Ծավալվում էր թռչունների գեղգեղանքից զուրկ մի ամայություն, ուր միայն մեղմաշունչ քամին էր վետվետում, որպեսզի իրար ավելի լավ հասկանան տղամարդն ու աղջիկը։ Գաբրիելը չէր նայում Իսկուհուն։ Այնքա՜ն սքանչելի էր միմյանց ներկայությունն զգալ առանց իրար նայելու։ Միայն երբ քարքարոտ մի տեղ ընկան, Գաբրիելը հիացած սկսեց դիտել աղջկա ոտքերի վարանումը։ Հրապուրիչ էր այդ մոլորվածությունը։ Հետզհետե դադարեցին խոսելուց։ Ի՞նչ ասեին իրար։ Գաբրիելն զգաց, որ իր կողքին քայլող աղջկա նազելի մարմինը իր գիտակցության մեջ ավելի ու ավելի ծանրակշիռ է դառնում։ Ոչ, ոչ թե մարմինը, այլ ինչ-որ մի այլ բան։ Բայց ի՞նչ։ Թվում էր, թե կողքին քայլողը ոչ թե այսօրվա Իսկուհին է՝ կիսատեսանելի, կիսաանտեսանելի, այլ Իսկուհին՝ կյանքի ու մահվան հետ առնչված իր հավերժական էությամբ։ Ոչ թե ծաղկափթիթ ու հոյակազմ մի աղջիկ, այլ զմայլելի մարմնավորում ստացած մի հոգի, օժտված ժամանակից ոչ մի կախում չունեցող աստվածաշնորհ և աստվածամերձ կատարելությամբ։ Բայց ո՞վ կարող է արտահայտել այն հազվագյուտ, ամենագողտրիկ պահը, երբ մարդուն հնարավորություն է շնորհվում սեռի փութանցիկ հրապույրի միջոցով զգալու մի այլ էակի աստվածային անկրկնելիությունն ու տևական հմայքը, երբ մարդ այդ

քույրական հոգու ամբողջ պատմությունը՝ աշխարհի ստեղծման սկզբից մինչև վերջը, կարող է հանկարծ ընկալել մի ակնթարթում։

Գաբրիելը բռնեց Իսկուհու աջ ձեռքը։ (Խեղված ձեռքի պատճառով աղջիկը քայլում էր նրա ձախ կողմից)։ Իսկուհին լուռ համաձայնեց. ո՛չ ձեռքը ետ քաշեց, ո՛չ էլ Գաբրիելին հալվեց։ Զխոսեցին այդ զգացմունքից, որը բացահայտվեց արագ, առանց ջղաձգումների։ Նույնիսկ չհամբուրվեցին։ Քայլում էին և զգում, որ իրար են պատկանում։

Իսկուհին Գաբրիելին ուղեկցեց մինչև Հյուսիսային լեռնաթամբը։ Երբ բաժանվեցին, Գաբրիելը երկա՜ր, երկա՜ր նայեց հեռացող աղջկան։ Սրտում ո՛չ ցանկություն կար, ո՛չ մութ խլրտում, ո՛չ կասկած, ո՛չ ապագային վերաբերող որևէ հարց։ Ապագա՞։ Ի՞նչ ծիծաղելի բան։ Նրա ներսում ամեն ինչ տոգորված էր անկշիռ բերկրանքով։ Իսկուհու էությունն այնպես կամացուկ ետ սահեց, որ աղջկա հետ կապված հիշողությունը գլխավոր հրամանատարին բնավ չխանգարեց, երբ նա խորամուխ եղավ պաշտպանական նոր մտահղացումների մեջ։ Իսկ ավելի ուշ, երբ ներկայացավ Ստեփանը, նա մոռացավ պատանուն պատժել անհնազանդության համար։

Մուսա լեռան բարձունքներում սկսված նոր կյանքն իր հետևանքներն ունեցավ նաև դավանանքի տեսակետից։ Դավանափոխությունը հայ ժողովրդի մեջ վերջին տասնամյակներում դարձել էր գրեթե մոդա։ Հատկապես բողոքականությունը լայն տարածում էր գտել անցյալ դարի կեսերին՝ ամերիկացի և գերմանացի միսիոներների շնորհիվ։ Բավական է հիշատակել հենց թեկուզ միայն Մարաշի նշանավոր գերապատվելիներին, որոնք իրենց ուսումնական, շինարարական և խնամակալական գործունեությամբ մեծ ծառայություն են մատուցել Կիլիկիայի ու Սիրիայի, ինչպես նաև Մուսա լեռան յոթ գյուղի հայությանը։ Բայց պետք է չուրանալ այն երջանիկ հանգամանքը, որ դավանանքի տարբերությամբ ըստ էության չէր պառակտվում ազգի հոգին։ Այստեղ քրիստոնեությունը ծանր պայքարի մեջ էր, և այդ պայքարի շնորհիվ արգելակվում էին բոլոր տեսակի խորթություններն ու փոխադարձ հակասությունները։ Բիթիասի պատվելի Հարությունն Նոխուդյանը հայկական յոթ գյուղում ազատ ծավալում էր իր հոգևոր գործունեությունը, բայց բոլոր ընդհանուր, ծանրակշիռ հարցերում խոնարհվում էր Տեր-Հայկազուն վարդապետի հեղինակության առաջ։ Դամլաջրքում, իբրև ծեր պատվելու հաջորդ, Արամ Թովմասյանը հովվում էր մնացած ավետարանականներին, դարձյալ ընդունելով վարդապետի հեղինակությունը։ Սա

ամեն կիրակի, պատարագից հետո, խորանը զիջում էր երիտասարդ պատվելուն, որի քարոզները լսելու էին գալիս ոչ միայն բողոքականները, այլև ամբողջ ժողովուրդը։ Միսակատարությունների միջև եղած տարբերությունը կորցրել էր իր իմաստը։ Տեր-Հայկազունը լեռան անառարկելի քահանայապետն էր և ժողովրդի հոգևոր գործերն էր վարում ոչ միայն իբրև գահերեցը գյուղական ամուսնացյալ կղերականների, այլև իբրև պատվելյաց հովվապետը։ Ուստի և հասկանալի է, թե Արամ Թովմասյանն ինչու վարդապետին խնդրեց, որ նա ստանձնի նորածնի սրբազան մկրտությունը։

Արարողությունը կայացավ հաջորդ կիրակի, գաղթականության քսաներեքերորդ օրը։ Ժամասացության և Տեր-Հայկազունի մյուս պարտականությունների պատճառով մկրտության ծեսը տեղի ունեցավ միջօրեից հետո։ Քանի որ Օվսաննան դեռևս տկար էր, ընկճված և չէր կարող ոտքով հասնել մինչև խորանի հարապարակը, Արամը վարդապետին խնդրեց գալ վրան, հանդիսավոր արարողությունը կատարել մոր ներկայությամբ։

Ինչպես պայմանավորվել էին, Բագրատյանը հրավիրեց մոտ երեսունհինգ երևելիների և ռազմական կարևորագույն հատվածների հրամանատարներին։ Մուսա լեռան առաջնեկին Քրիստոսի հոտի մեջ ընդունելը ժողովրդի նշանավոր մարդկանց հյուրասիրելու, նրանց հետ նորից մտերմանալու լավագույն առիթն էր։ Գաբրիելը դեռևս ինը կարաս տնական թանձր գինի ուներ։ Քրիստափորին պատվիրել էր դրանցից երկուսը հատկացնել տոնահանդեսին, չհաշված մի քանի չափ թթի օղին։ Գաբրիելը, իհարկե, չէր կարող իր հյուրերին պատվել նաև ընթրիքով, քանի որ Երեք վրանի աննդամթերքը երկյուղալի չափով նվազել էր։

Հյուրերը վրանների առաջ հավաքվեցին կեսօրից հետո, ժամը 4-ին։ Երեխայի մոր և ծերունիների համար մի քանի աթոռ էին դրել։ Ժամկոչը ցածրիկ սեղանին դրել էր թիթեղյա մի փոքրիկ տաշտակ։ Մկրտության մարմարյա հինավուրց ավազանը այն գանձերից էր, որ մնացել էր Յողոնօլուքի եկեղեցում։

Շեյխավրանում Տեր-Հայկազունը հագավ իր սրբազան հանդերձանքը։ Պատվելու խնդրանքով կնքահայրը եղավ Գաբրիելը։

Երգչաց դասը ձողի պես շոր ու ցամաք Ասայանի գլխավորությամբ շարժվեց սեղանի ետևում, որի վրա դրված էին խաչելությունն ու թիթեղյա փոքրիկ տաշտակը։ Խորանի առաջ արդեն օրհնվել էր մկրտության գոլ ջուրը։ Խմբերգի հնչյունների տակ ստորին աստիճանի քա-

հանաներից մեկը ավազանի մեջ կաթեցրեց երեք կաթիլ սրբազան մյուռոն։

Կնքահայր Գաբրիելը շփոթված տեսքով Մայրիկ Անթառամի գրկից վերցրեց նորածնին։ Հանդիսավոր արարողության առթիվ կանայք այդ դեղնադարչնագույն ուժասպառ էակին պառկեցրել էին փափուկ բարձերի վրա, որոնք գաղթականի պայմաններում կարող էին համարվել շքեղ։ Երեխան անթարթ, անհայացք նայում էր՝ անհաղորդ այն կյանքին, որի հորձանուտն էր ընկել ո՞չ իր մեղքով։ Ձայնը դեռևս չէր հընչում. հարկ չէր համարում կենսահաստատ ճիչով ողջունել աստծո լույսը, որը չնայած մարդկության սանձազերծած արհավիրքին, մեծահոգաբար շողշողում էր։

Գաբրիելը հինավուրց կարգով վարդապետին ընդառաջ տարավ ճակատագրական ծարը։ Վերջինս կարծես բողոքում էր կրոնական ծիսակատարության օտարոտի սահմանափակման ու հետևանքների դեմ։ Տեր-Հայկազունի խոնարհ ու երկչոտ, բայց և ակնհայտ սառնությամբ պարուրված աչքերից կարելի էր ենթադրել, թե վարդապետը Բագրատյանին չճանաչեց։ Համենայն դեպս նա տեսնում էր ոչ թե Բագրատյանի իսկական անձնավորությունը, այլ մի պաշտոնակատար, որը սուրբ արարողության ժամանակ ինչ-որ անելիք ունի։ Դա միշտ էլ այդպես էր, երբ Տեր-Հայկազունը կանգնած էր լինում խորանի առաջ կամ կրում էր պատարագի հանդերձանքը։ Նման պահերին նրա տեսադաշտից անհետանում էր մարդկային ամեն կարեկցանք, ամեն հիշողություն, և ասպարեզ էր գալիս միայն պաշտոնական խիստ սառնասրտությունը։ Մեղմ ձայնով նա կնքահորը հարցրեց.

— Երեխայս զի՞նչ խնդրէ։

Եվ Գաբրիելը, որն իր պաշտոնի համար շատ անճարակ էր, պատասխանեց.

— Հավատ, հույս և սեր։

Այս բառերը երիցս կրկնվեցին։ Ապա Տեր-Հայկազունը հարցրեց.

— Իսկ ի՞նչ անուն պետք է կրի սույն մանուկը։

Վճռել էին երեխային կոչել պապի՝ վարպետ Միքայել Թովմասյանի անունով։ Արարողության այս միջոցին ծերունին ծիծաղաշարժ կեցվածքով տեղից վեր կացավ, թեթևակի խոնարհվեց. չէ՞ որ ապագայում տոհմի շառավիղը կրելու էր իր անունը։ Ինչ վերաբերում է ապագային, դա անհերքելի էր միայն մկրտության արձանագրության մեջ։ Եթե նույնիսկ վերանար ընդհանուր կործանման սպառնալիքը, և մարդիկ

հավատային ինչ-որ հրաշք-փրկության, ապա հաղիվ թե այդ ապարան տեսներ այս ողորմելի, անկյանք մարմինը։

Մայրիկ Անթառամը, Իսկուհին ու Արամը մոտեցան Գաբրիելին։ Երեխային մերկացրին։ Իսկուհու և Գաբրիելի ձեռքերը շարունակ իրար էին հպվում։ Հանդիսականները տղային նայում էին հուսախաբ հայացքներով։ Օվսաննան իր պուրիտանական խոժոռ աչքերը հառել էր մկրտողներին։ Հոգին պարուրված էր մահաշունչ տխրությամբ, սիրտը պղտորված էր, և դա իսկույն նկատվում էր։ Պատճառը թերևս Արամի ու Իսկուհու՝ եղբոր ու քրոջ մտերմիկ առանձնությունն էր, որի ոլորտից նա մի ակնթարթ դուրս էր մնացել։

Տեր-Հայկազունը անկրկնելի հմտությամբ վերցրեց մերկ երեխային։ Հաղարավոր մանուկներ մկրտած նրա ձեռքերը շարժվում էին գրեթե գերերկրային ճարպկությամբ ու վայելչությամբ, մի բան, որ բոլոր ականավոր հոգևորականները ի հայտ են բերում իրենց առաքելության այս վճռական հատվածում։ Մի պահ երեխային պահեց այնպես, որ հավաքվածները տեսնեն։ Ամեն մարդ կարող էր պարզ նկատել մանկան կրծքի խոշոր խալը։ Այնուհետև վարդապետը երեք անգամ երեխային իջեցրեց ջրի մեջ, ամեն անգամ խաչակնքելով մկրտվողի մարմինը.

— Մկրտեմ զքեզ յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ։

Օվսաննան ջղաձգորեն տեղից բարձրացավ։ Այլայլված դեմքով խոնարհվեց առաջ։ Բախտորոշ պահը հասել էր։ Արդյոք երեխան մկրտության ավազանում վերջապես արձակելո՞ւ էր բաղձալի ճիչը, ինչպես խոստացել էր Մայրիկ Անթառամը։ Տեր-Հայկազունը երեխային վերադարձրեց կնքահորը։ Բայց սրա փոխարեն առաջ եկավ Մայրիկ Անթամառը, երեխային գրկեց, փափուկ շորով քնքշորեն չորացրեց հիվանդոտ մաշկը։ Երեխան ոչ մի ճիչ չարձակեց։ Նրա փոխարեն ճչաց մայրը՝ Օվսաննան։ Երկու երկարաձիգ, հիստերիկ աղաղակ։ Տակի աթոռը շուռ եկավ։ Պատվելու կինը դեմքը ծածկած, նետվեց դեպի վրանը։ Ժուլիեթը նրա կողքին էր նստած, բայց միայն մի բան պարզ լսեց, որը և երկու անգամ կրկնվեց.

— Մե՜ղք... Մե՜ղք...

Քիչ անց Արամը վրանից դուրս եկավ խիստ գունատ, թեև դեմքին շինծու ժպիտ կար.

— Ներիր կնոջս, Տեր-Հայկազուն։ Ձեյթունից հեռանալը նրա հոգին տակնուվրա է արել։ Մինչև հիմա իրեն զսպում էր...

Իսկուհուն նշան արեց, որ գնա Օվսաննայի մոտ։ Աղջիկը հուսահատ ու վարանոտ նայեց Բագրատյանին։ Սա պատվելուն խնդրեց.

— Պատվելի, արդյոք չե՞ք կարող Ձեր քրոջը թողնել մեզ մոտ։ Մայրիկ Անթառամը վրանումն է։

Թովմասյանը ներս նայեց դռան ճեղքից.

— Կինս խիստ կարիք ունի նրա ներկայության... թերևս քիչ հետո, երբ Օվսաննան քնած կլինի...

Իսկուհին արդեն անհայտացել էր։ Գաբրիելը կոահեց. պատվելու կինը չի հանդուրժի, եթե դեռատի տալը գամված չէ իր տառապանքին, երբ ինքն անասելիորեն տվայտում է։

Արարողությանը հաջորդեց հյուրասիրությունը, բայց մարդիկ երկար ժամանակ չէին կարողանում ազատվել մկրտության հետ կապված ճնշող տպավորությունից։ Ժուլիեթի հյուրասենյակի կողքին Գաբրիելի պատվերով դրել էին նաև մի ուրիշ երկար սեղան։ Երկու կողմից նրստարաններ կային։ Այս հանգամանքը փչացրեց դյուրազգաց հյուրերի տրամադրությունը. մարդկանց միջև խորություն էր դրվում։ Հյուրասենյակի շուրջը բոլորվեցին «ազնվականներն ու նախարարները», իսկ պլեբեյները պետք է գոհանային կոշտ ու կոպիտ հասարակ սեղանով։ Դա, անշուշտ, բացարձակ անհեթեթություն էր, քանի որ անվայել բան էր անտեղի երկպառակություն բորբոքելը։ Ընտրյալների սեղանի շուրջը նստած էին ոչ միայն Տեր-Հայկազունը, Բագրատյան ամուսինները, պատվելի Արամը, դեղագործ Գրիգորը, Գոնզագ Մարիսը, այլև Սարգիս Կիլիկյանը՝ Ռուսը (ինչպիսի՜ անպատկառություն)։ Գաբրիելը գջլոտ դասալիքին արժանացրել էր հրավերքի և նույնիսկ նստեցրել իր կողքին։ Մինչդեռ տիկին Քերուսյանը, հակառակ իր գործադրած բուռն ջանքերին, չկարողացավ տեղ գրավել երևելիների կողքին։ Ստիպված եղավ նստել մյուս մուխթարուհիների մոտ, որոնցից նա բարձր էր, ինչպես երկինքը՝ երկրից, թեև ամուսնու հարստությունն արդեն անդարձ կորստյան էր մատնված։ Պատվո սեղանի շուրջը տեղ չուներ նաև ուսուցիչ Ոսկանյանը, այնինչ այնտեղ էր բազմել նրա պաշտոնակից Շատախյանը։ Առանց երկար-բարակ մտածելու Ուրբաթախոսը հրացանը սեղմած՝ գնաց, տեղավորվեց անկյունում նստած Ժուլիեթի ոտքերի մոտ, գետնին։ Խստաբարո լրջությամբ վարից վեր նայեց զարմացած ֆրանսուհուն։ Կառչող աչքերով կարծես պահանջում էր. «Վերջապես հարցուփորձ արեք իմ սխրագործությունների վերաբերյալ, որ ես դրանց մասին խոսեմ հեգնող համեստությամբ»։ Բայց այդ բանը տեղի չունեցավ։ Ընդհակառակը, շարունակ ստիպված էր լինում մի կողմ քաշվել, ճա-

Նապարհ տալ Ժուլիեթին, որն այսօր զարմանալի եռանդով էր կատարում տանտիրուհու դերը։ Հինգ րոպեն մեկ շրջանցում էր մեծ սեղանը, հետևում, որ գինու սափորները լիքը լինեն, զրուցում էր հյուրերի հետ, գործի դնելով իր կիսատ-պռատ հայերենը, մուխթարուհիներին հյուրասիրում քաղցր թխվածքներով ու շոկոլադի սալիկներով։ Այս օտար կնոջը ոչ ոք մինչ այդ չէր տեսել այդքան բարեհոգի, գրեթե հլու-հնազանդ։ Կարծես նա իր սիրալիրության անդուլ ջանքերով ուզում էր խնդրել, որ իրեն հասկանան։ Տեր-Հայկազունի աչքերը կիսափակ թարթիչների տակից զարմանքով հետևում էին տանտիրուհուն։ Այս փոփոխությունն ամենից շատ պետք է ուրախացներ Գաբրիելին, բայց նա ոչինչ չէր նկատում։ Ամբողջովին տարված էր իր կողքին նստած Կիլիկյանով։ Քրիստափորին կամ սպասավոր Միսակին շարունակ գլխով էր անում, որ Ռուսի բաժակը լցնեն։ Սա խմում էր միայն իր զինվորական տափաշշով։ Առաջը դրված բաժակը մի կողմ էր հրել։ Արդյոք դա ամբարտավանությո՞ւն էր, թե՞ մշտահալած հոգու խորախոր անվստահություն։ Գաբրիելը չգիտեր։ Եռանդով, բայց և ապարդյուն փորձում էր թափանցել Կիլիկյանի ներաշխարհը։ Այդ տաղտկալի մեռելագլուխն իր ագաթե աչքերը սևեռել էր դիմացը, ամայության մեջ, Բագրատյանի հարցերին պատասխանում էր կցկտուր բառերով։ Գաբրիելը պահանջ էր զգում մոռացության տալու Կիլիկյանի դեմ տարած իր այն հաղթանակը, որով նրան սանձահարեց։ Հավատացած էր, որ Ռուսի մեջ ինչ-որ յուրահատուկ բան կա։ Հավանաբար դասալիքը բարեկեցության մեջ ապրած շատ ու շատ մարդկանց նման մարդկային տառապանքը փոխարինել էր մարդկային արժանապատվությամբ։ Նվաստանալուց և օգոստոսի 14-ին հրամանատարական ձիրք դրսևորելուց հետո նրա վարքն այնքան էր օրինավոր, որ Գաբրիելն իրավունք ուներ նման ենթադրություն անելու։

Ռուսի հանդեպ Գաբրիելի տածած զգացմունքը չափազանց բարդ էր։ Ի դեմս նրա տեսնում էր որոշ կրթություն ստացած մի մարդու (երեք տարի ուսանել էր էջմիածնի հոգևոր ճեմարանում), որը ոչ պրոլետար էր, ոչ էլ սովորական ասիացի։ Գաբրիելի աչքին դա նաև զարհուրելի ճակատագրի տեր մարդ էր, որն իր դիմագծերը կարծես մոխրաջրի մեջ էր թաթախել և ծաղիկ հասակում սպանել իր հայացքը։ Այս ճակատագրի դաժանությունը կարող էր ստվեր գցել նույնիսկ հայկական ընդհանուր տառապանքի վրա։ Մարդը հաղթանակ էր տարել իր ճակատագրի դեմ կամ, առնվազն, դիմացել հարվածներին։ Այդքանն արդեն բավական էր, որ Գաբրիելը Կիլիկյանին համարեր արտասովոր անձնավորություն, պատկառանք զգար։ Սակայն Ռուսը միաժամանակ թողնում էր նաև վանող, խիստ կասկածելի տպավորություն։ Անժխտելի էր, որ Կիլիկյանը հաճախ իր արտաքինով ու ներքին էությամբ նման էր ծանր հանցագործի։ Թվում էր, թե նրա կյանքի ընթացքը միանգամայն համապատասխան է եղել այդ էությանը և ոչ թե հարկադրական։ Մարդ հաստատ չգիտեր. բա՞նտն էր նրան հանցագործ դարձրել, թե՞ բնածին հանցավորությունն էր քաղաքականության ոլորապտույտ ճանապարհներով նրան բանտ տարել։ Ի դեպ, Սարգիս Կիլիկյանը մազաչափ անգամ սոցիալիստ կամ անարխիստ հեղափոխականներին հատուկ դրոշմ չէր կրում։ Ջափազանց հեռու էր որևէ իդեալի կամ ընդհանուր նպատակի ծառայելուց։ Բայց թե վրայից շարություն էլ չէր թափվում, թեև կանանց մի մասը արտաքինի պատճառով նրան համարում էր սատանա։ Եթե շարության մարմնացում չէր, դա բնավ էլ չի նշանակում, թե նա ընդունակ չէր ամեն րոպե սպանություն կատարել առանց աչքը թարթելու։ Ամբողջ խորհրդավորությունն այն էր, որ երբեք չէր խոսում, ոչ մեկի ու ոչ մի բանի հետ առնչություն չուներ և ապրում էր անըմբռնելի չեզոքության ղերդ կետում։ Դամլաջրքի ժողովրդի մեջ նա դեղագործ Գրիգորից հետո ամենամեկուսացած անձնավորությունն էր։ Ռուսի գոյությունը խորապես ճնշում էր Գաբրիելին, չնայած հրապուրում էր։ Ինչևէ, հակադիր զգացումները միախառնվելով վեր էին ածվում մի տեսակ սիրո։ «Բարոյագետ» Գաբրիելը ձգտում էր, ինչպես գոնե ինքն էր հավատացած, դասալիքին մարդ դարձնել, ինչպես օրինավոր տղամարդիկ են երևակայում, թե պետք է «փրկեն» փողոցային պոռնիկներին։ Դա Դամլաջրքի գլխավոր հրամանատարի թույլ տված կոպիտ սխալներից մեկն էր։ Փոխանակ Կիլիկյանին սիրաշահելու, նա պետք է այդ դասալիքին պահեր անմերձենալի հեռավորության վրա, խստագույն հսկողության տակ։

Դասալիքի հետ զրուցելիս Գաբրիելը դժգոհում էր ինքն իրենից։ Ոչ մի կերպ չէր հաջողվում ճիշտ խոսելաձև գտնել։ Դիմացինի անթափանցելի պաղարյունությունը նրան զրկում էր ինքնավստահությունից։ Նա աննպաստ վիճակի մեջ էր, ինչպես ամեն մի խոսող՝ լռողի համեմատությամբ, շարժումը՝ հանգստի, կյանքը՝ մահվան համեմատությամբ։ Ավելի ճիշտ, նա իրեն զգում էր սեր մուրացողի վիճակում։

— Սարգիս, ես ուրախ եմ, որ ինձ չհիասթափեցրիր։ Օգոստոսի տասնչորսի հաջողության համար շատ բանով քեզ ենք պարտական։ Քո սարքած մեքենաները հիանալի մտահղացում էին։ Ճեմարանում սովորածդ իզուր չի անցել։ Հռոմայեցիների պաշարողական տեխնիկան... Ինչպե՞ս։

— Էդ կարգի բաներից դաղափար էլ չունեմ,— քմծիծաղ տվեց Կիլիկյանը։

— Եթե Թուրքերը հարավային կողմից այլևս սիրտ չանեն լեռան վրա հարձակվել, դա քո շնորհքն է, Սարգիս։

Այս գովեստը Ռուսի վրա կարծես փոքր-ինչ տպավորություն թողեց, եթե ոչ հաճելի։ Նրա բութ աչքերը գամվեցին Գաբրիելի դեմքին.

— Մեկ ուրիշը գուցե գործն ավելի լավ գլուխ բերեր...

Գաբրիելն զգաց Կիլիկյանի անկաշառ մերժումը։ Միաժամանակ զայրացավ սեփական Թուլության վրա։ Ինչո՞ւ չկարողացավ պատասխան տալ այդ հերքմանը։

— Բաքվի նավթահորերում հավանաբար ինժեների փորձ ես ձեռք բերել...

Ռուսը հեգնանքով նայում էր իր զինվորական տափաշշին.

— Երբեք ղեկավար աշխատող չեմ եղել։ Էնտեղ շատ սովորական օժանդակ բանվոր էի...

Գաբրիելը նրան գլանակ առաջարկեց.

— Կիլիկյան, քեզ այստեղ հրավիրեցի, որ հայտնեմ քեզ վերաբերող մտադրությունս։ Երևի մի քանի օր էլ հանգիստ ապրենք։ Բայց վաղ Թե ուշ մի այնպիսի հարձակում կլինի, որի համեմատությամբ նախկինները մանկական խաղ կթվան։ Այդ գալիք ճակատամարտում քեզ ուզում եմ մի շատ կարևոր պաշտոն վստահել, բարեկամս...

Կիլիկյանն իր տափաշիշը դատարկեց մինչև մրուրը և մտասույզ վայր դրեց.

— Դա քո իրավունքն է, քո գործը։ Դու ես հրամանատարը։

Պլեբեյական սեղանն այդ պահին աղմկում էր։ Մարդիկ ոգելից խմիչքի երես վաղուց չէին տեսել. իսկույն գինովացել էին։ Ժուլիեթի պահանջով մի սափոր գինի էլ բերին։ Երկու բանակի էին բաժանվել՝ լավատեսների և հոռետեսների։ Զաուշ Նուրհան էլլեոնը ոտքի էր ելել։ Փշալար հիշեցնող նրա մոխրագույն բեղերը Թրթռում էին։ Կարմիր մազանոթներով ցանցավորված աչքերը չռած՝ իր ֆելդֆեբելական բամբ ձայնով գոռգոռում էր։ Ով հույսը դրել է այն բանի վրա, որ իբր Թուրքերն այլևս չեն հարձակվի, նա ծպտյալ վախկոտ է, աղգի դավաճան։ Ինքը՝ Նուրհանը անհամբեր սպասում է նոր հարձակման։ Ավելի լավ է՝ այսօր, քան վաղը։ Թե չէ ի՞նչ կյանք Դամլաջրքի վրա։ Մարդ պետք է սովամահ լինի, կորչի-գնա։ Իրեն այդպիսի կյանք հարկավոր չէ։ Ինքն առհասարակ ոչ մի բավականություն չի ստանում կյանքից։ Հիսուն տարեկան է. հերիք է։ Ով ուրիշ խելքի է, էշ է։

Համենայն դեպս գտնվեցին մի քանի այդպիսի էշեր, որոնք տաքացած սկսեցին վիճել Նուրհանի ցնորամտության դեմ։ Վարպետ Թովմասյանը, որը նույնպես բավական գինովացած էր, բարկությունից շառագունել էր։ Ծերունին գոռում էր, որ Նուրհանը աստվածուրաց է։ Մարդիկ եկել են իր Թոռան կնունքին, ասել կուզի, ոչ ոք իրավունք չունի նման բաներ խոսելու։ Իբրև պապ, նա Փրկչին կաղոթի, կաղերսի, որ ապագայում հայրենի ցողունօլուքում կամ աշխարհի որևէ անկյունում սքանչելի օրեր տեսնի իր Թոռնիկը, Թեև նա դեռ մի մատ երեխա է, հոգին տալու վրա։ Փրկիչն ամեն ինչ կտնօրինի իր կամքով և ոչ Թե ինչ-որ արյունախում օնբաշու քմահաճույքով։ Բայց ինքը հավատացած է, որ Թուրքերը շատ շուտով խելքի կգան։ Այս խոսքը նշանաբան եղավ մուխթար Քեքուսյանի համար։ Սա օբորվելով փլվեց նստարանին, ճաղատ գլուխը տմբտմբացրեց, արտակարգ գոհունակությամբ նայեց բոլորին, առանց մեկնումեկին տեսնելու։

— Հարկավոր է բանակցություններ վարել,— խորհրդավոր ու խորամանկ շեշտով վրա բերեց նա։— Տասներկու տարի եղել եմ Ցողունօլուքի մուխթարը... Բանակցություններ եմ վարել Թուրքերի հետ, կայմակամի, մյուդիրի հետ... Կայմակամը միշտ էլ ինձ հարգել է... Ժողովրդից տեղը-տեղին հավաքել ու մուծել եմ զինվորացուների փրկագինը... Կայմակամը ինձ իր դիվանատունն էր հրավիրում, քանի որ նա էլ, մյութեսարրիֆն էլ, վալին էլ, վեզիրն էլ, սուլթանն էլ, բոլորն էլ գիտեին, որ ես մուխթար Քեքուսյանն եմ... Եթե ես նրանց հետ բանակցություններ սկսեմ, ինձ ոչինչ էլ չի պատահի. ես մեծ հարկատու եմ եղել... Դուք մանր-մունր հարկատուներ եք, ինձ հետ ոտք գցել չեք կարող։

«Մանր-մունր հարկատուները»՝ մյուս գյուղերի վարկաբեկված մուխթարները, Քեքուսյանին ամբիոնից իջեցրին։ Զաուշ Նուրհանը գոռում էր, որ ինքն այլևս չի հանդուրժի պարապ հացակերներին։ Այսուհետև բոլորը պետք է իր Թրի տակով անցնեն, եթե նույնիսկ յոթանասուն տարեկան լինեն կամ ավելին։ Քրքիջ բարձրացավ։ Հարբածների վիճաբանությունը սպառնալից տեսք էր ընդունում։ Բայց Գաբրիելը բարեբախտաբար կարգադրեց այլևս գինի չբերել, իսկ ինքը Ավագյանի հետ, որը նրա ականջին ինչ-որ գաղտնի բան փոփոխեց, շտապ անհայտացավ։ Ընտրյալների սեղանի շուրջը հետզհետե դատարկվեց։ Տեր-Հայկազունը մի ժամ էլ խնջույքին մասնակցեց, ապա հեռացավ։ Նրանից քիչ հետո Արամը գնաց կնոջ վրանը։ Սարգիս Կիլիկյանն իր տափաշիշն առած՝ մոտեցավ երկար սեղանին։ Այստեղ վիճաբանության

Ժխորն արդեն հանդարտվում էր։ Ռուսը նստեց և առանց բավականության սկսեց իր բութ աչքերով դիտել տարիքն առած կովարար աքլորներին։ Իրար կողքի լուռումունջ նստած էին Գոնզագն ու Ժուլիեթը։ Ֆրանսուհու ոտքերի մոտ դարձյալ կուչ եկած պպզել էր ուսուցիչ Ոսկանյանը։ Ամաչում էր գրավել ազատված տեղերից մեկը։ Բայց հանկարծ Ուրբաթախոսը, հրացանին հենվելով՝ վեր թռավ խայթվածի նման։ Մի ակնթարթ սարսափահար նայեց Ժուլիեթին, ապա շուտ եկավ և զայրացած հեռացավ։ Նա քիչ էր խմել, բայց մի քանի քայլ շարած ենթադրեց, թե իր տեսածը գինու ազդեցության տակ ծնված պատրանք է։ Մի՞թե հնարավոր բան է, մի՞թե կարելի է մտքով անցկացնել, որ մի խարտիշագեղ, սպիտակադեմ դիցուհի իր ծունկը կրքով սեղմի ինչ-որ մի արկածախնդիր սատահակի ծունկին, սատահակ, որի ծագման մասին ոչ ոք տեղեկություն չունի։ Հակառակ այս անժխտելի եզրակացության, Ոսկանյանը խորանի հրապարակն անցնելուց հետո էլ զգում էր, որ սիրտը դեռևս թպրտում է։

Ժուլիեթը հանկարծ անհանգստացավ, ոտքի ելավ, հրաժեշտ տվեց և գնաց Օվսաննային այցելելու, որին, իբրև պատիժ, ամբողջ ժամանակ աչքաթող էր արել։

Իրար դեմ-դիմաց դեռևս նստած էին դեղագործ Գրիգորն ու Գոնզագը։ Սա իր նախկին տանտիրոջը զննում էր սարսափախառն անսքող հետաքրքրությամբ։ Վերջին շաբաթներին տեղի ունեցած փոփոխությունն ուղղակի անհավատալի էր։ Միջահասակ, ջլուտ տղամարդը դարձել էր սմքած, սապատավոր թզուկ, որի ջրգողությունից մեծացած գլուխն օրորվում էր ցողունանման պարանոցի վրա։ Ուսերը վեր էին ցցվել, ձգվել առաջ, մատների հոդերն այլանդակվել էին, ծածկվել կոշտերով և ուռուցքներով։ Անփոփոխ էր մնացել միայն մանդարինյան դիմակը, եթե նկատի չունենանք, որ մաշկը գորշ գույն էր ստացել։ Բայց դեմքի անտարբեր, ինքնավստահ արտահայտության վրա ինչ-որ նոր լույս էր ավելացել՝ անդրաշխարհիկ խորամանկության ժպիտ։ Գրիգորը թեյի բաժակով եռանդուն խմում էր գինին։ Հիվանդ ձեռքն այնպես էր դողդողում, որ նա ամեն անգամ գինու մի մասն ակամա զոհաբերում էր։

— Պարոն Գրիգոր, այդքան շատ մի՛ խմեք,— խորհուրդ տվեց Գոնզագը։

Գրիգորն օրորեց իր ծանրացած գլուխը, որը վերջերս նկատելիորեն մեծացել էր։

— Ես ոչ մի բան այլևս չեմ ուտում... Մինչդեռ խմելը հոգևոր

արարողություն է, ինչպես ուսուցանում է պարսիկ փիլիսոփա Ֆերհադ էլ Քաթիբը։

— Դուք Ձեզ պետք է խնայեք և պառկեք անկողնում...

— Ես նոր եմ ինձ առողջ զգում,— տարօրինակ եռանդությամբ հանգեց հիվանդը։

Գինին վաղուց էր սպառվել, բայց երկար սեղանի շուրջը նստածների վիճաբանության աղմուկը, իրար հեգնող քրքիջն ու սուր խոսքերը հետզհետե բորբոքվում էին։ Ինչ-որ անկոչ հյուրեր էին հայտնվել, մեծ մասամբ երիտասարդներ, որոնք հրահրում էին վիճաբանությունը։

Արևը մայր էր մտնում։ Արդեն ուշ էր։ Գեանի վրա վայրի պար էին բռնել կնքահանդեսին եկածների ստվերները։ Երևի տուրուդմբոց սկսվեր, եթե հանկարծ Քաղաքաձորի կողմից չլսվեր շեփորի երկար ու ձիգ ազդանշանը։ Միանգամից լռություն տիրեց։

— Մունետիկներն են,— ասաց ինչ-որ մեկը։

— Տագնապ է,— գոռաց մեկ ուրիշը։

Ծեր թե երիտասարդ սթափվեցին իրենց կռվամոլուցքից, չնայած թվում էր, թե աշխարհում ամեն ինչ մոռացության են տվել։ Բոլորը ոտքի թռան, նետվեցին զանազան կողմեր, դեպի իրենց դիրքերը։ Պատվելի Արամը գլխապատառ վազեց Քաղաքաձոր։

Մի քանի րոպեում խնջույքի վայրը դատարկվեց։

«Տագնապ»,— մտախոհ կրկնեց Գոնզագը, և նրա դարչնագույն անվրդով աչքերի մեջ ոսկեփայլ կայծեր թրթռացին։ Թուրքերի հարձակումը նրան ձեռնտու էր։ Այս անգամ գործը երևի բարեհաջող վախճան չունենար։ Մի՞թե գիշերը չպետք է առիթից օգտվեր։ Հապա Ժուլիե՞թը։

Դեղագործ Գրիգորը սեղանի մոտից վեր կենալ չէր կարողանում։ Գոնզագն օգնեց։ Պարզվեց, որ ծերունու ոտքերը նրան չեն հնազանդվում։ Վայր կընկներ, եթե Գոնզագն զգուշորեն չուղեկցեր և տուն չհասցներ։ Դեղագործն իր մարմնական ողբալի վիճակն ավելին չէր համարում, քան բնության կամքով տեղի ունեցած սովորական դժբախտ պատահար, թեև ահագին ժամանակ անցավ, մինչև հասավ իր օթևանը։

— Տագնա՞պ,— հարցրեց Գրիգորն անտարբեր, կարծես այդ մանրուքը բավարար ուշադրության չէր արժանացրել և արդեն մոռացության էր տվել։

— Տագնապ,— հաստատեց Գոնզագը,— այն էլ այնպիսի տագնապ, որի հետ կատակ անել չի կարելի։

Դեղագործը կանգնեց-մնաց։ Հինգ քայլը մեկ շունչը կտրվում էր։

— Ինձ ի՞նչ, թե տագնապ է,— հնաց ծերունին։— Մի՞թե ես էլ եմ սրանց թվին պատկանում։ Ոչ, ես նրանց չեմ պատկանում. ինքս ինձ եմ պատկանում։

Եվ դողդոջուն ձեռքով իր չորս կողմը շրջան գծեց, կարծես ուզում էր ցույց տալ իր ես-աշխարհի մեծությունն ու ինքնապարփակությունը։

— Եթե ես չարին չեմ հավատում, ուրեմն՝ աշխարհում ոչ մի չարիք չկա։ Եթե ես մահին չեմ հավատում, ուրեմն՝ աշխարհում ոչ մի մահ չկա... Եթե ինձ սպանեն, չեմ էլ նկատի... Ով այս բարձունքին հասնի, նա կարող է հոգևոր նոր աշխարհ կերտել...

Նա փորձեց ձեռքերը գլխից վեր բարձրացնել։ Չհաջողվեց։

Գոնզագը, որն իր ամբողջ էությամբ կցանկանար չարիքն զգալ նախապես, քան հետո չզգալ, այդ խորիմաստ բառերից ոչինչ չհասկացավ։ Բայց դեղագործին բավականություն պատճառելու համար քաղաքավարությամբ հարցրեց.

— Հիմա ո՞ր հին փիլիսոփայի խոսքերը հիշատակեցիք։

Դեղագործը մանդարինյան դիմակ հիշեցնող հայացքն անտարբեր հառեց դեպի մթնշաղը, որն արդեն վրա էր հասնում։ Սպիտակ այծամորուքը տմբտմբում էր։ Ծերունին արհամարհանքով, բարձր, բայց և կարծես փչակի խորքից դուրս եկող ձայնով պատասխանեց.

— Սա ասել է մի փիլիսոփա, որի խոսքերը ոչ ոք չի հիշատակել և չի էլ հիշատակի, ինձանից բացի։ Գրիգոր Յողոնօլուքցին։

Գաբրիելը պատվիրել էր մեծ տագնապ ազդարարել, չնայած հավատացած չէր, թե անմիջական վտանգ է սպառնում։ Որքան էլ տարօրինակ թվա, միայն արևը մայր մտնելուց հետո պարզվեց, որ Թուրքերը Որոնտեսի հարթավայրում և հայկական հովտում անթիվ-անհամար զորք են կուտակել։ Կանոնավոր զորամասերն ու կամավորներն այնքան շատ էին, որ կարծես բնակավայրերում չէին տեղավորվել և ստիպված էին գիշերել բացօթյա։ Խարույկների հսկայական կիսաշրջանը ձգվում էր Սելևկիայի ավերակներից մինչև հայկական ամենահեռավոր գյուղը՝ հյուսիսում ծվարած Քեբուսիեն։

Երբեմն-երբեմն հայտնվում էին հետախույզները, զարմանալի տեղեկություններ բերում։ Կարծես կախարդական գավազանի հարվածով գետնի տակից Թուրք զինվորներ էին բսնել։ Ոչ միայն զինվորները, այլև զափթիեները ու չեթեները, շրջակայքի բոլոր մահմեդականները կարծես հանկարծ զինվել էին մաուզերյան հրացաններով ու սվինադաշույններով, եկել-հավաքվել էին, և սպաները նրանցից արդեն առանձին

ստորաբաժանումներ էին կազմում։ Սպառազինված Թուրքերի թիվը որոշել անհնարին էր։ Դա ֆանտաստիկ չափեր ընդունած՝ բերնեբերան էր անցնում։ Բայց երբ Գաբրիելը խարույկների բազմամղոն կիսաշրջանը դիտեց, այդ թիվը նրան բնավ էլ ֆանտաստիկ չթվաց։ Երկու բան հաստատ գիտեր։ Առաջին, Թուրք հրամանատարը բավականաչափ զորք ուներ Դամլաջըքը Հարավաբերդից մինչև Հյուսիսային լեռնաթամբը պաշարելու և հարձակում գործելու համար։ Երկրորդ, նա իրեն երևի այնքան հզոր էր զգում, որ հարկ չէր համարում դիմել քողարկված առաջխաղացման և գաղտնի հարձակման տակտիկային։ Բացահայտ գործելու այս եղանակը հայերին պետք է բարոյալքեր (և բարոյալքեց)։ Դա այն որոշակի «ծուղակն» էր, որ Գաբրիելն արդեն նախատեսել էր իբրև «գլխավոր հարձակում», մշակել էր պաշտպանության ձևերը, կատարել մարտական վարժություններ։

Գաբրիելն ավելի անվրդով էր, քան նախորդ երկու ճակատամարտի ժամանակ, թեև լեռանն ապավինած ժողովրդի հեռանկարն անհուսալի էր։ Առաջին տագնապից հետո կապավորներին ուղարկեց տարբեր դիրքեր, կանչել տվեց բոլոր խմբապետներին և ծառայությունից ազատ զինվորներին։ Այդ միջոցին հայտնվեցին նաև ավագների խորհրդի անդամները։ Նրանց վախվորած դեմքերից չքացել էր գինովությունը։ Գաբրիելը, սահմանադրական կարգի համաձայն, ճակատամարտի ժամանակ ստանձնում էր նաև գաղթականի ընդհանուր ղեկավարությունը։ Նա կարգադրեց, որ գիշերվա ընթացքում պատրաստեն թարմ մսի ամբողջ պաշարը։ Լույսը բացվելուց երկու ժամ առաջ դիրքերը պետք է առատ սնունդ ստանային։ Այնուհետև զինվորներին պետք է բաժանեին մնացած գինին ու օղին։ Գաբրիելն իր ունեցած տասը լիտրանոց բոլոր սափորները տրամադրեց պաշտպաններին, բացի մեկից։ (Այս նվերը, ի դեպ, պատճառ եղավ, որ բերնեբերան անցնի այն առասպելը, թե Բագրատյանն իր համար պարեն ունի պահած)։ Երբ ներկայացան բոլոր խմբապետները, զինվորները, պահեստայիններն ու պատանեկան զորախումբը, Գաբրիելը նրանց դիմեց հակիրճ ճառով։ Բացատրեց, թե ինչպիսի ճակատամարտ է իրենց սպասում, և չթաքցրեց ճշմարտությունը։ Ահա նրա խոսքերը.

— Մարդկային բոլոր կանխագուշակումների համաձայն, մենք պետք է նախընտրենք երկու մահից մեկը. կամ մեռնենք կռվելով, որը մահվան թեթև ու պատվավոր ձևն է, կամ կոտորվենք, մեռնենք անարգ, զարհուրելի մահով։ Եթե այս բանը մենք լիովին պարզ պատկերացնենք, եթե անսասան վճռականությամբ գերադասենք պատվավոր

մահը, ապա գուցե հրաշք կատարվի, և մենք չմեռնենք։ Միայն թե պետք է լավ կռվենք, եղբայրներ։

«Գլխավոր հարձակման» առթիվ նոր ստորաբաժանում կատարվեց։ Զաուշ Նուրհանն ստանձնեց Հյուսիսային լեռնաթամբի հրամանատարությունը։ Մի այլ փոփոխություն ևս կատարվեց։ Բագրատյանը, մի քանի ժամ առաջ իր տված խոստման համաձայն, Ռուսին վստահեց Կաղնուտի վերևի կարևոր հատվածը։ Կազմվեց երկու բոլորովին նոր զորախումբ՝ մի թեթև գվարդիա և մի հարվածային զորախումբ։ Մտաբերելով բալկանյան ճակատամարտերի փորձը, Գաբրիելն ու Նուրհանը այս նպատակով ամենախիզախ տղամարդկանցից, լավագույն հրաձիգներից ու ճարպիկ մագլցողներից ընտրեցին մոտ հարյուր հոգի։ Սրանք պետք է դիրքավորվեին Դամլաջրքի ամբողջ հովտակողմի վրա, բառձունքի ամբողջ երկայնքում՝ ծառերի կատարներին, թփերի ու ժայռերի ետևում, փոսերում ու ծուղականման ժայռաճեղքերում։ Սկզբում պետք է թողնեին, որ թուրքական հարձակվող զորասյուներն անցնեին իրենց մոտով, ապա թիկունքից ու կողքերից շեշտակի կրակ բացեին, չխնայելով ռազմամթերքը։ Ամեն ազատազեն տասներկու փամփշտակալ ուներ, այսինքն՝ վաթսուն փամփուշտ։ Տվյալ պայմաններում դա չափազանց առատ ռազմամթերք էր։ Այս տեսակետից Բագրատյանը բացառիկ շռայլություն հանդես բերեց։ Քանի որ գալիք ճակատամարտը բախտորոշ էր լինելու, ուստի և հարկ չկար ժլատություն անելու։ Թաքստոցներում թողեց միայն թուրքերից գրաված, նորից լիցքավորված փամփուշտների մի չնչին մասը։ Ազատազեն զինվորներին Գաբրիելը տրամաբանական և պարզ խոսքերով բացատրեց առաջադրանքը։ Այնպես որ ամեն երիտասարդ լիովին պատկերացրեց իր անելիքը։ Թշնամու առաջխաղացումը պետք է խառնաշփոթության մատնեին և կասեցնեին։ Ոչ մի ակնթարթ հանգիստ չմնալ, հակառակորդին շարունակ նեղել թիկունքից, մանավանդ այն ժամանակ, երբ նա կուզենա հարձակման անցնել։ Եվ, ինչպես միշտ, հիշել հիմնական օրենքը. ամեն գնդակից պետք է մի թուրք սպանվի։

Հարվածային զորախմբի հարցը լուծելուց հետո կազմվեց թեթև գվարդիան։ Գաբրիելը պակասեցրեց Հարավաբերդի պաշտպանների թիվը, քանի որ այս հատվածն իր զորավոր պատնեշներով գրեթե անառիկ էր։ Թողեց մարտիկների մի փոքր խումբ, որի ներկայությունն անհրաժեշտ էր։ Որտեղ զինվորների պակաս զգացվեց, լրացրին պահեստայիններով։ Այսպիսով, Գաբրիելն իր գվարդիայի համար մոտ հարյուր հիսուն զինվոր առանձնացրեց։ Գվարդիան ինքն էր ղեկավարելու.

օգնության էր նետվելու այն հատվածներին, որտեղ ճակատամարտն աննպաստ ընթացք ստանար։ Հարվածային զորախմբի զգալի մասը պետք է օգտվեր գաղթականների ավանակների ծառայությունից, լիներ առավել արագաշարժ։ Այս կողմերի ավանակները ծույլ ու դանդալոշ չեն և ընդունակ են դժվար տեղերով անցնելու։ Պատանեկան երկու զորախումբը, կապավորներն ու հետախույզների մի մասը պետք է կրընկակոխ հետևեին գվարդիային, որպեսզի գլխավոր հրամանատարի և բոլոր հատվածների միջև երբեք չընդհատվեր ճառագայթաձև հաղորդակցությունը։

Ահա ընդհանուր գծերով այն ռազմակարգը, որը «գլխավոր հարձակման» առթիվ մշակել էր Գաբրիելը և գիշերվա առաջին երկու ժամում կշռադատել ու կատարելագործել։ Ի վերջո գործին իրազեկ դարձրեց բոլոր պահեստայիններին։ Սրանք Քաղաքաձորից պետք է դուրս գային արևածագին։ Մի մասը պետք է փոխարիներ առանձին հատվածների զինվորներին, իսկ մյուս մասը պետք է դիրքավորվեր սարահարթի երկարությամբ՝ լեռան արևելյան եզրից մինչև գաղթականը։ Այդ հողաշերտը, որը տեղ-տեղ, ինչպես, օրինակ, Կաղնուտի առաջ ընկած հատվածում, հազար քայլից ավելի չէր նեղանում, չափազանց վտանգավոր գոտի էր։ Այստեղ մի քանի պատնեշ կար, ավելի ճիշտ՝ անկանոն քարակույտեր, որոնք կարող էին Քաղաքաձորը պաշտպանել թշնամու հարձակումներից։

Երբ Գաբրիելը պահեստայիններին ևս բացատրեց նրանց անելիքը, հայտարարելով, թե նրանք են այն վերջին նեցուկը, որ պետք է կանխի կանանց զարհուրելի խայտառակությունն ու երեխաների կոտորածը, Նուրհանն իր շեփորի կակազ ու ցասկոտ հնչյուններով գիշերային դադար ազդարարեց։ Դրանք թուրքական զինվորական իրիկնանվագի պատռիկներ էին։ Գաղթականներին հրաման տրվեց քնելու։

Այս բանից հետո Գաբրիելը գնաց դեպի հաուբիցները, որոնց մոտ ուզում էր գիշերել։ Նուրհանի օգնությամբ բանիմաց երիտասարդներից մի քանիսին թեթևակի բացատրեց, թե ինչպես պետք է կատարել հրետանու սպասարկումը։ Կեսգիշերից առաջ հայտնվեցին վերջին բանբերները։ Ոչ մի նորություն։ Գաբրիելի իմացած միակ նորությունն այն էր, որ նրա ամառանոցի տանիքին մահիկավոր դրոշ էր ծածանվում, բակում ահագին ձիեր էին կապված, սպաներ էին ներս ու դուրս անում։ Պարզ էր. Բագրատյանի տունը թուրքական զորքի շտաբ էին դարձրել։

Գաբրիելն սպասեց մինչև վերջապես ծագեց լուսինը։ Այնուհետև քարտեզի վրա սկսեց կարկինով հեռավորություններ չափել, հաշիվներ

անել։ Քանի որ վիթխարի, ասես ուռած լիալուսինը բավական առատ լույս էր սփռում, հաջողվեց ճշտել նպատակակետը, հրանոթներին տալ ցանկացած ուղղությունը։ Մարտկոցի անձնակազմը մոտեցրեց արկերի արկղները։ Դեռևս մնացել էր հինգ շրապնել և քսաներեք ռումբ։ Գաբրիելը հրամայեց դրանց կեսը դնել հրանոթների կողքին։ Ապա սկսեց մի հրանոթից մյուսին մոտենալ, գրպանի լապտերը բռնած՝ բանալիով կարգավորել հեռացույց խողովակը։

Նա դեռևս այդ աշխատանքով էր զբաղված, երբ հայտնվեց Իսկուհին։ Սկզբում չնկատեց աղջկան։ Սա կամացուկ ձայն տվեց։ Գաբրիելը բռնեց նրա ձեռքից, փոքր-ինչ հեռու տարավ, մինչև մնացին երկուսով։ Նստեցին կարմիր հատապտուղներով ծանրաբեռնված մաթուզենու թփի տակ։ Լուսնի անկենդան ցոլքից հատապտուղները հալած զմուռսի կաթիլների գույն էին ստացել։

Իսկուհու խոսքերը հնչեցին վհատ ու կաշկանդված.

— Ուզում էի հարցնել. քեզ չե՞մ խանգարի, եթե վաղը կողքիդ լինեմ...

— Աշխարհում ինձ ոչ մի բան այնքան բավականություն չի պատճառում, ինչքան քո մոտիկությունը, Իսկուհի...

Նա իր խոսքն ընդհատեց, մի պահ մտորեց, ապա աղջկա ձեռքը սեղմեց այտին.

— Դա ինձ ոչ միայն կխանգարի, այլև կտանջի, երբ քեզ տեսնեմ անմիջական վտանգի վայրում։

— Վտանգն ամենուրեք է, որտեղ էլ լինենք, Գաբրիել։ Մի քանի ժամ շուտ կամ ուշ, միևնույն է...

— Բայց մի՞թե վաղը չպետք է լինես Օվսաննայի ու Երեխայի հետ։ Ո՞վ գիտե, թե մինչև վաղը երեկո ինչ կարող է պատահել այս կողմերում...

Աղջկա փխրուն մարմինը ձգվեց ամենայն վճռականությամբ.

— Ո՞վ գիտե, թե մինչև վաղը երեկո ինչ կարող է պատահել այս կողմերում... Հենց այդ պատճառով էլ ես այլևս որևէ պարտականություն չեմ ճանաչում, բացի... Օվսաննան ու Երեխան այստեղ ի՞նչ գործ ունեն։ Նրանք ինձ չեն հետաքրքրում։

Գաբրիելը խոնարհվեց Իսկուհու վրա, ուզեց թափանցել աչքերի խորքը, որ հալչում էին այնպե՞ս լայնաբիբ։ Նրան համակեց մի տարօրինակ, սարսռեցնող զգացում։ Այդ մագնիսացնող զգացումը սովորական սեր չէր, որով նա միշտ կապված էր Ժուլիեթի հետ։ Դա ավելին էր, քան սերը, և պակաս, քան սերը։ Գաբրիելն զգում էր իր հոգևոր

ու մտավոր բոլոր ուժերի հորդումը, ինչ-որ երանություն՝ առանց կրքային խոտորման։ Թերևս դա տակավին չճաշակած արյունակցական հարազատության սերն էր, որն առասպելական խորհրդավոր աղբյուրի պես բխում էր Իսկուհու հայացքից, կենարար զովությամբ պարուրում... Դա ոչ թե ապագայում մի սիրտ, մի հոգի լինելու ցանկություն էր, այլ անցյալում մի սիրտ, մի հոգի եղած լինելու առհավատչյա...

Գաբրիելը ժպտաց, թափանցելով Իսկուհու աչքերի խորքը.

— Իսկուհի, ես մահվան ոչ մի զգացողություն չունեմ։ Խենթություն է, բայց ես ամենաչնչին չափով անգամ պատկերացնել չեմ կարողանում, թե վաղը գուցե կենդանի չլինեմ։ Դա վատ նշան չեմ համարում։ Իսկ դո՞ւ, ի՞նչ կարծիքի ես։

— Մահը պետք է գա, Գաբրիել։ Չէ՞ որ մեզ համար ուրիշ ելք չկա...

Գաբրիելը չլսելու տվեց աղջկա երկիմաստ խոսքերը։ Նրան համակեց անհավատալիորեն ինքնավստահ մի զվարթություն.

— Իսկուհի, հարկ չկա այդքան հեռուն նայելու։ Ես ոչ մի բանի մասին չեմ մտածում, բացի վաղվա օրից։ Երեկոն ինձ չի մտահոգում, իսկ վաղվա առավոտն ինձ ուրախացնում է, գիտե՞ս։

Իսկուհին վեր կացավ տուն գնալու։

— Գաբրիել, ուզում եմ, որ դու ինձ մի բան խոստանաս։ Դա քո ձեռքին է։ Եթե բանը բանից անցնի, և փրկության հույս չունենանք, ինձ ու քեզ գնդակահարիր, խնդրում եմ։ Դա ամենալավ միջոցն է։ Ես առանց քեզ չեմ կարող ապրել։ Բայց չեմ էլ ուզում, որ դու ապրես առանց ինձ։ Ոչ մի ակնթարթ։ Ուրեմն, թույլ կտա՞ս, որ վաղը կողքիդ լինեմ։

Ոչ։ Իսկուհին խոսք տվեց, որ վաղը վրանից դուրս չի գա, Գաբրիելն էլ խոստացավ, որ եթե ամեն ինչ կորած լինի, ինքը նրան կկանչի կամ ինքը կգա վրան՝ միասին մեռնելու։ Այս խոստումը տալիս Գաբրիելը ժպտաց. հոգու խորքում հավատացած չէր, թե օրհասը մոտ է։ Չէր անհանգստանում նաև Ժուլիեթի ու Ստեփանի համար։ Բայց երբ շարունակեց հրանոթների հետ կապված իր աշխատանքը, զարմացավ իր ապրելու հավատի վրա, հավատ, որ հեգնանքով ժխտում էր չորս կողմից սպառնացող կիսաշրջանը, իբրև զարհուրելի իրողություն։

Կայմակամը, Անթաքիեի յուզբաշին, շիկահեր մյուդիրը, Հալեպից ուղարկված չորս վաշտի հրամանատարը և երկու այլ սպա մայրամուտից հետո ռազմական խորհուրդ էին գումարել Բագրատյանի տան

հյուրասրահում։ Սենյակը պայծառ լուսավորված էր մոմերի լույսով, ինչպես այն օրերին, երբ Ժուլիեթը հրավիրում էր գյուղի երևելիներին։ Քիչ առաջ պարոնայք ընթրել էին, և այժմ սպաների սպասյակները մաքրում էին սեղանը, դուրս տանում ուտելիքի մնացորդները։ Բաց պատուհաններից լսվում էին հանդստացող զորամասերի շեփորային ազդանշաններն ու իրիկնային դաղար աղդարարող նվագի հնչյունները։ Քանի որ սատանա հայերը հանկարծ կարող էին մի անսպասելի օյին խաղալ, կայմակամը կարգադրել էր շտաբը հսկողության տակ պահել։ Պահակազորն արդեն վրաններ էր խփել, տակնուվրա արել պարտեզը, բանջարանոցն ու պտղատու այգին։

Սպաների ու պաշտոնյաների խորհրդակցությունը շատ երկար տևեց։ Ի դեպ լիակատար փոխհամաձայնության գալ չկարողացան։ Կարևոր հարց էր վճռվելու. արդյոք պե՞տք է արշալույսին սկսեին Դամլաջրքի գրոհը։ Կայմակամը, որի գունաթափ դեմքից և աչքերի տակ գոյացած սևագորշ տոպրակներից դժգոհություն էր թափվում, ռազմական խորհրդին մասնակցողներից ամենավարանոտն էր և ամեն ինչի առարկում էր։ Իր անվճռականությունը պատճառաբանում էր նրանով, որ իբր թե Հալեպի կայազորի պետը վալու ցանկությամբ խոստացել է մի ամբողջ հետևակ գումարտակ ուղարկել, և որ խոստացած գնդացիրներն ու լեռնային հրանոթները դեռևս տեղ չեն հասել։ Հալեպի քոլաղազին (շտաբս-կապիտան) այդ հապաղումը հիմնավորեց այսպես. տեղափոխված դիվիզիաներն իրենց հետ տարել էին այդ տեսակի բոլոր զենքերը, և Հալեպում արդեն ոչ մի գնդացիր չկար։ Կայմակամը պարոններին խորհուրդ տվեց մտածել, թե արդյոք ավելի նպատակահարմար չի՞ լինի, եթե մի քանի օր ևս սպասեին, Նորին պայծառափայլություն Ջեմալ փաշային հեռագրով խնդրեին արագացնել հարձակման համար անհրաժեշտ զենքի առաքումը։ Սակայն սպաներն այդ առաջարկը համարեցին անընդունելի, քանի որ երկար-բարակ թախանձանքները կարող են զայրացնել քմահաճ Ջեմալին և հակառակ հետևանքի հասցնել։ Անթաքիեի յուզբաշին աթոռը ետ քաշեց, ձեռքն առավ ինչ-որ գրություն։ Ձեռքերը դողդողում էին, բայց ոչ թե հուզմունքից, այլ այն պատճառով, որ նա թունդ ծխող էր։

— Էֆենդիլեր,— սկսեց նա ցածր, խռպոտ ձայնով,— եթե մենք սպասենք հրետանու և գնդացիրների, ապա մեզ ուրիշ անելիք չի մնում. ստիպված կլինենք ձմեռել այստեղ։ Պատերազմի դուրս եկած բանակի համար սա անպատվաբեր բան է, և մենք մեր պահանջներով կարող

ենք մեզ ծաղրի առարկա դարձնել։ Ես ինձ թույլ եմ տալիս կայմակամի հիշողության մեջ մի անգամ ևս թարմացնել մեր զորքերի ուժը...

Միապաղաղ եղանակով նա կարդաց թղթի կտորի վրա գրված թվերը.

— Չորս վաշտ Հալեպից՝ ուղիղ հազար հոգի։ Երկու վաշտ Ալեքսանդրեթից՝ հինգ հարյուր հոգի։ Անթաքիեի համալրված կայազորը՝ չորս հարյուր հիսուն հոգի։ Ուրեմն՝ գրեթե երկուհազարանոց կանոնավոր հետևակ։ Ռազմաճակատում գտնվող գնդերն այսքան ուժ չունեն։ Այնուհետև, երկրորդ գիծը։ Չորս հարյուր զափթիե Հալեպից, երեք հարյուր զափթիե մեր սեփական քաղաքից, ի վերջո՝ չորս հարյուր չեթե հյուսիսից։ Դա անում է հազար հարյուր հոգի։ Ավելացրեք երրորդ գիծը՝ ևս երկու հազար մահմեդական, որոնց բերել ենք զանազան գյուղերից և զինել։ Այսպիսով, մենք հարձակման կարող ենք դուրս բերել հինգհազարանոց մի զորաբանակ...

Յուզբաշին ընդհատեց իր ելույթը, մի գավաթ սուրճ խմեց, նոր գլանակ վառեց։ Այդ ընդմիջումից օգտվելով, ինչ-որ մեկը նրան առարկեց.

— Համենայն դեպս հայերը երկու հրանոթ ունեն։

Կապիտանի ներս ընկած այտերի վրա կենդանության նշաններ հայտնվեցին, դնդնավուն ճակատին քրտնքի կաթիլներ պսպղացին։

— Այդ հրանոթները ոչ մի բանի պետք չեն։ Առաջին, ռազմամթերք չունեն, երկրորդ, ո՞վ պիտի դրանք գործի դնի։ Երրորդ, մենք շատ շուտով դրանք ետ կվերցնենք։

Կայմակամը, որը հոգնած ու ձանձրացած ընկղմվել էր թիկնաթոռի մեջ, աչքերը բարձրացրեց.

— Յուզբաշի, այդ Բագրատյանին մի՛ թերագնահատեք։ Ես այդ մարդուն միայն մի անգամ եմ տեսել, բաղնիքում։ Նա այնտեղ իրեն շատ հանդուգն պահեց։

Երիտասարդ մյուդիրն իր պեպեններով ու առասպելական եղունգներով միջամտեց խոսակցությանը և նախատական շեշտով ասաց.

— Ռազմական իշխանությունների թույլ տված մեծագույն սխալն այն էր, որ պահեստային հայ սպաները բանակ չկանչվեցին։ Որքան ինձ հայտնի է, Բագրատյանը բազմիցս իր կամքով դիմել էր։ Առանց այդ մարդու ծովեզերքը բացարձակապես խաղաղ կմնար։

Կապիտանը խստությամբ ընդհատեց այս դատողությունները.

— Մի գլուխ՝ Բագրատյա՞ն, Բագրատյա՞ն... Քանի՞ կոպեկ արժեն ռազմական գործից չհասկացող այդ մարդիկ։ Երեկ ես ինքս եմ հետազոտել Դամլաջրքը, պարզել իրական վիճակը։ Այնտեղ եղած հայերը

գլուխ խաժամուժ են։ Դրանց խրամատները սոսկալի պրիմիտիվ են։ Եթե շռայլություն թույլ տամ, ապա հայերի ունեցած-չունեցածը մի չորս կամ հինգ հարյուր հրացան կլինի։ Մենք պետք է մեր երեսին թքենք, եթե դրանց հաշիվը մինչև կեսօր չփակենք։

— Իրավացի ես, յուզբաշի,— շեշտակի հայացք նետելով կապիտանին, վրա բերեց կայմակամը,— բայց իր կյանքը պաշտպանող ամենափոքր կենդանին անգամ վտանգավոր է։

Հալեպցի քոլաղազին լիակատար հավանություն տվեց յուզբաշու կարծիքին։ Հաստատ հույս ուներ, թե մի երկու օրից հետո գլուխը կազատի տհաճ վայրից, դարձյալ կմեկնի իր գեղեցիկ Հալեպ քաղաքը։ Մյուս սպաներն էլ միահամուռ համոզմունք հայտնեցին։ Կայմակամն ստիպված եղավ հորանջելով եզրափակել.

— Յուզբաշի, Դուք երաշխավորո՞ւմ եք հաջողությունը։

Կապիտանը վիշապի նման ռունգերից ծխի երկու ալիք դուրս նետեց.

— Ռազմական միջոցառումների ժամանակ ոչ մի երաշխավորություն չեն տալիս։ Մերժում եմ այդ բառը։ Կարող եմ միայն ասել, որ ես այլևս չեմ ցանկանա ապրել, եթե հայկական որջը մինչև երեկո քարուքանդ չանենք։

Այդ խոսքի վրա հոգնած կայմակամը նստած տեղում ձգվեց.

— Որ այդպես է, գնանք քնենք։

Բայց այդ գիշեր մեծախոս թուրքի քունը «հարամվեց»։ Անկողինը գցել էին Ժուլիեթի սենյակում։ Օդը դեռևս այնպես էր հագեցած ջարդված սրվակներից թափված օծանելիքի հոտով, որ լերդախտավոր կայմակամի գիշերային հանգիստը խափանվեց։ Գրգռիչ տեսիլներից կտրվում էր շունչը, և նա շատ ու շատ անքուն ժամեր անցկացրեց։

Արթնացավ, բայց դա ավելի սփոփիչ չէր, քան քունը։ Հազիվ էր փարատվել ադամամուրը, երբ կայմակամը վեր թռավ հրեշավոր պայթյունից։ Կիսամերկ դուրս նետվեց։ Ավերածությունը մեծ էր։ Ռումբն ընկել էր ուղիղ տան առաջ։ Գետինը ծածկված էր բոլոր պատուհանների փշրված ապակիների բեկորներով։ Օդային ալիքը դռան մի փեղկը պոկել, շպրտել էր սանդուղքի տակ։ Պատերի մեջ խոր խոռոչներ էին գոյացել։ Չորս կողմը քարաշեղջեր, երկաթի ծռմռված կտորներ էին թափթփված։ Բայց ամենավատթար վիճակի մեջ էր հալեպցի շտաբսկապիտանը։ Ճակատագրի բերումով այդ տարաբախտ մարդը տնից դուրս էր եկել հենց այն վայրկյանին, երբ պայթել էր ռումբը։ Պատին

հենված՝ նստել էր։ Երկնագույն աչքերը մանկունակ արտահայտությամբ հառել էր դատարկ տարածության մեջ։ Խորը թառանչ էր արձակում, կարծես երազկոտ միտքը դեգերում էր անցյալի հեռաստաններում։ Արկի մի բեկոր խրվել էր աջ ուսի մեջ, իսկ մի այլ բեկոր վիրավորել էր ձախ ազդրը։ Անթաքիեի յուզբաշին պտտվում էր նրա շուրջը։ Սպայի հետ խոսում էր հավանաբար ոչ առանց խստության, քանի որ նա արիաբար չէր դիմանում վերքերի ցավին։ Բայց քոլաղազին չէր հնազանդվում այդ սաստումներին և դանդաղ թեքվում էր մի կողմի վրա։ Յուզբաշին շուռ եկավ, զայրացած գոռգոռաց սարսափահար արձանացած զինվորների վրա, թե չպետք է աչքները շռեն, այլ գնան բուժակ և սանիտարներ կանչելու։ Բայց դա այնքան էլ դյուրին գործ չէր։ Բուժակը Բիթիասումն էր, երրորդ վաշտում։ Յուզբաշին հրամայեց ներս տանել ծանր վիրավորին։ Քոլաղազուն պառկեցրին Ստեփանի անկողնու վրա։ Երբ նա սթափվեց, յուզբաշուն թախանձեց, որ սա իր մոտից չհեռանա մինչև վերքերը կապեն։

Կայմակամը, որը զինվորական խառնվածք բոլորովին չուներ, մարդկային հոսող արյուն տեսնելիս սոսկում էր, բայց երբ չէր տեսնում, այդ մասին դատում էր թեորետիկ սառնասրտությամբ։ Այժմ նա սուսուփուս, առանց կողքերը նայելու իջնում էր տան նկուղը։ Գաբրիելը դեռևս շարունակում էր հանգիստ ոմբակոծել շրջակայքը։ Հենց այդ պահին մոտերքից նոր պայթյուն լսվեց։

Ճակատագրի քմահաճույքով առաջին ռումբն ընկավ Բագրատյանի տան վրա և թշնամու գումարտակի հրամանատարին «մատ» հայտարարեց։ Բայց գուցե և դա պատահականություն չէր, այլ կենդանի մի դաս, որ աստված ո՛չ միշտ է ուժեղի կողմն անցնում։ Բոլոր դեպքերում թուրքական հրամանատարության շփոթությունը ավելի քան մեկ ժամով ուշացրեց հարձակումը։ Խաղողի և մրգի այգիներում խոնված զորքը, որն արդեն բարձրանում էր Դամլաջրքի ստորոտն ի վեր, ետ կանչվեց։ Ինչպես երևում է, հայ խոզերը սատանայական ճարպկությամբ կարողանում են հարվածել ամենակարևոր նպատակին և երնի հմուտ թնդանոթաձիգներ ունեն։ Ճիշտ է, հետևյալ ութ հարվածը նվազ հանճարեղությամբ հասցվեցին, քան առաջինը, բայց թե հովիտը բավականաչափ լայնարձակ էր, և արկերն ու ռումբերը ուր էլ ընկնում էին, զարհուրելի ավերածություն էին գործում։ Բիթիասում, Ազիրում ու Յողնուլուքում երեք տուն հրդեհվեց։ Ջափթիեների զորամասերից մեկի վրա, որտեղ մարդիկ իրար գլխի հավաքված՝ տափաշշերով սուրճ էին խմում, հանկարծ մի ռումբ ընկավ, ծանր վնաս պատճառեց։ Քաղաքացիական

իշխանության ներկայացուցիչները, իրենց ետևում թողնելով երեք սպանված և բազմաթիվ վիրավորներ, առանց որևէ գնդակ արձակելու ընդմիշտ հեռացան պատերազմի թատերաբեմից։

Գաբրիելը հրետանային կրակով գրեթե հասավ իր նպատակին՝ առանց պարզորոշ պատկերացում ունենալու իր հաջողության մասին։ Թուրքերի ռազմական գործողություններն այնքան խայտառակ ձևով տակնուվրա եղան, նոր բնակչությունն այնպես ահաբեկվեց, որ կանայք խումբ-խումբ սկսեցին փախչել դեպի Որոնտեսի դաշտավայրը, և որոշ ժամանակ անգործության մատնվեց գերագույն հրամանատարությունը։ Բավական ուշ, երբ հաուբիցային կրակն արդեն դադարել էր, թուրք զինվորները ոտքի ելան և մխրճվեցին Մուսա լեռան մոտակա թավուտների մեջ։

Բագրատյանը մի ակնթարթ իրեն կշտամբեց, թե ինչու բավականաչափ համարձակություն հանդես չբերեց։ Չէ՞ որ բոլոր տասնյակներից կարող էր առանձնացնել մոտ չորս հարյուր հոգի, իբրև հարվածային դիրքավորել թուրքերի առաջխաղացման ճանապարհին, ձախողել հարձակումը, ժամանակ շտալ ծավալվելու։ Բայց այդպիսի մի գործողություն կարող էր վտանգավոր ընթացք ստանալ, և նա վախեցավ դիմել նախապես չկշռադատված որևէ քայլի։ Այդ իսկ պատճառով իր մտահղացումը նույնիսկ չհայտնեց մյուսներին։ Համենայն դեպս ահ իրողությունը։ Հարյուր հարվածայինները հնարամիտ դիրքավորման և խիզախության շնորհիվ ավելի մեծ խուճապի մատնեցին լեռան բարձունքն ի վեր հևհև մագլցող թուրք զինվորներին, ավելի շատ վնաս հասցրին, քան կարելի էր անել բացահայտ գրոհով։ Խաչաձև անտեսանելի կրակը երկու, երեք անգամ ցած գլորեց թավուտի միջով դժվարությամբ առաջ շարժվող զորախմբերը, որոնք սարսափահար փախուստի էին դիմում, ցանուցիր լինում։ Առանձին խմբեր, իրենց հրամանատարներից կտրվելով, ամեն քայլափոխին մահվան սպասելով, զոհվայրից ցած էին գլորվում։ Դա վախկոտություն համարել չէր կարելի, քանի որ դրությունն անելանելի էր։

Այս ձախողակ փորձերից հետո յուզբաշուն ոչինչ չէր մնում անել, եթե ոչ վաշտերը ի մի հավաքել լեռան ստորոտում, դադար հայտարարել, տաք ճաշ պատրաստել։

Հարվածայիններն այդ ժամանակ կարող էին միանգամայն հանգիստ տիրանալ սպանվածների ու վիրավորների զենքերին ու փամփուշտներին, դրանք թաքցնել ապահով տեղերում։

Հրամանատարությանն ընկերացած կայմակամը դառնացած ու դժգոհ՝ յուզբաշուն դիմեց այսպիսի հարցով.

— Չե՞ք ուզում ձեռք քաշել Ձեր տակտիկայից։ Ես հավատացած եմ, որ այսպես երբեք չենք բարձրանա լեռը։

Յուզբաշին կատաղությունից սուրճի գույն ստացավ և գավառապետի երեսին գոռաց.

— Եթե կամենում եք, հրամանատարությունը կհանձնեմ Ձեզ, իսկ ինքս ետ կգնամ։ Այս ամբողջն ավելի շատ Ձեր գործն է, քան իմը։

Կայմակամն զգաց, որ այդ չորգլուխ սպայի հետ պետք է շատ զգույշ վարվել։ Ուստի վճռեց իսկույն վերջ տալ հանկարծակի ընդհարմանը։ Դեմքի քնկոտ արտահայտությամբ ուսերը վեր քաշեց.

— Դա ճշմարիտ է։ Պատասխանատուն ես եմ։ Սակայն իմացած եղեք, յուզբաշի, որ Դուք էլ իմ առաջ եք պատասխանատու։ Եթե գործը ձախողվի, երկուսիցս էլ հաշիվ կպահանջեն՝ թե՛ ինձանից, թե՛ Ձեզանից։

Այս բացահայտ ճշմարտությունից այնպես լուսավորվեց յուզբաշու միտքը, որ նա պապանձվեց։ Քանի որ Մուսա լեռով հետաքրքրվում էին ամենաբարձր դիվանատները, վալին, անգամ ներքին գործոց վսեմափայլ մինիստրը, ապա որևէ նոր անհաջողություն կարող էր յուզբաշուն կանգնեցնել ռազմական դատարանի առաջ, որը նրան ավելի նվազ ներողամտությամբ կպատժեր, քան մանկական այտերով բինբաշուն։ Հաջողության թե ձախորդության դեպքում նրա և կայմակամի ճակատագրերն անբաժանելի էին։ Ուստի և ուզած-չուզած պետք է համագործակցեին։ Այս նպատակից ելնելով՝ յուզբաշին չափազանց խաղաղասիրական մի դիտողություն արեց և գործի անցավ։ Հյուսիսում գտնվող վաշտը հրաման ստացավ՝ անմիջապես շարժվել հայկական լեռնաթամբն ի վեր։ Հարավաբերդից պետք է ձեռք քաշեին, եթե յուզբաշին չէր ուզում իր զորքը նոր քարավեժքի զոհ դարձնել։ Յուզբաշին իր շուրջը հավաքեց սպաներին, հրամայեց հայտնել դասակներին, որ առաջիկա հարձակման ժամանակ ետ նահանջող ամեն զինվոր անխնա կգնդակահարվի։ Այս դահճային հանձնարարությունը կատարելու նպատակով նախալեռան փոսերում երկար գծով շարեցին զափթիեներին ու չեթեներին։ Սրանց խստագույնս հրամայվեց անմիջապես կրակ բացել փախուստի դիմող հետևակի վրա։ Այս պարտականությունը զափթիեներն ու չեթեներն ստանձնեցին առանց մազաչափ անգամ տատանվելու։ Յուզբաշին միաժամանակ կազմեց երրորդ արգելակող գիծը։ Միրանիների մրգաստաններում և խաղողի այգիներում շարեց զինված գյու-

զացիներ, որոնց միացան կանանցից շատերը։ Յուզբաշու ահավոր հրամանն իր ներգործությունն ունեցավ։ Թուրք զինվորները, երկյուղից մղված, կատաղությամբ բարձրանում էին գահավեժ լեռնալանջն ի վեր։ Ոչ մի վայրկյան կանգ առնել չէին համարձակվում։ Աչքները փակած՝ հարվածայինների կրակի տակ առաջ էին նետվում։

Կեսօրը վաղուց էր անցել, երբ թուրքական երեք դասակ պաշտպանների փոթորկալից համազարկերի տակ կարողացան իրենց զցել բարձունքը։ Զորս տեղ, հայկական խրամատների դեմ-դիմաց բահերով փոսեր փորեցին, մտան մեջը, պատսպարվեցին նաև ժայռերի, քարակույտերի, ծառերի, հողաթմբերի ետևում։ Յուզբաշու զինվորներն իսկական հերոսությամբ, որի խթանը երկյուղն էր, հասան իրենց առաջին նշանակալից հաջողությանը։ Ինքը՝ յուզբաշին, մարտական անկեղծ խանդավառությամբ սուրը թափահարելով, գրոհի նետվող մի նոր ալիք էր առաջ մղում։ Այս զորախմբին ևս հաջողվեց դիրքավորվել հայկական խրամատների ներքևում, ընդլայնել հարձակման ճակատը։ Հաջողությունը թևավորեց, բորբոքեց թուրք ռազմիկներին։ Կատաղի կրակ բացեցին բոլոր պատահական կետերի վրա։ Առայժմ յուզբաշու համար միևնույն էր՝ գնդակները գիպչո՞ւմ են նպատակին, թե՞ ոչ։ Թող երկու ժամ շարունակ հայոթգիների ականջներն ու հոգիները կրակոցներից այնպես սասանվեն, որ նրանց հանգգնության հետքն անգամ չքանա։ Թող այդ ձևով նաև զգան, որ պետական իշխանությունն իր տրամադրության տակ բավականաչափ ռազմամթերք ունի և կարող է գնդակոծությունը շարունակել երեք օր։

Հայ պաշտպանները կաթվածահար եղածների պես կուչ էին եկել խրամատներում, իսկ նրանց գլխավերևում շառաչում էր հրետանային արկերի տարափը։ Բայց ամենից վատն այն էր, որ Քաղաքաձորի մոտակա դիրքերից արձակվող հարյուրավոր գնդակներ դիպչում էին ճյուղաշեն հյուղերին։ Երբեմն գում-դում կոչվող գնդակները սոսկալի վերքեր էին հասցնում մարդկանց։ Տեր-Հայկազունը հրամայեց անհապաղ հեռանալ Քաղաքաձորից։ Ոչ մարտունակ ժողովուրդը քաշվեց լեռան մյուս կողմը, որի ներքևում ծովն էր, պատսպարվեց ժայռերի ետևում։

Հայկական խրամատները երկարատև ու կատաղի գնդակոծության ենթարկելու ժամանակ յուզբաշին իր սպաների միջոցով իրար ետևից առաջ քաշեց պահեստային վաշտերը, զափթիեներին և, ի վերջո, զինված գյուղացիներին։ Դրանով ուզում էր ցուցադրել թուրքական գրոհող ուժերի գերակշռությունը, ուժեր, որ շարունակ համալրվում էին նորանոր զորախմբերով։ Դա կարող էր տպավորություն գործել։ Երկրորդ, երրորդ և չորրորդ զորաշղթաները դասավորված էին կրակային գծի ետևում, իրարից չնչին հեռավորության վրա։ Երբ սրանք հարվածայինների դարանակալ համազարկերից ցնցվեցին, բայց խելակորույս զորախմբերը գոռգոռալով բարձունքը՝ հասան, յուզբաշին առաջին զորաշղթային հրամայեց հարձակվել։ Հայերը, որոնք արդեն պաշտպանական մարտեր մղելու փորձառություն ունեին, կրակում էին ամենայն սառնասրտությամբ, իրենց բարձրադիր խրամատներից հարվածում անվստահ հարձակվողներին։ Թուրքերն ալիքի նման արագ-արագ առաջ էին շարժվում, բայց անհարմար տեղանքի պատճառով աննպաստ դրության մեջ էին ընկնում, դիրքավորվում հայկական խրամատներից բավական հեռու։ Չնայած իրենց թվական անհամեմատելի գերակշռությանը և կրակային ուժի գերազանցությանը, մահմեդականները մինչև իրիկնադեմ ոչ մի քայլ առաջ շարժվել չկարողացան։ Մինչդեռ հայերը իրենց պաշտպանական հատվածների խելացի դասավորության շնորհիվ առավել բարվոք գրության մեջ էին, և ճակատամարտը նրանց վրա ծանր չէր անդրադառնում։ Նրանց խրամատները տեղ-տեղ սուրանկյան ձև էին ընդունում։ Դրա հետևանքով էլ գրոհող թուրքերը գնդակոծվում էին թե՛ ճակատից, թե՛ թևերից։ Ավելացնենք և այն, որ հարվածայինները զանազան կողմերից անակնկալ, մահացու կրակի տարափ էին տեղում պահեստայինների գլխին, ահուդողի մեջ գցում։

Այս խիզախ, բայց մահացու և ապարդյուն գրոհների ընթացքում յուզբաշին գրեթե այնքան մարդ կորցրեց, ինչքան անարգանքով վտարված թշվառ բինբաշին իր վերջին պարտության ժամանակ։ Սակայն նա ավելի հաստակաշի մարդ էր. տեղի չէր տալիս։ Շարունակ անցնում էր գրոհող շարքերի գլուխը։ Միայն հրաշքի պետք է վերագրել այն, որ այդ հիրավի անվեհեր հրամանատարը մոտ հարյուր անգամ խուսափեց մահից։ Նա յուրայիններին մեծ մասամբ հրապուրում էր Կաղնուտի կողմը։ Բոլորի համար էլ արդեն պարզ էր, որ պաշտպանության ամենաթույլ կետը դա է։

Գաբրիելը թեթև գվարդիայի շնորհիվ դեռևս իր ձեռքին էր պահում պաշտպանության բոլոր թելերը։ «Երեք ժամ ևս,— մտածում էր նա,— և գիշերը վրա կհասնի»։ Գվարդիան օգնության էր հասնում նեղն ընկած հատվածներին, բարձրացնում էր վարանող զինվորների մարտական ոգին, դիրք բռնում հատվածների միջև ընկած բաց տեղերում, փոխարինում հոգնած տասնյակներին։

Գաբրիելն արդեն ուժասպառ, մեռելային դալկությունը դեմքին՝ շնչակտուր փռվել էր գետնին և հանգստանում էր։ Ավագյանը նստած

էր կողքին։ Պատանեկան զորախմբին պատկանող տասներկու կապավոր սպասում էին նրա հրամանին։ Հայկը դրանց հետ էր։ Ստեփանը չկար։ Ամեն վայրկյան լուրեր էին բերում։ Մեծ մասամբ Հյուսիսային լեռնաթամբից, որը մինչ այդ դեռևս դժվար կացության մեջ չէր ընկել։ Բայց, ինչպես երևում էր, թուրքերը փոխել էին իրենց մտադրությունը և նախապատրաստվում էին գլխավոր հարվածը հասցնել հյուսիսում։ Ջաուշ Նուրհանի ուղարկած լուրերը հետզհետե նյարդային բնույթ էին ստանում։ Ոչ միայն յուզբաշին, այլև ամբողջ սպայակույտը հավաքվել էր Հյուսիսային լեռնաթամբի հանդիպակաց բարձունքի թաքստոցների ետևում։ Հեռադիտակով դրանց պարզ ու որոշակի տեսել էին։ Գաբրիելը վճռեց հնարավորության սահմաններում խնայել գվարդիան, այսինքն՝ վերջին ուժը, թույլ չտալ, որ առանձին անհեռատես ենթասպաներ դա կռվի մեջ նետեն իրենց հայեցողությամբ։ Լեռնաթամբն ամենապահով հատվածն էր։ Ի՞նչ կարիք կար օգնական ուժեր ուղարկելու, երբ ճակատամարտը դեռևս չէր սկսվել։ Գաբրիելի կարծիքով շատ ավելի կարևոր էր մնալ Կաղնուտի վտանգավոր հատվածում, կանխել հնարավոր աղետը։ Նա փակ աչքերով լսում էր լեռնաթամբից եկող առատ լուրերը և կարծես ոչ մի ուշադրություն չէր դարձնում։

Դադար։ Կրակը լռեց։ Գաբրիելը տեղի տվեց իր հոգնածությանը։ Թերևս այս հոգևոր ու մարմնական թուլությունը պատճառ դարձավ, որ նա համենայն դեպս ընկնի յուզբաշու թակարդը։

Հրաձգության արձագանքները Ռիվիերա էին հասնում ամբողջ սաստկությամբ։ Կրակոցների շաչն ու շառաչն այնպես չափազանցված էին անդրադարձվում, այնքան մոտ էին թվում, որ Ժուլիեթն ու Գոնզագը կարծես կրակի ցանցի մեջ լինեին, մինչդեռ իրականում ճակատամարտը բավական հեռու էր։

Ժուլիեթն ամուր բռնեց Գոնզագի ձեռքը։ Հույնն իր ամբողջ էությամբ վեր էր ածվել լարված լսողության։ Նստած էր անշարժ, ձգված.

— Կարծեմ ամեն կողմից մոտենում են։ Գոնե այդպես է թվում...

Ժուլիեթը ոչինչ չասաց։ Շաչն ու շառաչն այնքան օտար էին, կարծես երազի մեջ էր լսում, կարծես ո՛չ հասկանում էր, ո՛չ վախենում։ Գոնզագը փոքր-ինչ առաջ թեքվեց, որ ավելի լավ տեսնի խորխորատի ժայռերին բախվող ալիքները։ Ծովն այդ օրն արտասովոր հուզված էր, և նրա հեռավոր, ցասումնալից ձայնը միախառնվում էր հրաձգության պտուտահողմին։ Մարիսը մատնացույց արեց ծովեզերքի հարավային երկայնքը.

— Ժուլիեթ, մենք պետք է ավելի շուտ գնացած լինեինք։ Հիմա սպիրտի գործարանի մոտ, սքանչելիորեն խաղաղ բնակարանում կըսպասեինք...

Ժուլիեթը սարսռաց։ Բերանը բացեց, բայց ստիպված եղավ երկար ժամանակ որոնել սեփական ձայնը, իբրև կորած մի բան.

— Նավը կմեկնի քսանվեցին... Այսօր ամսի քսաներեքն է... Ես դեռ երեք օր ժամանակ ունեմ...

— Իհարկե,—հանգստացրեց Գոնզագը քնքուշ ներողամտությամբ,— դու դեռ երեք օր ունես... Ոչ մի օր քեզանից չեմ խլի... Եթե ուրիշները չխլեն...

— Ա՜խ, Գոնզագ, սիրտս տարօրինակ կերպով հանգիստ է։ Բոլորովին անհասկանալի է...

Խոսքը չավարտած՝ լռեց։ Նրան անհնարին թվաց նկարագրել մի հոգեվիճակ, որն ինքը բնավ չէր կարողանում վերծանել։ Դա կարծես ինչ-որ փափուկ, չափազանց դյուրաբեկ բան էր, որի ամենանազուկ մասը պահպանող պատյանից դուրս էր քաշված... Մարմնի անդամներն իրենց ուրույն կյանքով էին ապրում և արդեն չնչին առնչություն ունեին ընդհանուր զգացողության հետ։ Թվում էր, թե կարող է պոկել իր թևերն ու ոտքերը, կսկծալի ափսոսանքով դրանք ամփոփել սնդուկի մեջ։ Առաջներում, իր լուսավոր ու ողջախոհ հայրենիքում, Ժուլիեթն անգործության չէր մատնվի։ Կասեր. «Ինձ հետ ինչ-որ բան է կատարվում» և հավանաբար թևի տակ կդներ ջերմաչափը։ Այժմ գլուխ էր կոտրում, թե ինչի՞ց է, որ համենայն դեպս իր սոսկալի վիճակը հաճելի է, անխռով։ Այդ իսկ պատճառով երկու անգամ կրկնեց.

— Անհասկանալի է...

Գոնզագը ժպտալով ու լրջադեմ գգվեց ֆրանսուհուն.

— Խե՜ղճ Ժուլիեթ, ես լավ եմ հասկանում քեզ... Առաջին անգամ գլուխդ կորցրել ես տասնհինգ տարի առաջ, երկրորդ անգամ՝ այս քսանչորս օրում։ Այժմ քո մեջ չես կարողանում գտնել ո՛չ իսկական, ո՛չ էլ շինծու Ժուլիեթին։ Տեսնո՞ւմ ես, ես ոչ մի ժողովրդի չեմ պատկանում. ո՛չ հայ եմ, ո՛չ ֆրանսիացի, ո՛չ հույն, ո՛չ ամերիկացի, այլ ոչինչ, ուստի և ազատ։ Ինձ հետ լինելով՝ դու հեշտությամբ կըմբռնես այս իրողությունը։ Հնի հետ պետք է խզես կապերդ...

Ժուլիեթը Գոնզագին նայում էր առանց որևէ բան հասկանալու։ Հրաձգությունը սաստկացավ։ Այլևս հնարավոր չէր հանգիստ մնալ նստած։ Գոնզագն օգնեց Ժուլիեթին, որ վեր կենա։ Ֆրանսուհին թմրադեղ ընդունածի պես օրորվում էր։ Հույնը կարծես անհանգստացավ.

— Ժուլիեթ, մենք պետք է կշռադատենք մեր անելիքը։ Իրադարձությունը վստահություն չի ներշնչում։ Ի՞նչ է մտադրությունդ։

Ժուլիեթը ձեռքերով ինչ-որ անհասկանալի շարժում կատարեց։ Կարծես ուզում էր փակել ականջները։

— Հոգնած եմ... Ուզում եմ պառկել...

— Ժուլիեթ, դա անհնարին է։ Լսիր։ Ամեն վայրկյան կարող է դրժբախտություն պատահել։ Առաջարկում եմ այստեղից հեռանալ և ներքևում սպասել, թե ինչ է կատարվելու...

Կինը կամակորությամբ ցնցեց գլուխը.

— Ո՛չ, ավելի լավ կլինի, եթե ես վերադառնամ իմ վրանը։

Գոնզագը գրկեց նրա ազդրը, փորձեց կամացուկ հրապուրել իր կողմը։

— Մի՛ բարկանա, Ժուլիեթ։ Ամեն ինչ պետք է որոշակիորեն ծանր ու թեթև անել։ Կես ժամ հետո թուրք զինվորները կարող են մտնել Քաղաքաձոր։ Ի՞նչ, Գաբրիել Բագրատյա՞նը։ Ի՞նչ գիտես, թե նա դեռևս ողջ է։

Չորս կողմ տիրող որոտն ու ոռնոցները կարծես հաստատում էին Գոնզագի երկյուղը։ Բայց Ժուլիեթը սթափվեց իր թմրածությունից, վերադարձան նախկին եռանդն ու կամքի ուժը։

— Ուզում եմ տեսնել Ստեփանին։ Ուզում եմ, որ Ստեփանը լինի ինձ հետ,— գոչեց նա գրեթե զայրացկոտ պոռթկումով։

Որդու անունը տալուն պես փարատվեց անիրական ահարկու աշխարհի քողը, որով ամեն կողմից պարուրված էր Ժուլիեթը։ Հանկարծ մայրությունը դարձավ անխորտակելի պատերով հաստատուն օթևան, որը կարող էր փակ մնալ ամբողջ աշխարհի դեմ։ Նա երկու ձեռքով կառչեց Գոնզագից, անհամբերությամբ առաջ հրեց.

— Իսկույն այստեղ բերեք Ստեփանին, լսո՞ւմ եք, խնդրում եմ։ Ժամանակ մի կորցրեք, գտեք որդուս։ Սպասում եմ, սպասում եմ...

Մի ակնթարթ Մարիսը մտածմունքի մեջ ընկավ, ապա ասպետաբար զսպեց իրեն, առանց առարկելու խոնարհեց գլուխը.

— Լավ, Ժուլիեթ, եթե այդպես ես կամենում։ Ամեն ինչ կանեմ, որ Ստեփանին գտնեմ, հնարավորին չափ շուտ բերեմ, և դու երկար չսպասես։

Իրոք, կես ժամ չանցած Գոնզագը վերադարձավ, իր հետ բերելով ոտքից գլուխ կեղտի մեջ կորած, քրտնակոլոլ Ստեփանին։ Տղան դրժկամությամբ էր նրան հետևում։

Ժուլիեթը նետվեց որդու կողմը, գրկեց, ցնցվելով լացի անարցունք

ջղաձգությունից։ Տղան այնքան էր հոգնած, որ երբ երեքով նստեցին, անմիջապես քնեց։

Գաբրիել Բագրատյանը, անտարակույս, ապացուցեց, որ ինքը՝ մահվան սպառնալիքի տակ ասպարեզ մտած արվեստագետը, օժտված է զորավարի իսկական ձիրքով։ Նա թույլ տվեց մի սխալ, որը հաճախ թույլ են տալիս նաև հայտնի գեներալները, վճիռ կայացնելիս գերադասելով ճակատամարտի այս կամ այն հատվածը։ Գաբրիելը ևս գերագնահատեց իր պաշտպանական մեծ պլանի գլխավոր կետը՝ հյուսիսային հատվածը, ուշադրություն չդարձրեց օգնություն խնդրող Զաուշ Նուրհանի բազմաթիվ լուրերին և տեղի տվեց միայն հետագայում։

Քանի որ թուրքերը չկրկնեցին իրենց հարձակումը ո՛չ Կաղնուտի, ո՛չ էլ մյուս հատվածների կողմից, քանի որ ամենուրեք հրաձգությունը դադարեց, և անսպասելի մոլեգնությամբ կենտրոնացավ հյուսիսում, ապա ոչ մի կասկած չմնաց, որ թշնամին, իր ամբողջ ուժերն ի մի հավաքելով, փորձում է պաշտպանության գիծը ճեղքել Հյուսիսային լեռնաթամբի հատվածում։ Այս հիման վրա Բագրատյանը կանչեց ռազմաճակատի երկայնքով մեկ սփռված թեթև գվարդիայի տասնյակները, տարավ հյուսիս։ Այստեղ, թուրքերի գրոհին սպասելով, դիրքավորվեցին երկրորդ խրամատում և ժայռապարսպի եռևում։ Գաբրիելն ամեն վայրկյան սպասում էր թշնամու հարձակմանը, քանի որ բոպե առ բոպե կրակն ուժգնանում էր, վրա էր հասնում երեկոն։ (Հաուբիցներն անգործության էին մատնված. Բագրատյանից բացի, ոչ ոք չէր կարող դրանք գործի դնել)։

Սարգիս Կիլիկյանը, իբրև Կաղնուտի հրամանատար, օրվա ընթացքում իրեն դրսևորեց արիաբար. հինգ անգամ ետ շպրտեց թշնամու գրոհները։ Որոշ ժամանակ այնպես էր թվում, թե անտեսելով իրենց բոլոր կորուստները, թուրքերը վճռել են ճակատը ճեղքել հենց այստեղ, քանի որ դա էր գաղթականի կենտրոնը տանող բանալին։

Ճակատամարտի առաջին ժամերին, Կիլիկյանի տոկունությանը լիովին հավատ չընծայելով, Գաբրիելը մեծ մասամբ մնում էր Կաղնուտի մոտերքում։ Այստեղ նա իր տասնյակներով բազմիցս հարձակում գործեց թուրքերի թևի վրա։ Սարգիս Կիլիկյանի գործը դյուրին լինելուց շատ էր հեռու։ Գլխավոր խրամատը բավական կարճ էր։ Եզրային պաշտպանության խրամատներն՝ էլ այնքան նպաստավոր չէին և հարևան հատվածներից մոտ մի քանի հարյուր քայլ հեռու էին։ Դրանց արանքում ընկած բաց տեղերը հարձակման մյուս կետերի պես անմատչելի չէին.

այստեղ ո՛չ լեռնալանջն էր գահավեժ, ո՛չ ժայռապարիսպներ կային, ո՛չ էլ անանցանելի թավուտներ։ Ռուսի անձնակազմը ևս համեմատաբար փոքրաթիվ էր՝ ութ տասնյակ, այն էլ տեղանքի անհարմար դիրքի պատճառով ցանուցիր պառկած։ Համենայն դեպս օրն անցավ առանց զգալի կորուստների։ Սպանվեցին երկու և վիրավորվեցին վեց հոգի։

Կիլիկյանի էությունից՝ մեռելային հանդարտությունից ու անտարբերությունից ինչ-որ բան փոխանցվել էր անձնակազմին։ Ամեն ագամ, երբ թուրքերը գրոհում էին, հայ զինվորները կրակում էին այնքան պաղարյուն (ուրիշ ի՞նչ կերպ կարելի է ասել) հաստատակամությամբ, կարծես նրանց համար ոչ մի տարբերություն չկար կյանքի ու մահվան միջև, կարծես երկու դեպքում էլ իրենց կարող էին զգալ սեփական տանը, և նրանց հոգն էլ չէր, թե ապագայում այս երկու հանգրվաններից ո՞ր մեկն է իրենց ապաստանելու։

Կիլիկյանը կրակելիս երբեք չէր հանգցնում այն լավորակ գլանակները, որ Բաղրատյանն էր նվիրել։ Իսկ այժմ, երկարատև, արյունահեղ ընդհարումից հետո, նա իր շոր ու ցամաք մեջքը հենել էր խրամատի պատին, անթարթ նայում էր կոճղերով ու ծառաբներով, թփերով ու գաճաճ սոճիներով ծածկված մարտադաշտի առաջնամասին, որը իջնում, կորչում էր Կաղնուտի խորքում, ուր արդեն վխտում էին թուրք զինվորների հոծ խմբերը։ Գաբրիելը, ի՛նչ խոսք, առաջին իսկ օրերին կտրել էր տվել լեռան այս եզրի ծառերն ու բարձր թփերը։ Կիլիկյանի երիտասարդական, բայց և մեռելային գլուխն անշարժ հանգչում էր ուսերի վրա։ Ագաթափայլ բութ աչքերում ցոլանում էր այն մեծ արվեստը, որով կարողանում էր կյանքի թրթիռը հաստնել նվազագույն աստիճանի։ Ռուսն իր կողոպտած համազգեստով, կախված ուսերով և աղջկական նեղ իրանով, մի բան, որ հատկապես ընդգծում էր ամուր կապված գոտին, նման էր վայելչատես սպայի։ Կողքին կանգնածների հետ ոչ մի բառ չէր փոխանակում։ Սրանք էլ լուռ էին։ Բոլորն իրենց աչքերը հառել էին ծառերի ու թփերի ստվերներին, որոնք վայրկյան առ վայրկյան երկարում էին, նեղանում, ոսկեզօծվում, իբրև խորհրդավոր արարածներ։ Այդ պահին Դամլաջրքի բոլոր հայ տղամարդկանց և կանանց, գուցե անգամ դեղագործ Գրիգորին ու Կիլիկյանին, միայն մի միտք էր հուզում՝ Բաղրատյանի միտքը. մի ժամ հետո արևը մայր կմտնի։

Հյուսիսում կրակն արդեն դառնում էր համազարկային։ Մինչդեռ ներքևում անտառն ու լեռը խորասուզվել էին խաբուսիկ անդորրության մեջ։ Ճակատամարտից հոգնած մարդիկ արդեն փակում էին աչքերը, որ գեթ կանգնած վիճակում մի պահ քնեն։ Նրանց համակել էր մի տարօրինակ զգացում։ Թվում էր, թե այդ գողացված թմբիրի շնորհիվ ժամանակն արագացնում է իր ընթացքը, և փրկարար գիշերը գրկաբաց նետվում է ընդառաջ։ Քուն մտնողների թիվը գնալով ավելանում էր։ Ի վերջո երեք խրամատից ոչ մեկում արթուն մարդ չմնաց։ Միայն հրամանատար Կիլիկյանն էր հղկված ապակի հիշեցնող իր անկենդան աչքերով անշարժ դիտում Կաղնուտի սևաթույր եզրը։ Հետևյալ րոպեներին պատահածը պատկանում է այն առեղծվածների թվին, որ հնարավոր չէ մեկնաբանել և հիմնավորել այս կամ այն օրինաչափությամբ։ Մայրահեղ դեպքում մարդ կարող է մեղադրել Կիլիկյանի էության մեջ բույն դրած անըմբռնելի լեթարգիան, այն հատկությունը, որն իբրև անհամար սառապանքների դեմ ուղղված ինքնապաշտպանության միջոց, կյանքն սկսել էր ձևավորել տակավին տասնմեկամյա պատանու մեջ (երբ նա պառկած էր իր արնաշաղախ մոր մարմնի տակ)։ Բոլոր դեպքերում Կիլիկյանը տեղից չշարժվեց, աչքերի արտահայտությունը չփոխվեց, երբ անտառի ներքևից դուրս սողացին թուրք հետևակայիններից մի քանիսը, ապա նրանց հետևից աստիճանաբար հայտնվեցին ամբողջ զորախմբեր։ Ոչ մի կրակոց չազդարարեց, թե գրոհ է սկսվում։ Թվում էր, թե թուրքերը Կաղնուտի սև ու սրածայր պարսպից չէին ուզում հեռանալ, ահով ու շփոթված սպասում էին պաշտպանների կրակոցներին։ Քանի որ դա տեղի չունեցավ, մոտ երեք հարյուր հոգի առաջ նետվեցին։ Վազում էին, ամեն արգելքի ետևում կուչ գալիս, սպասում հայերի գնդակոծությանը։ Սրանց մի մասը դեռևս քնած էր խրամատներում, մի մասն էլ արթնացել էր։ Հրացանները պատրաստ պահած՝ նայում էին առջևում լուռ ծավալվող տեսարանին։ Այդ վայրկյանին հուրհրատեցին իրիկնային արևի ոսկեփայլ շողերը, կոտորակվելով հարյուր հազարավոր կուրացուցիչ բեկորների ու ցայտքերի։ Սպաների թավամազ փափախների վրա պսպղացին կիսալուսինները։ Զարմանալի էր, որ ռազմական արշավանքի ժամանակ զինվորական գդակներ չէին կրում։

Հանգչող արևի շինծու ոսկուց կուրացած հայերը հրացանները վայր դրած, ակնապիշ նայում էին Կիլիկյանին, սպասելով հրամանի։ Եվ ահա պատահեց անբացատրելին։ Փոխանակ, ինչպես միշտ, հանգիստ ու անվրդով կրակ բացելու ազդանշան տար, հիշեցներ ճիշտ նշանառության կանոնը, սուլիչը տաներ դեպի բերանը, Ռուսը մտախոհ դանդաղկոտությամբ դուրս եկավ խրամատից։ Այդ շարժումը տասնյակներին թվաց հրաման։ Ոմանք հոգնածությունից շփոթված, ոմանք հրամանատարի անհայտ մտադրության վրա վստահ՝ իրար ետևից դուրս թռան, կանգնեցին խրամատի եզրին։ Թուրքերը, որոնք արդեն հիսուն քայլ առաջ

էին սողացել դեպի որսը, հանկարծակիի եկան, փովեցին գետնին։ Լեղաճաք եղան։ Կարծեցին, թե կատաղի գրոհ է սկսվելու։ Բայց Սարգիս Կիլիկյանը հանգիստ կանգնել էր միջին խրամատի դիմաց, ո՛չ առաջ էր գնում, ո՛չ ետ, ո՛չ հրահանգ էր տալիս, ո՛չ ազդանշան։ Ձեռքերը գրպանած՝ արձանացել էր։ Մինչև դժբախտ պաշտպաններն ուշքի կգային, թուրք սպաներից մեկը երկար ու ձիգ գոռոցով ինչ-որ հրաման տվեց, և երեք հարյուր մաուզերյան հրացան իսկույն ահռելի կրակ տեղացին տիկնիկների պես շարված մարդկանց վրա, որոնք պարզ գծագրվում էին մթնշաղով պարուրվող երկնքի ֆոնին։ Մի քանի ակնթարթ հետո անձնակազմի մեկ երրորդը աղաղակելով ու հառաչելով գալարվում էր Մուսա լեռան արյունաներկ հողի վրա։ Կիլիկյանը, ձեռքերը դարձյալ գրպանների մեջ թաղած՝ զարմանքով ու մտասույզ նայում էր։ Թուրքական կապարը նրան չէր դիպչում. կարծես շատ անշուք ու հասարակ բան կլիներ, եթե այդ բացառիկ ճակատագիրն ավարտվեր բաց դաշտում, կռվի մեջ։ Երբ ի վերջո ձեռքը բարձրացրեց և իր մարտիկներին դիմելով՝ ինչ-որ բան գոռաց, արդեն շատ ուշ էր։ Մնացած անձնակազմի ընդհանուր իրարանցման ալիքը նրան իր հետ տարավ։ Փախչող զինվորները կանգ առան միայն այն ժամանակ, երբ արդեն քարապատնեշի կեսն անցել էին։ Դրանք Քաղաքաձորին կպած չորս քարակույտեր էին՝ սեղանաձև ու անկյունավոր։ Մինչև այստեղ պատսպարվելը խումբի մատնվածներն իրենց ետևում թողեցին քսաներեք սպանված և վիրավոր։ Թուրքական հետևակն աննկարագրելի գոռում-գոչումով գրավեց լքված խրամատները։ Նրանց օրինակով առաջ մղվեցին պահեստայինները, զափթիեները, չեթեներն ու զինված գյուղացիները։ Մահմեդականներին հետևում էին բազմաթիվ խիզախ կանայք։ Երբ Կաղնուտի ծառերի տակ թաքնված օսմանուհիները տեսան յուրայինների հաջողությունը, խելացնոր վհուկների պես դուրս վազեցին անտառից, ձեռք-ձեռքի տված՝ շղթա կազմեցին, և նրանց կոկորդներից պոռթկաց երկարաձիգ, յուրօրինակ մի ճիչ։ Դա զիլգիթն էր՝ իսլամուհիների հինավուրց մարտակոչը։ Այս հրահրող աղաղակը սանձազերծ արեց թուրք տղամարդկանց մեջ նստած սատանային։ Նրանք այլևս չէին մտածում ո՛չ կյանքի, ո՛չ էլ մահվան մասին. իրենց հանդուգն հավատի ներշնչմամբ խելահեղ թափով սլանում էին դեպի խեղճ ու կրակ քարապատնեշը։ Այլևս չէին կրակում. առաջ էին պարզել մերկացրած սվինադաշույնները։

Այս դժբախտության մեջ հայորդիներին զորավիգ եղավ մի քանի բարեհաջող դիպված։ Երբ նրանք տեսան, որ թուրքերը վիրավորներին

սվինահարում են, տրորում զինվորական կոշտ սապոգներով, երկին համակվեցին իրենց անխուսափելի ճակատագրի շնորհած սառնասրտությամբ և հաստատակամությամբ։ Առանց տատանվելու պառկեցին խճաքարերի ետևը, հանդարտ սկսեցին տեղալ մահացու հարվածներ, ինչպես միշտ։ Ժամանակ շահեցին։ Մայր մտնող արևի կուրացուցիչ ճառագայթներն ընկնում էին թուրքերի դեմքերին, մինչդեռ հայերի թիկունքն էին լուսավորում։ Այս դժբախտության հետ կապված մյուս բարեբախտությունը թուրքերի մոլորությունն էր։ Գրոհողներն իրենց սպաներից առաջ ընկնելով, լքեցին դիրքերը, գլխապտույտ հաջողությունից արբեցած՝ փորձեցին ճեղքել ճակատային գիծը։ Պաշտպանները ևս դուրս եկան խրամատներից, աջ ու ձախ կողմերից խուժեցին աղետի վայրը։ Հետևանքն այն եղավ, որ սկսվեց սվինամարտ, իրարանցում։ Բարեկամ թե թշնամի առանց իրար ճանաչելու խոցում էին միմյանց (հայերից շատերը թուրքերից գրաված համազգեստներ էին կրում)։ Ամենուրեք մոլեգնում էր արհավիրքը։ Երկար տևեց արյունահեղ ճակատամարտը, շատ ու շատ մարդիկ ընկան, մինչև վերջապես իրարից պատվեցին հակառակորդները, և թուրքերին իրենց թվական գերակշռության շնորհիվ հաջողվեց հայերին քշել դեպի Քաղաքաձոր։

Բագրատյանը հազիվ կարողացավ ժամանակին վրա հասնել, իր հոգնատանջ գվարդիայով գաղթականից վանել սոսկալի աղետը։ Թուրքերը ետ մղվեցին, բայց մինչև իրենց գրաված խրամատները, որ ամուր պահում էին իրենց ձեռքին։

Սակայն ամենամեծ փրկությունն ամպամած ու անլուսին գիշերն էր, որն արդեն արագ վրա էր հասնում։ Յուզբաշին այլևս չէր հանդգնի նոր, թերևս վճռական հարված հասցնել։ Մթության մեջ հայերը, որոնք Դամլաջրքն իրենց հինգ մատի պես գիտեին, կարող էին ետ շպրտել մի ամբողջ դիվիզիա, չնայած մեծ քանակությամբ զոհեր էին տվել։

Կայմակամը վիթխարի կորուստների պատճառով գլուխը կորցրած՝ որոշակի չգիտեր, թե ինքն ի՞նչ շահ ունի այդ անօգուտ հաղթանակից։ Յուզբաշին հանդիսավոր երդում տվեց, որ մինչև առավոտ ամեն ինչ վերջացած կլինի։ Համառոտ նկարագրեց իր մարտական նոր պլանը։ Թուրքական զորախմբերը պաշտպանության հատվածներից աննկատելիորեն ետ քաշվեցին մինչև փոքր քարակարկառները։ Բոլոր զինված ուժերը պատրաստվեցին գիշերելու Կաղնուտի լայն ստորոտում։ Մատդիր էին վաղ առավոտյան հարձակման անցնել իրենց գրաված խրամատներից, հզոր բարանի նման խորտակել վերջին անշան խոչընդոտը։

Բայց դա չխանգարեց, որ նոր տունուտեղի տեր դարձած մահմեդական գյուղացիները լքեին բանակատեղին և գնային գիշերելու սեփական հարկի տակ։

Երեկոյան մոտ ժամը վեցին պատվելի Արամը քրտնաթոր ու հևասպառ իրեն գցեց կնոջ վրանը, ագահորեն երեք բաժակ ջուր խմեց, փընչալով ասաց.

— Իսկուհի՛, Օվսաննա՛, պատրաստ եղեք։ Դրությունը լավ չէ։ Հենց որ պետք լինի, կգամ ձեզ տանելու։ Մենք պետք է ժայռերի մեջ թաքստոց գտնենք... Հիմա գնամ հայրիկին փնտրելու...

Առանց շունչը տեղը բերելու, Արամը կրկին անհետացավ։ Իսկուհին, որն իր խոստման համաձայն ամբողջ օրը վրանից դուրս չէր եկել, կարելույն չափ օգնեց Օվսաննային, երբ սա տնքտնքալով ուզեց տեղից բարձրանալ, երեխային տվեց ջրախառն կաթի շիշը, ապա աջ ձեռքով մահճակալի տակից դուրս քաշեց իրենց ընտանիքին պատկանող սակավաթիվ կապոցները։ Բայց հանկարծ գործը կիսատ թողնելով, առանց մի բառ ասելու, դուրս եկավ վրանից և հեռացավ...

Մայրամուտից մեկ ժամ էր անցել։ Ահա Քաղաքաձորի խորանի մեծ հրապարակը։ Այստեղ ամբողջ խոտը տրորված էր։ Ավագների խորհրդի անդամները հավաքվել էին ոչ թե կառավարչատանը, այլ նստել էին գետնին, սուրբ խորանի առաջ։ Ժողովուրդը խռնվել էր նրանց շուրջը։ Ճյուղաշեն խրճիթների արանքում ընկած նեղ փողոցներն ամայացել էին։ Գերեզմանային լռության մեջ երբեմն-երբեմն լսվում էին միայն հիվանդանոցում տառապող ծանր վիրավորների հեծեծանքները։ Վերջին ճակատամարտում սպանվածների մի մասը կարողացել էին բերել գաղթական։ Դրանք այժմ հանգչում էին պարահրապարակի տախտակամածի վրա՝ ծածկված կապերտներով ու վերմակներով։ Ոչ մի լույս, ոչ մի կրակ։ Ավագների խորհուրդն արգելել էր բարձրաձայն խոսել։ Բազմության մեջ այնպիսի լռություն էր տիրում, որ ավագների ամեն մի շշուկն անգամ հնարավոր էր պարզ լսել։ Ինքնատիրապետումը չէր կորցրել միայն Տեր-Հայկազունը։ Նրա ձայնը հնչեց հանդարտ և զգուշավոր.

— Մեզ միայն մի գիշեր է մնացել՝ ուժ խավար ժամ...

Նրա միտքը չհասկացան։ Նույնիսկ Արամ Թովմասյանը, որի սիրտը տակնուվրա էր լինում Օվսաննայի, Իսկուհու և երեխայի մասին մտածելիս, այսօր զանազան տարօրինակ պլաններ էր առաջարկում։ Բոլորին լրջորեն ասում էր, թե ամենից լավն այն կլինի, եթե գաղթական

կայանից հեռանան, ապաստան որոնեն ծովակողմյան ժայռախոռոչներում, կրաքարի անձավներում ու ծերպերում։ Բայց այս առաջարկությունը շատ քիչ կողմնակիցներ ունեցավ։ Երևում էր, որ մարդիկ տարօրինակ կերպով ընտելացել էին իրենց նոր բնակավայրին, ուզում էին այն պաշտպանել մինչև վերջին հնարավորությունը։ Ջորս կողմից բոլորն սկսեցին վիճաբանել։ Դատարկ ասեկոսեներով կարող էին իզուր վատնել իրենց տրամադրության տակ մնացած գիշերային ժամերը։ Բազմության միջից երբեմն լսվում էին կանացի զուսպ հառաչանքներ։ Այդ օրը հարյուրից ավելի ընտանիքներ կորցրել էին իրենց հարազատներին, եթե հաշվելու լինենք նաև թուրքերի ձեռքն ընկած վիրավորներին։ Ոչ ոք չգիտեր, թե դեռևս քանի ծանր վիրավոր կար մնացած խրամատներում։ Բոլորին չէին կարողացել բերել գաղթական։

Ծանրաշունչ գիշերը Մուսա լեռան վրա կախվել էր իբրև ցածրիկ առաստաղ։ Երբ շշուկները դարձան ավելի սնամեջ ու անկապ, Գաբրիելը լսեց Տեր-Հայկազունի ազդու ձայնը.

— Պարոն Բագրատյան, մեր հույսը միայն այս գիշերն է։ Պե՞տք է օգտվենք գիշերվա ուժ կարճատև ժամերից։

Գաբրիելը ձեռքերը գլխի տակ դրած՝ անթարթ հայացքը սևեռել էր դեպի վեր։ Ոչ մի կերպ չէր կարողանում հաղթահարել քունը։ Ամեն ինչ խորասուզվում էր անորոշության մեջ։ Անիմաստ խոսքերը ջրի ճողփյունի պես դիպչում էին ականջին ու անցնում։ Նույնիսկ այնքան ուժ չուներ, որ պատասխաներ վարդապետի հարցին։ Ինչ-որ անհասկանալի բան քրթմնջաց։ Հանկարծ զգաց, որ մի փոքրիկ, սառը ձեռք շոյում է իր դեմքը։ Այնքան մութ էր, որ Իսկուհուն պարզ տեսնել չկարողացավ։ Աղջիկը երկար ժամանակ խրամատից-խրամատ էր թափառել, մինչև վերջապես կարողացել էր գտնել նրան։ Նստեց կողքին, ավագների խորհրդի անդամների ներկայությամբ։ Կարծես դա այդպես էլ պետք է լիներ։ Թվում էր, թե աղջիկն այդ վերջին և միակ գիշերվա խավարում չի քաշվում նույնիսկ իր եղբորից։

Իսկուհու սառը ձեռքը Գաբրիելի վրա սթափեցնող և կենարար ազդեցություն թողեց, ինչպես աղբյուրի թարմ ջուր։ Ընդարմացումը սկսեց տեղի տալ, միտքը նորից սկսեց գործել։ Գաբրիելը նստեց, աղջկա ձեռքը դրեց իր ձեռքին, առանց ուշադրություն դարձնելու, թե մթության մեջ որևէ մեկը չի՞ նկատի այդ քնքշանքը։ Իսկուհու ձեռքը կարծես փարատեց նրան կաշկանդող թմբիրն ու խոնջենքը։ Նա խորը շունչ քաշեց։ Կուրծքը պրկվեց։ Ամբողջ մարմնի մեջ զգաց այն առույգությունը, ինչ կարող է զգալ իր ծարավը հագեցրած տոչորվող մարդը։

Հանկարծ խորհրդի անդամները լռեցին։ Անծանոթ ձայներ էին մոտենում։ Բոլորը վախեցած ոտքի թռան։ Թուրքե՞ր էին։ Մթության մեջ բազմաթիվ լապտերներ էին փայլփլում։ Դրանք հերթափոխված հարվածայիններն էին. տուն էին վերադառնում։ Ուզում էին հրահանգներ ստանալ վաղվա համար։ Հայտնեցին, որ իրենցից միայն մի հոգի է սպանվել, երկու հոգի էլ գերի են ընկել։ Դիրքերը, ինչպես միշտ, իրենց ձեռքին էին պահել։ Միաժամանակ տեղեկացրին, որ թուրքական վաշտերը, նույնիսկ պահեստայինները, լեռնային բոլոր հատվածներից գաղտնի հեռացել են, հավաքվել Կաղնուտում։ Գլխավոր ուժերի և իրենց գրված խրամատների միջև կապ են պահպանում պահակների ու պարեկների միջոցով։ Թուրքերի մտադրությունը արևի լույսի պես պարզ էր։

— Տեր-Հայկազուն,— գոչեց Գաբրիելն այնպես բարձրաձայն, որ ամբողջ բազմությունը կարող էր լսել,— մենք պետք է օգտվենք գիշերային խավարից։

Նույն ակնթարթում փարատվեց նաև մյուս ավագների կաշկանդվածությունը։ Բոլորի գլխում էլ նույն միտքը կայծակեց, նախքան Գաբրիելը կհայտներ իր նպատակը։ Միայն այն դեպքում կարող էին կործանումը կանխել, եթե վճռական հարձակում գործեին թուրքերի գիշերային հանգրվանի վրա։ Սակայն հարձակումը գլուխ բերելու համար սակավաթիվ էին արյունահեղ օրվա ընթացքում ուժասպառ եղած ռազմիկները։ Ամբողջ ժողովուրդը, կանայք և երեխաները նույնպես պետք է մասնակցեին, առավել ազդեցիկ դարձնեին հազարավոր մարդկանց հանկարծակի գրոհը։ Բոլորն արդեն բարձրաձայն խոսում էին, աղաղակում։ Ամեն մուխթար և ուսուցիչ ուզում էր իր առաջարկն անցկացնել։ Գաբրիելը ստիպված եղավ խստորեն կարգի հրավիրել նրանց։ Այդ հարցը չէր կարելի բարձրաձայն քննարկել. չէ՞ որ թուրք լրտեսները կարող էին սպրդած լինել գաղթականյան։ Գաբրիելը Նուրհան Էլլեոնին ուղարկեց խրամատները, որպեսզի սա ճակատամարտից համեմատաբար ավելի քիչ տուժած իր քսան տասնյակից ընտրեր հարյուր հիսուն հոգի, առանց աղմուկ բարձրացնելու բերեր Քաղաքաձոր։ Մնացած զինվորները բավական էին հարձակման դեպքում պաշտպանելու խրամատներն ու ժայռապարիսպները։ Նույնն արեցին նաև Հարավաբերդն ու լեռան եզրի հատվածները։ Երկու ժամ չանցած այդ կողմերից անաղմուկ եկան, խորանի առաջ հավաքվեցին ևս քսան տասնյակ։ Հարվածայինների և թեթև գվարդիայի հետ միասին ավելի քան հինգ հարյուր հոգի հավաքվեցին։ Ամեն մի շարժում ահագին ժամանակ էր խլում, քանի որ ոչ մի շշուկ չպետք է լսվեր, ոչ մի հրաման չպետք է տրվեր։

Հատուկենտ անհրաժեշտ բառերն արտասանվում էին կիսաձայն։ Թանձր խավարում չափազանց դժվար էր կատարել զորախմբի ստորաբաժանումը։ Բագրատյանը լուռ և հոգնատանջ բազմությունը կարողացավ երկու մասի բաժանել միայն այն բանի շնորհիվ, որ անձամբ ճանաչում էր յուրաքանչյուր մարդու։ Առաջին, առավել մեծաթիվ խմբի հրամանատար կարգվեց հարվածայինների ավագը։ Որոշ չափով պարեն և փամփուշտ ստանալուց հետո (մթության մեջ դա նույնպես դժվարին, երկարատև գործ էր) սրանք շարժվեցին դեպի հարավ, որպեսզի մեկուսի նեղ արահետով անսահման զգուշությամբ անցնեին անտառն ու թավուտը, սողալով կտրեին բացատներն ու զառիթափի բլրալանջերը, մոտենային թուրքերի բանակավայրին։ Հայերին օգնում էր ոչ միայն տեղանքին լավ ծանոթ լինելու հանգամանքը, այլև յուզբաշու հրամանով Կաղնուտի ամբողջ երկայնքով մեկ վառվող խարույկների լույսը։ Թուրքական վաշտերը կրակ էին վառել լերկ կամ ժայռոտ տեղերում, այլապես հեշտությամբ կարող էր հրդեհ ծագել, չնայած լայնարձակ Կաղնուտի շնորհիվ շրջակայքը միշտ խոնավ էր։ Խարույկները չխանգարեցին, որ հարվածայինները շրջապատեն ամբողջ ձվաձև Կաղնուտը։ Հայ զինվորները թաքնվեցին ծառերի բարձր ճյուղերի մեջ, դարան մտան մաթուզենիների խիտ թփերի ետևում, առանց պատսպարվելու սեղմվեցին ծառերի դուրս ցցված ծուռումուռ արմատներին։ Անթարթ աչքերով դիտում էին հետզհետե հանդարտվող թուրքական բանակավայրը։ Հրացանները պատրաստ էին պահում, չնայած հարձակման ազդանշանը լեռան գագաթից կարող էր տրվել մի ժամ հետո։ Ջաուշ Նուրհանը հարյուրհիսունանոց զորախմբով պետք է անակնկալ հարձակում գործեր իրենց կորցրած հատվածի վրա։ Նա յուրայիններին դուրս բերեց քարապատնեշի հետևից, տարավ դեպի գլխավոր խրամատը, որը թեային պաշտպանության փոսեր ուներ։ Ոչ միայն խավարը, այլև բարյացակամորեն երգող քամին այնքան լավ էր քողարկում գաղտագողի առաջ սողացող հայ ռազմիկների շարժումը, որ նրանք կարողացան երկու կողմից կտրել-անցնել խրամատները և պաշարել դրանք։ Այստեղ հայերին նպաստեց մի բացառիկ հանգամանք։ Թուրքական պահակազորը՝ ամենազորեղ վաշտերից մեկը, անհեռատեսորեն վառել էր մի քանի կարբիդի լապտեր։ Թուրք զինվորները պարզ երևում էին դրանց պայծառ լույսի տակ, մինչդեռ շրջակայքի խավարն ավելի էր թանձրացել։ Անսահմանորեն լարված հայորդիները անդորրության մեջ կարող էին լիովին կշռադատել իրենց անելիքը, իրենց պարզորոշ նպատակը։ Թվում էր, թե նրանցից ոչ մեկը չի շնչում, չի շարժվում։ Կար-

ծես ամեն կյանք մի լուռ բեկոր էր՝ նետված գիշերվա փակ հանքախորշը։

Այնտեղ, ուր արահետը քարուքանդ պարիսպների արանքից դուրս գալով՝ ձգվում է Կաղնուտի լայն հեղեղատն ի վեր, կանգնած էին կայմակամն ու յուզբաշին։ Դա բանակավայրի ներքին եզրն էր։ Մի քանի զինվոր լապտերներ ու ջահեր բռնած՝ սպասում էին։ Յուզբաշին նայեց իր ձեռքի հույժ արդիական ժամացույցին, որի թվացույցը լույսի տակ պսպղում էր.

— Քիչ ժամանակ է մնում... Արևածագից մի ժամ առաջ կհրամայեմ արթնացնել զինվորներին։

Ինչպես երևում էր, հարյուրապետի մարմնական հանգիստը խիստ մտահոգում էր կայմակամին.

— Յուզբաշի, չէի՞ք կամենա գիշերել մեր բնակարանում։ Մանր օր է Ձեզ սպասում։ Անկողնում լավ կհանգստանաք։

— Ո՛չ, ո՛չ, քնելու սիրտ չունեմ։

Կայմակամը հրաժեշտ տվեց, ջահակիրների ուղեկցությամբ հեռացավ, բայց մի քանի քայլ չարած՝ ետ դարձավ.

— Յուզբաշի, հարցս Ձեզ թող չվիրավորի։ Կարո՞ղ եմ վստահ լինել, որ առաջիկա ժամերին որևէ անակնկալ բան չի պատահի։

Հարյուրապետը կայմակամին ընդառաջ չգնաց։ Գլուխը կիսով չափ նրա կողմը շրջելով՝ հազիվ կարողացավ իրեն զսպել, որ չհայհոյի։ Անտանելի էին ոչ զինվորական մարդկանց միջամտությունները։ Կշտամբալից եղանակով նա բացատրեց.

— Ինքնին հասկանալի է, որ ես ձեռք եմ առել նախազգուշական բոլոր միջոցները։ Թեպետ իմ խեղճ զինվորները հանգստի կարիք ունեն, համենայն դեպս պահակային զորեղ շղթա են կազմել մեր բանակավայրի շուրջը։ Նրանք չեն թերանա, կայմակամ։ Դրանից բացի, վճռել եմ շրջակայքը ստուգելու համար ուղարկել նաև պարեկներ...

Յուզբաշին ճիշտ էր ասում։ Միայն թե այդ պարեկները՝ մեռնելու աստիճան ուժասպառ եղած ենթասպաներն ու զինվորները, կիսաանզգա վիճակում անցան արձանացած հայերի մոտով, որոնց աչքերը կաղնիների սաղարթների մեջ կատվային փայլ էին ստացել։ Քիչ անց պարեկները ետ դարձան, հերթապահ սպային զեկուցեցին, թե շրջակայքն ազատ է, ամեն ինչ՝ կարգին։

Գաբրիելը գլանակ վառելուց հետո դեն գցեց լուցկին։ Բոցից բռնկվեց խոտը։ Իսկուհին, որը Գաբրիելի կողքից չէր հեռանում, ոտքով տրորեց տարածվող կրակը։

— Ի՞նչ չոր է ամեն բան,— ասաց աղջիկը։

Լուցկին Գաբրիելին հանդուգն մտահղացում տվեց։ Նա մի պահ մոլորված կանգնեց։ Այդ մտահղացումը երկսայրի սուր էր. կարող էր սեփական ժողովրդին վնաս հասցնել նույնքան, որքան և թշնամուն։ Գաբրիելը թաշկինակը դրոշի պես առաջ պարզեց, ստուգեց երբեմն-երբեմն ուժգնացող քամու ուղղությունը։ Արևմտյան քամի էր, ծովի կողմից։ Ճյուղերը թեքվում էին դեպի հովիտը։ Վճիռ կայացնել չէր կարող ո՛չ ավագների խորհուրդը, ո՛չ էլ գլխավոր հրամանատարը։ «Այո» կամ «ոչ» կարող էր ասել միայն Տեր-Հայկազունը, իբրև ժողովրդի դերագույն առաջնորդ։ Փոքր-ինչ լուռ մտորելուց հետո վարդապետն ասաց. «Այո»։

Մինչ այդ բոլոր ռազմիկները հեռացան խորանի հրապարակից և Քաղաքաձորից։ Շունչները պահած սպասում էին հարձակման ազդանշանին։ Հսկողության տակ առնված խրամատների ու քարապատնեշների արանքում դարան մտան նաև մնացած տասնյակները։ Քարապատնեշների ետևում դիրք բռնեց ամբողջ ժողովուրդը։ Բայց դա դեռ բոլորը չէր։ Չնայած մոտալուտ անխուսափելի աղետին, Ստեփանը արտակարգ բարձր տրամադրության մեջ էր։ Դարձյալ ծլկել էր մոր մոտից։ Մթության մեջ անաղմուկ շարժվող մարդկանց քչփչոցները, ահով բռնված մեծաթիվ բազմության մեջ գտնվելը, հանկարծ վառվող ու մարող գաղտնի լապտերների թափառիկ ցոլքը, արկածային երանգ ունեցող հարյուրավոր այլ բաներ բորբոքել էին Ստեփանի լարված նյարդերը։ Կարծես տղան ընկել էր հեքիաթային մի աշխարհ։ Դրան ավելացնենք պատանեկան զորախմբին տրված հրամանը։ Տղաները որքա՜ն հպարտացան, երբ իմացան, որ իրենք են գաղթականի վերջապահ պահապանները և մասնակցելու են դեռևս անորոշ մի պլանի իրագործմանը։ Հասկանալի է, որ Ստեփանի ու նրա ընկերների պարապությունը վերածվել էր սպասումներով լի գինովության։

Ամենատարօրինակ բանը նավթին վերաբերող հրամանն էր։ Դամլաջրքի վրա գտնվող բոլոր տակառները, ինչպես և Բագրատյանի ընտանիքին պատկանող նավթամանները, առանց այլևայլության բերեցին խորանի հրապարակը։ Այստեղ հապճեպ դիզվեցին նաև բացօթյա օջախների մոտ եղած չոր ճյուղերը, փայտե ձողերն ու մահակները։ Փայտաշեղջից ամուր, հարմար ձողեր էին ջոկում տղաները, ծերունիները, կանայք, մինչև իսկ իննամյա երեխաները։ Բաշխումը հսկող ուսուցիչներն ու Սամվել Ավագյանը դժվարությամբ էին զսպում վեճերն ու աղմուկը։ Բռունցքներով դես-դեն էին հրում, սաստում.

— Սո՛ւս կացեք, շա՛ն լակոտներ։

Քիչ անց նույն իրարանցումն էր տիրում նաև նավթի տակառների մոտ։ Ջողերը պետք է կիսով չափ թաթախեին թանձր հեղուկի մեջ, լավ թրջեին։ Ջողերի թիվը երեք հազարից անցնում էր։ Ահագին ժամանակ անցավ։

Մարդիկ դեռևս խռնված էին տակառների շուրջը, երբ երկարատև սուլոցով տրվեց հարձակման հրամանը, և թուրքերի գրաված խրամատների վերևում բռնկվեց կրակոցների բոցը։ Կաղնուտում հարյուրապատիկ արձագանք տվեց որոտը, միախառնվեց սարսափի քնաթաթախ, անվերջանալի, գրեթե անմարդկային մի աղաղակ։

Գաբրիելը կանգնած էր կրակային գծի և քարապատնեշի արանքում ընկած ժայռոտ բարձունքին։ Հանկարծակի սանձազերծված այս թոհուբոհի ժամանակ, որը միանգամայն տարբերվում էր մինչ այդ տեղի ունեցած ճակատամարտերի շաչ ու շառաչից, գլխավոր հրամանատարը խորասուզվել էր ինչ-որ երազային մտորումների մեջ, ոչ մի բառ չէր ասում իր թիկունքում սպասող մարդկանց։ Անցավ մի քանի րոպե։ Մոտերքում ճայթող կրակոցները նոսրացան։ Գաբրիելը չէր էլ պատկերացնում, թե հարձակման առաջին արարվածն այդքան հաջող կանցնի։ Եվ ահա Ջաուշ Նուրհանը տվեց նոր ազդանշան. մի քանի անգամ եռանդուն թափահարեց վառվող լապտերը։ Խրամատը նորից անցել էր պաշտպանների ձեռքը, որոնք թշնամուն հետապնդելով սրընթաց վազում էին լեռն ի վար։ Թուրք հետևակայինների մի մասը մթության մեջ մոլորվելով՝ գնաց-ընկավ գրոհող հայ զինվորների կրակի տակ։ Մի մասն էլ գլուխը կորցրած սլացավ դեպի դղրդացող Կաղնուտը։ Հետապնդողները վրա հասան սրանց, գետին տապալեցին սվինադաշույնների ու խզակոթերի հարվածներով։ Գաբրիելը Ավագյանին ուղարկեց պահեստայինների մոտ՝ «Պատրաստվել և առաջ»։ Նա սպասեց մինչև բազմության ոտնաձայներն ու շշուկները հասան իր կանգնած տեղին, ապա առաջ վազեց, անցավ աշխարհազորի գլուխը։ Մարդիկ դանդաղ շարժվում էին խիտ թփուտների միջով, անցնում զոհվածների մոտով, իջնում դեպի ահեղաղղորդ անտառաձորը։

Հայերը կարծես որս էին հալածում։ Թուրք սպաներից, օնբաշիներից ու զինվորներից ամենախիզախները փորձում էին մատենալ հրդեհի շղթայով անջրպետված գաղթականներին, կործանել այն, բայց դրանով իսկ կործանում էին միայն սեփական կյանքը։ Հարվածայինների համերաշխ կրակը բոլորին շրջանակի մեջ առած՝ ստիպում էր նետվել հեղեղատի կենտրոնը։ Սպաները խելահեղ հրամաններ էին արձակում։ Ո՞վ էր լսողը։ Հետևակայիններն ու զափթիեները գոռգոռալով իրենց հրացաններն էին որոնում, իսկ երբ դրանք գտնում էին, ոչինչ անել չէին կարողանում։ Ամեն կրակոց կարող էր սպանել ընկերոջը կամ եղբորը։ Շատերը դեն էին նետում հրացանները, քանի որ դրանք խանգարում էին անանցանելի, փշոտ ու դավադիր մացառուտներով փախչելուն։ Թվում էր, թե հայոց լեռան ընդերքն անգամ մասնակցում է թուրքերի ահավոր ոչնչացմանը։ Կարծես թավուտը թշնամաբար ձգվում էր, պատնեշի պես բարձրանում, ծառերն ուռչում էին, նենգաբար հաստանում, ճյուղերը ճիպոտահարում էին, բաղեղազգիներն օղակվում էին մարդարեի որդիների շուրջը, նրանց հրում դեպի որոգայթը։ Ընկնողը մնում էր ընկած։ Մահվան հանդեպ համակվում էր իր ցեղին հատուկ անտարբերությամբ, գլուխը թաքցնում փշերի բույնի մեջ։ Յուզբաշին անվեհեր եռանդով և սրի բութ կողմով աջ ու ձախ հարվածներ էր տեղում, առաջ քշում մի խումբ խելակորույս հետևակայինների։ Երբ վերջապես սպաները, ենթասպաներն ու զինվորները խարույկի աղոտ լույսի տակ ճանաչեցին իրենց հրամանատարին, միացան նրան։ Սկսեց կազմվել դիմադրության, ավելի ճիշտ՝ նոր հարձակման կորիզը։ Սուրը բարձունքն ի վեր մեկնելով, յուզբաշին գոռաց.

— Առա՜ջ, իմ ետևի՜ց։

Սաստիկ հուզված նայեց իր ձեռքի ֆոսֆորափայլ ժամացույցին։ Հանկարծ հիշեց կայմակամին ասած խոսքը. «Ես այլևս չեմ ցանկանա ապրել, եթե մինչև երեկո քարուքանդ չանեմ հայերի բույնը»։ Հիրավի, այդ պահին նա չէր ցանկանում ապրել։

— Իմ ետևի՜ց,— կրկնեց յուզբաշին։

Զգում էր, որ կամքի ուժով մեն-մենակ կարող է կանխել կործանումը, անցնել հակահարձակման։ Նրա օրինակն ազդեց։ Զինվորներին խթանեց նաև անտառի դժոխքից ազատվելու ցանկությունը։ Իրենց անզգայությունից սթափվելով՝ նրանք դուրս սողացին թաքստոցներից, աղաղակելով հետևեցին հրամանատարին։ Անվթար հասան Կաղնուտի վերին մասը։ Թպրտացող սրտերով, լիովին ուժասպառ եղած, առանց իրողությունը գիտակցելու բարձրանում էին լեռնալանջն ի վեր, լապտերների լույսին, հայ զինվորների կրակին–ընդառաջ, որը և նրանց ընդունեց «գրկաբաց»։ Անշնչացած վայր փռվեցին։ Յուզբաշին սկզբում չնկատեց իր վերքը։ Միայն զարմացավ, թե ինչու հանկարծ հուսալքվեց։ Քիչ հետո աջ ձեռքը ծանրացավ։ Երբ ցավ զգաց և տեսավ հոսող արյունը, գոհ մնաց, գրեթե համակվեց երանությամբ։ Նրա համար արդեն արժեք չուներ ո՛չ խայտառակությունը, ո՛չ էլ վերքը։ Փակ

աչքերով լուռ ետ-ետ գնաց։ Հույս ուներ, թե մի տեղ կընկնի և այլևս ոչինչ չի իմանա։

Երբ մարտական շռինդը վերագրավված խրամատներից իջավ լանջն ի վար, ազդանշան տրվեց նաև Քաղաքաձորին։ Բոցավառվեց մի ջահ։ Նավթի մեջ թաթախված ձողն սկսեց ճարճատյունով վառվել։ Հետևյալ րոպեին հուրհրատեցին հազարավոր ջահեր։ Գաղթականների բնակիչներից շատերը, Հայկի, Ստեփանի ու մյուս տղաների օրինակին հետևելով, մեկական ջահ բռնած՝ լայն ճակատ կազմեցին, շարժվեցին առաջ։ Լույսերի այդպիսի թափոր աշխարհը դեռ չէր տեսել։ Ամեն ոք, որն իր ձեռքին ճարճատող ջահ ուներ, սարսռում էր իր ներսում ծավալվող ինչ-որ անըմբռնելի, սրբազան զգացումից։ Դա արդեն անհուն գիշերը թանձրացնող մենավոր բոց չէր, այլ մի ամբողջ ժողովրդի հրո թափորը, հուր, որ հաղթական լույսով ճեղք էր բացում տիեզերական խավարի մեջ։ Հանդիսավոր, դանդաղ առաջ էին շարժվում երկար ու ձիգ շարքերը, կարծես ոչ թե ռազմադաշտ էին գնում, այլ աղոթավայր։

Ներքևի գյուղերում՝ Յողոնօլուքում, Բիթիասում, Հաբիբլիում, Ազիրում, Վաքրֆում, Խրդրը բեգում, նույնիսկ հյուսիսում ծվարած Քեբուսիեում, հայերի հողն ու ջուրը վայելող ոչ մի թուրք աչքը չփակեց։ Երբ այստեղ հասան անակնկալ հարձակման վայրի շաչն ու շառաչը, մարտունակ տղամարդիկ հրացաններն առած դուրս վազեցին, պաշարեցին լեռան ստորոտը, բայց, իհարկե, չհանդգնեցին մոտենալ Կաղնուտին։ Կանայք այգիներում և տների տանիքներին կանգնած՝ սարսափախառը հետաքրքրությամբ ականջ էին դնում կատաղի կրակոցներին։ Եվ հանկարծ տեսան, թե ինչպես Դամլաջրքի թիկունքից գիշերվա ժամը մեկին ծագեց արևը։ Պարզ ուրվագծվեց սև, սանրաձև լեռնապարը, որի ետևում մոլեգնում էր վարդակարմիր բոցը։ Երկնային այս երևույթը, արհավիրքի նշանն ու հրաշքը, անասելի ազդեց սնահավատ թրքուհիների վրա։ Նրանց թվաց, թե հասել է ահեղ դատաստանի օրը։ Իսկ քիչ հետո, երբ հրդեհն սկսեց լափել լեռնալանջը, արդեն շատ ուշ էր. անհնարին էր եղածը մեկնաբանել իբրև տարերային երևույթ։ Հիսուս Քրիստոսը՝ անհավատների մարգարեն, կամեցել էր, որ լեռան թիկունքից ծագի իր զորության արևը, իսկ հայածին ջիները Պետրոսի, Պողոսի, Թովմասի և շատ ու շատ ուրիշ եկեղեցական սրբերի հետ դաշն կռած՝ պաշտպան էին կանգնել իրենց ժողովրդին։ Հայորդիներին սատարող երկնային ուժերի հնադարյան տեսությունն այդ պահին վավերացվում էր ամենահամոզիչ ձևով։ Այսպես մտածողները միայն թուրք միամիտ կանայք չէին։ Յողոնօլուքի եկեղեցու զանգակատան աշտարակից և գմբեթի չորս կողմից այս հրաշքը դիտող մոլլաներն անգամ խուճապահար փախան Մզկիթի վերածված սրբավայրից, այն դարձյալ «հանձնելով հրեշտակապետներին»։

Հրեղեն անառիկ պարիսպը նվազ հրաշապատում, բայց առավել զարհուրելի ազդեցություն թողեց թուրք զինվորների վրա, որոնք դեռևս չէին հեռացել լեռնալանջից։ Նրանց թվում էր, թե հայերը թվական անասելի գերբնական ուժեր ունեն։ Կարծես այդ պահին հենց այդտեղ էր հավաքվել ամբողջ հայ ազգը, չորս կողմից եկել էին կայսրության բոլոր տարագիրների քարավանները և պետության գործած հրեշավոր ոճիրների դիմաց հրով ու սրով վրեժ էին լուծում մահմեդական ժողովրդի մի չնչին բեկորից։ Թուրքական փոքրաթիվ զորախմբերը պաշտպանության հատվածներից դուրս պրծնելով՝ փախչում էին դեպի լեռան ստորոտը։ Ոչ մի սպա չէր կարողանում նրանց կանգնեցնել։ Ովքեր դեռևս կենդանի էին, գնդակներին ուշադրություն չդարձնելով, մացառուտների միջով ջանում էին ազատվել հեղեղատի դժոխքից, իրենց գցել լեռան ստորոտը։ Հայերն այնքան զինվոր չունեին, որ պաշարեին ամբողջ Կաղնուտը։ Ելքը մնացել էր ազատ։ Թուրք պատվախնդիր, խիզախ սպաներից ու զինվորներից մի քանիսը, նկատելով յուղբաշու բացակայությունը, իրենց կյանքը մի անգամ ևս վտանգի ենթարկելով՝ ետ դարձան, գտան անտառի եզրին անզգա ընկած վիրավորին և փրկեցին վերահաս գերությունից։ Նրան տարան Բագրատյանի ամառանոցը՝ թուրքական շտաբը։ Տանջալից ճանապարհին հարյուրապետն սթափվեց։ Մի քանի անգամ ծանր թառանչ արձակեց։ Գիտեր, որ ամեն ինչ կորած է, որ քրիստոնյաներն իր զորաբանակը ջարդուփշուր են արել, որ իր համար այլևս չկա ո՛չ հեղինակության վերականգնում, ո՛չ վերադարձ։ Անկեղծորեն նզովում էր այն գնդակը, որը միայն իր աջ թևն էր ջախջախել, կիսատ-պռատ թողնելով հիմնական գործը։ Մի ցանկություն ուներ. կրկին անզգայանալ։ Ոչ միայն չիրականացավ այդ բաղձանքը, այլև գիտակցությունն սկսեց առավել պարզորոշ, առավել սառն անողոքությամբ կշռադատել տեղի ունեցածը։

Հրո թափորն իր դեմ-դիմաց կանգնած թշնամի այլևս չուներ։ Հրդեհը դանդաղ մոտենում էր Կաղնուտին և մոտակա անտառներին։ Լեռան բարձունքի կեսը չանցած՝ Տեր-Հայկազունը երկար շարքով ընթացող հրձիգներին հրամայեց կանգ առնել (հրամանը միմյանց հաղորդում էին իրար մոտ կանգնածները), բոցկլտացող ջահերի մնացորդները նետել թփերի մեջ, շտապ ետ դառնալ։ Այրվող ձողերը մացառուտի մեջ մխրճվելով՝ առատ ծուխ արձակեցին։ Մի քանի րոպե

ու միայն մահը։ Բայց մինչև սա ողորմածաբար խոնարհվեր այս կամ այն վիրավորի սնարին, օգնության էր հասնում տենդային անզգայացնող թմբիրը, մարդկանց ազատում դանդաղընթաց ժամերի տվայտանքից։

Ներքևում, հովտում, քնած էին սպանդից մազապուրծ եղած թուրքական վաշտերի զինվորները, զափթիեները, չեթեները։ Սպաները քնած էին Բագրատյանի սենյակներում։ Անցած օրվա առաջին զոհին՝ Հալեպից եկած քոլաղազուն, սանիտարական սայլով վաղուց արդեն տարել էին Անթաքիե։ Ստեփանի անկողնում այժմ ուրիշ վիրավոր էր պառկած՝ յուզբաշին։ Քունը հաղթել էր նաև Ժուլիեթի մահճակալին փռված կայմակամին։ Հալեպի վալուն ուղարկվելիք զեկուցագիրն էր կազմում, երբ զգաց, որ այլևս չի կարող աչքերը բացել։ Բայց քնի փակ դռան ետևում նրա գիտակցությունն ու խիղճը շարունակեցին գործել առավել մերկ անգթությամբ, քան գործում էին արթնության սնամեջ ծալքերում։ Չէ՞ որ քիչ առաջ նրա գլխին եկել էր իր ասպարեզում ունեցած ամենածանր ձախորդությունը։ Բայց թե ամեն ձախորդության մեջ էլ կա ողորմածության մի նշույլ, քանզի աստված հեգնանքի ժպիտով է դիմակազերծ անում մարդկային ամբարտավան հավակնությունների ամբողջ ծիծաղելիությունը։ Հիրավի, ինչե՞ր տեսավ, ինչե՞ր իմացավ կայմակամը, այդ բարձրաստիճան պաշտոնյան, Իթթիհաթի կարկառուն անդամներից մեկը, մինչև ուղն ու ծուծը իր ցեղի՝ պատերազմելու և իշխելու կոչում ունեցող իր ցեղի գերազանցությամբ տոգորված թուրք օսմանցին։ Տկարները զորավոր դուրս եկան, իսկ զորավորներն իրականում ոչ մի արժանիք չդրսևորեցին։ Այո, արժեքազրկվեցին այն հերոսական միտումները, որի լույսի տակ թուրքերն արհամարհում էին տկարներին։ Բայց քնի մեջ արված այս եզրահանգումներն ավելի խորացրին կայմակամի կենսափորձը։ Մինչ այդ նա երբեք չէր դասկածել, որ Էնվերն ու Թալիաթը միանգամայն իրավացի են, առավել ևս այն ժամանակ, երբ նրանք հայ ազգի հետ վարվում էին իբրև պետական հանճարեղ գործիչներ։ Այժմ կայմակամի գիտակցության մեջ Էնվեր փաշայի և Թալիաթ բեյի հանդեպ ծայր էր առնում ամեն ինչ տակնուվրա անող մի կասկած, քանի որ ձախորդությունը ճշմարտության խրոտաբարո հայրն է։ Մի՞թե մարդիկ իրավունք ունեն կազմելու այնպիսի «իմաստուն» ծրագիր, որի իրականացումը կապված է մի այլ ժողովրդի բնաջնջման հետ։ Շահավետության ի՞նչ հիմք է ընձեռում նման մի ծրագիր։ Ինքը՝ կայմակամը, քանի՛ անգամ է տվել այդ հարցը, պնդել։ Ո՞վ կապացուցի, թե մի ժողովուրդ լավ կամ վատ է մի այլ ժողովրդից։

անց չորս կողմից ահավոր ճարճատյուն լսվեց։ Թվում էր, թե ուր որ է ամբողջ Դամլաջրքը կպայթի։ Շատ տեղերում հրդեհի բոցերն ահագին բարձրության էին հասել։ Վա՜յ հայերին, եթե առաջիկա ժամերին և օրերին քամին փոխեր իր ուղղությունը։ Քաղաքաձորը հրի ճարակ կդառնար։ Ի՜նչ բարեբախտություն, որ Գաբրիելը գաղթականների մոտերքում կտրել էր տվել ծառերը, ստեղծել ազատ տարածություն։ Անտառային հրդեհն այնպիսի արագությամբ էր ծավալվում, ամեն կողմից այնպիսի համաչափությամբ էր լափլիզում ամառվա շոգից չորացած լեռան լանջը, որ ո՜չ կրակն էր երկրային թվում, ո՜չ էլ մոլեգնող բոցերին կուլ գնացող ծառերն ու թփերը։ Ներքևում գտնվող հարվածային ներն ու տասնյակները հազիվ էին հասցնում ի մի բերել հարձակման ավարը՝ ավելի քան երկու հարյուր մառուզերյան հրացան, ահագին ռազմամթերք, երկու արկղ թերմոս, սննդամթերքով բեռնավորված հինգ ավանակ, վրաններ, վերմակներ, լապտերներ և զանազան այլ բաներ։

Երբ ծագեց իսկական արևը, Դամլաջրքը պարուրված էր քարեղեն քնով։ Ռազմիկները քուն էին մտել ընկած տեղում։ Միայն սակավաթիվ մարդիկ կարողացան մի կերպ քարշ գալով հասնել իրենց օթևանները։ Տղաները խումբ-խումբ քնել էին չոր գետնին։ Քաղաքաձորի հյուղերում կանայք հոգնատանջ ընկել էին խսիրներին, մնացել զզզված մազերով, անլվա, անկարող հոգ տանել քաղցից թնկթնկացող փոքրիկ երեխաների մասին։ Քնած էր Բագրատյանը, քնած էին բոլոր ավագները։ Նույնիսկ Տեր-Հայկազունն իր մեջ այնքան ուժ չգտավ, որ ավարտի գոհաբանական պատարագը։ Սրբազան արարողությունը դեռևս չէր ավարտվել, երբ ինչ-որ անդիմադրելի հոգնածությունից հաղթված՝ հարբածի նման վայր ընկավ։ Քնած էին մուխթարները՝ առանց ընտրելու մորթվելիք անասունները։ Քնած էին մսագործներն ու կթվորուհիները։ Ոչ ոք չէր անցնում իր առօրյա գործին։ Օջախները մնացին առանց վառվելու։ Ոչ ոք աղբյուրից ջուր չբերեց։ Ոչ ոք հոգ չտարավ բազմաթիվ վիրավորների մասին, որոնք դեռևս տառապում էին խրամատներում կամ ժամեր շարունակ սողալով մի կերպ հասել էին հիվանդանոց։ Այս ամենը, ինչ պարունակում է սառը, ոչ պատկերավոր «վիրավոր» բառը, այստեղ լայնորեն ի ցույց էր հանված իր ամբողջ զարհուրելի իրողությամբ՝ անաչք ու անքիթ դեմքեր, արնաշիկ դարձած ծնոտներ, «դում-դում» գնդակներից ծվատված մարմիններ, որոնցից վիրավորված հառաչող, ծարավից տոչորվող մարդիկ։ Եվ այս բոլոր թշվառներին կարող էր օգնել ոչ թե բժիշկ Ալթունին, այլ միայն

Մարդիկ այդ բանը վճռել չեն կարող։ Եվ ալլահն այսօր շատ պարզ ու հատու վճիռ կայացրեց Դամլաջրքի վրա։

Կայմակամը ծանրութեթև էր անում ստեղծված իրական վիճակը, խորհում, թե ինչ է սպասում իրեն։ Նորին գերազանցությունը՝ Հալիպի վալուն մտովի գրեց հրաժարական դիմում, ինքնակամ խորտակելով իր ամբողջ բարեկեցությունը։ Առաջարկեց հաշտության ու բարեկամության դաշինք կնքել հայերի հետ ի դեմս Գաբրիել Բագրատյանի, որին ինքը՝ կայմակամը, տեսել էր միայն բաղնիքում, լողաշորով։ Դարձյալ մտովի հանդես եկավ Իթթիհաթի կենտրոնական հանձնաժողովում, պահանջեց անհապաղ վերադարձնել տարագիրների բոլոր քարավանները, սահմանել ընդհանուր հարկ, շտկել անարդարությունը։ Սակայն բարոյական այս բարձունքի վրա նրա հոգին կարող էր հայտնվել միայն խոր քնի մեջ։ Որքան բարակում էր նիրհի շղարշը, այնքան գիտակցությունը մոտենում էր իր առօրյա վիճակին, այնքան միտքը նենգաբար խույս էր տալիս խիզախ վճիռներ կայացնելուց։ Ի վերջո անխոով թմբիրով պարուրված միտքը գտավ միանգամայն դյուրին ելք։ Ի՞նչ կարիք կա ինքնամեղադրական զեկուցագրեր ուղարկելու կենտրոնական իշխանություններին։

Կայմակամը քնեց մինչև կեսօր։

Քնած էին նաև մեռյալները՝ քրիստոնյա թե մահմեդական։ Նրանք ցիրուցան ընկած էին Կաղնուտի թփերի տակ և լեռնալանջի ծառաստաններում։ Վիթխարածավալ հրդեհի լեզուները նրանց մոտենում էին քմահաճ խաղերով, ամեն ինչ համտես անելով։ Թվում էր, թե կրակը արթնացնում է այդ քնածներին. մեռյալները պառկած տեղից բարձրանում էին, սարսափից քարացած աչքերով նստում, ապա պայթում էին նրանց մարմինները, ընկղմվում մաքրագործող հրաշեղջի մեջ։ Ժամ առ ժամ մեծանում էր հրդեհը, տարածվում Դամլաջրքով մեկ, ձգվում դեպի հյուսիս և հարավ։ Կանգ առավ միայն Հարավաբերդի ներքևում գտնվող լերկ ժայռափլվածքների եզրին և դրանք Հյուսիսային լեռնաթամբից բաժանող գոգավորության առաջ։ Աղբյուրների ջրով օրհնված լեռնային մարգագետինների դալարագեղ փարթամությունը՝ սիրիական ծովեզերքի այդ հրաշքը, մի անգամ ևս հաղթանակ տարավ։ Իր կանաչ դրոշները փողփողելով՝ օրեր շարունակ նա մաքառեց, մինչև հրդեհից մնաց մոխրացող կրակի մի ընդարձակ արգելադաշտ։

Այսպես՝ բոցերով ու հրաշեկ ավերակներով, Մուսա լեռը զրահավորեց մեռնելու չափ հոգնատանջ իր զավակներին, որոնք քնի անդունդի մեջ խորասուզված՝ անհաղորդ էին իրողությանը. երկար ժամանակ

անխոցելի էին, իրենց հալածողների գրոհներից զերծ։ Նրանցից ոչ մեկը չգիտեր, որ բարեհաճ հողմի զորությունը Քաղաքաձորից ետ էր վանել վտանգը, ամբողջ հուրն ու բոցը մտրակահար անելով քշել լեռն ի վար։

Ժողովուրդն ու զինվորները քնեցին մինչև իրիկնամուտ։ Այնուհետև ավագների խորհուրդը կարգադրեց կտրել հրդեհից վնասված տեղերի ծառերն ու թփերը։ Դա նոր, ահագին աշխատանք էր։

Ամբողջ ցերեկը մարդիկ քնեցին, բացի մի հոգուց։ Նա անշարժ նստած էր վրանում, իր մահճակալին։ Ոչ մի սփոփանք. իրեն այնքա՜ն նվաստացած էր զգում իր անասելի օտարության, անուղղելի հանցանքի ժխորալից պատյանում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Ատրոյի ծանապարհները

Եև քամու բարենպաստ ուղղությունը դեռևս չէր փոխվել, բայց և այնպես անտառային, ավելի ճիշտ՝ լեռնային հրդեհը ճնշող ազդեցություն էր թողնում մարդկանց հոգեբանության վրա։ Մթություն այլևս գոյություն չուներ։ Գիշերները խեթ-խեթ էին նայում լեռան կողմը, թարթում իրենց շիկափայլ, խարդավանքով լի աչքերը։ Չորս կողմ խելագար ստվերներ էին պարում։ Երկինքը վարագուրված էր շարունակ վեր հյուսվող խեժահոտ ծխով։ Կեսօր լիներ թե կեսգիշեր, անտանելի շոգ էր։ Զովության ոչ մի նշույլ։ Կծու ծխից կտրրվում էր մարդկանց շունչը, քոր էին գալիս ռունգերն ու կոկորդները։ Անսովոր, տարօրինակ հարբուխ տարածվեց, վարակեց ամբողջ գաղթականությանը, իր հետ բերելով ինչ-որ հեղհեղուկ գրգռվածություն։

Հաղթական ցնծության, գոհաբանական խանդավառ ժամերգության փոխարեն ի հայտ եկան արդեն ծայր առնող ինքնաքայքայման նշանները։ Դա հետևանք էր ներքին չարագուշակ մի երևույթի, որը խելահեղ նոպաների ժամանակ կարող էր ի չիք դարձնել ամեն կարգապա-

հություն, ամեն վարք ու բարք։ Ամենից առաջ դրան պետք է վերագրել Սարգիս Կիլիկյանի հետ կապված անախորժ պատմությունը, որը, ցավոք սրտի, տեղի ունեցավ վերջերս։ Թերևս հենց այդ պատճառով էլ Տեր-Հայկազունին և Գաբրիելին չէր հանգստացնում այն իրողությունը, թե աստծո օգնությամբ կարելի է հույս դնել երկարատև զինադադարի վրա։ Հիրավի, անտառը հրդեհելու հանդուգն մտահղացումը և իբրև ավար ձեռք բերված մեծաքանակ հրազենը զգալիորեն բարելավել էին հայերի վիճակը։ Առաջվա պես արդեն այնքան էլ անհեթեթ չէր թվում նույնիսկ այն միտքը, թե թուրքերը առհասարակ կարող են ձեռք քաշել նոր հարձակումից։ Բայց իրողությունն այն էր, որ միայն Դամլաջրքի լանջն էր բոցերով բռնված։ Լեռան ստորոտը, Սուեդիայի վերևի քարափն ու Հարավաբերդը դարձյալ բաց էին, ինչպես միշտ։ Ոչ մի դեպքում չէր կարելի խրամատները թողնել առանց աչալուրջ հսկողության։ Անհրաժեշտ էր ամենայն խստությամբ բարձր պահել հրամանատարության հեղինակությունը։ Սակայն ոչ պակաս կարևոր էր նաև այն, որ դարձյալ հավասարակշռվեր Քաղաքաձորում ապրող ժողովրդի հոգեվիճակը։ Տեր-Հայկազունի անվանած «առօրյան» պետք է հակադրվեր սատանայական ամեն տեսակի խանգարիչ ուժերին։ Այդ իսկ պատճառով ամսի քսանչորսի երեկոյան գումարված ավագների խորհուրդը մերժեց զոհվածներին հանդիսավոր արարողությամբ հողին հանձնելու առաջարկը։ Չէ՞ որ դա կարող էր առիթ տալ մասսայական խլրտումների։

Երեկոյան զինվորներ ուղարկվեցին անհայտ կորածներին որոնելու։ Հարյուր տասներեք հոգուց գտան և բերին վաթսունյոթին՝ սպանված։ Կային նաև բազմաթիվ ծանր վիրավորներ, որոնք առանց վճռական օգնության գիշերը լուսացնել չէին կարողանա։ Այս տխուր առիթով բժիշկ Ալթունին խորհրդարանից հեռացավ նիստն ավարտվելուց շատ առաջ։ Նա սգավորների մոտ իր խռպոտ ձայնին պատշաճ տխրության շեշտ շտալով, հավաքված ազգականներին հայտնեց, թե նկատի ունենալով անտառային հրդեհի առաջացրած սարսափելի շոգը, պետք է զոհվածներին անմիջապես հանձնել հողին։ Ուշացնել չէր կարելի. ամեն րոպեն սպառնալիք էր ստեղծում ողջ մնացածների առողջության համար։ Ինքը՝ Ալթունին, դժվարությամբ էր նման բան ասում զոհվածների հարազատներին, բայց ի՞նչ կարող էր անել։ Ի վերջո ամեն մարդ էլ իր հոտոտելիքով կզգար դրա անհրաժեշտությունը։ Օ՛ն, ուրեմն։ Ժամանակ չպետք է կորցնեին։ Ամեն ընտանիք պետք է որոշակի տեղում իր հանգուցյալի համար շիրիմ փորեր։ Դրանով իսկ մարդիկ ի ցույց կհանեին

իրենց աստվածահաճո սերը, և երկինքը, անտարակույս, դա ավելի բարձր կգնահատեր, քան երկարատև աղոթքներն ու ավանդական ծեսերը։ Ալթունու կարծիքով ավագների խորհուրդն առավել իմաստուն վճիռ հանած կլիներ, եթե հերոսների հոգեզուրկ մարմինները հանձնեին վիթխարի հրդեհին։ Բայց նա սիրտ չարեց այդ բանն առաջարկել. խնայեց սգավորների զգացմունքները։ Հանգուցյալներին պատաներ հագցրին և, ի մխիթարություն այրիների ու որբերի, նրանց գլխի տակ մի-մի բուռ հայրենի հող լցրին։

— Դե, հիմա գործի անցեք,— զառամյալ ձայնով կարգադրեց Ալթունին, որն այդ պահին կարծես ոչ թե յոթանասուն, այլ իննսուն տարեկան լիներ։— Մի քանի ժամվա՞ մեջ ամեն բան պետք է վերջացած լինի։ Պահեստի զինվորները կգան ձեզ օգնելու։

Այս հրահանգը ժողովրդի մեջ ո՛չ դժգոհություն առաջացրեց, ո՛չ էլ առարկություն, ինչպես երկյուղով սպասում էին մի քանիսը։ Հենց միայն առողջության վկայակոչումը բավական էր ամեն վրդովմունք զսպելու համար։ Դրանից բացի, արդեն զգացվում էր, որ դիակներն սկսում են նեխել։

Գիշերվա ժամը երեքին ամեն ինչ ավարտված էր։ Հոգնեցուցիչ աշխատանքից բթացել էր վիշտը։ Հարազատներից միայն մի քանիսն էին մնացել գերեզմանոցում։ Իրենց հոգեպահուստ մոմերը բռնած՝ դեռևս կանգնած էին շիրիմների առաջ։ Մոմերի խղճուկ լույսը կուլ էր գնում հրդեհի ցոլքին։ Նունիկն ու նրա ընկերուհիներն այս անգամ չերևացին։ Այլևս չէին համարձակվում դուրս գալ իրենց խցերից։ Թուրքերը եգիպտացորենի արտերում բռնել էին այդ մուրացիկ դասին պատկանող երկու ծերունու, մեռցնելու աստիճան ծեծել։

Օգոստոսի քսանհինգին, լեռը բարձրանալու քսանվեցերորդ օրը, տեղի ունեցավ հասարակության ուշադրությունը գրավող երկու նշանակալից իրադարձություն։ Առաջինը կամավոր լողորդների և արագավազ սուրհանդակի հանդիսավոր ընտրությունն էր։ Սրանք անհապաղ պետք է ճանապարհ ընկնեին դեպի Ալեքսանդրեթ և Հալեպ։ Մյուսը Սարգիս Կիլիկյանի կատարած հանցագործության դատավարությունն էր։ Մինչ այդ Տեր-Հայկազունը, իբրև հաշտարար և միջնորդ դատավոր, իր սահմանադրական իրավասությունները կիրառել էր միայն մանր-մունր վիճաբանություններ հարթելիս։ Այս անկարևոր դատավարությունների ժամանակ նա միշտ էլ անբեկանելի վճիռ էր կայացնում առանց որևէ ձևականության։ Կիլիկյանի դատը, որին մարդիկ անհամբեր սպասում էին, կայանալու էր ուրբաթ օրը։ Տեր-Հայկազունը Դամլաջրքի վրա առաջին

անգամ հանդես էր գալու իբրև պատժիչ դատավոր։ Ահա գործի համառոտ էությունը։ Թուրքերի վերջին անակնկալ հարձակման ժամանակ Սարգիս Կիլիկյանի միանգամայն անհասկանալի վարմունքը, անկասկած, դարձավ հիմնական պատճառն այն ծանր կորուստների, որ կրեց գաղթականության բնակչությունը։ Բայց Գաբրիել Բագրատյանը մտադիր էլ չէր Կիլիկյանին պատասխանատվության ենթարկելու։ Առաջին. բոլոր նախորդ հարձակումների ժամանակ Ռուսը վերին աստիճանի խիզախ էր, շրջահայաց։ Երկրորդ. Գաբրիելին լավ էին հայտնի մարդկային անբացատրելի արարքները։ Եվ երրորդ. նա գիտեր, որ ճակատամարտից հետո անհնարին է այս կամ այն պահը վերականգնել ճիշտ այնպես, ինչպես դա եղել է իրականում։ Բայց ուրիշները զլխավոր հրամանատարի նման չէին դատում, հատկապես մյուս հատվածների հրամանատարները, զինվորներն ու բնակչության որոշ մասը։

Խորանի հրապարակում խռնվել էր բազմությունը։ Սարգիս Կիլիկյանին շատ նեղն էին լծել նույն անձնակազմում ծառայող ընկերները։ Հանցավորը պետք է հանդես գար, մեկաբաներ իր վարմունքը, արդարանար։

Սարգիսը կանգնած էր։ Ո՛չ խոսում էր, ո՛չ էլ արդարանում։ Լռում էր։ Չորս կողմից կարկտի պես տեղացող ցասկոտ մեղադրանքներին ու հարցերին նա անտարբեր դեմ էր տվել իր բութ հայացքն ու լերկ գանգը, որը կարծես մոխրաշրով էին մաքրել։ Թերևս այդ լռությունը բնավ էլ այնքան հանդուգն չէր, այնքան չար ու ամբարտավան, ինչպես թվում էր։ Շատ հավանական է, որ Կիլիկյանը չէր կարողանում հիմնավորել իր անակնկալ շփոթությունը և ամաչում էր արդարանալ, վկայակոչելով հոգնածությունը կամ ուրիշների կողմից սխալ ընկալած որևէ մտադրություն։ (Հետագայում ևս նա ոչ մի պատասխան չկարողացավ տալ Տեր-Հայկազունի նույն հարցին)։ Ինչևէ, այդ լռությունը բնականաբար ավելի էր զայրացնում մեղադրողներին։ Չորս կողմից սկսեցին հրհրել, բռունցք թափահարել դատապարտյալի քթի տակ։ Երդվյալ ատենակալների դատարանը գուցե Կիլիկյանին ինքնապաշտպանության իրավունք շնորհեր, եթե նա ինքը չհասցներ առաջին հարվածը, և եթե այդ հարվածը չափից ավելի ահավոր չլիներ։ Որոշ ժամանակ Կիլիկյանը մնում էր անտարբեր, թույլ էր տալիս, որ իրեն քաշքշեն։ Թվում էր, թե մտադիր էլ չի պաշտպանվելու իրեն հալածողներից։ Բայց ահա հանկարծ գրպանից հանեց ոսկրոտ բռունցքը, այնքան սոսկալի հարված հասցրեց իրեն քաշքշող երիտասարդներից մեկի դեմքին, որ սա կուրացած աչքով և ջախջախված քթոսկրով արնաշաղախ տապալվեց գետնին։ Դա

կատարվեց կայծակնային անհավատալի արագությամբ։ Կիլիկյանի պաղարյուն մարմինը մի ակնթարթ պրկվեց, աչքերը կարծես թե բացավառվեցին, բայց կրկին հանգան, ընդունեցին նախկին բութ արտահայտությունը։ Ռուսին նայողը չէր ասի, թե քիչ առաջվա հարված հասցնողը նա է։ Նրա բախտից, շատերն սկզբում չհասկացան, թե ինչ կատարվեց, և ետ-ետ գնացին։ Իսկ երբ վրդովմունքի աղաղակներով առաջ նետվեցին, վրա հասավ Քաղաքաձորի ոստիկանությունը, կալանավորեց հանցավորին։ Եթե ոստիկանությունն ուշանար, Կիլիկյանի բանը բուրդ կլիներ։

Առավոտյան, խորհրդարանում տեղի ունեցող դատավարության ժամանակ, Կիլիկյանը հանգիստ խոստովանեց, որ առաջին հարվածողն ինքն էր և նախապես գիտեր, թե ինչ է լինելու իր զարհուրելի հարվածի հետևանքը։ Ուրիշ ոչինչ։ Ինքնապաշտպանության իրավունք չխնդրեց։ Կարծես խոսելու ուժ չուներ կամ ծուլանում էր բերանը բացել։ Նրա խառնվածքի տեր մարդուն նման անհերևակայելի անտարբերությամբ կարող էին համակել միայն ու միայն այն հանգամանքները, որոնց մեջ նա ստիպված էր ապրել կամ մեռնել։ Նրա քաշածը ոչ ոք չէր քաշել։

Գաբրիելը լուռ նստած՝ ունկնդրում էր։ Ո՛չ մեղադրում էր, ո՛չ պաշտպանում։ Մինչդեռ գրգռված բազմությունը պահանջում էր պատժել Կիլիկյանին։

Երբ մեղադրյալի հանցանքը համարվեց ապացուցված, Տեր-Հայկազունը հառաչեց.

— Ինչպե՞ս վարվեմ հետդ, Կիլիկյան։ Երեսիդ մի անգամ նայողն արդեն համոզվում է, որ քեզ համար չեն աստծո սահմանած կարգն ու կանոնը։ Ես պարտավոր էի քեզ դատապարտել վտարման...

Տեր-Հայկազունը Կիլիկյանին դատապարտեց ոչ թե վտարման, այլ հնգօրյա շղթայակապ բանտարկության, որը խստացվելու էր եռօրյա ծոմով։ Պատիժն ավելի ծանր էր, քան թվում էր։ Կիլիկյանը տուրուզմբոցի պատճառով, որից տուժողն ինքն էր, հրամանատարի պատվավոր աստիճանից դարձյալ գլորվեց ոճրագործների սանդարամետը։ Դա սոսկալի պատվազրկություն էր, բայց Կիլիկյանի դեմքի ոչ մի մկանը չշարժվեց։ Դժվար էր հասկանալ, թե նրա մեջ դեռևս մնացե՞լ էր պատվի զգացումը, կարո՞ղ էր վիրավորվել։

Դատավարությունից հետո հանցագործին նետեցին խորհրդարանի երրորդ մասը կազմող խուցը՝ շղթայելով ձեռքերն ու ոտքերը։ Կիլիկյանը դարձյալ այն վիճակում էր, ինչ վիճակի մեջ արդեն մի քանի անգամ եղել էր իր առեղծվածային կյանքի ընթացքում։ Պատիժը նրան

կրնկակոխ հետևում էր, չնայած հաճախ նա ոչ մի հանցանք չէր գործում կամ հանցանքը լինում էր շատ չնչին։ Այս պատիժն էլ նա ընկալեց անհույզ աչերով, կարծես դա իր նենգավոր ճակատագրի քաջածանոթ և անխուսափելի վճիռն էր։ Բայց բանտը տարբերվում էր այդ կարգի մյուս բոլոր հաստատություններից, որպիսիք Կիլիկյանը տեսել էր իր բազմափորձ կյանքի ճանապարհին։ Դա կից էր այն խցին, որտեղ ապրում էր բարձրաթռիչ ոգու տեր այնպիսի մի անձնավորություն, ինչպիսին դեղագործ Գրիգորն էր։ Փայտաշեն երկու վանդակներն իրար նման էին, ինչպես ջրի երկու կաթիլ։ Մեկն անարգանքի խուց էր, մյուսը՝ մի ամբողջ համալսարան։

Գաբրիելն իր մարմնի բոլոր բջիջներով զգում էր, որ մոտենում է ինչ-որ անքննելի մի իրադարձություն։ Դա գուցե ի դերև հաներ նախանցյալ օրա վճռական հաղթանակը։ Այդ պատճառով էլ նա պնդում էր, թե սուրհանդակներն այսօր ևեթ պետք է ճանապարհ ընկնեն։ Հարկավոր էր շտապ դիմել ինչ-որ միջոցի։ Եթե դա նույնիսկ աննպատակ նախաձեռնություն լիներ, միևնույն է, մարդիկ հույսով ու լարված կսպասեին։

Ավագների խորհրդի որոշման համաձայն կամավորները հավաքվեցին խորանի հրապարակում։ Գաղթականների բոլոր բնակիչները եկել էին այստեղ, քանի որ իրենց կյանքը պատրաստակամությամբ զոհաբերողների ընտրությունը վերաբերում էր ամբողջ ժողովրդին։

Գաբրիելը վերադառնում էր զինվորների մոտից։ Թեթևակի աչքի էր անցկացրել խրամատները։ Ցանկանալով կանխել գլուխ բարձրացնող վտանգավոր ալարկոտությունն ու վիճաբանությունները, նա հրամայել էր կեսօրից հետո վերսկսել զինավարժությունները։ Թուրքերից գրաված երկու հարյուր մաուզերյան հրացաններով այժմ արդեն լիովին զինված էր առաջին զորաբանակը։ Ծանր ճակատամարտում ընկած զինվորներին փոխարինելու էին լավագույն պահեստայինները։ Արդեն որոտում էր Ջաուշ Նուրհան էլլեոնի թվատ շեփորը։ Նա վարժեցնում էր իր նորակոչիկներին։

Գաբրիելը ճանապարհի կեսն էր անցել, երբ պատահեց Իսկուհուն։ Հոգեկան առաջին բուռն, անակնկալ պոռթկումից հետո աղջիկը մանկական սրտաբացությամբ ձգտում էր շարունակ լինել նրա կողքին։ Այժմ գրեթե լուռումունջ քայլեցին մինչև խորանի հրապարակը։ Իսկուհու ներկայությամբ Գաբրիելին համակում էր ինչ-որ զարմանալիորեն խաղաղ ինքնավստահություն։ Նա միշտ այն զգացումն ուներ, թե

այդ դեռատի աղջիկն իր կյանքի ճանապարհին հանդիպած ամենավստահելի, ամենամտերիմ էակն է, որն իր հեզ ջերմությամբ դուրս է գալիս գիտակցական հիշողության սահմաններից։ Իսկուհին Գաբրիելի կողքից չէր հեռանում նույնիսկ խորհրդարանում, թեև նա միակ կինն էր, որն առանց որևէ հիմքի հայտնվում էր խորհրդակցող ավագների շրջանում։ Երկյուղ չէ՞ր կրում, թե իր վարմունքն աչքի կընկնի, կամ իր եղբայր Արամը կարող է կասկածել։ Գուցե դա իր անդրանիկ զգացմունքով տարված արտասովոր մարդու անկեղծությո՞ւն էր, մարդ, որի բոլոր հույսերն ու ոգորումները հողմացրիվ էին եղել, իբրև սնամեջ երազ։

Մոտ քսան երիտասարդ կամավորներ սպասում էին ավագների խորհրդի վճռին։ Դրանցից հինգը անչափահաս տղաներ էին։ Պատանեկան զորախմբի առավել հասուն մարտիկներին թույլ էր տրված ներկայանալու։ Գաբրիելը սարսափով ու զայրույթով նկատեց Հայկի կողքին կանգնած իր որդուն՝ Ստեփանին։ Ավագների հետ փոքր-ինչ խորհրդակցելուց հետո Տեր-Հայկազունն անցավ ընտրությանը։ Նա պարտավոր էր հաշվի առնել այն ամենը, ինչ կապված էր ճարպկության, ֆիզիկական ուժի հետ։ Ինչ վերաբերում էր լողորդներին, ապա երկարաբարակ մտածելու հարկ չկար։ Թե ովքեր էին դրանք լինելու, ոչ ոք չէր կասկածում։ Վաքֆում՝ Որոնտեսի դաշտավայրի ծովեզրյա ամենահարավային գյուղում, կային երկու նշանավոր լողորդ և ջրասույզ, մեկը՝ տասնինը, մյուսը՝ քսան տարեկան։ Տեր-Հայկազունը նրանց հանձնեց կաշվե մի գոտի, որի ճեղքի մեջ կարված էր անգլիական, ամերիկյան, ֆրանսիական, ռուսական, իտալական որևէ ռազմանավի հրամանատարին ուղղված օգնության կոչը։ Արևը մայր մտնելուց հետո տղաները պետք է հրաժեշտ տային իրենց հարազատներին, ճանապարհ ընկնեին Հյուսիսային լեռնաթամբի կողմից։

Հալեպ գնացող սուրհանդակի ընտրությունը մի քիչ ավելի երկար տևեց։ Մարդիկ խելք-խելքի տալով եկան այն համոզմանը, որ ավելի լավ կլինի, եթե միայն մի հոգու հանձնարարեն այդ խիստ վտանգավոր գործը։ Պատվելի Արամի կարծիքով չափահասը ավելի սակավ հնարավորություն ուներ ողջ ու անվթար հասնելու վիլայեթի մայրաքաղաք, քան մի պատանի, որն իր հագուստով հաղիվ թե տարբերվեր մահմեդական տղաներից։ Դրանից բացի, անչափահաս սուրհանդակն ավելի հեշտությամբ կարող էր մտնել ամեն ծակուծուկ։ Այս խելացի փաստարկումն ընդունվեց, և խոսքն բոլորը միաբերան տվին մի անուն.

— Հա՛յկը։

Չկար ավելի լավ թեկնածու, քան առասպելական ճարպկությամբ օժտված այդ խոժոռ, համարձակ ու քաջակռիվ տղան։ Կամ նա, կամ ոչ ոք։ Ամբողջ գաղթականությունում չկար մի գեղջուկ, որը հողի հետ այնքան մտերիմ լիներ, ինչքան Հայկը, նրա պես ունենար թռչնային խոշոր աչքեր, գորշուկի քիթ, առնետի լսողություն, իժի ճկունություն։ Եթե կար մեկը, որը մահացու վտանգից խույս տալով կարող էր հասնել Հալեպ, ապա դա միայն ու միայն Հայկն էր։

Բայց երբ Տեր-Հայկազունը, խորանի առաջին աստիճանին կանգնած՝ տվեց Հայկի անունը, Ստեփանն անվայել աղմուկ-աղաղակ բարձրացրեց։ Գաբրիելի դեմքը բարկությունից այլայլվեց, երբ տեսավ, թե ինչպես իր որդին կամավորների շարքից առանց քաշվելու դուրս եկավ, ցցվեց իր առաջ։ Գաբրիելն իր համապատկերի անախորժ վաղահասությունը, ներքին ու արտաքին խաթարումը երբեք այնքան պարզորոշ չէր զգացել, որքան այժմ։ Գաբրիելն առանց մի բառ ասելու, ձեռքով որդուն սաստող ու լռեցնող շարժում արեց։ Բայց անզուսպ տղան իր պահանջն այնպես բարձրաձայն հայտնեց, որ հրապարակում հավաքված ամբողջ բազմությունը լսեց նրա խզվող ու բեկբեկվող ձայնը.

— Հայրի՛կ, ինչո՞ւ Հայկը, ոչ թե ես։ Ե՛ս Հալեպ գնամ։

Որդիական նման անհնազանդությունը հայերի մեջ չլսված ու չտեսնված բան էր և չէր կարող ներվել ո՛չ արտակարգ հանգամանքներով, ո՛չ էլ հերոսության ձգտող պատվախնդրությամբ։ Տեր-Հայկազունն անհամբեր բարձրացրեց գլուխը.

— Բագրատյա՛ն, խելքի՛ բերեք Ձեր որդուն։

Պատվելի Արամը, որը վերջին շրջանում ընտելացել էր քմահաճ պատանիների վարք ու բարքին, փորձեց հանգստացնել Ստեփանին.

— Խորհուրդը վճռել է Հալեպ ուղարկել միայն մի հոգի։ Իբրև չափահաս և խելացի մարդ, դու պետք է հասկանաս, որ խորհրդի հրամանը մեզ բոլորիս համար էլ օրենք է։ Պետք է հնազանդվել առանց հակաճառելու։ Այնպես չէ՞։

Թուրքական հաուբիցներ գրավող տղան գլուխ չուներ ո՛չ օրենքի, ո՛չ էլ սահմանադրության հետ։ Նա ոչ մի պատկերացում չուներ առաջադրանքի մասին, չգիտեր, որ այդ նպատակի համար ինքը բնավ էլ պիտանի չէ։ Տղան իրեն նվաստացած էր զգում, քանի որ առաջնությունը տրված էր նրա ամենամեծ մրցակցին։ Այնքան պատկառելի մարդկանց ներկայությունը մազաչափ անգամ չմեղմացրեց Ստեփանի հանդուգն պոռթկումը։ Նա հայացքը գամեց հոր դեմքին.

— Հայկն ինձնից միայն երեք ամսով է մեծ։ Ֆրանսերեն չգիտե։ Միստր Ջեքսոնը նրա ասածը չի հասկանա։ Իսկ ինչ կարող է անել նա, ե՛ս էլ կարող եմ։

Գաբրիելի համբերության բաժակը լցվեց։ Բարկացայտ մի քայլ արեց որդու կողմը.

— Ի՞նչ կարող ես անել։ Ոչինչ էլ չես կարող անել։ Փափկասուն եվրոպացու մեկն ես, մեծ քաղաքում շփացած լակոտ։ Կատվի կույր ձագի պես կբռնվես։ Դե, կորիր աչքիցս։ Գնա մորդ մոտ։ Մյուս անգամ քեզ այս կողմերում չտեսնեմ, թե չէ...

Խիստ հանդիմանության այս խոսքերը, իհարկե, անխոհեմ էին։ Դրանք դիպան Ստեփանի սրտի ամենանուրբ լարին, պայքարով նվաճված բարձունքից տղային վայր գլորեցին, այն էլ հասարակության աչքի առաջ։ Ջուրն ընկան նրա կատարած բոլոր սխրագործությունները՝ Աստվածաշունչն Իսկուհուն վերադարձնելը, հրանոթների հերոսական գրավումը, որի համար քիչ մնաց արժանանար «էլլեոն» պատվավոր տիտղոսին։ Ստեփանի մտքով կայծակի արագությամբ անցավ. աշխարհում ոչ մի բան հավիտենական չէ։ Ամեն փառք էլ ենթակա է վրեժխնդիր, դարանակալ խարդավանքի։ Ամեն ինչ պետք է սկսել նորից։ Նա հանկարծ լրիվ հանդարտվեց։ Արևախանձ դեմքի մաշկը հետզհետե ծածկվեց մուգ կարմրությամբ։ Տղան իր խոշոր աչքերը հառեց Իսկուհուն։ Կարծես առաջին անգամ էր տեսնում։ Նրան թվաց, թե աղջկա հայացքում և՛ խստություն կա, և՛ նախատինք։ Իսկուհին իր տապալման անկարեկից վկա՞... Դա արդեն շա՜տ ծանր հարված էր։ Հանկարծ Ստեփանը հեկեկաց։ Հեկեկաց ո՛չ իբրև գրեթե հասուն մարդ, ո՛չ իբրև թշնամուց հրանոթներ խլող ռազմիկ, այլ իբրև փոքրիկ, վիրավորված տղա։ Մանկական այդ պոռթկուն հեծկլտոցը բազմության մեջ ոչ թե կարեկցանք առաջացրեց, այլ, ընդհակառակը, չարախնդություն։ Դա չափազանց դժվար մեկնաբանվող չարախնդություն էր, որը համակել էր ոչ միայն Ստեփանի ընկերներին, այլև մեծահասակներին և ուղղված էր ոչ միայն Բագրատյանի որդու, այլև (ինչ-ինչ մութ պատճառներով) իր՝ Բագրատյանի դեմ։ Մարդկանց միջև գոյություն ունեցող հիմնական փոխհարաբերությունը գրեթե չի փոփոխվում։ Բագրատյանի և տեղացի ժողովրդի հիմնական փոխհարաբերությունը, հակառակ ամեն հաղթանակի, ամեն հիացմունքի, երախտագիտության ու պատկառանքի, ավելի ու ավելի խորն էր արտահայտվում մի զգացումով. «Մենք խորթ ենք իրար»։ Այդ զգացումը դրսևորելու համար միայն շարժառիթ էր պետք, ինչպես հիմա։

Ստեփանն իսկույն զսպեց իր հեծկլտուն վիշտը։ Սակայն ցավի փութանցիկ նոպան բավական էր, որ տղային լիուլի հեգնեին Հայկի հրոսակախմբին պատկանող ընկերները, ինչպես նաև պատանեկան զոբագնդի չարաճճիները։ Ջորս կողմից ծաղրական խոսքեր էին տեղում։ Նույնիսկ միոտանի Հակոբը բացեիբաց ծիծաղում էր, և դա աչք էր ծակում։ Միայն Հայկն էր լուրջ ու մտասույզ կանգնած։ Կարծես միջադեպը ոչ մի առնչություն չուներ իր հետ և իր ծիծաղը չէր շարժում։ Ստեփանին ուրիշ ոչինչ չէր մնում անել։ Դավաճանաբար ցնցվող ուսերը կուչ ածելով, դանդաղ հեռացավ, անտարբերությամբ իր ետևում թողնելով խայտառակությունը։

Գաբրիելը լուռ նայեց որդու ետևից։ Բարկությունն անհետ չքացել էր։ Հիշեց Մոնթռեոյից Ստեփանի ուղարկած վաղեմի նամակը։ Սիրտը տակնուվրա եղավ։ Ահա, Ստեփանը, կոկիկ հագնված, գլուխը տղայավարի թղթին խոնարհած՝ խոշոր-խոշոր տառեր է նկարում։ Հիշեց նաև անցած-գնացած կյանքի մյուս իրադարձությունները, և սիրտը կրկին ճմլվեց։ Մտածեց. Ստեփանն արդեն մեծացել է, նոյեմբերին կլրանա տասնչորս տարին։ Բայց նույն պահին «կլրանա» և «նոյեմբեր» բառերը, նրան խոցեցին իբրև ծաղրանկարային ցնորքներ։ Նա ցնցվեց ինչ-որ ստոր նախազգացումից. կա մի բան, որն արդեն անհնարին է կանխել։

Գաբրիելը դիմեց դեպի Երեք վրանի հրապարակը։ Ուզեց որդու հետ նորից խոսել։ Բայց վրանում չգտավ ո՛չ նրան, ո՛չ էլ Ժուլիեթին։ Սպիտակեղենը փոխեց։ Նկատեց, որ աղա Ռիֆաաթ Բերեքեթի նվիրած մետաղադրամներից մեկը չկա։ Դա հենց հայ մեծ թագավոր Աշոտ Բագրատունու խրոխտ գլուխը պատկերող ոսկե դրամն էր։ Պրպտեց իր բոլոր շորերի գրպանները։ Դրամը չկար ու չկար։

Դժբախտություն պատահեց։ Երբ թուրքերն ու արաբները տեր դարձան հայկական գյուղերին, միանգամից վերջ տրվեց Սաթոյի թափառական երկնակի կյանքին։ Երբ աղջիկը վերջին անգամ սիրտ արեց հովիտ իջնել, քիչ մնաց՝ կյանքից զրկվեր։ Հովտում վխտացող մահմեդական անչափահաս տղաների հրոսակախումբը վախվորած վայրենուն տեսնելով՝ իսկույն ընկավ նրա ետևից։ Հրդեհն էլ իր հերթին աղջկա առաջ փակեց ծանոթ արահետներն ու լեռնախորշերը։ Սաթոն ստիպված էր բավարարվել Դամլաչքի սարահարթով, մի քանի գահավեժ ձորակներով ու հեղեղատներով։ Սակայն գաղթականների միապաղաղ շրջակայքը, բանուկ ճանապարհները, արահետները, լեռնագոգերը, Հարավաբերդից մինչև Քաղաքաձոր, ապա մինչև Հյուսիսային լեռնաթամբը ձգվող ձանձրալի գագաթներն ու ալիքաձև թմբերն ինչպե՞ս կարող էին գոհացնել Սաթոյին, որը տեղով-տեղ անհանգստության մարմնացում էր։ Գաղթականների երեխաների հետ խաղալու հնարավորությունն էլ խափանվեց։ Մի քանի օր առաջ Տեր-Հայկազունը, հակառակ ուսուցիչների ընդդիմության, կարգադրեց վերսկսել դասերը։ Բայց նույնիսկ դպրոցի ամենախստապահանջ բռնակալ Հրանտ Ոսկանյանին չէր հաջողվում սովորական գերեզմանային լռություն հաստատել այն ժամանակ, երբ երեխաների հետ նստած էր լինում Սաթոն։ Հենց որ այս շրջմոլիկը հայտնվում էր դպրոցի հրապարակում, բոլոր աշակերտները միաբերան ձայն էին տալիս.

— Հոտա՜ծ, հոտա՜ծ։

Մարդու էության միջից անհնարին է արմատախիլ անել մի հատկություն։ Նա իր մշտաբորբոք փառասիրությանն անողոքաբար ձգտում է հագուրդ տալ ի հաշիվ իրենից ցած կանգնածների, թշվառների, այլանդակների, նույնիսկ այլազգիների, որտեղ և ինչպես կարող է։ Ստորացնելու մարմաջը և դրանից բխող վրեժխնդիր հակահարվածը համաշխարհային պատմության բնորոշ լծակներն են, որ շատ խղճուկ ձևով են քողարկվում քաղաքական իդեալի հնամաշ վերարկուով։ Նույնիսկ այստեղ, լեռան բարձունքներում, հալածվածների վերջին ապաստարանում, որբ ու անդաստական Սաթոն մանկական աշխարհին ցանկալի առիթ էր տալիս, որ տարեկիցներն իրենց զգան ավելի բարձր, ավելի բարեծնունդ։ Իսկուհու վարած դասերից մեկի ժամանակ ծայր առավ ծաղրուծանակի ահավոր ոռնոց։ Ուսուցչուհին, առանց իր սեփական խորշանքը թաքցնելու, վտարեց ատելի դարձած աղջկան.

— Սաթո, գնա և, խնդրեմ, մեկ էլ այս կողմերում չերևաս։

Աղջիկը պատվի ու ամոթանքի հանդեպ ունեցած համառ անտարբերությամբ միշտ դիմանում էր ամբողջ հրոսախմբի հարձակումներին։ Բայց այժմ, երբ թշնամու կողմն անցնելով՝ իրեն վռնդում էր զմայլելի օրիորդը, «քյուչուք հանըմը», Սաթոն պետք է հնազանդվեր։ Նա դանդաղ հեռացավ։ Եվրոպական զգեստված, կեղտակուր շրջազգեստը, որի թևքերը թիթեռներ էին հիշեցնում, աղջկան արտառոց տեսք էր տալիս։ Նա, իհարկե, գնաց մինչև մոտակա թփուտը, սուսուփուս դարան մտավ։ Այդպես շնագայլն է թաքնվում, սովատանջ աչքերով խժռում հանգստացող քարավանը։

Սաթոն այնքան էլ խեղճ ու կրակ չէր, ինչքան թվում էր։ Նա էլ իր անկախ աշխարհն ուներ։ Օրինակ, հասկանում էր այն կենդանիներին,

որոնց հանդիպում էր իր թափառումների ժամանակ։ Իսկուհին և մյուսները, անշուշտ, կերդվեին, թե նա դրանց անխիղճ հոգեառն է։ Բոլոր հիմքերը կային։ Բայց և այնպես իրողությունը դրա հակառակն էր։ Ընկեցիկն իր ատելությունն ու վնաս հասցնելու մոլուցքը բնավ չէր գործադրում կենդանիների դեմ։ Սրանց հետ վարվում էր խնամքով, քշփշում այնպես, կարծես հասկանում էր նրանց լեզուն։ Անզգա ձեռքով վերցնում էր կծիկ դարձած ոզնուն, հետը շշնջյունով այնքան երկար խոսում, մինչև կծիկը քանդվում էր, դուրս էր ցցվում ոզնու սրածայր դունչը, և կենդանին շուկայի ճարպիկ չարչու նման խորամանկ աչքերով վայրկենապես ծանր ու թեթև էր անում իր օգուտն ու վնասը։ Սաթոն սովորաբար այնպես էր խոսում, կարծես բերանում կուլ չտված պատառ կար, բայց արի տես, որ նա հասկանում էր թռչնային գեղգեղանքի իմաստը, գիտեր, թե ինչպես են թևավորներն իրար կանչում, իրար հրապուրում։ Այս բոլոր հատկություններն աղջկան պատիվ կբերեին, բայց նա դրանք դիտմամբ թաքցնում էր, երկյուղ կրելով, թե հակառակ դեպքում գլխին կարող է հանկարծ փորձանք գալ։ Կենդանիներից բացի, նա ընդհանուր լեզու էր գտնում նաև Յողոնօլուքի գերեզմանատան շրջակայքում հաստատված խելագար կանանց հետ։ Չէր էլ նկատում, թե ինչով են իրարից տարբերվում լրջաբարո կանայք և այդ խելացնոր վհուկները, որոնք շաղակրատում էին մինչև շնչակտուր լինելը։ Բոլոր դեպքերում հաճելի էր մասնակցել դրանց բանավեճերին. ո՛չ սուր միտք էր պահանջվում, ո՛չ էլ խոսքի կուլտուրա։ Փոքրիկ կենդանիներ, խելագար կանայք և կույր մուրացկաններ — ահա այն թագավորությունը, որտեղից Սաթոն քաղում էր իր գերազանցության զգացումը։ Իսկ այդ զգացումը պետք է ամեն մարդ-արարածի՝ ապրելու համար։ Ինչ վերաբերում է Նունիկին, Վարդուկին ու Մանուշակին, ապա Սաթոն նրանց խոնարհ ծառան էր, երկրպագուհին։ Սակայն իրերի բերումով աղջիկը զրկվել էր այդ կանանց ընկերակցությունից։ Իսկ գաղթականության շրջանակում ձանձրալի էր թափառելը. ոչ մի հետաքրքիր բան։ Երեխաներն էլ նրան անգթորեն հալածում էին։

Սաթոյի անգործության մատնված անհանգիստ ոգին մի այլ ասպարեզ ընտրեց. լրտեսել մեծահասակներին։ Արտակարգ նուրբ հոտառությամբ, որի առաջ ծիծաղելի էին դպրոցական անմատչելի դասերը, նա կռահում էր, թե ինչ կա թաքնված այդ չափահասների ներսում, իսկույն գտնում էր անասնականության, մուրացկանային ընչաքաղցության, մոլությունների ցնորամտության հետքերը։ Կարծես լսում էր, թե ինչպես է աճում վտանգավոր զգացումների խոտը, զգացումներ, որոնց

էությանը ինքը դեռևս անհաղորդ էր։ Որտեղ մի բան կարգին չէր, անհագ լրտեսության մագնիսը նրան քաշում էր այդ կողմը։ Եվ դա աղջիկն անում էր առանց իրեն հաշիվ տալու։

Զարմանալու ի՞նչ կա, եթե Սաթոն շատ շուտ դուշակեց Ժուլիեթի ու Գոնզագի միջև տեղի ունեցածը։ Աղջկան համակեց մոտալուտ հեղաշրջման գրգռիչ նախազգացումը։ Բոլոր ընչազուրկներին հատուկ է հեղաշրջումների հետ կապված այս չարախնդությունը, հին աշխարհը կործանելու քաղցր հույսը, որը փոքր բախումների և մեծ հեղափոխությունների ամենահիմնական խթանն է։ Սաթոն կրնկակոխ հետևում էր զույգին։ Ժուլիեթն ու պարոն Գոնզագը Բագրատյանից հետո նրա տեսած ամենահետաքրքիր էակներն էին։ Սրանք աղջկա մեջ չէին բորբոքում այն ատելությունը, ինչ վատ ծառաներն զգում են իրենց տերերի նկատմամբ։ Բնավ։ Նրան այրում էր պարզունակ արարածներին հատուկ անզուսպ հետաքրքրությունը։ Չէ՞ որ այդ ամենը ինչ-որ գերերկրային բան էր թվում։ Բայց թե Գոնզագին՝ որոտաձայն երաժշտությամբ իրեն վախեցնողին, Սաթոն նայում էր ծեծված շան բնազդական սոսկումով։

Սաթոն շատ շուտ հայտնաբերեց զույգի ժամադրավայրը։ Դա գտնվում էր «Ռիվիերայի» դափնեվարդերի ու մրտենիների խորհրդավոր հովանու տակ։ Աղջիկը ցնծությամբ ողողված դեմքը կամացուկ հպեց ճյուղերին։ Զմայլված աչքերով սկսեց վայելել աստվածաշնորհ մի ներկայացում։ Վսեմաշուք տիկինը՝ ֆրանգստանցի հանրմը, մշտաբույրը, տիտանուհին, գիսախոիվ պտակած՝ նվաղուն դեմքն ու տոչորվող բերանը գամել էր օտար տղամարդու զուսպ դեմքին, որը կուշտ հայացքով, բայց և եռանդուն համտես էր անում բնության պարգևը, նախքան լիովին ըմբոշխնելը։

Սաթոն տեսավ այն, ինչ կարելի էր տեսնել։ Բայց տեսավ և այն, ինչ տեսնել չէր կարելի։ Ուսուցիչներն այս աղջկանից վաղուց էին ձեռք քաշել։ Սրա թերի զարգացած, վայրիվերո ուղեղին ոչ մի կերպ չէին հասնում այբուբենն ու թվաբանական բազմապատկումը։ Ինչևէ, Սաթոն ետ էր մնացել, քանի որ արտակարգ զարգացած հոտառությունն ու շոշափելիքը կլանել էին մտավոր ամեն մի կարողություն։ Մրտենիների ու դափնեվարդերի ետևում թաքնված՝ նա վայելում էր ոչ միայն տեսարանի այրող հրապույրը, այլև, դրա հետ միաժամանակ, հանրմի փխրունությունն ու Գոնզագի կարծրությունը։ Դատողությամբ ոչինչ չէր հասկանում, բայց հոտառությամբ ամեն ինչ զգում էր։

Սաթոն ոչ մի գնով ժամանակից շուտ չէր ընդհատի իր այս հայեցողական բավականությունը, եթե հանկարծ գլուխ չբարձրացներ նրա միակ նուրբ զգացողությունը վիրավորող ինչ-որ շփոթմունք։ Ամենուրեք քիթը խոթող աղջիկն անկարող էր իր տեսադաշտից երկար ժամանակ դուրս թողնել մյուս զույգին։ Այս զույգը ո՛չ թատերական ներկայացում էր խաղում, ո՛չ էլ սիրո թաքստոց ուներ։ Երբեք չէր առանձնանում ծովակողմյան լաբիրինթոսային թփուտների մեջ, այլ գերադասում էր սարահարթի լերկ գագաթներն ու ալիքաձև, ամայի թմբերը։ Առանց նկատվելու դժվար էր հետևել երկուսին։ Բայց Սաթոն բարեբախտաբար, ավելի ճիշտ՝ դժբախտաբար կարողանում էր դառնալ անտեսանելի։ Այս ասպարեզում ի՞նչ էր նրա առաջ նույնիսկ Հայկը։ Երկրորդ զույգը հետզհետե ավելի ու ավելի էր աղջկա ուշադրությունը շեղում առաջին զույգի հետ կապված քաղցր ու տպավորիչ հետապնդումներից։ Գաբրիելն ու Իսկուհին երբեք չէին համբուրվում։ Սաթոն այդ բանը ոչ մի անգամ չէր տեսել։ Համենայն դեպս նրանց չհամբուրվելն ավելի էր բորբոքում գաճաճին, քան Գոնզագի ու Ժուլիեթի լիաբուռն գրկախառնությունները։ Երբ Գաբրիելն ու Իսկուհին ձեռք-ձեռքի տված՝ մի պահ իրար էին նայում, ապա, կարծես սարսափահար եղած, հապճեպ թեքում հայացքները, Սաթոյին այդ քնքուշ միասնությունը թվում էր ավելի կատարյալ, ավելի վրդովեցուցիչ, քան Գոնզագի ու Ժուլիեթի ունմնացորդ մերձավորությունը։ Ամենից առաջ, օրիորդի և գլխավոր հրամանատարի մտերմությունը ատելություն էր շարժում, տխրություն պատճառում։ Սաթոն վերհիշում էր անցած-գնացած ոսկեդենիկ օրերը։ Մի՞թե Զեյթունում որբանոցի դաստիարակչուհին միշտ էլ նրա նկատմամբ բարեսիրտ չէր, ներողամիտ։ Մի՞թե հաճախ պարզ ու որոշակի չէր ասում «Ի՛մ Սաթո»։ Մի՞թե թույլ չէր տալիս, որ աղջիկը նստի գետնին, շոյի ու փաղաքշի իր ոտքերը։ Արդյոք էֆենդուց բացի, ուրիշ ո՞վ էր մեղավոր, երբ անգթորեն վերջ տրվեց փոխադարձ մտերմությանը։ Ուրիշ ո՞վ էր մեղավոր, երբ Իսկուհին, որի հանդեպ Սաթոն սրտամտիկ խանդաղատանք էր զգում, վռնդեց որբուկին. «Գնա՛, Սաթո, և մյուս անգամ այս կողմերում չերևաս»։

Շրջմոլիկը տխուր-տրտում ինչ-որ տեղ էր փնտրում՝ մտքերն ի մի բերելու։ Բայց թե մտորելն ու պլաններ կազմելը նրա բանը չէր։ Նա կարող էր միայն հեղհեղուկ պատկերներ ստեղծել, կուչ գալ անակնկալ, կայծակնային զգացումների ազդեցության տակ։ Իսկ այդ պատկերներն ու զգացումները բնավ կարիք չէին զգում կարգավորիչ դատողության։ Դրանք յուրովի, նպատակասլաց ձևով գործում էին, հանգույցներ ստեղծում, օղակներ հյուսում։ Ի վերջո վրեժխնդրության այնպիսի ոստայն պատրաստվեց, որի մասին Սաթոն մինչ այդ ոչ մի գաղափար չուներ։

Ժուլիեթը գնում էր Գաբրիելի մոտ։

Գաբրիելը գնում էր Ժուլիեթի մոտ։

Իրար հանդիպեցին Երեք վրանի հրապարակի և Հյուսիսային լեռնաթամբի արանքում։

— Գաբրիել, քեզ մոտ էի գալիս,— ասաց կինը։

Ամուսինն էլ նույնը կրկնեց։

Վաղուց ի վեր օտարուհուն կաշկանդող շփոթմունքն ու մոլորվածությունն իրենց գործը տեսել էին։ Որտե՞ղ էր Ժուլիեթի «կայծկլտուն քայլվածքը»։ Նա այնպես էր առաջ շարժվում, կարծես հարկադրված էր։ Հիրավի, դա այդպես էր։ Գոնզագը նրան ուղարկել էր վերջնականորեն ասելու ճշմարտությունը, հայտնելու իր կամքը, քանի որ բաժանման օրը հասել էր։ «Այս ի՞նչ է, կարճատե՞ս եմ դարձել,— մտածեց Ժուլիեթը։— Այնքա՜ն վատ եմ տեսնում»։ Զարմացավ. ամառային հետճաշյա պահին շրջակայքը պարուրվել էր նոյեմբերյան մթնշաղով։ Արդյոք անտառային հրդեհի ծո՞ւխն էր շղարշի պես սփռվել Դամլաջրքի վրա, թե՞ դա այն մյուս, տարօրինակ ծխի շղարշն էր, որ վերջերս ծանրացել էր ֆրանսուհու բանականության վրա և շարունակ թանձրանում էր։ Զարմացավ, թե ինչո՞ւ այժմ, երբ ինքը կանգնած էր Գաբրիելի առաջ, Գոնզագը դարձավ ծիծաղելիորեն անիրական։ Զարմացավ, թե այդ Գոնզագը ինչո՞ւ էր հոժարակամ ստանձնում իր՝ Ժուլիեթի բեռը։ Ամեն ինչ այնքա՜ն անցողիկ էր թվում, այնքա՜ն զարմանալի։ Գուլպայի կապը քանդվել էր, գուլպան կախվել էր ծունկն ի վար։ Անտանելի զգացում։ Բայց ֆրանսուհին մնաց անտարբեր կանգնած։ «Ես կռանալու ուժ անգամ չունեմ,— անցավ նրա մտքով,— այնինչ այս երեկո պետք է ժայռերն ի վար մագլցեմ մինչև Սուեդիա»։ Այնուհետև ամուսիններն անցան միանգամայն դատարկ խոսակցության։ Սկսեց Ժուլիեթը.

— Ինձ նախատում եմ, թե ինչո՞ւ վերջին օրերին քեզ մոտ չեկա... Դու ծանր պահեր ապրեցիր, մեծ հաղթանակ տարար և շարունակ վտանգի մեջ էիր... Օ՜, բարեկամս, քո առաջ ամոթապարտ մնացի...

Մի քանի շաբաթ առաջ նման խոստովանությունը Գաբրիելին կարող էր հուզել, բայց այժմ նրա պատասխան-խոսքը գրեթե ձևականություն էր.

— Ժուլիեթ, ես էլ եմ ինձ քո պատճառով մեղադրում։ Քո նկատ-

մամբ պետք է ավելի հոգատար լինեի։ Բայց, հավատա, հենց այս բո-պեին էլ ես չեմ կարող քո մասին մտածել։

Սա երկդիմությամբ լի մեծ ճշմարտություն էր, կարող էր իրողությունը խոստովանելու արիություն ներշնչել նաև Ժուլիեթին։ Սակայն Ֆրանսուհին շտապեց համամիտ լինել.

— Ինքնին հասկանալի է, Գաբրիել։ Տեսնում եմ, որ ստիպված ես մտածել բոլորովին այլ բաների մասին։

Գաբրիելը վտանգավոր ճանապարհով շարունակեց առաջ գնալ.

— Բարեբախտաբար միշտ էլ տեղյակ եմ եղել, որ դու բնավ էլ մենակ ու լքված չես։

Այս անհույզ, որոշ իմաստով լեթարգիական քնով համեմված խոսակցությունն արդեն հասել էր մի կետի, երբ երկուսն էլ իրենց հայացքներին կարող էին տալ ցանկացած ուղղությունը։ Ժուլիեթը բացեիբաց խոսելու հնարավորություն ստացավ անհավատալիորեն արագ։ Կարող էր ասել.

— Գաբրիել, ես այստեղ օտար եմ։ Հայկական ճակատագիրն ավելի զորավոր դուրս եկավ, քան մեր ամուսնությունը։ Այդ ճակատագրից խուսափելու մի ելք միայն ունեմ։ Քանի՞-քանի՞ անգամ ինքդ ես ցանկացել, ինքդ ես առաջարկել, որ փրկվեմ։ Հույս ունեի, թե մինչև վերջ դիմանալու ուժ կունենամ։ Ես՝ այդ ուժից զուրկ եմ, չեմ էլ կարող զուրկ չլինել, քանի որ քո պայքարն իմ պայքարը չէ։ Բարեկա՜մս, հավատա. արդեն շա՜տ մեծ բան է, որ ես մինչև այսօր կարողացա դիմանալ այս հուսալքող կյանքին։ Բայց արդեն բավական է։ Թող գնամ։ Չէ՞ որ հիմա ոչ թե քեզ եմ պատկանում, այլ մեկ ուրիշի։

Սակայն Ժուլիեթի շուրթերից դուրս չեկան այս պարզ ու բնական խոսքերը։ Շարունակ փայփայելով այն սնոտի պատրանքը, թե ամուսնության մեջ զոհաբերողն ու բարձր աստիճանի վրա գտնվողն ինքն է, Ֆրանսուհին համոզված էր, որ իր խոստովանությունը Գաբրիելին կկործանի։ Երանի՜ հավատար, թե ամուսինը կարող է բարեգութ ձայնով պատասխանել.

— Հասկանում եմ, շեր։ Եթե նույնիսկ ինձ կործանի մեր բաժանումը, քեզ ետ չեմ պահի։ Քեզ համար կանեմ ինչ ձեռքիցս գա։ Հանուն քո փրկության թող ես զրկվեմ անգամ Ստեփանից, որին դու նույնպես ուզում ես ազատագրել։ Թերևս վատ չէ, եթե ես, իբրև այս ժողովրդի պատասխանատու առաջնորդը, կորցնեմ անձնական կյանքի հետ ինձ կապող վերջին թելերը։ Միայն մի բան, Ժուլիեթ։ Ես քեզ սիրում եմ և

կսիրեմ մինչև կյանքիս վերջին ակնթարթը, եթե նույնիսկ սիրտս արդեն պատկանի ոչ թե քեզ, այլ մի ուրիշ կնոջ։

Ահա այսպես հեշտ ու հանգիստ, ամենայն սրտաբացությամբ, հարցը կարող էր լուծվել, բայց իրողությունն այնքան խառնաշփոթ էր, որ պահասարակ այդ գործից հնարավոր չէր գլուխ հանել։ Ժուլիեթը նույնքան քիչ էր ճանաչում Գաբրիելին, որքան և սա՝ նրան։ Ֆրանսուհին հաստատ չգիտեր. Գոնզագին իրո՞ք սիրում է։ Գաբրիելն էլ հաստատ չգիտեր. արդյոք ի՞նչ սեր է իրեն կապել Իսկուհու հետ, և դա արդյո՞ք սեր է։ Ժուլիեթի կրոնական ու քաղաքացիական անցյալը ծառանում էր մեղապարտ երջանկության դեմ։ Շատ ու շատ պատճառներով Ֆրանսուհին չէր վստահում Գոնզագի այնքա՜ն թափանցիկ անթափանցությանը։ Անհանգստանալու հիմք էր տալիս մանավանդ այն, որ հույնը երեք տարով Ժուլիեթից փոքր էր։ Փարիզում ամեն ինչի համար կարելի էր գտնել տրադիցիոն ձև, սակայն Դամլաջրքի ֆանտաստիկ ոլորտում կնոջ վրա ծանր էր անդրադառնում բարոյազուրկ լինելու գիտակցությունը։ Ինչևէ, դա խճողված իրադրության մի մասն էր միայն։ Մի քանի րոպե առաջ նա լիովին պատրաստ էր հենց այս գիշեր Գոնզագի հետ հեռանալ գաղթականությունից և սպիրտի գործարանում սպասել շոգենավի։ Մինչդեռ հետևյալ պահին այդ միտքը թվաց ծիծաղելիորեն անիրագործելի։ Շատ մեծ քաջություն ու վճռականություն է պետք, որպեսզի մարդ անվերապահորեն ապավինի ինչ-որ արկածախնդրության, մանավանդ երբ դա պետք է իրականացվի մահվան սպառնալիքի տակ։ Ի՞նչ աներ Ժուլիեթը, որ առավել խոհեմ վարված լիներ՝ Մուսա լեռան բարձունքներում ձեռքերը ծալած սպասեր իր ճակատագրի՞ն, թե՞ ճաշակեր Բեյրութում լքվելու դառնությունը։ Գիշերային մագլցումները, Որոնտեսի հարթավայրում սփռված մահմեդական գյուղերի միջով անցնելու վտանգը, սպիրտի տակառների տակ ծովային ուղևորություն կատարելը, որևէ ականանավի հարձակմանը ենթարկվելու սպառնալիքը — այս ամենն այնքա՜ն անհարիր էր երկուսի փոխհարաբերության ծիծաղելի ոճին։ «Դա ինձ հարմար չէ»,— ճանապարհին եզրակացրեց Ժուլիեթը։ Բայց այդ ամենն ի՞նչ էր Ստեփանին կորցնելու վշտի առաջ։ Պետք է ճողոպրե՞ր իր երեխայի մոտից, այլևս չհետևեր նրա սննդին ու մաքրությանը, երեկոները (օ՜, մայրական սո՜ւրբ սովորություն) չպետք է մոտենար շեյխավրանում դրված մահճակալին, չպետք է տեսներ, թե արդյոք հանգի՞ստ է պառկած իր զավակը։ Բոլոր զանցանքները, հանրագումարի գալով, դարձան Ստեփանի դեմ գործված հանցանքի մի զգացում, որը և ժայռի պես ծանրացավ մոր սրտին։ Այդպես էլ սեփական մեղքի գի-

տակցությամբ ծանրաբեռնված, նա եկավ Գաբրիելի մոտ՝ ամեն ինչ բացեիբաց ասելու, հրաժեշտ տալու։

Ամուսինները նայում էին իրար։ Գաբրիելը տեսնում էր անքնությունից գունաթափված, կարծես ծերացած մի դեմք։ Նրան թվաց, թե կնոջ քունքերին ինչ-որ սպիտակավուն փայլ է սփռվել։ Բայց ոչ մի կերպ չկարողացավ մեկնաբանել, թե Ժուլիեթի աչքերն ինչո՞ւ են այդքան տենդոտ, բերանն ինչո՞ւ է մեծացել, ինչո՞ւ են շուրթերն ուռել ու իրարից հեռացել։ «Սա այստեղ ձեռքից գնում է,— մտածեց Գաբրիելը։— Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել»։ Քիչ հետո, երբ Իսկուհու մասին խոսելու թեթև պահանջ զգաց, նույն բոպեին հրաժարվեց այդ մտքից. «Ի՞նչ կարիք կա։ Քանի՞ օր դեռ ունենք մեր առջևում»։

Կինը տեսնում էր խիստ կնճռոտված մի դեմք։ Բոլոր ձևերն ու գծերն իրար էին խառնվել, շրջանակվել այն կլոր, փշփշոտ մորուքով, որը ֆրանսուհին տանել չէր կարողանում։ Այդ դեմքը տեսնելիս նա շարունակ ինքն իրեն հարց էր տալիս. «Ինչպե՞ս թե, մի՞թե Գաբրիելն է այս արևելցի բոի ավազակապետը»։ Բայց ձայնը Գաբրիելինն էր։ Եվ հենց այդ վաղածանոթ ձայնի պատճառով Ժուլիեթը չէր կարողանում ասել ճշմարտությունը։ Ականջին ինչ-որ ձայն էր հնչում. «Մնամ, գնամ»։ Իսկ հոգին մորմոքում էր. «Երանի՜ վերջ տրվեր այս ամենին»։

Խոսակցությունը վտանգավոր ճանապարհից ցած սահեց։ Գաբրիելը Ժուլիեթին հուսադրեց մոտակա օրերի բարենպաստ հեռանկարներով։ Հավանաբար երկար զինադադար է լինելու։ Մի անգամ էլ շեշտեց բժիշկ Ալթունու տված հոգեբանական խորհուրդը. պետք է անկողնում պառկել և կարդա՜լ, կարդա՜լ, կարդա՜լ։

Հրդեհի ծխի մի ամպ ծուլորեն ծվեն-ծվեն եղավ նրանց աչքի առաջ։ Ստիպված եղան կտրել-անցնել սուր, բայց անուշահոտ ծխի գոտին։ Գաբրիելը կանգ առավ.

— Ի՞նչ անուշ է խեժի բույրը... Որոշ տեսակետից հրդեհը բարեբախտություն է։ Հենց թեկուզ այս ծուխը. ամեն ինչ ախտահանում է։ Անտառում, համաճարակի բաժանմունքում, ցավոք սրտի, արդեն քսան հոգի կա պառկած։ Բոլորն էլ վարակվեցին հալեպցի անիծյալ դասալիքից...

Գաբրիելն իր կնոջ հետ խոսում էր միայն հասարակական հարցերի շուրջը։ Այլ ասելիք չուներ։ Անտարբեր ամուսինը ոչինչ չկռահեց այն ամենից, ինչ նրան կինն ասաց լռության լեզվով։ «Կգնամ, կգնամ»,— դարձյալ հնչեց խեցու խշշոց հիշեցնող մի ձայն։ Բայց երբ ծխի ամպի կեսն էին անցել, Ժուլիեթը հանկարծ գունատվեց և երերաց։ Գաբրիելը

բռնեց, որ չընկնի։ Կինը սարսռաց. այնքա՜ն հարազատ էր այդ հպումը։ Ամուսինը հազա՜ր անգամ այդպես գրկել էր նրան։ Եվ կինը ջղաձգորեն շուռ տվեց երեսը.

— Գաբրիել, ներիր. երևի հիվանդանամ... կամ գուցե արդեն հիվանդ եմ...

Գոնզագ Մարիսն արդեն սպասում էր պայմանավորված տեղում «Ռիվիերայում»։ Շուրջը նայելով մտասույզ ծխեց, վերջացրեց իր կեսգլանակը։ Քանի որ արտակարգ խնայող էր, դեռևս քսաներկու գլանակ ուներ։ Ծխախոտի մնացորդները չէր գցում, պահում էր ծխամորճի համար։ Ջքավոր ընտանիքներից դուրս եկած և էժանագին դիշերօթիկներում ապրած շատ ու շատ մարդկանց նման, որոնք, հակառակ վայելուչ երևալու բուռն ձգտումին, երբեք չեն կարողանում միաժամանակ երկուական կոստյում ունենալ, Գոնզագը ևս իր ունեցածին վերաբերվում էր մալեռանդ խնամքով, օգտագործում մինչև վերջին թելը, վերջին պատառն ու կաթիլը։

Երբ Ժուլիեթը նկատելիորեն երերուն քայլվածքով մոտեցավ, նա, ինչպես միշտ, ոտքի թռավ։ Լիակատար նվաճումից հետո էլ Գոնզագը սիրուհու հետ վարվում էր կնամեծար հարգանքով։ Շեղ հոնքերի տակ վառվող աչքերում ցոլանում էր նախկին հոգատար ուշադրությունը, թեև այժմ գրա վրա ավելացել էր անկաշառ քննադատության ինչ-որ նոր երանգ։ Նա իսկույն զգաց Ժուլիեթի պարտությունը.

— Դարձյա՞լ չես ասել։

Կինն առանց պատասխանելու նստեց նրա կողքին։ Ի՞նչ պատահեց աչքերին։ Մոտերքում ամեն բան օրորվում էր, ինչպես անձայն փոթորկից, կամ ծածկվում տեղատարափ անձրևի շղարշով։ Իսկ երբ մշուշը փարատվեց, ծովի միջից դեպի վեր ընձյուղվեցին անթիվ արմավենիներ... Ալիքների վրայով իրար ետևից, գլուխները բարձր պահած, ասես մարդկանցից վիրավորված՝ ուղտեր անցան... Ալիքների ճոպփյունը երբեք այդքան բարձր չէր հնչել, այդքան մոտ չէր եղել... Ժուլիեթն իր սեփական խոսքն անգամ չէր հասկանում։ Գոնզագի ձայնն էլ հեռո՞ւ հեռվից էր գալիս.

— Ժուլիեթ, ամեն ինչ խզուր կանցնի։ Ահագին ժամանակ ունեիր... Շոգենավը մեզ չի սպասի, դիրեկտորն էլ մեզ երկրորդ անգամ չի օգնի։ Այս գիշեր պետք է ճանապարհ ընկնենք։ Վերջապես խելքի եկ։

Կինը բռունցքները սեղմեց կրծքին, առաջ թեքվեց։ Կարծես ուզում էր զսպել ինչ-որ ջղաձգող ցավ։

— Գոնզագ, ինչո՞ւ այդքան սառն ես խոսում ինձ հետ։ Ինչո՞ւ առհասարակ երեսիս չես նայում։ Հապա նայիր դեմքիս։

Հույնը հակառակն արեց, հայացքը սևեռեց դեպի հեռուները, որպեսզի կինն ավելի խորն զգա իր անբավականությունը.

— Ես միշտ հավատացած եմ եղել, թե դու ուժեղ կամքի տեր և խիզախ կին ես, ոչ թե սենտիմենտալ...

— Ե՞ս։ Ես այլևս այն չեմ, ինչ էի։ Ես արդեն մեռած եմ։ Ինձ թող այստեղ։ Գնա մենակ։

Ժուլիեթին թվում էր, թե Գոնզագը կառարկի։ Բայց սա լուռ մնաց։ Ֆրանսուհին երկար չկարողացավ տանել այդ լռությունը, որով նրանից այնքա՜ն հեշտ ու հանգիստ հրաժարվեց սիրած տղամարդը։ Շատ նկուն ձայնով շշնջաց.

— Կգամ քեզ հետ... այսօր, գիշերը...

Գոնզագը նոր միայն ձեռքը քնքշորեն դրեց նրա ծնկին.

— Ժուլիեթ, դու հիմա պետք է խելքդ գլուխդ հավաքես, հաղթահարես քեզ մեղավոր ճանաչելու զգացումն ու մյուս խոչընդոտները։ Դանակի մի հարվածով ամեն ինչ կտրիր, ահա լավագույն միջոցը։ Անկեղծ լինենք և ինքներս մեզ չխաբենք։ Այլ կերպ վարվել չենք կարող։ Գաբրիել Բագրատյանին պետք է որևէ ձևով հայտնել։ Չեմ ասում, թե մեծ խոստովանությունների անհրաժեշտություն կա։ Հարմար առիթը եկել է և այլևս չի կրկնվի։ Սրանով ամեն ինչ պարզ բացատրած կլինես։ Չպետք է սուսուփուս անհետանաս։ Եթե նկատի էլ չառնենք, որ դա ծայրահեղ ստորություն կլինի, ապա լավ կշռադատե՞լ ես, թե ինչպես պետք է ապրես հետագայում։

Եվ հույնը, իր ձայնին ու էությանը հատուկ ինքնավստահ անվրդովությամբ փորձեց համոզել, թե Գաբրիել Բագրատյանը պետք է գործադրի բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի ապահովի Ժուլիեթի հետագա ապրուստը։ Նրա խոսքերից ո՛չ չարչիության հոտ էր փչում, ո՛չ էլ գռեհկության, չնայած հաշվեմատյանի մեջ էր մտնում Գաբրիելի, գուցե և Ստեփանի անխուսափելի կործանումը։ (Ինչ վերաբերում էր Ժուլիեթի որդուն, ապա Գոնզագը, ծայրահեղ դեպքում, այդ բեռն էլ իր վրա կվերցներ, թեև դա, անշուշտ, էապես կդժվարացներ փախուստի պայմանները)։ Նա անհամբեր հապճեպությամբ ավարտեց իր քարոզը, քանի որ շա՜տ անգամ էր նույնը ասել, մինչդեռ արդեն անցնում էին վերջին բարեհաջող ժամերը։ Եթե Ժուլիեթն ընդունակ լիներ կանոնավոր մտածողության, ապա իր վարմունքը կհիմնավորեր կտրուկ ու խելացիորեն։ Բայց արդեն քանի՞ օր է, որ լսած կամ մտաբերած որևէ

բառ քարի պես ծանրանում է ուղեղին, մնում մեխված։ Այժմ, երբ լսեց «ինչպե՞ս ես ապրելու հետագայում» արտահայտությունը, «ապրել» բառն սկսեց անվերջ պտտվել գլխում։ Այդպես է լինում, երբ գրամոֆոնի մաշված ձայնասկավառակի որևէ ակոսից ասեղը դուրս չի գալիս, և նույն հնչյունները կրկնվում են խենթացնելու աստիճան։ Գետնի տակից հառնում էր անըմբռնելի մի զարհուրանք։ Կարծես Ժուլիեթը նստած լիներ ճահճի եզրին։ Ապա նա մեքենայի պես սկսեց կրկնել.

— Ինչպե՞ս եմ ապրելու հետագայում, ինչպե՞ս եմ ապրելու հետագայում։ Բեյրութո՞ւմ։ Իսկ ինչո՞ւ։

Գոնզագը Ժուլիեթին խղճաց։ Նրան թվաց, թե կինը խղճի խայթից է տանջվում։

— Քեզ մի՛ տանջիր, Ժուլիեթ։ Միայն փրկվելու մասին մտածիր։ Եթե ուզես, քեզ հետ կլինեմ, եթե չուզես, չեմ լինի...

Այդ պահին Ժուլիեթն իր աչքի առաջ տեսավ երիտասարդ դասալիքին, որի կարմրավուն բծերով ծածկված կրծքին ինքը մի քանի օր առաջ հուսահատ հափշտակությամբ խոնարհվեց... Ապա ուզեց այցելել իր մորը... Սա իջևանել էր հյուրանոցում։ Միջանցքը երկար էր։ Հարյուրավոր դռներ կային։ Ժուլիեթը չգիտեր, թե որը բացի... Գոնզագի ձայնն արդեն հարազատ էր, քնքուշ։ Այդ ձայնը շոյում էր նրան.

— Քեզ հետ կլինեմ...

— Ինձ հե՞տ կլինես... Հիմա ինձ հե՞տ ես...

Գոնզագը մտերմական շեշտով նորից անցավ գործնական կողմին.

— Ժուլիեթ, լավ լսիր։ Այս գիշեր քեզ այստեղ կսպասեմ։ Ժամը տասին պետք է պատրաստ լինես։ Եթե մինչ այդ իմ կարիքն զգաս, եթե Բագրատյանը ցանկանա ինձ հետ խոսել, համաձայն եմ, մեկի միջոցով ինձ կանչել տուր։ Քեզ կօգնեմ։ Հետդ հանգիստ կարող ես ճանապարհորդական մի մեծ պայուսակ վերցնել։ Ինքս կտանեմ։ Խելացիորեն ընտրիր իրերը, որ Բեյրութում որևէ բանի պակասություն չզգաս։

Ժուլիեթը ջանում էր հասկանալ նրա ասածը։ Երեխայի նման կրկնում էր լսածը.

— Այս գիշեր, ժամը տասին... կբերեմ մի մեծ պայուսակ... Բեյրութում ոչ մի բանի պակասություն չի լինի... Իսկ դո՞ւ... Որքա՞ն ժամանակ ես ինձ հետ լինելու...

Կնոջ վայրիվերո խոսքերից, այն էլ վճռական պահին, Գոնզագն անհանգստացավ.

— Ժուլիեթ, ես ատում եմ «միշտ» և «հավիտյան» բառերը։

Կինը ոգեշնչված նայեց նրան։ Դեմքը բոցավառվում էր։ Կիսաբաց բերանը կամարաձև պրկվել էր։ Թվում էր, թե արդեն ներս է մտել իսկական դռնից... Գոնզագը դաշնամուրի առաջ նստած՝ նրա համար պարերգ էր նվագում... Դա այն գիշերն էր, երբ զափթիեները դեռ չէին հայտնվել... Հույն երիտասարդը հենց այդ օրն էլ առաց. «Կա միայն ակնթարթ»։ Ժուլիեթին համակեց մի անսահման զվարթություն.

— Ո՛չ, մի՛ ասա «միշտ» կամ «հավիտյան»։ Մտածիր միայն ակնթարթի մասին...

Աննկարագրելի պայծառությամբ այժմ պատկերացրեց, հասկացավ, որ գոյություն ունի միայն ակնթարթը, որ գիշերը, շոգենավը, ճանապարհորդական պայուսակը, Բեյրութը, վճիռ կայացնելը, ոչ մի բան իր համար այլևս նշանակություն չունի։ Հասկացավ, որ իրեն սպասում է անբռնադատելի մի առանձնություն, ուր ներխուժել չեն կարող ո՛չ Գոնզագը, ո՛չ էլ Գաբրիելը։ Դա հայրենիք վերադառնալու հրճվանքով լի առանձնություն էր, որի առաջ ամեն ինչ նսեմանում էր։ Այս երանությունը Ժուլիեթին տոգորեց հորդուն զորությամբ։

Գոնզագը զարմանքով տեսավ, որ նա այլևս նույն մոլորված, նեղն ընկած կինը չէ, այլ Յողոնօլուքի նախկին տիրուհին՝ առավել չնաշխարհիկ, քան առաջ։ Ցանկության պտուղը, որի հասունացմանը Գոնզագն սպասեց համբերությամբ և մահն արհամարհելով, այժմ ավելի նոր էր թվում, ավելի մոտ, քան երբևէ։ Նա Ժուլիեթին իր գիրկն առավ, կարծես առաջին անգամ։ Ֆրանսուհու գլուխը տարօրինակ ձևով մի ուսից մյուս ուսն էր գլորվում։ Գոնզագն ուշադրություն չդարձրեց։ Զլսելու տվեց նաև այն անիմաստ բառերը, որ հիվանդը թոթովում էր արբեցուցիչ հեշտանքով։

Սաթոն գլխի չընկավ, թե ինչ պատահեց, մինչև նրա տեսադաշտում հայտնվեցին մի խումբ տղամարդիկ։ Որոշ հեռավորության վրա դարան մտած աղջիկը դիտում էր ամուսնական հավատարմության դրժումը։ Բայց տխուր էր և ընկճված. ստիպված էր թփերի մեջ պառկել, պարապ-սարապ նայել զույգին։ Ա՛յ, ուրի՛շ բան, եթե ցնցող հայտնագործությունը կարողանար ծախել։ Որքա՜ն կուրախանար պառավ Նունիկը, որքա՜ն երախտապարտ կլիներ, ինչպե՜ս կվարձատրեր իր ծառայությունը։ Ափսո՜ս. աղջիկը գերության մեջ էր։ Այլևս չէր կարող շահավետ լուրեր տանել լեռից հովիտ, հովտից լեռ։ Սակայն դա նրա մեջ ավելի էր բորբոքում միակ հիմնավոր զգացումը՝ խաղը։ Հարկավոր էր Իսկուհուն բաժանել էֆենդուց։ Հարկավոր էր էֆենդուն որևէ կերպ վնաս հասցնել։

Սաթոն, ծնկները գրկած, պառկել էր գետնին և անթարթ նայում էր ծխից մշուշված երկնքին։

Այդ պահին մոտեցան մի քանի հոգի։ Սաթոն ճանաչեց խորհրդի ղեկավարներին։ Տեր-Հայկազունն էր, Բագրատյան էֆենդին, պատվելի Արամը։ Սրանց ետևից գալիս էին ուսուցիչ Ոսկանյանը, Թումաս Քեբուսյանը և Բիթիասի մուխթարը։ Ընտրյալները կարճատև, բայց լուրջ խորհրդակցությունից հետո խիստ ընկճված էին թվում։ Անհանգստանալու բոլոր հիմքերը կային։ Կենսամթերքի, այսինքն՝ անասունների, քանակը նվազում էր ոչ թե նախատեսված չափերով, այլ սոսկալի անկման ինչ-որ անհայտ օրենքով։ Որքան նվազում էր անասունների քանակը, այնքան ավելանում էր այդ անկման արագությունը։ Շարունակ կրճատում էին օրապահիկը, չկարողանալով կանխել վատ սննդի հետևանքները՝ մահացության դեպքերը։ Ինչքան էլ պատվելի Արամը ջանք թափեց, ձկնորսական ասպարեզում ամեն ինչ ձախողվեց։ Պարենավորման հարցը սպառնալից բնույթ էր ստանում։ Վարակիչ հիվանդությունն էլ իր հերթին էր տագնապահար անում։ Հենց միայն երեկ անտառում հինգ հոգի էին մահացել։ Բժիշկ Ալթունին հազիվ էր քարշ տալիս իր ծերունական ուժասպառ, ծուռումուռ ոտքերը։ Հիվանդանոցի ներսում և շուրջը ավելի քան հիսուն վիրավոր կար պառկած, այդքան էլ՝ խրճիթներում։ Ո՛չ վիրակապ, ո՛չ կարգին դեղորայք։ Բոլորն էլ ապավինել էին աստծո ողորմածությանը։ Բայց ամենաչարագուշակ երևույթը մարդկանց ճնշող, կասկածելի ընկճվածությունն էր՝ հաղթանակի անսպասելի հետևանքը։ Դրան նպաստում էին անտառային հրդեհի առաջացրած տոթը, ծայրահեղ հոգնածությունը, խղճուկ ու միապաղաղ սնունդը, բայց հիմնական պատճառն այն էր, որ կյանքն արդեն դարձել էր անտանելի։ Վերջին երկու օրում, Սարգիս Կիլիկյանի հետ կապված անախորժությունից բացի, բազմաթիվ ընդհարումներ եղան։ Բանը հասավ նույնիսկ դանակի։ Այս ամենը գաղթականի պատասխանատուներին ստիպեց, որ նրանք իրենց հայացքն առավել աչալրջությամբ հառեն ծովի կողմը։ Գիտեին. Դամլաջրքի սկուտեղաձև դարավանդի վերևում, իրադարձությունների ոլորտից միանգամայն դուրս, ծածանվում էր իրենց վիթխարի դրոշը «Քրիստոնյաները աղետի մեջ են» նշանաբանով։ Պատանեկան զորագնդին պատկանող երկու հոգի միշտ հերթապահում էին, դիտում ծովը՝ նավ նկատելու հույսով։ Բայց տղաներին լիովին հավատ ընծայել չէր կարելի։ Գուցե և անուշադրության պատճա-

ռով աչքաթող էին արել որևէ շոգենավ, նույնիսկ մի քանիսը։ Այլապես ինչո՞ւ մինչև այժմ ոչ մի ձկնորսական կատեր անգամ չէր երևացել, այն էլ օգոստոս ամսին, երբ Սուեզիայի ծովախորշում վխտում են եռակայմ փոքրիկ նավերը։ Մի՞թե աստված իրոք մեռյալ ամայության էր դատապարտել ծովը, որպեսզի մուսալեռցի հայերը կորցնեին փրկության ամենավերջին հույսը։ Ավագների խորհուրդը վճռել էր ուժեղացնել ծովակողմյան հսկողությունը, նոր կարգ ու կանոն սահմանել։ Արդեն պահակություն էին անելու չափահաս տղամարդիկ։ Սկուտեղաձև դարավանդից բավական հեռու, լեռան հարավային մասում, հրվանդանաձև բարձունքի վրա, պետք է հաստատվեր երկրորդ դիտակայանը։ Ահա հենց այդ նպատակով էլ, ամենահարմար տեղը որոշելու համար, «Ռիվիերայի» կողմերն էին եկել գաղթականի ավագները։

Փափուկ, ցածրիկ խոտով ծածկված գետինը կլանում էր լուռ քայլող մարդկանց ոտնաձայները։ Նույնիսկ Սաթոն ոչինչ չէր լսում։ Երբ նա պատահմամբ շրջվեց մյուս կողքի վրա, խումբն արդեն բավական մոտ էր։ Աղջիկը վեր թռավ. մտքով ինչ-որ բան անցավ։ Ընդառաջ գնաց մոտեցողներին, ձեռքերն ուժեղ թափահարելով նշաններ արեց։ Սկզբում ոչ ոք ուշադրություն չդարձրեց։ Միշտ էլ այդպես էր։ Հենց որ Սաթոն մի տեղ երևար, բոլորն իսկույն շուռ կտային երեսները, ամոթխառն զզվանքով կխուսափեին այդ խեղճ արարածից։ Բոլորի համար էլ Սաթոն «անձեռնմխելի» էր, իրավազուրկ, չնայած քրիստոնյաների համար բոլոր էակներն էլ իրենց ծնունդով ու ծագմամբ աստծո առաջ իրավահավասար են։ Հիմա էլ մտահոգ մարդիկ երևի չտեսնելու տվին ձեռքերը թափահարող խենթուկին և ուզում էին անտարբեր անցնել-գնալ։ Բայց խմբի վերջին մարդը՝ Թովմաս Քեբուսյանը, հանկարծ կանգ առավ, շրջվեց Սաթոյի կողմը։ Այս «պարտությունը» մյուսների վրա այնքան ուժեղ ազդեցություն գործեց, որ նրանք մեխվեցին տեղում և բարկությամբ նայեցին ձեռքով-ոտքով ինչ-որ բան հասկացնող աղջկան։ Այդ բանից Սաթոն սրտապնդվեց։ Մարդիկ ավելի ու ավելի լարված էին նայում այլանդակ գաճաճին, որը կարծես դիվահար էր եղել։ Սաթոն աչքերն արագ-արագ թարթում էր, շքեղությունը կորցրած զգեստի տակ դողում էին բարակ ոտքերը, այլայլված բերանը բացելով, սրով նա խուլ ու համրի էր նման, ուզում էր ինչ-որ բան ասել, բայց խոսքերը կարծես դեմ էին առել կոկորդին, խեղդում էին։ Օդը թիավարող ձեռքերով նա շարունակ ցույց էր տալիս ծաղկաթփերն ու ծովը։ Այդ վարմունքից բխող ներշնչումը կոտրեց մարդկանց դիմադրությունը։ Մոտեցան Սաթոյին, և Ծեր-Հայկազունը դժկամությամբ հարցրեց, թե

նա ինչ է ուզում հայտնել, ինչ է պատահել։ Գնչուհու դեղնավուն դեմքը ծամածռվեց։ Աչքերը հուսահատ ճպճպացրեց, իբր թե անհնարին է պատասխանել։ Սակայն առավել եռանդով շարունակեց թափահարել ձեռքերը, ցույց տալով ծովը։ Մարդիկ իրար նայեցին։ Վայրկենապես բոլորի մտքով նույն բանն անցավ. ռազմանա՞վ։ Թեև ոչ ոք չէր ուզում գործ բռնել պատահաբար լույս ընկած այդ բճի հետ, այնուամենայնիվ բոլոր մուսալեռցիներն էլ գիտեին, որ Սաթոն անգերազանցելի հետախույզ է։ Ով իմանա, գուցե աղջիկն իր լուսանային զզվելի, արտասովոր սրատես աչքերով ծովի հեռավոր հորիզոնում ծխի սյուն էր հայտնաբերել։ Մի բան, որ ոչ ոք չէր կարողանա անել։ Տեր-Հայկազունն իր գավազանով նրան թեթևակի առաջ հրեց, կտրուկ հրամայելով.

— Դե՛, առա՛ջ, մեզ ցույց տուր իմացածդ։

Սաթոն հպարտորեն առաջ նետվեց, սկսեց վազել։ Երբեմն-երբեմն կանգ էր առնում, նշաններ անում։ Երբեմն էլ ձեռքն աղաչաբար դնում էր բերանին, հասկացնելով, թե ոչ մի ձայն չպետք է հանել, քայլելիս չպետք է աղմկել։ Արտասովոր հուզմունքից ոչ մեկը չէր խոսում։ Բոլորն էլ քայլում էին անշշուկ, զգուշավոր կեցվածքով, միանդամից տեղի տալով իրենց փոքրիկ ուղեցույցի պահանջին և սեփական խոր հետաքրքրությանը։

Մշտադալար տոսախների ու մաթուզենիների մոտով անցնելուց հետո խումբը հասավ խիտ, կաշետերև թփուտին, որով եզերված էր լեռան գահավեժ կողմը։ Այս կիսախավար և զով թփուտի միջով ամենուրիք ձգվում էին փոսեր, ոլորապտույտ նրբանցքներ ու արահետներ։ Մի աղբյուր օձաձև գալարվելով առաջ էր վազում, ժայռապարսպից ցած նետվում, դառնում ջրվեժ ու սահանք։ Այստեղ-այնտեղ պատահում էին ընդհանուր քաոսից գլուխները դուրս հանած իտալական սոճիներ և մշտադալար թփերով պարուրված ժայռաբեկորներ։ Լեռնային խոժոռ բարձունքի գոյությունը բոլորովին չէր զգացվում։ Երբեմն կարելի էր այն տպավորությունն ստանալ, թե դա հարավային զբոսավայր է, որտեղ արհեստական լաբիրինթոս է ստեղծված։ Իր ռազմագիտական հետախուզությունների ժամանակ, պաշտպանության նախորդ շաբաթներին, Բագրատյանը հազիվ թե ոտք դրած լիներ Դամլաջրքի այս դրախտային մասը։ Բայց հակառակ այն բանին, որ շրջակայքը գեղեցիկ էր ու զով, նա այժմ քայլում էր խմբի ետևից, ոտքերի մեջ զգալով ինչ-որ տհաճ, կաշկանդող ծանրություն։

Սաթոն դիտմամբ ընտրեց թփուտի միջով անցնող ոլոր-մոլոր արա-

հետները, որպեսզի մարդիկ հանկարծակի դուրս գային սիրահար զույգի սիրավայրը՝ ծովակողմյան բացատը։

Դա այնքան անսպասելի էր, որ Ժուլիեթն ու Գոնզագն ապշեցին։ Կարծում էին, թե ոչ ոք իրենց տեղը չի հայտնաբերի։ Ուղղակի շանթահար եղան։ Դա անընդգրկելի վայրկյան էր, որի զոհը ամեն ինչ կտար, միայն երբեք ապրած չլիներ այդ պահը։

Գաբրիելը տեսավ, թե ինչպես Գոնզագը վեր թռավ, կայծակնային արագությամբ կարգի բերեց վրա-գլուխը։ Ժուլիեթը մնաց գետնին անշարժ նստած։ Մազերը խառնված էին, ուսերը՝ բաց։ Աջ և ձախ ձեռքով ջղաձգորեն կառչել էր խոտերից։ Գաբրիելին նայում էր կույրի նման, որը տեսնում է ոչ թե աչքերով, այլ մյուս զգայարաններով։

Իրադարձությունը ծավալվում էր լուռ, գրեթե առանց շարժումների։ Գոնզագը, որն արդեն մի քանի քայլ ետ էր քաշվել, տեսարանը դիտում էր սուսերամարտիկի առինքնող, անսքող ժպիտով։

Օտար տղամարդիկ, ամենից առաջ Տեր-Հայկազունը, քարացած հայացքով շուռ տվին երեսները, մեջքներն արին կնոջ կողմն այնպես, կարծես այլևս չէին կարող տանել իրենց սեփական ամոթանքը։ Կովկասի և Լիբանանի լեռներում ապրող հայերը վերին աստիճանի առաքինի ժողովուրդ են։ Նրանք ամենայն խստությամբ զսպում են իրենց կրակոտ արյունը, գայթակղության հանդեպ մնում սառնասիրտ ու աներողամիտ։ Այս քրիստոնյաների համար չկա առավել վսեմ խորհուրդ, քան ամուսնությունը։ Նրանք արհամարհանքով են նայում կնոջ և տղամարդու փոխհարաբերության այն քաոսին, որ հանդուրժում է իսլամը։ Այստեղ էլ նույնն էր։ Ամոթից երեսները շուռ տվող տղամարդիկ հավանաբար չէին բռնի Բագրատյանի ձեռքը, եթե նա հարցն արագ ու հիմնավորապես լուծեր ատրճանակի երկու կրակոցով։ Ո՛չ Տեր-Հայկազունը կխանգարեր, ո՛չ էլ պատվելի Արամը, թեև սա երեք տարի ուսանել էր Շվեյցարիայում։ Բայց Հրանտ Ոսկանյանը, առանց մի քայլ անելու, կռացավ էր մաուզերյան հրացանի վրա։ Թուխ դեմքն այնպիսի արտահայտություն էր ստացել, կարծես հրացանի փողն ուղում էր ուղղել իր իսկ բերանին և աչքերով ստուգում էր կրակելու գործնական հնարավորությունը։ Այդ սիմվոլիկ վարմունքի համար ուսուցիչը լիակատար հիմք ուներ։ Չէ՞ որ երա սրտի թագուհին՝ պաշտամունքի միակ առարկան, մեկընդմիշտ պղծված էր։

Մարդիկ թիկունքները քարացրած՝ ապատում էին։ Երկար ժամանակ անցավ։ Ոչինչ չպատահեց։ Գաբրիելն իր զինվորական ատրճանակով ոչ մի գնդակ չարձակեց։ Երբ խմբվածներն իրենց գլուխները կրկին դարձրին դեպի իրականությունը, տեսան, թե ինչպես Գաբրիելը բռնել է կուչ եկած կնոջ ձեռքերից, օգնում է, որ նա տեղից վեր կենա։ Ժուլիեթը փորձեց քայլել, բայց ոտքերը չհնազանդվեցին։ Գաբրիելը կնոջ արմունկներից բռնած՝ նրան մրտենիների արանքով դուրս տարավ իբրև փոքրիկ երեխայի։

Մարդիկ անհաշտ զայրույթով դիտում էին այդ անհավատալի վարմունքը։ Այնուհետև Տեր-Հայկազունը մի քանի բառ քրթմնջաց, և բոլորը ցրվեցին դանդաղ, ամեն մեկն իր համար։ Սաթոն վազում էր վարդապետի ետևից, կարծես ժողովրդի հովվապետից ուզում էր վարձ ստանալ իր կատարած օգտակար գործի համար։

Ոչ ոք չնայեց օտարականի կողմը։ Սա մնաց մեն-մենակ կանգնած։

Ժողովուրդը չի կարող ապրել առանց խանդավառության, ինչպես նաև առանց Մեծության։ Քաղաքաձորում ևս վաղուց լրացել էր ատելության պարտադիր ակի ժամկետը։ Պակասում էր միայն նպատակը, ուր կարելի էր ուղղել հարվածը։ Ո՞ւմ ատեին մարդիկ՝ թուրքերին և պետությունը։ Դա համայնապարփակ երևույթ էր, ուրեմն՝ և հանրամատչելի, ինչպես օդն ու տարածությունը։ Սրանք կյանքի նախադրյալներն են, բայց քանի որ միշտ կան, ոչ ոք այդ մասին չի մտածում։ Ատեին մերձավոր հարևանների՞ն։ Ո՞ւմ կարող էին գոհացնել առօրյա մանր-մունր ընդհարումները։ Համենայն դեպս ո՞չ կովարար կանանց։ Նման բախումները վերջանում էին դատական թեթև գործերով, որ և Տեր-Հայկազունը, իբրև դատավոր, ամեն ուրբաթ օր հարթում էր շատ արագ՝ խիստ նախատինքով կամ աննշան պատժով։ Ուրի՞շ հուն պետք է իր համար փորեր ժխտման հեղեղը։ Հակառակ արյունահեղ ճակատամարտերին ու ծանր զրկանքներին, հասարակության սրտում կուտակվել էր այդ հեղեղը, ելք էր որոնում։ Եվ հասարակական կյանքի գաղտնիքներից մեկն էլ այն է, որ նման ծայրահեղ հակումների ժամանակ պատահականությունը մասսային իսկույն հարմար առիթ է տրամադրում։

Նախքան ցավալի վայրից հեռանալը Տեր-Հայկազունը մի քանի կցկտուր խոսք ասաց։ Խստորեն զգուշացրեց. պատահածը պետք է անպայման մնա իբրև գաղտնիք։ Վարդապետը հաստատ համոզված էր, որ հետևանքները շատ տհաճ կլինեին, եթե խայտառակության լուրը հասներ գաղթականության բնակչության ականջին։ Տեր-Հայկազունը վստահ էր տղամարդու գաղտնապահության վրա, բայց մոռացել էր, թե

ինչ ասել է ամուսնացած տղամարդ։ Մուխթար Թովմաս Քեբուսյանը, չնայած իր վեհաշուք ու պատկառելի արտաքինին, կնոջ փեշի տակ մտած տղամարդ էր։ Նման իրադարձությունը նա չէր կարող իր ներսում պահել։ Հանգիստ չէր մնա, մինչև գաղտնիքը չհայտներ իր եռանդուն, հետաքրքրասեր տիկնոջը։ Ցանկանալով հաճոյանալ զորեղ կամքի տեր կողակցուհուն և տուրք տալ նրա բամբասամոլությանը, մուխթարն իրեն իսկույն տուն գցեց, որ կնոջը մատուցի կրծքին սեղմած գանձը, թեև գաղտնիքը պահելու հարյուրապատիկ երդում էր տվել։

Տիկին Քեբուսյանն այդ նորությունը հաղիվ կարողացավ մինչև վերջ լսել։ Կարմրատակած դեմքով շտապ-շտապ ուսերին նետեց մետաքսե գլխաշորը, դուրս սլացավ՝ իր հովանավորության տակ գտնվող և ընտիր հասարակության պատկանող տիկիններին այցելելու։

Մնացածների մասին հոգ տարավ Սաթոն։ Նա այժմ եռակի հաղթության հրճվանքն էր վայելում։ Առաջին, Բագրատյան էֆենդուն լավ հարված հասցրեց. երկա՜ր ժամանակ խելքը գլուխը չի գա։ Երկրորդ, աղջիկն իրավունք ուներ իրեն համարելու օրինավոր հասարակության օգտակար և առաքինի անդամը, քանի որ ջրի երեսն էր հանել մարդկանց շնությունն ու խառնակությունը։ Եվ, երրորդ, նա արդեն ձեռք էր բերել սեփական աչքով տեսած, հետաքրքիր մանրամասնություններով լի մի գիտություն, որի զորությամբ կարող էր որոշ դիրքի հասնել պատանեկան հրոսախմբում։ Այս վերջին հարցում Սաթոն ամենից քիչ հիասթափվեց։ Սկզբում մատով մոտ կանչեց երկու պառաված աղջկա, հուզված հայտնեց, թե ինքն ինչե՜ր գիտե։ Մյուսներն էլ հավաքվեցին։ Հմուտ զեկուցողի նման գաճաճը երկար-բարակ նկարագրում էր սուր տեսարանը, ըմբոշխնելով ուշադրության կենտրոնում լինելու անծանոթ երջանկությունը։ Ի վերջո Ստեփանը ևս իմացավ իր մոր հետ պատահած խայտառակությունը։ Պատմությունը տղային հասավ ամենագռեհիկ արտահայտություններով ու այլանդակ պատկերներով։ Սկզբում նա բոլորովին չհասկացավ ասեկոսեի իմաստը։ Մայրիկը շատ ավելի բարձր կանգնած անձնավորություն էր, քան կարծում էին Սաթոն և մնացած խաժամուժը։ Այդ էր պակաս, որ դրանք մայրիկին բամբասեին։ Մայրիկը (վերջերս նաև Իսկուհին) երկիր իջած աստվածուհի էր։ Գիշերվա ամենախո՜ր, ամենախո՜ր խավարում անգամ չէր կարելի մտածել նրա ոտքերի, ազդրերի, կրծքի մասին՝ առանց զգալու սրբապղծության ցնցող սարսուռ։

Ստեփանն ապշահար կանգնել էր, մինչդեռ հրոսախումբը բավականությամբ ու անխղճորեն ծաղրում էր նրան։ Սաթոն ասպարեզ էր

հանում նորանոր նրբերանգներ։ Գաճաճի լեզուն բացվել էր, կոկորդի արատը կարծես չքացել էր։ Եղելությունը պատմում էր ամենայն ճարտարությամբ։ Այնտեղ, ուր ձախողվել էր կրոնը, լիակատար հաջողության հասավ մարմնահոգեբանական ապաքինումը։ Խթանված ինքնագիտակցության շնորհիվ այդ պահին վերացել էր Սաթոյի լեզվական կաշկանդվածությունը։ Եթե այդ աղջիկը ծնված լիներ Ամերիկայում կամ Թուրքիայից ավելի քաղաքակիրթ մի այլ երկրում, ապա, անկասկած, կդառնար հայտնի թղթակից։

Ստեփանը լռում էր, և տղայի խոշոր աչքերը հետզհետե ավելի էին խոշորանում։ Ապա հանկարծ մի ակնթարթում նետվեց լրտեսուհու կողմը, այնպես ուժգին հարվածեց դեմքին, որ բերանից ու ծնոտից արյուն հոսեց։ Վերքը լուրջ չէր։ Քթից հոսող արյունը շուտով կտրվեց։ Բայց Սաթոն այնպես սոսկալի էր ճչում, կարծես սպանդանոց էին գցել։ Բոլոր պրիմիտիվ արարածների նման նա ևս անսահման վախենում էր ցավից ու արյունից, ինչ որ բնորոշ չէ քաղաքակիրթ մարդկանց համար։ Դրությունը բարդացավ։ Կողմնակի չարախինդ դիտողը մեծ բավականություն կստանար։ Սաթոն, այդ մերժված արարածը, շնագայլը, մշտական հալածանքի ենթակա «հոտածը» հանկարծ դարձավ կարեկցանքի ու հարգանքի առարկա։ Կեղծավոր ձայներ լսվեցին.

— Տղա տեղով աղջի՞կ է ծեծում, սրա՞ն տեսեք...

Եվ միանգամից պոռթկաց եկվորների, գոռոզների, անհարազատների հանդեպ ունեցած, վաղուց կուտակված հակակրանքը։ Մոռացության տրվեց Բագրատյանների արքայական աստիճանը, որ մարդիկ ամեն անգամ սրտանց շնորհում էին այդ տոհմին, երբ ետ էին մղվում թուրքական հարձակումները։ Մնում էր միայն ամբարտավան օտարների նկատմամբ ունեցած հինավուրց ատելությունը։ Արյունարբու ծամածռություններով տղաները նետվեցին Ստեփանի վրա, ծեծեցին, ընկան ետևից մինչև Քաղաքաձոր, մինչև խորանի հրապարակը։ Հակոբը, որ կամավորներ ընտրելիս ուրիշներին հաճոյանալու համար ընկերոջ վրա ծիծաղում էր, այժմ խիզախաբար անցավ Ստեփանի կողմը։ Հենակի օգնությամբ կատաղորեն նետվում էր ընկերոջ և նրան հալածողների արանքը։ Հայկը չկար, և հայտնի չէր, թե նա ինչ դիրք կբռներ Ստեփանի նկատմամբ։ Հալեպ գնացող սուրհանդակը դամլաջրքյան վերջին ժամերն անց էր կացնում իր մոր՝ այրի Շուշիկի հետ։

Բագրատյանի որդին վազում էր խմբի առջևից։ Փախչում էր, թեև ավելի ուժեղ էր, ավելի մարմնեղ, քան շատ-շատերը։ Եթե մի քանի հոգի միանգամից վրա պրծնեին, ապա դրանց դեն կշպրտեր, ինչպես

արջը՝ շներին։ Եվ իրոք, երբ տղաներից մեկին ճանկեց, այնպես դընքըսեց, որ ո՛չ աչք մնաց, ո՛չ ականջ։ Հակառակ շատերի համոզման, քաղաքացի տղան ֆիզիկապես ավելի զորեղ դուրս եկավ, քան բնության որդիներն առանձին-առանձին։ Հետապնդումը որսորդներին ստիպեց նորից հարգանք տածել իրենց որսի հանդեպ։

Աղմուկ-աղաղակի վրա խրճիթներից դուրս թափվեցին Քաղաքաձորի բնակիչները, շտապեցին խորանի հրապարակը։ Բազմության մեջ Սաթոն դարձյալ փայլում էր իր նորանոր տեղեկություններով։

Տղաները ձեռք քաշեցին Ստեփանից։ Սա արդեն կարող էր գլուխն ազատել։ Բուռն ցանկություն զգաց ծնողների մոտ գնալու։ Բայց կիսաճանապարհին հանկարծ մեխվեց-մնաց, փովեց խոտերի մեջ։ Անտանելի ցավից կոկորդը սեղմվում էր.

— Այլևս տուն գնալ չեմ կարող...

Անչափահասների քաշքշոցը միայն լրացրեց այն, ինչ մուխթարների կանայք սկսել էին տիկին Քեքուայանի առաջնորդությամբ։ Օրը դեռ չմթնած՝ ամբողջ գաղթականությունը արդեն ամեն ինչ խմացել էր։ Վրդովմունք առաջ բերելու նպատակով եղելությունը զարդարել էին բազմաթիվ հնարանքներով։

Հենց այդ ժամերին եղանակի փոփոխության պատճառով լեռնային հրդեհն ավելի թանձր ծուխ էր արձակում։ Սև քուլաներն ամպերի պես կախվել էին Քաղաքաձորի վրա։ Խեժի ծխից մարդու շունչը կտրվում էր, աչքերը լցվում արցունքով։ Փոշտալը, քիթ մաքրելը, հազալը դարձել էր ծանր պատուհաս։ Դա մարդկանց ավելի էր գրգռում։ Ինչպե՞ս թե։ Մի՞թե իրոք հնարավոր բան է։ Մի՞թե Մուսա լեռան ժողովուրդը, որը երկու օր առաջ մահից հազիվ փրկվեց և այժմ վստահ չէր, թե առաջիկայում էլ կփրկվի, հուսահատական վիճակում կարող էր այդ պատմությունից այդքան խորը հուզվել, այն էլ օտարականների պատճառով։ Կարելի էր տալ միայն մի պատասխան։ Քանի որ հանցավորներն օտարականներ էին, վազուց կուտակված հակակրանքը հարմար առիթ էր գտել բացեիբաց պոռթկալու։ Քանի դեռ Ժուլիեթը խազազ ժամանակ հովտում, Յողոնօլուքում, իր տնտեսությունն էր կառավարում կամ երբ ձի նըստած առոք-փառք անցնում էր գյուղական խորդուբորդ ճանապարհներով, մարդիկ խոնարհվում էին օտար կնոջ առաջ, սքանչանում այդ բարձր ու անհասանելի էակով։ Իրերի բերումով, երբ Մուսա լեռան վրա նոր կյանք սկսվեց, Գաբրիելը նշանակվեց գլխավոր հրամանատար, ամեն ինչ արմատապես փոխվեց։ Ժուլիեթը զրկվեց հայերի մեջ ընկած

ֆրանսուհու անկաշկանդ դերից։ Նա արդեն ժողովրդի հետ շղթայված էր թե՛ կյանքով, թե՛ մահով, պատասխանատու էր այդ ժողովրդի առաջ։ Գաբրիել Բագրատյանը կարող էր հարյուր անգամ շեշտել իր կնոջ բացառիկ ճակատագիրը, բացառիկ իրավունքները, բայց ի՞նչ օգուտ։ Շրջապատն օրեցօր ավելի ու ավելի քիչ էր հաշվի առնում այդ հանգամանքը։ Միապետական երկրում թագուհին՝ թագավորի կինը, միշտ էլ օտարազգի է, ուստի և առավել խիստ պատասխանատվություն է ընկնում նրա վրա։ Այս իմաստով Ժուլիեթը դեմ էր գնացել ոչ միայն իր ամուսնուն, այլև իր ամուսնու ժողովրդին։ Դրանից բացի, նրա հանցակիցը ոչ թե հայ մարդ էր, այլ միակ օտարականը։ Սիրո ընտրությունը ոչ միայն չէր արդարացվում, այլև նոր ապացույց էր օտարների վիրավորական կղզիացման ու ամբարտավանության։

Երրորդ, ամենաարյունահեղ ճակատամարտից երկու օր հետո, ճակատամարտ, որն ավելի քան հարյուր ընտանիք սգի մատնեց, խորանի հրապարակում զայրացած խռնվել էին վիրավորված առաքինության տեր մարդիկ։ Թվում էր, թե մահվան բովով անցած այդ ազգի համար չկար ավելի կարևոր հոգս, քան Բագրատյանի տան խայտառակությունը։ Զայրացողները ո՛չ շատ պառավներն էին, ո՛չ էլ շատ դեռատիները, այլ երեսունհինգից հիսունհինգ տարեկան պատկառելի կանայք, որոնք արևելքում ավելի հասակավոր են թվում, և որոնց հաճույք է պատճառում ոչ միայն ուրիշների ուրախությունը, այլև նրանց վերաբերող շարամիտ բամբասանքները։ Երիտասարդ աղջիկներն ու կանայք սովորականից ավելի սուսիկ-փուսիկ էին և մոտահոգ ականջ էին դնում պատվախնդիր տիկինների կշտամբանքներին։ Նրանք բոլորն էլ չափազանց գունատ էին։ Դամլաջրքի կյանքը հալումաշ էր արել խեղճ կանանց։ Գլխաշորերի և թասակների տակից միայն անարյուն, հյուծված դեմքեր էին երևում։ Հայուհիները, նույնիսկ ստորին խավի պատկանող աղջիկները, մատաղ հասակում քնքուշ են, նրբակազմ։ Սարսափը, տառապանքը, զրկանքները Քաղաքաձորի երիտասարդ կանանց ավելի փքրուն էին դարձրել։ Նրանք դլուխները լրջորեն շարժելով հավանություն էին տալիս թքող-մրող տիկիններին, այս կամ այն դիտողությունն ավելացնելով տեղատարափ լուտանքին։ Բայց թե առանձնապես չէին կարողանում զայրանալ ամուսնական ուխտը դրժող կնոջ դեմ, քանի որ լավ դիտեին, թե ինչ էր սպասում իրենց և մյուս հայուհիներին։ Ոչ թե սովորական մահ, այլ բռնաբարություն և մահ։ Թթե բախտը ժպտար, ոչ-ևէ հարուստ թուրք գուցե զափթիեներից նրանց գներ իր հարեմի հա-

մար։ Այստեղ էլ տարաբախտներին կարող էին խոշտանգել ծերացող կանայք, ուղարկել հանդերձյալ աշխարհը։

Ժողովրդի բարոյական վրդովմունքի թելերն իր ձեռքին էր պահում տիկին Քեբուսյանը, ուրիշ ոչ ոք։ Հասել էր այն ժամը, երբ նա կարող էր հաշիվ մաքրել Յողոնօլուքի պալատի տիրուհու հետ (Ժուլիեթն այս կնոջ հանդեպ, անշուշտ, միշտ էլ բարյացակամ էր)։ Ուզում էր վրեժ լուծել այն բանի համար, որ իբր թե ֆրանսուհին իրիկնային հրավերքներով վիրավորում, նվաստացնում էր մարդկանց։ Ավելին։ Հասել էր այն ժամը, երբ մուխթարի կողակցուհին կարող էր վերանվաճել առաջին կնոջ դափնին։ Այդ խորամանկը չէր կարող սահմանափակվել միայն դավաճանության հետ կապված վրդովմունքով։ Շուտով ոտք դրեց նախանձի առավել արգասավոր բնագավառը։ Պետք է հանրմի, ֆրանսուհու, այդ բարձրաստիճան տիրուհու մասին ասեր ճշմարտությունը։ Սովալլուկ մարդկանց աչքի առաջ նա հանդգնում էր շռայլ կյանք վարել ինքը՝ մուխթարի կինը, լավ էր ծանոթ այդ շքեղ վրաններին, ուր նրան շարունակ հրավիրում էին, զահլան տանելու չափ։ Զարմանքով ու դառնությամբ շատ անգամ էր տեսել անառակ կնոջ պահարանները, ճամպրուկներն ու սնդուկները։ Ոչ մեկի մտքով չէր անցնի, թե դա ինչ հարստություն է։ Էլ բրինձ, էլ սուրճ, էլ չամիչ, էլ մսի պահածոներ, էլ ապխտած և յուղի մեջ դրած ձկներ, էլ եվրոպական տեսակ-տեսակ ընտիր ուտելիքներ, էլ քաղցրավենիք՝ կոնֆետ, շոկոլադ, էլ շաքարախառն մրգեր։ Ի՞նչ ասես, որ չկար վրաններում։ Հապա քաղցրասհամ բարակ հա՞ցը, փխրուն պաքսիմատն ու թխվածքնե՞րը։ Երկու կով գիշեր-ցերեկ կթում էին, կաթի երեսը քաշում, կարագ ու սեր հացնում տիկնոջը։ Այնինչ մուրացկանության դուռը հասած ժողովրդին բաժին էր ընկնում միայն ջրալի մնացորդը։ Հապա ֆրանսուհու սեփական փառահեղ խոհանո՞ցը, որ շինել էին գրողի տարած Քրիստափորն ու այդ Հովհաննես չեղածը՝ խոհարարը։ Օջախը, ոնց որ սուլթանի պալատի օջախը՝ ցանցով, խողովակով։ Միակ պակասությունն այն էր, որ տապակարանները, թասերն ու կճուճները ոսկուց ու արծաթից չէին։ Ինքը՝ Քեբուսյանի կինը, նույնպես մանուկ հասակում ոչխար չի արածացրել, այլ սովորել է օրիորդաց բարձրագույն վարժարանում։ Իր խոհանոցի սպասքն էլ կարող էր շատ շատերի աչքը ծակել։ Բայց թե մեծահարուստ Քեբուսյանն ու ինքը՝ նրա կինը, որ ոչ մի բանի կարոտություն չունեին, արդեն զուրկ էին սեփական խոհանոցից, աստծո շնորհած բաժինն ստանում էին գաղթականության ընդհանուր սեղանից, չնայած անասունների կեսից ավելին պատկանում էր համեստ մուխթարին։ Այնինչ

երեք վրանի ձրիակեր ընտիր հասարակությունը, լիառատ ապրուստ և ծառաներ ունենալուց հետո էլ, գողանում է ժողովրդին պատկանող բարիքները, ամեն օր մսի լավագույն կտորներն առանձնացնում է իր ճաշերի համար։

Չպետք է ուրանալ, որ խոհանոցային այս առեղծվածը տղամարդկանց բողոքող ստամոքսների վրա ազդեցություն գործեց։ Այնուհանդերձ նրանց զայրույթն ավելի շատ ուղղված էր ոչ թե Ժուլիեթի, այլ Գոնզագի՝ այդ անծանոթի, ներս խցկվածի դեմ։ Քիչ էր մնացել, որ տղաներից մի քանիսը միանային, մաքրեին Գոնզագի հաշիվը։ Շրջահայաց մարդիկ փորձեցին կանխել այդ մտադրությունը։ Բայց վա՜յ Գոնզագին, եթե հանկարծ երևար նրանց աչքին։

Երբ Տեր-Հայկազունը հայտնվեց հրապարակում, նրան անպատկառորեն ընդառաջ գնաց տիկին Քեբուսյանը.

— Վարդապե՜տ, չպետք է անպատիժ թողնես...

Վարդապետն ուզեց կոպտաբար մի կողմ հրել այդ կնոջը.

— Դու քո՜ մասին մտածիր։ Գնա գործիդ...

Կինն ավելի անամոթաբար փակեց հովվապետի ճանապարհը.

— Վարդապե՜տ, ես իմ մասին եմ մտածում։ Բա ես երկու հասած աղջիկ ու երկու ջահել հարս չունե՞մ։ Դու հո գիտես։ Տղամարդու աչքը կատաղած շան աչք է՝ անկուշտ։ Կնիկարմատ ասածիդ սիրտն էլ հո թույլ է ու թույլ։ Էստեղ բոլորն ապրում ու քնում են կողք կողքի։ Խեղճ մայրերն ի՞նչ սև կապեն, որ էս խայտառակությունից հետո իրենց աղջիկների ու հարսների պատիվն անարատ մնա։

Տեր-Հայկազունը գավազանով թեթևակի հրեց տիկին Քեբուսյանին.

— Խենթություններդ լսելու ժամանակ չունեմ։ Ճանապա՜րհ տուր։

Կանանց պարագլուխը՝ մկնային անհանգիստ աչքերով այդ փոքրամարմին, անբարետես արարածը, Ժուլիեթի անկումից հետո փորձում էր կեցվածք ընդունել հանդիսավոր բարձունքի վրա, փթթել իբրև քաջվարդ.

— Հապա մե՞ղքը, վարդապե՜տ, հը՞։ Մինչև հիմա մեզ մահից սատարում էր մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը։ Նա մեզ հետ էր կռվում, մեր կողմից։ Սուրբ Աստվածամայրն էլ մեզ հետ էր։ Բայց հիմա նրանց բարկացրել է այս ահավոր մեղքը։ Բա նրանք մեզ չե՞ն գցի թուրքերի ձեռքը, եթե քավություն չլինի։ Հը՞։

Տիկին Քեբուսյանը հավատացած էր, թե հաղթանակ տարավ։ Ինքնագոհ նայեց շուրջը։ Ամուսինը կանգնած էր վարդապետի ետևում, իր անհամաչափ աչքերով նայում էր բոլորին, բայց ոչ մեկին չէր տես-

նում։ Թվում էր, թե խառնակությանը միջամտելու ոչ մի ցանկություն չունի։ Տեր-Հայկազունը պատասխանեց ոչ թե կրակ կտրած կնոջը, այլ իր շուրջը խռնված բազմությանը.

— Այո, ճշմարիտ է։ Մինչև այսօր մեր Փրկիչը՝ Քրիստոսը մեզ համար զորավիգ էր։ Բայց ուզո՞ւմ եք իմանալ, թե ինչով։ Նրանով, որ ժամանակին մեծագույն հրաշքով մեզ մոտ առաքեց Գաբրիել Բագրատյանին։ Իսկ Բագրատյանը իսկական սպա է, գիտե, թե ինչ բան է պատերազմը, գիտե կռվել։ Հակառակ դեպքում մեր հաշիվը վազուց փակված կլիներ։ Մենք նրա խելքին և քաջությանն ենք պարտական, եթե մինչև այսօր կանք, գոյություն ունենք։ Ահավասիկ, ա՛յս մասին պետք է մտածեք, միայն այս մասին, ոչ թե ուրիշ բաների։

Այս խոսքը բազմության մի մասին համոզեց, և ոգշախոհ տղամարդիկ, որոնք առանց այդ էլ բարկանում էին անզուսպ ատելությունից կուրացած կիսապառավ կանանց վրա, դարձան դրության տերերը։ Տիկին Քեբուսյանը տեսավ, թե ինչպես են նոսրանում իր կողմնակիցների շարքերը, հայացքով օգնություն որոնեց։ Իսկույն գտավ վարդապետի ետևում կանգնած ամուսնուն, որը մի կես ժամ առաջ լիովին բաժանում էր կնոջ բարոյական սարսափը, խրախուսում։ Նրան դիմելով, խառնակչուհին վերամբարձ ոճով աղաղակեց.

— Մուխթարն էստեղ կանգնած է։ Լսեք մուխթարի խոսքը։ Մարդը ձեզ համար տասներկու տարի չարչարվել է։ Լսեք, թե նա ձեզ ինչ կասի։

Բայց այսքան դեմագոգաբար հրավիրված մուխթարը ոչինչ էլ չասաց, կնոջը թողեց ամոթահար կանգնած, իսկ ինքը Տեր-Հայկազունի ետևից, ճաղատ գլուխը տմբտմբացնելով, ծլկեց առաջնորդարան։ Չորս կողմից տղամարդիկ ծաղրական խոսքեր տեղացին.

— Ա՛յ կնիկարմատներ, գնացեք, ձեր կեղտերը լվացեք։ Բա դուք ուրիշ բան ու գործ չունե՞ք։ Չէ՞, սրանց սանձերը պետք է ձգել։

Տեր-Հայկազունի խրճիթում հավաքվել էին ոչ բոլոր ավագները։ Մասնավոր, սակայն չափազանց կնճռոտ հարց էին քննարկում։ Այս պատճառով էլ, գրեթե բնազդական նրբազգացությամբ, խորհրդակցում էին ոչ թե կառավարչատանը, այլ վարդապետի օթևանում։ Քանի որ խնդիրը զուտ բարոյական-բնույթ էր կրում, իսկ բարոյականության ասպարեզում Տեր-Հայկազունն անսահման իրավասություն ունեցող միահեծան տիրակալ էր, առանց երկար-բարակ մտածելու նրա հայեցողությանը թողին գործի վճռական լուծումը։

Տեր-Հայկազունը երկու պատվիրակ ընտրեց՝ դեղագործ Գրիգորին և բժիշկ Ալթունուն։ Առաջինը պետք է գնար Գոնզագի մոտ, քանի որ նա էր այդ հույնին ապաստան տվել, ուրեմն և ճանապարհ հարթել դեպի Յողոնօլուքի հասարակությունը։ Երկրորդ պատվիրակը պետք է գնար Բագրատյանի մոտ, իբրև այդ ընտանիքի վաղեմի բարեկամը և հովանավորյալը։ Ինչ վերաբերում է հիվանդ դեղագործին, պետք է ասել, որ մկրտության առթիվ խմած գինին բավականաչափ օգնել էր ծերունուն, ավելի բուժիչ ազդեցություն գործել, քան մյուս բոլոր դեղերը, որ դեռևս մնացել էին Գրիգորի մոտ։ Արդեն երկու օր էր, ինչ մարդը նորից ոտքի էր կանգնել, կարողանում էր շարժվել, թեև շատ դանդաղ, մանրիկ քայլերով։ Տեր-Հայկազունը հրամայել էր կանչել նրան, դուրս բերել թաքստոցից։ Դեղագործին կարճ ու կտրուկ բացատրեց առաքելության նպատակը։ Ծերունին պետք է անհապաղ գնար իր նախկին հյուրի ու բարեկամի մոտ։ Պատանեկան զորագնդի երկու մարտիկ ցույց էին տալու ճանապարհը, օգնելու էին, որ նա Գոնզագին գտնի։ Հենց որ Գրիգորը գտներ հույնին, պետք է հայտներ, թե ինչ վտանգ է իր կյանքին սպառնում, պահանջեր, որ նա անմիջապես հեռանա գաղթականության շրջակայքից։

Գրիգորը երկար ժամանակ չեմուչում արեց, ուզեց հրաժարվել։ Պատճառաբանեց, թե ինքը իր երկրային կոչմամբ դեղագործ է և ոչ թե իշևանատան ծառա, որ գնա, վռնդի անցանկալի հյուրին։ Ծերունու բոլոր առարկություններին Տեր-Հայկազունը լակոնիկ պատասխան տվեց.

— Դո՛ւ այդ մարդուն բերիր, դու էլ ճանապարհ դիր։

Ուրիշ ելք չկար։ Երկար դիմադրելուց հետո դեղագործը, հիվանդ ոսկորներն առած՝ բռնեց տհաճ ճանապարհը։ Գավազանին հենված՝ նա կաղալով ու անվստահ առաջ էր գնում, ողբերգական մենախոսությամբ ստուգում իր ասելիքը։ Ուզում էր գտնել մեղմ ու նուրբ ձև, գործը գլուխ բերել առանց գլխացավանքի։

Պետրոս Ալթունու պարտականությունը, ընդհակառակը, շատ ավելի դյուրին էր։ Նա պետք է Բագրատյանին զգուշորեն հայտներ ընդհանուր վրդովմունքի մասին, խնդրեր, որ տիկին Ժուլիեթն առայժմ վրանից դուրս չգա։

Մինչ մյուսներն անխոս հետևում էին, թե Տեր-Հայկազունն ինչ է հանձնարարում դեղագործին ու բժշկին, Հրանտ Ոսկանյանը՝ այդ երդվյալ ուրբաթախոսը, ձայնը գլուխն էր գցել, ճառում էր։ Սևագեմ վարժապետը միշտ էլ իր խենթություններով մարդկանց ծիծաղն էր շարժում, սակայն միշտ էլ ներում էին նրա ցասկոտ բարքն ու սնափառ

տարօրինակությունները։ Նրանք Հրանտին հարգում էին իբրև բարեխիղճ ուսուցչի։ Բայց կրակ կտրած մոլեռանդը այս անգամ դեն էր նետել խենթության դիմակը։ Բոլորը լարված ու ապշած նայում էին. ուսուցչի խոսքերից ինչ-որ վայրի ուժ էր հառնում։ Նա պահանջում էր դիվային վրեժ լուծել Գոնզագից. ամենից առաջ խլել այդ սրիկայի ամերիկյան անձնագիրն ու տեղական թեզքերեն, լրիվ մերկացնել, կապել ոտքերն ու ձեռքերը, քաջ մարդկանց միջոցով տանել հովիտ, թողնել մի տեղ, որ թուրքերը հայի հետ չփոթեին, դանդաղ խոշտանգելով սպանեին։

Մարդիկ զարմանքով ու տհաճությամբ ընդունեցին Ոսկանյանի խելահեղ պոռթկումը։ Բայց սա իր մտահղացումից հեշտությամբ ձեռք քաշողը չէր։ Ամենայն լրջությամբ սկսեց հիմնավորել պատժի անխուսափելի անհրաժեշտությունը։ Տեր-Հայկազունն այս երկարաշունչ բառահեղեղը լսում էր ոչ թե կիսափակ, այլ բոլորովին փակ աչքերով։ Ձեռքերն այնպես էր քաշել պարեգոտի թևքերի մեջ, կարծես դրանք սառչում էին։ Վարդապետը միշտ այդպես էր վարվում, երբ դժգոհում էր.

— Վարժապե՛տ, ե՞րբ պետք է խոսքդ վերջացնես։

— Ոչ շուտ, քան դուք ճշմարտությունը կգիտակցեք ինձ նման։

Տեր-Հայկազունը գլխով անհանգիստ շարժում արեց. կարծես տրզզացող ձիաճանճ էր քշում։

— Ըստ իս, այս առթիվ արդեն ավելորդ է խոսելը։

Ոսկանյանը փրփրեց.

— Ասել կուզի, ավագների խորհուրդը կամենում է այդ ստահակին ճանապարհ դնել օրհնանքով ու բարեմաղթություններո՞վ, որ հենց վաղը մեզ մատնի թուրքերին։

Տեր-Հայկազունը դառնացած նայեց խրճիթի առաստաղին։ Տերեվածածկ տանիքը խշշում էր քամուց.

— Եթե մեզ ուզի մատնել, ի՞նչը կարող է մատնել։

— Ինչ կարող է մատնե՞լ։ Ամեն ինչ։ Քաղաքածորի դիրքը, արոտավայրերի, խրամատների տեղը, մեր սննդի վատթար վիճակը, հիվանդությունը...

Տեր-Հայկազունը ձեռքի հոգնած շարժումով ընդհատեց թվարկումը.

— Այդ կարգի նորություններով ոչ ոք չի կարող թուրքերին հաճոյանալ։ Մի՞թե, իրոք, հավատացած ես, թե մահմեդականներն այդքան հիմար են և այդ ամենը դեռևս չգիտեն։ Նրանց լրտեսներն արդեն ամեն անկյուն տնտղել են... Դրանից բացի, երիտասարդը մատնիչ չէ։

Ներկա գտնվողները միաբերան հավանություն տվին վարդապետի խոսքերին։ Սակայն Ոսկանյանը բառունցքները հուսահատորեն առաջ մեկնեց, կարծես ձեռքից փախչող զոհին ուզում էր բռնել։

— Ես հարց եմ առաջ քաշել,— ծղրտաց նա,— և պահանջում եմ քվեարկության դնել, ինչպես հարկն է։

— Հարց կարող է առաջ քաշել ամեն մի դատարկախոս, ամեն մի բթամիտ, բայց իմ և միայն իմ գործն է՝ քվեարկության դնել կամ չդնել։ Ավելորդ առաջարկություններ քվեարկության չեմ դնի։ Նկատի ունեցիր, վարժապետ։ Այստեղ նստածների մեջ մեկը չկա, որ ասածդ ստորություն և խենթություն չհամարի։ Ով այլ կարծիքի է, թող ձեռք բարձրացնի։

Ոչ մի ձեռք չշարժվեց։ Վարդապետը գլխով արեց, եզրափակելով.

— Այսքանը մեկընդմիշտ բավական է։ Միտքս հասկացար։

Պարտվածն իր գաճաճ հասակով մեկ տեղից բարձրացավ, մատնացույց արեց հրապարակը.

— Դրսում հավաքված ժողովուրդը Ձեր կարծիքին չէ։

Եթե մինչ այդ Ոսկանյանի վարմունքը Տեր-Հայկազունին զզվանք և տհաճություն էր պատճառում, ապա դեմագոգիկ հայտարարությունը հանկարծ բորբոքեց վարդապետի զայրույթը։ Հովվապետի աչքերը բացավառվեցին, բայց նա իրեն իսկույն զսպեց.

— Ավագների խորհրդի պարտականությունը ժողովրդի զգացմունքներին ուղղություն տալն է, ոչ թե այդ զգացմունքներին հետևելը։

Հրանտ Ոսկանյանը Կասսանդրայի[1] նման գլուխը բացասաբար շարժեց.

— Դուք դեռ ստիպված կլինեք հիշել իմ խոսքերը...

Տեր-Հայկազունը կրկին փակեց աչքերը։ Ձայնը հնչեց չափազանց հանդարտ.

— Վարժապետ Ոսկանյան, ես քեզ խորհուրդ կտայի, որ նախազգուշացնես ոչ թե մեզ, այլ քեզ։

Մարդիկ ծայրահեղ ընկճված տրամադրությամբ և շատ երկար սպասեցին դեսպանների վերադարձին։

Հիվանդ դեղագործը հայտնվեց ավելի վաղ, քան բժիշկը։ Լրիվ ուժասպառ էր եղել։ Տնքալով փռվեց Տեր-Հայկազունի բազմոցին։ Վար-

[1] Կասսանդրա — ըստ հունական դիցաբանության, Տրոյայի Պրիամոս թագավորի դուստրը, որին Ապոլլոնը մարգարեական ձիրք էր շնորհել։ Կասսանդրան մերժել էր աստծո սերը և այդ իսկ պատճառով խստորեն պատժվել. ոչ ոք չէր հավատում գուշակուհու մարգարեությանը։

դապետը նրան մեկնեց օղու շիշը։ Սա երկու երկար կում արեց, փոքրինչ աշխուժացավ և կարողացավ հայտնել իր ասելիքը։ Գոնզագ Մարիսը դեղագործի առաքելությունն այնքանով էր թեթևացրել, որ առանց այդ էլ, առանց հանդիսավոր պահանջին հնազանդվելու, վաղուց արդեն պատրաստվել էր հենց այդ գիշերը հեռանալու։ Միայն թե պետք է սպասեր մինչև պայմանավորված ժամը, որպեսզի փրկվելու հնարավորություն ստանար նաև իր սիրուհին։ Դեղագործը չկարողացավ չգովել իր նախկին հյուրի ազնիվ վարմունքը։ Սա ոչ միայն ծերունուն էր նվիրել իր ունեցած թերթերն ու հանդեսները, այլև խոստացել էր ամեն կերպ աջակցել Մուսա լեռան հալածվածներին, ուր էլ գնալու լինի։

Տեր-Հայկազունը ձեռքի արհամարհական շարժումով մերժեց մեղապարտի այդ խոստումը։

Արդեն երեկո էր, երբ վարդապետի խրճիթը մտավ մյուս դեսպանը՝ բժիշկ Ալթունին։ Սա նույնպես ուժասպառ ընկավ բազմոցին, որ շունչ առնի։ Ախուվախ անելով սկսեց տրորել իր ծուռումուռ, հալից ընկած ոտքերը։ Ծերունին անխոս նայում էր, և Տեր-Հայկազունը նրան դժվարությամբ ստիպեց խոսել։ Սկզբում արդյունքն այնքան էլ գոհացուցիչ չէր. բժիշկը, շրթունքները հազիվ շարժելով, ինչ-որ բան քրթմնջաց, բայց նրա անատամ բերանից դուրս եկած ձայնը գրեթե չէր լսվում.

— Խե՜ղճ կին...

Այս երկու բառը խիստ զարմանք պատճառեց մուխթար Քեբուսյանին։ Սա հիշեց իր կրակ կտրած կողակցին, և նրա հայելափայլ ճաղատ գլուխն սկսեց ճոճվել մի ուսից մյուս ուսը.

— Ինչպե՞ս թե։ Այդ հարուստ կինն ինչո՞ւ է խեղճ։

Բժիշկ Պետրոսը մուխթարին նայեց մարդակերի հայացքով.

— Ինչո՞ւ։ Որովհետև առնվազն երեք օր բարձր ջերմությունից տառապում է։ Որովհետև գիտակցությունը կորցրել է։ Որովհետև հիվանդանոցում վարակվել է։ Որովհետև սիրտս նրա համար ցավում է։ Թող սատանայի բաժին դառնամ, եթե նա է մեղավոր և ոչ թե հիվանդությունը... Որովհետև...

Շունչը կտրվեց, և նա դարձյալ խորասուզվեց ինքն իր մեջ։ Ինչպե՞ս կարող էր ինքը՝ մի թերուս բժիշկ, որը միայն հինգ տարի էր գիտության հոտ առել, ինչպե՞ս կարող էր այս գեղջուկներին հասկացնել իր չիմացած բաները։ Խորը հառաչեց։ Չորս կողմը բոլորն էլ մի-մի Նունիկ, մի-մի Վարդուկ, մի-մի Մանուշակ... Հենց ինքն էլ՝ իր քոռուփուչ եղած կյանքով, իր մեռած «Բժշկական ձեռնարկով»։ Ինքն ինչո՞վ էր նրանցից լավ։ Ոչ մի բանով։

Ճանապարհի մի մասը Գաբրիելն իր կնոջը տարավ մերթ քարշ տալով, մերթ գրկած։ Վրանում Ժուլիեթը փլվեց մահճակալին՝ անկենդան աչքերով, անզգա։ Գաբրիելը փորձեց ուշքի բերել։ Ինչքան սպիրտային օծանելիք գտավ հայելավոր փոքրիկ սեղանին (դրանք Ֆրանսուհու հոգեպահուստն էին), շաղ տվեց կնոջ ճակատին ու շուրթերին։ Շփեց դեմքը, ցնցեց մարմինը։ Ապարդյուն։ Երջանիկ հոգին ծվարել էր ինքնամոռացության ամենահեռավոր խորքերում։ Տենդը Ժուլիեթի արյան մեջ, հավանաբար, բողբոջել էր օրեր առաջ, իսկ վերջին ժամին միանգամից ծիլ էր արձակել, ինչպես արևադարձային կախարդական բույս։ Մաշկը կոշտ էր, կարմիր, արևակեզ հողի նման ներծծում էր խոնավության ամեն մի կաթիլ։ Շնչառությունը հետզհետե արագանում էր, դառնում կարճատև։ Թվում էր, թե հիվանդի կյանքն անդառնալիորեն գնում է դեպի իր վախճանը։

Երբ ուշքի բերելու բոլոր ջանքերն իզուր անցան, Գաբրիելը խոնարհվեց Ժուլիեթի վրա, սկսեց շորերը հանել, որ գոնե այդ ձևով թեթևացնի կնոջ դրությունը, դուրս բերի ուշագնաց վիճակից։ Գործի անցավ տղամարդու անճարակությամբ։ Պատառոտեց զգեստն ու սպիտակեղենը, ապա նստեց մահճակալի եզրին և գիրկն առավ կնոջ ոտքերը։ Դրանք այնքան ծանր էին, այնքան ուռած, որ կոշիկներն ու գուլպաները մեծ դժվարությամբ հանեց։ Մտքով էլ չէր անցնում, թե իրեն չի համակի ոչ մեկն այն զգացումներից, որոնք սովորաբար պոռթկում են նման դեպքերում։ Ո՛չ վիրավորված արժանապատվության խոցող ցավ, ո՛չ այն պատկերացումը, թե կնոջ հիվանդ մարմինը հազիվ մի ժամ առաջ ուրիշի էր պատկանում, ո՛չ էլ գիտակցությունը սառեցնող, գիտակցության վրա քարի պես ծանրացող այն միտքը, թե երկու կյանք հավատարմությամբ իրար միացնող կապը մեկընդմիշտ կտրված է։ Գաբրիելն իր ընդարմացած հոգու խորքում Ժուլիեթի հանդեպ միայն ցավ էր զգում, անկեղծ մտահոգություն։ Նա բնավ չէր զարմանում։ Գրեթե հավատացած էր, թե հենց ինքն է աջակցել կնոջ ճակատագրին։ Որքան էլ անհավատալի թվա, դավաճանությունն ու կործանումը նրան՝ վաղուց օտարացած այդ ֆրանսուհուն, նորից դարձրին թանկ ու մտերիմ մի էակ։ Գաբրիելն իր անցյալը կսկիծով վերհիշեց միայն այժմ, երբ կնոջ թշվառ մարմինը ամուսնուն արդեն լքել էր թշնամի-հեշտասիրության սահմանագլխին։ Վարանոտ անձնուրացությամբ նա իր անճարակ մատներով արձակում ու նորից կոճկում կամ կապում էր զգեստի զանազան մասերը, որոնք ոչ մի կերպ տեղի չէին տալիս։ Այնուհետև անքթիթ հայացքը սևեռեց կնոջ փարթամ, ձյունաթույր մարմնին։ Հարյու-

բավոր զգացումներ ու խոհեր էին ծնվում, խուռներամ սլանում դեպի անէության գիրկը։ Ի՞նչ պատահեց։

Գաբրիելը նկատեց վրանի անկյունում դրված ջրով լի դույլը։ Մի քանի սրբիչ թաթախեց ջրի մեջ, որ փաթաթի հիվանդի մարմնին։ Դա այնքան էլ դյուրին գործ չէր։ Մարմինն այնպես էր ձգվել, որ Գաբրիելը հազիվ կարողացավ բարձրացնել։ Ուզեց կանչել Ժուլիեթի սպասուհիներից մեկին, բայց ամաչեց այդ մտադրությունից։ Առանց այդ էլ աղջիկները վերջերս, իրենց տիրուհու մոլորվածության և անկանոն վարձատրության պատճառով, շատ անկանոն էին ծառայում։ Այժմ Գաբրիելը պետք է մենակ լիներ, միայն և միայն մենակ։

Երբ ծերունի բժիշկը ներս մտավ, գլխավոր հրամանատարին տեսավ ուշակորույս կնոջ վրա խոնարհված։ Աչքերի մեջ շփոթություն կար։ Առաջին պահին նա կասկածեց, ենթադրելով, թե ուշագնացությունը շինծու է։ Հանցավոր կինը գուցե և խաղում էր, որ գլուխն աղատեր։ Բայց հետո տեսավ, թե Ժուլիեթն ինչպես է տանջվում ծանր տենդից։ Համաճարակի նշան էր թե՛ ջերմության հանկարծակի բարձրացումը, թե՛ նվազումը, որը վրա է հասնում երկարատև, հաճախ ուշադրություն չգրավող տկարությունից հետո։ Ալթունին բարձրացրեց Ժուլիեթի գլուխը։ Շնչառությունն իսկույն դժվարացավ, և հիվանդը փսխելու ցանկություն զգաց։ Ամեն ինչ պարզ էր։ Բայց երբ բժիշկն ստուգեց կրծքատակի և գոտկատեղի մաշկը, որտեղ ցանը սովորաբար ավելի շուտ է հայտնվում, ապա ընդամենը երեք թե չորս կարմիր, փոքրիկ բիծ նկատեց։ Ալթունին ուզեց Գաբրիելին խնդրել, որ սա անմիջապես հեռանա վրանից, սակայն, տեսնելով նրա մշուշված, խորն ընկած աչքերը, ոչինչ չասաց։ Զանց առավ իր պարտականությունը, չհայտնեց Քաղաքաձորում տիրող բարոյական անհանգիստ վիճակի մասին։ Ընդհակառակը, խնդրեց բերել տնային դեղատուփը։ Դա Ժուլիեթը գնել էր նախքան Մերձավոր արևելք մեկնելը։ Խոշոր տուփը մի ժամանակ լեփ-լեցուն էր, իսկ այժմ մեջը գրեթե ոչինչ չէր մնացել։ Ֆրանսուհին դեղորայքն իր իսկ ձեռքով տվել էր հիվանդանոցում պառկածներին։ Համենայն դեպս Ալթունին սրտի աշխատանքը կարգավորող ինչ-որ դեղ գտավ, փոքրիկ սրվակը դրեց բոլորովին ընկճված Գաբրիելի ձեռքը։ Պետք կգար, եթե զարկերակն աշխատեր անկանոն։ Մնացած խնամքը հիվանդին պետք է ցույց տրվեր հաջորդ օրը։ Ամուսինն առանձին ուշադրություն չպետք է դարձներ կնոջ ուշագնացությանը կամ զառանցանքին։ Դա տենդի հետևանք էր և տվյալ դեպքում՝ բարեբախտություն։ Արդեն կշեռքի վրա հավասար էին կյանքի ու մահվան նժարները։ Այդ

վիճակը, ինչպես ցույց է տվել փորձը, կարող էր տևել մի քանի օր։ Կյանքը վտանգի տակ էր լինելու հաղթահարված թունավորումից հետո, երբ ջերմությունը միանգամից իջնում է և շատ անգամ էլ սիրտը շարքից հանում։

Բժիշկը դույլից մի բաժակ ջուր լցրեց, գդալ վերցրեց և վարժ ձեռքով մի քանի կաթիլ սահեցրեց հիվանդի շուրթերի արանքը։ Բժշկական այս փոքրիկ ժեստը հերքեց Ալթունու անհիմն ինքնաժխտումը։ Չէ՞ որ նա իրեն սովորաբար ներկայացնում էր իբրև խեղճ ու անճարակ մի արհեստավոր։

— Միշտ պետք է ջուր խմի,— պատվիրեց նա,— եթե նույնիսկ ուշքի չգա։

Գաբրիելը միայն գլխով արեց, ոչ մի բառով չարձագանքեց այս պատվերին։ Բժիշկը, կարծես ինչ-որ բան որոնելով, շուրջը նայեց.

— Մեկը պետք է հսկի։

Քանի որ շատ էր մութ, վառեց նավթի լամպը, ապա բռնեց Գաբրիելի ձեռքը.

— Պակասը կլրանա, եթե այս գիշեր թուրքերը հարձակվեն։

Գաբրիելը փորձեց ժպտալ.

— Լեռը հրի ճարակ դարձրինք։ Թուրքերն այս գիշեր մեզ վրա չեն հարձակվի։

— Այսպե՞ս,— թառանչ արձակեց բժիշկը, և անատամ ծերունու ձայնի մեջ զգացվեց հիասթափություն։— Ափսո՞ս։

Տարիների և գերմարդկային աշխատանքի ծանրության տակ կորացած՝ նա հեռացավ, առանց կարեկցանքի խոսք ասելու այն մարդուն, որի լույս աշխարհ գալուն ինքը օգնել էր։ Բոլոր խոսքերը, բարի թե չար, նրան թվում էին դատարկ, անպատշաճ։

Գաբրիելն ուզեց մի քիչ ուղեկցել ծերունուն, մաքուր օդ շնչել։ Բայց վարագույրի մոտից ետ դարձավ։ Եթե այդ պահին թուրքերը հայտնվեին բոլոր խրամատների առաջ, նա հազիվ թե լքեր վրանի մթությունը։ Պառկեց բազմոցին, որը դրված էր Ժուլիեթի մահճակալի դիմաց։ Նրան թվաց, թե ինքը մինչ այդ երբեք հոգնած չի եղել։ Երեք արյունահեղ ճակատամարտերը, բազմաթիվ անքուն գիշերները, խրամատներից շարունակ դեպի դիտանոցներ վազվզելը, Մուսա լեռան ահավոր օրերից յուրաքանչյուրը, այս ամենը նրա ուսերից կախվել էր իբրև հողագույն տափակ դեմքով առասպելական թզուկ, որը վայրկյան առ

վայրկյան ծանրանում է։ Կա հոգնածություն հոգնածությանց, երբ մինչև մրուրը ճաշակում ես սեփական ճակատագրիդ դառնությունը։ Դարանակալ, չարամիտ քունը բաց արեց իր քարանձավը։ Գաբրիելն զգաց Իսկուհու ներկայությունը, երբ արդեն խորասուզվել էր այդ քարանձավի մեջ։ Մեծ ճիգ ու ջանք գործադրելուց հետո կարողացավ վանել քունը, վեր կենալ.

— Իսկուհի, այստեղ մնալ չի կարելի, ոչ մի վայրկյան։ Մենք այլևս չպետք է հանդիպենք...

Աղջկա բիբերը լայնացան, լցվեցին թախիծով.

— Եթե դու պետք է հիվանդանաս, ուրեմն՝ ես չպե՞տք է հիվանդանամ։

— Մտածիր Օվսաննայի ու երեխայի մասին։

Իսկուհին մոտեցավ մահճակալին, ձեռքը դրեց Ժուլիեթի ուսերին։ Այդպես էլ շրջվեց Գաբրիելի կողմը։

— Տես, այլևս չեմ կարող վերադառնալ մեր վրանը, այլևս չեմ կարող ձեռք տալ Օվսաննային ու երեխային...

Գաբրիելը փորձեց նրան հեռացնել հիվանդից.

— Ի՞նչ կասի Արամը։ Ոչ, Իսկուհի, ես այս բանի համար նրան պատասխան տալ չեմ կարող։ Գնա, Իսկուհի, ի սեր քո եղբոր։ Գնա։

Աղջիկը խոնարհվեց ուշակորույս Ժուլիեթի դեմքին, որն այժմ իրեն ավելի անհանգիստ էր զգում.

— Ինչո՞ւ ես ինձ վռնդում։ Ինչ որ լինելու է, թող լինի։ Եղբա՞յրս... էլ ոչ մի բան աչքիս չի երևում։

Գաբրիելը կամացուկ, անվստահ քայլերով հայտնվեց Իսկուհու կողքին.

— Իսկուհի, դու չպետք է այդ քայլին դիմես։

Աղջկա դեմքին տանջալից, հեգնախառն ժպիտ փայլեց.

— Ե՞ս, ի՞նչ եմ ես։ Դու առաջնորդ ես։ Եթե հիվանդանաս, ամեն բան կորած կլինի։

Իսկուհին իր թաշկինակով սրբեց հիվանդի բերանը.

— Երբ մենք Զեյթունից եկանք, Ժուլիեթն իմ նկատմամբ այնքա՞ն բարի էր, զարմանալիորեն բարի։ Այժմ ես կկատարեմ իմ պարտքը, ինչքան ուժս պատի։ Չե՞ս հասկանում։

Գաբրիելն իր շուրթերը թաղեց աղջկա մազերի մեջ։ Սա ամբողջ ուժով փարվեց նրան.

— Բայց շուտով ամեն ինչ կանցնի։ Ուզում եմ, որ իմը լինես, ուզում եմ քո կողքին լինել...

Դա Իսկուհու սիրո առաջին բացահայտ պոռթկումն էր։ Ամուր գրկախառնվեցին։ Կարծես նրանց կողքին պառկածը հանգուցյալ էր և այլևս ոչինչ զգալ չէր կարող։ Սակայն Ժուլիեթը մեռած չէր։ Շնչառությունը դառնում էր խոպոտ։ Նեղացած, ուռած կոկորդից երբեմն դուրս էին թռչում հեծեծանք հիշեցնող թույլ հնչյուններ։ Կարծես հիվանդը որոնում էր ինչ-որ մեկին, իսկ սա նրանից շարունակ խուսափում էր։

Իսկուհին իր գրկից բաց թողեց Գաբրիելին, բայց կարծես լացող ձեռքերով։ Այնուհետև միայն կցկտուր խոսքեր էին փոխանակում, քաշվելով հիվանդի ներկայությունից։

Գիշերը մի պահ Ժուլիեթն սթափվեց։ Անկապ-անկապ ինչ-որ բան ասաց, փորձեց տեղից բարձրանալ։ Ի՞նչ երկար էր նրա անցած ճանապարհը։ Բայց նա կարողացել էր հասնել մինչև Ավենյու Քլեբեր՝ իր բնակարանը։ Դամլաջրքը դեռևս շատ էր հեռու...

— Սյուզան... Ի՞նչ է պատահել... Ես հիվա՞նդ եմ... Հիվանդ եմ... Չեմ կարող ոտքի կանգնել... Դե, օգնեցեք ինձ...

Հիվանդին օգնել էր պետք։ Գաբրիելն ու Իսկուհին մոտեցան նրան, որը մտովի դեռևս իր փարիզյան ննջարանում էր։ Տենդից հետո վրա էր տվել դողը։ Հիվանդը դեսուդեն նետվելով՝ թոթովում էր.

— Այսպես... Հիմա երևի քնեմ... Սյուզան, նորից կոկորդիս ցավը... Հուսամ՝ ոչ մի վտանգ չկա... Երբ ամուսինս տուն գա, արթնացրեք...

Այդ մրմունջը՝ հիվանդի մտավոր աշխարհում ուրույն կյանքով ապրող նախկին Բագրատյանի անունը ցնցող ազդեցություն գործեց իսկական, իրական Բագրատյանի վրա։ Սա մի նոր սրբիչ թրջեց, դրեց Ժուլիեթի կոկորդին, ապա ծայրագույն խնամքով ծածկեց հիվանդին, շշնջաց.

— Այո, Ժուլիեթ, քնիր, քնիր...

Ֆրանսուհին ինչ-որ անհասկանալի բան ասաց։ Դա հնչեց իբրև հոգնատանջ մարդու երախտագիտության խոսք, քնելու մանկական հնազանդ խոստում։

Գաբրիելն ու Իսկուհին նստեցին բազմոցին՝ լուռ, իրար հպված, ձեռք ձեռքի։ Բայց ամուսինն աչքը չէր հեռացնում իր կնոջից։

Կյանքի ի՞նչ տարօրինակ շրջադարձ։ Խաբվածը ծառայում էր խաբողին, ինքն էլ մեկ ուրիշի հետ սրան խաբելով։

Ժուլիեթը կարծես քնեց։

Պայմանաժամը հասավ։ Գոնզագ Մարիսը վճռեց այլևս չսպասել։ Առա՞ջ։ Անցածն անցած է։ Այնուամենայնիվ նա իր կյանքի հաղվագյուտ շաբաթները չկարողացավ գիտակցության միջից դուրս մղել այնպես դյուրին, ինչպես կարծում էր։ Զարմանքով նկատեց, որ իրեն ետ է պահում ցավի անասելի մի զգացում։ Մի՞թե Ժուլիեթի հանդեպ ունեցած սերն ավելի մեծ էր, քան նա կարծում էր։ Թե՞ սեփական մեղքը գիտակցելուց պղտորվում էր ազատության հեռանկարը։ Վերջին օրերին Ժուլիեթն այնքա՞ն խառնաշփոթ, այնքա՞ն անհասկանալի ու կաշկանդված հոգեվիճակի մեջ էր։ Նա իր տառապանքով կրկին շարժել էր հույնի կարեկցանքը, սիրուհուն պաշտպանելու ցանկությունը։ Մինչդեռ վախճանն այնքա՞ն ամոթալի էր։ Խայտառակ պահը վերհիշելիս Գոնզագն ատամներն էր կրճտացնում, և նրա անվրդով դեմքն այլայլվում էր։ Մի՞թե ինքը թեթևամիտ սրիկայի նման պետք է տեղի տար զզվելի անկմանը... Մի քանի անգամ իր թաքստոցից դուրս գալով, ճանապարհ ընկավ դեպի Երեք վրանի հրապարակը, որ Գաբրիելի հետ խոսի և Ժուլիեթի համար պայքարի։ Բայց ամեն անգամ ետ էր դառնում։ Պատճառը ոչ թե վախկոտությունն էր, այլ անորոշ, անհաղթահարելի կաշկանդվածությունը. «Ես այստեղ արդեն օտար եմ»։ Այն վայրկյանից ի վեր հույն երիտասարդի և դամլաջըքյան աշխարհի միջև բարձրացավ անտեսանելի, սակայն զորավոր մի պատնեշ։ Նա արդեն հայկական բնակավայրը շրջապատող օդային ոլորտներն անգամ չէր կարող թափանցել։ Բայց Ժուլիեթն ապրում էր այդ պարսպի ետևում։ Հայկական ճակատագիրն ավելի զորեղ դուրս եկավ, քան ֆրանսուհին։ Պետք է ավելացնել նաև դեղագործ Գրիգորի՝ Գոնզագի նախկին տանտիրոջ, նրբանկատ նախազգուշացումը։ Մերունին ոչ մի բառով չակնարկեց սպառնացող վտանգը, սակայն խոսեց ամերիկյան անձնագրի մասին և այն կարծիքը հայտնեց, թե աշխարհում ոչ մի բան հարատև չէ։ Ավելացրեց, որ սքանչելի առավելություն է երիտասարդ լինելը, երբ ուզածդ ժամանակ կարող ես գնալ ուզածդ տեղը։ Կյանքը մշուշվում է միայն այն ժամանակ, երբ առաջին անգամ ես հեռանում հարազատ վայրից։

Մարիսը ծերունու գործնական փիլիսոփայությունն ընդունեց պատշաճ հարգանքով։ Փափկանկատ խոսակցությունից կռահեց, որ Մուսա լեռան բարձունքներում այսուհետև իր կյանքի ամեն մի ժամը սպառնալիքի տակ է։ Եվ դարանակալ վտանգի զգացումը ամեն րոպե սաստկանում էր։

Նվազող կիսալուսինը արդեն փայլում էր Գոնզագի գլխավերևում։ Պայմանաժամն անցավ։ Երիտասարդը մի ամբողջ ժամ էլ սպասեց։ Ժուլիեթը կորած էր։ Դարձյալ մի քանի քայլ արեց դեպի գաղթականները, սակայն վճռականորեն ետ դարձավ։ Երևի, բարին այդ էր։ Դանդաղ ու վարանոտ հաստատակամությամբ հագավ ձեռնոցները։ Ասիական լեռնաշխարհի գիշերային ամայության մեջ, անանցանելի մացառուտում կատարած այդ նրբակիրթ ժեստը կողմնակի դիտողին, անշուշտ, կթվար չափազանցություն։ Մինչդեռ Գոնզագի նպատակն էր մագլցելիս անվթար պահել ձեռքերը։ Այնուհետև մեր ուղևորը գոտիներով մեջքին ամրացրեց նեղ ուսապարկը։ Իր սովորության համաձայն, գրպանից հանեց սանրը, մազերը կարգի բերեց, ինչպես ամեն անգամ, երբ տնից դուրս էր գալիս։ Հակառակ ծանր իրադրությանը, նրան համակել էր ոչինչ չմոռանալու, սեփական ես-ի հետ կապված որևէ մանրուք աչքաթող չանելու, մի խոսքով՝ «օլ ռայթ»-ի[1] առողջ ու կազդուրիչ զգացումը։ Լուսնի ցոլքով ողողված դափնեվարդերի, մրտենիների ու վայրի մագնոլիաների միջով նա դանդաղ առաջ էր շարժվում։ Կարծես շուրջը ոչ թե ահարկու թավուտ էր, այլ բանուկ, հիասքանչ զբոսայգի։ Հիշեց Ժուլիեթին ասած իր մի խոսքը. «Ես շատ լավ հիշողություն ունեմ, որովհետև իմ հուշերը շատ են վատ»։ Եվ հիրավի, դեպի հարավ կատարած ամեն քայլափոխին հուշերը դալկանում էին, սիրտը բաբախում էր ավելի ազատ։ Արդեն արագ էր քայլում, հետաքրքրությամբ ընդառաջ գնում գալիքին, որի երաշխիքը անձնագիրն էր, մեկ էլ՝ բնավորությունը։ Անբնական, ևս ստվերներով սքողված ձյունապատ թմբերի ու դաշտերի նման փայլում էին ծովակողմյան կրաժայռերը։ Ներքևում հոգնած մնչում էին ալիքները։ Երբ արահետը դարձավ ավելի շեղ, Գոնզագն սկսեց կշռադատել իր ամեն մի քայլը։ Ինքնասիրահարված վայելում էր իր մկանների խաղը։ Ի՞նչ անհասկանալի արարածներ են մարդիկ։ Բոլոր սպանությունների ու ցավերի պատճառն այն է, որ նրանց մեջ, իրենց իսկ թողտվությամբ, տիրապետում է ոչ թե

[1] օլ ռայթ (անգլ.)— ամեն ինչ կարգին է

անտարբեր լույսը, այլ անմիտ ու հեզհեղուկ խավարը։ Որքա՜ն պարզ, որքա՜ն մաքուր էր դուրս եկավ այս սև ու սպիտակ լուսնաշխարհը։ Ոչընչության մեջ մարդ պետք է իրեն ոչնչություն զգա. ահա խնդիրը։ Գոնզագը հեգնախառն համակրանքի մի փոքրիկ նշույլ զգաց Գրիգոր Ցոլոնօլուքցու նկատմամբ, որի խոսքերը ոչ ոք չի մեջբերել, չի էլ մեջբերի։

Հարկ եղավ մագլցել լերկ ժայռերի երկայնքով, շրջանցել երկու լայն ճեղք։ Ահա և լեռան սրածայր քիթը, որի մյուս կողմից սկսվում էր վայրէջքը։ Գոնզագը մի պահ կանգ առավ շունչ քաշելու։ Նրա ոտքերի տակ տարածվել էր մի անչափելի խորություն։

— Սուեդիա էլ հասնեմ, մեկ է, անդունդ էլ գլորվեմ, մեկ է...— մրմնջաց ինքնիրեն, ապա ավելացրեց։— Երբ մարդ ընկնում է, սկզբում հողը կոշտ է թվում՝ իսկ վերջում՝ փափուկ...

Որքա՜ն հեռու էր արդեն Ժուլիեթը... Երբ Գոնզագը նորից թեքվեց դեպի անտառն ու թփուտները, իրար ետևից չորս կրակոց լսվեց, և գնդակները սուլելով անցան նրա մոտով։ Գոնզագն իսկույն փռվեց գետնին։ Սիրտը թպրտում էր։ Ահեղ նախազգուշացում։ Հիմա արդեն Սուեդիան նրան չէր հետաքրքրում։ Վրիժառուները խուզարկու քայլերով անցան մոտերքից։ Գոնզագը վեր թռավ, մի մեծ քար վերցրեց, շպրտեց, որքան կարող էր, հեռու։ Ներքևում իսկույն դղրդոց լսվեց։ Հետապնդողները կարծեցին, թե գտել են զոհի հետքերը, նորից կրակեցին։ Գոնզագը լեղապատառ առաջ նետվեց, հասավ լեռան այն մասը, որտեղից կարելի էր իջնել դեպի Հաբասթե գյուղը։ Հևասպառ կանգ առավ։ Այսպես ավելի լավ էր. հայկական գնդակները հօգս ցնգեցրին սեփական մեղքի գիտակցության վերջին հյուլեն։ Ժպտաց։ Իրար դեմ ցցված ջեղ հոնքերի տակից առաջ սևեռեց սառը շահադիտությամբ լի սրաթափանց աչքերը։

Նույն պահին Ժուլիեթը անհանգիստ տարուբերվում էր անզգայության և սթափ արթնության միջև։ Մի՞թե ինչ-որ մեկն ասաց. «Այո՛, Ժուլիեթ, քնի՛ր, քնի՛ր»։ Եվ ո՞ւմ ձայնն էր դա։ Հիմա՞ էլ։ Նորի՞ց հընչեց այդ ձայնը, թե՞ առաջին անգամ է լսում. «Այո, Ժուլիեթ, քնի՛ր, քնի՛ր»։ Աչքերը բացեց։ Իր ննջարանում չէր։ Կես թապե՛ ևս և նա հիշեց վրանը, ճանաչեց թե՛ Գաբրիելին, թե՛ Իսկուհուն։ Ջեղուն դժվարանում էր շարժել։ Քիմքն ու բերանի խոռոչն անզգա էին։ Մարդիկ խոսում էին նրա մենությունը։ Մարդիկ նրան հանգիստ չէին թողնում։ Քարի ուլես ծանրացած գլուխը մի կողմ թեքեց.

— Ինչո՞ւ եք լամպը վառել... Հանգցրեք... Նավթի հոտ է փչում... Այնպե՛ս տհաճ է...

Ժուլիեթի աչքերը չովեցին։ Որոնում էր մեկին ու չէր գտնում։ Հանկարծ սարսափեց։ Մի պահ թվաց, թե ուժերը վերականգնվեցին, և լրիվ ապաքինվեց։ Վերմակը դեն նետելով, ոտքերը դուրս հանեց, գոռաց.

— Ստեփա՜ն... Որտե՞ղ է Ստեփանը... Թող գա...

Գաբրիելն ու Իսկուհին հուսահատորեն դիմադրող հիվանդին ստիպեցին պառկել։ Գաբրիելը նրան հանգստացնելու համար շոյեց գլուխը, ասաց.

— Ժուլիեթ, դու հիվանդ ես... Ստեփանը չպետք է գա... Դա նրա համար վտանգավոր է... Խոհեմ եղիր...

Բայց հիվանդն իր ամբողջ կյանքը, ամբողջ գիտակցությունը դրել էր մի հատիկ սուր աղաղակի մեջ, որից և չէր հրաժարվում.

— Ստեփա՜նը... Ստեփա՜նը... Որտե՞ղ է...

Հիվանդին պաշարած գերզգայական սարսափը հանկարծ փոխանցվեց Գաբրիելին։ Սա վարագույրը մի կողմ քաշեց, նետվեց դեպի շեյխական վրանը, որտեղ Ստեփանն էր գիշերում։ Վրանը դատարկ էր։ Լամպը վառեց։ Ահա պարոն Գոնզագի մահճակալը՝ թափուր, մեռած։ Անկողնու տերն ամեն ինչ թողել էր կանոնավոր վիճակում։ Թվում էր, թե անկողինը շաբաթներով չի օգտագործվել։ Բայց Ստեփանի մահճակալի վիճակը բոլորովին այլ էր։ Այստեղ ամեն ինչ տակնուվրա էր արված։ Սավանները ցած էին կախված։ Ներքնակի վրա դրված էր պատանու բաց ճամպրուկը, որի միջից նա դուրս էր բերել, ցանուցիր թափթփել իր շորերը, վերնաշապիկները, գուլպաները։ Պարենի սնդուկը նույնպես բացված էր, անխնա կերպով դատարկված։ Անկյունում, գետնին, փայլում էր սարդինի պահածոյի երկու տուփ։ Ստեփանի ուսապարկը, որը Շվեյցարիայում էին գնել, չկար։ Գաբրիելին պատկանող իրերից անհայտացել էր թերմոսը։ Գտնել հնարավոր չեղավ, այնինչ երեկ դրված էր փոքրիկ սեղանին։ Վրանը մի անգամ էլ ուշի-ուշով անտրելուց հետո Գաբրիելը դանդաղ վերադարձավ գիշերվա գիրկը, դրսում գլխիկոր կանգ առավ, մտորեց։ Բացատրություն էր որոնում։ Հավանաբար նորից մի վտանգավոր օրին էին սարքել այդ կապը կըտրած տղաները։ Բայց այն ամենը, ինչի հետ այդ բացատրության շնորհիվ կարելի էր հույս կապել, հեգնական արձագանք էր գտնում գիտակցության խորքերում, փուլ գալիս։ Գաբրիելին համակեց սառնար-

ֆուն ինքնատիրապետումը, ինչպես միշտ, վճռական պահերին։ Սպասավորների խրճիթում գտավ միայն Քրիստափորին։ Նայն տվեց, արթնացրեց իր տնտեսվարին.

— Քրիստափո՛ր, վե՛ր կաց։ Պետք է Ավագյանին արթնացնենք։ Երևի նա տեղյակ լինի։ Ստեփանը գնացել է, չկա։

Այս բառերը նա ասաց առանց հուզմունքի։ Մտահոգված տնտեսվարին զարմացրեց իր տիրոջ սառնասրտությունը, այն էլ այդքան բաներից հետո։ Ավագյանին գտնելու համար բռնեցին Հյուսիսային լեռնաթամբի ճանապարհը։ Գաբրիելը մի ակնթարթ անվճռականորեն թեքվեց դեպի Ժուլիեթի վրանը։ Այնտեղ ամեն ինչ խաղաղ էր։ Այնուհետև առաջ քայլեց այնքան արագ, որ Քրիստափորը հազիվ էր հասնում։

Գիրք կրոտրդ

ԱՂԿՈՒԹ-ԳՐՈՒՄՆԵՐՈՒՆ-ԱՂԱՂՈՒԹ

(Որ յաղթէ, տաց նմա ուտել 'ի մանանայէն թաքուցելոյ. և տաց նմա զգիրն սրբութեն, և գրեալ անուն նոր 'ի գիրն. զոր ոչ ոք գիտե՝ բայց միայն որ առնու».

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆՈՒ 2, 17

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ստորագրության վերջաբան

Պատվարժան պարոն դոկտոր Լեփսիուս, Դուք այստեղ հայկական գործին վերաբերող փաստաթղթերի մի չնչին մասն եք միայն տեսնում...

Գաղտնի խորհրդականը, սիրալիր մի մարդ, նուրբ գծավոր մարմար հիշեցնող սպիտակ ձեռքը դնում է սեղանին դիզված փոշոտ թղթերին։ Այդ կույտը շատ բարձր է։ Դրա ետևում շարունակ երևում ու անհետանում է խորհրդականի դեմքը, որով նա նման է ցեղական ձիու։

Ապշեցուցիչ կերպով փոքրիկ, դատարկ սենյակի բարձր պատուհանը բաց է։ Արտաքին գործոց պաշտոնատան պարտեզից ներս է հոսում ամառային խոնավ, ծանր օդը։ Յոհաննես Լեփսիուսը լուրջ ու ձգված նստել է հյուրասեղանի առաջ, գլխարկը ծնկին։ Էնվեր փաշայի հետ ունեցած նրա նշանավոր զրույցից հավիվ թե մի ամիս է անցել, բայց պատվելու տեսքը երկյուղալիորեն փոխվել է։ Մազերն ավելի ցանցառ են թվում, մորուքը՝ ավելի սպիտակած, քիթը՝ ավելի կարճ ու սրածայր։ Աչքերն այլևս չեն ճառագայթում։ Դրանց առջև ծավալվող երազային հեռաստանները չքացել են, տեղի տվել սպասողական, հեգնող թերահավատության։ Մի՞թե մի ամսում արյան հիվանդությունը կարող էր այդպես տագնապալիորեն ծանրանալ։ Թե՞ հայ ժողովրդի գլխին կախված նզովքը խորհրդավոր զորությամբ հյուծում է նաև գերմանացուն։ Գուցե դա կարճ ժամանակամիջոցում կատարած վիթխարի աշխատանքի հետևանքն է։ Հակառակ մահվան և սատանայի, հայկական նպաստի գործն արդեն հաստատուն հիմքի վրա է դրված։ Նույնիսկ փող կա, և լավագույն մարդկանց սիրտն արդեն շահված է։ Մնում է միայն լուծել գերագույն իշխանության սֆինքսային առեղծվածը։ Պատվելու հայացքը պսպղուն պենսնեի տակից արհամարհանքով սահում անցնում է թղթակույտի վրայից։

Սիրալիր խորհրդականը հոնքերը բարձրացնում է, բայց ոչ թե զարմանքից, այլ ոսկեդրվագ ակնոցն իջեցնելու նպատակով.

— Հավատացեք ինձ, օր չի անցնում, որ այստեղից հիշեցում չուղարկվի Կոստանդնուպոլիս՝ դեսպանությանը։ Ժամ չի անցնում, որ գերմանական դեսպանը չգնա Էնվերի ու Թալիաթի մոտ, չմիջնորդի այդ հրեշավոր գործի առթիվ։ Չնայած իր բազմաթիվ հոգսերին, պարոն ռայխսկանցլերն անգամ անձամբ հետաքրքրվում է գրանով, այն էլ մեծագույն եռանդով։ Դե, նրան լավ գիտեք. Մարկ Ավրելիոսի նման մարդ է... Ինչ վերաբերում է պարոն ֆոն Բեթման-Հոլվեգին, ապա ես կկամենայի նրան Ձեզ մոտ արդարացնել, պարոն դոկտոր Լեփսիուս։ Նա այսօր, դժբախտաբար, չի կարող Ձեզ ընդունել...

Լեփսիուսը մեջքը ետ է գցում բազկաթոռի թիկնակին։ Ձայնը հընչում է առավել հոգնած, առավել սուր շեշտով.

— Եվ ի՞նչ զգալի հաջողություններ են ձեռք բերել մեր դիվանագետները, պարոն գաղտնի խորհրդական։

Սպիտակ, մարմարափայլ ձեռքը թղթակույտի մեջ ինչ-որ փաստաթուղթ է որոնում.

— Տեսեք։ Էրզրումի հյուպատոսը պարոն Շոյքներ-Ռիխթերն է, Ալեքսանդրեթինը՝ պարոն Հոֆմանը։ Հալեպում գլխավոր հյուպատոսը Ռյոսլերն է։ Մարդիկ շարունակ լուրեր են հաղորդում։ Հայերի համար իրենց կտոր-կտոր են անում։ Աստված գիտե, թե միայն Ռյոսլերը քանի՞-քանի՞ հայ է փրկել, հարյուրավոր թշվառների։ Եվ ինչո՞վ են հատուցել այդ մարդկայնությունը։ Անգլիական մամուլը նրան ներկայացնում է իբրև արյունարբու մի շուն, որը Մարաշում գրգռում է թուրքերին, սպանդի հրահրում։ Ի՞նչ կարելի է անել նման դեպքում։

Լեփսիուսն այժմ փորձում է որսալ սիրալիր պարոնի հայացքը, բայց սա իր թղթե պարապի ետևում շարունակ երևում ու անհայտանում է, ինչպես ամպերի տակ սահող քմահաճ լուսին.

— Պարոն գաղտնի խորհրդական, ես գիտեմ, թե ինչ կարելի է անել... Ռյոսլերն ու մյուսները, անշուշտ, պատվարժան մարդիկ են։ Ես նրանց ճանաչում եմ... Այդ ամենից բացի, Ռյոսլերը շատ ազնիվ էլ տղա է... Բայց ի՞նչ գործ կարող է գլուխ բերել այդքան փոքրիկ, խեղճ ու կրակ մի հյուպատոս, եթե անհրաժեշտ աջակցություն չգտնի։

— Բայց լսեցեք, պարոն պատվելի։ Ոչ մի աջակցությո՞ւն։ Դա ավելի քան անարգարացի ենթադրություն է։

Լեփսիուսը ձեռքով նյարդային շեշտակի շարժում արեց, հասկացնելով, թե գործը չափազանց լուրջ է, և հարկ չկա քաղաքավարական անվերջանալի ասուլիսով սպանել սուղ ժամանակը.

— Պարոն գաղտնի խորհրդական, ես շատ լավ գիտեմ, որ ամեն

հնարավոր բան էլ կարող է պատահել։ Դիվանագիտական ամենօրյա միջամտություններն ու միջոցառումներն ինձ հայտնի են։ Սակայն տրվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ թե պետական այնպիսի գործիչների հետ, որոնք պատկառանքով են վերաբերվում դիվանագիտական խաղի կանոններին, այլ էնվերի և Թալիաթի նման մարդկանց հետ։ Սրանց համար հնարավորը շատ է քիչ, իսկ անհնարինը բավական չէ։ Հայերի բնաջնջումը նրանց ազգային քաղաքականության հիմնական նպատակն է։ Ես այդ բանում համոզվեցի էնվեր փաշայի հետ ունեցած իմ երկարաբարակ զրույցի ժամանակ։ Գերմանական դիմումների հեղեղն այդ մարդկանց վրա բնավ էլ չի ազդի, իսկ լավագույն դեպքում դրանք կարող են մեր գլուխը տանել իրենց կեղծ քաղաքավարությամբ։

Գաղտնի խորհրդականը խաչում է թևերը։ Նրա երկարավուն դեմքն անհամբերություն է արտահայտում։

— Իսկ Դուք, պարոն դոկտոր Լեփսիուս, գիտե՞ք մի այլ ճանապարհ, որով կարելի է միջամտել բարեկամ և դաշնակից մի պետության ներքին գործերին։

Յոհաննես Լեփսիուսն ուշի-ուշով իր հայացքը խորասուզում է գլխարկի մեջ. կարծես այդտեղ պատրաստ դրված է այդ հարցին պատասխանող ծանոթագրությունը։ Բայց, աստված վկա, որքա՜ն ավելորդ կլիներ այդ շարշարանքը։ Պատվելու խեղճ գլխում գիշեր-ցերեկ այդ կարգի տասնյակ հազարավոր ծանոթագրություններ են վիստում, վանում քուն ու դադար։ Այժմ դոկտորն ուզում է կենտրոնանալ, որպեսզի հակիրճ ու մեթոդիկ պատասխան տա.

— Ամենից առաջ պետք է մեզ համար պարզենք, թե Թուրքիայում ինչ է կատարվում և ինչ է արդեն կատարվել։ Քրիստոնյաների հալածանքն այնպիսի չափերի է հասել, որ Ներոնի ու Դիոկղետիանոսի օրոք տեղի ունեցած հայտնի հալածանքները դրա հետ ամենահեռավոր համեմատության մեջ անգամ չեն կարող դրվել։ Դրանից բացի, համաշխարհային պատմության մեջ կատարված ամենամեծ ոճիրը, ինչպես պետք է եղածն անվանել, և ինչպես Դուք էլ պետք է խոստովանեք...

Պաշտոնյայի վճիտ աչքերում հայտնվում է թեթև հետաքրքրության մի շող։ Նա լռում է, իսկ Լեփսիուսը լավ կշռադատված խոսքերով քայլ առ քայլ առաջ է գնում։ Էնվեր փաշայի մոտ կրած պարտությունից հետո պատվելին, անկասկած, որոշ դաս է առել, գիտե, թե ինչպես պետք է վարվել քաղաքագետների հետ։

— Մենք իրավունք չունենք հայերին նայելու իբրև արևելյան կիսավայրենի մի ժողովրդի... Նրանք դաստիարակված, քաղաքակիրթ մարդիկ են։ Այդքան նրբազգաց մարդիկ մեզ մոտ, Եվրոպայում էլ հազվադեպ են պատահում։ Ասում եմ միանգամայն անկեղծորեն...

Գաղտնի խորհրդականի նեղլիկ դեմքի վրա ոչ մի մկան չի շարժվում։ Դժվար է որոշել, թե նա արդյոք չափազանցություն չի՞ համարում հայ «առևտրական ժողովրդի» մակարդակի բարձրացումը։

— Այստեղ,— շարունակում է Յոհաննես Լեփսիուսը,— խոսքը չի վերաբերում միայն Թուրքիայի ներքին քաղաքականության որևէ հարցի։ Նույնիսկ նեգրական մի փոքրաթիվ թզուկ ցեղի ոչնչացումը բնաջնջողների և բնաջնջվողների ներքին քաղաքականության հարց չէ։ Այնպես որ մենք՝ գերմանացիներս, չենք կարող գլուխներս ազատել ցավակցական կամ հուսահատական չեզոքությամբ։ Թշնամաբար տրամադրված արտասահմանը մեզ վրա կգցի պատասխանատվությունը։

Գաղտնի խորհրդականը թափով մի կողմ է հրում թղթակույտը, կարծես հանկարծ թարմ օդի կարիք է զգում։

— Դա Գերմանիայի ռազմական ղեկավարության խորապես ողբալի հատկանիշն է։ Որքան էլ մեր խիղճը մաքուր լինի, մեզ վրա կբարդեն ուրիշների կատարած արյունահեղության հանցանքը...

— Այս աշխարհում ամեն ինչ ամենից առաջ բարոյական հարց է, ապա նոր միայն քաղաքական։

Գաղտնի խորհրդականը գլխով հավանություն է տալիս.

— Սքանչելի՜ է, պարոն պատվելի։ Ես նույնպես կողմնակից եմ այն տեսակետին, որ քաղաքական վճիռներ կայացնելիս ամենից առաջ պետք է հաշվի առնել բարոյական կողմը...

Լեփսիուսը հաջողության հոտ է առնում։ Ուրեմն՝ պետք է պինդ կպչել.

— Պարոն գաղտնի խորհրդական, ես Ձեզ մոտ չեմ եկել իբրև մի խեղճ ու անճարակ անհատ։ Մեծամտություն չի լինի, եթե ասեմ, որ ես հանդես եմ գալիս գերմանական ամբողջ քրիստոնեության անունից, թե՛ բողոքական, թե՛ կաթոլիկ։ Ես գործում և խոսում եմ այնպիսի նշանավոր մարդկանց գիտությամբ ու երաշխավորությամբ, ինչպիսիք են Հարնաքը, Դայսմանը, Դիբելիուսը...

Գաղտնի խորհրդականը հավանություն տվող հայացքով հաստատում է այդ անունների կշիռը։ Սակայն Լեփսիուսը համակվում է իր նախկին խանդավառությամբ, որը նրան հաճախ է դավաճանել.

— Գերմանացի քրիստոնյան այլևս չի կարող անտարբեր հանդիսատեսի նման դիտել քրիստոնեության դեմ կատարվող այս ոճրագործությունը։ Նրա խիղճը չի հանդուրժի, որ նա այսուհետև էլ մեղսակից

լինի իր սառնասրտությամբ։ Գերմանացի քրիստոնյաների պատրաստակամությունից է կախված կայսրության հաղթանակը կամ պարտությունը։ Ես ինքս ինձնից զզվելու չափ ամաչում եմ, քանի որ թշնամական մամուլը լեփ-լեցուն է հայկական տարագրությանը վերաբերող հաղորդագրություններով, մինչդեռ գերմանական լրագրերը գերմանացի ժողովրդին հրամցնում են էնվերի կեղծավոր կոմյունիկեն, թաքցնելով ճշմարտությունը։ Մի՞թե մենք արժանի չենք իմանալու մեր հավատակիցների ճակատագրին վերաբերող իրողությունը։ Այս անվայել դրությանը պետք է վերջ տալ։

Պատվելու մեղադրական խոսելաձևից փոքր-ինչ զարմացած՝ գաղտնի խորհրդականը մատներն իրարից հեռացնում է, անմեղ-անմեղ վրա բերում.

— Հապա գրաքննությո՞ւնը։ Գրաքննությունը երբեք թույլ չի տա։ Դուք, պարոն Լեփսիուս, պատկերացում անգամ չունեք, թե որքան է խճճված սույն գործը։

— Գերմանացու ամենատարրական իրավունքը խաբված չլինելն է։

Գաղտնի խորհրդականը ներողամտաբար ժպտում է.

— Իսկ ի՞նչ կլիներ մամուլի այդ արշավանքի հետևանքը։ Գերմանական նյարդերի և թուրքական դաշինքի քայքայում։

— Այդ դաշինքը չպետք է մեզ պատմության առաջ կանգնեցնի իբրև մեղսակիցների։ Ուստի և մենք փափագում ենք, որ մեր կառավարությունը անհապաղ գործի անցնի։ Ստամբուլից ամենայն վճռականությամբ պահանջեցեք, որպեսզի չեզոք երկրների ներկայացուցիչներից՝ ամերիկացիներից, շվեյցարացիներից, հոլանդացիներից, սկանդինավցիներից կազմված հանձնաժողովին թույլ տրվի մուտք գործել Անատոլիա և Սիրիա, քննել տեղի ունեցածը։

— Պարոն պատվելի, Դուք շատ լավ եք ճանաչում «երիտասարդ թուրքերին», գիտեք, թե դրանք պետական ինչպիսի գործիչներ են։ Ինքներդ պետք է կանխատեսեք, թե մեր այդ պահանջին ինչ պատասխան կարող է տրվել։

— Այդ դեպքում Գերմանիան պետք է դիմի առավել զորավոր միջոցների...

— Իսկ Ձեր կարծիքով որո՞նք են այդ միջոցները։

— Պետք է սպառնալ, որ Թուրքիային այլևս ոչ մի օգնություն ցույց չի տրվի, ետ կկանչվի գերմանական ռազմական պատվիրակությունը, ռազմաճակատից ետ կբերվեն գերմանական սպաներն ու զինվորները։

Գաղտնի խորհրդականի ստորը, համակրելի դեմքի սիրալիրությունը փոխվում է կարեկցական բարության.

— Պարոն Լեփսիուս, ինձ մոտ Ձեզ այնպես էին նկարագրել, ինչպես որ կաք. այսքան... անմեղ...

Շեշտակի վեր է կենում։ Ամառային մոխրագույն կոստյումը վրան ավելի ձիգ է նստում, քան սովորաբար պետք է նստի այդ կարգի մարդկանց վրա։ Որոշ անփութությունը վստահություն ու համակրանք է ներշնչում։ Նա շրջվում է դեպի Եվրոպայի ու Ասիայի քարտեզը, որը կախված է պատից։ Երկնագույն երակներով նախշված ձեռքը դնում է արևվելքի վրա։

— Պարոն Լեփսիուս, Դարդանելը, Կովկասը, Պաղեստինն ու Միջագետքը այսօր ավելի շուտ գերմանական ռազմաճակատներ են, քան թուրքական։ Եթե դրանք ձախողվեն, ապա փուլ կգա նաև մեր ռազմական ամբողջ շենքը։ Ուրեմն՝ մենք չենք կարող թուրքերին սպառնալ մեր սեփական ինքնասպանությամբ, առանց ծաղր ու ծանակի առարկա դառնալու։ Կարիք չկա հիշեցնելու, թե Նորին մեծություն կայզերը ինչ վիթխարի նշանակություն է տալիս մեր արևելյան ազդեցությանը։ Մի՞թե չգիտեք, որ թուրքերն իրենց ավելի շատ պարտատերեր են համարում, քան պարտապաններ։ Մինչև օրս էլ օսմանյան կառավարության մեջ չափազանց ուժեղ են Անտանտային հարող հոսանքները։ Իբրև գաղտնիք, կարող եմ հայտնել, որ Կոմիտեի մեջ մտնող զորավոր խմբերից մեկը սիրով պատրաստ է փոխել իր քաղաքական համոզմունքների ուղղությունը և այսօր իսկ հաշտության բանակցություններ սկսել մեր թշնամի պետությունների հետ։ Նման դեպքում Դուք հեշտությամբ կկարողանայիք ականատես լինել, թե ինչպես նույն Անգլիան ու Ֆրանսիան, որոնք այսօր հայերի դեմ կատարվող գազանությունների առթիվ վրդովվում են, լացուկոծ բարձրացնում, հետևյալ օրը կփակեին իրենց աչքերը։ Դուք ճշմարտությունի՞ց եք խոսում, պարոն Լեփսիուս։ Ճշմարտությունն այն է, որ այս խաղի մեջ հաղթանակի բանալին թուրքերի ձեռքին է, որ մենք անսահմանորեն զգույշ պետք է լինենք և հարգենք հնարավորի սահմանները։

Յոհաննես Լեփսիուսը գաղտնի խորհրդականին լսում է անվրդով։ Նա հաստատ գիտե այդ ճշմարտությունները, թե ինչպես դրանք դաշույնի պես սուր տրամաբանությամբ ներկայացնում են «որդիք աշխարհիս այսօրիկ»։ Եզրակացություններ են անում կտրուկ, առանց այլևայլության։ Ով շղթայի մի օղակին է միայն տեղյակ, կտրած է։ Իսկ պատվելին շատ հեռու է նման բաներ իմանալուց։ Վերջին շաբաթ-

ներին կարծես նրա մտածողության թաղանթի վրա կոշտուկներ են հայտնվել, և նա արդեն անկարող է այդ կարգի ճշմարտություններն ընկալել։ Պատվելին չի գայթակղվում։ Մնում է իր նախկին շրջանակի մեջ.

— Ես յաղաքագետ չեմ։ Իմ գործը չէ, թե վերջին բոպեին ինչ միջոցներ ու ճանապարհներ պետք է գտնել հայ ժողովրդի մի մասը փրկելու համար։ Սակայն իմ պարտքն է, իբրև գերմանացի մեծաթիվ քրիստոնյաների համախոհ ներկայացուցիչ, թախանձագին խնդրել, որ այդպիսի միջոցներ ու ճանապարհներ գտնվեն, քանի դեռ ուշ չէ։

— Պարոն պատվելի, գործը որ կողմն էլ շուռ տանք, հայերի ճակատագիրը կարելի է միայն մեղմացնել, բայց փոխել, ցավոք սրտի, անհնարին է։

— Այդ ոչ քրիստոնեական տեսակետը ո՞չ իմ բարեկամներին կարող է գոհացնել, ո՞չ էլ ինձ։

— Հասկացեք վերջապես, որ այդ ճակատագրի դեմ գործում են մեր ազդեցությանը չենթարկվող պատմական ավելի հզոր ուժեր...

— Ես միայն այնքանն եմ հասկանում, որ Էնվերն ու Թալիաթը դիվային հանճարեղությամբ ընտրել են պատմական այդ հզոր ուժերի դերը խաղալու ամենահարմար պահը։

Գաղտնի խորհրդականը կոտրատվելով ժպտում է, իբր թե հակված է ցույց տալու իր կրոնական աշխարհայացքի քաղաքքը.

— Մի՞թե Նիցշեն չի ասել. «Ինչ որ փուլ է գալու, պետք է քանդել»։

Բայց Նիցշեն այն մարդը չէ, որ կարողանա պղտորել Յոհաննես Լեփսիուսի նման ադամորդու միտքը։ Զուգենալով տեղի տալ խոսակցությանն սպառնացող վերացական բնույթին, պատվելին կտրուկ հայտնեց իր կարծիքը.

— Ո՞վ գիտե, թե ով է փլչողը, ով է քանդողը։

Գաղտնի խորհրդականը նորից նստելով գրասեղանի առաջ, թուլիկ հայացք է նետում պատի քարտեզին.

— Հայերը կործանվում են իրենց աշխարհագրության երեսից։ Դա տկարների ճակատագիրն է, ատելի փոքրամասնության ճակատագիրը։

— Ամեն մարդ, ամեն ազգ երբևէ կարող է ընկնել տկարության մեջ։ Ուստի և չպետք է հանդուրժել փոքրամասնությունը բնաջնջելու կամ փոքրամասնությանը վնաս հասցնելու որևէ միջադեպ։

— Պարոն դոկտոր, ինքներդ Ձեզ երբևէ չե՞ք տվել այն հարցը, թե արդյոք ազգային փոքրամասնություններն ավելորդ հոգսեր չե՞ն պատճառում, և ամենից լավն այն չի՞ լինի, եթե դրանք ոչնչանան, անհետանան։

Լեփսիուսն իջեցնում, եռանդով մաքրում է ակնոցը։ Աչքերը թարթում է բութ, հոգնած արտահայտությամբ։ Խամրած հայացքը նրա ամբողջ մարմնին մի տեսակ անբարեձև տեսք է տալիս։

— Պարոն գաղտնի խորհրդական, մի՞թե մենք՝ գերմանացիներս, փոքրամասնություն չենք։

— Ի՞նչ եք ուզում դրանով ասել։ Չեմ հասկանում։

— Գերմանիայի դեմ միավորված Եվրոպայի ներսում մենք սոսկալի վտանգի ենթակա փոքրամասնություն ենք։ Վա՜յ մեզ, եթե մեր գործերը ձախողվեն։ Այնպես որ մեր աշխարհագրությունն էլ այնքան խելացիորեն չի ընտրված։

Գաղտնի խորհրդականի դեմքն այլևս սիրալիր չէ, այլ ձգված և սաստիկ գունատ։ Պատուհանից ներս է լցվում միջօրեի փոշոտ շոգի հեղեղը։

— Շատ ճիշտ է, պարոն պատվելի։ Հենց այդ պատճառով էլ յուրաքանչյուր գերմանացի պետք է մտահոգվի իր սեփական ժողովրդի ճակատագրով և խորհի այն արյան մասին, որ թափում է, ինչպես Դուք բարեհաճեցիք որակել, գերմանական փոքրամասնությունը։ Մենք միայն այս տեսակետից ելնելով կարող ենք զբաղվել հայկական հարցով։

— Մենք՝ քրիստոնյաներս, ապավինում ենք աստծո ողորմածությանը և հնազանդ ենք Ավետարանի պատվիրաններին։ Ես, պարոն գաղտնի խորհրդական, բացեիբաց կասեմ, որ հերքում եմ որևէ այլ տեսակետ։ Մի քանի շաբաթ է, ինչ ինձ համար օրեցօր ավելի պարզ է դառնում, որ աշխարհի տիրակալների՝ քաղաքագետների ձեռքից պետք է խլել իշխանությունը և մեր փոքրիկ հողագնդի վրա հիմնել Փրկչի համայնքը, Քրիստոսի իրավակարգը...

— «Տուք զկայսերն կայսեր»։

— Բայց մաշված մետաղադրամից բացի, ի՞նչն է կայսերական։ Տերն այս բանը չի ասել աստվածային ինչ-որ խորամանկությամբ։ Ո՜չ, ո՜չ։ Ժողովուրդներն իրենց բնածին հատկությունների հպատակներն են։ Եվ այդ ժողովուրդների հաշվին ապրել ցանկացող շողոքորթները կեղծավորաբար գրգռում են նրանց սնափառությունը։ Իբր թե բացառիկ արժանիք է՝ ծնված լինել շուն կամ կատու, կաղամբ կամ կարտոֆիլ։ Սակայն Հիսուս Քրիստոսը մեզ մշտնջենական օրինակ է ցույց տալիս։ Աստծո ստեղծած մարդուն մոլություններ են տրվում միայն նրա հա-

մար, որ նա դրանք հաղթահարի։ Ուստի և այս աշխարհում պետք է իշխեն միայն Քրիստոսի իսկական ծառաները, քանի որ նրանք իրենց մոլությունները, երկրային պայմանները, հաղթահարել են։ Սա է իմ քաղաքական հավատամքը, պարոն խորհրդական։

Պրուսացի արիստոկրատն առանց որևէ հեգնանքի ասում է.

— Պարոն պատվելի, Դուք խոսեցիք իբրև զտարյուն կաթոլիկ։

— Ավելի քան կաթոլիկ։ Որովհետև, իմ համոզմամբ, եկեղեցին կողմնակից չէ, որ տիրապետի դիլետանտական որևէ իշխանություն։

Գաղտնի խորհրդականը նորից վերցնելով մենակնոցը, կարծես դրանով ուզում է հասկացնել, թե նման դատողությունների ժամկետը լրացել է.

— Քանի դեռ չենք կանգնել սրբազան ինկվիզիցիայի դատաստանի առաջ, խեղճ ադամորդիներս պետք է պատասխանատվություն կրենք։

Յոհաննես Լեփսիուսը, երևի ղգալով, որ չափն անցավ, նահանջում է։ Նրա խոսքերը հնչում են հանդարտ, գրեթե անտարբեր.

— Պարոն խորհրդական, ուզում եմ Ձեզ հետ ավելի անկեղծ լինել... Դեռևս մի քանի օր առաջ ես հույսեր էի փայփայում և հավատացած էի, թե պարոն ռայխսկանցլերը ինձ այս պայքարում պետք է ավելի ազդեցիկ միջոցներ տրամադրի, քան մինչև այժմ։ Այսօր Դուք ինձ վերջնականապես համոզեցիք, որ Բարձր Դռան հարցում մեր կառավարության ձեռքերը կապված են, և պետք է վերջ տալ ձանձրալի դիմումներին ու միջնորդություններին։ Լավ։ Բայց իմ ձեռքերը չի կարող կապել պետական որևէ նկատառում։ Եվ այժմ Գերմանիայում ապրող մարդկանցից միայն իմ ուսերին է ընկնում հայկական հարցի ամբողջ ծանրությունը։ Ես մտադիր չեմ զիջումներ անել և ետ քաշվել։ Իմ բարեկամների ընկերակցությամբ ժողովրդի առաջ կլուսաբանեմ այս խնդիրը։ Որովհետև քրիստոնեական օգնության գործը ես կկարողանամ հաստատուն հիմքի վրա դնել միայն այն ժամանակ, երբ մարդիկ իմանան ամբողջ ճշմարտությունը... Ուստի և խնդրում եմ, գոնե այս մի բանում որևէ արգելք չհարուցվի։

Գաղտնի խորհրդականը, որը խորասուզված էր իր ձեռքի ժամացույցի ուսումնասիրության մեջ, ուրախացած բարձրացնում է գլուխը.

— Պարոն պատվելի, անկեղծությունն ամենալավ բանն է... Դուք ինձանից չպետք է վիրավորվեք, եթե հայտնեմ, որ Ձեզ վաղուց արդեն հետևում են։ Պոլսում եղած ժամանակ առիթ եք տվել բազմաթիվ բողոքների։ Կրկնում եմ, չեք պատկերացնում, թե որքան է խճճված այդ գործը։ Ցավում եմ։ Խոր հարգանքով եմ վերաբերվում Ձեր մարդասիրական գործունեությանը։ Սակայն քաղաքական իմաստով այժմ դա ցանկալի չէ։ Շատ հարգելի պարոն դոկտոր, Ձեզ խորհուրդ կտայի սահմանափակել Ձեր գործունեությունը և հնարավորության չափ այն դարձնել աննկատելի։

Պատվելին պատասխանում է ավելի շուտ քրթմնջյունով, քան թե հանդիսավոր շեշտով.

— Իմ կոչումն է դա։ Աշխարհում ոչ մի զորավոր ուժ չի կարող արգելել ինձ հետևելու իմ կոչմանը։

— Այդպես մի՛ ասեք, պարոն դոկտոր Լեփսիուս,— մտահոգ սիրալիրությամբ ու երկյուղով ասում է գաղտնի խորհրդականը,— աշխարհի զորավոր ուժերից մի քանիսն արդեն ուզում են բոլորովին արգելել Ձեր գործունեությունը։

Պատվելին ձեռքով շոշափում է բաճկոնի ձախ կողմը, ապա ոտքի է ելնում.

— Պարոն խորհրդական, շափազանց շնորհապարտ եմ Ձեզ՝ անկեղծության և խորհրդի համար։

Բարձրահասակ, սլացիկ պարոնը Լեփսիուսի առաջ կանգնում է մի տեսակ ինքնագոհ վարանումով, որը նրան շատ է սազում։

— Ուրախ եմ, որ այսքան շուտ հասկացանք իրար, պարոն պատվելի։ Գունատ եք երևում։ Ամենաօգտակար գործն արած կլինեիք, եթե միաժամանակ թեթևացնեիք Ձեր հոգսերը, ապրեիք Ձեզ վերաբերող առօրյայով։ Պոտսդամում չե՞ք ապրում։

Յոհաննես Լեփսիուսն իր ափսոսանքն է հայտնում, որ այդքան ժամանակ խլեց պարոն խորհրդականից։ Սա հմայիչ ժպիտով պատվելուն ուղեկցում է դեպի դուռը.

— Ո՞չ, պարոն պատվելի, այսքան հետաքրքիր ժամ վաղուց չէի անցկացրել։

Կեսօրվա շոգից շիկացած Վիլհելմշթրասեով անցնելիս Լեփսիուսն ինքն իրեն ստուգում է. արդյոք, Տիրոջ ասածի համաձայն, ինքը կարողացա՞վ աղավնու պես հեզ և օձի պես խելոք լինել։ Բայց իսկույն, ստիպված, խոստովանում է, որ ձախողվեց թե՛ իբրև աղավնի, թե՛ իբրև օձ։ Բայց, բարեբախտաբար, այնքան հեռատես է գտնվել, որ նախապես պատրաստել է բոլոր տեսակի անհրաժեշտ անձնագրերը, վիզաները, ուղևորության արտոնագրերը, դրամ փոխադրելու թույլտվությունը։ Ահա թե ինչո՞ւ նա այնքան ուշի-ուշով շոշափեց բաճկոնի ձախ գրպանը, որտեղ պահում էր այդ սրբությունները։ Արագ շրջվում է.. հոգեբանական որևէ պաշտոնյա իրեն չի՞ հետապնդում։ Վճիռ է կայացնում։

Ճեպընթացը Բազել կմեկնի ժամը երեքն անց քառասունին։ Դեռևս ավելի քան երեք ժամ ունի։ Կարող է հեռախոսով կապվել տան հետ, ճամպրուկը բերել տալ, պատրաստվել ուղևորվելու։ Գուցե վաղն իսկ սահմանները նրա առաջ փակ լինեն։ Այնինչ նա պետք է մեկնի Ստամբուլ։ Թե ինչու, դեռևս որոշակի պատկերացում չունի։ Գերմանիայում նպաստի գործն առանց նրա էլ առաջ է շարժվում։ Կազմակերպությունն ստեղծված է, գրասենյակը գործում է, ներգրավված են բարեգործներ, բարեկամներ ու աշխատակիցներ։ Պատվելու տեղը ոչ թե ապահովն անտարբեր հեռուներն են, այլ հենց արյան ծովի եզերքը։

Պոտսդամի հրապարակում երթևեկությունը շշմեցուցիչ է։ Կարճատես Լեփսիուսը երկար է սպասում, մինչև ողջ ու անվթար անցնում է փողոցի մյուս կողմը։ Ավտոմեքենաների, ավտոբուսների և տրամվայների հոնդյունը, դղրդոցը, սուլոցն ու զնդոցը, իրար միացած, ականջ են խլացնում, իբրև ինչ-որ բարբարոսական վիթխարի եկեղեցու զանգերի զողանջ։ Մտաբերում է մի փոքրիկ ոտանավոր։ Դա գրի առավ շատ տարիներ առաջ, երբ մի փոքրիկ, շարունակ ճոճվող նավով անցնում էր Հովհան առաքյալի Պատմոս Պատինո կոչվող ժայռոտ կղզու մոտով։ Ականջին հնչում է կրկներգը.

Ա և Օ, Օ և Ա,
Պատինոյի զանգերն հնչում են ահա

Եվ թվում է, թե ոտանավորի տողերն իրար հետ են կապում երկու այնքան հակադիր վայրեր, ինչպիսիք են Պատմոսն ու Պոտսդամի հրապարակը։

Ստամբուլ։ Գիշերները որսի դուրս եկող երկչոտ գազանի կյանք։

Յոհաննես Լեփսիուսը գիտե, որ իրեն հետևում են, լրտեսում։ Այդ պատճառով էլ Թոքաթլյան հյուրանոցից մեծ մասամբ դուրս է գալիս գիշերները։ Իր գալստյան առաջին օրը պաշտոնական այցով գնաց գերմանական դեսպանի մոտ։ Մինիստրի, դեսպանատան քարտուղարի կամ մամուլի լիազոր կցորդի փոխարեն պատվելուն ընդունեց ինչ-որ ստորին պաշտոնյա, առանց այլևայլության, չոր-չոր հարցրեց, թե ինչ նպատակով է դոկտորը ժամանել Կոստանդնուպոլիս։ Լեփսիուսը պատասխանեց, որ ոչ մի առանձին մտադրություն չունի։ Իր սիրելի քաղաքը եկել է փոքր-ինչ հանգստանալու։ Ի դեպ դա ներդաշնակվում է իր հետապնդած նպատակին։ Պատվելին հստակ պատկերացում չունի, թե ինչ պետք է կարողանա ձեռնարկել։ Միայն գիտե, որ ո՛չ Թուրքերի մոտ

երես ունի, ո՛չ էլ գերմանացիների։ Օրինակ, գերմանական դեսպանության կոբվետի հրամանատարը, այն պատվարժան մարդը, որը երկար շարշարանքների գնով գլուխ բերեց պատվելու և էնվեր փաշայի հանդիպումը, Բերայի փողոցներից մեկում երեսը շուռ տվեց, հենց որ նկատեց ծերունուն։ Աստված գիտե, թե նրա մասին ինչ ստոր հերյուրանքներ են տարածում։ Հաճախ սարսռում է այն մտքից, թե ինքը Թուրքական մայրաքաղաքում երևի մեն-մենակ մնա, քանի որ Հայրենի երկրի ներկայացուցիչները ոչ միայն չեն օժանդակում, այլև թշնամաբար են տրամադրված։ Եթե իթթիհաթականների մտքով անցնի նրան սպանել, ապա դիակի շուրջը դիվանագիտական մեծ աղմուկ չի բարձրանա։ Հուսահատության պահերին քիչ է մնում՝ թողնի, հեռանա իր հայրենիքը։ Իզուր ժամանակ է վատնում։ Արդեն օգոստոս ամսվա երրորդ շաբաթն է։ Բոսֆորի վրա թխսի պես նստել է աննկարագրելի շոգը։ «Ի՞նչ կարող եմ անել այստեղ»,— ինքն իրեն հարց է տալիս դոկտորը։ Իրեն համեմատում է այն անփորձ գողի հետ, որը յոթ փակով փակված երկաթյա դուռը ջանում է բացել մերկ ձեռքերով՝ առանց կեռի, առանց կեղծված բանալու, ոստիկանության աչքի առաջ։ Դա պարզ է։ Ինքը պետք է այդ դռան մեջ որևէ ճեղք բացի, ստեղծի իրական օգնության հնարավորություն։ Այլապես պաշտոնական ճանապարհներով ստացվող բոլոր փողերը կկորչեն, և նպաստի գործը հօդս կցնդի։

Լեփսիուսը դիմում է հանդուգն քայլի. այցելում է հայոց պատրիարք Զավեն սրբազանին։ Այն օրից ի վեր, ինչ նա վերջին անգամ տեսավ հովվապետին, կյանքի մնացորդը կարծես խույս է տալիս ծերունու մարած դեմքից։ Բարեպաշտ հայը մտացրիվ, անթարթ նայում է իր հյուրին։ Երբ ճանաչում է, այլևս չի կարողանում արտասուքը զսպել։

— Որդյակ իմ, Ձեր գլխին փորձանք կբերեք,— մրմնջում է նա։— Վա՜յ Ձեզ, եթե իմանան, որ ինձ մոտ եք եկել։

Եվ ահա պատվելին լսում է ճշմարտությունն իր ամբողջ ահավոր մանրամասնություններով։ Սրբազանը պատմում է վերջին շաբաթների իրադարձությունները, որ տեղի են ունեցել Լեփսիուսի բացակայությամբ։ Պատմում է կցկտուր, չոր ու ցամաք, կարծես դժվարանում է խոսել։ Փրկության ամեն մի փորձ ոչ միայն զուրկ է հեռանկարից, այլև ավելորդ է, քանի որ տարագրությունն արդեն լիովին իրագործված է։ Հոգևորականների մեծ մասը և քաղաքական բոլոր գործիչներն սպանված են։ Ժողովուրդն արդեն բաղկացած է սովամահ կանանցից ու երեխաներից։ Այս կամ այն չեզոք պետության կողմից հայերին ցույց

տրված որևէ օգնությունը միայն գրգռում է Էնվերի ու Թալիաթի կատաղությունը, առիթ տալիս նորանոր գազանությունների։

— Ամենից լավն այն է, որ մարդ ոչինչ չձեռնարկի, լուռ մնա, մեռնի։

Մի՞թե Լեփսիուսը չի նկատել, որ այս տունը՝ պատրիարքարանը, շրջապատված է լրտեսներով և գաղտնի գործակալներով։ Այս սենյակում ասված ամեն մի խոսքը վաղն ևեթ, անկասկած, հասնելու է Թալիաթ բեյին։ Աչքերը սարսափահար թարթելով, Զավեն սրբազանը հյուրին խնդրում է ականջը մոտեցնել իր բերանին։ Այս ձևով Լեփսիուսն իմանում է, որ հայերը բարձրացել են Մուսա լեռը, պարտության մատնել թուրք զինվորականներին, և մինչև օրս էլ լեռը մնում է անառիկ։ Պատրիարքի մեղմաշշունչ ձայնը դողում է.

— Մի՞թե սա զարհուրելի չէ։ Ասում են, թե մի քանի հարյուր զինվորական է սպանվել։

Յոհաննես Լեփսիուսի կարծիքով դա բնավ էլ զարհուրելի չէ։ Պենսնեի ետևից պատանեկան փայլով կայծկլտում են գերմանացու երկնագույն աչքերը.

— Զարհուրելի՞։ Ո՛չ, սքանչելի՜ է։ Եթե մի երեք այդպիսի Մուսա լեռ լույս ընկներ, գործն այլ ընթացք կստանար։ Ա՜խ, սրբազան, երանի՜ ես Մուսա լեռան գագաթին լինեի։

Պատվելին անզգուշաբար խոսում է բարձրաձայն։ Պատրիարքը սարսափահար շարժումով սաստում է նրան։ Հրաժեշտի պահին դոկտորը հանձնում է գերմանական հանգանակության գումարների մի մասը։ Զավեն սրբազանը թղթադրամներն այնպես հապճեպորեն է թաքցնում պատրիարքարանի գանձարկղում, կարծես դրանք կրակ լինեն։ Մեծ հույս չկա, թե այդ բարիքը կարող է հասնել որոշյալ վայրը՝ Դեյր էս Զոր։ Սրբազանը գերմանացու ականջին էլի ինչ-որ բան է շշնջում։ Սա սկզբում ոչինչ չի հասկանում։

— Ո՛չ մենք պատրիարքարանի կողմից, ո՛չ Դուք, ո՛չ որևէ այլ գերմանացի կամ չեղոք պետության ներկայացուցիչ, ո՛չ ոք չպետք է միջնորդության կամ օժանդակության նպատակով դիմի կառավարությանը։ Դա պետք է անել թուրքերի միջոցով, հասկանո՞ւմ եք, թուրքերի...

— Ինչպե՞ս թե թուրքերի,— կամացուկ մրմնջում է Լեփսիուսը, և նրա աչքի առաջ հառնում է Էնվեր փաշայի կերպարանքը։ Այդպիսի բան մտքով անցկացնելն անգամ ցնորամտություն է։

Ցնորամտություն է։ Բայց այդ գաղափարը, անկախ Լեփսիուսի կամքից, արդեն իրականացման ճանապարհին է։

Հյուրանոցի ճաշարանում պատվելին ծանոթացել է մի թուրք բժշկի հետ։ Սա մոտ քառասուն տարեկան կլինի։ Պրոֆեսոր Նեզիմի բեյը եվրոպացու վայելուչ տեսք ունի։ Ապրում է Թոքաթլյան հյուրանոցում, իսկ իբրև բժիշկ աշխատում է Բերայի հայանի փողոցներից մեկի վրա։ Լեփսիուսը նրան սկզբում համարում էր «երիտթուրքական» աշխարհը մարմնավորող ամենահամակրելի մարդկանցից մեկը։ Բայց այդ տպավորությունը խաբուսիկ դուրս եկավ, հակառակ եվրոպական գիտնականությանն ու առասպելականորեն բարեձև սերթուկին։

Երկու պարոնը հաճախ խոսքի են բռնվում։ Օրը երեք-չորս անգամ հաց են ուտում նույն սեղանի առաջ նստած։ Լեփսիուսը չափազանց զգույշ է, զուսպ։ Պարտավոր է։ Բայց մյուսը ո՞չ զգույշ է, ո՞չ էլ զուսպ։ Երբ նա բացահայտ ատելությամբ խոսում է քաղաքական տիրապետող ուղղության, Էնվեր և Թալիաթ բռնակալների մասին, գերմանացին սարսափում է, լռում։ Մի՞թե իր դեմ որոգայթ են լարում։ Մի՞թե այդ թուրքը պրովոկատոր է։ Բայց երբ նայում է բարեկիրթ Նեզիմիի առաքինի դեմքին, մտաբերում է նրա դիրքը, արտահայտվելու եղանակը, զարմանալի լեզվագիտությունը, կասկածը թվում է ծիծաղելի։ Անկարելի է, որ էնվերը կարողանա պրովոկատորներ դարձնել այդ աստիճանի վրա գտնվող մարդկանց։ Այնուամենայնիվ Լեփսիուսը բավականաչափ շրջահայաց է և ծուղակը չի ընկնի։ Նա չի ժխտում, որ ինքը, իբրև քրիստոնյա հոգևորական, փորձում է մեղմացնել իր հայ հավատակիցների վիճակը, սակայն քննադատելուց խուսափում է, սահմանափակվում լռելով։ Նեզիմին հայերի չերմ բարեկամ չի թվում, բայց կատաղությամբ է խոսում հայերին աքսորելու քաղաքականության դեմ։

— Հայերի դիակներով ծածկված դաշտերում Թուրքիան կկործանվի։

Այս խոսքի վրա Լեփսիուսը սարսռում է, փորձում թաքցնել իր հուզմունքը.

— Ազգի մեծամասնությունը կանգնած է Էնվերի ու Թալիաթի մեջքին։

— Ի՞նչ, ազգի մեծամասնությո՞ւնը,— տեղից վեր է թռչում Նեզիմին։— Դուք, օտարերկրացիներդ, պատկերացում էլ չունեք, թե այդ կուսակցությունը որքա՞ն փոքրաթիվ է իրականում, ամենից առաջ, որքա՞ն փոքր է բարոյապես։ Այդ կուսակցությունը բաղկացած է ճղճիմ երեսառածների խաժամուժից։ Եթե այդ մարդիկ պարծենում են իրենց

օսմանական ծագումով, ապա դա աշխարհի ամենամեծ անամոթությունն է։ Այդ զտարյունները մեծ մասամբ սերում են մակեդոնական խառնամբոխից, որի երակներում հոսում է բալկանյան բոլոր ցեղերի արյունը։

— Դա հին բան է, պրոֆեսոր։ Իրենց ցեղական ծագումը վկայակոչում են միայն նեղն ընկածները։

Նեզիմին պատվելուն նայում է թախծոտ աչքերով.

— Ուղղակի դժբախտություն է, որ Ձեզ նման մեր գործերին քաջատեղյակ մի մարդ իսկական թուրքի հոգեբանության մասին ոչ մի պատկերացում չունի։ Գիտե՞ք արդյոք, որ իսկական թուրքերը Ձեզանից ավելի շատ են դատապարտում հայերի տարագրությունը։

Լեփսիուսը լարում է լսողությունը.

— Եվ ովքե՞ր են այդ իսկական թուրքերը, եթե կարելի է հարցնել, պրոֆեսոր։

— Բոլոր նրանք, ովքեր երես չեն թեքել իրենց կրոնից,— ասում է Նեզիմին, սակայն ավելի մանրամասն բացատրություն չի տալիս։

Նույն օրվա երեկոյան պրոֆեսորը բախում է պատվելու սենյակի դուռը։ Արտակարգ հուզված է երևում.

— Եթե համաձայնեք, ես Ձեզ վաղը կտանեմ շեյխ Ահմեդի թեքքեն։ Շատ գոհ կմնաք։ Դրանից բացի, կարող եք հայերի մասին խոսել առանց քաշվելու և գուցե որևէ բանի հասնեք։

Կրկնում է.

— Շատ գոհ կմնաք։

Ճաշից հետո, ինչպես պայմանավորվել էին, Նեզիմին պատվելուն տանում է թեքքե։ Երկար ճանապարհը մեծ մասամբ անցնում են ոտքով։ Այսօր ամառվա շոգը մեղմացել է. Մարմարի ծովից զով քամի է փչում։ Ստամբուլյան եմիջօրեի վճիտ երկնքում ճախրում են արագիլներն ու ձկնկուլների երամները, որոնք իրենց բները հյուսում են ասիական կողմում։

Պրոֆեսորն էնվեր փաշայի սերասքերիաթի և սուլթան Բայազիդի մզկիթի մոտով Լեփսիուսին առաջնորդում է դեպի Աք Սերայի երկար փողոցների լաբիրինթոսը։ Ճանապարհն անվերջանալիորեն ձգվում է դեպի արևմուտք։ Գրեթե հասնում են քաղաքի կենտրոնում գտնվող ավերականման քաոսին։ Նեղ փողոցների սալարկը վերջանում է։ Ոչխարների ու այծերի հոտեր են պատահում։ Անթիվ-անհամար փայտաշեն տների սև խառնաշփոթության միջից իր ատամնավոր ցցվածքներով, աշտարակներով ու ամրոցներով սպառնալից վեր է խոյանում բյուզանդական հին քաղաքապարիսպը։ Լեփսիուսը բնավ տրամադիր չէ գեղագետի աչքով վայելելու քաղաքի ռոմանտիկ, ոչ անուշաբույր տեսարանները։ Նույնիսկ իսլամական բարեպաշտության կենտրոնը, ուր այսօր ոտք է դնելու, նրան չի հետաքրքրում ի սեր նորույթի։ Ինչպես մի մարդ, որի ամբողջ էությունը ներծծված է ինչ-որ տանջող հոգսով, պատվելին ամեն ինչի մոտենում է, ելակետ ունենալով հայկական դժբախտությունը։ Նոր տպավորությունների ոչ մի ցանկություն չունի։ Արդեն պլաններ է ուրվագծում։ Եվ ոչ թե հետաքրքրությունը, այլ այդ պլաններն են դրդապատճառն այն հարցերի, որ նա տալիս է իր ուղեկցին.

— Մենք երևի Մևլևի դերվիշների մո՞տ ենք գնում։

Լեփսիուսը իսլամի մասին գրեթե ոչինչ չգիտե, թեև երկար ժամանակ եղել է Պաղեստինում ու Փոքր Ասիայում։ Ի դեմս այդ կրոնի նա տեսնում է քրիստոնեության մոլեռանդ մի հակառակորդ։ Մարդկային շա՜տ ցավալի թերություն է, երբ մեկն ամենից քիչ գիտե այն, ինչ պետք է իմանա իր ամբողջ էությամբ. չի ճանաչում իր թշնամուն։ Այդպիսին է նաև պատվելին։ Նա շատ աղոտ է պատկերացնում մահմեդական հավատի աշխարհը։ Մևլևի դերվիշների անունն է տալիս, որովհետև դրանց մասին լսել է։ Բժիշկ Նեզիմին ձեռքը շարժում է գրեթե արհամարհանքով.

— Ո՛չ, ո՛չ, շեյխ Ահմեդը՝ մեր ուսուցիչը, այն միաբանության առաջնորդն է, որին ժողովուրդը տվել է «Սրտի գողեր» անունը։

— Միաբանությունը զավեշտական տիտղո՞ս է կրում։ Ինչո՞ւ «Սրտի գողեր»։

— Դա հետագայում ինքներդ կտեսնեք...

Քայլում են, և բժիշկը մի քանի բան էլ է լուսաբանում։ Գերմանացուն բացատրում է, որ մահմեդական կրոնի հոսանքը բաժանվում է երկու հզոր թևերի։ Դրանք են շարիաթն ու թարիքաթը։ Եթե շարիաթը համապատասխանում է կաթոլիկ հոգևորականության աշխարհայացքին, ապա թարիքաթին կեղծ մեկնաբանություն է տրված, քանի որ վերջինս համեմատության մեջ է դրվում կուսակրոնության հետ։ Դերվիշ լինել չի նշանակում աշխարհից երես դարձնել, ցմահ քաշվել թեքքե։ Դերվիշ կարող է դառնալ ամեն ոք, ով կկատարի որոշակի պայմանականություններ։ Դրա համար հարկ չկա հրաժարվելու ո՛չ մասնագիտությունից, ո՛չ էլ ընտանիքից։ Դերվիշ կարող է լինել թե՛ մեծ վեզիրը, թե՛ կոշկակարը, թե՛ դարբինը, թե՛ բանկի ծառայողը, թե՛ սպան։ Երկրով մեկ զանազան եղբայրություններ են տարածված, և ամենուրեք եղ-

բայրները միմյանց ճանաչում են «զգացմունքով», առանց իրար հետ ծանոթ լինելու։

Լեփսիուսը հարցնում է մտախոհ, կարծես նկատի ունենալով ինչ-որ նպատակ.

— Ուրեմն՝ դերվիշների միաբանությունները իրենց թվով մեծ ուժ են ներկայացնում։

— Ո՛չ միայն թվով, պարոն դոկտոր, կարող եք ինձ հավատալ։

— Եվ ի՞նչն է այդ մարդկանց աստվածահաճո կյանքի էությունը։

— Ձեզ մոտ, ինչպես ինձ ասել են, դա կոչվում է վարժություն։ Բայց այդ արտահայտությունը երևի սխալ է։ Երբեմն-երբեմն հավաքվում ենք։ Վարժություններ ենք կատարում, միայն թե դրանք աղոթքի վարժություններ են։ Կոչվում են զիքր։ Ամեն ոք իր կյանքում մի կամ մի քանի անգամ պետք է ծառայի թեքքեում, այնտեղ ապրի երկար ժամանակ։ Սակայն ամենագլխավորն այն է, որ մենք մեր ուսուցչին ու առաջնորդին հնազանդվում ենք ի սրտե։

— Պրոֆեսոր, ձեր ուսուցիչն ու առաջնորդը շեյխ Ահմե՞դն է...

Թեև պատվելին ուղղակի չի հարցնում, թե ով է այդ շեյխ Ահմեդը, Նեզիմին պատասխանում է.

— Նա վելի է։ Ձեր լեզվով դուք կասեիք սուրբ, բայց դա կլիներ միանգամայն սխալ թարգմանություն։ Նա իր կյանքով, որը շատ ավելի վսեմ է մարդու կյանքից, իր մեջ ուժեր է հայտնաբերում։ Ծանո՞թ եք ֆրանսերեն ինիսիասիոն՝ նվիրումն արտահայտությանը։ Եվ, ինքներդ կտեսնեք, շեյխի ամենասքանչելի կողմն այն է, որ նա շատ պարզ ու հասարակ մարդ է։

Կանգ են առնում բարձր պարսպի առաջ։ Նոճիների ու թզենիների կատարներից, պատի վրա կախված դեղին շահպարակներից ու թիթեռնածաղիկներից իսկույն զգացվում է պարտեզի գոյությունը։ Նեզիմի բեյը գավազանով բախում է դարպասի ցեցակեր դուռը։ Երկար են սպասում։ Ապա դուռը բացում է հեզ, գորովագութ աչքերով ծանրամարմին մի ծերունի։ Իսկույն հառնում է պարտեզի կիսախավար հրաշալիքը։ Բազմադարյան մի եղևնի կանգնած է իբրև նահապետ։ Երկու զորավոր ճյուղից կախված են ծանր շղթայի ժանգոտ օղակները։ Նեզիմին պատմում է, որ եղևնին անհիշելի անցյալում, մատղաշ տարիներին, շղթայված է եղել։ Այնուհետև աճող ծառի ներքին ուժից երկաթե շղթան կտրվել է։ Դա դերվիշների կենաց խորհրդանիշն է։ Քաղաքային աղմուկից հրաշքով փրկված անդորրության մեջ կարկաչում է ճառագայթափայլ մի աղբյուր։ Մա՛ս ջրի հանդեպ Թուրքերի ունեցած պաշտամունքի հուզիչ խորհրդանիշն է։ Այգու աջակողմյան սահմանը մութ, անհյուրընկալ մի տուն է, իսկ ձախակողմյան սահմանի տունը լուսավոր է, հրապուրիչ։

Փայտաշեն հյուրընկալ տունը մտնելուց առաջ Նեզիմին և Լեփսիուսը հանում են կոշիկները։ Նեզիմին մութ, փոքրիկ սանդուղքով օտարականին դուրս է բերում թեքքեի ընդարձակ սրահի օթյականման մի անկյունը։ Սրահն իր փայտե ողորկ հատակով և ցանցաձև դրվագված պատերով թողնում է հսկայական տաղավարի տպավորություն։ Շատ գեղեցիկ գորգեր են փռված։ Արևելյան պատի մեջ, Մեքքայի ուղղությամբ, գորգածածկ բարձր գահախորշն է։ Այս գահույքի աստիճանների վրա, երկու կողմից, ծալապատիկ նստած են մի քանի տղամարդ։ Բժիշկը հայտնում է, որ դրանք խալֆաներ[1] են, շեյխի ներկայացուցիչներն ու լիազոր անձինք և առանձնապես մոտ են իրենց ուսուցչի սրտին։ Բոլորը սպիտակ չալմաներ են կրում, նույնիսկ հետևակային մի կապիտան, որի ներկայությունը պարզապես տարօրինակ է թվում։ Լեփսիուսի ուշադրությունը գրավում է փոքրամարմին, տաշեղի պես բարակ, չոր ու ցամաք մի ծերունի։ Սա երևի նյարդային հիվանդություն ունի, քանի որ այծային մորուքն ու դեմքը երբեմն-երբեմն ցնցվում են։ Փափուկ, թուխ մորուքով և վերնաշապիկ հիշեցնող պարեգոտով մի մարդու, որն իսկույն աչքի է ընկնում իր գեղեցկությամբ, Նեզիմին անվանում է «շեյխի որդի»։ Այս երիտասարդի հանդերձանքն արծաթի նման փայլփլում է։ Կողքին, ոտքերը խաչած, նստել է հինգ տարեկան մի տղա՝ որդու որդին։ Հոր նման սպիտակ շորեր է հագել։ Բայց Լեփսիուսն ամենից առաջ ուշադրությունը բևեռում է մի մարդու վրա, որն իր արտաքինով ու կեցվածքով ներկաների մեջ պետք է լինի ամենազորեղ անձնավորությունը։ Պատվելին այդպես է պատկերացնում մեծ խալիֆներին՝ Բայազիդին, Մահմուդ Երկրորդին, գուցե նույնիսկ Մարգարեին։ Մոլեռանդությունից մաշված դեմք։ Գրեթե մինչև ակնախոռոչները հասնող կապտաթուխ մորուք։ Քարացած հայացք, որը ոչ մի տեղ խարիսխ չի գցում, անկողմնակալ է մնում թե՛ բարեկամի, թե՛ թշնամու հանդեպ։

— Սա Բրուսայի թյուրբեդարն[2] է,— լսում է Լեփսիուսը և բացատրություն ստանում։

Այդ տիտղոսով նշանավորվում է շատ բարձր, սիմվոլիկ մի պաշտոն։ Թյուրբեդարը սուլթանների և սրբերի դամբարանների պահապանն

[1] խալֆա — ասույթի օգնական (հին գրքերում)

[2] թյուրբեդար — պահապան (թանգարանի, գամբարանի և այլն)

է։ Նա ոչ միայն Ղուրանի քաջահմուտ գիտակ է, այլև լիովին տեղյակ է նաև արդիական գիտություններից մի քանիսին։ Դիմացը նստած փոքրամարմին, սուսիկ-փուսիկ ծերունին ևս, որն սպիտակ մատներով խաղում է թագբեհի սաթե հատիկների հետ, նույնպես սիմվոլիկ բարձր պաշտոն ունի՝ «Մարգարեի տոհմամատյանի վարիչ»։

— Այս մարդիկ միշտ ապրում են թեքբեռ՞ում։

— Ոչ, մեծ և երջանիկ դիպվածով նրանք ևս այսօր այցի են եկել շեյխին։ Ալևոր պարոնը՝ տոհմամատյանի վարիչը, շատ հեռվից է եկել՝ Սիրիայից, Անտիոքից։ Նա մեր շեյխի ամենավաղեմի բարեկամն է։ Իմացեք, աղա Ռիֆաաթ Բերեքեթը։

— Աղա Ռիֆաաթ Բերեքեթը,— մտացրիվ կրկնում է Լեփսիուսը։

Այդ անունը նրան կարծես ծանոթ է։ Բայց պատվելին ուշադրություն չի դարձնում ո՛չ աղա Ռիֆաաթ Բերեքեթին, ո՛չ էլ մյուս երեսուներեսունհինգ հոգուն, որոնք դահլիճում հավաքված՝ ցածրաձայն զրուցում են, սպասում շեյխին։ Հետաքրքրությամբ նայում է հպարտ թյուրբեդարին։ Այդ պատճառով էլ շեյխ Ահմեդին նկատում է միայն այն ժամանակ, երբ սա բազմում է իր գահույքին։ Նեղիմի բեյն իրավացի է։ Միաբանության հոգևոր առաջնորդն իր արտաքինով չի թողնում այն տպավորությունը, թե նա բարձր դիրքի և զորության տեր անձնավորություն է, որին հպատակվում են հարյուր հազարավոր հավատարիմ հոգիներ։ Դա սպիտակամորուք, մարմնեղ տղամարդ է, որի դիմագծերն արտահայտում են անսահման գորովանք, աշխարհիկ գործերը կշռադատելու գործնական հմտություն։

Բոլորը ոտքի են կանգնել, անձկությամբ մղվում են դեպի ծերունազարդ շեյխը՝ նրա աջը համբուրելու։ Երբ բոլորը մատուցում են իրենց երկյուղածության ու սիրո հավաստիքը, ի վերջո, Ահմեդի փափուկ, հաստ ձեռքի վրա խոնարհվում է թյուրբեդարը։

Զիքր կոչված էքստազային աղոթքի նկատմամբ գերմանացի հանդիսատեսը ոչ միայն սառն է մնում, այլև ինչ-որ աղոտ, գրեթե աննկարագրելի խորշանք է զգում։ Արարողությունն սկսվում է այսպես։ Շեյխի գեղեցկատես որդին տասը ուրիշ երիտասարդների հետ, որոնք նույնպես վերնաշապիկ հիշեցնող պարեգոտներ են կրում, շարք է կանգնում սրահի արևմտյան պատի տակ։ Այս շարքի աջ թևում կանգնում է փոքրիկ տղան։ Մանկան դեմքը լուսավորված է ծերունական խոհուն լրջությամբ։ Ինչ-որ տեղից սրնգի միապաղաղ, ոնգային նվագ է ծորում։ Ոսկեզրվագ ղուրանակալի առաջ փակ աչքերով կանգնում է մի մարդ և կիսաձայն, կեղծ ու անգուրեկան ջեղտով սաղմոսերգում սուրահներից մեկը։ Շեյխ Ահմեդը ձեռքով հազիվ նկատելի նշան է տալիս։ Սրինգն ու ողբաձայն սաղմոսերգությունը լռում են։ Ականջը կարծես ձայնի պահած՝ որդին գլուխը ետ է գցում։ Թվում է, թե ահա ուր որ է գեմքին բարակ անձրև է մաղելու։ Կոկորդից հնչյուններ են դուրս թռչում՝ բեկբեկուն, խեղդված։ Կարծես արդեն չափից ավելի մեծ երջանկություն է, եթե նրան վիճակված է արտասանել միայն անհասկանալի հատվածի այն վանկերը, որոնք իրենց մեջ ամփոփում են հայտնության գրոց ամբողջ ուժը։ «Լա-իլահ-իլա-'լլահ»[1]։ Գլուխները ետ են գցում նաև մյուս տղամարդիկ, և դավանանքի վեց վանկից գոյանում ու ծավալվում է մի զարմանալի մրմունջ, որից հառաչանք է կաթում։ Այստեղ կարծես նախերգանքն ավարտվում է, և սկսվում է բուն նյութը, ինչպես երաժշտական ամեն մի ստեղծագործության մեջ։ Շեյխի որդու մարմինը տարտամորեն օրորվում է։ «Լա-իլահ-իլա-'լլահը» վճռական շեշտ է ստանում, և երիտասարդ շեյխն իրանը թեքում է, խոնարհվում աշխարհի չորս կողմի վրա՝ առաջ, ետ, աջ և ձախ։ Այս քառատակ ճոճումը փոխանցվում է մյուսներին, աստիճանաբար թափ առնում։ Սակայն մարմնամարզությանը կամ բալետին հատուկ համաչափության հետքն անգամ չկա։ Ընդհակառակը։ Ամեն ոք ենթարկվում է իր սեփական օրենքին։ Միաբանության ամեն մի ես-ը ձգտում է ինքն իր հետ մենակ լինել, երբ հափշտակությամբ դիմում է իր աստծուն։ Դրանով իսկ ստեղծվում է առավել վսեմ ու բազմազան համաչափություն, քան մեխանիկական շարժումը։ Դա ազդեցիկ է, ինչպես հողմաշառաչ անտառի կամ ալեկոծ ծովի համաչափությունը։ Չէ՞ որ օրգանական միասնությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ ես-ը լիակատար ազատություն ունի և առանձին է իր աստծո հետ։

Ծերունի շեյխն իր օգնականների ու մյուս ներկաների հետ մեղմ շարժումներով մասնակցում է զիքրի աղոթամարզանքին։ Նրա թոռը ևս հուսահատ լրջությամբ չորս կողմն է խոնարհում իր փոքրիկ մարմինը։ Երբեմն կարելի է որսալ տղայի մանկական սրտառուչ ձայնը, որը «Լա-իլահ» ընդհանուր հեղեղի մեջ հնչում է իբրև գեղգեղանք։

Տասներկու բոպե հետո դերվիշների մարմնաճոճումն ընդունում է գրեթե ուղղանկյան ձև, իսկ կանչերը վեր են ածվում աններդաշնակ, խոպոտ մռնչյունի։

Ծերունի շեյխը դարձյալ թեթևակի ազդանշան է տալիս։ Արարողությունը իսկույն դադարում է։ Մասնակիցների, թե հանդիսատեսների

[1] Լա-իլահ-իլա-'լլահ — չկա աստված, բացի աստծուց։

սրտերը ողողվում են հորդաբուխ բերկրանքով, ներքին երջանկությամբ ու գոհունակությամբ։ Հոգնաբեկ մի ժպիտ պայծառացնում է մարդկանց դեմքերը։ Բոլորը գրկախառնվում են։

Լեփսիուսը մտաբերում է քրիստոնեական հինավուրց ագապները[1]։ Բայց չէ՞ որ սիրո այս հանդեսը ոչ թե սուրբ հոգու ներշնչման արդյունք է, այլ մարմնի վայրագ խոտորումների հետևանք։ Պատվելին ոչինչ չի հասկանում։

Այդ պահին փոքրիկ դռնից սրահ են մտնում մի քանի նոր այցելուներ։ Բերում են ջրով լի սափորներ, սկուտեղներ, որոնց վրա տեսակ-տեսակ ուտելիքներ են շարված, նույնիսկ զգեստներ, դնում Ահմեդի առաջ։ Սա այս ամենի վրա բազմիցս փչում է, ամեն ինչի հաղորդում բուժիչ զորություն։

Կարճատև դադարից հետո զիքրը կրկնվում է ավելի բարձր մակարդակով։ Մեսը նվիրաբերվում է սուրբ չորրորդությանը։ Ուրեմն՝ չորս անգամ էքստազը պետք է կրկնվի ընդմիջումներով։ Վերջին զիքրի զորությունն ու թափն այնքան անտանելի մոլեգնության է հասնում, որ Լեփսիուսն աչքերը փակում է, քանի որ իրեն զգում է այնպես, ինչպես ճոճվող նավի վրա իրեն կզգար ծովային հիվանդությամբ տառապողը։ Երբ եզրափակիչ զիքրը հասնում է իր գագաթնակետին, հանկարծ սանդուղքի վրայից սրահ է ցատկում նյարդային դեմքով չոր ու ցամաք ծերունին, կատաղի թափով սկսում է հոլի նման պտտվել իր շուրջը, մինչև վրա է հասնում ջղաձգության նոպան։

Լեփսիուսը շրջվում է բժշկի կողմը, որը մինչ այդ նստած էր նրա ետևում։ Մի՞թե Նեզիմին չի օգնելու ընկնավորին։ Բայց Սորբոնում ուսանած բարեկիրթ մարդն ինքն էլ կարծես կորցրել է գլուխը։ Նրա իրանը պտույտ է գործում։ Աչքերի մեջ գինովություն կա։ Անգլիական բեղերի տակից շուրթերը թոթովում են «Լա-իլահ-իլա-Ալլահ» մարմրող հնչյունները։

Պատվելու դժգոհությանը չափ ու սահման չկա։ Նա ոչ միայն խորշանք է զգում այն ամենի հանդեպ, ինչ նրան թվում է խորթ ու բարբարոսական, այլև վրդովվում ու ամաչում է, որ ինքն իր եվրոպացու հոգով անկարող է թափանցել այս աստվածային տրբեցման էության մեջ։

[1] ագապ (հուն. ագապե)— քրիստոնեության սկզբնական շրջանում հավատացյալները հավաքվում էին, միասին ընթրում, համբուրվում՝ ի նշան հաշտության ու եղբայրության

Այս խոր խռովքը դեռևս չանցած՝ նա ոտք է դնում արտառոց օտար աշխարհի ընդերքը։ մտնում է Ահմեդի ընդունարանը։ Էնվեր փաշայի հետ երես առ երես հանդիպելիս նա ավելի շփոթված չէր, քան այժմ, չնայած շեյխը պատվելուն ընդունում է սրտաբաց։ Հոգևոր առաջնորդը մի քանի քայլ ընդառաջ է գնում գերմանացուն և Նեզիմի բեյին։ Լայն սենյակում հավաքվել են շեյխի օգնականներից մի քանիսը՝ Բրուսայի թյուրբեդարը, աղա Ռիֆաաթ Բերեքեթը, երիտասարդ շեյխը և հետևակային կապիտանը։ Նստելու ոչ մի այլ հարմարանք չկա, բացի պատերի տակ դրված ցածրիկ բազմոցներից։

Շեյխը Լեփսիուսին խնդրում է նստել իր կողքին։ Պատվելին ստիպված նստում է մյուսների պես ծալապատիկ։ Ծերունի Ահմեդը հյուրի կողմն է դարձնում աչքերը, որոնց մեջ փայլում է ոչ միայն աշխարհի չարն ու բարին զանազանող պայծառ իմաստությունը, այլև ինչ-որ անխռով անդորրություն։

— Մեզ հայտնի է, թե ով ես դու, և ինչն է քեզ բերել մեզ մոտ։ Չեմ կասկածում, որ դու մեզ կհասկանաս, մենք էլ՝ քեզ։ Հավանաբար քեզ մեր եղբայր Նեզիմին արդեն ասել է, որ մենք այստեղ ավելի շատ հավատ ենք ընծայում ոչ թե բառերին, այլ սրտերի շփմանը։ Ուրեմն՝ քննենք մեր սրտերը, իմանանք իրողությունը։

Պատվելու բաճկոնը կոճկված է։ Շեյխ Ահմեդն իր սպիտակ ձեռքով արձակում է կոճակները։ Ժպտում է, կարծես ներողություն խնդրում.

— Մոտենանք իրար։

Լեփսիուսը վարժ խոսում ու հասկանում է թե՛ թուրքերեն, թե՛ արաբերեն։ Սակայն շեյխը գործածում է երկու լեզվի ինչ-որ խրթին խառնուրդը։ Առանձնապես դժվարըմբռնելի արտահայտությունների հանդիպելիս պատվելին դիմում է Նեզիմի բեյին, իբրև թարգմանչի։ Բժիշկը թարգմանում է.

— Գոյություն ունի երկու սիրտ՝ մարմնավոր և գաղտնատրոփ, երկնատուր, որով պարուրված է մարմնավոր սիրտը և այնպես, ինչպես վարդը՝ բուրմունքով։ Երկրորդ սիրտը մեզ կապում է աստծո և մարդու հետ։ Խնդրեմ, բաց արա այդ սիրտդ։

Եվ գբեթե ութսունամյա ծերունու ծանր մարմինը հոգնածությամբ խոնարհվում է դեպի Լեփսիուսը։ Շեյխը թեթև շարժուձևով հասկացնում է, որ պատվելին ևս կարող է իր նման փակել աչքերը։ Հյուրին համակում է իսկական անդորրություն։ Քիչ առաջ դեռևս տոչորող ծարավն անցնում է։ Պատվելին առանց ժամանակ կորցնելու փակ թարթիչների ետևում ի մի է բերում մտքերը, կարգավորում այն փաստերը,

որոնցով պայքարելու է հօգուտ հայերի։ Աստված նրան հրաշքով այստեղ է առաքել, որտեղ նա երևի բոլորովին անսպասելի կերպով պետք է դաշնակիցներ գտնի։ Իրագործվում է Ջավեն սրբազանի ցանկությունը. պետք է միջնորդեն ոչ թե գերմանացիները կամ չեզոք երկրների ներկայացուցիչները, այլ հենց իրենք՝ թուրքերը։ Այդ անհեթեթ ցանկությունը կարծես կատարվելու ճանապարհին է։ Արդեն հույսի ինչ-որ շող է փայլատակում։

Երբ Լեփսիուսը նորից է աչքերը բացում, նրան թվում է, թե ծեր շեյխի դեմքը ողողված է արևի ջերմ լույսով։ Սա ոչինչ չի ասում սրբտաքննության արդյունքների մասին, այլ խնդրում է հայտնել, թե ինչով կարող է օգտակար լինել։ Սկսվում է մեծ զրույցը։

ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍ

(Սկզբում դանդաղ և դժվարությամբ է գտնում թուրքերեն հարմար բառերը։ Օգնություն հայցող հայացքով հաճախակի նայում է Նեզիմի բեյի կողմը, որպեսզի սա հուշի համապատասխան արտահայտությունները)։

— Շեյխ Ահմեդ էֆենդու մեծ բարության շնորհիվ է, որ ես իբրև քրիստոնյա և օտարական մուտք եմ գործել այս պատվարժան թեքքեն... Ինձ նույնիսկ իրավունք տրվեց ներկա լինել ձեր կրոնական արարողությանը։ Առ աստված ունեցած ձեր մղումների ավյունն ու անկեղծությունը իմ սիրտը լցնում են բերկրանքով։ Չնայած ես, իբրև անտեղյակ օտարական, անկարող եմ հասկանալ ձեր սրբազան սովորույթների ներքին իմաստը, սակայն զգում եմ ձեր վսեմ բարեպաշտությունը... Սակայն այդ բարեպաշտության և կրոնասիրության լույսի տակ ավելի սարսափելի է թվում այն, ինչ կատարվել ու կատարվում է ձեր հայրենիքում...

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՇԵՅԽ

(Աչքերը հարցականորեն թարթելով, հորից խոսելու թույլտվություն է խնդրում)։

— Մենք գիտենք, որ դու շատ տարիներից ի վեր էրմենի միլեթի ջերմ բարեկամն ես...

ԼԵՓՍԻՈՒՍ

— Ես ավելին եմ, քան սոսկ նրանց բարեկամը։ Էրմենի միլեթին եմ նվիրաբերել իմ ամբողջ կյանքն ու եռանդը։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՇԵՅԽ

— Եվ հիմա մեզ ուզում ես մեղադրե՞լ կատարված դեպքերի համար։

ԼԵՓՍԻՈՒՍ

— Ես օտարական եմ։ Օտարականը երբեք և ոչ մի տեղ իրավունք չունի մեղադրելու։ Եկել եմ այստեղ, որ միայն ու միայն գանգատվեմ տեղի ունեցածից, խնդրեմ ձեր խորհուրդն ու օգնությունը։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՇԵՅԽ

(Բացահայտ խստությամբ, որը չի մեղմանում նույնիսկ հանդիսավոր խոսքերից)։

— Համենայն դեպս տեղի ունեցածի հանցանքը բարդում՝ ես բոլոր օսմանցիներիս վրա։

ԼԵՓՍԻՈՒՍ

— Ժողովուրդը շատ խավերից է բաղկացած՝ կառավարությունից, կառավարական օրգաններից, կառավարության համախոհ դասակարգերից և օպոզիցիայից։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՇԵՅԽ

— Եվ այդ խավերից ո՞ր մեկի վրա ես դնում պատասխանատվությունը։

ԼԵՓՍԻՈՒՍ

— Արդեն քսան տարի է, ինչ ծանոթ եմ ձեր երկրի ներքին ու արտաքին գործերին։ Ձեր կառավարության ղեկավարների հետ բանակցել եմ։ Թող ինձ աստված ների, եթե ասեմ, որ միայն նրանք են մեղավոր մի անմեղ ժողովրդի կործանման համար։

ԹՅՈՒՐԲԵԴԱՐ

(Բարձրացնում է մոլեռանդությունից հյուծված դեմքը, նայում անողոք աչքերով։ Իր արտաքինով ու ձայնով ենչակում իսկույն ստեղծում է իշխողի տպավորություն)։

— Բայց ո՞վ է կառավարության մեղքի պատճառը։

ԼԵՓՍԻՈՒՍ

— Քո հարցը չեմ հասկանում։

ԹՅՈՒՐԲԵԴԱՐ

— Որ այդպես է, քեզ մի այլ հարց կտամ։ Օսմանցիներն ու հայերը մի՞շտ են անհաշտ ապրել։ Չի՞ եղել ժամանակ, երբ նրանք կողք կողքի ապրել են խաղաղ ու համերաշխ։ Եթե դու ծանոթ ես մեր փոխհարաբերություններին, ապա պետք է տեղյակ լինես նաև մեր անցյալին։

ԼԵՓՍԻՈՒՍ

— Որքան գիտեմ, մեծ ջարդերն սկսվել են միայն անցյալ դարում, Բեռլինի կոնգրեսից հետո...

ԹՅՈՒՐԲԵԴԱՐ

— Դրանով դու պատասխանեցիր իմ առաջին հարցին։ Այդ կոնգրեսում եվրոպացիներդ միջամտեցիք մեր պետության ներքին կյանքին, բարեփոխումներ պահանջեցիք, ուզեցիք մեզնից շատ էժան գնել և՛ աստված, և՛ հավատ։ Հայերն էլ դարձան ձեր գործակալները։

ԼԵՓՍԻՈՒՍ

— Մի՞թե ժամանակն ու կյանքի զարգացումը Եվրոպայից ավելի ստիպողաբար չէին պահանջում այդ բարեփոխումները։ Եվ ինքնին հասկանալի է, որ հայերը, իբրև ավելի թույլ, բայց ավելի գործունյա ժողովուրդ, կարոտ էին նման առաջադիմության։

ԹՅՈՒՐԲԵԴԱՐ

(Բորբոքվում է, ամբողջ սենյակը լցնում սրբազան զայրույթով)։

— Բայց մեզ պետք չեն ձեր բարեփոխումները, ձեր զարգացումը, ձեր գործունեությունը։ Ուզում ենք աստծո հովանու տակ ապրել, մեր մեջ զարգացնել ալլահի շնորհած ուժերը։ Չգիտե՞ս, որ այն ամենը, ինչ դուք անվանում եք գործ և գործունեություն, դա հենց սատանան ինքն է։ Հարկ կա՞ ապացուցելու։ Որոշ մակերեսային գիտելիքներ ունեք քիմիական տարրերի էության վերաբերյալ։ Բայց ի՞նչ է լինում հետևանքը, երբ այդ կիսատ-պռատ գիտելիքները կիրառում եք ձեր գործերի, ձեր գործունեության ասպարեզում։ Թունավոր գազերի արտադրությունը, որոնցով դուք շնաբարո, վախկոտ պատերազմներ եք մղում։ Կամ մի՞թե այլ բան եք անում ձեր սավառնակներով։ Դրանք ձեր ձեռքին ամբողջ քաղաքներ հօդս ցնդեցնելու համար են։ Մնացած ժամանակները դուք դրանցով տեղափոխում եք վաշխառուներին ու շարքիներին, որպեսզի սրանք ավելի արագ կողոպտեն ընչազուրկ մարդկանց։ Ձեր սատանայական անհանգստությունը մեզ համոզել է, որ ձեր ամբողջ ուժն ու եռանդը ծառայեցնում եք կործանման ու ոչնչացման նպատակին։ Հետևաբար մենք անպայման պետք է հրաժարվենք բարեփոխումներից, զարգացումից, ձեր մշակույթի բարիքներից և շարունակենք ապրել մեր վաղեմի թշվառության ու բարեպաշտության պայմաններում։

ՍԵՐՈՒՆԻ ՇԵՅԽ ԱՀՄԵԴ

(Ուզում է խոսակցությանը տալ հաշտարար երանգ)։

— Աստված յուր ըմպելիքը բազում գավաթների մեջ է լցրել, և ամեն գավաթ տարբեր ձև ունի։

ԹՅՈՒՐԲԵԴԱՐ

(Դեռևս չի կարողանում հանդարտվել։ Հավատացած է, թե հարմար հակառակորդ է գտել, որի գլխին կարող է թափել իր խորախորհուրդ ցասումը)։

— Դու ասում ես, թե այդ արյունոտ անարդարության համար կառավարությունն է մեղավոր։ Բայց իրականում ոչ թե մեր, այլ ձեր կառավարությունը։ Հանցավորները ձե՛ր դպրոցներում են սովորել, դո՛ւք նրանց հովանավորեցիք, երբ նրանք ոճրագործական պայքարի ելան մեր սրբազան բարիքների դեմ։ Այժմ այդ մարդիկ ձեր ուսմունքն ու ձեր մտածելակերպն են կենսագործում։ Ուրեմն, պետք է հասկանաս. ոչ թե մենք՝ օսմանցիքս, այլ Եվրոպան և Եվրոպայի կամակատարներն են հանցավոր այն ժողովրդի ճակատագրի համար, որի օգտին դու պայքարում ես։ Հայերն իրենց արդար պատիժն են կրում։ Չէ՞ որ իրե՛նք ցանկացան այդ դավանափոխ չարագործների վերադարձը, օժանդակեցին, հավատարմության երդում տվին, որպեսզի նրանք այսօր հոշոտեն հայ ազգը։ Չե՞ս տեսնում արդյոք, որ այստեղ աստծո մատը խառն է։ Ուր ոտք դնեք դուք և ձեր սաները, այնտեղ կապականեք։ Շողոքորթաբար Հիսուս Քրիստոս մարգարեի կրոնն եք դավանում, սակայն ձեր հոգու խորքում հավատում եք միայն նյութի բութ զորությանն ու մշտնջենական մահին։ Ձեր սրտերն այնքան են տգեղ, որ դուք այլևս ոչինչ

չգիտեք ալլահի զորության մասին, և այդ զորությունը ձեր մեջ ապարդյուն ցամաքում է։ Այո՛, ձեր կրոնը մահն է, իսկ ամբողջ Եվրոպան՝ մահվան պոռնիկը։

ԾԵՐՈՒՆԻ ՇԵՅԽ

(Խիստ հայացքով սաստում է Թյուրբեդարին, որ սա իր խոսքերը չափավորի։ Ապա շոյում է պատվելու ձեռքը, դրանով կարծես ուզում է մխիթարել նրան, սիրտը շահել)։

— Ամեն ինչ կախված է աստծո կամքից։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՇԵՅԽ

— Ճշմարիտ է, էֆենդի։ Դու չես կարող ժխտել, որ մեզ մոտ այսօր իշխող ազգամոլությունը Եվրոպայից բերված օտար թույն է։ Մի քանի տասնամյակ առաջ Մարգարեի դրոշի տակ հեշտ ու համերաշխ ապրում էին մեր ժողովուրդները՝ թուրքերը, արաբները, քրդերը, լազերը և շատ ուրիշներ։ Ղուրանի ոգին հաշտեցնում էր արյան երկրավոր տարբերությունները։ Այժմ արդեն արաբներն էլ են ազգամոլ դարձել, մեզ հետ թշնամացել, թեև գանգատվելու ոչ մի հիմք չունեն։

ԾԵՐՈՒՆԻ ՇԵՅԽ

— Ազգամոլությամբ լցվում են այն այրվող ու ամայի տեղերը, որ մարդկային սրտերում իր վտարումից հետո թողնում է ալլահը։ Եվ սակայն ոչ ոք չի կարող ալլահին վտարել առանց նրա կամքի։

ԼԵՓՍԻՈՒՍ

(Ծանապատիկ նստած է իբրև մեղադրյալ Եվրոպան։ Նա ձեռք չի քաշում իր մտադրությունից, ուստի և հանդուրժում է Բրուսայի ազգու թյուրբեդարի ամբաստանությունը։ Այդ լուտանքը նրան ավելի քիչ է անհանգստացնում, քան թմրած ոտքերի ցավը)։

— Այն ամենը, ինչ ես այստեղ լսում եմ ձեզանից, ինձ համար նորություն չէ։ Այո՛, նման խոսքերով հաճախ ինքս եմ դիմել իմ հայրենակիցներին։ Ես քրիստոնյա եմ, նույնիսկ քրիստոնյա հոգևորական, բայց ձեզ մոտ ամենայն անկեղծությամբ խոստովանում եմ, որ ինձ հանդիպած քրիստոնյաների մի զգալի մասը բաղկացած է անտարբեր, անաստված շողոքորթներից...

ԹՅՈՒՐԲԵԴԱՐ

(Հակառակ շեյխ Ահմեդի անխոս ազդարարության, շարունակում է իր խստաբարո բծախնդրությունը)։

— Ուրեմն, տեսնո՞ւմ ես, որ իսկական հանցավորները ոչ թե մենք ենք՝ թուրքերը, այլ ինքներդ։

ԼԵՓՍԻՈՒՍ

— Իմ կրոնն ինձ հրամայում է ամեն մեղք դիտել իբրև Ադամի անխուսափելի ժառանգություն։ Մարդիկ և ժողովուրդներն այդ ժառանգական մեղքն իրար են նետում իբրև գնդակ։ Անհնարին է նշել մեղքի ճիշտ տարեթիվն ու դեպքը։ Որտեղի՞ց սկսենք և որտե՞ղ վերջացնենք։ Ես այստեղ չեմ եկել թուրք ժողովրդի հասցեին կշտամբանքի որևէ խոսք ասելու։ Դա մեծ մոլորություն կլիներ։ Եկել եմ ձեր բարեհաճ կարեկցանքը խնդրելու։

ԹՅՈՒՐԲԵԴԱՐ

— Չարիք հրահրելուց հետո եկել եք կարեկցա՞նք խնդրելու։

ԼԵՓՍԻՈՒՍ

— Ես շովինիստ չեմ։ Ամեն ոք պատկանում է մարդկային որևէ համայնքի և, կամա թե ակամա, մնում է նրա հետ կապված։ Դա բնության անհերքելի իրողությունն է։ Իբրև քրիստոնյա, ես հավատում եմ, որ մեր երկնակալ Տերը տարբերություններն ստեղծել է սիրո համար։ Չէ՞ որ առանց զանազանությունների և բուռն ձգտման սերն անհնարին է։ Ես էլ իմ արյամբ շատ եմ տարբերվում հայերից, բայց նրանց հասկացել եմ, սիրել։

ԹՅՈՒՐԲԵԴԱՐ

— Իսկ երբևէ մտքովդ անցե՞լ է, թե հայերը մեզ որքան են հասկանում ու սիրում։ Այդ նրանք էին, որ էլեկտրական լարի պես մեր խաղաղության ոլորտները բերին ձեր դժոխային խառնաշփոթությունը։ Եվ դու նրանց բոլորովին անմեղ գառնե՞ր ես համարում։ Իմացած եղիր, որ նրանք հարմար առիթով իրենց ձեռքն ընկած ամեն մի թուրքի սպանում են առանց աչք թարթելու։ Երևի քեզ հայտնի չէ՞, թե ինչպես

նրանց հոգևորականները ևս ուրախությամբ են մասնակցում նման սպանություններին։

ԼԵՓՍԻՈՒՍ

(Առաջին անգամ իրեն զսպում է, որ խիստ պատասխան չտա)։

— Եթե ասում ես, ուրեմն՝ իրոք այստեղ-այնտեղ եղել են վրիժառության դեպքեր։ Սակայն մի՛ մոռացիր, թե կոտորածների ժամանակ որքա՞ն են մարդկանց իրար դեմ հրահրել ձեր հոջաները[1], մոլլաներն ու ուլեմաները[2]։ Այդ բանում էլ դուք զորեղ եք, իսկ հայերը՝ տկար։

ԹՅՈՒՐԲԵՆԴԱՐ

(Ոչ միայն իրոք ուսյալ մարդ, այլև ճարտար բանավիճող, հիանալի է տիրապետում վտանգավոր կոնկրետությունից խուսափելու և ընդհանուր ճշմարտության գրահի ետևում իսկույն պատսպարվելու արվեստին)։

— Մեր կրոնի մասին աշխարհով մեկ զրպարտություններ եք տարածել։ Ամենավատթար զրպարտությունը վերաբերում է մեր կարծեցյալ աններողամտությանը։ Մի՞թե կարծում ես, թե մեր երկրում, որտեղ հարյուրամյակներ շարունակ խալիֆն է իշխել, կարող էր թեկուզ մի քրիստոնյա կենդանի մնալ, եթե մենք հանդուրժող չլինեինք։ Իր տիրապետության առաջին տարին, Ստամբուլը գրավելուց հետո, ինչպե՞ս վարվեց մեծ սուլթանը։ Իր կայսրության սահմաններից վտարե՞ց քրիստոնյաներին։ Ինչպե՞ս։ Ոչ, նա հունական ու հայկական պատրիարքություններ հիմնեց, դրանց շնորհեց իրավասություններ, փայլ և ազատություն։ Իսկ ձերոնք ի՞նչ արին Իսպանիայում։ Իրենց հայրենիքում ապրող հազարավոր մահմեդականների ծովը նետեցին, խարույկ բարձրացրին։ Մե՞նք ենք ձեր մոտ միսիոներներ ուղարկում, թե՞ դուք՝ մեզ մոտ։ Ձեր խաչն առաջ եք պարզում, որպեսզի Բազդադի երկաթուղին և նավթային ընկերություններն ավելի մեծ շահույթ բերեն։

ՍԵՐԳԻՆԻ ՇԵՅԽ

— Արևն իշխանասեր է, իսկ լուսինը՝ հեզ և խաղաղաբարո։ Թյուրբեդարը վիրավորական խոսքեր է ասում, բայց դրանք չեն վերաբերում քեզ՝ մեր հյուրին։ Պետք է հասկանաս, որ մերոնց գառնացրել է մեր կրոնին վերաբերող անարդարությունը։ Գիտե՞ս, թե ասածս անունից

[1] Հոջա — խոջա, հոգևորական (չափավոր)

[2] ուլեմա — ատելավոր

հետո ո՞ր բառն է ամենից շատ զարդարում Ղուրանը։ «Խաղաղություն» բառը։ Եվ գիտե՞ս, թե ինչ է ասված տասներորդ սուրահում. «Կար ժամանակ, երբ մարդիկ մի համայնք էին կազմում։ Այնուհետև պառակտվեցին։ Բայց եթե աստված կամենար, նրանք վերջ կտային իրենց մեջ ծագած տարաձայնությանը»։ Մենք ևս քրիստոնյաներիդ նման միայն մի ձգտում ունենք. հիմնել միաբանության ու սիրո թագավորություն։ Մենք էլ մեր թշնամիներին չենք ատում։ Առհասարակ մի՞թե կարող է ատել այն սիրտը, որի մեջ աստծո ոգին է սաղմնավորված։ Խաղաղություն հաստատել. ահա մեր միաբանության ամենավսեմ պարտքը։ Տես, այսպես խստորեն խոսող թյուրբեդարը խաղաղության ամենաեռանդուն ջատագովներից մեկն է։ Վաղուց, երբ քո մասին դեռ ոչինչ չէինք լսել, նա տարագրվածների օգտին էր գործում։ Եվ նա միայնակ չէ։ Մենք խաղաղության ջատագովներ ունենք նաև իսկական ռազմիկների մեջ...

(Նշան է տալիս, որ մոտենա հետևակային կապիտանը։ Սա, երևի, իրոք միաբանության կրտսերագույն և ոչ լիիրավ անդամը, նստած է հեռավոր բազմոցին)։

ԿԱՊԻՏԱՆ

(Վախվխելով նստում է ծերունի շեյխի մոտ։ Խոշոր, թավշյա աչքեր ունի, զգայուն դիմագծեր։ Թավ, խնամած ջեղերի շնորհիվ զինվորականի արտաքինն ավելի պատկառելի է թվում)։

ՍԵՐԳԻՆԻ ՇԵՅԽ

— Դու մեր պատվերով այցելել ես տարագիրների արքեալյան դպրոցականները։ Խոսի՛ր։

ԿԱՊԻՏԱՆ

(Դիմում է Յոհաննես Լեփսիուսին)։

— Ես քո մեծ հայրենակից մարշալ Գոլց փաշայի հրամանատարության տակ գտնվող շտաբային գնդի սպաներից եմ։ Փաշայի սիրտը ևս լցված է իր քրիստոնյա դավանակիցների հոգսով ու ցավով։ Բայց այս գործում նա շատ քիչ բան կարող է անել հակառակ ռազմական մինիստրի։ Ես եղել եմ մարշալի մոտ և արձակուրդ ստացել ինձ հանձնարարված խնդիրը կատարելու նպատակով...

ՍԵՐԳԻՆԻ ՇԵՅԽ

— Եվ ի՞նչ վայրեր ես տեսել քո ուղևորության ժամանակ։

ԿԱՊԻՏԱՆ

— Գաղթականների մեծ մասը Եփրատ գետի ափերին է, Դեյր էս Զորի և Մեսքենեի արանքում։ Ամենախոշորներից երեքի մեջ մի քանի օր մնացել եմ։

ՄԵՐՈՒՆԻ ՇԵՅԽ

— Իսկ կարո՞ղ ես մեզ հաղորդել քո տեսածը։

ԿԱՊԻՏԱՆ

(Տանջվելով նայում է Լեփսիուսի կողմը)։

— Շատ ավելի ցանկալի կլիներ, եթե ինձ թույլ տայիք լռել այս օտարականի ներկայությամբ...

ՄԵՐՈՒՆԻ ՇԵՅԽ

— Ոչ, օտարականն իմանա, որ խոսքը նաև մեր սեփական թշնամիների խայտառակության մասին է։ Խոսիր։

ԿԱՊԻՏԱՆ

(Անհոգն հայացքով նայում է հատակին, բառեր որոնում։ Անկարող է նկարագրել անկարելին։ Դժգույն, կցկտուր նախադասություններով չի կարողանում վերարտադրել այն տեսարանները, որոնց հանդեպ ունեցած զզվանքից կոկորդը սեղմվում է)։

— Ռազմադաշտերը զարհուրելի են... Բայց ամենամեծ ռազմադաշտ անգամ ի՞նչ է Դեյր էս Զորի համեմատությամբ... Դա ոչ ոք չի կարող պատկերացնել...

ՄԵՐՈՒՆԻ ՇԵՅԽ

— Եվ ի՞նչն է ամենավատթարը։

ԿԱՊԻՏԱՆ

— Դրանք այլևս մարդիկ չեն... Ուրվականներ են... Բայց ոչ թե մարդկանց, այլ կապիկների ուրվականներ... Դանդաղ են մահանում, որովհետև խոտ են ուտում, երբեմն էլ ձեռքները մեկական պատառ հաց է ընկնում... Սակայն ամենավատթարն այն է, որ այլևս ուժ չունեն

թաղելու տասնյակ հազարավոր դիակները... Դեյր էս Զորը մահվան հրեշավոր զուգարան է...

ՄԵՐՈՒՆԻ ՇԵՅԽ

(Երկարատև դադարից հետո)։

— Եվ ի՞նչ օգնություն է նրանց ցույց տրվում։

ԿԱՊԻՏԱՆ

— Օգնությո՞ւն։ Ամենաբարի գործն այն կլիներ, եթե բոլորին մի օրում կոտորեին... Ես մեր եղբայրներին նամակ ուղարկեցի... Մեզ հաջողվեց ավելի քան հազար որբ երեխա տեղավորել Թուրք և արաբ ընտանիքներում... Բայց դա շատ չնչին բան է։

ԹՅՈՒՐԲԵԴԱՐ

— Եվ ի՞նչ կլինի հետևանքը, երբ մենք այդ երեխաներին մեր հարկի տակ հոգատարությամբ ու սիրով պահենք, մեծացնենք։ Եվրոպացիք աղմուկ-աղաղակ են բարձրացնելու, թե մենք դրանց հափշտակել ենք բռնաբարելու և անգթորեն տանջելու համար։

ՄԵՐՈՒՆԻ ՇԵՅԽ

— Ճշմարիտ է, բայց դա կարևոր չէ։ (Կապիտանին)։ Այդ թշվառները քեզ՝ Թուրքիդ, նայում էին իբրև թշնամո՞ւ, թե՞ կարողացար շահել նրանց վստահությունը։

ԿԱՊԻՏԱՆ

— Իրենց անմարդկային թշվառության մեջ այլևս չեն հասկանում, թե ով է բարեկամ, ով է թշնամի... Միշտ, երբ մտնում էի այդ գաղթականներից մեկնումեկը, խառնիխուռն նետվում էին վրաս... Դրանք մեծ մասամբ ծերունիներ են և կանայք՝ բոլորն էլ գրեթե մերկ... Քաղցից նվում էին։ Կանայք ձիուս աղբի մեջ վարսակի չմարսված հատիկներ էին որոնում... Վերջում իրենց դյուրահավատությամբ սիրտս կտորկտոր էին անում... Ինձ այնքան բան են խնդրել, պաղատել, որ ես անկարող եմ դրանք կատարել... Այ, օրինակ, այս նամակը...

(Գրպանից հանում է կեղտոտված մի թուղթ և ցույց տալիս Լեփսիուսին)։

Սա գրել է քեզ պես քրիստոնյա մի հոգևորական։ Նա նստած էր իր մեռած կնոջ դիակի մոտ, որը երեք օր մնացել էր առանց թաղվելու։ Անտանելի բան էր... Փոքրամարմին մարդ էր, վրան արդեն բան չէր մնացել... Անունը Հարությունն էր, ազգանունը՝ Նոխուդյան։ Սիրիական ծովեզերքի գյուղերից էր։ Նրա հայրենակիցները փախել են, բարձրացել լեռը։ Մերուկին խոստացա նամակը հանձնել յուրայիններին։ Բայց ինչպե՞ս...

ԼԵՓՍԻՈՒՍ

(Կապիտանի պատմությունից քար կորած՝ այլևս չի զգում թմրած ոտքերի ցավը։ Կարդում է երկուսի վրա հայերեն խոշոր տառերով գրված հացին «Առ վարդապետն Տեր-Հայկազուն ի Ցողոնօլուք»)։

— Այդ խնդրանքն էլ մյուսների նման կմնա անկատար...

ԱՂԱ ՌԻՖԱԱԹ ԲԵՐԵՔԵԹ

(Սաթե թաքրեհը պահում է։ Անթաքիեցի ծերունին բարեձև խրանը մի քանի անգամ խանարհում է շեյխի կողմը)։

— Այդ խնդրանքը կարող է կատարվել... Ես ուզում եմ Նոխուդյանի նամակը հանձնել նրա հայրենակիցներին։ Մի քանի օր հետո կլինեմ սիրիական ծովեզերքին։

Մերունի շեյխը մեղմ ժպիտով շրջվում է Լեփսիուսի կողմը.

— Աստծո ողորմածության ինչպիսի՞ օրինակ։ Միմյանց օտար երկու եղբայր հանդիպում են այս մեծ քաղաքում, որպեսզի կատարվի տարաբախտների ցանկությունը... Ահավասիկ դու մեզ էլ ավելի լավ ճանաչեցիր։ Նայիր բարեկամիս՝ անթաքիեցի աղային։ Քեզ նման այլևս կորովի չէ. տարիքն անցել է։ Արդեն յոթանասուն տարվա բեռ ունի ուսերին։ Այնուհանդերձ քանի՞ ամիս է, որ այս բարի թուրքը ճանապարհորդում է, աշխատում է օգնել էրմենի միլեթին։ Ի սեր հայերի նա այցելել է նույնիսկ սուլթանին և շեյխի ուլ իսլամին[1]։

ԱՂԱ ՌԻՖԱԱԹ ԲԵՐԵՔԵԹ

— Սրտիս տիրակալին հայտնի է իմ մտադրությունը։ Բայց, տարաբախտաբար, ուրիշները շատ են զորեղ, իսկ մենք շատ ենք տկար։

[1] շեյխի ուլ իսլամ — մահմեդականների հոգևոր առաջնորդը

ՄԵՐՈՒՆԻ ՇԵՅԽ

— Մենք տկար ենք, որովհետև Եվրոպայի ստրուկները մեր ժողովրդի ձեռքից հափշտակում են կրոնը։ Ամեն ինչ այնպես է, ինչպես ցաստմնալից խոսքերով հայտնեց թյուրբեդարը։ Այժմ դու գիտես ճշմարտությունը։ Սակայն տկարները վախկոտ չեն։ Հաստատ չգիտեմ, թե քեզ համար արդյոք վտանգավո՞ր է հայերին օգնելը։ Սակայն աղային և կապիտանին ծայրահեղ վտանգ է սպառնում։ Եթե որևէ դավաճան կամ կառավարության լրտեսներից մեկը նրանց մատնի, երկուսին էլ ցմահ բանտ կնետեն։

ԼԵՓՍԻՈՒՍ

(Խոնարհվում է շեյխ Ահմեդի ձեռքի վրա, սակայն չի համբուրում, քանի որ չի կարողանում հաղթահարել իր ամոթի զգացումն ու շփոթմունքը)։

— Ես օրհնում եմ այս ժամը, օրհնում եմ ձեր եղբայր Նեզիմիին, որն ինձ այստեղ բերեց։ Այլևս հույս չունեի։ Բայց արդեն նորից հույսով եմ լցված, քանի որ ձեր օգնությամբ կարելի է աքսորավայրերից ետ բերել հայերի մի մասը, փրկել։

ՄԵՐՈՒՆԻ ՇԵՅԽ

— Դա միայն աստծո կամքից է կախված... Ինչ մտադրություն ունես, ասա աղային։

ԼԵՓՍԻՈՒՍ

— Հնարավորություն կա՞ մուսալեռցիներին փրկելու։

ԹՅՈՒՐԲԵԴԱՐ

(Դարձյալ կատաղում է, քանի որ ապստամբների հանդեպ ցուցաբերվող կարեկցանքը դիպչում է նրա՝ օսմանցի մարդու սրտին)։

— Մարգարեն ասում է. «Ով դատավորի մոտ դավաճանի համար միջնորդում է, նա ևս դավաճան է, քանի որ, կամա թե ակամա, քաջալերում է խռովությունը»։

ՄԵՐՈՒՆԻ ՇԵՅԽ

(Առաջին անգամ մի կողմ է գնում իր դիրքին պատշաճ շրջահայաց զգաստությունը։ Անթաքի նայում է դեպի հեռուները, և անվերծանելիորեն երկիմի են հնչում հետևյալ բառերը)։

— Հիմա երևի ապահովության մեջ են կորուսյալները, իսկ ապահովության մեջ գտնվողները՝ կորուսյալ...

Շեյխի ծառաներից մեկը և հեզ աչքերով հաստամարմին դռնապանը բերում են սուրճ, լոխում, թուրքական քաղցրավենիք։ Շեյխ Ահմեդը թասն իր ձեռքով մեկնում է հյուրին։

Նախքան հրաժեշտ տալը, Լեփսիուսն ուզում է մի անգամ ևս անդրադառնալ հայկական հարցին։ Չի հաջողվում։ Մերունի շեյխը սառնությամբ խուսափում է այդ առթիվ ասվող ամեն մի խոսքից։ Դրան հակառակ, աղա Ռիֆաաթ Բերեքեթը պատվելուն խոստանում է հյուրանոց գալ նույն օրվա երեկոյան, քանի որ երեսունվեց ժամ հետո մեկնելու է։

Սերասքերիաթի մոտ բժիշկ Նեզիմին պատվելուց բաժանվում է։ Երկար ճանապարհն անցել են գրեթե անխոս։ Թուրքին թվում է, թե գերմանացին այնքան է տարվել իր ստացած խոր տպավորությամբ, որ բառեր չի գտնում։ Դա, իհարկե, ճշմարիտ է, սակայն այլ իմաստով։ Մոլեռանդ պատվելու գլուխն արդեն պայթում է նորանոր մտահղացումներից։ Չի խորհում նոր, խորհրդավոր աշխարհի մասին, որտեղ մի քանի ժամ անցկացրեց։ Նրա միտքը պտտվում է այն «ճեղքի» շուրջը, որը զարմանալի պատահականությամբ հանկարծ բացվեց թեքքեի ներսում։ Անխոս ու երկար սեղմում է Նեզիմիի ձեռքը ի նշան երախտագիտության։ Բայց բժշկի ասածը պարզ չի ընկալում։ Թուրքը խնդրում է առաջիկա օրերին ուշադրություն դարձնել սեփական կյանքի հետ կապված մանր իրադարձություններին։ Այն մարդու հետ, ում շեյխ Ահմեդը սրտաքնության է արժանացնում, պատահում են յուրօրինակ նշանակություն ունեցող դեպքեր։ Միայն թե հարկավոր է ըմբռնել դրանց իմաստը։ Միայնակ մնալով, Լեփսիուսը նայում է էնվերի պաշտոնավայրի պատուհաններն ի վեր։ Դրանք միջօրեի արևից հուրհրատում են։ Նետվում է կառքի մեջ։

— Հայոց պատրիարքարանը։

Եթե ամբողջ աշխարհի լրտեսներն էլ այժմ իրեն հետևեն, միևնույն է։ Պատվելին բուռն խանդավառության տարափ է տեղում ոտքի վրա մարմրող հայ հովվապետի գլխին։ Զավեն սրբազանի մտահղացումը անհավատալիորեն իրականանո՞ւմ է։ Հնադավան թուրքերը հայերին օգնո՞ւմ են, չնայած մինչ այդ ոչ ոք ոչինչ չգիտեր։ Ժողովրդի լավագույն խավն անշեջ ատելությա՞մբ է լցված աստվածուրաց ղեկավարների դեմ... Պետք է այդ կրակն օգտագործե՞լ ի նպաստ հայ ժողովրդի...

Զավեն սրբազանը աղերսող շարժուձևով ուզում է հյուրին սթափեցնել. ո՛չ այդպես բարձրաձայն, ի սեր Քրիստոսի։ Պատվելին վառ երևակայությամբ կազմակերպչական վիթխարի պլան է ուրվագծում։ Պատրիարքարանը պետք է գաղտնի կապ հաստատի դերվիշների մեծ միաբանության հետ, դրանով իսկ հիմք դնի այն բազմաճյուղ օգնությանը, որը վերածվելու է վճռական փրկության։ Պետք է զորավոր թափ հաղորդել կրոնական խավերի պայքարին, ժողովրդի մեջ ստեղծել ուժեղ դիմադրություն ընդդեմ էնվերի և Թալիաթի։

Զավեն սրբազանը շատ հեռու է Լեփսիուսի պես լավատես լինելուց։ Նրա համար այդ ամենը նորություն չէ։ Հովվապետը հազիվ լսելի ձայնով շշնջում է, որ դերվիշների մյուս միաբանություններից շատ-շատերը նման չեն վերոհիշյալին։ Հենց ամենից մեծ և ամենաազդեցիկ միաբանությունները՝ Մևլևի և Ռուֆայի կոչվածները, կույր հայատյացներ են։ Ճշմարիտ է, նզովում են էնվերին, Թալիաթին և Կոմիտեի մյուս լոջերին, սակայն հայերի բնաջնջումը համարում են միանգամայն տեղին։

Լեփսիուսի համոզմունքը մնում է անսասան։ Եթե ձեռք են մեկնում, պետք է սեղմել այդ ձեռքը։ Նա սրբազանին առաջարկում է Նեզիմիի միջոցով հանդիպել շեյխ Ահմեդի հետ։ Հովվապետն այս հանդուգն առաջարկից այնպես է սոսկում, որ կարծես ավելի ուրախ կլիներ, եթե կրակոտ պատվելին իր սենյակից հեռանար։

Կամրջի մյուս կողմում Լեփսիուսը վճարում է կառքի վարձը, իջնում։ Մինչև Թոքաթլյան հյուրանոցն ընկած կարճ տարածությունն ուզում է անցնել ոտքով։ Միամսյա աներևակայելի ընկճվածությունից հետո նրա տրամադրությունն այնքան հիանալի է, կարծես մեծ հաջողության է հասել։ Մինչդեռ ոչ մի իրական նվաճում չկա։ Կա միայն մի փոքրիկ, լուսավոր ճեղք։ Մտքերով տարված պատվելին հասնում է Բերայի մեծ փողոցը, անցնում իր հյուրանոցի մոտով։

Զով, հրաշալի երեկո է իջել։ Պուրակաման փողոցի ծառերի կատարներին սփռվել է կանաչափայլ երկինքը։ Քաղաքի այս մասը արտակարգ գեղատեսիլ է։ «Դեսպանական թաղամասն է»,— մտածում է Լեփսիուսը և դանդաղ վերադառնում։ Նույնիսկ էլեկտրական լամպեր կան, որոնք չորս կողմ սփռում են իրենց վարանոտ լույսը։ Հանդարտ ընթացքով ընդառաջ է գալիս մի ավտոմոբիլ։ Ինչ-որ սպա նստած է քաղաքացիական զգեստով հաստամարմին մի մարդու կողքին և եռանդով զրուցում է։ Լեփսիուսն իր լեզվի վրա հանկարծ ակամա սարսափի

համ է զգում։ Ճանաչում է Էնվեր փաշային։ Երիտասարդական նույն կայծկլտուն արտաքինը, աղջկական երկար թարթիչներով պսակված նույն թարմ դեմքը։ Իսկ թեք դրած ֆեսով և սպիտակ բաճկոնակով հարևանը, անկասկած, Թալիաթ բեյն է, ինչպես որ նա պատկերված է բազմաթիվ նկարներում։ Ուրեմն՝ նորից հանդիպեց մեծ թշնամուն։ Որքան էլ տարօրինակ թվա, պատվելին հոգու խորքում այդ բանը ցանկանում էր։ Տեղում մեխված՝ նայում է մեքենայի ետևից։ Հարյուր մետր էլ չի հեռանում, երբ իրար ետևից երկու կրակոց է լսվում։ Մեքենայի արգելակները ճռնչում են։ Մթության մեջ հայտնվում են անորոշ դեմքեր։ Սուր ձայներ են իրար հաջորդում։ Օգնությա՞ն են կանչում։ Պատվելին զգում է, թե ինչպես են սառչում իր ձեռքերն ու ոտքերը։ Մահափո՞րձ։ Էնվերն ու Թալիաթը հասան իրենց արժանի ճակատագրի՞ն։ Եվ ինքը դառնում է վկա՞։ Անզուսպ պահանջ է զգում մոտենալ դեպքի վայրին։ Ոչինչ չէր ուզի տեսնել, բայց չտեսնել չի կարող։ Վախվխելով մոտենում է աղմկող խմբին։ Ինչ-որ մեկը կարբիդի լապտեր է վառում, որի շուրջը զանազան բերանբացներ են խռնվում, բարձրաձայն խորհուրդներ տալիս։ Վարորդը մեքենայի տակ մտած՝ տնքալով ու լուտանքներ տեղալով, ինչ-որ գործ է անում, իսկ Էնվեր փաշան և Թալիաթ բեյը իրար մոտ անվրդով կանգնած՝ գլանակ են ծխում։ Մեքենայի առջևի անիվները դիպել են մայթի սուր եզրին, դողերը պայթել են, մեքենան վնասվել է։ Բայց ամենածիծաղելին այն է, որ ոչ Էնվերն է Էնվեր, ոչ էլ Թալիաթը՝ Թալիաթ։ Մեկը սառնարյուն մի սպա է դուրս գալիս, մյուսը՝ ավելի սառնարյուն մի վաճառական կամ պաշտոնյա։ Միակ իրողությունը սպիտակ բաճկոնակն էր։ Լեփսիուսը զայրանում է իր բորբոքված երևակայության վրա, որն այդպիսի տեսիլներ է թխում։

— Խելքս բոլորովին թոցրել եմ,— քրթմնջում է նա։

Բայց մի ժամ հետո, երբ Ռիֆաաթ Բերեքեթը հյուրանոցային սենյակում նստած՝ պատվելու հետ զրուցում է, ավտոմեքենայի հետ կապված դեպքը մոռացվում է։ Աղայի շալման և երկնագույն երկար թիկնոցը չեն ներդաշնակվում եվրոպական հյուրանոցի հետ։ Չեն ներդաշնակվում նաև փայտե աթոռի ու էլեկտրական լույսի հետ։ Լեփսիուսն զգում է, որ այդ ծերունին՝ «Սրտագողերի» շեյխի սիրիական փոխանորդը, մեծ զոհողություն է կատարում։ Խնդրում է գերմանական հանգանակության գումարներից հինգ հարյուր ֆունտ վերցնել և հնարավորության դեպքում ծախսել ի նպաստ մուսալեռցիների։ Պատվելու վարմունքը թեթևամտություն չէ, ինչպես կարող է թվալ ոմանց։ Այդ փողն ավելի անվթար կմնա և իր նպատակին կծառայի, եթե վստահվի աղայի փոքրիկ, լուսափայլ ձեռքերին, քան անճարակ հյուպատոսություններին ու միսիոներություններին։ Թերևս առաջին անգամ դա իղուր չկորչի։

Ռիֆաաթ Բերեքեթը թղթի ահագին թերթի վրա գեղեցիկ ձեռագրով աշխարհիկ ստացական է գրում, հանդիսավոր ձևով հանձնում գերմանացուն։

— Նամակով քեզ հանգամանորեն կտեղեկացնեմ, թե ինչեր եմ գնել։

— Իսկ եթե քեզ չհաջողվի՞ գնածը լեռ բարձրացնել...

— Ձեռքիս զորավոր թղթեր կան... Մի՛ վախեցիր։ Ինչ որ մնա, կբաժանեմ մյուս աքսորավայրերի հայերին։ Դրանց մասին էլ քեզ լուր կուղարկեմ։

Լեփսիուսն աղային խնդրում է նամակներն ուղարկել Նեզիմիի հասցեով։ Դա ավելի ապահով ճանապարհ է։ Երանի՜ թե ալլահի ողորմածությամբ այդ նոր ճանապարհը չփակվի։

«Երևի ես իղուր չեկա Ստամբուլ»,— մտածում է Լեփսիուսը Ռիֆաաթ Բերեքեթին ուղեկցելուց և հյուրանոց վերադառնալուց հետո։ Փոքրիկ սենյակում կարծես ինչ-որ մի բան է մնացել բարեպաշտ հյուրից. անդորրությունն ավելի խորն է, քան առաջ։

Պատվելին անկողին է մտնում այն գիտակցությամբ, որ իր գործն այսօր բավականաչափ հաջող ընթացավ։ Բայց այնուհետև աչքի առաջ հառնում են թեքքեի մարդիկ։ Պարզ տեսնում է նրանց աչքերը, դեմքերը, շարժումները, լսում է խոսքերը։ Մինչ այդ չգիտեր, թե այդ մարդիկ, որոնց այսօր հանդիպեց, ի՜նչ վսեմ հոգի ունեն. շեյխ Ահմեդը, իր որդին, թյուրբեդարը։ Երկար ժամանակ մտովի բանավիճում է սրանց հետ, մինչև վերջապես քուն է մտնում։ Բայց քունը երկար չի տևում։ Գիշերվա կեսին նրան արթնացնում է մի խուլ դղրդյուն։ Պատուհանների ապակիներն այնպե՜ս տարօրինակ են դողդողում։ Լեփսիուսին այդ ձայնը ծանոթ է։ Անգլոֆրանսիական նավատորմի հրանոթները Ստամբուլի դռներն են ծեծում՝ ներս մտնելու համար։ Պատվելին նստում է անկողնում։ Ձեռքով որոնում է լույսի կոճակը։ Չի գտնում։ Սրտում խղճի սոսկալի խայթ է զգում։ Մի՞թե Նեզիմին չպահանջեց հետևել առօրյա մանր իրադարձություններին։ Դրանք կարող են առանձնահատուկ նշանակություն ունենալ։ Հիշում է Էնվերի ու Թալիաթի դեմ կատարված մահափորձը։ Դա սնամեջ խաբեություն չէր և ինչ-որ չափով առնչություն ուներ շեյխ Ահմեդի ուժի հետ։ Լեփսիուսն ուզում է չտեսնելու տալ իր առաջ բացված ճակատագրական անդունդը։ Նրան խոր սարսափ է տիրում։ Արդյոք մի հայա՞ցք նետեց ապագայի խորքը, թե՞ երևակայու-

թյամբ դարձավ ինչ-որ եղեռնագործի չարամտության զոհը... Հրանոթները որոտում են։ Ապակիները դողդողում են։ Անմտությո՞ւն, անմտությո՞ւն. ուզում է համոզել ինքնիրեն։ Սակայն նրա տենդահար հոգին նախազգում է, որ երկնակալ տերը վերահաստատել է դեռևս չխորտակված արդարությունը։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ամբիոնը Ճանապարհ է ընկնում և վերադառնում

Թնշաղին ամբողջ ժողովուրդը հավաքվեց Հյուսիսային լեռնաթամբի մոտ՝ Հայկին և լողորդներին ճանապարհ դնելու։ Խնդիրը միայն այն չէր, որ մարդիկ հրաժեշտ էին տալու երեք երիտասարդի՝ հասարակության համար մահվան երախը նետվող երեք խիզախ հայորդու։ Խնդիրը միայն այն չէր, որ հարկավոր էր հորդորել, սփոփանքի խոսքեր ասել ջահել-ջիվան զավակներից զրկվող ընտանիքներին։ Ավելի շուտ, պաշարվածներին այստեղ էր բերել ազատության կարոտը։ Հուսո երեք աղավնի դուրս էին թռչելու, ամեն սրտից տանելով մի կտոր գերություն։ Այդ պահից ի վեր մարդիկ արդեն սպասելու էին ինչ-որ լավ բանի, թեկուզ և դա պատրանք լիներ։ Կարծես մեղմացել էր մուսալեռցիներին ճնշող ընկճվածությունը։ Նույնիսկ կատաղած կանայք մոռացել էին Բագրատյանի տան խայտառակությունը, այն ցավալի դիպվածը, որը քիչ առաջ առաքինության մի փոքրիկ ապստամբություն բորբոքեց։

Բագրատյանի ընտանիքի անդամներից ոչ մեկը, իհարկե, ներկա չէր։ Չկար նույնիսկ բարեսիրտ Ավագյանը՝ խոր և կարեկից հոգու տեր այդ երիտասարդը, իր տանտիրոջ մշտական ներկայացուցիչը։ Առաջին անգամ ավագների մեջ չէր Բագրատյանը, երբ այնքան կարևոր հարց էր լուծվում։ Բայց կարծես ոչ ոք չէր նկատում զորավարի բացակայությունը, թեև նա էր գլխավորել թուրքերի դեմ մղած երեք հաղթական ճակատամարտը, թեև յոթ գյուղի ժողովուրդը միայն ու միայն նրան էր պարտական, եթե դեռևս ապրում ու շնչում էին մի քանի հազար հոգի։ Տեր-Հայկազունն ու ավագների խորհուրդը ներքուստ ուրախացել էին, որ հրապարակայնորեն խայտառակված հրամանատարն իրենց խնայեց, ազատեց կատարվածին անդրադառնալու ծանր, ամոթալի պարտականությունից։ Այսօր-վաղը ամեն ինչ նախկին հունով կընթանա, ընդհանուր զժգոհությունը տեղի կտա անտարբերությանը։ Որքան էլ անտրամաբանական թվա, մի քանի ժամում Գաբրիելն ու նրա մերձավորները, ֆրանսուհու հանցանքով, բոլորի աչքին նորից դարձան կասկածելի օտարականներ, պատահական եկվորներ։

Բայց ամենածանր վիճակի մեջ էր Ստեփանը։ Ինչպիսի՜ անկում մի օրվա մեջ։ Ամեն ինչ սկսվեց այն ժամանակ, երբ տղան ձախողվեց կամավոր սուրհանդակներ ընտրելիս։ Հրանոթներ գրավողը չարժանացավ Հայկին ուղեկցելու պատվին։ Դա իբր քիչ էր, հայրիկն էլ իր հերթին ծաղրական խոսքերով վիրավորեց, իբրև փափկասուն երեխայի, ստորացրեց Իսկուհու և ընկերների ներկայությամբ, ընկերներ, որոնց սիրտը հազիվ էր շահել։ Միանգամայն հասկանալի է, թե ինչու պատվախնդիր, ինքնասեր պատանին հոր կոշտ խոսքերն ընկալեց ոչ միայն գաղտնի սարսուռով, այլև խորշանքով ու ատելությամբ։ Այդ հայրն ինքն ազդանշան տվեց որդուն վայր գլորելու այն բարձունքից, ուր տղան հասել էր անդուլ պայքարով։ Իսկ մանկական խաժամուժն անմիջապես ընդառաջ գնաց այդ պահանջին։ Նույնիսկ միոտանի Հակոբի կոկորդին գեմ չառավ չարախինդ ծիծաղը, երբ կործանված ընկերը հեռացավ պարտության վայրից։ Գուցե ամեն ինչ լավ վերջանար, եթե կեսօրից հետո մայրիկը լրացրած չլիներ հոր զարհուրելի արարքը։ Չնայած ընդհանուր խոսքերին, որոնց նշանակությունը նա միայն կիսով չափ էր հասկանում, տղան որոշակի չէր պատկերացնում տեղի ունեցածը, դրա ծանր հետևանքները, ավելի ճիշտ, նրա մտապատկերները քաոսվում էին, վերածվում անտանելի ջղաձգության, հենց որ անդրադառնում էր իրողությանը։ Բռունցքները կրծքին էր սեղմում, ինչպես վազելիս, զարմանում, որ մի կրծքավանդակի տակ կարող է տեղավորվել այնքա՜ն այրող տառապանք։ Լռել էր ամբողջ պատվախնդրությունը, ամբողջ փառասիրությունը։ Հոր հետ գժտված էր, մորը կորցրել էր, և կորստյան պատճառը մութն էր, առավել տանջալից, քան մահը։ Երբ ժամեր անցան, տղայի համար պարզ դարձավ, որ չպետք է վերադառնա ո՛չ մեկի, ո՛չ էլ մյուսի մոտ։ Տարօրինակ կերպով իրեն զգում էր ծնողներից հեռացած, նրանց հետ թշնամացած։ Ուստի և չէր ուզում վերադառնալ, չնայած այդ բանը կարոտով տենչում էր իր մանկական ամբողջ էությամբ։ Այդ մեծ

վճիռը դեռևս չկայացրած՝ խուսափում էր Երեք վրանի հրապարակից։ Արդեն բոլորովին անկարելի էր պարոն Գոնզագի հետ հանդիպելը, նույն վրանում քնելը։ Ի դեպ, պատանու վշտի ոստայնին Գոնզագը ևս մի ամուր թել էր ավելացրել։ Տղային լիարժեք և իրավահավասար մարդ համարելով՝ հույնը շահել էր նրա սիրտը։ Իսկ այժմ պատանու աչքին դարձել էր դիմակազերծ արված ստոր ոճրագործ։

Իրիկնադեմին, առեղծվածային բոլոր հարցերը մի հարվածով լուծելու համար, Ստեփանը գաղտագողի մտավ շեյխական վրանը, շտապշտապ իր շվեյցարական ուսապարկի մեջ լցրեց ամենաանհրաժեշտ բաները։ Ինչ էլ պատահեր, միևնույն է, միայն թե այլևս մտադրություն չուներ ո՛չ մոր հետ հաց ուտելու, ո՛չ էլ իր անկողնում քնելու։ Ուզում էր առանձին ապրել, բոլորից հեռու, իսկ թե ինչպես, դա, իհարկե, դեռևս չգիտեր։ Նախքան հեռանալը մի քանի րոպե կանգնեց մոր վրանի առաջ։ Վարագույրը ներսից ամուր կապկված էր։ Ո՛չ խոսակցություն, ո՛չ ձայն։ Միայն նավթալամպի աղոտ լույսն էր պսպղում։ Ձեռքը մեկնեց մուտքի վերևում կախված փոքրիկ զանգի մրճիկին, բայց հաղթահարեց թուլությունը, ուսապարկը շալակած՝ ետ քաշվեց ու փախավ, այլևս չկարողանալով զսպել արցունքները։ Հյուսիսային լեռնաթամբի մոտ միացավ Հայկին ու լողորդներին հանդիսավոր կերպով ճանապարհող հոծ բազմությանը։ Տապալված հերոսի հետ ոչ ոք չխոսեց։ Մարդիկ նշանացի նայում էին, երես թեքում։ Թիկունքից հաճախ իր հասցեին ուղղված ծիծաղ էր լսում, խոցվում մինչև հոգու խորքը։ Հայկի խումբը նկատելուն պես ճանապարհը թեքեց։ Այժմ նա աքսորական էր։ Իր հաղթանակից ուռած-փքված Սաթոն երևի խմբին նոր, անպատշաճ մանրամասնություններ էր հաղորդում։ Ստեփանն ի վերջո թաքնվեց։ Իր դարանում կարող էր մնալ աննկատելի և ամեն ինչ հանգիստ դիտել։

Նախ օրհնանքով ու բարեմաղթությամբ ճանապարհ գրին երկու լողորդներին։ Քանի որ տղաները բողոքականներ էին, պատվելի Արամը նրանց դիմեց հակիրճ ճառով, իսկ Տեր-Հայկազունը խաչակնքեց երկուսի ճակատները։ Այնուհետև վարդապետն ու պատվելին պատանիների հետ ճանապարհ ընկան։ Անցան առաջին խրամատը, Լեռնաթամբի բարձունքը, գուրս եկան այն կետը, որտեղ թփուտներով հարուստ լեռնալանջը ձգվում էր դեպի հյուսիս։ Հեռացած հրդեհի ծխի ցանուցիր ամպերն այստեղ էին հասնում իբրև վտիտ ոգեմիջնորդներ[1], զարմանալի մոխրաջրի պես տարրալուծում լուսնի մետաղյա ցոլքը, դարձնում դողդոջուն մրի ծվեններ։ Հիրավի, այն տպավորությունն էր ստացվում, թե լողորդները և նրա ուղեկիցները տեղափոխվում են հանդերձյալ աշխարհը՝ լուսափողփող, սակայն անդառնալի։

Բազմությունն ուզեց հետևել խմբին, բայց զինվորները շղթա կազմած՝ ետ մղեցին մարդկանց, առաջ թողնելով միայն հարազատներին ու ազգականներին։ Պատվելի Արամն էր այդպես կարգադրել, որպեսզի անկոչները չխանգարեին։ Չէ՞ որ մարդիկ իրար տալու էին վերջին հրաժեշտը։ Նախ տղաներին մոտեցան հեռավոր ազգականներն ու կնքահայրերը։ Ամեն մեկը մի փոքրիկ նվեր տվեց՝ իր ունեցած ծխախոտի մնացորդը, մի կտոր թանկագին շաքար, մի սրբապատկեր կամ թալիսման։ Հոգևորականներն շտապեցնում էին։ Նվերները տալուն պես բոլորը Տեր-Հայկազունի ու պատվելի Արամի հետ իսկույն հեռացան։ Լողորդների մոտ փոքր-ինչ մնացին միայն հարազատները։ Զսպված վշտով լի կարճատև գրկախառնություն։ Հայրական ձեռքերին դրոշմված համբույրներ։ Մայրերի հեծեծանք։ Կխսակարկամ հայացքների փոխանակում։ Այնուհետև հեռացան նաև ծնողները։

Այս ամենը և այն, ինչ տեղի ունեցավ քիչ անց, մեկուսացած Ստեփանի սիրտը լցրեց դառնանուշ տխրությամբ։ Լողորդները դարձյալ մենակ չէին։ Հանկարծ տղաների կողքին հայտնվեցին երկու աղջիկ։ Թվում էր, թե նրանց քույրերն են։ Մինչդեռ իրականում կամ հարսնացուներն էին, կամ «սրտի հատորները»։ Մահվան վտանգի առաջ անտեսվում էր հինավուրց սովորույթը, որը հարսնացուին ու փեսացուին արգելում է առանձին մնալ։ Զույգերն իրարից բաժանվեցին և, իհարկե, անխոս բարձրացան լեռն ի վեր։ Այսպիսով, աղջիկները հրապարակայնորեն խոստովանեցին իրենց սերը, թեև հաստատ գիտեին, որ երբեք չեն վայելի այդ սիրո պտուղները։ Բազմությունը նույնպես լուռ էր և, չնայած իր ողբալի կացությանը, հուզմունքով էր նայում պատանիներին, որոնք ձեռք ձեռքի տված՝ անհետացան հեղհեղուկ, լուսաթրթիռ մշուշում։ Բայց դա շատ կարճ տևեց, և աղջիկները դանդաղ ցած իջան՝ ամեն մեկն իր մտքերի մեջ խորասուզված։

Մինչ այդ Տեր-Հայկազունը խրատներ տվեց Հալեպի սուրհանդակին, օրհնեց և խաչակնքեց։ Այս պատանուց ավելի արագ, ավելի սառը բաժանվեցին։ Շուշիկը՝ գաղթական այրին, ոչ ազգական ուներ, ոչ էլ բարեկամ։ Ինչպես հայտնի է, մարդիկ խուսափում էին այդ կովկասցի հսկա կնոջից, մոտ չէին գնում Ցողոնօլուքի և Ազիրի ճանապարհին կուչ եկած նրա տնակին։ Թեև Շուշիկի մասին ոչ ոք որևէ վատ բան ասել չէր

[1] ոգեմիջնորդ— ոգեհարց, մեդիում (լատ.), հոգեհարցուկ. սպիրիտների (ոգետեսների) միջոցով ապատեղեկատվամբ, միջնորդ՝ մարդկանց և «ոգիների» աշխարհի միջև, որն իբր թե պատասխանում է զանազան հարցերի, կատարում տարբեր հրահանգներ

կարող, Համենայն դեպս լուրեր էին շրջում, թե նա կոշտ ու կոպիտ կին է, ուրիշ հող ու ջրի զավակ։ Այս տեսակետից աշխարհի բոլոր բնիկները նման են իրար։ Եկվորներին միշտ համարում են կասկածելի։ Այրի Շուշիկը երբեք չէր փորձել մտերմանալ հայկական հովտի բնակչության հետ։ Իր խոշոր, անխոնջ ձեռքերով մեն-մենակ աշխատում էր, կառավարում իր տունն ու տեղը։ Դրա հետևանքն էր այն, որ միայն Տեր-Հայկազունն ու պատվելի Արամն էին այրուն ուղեկցում, երբ նա ժողովրդին նվիրաբերեց իր միակ և ամբողջ հարստությունը՝ իր Հայկին։

Հոր փոխարեն տղային գրկեց և օրհնեց Տեր-Հայկազունը, ընդունեց նրա տված որդիական աջհամբույրը։ Վարդապետն ու պատվելին պատանուն որոշ գումար նվիրեցին, որպեսզի նեղն ընկնելիս կարողանա փրկանք վճարել, ազատվել մահից։ Այնուհետև մորն ու որդուն առանձին թողին։ Բայց այրին միայն իր ծանր ձեռքերով շոյեց Հայկի գլուխը, գրեթե ցույց չտալով իր հուզմունքը, և իսկույն հետևեց հոգևորականներին։ Ստեփանը նկատեց, որ Շուշիկը չմիացավ արդեն խումբ-խումբ տուն վերադարձող մարդկանց, այլ վարանոտ քայլերով շարժվեց դեպի ժայռապատնեշը։

Առաջին անգամն էր, որ Գաբրիելը մի ամբողջ գիշեր չէր եղել հյուսիսային խրամատի պաշտպանների մոտ։ Ավագների խորհուրդն այդ գիշերվա գլխավոր հրամանատարությունը հանձնարարել էր Զաուշ Նուրհան էլլեռնին։ Բարերախտաբար, թուրքերի կողմից որևէ հարձակում չէր սպասվում։ Ճիշտ է, թուրքական զորախմբերը գյուղերից դեռևս չէին հեռացել, բայց քանի որ Բագրատյանի ամառանոցում պառկած վիրավոր յուզբաշին որևէ նոր հրաման չէր տվել, ուժասպառ վաշտերն այդ օրերին հանգստանում էին։ Դետքերը լուրեր էին բերում, որ ոչ մի սպառնալից շարժում չկա, բացի զինվորական խաղաղ առօրյայից՝ Վաքըֆից մինչև Քեբուսիե ընկած ճանապարհներին։ Հայ ռազմիկներն ու գաղթականների ժողովուրդն իրենց ավելի ապահով էին զգում, քան երբևէ։ Դամլաջրքի հրդեհված լանջը նրանց պաշտպանում էր։ Երբեմն հրացոլքն այնպես էր փայլատակում, մեծ հրդեհի բոցերն այնպես էին կայծակվում, որ գիշերները ցերեկվա պես լուսավոր էին։ Հետո այնպես թվաց, թե կրակը հասնելու է Հյուսիսային լեռնաթամբ։ Սակայն իրականում հրդեհը վաղուց արդեն դեմ էր առել անհաղթահարելի պատնեշի՝ Բիթիասից վերև և երկու քարափի միջև ընկած բարձր ժայռացցվածքին։ Անվտանգ ապահովության զգացումը համակել էր ոչ միայն անձնակազ-

մին, այլև Զաուշ Նուրհանին, որը մի քանի տարեց մարդկանց հետ թուղթ էր խաղում։ Ամեն ինչ թողնված էր ինքնահոսի։ Հարավաբերդից գրեթե դասալքության հոտ էր գալիս։ Ամեն րոպե պահակներից մեկնումեկը լքում էր իր դիրքը, միանում զրուցողներին։ Հրամանատարից սովորաբար քաշվում էին, բայց սա այժմ նույնիսկ հանդուրժում էր, երբ խախտում էին ամենախիստ հրամաններից մեկը. ամեն տեղ շոր ճյուղերից խարույկներ էին վառել։ Ակնհայտորեն զգացվում էր Բագրատյանի բացակայությունը՝ մտավոր գերակշռության, անմատչելիության և զգայուն մեղմության այն խառնուրդի պակասը, ինչի շնորհիվ ամենուրեք կարգ ու կանոն է հաստատվում։ Տարբերությունն էլ հենց դա էր։ Գաբրիելի ներկայությամբ մարդիկ երես չէին առնում։

Զայների ժխորը և նոր վառած խարույկները Ստեփանին հնարավորություն տվին արագ մագլցելու լեռնալանջի մյուս կողմը։ Ոչ ոք չնկատեց, ոչ ոք ետ չկանչեց։ Տղան պետք է շտապեր. Հայկը երևի ահագին հեռացել էր։ Ինչքան ուժ ուներ, վազեց։ Ուսապարկն այնքան էլ ծանր չէր՝ հինգ տուփ սարդինի պահածո, շոկոլադի մի քանի սալիկ, մի քիչ թխվածք, մի քիչ սպիտակեղեն։ Թերմոսը, որ հայրը մոռացել էր վրանում, Քրիստափորի միջոցով լցրել էր գինով։ Այսքանը և մի բարակ վերմակ. ահա տղայի ամբողջ բեռը, եթե չհաշվենք «Կոդակ» ֆիրմայի լուսանկարչական ապարատը։ Դա փարիզյան վերջին տարվա նվերն էր, որ տղան ստացել էր Ծննդյան տոնի առթիվ։ Այդ ապարատից բաժանվել չէր կարողանում, թեև լուսանկարչական ժապավեն այլևս չուներ։ Հետը վերցրել էր զուտ երեխայական քմահաճույքից մղված։ Դրան հակառակ, հրաժարվեց հրացան թոցնելուց, քանի որ Հայկը ևս անզեն էր։

Մի քանի րոպեում Ստեփանը հասավ լեռնաթամբի հանդիպակաց բարձունքը։ Տղայի առջև տարածվեց լայն ու երկար բացատը, որտեղից հարայ-հրոցով Դամլաջրք բարձրացրին թուրքական հաուբիցները։ Օ՜, արդեն որքա՜ն հեռու էր, որքա՜ն անհասանելի էր թվում այդ գիշերը։ Երկար ու ձիգ հեղեղատով առաջ վազեց, որ հասնի Հայկին, քանի դեռ սա չէր անհետացել անճանապարհ վայրում։ Նրան պաշարեց երկյուղը. իսկ եթե չհասնի՞ պատվիրակին։ Բայց մի քանի ոստյուն չարած՝ կանգ առավ։ Մոտ տասը քայլ հեռավորության վրա ինչ-որ բան նկատեց, մեխվեց տեղում, ապա մտավ թփի ետևը։

Նվազող լուսնի ցոլքի տակ, որն այլևս չէր լուծվում ծխի քուլաների մեջ, քարացած նստել էր այրի Շուշիկը։ Կովկասուհու երկար, լայն շրջազգեստի մեջ ամփոփված ոտքերը վիթխարի ստվեր էին գցել,

ծածկել Մուսա լեռան ահռելի մի հատված։ Հայկը, նույնպես ոսկրոտ ու հաղթանդամ, ծծկեր երեխայի պես փարվել էր մորը։ Գրեթե նստել էր գոգին, գլուխը սեղմել կրծքին։ Մարմարյա լույսի տակ այն տպավորությունն էր ստեղծվում, թե այրին մերկացրել է ստինքները, որ շափահաս որդին մի անգամ էլ խմի իր արյունից գոյացող հյութը։ Հայկը, այդ ստանարյուն, բալորին հեգնող տղան, կարծես ուզում էր ամբողջովին ձուլվել մոր էությանը։ Լսվում էին նրա ընդհատ, լացախառն հոդոցները։ Հսկա մայրիկի սրտից ցավի խուլ հնչյուններ էին դուրս պոռթկում, երբ շոյում էր զոհաբերված որդու մարմինը։

Ստեփանը վշտից քարացած՝ կանգնել էր իր թաքստոցում։ Ամաչում էր, որ վկա է դառնում այդ տեսարանին, բայց տեղից պոկվել չէր կարողանում։ Իսկ երբ հանկարծ Հայկը վեր թռավ, մորն օգնեց, որ ոտքի կանգնի, Ստեփանի սրտին կարծես դանակի հարված իջավ։ Որդին մորը մի քանի շոր ու ցամաք խոսքով հանգստացրեց, ապա եղբայրակեց.

— Դե՛, հիմա գնամ։

Կոշտ ու կոպիտ այրին իսկույն հնազանդվեց, իրեն և որդուն շենթարկելով նոր զրկախառնության տատապանքին։ Անմիջապես աճապարանքով հեռացավ, որ ամեն ինչ շուտ վերջանա։ Հայկն անշարժ կանգնած նայում էր մորը։ Երբ այրին ետ նայեց, տղայի գեմքն այլայլվեց, բայց նա իրեն զսպեց, նույնիսկ ձեռքը չբարձրացրեց։ Երբ, վերջապես, մոր վիթխարի ստվերն անհետացավ, տղան երջանիկ թառանչ արձակեց, դանդաղ ճանապարհ ընկավ։

Ստեփանն ապասեց, մինչև սա փոքր-ինչ հեռանար։ Ուզեկիցը պետք է մոռացության տար հրաժեշտը։ Նրան կարելի էր ընկերանալ միայն այդ բանից հետո։ Բայց պատանի Բագրատյանը չգիտեր, թե հանկարծ կարող է հայտնվել Հակոբը։ Շիկահեր հաշմանդամը, գրքերի սիրահարը, նրբաբազուկ տղա էր։ Ամբողջ օրը նրան տանջել էր խղճի խայթը։ Չէ՞ որ ինքն էլ էր ծաղրել ընկերոջը՝ Ստեփանին։ (Ստորին խավի զավակները, մերժվածները, որանց թվին են պատկանում նաև հաշմանդամները, հազվադեպ են ֆարազանում զսպել իրենց շարախենգ հրճվանքը, երբ բարձր դիրքի տեր մի մարդ, թեկուզ իրենց բարեկամը, նվաստանում է, իջնում իրենց աստիճանին)։ Հակոբն ուզում էր քավել իր մեղքը, քանի որ դավաճանել էր ընկերոջը, միայնակ նրան հալածողներին։ Բայց դա քիչ էր թվում։ Տգայլն արիշ ծանր հոգսեր էին տանջում, ավելի, քան սեփական մեղքի գիտակցությունը։ Նա ամեն ինչ կուտակում էր։ Իրեն հատուկ կատաղի թափով ու ճարպկորեն ստատատալով, նա ժամեր շարունակ

որոնում էր Ստեփանին թե՛ Քաղաքաձորում, թե՛ խաղավայրերում։ Առանց քաշվելու, հանդգնորեն ներս նայեց նույնիսկ Ժուլիեթ հանրմի վրանի նեղ ճեղքից։ Մոտից չէր հեռանում սրտաճմլիկ տեսարանը։ Սպիտակադեմ, հաղթամարմին տիկինը մեռածի պես փռվել էր մահճակալին, իսկ գլխավոր հրամանատարը կողքին կանգնած՝ անթարթ նայում էր, ասես երազում։ Երբ միոտանին պատվիրակներին ճանապարհելու հանդիսավոր արարողության ժամանակ վերջապես գտավ ընկերոջը, այն էլ թաքստոցում, ուսապարկը շալակին, նրա կասկածը լրիվ արդարացավ։ Լալումից հնալով կառչեց Ստեփանից.

— Էդպես բան չանես, չէ՞։ Պիտի մնաս։

Ստեփանը կոպտորեն հրեց Հակոբին, վայր գցեց.

— Դու կեղտոտ շան մեկն ես. քեզ հետ գործ չունեմ։

Բագրատյանի որդին շուտ ներողներից չէր։ Հակոբը կախվեց նրա ոտքերից.

— Չե՞ս գնա։ Չե՞մ թողնի։ Կմնաս էստեղ։

— Բաց թող, թե չէ երեսիդ կհասցնեմ։

Հաշմանդամն Ստեփանից կախվելով՝ բարձրացավ, հուսահատորեն փնչաց.

— Պիտի մնաս։ Մայրդ հիվանդ է։ Չես էլ իմանում...

Դա նույնպես չազդեց։ Ստեփանը միայն մի ակնթարթ տատանվեց, ապա դեմքը ծամածռեց.

— Ես նրան օգնել չեմ կարող...

Հակոբը երկու քայլ ետ ցատկեց.

— Գիտե՞ս, որ էլ չես վերադառնա, էլ չես տեսնի մորդ...

Ստեփանը մի պահ սևեռուն հայացքով նայեց գետնին, հետո շրջվեց և վազեց Հայկի ետևից։

Հակոբը հեծկլտալով ձայն տվեց.

— Կրդավեմ... Բոլորին իմաց կտամ... Քեզ բանտարկել է պետք... Մարդ կկանչեմ... Հե՛յ, հե՛յ...

Հիրավի, սկսեց գոռգոռալ։ Բայց նրա բարակ ձայնը ո՞ւր կարող էր հասնել։ Միայն Հայկը լսեց, որը դեռ հարյուր մետր էլ չէր հեռացել։ Հալեպի սուրհանդակը շրջվեց, կանգ առավ։ Ստեփանը նետվեց նրա կողմը, Հակոբն էլ՝ ետևից, գրեթե առանց ետ ընկնելու։ Որպեսզի սա չխափանի իր գլանները, Ստեփանը վազելով գոչեց.

— Հա՛յկ, գալի՞ս եմ հետդ...

Ժողովրդի պատվիրակն սկզբում թույլ տվեց, որ մոտենան։ Այնուհետև Ստեփանին ոտքից գլուխ չափեց կիսափակ թարթիչների տրան-

քից փայլատակող խոժոռ աչքերով.

— Ա՜յ տղերք, ինչի՞ եք ուշացնում։ Ամեն բոպեն թանկ է։

Ստեփանը վճռականորեն սեղմեց բռունցքները.

— Քեզ հետ պիտի գամ Հալեպ։

Հայկն իր համար գավազան էր պատրաստել։ Դա հրացանի պես առաջ պարզեց։ Կարծես չէր ուզում, որ իրեն մոտենա ինչ-որ մի ինքնակոչ.

— Ավագների խորհուրդն է ինձ լիազորել, Տեր-Հայկազունն էլ օրհնել է։ Քեզ ո՛չ լիազորել են, ո՛չ էլ օրհնել...

Հակոբը, որը Հայկի ներկայությամբ միշտ խեղճանում էր, դառնում ստրկահաճ, բուռն եռանդով կրկնեց նրա խոսքերը.

— Դու ո՛չ լիազորված ես, ո՛չ էլ օրհնված։ Քեզ արգելվում է գնալ։

Ստեփանը բռնեց Հայկի գավազանի ծայրը և սեղմեց այնպես, կարծես դա ձեռք լիներ.

— Քեզ համար էլ տեղ շատ կա, ինձ համար էլ...

— Խոսքը ո՛չ քո մասին է, ո՛չ էլ իմ. խոսքը նամակի մասին է, որը ես պիտի հանձնեմ հյուպատոս Ջեքսոնին։

Ստեփանը հրճվանքով ձեռքը տարավ դեպի գրպանը.

— Հյուպատոս Ջեքսոնի նամակը ես արտագրել եմ։ Երկուսն ավելի լավ է, քան մեկը։

Հայկն իր գավազանը թափով խփեց գետնին՝ խոսակցությանը վերջ տալու համար.

— Դու էլի՞ ես ուզում ուրիշներից խելացի դուրս գալ։

Հակոբն այս նախադասությունը ևս կրկնեց ամենայն հավատարմությամբ։ Սակայն Ստեփանը մազաչափ անգամ չնահանջեց.

— Արա ինչ ուզում ես։ Տեղ շատ կա։ Հո չե՞ս կարող արգելել, որ ես էլ գամ Հալեպ։

— Բայց դու նամակը Հալեպ հասցնելուն կարող ես խանգարել։

— Քեզնից վատ չեմ վազում։

Հայկն իր ձայնին տվեց այն ամբարտավան շեշտը, որը Ստեփանին հաճախ էր հավասարակշռությունից դուրս բերում.

— Էլի՞ սկսեցիր գլուխդ գովել։

Մի օրում ստացած բոլոր սոսկալի վերքերից հետո դա արդեն չափազանց անտանելի հարված էր։ Ստեփանը նստեց գետնին և դեմքը ձեռքերով ծածկեց։ Բայց Հայկն ազատություն տվեց իր արհամարհանքին.

— Հալեպ գնացողիս տեսեք. հիմիկվանից թուլացած [illegible]։

Ստեփանը հեկեկալով մրմնջաց.

— Հետ դառնալ չեմ կարող... Աստված վկա... հետ դառնալ չեմ կարող...

Հայկը երևի գուշակեց, թե ինչ է կատարվում Ստեփանի հոգում։ Գուցե մտաբերեց իր մորը՝ Շուշիկին։ Գուցե նույնիսկ նրա մեջ առաքելության ճանապարհին միայնակ և լքված չլինելու ցանկություն ծընվեց։ Ո՞վ իմանա։ Բոլոր դեպքերում նրա վերաբերմունքը մեղմացավ, երբ հաստատեց Ստեփանի ասածը.

— Ճիշտ ես ասում, տեղ շատ կա։ Ոչ մեկը չի կարող քեզ արգելել...

Հակոբը հուսահատորեն առարկեց.

— Ի՞նչ։ Բա ես չե՞մ կարող արգելել։ Հիսուս Քրիստոս։ Քեզ կմատնեմ։

Հենց այս անմիտ «մատնել» բառն էլ հարցը լուծեց։ Դա Հայկին կատաղեցրեց։ Որքան էլ նա հաղթանդամ և լրջախոհ լիներ, համենայն դեպս հոգու խորքում դեռևս հավատարիմ էր մնում դպրոցական տղաների բարոյագիտության հիմնական օրենքներին, որոնք միատեսակ են ամբողջ աշխարհում։ Մատնությունն ու դավաճանությունը, ինչ նպատակով էլ դրանք արվեն, համարվում են անքավելի ոճրագործություն։ Հայկն անկեղծ վրդովմունքով հաշմանդամի վրա գոռաց.

— Կմատնե՞ս։ Հլա մատնիր, տեսնեմ։ Բայց դրանից առաջ քո մյուս ոտքն էլ կջարդեմ, որ սողալով էլ չկարողանաս տուն հասնել։

Հակոբը սարսափահար հետ փախավ։ Հայկին լավ էր ճանաչում։ Գիտեր, որ սպառնալիքը գրեթե միշտ իրագործում է իր զորավոր բռունցքներով։ Շիկահերի ընդդիմությունից վիրավորվել էր խմբապետի բռնակալական ինքնասիրությունը։ Դրանից Ստեփանը շահեց։ Հայկն արդեն գործնական հարց տվեց.

— Հինգ օրվա պաշար ունե՞ս։ Ասել կուզի, ճանապարհն այդքան կտևի, եթե ամեն բան հաջող գնա։

Ստեփանը ձեռքը հպարտորեն դրեց ուսապարկին, հասկացնելով, թե ինքն ավելի երկարատև արշավանքի է պատրաստվել։ Բայց Հայկն այլևս չստուգեց նրա ասածի հավաստիությունը, կարճ ու կտրուկ հրամայեց.

— Դե, շարժվիր։ Առանց այդ էլ ձեր պատճառով ահագին ժամանակ կորցրի։

Ո՛չ «ետ» ասաց, ո՛չ «առաջ», այլ միայն «շարժվիր»։ Ճանապարհը շարունակեց, ուշադրություն չդարձնելով Ստեփանին, որը [illegible]

հետևում էր նրան։ Այսպիսով, Հայկը ոչ թե Բագրատյանի որդուն տանում էր իր հետ, այլ միայն հանգուրժում էր նրա ընկերակցությունը։ Չէ՞ որ գիշերային մթության մեջ թաղված անարահետ վայրերում, իրոք, «տեղ շատ կար»։

Հակոբը շվարած նայում էր, թե լիաղորվածն ու փախստականն ինչպես են անհետանում մոտակա ալիքաձև, լուսնաղոծ բարձունքի ետևում։ Գրեթե մի ժամում՝ կաղալով հազիվ հասավ Քաղաքաձոր։ Ստեփանի անիմաստ փախուստը ժայռի պես ծանրացել էր սրտին։ Մտաբերում էր Իսկուհու «Աստվածաշնչի» հետ կապված շատ ավելի անվտանգ արկածը, երբ ամեն ինչ այնքա՞ն սոսկալի վախճան կարող էր ունենալ։ Հապա այս անգա՞մ, ի՞նչ է գալու գլխին։

Խրճիթում բոլոր տնեցիներն արդեն քնել էին։ Հայրը քնաթաթախ քրթմնջաց, նախատական մի քանի խոսք ասաց ուշ վերադառնալու համար։ Տղան առանց հանվելու փռվեց խսրի վրա, աչքերը հառեց առաստաղի ճյուղերին։ Դրանք բարակ մաղի պես քամում էին լուսնի ցոլքը։ Դեռևս քնել չէր կարողանում։ Կեսգիշերից բավական ուշ Սամվել Ավագյանն ամբողջ ընտանիքն արթնացրեց։ Խեղճ պառաներին ամեն ինչ իսկույն պատմեց և Գաբրիելին, Քրիստափորին, Ավագյանին ու օգնության եկած մյուս մարդկանց տարավ այնտեղ, որտեղ բաժանվել էր Հայկից ու Ստեփանից։

Անմիջապես ճանապարհ ընկան փախստականին որոնելու։ Գաբրիելը Գևորգի՝ Պարոնի, հետ ձեռնունայն վերադարձավ միայն լուսադեմին։ Այդպես էլ մյուսները։ Ստեփանն արդեն շատ էր հեռացել։ Դրանից բացի, Հայկը գնացել էր ոչ թե ավագների խորհրդի ընտրած ճանապարհով, այլ ապավինել էր իր անդավաճան բնազդին։

Մինչ լողորդները, Ռես էլ Խընզրը հրվանդանն անցնելով, հանգիստ ու ապահով գնում էին դեպի ծովափնյա Արսոս գյուղը, Հայկն ու Ստեփանն ամբողջ գիշերը հոգնած քայլում էին շարունակ իջնող ու բարձրացող լեռնապարի անվերջանալի երկայնքով։ Հայկին հանձնարարված էր լեռան անվտանգ թիկունքով այնքան առաջ շարժվել, մինչև հասներ Բեյլանի հովտի հարավային ծայրը։ Այնուհետև պետք է Քըրք Խանի կողքով դուրս գար դաշտավայր, ճանապարհը շարունակեր Համամից Հալեպ տանող մեծ խճուղու մոտերքով։ Եգիպտացորենի հնձված արտերի և տոթակեզ տափաստանի միջով, օգոստոսյան լուսնկա գիշերներին, տղան հեշտությամբ կարող էր անցնել, իսկ վտանգի դեպքում՝ թաքնվել։ Մեծ քաղաքը տեսնելուն պես պետք է համարձակորեն դուրս գար խճուղի, սողոսկեր եգիպտացորենի կողերով ու մատուտակով բեռնված գյուղական սայլերից մեկի մեջ։ Այդպես, ասածո օգնությամբ, նա կկարողանար ապահով անցնել քաղաքի սահմանագլխին կանգնած զինվորական պահակների մոտով։ Բայց ինչ էլ պատահեր, միստր Ջեքսոնին ուղղված նամակը նրա մոտ չպետք է գտնեին։ Հայկն իր ուղեկցին այս առաջադրանքը հանգամանորեն լուսաբանեց, սարսափելի գույներով նկարագրեց այն բոլոր դժվարություններն ու վտանգը, որ իրենց կարող էին հանդիպել դաշտավայրում։ Ամայի լեռներում ամեն ինչ ոեռևս խաղ ու պար էր։

Մոտ մի ժամ հետո հովվական արահետը, որից Հայկը երբեք չէր շեղվում, չնայած ոչինչ չէր տեսնում, թեքվեց դեպի հովիտը։

Լիաղորված սուրհանդակը կանգ առավ, խրատաբար դիմեց Ստեփանին.

— Տես, ետ դառնալը դեռ ուշ չէ. չես մոլորվի։ Լավ մտածիր։ Հետո էլ չես կարողանա։

Ստեփանը ձեռքը բարկությամբ թափ տվեց։ Բայց սիրտը լի էր հուսահատությամբ։ Փախուստի պատճառները նրա համար այնքան էլ պարզ չէին։

Հայկը մատնացույց արեց Դամլաջրքը, որտեղ հեռավոր, կարմրավուն մշուշում ուրվագծվում էր հրդեհը.

— Էլ հետ չես դառնա ու ոչ մեկին չես տեսնի...

Բագրատյանի որդին որոշակի չէր գիտակցում իր իսկական ցանկությունը, բայց ավելի շուտ կմեռներ, քան Հայկի մոտ ի հայտ կբերեր իր թուլությունը։ Սեփական անվճռականությունից ամաչելով, նա գրպանից հանեց տեղական քարտեզը, որը մինչ այդ կախված էր հորեղբայր Ավետիսի աշխատասենյակում։ Ջևացրեց, թե լուսնի պայծառ լույսի տակ ուսումնասիրում է տեղանքը։ Հայկը, «գոռոզամիտ աչքակապությունից» զայրացած, քարտեզը խլեց, դեն շպրտեց և այլևս ոչ մի բառի խորհուրդ իզուր չվատնեց։ Ի պատասխան, Ստեփանը վճռեց այդ ամբարտավանին ապացուցել, որ ինքը քայլելու մեջ ավելի է տոկուն։ Իր ուղեկցին ֆիզիկապես խեղճացնելու նպատակով լարեց իր բոլոր մկանները, առաջ նետվեց կատաղի թափով։ Բայց Հայկը մտադիր էլ չէր այդ անխելքությանը հետևելու։ Անտարբեր, գրեթե հանդիսավոր քայլերով շարունակեց իր ճանապարհը։

Հանկարծ Ստեփանը սարսափով նկատեց, որ մնացել է մեն-մենակ։ Փոխանակ ուրիշի մոտ իր գերազանցությունն ապացուցելու, կորցրեց ճանապարհը և, ինչպես թվում էր, այլևս չէր կարողանա դուրս գալ

ամայի թավուտից։ Սիրտը թպրտում էր, բայց չուզեց ձայն տալ։ Երբ անվերջանալի բոպեներն անցան, և լուսնի լույսով ողողված թփուտներից դուրս լողաց Հայկն ու առանց նայելու ինքնուրույն ձևացողի կողմը, անցավ-գնաց, Ստեփանը սուսուփուս հետևեց իրենից զորավորին, մոռացության տալով իր ամոթահար փորձությունը։ Այսպիսով, առաջնության գոտեմարտը մեկընդմիշտ ավարտվեց։

Արագ իջան նեղ հովիտը։ Աջ կողմում տարածվել էր Զանգերան խոշոր գյուղը։ Փառք աստծո, ոչ մի տեղ լույս չէր վառվում։ Միայն մի ձայն էր լսվում։ Ինչ-որ թուրք քթի մեջ մի խուլ եղանակ էր մրմնջում։ Զարհուրելի բան է, երբ մարդ անցնում է մի բնակավայրի մոտով, որտեղ մահն է դարան մտել։

Զանգերանի վայրագ շները չխաբվեցին, ընկան երկու հայ պատանիների ետևից, հետապնդեցին մինչև գյուղի սահմանը։ Հայկը զարմանալի բնազդով նորից մի արահետ գտավ, որը ձգվում էր դեպի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան կողմը։ Երբ տղաները կրկին հայտնվեցին լուսնի ցոլքով ողողված սաղարթավոր նոսր անտառում, Ստեփանին համակեց արկածալից գիշերվա արբեցուցիչ թարմությունը։ Ամեն ինչ մոռացավ։ Երգելու, հրճվելու ցանկություն զգաց։ Հոգնածությո՞ւն։ Մի՞թե աշխարհում այդպիսի բան գոյություն ունի։

Արևածագից առաջ, չնայած հաճախակի հանգստանալուն, մոտ տասը մղոն ճանապարհ էին անցել։ Հասել էին այնտեղ, որտեղ լեռնաշղթայի հյուսիսային մասը ցածրանում է, վերածվում անտառապատ լայն դարավանդների։ Ստեփանն իր քարտեզով այստեղ կկորչեր։ Բայց Հայկը առանց տատանվելու ցույց տվեց ուղղությունը.

— Էսպես պիտի գնանք Բեյլան։

Ամեն ինչ իսկույն կռահում էր, թեև մոր հետ միայն մի անգամ էր գնացել Բեյլան և Ալեքսանդրեթ, այն էլ ավանակ հեծած, բոլորովին ուրիշ ճանապարհով, ծովափով։ Գոհունակությամբ այն կարծիքը հայտնեց, թե հարկավոր է քնելու տեղ գտնել, հաց ուտել և մինչև կեսօր հանգստանալ։ Մի քիչ քնելն այժմ ավելի կարևոր էր, քան որևէ այլ բան։ Առանց երկար-բարակ չարչարվելու, Հայկը ոչ միայն փափուկ խոտով ծածկված մի զով տեղ գտավ, այլև նույնիսկ աղբյուր։ Վերջինս, անշուշտ, Մուսա լեռան ջրառատ շրջակայքում առանձին հրաշալիք չէր։ Ջուր գտնելը ծիծաղելի բան էր այդ պատանու համար, որը բնազդով անսխալ զգում ու հասկանում էր հողի ամեն մի բեկորի գաղտնի առանձնահատկությունները, օդի ջերմության ամենաչնչին տատանումները, քաջատեղյակ էր բուսական հարուստ աշխարհին, հեռվից կռահում էր կենդանիների մոտիկությունը։

Տղաները տեղավորվեցին աղբյուրի ակունքի մոտ, որտեղ նույնիսկ մի փոքրիկ, հաճելի լճակ էր գոյացել։ Ամենից առաջ հագեցրին իրենց ծարավը։ Ապա քաղաքակրթության զավակը, ի զարմանս Հայկի, իր ուսապարկից դուրս բերեց մի կտոր օճառ, սկսեց լվացվել։ Հայկն այդ ավելորդ աշխատանքը դիտում էր ծաղրական լրջությամբ։ Լվացվելուց հետո Ստեփանը ոտքերն ամենայն բավականությամբ դրեց սառը լճակի մեջ։ Չէ՞ որ արդեն ոտքերն ամենից կարևոր էին։ Հետո մանկաբար փոխանակեցին իրենց ունեցած ուտելիքները։ Այրի Շուշիկն իր որդու համար ոչխարի մանրած մսից, ճարպից ու սխտորից երեք մեծ կտոր երշիկ էր պատրաստել, հետն էլ քարի պես ամուր մի բոքոն էր տվել։ Թե հացը ինչ հնարքով էր ճարել, դա միայն աստծուն է հայտնի։ Դամլաջրքի վրա հաց, մակարոն, պտուղ ու բանջարեղեն թաքցնելը համարվում էր հանցագործություն։ Իբրև պատիժ, մի քանի օրով զրկում էին պարենից։ Բայց և այնպես այս կարգի գանձերը խրճիթներում երբեմն գաղտնորեն հայտնվում էին, իսկ թե որտեղից, դա մնում էր անլուծելի առեղծված։ Հին պատմություն է։ Քարտային ոչ մի սիստեմ, նույնիսկ ամենազորավորը, չի կարող լիովին կաշկանդել կյանքի ընթացքը, որը ոչնչից կարող է ստեղծել անհավատալին։

Գրեթե սիմվոլիկ էր այն, որ Ստեփանը, ի հակադրություն ոչխարի մսից պատրաստած երշիկի ու բոքոնի, մեջտեղ հանեց ֆրանսիական յուղալի սարդին և շվեյցարական շոկոլադ, այսինքն՝ արտասահմանյան այնպիսի ուտելիքներ, որոնց անունը հազիվ թե Հայկը լսած լիներ։

Տղաներն իրենց զսպել չկարողացան. առատորեն ուտում էին, առանց մտածելու հետագա օրերի մասին։ Բայց Հայկը հանկարծ սթափվեց, իր պաշարը մի կողմ քաշեց, Ստեփանին էլ խորհուրդ տվեց.

— Ավելի լավ է ջուր խմիր։ Ուտելիքդ խնայիր։

Այդպես էլ արին։ Թերմոսի ալյումինե բաժակով կուշտ ջուր խմեցին, որին Ստեփանը գինի էր խառնում։ Բագրատյանի որդին իրեն այնքան լավ էր զգում, կարծես դուրս էր եկել արձակուրդային ուրախ շրջագայության և ոչ թե մի ուրիշ հայ պատանու հետ մահվան սպառնալիքի տակ գնում էր անագորույն մի քաղաք, իրագործելու մի պատվիրան, որի համար ո՞չ իրավունք ուներ, ո՞չ կոչում։ Այն ամենը, ինչ տղային ցավ էր պատճառում, վերջնականորեն մնացել էր Դամլաջրքի բարձունքներում։ Ի՞նչ հոգեպարար բավականություն կլիներ, եթե մի ամ-

բողջ գիշեր թափառելուց հետո տղաները մարդավայել ապրեին արևելյան այս բարեշնորհ, խաղաղ աշխարհում։

Ստեփանը գլխի տակ դրեց ծալած վերմակը։ Առավոտն ավելի ու ավելի ջերմաշունչ էր դառնում։ Տղան մի անգամ էլ գլուխը բարձրացրեց, մանկաբար թոթովեց.

— Հո վայրի գազաններ չե՞ն գա։

Հայկը ծանրաբարո շարժումով կողքին դրեց լայնշեղը դաշույնը։

— Իսկի մի՛ վախենա։ Ես քնած ժամանակ էլ ամեն բան տեսնում եմ։

Ստեփանի երկյուղը փարատվեց։ Ի՜նչ լավ պահապան էր Հայկը։ կարող էր տեսնել նույնիսկ քնած ժամանակ։ Մարդկային ոչ մի էակի հանդեպ Ստեփանը դեռևս չուներ այն գորովալից վստահությունը, որ զգում էր այդ կոշտ ու կոպիտ տղայի նկատմամբ։ Հայկը միշտ էլ հիացմունք էր պատճառում նրան։ Եվ այժմ նա անվերապահորեն ապավինեց իր ընկերոջը, իբրև առաջնորդի։ Քնած ժամանակ ձեռքով շոշափում էր իր բարեկամին։

— Հիմա մեզ համար չալմաներ պատրաստենք,— բացատրեց Հայկը,— թե չէ հենց որ մարդիկ պատահեն, իսկույն կճանաչեն։

Նա քանդեց իր շորե երկար գոտին, վարպետորեն չալմա կապեց։ Ստեփանը ոչ մի կերպ գլուխ չէր հանում իր վզի շարֆից։ Հայկը օգնեց, և քիչ անց Մարգարեի գլխազարդը պատրաստ էր։ Միաժամանակ խրատում էր անփորձ եվրոպացուն.

— Եթե նեղն ընկնենք, ամեն բանում ինձ հետևիր։ Ավելի լավ կլինի, եթե բերանդ իսկի չբացես։

Միջօրեն վաղուց էր անցել։ Հաճարենիների և կաղնիների կատարների արանքից երևում էր ոսկեծուփ երկինքը, որտեղ խառնիխուռն ճախրում էին գիշատիչ թռչուններ։ Տղաներն արդեն վեց ժամ ճանապարհ էին անցել։ Ի դեպ, «ճանապարհ» բառը հաճելի չափազանցություն է։ Շրջակայքում ոչ մի արահետ չկար։ Ստիպված էին առաջ գնալ առվի հունով ու փոսերով, մինչև հասնեին հովիտ։ Ավելի ճիշտ կլիներ, եթե ասեինք՝ ճանապարհ էին հարթում։ Խիտ ու անանցանելի մատղաշ անտառը, բաղեղազգիներն ու պատի պես կանգնած թփուտները կոշտ էին, ուտինի պես առաձգական, զինված էին փշալարի պես սուր ասեղներով։ կաշկանդում էին ամեն մի քայլը։ Ուղղակի անհավատալի էր թվում, թե կկարողանան հաղթահարել այդքան շատ դարավանդներ ու ժայռոտ քարափներ։ Լեռնաշղթան կարծես շարունակ պատրվակ էր հնարում, որ ինքը երբեք չվերջանա։

Ստեփանն ուժասպառ էր եղել։ Ձեռքերը, ծնկներն ու սրունքները ծածկվել էին վերքերով ու քերծվածքներով։ Ժամերն անցնում էին, բայց նա ո՛չ խոսում էր, ո՛չ էլ գանգատվում։

Նստեցին լերկ բարձունքի վրա։ Ներքևում տարածվում էր Բեյլանի կրաքարի պես սպիտակ ճանապարհը։ Դա բոլորովին նոր էր թվում։ Ամենուրեք սփռված խճակույտերը վկայում էին, որ նոր է ավարտվել մարդկային աշխատանքը։ Հիրավի, այդ խճուղին, որով իրար հետ էին կապում Ալեքսանդրեթի նավահանգիստն ու Հալեպի դաշտավայրը, դրանով իսկ՝ նաև Միջերկրական ծովն ու ամբողջ Ասիան, ապացուցում էր Ջեմալ փաշայի՝ Սիրիայի բռնապետի, անսահման ուժն ու եռանդը։ Դաժան գեներալը հրամայել էր խախուտ ու խորդուբորդ ճանապարհը մի ամսում վերափոխել հարթ ու հաստատուն խճուղու։ Եվ դա իրագործվել էր։ Թուրքերը զարմացել էին, որ իրենց մեջ այդքան թաքնված գործնականություն կա։

Հայկի և Ստեփանի դիմաց այդ ճանապարհն աղեղնաձև թեքվում էր դեպի արևելք։ Տղաները տեսնում էին միայն խճուղու մի հատվածը, որտեղ ո՛չ մարդ էր երևում, ո՛չ ավանակ, ո՛չ ձի։ Ճանապարհի սպիտակ ժապավենը երբեմն-երբեմն մի նապաստակ էր կտրում անցնում կամ մի մողես։ Ստեփանը կարոտով էր նայում ողորկ ճանապարհին։ Հայկը նույնպես զերծ չէր այդ գայթակղությունից։ Առանց իր ուղեկցի հետ կշռադատելու իր հանդուգն անզգուշությունը, նա ոտքի թռավ, վազեց զառիթափն ի վար։

Երբ տղաներն իրենց ոտքի տակ զգացին հարթ ճանապարհը, լցվեցին այնպիսի բավականությամբ, որը նման էր ծարավ հագեցնելուն։ Ստեփանի մեջ ծնվեց նոր փառասիրություն, նոր կորով։ Հայկի հետ հավասար սկսեց քայլել։ Շուտով աջ ու ձախ կողմերից հայտնվեցին գահավեժ բլուրներ։ Ճանապարհը նեղացավ, փոխվեց կիրճի։ Տղաներն իրենց ավելի ապահով զգացին, դարձան ավելի անզգույշ։ Այնուհետև լեռներն իրարից փոքր-ինչ հեռացան, ճանապարհի թեքությունը դարձավ ավելի գահավեժ։ Եվս մի ոլորան, և նրանց առաջ պետք է տարածվեր դաշտավայրը։ Թեք ճանապարհի հորձանուտի մեջ ընկած՝ անդիմադրելիորեն առաջ էին նետվում, վազում դեպի կործանում։ Ճանապարհի ոլորանն անցնելուն պես տեսան ոչ թե դաշտավայրը, այլ թուրքական մի պահակատուն, որի վերևում մահիկավոր դրոշ էր ծածանվում։ Տան առաջ պարապ-սարապ պտտվում էին չորս զարհուրելի զափթիե։ Ճանա-

պարհի եզրերին բահերով, քլունգներով ու կոաններով աշխատում էր շինարարական գումարտակի մի ջոկատ։ Մեր թափառաշրջիկների հոգնատանջ զգայարաններին չհասան աշխատանքային աղմուկը և զինվորների ոնգային տխուր երգերը։ Սարսափն ու զարմանքն այնքան մեծ էին, որ նույնիսկ Հայկը գրեթե կես բոպե չկարողացավ տեղից շարժվել։ Բայց նա հետո կառչեց Ստեփանի ձեռքից, առաջ քաշեց։ Նետվեցին ոլորանի ետևում տարածվող պուրակը։ Դժբախտաբար այստեղ ո՛չ ժայռեր կային, ո՛չ թփեր։ Կային միայն մատղաշ, բարակ հաճարենիներ, որոնց ետևում պատսպարվել անհնարին էր։ Լեռը գահավեժ վեր էր ձգվում։ Ո՞ւր փախչեին։ Հայկը մտովի մի ամբողջ տեսարան պատկերացրեց։ Ահա։ Զափթիեներից մեկն առաջ նետվեց, ձեռքը ճակատին դրած ուշի-ուշով նայեց, կոկորդային ոռնոց արձակեց և ամբողջ անձնակազմի հետ ընկավ իրենց ետևից։ Բայց դա սարսափից ծնված տեսիլք չէր։ Զայներ լսվեցին։ Թուրքերի ոտքերի տակ խշխշացին չոր տերևները։ Ստեփանն աչքերը փակեց, սեղմվեց Հայկին։ Սա գրկեց նրան ձախ ձեռքով, իսկ աջով դուրս քաշեց դաշույնը։ Պատրաստվեց մահացու գոտեմարտի։ Սակայն իր լսած մրմունջը թուրքերեն չէր.

— Տղե՛րք, տղե՛րք, ի՞նչ եք անում էստեղ։ Մի՛ վախեցեք։

Հայերեն հնչյունները ծորում էին իբրև երազ։ Երբ Ստեփանն աչքերը բացեց, ծառաների արանքում տեսավ ցնցոտիապատ, հեսապառ մի շինարար-զինվորի։ Մեռելային գիսախոիվ գլուխ, վիթխարի աչքեր։ Զինվորն իր վշտալի աչքերով գրեթե նման էր Սարգիս Կիլիկյանին։ Հայկն սթափվեց, թաքցրեց դաշույնը։ Զինվորի ձայնը հուզմունքից դողաց.

— Դու էն խոշոր-խոշոր Շուշիկի տղան չե՞ս։ Ցողոնօլուքի ճանապարհին էլ տուն ունեիք։ Բա ինձ չե՞ս ճանաչում։

Հայկը թերահավատությամբ մոտեցավ թշվառ կմախքին։ Խեղճի ցնցոտիները գզգզվել, կախվել էին։ Կարծես այդքանը քիչ էր, ոտաբոբիկ էլ էր։ Տղան ուշի-ուշով զննեց անծանոթին.

— Դու ազիրցի Մելիքենց Վահա՞նն ես,— հարցրեց նա վարանոտ։ Կարծես այդ անունն արտասանեց հենց այնպես, ենթադրաբար։

Զինվորն աշխուժորեն գլխով հաստատեց, և նրա մազակալած դեմքի վրայով գլորվեցին արցունքները։ Նրան սաստիկ հուզել էր հայրենակից պատանիներին հանդիպելը։

Հայկը, իրոք, այդ մարդու անունը տվեց ենթադրաբար։ Այլապես այդ խեղճ ու կրակն ի՞նչ կապ կարող էր ունենալ Մելիքենց Վահանի՝ պատկառելի, հպարտ շերամաբույծի հետ, որին ինքն ամեն օր տեսնում էր։

Վահանը հուսահատորեն բարձրացրեց ձեռքերը.

— Հո չե՞ք գժվել։ Ինչո՞ւ եք եկել էս կողմերը։ Փառք տվեք աստծուն, որ օնբաշին ձեզ չի տեսել։ Երեկ էստեղ, ճամփի ոլորանի մոտ, հինգ հոգի գնդակահարեցին։ Հայեր էին, մի ամբողջ ընտանիք։ Ուզում էին Ալեքսանդրեթ գնալ։

Հայկն իրեն լրիվ տիրապետելուց հետո նախկին շերամաբույծին արժանապատվությամբ ներկայացրեց իր առաքելության նպատակը, առաքելություն, որը նա ստանձնել էր Մուսա լեռան ավազների որոշմամբ։

Վահանը սարսափեց.

— Մինչև Համամ ճանապարհը լիքն է շինարար ջոկատներով։ Երեկ երկու վաշտ է եկել Համամ։ Պետք է ուղարկվեն Դամլաջրքի դեմ կրռվելու։ Կարող եք առաջ գնալ միայն գիշերով, Աք Դենիսի մոտով, ճահիճների միջով։ Բայց երևի խրվեք, չկարողանաք դուրս գալ։

— Ձենք խրվի, քեռի Վահան,— լակոնիկ ոճով և ինքնավստահորեն հավաստիացրեց Հայկը, ապա երկրացուն խնդրեց ցույց տալ ամենակարճ ճանապարհը։

Մելիքենց Վահանը ողբաձայն ասաց.

— Հենց որ իմ բացակայությունը նկատեն, հենց որ մի քիչ ուշ վերադառնամ, ինձ երրորդ կարգի գանահարության կենթարկեն։ Գուցե նույնիսկ գնդակահարեն... Բայց երանի չէ՞ր գնդակահարեին։ Ա՜խ, տղերք ջան, չգիտեք, թե ի՞նչ օրի ենք։ Թքած էս տեսակ կյանքի վրա։ Ա՜խ, երանի՜ ձերոնց հետ Մուսա լեռը բարձրանայի, չմիանայի Նոխուդյանին՝ մեր պատվելուն։ Ձերոնք խելացի վարվեցին։ Աստված նրանց օգնական լինի։ Մեզ որ աստված չօգնեց։

Հիրավի, Մելիքենց Վահանն իրեն մահացու վտանգի կենթարկեր, եթե ճանապարհը ցույց տալու պատճառով ուշանար։ Պարզվեց, որ պետք է անցնեն անտառի մի կարճ հատված։ Ոչ մի դժվարություն։ Խեղճ շերամաբույծն անդադար խոսում էր. կարծես ուզում էր կորցրած շաբաթներին վերաբերող ամբողջ ասելիքը հայտնել, մահից առաջ սպառել իր մեջ կուտակված մտորումները։ Թվում էր, թե նա շատ քիչ է հետաքրքրվում Մուսա լեռան անցուդարձով։ Ավելի մեծ պահանջ էր զգում նկարագրելու իր սեփական ճակատագիրը։ Հայկն ու Ստեփանն այս ձևով որոշ բաներ իմացան Նոխուդյանի խմբի վիճակի մասին։ Անթաքիեում առանձնացվել էին բոլոր առողջ տղամարդիկ, ուղարկվել Համամ՝ ճանապարհների վրա աշխատելու։ Կանայք, երեխաները, ծե-

բերն ու հիվանդները պետք է քարշ գային դեպի Եփրատ։ Պատվելի Նոխուդյանը դիմել էր կայմակամին, բայց ապարդյուն։ Հայ ճանապարհաշինարարների՝ ինչաաթ թաբուրիի, ճակատագիրն այլ կերպ էր դասավորվել։ Ամեն մի ջոկատի հանձնարարվում էր կառուցել որոշակի հատված։ Երբ օնբաշին զեկուցում էր, թե ավարտված է առաջադրանքը, ջոկատը տանում էին մոտակա անտառը և սպանության արվեստի մեջ մասնագիտացած զորախմբերից մեկի միջոցով իսկույն գընդակահարում։

— Մեր բաժին ճանապարհը հասնում է մինչև Թոփ Բողազի,— անտարբերությամբ հայտնեց Վահանը,— ասել կուզի՝ դեռ քառասուն հազար քայլ տարածություն կա։ Մի վեց կամ յոթ օր կանի, եթե լավ աշխատենք։ Հետո կգա մեր հերթը։ Եթե ինձ հենց էսօր գնդակահարեն, ես միայն վեց կամ, ամենաշատը, յոթ օր կկորցնեմ։

Չնայած այս պարզ հաշվին, տղաներին ուղղությունը ցույց տալուց հետո Մելիքենց Վահանը ետ վազեց շնչահեղձ հապճեպությամբ։ Հակառակ ամեն ինչի, վեցօրյա սարսափելի կյանքը դարձյալ կյանք էր։ Հրաժեշտի պահին նա Հայկի ձեռքը դրեց մի գունդ թուրքական մեղրափոխինձ, որ նրան նվիրել էր ինչ-որ բարեսիրտ իսլամուհի։

Արդեն վրա էր հասնում իրիկնային ժանգագույն մթնշաղը, երբ տղաները հայտնվեցին լեռնաշղթայի վերջին ամենացածրադիր աստիճանին։ Նրանց դեմ հորիզոնից հորիզոն տարածվում էր դաշտավայրը։ Իրենց ոտքերի տակ տեսան մի մեծ լիճ, որի կաթնավուն, անխռով մակերեսին սփռվել էր աղոտ գույներով ներկված երկնոն։ Դա Անտիոքի լիճն էր, որ կարելի էր տեսնել Դամլաջրքի որոշ դիտակետերից։ Բայց այստեղից Աք Դենիսը՝ սպիտակ լիճը, շատ մոտ էր թվում, մի բազկաչափ հեռու։ Լճի հյուսիսային ափը ծածկված էր լայնատարած եղեգնուտով, որտեղ իշխում էր ցեխաջրի և խառնիճաղանջ ձայների թագավորությունը։ Թևերն ալարկոտ թափահարելով, շամբուտից դուրս էին թռչում արծաթափայլ և ծիրանագույն ձկնկուլները։ Բարձրանում էին, ճախրում լճի վրա՝ համաչափ ծալած իրենց երկար, բարակ ոտքերը։ Այնուհետև դարձյալ դանդաղ իջնում էին իրենց բները։ Տորպեդային արագությամբ վայրի բադերի սեպաձև երամը սուրում էր շիճուկանման հորձանուտի վրայով՝ եղեգնակղզում վայրէջք կատարելու համար։

Տղաների ականջին պարզ հասնում էին շամբուտարնակ ճնճղուկների վեճը և տասնյակ հազարավոր խոշոր, փքված գորտերի մարդկային, գրեթե քաղաքական բարձրաձայն ասուլիսը։

Աք Դենիսի եղեգնյա օձիքը հետզհետե ձուլվում էր դաշտավայրին։

Հեռվում ամենուրեք վայրի հաստ թփափնջեր էին երևում, ինչպես նաև ջրափոսեր։ Սրանք նման էին կույր աչքերի, որոնց սպիտակուցը դողդողում էր։ Ամայի տափաստանի կողքին լճում տիրող եռուն կյանքը գրեթե չափազանցություն էր թվում։ Լիճը նման էր առասպելական կենդանու դիակի, որով սնվում էին բազմատեսակ ու բազմապիսի գիշակեր թռչուններ։

Մինչ Ստեփանը ակնապիշ նայում էր լճին, Հայկի սուր աչքը նկատեց արևելքում ծվարած քոչվորական վրանները, ինչպես նաև մի քանի ձի, որոնք ծխացող ամայության մեջ գլխիկոր արածում էին։ Տղան ինքնավստահ առաջ մեկնեց ձեռքը.

— Ա՛յ, էսպես պիտի գնանք՝ ճանապարհի ու ճահճի արանքով։ Հենց որ լուսնյակը դուրս գա, կշարժվենք։ Ինձ տուր շիշդ։ Ուզում եմ ջուր բերել։ Էստեղի ջուրը դեռ լավ է։ Մենք պետք է շա՜տ, շա՜տ ջուր խմենք։ Մինչև իմ գալը կարող ես քնել։

Բայց Ստեփանը չքնեց, սպասեց մինչև ընկերը վերադարձավ, բերեց երկու շիշ թարմ ջուր։ Սուսուփուս խմեց, ինչքան կարող էր։ Ուտելու մասին չէին էլ մտածում, Հայկը փռեց իր վերմակը և փաթաթվեց մեջը։ Ստեփանը սողալով մոտեցավ նրան։ Վաղորդյան սառնաշունչ օդում չէր ուզում քնել ընկերոջից հեռու։ Սիրո և մտերմության կարոտը չէր կարողանում զսպել։ Հայկը նրա մտադրությունը հասկացավ, իրեն այլևս չպահեց սառն ու ինքնամփոփ, չմերժեց ընկերոջ ցանկությունը։ Այո, Բագրատյանի որդու դյուրահավատ մտերմությունը նրա համար այլևս անցանկալի չէր։ Ավագ եղբոր պես Ստեփանին իր կողմը քաշեց և վերմակով ծածկեց։ Գրկախառնված քնեցին։

Ստեփանը և Հայկը ոտք դրին դաշտավայր։ Հակառակ ամեն սպասածի, պարզվեց, որ կիրճաշատ, մացառուտներով ծածկված Մուսա լեռը շատ ավելի հարմար էր ուղևորության համար, քան այդ լայնատարած տափարակը, որը կոչվում էր էլ Ամբք[1]։ Մուգ կանաչ քոսով ծածկված, ալիքաձև ու նենգորեն ծավալվող հարթությունն արդեն լի էր թշնամանքով. քրիստոնեական հող չէր։

Մարդ պետք է Հայկի նման սուր զգացողություն և բնության գաղտնիքներին իրազեկ լինելու գրեթե գերմարդկային հատկություն ունենար, որպեսզի հանդգներ դուրս գալ այդ ճանապարհը, այն էլ գիշերով։ Էլ Ամբքը ոչ այլ ինչ էր, եթե ոչ տասը կիլոմետրանոց մի ճահիճ։ Դրա

[1] Էլ Ամբք — խոր ձոր

եզրով ձգվում էր նեղ, մազաչափ մի արահետ։ Հովիվներից, գյուղացիներից ու քոչվորներից շատ քչերն էին համարձակվում այդտեղով անցնել, Կարա Սուի կամրջին հասնել կարճ ճանապարհով։ Բայց տղաները այլ հնարավորություն չունեին, քանի որ Մելիքենց Վահանը նախազգուշացրել էր, թե ճանապարհի ամբողջ երկայնքով մեկ վխտում են զինվորականները, զափթիեներն ու ճանապարհաշինարար ջոկատները։ Հայկը հանել էր կոշիկները, որպեսզի մերկ ոտքերով կարողանար ավելի լավ «համտես անել» գետինը։ Ստեփանը հետևեց նրա օրինակին։ Նա արդեն վաղուց էր հրաժարվել ինքնուրույն շարժվելուց։ Նրանք կարծես վազում էին շատ բարակ, շատ տաք բոքոնի վրայով, որի կեղևի տակ պղպջում էր ուռած միջուկը։ Այդ հսկայական կեղևը ամենուրեք ճեղքված էր, և տակից բարձրանում էր ծծմբային թանձր գոլորշին։ Ստեփանը խոհեմորեն քայլում էր Հայկի ոտնահետքերով։ Սա լարված և ուշի-ուշով ոտքերը դնում էր որոշակի տեղերի վրա, ինչպես այն պարողը, որը պետք է ճշգրիտ շարժումներ կատարի։ Այդ պարի ընթացքում Ստեփանի գլխում սկսեցին շաղախվել ինչ-որ խառնաշփոթ մտքեր։

— Բոլոր մարդիկ ճանապարհով են քայլում։ Ինչո՞ւ մենք իրավունք չունենք այդպես գնալու... Առհասարակ ինչո՞ւ ենք հայ։

Հայկը ձեռքը բարկությամբ դրեց նրա բերանին.

— Հիմարություններ դուրս մի՛ տա։ Ավելի լավ է՝ ուշքդ վրադ պահիր։ Ոտքդ կանաչ տեղերը չդնես։ Հասկացա՞ր։

Ստեփանը նորից փորձեց ընկղմվել անզգայության խորխորատը։ Դա օգնում էր մարմնական հոգնածությանը դիմանալուն։ Հլու-հնազանդ պարելով հետևում էր Հայկին, որը վտանգավոր կեղևի վրա տարօրինակ զիգզագներ էր գծում։

Այդպես անցավ մեկ, երկու ժամ։ Լուսինը մերթ բարեհոգությամբ հայտնվում էր, մերթ չարամտորեն անհետանում։ Գիշերը որքան խորանում էր, այնքան նվազում էր Ստեփանի հոգնածությունը, չնայած ահագին ճանապարհ էին անցել։ Կիսով չափ խորհելու և կիսով չափ զգալու կացությունը նրան ցավ էր պատճառում, կուտակվում, ինչպես ստորերկրյա ջուրը՝ հողի ընդերքում։ Անդիմադրելիորեն բարձրանում էր այդ ջուրը։ Նա պ ե տ ք է խոսեր, թեև Հայկից այժմ քաշվում էր.

— Ճի՞շտ է, որ մերոնց այլևս չենք տեսնի (կոնկրետ անուններից խուսափեց)։

Հայկը չընդհատեց իր զիգզագավոր ընթացքը։ Որոշ ժամանակ անցավ, մինչև նա քիչ թե շատ հարմար տեղ հասնելով, պատասխան տվեց։

Այդ պատասխանը, որը լի էր քրիստոնեական լավատեսությամբ, հնչեց իբրև բռունցքի հարված։

— Ես իմ մորը կտեսնե՛մ։

Ստեփանը, իրենց ծանոթության օրից ի վեր, Հայկից այդպիսի խոստովանություն առաջին անգամ էր լսում։ Բայց քանի որ փարիզյան գիմնազիայի սանը զուրկ էր հայ լեռնական կոշտ ու կոպիտ պատանու հաստատուն հավատից, ընկճվեց և շփոթվեց.

— Համենայն դեպս մենք չենք կարող վերադառնալ Դամլաջրք։

Զգացվում էր, որ Հայկը հազիվ է զսպում իր դժգոհությունը։ Խոսակցությունը նրա սրտովը չէր.

— Դամլաջրքը մնաց մեր ետևում։ Եթե աստված կամենա, ողջառողջ կհասնենք Հալեպ։ Էնտեղ Ջեքսոնը մեզ կթաքցնի հյուպատոսարանում։ Էդպես էլ գրված է նամակում...

Ապա վիրավորական շեշտով ավելացրեց.

— Իհարկե, քո մասին նամակում ոչինչ չկա ասված։

Բայց Ստեփանն այժմ իր մասին բոլորովին չէր մտածում։ Մտորում էր հայրիկի ու մայրիկի մասին, որոնցից հեռացավ անմտորեն։ Թե ինչու նրանց լքեց, ոչ մի կերպ չէր հասկանում։ Ամբողջ կյանքը տարօրինակ կերպով փոխվեց։ Արդեն Դամլաջրքը թվում էր անհավատալի ցնորք։ Սակայն ամբողջ անցյալն այժմ նրա աչքին յուրահատուկ, անաղարտ, բարեկարգ իրողություն էր։ Ջեքսոնը ամեն կերպ պետք է ուղղեր թյուրիմացությունը։ Տղան չէր հավատում, թե ինքը կարող է ընկնել այնպիսի վիճակի մեջ, որ այլևս չկարողանա տեսնել իր ծնողներին։ Զանազան ենթադրություններ էր անում։ Կարծես հյուպատոսը մտածելու էր ճիշտ և ճիշտ իր նման։

— Ջեքսոնը կհեռագրի։ Իհարկե, կհեռագրի Ամերիկա։ Հավատո՞ւմ ես, թե ամերիկացիները նավեր կուղարկեն մերոնց ազատելու։

— Ի՞նչ իմանամ, ա՛յ տղա։

Հայկի արագ քայլվածքից զգացվում էր, որ բարկացել է։ Ստեփանը վախվորած կուլ տվեց իր հոգեկան տագնապը, ետ չընկնելու համար ինքն էլ քայլերն արագացրեց։ Քամի չէր փչում, բայց նրան թվում էր, թե ինչ-որ այրող պտուտահողմ բախվում է իր կրծքին, ետ մղում։ Տղայի մտքով անցնում էր ամբողջ եղելությունը, բայց նա ոչ մի հետևության չէր հանգում։ Գլուխն սկսեց պտտվել։ Աշխարհը լցված էր լուսնազօծ գիշերվա զորավոր շնչով։ Ջմրուխտի պես կանաչ մի շերտ լողաց Ստեփանին ընդառաջ։ Մի ակնթարթ տղան կորցրեց վտանգի զգացողությունը։

Զարհուրելի աղաղակը Հայկին մեխեց տեղում։ Նա իսկույն գլխի ընկավ, թե ինչ է կատարվել։ Անորոշ մթության մեջ մաքառում էր Ստեփանը։ Մինչև ծնկներն արդեն թաղվել էր ճահճի մեջ։ Հայկը սաստեց.

— Ձա՛յնդ, մի՛ գոռա։

Բայց անսահման սարսափը տղային ստիպում էր ճչալ նորից ու նորից։ Նրան թվում էր, թե ընկել է կետի պես հսկա ինչ-որ հրեշի երախը, որը և իրեն դանդաղ կլանում է։ Ճահճի թանձր, առաձգական զանգվածն արդեն բարձրացել էր ծնկներից վեր։ Որքան էլ տարօրինակ թվա, մաքառման պահերին տղան ինչ-որ թեթևություն զգաց։ Հայկը հրահանգ տվեց.

— Առաջ մի ոտքդ դուրս հանիր, ա՛ջը, ա՛ջը։

Վախից հեծկլտալով, Ստեփանը անճարակ շարժումներ արեց։ Ոտքերի մեջ այլևս ուժ չկար։ Լավեց մի նոր, ավելի խիստ հրահանգ.

— Պառկի՛ր փորիդ վրա։

Ստեփանը հլու-հնազանդ պառկեց։ Մատների ծայրերը հասնում էին չոր հողին։ Երբ Հայկը տեսավ, որ նա դուրս գալու ուժ չունի, ինքն էլ պառկեց, սողաց ընկերոջ կողմը։ Առաջ պարզեց գավազանը, բայց Ստեփանը ուժասպառ էր եղել. չկարողացավ կառչել։ Հայկն արձակեց շորե երկար գոտին, նետեց առաջ, պատվիրեց, որ դա Ստեփանը կապի իր կրծքից։ Մյուս ծայրն ամուր պահում էր իր երկաթյա ձեռքերով։ Գոտին դարձավ փրկության պարան։ Անվերջանալի ճիգ ու ջանք գործադրելուց հետո Ստեփանը վերջապես կարողացավ ցեխից դուրս բերել աջ ոտքը։ Մոտ կես ժամ անցավ, մինչև Հայկը ապահով տեղ հանեց խեղդվողին։ Կես ժամ էլ անցավ, մինչև Ստեփանը հանգստացավ, ապա Հայկի ձեռքից բռնած՝ առաջ շարժվեց գավազանի գետնի վրայով։ Մինչև կուրծքը ծածկվել էր ցեխով, որը բաց օդում արագ չորացավ, ամուր պատյանի պես կպավ թևերին, ոտքերին և ձգեց մաշկը։ Ստեփանը, բարեբախտաբար, կոշիկներն ուստապարկի մեջ էր դրել։ Ճահճի դեմ մաքառելու պահին պարկը շպրտել էր չոր գետնի վրա։ Հայկն ամուր գրկած՝ տանում էր կիսով չափ անզգա Ստեփանին։ Անգգուշության համար ինքնախատեց, բայց մի քանի անգամ կրկնեց իբրև աղերսանք.

— Մթնելուց առաջ պետք է հասնենք կամուրջը։ Երևի էնտեղ զափթիներ են կանգնած։

Բագրատյանի սրտում մի անգամ ևս գլուխ բարձրացրին պատվախնդրությունն ու հպարտությունը։

— Ես հիմա արդեն... կարող եմ նորից լավ քայլել...

Հենց որ հյուսիս թեքվեցին, գետինը դարձավ հաստատուն։ Գաղարեց համատարած ճոճումը, երբ թվում էր, թե անցնում են մահճակալի ցանցի վրայով։ Ստեփանը բաց թողեց Հայկի ձեռքը, սկսեց քայլել շինծու կայտառությամբ։ Հեռվից զով քամի փչեց, և ինչ-որ բան փայլփլեց։ Հայկը նախազգաց Կարա Սու գետի մոտիկությունը։ Շուտով մոգլցեցին պատնեշն ի վեր, դուրս եկան ճանապարհը, որը լայն ու շողշողուն շերտի նման լուսավորել էր գիշերային աշխարհը։ Կամրջի պահակատունը գատարկ էր։ Տզանները դիվահարների պես սլացան ամենամեծ վառանգի մոտով, որը, բարեբախտաբար, այժմ նրանց չէր սպառնում։ Սակայն այս անգամ ճանապարհը Ստեփանի վրա այլ կերպ ազդեց, քան կեսօրից հետո։ Քաղաքակրթության հետ կապված ոգորկ գետինը խլեց տղայի վերջին ուժերը։ Կամուրջն անցնելուց հետո քայլերը դանդաղեցրեց։ Սկսեց օրորվել և հանկարծ պառկեց ճանապարհի մեջտեղը։ Հայկն ակնապիշ նայեց։ Առաջին անգամ հուսահատվեց.

— Ես ժամանակ եմ կորցնում...

Կամուրջն անցնելուց հետո ճանապարհը մոտ մեկ ժամ ձգվում է էլ Ամքքի վերջին մեծ ճահճով անցնող քարե բարձր թմբի վրայով։ Թումբը կոչվում է Ջիզիր Մուրադ փաշա։ Դա անցորդին գուրս է բերում լայնարձակ տափաստանը, որ Հալեպն ու Եփրատն անցնելով, ձգվում է մի քանի հարյուր մղոն, հասնում Միջագետք։ Այդ պատնեշից ոչ հեռու ճանապարհի հյուսիսային կողմում, բացվում է բլուրների կախարդական տեսարանը, իբրև մահվան և ամայության եզրին ոտքաված կանաչ շուայլություն։ Այդ բլրաշխարհի ստորոտում ծվարել էր թուրքմենական մի մեծ գյուղ՝ Ային էլ Բեդան[1]։ Գաղթականներին այստեղ տեղափոխելուց շատ առաջ ճանապարհի եզրերին հատուկենտ քարաշեն և փայտյա տներ կային, գյուղական մաքուր ագարակներ։ Հիսուն տարի առաջ Աբդուլ Համիդի կառավարությունը թուրքմեն քոչվոր ցեղերից մեկին դարձրեց նստակյաց։ Դժվար է պատկերացնել ավելի ջանասեր և օրինավոր գյուղացի, քան քոչվորությունից հրաժարված մարդը։ Այդ բանի ապացույցն էին գեղատեսիլ վայրում սփռված հաճելի, հաստատուն տները։

Առաջին ագարակը ճանապարհի եզրին էր։ Արևածագից մեկ ժամ հետո տանտերը գուրս եկավ, ստուգեց քամու ուղղությունը, եղանակը, աշխարհի կողմերը, ապա մի փոքրիկ դորգ փոռելով, դեմքն ուղղեց դեպի Մեքքա, որ կատարի իր ամենօրյա հինգ աղոթքից առաջինը։ Բա-

[1] Ային էլ Բեդա— վճիտ աղբյուր

բեպաշտ մարդը նկատեց երկու պատանիներին։ Սրանք տան առաջ պպզել էին իրենց վերմակների վրա, ընդունված կարգով և ամենայն եռանդով աղոթում էին։ Թուրքմենին դուր եկավ տղաների վաղորդյան ջերմեռանդությունը, բայց հանդարտաբարո մահմեդականը չուզեց իր կրոնական երկարատև պարտքն ընդհատել անկարևոր հարցով։

Բազմիցս կանգ առնելուց և հանգստանալուց հետո Հայկին հաջողվեց ընկերոջը Ջիզիր Մուրադ փաշա հողապատնեշից հասցնել բլուրների սահմանը։ Տուն տեսնելուն պես նա մի անգամ էլ բացատրեց, որ եվրոպացին ամեն ինչում պետք է հետևի իրեն, կարելույն չափ քիչ խոսի։ Ստեփանը թուրքերեն մի քանի բառ գիտեր, այն էլ արտասանում էր տարօրինակ առոգանությամբ։ Ինչ վերաբերում է մահմեդական աղոթքին, ապա պատվիրակը դա մեղք չէր համարում։ Ի՞նչ մեղք, եթե մարդ «Հայր մերը» մրմնջա օտար շարժուձևով։ Ստեփանին ոչ մի կերպ չէր հաջողվում աղոթքի արարողությունը։ Փայտե տիկնիկի պես անկենդան ու ձգված, ծայրահեղ լարելով իր բոլոր ուժերը, նա հազիվ էր կարողանում անճարակորեն կրկնել Հայկի կրոնական ծամածռությունները։ Քիչ անց ընկավ իր վերմակի վրա, վաղորդյան վճիտ երկնքին հառելով իր ապակենման աչքերը։

Թուրքմեն գյուղացին, որն արդեն տարեց մարդ էր, օրորուն քայլվածքով մոտեցավ կասկածելի զույգին.

— Է՛յ, թոկի՛ց փախածներ, ճանապարհի վրա ի՞նչ եք անում առավոտ շուտ, հը՞։ Ի՞նչ կա։ Ի՞նչ եք կորցրել։

Բարեբախտաբար նա էլ թուրքերեն ինչ-որ բարբառով էր խոսում։ Այնպես որ Հայկի հայերեն առոգանությունն առանձնապես աչքի չէր ընկնում։ Սիրիայում՝ ժողովուրդների այդ մեծ կաթսայում, բոլոր լեզուներն իրար էին խառնվել։ Արտասանությունը թուրքմենի մեջ ոչ մի կասկած չէր կարող առաջացնել։

— Սաբահլար հայրը օլսուն[1]։ Մենք Անթաքիեից ենք գալիս։ Ճանապարհին կորցրինք մեր ծնողներին։ Մերոնք սայլերով պետք է Համամ գնային։ Ուզեցինք մի քիչ վազվզել, բայց մոլորվեցինք։ Սա՝ Հյուսեինը, քիչ մնաց խեղդվեր. խրվեց ճահճի մեջ։ Հլա մի սրան նայիր։ Արդեն հիվանդ է։ Չե՞ս կարող մեզ տեղ տալ, որ մի քիչ հանգստանանք։

Թուրքմենը խոր մտածմունքի մեջ ընկավ, ձեռքը տարավ դեպի ալեխառն մորուքը։ Հետո, տղաների խնդիրքը չմերժելով, արդարացի հարց տվեց.

— Էդ ի՞նչ ծնողներ են, որ իրենց երեխեքին ճահճի մեջ թողած՝ շարունակում են իրենց ճանապարհը... Սա քո եղբա՞յրն է։

— Չէ, իմ ազգականն է, էլի անթաքիեցի։ Իմ անունը Էսադ է...

— Հա, քո էս Հյուսեինը ոնց որ թե հիվանդ է։ Երևի ճահճի ջո՞ւր է խմել։

Հայկն ուզեց ինչ-որ բարեպաշտ խոսք մտաբերել, ապա գլուխը կախեց.

— ...Հայրիկ, մեզ հաց և քնելու տեղ տուր։

Այդ ամբողջ ներկայացումն ավելորդ էր, քանի որ թուրքմենի սիրտը լի էր բարությամբ։ Ամիսներ շարունակ տարագիրների քարավաններն անցում էին նրա տան մոտով։ Սուսուփուս, առանց անդրշիրիմյան հատուցման մասին մտածելու, հաց ու ջուր, շոր ու կոշիկ էր տալիս հիվանդ հայերին, փողոցում վայր ընկնող հղի կանանց։ Բայց նման լավություն կատարելիս նա պետք է ծայրահեղ զգույշ լիներ, որ գափթիները չնկատեին։ Նոր օրենքի համաձայն, հայերին կարեկցելը համարվում էր ոճրագործություն և պատժվում էր գանահարությամբ, բանտարկությամբ, որոշ լուրջ դեպքերում՝ գնդակահարությամբ։ Շրջակայքում ապրող հարյուրավոր բարի թուրքեր, որոնց սրտերը ճմլվում էին, երբ տեսնում էին տարագիրների անմարդկային տառապանքները, այդ առթիվ նույնիսկ երգ էին հորինել։

Գյուղացին ուշի-ուշով զննեց թափառաշրջիկներին։ Հիշողության մեջ հառնեցին հայկական հազարավոր աչքեր, ողորմություն հայցող աչքեր։ Թուրքմենը տղաներին համեմատեց այդ թշվառների հետ և համոզվեց, որ դրանք նույն մարդիկն են։ Մանավանդ հիվանդը։ Կարծեցյալ Հյուսեինն ավելի շատ էր շարժում անծանոթի խղճահարությունը, քան կարծեցյալ Էսադը։ Սա թե՛ առողջ էր, թե՛ աչքաբաց։

Տանտերը ձայն տվեց։ Շեմքին հայտնվեցին երկու կին, մեկը՝ ծերջ մյուսը՝ երիտասարդ։ Օտար տղամարդկանց տեսնելուն պես շղարշներն իջեցրին դեմքներին։ Թուրքմենը խստորեն ինչ-որ բան պատվիրեց, և սրանք գործնական քայլերով հեռացան։ Թուրքմենը Հայկին ու Ստեփանին ներս տարավ։ Ծխով լցված գլխավոր սենյակի մոտ, որտեղ մարդու շունչը կտրվում էր, կար մի փոքրիկ խուց, նկուղի պես մի բան։ Այստեղ լույսը թափանցում էր մի փոքրիկ ճեղքից։ Տղաները սանդուղքով մտան այս մութ խոռոչը։ Կանայք բերին խսիրներ ու վերմակներ։ Կավե հատակին երկու անկողին պատրաստեցին։ Ստեփանի ցեխակոլոլ ոտքերն ու ձեռքերը տեսնելուն պես կանայք տաշտով տաք ջուր բերին, մի սարսափելի խողանակ և մայրական վճռական թափով սկսեցին մաք-

[1] սաբահլար հայրը օլսուն— բարի լույս

րել հայ տղայի մարմինը։ Այս հոգնեցուցիչ աշխատանքի ժամանակ ծեր կինը նույնիսկ բարձրացրեց շղարշը, քանի որ հյուրերն անչափահաս տղաներ էին։ Գեղջկուհիների եռանդուն շարժումներից փարատվեց ոչ միայն Ստեփանի մարմնական, այլև հոգևոր քաշացածությունը։ Պատանու մեջ եռացող հորձանուտի պես փոթորկվեց տան անզուսպ կարոտը։ Շուրթերը սեղմեց, բայց դավաճան աչքերը լցվեցին արցունքով։ Մանկական վշտից զգացված թուրքմենուհիներն անծանոթ լեզվով, քաղցրածոր ձայնով մխիթարեցին։ Դրանից հետո ծեր տանտիրուհին բերեց մի ման այծի կաթով խաշիլ, լավաշ, երկու փայտե գդալ։

Տղաներն ուտում էին, իսկ տան բազմաթիվ անդամները, ոմանք նկուղում, ոմանք էլ դռան շեմքին կանգնած՝ հորդորում էին, հրճվում սեփական հյուրասիրությամբ։

Չնայած տանտերերի բարեսրտությանը և տաք ճաշ ուտելու հնարավորությանը, Ստեփանը հազիվ կարողացավ չորս-հինգ գդալ ուտել։ Կոկորդը նեղացել էր, ուռել։ Մինչդեռ Հայկը ծանր աշխատանք կատարած մարդու լրջությամբ խժռեց ման ամբողջ պարունակությունը։

Երբ հետաքրքրասեր ընտանիքը ցրվեց, Ստեփանն իսկույն քնեց, իսկ շրջահայաց Հայկն արագ-արագ ծանրութեթև էր անում իրենց հետագա ուղևորության հետ կապված հանգամանքները։ Հույս ուներ, թե Ստեփանը մինչև երեկո կկազդուրվի, և հենց որ լուսինը ծագի, նորից ճանապարհ կընկնեն։ Մինչև Համամ գիշերով կարող էին անցնել առանց դժվարությունների։ Եթե ճանապարհն ազատ լիներ, ավելի լավ, ազատ չլիներ, ապա կշարժվեին ճանապարհից փոքր-ինչ շեղվելով, բլուրների ստորոտով։ Այդ բլուրների արանքում, անկասկած, ավելի լավ կարող էին թաքնվել հաջորդ օրը, երբ Համամն անցնելուց հետո հասնեին այն կետին, որտեղ ճանապարհի մեծ աղեղը ճյուղավորվում էր։ Հակառակ բոլոր միջադեպերի, Հայկը գոհ էր մինչև այժմ կատարածից։ Ավելի մեծ վտանգը դեռևս առջևում էր, բայց, և մեծագույն տառապանքներն արդեն հաղթահարված էին։ Ափսոս, որ Ստեփանն իր հիվանդությամբ հուսահատեցնում էր։ Քիչ հետո, երբ Հայկը հոգնածությունից աչքերն արդեն փակել էր, տնքոց և հեկեկանք լսելով, վեր թռավ խոր քնից, որին անվերապահորեն հանձնվել էր ապահով սենյակում։ Խորի վրա, ցավից գալարվելով, կուչ էր եկել Ստեփանը։ Սոսկալի ցավերից որովայնն ասես կտրատվում էր։ Դա էլ Ամբքի ճահիճն ընկնելու հետևանքն էր։ Պարզվեց նաև, որ տղայի մաշկը վերից վար կծել են մոծակները։ Հանգրստանալու մասին մտածելն արդեն ավելորդ էր։ Տնատերերը դարձյալ կարեկցանք ցույց տվին։ Կանայք կլոր քարեր էին տաքացնում, դնում

Ստեփանի փորին, ստիպում, որ խմի ամոքիչ, բայց տհաճ թեյ։ Տղան այդ հեղուկը կուլ տալ չէր կարողանում։ Միայն իրիկնադեմին մեղմացան ցավերը, որոնք խեղճ երեխային շարունակ ստիպում էին վազել տան ետևը։ Ստեփանը նիհարել, ստվեր էր դարձել։ Հայկը ևս, որը զրկվել էր քնելու երջանիկ հնարավորությունից, նիհարել էր, գունատվել։

Գյուղացին «էսադին» և «Հյուսեինին» թույլ տվեց պառկել տան կտրին։ Շարաթներով մաքուր օդում ապրելուց հետո տղաները չէին դիմանում ծխով, միջատներով և այրված ճարպի հոտով լցված խուլ խցիկում։

Տղաներն իրենց խսիրներն ու վերմակներն առած՝ բարձրացան կտուրը, պառկեցին եգիպտացորենի ցողուններից գոյացած բուրգերի, ահագին եղեգնախրձերի և մատուտակի շեղջերի արանքում։ Դողահար մարմինը վերմակի մեջ փաթաթած՝ Ստեփանը անթարթ նայում էր դեպի արևմուտք։ Իրիկնային այդ պահին ավելի բարձր էին թվում իրար վրա դիզված ծովափնյա լեռները, երփներանգվում, մերթ մուգ շափյուղայի գույն ստանում, մերթ դառնում արծաթափայլ մոխրագույն։ Եվ անհավատալիորեն մոտիկ էին թվում այդ լեռները։ Մի՞թե Հայկն ու Ստեփանը երկու գիշեր և մեկ ու կես ցերեկ շարչարվել էին, որ անցնեն այս մի թիզ տարածությունը։ Հարավում վեր խոյացող վերջին լեռը, որը միանգամից հատվում էր, վերջանում, պետք է Դամլաջրքը լիներ։ Որսահալած գազանի պես կարծես քարացել էր վազքի ժամանակ։ Լայն թիկունքը թեքված էր դեպի հյուսիս։ Գլուխը խոնարհել էր հանդիպակաց բարձունքների կողմը։ Սակայն թաթերը վայրագորեն ետ էին մեկնված, որտեղ Որոնտեսը լայն ճեղք էր բացել, մատնելով ծովի գոյությունը։ Ստեփանը նայում էր միայն Դամլաջրքին։ Թվում էր, թե տեսնում է Հարավաբերդը, ծանոթ բարձունքները, Կաղնուտի նեղ կիրճը, լեռնաթամբը, որին անհիշելի ժամանակներում հրաժեշտ տվեց, առանց մեկնումեկից հրաժեշտ առնելու։ Իսկ ինչո՞ւ հեռացավ։ Ոչ մի կերպ չէր կարողանում վերհիշել։ Թվում էր, թե Դամլաջրքը խոր շունչ է քաշում, մոտ է սլանում, հասնում Հալեպի ճանապարհը, թուրքմենական բլուրների ստորոտում ծվարած գեղջկական տունը, մոտենում Ստեփան Բագրատյանին։ Հայկն ամեն ինչ հասկացավ։ Նրա մեջ արթնացավ ուժեղ մարդու բարությունը, որը միշտ զիջում է իրենից տկարին.

— Մի՛ վախենա։ Մենք էստեղ էնքան կմնանք, մինչև նորից կարողանաս քայլել ու վազել։

Տենդի մեջ գալարվող տղան շարունակ նայում է դեպի ծովեզերք.

— Շա՜տ մոտ են... շա՜տ մոտ են... լեռները...

Հետո հուզված վեր էր թռչում, ասում, թե գնալու իսկական ժամանակն է։ Ականջին հնչում էին Հայկի սպառնալից խոսքերը։ Ատամները կրճտացնելով կրկնում էր դրանք.

— Խոսքը ոչ թե իմ ու քո մասին է, այլ Ջեքսոնին ուղղված նամակի...

Առանց կշտամբելու, Հայկը գլխով էր անում, հաստատում ընկերոջ ասածը։

— Ավելի լավ կլիներ, եթե Հակոբը քեզ մատնած լիներ...

Ստեփանի կնճռոտված դեմքը այլևս առարկություն չէր արտահայտում։ Տղան փորձում էր հաշտարար ձևով ժպտալ.

— Ի՞նչ արած... Իմ երեսից ժամանակ մի՛ կորցնի... Ես ետ կգնամ վաղը...

Հանկարծ Հայկը կռացավ, արագ շարժուձևով Ստեփանին հասկացրեց, որ նա էլ նույնը անի։ Մոտակա ճանապարհին, որի վրա ամբողջ օրը ամայություն էր տիրում, հայտնվեց մի տարօրինակ ողբաձայն բազմություն։ Մի քանի զափթիե դեպի Համամ էին քշում հայ ատարագիրների մի փոքր քարավան։ «Քարավան» բառը, անշուշտ, շատ է գեղեցիկ ծերունիների և փոքրիկ երեխաների հավաքածուի համար, որ զափթիեները գտել-բերել էին աստծո աչքից ընկած հեռո՞ւ հեռավոր գյուղերից։ Զափթիեները հավանաբար ուզում էին կեսգիշերից առաջ տեղ հասնել։ Այդ պատճառով էլ հայհոյում, մտրակում էին ուրվական դարձած խեղճերին։ Այնպես որ բազմությունը անհավատալի արագությամբ անհետացավ փողոցի առաջին իսկ ոլորանի ետևում։

Այս նշանակալից միջադեպը ավելի հաստատուն դարձրեց Հայկի վճիռը.

— Ճիշտ է։ Ամենից լավն էն կլինի, որ դու ետ գնաս։ Բայց ինչպե՞ս։ Ճահիճների միջով մեն-մենակ չես կարող...

Ստեփանը, որին լեռներն այնքան մոտ էին թվում, կորցրել էր չափի ու տարածության ամեն մի զգացում.

— Ինչո՞ւ չեմ կարող։ Ճանապարհն էնքան էլ հեռու չէ...

Հայկը վճռականորեն օրորեց գլուխը.

— Չէ՛, չէ՛, ճահիճներով մեն-մենակ չես կարող գնալ։ Լավ կլինի, եթե Անթաքիեի մոտով անցնես։ Ա՛յ, էնտեղից. տեսնո՞ւմ ես։ Շատ ավելի հեշտ կլինի... Բայց թե քեզ ճանապարհին կբռնեն։ Ո՛չ թուրքերեն խոսել գիտես, ո՛չ աղոթել։ Վրա-գլխիդ նայողն իսկույն կկռահի, թե ով ես....

Ստեփանը երազկոտ փովեց իր վերմակի վրա.

— Ես միայն գիշերները կգնամ... Երևի չբռնեն...

— Ա՜խ, քո ի՜նչն եմ ասել,— հեգնական կարեկցանքով քրթմնջաց Հայկը, սկսեց ծանրությեթև անել, թե ինչքան կարող է Ստեփանին ուղեկցել, որ իր մեծ առաքելությունից գոնե մի օրով ետ ընկնի։

Ջերմության նոպան տեղի տվեց դողին։ Հիվանդը որոշ թեթևություն զգաց։ Այդ պահին նրան ամեն ինչ հեշտ ու հանգիստ էր թվում։ Ուստի և նա մրմնջաց.

— Երևի աստված ինձ օգնի...

Տվյալ հանգամանքներում այդ օգնությունը Հայկին թվում էր միակ իրական օգնությունը։ Ստեփանը Մուսա լեռ կկաղորանար բարեհաջող հասնել միայն երկնային ողորմածությամբ։ Նա ուրիշ հույս գրեթե չուներ։

Հիրավի, կարծես թե նախախնամությունն սկսում էր գործել հոգուտ Ստեփանի։ Թուրքմեն տանտերը պատին հենված սանդուղքով բարձրացավ կտուրը, սկսեց ցած թափել եղեգնախրձեր և մատուտակ։ Հայկն իսկույն վեր թռավ, պատրաստակամորեն օգնեց։ Երբ գործը վերջացրին, գյուղացու մտքով հանկարծ ինչ-որ բան անցավ, և նա նայեց Ստեփանին.

— Տղե՛րք, ուզո՞ւմ եք հետս գալ։ Էգուց, լուսումթին, գնալու եմ Անթաքիեի շուկան։ Քանի որ անթաքիեցի եք, եկեք ձեզ տանեմ ձեր տները։ Իրիկնադեմին տեղ կհասանենք։

Եվ նա հպարտորեն մատնացույց արեց տան ետևում գտնվող մեծ ախոռը.

— Չկարծեք, թե եզասայլով եմ ձեզ տանելու։ Չէ՜, իսկական ձիակառքով։

Հայկն իր կեղծ չալման զգուշորեն մի կողմ տարավ, որ գլուխը քորի։ Որդուն ճանապարհ դնելուց առաջ այրի Շուշիկը մազերը լրիվ խուզել էր.

— Հայրիկ, դու հետդ Անթաքիե տար ազգականիս՝ Հյուսեինին։ Նրա մոտիկ մարդիկ էնտեղ են ապրում։ Ախար մերոնք Համամումն են։ Ափսոս, որ Համամ չես գնում։ Ստիպված կլինեմ ոտքով գնալ...

Թուրքմենն ակնապիշ նայեց ստախոսի աչքերին.

— Ծնողներդ համամցի՞ են։ Ալլահ քերիմ դիր[1]։ Ա՜յ տղա, բոլոր համամցիներին մեկ-մեկ ճանաչում եմ։ Ձերոնք ի՞նչ գործի են։

[1] ալլահ քերիմ դիր — աստված ողորմած է

Գյուղացու զննող հայացքին Հայկը պատասխանեց վիրավորված ներողամտությամբ.

— Ախար, հայրիկ, ես քեզ արդեն ասացի, որ մերոնք երեկ են էնտեղ գնացել։ Ապրում են Խան Օմար Աղա քարվանսարայում...

— Յանասրջե։ Աստված թող էնտեղ նրանց գործը հաջողի։ Մենակ թե Խան Օմար Աղան հիմա զորանոց են դարձրել։ Էնտեղ են տեղավորված դավաճան էրմենիների՝ Մուսա դաղի դեմ ուղարկվելիք զինվորները...

— Ի՞նչ ես ասում, զորանո՞ց։ Մերոնք բանից տեղյակ չեն։ Բայց երևի զինվորներն արդեն գնացած լինեն։ Համամը մեծ տեղ է, երևի ուրիշ քարվանսարայներ էլ կան։

Դրա դեմ գյուղացին չկարողացավ առարկել։ Նրան չհաջողվեց էսադին դիմակազերծ անել։ Մտածմունքների մեջ ընկավ։ Մի քանի անգամ անձայն շարժեց շրթունքները և, ի վերջո, նահանջեց։

Գիշերը դեռ վրա չէր հասել, երբ Հայկը պատրաստվեց ճանապարհ ընկնելու։ Մինչ այդ կարելություն չափ հոգ տարավ Ստեփանի մասին։ Իր ունեցած երշիկներից մեկը դրեց Ստեփանի ուսապարկը։ Աստված վկա, անճարակ տղան երևի ճանապարհը կորցնի, ուտելիքը պակասի։ Ինքը՝ Հայկը, վստահ էր, ով Հալեպի դաշտավայրում ամեն տեղ էլ հաց ու ջուր կճարի։ Ստեփանի թերմոսը լցրեց տան մոտով հոսող աղբյուրի ջրով, մաքրեց ցեխոտված շորերը։ Դառնացած հոգ էր տանում ընկերոջ մասին, նորից ու նորից խրատներ տալիս, թե ինչպես պետք է տեղ հասնի.

— Մեր տան տերը ապրանքը տանում է կիրակնօրյա շուկայում ծախելու։ Կառքի մեջ կարող ես լավ թաքնվել։ Լավ կանես, եթե ոչ մի բան չխոսես։ Չէ՞ որ հիվանդ ես։ Հենց որ քաղաքը տեսնես, սուսուփուս ցած թռիր, հասկանո՞ւմ ես, պառկիր դաշտում, որևէ փոսի, ճեղքի մեջ։ Կսպասես մինչև մութն ընկնի... Հասկացա՞ր։

Ստեփանը ցավից կուչ էր եկել խարի վրա։ Սոսկում էր վերսկսվող ծակոցներից։ Բայց ավելի շատ սոսկում էր միայնակ մնալուց։ Գիշերը երեկվա պես ամպամած չէր, այլ պարզ ու վճիտ։ Թուրքմենի տան վերևում ձգվել էր հարդագողի սպիտակ, վիթխարի ճանապարհը։ Ստեփանը մի ակնթարթ զգաց, որ Հայկի ձեռքն իր ձեռքի մեջ է։ Դա ամեն ինչ էր։ Մի անգամ էլ լսեց իր ընկերոջ ձայնը՝ ամբարտավան և կոպիտ, ինչպես միշտ.

— Լսիր, լավ կանես, եթե պատես Ջեքսոնի նամակը։

Հայկը ոտքն արդեն դրել էր սանդուղքին, երբ ետ դարձավ, մոտեցավ Ստեփանին։ Առանց մի բառ ասելու, արագ ու վարանոտ խաչակնքեց ընկերոջ կուրծքն ու ճակատը։

Մահացու վտանգի դեպքում հայը հայի համար պետք է և՛ հայր լինի, և՛ քահանա։ Այս բանը Տեր-Հայկազունն էր ուսուցանել Յողոնօլուքում, քարոզ կարդալիս, երբ դեռ ոչ ոք չգիտեր, թե մահացու վտանգն արդեն վրա է հասել։

Ային էլ Բեդա գյուղը չհասած՝ ճանապարհը դուրս եկավ հարթավայր։ Վաղորդյան լիակատար ամայության մեջ թուրքմենը թափով քշում էր ձին։ Բայց ծանրաբեռնված կառքը սոսկալի ցնցվում էր. անվահետքերը խորն էին, քարացած։ Ստեփանը հազիվ էր լսում ցավ պատճառող ճռինչն ու դղրդյունը։ Իր վերմակի վրա, եղեգնախրձերի արանքում պառկած՝ տենդից այրվում էր։ Դա կարծես աստծո ողորմածությունն էր։ Տենդը նրա մեջ բթացնում էր ժամանակի ու տարածության զգացողությունը։ Հեղհեղուկ, բայց և հաճելի տեսիլներով տարված՝ տղան չէր էլ մտածում, թե իրեն ուր են տանում, կամ ի՞նչ է սպասում իրեն։ Տենդից ավելի մուգ գույն էր ստացել նրա մաշկը։ Դա ևս նպաստում էր անզգա ձևանալուն։ Ամեն անգամ, երբ գյուղացին կանգնեցնում էր կառքը՝ ձիուն հանգիստ տալու համար, տեղից բարձրանում էր, նայում իր ուղևորին։ Սա իսկույն բարձրաձայն հնչեցնում էր, աչքերը փակում։ Այնպես որ բարի թուրքմենը ինչքան էլ փորձեց խոսքի բռնվել, բոլոր փորձերն իզուր անցան։ Գյուղացին միայն կցկտուր հառաչանքներ էր լսում։ Երբեմն էլ տղան աղերսում էր մի քիչ սպասել։ Նա իրեն պահում էր այնպես, ինչպես խրատել էր Հայկը։

— Բեն բիր ազ հասթա իմ[1]։

Ահա միակ նախադասությունը, որ ամեն առիթով կրկնում էր, հաշվի չառնելով մահացու վտանգը։ Այսպիսով նա խույս էր տալիս բոլոր աղոթքներից, քանի որ մահմեդական աշխարհում հիվանդներն ու տկարներն ազատվում են առողջ մարմնի համար պարտադիր կրոնական ծեսերը կատարելուց։

Աֆրին փոքրիկ գետի փայտե կամուրջն անցնելուց հետո թուրքմենը կառքը կանգնեցրեց, որ հաց ուտեն։ Ձին արձակեց և խոտի տոպրակը կախեց ձիու վզից։ Ստեփանը նույնպես ցած իջավ, գյուղացու հետ նստեց տոթակեզ տափաստանում ձգված ճանապարհի եզրին։ Սայլեր գրեթե չէին անցնում։ Մինչ այդ դիմացից եկող երկու եզասայլ էին

[1] բեն բիր ազ հասթա իմ — ես մի քիչ հիվանդ եմ

պատահել։ Շրջակայքի գյուղացիներն օգտվում էին Համամից Անթաքիի տանող մեծ ճանապարհից։ Թուրքմենը լավաշ և այծի պանիր հանեց, հրավիրեց Ստեփանին.

— Կեր, ա՛յ տղա։ Ուտելն ամեն ցավ սպանում է։

Ստեփանը չուզեց տանտիրոջը վիրավորել և ուժասպառ ատամներով՝ ծամեց մի կտոր պանիր։ Ծամեց-ծամեց, բայց այդպես էլ չկարողացավ կուլ տալ։ Հյուրընկալ Թուրքմենը մտահոգ նայեց տղային.

— Խե՜ղճ տղա, ոնց որ տեսնում եմ, հալից ընկել ես. քեզ ավելի շատ ուժ է պետք, քան ունես...

Ստեփանը չհասկացավ կոկորդային բառերը, բայց ցույց չտվեց, թե չհասկացավ։ Գլուխ տվեց, ձեռքը սրտին դրեց և արտասանեց իր հիվանդությանը վերաբերող անգիր արած նախադասությունը, որը տեղի-անտեղի միշտ կրկնում էր.

— Բեն բիր ազ հասթա իմ։

Թուրքմենը երկար ժամանակ լռեց։ Զորեղ ծնոտներով հաց էր ծամում։ Հանկարծ դանակով զինված ձեռքն այնպես շարժեց, կարծես ինչ-որ բան էր ուզում մեջտեղից կտրել։ Ստեփանի լեղին ջուր դարձավ։ Մանավանդ որ Թուրքմենը խոսեց հայերեն.

— Քո անունը իսկի էլ Հյուսեին չէ։ Էդ փչոցները թո՜ղ։ Իսկապե՞ս ուզում ես Անթաքիե գնալ։ Ես քեզ չեմ հավատում։

Հարվածն այնքան անսպասելի էր, որ Ստեփանը հազիվ չկորցրեց գիտակցությունը։ Ջնայած տենդին, ճակատից սառը քրտինքի կաթիլներ թափվեցին։ Թուրքմենի խորն ընկած մանր աչքերը տխուր արտահայտություն ստացան.

— Ինչ էլ անունդ լինի, մի վախենա և հավատա աստծուն։ Քանի ինձ հետ ես, քեզ բան չի պատահի։

Ստեփանն ի մի հավաքեց իր բոլոր գիտելիքները և փորձեց թուրքերեն մի քանի բառ թոթովել։ Գյուղացին դաշույնով զինված ձեռքը թափ տվեց, հասկացնելով, թե խոսելու կարիք չկա։ Հիշեց այն թշվառ նախիրները, որ զափթիեները գիշեր-ցերեկ քշում տանում էին իր տան մոտով։

— Տղա, որտեղացի՞ ես։ Հյուսիսի կողմերից ես եկել, մերոնց ձեռքի՞ց ես փախել, քարավանի միջի՞ց, հը՞։

Ստեփանը ստիպված էր հայտնել գաղտնիքը։ Խաբելն այլևս չէր օգնի։ Շտապ-շտապ և կցկտուր ինչ-որ բան շշնջաց հայերեն՝ այնպես որ հասկանար միայն իր հյուրասեր տանտերը և ոչ թե թշնամաբար դարան մտած աշխարհը։

— Ես այստեղացի եմ, մուսալեռցի, յողոնօլուքցի։ Ուզում եմ տուն գնալ, ծնողներիս մոտ։

— Տո՞ւն։— Գյուղացին կոշտացած ձեռքով շոյեց ալեխառն մորուքը, խոր մտածմունքի մեջ ընկավ։— Ասել կուզի, դու նրանցից ես, որ սարը բարձրացած՝ կռվում են մեր զինվորների դեմ։ Հլա ի՞նձ նայիր...

Բարեսիրտ մարդու ձայնը խստացավ։ Ստեփանին թվաց, թե ամեն ինչ արդեն վերջացավ։ Մի կողմ ընկավ և ճակատագրին անձնատուր լինելով, դեմքը սեղմեց չոր ու գորշ հողին։ Խոշոր դաշույնը դեռևս Թուրքմենի ձեռքին էր։ Մնում էր միայն հարվածելը։ Ե՞րբ է դա լինելու։ Բայց տղայի ականջին հասավ գյուղացու հեգնող ձայնը։

— Իսկ ի՞նչ էր էն մյուսի՝ քո ազգական էսադի անունը։ Ա՛յ թե ընկած-ելածն էր։ Դրա նմանները հեշտ չեն բռնվում քեզ պես, տղաս...

Ստեփանը չպատասխանեց։ Մահվան մտքի հետ հաշտված՝ սպասում էր։ Սակայն շուտով զգաց, որ Թուրքմենի քարի պես կոշտ, բայց գորովալից ձեռքերն իրեն վեր բարձրացրին.

— Դու ինչո՞ւ պետք է պատասխան տաս մեծերիդ մեղքի համար։ Աստված քեզ դատավոր։ Էլ ոչ մի բան չի օգնի ո՛չ քեզ, ո՛չ էլ ձերոնց։ Հիմա արի, տեսնենք, թե ի՞նչ կարող ենք անել։

Ստեփանը նորից պառկեց եղեգնախրձերի արանքում։ Թուրքմենն արդեն անհամբերություն էր ցույց տալիս. մտրակում էր ձիուն, թեև սա բազմաթիվ մղոններ էր անցել և քրտինքի մեջ կորած թավամազ մաշկը փայլփլում էր։ Ճանապարհն արդեն անցում էին շատ արագ. ձին հաճախ վազում էր վարգով, երբեմն էլ՝ քառասմբակ։ Գյուղացիս ամբողջ ժամանակ տարօրինակ ձևով մենախոսում էր, գուցե և ձիուն կըշտամբում։

Ստեփանը հոգեպես ցնցված էր, բայց և իր մահճում՝ դղրդացող կառքում պառկած, ավելի խորն էր զգում, որ ինքն աստծո ողորմած հովանավորության տակ է։ Փորձեց մտածել մայրիկի մասին։ Իրո՞ք նա հիվանդ էր։ Ա՜խ, ո՛չ, ոչինչ, ոչի՜նչ չէր պատահել։ Ինչ-որ Սաթոն էր ասում, այդ քածը, սո՛ւտ է, կեղծի՛ք։ Երբ Ստեփանը վերադառնա, կանգնի Հյուսիսային լեռնաթամբի երկար խրամատի առաջ, Ավագյանը խելագարի նման կվազի հայրիկի մոտ, ապա ծնողներն ընդառաջ կգան, ուրախությունից լաց կլինեն, կգրկեն իրենց փրկված որդուն, կփաղաքշեն, ինչպես առաջ։ Ջնայած այս տանջալից պատրանքին, պատանուն չէր հաջողվում վերականգնել մոր պատկերը։ Ժուլիեթի դեմքը հաճախ միաձուլվում էր Իսկուհու դեմքին, ցավ պատճառում տղային։ Ինչ անում

էր, չէր կարողանում ազատվել այդ կրկնապատկերից, թեև դա նրա համար ուղղակի տառապանք էր։ Հետո մտաբերեց Հայկի ձայնը, որը կարծես նախազգուշացնում էր, թե ժամանակը չպետք է իզուր վատնել։ Ցերեկ էր, ուրեմն՝ պետք է քներ, ուժ հավաքեր գիշերային ուղևորության համար։ Ընկերոջ պատվիրանին հնազանդվելով, աչքերը փակեց։ Բայց պատանու մարմինը կարծես քնի դեմ այնքան ծանր մեղք էր գործել, որ նինջը մոտ չէր գալիս, այլ իր փոխարեն ուղարկում էր ուշաթափությունից, տենգի նոպայից ու անքնությունից ստեղծված մի շարադի։ Սա կազդուրելու փոխարեն ուժասպառ էր անում ոտքերն ու ձեռքերը։ Տղան քնեց և չզարթնեց մինչև իրիկնադեմ, երբ արևի լույսն արդեն դառնում էր ոսկեգույն։ Հոգնատանջ ձին աղմուկով դոփում էր գետինը, և ճանապարհը կարծես ձգվում էր դեպի վեր։

Գյուղացին կառքը կանգնեցրեց և տենդահար ուղևորին ձայն տվեց, որ իջնի։ Ստեփանը մեծ դժվարությամբ սթափվեց և կառքից ցած սողաց։ Հեռվում տեսավ ամրոցային պարիսպներով գոտևորված մի լերկ գմբեթ, որի ստորոտում սփռված էին տների սպիտակ խորանարդները։ Թուրքմենը մտրակն ուղղեց դեպի այդ տեսարանը.

— Հաբիբ էն Նեջհարն է, միջնաբերդը, Անթաքիեն։ Հիմա պետք է ավելի լավ թաքնվես, տղաս։

Հիրավի, խորդուբորդ ճանապարհը մի քանի հարյուր քայլ անցնելուց հետո միացավ Համամի խճուղուն, որը պատրաստված էր Ջեմալ փաշայի հրամանով։ Այս նոր ճանապարհի վրա անսպասելի եռուզեռ էր տիրում։ Թուրքմենը եղեգնախրձերն իրարից հեռացրեց։ Ստացվեց խոր փոս։

— Դե, ներս մտիր։ Քեզ քաղաքի միջով կտանեմ, երկաթե կամրջից էլ դենը։ Ավելի հեռուն գնալ չեմ կարող։ Դե, հիմա սուսուփուս պառկիր։

Ստեփանը պառկեց։ Գյուղացին իր ուղևորին ճարպկորեն քողարկեց, այնպես որ նա մաքուր օդ շնչի, և վրայի ծանրությունն էլ շատ չլինի։ Այս փոսում հօդս ցնդեցին Բագրատյանի որդու բոլոր մտքերն ու պատկերացումները։ Նա պառկած էր իբրև մի կտոր անտարբեր ծանրություն՝ առանց երկյուղի, առանց արիության։ Կառքն արդեն անցնում էր լայն, ողորկ, հաճելի ճանապարհով։ Ամեն կողմից ծիծաղ և աղմկոտ ձայներ էին լսվում։ Փոսում պառկածն անտարբեր լսում էր։ Հետո կառքը նորից սկսեց ցնցվել։ Հավանաբար անցնում էին սալարկի վրայով։ Հանկարծ կառքը կանգ առավ։ Մարդիկ մոտեցան և շրջապատեցին։ Անկասկած զափթիեներ էին, զինվորներ կամ ոստիկաններ։ Ստեփանի ականջին հասնում էր խուլ խոսակցությունը, ասես ձայնափողի միջից.

— Ո՞ւր, ա՛յ գյուղացի։

— Քաղաք, կիրակնօրյա շուկան։ Էլ ո՞ւր կարող եմ գնալ։

— Թղթերդ կարգի՞ն են։ Ցույց տուր։ Ի՞նչ ես տանում։

— Ծախելու ապրանք։ Ինքներդ տեսեք։ Հյուսների համար եղեգն եմ տանում, մի երկու օխա էլ մատուտակ...

— Արգելված բան-ման չունե՞ս։ Նոր օրենքին ծանո՞թ ես։ Ցորենը, եգիպտացորենը, կարտոֆիլը, բրինձը, յուղը պետք է հանձնել իշխանությանը։

— Եգիպտացորենս հանձնել եմ Համամում։

Մի քանի ձեռք սկսեցին փորփրել եղեգնախրձերի վերին շերտերը։ Ստեփանն այդ զգում էր առանց երկյուղի և առանց արիության։ Ապա հոգնած ձին նորից առաջ շարժվեց, կառքը դանդաղաքայլ տարավ մարդկային աղմուկ-աղաղակի թունելի միջով։ Ստեփանի վրա եղեգնախրձերի միջից մաղվող լույսը հետզհետե աղոտանում էր։ Օրն արդեն մթնել էր, երբ լսվեց երկրորդ անծանոթ կանչը։ Բայց այս անգամ թուրքմենը կառքը չկանգնեցրեց։ Ետևից մեկը բարձրաձայն սաստեց.

— Սա ի՞նչ նոր սովորություն է։ Գիշերով ճանապարհ են գնում։ Հո ցերեկ չէ։ Չի կարելի, լսո՞ւմ ես։ Ե՞րբ պիտի այս հաստագլուխները հասկանան, որ մենք պատերազմի մեջ ենք։

Զիու սմբակների տակ թնդում էին Խաչակրաց կամրջի վիթխարի քարասալերը։ Թե ինչու էր կամուրջը Երկաթյա կոչվում, պատճառը վաղուց էր մոռացվել։ Կամուրջն անցնելուց հետո թուրքմենը հիվանդին ազատագրեց եղեգնախրձերի ծանրությունից։ Ստեփանը նորից կարող էր փաթաթվել իր վերմակի մեջ, պառկել խրձերի արանքում։ Գյուղացին շատ գոհ էր.

— Ա՛յ տղա, ուրախացի՛ր, է՛։ Ամբողջ վտանգը մնաց ետևում։ Աստված գործդ հաջողում է։ Որ էդպես է, քեզ մի քիչ էլ կտանեմ, մինչև Մենջիլլե։ Էնտեղ ձիս կարձակեմ, ինքս էլ կգիշերեմ խնամուս տանը։

Թեև Ստեփանի կյանքի պարարությունը շատ էր կարճացել, ապահովության զգացումն այնքան զորեղ էր, որ տղան իսկույն հանձնվեց ծանր քնին։ Թուրքմենը քշում էր իր խեղճ ձին, ուզում էր կարելույն չափ շուտ հասնել Մենջիլլե գյուղը։ Այստեղից Ստեփանը մոտ տասը մղոն անցնելուց հետո կհասներ հայկական գյուղերի հովիտը։ Բայց գյուղացու պարզ հոգուն անհայտ էր հայ մարդու ճակատագրի նենգափոխությունը։ Ստեփանն արթնացավ իր դեմքը խուզարկող կարբիտե լամպերի և

գրպանի լապտերների կուրացուցիչ լույսից։ Վրան խոնարհվել էին համազգեստավոր մարդիկ՝ թավ բեղերով ու մորթե գդակներով։ Կառքը մտել էր այն վաշտի ճամբարը, որը վալու հրամանով Քիլիս քաղաքից ծգնության էր գնալու Անտիոքի կայմակամին։ Զինվորական վրանները սփռված էին ճանապարհի երկու կողմում։ Միայն սպաներն էին տեղավորվել Մենջիլյեում։

Թուրքմենը հանգիստ կանգնել էր կառքի մոտ։ Իր շփոթությունը թաքցնելու նպատակով սկսեց թփթփացնել ձիու մեջքը։

Օնբաշիներից մեկը վրա պրծավ.

— Ո՞ւր ես ուզում գնալ։ Ո՞վ է էս տղան։ Քո՞նն է։

Գյուղացին գլուխը մտացրիվ օրորեց.

— Չէ, չէ, իմ տղան չէ։

Նա ուզում էր ժամանակ շահել, հարմար պատասխան գտնել։ Օնբաշին փնթփնթաց, թե ինչո՞ւ է նա բերանը ջուր առել։ Բարեբախտաբար ծերունին հաճախակի էր շուկա եկել և տեղանքին լավ էր ծանոթ։ Գլուխն օրորելով հառաչեց.

— Սերիս ենք գնում, Սերիս։ Սարի տակն է...

Բառերն այնպես արտասանեց, կարծես դրանք անմեղ երգի խոսքեր էին։ Օնբաշին լուսավորեց Ստեփանի դեմքը։ Թուրքմենի ձայնը լացակումած շեշտ ընդունեց.

— Հա՜, հլա նայիր երեխային։ Տուն պիտի տանեմ, Սերիս, ծնողների մոտ...

Մինչ այդ կառքի շուրջը ենթասպաների ու զինվորների մի ամբողջ բազմություն հավաքվեց։ Ծերունին հանկարծ մեծ հուզմունքով ձայն տվեց.

— Ամա՜ն, շատ մի՛ մոտեցեք, զգուշացե՛ք...

Օնբաշին, իրոք, վախեցավ այդ նախազգուշացումից, աչքերը հառեց գյուղացուն, որը մատնացույց էր անում Ստեփանի դեմքը.

— Տեսնո՞ւմ ես, երեխան տաքության մեջ է, խելքը գլխին չէ։ Հեռու գնացեք, թե չէ կվարակվեք։ Բժիշկը տղային Անթաքիեից վռնդել է։

Այստեղ Թուրքմենը դաշույնի պես օնբաշու սիրտը խրեց երկու սարսափելի բառ՝ «բծավոր տենդ»։ Սիրիայում այդ ժամանակ այնպիսի սարսափ չէին առաջացնում «ժանտախտ» և «խոլերա» բառերը, որքան «բծավոր տենդը»։

Զինվորներն իսկույն ետ փախան։ Նույնիսկ կատաղած օնբաշին երեք քայլ ընկրկեց։ Ային էլ բեդացի սքանչելի գեղջուկը գրպանից հանեց փաստաթղթերը, մեկնեց ենթասպային, խնդրելով, որ դրանք ստուգի։ Ենթասպան հայհոյելով հրաժարվեց իր պարտականությունը կատարելուց։ Տասը վայրկյան չանցած կառքի առաջ ճանապարհը բաց էր։ Թուրքմենն իր հնարամտությունից գոհ և հպարտ՝ այլևս չտանջեց ձիուն, թույլ տվեց, որ հոգնատանջ կենդանին գնա իր կամքով, իսկ ինքը ծիծաղելով դիմեց Ստեփանին.

— Ա՛յ տղա, տեսնո՞ւմ ես, թե ալլահը ոնց է գործերդ հաջողացնում։ Բա ալլահի ողորմածությունը չէ՞ր, որ քեզ ի՛նձ մոտ ուղարկեց։ Ուրախացիր, որ ի՛նձ գտար։ Ուրախացիր, որ քեզ մի կես ժամ էլ կտանեմ ու մի տեղ կգիշերեմ...

Բայց անտանելի սարսափն այնպես էր Ստեփանին կաշկանդել, որ նա հազիվ լսեց այս բառերը։ Հետո, երբ փրկարարը նրան ցնցելով արթնացրեց, տղան տեղից շարժվել չկարողացավ։ Մեր Թուրքմենը գրկեց, ինչպես փոքրիկ երեխայի, դրեց ճանապարհին, որը Որոնտեսի երկայնքով ձգվում էր դեպի Սուեդիա։

— Տղա՛ս, էստեղ էլ մարդ չի երևում։ Եթե լավ գնաս, լույսը չբացված սարը կհասնես։ Ալլահը քո հանդեպ ավելի ողորմած է, քան ուրիշների։

Գյուղացին Ստեփանին մի կտոր պանիր տվեց, մի հատ լավաշ ու իր ջրամանը, որ թարմ ջրով էր լցրել Անթաքիեում։ Ապա քաջալերեց, հաջողություն բարեմաղթեց, իր խոսքն ավարտելով խաղաղության մաղթանքով.

— Սելամ ալեք։

Ստեփանը ոչինչ չլսեց, քանի որ ականջներում ժխոր էր տիրում։ Տեսնում էր միայն, թե որքան ռիթմիկ են շարժվում սպիտակ չալման և ալեխառն մորուքը։ Տեսնում էր միայն, թե ինչպես այդ երկուսը՝ չալման և մորուքը, խավարում հետզհետե ավելի ու ավելի լուսավոր են թվում։ Ցատանին ինչպիսի՜ ցավ զգաց, երբ զրկվեց այդ բարի լույսի աղբյուրից, երբ ձիու դոփյունը հետզհետե հեռացավ։ Անհետացող կառքի վրա լապտերը չէր վառվում, իսկ լուսինը դեռևս դուրս չէր եկել Ամանոսի վիհերից։

Տեր-Հայկազունն իր պաշտոնավարության ընթացքում առաջին անգամ պատվիրակություն ուղարկեց գերեզմանաբնակների մոտ։ Նունիկին և նրա յուրայիններին առաջարկում էր Մուսա լեռան շրջակայքում որոնել Բագրատյանի որդուն։ Եթե նրանց հաջողվեր կարևոր տեղեկություն հաղորդել, կամ նույնիսկ գտնել փախստականին, ապա կա-

բող էին մեծ վարձատրության հույս ունենալ. Քաղաքածորի մի անկյունում նրանց թույլ կտրվեր ապրել։

Տեր-Հայկազունը գործում էր արտակարգ հեռատեսությամբ, երբ Ստեփանին գտնելու համար այդպիսի հատուցում էր առաջարկում։ Գաբրիել Բագրատյանը Դամալջրքի ամենակարևոր մարդն էր։ Ամբողջ ապագան կախված էր գլխավոր հրամանատարի ֆիզիկական ու հոգևոր վիճակից։ Գետք է ամեն գնով պահպանվեր Գաբրիելի ներքին ուժը, որին Ժուլիեթը առաջին ծանր հարվածն էր հասցրել։ Եթե Ստեփանը չփրկվեր, այդ ուժը լրիվ կխորտակվեր։ Առաջարկված հատուցումը բնակչության համար վիթխարի էր։ Նունիկը գրեթե հույս չուներ, թե իրենց կվիճակվի դա ձեռք բերել։ Գյուղերում ամեն օր հայտնվում էին նոր զորախմբեր, նոր զափթիեներ, կամավորական նոր խմբեր։ Ամեն միջոց գործադրվում էր Դամալջրքը հիմնավորապես պաշարելու համար։ Կայմակամի տեղակալը՝ պեպենոտ մյուդիրը, Բագրատյանի ամառանոցում հաստատել էր իր կառավարական պաշտոնատեղին։ Վիրավոր յուզբաշին արդեն ապաքինման ճանապարհին էր։ Մյուդիրը շրջակա բոլոր գյուղերը հրաման էր ուղարկել, որի համաձայն ամեն մահմեդական պարտավոր էր ձերբակալել հայազգի բոլոր էակներին՝ լինեն դրանք մուրացկաններ թե կույրեր, տգարներ թե խելագարներ, հաշմանդամներ թե ծերունիներ ու երեխաներ։ Այս խորհրդաստ հրամանը մեծ նպատակ էր հետապնդում։ Դա անհնարին էր դարձնում պաշարվածների օգտին հոգատարություն կատարվելիք լրտեսական որևէ գործողություն։ Հրամանը եկեղեցու պատերին նոր էին փակցրել, հազիվ մի-երկու օր, բայց յոթ գյուղից հավաքված յոթանասուն գերեզմանաբնակներից մնացել էին ընդամենը քառասուն հոգի։ Ողջ մնացածները իրենց կյանքը երկարացնելու համար պետք է անմատչելի թաքստոց գտնեին։ Այդ ապաստարանը, փառք աստծո, գրեթե պատրաստ էր։ Միայն ամենախիզախները ու ամենաուժեղները, Ագապավերին հիշեցնող Նունիկի նմանները կարող էին կեսգիշերին կամ առավաստան դռան գալ, թափառել իրենց նախկին քնակավայրերում, ուտելիք հայթայթել, այսինքն՝ իրենց կյանքը մահվան վտանգի ենթարկելով, մի-մի գառ, ուլ կամ հավ գողանալ։

Ստեփանի վերադարձի ճանապարհը անցնում էր այդ թաքստոցի մոտով։

Այն երբ գյուղից մոտ մեկ մղոն հեռու կանգնած էին հին Անտիոքի ավերակները, գոյացնելով մի ամբողջ քաղաք։ Վեր էին ձգված քանդված բուրգերն ու հատակագծի ջրատար պարիսպների հոգնչական սյուները։ Լայն ու հարթաթ ճանապարհը այստեղ նեղանում էր, դառնում

նեղ արահետ, անցնում ժայռերի մեջ փորված գետի հունի երկայնքով, որի շուրջը մարդկային հանճարով ստեղծված կառույցները վեր էին ածվել քարեղեն անապատի։ Տեղ-տեղ ճանապարհը փակում էին սալաքարերը, կոթողների բեկորները, փլուզված խոյակները։

Ստեփանը տենդային արբեցման մեջ ամեն վայրկյան սայթաքում էր, բախվում վտանգավոր փլատակներին, խճճվում բաղեղանման թուլերի մեջ, վայր ընկնում, վիրավորում ծնկները, ոտքի ելնում և նորից քարշ գալով առաջ գնում։ Աջ կողմում, ավերակների մեջ թաքնված, փայլփլում էր ինչ-որ լույս։ Եթե Հայկը Ստեփանի կողքին լիներ, առանց այդ լույսի էլ հեռվից կգուշակեր թշվառ, բայց և արյունակից էակների մոտիկությունը։ Համոզված կընտրեր ճիշտ ուղղությունը։ Բայց ո՞վ գիտե, թե որտեղ էր Հայկն այդ ժամին։ Երեսուն քայլ ճանապարհից այն կողմ սպասում էր փրկությունը։ Այդ բանը նույնիսկ լույսով էր ազդարարվում։ Նունիկը, Վարդուկը, Մանուշակը Ստեփանին լավ կթաքցնեին, մի օր ու մի գիշեր կխնամեին, ապա ապահով կհասցնեին Դամլաջրք՝ մեծ վարձատրությունն ստանալու։ Բայց քաղաքացի տղան ամեն մի լույսից ու կրակից վախենում էր։ Բոլոր ուժերը լարած՝ հևասպառ վազում էր դեպի վեր։ Բարձունքի վրա կանգ առավ, մի շնչով խմեց շշի անհամ, գոլ ջուրը։ Նրա առաջ վեր էր խոյանում Մուսա լեռը։ Լուսնի լույսի տակ պարզ երևում էր հրդեհի սև, թանձր ծուխը, որ դեռևս բարձրանում էր լեռան կրծքից։ Սակայն կրակը մեղմացել էր, քանի որ քամի չկար։ Երբեմն հրդեհը տեղ-տեղ խորհրդավոր ձևով բռնկվում էր, ապա կրկին հանդարտվում։ Վտանգից փրկվելու մի այլ միջոց էլ հայտնվեց։ Նունիկը ինչ-որ բանի հոտ էր առել։ Կրակը մի կողմ տանելով, նա մի ստվեր նկատեց, որը հազիվ թե մարդու ստվեր լիներ։ Գերեզմանաբնակների մեջ «անտեր տղաներ» էլ կային։ Դրանցից մեկին, երևի ութնամյա մի երեխայի, պառավն ուղարկեց իմանալու, թե դա ի՞նչ ստվեր է։ Բայց երբ Ստեփանը իր ետևում քարերի խշշոց և խոտերի շշշյուն լսեց, առանց ետ նայելու, խելագարի պես սկսեց փախչել։ Նրա ամբողջ էությունը վերափոխվեց վազքի, ինչպես դա լինում է ծայրահեղ հուսահատված մարդկանց հետ։ Ականջները զժժում էին։ Արդյոք հա՞յրն էր կանչում։ Թե՞ Հայկն էր գոչում «առա՛ջ»։ Այնպես էր վազում, կարծես նրան ոչ թե մի փոքրիկ տղա էր հետապնդում, այլ այն վաշտը, որի ձեռքից երեկոյան մաղապուրծ եղավ։

Ջրատար պարիսպներն այստեղ բոլորովին փուլ էին եկել, ճանապարհը լայնացրել։ Նախալեռնային սև բարձունքները ձգվում էին մինչև ճանապարհը։ Ստեփանը վազո՜ւմ էր, վազո՜ւմ, որ կյանքը փրկի։ Ինչ-

որ անողոք պատրանք նրան գայթակղեց, տարավ դեպի հովիտը։ Տղան կարծում էր, թե դա հայկական յոթ գյուղի հարազատ շրջակայքն է։ Փախստյան սրընթաց հրեշտակը նրան առաջ էր մղում քարքարոտ ծառաստանով մեկ, և նա առաջ էր թռչում ինչպես թևավոր։ Ստեփանը թեքվեց դեպի հովիտը, առանց զգալու, որ ամբողջ ուժով գոռում է։ Բայց դա երկար չտևեց։ Առաջին իսկ մեծ արգելքի՝ լայնակի ընկած ծառաբնի վրա ընկավ-մնաց։

Երբ փոքր-ինչ սթափվեց, օրն արդեն լուսանում էր։ Տղային թվաց, թե դա նախանցյալ օրն է, հենց այն պահը, երբ ինքը Հայկի հետ էլ Ամբրի ճահիճն անցնելուց հետո դուրս եկավ ճանապարհ և բլրաշատ, բարնգութ վայրում տեսավ թուրքմենի տունը։ Այն ամենը, ինչ տեղի էր ունեցել հետո, նա մոռացել էր, կամ հիշում էր իբրև երազ։ Ժամանակի զգացողության կորուստը, այն թյուր պատկերացումը, թե դեռևս նախանցյալ օրն է, ամրապնդվեց նաև այն պատճառով, որ տղան իր դիմաց իրոք մի տուն տեսավ։ Դա, իհարկե, սպիտակ կրաքարից պատրաստված տուն չէր, այլ կավաշեն, ճաքճքված, անպատուհան ու անդուրեկան մի խրճիթ։ Հենց այդ պահին դուրս եկավ ալեխառն մորուքով չալմայավոր մի մարդ։ Բայց դա գեղջուկի կերպարանք առած այն պահապան հրեշտակ-թուրքմենը չէր, թեև տարեց մարդ էր։ Սա ևս ստուգեց քամու ուղղությունը, եղանակը, աշխարհի կողմերը, մի փոքրիկ գորգ փռեց գետնին, ծունր իջավ, սկսեց իր վաղորդյան աղոթքը՝ խոնարհվելով ու չորս կողմը շրջվելով։

Տղան իսկույն մտաբերեց Հայկի իմաստուն խրատը։ Պետք է ամեն ինչ նույնությամբ կրկնել։ Նույն տեղում, ուր ամբողջ գիշերը մնացել էր ընկած, սկսեց ընդօրինակել թուրքմենին։ Բայց ոչինչ չստացվեց. միայն տարտամ օրորվում էր, հեծկլտում։ Մահմեդականն ուշի-ուշով նայեց։ Սա այն մյուս թուրքմենի պես բարեպաշտ չէր. ընդհատեց աղոթքը, ոտքի ելավ, մոտեցավ տղային.

— Ո՞վ ես, որտեղի՞ց ես եկել, ի՞նչ ես ուզում։

Ստեփանը ծնկաչոք խոնարհվեց, ձեռքը դրեց սրտին.

— Բեն բիր աղ հասթա իմ, էֆենդի։

Անգիր արած բառերն արտասանելուց հետո ձեռքով հասկացրեց, թե ծարավ է։ Մորուքավորն սկզբում տատանվեց, ապա գնաց դեպի աղբյուրը, սափորը լցրեց, բերեց տվեց տղային։ Ստեփանն ագահորեն խմեց, թեև անտանելի ցավ զգաց։ Այդ պահին խրճիթից ինչ-որ մեկն էլ դուրս եկավ։ Ոչ թե կարեկից կանայք էին, ինչպես հույս ուներ Ստեփանը,

այլ խոժոռ, սևամորուք մի տղամարդ։ Սա նույնպես կրկնեց տարեց թուրքմենի հարցը.

— Ո՞վ ես, որտեղի՞ց ես եկել, ի՞նչ ես ուզում։

Գլուխը կորցրած պատանին երկու շարժում արեց անորոշ ուղղությամբ։ Դա կարող էր վերաբերել թե՛ Անթաքիային, թե՛ Սուեդիային։ Սևամորուքը բարկացավ.

— Լեզու չունե՞ս, հա՞մր ես։

Ստեփանը ժպտաց իր խոշո՜ր, խոշո՜ր աչքերով, անճարակ, ինչպես երեք տարեկան երեխա։ Նորից ծունկի եկավ անծանոթ մարդկանց առաջ։ Տարեցը երկու անգամ պտտվեց տղայի շուրջը, կարծես լրջորեն ստուգում էր իր կատարած աշխատանքը։ Ապա Ստեփանի դունչը բռնելով՝ գլուխը դարձրեց դեպի լույսը։ Սևամորուքն էլ հետաքրքրությամբ մասնակցեց այդ ստուգմանը։ Հետո մի քանի քայլ հեռացան, վիճելով ինչ-որ բան խոսեցին, շարունակ հետևելով տղային։ Երբ վիճաբանությունն ավարտվեց, թուրքմենների դեմքերին այնպիսի արտահայտություն կար, թե կատարելու են պաշտոնական ինչ-որ ծանր պարտականություն։ Սևամորուքը շարունակեց հարցաքննությունը.

— Ա՛յ տղա, թլփատվա՞ծ ես, թե՞ անթլփատ։

Ստեփանը չհասկացավ։ Նրա դյուրահավատ ժպիտը հալվեց, փոխվեց, փոխվեց սարսափով լի հարցական հայացքի։ Լռությունը զայրացնում էր երկու մահմեդականներին։ Պատանու գլխին ցասկոտ բառերի կարկուտ տեղաց։ Հակառակ այդ մարդկանց գոռգոռոցին ու շարժուձևին, նա դեռևս չէր հասկանում, թե ինչ են ուզում իրենից։

Սևամորուքի համբերությունն սպառվեց։ Ծունկի իջած տղային թեվերի տակից բռնած՝ բարձրացրեց։ Տարեցն ստուգեց, ինչ ուզում էին իմանալ։ Ամեն ինչ պարզվեց։ Խորամանկ հայ տղան, որը խուլ ու համր էր ձևանում, լեռան բարձունքներում կովողներից էր, հանդուգն լրտես։ Ժամանակ չպետք է կորցնեին։ Քաշքշելով տարան ուժասպառությունից օրորվող գերուն։ Այն երբի նեղ ձորով դուրս բերեցին մեծ ճանապարհը։ Այստեղ Ստեփանին պահեցին այնքան, մինչև հայտնվեց Անթաքիեից Սուեդիա գնացող առաջին եղասայլը։ Սայլվորն ստիպված փոխեց ուղղությունը, որ կատարի պետության հանդեպ ունեցած իր պարտականությունը։ Դահիճներն իրենց գերուն սայլը բարձրացրին։ Սևամորուքը պպզեց տղայի մոտ, իսկ տարեցը քայլեց սայլի կողքից, բորբոքված սկսեց բացատրել ամբողջ վտանգի էությունը, վտանգ, որը նա մտադիր էր անմիջապես վերացնել։

Սակայն այժմ, երբ Ստեփանի ճակատագիրն արդեն վճռված էր, երկ-

նային բարեգութ զորությամբ նրա հոգուց ու մտքից լիովին դուրս մղվեց ներկա վիճակի զգացողությունը։ Տղայի գլուխն ընկավ իր մահացու թշնամու գոգը։ Եվ զարմանալի բան։ Կատաղի մահմեդականը չվանեց իր զոհի գլուխը։ Մնաց նույն դիրքով նստած։ Կարծես չէր շարժվում, որ նրան ցավ չպատճառի։ Սեամորուքն իր խղճի նեղ խցիկում անտանելի դառնություն էր զգում, երբ նայում էր իր գոգին դրված այրվող դեմքին, իրեն սեեռված, բայց ոչինչ չտեսնող բաց աչքերին, երբ լսում էր կարմիր, արնագույն շուրթերից հառնող տենդահար շնչառությունը։ Առհասարակ նրան հուզում էր գերու մանկական ամբողջ դյուրահավատ մոտիկությունը։ Բայց ի՞նչ աներ։ Այդպես էր աշխարհի կարգը։ Պետք է հնազանդվեր։

Ստեփանը ոչինչ այլևս չգիտեր Մուսա լեռան մասին, իր գրված հաուբիցների, այն հինգ քնաթաթախ թուրքերի մասին, որոնց վայր տապալեց հինգ դիպուկ կրակոցով։ Հայկը նրա համար արդեն ոչինչ չասող անուն էր, Իսկուհին՝ հովի շունչ։ Թվում էր, թե նորից կրում է դպրոցական համազգեստն ու թելավոր բարձրաճիտ կոշիկները, որ զարմանալիորեն լա՞վ էին նստում տղայի մաքուր, ոչ մի վերք չտեսած ոտքերին։ Նորից զբոսնում էր մեծ, հիասքանչ քաղաքի փողոցներում, գեղատեսիլ ծովեզերքին։ Մայրիկի հետ ապրում էր Մոնթռեոյի «Պալասօթելում», նստում էր սպիտակ սփռոցով ծածկված մաքո՞ւր, մաքո՞ւր սեղանի առաջ, խաղում էր զբոսայգու խճածածկ անցուղիների վրա, իր պես փայփայված երեխաների հետ նստում էր դպրոցի սպիտակ դասարաններում։ Երևակայության մեջ երբեմն փոքր էր, երբեմն ավելի շատ։ Բայց միշտ էլ շուրջը խաղաղություն էր, գգվանք ու փայփայանք։ Մայրիկը կարմիր հովանոց ուներ։ Դրա տակ նրա դեմքն այնպես էր շառագունում, որ Ստեփանը երբեմն դժվարությամբ էր ճանաչում։

Այս ամենը հարուստ չէր հետաքրքիր իրադարձություններով, բայց այնքան անդորրավետ էր, այնքան սքանչելի, որ Ստեփանը նույնիսկ չնկատեց Վաքըֆի առաջ կանգնած զափթիեների պահականոցը։ Երկու ոստիկանից մեկը, իբրև օժանդակ ուժ, նստեց սեամորուքի կողքին և ամուր բռնեց բանտարկյալի ոտքերը։ Վաքըֆում կառքին ավելի մեծ թվով զափթիեներ միացան։ Որքան առաջ էին գնում հավտում սփռված գյուղերի միջով, այնքան ավելի հետաքրքրություն էր առաջացնում զինված պահակախումբը։ Կառքին հետևում էր նոր տնատերերի և նոր հողատերերի մի ահագին բազմություն՝ տղամարդիկ, կանայք, երեխաներ։

Միջօրեից առաջ թափորը հասավ Յոզոնսլուքի եկեղեցու բակը։

Այստեղ հազարից ավելի մարդ կար հավաքված։ Դրանց մեջ բազմաթիվ հին ու նոր դինվորներ կային, որոնք այժմ ծառայում էին շրջակա գյուղերի կայազորում։

Բագրատյանի ամառանոցից անմիջապես կանչեցին շիկահեր մյուդիրին։

Զափթիեները Ստեփանին կառքից իջեցրին։ Ինչ-որ պաշտոնյայի հրամանով ոտքից գլուխ մերկացրին, որ ստուգեն թաքցրած որևէ փաստաթղթի։ Տղան անձայն հնազանդվեց։ Նա լի էր անխռով անտարբերությամբ, մի բան, որ բազմությունը համարում էր խորամանկության նշան և գաղտագողում։ Նախքան լրիվ մերկացնելը, ինչ-որ մեկը ծոծրակին բռունցքի հարված հասցրեց։ Բայց դա ուղղակի ողորմածություն էր։ Դրանից Ստեփանն իր գիտակցությունը լրիվ չկորցրեց։ Բայց ավելի խորն ընկղմվեց այն գեղեցիկ աշխարհը, որտեղ ամեն ինչ բարեկիրթ էր։

Մինչ այդ զափթիեները ուսապարկից դուրս բերին լուսանկարչական գործիքը և Զեքսոնին ուղղված նամակը։

Մյուդիրը բարձրացրեց գործիքը, թափահարեց տարեմուտի առթիվ ստացած այդ անմեղ նվերը, որը հավաքվածներից շատերի համար անծանոթ ու վտանգավոր բան թվաց.

— Սա մի գործիք է, որով աչքի են ընկնում բոլոր լրտեսները։

Այնուհետև ի լուր ամբողջ ժողովրդի, զրնգուն ու հաղթական ձայնով կարդաց ու թարգմանեց ամերիկյան հյուպատոսին ուղղված դավաճանական նամակը։ Ընթերցմանը հաջորդեցին ատելության որոտաձայն աղաղակներ։

Մյուդիրը մոտեցավ Ստեփանին, իր մաքուր, ներկված եղունգներն առաջ պարզելով՝ բռնեց տղայի կզակը, կարծես ուզում էր քաջալերել.

— Հապա, ասա, ի՞նչ է անունդ, տղա։

Ստեփանը ժպտում էր ու լռում։ Իրականության ծովը նրա համար ծփում էր հեռո՞ւ հեռվում։ Բայց շիկահերը հիշեց ամառանոցի հյուրասրահում կախված մանկական լուսանկարը։ Ամենայն հանդիսավորությամբ շրջվեց դեպի բազմությունը.

— Եթե սա չի ուզում ասել, ապա ե՞ս կասեմ։ Այս տղան Բագրատյանի որդին է...

Դաշույնի առաջին հարվածն իջավ Ստեփանի թիկունքին։ Տղան ոչինչ չզգաց, քանի որ հենց այդ պահին, երևակայության մեջ, ինքն ու մայրիկը գնացել էին կայարան՝ Շվեյցարիայից Փարիզ վերադարձող հայրիկին դիմավորելու։ Մայրիկի ձեռքին դարձյալ կարմիր հովանոցն էր։ Հայրիկը դուրս եկավ բա՞րձր, բա՞րձր դարպասից, մեն-մենակ։ Զյան

պես սպիտակ կոստյումով էր, գլխաբաց։ Մայրիկը ձեռքով արեց։ Օրը նա փոքրիկ որդուն նկատեց, անսահման գորովանքով թևերը բացեց։ Քանի որ այն ժամանակ Ստեփանն իրոք շատ փոքր էր, հայրիկը նրան բարձրացրեց, սեղմեց սրտին, երջանկությունից ճառագայթող դեմքին, բարձրացրեց գլխից վեր, ավելի ու ավելի բարձր...

Առաջին մարդը, որն այլանդակված դիակը մութն ընկնելուց հետո տեսավ, դա Նունիկն էր։ Գազանային սպանությունից հետո զափթիևները Ստեփանի մերկ մարմինն անմիջապես նետել էին Յողոնօլուքի գերեզմանատունը։ Նունիկը ժամանակին հասավ, դիակը փրկեց վայրենացած շներից։ Անապատան տղաներից մեկին ուղարկեց ավերակները՝ բոլորին կանչելու։ Արտակարգ դեպք էր պատահել, և ամեն ահ ու երկյուղ պետք է մի կողմ դնեին։ Բարերար Ավետիս Բագրատյանի սերունդն արդեն մեկընդմիշտ մնացել էր անշառավիղ։ Բայց և հասել էր այն ժամը, երբ, Տեր-Հայկազունի ցանկության համաձայն, պետք է լեռն ի վեր տանեին Բագրատյանի որդուն։ Հատուցումից հրաժարվել չէին կարող։ Ուրեմն՝ ապահով կյանքի հույս կար։

Փոքր խմբերով հավաքվեցին բոլոր գերեզմանաբնակները։ Եղերամայրերն իսկույն գործի անցան։ Գեղեցիկ պատանու բզկտված մարմնի վրայից մաքրեցին արյունն ու կեղտը։ Վեհանձն Նունիկը Բագրատյանի ընտանիքի համար զոհողություն արեց։ Իր աննկարագրելի տոպրակի միջից դուրս բերեց մի սպիտակ, երկար շապիկ, դրա մեջ փաթաթեց Ստեփանի մարմինը։ Այս վերջին արարողության պահին մարգարեի գլխով մի կույր ծերունի երգաձայն մրմնջաց.

— Ախր գառան արյունը տա՜ն կողմը հոսեց...

Իրենց գործն ավարտելուց հետո Նունիկը, Վարդուկը, Մանուշակն ու մյուս եղերամայրերը շալակեցին ծանր տոպրակները։ Բեռան տակ կքված՝ ճանապարհ ընկան։ Կեսգիշերը վաղուց էր անցել։ Անխոս և կիսալուսնի ցոլքի տակ գրեթե անտեսանելի թափորը շարժվեց դեպի Դամլաջրք։ Վճռված էր անցնել գաղտնի ճանապարհով, հրդեհից զերծ մնացած տեղերով և դուրս գալ Քաղաքաձոր։ Երկար գավազանը ձեռքին՝ առջևից գնում էր Նունիկը, իբրև ռահվիրա։ Երբ մտան անտառ և իրենց ապահով զգացին, երկու ջահ վառեցին, բռնեցին դագաղի երկու կողմից, որպեսզի հանգուցյալը չմնա առանց լույսի, առանց մեծարանքի։

ԳՈՒՍ ԵՐՐՈՐԴ

գաբրիել Բագրատյանը գիշերները դարձյալ քնում էր հյուսիսային խրամատներում։ Ստեփանի անհայտացման առաջին իսկ երեկոյան կրկին ստանձնել էր գլխավոր հրամանատարի պարտականությունները։ Այդ բանը թախանձագին խնդրեց Տեր-Հայկազունը, որին անհանգստացնում էր կարգապահության նկատելի անկումը։

Բագրատյանն այս անգամ պետք է դրսևորեր առավել սառնարյունություն և կամքի առավել մեծ ուժ, քան երեք ճակատամարտի ժամանակ, քանի որ վերջին օրերին դողում էին ձեռքերը, բերանը ոչ մի պատառ հաց չէր դնում, ոչ մի վայրկյան աչքը չէր փակում։ Սարսափելին ոչ միայն Ստեփանի անհայտ ճակատագիրն էր, այլև այն, որ նրան գտնելու, փրկելու ոչ մի հեռանկար չկար։ Հուսահատության առաջին պահերին ուզեց արշավանքի դուրս գալ։ Մի՞թե չէր կարող նորից ոտքի հանել իր «թեթև գվարդիան», հանդգնորեն դուրս գալ մինչև Հալեպի ճանապարհը։ Գիշերային արյունահեղ գրոհներով, ամեն ինչ հրի ճարակ դարձնելով և շրջակայքը ահ ու սարսափի մեջ գցելով, թերևս, հաջողվեր գտնել Ստեփանին ու Հայկին։ Բայց նա իր մտքից, իհարկե, իսկույն վանեց այդ ռոմանտիկ պլանը։ Մի՞թե իր սեփական որդու պատճառով իրավունք ուներ բախտախաղի դնելու հարյուրավոր կյանքեր, դիմելու ինչ-որ խելահեղ արկածախնդրության։ Չէ՞ որ Ստեփանն ինքնագլուխ կերպով կատարել էր այն, ինչ Հայկը կատարում էր ժողովրդի հանձնարարությամբ։ Առհասարակ ոչ մի հիմք չկար խառնելու ամբողջ աշխարհը։

Բագրատյանը կրկին աշխատանքի նետվեց խեղդվողի հուսահատությամբ։ Սննդի պակասության պատճառով զինվորները դարձել էին թուլակամ, անտարբեր։

Առաջավոր գծի զինվորները և պահեստայինները արդեն հավատացած էին, թե քաղցից մորմոքող ստամոքսով, ձեռքները ծալած՝ պետք

սպասեն մահվան։ Մինչդեռ դրությունը փոխվեց։ Կարգապահությունը սոսկալի խստացավ։ Ջուլ Նուրհանին հրաման տրվեց ամեն օր փորձնական ճակատամարտեր մղել։ Ամեն ինչ ընթացավ նախկին հունով։ Ոչ ոք իրավունք չուներ իր դիրքից հեռանալու, նույնիսկ ազատ ժամերին։ Քաղաքաձոր գնալու թույլտվություն ստանում էին միայն ծայրահեղ դեպքերում։ Պահեստայինները ծանր աշխատանքով էին զբաղված։ Թուրքերի հետագա մեծ հարձակումները նկատի ունենալով, անհրաժեշտ էր ոչ միայն կարգի բերել խրամատները, այլև հակառակորդին մոլորության մեջ գցելու նպատակով դրանք մասամբ տեղափոխել, մասամբ էլ նոր, հղոր պատնեշներ կառուցել, խրամատները դարձնել անառիկ։

Գաբրիելը, Ավագյանն ու Շատախյանը ժամերով նոր պլաններ էին գծագրում։ Դրանց անհրաժեշտությունն անհետաձգելի էր։ Վերջին օրերին ամեն ինչ անդադար շարժման մեջ էր։ Ոչ ոք չէր կարող ընդդիմանալ Բագրատյանի այդ հուսահատ եռանդին։ Բայց նրա անհանգիստ պահանջկոտությունը ո՛չ գրգռում էր, ո՛չ էլ ատելություն առաջացնում, այլ ընդարմացած հոգիները աշխուժացնում էր, տոգորում հավատով, կռվելու պատրաստակամությամբ։ Պաշտպանների կյանքը թուլության կարճատև միջնախաղից հետո կրկին ստացավ իմաստ ու նպատակ։

Գաբրիել Բագրատյանն իր անձի հանդեպ որևէ դիմադրություն չէր նկատում, բայց սոսկալի մենակություն էր զգում։ Ճիշտ է, անցյալում ևս նրա, ավագների ու հասարակ մարդկանց միջև մտերմություն չկար։ Չկար նաև իսկական բարեկամություն։ Հնազանդվում էին, իբրև գլխավոր հրամանատարի, ցույց տալիս հարգանք, նույնիսկ երախտագիտություն, բայց նա և մուսալեռցիները տարբեր մարդիկ էին։ Հիմա նրանից արդեն խուսափում էին բոլորը, նույնիսկ Արամ Թովմասյանը, որը սովորաբար ամեն առիթով գալիս էր մոտը, զրուցում։ Գաբրիելը նկատել է, թե ինչպես իր խրամատային ննջատեղի աջ և ձախ կողմի հարևանները հեռու էին քաշվել։ Հարցին մակերեսայնորեն մոտենալու դեպքում դա կարելի էր բացատրել հետևյալ կերպ։ Գաբրիելն ամեն օր մեկական ժամ, անգամ ավելի երկար, լինում էր իր հիվանդ կնոջ մոտ։ Ուրեմն՝ կարող էր վարակ տարածել։ Բայց այս արտաքին պատճառաբանության ետևում շատ ավելի բարդ հանգամանքներ կային քողարկված։ Բագրատյանը մի մարդ էր, որի գլխին փորձանք էր եկել և կարող էր գալ առավել սոսկալի դժբախտություն, ինչպես շատերն էին զուշակում։ Ճակատագրի հարվածների տակ ընկած մարդու հանդեպ կա համամարդկային երկյուղ։ Հենց դա էր նրան մեկուսացնում, շուրջն ստեղծում մերժման մթնոլորտ։

Ինչ վերաբերում է գաղթականում տիրող համաճարակին, ապա դա սահմանափակ բնույթ էր կրում և չէր սրվում։ Մուսալեռցիները դրա համար մեծապես պարտական էին բարենպաստ եղանակին, մասամբ էլ բժիշկ Ալթունուն։ Հարյուր երեք հիվանդներից մինչև այժմ մեռել էին միայն քսանչորսը։ Ավագների խորհուրդը բժշկի տրամադրության տակ էր դրել սանիտարական մի ամբողջ հանձնաժողով, որի մեջ մտնում էր նաև պատվելի Արամը։ Այս հանձնաժողովն օրական մի անգամ ստուգում էր ամբողջ Քաղաքաձորը՝ խրճիթ առ խրճիթ։ Եթե բնակիչներից մեկի մոտ տենդային տկարության որևէ նշան էին հայտնաբերում, ապա այդպիսին իր վերմակն ու բարձն առած անմիջապես տեղափոխվում էր համաճարակի համար հատկացված անտառամասը, սուր վարակիչ հիվանդանոցը։ Հիվանդների համար այս ստվերախիտ պուրակում ապրելը հաճելի էր և նպաստավոր։ Եթե անձրև գար, դրությունը սոսկալիորեն կփոխվեր։ Բայց փառք աստծո, առաջին օրերի ամպրոպին երկրորդը չէր հաջորդում։ Այս տեսակետից սիրիական ամառը երկնային ողորմածություն էր, բայց ոչ հրաշք։

Պետրոս Ալթունին օրը երկու անգամ ավանակով այցելում էր Ժուլիեթին։ Ծերունուն զարմացնում էր հիվանդության անսովոր ընթացքը։ Ճգնաժամը շատ էր ձգձգվում։ Ջերմությունը առաջին իսկ նոպայից հետո փոքր-ինչ իջել էր, չնայած հիվանդը ուշքի չէր գալիս։ Բայց և այնպես ուրիշների նման ո՛չ խոր անզգայության մեջ էր ընկնում, ո՛չ էլ զառանցում էր։ Հիվանդն ընկղմված էր կապարի պես ծանր քնի մեջ։ Բայց այդ վիճակում, առանց արթնանալու, կարողանում էր գլուխը շարժել, բերանը բացել, կուլ տալ Իսկուհու տված կաթը։ Երբեմն մի քանի բառ էր թոթովում, սակայն արդեն ուրի՞շ, ուրի՞շ աշխարհից։

Այդ օրերին Իսկուհին ոտքը վրանից գրեթե դուրս չէր դնում, քանի որ Մայրիկ Անթառամն աշխատանքով ծանրաբեռնված էր և հայտնվում էր երբեմն։ Աղջիկն իր անկողինը մոտեցրել էր Ժուլիեթի անկողնուն, քնում էր նրա կողքին։ Օվսաննային ու երեխային այլևս չէր տեսնում, չէր էլ կարող։ Չնայած իր հաշմանդամությանը, հմտորեն էր կատարում հիվանդապահի պարտականությունները։ Քանի որ երկրորդ օրվանից հիվանդության վրա ավելացել էր նաև թարախային անգինան, Ժուլիեթը շատ անգամ կաթը կուլ տալ չէր կարողանում։ Իսկուհին այդ բոլոր հոգսերից բացի, լվացք էր անում, փոխում հիվանդի սպիտակեղենը։ Ժուլիեթի սպասուհիներն իրենց հեռու էին պահում։ Վարակվելուց վա-

խենում էին և մեծ տհաճությամբ էին ձեռք տալիս հիվանդին ու նրա իրերին։ Մեծ մասամբ հայտնվում էին իրիկնադեմին, վախվխելով գլուխները երկարում, ներս նայում, վրանը չմտած անհետանում։ Վերջապես ի՞նչ գործ ունեին այդ օտար, խայտառակված կնոջ հետ։ Այնպես որ հոգսերի ամբողջ բեռն առայժմ ընկած էր միայն Իսկուհու ուսերին։ Գիշեր-ցերեկ խնամում էր ուշակորույս հիվանդին, թեև Ֆրանսուհու նկատմամբ նա իր սրտում կարեկցանքի ոչ մի հյուլե չէր զգում։ Երբ բժշկի կինը գալիս էր աղջկան փոխարինելու, ապա սրան գրեթե ուժով էր վրանից դուրս հանում, որպեսզի սա մի քանի ժամ հանգստանար։ Բայց Իսկուհին նստում էր վրանի առաջ և չէր հեռանում։ Երբ ոտնաձայն էր լսում, կամ մեկնումեկը երևում էր, վախենում էր, աշխատում էր թաքնվել։ Եղբորը կամ հորը հանդիպելու մտքից սոսկում էր։ Իրեն ամենից լավ էր զգում գիշերն ու առավոտն իրարից զատող այն պահին, երբ, ինչպես այժմ, վրանի առաջ նստած՝ սպասում էր Գաբրիելին։ Գլխավոր հրամանատարը հաճախ գալիս էր այս ամենամենավոր ժամին, քանի որ ամբողջ գիշերը հյուսիսային խրամատում մնալ չէր կարողանում։

Գաբրիելը եկավ, Իսկուհու ետևից ներս մտավ, մոտեցավ Ժուլիեթի անկողնուն։ Հայելավոր փոքրիկ սեղանի վրա դրված նավթի լամպն իր ամբողջ լույսը շռայլում էր հիվանդի սնարին։ Ալթունին պատվիրել էր հիվանդին ուշի-ուշով հետևել, քանի որ կարող էր հանկարծ արթնանալ, կամ կարող էր սկսվել սրտի թուլության նոպան։ Գաբրիելը խոնարհվեց կնոջ վրա, իրարից հեռացրեց թարթիչները։ Կարծես ուզում էր լույսի ազդեցությամբ սթափեցնել հիվանդին։ Ժուլիեթն անհանգիստ շարժում արեց, ցնցվեց, խոր թառանչ արձակեց, սակայն չսթափվեց։ Իսկուհին պատմեց այն ամենը, ինչ տեղի էր ունեցել օրվա ընթացքում։ Վրանում խոսում էին միայն գործին վերաբերող նյութից։ Վրանի առաջ էլ իրենց ապահով չէին զգում։ Մի անգամ, երբ թև-թևի շրջում էին Երեք վրանի հրապարակում, Իսկուհին նկատել էր, թե ինչպես Օվսաննան մուտքի վարագույրը փոքր-ինչ ետ էր տարել և գողունի հայացքով հետևում էր զույգին։ Այդ պատճառով էլ այսօր հիվանդի մոտից շատ զգուշորեն դուրս եկան և գնացին «զբոսայգին», նստեցին մրտենիներով ծածկված այն նստարանին, որտեղ օրեր առաջ Ժուլիեթը դիմավորում էր իր երկրպագուին։ Այստեղ լավ էին պատսպարվում։ Չնայած այդ խորն առանձնությանը, իրար չէին գգվում, խոսում էին շշուկով։

— Գիտե՞ս ինչ, Իսկուհի։ Սկզբում ինձ թվում էր, թե ես կորցնում եմ դատողությունս։ Բայց այն պահին, երբ զգացի քո ներկայությունը, այդ սոսկալի մտորումները փարատվեցին։ Այժմ ես կրկին ազատ եմ։ Հանգիստ եղիր։ Ամեն ինչ լավ է։ Այսպես երկար չի շարունակվի։

Մեջքը հենեց նստարանին, ինչպես ցավից տառապող մի մարդ, որը վերջապես հարմար կեցվածք է ընդունել, այլևս չի տանջվում և ուզում է այդ կեցվածքով նստել, մնալ.

— Ես սիրելի եմ Ժուլիեթին և երևի հիմա էլ դեռ սիրում եմ։ Իհարկե, նախկին Ժուլիեթին։ Բայց, Իսկուհի, ի՞նչ է իմ ու քո միջև եղածը։ Մի՞թե ես քեզ պետք է գտնեի իմ կյանքի վերջում, երբ եկա այստեղ ոչ թե պատահաբար, այլ... Բայց ո՞վ կարող է այս բանը բացատրել։ Իմ ամբողջ կյանքում ես միայն օտարներին եմ որոնել։ Օտարն ինձ միշտ գայթակղել է, թեև երբեք չի երջանկացրել։ Ես ես հրապուրել եմ օտարին, և երբեք չեմ երջանկացրել։ Իսկուհի, մարդ պետք է ապրի միայն մի կնոջ հետ։ Երբ հայտնվում է քեզ պես ճշմարիտ մի քույր, արդեն շատ ուշ է լինում...

Իսկուհին կողքանց նայեց հազիվ շարժվող թփին.

— Եթե մենք հանդիպեինք ինչ-որ տեղ դրսում, ազատ աշխարհում, մի՞թե այն ժամանակ էլ դու իմ մեջ քույր կտեսնեիր...

Աղջկա ձայնի մեջ ոչ մի ստվեր չկար.

— Ես իսկույն զգացի, թե ով ես դու ինձ համար։ Դեռևս եկեղեցում, երբ նոր էինք եկել Զեյթունից...

— Այն ժամանա՞կ։ Մտքովս երբեք չի անցել, թե մարդ չպետք է լինի այն, ինչ է։ Մի ժամանակ կարծում էի, թե մարդ սովորում է, զարգանում... Ճշմարիտը հակառակն է։ Մարդը ս պ ա ռ վ ո ւ մ է։ Այն, ինչ կատարվում է ինձ հետ, քեզ հետ, ամբողջ ժողովրդի հետ, դա սպառման պրոցես է։ Ի՞նչ անմիտ բառ մարդկային էությունը բնորոշելու համար։ Բայց ես զգում եմ, թե ինչպես եմ հալչում։ Այն ամենը, ինչ ավելորդ է, անցողիկ, թռչում է, գնում։ Շուտով ես կլինեմ մի կտոր մետաղ, ես այդ նախազգում եմ։ Տեսնո՞ւմ ես, հենց դրա համար էլ Ստեփանը կորավ...

Իսկուհին բռնեց նրա ձեռքը.

— Ինչո՞ւ ես այդպես խոսում։ Ինչո՞ւ պետք է Ստեփանը կորչի։ Ուժեղ պատանի է։ Հայկը ողջ ու անվնաս կհասնի Հալեպ։ Ինչո՞ւ Ստեփանն էլ չպետք է տեղ հասնի։

— Ստեփանը Հալեպ չի գնա... Լավ մտածիր, թե ինչ է տեղի ունեցել։ Եվ այս ամենը ծանրացել էր տղայի սրտին։

— Գաբրիել, այդպիսի բաներ մի՛ խոսիր։ Դրանով որդուդ կվնասես։ Իսկ ես հույս ունեմ, որ նա կգա։

Հանկարծ Իսկուհին գլուխը դարձրեց դեպի հիվանդի վրանը։ Գաբրիելի մտքով ինչ-որ բան անցավ, ինքն էլ չիմացավ, թե ինչու։ Նրան թվաց, թե Իսկուհին Ժուլիեթի մահն է ցանկանում։ Եվ պետք է ցանկանար։

Իսկուհին ոտքի թռավ.

— Չե՞ս լսում։ Կարծեմ Ժուլիեթը կանչում է։

Գաբրիելը ոչինչ չէր լսել, բայց Իսկուհու ետևից շտապեց վրան։

Անկողնում Ժուլիեթը գալարվում էր այնպես, կարծես շղթայված էր և ուզում էր ազատվել։ Ո՛չ ուշակորույս էր, ո՛չ սթափված։ Կծոտված շրթունքները ծածկված էին սպիտակ փրփուրով։ Շառագունած այտերից զգացվում էր, որ վերջին րոպեներին ջերմությունը բարձրացել է, հասել իր ծայրագույն սահմանին։ Նա կարծես ճանաչեց Գաբրիելին։ Խարխափող ձեռքերով կառչեց ամուսնու բաճկոնից։ Գաբրիելը հազիվ կարողացավ հասկանալ կնոջ հարցը՝ խռպոտ ու թոթով.

— Այս ամենը ճշմարի՞տ է... Այս ամենը ճշմարի՞տ է...

Պատասխանն ուշացավ։ Ժամանակի այդ փոքրիկ բեկորը կարծես սառցեղեն լռությունից էր ստեղծված։ Կնոջ վրա խոնարհված, հիպնոզացնողի նման, Գաբրիելը վանկ առ վանկ արտասանեց.

— Ոչ, Ժուլիեթ, ճշմարիտ չէ... Այդ ամենը ճշմարիտ չէ...

Ցնցող հառաչանք.

— Փա՜ռք աստծո... Այդ ամենը ճշմարիտ չէ...

Ջղաձգումները մեղմացան։ Ծնկները վեր քաշեց. կարծես ուզում էր անմեղապարտ սողոսկել տենդի մայրական արգանդը։ Գաբրիելը ստուգեց զարկերակը։ Բաբախումն անկանոն էր։ Թվում էր, թե ներսից փոքրիկ թռչուն է թույլ կտցահարում։ Կարելի էր կասկածել, թե Ժուլիեթը կարող է ապրել մինչև առավոտ։ Պետք է դեղ հասցնեին։ Իսկուհին գդալով ատամների արանքից ներս լցրեց հեղուկ դեղը։

Ժուլիեթը նորից սթափվեց, փորձեց նստել, տնքաց.

— Ստեփանին էլ... կաթը... շմոռանաք տալ...

Պատվելի Աբամի անհաջողության օրն էր։ Լույսը չբացված լապտերը կախեց գոտուց, ծովեզրյա ժայռերով ցած իջավ, որ ստուգի իր մտահղացման՝ ձկնորսական գործի առաջին արդյունքները։ Լաստն արդեն պատրաստ էր։ Երիտասարդները խաղաղ գիշերով, ցանցերով ու փոքրիկ լապտերներով, դուրս էին եկել ծովափ ձուկ բռնելու։ Դա հովտում նրանց սովորական գործն էր։ Պատվելին կլանված էր իր գաղափարով։ Այդ բանի մեջ տեսնում էր ոչ միայն անունը բազմազան դարձնելու և

սննդի պակասը լրացնելու միակ հնարավորությունը, այլև մոտալուտ սովից փրկվելու միակ ելքը։ Մի՞թե բավականաչափ եռանդ գործադրելու դեպքում չէր կարելի օրական երկու-երեք հարյուր օխա ձուկ որսալ ծովից։ Որքան էլ խնայողաբար մորթեին անասունները, վեց շաբաթ հետո չքանալու էր վերջին ոչխարը, այն էլ լավատեսական հաշվումներով։ Եթե Արամ Թովմասյանին հաջողվեր զարկ տալ ձկնորսությանը, ապա ծովը մարդկանց նոր արիություն և դիմադրողական նոր ուժ կներշնչեր։ Կյանքի անսպառ աղբյուր ունենալու գիտակցությունն արդեն կարող էր հրաշքներ գործել։

Բայց երբ երիտասարդ պատվելին վաղորդյան կանաչավուն լույսի ներքո լայն-լայն քայլերով ցած էր շտապում ավազների խորհրդի որոշմամբ բացված նոր արահետով, ո՛չ ոչխարի ու կաթի մասին էր մտածում, ո՛չ էլ իր ձկների։ Նրա սրտի վրա բոլորովին այլ հոգսեր էին ծանրացել, ընտանիքի հոգսերը։ Բայց այդ ի՞նչ ավելորդ տագնապ է, ավելորդ հուզում, Արա՜մ Թովմասյան։ Այնպես ես ցույց տալիս, թե փոքրիկ որդիդ, այդ խղճուկ որդը, երբևէ չափահաս մարդ է դառնալու, որի ապագայի մասին պարտավոր ես հոգ տանել։ Ցույց ես տալիս, թե իբր ապրում ես օրինապահ հասարակության մեջ, որտեղ աղջկա պատիվը ջերմ հովանավորության առարկա է։ Ի՞նչ օգուտ դրանից։ Աստծո ողորմածությամբ մարդուն այնպիսի հատկություն է շնորհված, որ նա ամեն ինչի կհավատա, բայց ո՛չ իր կործանմանը, եթե նույնիսկ դրա եզրին է կանգնած։

Թովմասյանի սրդին արդեն տասնվեց օրական էր։ Ուներ հայկական խոշոր, հինավուրց աչքեր։ Բայց շրջապատին նայում էր անտարբեր հայացքով։ Դեռևս չէր արձակել ոչ մի ճիչ։ Եվ եթե որևէ ձայն էր հանում, ապա դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ խուլ հեծկլտոց։ Օրեցօր անհետանում էր մանկան տկարությունը որևէ թյուրիմացության հետ կապելու հույսը։ Մի՞թե երեխան կույր և համր էր ծնված։ Սակայն խալը մեծանում էր, այդ առեղծվածային նշանը։ Կարծես հենց ինքը՝ Մուսա լեռն էր անտեսանելի դրոշմ դրել իր անդրանիկ շառավիղի կրծքին։ Ո՜ւմ ասես, որ չէին դիմում Թովմասյանները, խորհուրդ չէին հարցնում իրենց գլխին եկած դժբախտության վերաբերյալ։ Պետրոս Ալթունուց և Մայրիկ Անթառամից՝ բժշկական գիտության պաշտոնական ներկայացուցիչներից բացի, նրանք գիմում էին գաղթականի բոլոր հասկացող և չհասկացող կանանց։ Շարունակ նույն բաներն էին լսում, դժբախտության հետ կապված նույն համոզիչ և էժանագին բացատրությունները, որոնք ոչ մի օգնության ճանապարհ ցույց չէին տալիս։ Մարդիկ ամեն

ինչ կապում էին Զեյթունի, Օվսաննայի ծանր ապրումների, տարագրության, Յողոնօլուք գալու դժվարությունների, հետագա հուզումների և պախստյան հետ։ Այդ բոլոր սոսկալի բաները պետք է որ երեխայի վրա ազդած լինեին մոր արգանդում։ Ի՞նչ օգուտ նման սփոփանքներից։ Քանի որ ոչ մի զորավոր միջոց չկար, Օվսաննան ապավինեց Նունիկի արվեստին։ Սակայն այն բանից հետո, երբ հովիտը լցվեց նոր հարձակման պատրաստվող թուրքերով, մահվան և ծննդյան եղերամայրերը Դամլաջրք գալ այլևս չէին համարձակվում։

Օվսաննային բնավ չէին գոհացնում այն բացատրությունները, որոնցով մարդիկ տրամաբանորեն հիմնավորում էին երեխայի սարսափելի ճակատագիրը։ Նա իրեն համարում էր աստծուց պատժված։ Իզուր չէր մեծացել բարեպաշտ ընտանիքում։ Երեխան պետք է շնորհ լինի։ Մինչդեռ իր որդին պատիժ էր։ Աստված պատիժը տալիս է մեղքերի համար։ Օվսաննան չգիտեր, թե ինչ մեղք է գործել ինքը կամ իր ամուսինը։ Իր խիղճը քննելիս Արամին ամբաստանելու որևէ հիմք չէր գտնում։ Բայց քանի որ մեղքի գոյությունը կասկածից դուրս էր, ապա երիտասարդ մայրը դա որոնում էր ուրիշների մեջ, այն էլ իր նեղ շրջապատում։ Արամի անմեղությունն աներկբա էր։ Ինքը՝ Օվսաննան, մոլեռանդ հավատարմության տեր կին էր և իրենց ամուսնության վրա որևէ բիծ չէր տեսնում։ Հապա որտե՞ղ էր մեղքը, որի ստվերն ընկնում էր անմեղ երեխայի վրա։ Անեծքի առաջին պատճառը, անշուշտ, Ժուլիեթ Բագրատյանն էր։ Ամուսնական հավատարմությունը դրժած կնոջ, այդ պչրուհու, այդ անաստվածի, այդ օտարուհու մեջ էր նա տեսնում մեղքի մարմնացումը, մեղք, որի հետևանքները տարածվում են ամեն ինչ լափող քաղցկեղի նման։ Եվ իրենք անամոթաբար ապրում էին այդ կնոջ վրանում, քնում էին նրա անկողնում, նրա ափսերներով ուտում նրա ճաշերը, քանի որ ստիպված էին հիմարություն և երկերեսանություն անել, չուզեցին հրաժարվել հարմարավետ պայմաններից, չուզեցին մաքուր սրտով հաղորդակից լինել բոլոր ընտանիքներին վիճակված աստվածառաք աղքատությանը։

Սակայն այսքանով չսահմանափակվեցին Օվսաննայի խորհրդածությունները։ Ճշմարտությունը դանդաղ թափանցեց նրա սիրտը, որը և անհագորեն դրան էր ձգտում։ Իսկուհի՞ն։ Ո՛չ մի կասկած։ Օվսաննան գիտեր, թե ինչ է կատարվում իր դեռատի տալի հետ։ Դա էլ շնացող էր, անզուսպ, անհավատ, անվերապահորեն անձնատուր էր եղել մեղքին։ Մի՞թե այդ աղջիկը միշտ էլ ինքնագլուխ, եսամոլ, հաճոյասեր չէ՞ր դեռևս Զեյթունում, երբ Արամն իր կնոջից խստորեն պահանջեց մի հարկի տակ

ապրել նման արարածի հետ։ Սակայն Արամը երբեք չէր ուզում տեսնել ճշմարտությունը և ուղղակի անհնարին էր ճշմարիտ խոսք ասել Իսկուհու՝ նրա սիրեցյալ քրոջ մասին։ Երբ Օվսաննան խեղճ երեխայի կնունքի ժամանակ լաց լինելով դուրս վազեց, դեռևս այդ ժամանակ, ինչ-որ ներքին մարգարեությամբ, կանխազգաց գալիքը, թեև մինչ այդ ոչինչ չգիտեր։ Բայց այժմ ամեն ինչ գիտեր։ Գիտեր, որ իրենց որդին աստծո անեծքի տակ է ընկել։ Այլևս չէր լալիս։ Խելագարի պես բռունցքները սեղմած՝ շարունակ ետ ու առաջ էր քայլում հինգ քայլ տարածություն զբաղեցնող վրանում։ Բայց այս գիշեր Օվսաննան այլևս չկարողացավ լռել, Արամից պահանջեց վաղն եթե տեղափոխվել հայր Թովմասյանի խրճիթը։ Երեխան Բագրատյանների մեղքի ճահճում մնալով, երբեք չի ազատվի աստծո պատժից։

Իր կնոջ հոգեկան խանգարման պատճառով խորապես տառապող պատվելին տարակուսանքով նայեց նրան.

— Եթե տիկին Բագրատյանը մեղավոր է, ապա դա ի՞նչ կապ ունի աստծո պատժի և մեր երեխայի հետ։

Օվսաննան կրծքից հեռացրեց երեխային, զգալով, թե ինչպես է իր կաթը թունավորվում եռացող բարկությունից։

— Ասել կուզի՝ դո՞ւ էլ ես ուզում կույր լինել, պատվելի՛։

Արամը փորձեց կնոջը բացատրել նրա արածի ամբողջ անհեթեթությունը։ Բայց այդ պահին չկար պայքարի ավելի վատ միջոց, քան տրամաբանությունը։ Օվսաննան ամուսնու երեսին գոռաց, որ Իսկուհին պատվազուրկ աղջիկ է։ Արամն այս անգամ զայրացավ և դառնացած կարգի հրավիրեց կնոջը։ Ասաց, որ Իսկուհին զոհողություն է անում, կյանքը, ի սեր օտարի, վտանգի է ենթարկում, քանի որ այդ կնոջից որոշ բարություն է տեսել։ Գիշեր-ցերեկ հիվանդի ամբողջ հոգսը ընկած է միայն Իսկուհու վրա, չնայած այդ աղջիկն ինքն էլ հիվանդ է և թույլ։ Եվ աղջկան մաքուր սրտի ու քրիստոնեական բարության համար Օվսաննան այժմ ստորաբար վարկաբեկում է։ Այն էլ ո՞ւմ, սեփական տալին։ Բայց քանի որ Արամը հասկանում է Օվսաննայի վիճակը, այլևս ոչինչ չի ուզում լսել և ներում է։

Օվսաննան հեգնանքով ծիծաղեց.

— Պատվելի, եթե ուզում ես համոզվել, թե քո բարեսիրտ քույրը ինչպես է հիվանդին խնամում, մի անգամ մոտեցիր վրանին, ներս նայիր։ Կտեսնես երկուսին կողք-կողքի նստած։ Շատ անգամ էլ դրսում ման են գալիս առանց քաշվելու...

Երբ պատվելին ծովափ էր իջնում, ականջին դեռևս հնչում էին Օվ-

սաննայի ծիծաղն ու խոսքերը։ Ուրիշ ոչ մի բանի մասին մտածել չէր կարողանում, չնայած ձկնորսությունը ծանր իրադրության մեջ շատ ավելի կարևոր հարց էր, քան որևէ այլ բան։ Ճշմարտությունը նրա սիրտը ավելի ու ավելի էր ճնշում իր սառցեղեն ծանրությամբ։ Ոչ, ասված իրեն պատժել է Մարաշում գործած մեծ մեղքի՝ որբերին դավաճանելու համար։ Մեղավորը ոչ թե Իսկուհին է, այլ ինքը։

Ծովափին մի նոր ցավ էլ ավելացավ։ Պարզվեց, որ նրա մեծ մտահղացումը դեռևս չնչին արդյունք է տալիս։ Չնայած ծովը հանդարտ էր, լաստը փոքր-ինչ առաջ շարժվելուց հետո կտոր-կտոր էր եղել, և երեք երիտասարդ ձկնորսներն ու նավորդը հազիվ չէին խեղդվել։ Վտանգի համեմատությամբ որսը շատ չնչին էր. երկու միջակ զամբյուղ՝ լցված արծաթագույն մանր ձկներով և ծովային ինչ-որ անծանոթ զեռուններով։ Դրանց պարունակությունը հազիվ բավականացներ մի մեծ ման ճաշ եփելու։ Արամը նման ծովայիններին ծաղրելուց հետո, նոր կարգադրություն արեց։ Մարդ չպետք է միանգամից կորցնի արիությունը։ Բոլոր դեպքերում աղ հայթայթելու գործն ավելի հաջող էր, քան ձկնորսությունը։ Բավականաչափ աղ տարան Քաղաքաձոր։

Արամ Թովմասյանը ծովափին հազիվ քառորդ ժամ մնաց և կրկին ծանր սրտով բռնեց վերադարձի ճանապարհը։ Պարզ չէր պատկերացնում, թե ինչպես փրկի Իսկուհուն։ Մի՞թե ինքը միշտ քրոջ հետ չէր վարվել խանդաղատանքով ու խոր հարգանքով, նույնիսկ այն ժամանակ, երբ նա դեռ փոքրիկ աղջիկ էր։ Իսկուհուն այլ կերպ վերաբերվել չէր էլ կարող։ Հակառակ իր ամբողջ հեզ և բարեհամբույր բնավորությանը, աղջկա մեջ կար ինչ-որ բյուրեղյա խստություն, որը և նրան դարձնում էր մի տեսակ անմատչելի։ Եղբոր և քրոջ միջև հաստատվել էր նուրբ, հաճելի վարվելաձև։ Երբեք չէին խախտվում համակրանքի սահմանները։ Այժմ ինչպե՞ս բացեիբաց քարկոծեր Իսկուհուն, որի հոգին իր համար միշտ սրբազան էր եղել։ Խելահաս պատվելին, քնքշասիրտ եղբայրը մի՞թե հանկարծ պետք է հանդես գար աստծո օգտին հանիրավի մոլեգնող մարդու դերում։ Մինչդեռ Օվսաննայի խոսքերը, անկասկած, հոգևոր խանգարման արդյունք էին։

Զեյթունում և Մուսա լեռան բարձունքներում Արամ Թովմասյանը բազմիցս ապացուցել էր իր արիությունը։ Սակայն այժմ, երբ հասավ ժայռապարսպի անտառապատ եզրը, կորցրեց իր ամբողջ արիությունն ու վճռականությունը։ Արդյոք հարցի ամենապատշաճ լուծումն այն չէ՞ր լինի, եթե անձամբ խոսեր Գարրիել Բագրատյանի հետ։ Բայց ինչպե՞ս։ Մի՞թե կարելի էր այդքան այլանդակ կասկածի տակ առնել մի մարդու,

որը վսեմ աստիճան ուներ, կանգնած էր հարգանքի արժանի բարձրության վրա։ Մանավանդ այժմ, երբ այդ մարդու գլխին իջել էին ճակատագրի ահավոր հարվածները, և նա դողում էր իր միակ որդու բախտի համար, տանջվում հուսահատության մեջ։ Թովմասյանը ոչ մի ելք չէր տեսնում։ Բարվոք համարեց առայժմ այդ հարցին չանդրադառնալ։ Քաղաքաձոր մտնելուց և հոր հետ զրուցելուց առաջ ուզեց մի բոպևով անցնել Օվսաննայի մոտ։ Բայց բոլորովին այլ բան ստացվեց։

Ժուլիեթի վրանի շեմքին նստած էր Իսկուհին և անձկությամբ նայում էր այն կողմը, ուր քիչ առաջ անհետացավ Բագրատյանը։ Աղջիկը եղբորը նկատեց միայն վերջին վայրկյանին։ Արամը նստեց քրոջ դեմդիմաց, գետնին։ Խիստ շփոթված՝ սկսեց բառեր որոնել։

— Իսկուհի, երկար ժամանակ է, ինչ իրար հետ չենք խոսել...

Աղջիկն արհամարհական շարժում արեց, կարծես ուզեց հասկացնել, որ մարդկային հիշողությունն անկարող է չափել ամբողջ անցյալի և ներկայի միջև ընկած անդունդը։

Արամն զգուշորեն մոտեցավ խոսակցության բուն նյութին.

— Օվսաննան քեզ շատ է կարոտել։ Նա այնպե՞ս է վարժվել քեզ ու քո օգնությանը... Հիմա էլ, երբ խեղճ երեխան հետն է, և այնքա՞ն շատ գործ ունի...

Իսկուհին անհամբերությամբ ընդհատեց եղբորը.

— Բայց, Արամ, հենց երեխայի պատճառով է, որ Օվսաննայի մոտ գալ չեմ կարող...

— Լավ, դու այստեղ ստանձնել ես հիվանդի խնամքը։ Դա մեծահոգություն է քո կողմից... Բայց չէ՞ որ սեփական ընտանիքը քո կարիքն այժմ ավելի է զգում...

Իսկուհին զարմացած տեսք ընդունեց.

— Տիկինը ոչ մի յուրային չունի... իսկ Օվսաննայի վիճակն այժմ լավ է, օգնողներ էլ ունի, ինչքան կամենա...

Պատվելին թուքը մի քանի անգամ կուլ տվեց, կարծես կոկորդը ցավում էր.

— Դու ինձ ճանաչում ես, Իսկուհի։ Այս մասին դժկամությամբ եմ խոսում քեզ հետ... ուզո՞ւմ ես ինձ հետ լիովին անկեղծ լինել։ Մեր պայմաններում այլ կերպ վարվելը ծիծաղելի կլիներ...

Աղջիկը հազիվ սքողված դժկամությամբ նայեց եղբորը.

— Ես քեզ հետ լիովին անկեղծ եմ։

Եղբայրը սրտի ահով ուզում էր քրոջ անմեղության համար կամուրջ գցել։ Եթե եղածը չի անցել կարեկցանքի, համակրանքի, բարեկամու-

թյան սահմաններից, եթե որևէ անուղղելի բան չի կատարվել, ապա Արամն այնպե՞ս կուզենար, որ քույրը խստությամբ հերքեր իր ասածները, Օվսաննայի կասկածները զայրույթով համարեր կեղծիք։

— Իսկուհի, Օվսաննան քեզ համար շատ է անհանգստանում։ Հավատացնում է, թե ստույգ բաներ գիտե։ Այսօր գիշերվա կեսն անց ենք կացրել այդ մասին վիճելով։ Դրա համար էլ հարցնում եմ, ներիր։ Քո և Գարրիել Բագրատյանի միջև որևէ բան եղե՞լ է։

Իսկուհին ո՛չ կարմրեց, ո՛չ էլ մազաչափ շփոթվեց։ Ձայնը հնչեց հանդարտ և հաստատուն.

— Իմ և Բագրատյանի միջև ոչինչ չի եղել... Բայց ես նրան սիրում եմ և նրա կողքին կմնամ մինչև վերջ։

Արամ Թովմասյանը սարսափով ոտքի թռավ։ Պատվելին խանդոտ եղբայր էր, և սիրո ամեն մի խոստովանություն կարող էր միայն խորտհաճություն պատճառել։ Ուստի և նրան ավելի խոցեց հանդուգն անտարբերությամբ հացված հարվածը.

— Եվ դու համարձակվում ես դա ասել հեշտ ու հանգիստ, ուղիղ երեսիս նայելո՞վ։

— Դո՛ւ ստիպեցիր, Արամ...

— Մի՞թե այդ դու ես, Իսկուհի, դո՞ւ։ Ոչինչ չեմ հասկանում։ Հապա քո պատի՞վը, ընտանի՞քը։ Ձե՞ս վախենում աստծուց. չէ՞ որ Գարրիելն ամուսնացած մարդ է։

Քույրը թափով բարձրացրեց գլուխը։ Դեմքին անսասան համոզմունք կար.

— Ես տասնինը տարեկան եմ, և քսան տարեկան չեմ դառնա...

Թովմասյանի քահանայական ձայնը զայրույթից դողաց.

— Աստծուն ձուլվելով, դու ավելի չափահաս կդառնաս, քանզի աստծո մեջ քո հոգին անմահ է և յուր արարքների համար պատասխանատու։

Արամը որքան բարձր էր խոսում, այնքան Իսկուհին իջեցնում էր ձայնը։

— Ես աստծուց չեմ վախենում...

Պատվելին ձեռքով խփեց իր ճակատին։ «Ես աստծուց չե՞մ վախենում»։ Այն, ինչ վսեմ անկեղծության արտահայտություն էր, նա սխալ հասկացավ, համարեց բացահայտ լկտիություն։

— Գիտե՞ս, թե ինչ է քո արածը։ Ձե՞ս զգում, թե ինչ ճահճի մեջ ես ընկղմված։ Այս վրանում կին է պառկած՝ մահամերձ, անզգա։ Նա անամոթ խաբեբա է, բայց դուք նրան հարյուրապատիկ անամոթությամբ

եք խաբում։ Դուք ավելի ստոր, ավելի ահավոր կյանք եք վարում, քան ամենապրիմիտիվ մահմեդականները։ Ա՜հ, ես անարդարացի եմ մահմեդականների հանդեպ...

Իսկուհին աջ ձեռքով ջղաձգորեն կառչեց վրանի պարանից։ Աչքերը չռվեցին։ Արամը դա վերագրեց իր խոսքերի թողած տպավորությանը։ Օրհնյա՜լ է աստված. եղբայրը դեռ չէր կորցրել քրոջ վրա ունեցած իր ազդեցությունը։ Այդ պատճառով էլ ավելի մեղմ լարեր շարժեց.

— Իսկուհի՛, պետք է խոհեմ լինել։ Մտածիր, թե դա ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ ոչ միայն քեզ և մեզ համար, այլև Բագրատյանի և ամբողջ գաղթականության համար։ Այդ պիղծ մոլորությանը պետք է վերջ տալ։ Անհապա՛ղ։ Հայրիկը քեզ իր մոտ կտանի...

Իսկուհու կրծքից դուրս թռավ խեղդված մի ճիչ։ Մեջքը ետ գցեց։

Արամը նոր միայն գլխի ընկավ, որ քրոջ դեմքին դրոշմված ցավի արտահայտությունը բարոյական ընդդիմության հետևանք չէ, այլ թիկունքում կատարվեց մի բան, որից Իսկուհին սոսկաց։ Պատվելին շուռ եկավ, տեսավ Սամվել Ավագյանին։ Սա շնչահեղձ որոնում էր իր պարոնին։ Ուսանողը հազիվ էր ոտքի վրա մնում։ Դեմքն ապակալված էր։ Լալիս էր։ Իսկուհին ձեռքը թուլացած մեկնեց դեպի հյուսիսային դիրքերը որտեղ և կարելի էր գտնել Բագրատյանին։ Այնուհետև աղջիկը վայր գլորվեց, առանց ուշադրություն դարձնելու եղբորը։ Նա ամեն ինչ հասկացավ։

Սաթոյի տարօրինակություններից մեկն էլ այն էր, որ միևնույն տեղում երբեք չէր քնում, իսկ եթե քնում էր, ապա շատ հազվագեպ։ Ամեն մարդ պահանջ է զգում ունենալ մշտական օթևան, մի տեղ, ուր կարող է գիշերներն ապահով անցկացնել իր երկրային կյանքի խավարով պարուրված մասը։ Սաթոն այդպիսի պահանջ բնավ չէր զգում։ Նա ինչպե՞ս կարող էր նույն տեղում երկու գիշեր քնել, երբ նույնիսկ մի գիշերվա մեջ ջանում էր տեղը փոխել։ Դա աղջկա համար դժվար բան չէր։ Առանց երկար-բարակ պատրաստություններ տեսնելու պառկում էր, քնում ուր խելքը փչեր՝ «Ռիվիերայի» թփերի տակ, մոտակա պուրակում, երբեմն նույնիսկ խորանի հրապարակում։ Քնում էր կծիկ դառած, առանց բարձի ու վերմակի, չնայած Բագրատյանի սպասավորներից արդեն երկու անգամ խնդրել ու ստացել էր անկողնային այդ պարագաները։ Ի պատիվ Սաթոյի, պետք է ասել, որ այդ գեղեցիկ բարձերն ու վերմակները պահում էր իր հյուրերի՝ գերեզմանաբնակների համար, որոնց հետ բարեկամական սերտ հարաբերությունների մեջ էր։ Իր գիշերային անկա-

յուն հանգստի համար նա այդպիսի հարմարության կարիք չէր զգում։ Քնած ժամանակ Սաթոն և Հայկը իրար այնքանով էին նման, որ այս աղջիկը ևս ամենախոր քնի մեջ մնում էր զգոն։ Եթե Հայկի սուր զգայարանները պահապանների դեր էին կատարում, հսկում իրենց քնած տիրոջը և բարեխղճորեն չէին լքում իրականությունը, ապա Սաթոյի զգայարանները անհանգիստ թափառում էին շրջակայքում, պեղում ստորերկրյա ինչ-որ գաղտնիքներ։ Նրա երազները նման էին միևնույն թղթի վրա դրոշմված լուսանկարչական պատկերների, բայց դրանք միշտ չէ, որ սոսկ երևակայության արձագանքներ էին։ Երբեմն դրանք քմահաճ ներշնչման արդյունք էին, որոնց շնորհիվ Սաթոն ճիշտ ժամանակին իմանում էր շրջապատի անցուդարձը։ Այս անգամ էլ նույնը կատարվեց։ Սաթոն քնած էր մրտենիների և մաթուզենիների թփերի տակ, այնտեղ, որտեղ մի ժամանակ դարան էր մտնում, դիտում Գոնզագի ու Ժուլիեթի գրկախառնությունները։ Ինչ-որ մեկը կարծես հուշեց, թե Նունիկը մոտ է, այն էլ մեծ բազմության գլուխն անցած։

Սաթոն կատաղի ոստյուններով առաջ նետվեց, անսալով իր ներշնչմանը, որը ցույց էր տալիս ուղղությունը։ Գիշերը դեռևս չէր անցել, երբ նա ետևում թողեց Դամլաջրքի բազմածալ սարահարթը, հրդեհված անտառի հարավային կողմով անցավ լեռան սանրաձև բարձունքների ետևը։ Այստեղ կարմիր հատապտուղների թփերից և առանձին ծառախմբերից բացի, ոչինչ չկար։ Շրջակայքն ամայի էր, քարքարոտ։ Կրակն իր թևերը տարածել էր մինչև այս կողմերը։ Ածխացած ծառերն ու հատուկենտ բուսական կղզյակները մնում էին իբրև մեծ հրդեհի վկաներ։ Սակայն հրդեհն արդեն իր առաջնապահ զորքերն ու դրոշները ետ էր քաշում դեպի գլխավոր ճամբարը՝ Կաղնուտը, որտեղից սկիզբ էր առել։ Բոցերն իրենց շրջանակում դեռևս որոշ զորություն ունեին և գիշերային անդորրության մեջ նույնիսկ հեռվից կարելի էր լսել դրանց միալար ֆշշոցն ու ճարճատյունը։ Բիթիասից մինչև Հաջի Հաբիբլի Դամլաջրքը հրեղեն գրահ էր հագել, ապահով էր բոլոր հարձակումներից։ Այստեղ նախալեռները, քարափները, կիրճերը, փոքրիկ հովիտները հրեղեն ամրոցի սահմանների մեջ էին մտնում, և կրակը գնում կորչում էր միայն խաղողի այգիներով ծածկված լեռնալանջերին և մրգաստաններում։ Այժմ հրդեհի կյանքն արդեն վերջանալու վրա էր, բայց նա իր ետևից թողնում էր կարմրափայլ դրասանգների, մարմրող ածխազանգվածների, ծխացող մոխրակույտերի և ծխից, ասես մոխրագույն մետաքսից հյուսված բազմածալ վարագույրների մի անվաճ, չեզոք տարածություն։ Հովիտն ի վար հոսող աղբյուրներն ու առվակները լրիվ չէին

ցամաքել, այլ իրենց համար նոր հուն էին բացել, հրդեհի թագավորության սահմանագլխով անցնում էին, շորս կողմ սփռելով շոգի արձակող իրենց կենարար շիթերը։

Սաթոն Ստեփանին բերող բազմությանը պատահեց ծառերի մեջ կորած փոքրիկ ձորակում, որը ձգվում էր դեպի հարավ, մինչև պաշտպանական նախավերջին հրապարակը։ Նունիկն ու նրա յուրայինները ինտառային հրդեհի պատճառով ստիպված ընտրել էին երկար, ոլորոտոլոր ճանապարհ։ Դանդաղ էին շարժվում։ Հիմնական պատճառը հուղարկավորների ծերությունն ու տկարությունն էին։ Այս անգամ ջլապինդ, տոկուն եղերամայրերին միացել էին նաև պատահական մարդիկ, հովտում բույն դրած զանազան ծպտյալ ախտավորներ՝ հայ ազգի վերջին դարը մրուրը։ Խելագար կանայք թափորին հետևում էին որոշ հեռավորության վրա, քանի որ գերեզմանաբնակները նրանց արհամարհում էին, համարում ավելի ցածր խավի պատկանող մարդիկ։ Այստեղից երևում է, թե ինչպես աներևակայելիորեն ցածր դասակարգն անգամ միշտ կարողանում է գտնել մի խավ, որի հանդեպ դրսևորում է իր ամբարտավանությունը։ Խելագար կանայք անվերջ շաղակրատում էին։ Կարծես դրանով ուզում էին ապացուցել սեփական գերազանցությունն իրենց արհամարհողների հանդեպ։ Հուղարկավորները դանդաղ էին շարժվում նաև այն պատճառով, որ դագաղը տանում էին նաև մարգարեանման գլուխներով, մազակալած դեմքերով կույր ծերունիները։ Նունիկը դագաղը տանելուն մասնակից էր դարձնում բոլոր տղամարդկանց, եթե դրանց ձեռքերի ու ոտքերի մեջ դեռևս փոքր-ինչ ուժ էր մնացել։ Ինքը քայլում էր առջևից, իսկ Մանուշակն ու Վարդուկը երկար գավազաններով կույրերին առաջնորդում էին ծառաների, թփուտների, քարաժայռերի մոտով, կարծես ալարկոտ եզներ էին քշում։

Բագրատյանի որդու դիակը սպիտակ շորով փաթաթված դրված էր հինավուրց, նախշաքանդակ դագաղի մեջ։ Յողնոլուքի եկեղեցում և գերեզմանատանը տասնյակ այդպիսի դագաղներ կային։ Խաղաղության օրհնյալ տարիներին, երբ շրջակայքում շաբաթներով մարդ չէր մեռնում, և ժամկոչի եկամուտներն սկսում էին ցամաքել, վերջինս գիշերները գաղտնի մտնում էր եկեղեցին, մահակով հարվածներ տեղում փտած գագաղներին, հետո էլ, հոգնած մահին սթափեցնելու համար, կախարդական բառեր էր շշնջում, բառեր, որ իբրև հուսալի միջոց, ավանդ էր ստացել նախորդ ժամկոչներից. «Աբթնացի՛ր, փա՛յտ, և ինձ հա՛ց տուր»։

Սաթոն շարունակ պտտվում էր թափորի շուրջը, ետ ու առաջ վազում առույգ շան նման, որը չի հոգնում նույն ճանապարհը երեք-չորս

անգամ չափչփելուց։ Շարունակ մոտենում էր դպաղին, որը խարխափող քայլերով առաջ էին տանում կույրերը։ Աղջկա անհարեկից և ագահ աչքերը սևեռուն գամվել էին պատանով ծածկված մանկական դեմքին։ Սաթոն մեծ բավականությամբ ետ կտաներ շորը, որ տեսներ, թե ինչպիսին է Ստեփանը մեռած ժամանակ։ Բայց երբ բարձունքը գրեթե հաղթահարված էր, Սաթոն բազմությունից անջատվեց, առաջ սլացավ։ Ուզում էր բոլորից առաջ ընկնել, արթնացնել Ավագյանին ու Քրիստափորին, ամբողջ ժողովրդին, իբրև մունետիկ, գուժել Բագրատյանի որդու մահը։

Արևը նոր էր ծագել, երբ մեռած պատանին և խարխափելով ու կաղալով ընթացող բազմությունը հասան մեծ հրապարակը։ Դագաղը դրվեց խորանի առաջ։ Եղերամայրերն իրենց շքախմբով ծունր իջան շրջանաձև։ Նունիկը բացեց պատանու դեմքը։ Այսպես թե այնպես կատարված էր Տեր-Հայկազունի պատվերը։ Պարտավոր էին վարձահատույց լինել առանց այլևայլության։ Ծայր առավ եղերամայրերի հաղիվ լսելի, բեկբեկուն ողբը։

Ստեփանն այժմ այնքա՞ն նման էր արևելյան թագաժառանգի, ինչպես մայրը նրան անվանեց, երբ տղան առաջին անգամ տեղական զգեստ հագավ։ Թեև Նունիկը մարմնի վրա հաշվել էր քառասուն վերք՝ դանակի, մահակի, ոտքի հարվածների հետքեր, թեև ողնաշարը ջարդված էր և կոկորդը սոսկալի ձևով կտրված, պատանու դեմքը չէր խաթարվել։ Կարծես առհավետ փակված թարթիչների տակ Ստեփանը դեռևս տեսնում էր կայարանի բարձր դարպասից դուրս եկող հորը, որին ինքն այնքա՞ն կարոտել էր։ Քառասնապատիկ սպանությունը նրա դիմագծերից չէր կարողացել վանել գոհունակության ժպիտը, որովհետև հայրիկը նրան դեռևս սեղմում էր սրտին։ Նա մեռել էր առանց իմանալու։ Աստծո ողորմածությամբ գազանային, զարհուրելի մահը նա ընկալեց իբրև հեռո՞ւ հեռավոր առասպել։ Եվ այժմ ահա, վերջապես, ինքն իր հետ էր կարոտյալ թագաժառանգը։

Առաջին մարդը, որը հայտնվեց խորանի հրապարակում և դագաղի բազմության առաջ կանգնած՝ զարմանքով նայեց, դա դեղագործ Գրիգորն էր։

Անցյալ օրվա երեկոյան Տեր-Հայկազունն իր ձեռքով կալանքից ազատեց Սարգիս Կիլիկյանին, ուղարկեց նախկին զորամասը՝ Հարավաբերդ։ Գրիգորն ափսոսանքով բաժանվեց Ռուսից, քանի որ խիստ բանտարկության ենթարկված այդ հանցավորի հետ նա մի քանի օր ու գիշեր էր անցկացրել։ Հիվանդ դեղագործին վաղուց էին լքել։ Նախկին սո-

ները՝ ուսուցիչները, նրան այլևս չէին այցելում ոչ միայն զինվորական ծառայության պատճառով, այլև, իբրև նորելուկ ռազմիկներ, որոշ արհամարհանքով էին վերաբերվում իրենց ռոմանտիկ անցյալին։ Գոնզագ Մարիսը, որի հետ ծնողները բավականությամբ զրուցում էր, այլևս չկար։ Վաղեմի բարեկամը՝ Պետրոս Ալթունին, որը նույնպես արդեն խարխուլ ավերակ էր դարձել, երբեմն-երբեմն այցելում էր Գրիգորին, մտահոգ, անզոր օրորում էր գլուխը, նայում հիվանդի այլանդակված մարմնին։ Դեղագործի լքվածությունը ժամանակի իմաստով կրկնակի էր, քանի որ քսանչորս ժամվա ընթացքում միայն երկու ժամ էր քնում, այն էլ կեսօրից առաջ։ Գիշերները, ընդհակառակը, նրա կյանքի ամենապայծառ, ամենաբարձրաթռիչ պահերն էին, ինչպես դա հատուկ է բազում իմաստուններին ու հանճարներին։

Կիլիկյանի բանտարկության առաջին երկու գիշերը Գրիգորին անտանելի նեղություն էր պատճառում կողքի խցում փակված մարդու ներկայությունը։ Երրորդ գիշերն այդ զգացումը տեղի տվեց բանտարկյալին տեսնելու, հետը խոսելու տարօրինակ ցանկությանը։ Այդ ցանկությունն իրագործելուն խանգարեց միայն ավագների խորհրդի հեղինակությունը, խորհուրդ, որին դեղագործն ինքն էլ էր պատկանում։ Չորրորդ գիշերը մենությունն այնքան խորացավ, այնքան սաստկացավ, որ Գրիգորն այլևս չկարողացավ ընդդիմանալ։ Սոսկալի ցավեր հաղթահարելով, անկողնուց իջավ, մի կերպ մոտեցավ բանտախցիկին, թաքստոցից հանեց բանալին և իր ուռած, կոշտացած ձեռքով դժվարությամբ դուռը բացեց։

Սարգիս Կիլիկյանը բաց աչքերով պառկած էր խսրի վրա։ Դեղագործը լուռ մոտեցավ։ Բանտարկյալի տեսքը ծերունուն բնավ չզարմացրեց։ Ռուսի ձեռքերն ու ոտքերն այնպես բարեսրտորեն էին շղթայել, որ դրանք նա կարող էր ամեն կողմ շարժել։

Գրիգորը նավթի լամպը դրեց հատակին, նստեց լամպի կողքին։ Կիլիկյանի շղթաները նրա հոգին ամոթահար էին անում։ Ի սեր հավասարության, բանտարկյալին մեկնեց իր սեփական խեղճ ձեռքերը.

— Սարգիս Կիլիկյան, մենք երկուսս էլ շղթայված ենք։ Բայց իմ շղթաներն ավելի են ցավ պատճառում, քան քոնը։ Չէ՞ որ ես դրանք ետիպված պիտի կրեմ նաև վաղը։ Մի՛ գանգատվիր։

Կիլիկյանը նրան նայեց իր անտարբեր աչքերով.

— Չեմ էլ գանգատվում։

— Գուցե ավելի լավ լիներ, եթե գանգատվեիր...

Դեղագործը բանտարկյալին մեկնեց իր օղու շիշը։ Սա զգուշորեն մի ումպ խմեց։ Ծերունին ևս մտահոգ խմեց, ապա նայեց Ռուսին։

— Գիտեմ, որ ուսանող ես եղել... Երևի այս օրերին սիրով մի գիրք կկարդայիր, հը՞։

— Դեղագործ, շա՜տ ուշ ես այդ լավությունն անում։

— Կիլիկյան, ո՞ր լեզուներով կարող ես կարդալ։

Ռուսը քրթմնջաց այնպես, կարծես նման բաները նրան տհաճություն էին պատճառում։

— Ֆրանսերեն և ռուսերեն էլ, եթե հարկ լինի։

Գրիգորն իր մանդարինյան ճաղատ գլուխն ու այծային մորուքը տխրությամբ օրորեց.

— Ա՜յ թե ինչ տեսակ մարդ ես դու, Կիլիկյան։

Դասալիքն առանց պատճառի, ծուլորեն քմծիծաղ տվեց։ Այդ քմծիծաղը Գաբրիել Բագրատյանին սարսափ էր պատճառել այն օրը, երբ վրաններում անցկացրին փորձնական գիշերը։ Բայց դրանից Գրիգորը չշփոթվեց.

— Զախողակ կյանք ես ունեցել, գիտեմ... Բայց ինչո՞ւ։ Մի՞թե քեզ չեն ուղարկել Էջմիածին։ Մի՞թե չես ապրել ճեմարանում, աշխարհի ամենահիասքանչ գրադարաններից մեկի մոտ՝ դուռ-դռան։ Այնտեղ ես միայն մի օր եմ եղել, բայց երանի՜ մինչև կյանքիս վերջը մնայի այն գրքերի հետ... Եվ դու փախե՞լ ես...

Սարգիս Կիլիկյանը կիսով չափ տեղից բարձրացավ.

— Դեղագործ, դու այն ասա, թե ծխախոտ ունե՞ս։ Մի ժամանակ ծխում էիր... Հինգ օր է ինչ ներսս ծուխ չի գնացել։

Գրիգորն իր ընդարմացած ոտքերը պրկեց, հեծկլտալով վեր կացավ և քիչ հետո բերեց, բանտարկյալին տվեց իր ծխամորճն ու ծխախոտի վերջին տուփը.

— Վերցրու, Կիլիկյան։ Այս վայելքից էլ ստիպված եմ հրաժարվել, որովհետև ծխամորճ բռնել այլևս չեմ կարող։

Սարգիս Կիլիկյանն իսկույն ծխեց, պարուրվեց հաճելի ծխի քուլաներով։ Դեղագործը լամպը բարձրացրեց, լուսավորեց նրա դեմքը.

— Բայց և այնպես, Կիլիկյան, քո դժբախտության պատճառը դու ես։ Դեմքիդ նայելով զգում եմ, որ վանական ես։ Դրանով չեմ ուզում ասել, թե դու պետք է քահանա լիներիր, բայց կարող էիր լինել այնպիսի մի մարդ, որն իր խցում կարող էր աշխարհի տերը լինել... Այդ պատճառով էլ գործերդ միշտ ձախ են գնացել։ Ինչո՞ւ փախար։ Ի՞նչ ուներիր աշխարհում փնտրելու։

Սարգիս Կիլիկյանն այնպես էր տարված ծխելով, որ դժվար էր որոշել, թե արդյո՞ք լսում ու հասկանում է Գրիգորի խոսքերը։

— Իմ բարեկամ Սարգիս, լսիր, թե քեզ ինչ եմ ասելու... Երկու տեսակի մարդիկ կան։ Կան մարդ-անասուններ։ Դրանց թիվը միլիարդների է հասնում։ Մյուսները մարդ-հրեշտակներ են։ Դրանց թիվն էլ հազարի է հասնում, կամ լավագույն դեպքում՝ տասը հազարի։ Մարդ-անասունների թվին են պատկանում նաև աշխարհի մեծամեծները, թագավորները, քաղաքագետները, մինիստրները, գեներալները, փաշաները, ինչպես և գյուղացիները, արհեստավորներն ու բանվորները։ Նայիր այդ մուխթար Քերուսյանին։ Բոլորն էլ նման են նրան։ Հազար ձևով դրանք միևնույն բանով են զբաղված. աղբ են արտադրում։ Մի՞թե քաղաքականությունը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, ռազմական արվեստը, այս բոլորն էլ աղբ արտադրելուց տարբերվում են, եթե նույնիսկ դրանք անհրաժեշտ լինեն։ Եթե մարդ-անասունից հեռացնես այդ աղբը, նրա հոգում կմնա ամենասոսկալի բանը՝ ձանձրույթը, որին նա դիմանալ չի կարողանում։ Ա՜յ, հենց այդ ձանձրույթից է սկիզբ առնում ամեն չարիք՝ և՛ քաղաքական ատելությունը, և՛ մասսայական կոտորածները։ Սակայն մարդ-հրեշտակների մեջ ապրում է երազանքը։ Կիլիկյա՜ն, մի՞թե դու չես երազում, չես սքանչանում, երբ նայում ես աստղերին։ Մարդ-հրեշտակների երազանքը նույնն է, ինչ-որ իսկական հրեշտակների օրհներգությունը, որի մասին մեծն Ագաթանգեղոսն ասել է, թե դա առհասարակ տիեզերքում գոյություն ունեցող ամենավսեմ և ամենաբանդուն գործունեությունն է... Բայց ի՞նչ էր միտքս։ Ուզում էի ասել, թե կան մարդ-հրեշտակներ, որոնք իրենք իրենց դավաճանում են, իրենք իրենց կործանում։ Նման մարդ-հրեշտակների համար ո՞չ շնորհ կա, ո՞չ գթություն։ Ամեն ժամ նրանք ենթակա են վրեժխնդրության...

Այստեղ Գրիգոր Յողոնօլուքցին՝ խոսքի վարպետը, կորցրեց մտքի թելը, լռեց։ Սարգիս Կիլիկյանն այս ամենից կարծես ոչինչ չէր հասկացել, բայց հանկարծ ծխամորճը մի կողմ տարավ.

— Տարբեր հոգիներ կան,— ասաց նա,— շատերը դեռևս մանկության տարիներին ոչնչանում են, և ոչ ոք չի հարցնում, թե այդ ի՞նչ հոգիներ էին...

Շղթայակապ ձեռքերով գրպանից մի ածելի դուրս բերեց և բացեց.

— Տե՜ս, դեղագործ։ Չե՞ս հավատում, որ ես սրանով կարող էի կտրատել կապերս։ Չե՞ս հավատում, որ ես ոտքի մի քանի հարվածով այս ամբողջ խցիկը կարող էի քարուքանդ անել։ Բայց ես այդ բանը չեմ անում։

Գրիգորի ձայնը հնչեց խոպոտ ու անտարբեր, ինչպես անցյալ օրերին.

— Կիլիկյան, այդպիսի դանակ ամեն մարդ էլ ունի։ Բայց ի՞նչ օգուտ դրանից։ Եթե ինքդ քեզ ազատես, միևնույն է, գաղթականի սահմանից դուրս գալ չես կարող։ Ուստի և մենք կարող ենք խորտակել միայն ներքին գերությունը։

Այս խոսքի վրա դասալիքը ոչինչ չասաց և լուռ պառկեց։ Գրիգորը դուրս գնաց, բերեց իր գրքերից մեկը, գրքեր, որոնցից նրա խցում մի ամբողջ պատ էր գոյացել։ Ծերունին նիկելապատ շրջանակով ակնոցը դրեց քթին, սկսեց քնկոտ ձայնով կարդալ։

Կիլիկյանն ագաթե անթարթ աչքերը չռած՝ լսում էր երկար պարբերությունները, որոնց մեջ անորոշ կերպով խոսվում էր աստղերի էության և ազդեցության մասին։ Դա վերջին անգամն էր, երբ յողոնօլուքցի դեղագործը հարմար առիթ էր գտել իր հարստությանը մասնակից դարձնելու մի երիտասարդ հայի։ Անհասկանալի պատճառներով ծերունուն գրեթե անկարելի էր թվում վերադաստիարակել հոգևոր կոչումից փախած Կիլիկյանին, նրան դարձնել իր սանը։ Ապարդյուն ջանք։ Հաջորդ գիշերը, այսինքն՝ երեկ, դարձյալ մեն-մենակ էր մարդ որոնող դեղագործը։

Իր զույգ գավազաններին հենված Գրիգորը դանդաղ մոտեցավ դագաղին։ Նա իր դեղնած դեմքը լուռումունջ խոնարհեց Բագրատյանի մեռած որդու վրա, ապա սրածայր, լերկ գլուխը երկա՜ր, երկա՜ր օրորեց։ Դա գլխի սովորական տատանում չէր, որը կապված էր նրա հիվանդության հետ և հաճախ էր պատահում։ Դա նշանակում էր, որ ծերունին չի ըմբռնում աշխարհի անցուդարձը, աշխարհ, որտեղ հոգևոր կյանքի համար ծնված մի էակ, փոխանակ խորամուխ լինելու գիտական օրենքների, ֆորմուլների և բանաստեղծության վայելքի մեջ, տարվում է մոլեռանդ ավազակությամբ։ Որքա՜ն քիչ կան մարդ-հրեշտակներ, բայց այդ սակավաթիվ ընտրյալները դավաճանում են իրենց հրեշտակային կոչմանը, կործանվում։ Իմաստուն խոսքերի սեփական գանձարանում նա մի բառ էր փնտրում, որ դա իր համար նեցուկ դարձներ։ Սակայն այդ պահին նրա սիրտը չափից ավելի վշտացած էր, և ծերունին չէր կարողանում գտնել հարմար բառը։ Կուչ եկած, ծուռումուռ քայլերով նորից գնաց իր խուցը։ Զանազան դեղանյութերի հետ Գրիգորը պահում էր ապակյա մի փոքրիկ, գնդաձև սրվակ։ Դա փակված էր մի կաթիլ զմուռսով։ Տասնյակ տարիներ առաջ, միջնադարյան ինչ-որ խորհրդապաշտ

պարսիկ բժշկի դեղատոմսի համաձայն, նա պատրաստել էր իսկական արքայական վարդայուղ, որի ստացման եղանակն աշխարհը վաղուց էր մոռացել։ Սրվակի մեջ հանդչում էր երկարատև ջանքով ստեղծված հյութի վերջին կաթիլը։ Գրիգորը մի անգամ էլ մոտեցավ դագաղին, փոքրիկ սրվակի պարունակությունը լցրեց հանգուցյալի ճակատին։ Իսկույն ծավալվեց մի զորավոր բուրմունք և մնաց սպանվածի դիակավերեկում կախված։ Այդ բուրմունքը, իրոք, նման էր այն ոգուն, որ անտեսանելի մարմինը, Գրիգորի վկայակոչած պարսիկ հեղինակավոր բժշկի խոսքերի համաձայն, բաղկացած էր երեսուներեք հազար տարբեր վարդերի էությունից։

Մինչ այդ հայտնվեցին Տեր-Հայկազունն ու բժիշկ Ալթունին։

Վարդապետը քարացած կանգնեց Ստեփանի սնարին։ Աչքերը կիսափակ էին, իսկ ձեռքերը, որոնք ասես դողում էին ցրտից, թաղված էին սքեմի թևքերի մեջ։

Ծեր բժիշկը ոսկրոտ, զգույշ մատներով մի վայրկյան բացեց տղայի քարացած մարմնի վերքերը, ապա կրկին մեղմորեն ու գորովանքով կարգի բերեց պատանքը։

Օրը բացվում էր։ Խրճիթներից ու նրբանցքներից, ինչպես և մոտակա խրամատներից մարդիկ հեղեղի պես շարժվեցին դեպի խորանը։ Երեք ճակատամարտերից հետո ժողովուրդը շատ սպանվածներ էր տեսել և բարձրաձայն ողբացել։ Բայց այս մեկը նրանց հետ համեմատել չէր կարելի։ Շատերը գիտեին, որ այս զոհն ավելին է նշանակում։ Խոր լռություն էր տիրում։ Նույնիսկ անչափահասները, որոնց հավասարվելու համար Ստեփանը այնպես խենթորեն ջանքեր էր թափում, սրանք ևս՝ անդադրում տղաները, այժմ երկչոտությամբ ու պատկառանքով էին նայում իրենց զոհված ընկերոջ փղոսկրե նրբաքանդակ դեմքին։ Այժմ, միայն այժմ էր Ստեփանը նրանց հաղթել։

Հակոբը՝ միոտանին, մնացել էր տանը, մտել իր վերմակի տակ։

Լռությունը խզեց միայն այրի Շուշիկը՝ երկարատև, այլանդակ ճիչերով։ Հայկի մայրը վայրի կենդանու ձայներ էր հանում, չնայած դեռևս չէր տեսել Բագրատյանի որդու դիակը։ Կնոջ հոգու խորքում Ստեփանի և Հայկի ճակատագիրը միաձույլ էր, նույնիսկ այն բանից հետո, երբ հասկացավ, որ իր որդին դեռևս պառկած չէ դագաղում։ Եթե երկուսից մեկը մոզվեց, որ իր որդին դեռևս պառկած չէ դագաղում։ Երևի բռնվել էր և սպանվել, ապա մյուսը ևս պետք է զոհված լիներ։ Երևի Նունիկը, Վարդուկը, Մանուշակը իր որդու դիակը թողել էին շներին, քանի որ նա հասարակ գյուղացու որդի էր։ Ո՞վ պետք է նրա մասին հոգ տաներ։ Շուշիկն աղաղակում էր ոչ թե վշտահար մոր, այլ վիրավոր

գազանի նման, որը մոնչալով ավանդում է իր շունչը։ Մի քանի կին նրան շրջապատեցին։ Դրանց հետ այրին հարևանություն չէր անում նույնիսկ այստեղ, Դամլաջրքում։ Ինչպես միշտ, նա դարձյալ ապրում էր մեն-մենակ։ Ամեն կողմից շշուկով մխիթարում էին, թե հարկ չկա հուսահատվելու։ Եղածից պարզ երևում է, որ Հայկը փրկված է և այսօրվաղը կլինի Ջեքսոնի հովանավորության տակ։ Եթե տղան սպանված լիներ, նա էլ այստեղ պառկած կլիներ։ Բագրատյանի որդին չուներ Հայկի ուժն ու ճարպկությունը, այլապես դրանց շնորհիվ և աստծո ողորմածությամբ կկարողանար բարեհաջող հասնել նպատակին։

Շուշիկը չէր լսում սփոփանքի խոսքերը։ Ձեռքերը կրծքին սեղմած և առաջ թեքված՝ ճչում էր ամբողջ ուժով։

Նունիկին կանչեցին իբրև վկա։ Պառավն իր ցամաքած դեմքից ետ տարավ քողը։ Հակառակ հովտում ապրողներին սպառնացող մահացու վտանգին, դեռևս չէին սպառվել նորությունները իմանալու նունիկյան աղբյուրները։ Պառավը երդվեց, թե Բագրատյանի որդուն Այն Երաբ գյուղի մոտ բռնել են երկու մահմեդական վերաբնակիչ, տարել Յողոնօլուք, մյուղիրի մոտ։ Ստեփանը եղել է մեն-մենակ, առանց ուղեկցի։

Ճշմարտությունը նույնպես չօգնեց։ Շուշիկը չէր հավատում։ Այստեղ կանայք Տեր-Հայկազունի ազդանշանով այրուն զգուշորեն ետ քաշեցին դագաղից, տարան դեպի խրճիթների արանքով անցնող գլխավոր փողոցը։ Նրանք հազիվ էին համարձակվում ձեռք տալ հսկա կնոջը, որի զորավոր մարմինը նրանց վրա առասպելական սարսափ էր ազդում։ Բայց այրի Շուշիկը հանկարծ հնազանդվեց։ Կանայք կրկնապատկեցին իրենց մխիթարական մրմունջները։ Եվ, իրոք, Հայկի մայրը որքան դագաղից հեռանում էր, այնքան հանդարտվում էր, հուսադրվում։ Նրա սրտում ծայր առավ մարդկային ջերմության մեծ կարոտը։ Գլուխը անզոր թեքեց աջ ուսին և իր վիթխարի մարմնով հենվեց նրբակազմ, նիհար հայուհիների վրա։ Շուշիկը երկու ձեռքով գրկեց կանանց, առանց գիմադրության անձնատուր եղավ։

Բայց երբ Գաբրիել Բագրատյանը արտասվաթոր Ավագյանի ուղեկցությամբ հայտնվեց խորանի հրապարակում, ոչ մեկը նրան չմոտեցավ։ Լեռհակառակը։ Բազմությունը ետ քաշվեց և մարդկանց ու խորանի միջև գոյացավ ազատ տարածություն։ Նույնիսկ եղերամայրերն ու մուրացկանները վեր կացան, կորան բազմության մեջ։ Իրենց տեղում մնացին միայն Տեր-Հայկազունն ու Պետրոս Ալթունին։

Գաբրիելն առաջ չվազեց, այլ նույնիսկ դանդաղեցրեց քայլերը։ Այն

ամենը, ինչ տենդահար ու սարսափով հինգ օր ու գիշեր տարբեր ձևերով պատկերացրել էր, այժմ տեսնում էր իր աչքի առաջ։ Այլևս ուժ չուներ ճշմարտությանը երես առ երես նայելու։ Քայլ առ քայլ, վարանումով չափում էր իր և որդու միջև ընկած տարածությունը, կարծես այդ ձևով կարող էր ևս մի քանի ակնթարթ հետաձգել վերջին իրողությունը։ Թվաց, թե նրա ամբողջ մարմինը վերից-վար սկսեց չորանալ։ Ամենից առաջ չորացան աչքերը։ Դրանք այրվում էին չորությունից, որը չէր մեղմանում անգամ թարթիչների սարսռումից։ Այնուհետև հերթը հասավ բերանին։ Լեզուն իբրև հաստ, կարծր կաշի կպել էր կոշտացած քիմքին։ Գաբրիելը փորձեց թուքը կուլ տալ։ Բայց դրա փոխարեն կուլ տվեց միայն օդի անախորժ պղպջակներ, որ պայթում էին այրվող կոկորդում։ Բայց ամենասոսկալին այն էր, որ ինքն իրեն տիրապետելու բոլոր ջանքերն ապարդյուն էին անցնում։ Նրա ամբողջ էությունը խուսափում էր ցավից, մինչդեռ ցավը ներսում բացվել էր իբրև դատարկ վիհ։ Նա բնավ էլ չգիտեր, որ այդ վիհը, այդ անէությունը, այդ անապատը, իսկական կսկիծն է։ Դառնացած ինքն իրեն հարցնում էր. «Այս ի՞նչ բան է։ Ինչո՞ւ այլևս չեմ տառապում։ Ինչո՞ւ չեմ աղաղակում։ Ինչո՞ւ ոչ մի կաթիլ արտասուք չեմ թափում»։ Նույնիսկ Ստեփանի հասցրած վիրավորանքը լիովին չէր ամոքվել։ Եվ ահա այստեղ պառկած է իր որդին, որին այնքա՜ն սիրում էր։ Բայց Գաբրիելը ընդունակ չէր իր մեջ դրոշմելու մեռածի դեմքը։ Նրա չորացած աչքերը միայն մի խոշոր, սպիտակ և մի փոքրիկ, դեղնավուն կետ էին տեսնում։ Ուզեց մտքերը խարսխել որոշակի մի տեղ՝ իր սրտին ծանրացած հանցանքի վրա։ Վերջին օրերին նա անուշադրություն էր մատնել որդուն, իսկ հետո նվաստացուցիչ խոսքերով ստիպեց փախուստի դիմել։ Նա այդ բանը խորն էր գիտակցում։ Բայց նրա մտորումները շատ հեռուն չէին գնում, քանի որ ներսում բացված ամայի վիհից հառնում էին տարտամ պատկերներ, փակում խոհերի ճանապարհը, թեև դրանք մեծ մասամբ ոչ մի առնչություն չունեին Ստեփանի հետ։ Միևնույն ժամանակ այդ վիհից, ասես սատանայի ներշնչմամբ, գլուխ բարձրացրեց մի այլ ներքին պահանջ. ծխել։ Եթե մոտը գլանակ լիներ, իսկույն բերանը կդներ, զարմանք պատճառելով գաղթականի ամբողջ ժողովրդին։ Ինքնաբերաբար սկսեց պրպտել գրպանները։ Այդ վայրկյանին նա տառապում էր իր որդու համար, քանի որ նրան հիմա էլ էր լքում։ Ինչո՞ւ իրեն Ստեփանից այնքան հեռու էր պահում, որ իր երեխայի դեմքը հազվադեպ էր տեսնում։ Մի անգամ Յողոնօլուքի ամառանոցում նա Ստեփանի անկողնու մոտ նստած դիտում էր քնած որդուն, իսկ սեղանին ընկած էին Դամլաջրքի քարտեզի անճարակ էսքիզ-

ները։ Այս անգամ էլ նա մենակ մնաց իր որդու հետ, որն արդեն մեկ-ընդմիշտ իր հետ տարել էր այն ամենը, ինչ կար նրա հոգում։ Գաբրիելը ծունր իջավ մեռած Ստեփանի առաջ, որպեսզի իր կուրացած աչքերով վերջին անգամ իր մեջ դրոշմի այդ բաղձալի, փոքրիկ դեմքը։

Տեր-Հայկազունը, Ալթունին և մյուսները նայում էին պաշտպանության առաջնորդին, որը, ինչպես միշտ, հագել էր իր որսորդական կոստյումը, դրել լայնեզր գլխարկ։ Տեսան, թե ինչպես նա դանդաղ, թեթևակի օրորվելով մոտեցավ դագաղին։ Տեսան, թե ինչպես բոլորովին լքված ու մենակ կանգնեց, բերանը բացուխուփ արեց, կարծես դժվարանում էր շնչել։ Ձեռքերով շարունակ ինչ-որ անվճռական շարժումներ էր անում։ Տեսան, թե ինչպես նա խուսափում է որդուն նայելուց. գլուխը մի կողմի վրա էր թեքել։ Երբ վերջապես դիակի մոտ լռելյայն ծունկի եկավ, հազարավոր անխոս հանդիսատեսների սրտով մի ամբողջ հավիտենություն անցավ։ Գաբրիելն իր դեմքը հպեց Ստեփանի դեմքին։ Կարելի էր կարծել, թե քուն է մտել, կամ նույնիսկ հենց այդ դիրքով մեռել։ Ծղոտե գլխարկը մի կողմ էր ընկել։ Փակ թարթիչների արանքից ոչ մի կաթիլ արտասուք չէր հոսում։ Բայց բոլոր կանայք լալիս էին, նույնիսկ տղամարդկանցից շատերը։ Ստեփանի մահը կարծես այդ մարդկանց և օտարականին կրկին մտերմացրեց։

Երբ բազմության սրտի միջով նորից մի ամբողջ հավիտենություն անցավ, Տեր-Հայկազունն ու Պետրոս Ալթունին ծնրադիր հոր թևերից բռնած՝ բարձրացրին։ Առանց մի բառ ասելու Գաբրիելին տարան։ Սա հլու-հնազանդ հետևում էր նրանց։ Երբ Քաղաքաձորից բավական հեռացել էին, և երբ երևաց Երեք վրանի հրապարակը, աջ կողմից քայլող Տեր-Հայկազունը կարճ ու կտրուկ ասաց.

— Գաբրիե՛լ, զավա՛կ իմ, խորհիր, որ նա քեզանից միայն մի քանի օր առաջ գնաց։

Բայց Պետրոս Ալթունին, որը ձախ կողմից էր քայլում, դառնացած, հոգնաբեկ սրտի խորքից բոլորովին այլ բան ասաց.

— Գաբրիե՛լ, տղա՛ս, մտածիր, որ առաջիկա օրերը սովորական օրեր չեն լինի, սատանայական օրեր կլինեն։ Դրա համար էլ օրհնիր գիշերը։

Բագրատյանը ոչինչ չասաց, մնաց կանգնած, ձեռքերը տարածեց, փակելով երկու ուղեկիցների ճանապարհը։ Մերոնիները հասկացան, շրջվեցին և նրան թողին միայնակ։

Ժուլիեթի ջերմությունը դարձյալ չէր իջնում։ Նրա անզգայությունը

կարծես հասել էր իր ամենախոր աստիճանին։ Մարմնի անհանգստությունը մեղմացել էր, անցել էին ցնցումները, շնչարգելությունը, խըռոցն ու զառանցանքը։ Այժմ անշարժ ձգված պառկած էր։ Նվազկոտ, ընդհատ շունչը հազիվ էր դուրս գալիս փառակալած շրթունքների արանքից։ Մի՞թե հիվանդության օրենքի համաձայն արդեն վրա էր հասել ճգնաժամը, և մի քանի ժամվա ընթացքում վճռվելու էր կենաց ու մահվան հարցը։

Իսկուհին բնավ չէր մտահոգվում Ժուլիեթի բախտով։ Աղջկա համար միևնույն էր. կապրի՞, թե՞ չի ապրի։ Չէր մտածում նաև իր եղբայր Արամի ծանր սպառնալիքների մասին, թեև նա երդվել էր հարաբերությունները լրիվ խզել քրոջ հետ, եթե մինչև կեսօր սա չհեռանար Բագրատյանների մոտից։

Վրանում հասակով մեկ կանգնած էր Գաբրիելը։ Գլուխը գրեթե առաստաղին էր դիպչում։ Այնքան էր վերացել, որ ո՛չ հիվանդի ներկայությունն էր զգում, ո՛չ Իսկուհու։

Իսկուհին մոտեցավ, գլուխը սեղմեց նրա ծնկներին։ Այդ պահին աղջկան այնքան չէր հուզում Ստեփանի մահը, որքան Գաբրիելի տառապանքը։ Միայն Իսկուհին գիտեր, թե նրա հոգին որքա՞ն էր զուսպ, որքա՞ն էր կարեկցանքի կարոտ։ Այնուհանդերձ այդ մարդը իր վիրավոր մեջքով վճռականորեն շալակել էր մի ամբողջ հրդեհվող աշխարհ՝ ամբողջ Դամլաջրքը։ Բայց յուրայինները կոտրեցին նրա մեջքը՝ սկզբում Ժուլիեթը, ապա մեռած որդին։

Գաբրիելը մնում էր կանգնած։

Ի՞նչ էր ինքը՝ Իսկուհին, ի՞նչ էր Արամը, ի՞նչ էին մյուս բոլորը նրա առաջ. չնչի՞ն ճանճեր։ Կոշտ ու կոպիտ, կեղտոտ գյուղացիներ էին, որոնք ո՛չ խոհեր ունեին, ո՛չ զգացմունք, ո՛չ էլ հասկանում էին, թե ով է իջել իրենց մոտ։ Իսկուհին իրեն զգում էր թույլ, անարժան, ուստի և տապալված։ Ի՞նչ կարող էր անել կամ զոհաբերել, որ արժանի լիներ Գաբրիելին։ Ոչինչ։ Բաց ձեռքն առաջ պարզեց։ Մուրացիկ կնոջ շարժում։ Նա Գաբրիելի վշտից մի բեկոր էր մուրում, նրա ծանր բեռան մի մասը։ Աղջկա դեմքը բոցավառվում էր անձնուրացության և ծառայելու ցավատանջ բաղձանքից։ Չէ՞ որ նա ծունր էր իջել մի մարդու առաջ, որը դեռևս ցույց չէր տալիս, թե զգում է իր՝ Իսկուհու ներկայությունը։

Սկսեց շշնջալ, բայց իր ջերմ, անտեղի խոսքերից ինքն էլ վախեցավ ու ամաչեց։ Որքա՞ն խեղճ էր ինքը, սարսափելիորեն խեղճ, եթե զուրկ էր օգնելու կարողությունից։ Վերջապես, հուսահատությունից նրա մեջ ծնվեց մայրական մի զգացում, անկախ նրա կամքից։ Վշտի պահին

լավ չէ կանգնած տառապելը։ Վշտի պահին մարդ պետք է պառկի։ Գաբրիելը պետք է քնի։ «Միայն քունը կարող է նրան օգնել, ոչ թե ես»,— անցավ աղջկա մտքով։

Իսկուհին արձակեց Գաբրիելի երկսրաճիտ թելավոր կոշիկների կապերը, ստիպեց նստել իր անկողնու վրա։ Գերմարդկային ճիգերով աղջիկը գործի դրեց նույնիսկ իր խեղված թևը։ Դա ծանր գործ էր, բայց հաջողվեց, քանի որ Գաբրիելը մեքենայաբար սկսեց շորերը հանել։ Երբ աղջիկը վերմակով նրան ծածկեց, հոգնածությունից հետո էր։ Զգաց Գաբրիելի փութանցիկ, ոչինչ չարտահայտող հայացքը։

«Հլու-հնազանդ պառկած եմ»,— անցավ Գաբրիելի մտքով։ Այլ բան չէր էլ կարող մտածել։ Քանի՞-քանի՞ շաբաթ անկողնու երես չէր տեսել, քնում էր հյուսիսային խրամատի շոր գետնին։ Ատամներն սկսեցին իրար զարկվել։ Դա կարծես բավականության հետ խառնված տվայտանքի սարսուռ էր։ Իսկուհին կուչ եկավ մի անկյունում, որ Գաբրիելը չզգա իր ներկայությունը, մինչև որևէ բանի կարիք ունենա։ Աղջիկը մտովի աղոթում էր, որ նրա աչքերին ծանր քուն իջնի։ Բայց Գաբրիելի կրծքից ոչ թե քնած մարդու շնչառություն էր դուրս գալիս, այլ համաչափ հեծեծանք, ողբ հիշեցնող տնքոց։ Գաբրիելն իր ցավի ամայի անապատում դեռևս Ստեփանին էր որոնում և չէր կարողանում գտնել։ Սակայն հեծեծանքից կարծես թեթևանում էր սիրտը, քանի որ դա փոքրիկ ընդմիջումներով շարունակվեց այնքան մինչև օգոստոսյան արևը մի երկար ճառագայթ ներս առաքեց վարագույրի ճեղքից։ Ճառագայթն առաջ շարժվեց, բոցավառեց Ժուլիեթի դեմքը։ Իսկուհին տեսավ, որ հիվանդի տրամադրությունը հանկարծ փոխվեց։ Ճակատին քրտինքի մարգարիտներ կային, աչքերը լայն բացված էին, իսկ գլուխը մի կողմի վրա էր թեքել և ականջը ձայնի պահել։ Ֆրանսուհուն համակել էր ինչ-որ խոր խանդավառություն։ Նա իր կարկամած ու վիրավոր լեզվով հազիվ կարողացավ շշնջալ.

— Զանգե՞րը... Գաբրիե՞լ... Լսո՞ւմ ես... Զանգե՞րը... Հարյուրավո՞ր զանգեր... Այնպես չէ՞...

Մյուս անկողնուց հառնող հեծեծանքները միանգամից դադարեցին։

Ժուլիեթը փորձեց տեղից բարձրանալ։ Հուզված էր։ Լարեց իր անզոր ձայնը, ցնծությամբ գոչեց.

— ...Հիմա ամբո՞ղջ աշխարհն արդեն ֆրանսիական է...

Այս բառերի մեջ կար ճշմարտություն, բայց դրան անտեղյակ էր Ժուլիեթը, որը խորասուզված էր իր հայրենասիրական երազանքի՝ հաղթության զանգերի ծովում։ Ստեփանի թափված արյամբ, հայ ժողովրդին պարգևած նրա միակ որդու մահով, հիրավի, ամբողջ աշխարհը դարձել էր կրկին ֆրանսիական։

ԳԼՈՒԽ ԶՈՒՐՏՈՎԴ

Քարտում և գայթակղություն

Հուսա լեռան երեսունմեկերորդ օրը տեղի ունեցավ Ստեփանի թաղումը, իսկ երեսուներկուերորդ օրը վրա հասավ մեծ աղետը։

Մինչև այդ օրը յոթ համայնքի ժողովուրդը դժգոհելու առիթ չուներ։ Այն ժամանակ, երբ Հալեպի և Դեյր էս Զորի միջև, Եփրատի նեղ կիրճերում ու հովտաձորերում, Միջագետքի տափաստաններում և անապատի եզրին հարյուր հազարավոր հայեր էին փտում՝ տարագիրների գրեթե կեսը, Քաղաքաձորում, խրամատներում, հիվանդանոցում և սուր վարակիչ անտառակում սպանվել ու մահացել էին ոչ ավելի, քան երկու հարյուր ութսուն հոգի։ Եթե նկատի ունենանք արյունահեղ ճակատամարտերը, վատ սնունդը, համաճարակը, տառապանքները, անքնությունն ու ամեն տեսակի զրկանքները, ապա մահացության այս ծանր տոկոսը բացատրվում է ոչ միայն լեռնցիների դիմադրական արտասովոր ուժով, այլև երկնային ողորմածությամբ։ Խիստ զարմանալի է այն հանգամանքը, որ ամենուրեք Էնվերի ու Թալիաթի դեմ ապստամբող հայերին ամենայն ճշգրտությամբ օգնության էր հասնում ինչ-որ փրկարար ուժ, հարցը լուծում հօգուտ խիզախների։ Ինչ խոսք, մուսալեռցիները արևելյան Անատոլիայի՝ Վանի և Բիթլիսի ապստամբների նման չէին կարող հույս դնել ռուսների առաջխաղացման վրա, որոնք իրենց առաջն արած քշում էին հայերի մահացու թշնամուն՝ Ջեդեդ փաշային։ Իսլամի անծայրածիր երկիրը իր լեռներով ու տափաս-

տաններով հայերի շուրջն ավելի դաժանորեն էր մոլեգնում, քան ծովը։ Ա՜խ, նրանց թիկունքում ընկած այդ ծովը։ Դա դեռևս մնում էր անհասկանալիորեն մեռած, ինչպես միշտ։ Ոչ մի երեխա այլևս չէր կարող հույս փայփայել, թե որևէ ռազմանավ կարող է մոտենալ սիրիական ծովեզերքին։ Եթե, հակառակ ամեն բանականության, ինչ-որ անհավատալի հրաշքով հորիզոնում ռազմանավ հայտնվեր, ապա ո՞վ էր այնքան միամիտ, որ հավատար, թե նավի պահակները կնկատեն սկուտեղաձև դարավանդի վրա, ձողից կախված ինչ-որ խղճուկ մի թաշկինակ։ Ավելի քան մի շաբաթ էր անցել, իսկ Ալեքսանդրեթ գնացած լողորդները դեռևս չէին վերադարձել։ Նրանց համարում էին կորած։ Միայն մի քանի անուղղելի ռոմանտիկներ էին ինչ-որ բարենպաստ հանգամանքներ կապում այդ ուշացման հետ։

Ինչ էլ լիներ, մարդիկ դեռևս ապրում էին։ Պաշտպանության յոթ թե ութ հատված անտառային հրդեհի շնորհիվ դարձել էին անառիկ, մնացածն էլ Գաբրիել Բագրատյանը խելացիորեն ուժեղացրել էր կամ փոփոխել։ Թուրքերն էլ կարծես թե ոչ մի ցանկություն այլևս չունեին նոր արկածախնդրության դիմելու։ Որոնտեսի դաշտավայրում և հովտում նորանոր զորամասեր և զափթիեներ էին վխտում, ժամանակ սպանում։ Թշնամու հրամանատարությունը դեռևս ոչ մի անգամ լեռը պաշարելու ապարդյուն փորձ չէր արել։ Հավանաբար հայ հարվածայիններից վախենալով, թուրքերը սիրտ չէին անում լեռն առնել շրջանակի մեջ և սպասում էին անհրաժեշտ հրետանու։

Գաղթականությանը խղճուկ սննդի հետ որոշ չափով արդեն համակերպվել էր։ Սոսկալի էր առանց հացի ապրելը։ Սակայն կանայք հացին փոխարինող ինչ-որ միջոցներ ու համեմունքներ էին գտել։ Մարդիկ այլևս միայն միս չէին ուտում, ինչպես առաջ։ Մսի կարծր, անյուղ կտորները ստամոքս չէին լցնում։ Կանայք միսը մանր կտրատում էին, բանջարի ու սոխի հետ խառնում, ջրալի ճաշ եփում, որ ուտողն էլ բան հասկանար։ Այս հնարագիտությամբ դժվարությունները մեղմանում էին, և կյանքը որոշ ժամանակ կարող էր շարունակվել, եթե այդ ամենին վերջ չտար տնսպասելի դժբախտությունը։ Դա ծանր հարված էր։

Ո՞վ էր հանցավորը։ Այդ առեղծվածը երբեք լիովին պարզաբանվել չէր կարող։ Միայն մի բան էր հաստատ, որ ավագների խորհրդի ամենակարևոր վճիռներից մեկը հանցավոր թեթևամտությամբ ոտնահարվել էր, աղետ բերելով ամբողջ ժողովրդի գլխին։ Մուխթարները նոր արոտավայրեր գտնելուն ոչ միայն դեմ չէին, այլև հանդուրժում էին բոլոր գանձատները, իրենք ևս իրենց հերթին դժգոհում էին, թե պաշտպանու-

թյան շրջանակում եղած արոտավայրերի խոտն սպառվել է, մինչդեռ անասունները պետք է թարմ կանաչով սնվեին։ Իհարկե, նոր արոտավայրերը Հյուսիսային լեռնաթամբից հեռու չէին։ Դրանք Մուսա լեռան ժայռերի մեջ հուսալիորեն պատսպարված էին, կողմնակի մարդու աչքին անտեսանելի էին, անանցանելի։ Բայց արդյոք կարելի՞ էր վստահել հովիվներին, որոնք աշխարհի բոլոր կողմերում երազկոտ ծերունիներ ու պատանիներ են։ Այս քնկոտ, ոչխարաբարո արարածները դեռևս կարծում էին, թե ապրում են անսահման խաղաղության գրկում։ Մի խոսքով, մուխթարները զանց էին առել իրենց պարտականությունները և գոհանում էին, երբ ամեն առավոտ հովիվները որոշակի թվով մսացուներ էին բերում սպանդանոց (դրանց քաշը նոր արոտավայրում արածելուց հետո ավելացել էր)։ Իբրև ավագների խորհրդի անդամներ, մուխթարները ոչինչ չէին անում։ Առավել անխիղճ և առավել հանցավոր էր նրանց երկրորդ զանցառությունը, մի բան, որ նրանք չպետք է թույլ տային։ Ավագների խորհրդի որոշումը նույնիսկ գրավոր էր, Տեր-Հայկազունի կողմից ստորագրված, ինչպես անհրաժեշտ էր համարել ծերակույտը։ Անասունները՝ ժողովրդի ամենաթանկարժեք ունեցվածքը, չէր կարելի առանց զինված հսկողության թողնել ո՛չ գաղթականների արոտավայրերում, ո՛չ երկու բարձունքների միջև, ո՛չ էլ ծովակողմյան մարգագետիններում։ Խորհրդի այդ որոշումը մուխթարները թերացան կատարել, որը և համազոր էր այն մերժելուն։ Զանց առնվեց պաշտպանության որևէ միջոցառում։ Մուխթարներն ապավինեցին աստծուն, հույս դնելով արոտավայրերի քողարկված դիրքի և թուրքերի ծուլության վրա։ Այս ապօրինի գաղտնիքի շուրջը ո՛չ իրար հետ էին խոսում, ո՛չ էլ մյուս ավագների։ Այսպիսով պայմաններ ստեղծեցին, որ թուրքերը ձեռք բերեն էժան հաղթանակ։ Այդ հաջողության համար թուրքերը պարտական էին սեփական լրտեսներին։

Հետևակային երկու դասակ և զափթիեների մի ջոկատ հրաման ստացան գիշերով դուրս գալ և Բիթիասի մոտակա լեռնանցքով անաղմուկ բարձրանալ Մուսա լեռը։ Լռության և զգուշության վերաբերյալ, իհարկե, ոչինչ չէր հրամայված։ Չնայած գիշերն անլուսին էր, այս անգամ զորախումբը առաջ էր շարժվում տակտիկական կանոնագրքի համաձայն՝ առաջապահներով, լրտեսներով, եզրապահներով ու վերջապահներով։ Յուրաքանչյուր քայլը ահուդողով ծանրութեթև էին անում։ Այս ուարսափախառն զգուշությունն այն անգնահատելի դրամագլուխն էր, որ Գաբրիել Բագրատյանն ու նրա զինվորները նվաճել էին թուրքերի սրտում։

Թուրք զինվորները (մոտ կես վաշտ) գրպանի լապտերներով գաղտագողի եկան, կանգնեցին քնած հովիվների ու ոչխարների գլխին։ Մինչև վերջին վայրկյանը զորախմբի հրամանատարը՝ մյուլազիմը, կարծում էր, թե գործը գլուխ չի գա առանց ընդհարման։ Այդ պատճառով էլ զինվորները խիստ զարմացան, երբ իրենց դիմաց տեսան սպիտակ մուշտակներ հագած մի քանի ծերունու։ Սրանց հեշտ ու հանդիստ, առանց աղմուկ բարձրացնելու սպանեցին։ Անասուններն արևածագից առաջ հովիտ իջեցրին այնպիսի աճապարանքով, կարծես կողոպուտին վտանգ էր սպառնում։

Այսպիսով, կտրվեց Դամլաջրքի ժողովրդի կենսական երակը։ Կողոպտված անասունների մեջ էին բոլոր ոչխարները, խոյերն ու գառները, այծերի մեծ մասը, ինչպես նաև գաղթականի բոլոր ավանակները։ Եթե մուսալեռցիները հույս դնեին իրենց անվթար մնացած անասունների վրա, ապա, ծայրահեղ խնայողության դեպքում, կարող էին դիմանալ երեք կամ չորս օր։ Այնուհետև ամբողջ ժողովուրդը անխուսափելիորեն կանգնելու էր սովամահության առաջ։

Երբ Տեր-Հայկազունը վաղ առավոտյան իմացավ զարհուրելի լուրը, անհապաղ հրավիրեց ավագների խորհրդակցություն։ Վարդապետը գիտեր, թե տեղի ունեցածը հոգեկան ինչ խոր ազդեցություն է գործելու ժողովրդի վրա։ Ժուլիեթի դեմ բռնկված զայրույթից հետո Քաղաքաձորում ծայր էր առել ինչ-որ անհիմն, աննպատակ խլրտում։ Դա պայթելու էր առաջին իսկ հարմար առիթով։ Տեր-Հայկազունն ինչպե՞ս կուզենար թաքցնել աղետը կամ այնպիսի ձև գտնել, որ հանցանքն ու պատասխանատվությունը հեռացներ ավագների խորհրդից։ Սակայն, ցավոք սրտի, դա անհնարին էր։

Ընտրյալները շտապ կամ դանդաղ, ըստ իրենց բնավորության և խղճի, շարժվեցին դեպի կառավարչատուն։ Բոլորը ջանում էին շուտ հասնել նստատարահը, քանի դեռ որևէ անակնկալ չէր պատահել խորանի հրապարակում։ Տղամարդիկ մասամբ հուսահատված էին թվում, մասամբ շփոթված։

Ի սեր զգուշության, Տեր-Հայկազունն ավագներին պաշտպանելու նպատակով կանչել էր գաղթականի ոստիկաններից տասներկուսին։ Ջաուշ Նուրհան էլլեոնին հրամայվեց աչալուրջ հետևել ճամբարի ներսում տիրող կարգ ու կանոնին։

Մինչ այդ ավագների խորհուրդը հազվադեպ էր նիստ գումարում լրիվ կազմով։ Իրականում գործերը ղեկավարում էր եռիշխանությունը։ Գաբրիելը ռազմական գործերն էր վարում, Արամ Թովմասյանը՝ ներքին

կարգապահությունը, իսկ Տեր-Հայկազունը, իբրև ժողովրդի առաջնորդ, բոլոր հարցերը լուծելիս հայտնում էր իր վճռական կարծիքը։

Այսօր, այս ճակատագրական պահին, հայտնվեցին բոլոր ավագները, բացի Գաբրիել Բագրատյանից, որը Ստեփանի թաղումից հետո երեք վրանի հրապարակից դեռևս դուրս չէր եկել։ Պատվելի Արամն ուրախացավ. ուրեմն Գաբրիելին չի հանդիպի։ Գլխավոր հրամանատարի գլխին անասելի աղետ էր եկել, և պատվելին այնքան անգութ չէր, որ նրա հետ իր քրոջ մասին խոսեր վերջին դժբախտությունից մի քանի ժամ հետո։ Դրանից բացի, ամեն ինչ անվերծանելիորեն խճճվել էր։ Թովմասյանն ընդառաջել էր Օվսաննայի այն խիստ պահանջին, թե վրանն իր ամբողջ կահ-կարասիով պետք է հանձնել տնտեսվար Քրիստափորին և հեռանալ մինչև այդ հարմարավետ համարված օթևանից՝ այդ «Բաբելոնից»։ Կնոջն ու երեխային ուղում էր տեղավորել իր հոր նեղլիկ խրճիթում։ Սրտի խորքում Արամը խղճում էր Օվսաննային, ցավում, որ կատարելու են այդպիսի անհաջող փոխանակություն։ Մինչ այդ բնակարանային հարմարությունները բարձր գնահատող կնոջ մեջ հանկարծ արթնացել էր աղքատության, կարիքի ու դժվարությունների անզուսպ, հիվանդոտ մարմաջ։ Արամի սիրտն ամենից շատ ճմլվում էր Իսկուհու պատճառով։ Նա հրաժարվել էր աղջկա վրա ճնշում գործադրելուց։ Պատճառը բնավ էլ բարոյական հանդուրժողականությունը չէր, այլ այն ծանր իրողությունը, որ Իսկուհին, իբրև վարակիչ հիվանդի հետ շփվող անձնավորություն, այլևս ուրիշ ապաստան ունենալ չէր կարող, բացի վրանից, ուր տեղափոխվել էր վերջերս։ Առողջապահական հանձնաժողովի հրահանգի համաձայն, Իսկուհին Քաղաքաձորի ոչ մի խրճիթում ապրելու իրավունք չուներ։ Թովմասյանն ինքը ևս իրենց հատկացված վրանից հեռանալով, քրոջը դատապարտում էր խայտառակության. Իսկուհին Գաբրիելի և մահամերձ հիվանդի հետ միասին կազմելու էր արատավոր երրորդություն։ Այն, ինչ մինչ այդ ոչ ոքի մտաբերինակ չէր թվում, աչք ծակող տեղափոխության պատճառով վերածվելու էր վտանգավոր իրողության։ Այդպիսով, ինքը դառնալու էր իր քրոջ ստորացման պատճառը, քույր, որին ջերմորեն սիրում էր։

Բագրատյանից բացի, ավագների խորհրդի ճակատագրական նիստին չէր մասնակցում մի անդամ ևս, թեև ձևականորեն ներկա էր։ Դեղագործ Գրիգորը դեռևս անցյալ առավոտյան չէր կարողացել անկողնուց վեր կենալ։ Մարմինը դարձել էր տձև զանգված, և ծերունին մատներն անգամ չէր կարողանում շարժել։ Բժիշկ Ալթունին հուսահատված թերթեց իր «Բժշկական ձեռնարկը», բայց գլուխ չհանեց լատիներեն անթիվ-

անհամար հիվանդություններից։ Այս անգամ նրան օգնության չեկավ սովորական ինքնամխիթարությունը. «Էհ, ի՞նչ օգուտ, եթե հիվանդության անունը գտնեմ։ Մի՞թե ավելին եմ իմանալու»։ Նա գիրքը կրկին տեղը դրեց. կարծես ամեն ինչ արդեն կարգին էր։ Դեմքի ցասկոտ արտահայտությունից այս անգամ հիվանդը չէր կարող կռահել նրա անճարակ վհատությունը։ Դրանով ծերունին ուզեց ցույց տալ, որ ինքը լավ բժիշկ է։ Այնուհետև պատվիրեց չմրսել, հանգիստ պառկել։ Ինչ վերաբերում է դեղորայքին, Գրիգորը կարող էր ամեն օր մի բան ընտրել իր ձեռքով պատրաստած զանազան դեղանյութերից։ Բայց ծերունուն ոչինչ այլևս չէր կարող օգնել՝ ո՛չ դեղերը, ո՛չ էլ տաքությունը։ Միակ բանը, որ նա անհագ տենչում էր, անդորրությունն էր, ամեն ցավից զերծ պահող անդորրությունը։ Այդ ցանկալի անդորրությունը նա չէր կարող վայելել իր պառլամենտական օթևանում։ Նրա ցավերի մահճի և աշխարհիկ գործերի միջև վեր էր խոյանում մի վսեմ անջրպետ։ Ծերունին հույս ուներ, թե գրքերից գոյացած այդ պարսպի ետևում կարող է լինել միայնակ, աղմուկից հեռու։ Սակայն պարզվեց, որ բանաստեղծության, իմաստության, գիտության ոչ մի հոգևոր պատնեշ բավականաչափ անթափանցելի չէ և չի կարող կաշկանդել քաղաքականության ստոր ժխորը։ Այդ ժխորն այսօր սկզբից ևեթ անհանգստացրեց հիվանդին։ Առանձնապես աղմկողները մուխթարներն էին։ Իրարանցումով ու բորբոքվելով ջանում էին մեղմացնել իրենց հանցանքը։ Վերջապես Տեր-Հայկազունը ոտքի ելավ, կանգնեց սենյակի կենտրոնում և հրամայեց, որ բոլորը նստեն։ Իրեն հազիվ էր զսպում.

— Եթե այսպիսի ոճրագործություն կատարվեր ռազմաճակատում գտնվող զորամասում,— ձայնը բարձրացրեց նա,— ապա հանցավորները անխնա կգնդակահարվեին։ Սակայն մենք դինվորական գումարտակ չենք, այլ մի ամբողջ թշվառ ժողովուրդ։ Եվ մենք ոչ թե մեզ հավասար ոսոխի դեմ ենք պատերազմում, այլ պաշտպանվում ենք մեզ բնաջնջել ցանկացող, մեզանից հարյուր հազար անգամ գերազանց ուժից։ Արդ, ինքներդ չափեցեք աստիճանն այն հանցանքի, որը ծնունդն է ձեր թեթևամտության և ստախոսության։ Ես ձեզ՝ ստոր մուխթարներիդ, ոչ միայն պետք է գնդակահարեի, այլև հրամայեի մաս-մաս անել։ Երդվում եմ, ես այդ բանը ուրախությամբ կանեի և չէի երկնչի աստծո պատժից, եթե դա նվազագույն չափով գործին օգներ։ Սակայն ստիպված եմ առերես ցուցադրել մեր միասնությունը, փրկել դեկավարության հեղինակությունը։ Ստիպված եմ ձեզ՝ պարտազանց մուխթարներիդ, թողնել ձեր պաշտոնում, քանզի որևէ մեկի պաշտոնազրկումից կտուժի կարգապահությունը։ Ստիպված եմ նույնիսկ ինձ վրա վերցնել հանցանքը և կեղծ

հիմունքներով, ստոր պատրվակներով ավագների խորհուրդը պաշտպանել ժողովրդի արդար զայրույթից։ Ինչ չհաջողվեց վալուն ու կայմակամին, բինբաշուն ու յուզբաշուն, փայլուն կերպով գլուխ բերիք դուք, ո՛վ ավագներ և պատասխանատուներ։ Մենք կորա՜ծ ենք։

Գյուղապետներն ամոթահար կուչ եկան։ Նրանցից միայն մեկը չուզեց հեշտ ու հանդիստ հանձնվել, մեծահարուստ Թովմաս Քեբուսյանը։ Իրենց կանանց փեշի տակ մտած ամուսինները հաճախ առյուծ են կտրում տղամարդկանց հավաքույթներում։ Քեբուսյանն սկսեց աչքերը հառանդուն շլել և գլուխը տմբտմբացնել։ Հեգնանքով ասաց, թե կան երջանիկներ, որոնք անասնապահությունից ու տնտեսվարությունից ոչինչ չեն հասկանում, սակայն հանգիստ խղճով մեծ-մեծ խոսում են։ Ինքը՝ Թովմաս Քեբուսյանը, երբեք անպատասխանատու գործ չի բռնել։ Ամեն մարդ էլ գիտե, թե ինքը մուխթարության նզովյալ խաչն ստանձնելուց հետո գիշեր-ցերեկ, տարեցտարի ինչեր է զոհել համայնքի համար։ Որոշում կայացնելը և որոշում կատարելը տարբեր բաներ են։ Եթե ինքը չպահանջեր նոր արոտավայրեր գտնել, ապա անասունները երկու շաբաթ առաջ ձեռքից գնացած կլինեին և հիմա ոչ մի մարդ քաղցից չէր տանջվի այն պարզ պատճառով, որ բոլորն արդեն սովամահ եղած կլինեին։ Եթե նոր արոտավայրերը զինված պահակների հսկողության տակ չեն եղել, ապա դա մազաչափ անգամ իրեն չի վերաբերում։ Չէ՞ որ ինքը ձեռնահաս չէ ռազմական գործերին, ուրեմն և պատասխանատու չէ։ Այլ հարցերում ինքը չի թերացել։ Մի խոսքով, ոչինչ չի իմացել։ Քեբուսյանը եզրափակեց հետևյալ գոռոզամիտ, սակայն անտրամաբանական ակնարկությամբ.

— Ի՞նչ եք ուզում ինձնից։ Հոտերի կեսը իմ սեփականությունն էր, իմ աշխատանքի արդյունքը։ Ճիշտ չե՞մ ասում։ Դուք քիչ բան եք կորցրել, ես՝ իմ ամբողջ ունեցածը։

Յողոնօլուքի գյուղապետի հանդուգն ամբարտավանությունը թևավորեց մյուս մուխթարներին։ Սրանք չուզեցին ետ մնալ իրենց պաշտոնակցից։ Ազիրի գյուղապետը Տեր-Հայկազունի երեսին շպրտեց վարդապետի ապերախտությունը։ Պատմեց, որ ինքը անցյալ տարի իր տասներկուերորդ թոռան ծննդյան առթիվ Յողոնօլուքի եկեղեցուն հարյուր ղուռուշ է նվիրել։ Մի՞թե մոռացության է տրվել մարդու բարեպաշտությունը։

Մուխթարների լեզուն լրիվ բացվեց։ Չափը կորցրած սկսեցին գլուխները գովել։ Բոլորը թվարկեցին իրենց երբևէ կատարած զոհաբերությունները, հանգանակությունները, բարեգործությունները։ Արտաս-

վաթոր հիշատակեցին, թե ինչքա՜ն են աղբամուտ տվել, շահել ու պահել աղքատներին, այծեր ու ոչխարներ նվիրել սրան-նրան, փող տվել չքավոր հայրենակիցներին, որպեսզի սրանք զինվորական ծառայությունից փրկագնով ազատեն իրենց որդիներին։ Քրիստոնեական վարք ու բարքի բոլոր ապացույցները ասպարեզ հանվեցին։ Ողբալի իրադրության մեջ այնքա՜ն զվարճալի էր այդ դատարկամիտ և խորամանկ շեղումը, որ մարդկանց լավ ճանաչող Պետրոս Ալթունին սրտանց ծիծաղում էր։

Տեր-Հայկազունը Արամ Թովմասյանին աչքով-ունքով հասկացրեց, որ խոսի։ Սա գլուխը կորցրել էր։ Թեև հոտերի հետ անմիջական առնչություն չուներ, բայց, իբրև գաղթականության ներքին կյանքի տնօրեն, պատասխանատու էր այն ամենի համար, ինչ կապված էր սննդի հետ։ Պատվելու նիհար դեմքը չափազանց գունատ էր։ Երկար, սրածայր մատներով խաղում էր սև, կարճ մորուքի հետ։ Կարծես դա խանգարում էր իր տիրոջը։ Այդ պահին լուսավորչական եկեղեցու փոխանորդի և բողոքական քահանայի միջև գլուխ բարձրացրեց ինչ-որ թշնամանք, որը սակայն մեջտեղ չհանվեց։ Արամ Թովմասյանը տեղից բարձրացավ.

— Իմ կարծիքով ավելի լավ կլինի, եթե այլևս չխոսենք, թե ով է մեղավոր։ Ի՞նչ օգուտ դրանից։ Եղածը եղած է։ Տեր-Հայկազունն ինքն է ասում, թե մենք պետք է միասնություն հանդես բերենք։ Պետք է նայենք առաջ, ոչ թե ետ, գլուխ ջարդենք, թե ինչո՜վ ծածկենք կորուստը։

Սա միանգամայն հասկանալի, բայց և անհամարձակ ելույթ էր։ Տեր-Հայկազունը բռունցքի մի հարվածով ընդհատեց պատվելու ճառը.

-- Կորուստը ծածկել չենք կարող։

Մուխթարների թիկունքից հանկարծ հայտնվեց մի նոր, անսպասելի դաշնակից։ Հրանտ Ոսկանյանը, որը մինչ այդ, ի սեր ժուլիեթի, ամեն օր սափրվում էր (իսկ դա իսկական հերոսություն էր, լուռ հերոսություն, եթե հաշվի առնենք օճառի բացակայությունը), այժմ դեմքը թողել էր բախտի քմահաճույքին։ Բեղերն ու մորուքը փարթամորեն աճել էին, հասել մինչև քթանցքերը։ Նեղ ճակատը ծածկվել էր երբեք չսանրվող մազերով։ Աքաղաղային նեղ, դուրս ընկած կրծքով և չափից ավելի երկար ձեռքերով թխադեմ ուսուցիչը կատաղած կապկի տպավորություն էր թողնում։ Ուրբաթախոսը հավանաբար հաստատ համոզված էր, որ ինքն իրավացի է, գուցե և ուզեց առիթից օգտվել, վրեժ լուծել Ժուլիեթից, Գաբրիելից, Տեր-Հայկազունից և մյուս տոտիճանավորներից։ Բոլոր դեպքերում անդուսպ մոլուցքով հին երգը երգեց.

— Մի՞թե դեռևս չեք ուզում տեսնել ճշմարտությունը։ Յոթ օր է ինչ շարունակ նույնն եմ կրկնում, կոկորդ եմ պատռում ձեզ համոզելու համար։ Վերջապես ապացո՞ւյց եք ուզում։ Դեռ վիճո՞ւմ եք, թե ով է մեղավոր։ Եվ Տեր-Հայկազունն ուզում է մեր հայրենակիցներին այդ մեղքի համար գնդակահարե՞լ։ Ես հարց եմ տալիս, թե նա ի՞նչ հիմունքով է ավագների խորհրդի ուշադրությունը շեղում ճշմարտությունից։ Ինչո՞ւ է շարունակ ժխտում, թե մեզ մատնել են։ Դրանով ո՞ւմ է ուզում պաշտպանել։ Մի՞թե թուրքերն առանց մեկնումեկի դավաճանության կարող էին իմանալ նոր արոտավայրերի տեղը։ Երբե՛ք, երբե՛ք։ Ոչ մի օտար մարդ չէր կարող հայտնաբերել դրանք։ Իսկ Գոնզագ Մարիսն ամեն տեղ քիթը խոթում էր, հոտոտում։ Եվ սա դեռ սկիզբն է։ Շուտով թուրքերը հանկարծ կհայտնվեն գաղթականի կենտրոնում։ Այդ հույնը լեռան ժայռոտ կողմով, գահավեժ արահետով կարող է թուրքերին հանել անպաշտպան սարը։

Մուխթարներին հենց այդ էր պետք։ Դեպքի նոր լուսաբանմամբ վերականգնվում էր նրանց արժանապատվությունը, թեև Ոսկանյանի ասածին բնավ չէին հավատում։ Թովմաս Քեբուսյանն աչքերը մտահոգ բարձրացրեց դեպի երկինք, ապա շուրջը նայեց։ Ինքը երիտասարդին մոտիկից չէր ճանաչում (սկիզբը դիվանագիտական երանգ ուներ), բայց երբ Բագրատյանը նրան հյուրընկալեց, ինքը ենթադրեց, թե հույնը արժանավոր մարդ է։ Սակայն տեղի ունեցածից հետո ստիպված է համաձայնել ուսուցիչ Ոսկանյանի ասածին, թե Մարիսը երևի մատնիչ է կամ նույնիսկ թուրքերի վարձկան լրտեսը։ Այլ կերպ չէր կարելի բացատրել դժբախտությունը։

Մուխթարների խումբը խուլ ձայնակցեց։ Յոթ տղամարդ ահագին աղմուկ կարող են բարձրացնել ոչ միայն կառավարչատան պես փոքրիկ սենյակում, այլև ավելի մեծ շենքում։

Հրանտ Ոսկանյանն իր ճղճղան ձայնով կարողացավ խառնել, տակնուվրա անել ձայների շիլան։ Եթե մեկը սևեռուն գաղափարով է տարված, ապա ընդունակ կլինի նաև ազդելու ուրիշների, նույնիսկ ավելի մեծ հավաքույթների վրա։ Սրանով պետք է բացատրել քաղաքական քարոզիչների ազդեցության գլխավոր գաղտնիքը, քանի որ այդ մարդիկ ոչինչ չունեն, բացի սահմանափակ բառակուտից և ձայնի դիվային հրապույրից։ Մուխթարներն ու ավագներից մի քանիսը պատրաստակամորեն անձնատուր եղան Ոսկանյանի առաջացրած լարվածությանը։ Դա իրենց օգտին էր։

Ուսուցիչ Հաբեթ Շատախյանը ոչ մի կերպ չէր կարողանում իր ձայնով խլացնել ժխորը։ Այրող ցասմամբ էր լցվել իր վաղեմի տխո-

յանի դեմ, որի գոյությունն իր կողքին ստիպված հանդուրժում էր արդեն ութ տարի։

— Ոսկանյա՛ն,— գոռաց նա,— ես քեզ ճանաչում եմ։ Դու խաբեբա ես և աճպարար։ Դու միշտ էլ սրիկա ես եղել, քո կյանքի ամեն ժամին։ Դու միայն ուզում ես թուք ու ցեխ նետել անմեղների դեմքին։ Դու վարկաբեկում ես Գոնզագ Մարիսին նրա համար, որ նա ուսյալ, քաղաքակիրթ մարդ էր, գրեթե ֆրանսիացի։ Նա ինձ ու քեզ պես չի ծնվել կեղտոտ գյուղում, դատապարտվածի պես ամբողջ կյանքում մի տեղ չի նստել ու լճացել։ Դե, ես գոնե Գաբրիել Բագրատյանի եղբոր բարության շնորհիվ որոշ ժամանակ ուսանել եմ Շվեյցարիայում, մինչդեռ դու այդքանին էլ չես արժանացել, Մարաշից դենը քիթդ դուրս չես հանել։ Ես թույլ չեմ տա, որ կեղտոտ անասունները վարկաբեկեն Բագրատյանի ընտանիքը։ Այդ մարդուն բոլորս երախտապարտ ենք։ Ոսկանյա՛ն, դու մրոտում ես ոչ միայն հույնին, այլև տիկին Ժուլիեթին, քանի որ նա ծիծաղելի էր համարում քեզ ու քո վարքուբարքը, քե՛զ, գաճաճ խելագար՝ քո ոտանավորներով ու քո գեղագրությամբ հանդերձ...

Սա անարդարացի մեղադրանք էր։ Ոսկանյանը Ժուլիեթի հանդեպ երբեք ստոր ցանկություն չէր զգացել։ Կնոջ ճաճանչափայլ վեհության երկրպագությունը, նրա շքախմբում գտնվելու սիրատոչոր, անտրտունջ համակերպումը սրբազնագույն զգացմունք էր, որին ուսուցիչը անձնատուր էր եղել իր ամբողջ էությամբ, երբեք չջերմացած սրտով, հակառակ սեփական բնավորության։ Եվ կանացի գեղեցկության այս մաքուր պաշտամունքին մահացու վիրավորանք հասցվեց ամենայն նենգությամբ։ Ոսկանյանն արդեն չէր ծղրտում։ Նա մռայլ արժանապատվությամբ պատասխանեց.

— Քո ֆրանսուհու հարգանքին կարոտ չեմ։ Ինքն ավելի է կարոտ իմ հարգանքին։ Սեփական աչքով տեսանք, թե դրանք ինչ մարդիկ են։ Վկա է աստված...

Եվ գաճաճը դեմագոգիկ հայտարարությամբ դիմեց մուխթարներին.

— Ես օրհնում եմ մեր մայրերին, մեր կանանց ու աղջիկներին, որոնց առաջ պետք է ծունկի գա այդ գոռոզամիտ եվրոպացի կինը։

Այս դիպուկ արտահայտությունն արժանացավ ծափահարության։ Ոսկանյանն ամբողջ զորությամբ նետվեց իր հակառակորդի դեմ.

— Իսկ քեզ, ապո՛ւշ Շատախյան, կասեմ, որ դու հարյուրապատիկ ծիծաղելի էիր քո առոգանությամբ, քո «խոսք ու զրույցով», քո կոտրատվելով։

Եվ վարպետորեն սկսեց ցուցադրել Շատախյանի ինքնահավան ֆրանսերենը։ Առանց խոսքեր արտասանելու ռնգային ձայնավորներ և

պայթուցիկ բաղաձայններ էր հեղեղում։ Անխուսափելի սովամահության առթիվ հրավիրված խորհրդակցությունը վերածվեց անախորժ խեղկատակության։ Ժողովրդականների մի մասը ծիծաղից գալարվում էր, հավանություն տալով Ոսկանյանի ծամածռություններին։ Ի՞նչ արած, դա մարդկային բնավորության մեջ արմատացած հավիտենական երեխայությունն էր։

Տեր-Հայկազունը, որն այսօրվա նիստը հովազային անակնկալ ոստյունով բացեց, այժմ տեղից չէր շարժվում, մի բան, որ ուղղակի անհավատալի էր։ Կարծես կիսափակ աչքերով և լուռ նստած՝ նա ինչ-որ նպատակ էր հետապնդում, ի մի էր բերում իր խոհերը։ Գուցե և դա հոգնած մարդու զզվանք և անտարբերություն էր, որի դեմ ոչ մի փրկություն չկար։

Բժիշկ Ալթունին քրթմնջալով հենվեց իր գավազանին, տեղից բարձրացավ.

— Կարծում էի, թե Տեր-Հայկազունը մեզ կանչել է դժբախտությունը քննելու։ Ես քո ներկայացման համար բնավ էլ նախապատրաստված չէի, Ոսկանյա՛ն։ Ես ավելի զբաղված մարդ եմ, քան դուք՝ վարժապետներդ, մանավանդ որ վաղուց դպրոցով չեք զբաղվում, ինչպես նկատել եմ։ Ձեր սաներն էլ նման են ձեզ։ Ոսկանյա՛ն, իբրև բժիշկ, ուզում եմ ասել, որ դու մի խեղճ ու կրակ խելագար ես։ Այն երիտասարդը մեզ մոտ եկավ մարտ ամսին։ Երաշխավորական նամակ էր բերել մեր դեղագործի անունով։ Այն ժամանակ Հալեպի վալին անգամ ոչինչ չգիտեր տարագրության մասին։ Մի՞թե քո կարծիքով հույնը դեռևս գարնանը մեզ մոտ եկավ, որ Մուսա լեռան նոր արոտավայրերի տեղը թուրքերին մատնի իբրև լրտես։ Հը՞։ Երևում է, թե Մարաշի ճեմարանը ի՞նչ խելացի մարդիկ է կրթում։

Հրանտ Ոսկանյանը՝ այդ հուսալի քաղաքագետը, ինչպես հայտնի դարձավ այսօր, հաստատ գիտեր, որ տրամաբանական որևէ սխալ չի կարող իր գործին վնասել։ Հետևողական դատողությունը ճիգ ու ջանք է պահանջում, իսկ ոչ ոք իր միտքը չէր ուզի լարել։ Երբ հակառակորդին արհամարհանքով կշտամբում են, ապա ժողովականների մեջ գլուխ է բարձրացնում գոհունակության զգացումը։ Ուսուցիչ Ոսկանյանը հենց այդ զգացման վրա էր հույսը դրել։

— Հնարավոր է,— խոսքի տակ չմնաց նա,— որ դու, բժիշկ, հիսուն կամ վաթսուն տարի առաջ բժշկություն ես սովորել, բայց թե այսօր ո՞վ կարող է ստուգել։ Քո հնացած գրքից մեկ-մեկ ինչ-որ որդեր ես փորփրում, հանում։ Դու և դեղագործը շատ եք իրար նման։ Նա էլ մեր միտքը տարիներ շարունակ պղտորեց իր գրադարանով։ Գրազ

կգամ, որ նրա գրքերի կեսը գեղեցիկ կազմերով չգրված թղթեր են։ Կյանքի մասին էլ դուք, ծերունիներդ, նույն պատկերացումն ունեք, այլապես կիմանայիք, որ կառավարությունը պատերազմի սկզբից ևեթ հայկական շրջանները լրտեսներ էր ուղարկում, այն էլ քրիստոնյաներ, որ ոչ ոք գլխի չընկնի...

Եվ նա, ի նպաստ մուխթարների, բացեց իր վերջին հաղթաթուղթը.

— Այս բոլորի պատճառն այն է, որ այս ալևոր պարոնայք կապված են Բագրատյանի ընտանիքի հետ։ Այդ հարուստները Շատախյանի նմաններին վաշխառուական միջոցներով Եվրոպա են ուղարկում։ Մի՞թե բոլոր դժբախտությունների պատճառը մեծահարուստները չեն։ Մեզ օտար են արևելքում ծնված այդ եվրոպացիները։ Դրանց անմաքուր գործարքների պատճառով հայ ժողովուրդը կործանվո՞ւմ է։

Սրանով նա դիպավ գեղջկական հոգիների ամենանուրբ լարին։ Թովմաս Քեբուսյանը պրպտեց իր հեռա՛ւ-հեռավոր հուշերը, աչքերն ավելի սաստկորեն շլեց.

— Ծերուկ Ավետիսն էդպիսին էր։ Առևտրական գործերով միշտ գնում էր Հալեպ, Ստամբուլ, Եվրոպա։ Տարին մի երկու ամիս էլ գյուղում չէր մնում։ Իսկ ես ոչ մի անգամ հեռու տեղեր չեմ գնացել։ Ի՞նչ է, ես չէի՞ կարող։ Դրա համար կողակիցս հոգիս էնքա՛ն է հանել...

Միանգամից մոռացության տրվեցին, ժխտվեցին եկեղեցու և դպրոցի հիմնադրի բարեգործությունները, չնայած այդ մարդու հայրենասիրությունը նրա մահից հետո էլ բարիք և օրհնություն էր սփռում Ցողոնօլուքի հովտից շա՛տ ու շատ հեռու։

Գրքերի պարսպի ետևում ինչ-որ բան շարժվեց։ Ամրոցի նեղ ճեղքից տնքալով ու հառաչելով հայտնվեց սպիտակ, երկար շապիկ հագած մի կերպարանք։ Գրիգորն էր՝ երդվյալ ամուրին։ Երեկվանից հագել էր մահվան շապիկը։ Չէր ուզում, որ Նունիկը կամ գերեզմանափորները հարության զգեստ հագցնեն։ Այդ պատճառով էլ ինքն էր իրեն մատուցել այդ վերջին ծառայությունը։ Գիտեր, որ չի ապրի այնքան, մինչև թուրքերը գրավեն Դամլաջրքը։ Դեղին այտերի վրա խոր փոսեր էին առաջացել, ուր կարելի էր հինգ ղուռուշանոցներ տեղավորել։ Ուսերը բարձրացել, հասել էին ականջներին։ Ձեռքերն ու ոտքերը ուռել, դարձել էին տձև կոճղեր։ Երբ վերջապես ամուր հենվեց գրքերի արանքում բացված ճեղքին, փորձեց իր ձայնին տալ իմաստունին հատուկ սովորական խուլ, անտարբեր շեշտը։ Բայց դա նրան այլևս չհաջողվեց։ Բառերը հնչեցին կցկտուր, դողդոջուն.

— Այս վարժապետը... Դրա վրա շա՛տ ու շա՛տ եմ շարչարվել... տարիներո՛վ... Գիտունների և բանաստեղծների արյանն եմ... մեջը նեբարկել... Կարծում էի, թե ընդունակ է, կարող է մարդ-հրեշտակ դառնալ... Ի՞նչ մոլորություն... Ով անասուն է ծնվել, նա մարդ չի դառնա... Կարծում էի, թե սա միայն իր աղքի մասին չի մտածում... Բայց այս վարժապետը շատ ավելի ստոր է, քան միայն աղքի մասին մտածող խեղճ արարածները։ Վե՛րջ, սա կորած մարդ է... Այնինչ իմ հյուրը... ես մինչև հիմա լռում էի... Մարքսը հրաժեշտի ժամանակ ձեռքս սեղմեց, խոստացավ, որ Բեյրութում ամեն ինչ կանի մեզ համար... կգիմի հյուպատոսներին...

Գրիգորն այնքան նվաղեց, որ այլևս չկարողացավ շարունակել։

Ոսկանյանը վրա ավեց.

— Հապա որտեղի՞ց էր ձեռք բերել իր անձնագրերը... Գատարկ խոսքերի հավատում եք, այնինչ արևի լույսի պես պայծառ իրողությանը չեք հավատում։

Մուխթարների միտքը կարծես լուսավորվեց։ Իսկապես, հույնք որտեղի՞ց էր ձեռք բերել իր անձնագրերը։ Գատվելի Աբրամը ոտքի թռավ.

— Վե՛րջ տուր, Ոսկանյա՛ն։ Անտանելի հիմարություններ ես դուրս տալիս։ Մի ամբողջ ժամ է, ինչ ոչ մի մարդ խելքը գլխին խոսք չի ասել։ Մինչդեռ եթե օր հետո սավի հնք մատնվելու...

Թիադեմ ուսուցիչը ոչ մի կերպ չէր կարողանում սթափվել իր շարասարությունից։ Կարծես այդ պահին նա ուզում էր ամեն ինչ անել, որպես թափել այն ամենը, ինչ կուտակվել էր ամբողջ կյանքում՝ ատելություն, վիրավորանք, կատաղություն։ Նա բարձրաձայն հրապարակեց այն բամբասանքը, որի շուրջը ամենազրպարտասեր կանայք անգամ շշուկով էին խոսում.

— Ահա՛, պարոն պատվելի՞ն էլ։ Ուրեշ կերպ չի էլ կարող վարվել, քանի որ իր քրոջ միջոցով Բագրատյանի հետ ազգական է դարձել։

Աբրամն ուզեց նետվել Ոսկանյանի վրա, բայց ինչ-որ մեկի զորեղ բազուկները նրան ետ պահեցին։ Ներսունի Թովմասյանը խեցգետնի պես կարմրելով՝ գոռաց և մահակը բարձրացրեց։ Սակայն Տեր-Հայկազանը ավելի արագաշարժ գտնվեց, քան երկու Թովմասյանները։ Նա կառչեց ուսուցչի անօձիք վերնաշապիկից.

— Ոսկանյա՛ն, ես երկար քեզ հանդուրժեցի, որ դու ապացուցես, ինչ-որ պետք է ապացուցեիր։ Այսմ բոլորս ապրեցանք, թե որտեղից է գալիս ամբողջ գարշահոտությունը, ով է մարդկանց հոգին թունավորում։ Ես դա վաղուց էի զգում։ Ժողովուրդը քեզ ավելի լավ ճանաչեց, քանզի դու վարժապետ ես։ Սակայն քեզ դարձյալ վերադարձնում եմ ժողո-

վրդին և ամենայն ինչ կբացատրեմ քո վերաբերյալ։ Արդ, դո՛ւրս կորիր այստեղից։ Քեզ մեկընդմիշտ զրկում եմ մեր խորհրդակցություններին մասնակցելու իրավունքից։

Հրանտ Ոսկանյանը գոռգոռաց, թե ինքը հաշվի չի առնի այդ որոշումը։ Ինքը հենց այդ նպատակով էլ եկել էր. ուզում էր հեռանալ շաղակրատների ու ծերունիների միությունից, որին այսօր կամ վաղը ժողովուրդը, միանգամայն տեղին, վռնդելու է։ Չնայած կատաղի բառակարկուտին, նախկին ուրբաթախոսը չկարողացավ իր խոսքն ավարտել, քանի որ Տեր-Հայկազունը մի քանի վայրկյանում ոտքի փառահեղ հարվածով նրան դուրս շպրտեց և դուռը ծածկեց։

Անբարյացակամ լռություն տիրեց։ Մուխթարներն իրար նայեցին։ Ժողովրդապետի բռնակալական վարմունքը վտանգավոր էր։ Տեր-Հայկազունը նույն ձևով կարող էր հաշիվ մաքրել նաև ուրիշների հետ։ Որևէ ընտրյալ կարող էր վտարվել միայն համաժողովրդական քվեարկությամբ և ոչ թե մի պաշտոնյայի քմահաճույքով, որքան էլ բարձրաստիճան լիներ այդ պաշտոնյան։ Եվ այն պահին, երբ անխուսափելի սովամահության ուրվականը հսկայական քայլերով վայրկյան առ վայրկյան մոտենում էր Քաղաքաձորին, Թովմաս Քեբուսյանը հազաց, տրմբտրմբացրեց ճաղատ գլուխը և սահմանադրական հիմունքներով առարկեց ավագների խորհրդի անդամներից մեկի վարքագծին։ Տեր-Հայկազունը իրավասու է վերջնական վճիռ կայացնելիս, եթե խոսքը վերաբերում է որևէ առաջարկ ընդունելուն կամ մերժելուն։

Առաջին անգամ գլուխ բարձրացրեց օպոզիցիան։ Մուխթարներից բացի, հակառակորդ բանակի կողմն անցան նաև երիտասարդ ուսուցիչներից մի քանիսն ու գյուղական մի քահանա, որը թշնամաբար էր տրամադրված Տեր-Հայկազունի դեմ։ Գլուխները կորցրած, զայրույթից ու շփոթմունքից քրտնաթոր նստած էին հայր և որդի Թովմասյանները։ Մնացած բոլորը, ամենից առաջ Տեր-Հայկազունը, առանց այդ բանը ցանկանալու կամ գիտակցելու, պատկանում էին Բագրատյանի կուսակցությանը։ Ի դեպ, մեծ աղետի փոխարեն, օրակարգի կենտրոնում Բագրատյանն էր։

Երբ Տեր-Հայկազունը կոպտաբար ընդհատեց բոլոր կողմնակի հարցերի քննարկումը և ուզեց անցնել կենսական խնդրի լուսաբանմանը, արդեն շատ ուշ էր։ Խորանի հրապարակում կասկածելի աղմուկ բարձրացավ։ Ավագների խորհուրդը պարտավոր էր անմիջապես միջամտել։

Հրանտ Ոսկանյանը խեղճ ու կրակ մարդ էր։ Եվրոպական հասարակության մեջ նրան կհամարեին չակերտավոր մտավորական, այսինքն՝

միջնակարգ կրթության տեր մի մարդ, որը չի կարող ապրել իր ճակատի քրտինքով, հեղհեղուկ բնավորություն ունի, գոյության դաժան պայքարում չի կարողանում իր տեղը գտնել, ամենուրեք ետ է մղվում, սոված-ծարավ, դիրքի ու իշխանության ետևից է ընկնում, հալումաշ լինում։ Այլ պարագաներում Ոսկանյանի արարքն անմեղ խենթություն կհամարվեր, սակայն այստեղ, Դամլաջրքում, դա ծանր խորհրդածությունների առիթ էր տալիս։ Ոսկանյանը մեն-մենակ էր, և այնուամենայնիվ նա առնչություն ուներ մի այլ աշխարհի՝ մութ ու անծանոթ աշխարհի հետ, որը միայն այսօր փոքր-ինչ զգացնել տվեց իր գոյությունը։ Այսպես թե այնպես, այդ աշխարհի վրա Ոսկանյանը ժողովրդական կոմիսար էր կարգված։ Այդ դերում նա ստիպված էր ձախողվել իբրև «մտավորական»։ Նրա պարտությունը չէր հետաքրքրում միայն Սարգիս Կիլիկյանին։ Ռուսը լռակյաց, ինքնամփոփ մարդ էր, թեև համարվում էր դասալիքների անթագ արքան։ Եթե նույնիսկ դառնում էր այս կամ այն իրադարձության կենտրոնական դեմքը, միևնույն է անձնապես մնում էր չեզոք, իբրև կուռք կամ անդրաշխարհից եկած ոգի։ Նրան շատ հարմար էր «մորե մենակ» պատկերավոր և տխուր արտահայտությունը իր ամենասառցեղեն իմաստով։

Կիլիկյանից բացի երեսուներկու օրում Հարավաբերդում հայտնվել էին ավելի քան ութսուն դասալիք։ Շատ դեպքերում «դասալիք» արտահայտությունը քողարկում էր այս կամ այն մութ անձնավորության նվազ պատվավոր կոչումը։ Այս մշտական համալրման պատճառով տարաձայնություններ էին ծագում Բագրատյանի և Տեր-Հայկազունի միջև։ Գլխավոր հրամանատարի կարծիքով չպետք է հրաժարվեին երիտասարդ հմուտ ռազմիկներից, մինչդեռ վարդապետը կասկածի տակ էր առնում ոչ միայն հետզհետե ավելացող անհայտ մարդկանց օգտակարությունը, այլև հայկական ծագումը։ «Դրանցից մի երկուսը կարող են ավազակներ լինել,— վարդապետին հանգստացնում էր Գաբրիելը,— բայց դրանք հիանալի կռվողներ են»։ Նման դեպքերում նա մտաբերում էր իր թեթև գվարդիայում ծառայող դասալիքներից մի քանիսին, որոնք ճակատամարտերում իրենց լավ էին դրսևորում։ Բագրատյանը մտադիր էր իր շտաբը հաստատել այդ կասկածելի զորախմբի շրջանակում, որպեսզի դասալիքների սանձն իր ձեռքին պահեր։ Սակայն դեռևս չէր կարողանում բաժանվել իր սիրեցյալ տասնյակների զինվորներից։ Միայն Ստեփանի մահից հետո այլևս չերևաց հյուսիսային դիրքերում։

Մի քանի օր առաջ խզդրբեգցի անճարակ հրամանատարը տենդով ծանր հիվանդացավ, և նրան տեղափոխեցին սուր վարակիչ հիվանդների անտառակը։ Այդ օրից ի վեր Հարավաբերդի կարգապահու-

թյան միակ տնօրենը Ոսկանյանն էր։ Սա աշխատում էր նմանվել Բագրատյանին։ Քնում էր դասալիքների հետ, ամբողջ օրն անց էր կացնում նրանց հետ։ Բայց դա դժվարին գործ էր։ Ողորմելի թզուկը ստիպված էր շարունակ ճիգ ու ջանք թափել, հարմարվել ամեն սատանայությունի տեսած ստահակներին, հաճոյանալ։ Ստիպված էր գիշեր-ցերեկ ավազակ ձևանալ, իր ուժից վեր գործեր բռնել։ Ժուլիեթի հասցրած վիրավորանքը դեռ չէր անցել, և հենց այդ պատճառով էլ փոքրամարմին ուսուցիչն այնքան տարօրինակ ելույթ ունեցավ, ավազակների խորհրդում փորձարկեց իր «հեղափոխական» խառնվածքը։ Ի դեպ նա շատ էր հպարտանում իր այդ տապալմամբ, ինքն իրեն մեծարում էր «հեղափոխական» տիտղոսով։

Հարավային հատվածը մեկուսացած էր, հեռու էր թե՛ խորանի հրապարակից, թե՛ կարգապահության ոլորտից, թե՛ ղեկավարության աչքից։ Ժողովուրդը որոշակի երկյուղով էր վերաբերվում այս հատվածի զինվորներին։ Այն ժամանակ, երբ Հյուսիսային լեռնաթամբի և Քաղաքաձորի միջև մշտապես գոյություն ուներ աշխույժ հաղորդակցություն, Հարավաբերդի ժայռերի մեջ հազվադեպ էին երևում հատուկենտ հետաքրքրասերները։ Պատճառը ո՛չ ճանապարհի հեռավորությունն էր, ո՛չ էլ այն, որ դասալիքներն ընտանիքավոր չէին։ Երբեմն-երբեմն Բագրատյանը մարդիկ էր ուղարկում իրադրությունն ստուգելու։ Սրանք գլխավոր հրամանատարին առանձնապես գոհացուցիչ բաներ հաղորդել չէին կարող։ Պարզ էր. դասալիքները պետք է երախտապարտ լինեին, որ հասարակությունն իրենց ապաստան է տվել, որ այլևս սովալլուկ կյանք չեն վարում, սնվում են մարդավայել ձևով։ Իսկ թե իրականում դրանք որքա՜ն էին կապված նույն հասարակության հետ, ինչպիսի՜ն էր այդ մարդկանց անձնվիրությունը, ոչ ոք չգիտեր, ոչ ոքի մտքով չէր անցնում։ Հարավաբերդն առանձին աշխարհ էր։ Ոչ մեկին չէր հետաքրքրում, թե այստեղ ինչ կյանք են վարում զինվորները։ Ի հատուցումն կանոնավոր սննդի, նրանք պաշտպանում էին Հարավաբերդը։ Ուրիշ ոչինչ։ Այս չկնքված պայմանագրի համաձայն, դասալիքները ևս մինչ այդ գրեթե չէին հետաքրքրվել Քաղաքաձորով, խորանի հրապարակով, ավազակների խորհրդով։ Հասարակական վայրերում շատ հազվադեպ էին երևում։

Այսօր, ծանր աղետի առավոտյան, թերևս առաջին անգամ դասալիքները մեծ խմբով ոտք դրին գաղթականյան։ Որոշակի ոչ մի նպատակ չունեին։ Ուղղակի ինչ-որ բանի հոտ էին առել։ Այդ կարգի արարածները հավիտենական ցանկություն ունեն հետաքրքրվել զանազան խառնակություններով, միանգամայն դատարկ բաներով, միայն թե դա նորություն լինի։

Խորանի հրապարակում մարդիկ հաճախակի էին հավաքվում, հուզված քննարկում օրվա այս կամ այն իրադարձությունը։ Հաճախ դա լինում էր ուրբաթ օրը, երբ Տեր-Հայկազունը դատ էր վարում։ Դատավարությունից հետո հակառակորդ կողմերը մի կողմ քաշված՝ շարունակում էին վիճաբանել բերանբացների ակտիվ մասնակցությամբ։

Այս անգամ տեսարանը բոլորովին այլ էր։ Ճիշտ է, կանայք դարձյալ մեծամասնություն էին կազմում, բայց բազմաթիվ զինվորներ էին հավաքվել։ Ահավոր լուրը լսելուն պես նրանք վաղ առավոտյան թողել էին առաջավոր գիծը, շտապել Քաղաքաձոր։ Բազմությանը միացել էր նաև նունիկն իր ողբալի խմբով։ Գերեզմանաբնակներն առանց Տեր-Հայկազունի հետ բանակցելու, իրավունք էին համարել տեղափոխվել նոր գերեզմանատան մոտերքը։ Քաղաքաձորցիները սոսկալի հայհոյում էին այդ անցանկալի հյուրերին, որոնք խժռում էին իրենց խղճուկ պաշարները։ Ազատվելու ոչ մի հնար չկար։ Այդ մուրացիկները բազմությանն ավելի գորշ տեսք էին տալիս։ Այստեղ էին հավաքվել նաև դպրոցական երեխաները, որոնք վերջին ճակատամարտից հետո մնացել էին առանց հսկողության, երես էին առել, վայրենացել։ Անչափահասներն աղմկում էին, անկարգություն անում։

Ընդհանուր սարսափի իրարանցման մեջ իրենց ավելի հանգիստ էին պահում ժողովրդի ամենաստորին խավին պատկանող մարդիկ՝ չքավոր գյուղացիները, ծառաները, արհեստավորների աշակերտները։ Աղմկողները միջին խավն էր, այսպես ասած «մաներ հողատերերը»։ Սրանք խելահեղ շարժումներ էին անում, գլխարկները նետում գետին, փետում իրենց մազերը, թափահարում բռունցքները։ Ստացվում էր հուսահատության տարօրինակ պար։ Սակայն նրանց վհատության պատճառը մոտալուտ սովամահությունը չէր։ Դրանք ցուցամոլներ էին։ Այնպես էին գոռգոռում, կարծես զրկվել էին իրենց սեփականությունից, վերջին ունեցվածքից։ Եթե մարդ հավատար դրանց ողբին, կարելի էր այն տպավորությունն ստանալ, թե թուրքերն ամեն մեկից հարյուր հազարավոր ոչխարներ էին կողոպտել։ Այս փոքրիկ հողատերերից յուրաքանչյուրը մտացածին թվերով բազմապատկում էր իր սեփական կորուստը։ Ոչ ոք չէր մտածում, չէր էլ ուզում մտածել, որ կողոպտված հոտերը վազուց արդեն հանրային սեփականություն էին, ուրեմն և ոչ մի առանձին մարդ որևէ բան չէր կորցրել, որ յոթ գյուղի մեծաթիվ հոտերն ու նախիրները հալվել, սպառվել էին, մնացել էին դրանց չնչին մասը։ Վերջապես չէին մտածում, որ այդ ամբողջ լացուկոծը, աղմուկ-աղաղակը լիովին անօգուտ էր, անտեղի։ Ընդհանուր վայնասունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ երկյուղի, պարծենկոտության և ցնորամտության հիվանդություն։

գին խառնուրդ։ Դա նման էր Ոսկանյանի մտապատրանքին, որը նա կապում էր դավաճանության հետ։ Անմտությունը ավելի ու ավելի նեն. գործն էր պղտորում մարդկանց հոգին։

Անսպասելի հարվածից ապշած միամիտ ժողովուրդը սկզբում վրդ. տացած լռում էր։ Մարդիկ երկյուղով հարցեր էին տալիս ավելի բանի. մացներին։ Բայց քիչ հետո մանր հողատերերի վրդովմունքը փոխանցվեց բազմությանը։ Մուխթարները պետք է այդ հողատերերի դեմ պայքարեին։ Տեր-Հայկազունը գյուղապետներին նախապես ուղարկել էր, որ սրանք իրենք համտես անեին իրենց եփած ճաշը։ Իբրև գործադիր իշխանության ներկայացուցիչներ, նրանք էին կապ ստեղծում ավագների խորհրդի և ժողովրդի միջև։ Մուխթարների եփած ճաշի առաջին իսկ մի քանի գդալը մնաց նրանց կոկորդում։ Մարդիկ խմբովին վրա հասան և ամբողջ հրապարակով մեկ սկսեցին քաշքշել գյուղապետներին։ Սրանց արդարացման բոլոր փորձերն ի դերև ելան։ Մարդիկ զայրացած գոռում էին։

— Միայն դո՛ւք եք մեղավոր, միայն դո՛ւք։

Մի համեստ սուտ, երևի դրությունը փոքր-ինչ թեթևացներ։ Կարող էին ասել, թե, իբր, չնայած դժբախտությանը, գաղթականը դեռևս շատ գաղտնի պաշարներ ունի։ Եվ բազմությունը կհավատար։ Դրությունը հիրավի թեթևացած կլիներ, քանի որ Մուսա լեռան համար մի քանի օրը վիթխարի ժամանակամիջոց էր։ Սակայն մուխթարներից ոչ մեկի գլխով չանցավ այդ փրկարար միտքը, ոչ ոք որևէ պատիր հեռանկարով չհուսադրեց ժողովրդին՝ գոնե բորբոքման պահին։

Թովմաս Քեբուսյանը սովորաբար հավասարակշռված մարդ էր, բայց նա էլ գլուխը կորցրել էր։ Ոսկանյանի ազդեցության տակ ընկնելով՝ ուզեց բազմության ուշադրությունը շեղել, ընդհանուր վրդովմունքին տալ այլ ուղղություն։ Դա ամենավատթար և ամենավտանգավոր միջոցն էր։ Հայտարարեց, թե դավաճանություն է կատարվել։ Խաղաղ ժամանակաշրջանում ժողովուրդը լավ հոտառություն ունի. անսխալ ճանաչում է մարդկանց, իսկույն կռահում է, թե ի՛նչ է նրանց ասածի բուն էությունը։ Նրա կասկածամտությունն անգամ առողջ է։ Այս տեսակետից ուսուցիչ Ոսկանյանի առածները մարդիկ երբեք լրջորեն չէին ընդունում։ Բայց այս անգամ մուխթարների օգնությամբ նա հաջողության հասավ։ Նույն բազմությունը, որ առօրյա կյանքում մեծ-մեծ խոսողներին թերահավատությամբ էր վերաբերվում և նրանց դիմակազերծ անում, ճակատագրական պահերին զոհ է դառնում։ Դրանից բացի, կան անորոշ, տարտամ հասկացություններ, որոնք ավելի ուժեղ են ներգործում։ «Դավաճանություն» բառը ևս այդպիսի հասկացություն էր։ Միայն սակավաթիվ մարդիկ կարող էին պարզ պատկերացնել, թե դա ի՞նչ առնչություն կարող է ունենալ իրադարձության հետ։ Համենայն դեպս թշնամական բոլոր բնազդները պոռթկացին, բայց ոչ այն ուղղությամբ, ինչ ցանկալի էր մուխթարներին։ Չորս կողմից սկսեցին գոռգոռալ, թե ղեկավարները, բոլոր երևելիներն ու մեծամեծները երդվել են ժողովրդին կործանել, միայն թե իրենց գլուխներն ազատեն։ Դրանք պատճառ դարձան, որ մարդիկ բարձրանան Մուսա լեռը, դատապարտվեն անխուսափելի բնաջնջման։ Ժողովրդի միակ, ճշմարիտ բարեկամը պատվելի Հարությունն Նոխուդյանն էր։ Նա իր համայնքի հետ տարագրվելուց հետո ապրում է արևելքում՝ աղքատության մեջ, սակայն հանգիստ։

Ավելի և ավելի էր սաստկանում ավագների խորհրդի դեմ ուղղված նախատինքների կարկուտը։ Հարավաբերդի ստահակները խցկվում էին բազմության մեջ, հետաքրքրությամբ լսում։ Կարծես ընդհանուր հուզմունքը նրանց բոլորովին չէր վերաբերում, և դա ինչ-որ ուրախ զվարճություն էր։ Այնուհանդերձ ամենուրեք, որտեղ նրանք հայտնվում էին, խմորումը սաստկանում էր, ինչպես ածխաթթուն է պղպջակներ առաջացնում խմիչքի մեջ։

Արամ Թովմասյանը փորձեց հանգստացնել մարդկանց, սակայն ձախողվեց։ Նա դարձյալ հափշտակված էր իր սեեռուն գաղափարով՝ ձկնորսական ցնորքով, չնայած այդ մտահղացումը շատ խղճուկ արդյունք էր տվել։ Պատվելին իրադրությունը չէր դիտակցում ամենայն խորությամբ, այլապես կատաղած բազմության առաջ երկարաշունչ ճառով, տեխնիկական մանրամասնություններով հանդերձ, չէր լուսաբանի ձկնահարաշքի շուրջը պտտվող իր հավատամքը։ Բոլորին էլ հայտնի էր այդ ցավալի պատմության արդյունքը։

Թովմասյանի եզրակացություններն սկզբում ծիծաղ առաջացրին, ապա՝ հեգնանք։ Բայց քանի որ պատվելին չէր նահանջում, մարդիկ այլևս թույլ չտվին, որ նա խոսի։ Ինչ-որ մեկի դրդմամբ հեղհեղուկ բազմությունը խառնիխուռն շարժվեց դեպի կառավարչատուն։ Չորս կողմից ոչ միայն բռունցքներ էին թափահարում, այլև բահեր ու քլունգներ։

Կառավարչատան պահակները գունատվեցին, անվճռականորեն առաջ պարզեցին հրացանները, որոնց փողերի վրա թուրքական սվինադաշույններ էին ամրացված։

Ներսում, հիվանդ դեղագործից բացի, բժիշկ Ալթունին էր, Զաուշ Նուրհանը և վարդապետը։ Տեր-Հայկազունը հաստատ գիտեր, որ մուխթարների ու Թովմասյանի ձախողումից հետո ամեն մի հեղինակություն կործանված կլինի, եթե ինքը չկարողանա դա վերականգնել։ Ոչ մի

վայրկյան չէր կասկածում իր հաջողությանը։ Նրա աչքերը մթնեցին, աչքեր, որոնց մեջ տարօրինակ կերպով միաձուլված էին ամեն ինչ գիտող երկչոտությունն ու սառը վճռականությունը։ Նա դուրս եկավ, պահակներին մի կողմ հրեց, մտավ բազմության մեջ այնպես, կարծես ոչ ոք չկար իր դիմաց, և ամբոխը գոյություն չուներ։ Տեր-Հայկազունի կեցվածքը ո՛չ լարված էր, ո՛չ էլ բռնազբոս։ Շարժվում էր իր սովորական ձևով՝ գլուխը փոքր-ինչ խոնարհած, ձեռքերը պարեգոտի թևքերի մեջ թաքցրած, ինքնամփոփ և կարծես ցրտից սարսռալով։

Բազմության առաջին շարքերը խայտաբղետ էին՝ մեծ մասամբ կանայք, մի քանի աղմկարար մանր հողատերեր, մի քանի դասալիքներ, բազմաթիվ անչափահասներ։ Սրանք էին գլխավոր խոովարարները և իրարանցումից բավականություն ստացողները։ Այժմ այս բոլորը ետ-ետ քաշվեցին, երբ սառնասրտորեն առաջ քայլեց Տեր-Հայկազունը։ Առանձնապես ազդվեցին կանայք։ Վարդապետի տեսքը նրանց համակեց կաշկանդող երկյուղածությամբ։

Նուրհան էլլեոնը զինված պահակների հետ մխրճվեց բազմության մեջ, որպեսզի այստեղ առաջացած ճեղքը չփակվեր վարդապետի շուրջը։ Սակայն այս օգնությունն ավելորդ էր։ Լուռումունջ ընթացող Տեր-Հայկազունը իր ամեն մի քայլով ճանապարհ էր բացում։ Բոլորը զարմացել էին, բոլորի աչքերում կար այն հարցը, թե ի՞նչ մտադրություն ունի վարդապետը, ի՞նչ է ուզում անել։ Մոլուցքը տեղի տվեց հետաքրքրությանը։

Տեր-Հայկազունը համաչափ քայլերով հասավ խորան, սանդուղքի առաջին աստիճանի վրա շրջվեց՝ ոչ թե հուզված, այլ անվրդով։ Բազմությունը ստիպված եղավ (բոլորն էլ աստվածավախ հայ մարդիկ էին) նայել սուրբ խորանին, որտեղ արևի տակ հուրհրատում էին արծաթյա մեծ խաչելությունը, տապանակը, սկիհը, հաղորդության մատուցարանը, բազմաթիվ աշտանակներ։ Արևի ճառագայթները լուսեղեն մասների պես թրթռում էին խորանի եռևում, հաճարենու ճյուղերից պատրաստված պատի երկայնքով։ Տեր-Հայկազունը կանգնած էր ստվերում, իսկ երկու կողմից նրան պահապան էր կանգնած ցերեկվա լույսը։ Վարդապետին վեհացնում էր այն հանգամանքը, որ նա ոչ միայն ժողովրդի ընտրյալն էր, այլև աստծո օծյալը։ Հարկ չեղավ ձայնը բարձրացնելու, քանի որ շուրջը միանգամից քար լռություն տիրեց.

— Մեծ դժբախտություն է պատահել,— ասաց նա առանց ողբալի հանգիստավորության, գրեթե անտարբեր։— Այդ դժբախտության դեմ զայրացել եք, փնտրում եք մեղավորներին, կարծես դա որևէ չափով կարող է ձեզ օգնել։ Դաղթելուց առաջ ինքներդ եք ընտրել ավազակներին,

որոնք ահավասիկ երեսունմեկ օր իրենց զոհաբերում են ձեզ համար։ Չի եղել գեթ մի օր, որ այդ մարդիկ կարողանան հանգիստ քնել։ Դուք ևս ինձ նման լավ գիտեք. ձեր մեջ ավելի հարմար մարդիկ չկան։ Հասկանում եմ. մեր կյանքից դժգոհ եք։ Ես էլ եմ դժգոհ։ Սակայն դուք ձեր կամքով եք Դամլաջրք եկել, ոչ թե ուրիշի ստիպմամբ։ Զուզեցիք տարաձրվել պատվելի Նոխուդյանի հետ։ Եթե ձեր արածի համար զղջում եք, ապա, լավ իմացեք, ազատ կարող եք փոխել ձեր վճիռը։ Միջոց կա...

Հռետորն այստեղ փոքր-ինչ լռեց, սակայն շարունակեց նախկին չոր եղանակով.

— Մենք դեռևս միջոց ունենք։ Այստեղ կանգնածներդ մեծամասնություն եք կազմում, բայց ես կկանչեի նաև խրամատներում եղածներին... Հանձնվենք թուրքերին։ Ես ձեր անունից այսօր ևեթ կարող եմ իջնել Յողոնօլուք։ Ով համաձայն է, թող ձեռք բարձրացնի։

Արհամարհական անտարբերությամբ նա սպասեց ուղիղ երկու րոպե։ Քար լռությունը չխախտվեց։ Ոչ մի ձեռք չշարժվեց։

Տեր-Հայկազունը կանգնեց խորանի ամենաբարձր աստիճանին, և հրապարակով մեկ թնդաց նրա ձայնը.

— Տեսնում եմ, որ ոչ մեկը չի ուզում հանձնվել... Այդ դեպքում իմացած եղեք. կարգն ու կանոնը չպետք է խախտվեն։ Ամենուրեք պետք է հանդարտություն տիրի, հասկանո՞ւմ եք, հանդարտություն, եթե նույնիսկ քաղցից մեր եղունգները կրծենք։ Մեր մեջ միայն ու միայն մի ձևի դավաճանություն կա։ Դա անկարգությունն է։ Ով տեղի տա այդ դավաճանությանը, դավաճանին արժանի պատիժ կստանա։ Կարող եք վստահ լինել, երդվում եմ։ Այսպես։ Իսկ այժմ անցեք ձեր գործին։ Ամեն ինչ մնում է անփոփոխ։

Սա անկիրթ երեխաների հետ վարվելու ձև էր, սակայն տվյալ պահին միակ ճիշտ եղանակը։ Ոչ մի բացականչություն, ոչ մի հեգնական բառ, ոչ մի կշտամբանք, թեև Տեր-Հայկազունի խոսքով դրությունը բնավ էլ չբարելավվեց։ Նույնիսկ գոռգոռացողներն ու հրահրողները շփոթված լռում էին։ Պետք է կարգապահության և գերի հանձնվելու միջև ընտրություն կատարեին։ Դա ստանձնարերված զգացումների վրա թողեց առաջ լոգանքի ազդեցություն։

Չնայած Տեր-Հայկազունի պահանջին, բազմությունը կարծես մտադիր չէր հեռանալ խորանի հրապարակից։ Վարդապետի ազդանշանով Զաուշ Նուրհանն իր խմբով շղթա կազմեց և քաղցր խոսքերով, մասամբ կոպիտ կատակներով, մասամբ էլ կոպտաբար հրելով, բազմությունը ջնջեց դեպի խրճիթները։ Ոստիկանությանը միացան կամավոր օգնականներ։

Քանի որ վարդապետի ճառը վճռական հարված էր հասցրել խռովությանը, խորանի հրապարակը մաքրվեց առանց դժվարությունների։ Մարդիկ խմբերի բաժանված՝ աղմկելով հեռացան, անցան աշխատանքի։ Հակառակ սոսկալի աղետին, առօրյա կյանքը կարծես դարձյալ մտավ իր հունի մեջ։ Նեղ փողոցների եզրերին շարվեցին պահակները, որպեսզի բազմությունը նոր ցույցերով չխանգարեր խորհրդակցությունը։ Վերջապես ավագները, առանց վիճաբանության, պետք է քննարկեին անողորմ իրադրությունը։

Խորանի սանդուղքին կանգնած՝ Տեր-Հայկազունը անթարթ նայում էր դատարկ հրապարակին։ Արդյոք խոհեմություն չէ՞ր լինի, եթե ներքին պաշտպանության պահակազոր ստեղծեին, ամենաշնչին խռովություններն անգամ կանխեին անողոք պատիժներով։ Սակայն այս մտահղացումը իրենից վանեց ձեռքի հոգնած շարժումով։ Ի՞նչ օգուտ սարսափ տարածելուց։ Իսկական սովի մատնվելով, մարդիկ օրեցօր թուլանալու են, և անդառնալիորեն վրա է հասնելու ուժասպառությունը։ Հայերին վերջ տալու համար թուրքերը բնավ կարիք չունեին հարձակման անցնելու։ Վարդապետը երկյուղով ինքն իրեն հարց տվեց. «Մինչև ե՞րբ կդիմանանք»։ Կարելի էր պատասխանել՝ համբելով մի ձեռքի մատները։ Օգնություն կարող էին ստանալ աստվածային հրաշքով, ինչպես Իսրայելի որդիները, որոնք անապատում քառասուն տարի դեգերեցին։ Բայց ընտրյալ ժողովրդին մանանա և լորերի երամներ շնորհելիս երկինքն անգամ շռայլ չէր...

Ինչևէ, նույն օրը տեղի ունեցավ անակնկալ մի դեպք, որը փոքրինչ քաջալերեց հույսի ու վհատության տանջալից քառասում խարխափող մարդկանց։ Այդ դեպքը կարելի էր և՛ հրաշք համարել, և՛ անհաջողություն։

Ստեփանի մահից անմիջապես հետո բժիշկ Ալթունին իր կնոջն ազատեց մյուս բոլոր պարտականություններից, ուղարկեց հիվանդի վրանը, որպեսզի նա ստանձնի Ժուլիեթի խնամքը։ Բժիշկը մեծ զոհողություն էր կատարում, քանի որ անսպառ եռանդի տեր Անթառամը մեն-մենակ կատարում էր հիվանդանոցի, ինչպես նաև սուր վարակիչ անտառամասի ամբողջ աշխատանքը։ Բարեսիրտ ծերունին այս զոհողությունը կատարեց ի սեր Իսկուհու։ Հիվանդին երկար ժամանակ խնամելու հետևանքով (ուրիշ պատճառ էլ կար) աղջիկը դարձել էր ստվեր։ Ուղղակի անհավատալի էր թվում, որ հալումաշ եղած մի էակ դեռևս կարողանում էր այդքան եռանդուն շարժվել, գործ անել։ Դիմադրական ի՞նչ ուժով էր օժտված Իսկուհին, եթե չէր վարակվում, չնայած գիշերցերեկ հիվանդի կողքին էր։ Մայրիկ Անթառամի առաքելության պատճառներից մեկն էլ բարոյական բնույթ էր կրում։ Երեք վրանի կասկածելի երրորդությունը պետք է դառնար կասկած չհարուցող չորրորդություն։

Նոր հիվանդապահն արդեն բնակվում էր Ժուլիեթի հետ։ Իսկուհին տեղափոխվել էր Օվսաննայի լքած վրանը։

Ժուլիեթի սիրտը դիմացավ համաճարակին։ Երբ Գաբրիելն իմացավ, որ իր կնոջ վիճակը կամաց-կամաց բարելավվում է, հակվում դեպի կյանքը, լցվեց խոր գորովանքով։ Եթե Ֆրանսուհին հանդերձյալ աշխարհը գնար իր զառանցական երազներում, երբ ղողանջում էին Ֆրանսիայի հաղթական զանգերը, ապա սթափվելն ավելորդ կլիներ։ Այդ դեպքում Գաբրիելը նրան որքա՜ն բախտավոր կհամարեր։ Բայց այժմ Ժուլիեթը սթափվելու վրա էր։ Ճգնաժամից հետո սկսվել էր նոր ուշագնացություն, ավելի ճիշտ՝ լեթարգիական լիակատար նվաղում։ Բարձր ջերմության ժամանակ հիվանդը միշտ էլ սնվում էր, իսկ այժմ հրաժարվում էր։ Նրա անկենդան, ձգված մարմինն ամեն կերպ դիմադրում էր, երբ որևէ ուտելիք էին մոտեցնում բերանին։ Սակայն եռանդուն և ֆիզիկապես զորեղ Անթառամը տեղի չէր տալիս։ Համբերությամբ ստիպում էր կուլ տալ այն ամենը, ինչ ինքը պատրաստում էր կաթից ու պարենի մնացորդներից։ Հիվանդին փորձում էր «ուշքի բերել» նաև սառը կոմպրեսներով ու մարմինը շփելով։ Առաջխաղացումը դանդաղ էր կատարվում։

Հիվանդն աչքերը բացեց միայն այսօր։ Լուռ նայեց։ Կարծես կրկին տեսնում էր իրական աշխարհը։ Սակայն բերանը փակ էր։ Ոչինչ չհարցրեց, ոչինչ չպահանջեց։ Թվում էր, թե սրտանց կուզենար վերադառնալ բացարձակ անդգայության մանուշակագույն, անդնդախոր աշխարհը, որտեղից հեռացել էր ափսոսանքով։ Մայրիկ Անթառամը փորձեց հորդորել, հրապուրել դեպի կյանքը։ Կամ Ժուլիեթն արդեն շունչը փչելու վրա էր, կամ պառավի հոգատարությունն ընդունում էր բուռ խռովկանությամբ, որը հատուկ է ամեն հպումից ահով կուչ եկող միմոզային։ Նրա դիմագծերի արտահայտությունը չփոխվեց նույնիսկ այն ժամանակ, երբ մոտեցավ Գաբրիելը, թեև դա հիվանդի առաջին, իսկական արթնացումն էր։ Բայց տենդային կարմրությունն անցնելուց հետո ի՞նչ օրն էր ընկել Ֆրանսուհու գեղեցիկ դեմքը։ Զոր և կծված մաղերը կախվել էին, մոխրի գույն ստացել։ Դժվար էր որոշել. սպիտակե՞լ էին այդ մաղերը, թե՞ գունաթափվել։ Դուրս ցցված ճակատի երկու կողմից, քունքերի վրա, երկու խոր ձորակ էր առաջացել։ Այտոսկրները ներս էին ընկել, գլուխը

մեռելային խղճուկ գանգ էր հիշեցնում, այլանդակորեն վեր էր ցցվել բորբոքումից կարմրած, տձևացած քիթը։

Գաբրիելն իր ափի մեջ բռնած պահում էր կնոջ փոքրիկ ձեռքը։ Դա կարծես ոչ թե կմախքային ոսկորներից էր կազմված, այլ ձկան ճկվող փշերից։ Մի՞թե դա Ժուլիեթի ձեռքն էր՝ խոշոր, տաք, զորեղ։ Այդ օտարացած, նորաստեղծ մարդը խիստ շփոթության էր մատնում նրան։

— Դիմացա՞ր, շեր։ Մի քանի օր հետո ամեն ինչ կարգին կլինի...

Այս բառերից ինքն էլ սոսկաց։ Ժուլիեթը նայեց, բայց չպատասխանեց։ Գաբրիելը ոչ մի կերպ չէր կարողանում Ժուլիեթին տեսնել այդ հյուծված, այլանդակված հիվանդի մեջ։ Կյանքի անդաստանից սոսկալի ձևով և լիովին դուրս էր մղվել ամբողջ անցյալը։ Գաբրիելը փորձեց ժպտալ, խրախուսել.

— Շատ ծանր է դրությունը, բայց երևի կարողանանք քեզ լավ սնունդ տալ...

Ժուլիեթի աչքերում դարձյալ նույն հստակ և զգոն ամայությունն էր տիրում։ Սակայն այդ ամայության ետևում երկյուղ կար թաքնված. ամուսնու խոսքերը կարող էին պատռել ցնորքների օրհնյալ կեղևը, որը տակավին նրան պաշտպանում էր իրական աշխարհի շեմքին։ Ժուլիեթը կարծես ոչինչ չլսեց։ Գաբրիելը դուրս գնաց։

Գլխավոր հրամանատարն այժմ իր ժամանակի մեծ մասն անց էր կացնում շեյխի վրանում։ Բախտի քմահաճույքին էր թողել իր զորավարական պարտականությունները, քանի որ ոչ ոքի երես չէր ուզում տեսնել։ Միայն օրը երեք անգամ հայտնվում էր Ավագյանը, զեկուցում իրադրության մասին։ Գաբրիելը լսում էր լուռ, առանց մազաչափ անգամ հետաքրքրություն ցույց տալու։ Նա վրանից գրեթե դուրս չէր գալիս։ Կյանքը հանդուրժում էր միայն փակ վրանում, խավարում կամ կիսախավարում։ Օրվա կեսը ետ ու առաջ էր շրջում կամ պառկում Ստեփանի անկողնում։ Ոչ մի ժամ քնել չէր կարողանում։ Քանի դեռ որդու գիակը հողի վրա էր, նա ոչ մի կերպ չէր կարողանում ոգեկոչել պատանու կենդանի պատկերը։ Դժոխային ապարդյուն ջանք։ Բայց այժմ, երբ Ստեփանը մի օր և մի գիշեր արդեն հանգչում էր Դամլաջրքի նոսր հողի տակ, տղան ինքնակոչ հայտնվում էր ամե՜ն, ամե՜ն ժամ։ Մեջքի վրա անշարժ պառկած՝ հայրն ընդունում էր նրան։ Իր մահվան այդ շրջանում Ստեփանը չէր ներկայանում երանելի պայծառությամբ, այլ ամեն անգամ գալիս էր արյունլվա մարմնով։ Ո՜չ հայրիկին ափոփում էր, ո՜չ էլ հայտնում, թե մեռել է նրա գրկում, առանց երկար տառապելու։ Ո՜չ, տղան մեկ առ մեկ ցույց էր տալիս իր քառասուն վերքը՝ մեջքին հասցրած լայն ավինագաշուկների ու դաշույնների, ծոծրակը ջախջախած

խղակոթերի հարվածները և ամենասոսկալին՝ կոկորդի բաց կտրվածքը։ Հանգուցյալն ուրիշ ոչինչ չէր կտակում։ Կարծես ամենից առաջ ուզում էր մաքրել իր հաշիվը, նոր միայն մոռացության տալ ամոթալիորեն խոշտանգված իր պատանեկան մարմինը, այն փայփայված մարմինը, որի մեջ հոսող պապենական արյունը կոչված էր ոչ թե Յողոնօլուքի եկեղեցու հրապարակում հեղեղվելու, այլ շարունակվելու հավիտյանս հավիտենից։ Գաբրիելն իրեն պարտավորված էր զգում լիովին զգալ այդ քառասուն վերքից յուրաքանչյուրը։ Եթե մեկն ու մեկը մոռացության տար, ապա իրեն կատեր։ Փորձում էր իր մեջ ամենայն հստակությամբ կրկնել այն զգացումը, թե ինչպես է պողպատը մխրճվում մսի մեջ, ինչպես է այրելով ճեղքում մաշկը, նյարդերը, մկանները, ապա զարհուրելիորեն խրվում ոսկորների մեջ։ Իր ծոծրակի մեջ մտովի տեղավորում էր որդու նեղլիկ ծոծրակը, որ ջախջախվել էր մաուզերյան հրացանի խղակոթի հարվածից։ Անվերջ կրկնում էր այս տառապալից վարժությունները, և դրանք, իրենց շոշափելիությամբ հանդերձ, գրեթե բարիք էին, շատ ավելի տանելի, քան սեփական մեղքի գիտակցության մշուշապատ գրոհները։ Նա վշտի մեջ իրեն զգում էր այնպես, ինչպես կույրը՝ իր բնակարանում, որը շոշափելով անսխալ գտնում է ամեն մի անկյուն։ Այն ժամերին, երբ այցի էր գալիս Ստեփանը, Գաբրիելը չէր հանդուրժում նույնիսկ Իսկուհու ներկայությունը։ Բայց մեռած որդու հեռանալուց հետո այնպե՞ս հաճելի էր, երբ աղջիկը նստում էր կողքին, ձեռքը դնում նրա բաց կրծքին։ Նման պահերին Գաբրիելը նույնիսկ մի քանի բոպե քնում էր։ Աչքերը փակվում էին, սակայն Իսկուհին զգում էր, թե իր ձեռքի տակ որքա՞ն ավելի տագնապահար է դառնում սրտի խուլ բաբախումը։

Այս անգամ էլ։ Գաբրիելի ձայնը հնչեց կարծես հեռվից.

— Իսկուհի՛, ո՞ր մեղքիդ համար դու էլ տանջանքի մատնվեցիր։ Չէ՞ որ շատերը փրկվեցին, ապրում են Փարիզում և ուրիշ վայրերում...

Աղջիկը գլուխը մոտեցրեց Գաբրիելի կրծքին դրած իր ձեռքին.

— Ե՞ս։ Ինձ վիճակվել է ամենայն բարիք, իսկ քեզ՝ ամենայն չարիք։ Ես երջանիկ եմ և ինձ տառում եմ, որովհետև երջանիկ եմ...

Գաբրիելը նայեց աղջկան, որի խոշոր աչքերը կարծես սպիտակ դեմքին ընկած սավերներ էին։ Նախկին դեմքից նշույլ անգամ չէր մնացել։ Սակայն շրթունքներն արտասովոր կարմրություն ունեին։

Գաբրիելը նորից փակեց աչքերը. ամեն ինչ կարող էր կրկին խառնվել Ստեփանի պատկերին։ Իսկուհին նրա կրծքի վրայից դանդաղ ետ քաշեց ձեռքը.

— Ի՞նչ է լինելու... Ասելո՞ւ ես Ժուլիեթին... Եվ ե՞րբ...

Սկզբում Գաբրիելը կարծես չէր ուզում պատասխանել այս ծանր հարցին, բայց հետո հանկարծ տեղից բարձրացավ.

— Դա կախված է նրանից, թե ես ուժ կունենա՞մ այդ բանն անելու։

Այդ ուժը ցուցադրելու առիթը շատ շուտ եկավ։ Մայրիկ Անթառամը կանչեց նրան և Իսկուհուն։ Ժուլիեթն առաջին անգամ նստել էր տեղում, սանր էր խնդրել։ Երբ հիվանդը Գաբրիելին ճանաչեց, աչքերը լցվեցին սարսափով։ Ձեռքերն առաջ պարզեց, բայց և իսկույն ետ քաշեց։ Ուռած կոկորդից ձայնը հազիվ դուրս եկավ.

— Համենայն դեպս մենք միասին ապրել ենք... շա՜տ երկար... Դու...

Գաբրիելը զննող հայացքով նայեց, շոյեց կնոջ գլուխը։ Ժուլիեթը խոսում էր ցածրաձայն, կարծես չէր ուզում քնից արթնացնել ճշմարտությունը.

— Իսկ Ստեփա՞նը... Որտե՞ղ է Ստեփանը...

— Հանգիստ եղիր, Ժուլիեթ...

— Ե՞րբ կարող եմ նրան տեսնել, շուտո՞վ...

— Հույս ունեմ, որ շուտով կտեսնես։

— Իսկ ինչո՞ւ... չեմ կարող տեսնել այժմ... Գոնե վարագույրի ետևից...

— Ժուլիեթ, դու հիմա չես կարող Ստեփանին տեսնել... Դեռևս շուտ է։

— Շո՜ւտ է... Իսկ ե՞րբ նորից միասին կլինենք բոլորս... և այստեղից հեռու....

— Երևի մոտ օրերս... Մի քիչ էլ պետք է սպասես, Ժուլիեթ։

Ժուլիեթը գլուխը ետ գցեց, երեսը շուռ տվեց։ Մի վայրկյան թվաց, թե հիվանդը լացից ջղաձգվում է։ Մարմինը երկու անգամ երկա՜ր, երկա՜ր ցնցվեց։ Այնուհետև աչքերն ընդունեցին նախկին ամայի, գոհունակ արտահայտությունը, որով և այսօր արթնացել էր, վերադարձել կյանքի ոլորտը։

Դրսում, վրանի առաջ, Գաբրիելը մի պահ կարծես կուրացավ պայծառ արևից, օրորվեց։ Իսկուհին առողջ ձեռքով նրան բռնեց։ Բայց Գաբրիելի ոտքն ինչ-որ թմբի դիպավ, և նա վայր ընկավ, իր հետ գետին գցելով նաև աղջկան։ Անխոս մնաց պառկած. կարծես այս աշխարհում ընկած տեղից վեր կենալ այլևս չարժեր։

Իսկուհին արագ վեր թռավ, երբ մոտեցող ոտնաձայներ լսեց։ Սոսկալի վախեցավ։ Եղբա՞յրն էր, հա՞յրը։ Գաբրիելը ոչինչ չգիտեր աղջկա մղած պայքարի մասին։ Իսկուհին դա լռության էր մատնում։ Նա ամեն ժամ սպասում էր յուրայինների հարձակմանը, թեև բժիշկ Ալթունուն ուղարկել էր հոր մոտ, հայտնելու, թե Մայրիկ Անթառամը աղջկա օգնության կարիքն ունի։ Իսկուհու երկյուղն անհիմն դուրս եկավ։ Մոտեցողները Թովմասյանները չէին։ Հյուսիսային դիրքերից շնչասպառ վազելով եկան երկու սուրհանդակ։ Դրանց դեմքերից առատ քրտինք էր հոսում, քանի որ սրընթաց վազքով ահագին տարածություն էին կտրել։ Խիստ հուզված ու հևալով, իրար ընդհատելով, հայտնեցին.

— Պարո՛ն Բագրատյան... թուրքե՛րը... թուրքե՛րը... Վեց թե յոթ հոգի են... Սպիտակ ու կանաչ դրոշակներով են եկել... Բանագնացներ են... զինվորներ չեն... Դրանց մեծը մի ծերունի է... Ձեզ կանչում են։ Միայն Ձեզ հետ են ուզում խոսել, պարոն Բագրատյան, ուրիշ ոչ ոքի...

Ավելի քան մի շաբաթ էր անցել թուրքերի մեծ պարտությունից։ Զինվորների մեջ սկսել էր երևալ վիրավոր յուզբաշին։ Թևը վիրակապով գեռևս կապված էր։ Մուսա լեռան շրջակայքում երբեք այդքան կանոնավոր զորքեր և զափթիեներ չէին եղել։ Այնուհանդերձ ոչ մի տեղաշարժ չկար։ Ոչ մի նշան, թե նույնիսկ առաջիկայում որևէ բան է պատահելու։ Դամլաջրքցիները նայում էին հովտի անփույթ եռուզեռին և ոչ մի կերպ չէին կարողանում բացատրել, թե թուրքերն ինչո՞ւ չեն հարձակվում, չնայած զորքերի թիվը գնալով ավելանում էր։ Պատճառը ոչ մի կերպ չէին հասկանում։ Անթաքիեի կայմակամը՝ «ոչնչացման» գերագույն պարագլուխը, մեկնել էր։

Ջեմալ փաշան հենց այդ ժամանակ երուսաղեմյան իր շտաբն էր կանչել սիրիական վիլայեթների բոլոր վալիներին, մյութեսարրֆներին ու կայմակամներին։ Տեղի էր ունեցել տարերային աղետ, որը պահանջում էր անհապաղ միջոցառումներ, այլապես ձախողվելու էին ռազմական գործողությունները։ Սպառնալիքի տակ էր նաև Սիրիայի՝ թիկունքային ամենակարևոր երկրամասի ամբողջ կյանքը։ Ծանր վիճակի մեջ էին օսմանյան կայսրության այն գավառները, որոնք ընկած էին Միջերկրական ծովի եզերքին։

Խճճված գործեր սիրող աստվածային արդարադատությունը հազվադեպ է արագ լուծում այս կամ այն առեղծվածը։ Ի հակադրություն մարդկային իրավաբանության տրադիցիաների, այստեղ հանցանքի վերաբերյալ դատավճիռն անմիջապես չի կայացվում։ Աստվածային արդարամտությունը տիեզերքի տրամաբանության մեջ լուծված է, ինչպես աղը՝ ծովի ջրում։ Սակայն տարվա այս եղանակին, աշխարհագրական այս լայնության վրա, աստծո դատաստանն ի հայտ եկավ նկատելի աճա-

պարանքով։ Թվում էր, թե իրադարձությունների հետևանքով նույնիսկ խախտվել է նախախնամության հավերժ անկողմնակալ սառնասրտությունը, դատավորին հատուկ անկաշառությունը։ Մի խոսքով, այս անգամ շատ արագ էին պատվում աստծո ջրաղացի անիվները։

Եգիպտական երկու աղետ, զանազան հիվանդությունների ուղեկցությամբ, մուտք գործեցին Թուրքիայի հյուսիսային և արևելյան մասերը։ Արևելյան ախտը՝ բծավոր տիֆը, որը Հալեպից, իբրև սրընթաց համաճարակ, անցավ Անտիոք, Ալեքսանդրետ և ծովեզրյա շրջանները, տիեզերական վերահիշյալ տրամաբանության սարսափելի ապացույցն էր։ Հիվանդությունն իր զարհուրելի սրությամբ տարբերվում էր Դամլաջրքի առավել մեղմ համաճարակից։ Մաքուր օդի, առողջարար ջրի, լիակատար մեկուսացման շնորհիվ, գուցե և այլ անհայտ պատճառներով, այստեղ ախտը մնում էր որոշակի սահմանների մեջ։ Մինչդեռ Միջագետքում բծավոր տիֆով հիվանդ հարյուր հոգուց ութսունը հաճախ մեռնում էին։ Ախտի հարուցիչն այն վարակն էր, որն ամպի պես կախվել էր Եփրատի շրջակա դաշտերի վրա։ Այդ սրբապղծված հողում, անագորույն մահվան աղբանոցում, մայիս-հունիս ամիսներից ի վեր փտում էին հարյուր հազարավոր հայերի դիակներ։ Գարշահոտությունից փախչում էին նույնիսկ գազանները։ Մաքրիչային այդ անհաղթահարելի ուժերի միջով ստիպված էին անցնել միայն թշվառ զինվորները։ Մակեդոնական, անատոլիական, արաբական հեռավոր զորքերն իրենց սայլերի և ուղտերի անվերջանալի գումակով օրեր շարունակ կտրում էին այս տարածությունները, գնում դեպի Բաղդադ։ Երբեմն անցնում էին նաև բեդվինական հածելաքամբերը, հողը հունցում ձիերի սմբակներով։ Վայրի բնության այս զավակներն անգամ հետներն ուտելիք չէին վերցնում։ Գարշահոտության ոլորտից ժամ առաջ դուրս գալու համար ձիերի հոգին հանում էին։ «Տարագրության նպատակակետից»՝ ոչնչության գրկից, մնայալ հայերն իրենց երախտագիտության խոսքն էին հղում ստիպողաբար մեզավարներին, բռնաբարված անմեղներին։ Թալիաթ բեյը միևնույն ժամանակ «սերալ պալատում» կարող էր իր հանճարեղ գլուխը ցավացնել, մտածել, թե ի՞նչ ապօրինակ բաներ են ստացվում, երբ մարդ մի ժողովուրդ է աքսորում ոչնչության գիրկը։ Բայց ո՛չ նա էր գլուխ ցավացնում, ո՛չ էլ էնվեր փաշան, քանի որ աշխարհի ստեղծման օրից ուժը միշտ էլ եղբայրական կապերը է ունեցել հզոր բութ լկտիության հետ։

Հյուսիսում ծայր առած երկրորդ աղետը պակաս տրամաբանական էր, քան առաջինը, սակայն իր ներգործությամբ գուցե ավելի վտանգավոր։ Դա կարծես քիքքիական պատժի կրկնությունն էր։ Տավրոսի ետևի

մորեխի երամներ հայտնվեցին, վրա տվին Հալեպի դաշտավայրին, ապա ամբողջ Սիրիային։

Այդ աներես քոչվորների ծննդավայրը հավանաբար հսկայական լեռնաշղթայի լանջերն էին, կիրճերն ու ծերպերը, որտեղից անզուսպ հեղեղի պես դուրս էին մղվել, բռնել ամբողջ երկիրը։ Խոշոր մորեխները՝ հոների ցեղը հիշեցնող չոր ու ցամաք, կուշ եկած տերևներից ոչնչով չտարբերվող այդ միջատները, արգելքներ հաղթահարելիս այնպիսի ոստյուններ էին կատարում, որ կարծես դրանք իրար ձուլված ձիեր ու ձիավորներ էին։ Վրա էին տալիս առանձին խուռն երամներով, հարյուրավոր մղոնների վրա ծածկում սանջակի դաշտերը։ Ոչ մի թիզ հող աչքաթող չէին անում։ Որոշակի կարգով և ուղղությամբ գրոհելն ստիպում էր կարծել, թե դրանց մոլեգնության խթանը ոչ թե կույր բնազդն է, այլ մորեխային ամբողջ ցեղին տրված առաջադրանքը։ Կարելի էր կարծել, թե գոյություն ունի պլան, ղեկավարություն, կոլեկտիվ մտահղացում։ Սոսկալի էր տեսարանը, երբ երամներից մեկնումեկն իջնում էր այս կամ այն այգու հինավուրց ծառերի՝ ծփիների, նոճիների, կարմրատծառերի, նույնիսկ կարծրատերև թզենիների վրա։ Մի քանի վայրկյան չանցած՝ ծառերը մաքրազարդվում էին, հղկվում, ինչպես կահույքի վերնաշերտը։ Թվում էր, թե դրանք դեն են նետել իրենց տերևները, հագել մուգ գույնի մահուդե անջրթափանց վերարկուներ։ Նայողի աչքի առաջ մի ակնթարթում, կարծես անառեսանելի բոցից, ոչնչացվում էր այն ամենը, ինչ կանաչ էր։ Նույնիսկ ծառաբներն էին մերկանում։ Թվում էր, թե գերանների վրա վիթխարի փաթաթաններ են կապված։ Երբեք չէր կարելի կարծել, թե այդ միանությունը բաղկացած է առանձին անհատներից։ Եթե մարդ դրանցից մեկնումեկին առանձնացներ երամից, ապա նրան կապշեցնեին այդ միջատի տեղափոխման և անվելու զարմանալի հարմարանքները, որոնց մեջ այդ հողեղեն արարածների ամբողջ կյանքը դրսևորված էր միաձույլ կերպով։ Բայց առանձին մորեխը մարդու ձեռքի մեջ նույնքան երկչոտ էր, նույնքան ողորմելի, որքան ամեն մի սովորական միջատ, և փորձում էր փախչել։ Մինչդեռ երամին միանալով, իրեն իսկույն զգում էր, շարունակում իր անհագուրդ գործունեությունը, կարծես մեծ նպատակի էր ծառայում։

Օգոստոս ամսին Սիրիայի արևելյան ծովեզրյա շրջաններում, քանի հուլ մինչև Եփրատի հովիտը, ոչ մի կանաչ ծառ այլևս չկար։

Մակայն ծառերի ճակատագիրը Ջեմալ փաշային քիչ էր մտահոգում։ Հյուսիսային Սիրիայում հունձը հուլիսի կեսերից շատ երբեք չի սկսվում և շաբաթներ է տևում։ Չէ՞ որ հացահատիկը՝ ցորենն ու գարին, եգիպտացորենի հետ միաժամանակ չեն հնձում։ Այս հարցում Թուրք

գյուղացին և արաբ ֆելլահը նման չեն հային։ Հնձելուց հետո հայն իր բերքն անմիջապես տեղափոխում է տուն։ Նրա արյան մեջ նստած վտանգի զգացողությունը ստիպում է, որքան հնարավոր է, շուտ թաքցնել ձմռան պաշարը։ Մահմեդականը, ընդհակառակը, խրձերն օրերով ու շաբաթներով թողնում է արտերում, քանի որ եղանակը վատանալուց քիչ է վախենում։

Հուլիսին, երբ մորեխները հեղեղի պես վրա տվին, բերքը դեռևս բաց դաշտում էր՝ բարդոցներով ու խրձերով։ Սիրիայի ամբողջ բերքը մի քանի օրում մորեխները կարողացան յուրօրինակ ձևով ոչնչացնել։ Ամսվա կեսին հոշոտված ու մերկացած արտերում ոչ մի ցողուն անգամ այլևս չկար։

Ջեմալ փաշան այդ բերքի վրա հույս դնել չէր կարող։ Դարձել էր անհամբեր, քանի որ նախկին պաշարներն սպառվել էին, մինչդեռ նա պետք է կերակրեր ոչ միայն իր չորրորդ բանակը, այլև Պաղեստինի ու Լիբանանի բնակչությանը, ինչպես նաև արևելյան Հորդանանում ապրող արաբ տատանվող ցեղերին, որոնց սիրտը փորձում էր սիրաշահել զանազան բարեգործություններով։ Մորեխները հօդս ցնդեցրին ռազմական ընթացիկ տարվա պարենավորման պլանները։ Հացի գինն իսկույն բարձրացավ։ Ջեմալ փաշան անմիջապես վաշխառուների դեմ ուղղված կարգադրություններ արեց, սակայն դա ոչ մի ազդեցություն չունեցավ։ Գյուղացիներն ու առևտրականները լիովին հրաժարվեցին թղթադրամներից։ Հակառակ խիստ միջոցառումներին, թուրքական ոսկին ավելի ու ավելի էր կորցնում իր իսկական արժեքը։ Օգոստոսի առաջին օրերին, երբ Մուսա լեռը հաղթականորեն պաշտպանվում էր, Լիբանանի որոշ մասերում ընկան սովամահության առաջին զոհերը։

Ահա այն իրադրությունը, երբ Ջեմալ փաշան կոնֆերանսի հրավիրեց սիրիական իշխանավորներին։

Այս զորավոր մարդիկ հարցերն ավելի սառնասրտորեն չէին քննարկում, քան Մուսա լեռան ավագների խորհուրդը։ Վալիներն ու մյութեսարրֆներն ինչ-որ կախարդանքով հացահատիկ ճարելու և գնացքներով տեղ հասցնելու մեջ նույնքան անզոր էին, որքան մուխթարները՝ գառ և ոչխար ճարելու մեջ։ Բռնակալի խոսքը կտրուկ էր, առարկություն չվերցնող. այսինչ օրը Հալեպի վիլայեթը այսքան հացահատիկ պետք է հանձնի բանակի մատակարարներին, վե՛րջ։ Պաշտոնյաները կատաղությունից գունատվել էին։ Պատճառը ոչ միայն անիրավացի պահանջն էր, այլև փաշայի խոսելաձևը, որով նրանց ստորացնում էր։ Միայն մի մարդ կար, որը ոտքից գլուխ խոնարհության ու ծառայամտության մարմնացում էր դարձել։ Դա Անթաքիեի կայմակամն էր։ Մուսա լեռան

հետ կապված խայտառակ պարտությունը դրա համար բավականաչափ հիմք էր տալիս։ Հիացած գավառապետն իր գորշ և ուռած դեմքով կարծես շարունակ կառչում էր, կախվում փաշայի բերանից։ Այն ժամանակ, երբ մյուս իշխանավորները բողոքում էին և սակարկում, նա խոստացավ անկարելին։ Հայտարարեց, թե վիլայեթի ամենամեծ քաղաքն՝ Անթաքիեն, առանձնապես չի վնասվել մորեխների հարձակումից։ Եթե ոչ ցորեն ու գարի, ապա եգիպտացորեն կարող է տրամադրել հարկ եղած չափով։ Նստախազալով պատերազմի հետ կապված դժվարությունները, նա գավառի պահեստները լցրել է մթերքներով։ Միայն խոնարհաբար խնդրում է տեղափոխման միջոցներ տրամադրել։

Բանակցություններից մեկի ժամանակ բանը հասավ այնտեղ, որ Ջեմալ փաշան Անթաքիեի կայմակամին համարեց փայլուն օրինակ։ Խորհրդակցությունից անմիջապես հետո գավառապետը ճարպկորեն հարմար պահ ընտրեց (այնպե՞ս էր այդ բանը փափագում) և փաշային խնդրեց, որ իրեն մի քանի բոպեով ընդունի։ Կայմակամը դրանով խախտում էր հիերարխիայի օրենքները, քանի որ նրա անմիջական վերադասը Հալեպի վալին էր։ Սակայն հենց այդ խախտմամբ նա մտադիր էր սիրաշահել միահեծանության ձգտող գեներալին։

Ջեմալի սենյակում, կայմակամից բացի, միայն Օսմանն էր՝ բարբարոսաբար սպառազինված թիկնապահ գնդապետը։

Կայմակամը արտասովոր խոնարհությամբ վերցրեց իրեն մեկնված գլանակը.

— Ես անմիջականորեն Ձերդ վսեմությանն եմ դիմում, քանի որ ծանոթ եմ Ձեր մեծահոգությանը... Ձերդ վսեմությունը, անշուշտ, արդեն գուշակում է իմ թախանձանքը...

Կոշտ ու կոպիտ Ջեմալը ծուռտիկ ուսը վեր ցցած՝ կանգնած էր կայմակամի առաջ և նայում էր այդ բարձրահասակ պաշտոնյայի ծանրորեն կախված, ուռած դեմքին։ Գեներալի ասիական հաստ շրթունքները սև բեղերի տակ շարունակ շարժվեցին.

— Սա խայտառակությո՞ւն է,— ֆշշաց նա,— նողկալի խայտառակությո՞ւն։

Կայմակամը նկատելիորեն ընկճված գլուխը խոնարհեց.

— Ձերդ վսեմություն, համարձակվում եմ ասել, որ Ձեզ հետ լիովին համաձայն եմ։ Խայտառակությունը խայտառակություն է։ Սակայն դա ոչ թե իմ մեղքն է, այլ իմ դժբախտությունը, եթե այդ խայտառակությունը տեղի է ունեցել իմ գավառում։

— Ձեր մեղքը չէ՞։ Դուք՝ ոչ զինվորականներդ եք միայն մեղավոր, եթե մենք հայկական այդ ամբողջ զզվելի պատմության պատճառով

ռազմական անհաջողություններ ենք կրում և գուցե նույնիսկ լրիվ կործանվենք։

Կայմակամը ցույց տվեց, թե իրեն այդ մարգարեությունը խորապես ցնցեց.

— Դժբախտություն է, որ Ստամբուլի քաղաքականությունը Դո՛ք չեք ղեկավարում, Ձերդ վսեմություն։

— Դժբախտությո՛ւն է, կարող եք վստահ լինել։

— Բայց ես, ի վերջո, միայն պաշտոնյա եմ և պարտավոր եմ խոնարհաբար ընդառաջել կառավարության հրամաններին։

— Ընդառաջե՞լ։ Պետք է կատարե՞լ, սիրելիս, կատարե՞լ։ Արդեն քանի՞ շաբաթ է շարունակվում այդ խայտառակությունը։ Մի բուռ քոստ, սովալլուկ մուրացկանների հաշիվը չեք կարողանում փակել... Ա՛յ թե ինչ հաջողություններ են ձեռք բերում պարոն ռազմական մինիստրը և ներքին գործոց պարոն մինիստրը, հա՛, հա՛, հա՛։

Փոքրամարմին Զեմալը մոտեցավ աժդահա Օսմանին և ձեռքով թրփթրփացրեց հսկայի կուրծքը։ Ռազմական թանգարան հիշեցնող գնդապետի զրահավորված կուրծքը զնգաց։

— Նման գործերը մերոնք կես ժամում գլուխ կբերեին... Չէ՞։

Օսմանը ժպտաց։ Կայմակամն էլ ժպտաց, բայց վա՛յ այդ ժպտալուն։

— Ձե՛րդ վսեմություն, Սուեզի ջրանցքի վրա կատարած Ձեր արշավանքով Դուք իրականացրիք մեր պատմության ռազմական ամենամեծ սխրագործությունը։ Ներեցեք, որ զինվորական չլինելով, համարձակվում եմ դատողություններ անել... Սակայն այդ արշավանքի ամենամեծ նվաճումն այն էր, որ Ձերդ վսեմությունը գործը գլուխ բերեց չնչին կորուստներով։

Զեմալ փաշան դառնությամբ ծիծաղեց.

— Ճիշտ է, կայմակամ։ Ես Էնվերի նման առատաձեռն չեմ...

Կայմակամը կատարեց իր շախմատային ամենաճարպիկ քայլը.

— Յոթ գյուղի խոռվարարները հիանալի զինված են, պատսպարված անառիկ Դամլաջրքի բարձունքներում։ Ձերդ վսեմություն, ես սպա չեմ և նման բաներից գլուխ չեմ հանում։ Սակայն զափթիեներն ու օժանդակ զորախմբերն արել են այն ամենը, ինչ հնարավոր էր։ Ես, իբրև այդ գործողությունների ղեկավարն ու ականատեսը, պետք է ամենայն եռանդով հերքեմ սպաներին ու անձնակազմին վերաբերող դրսևորումները։ Բայց և պնդում եմ, որ ստեղծված պայմաններում չի կարելի այլևս որևէ մեկի կյանքը զոհաբերել։ Ձերդ վսեմություն, Դուք, իբրև մեր ամենամեծ կուրավարը, շատ ավելի լավ գիտեք, քան ես, որ լեռնային որևէ ամրություն չի կարելի գրավել առանց լեռնային հրետանու, առանց գնդացիրների։ Թող դեռևս հրճվեն անիծյալ հայերը։ Ես իմ անելիքը գիտեմ։

Զեմալ փաշան, որը դյուրագրգիռ բնավորություն ուներ, բայց շարունակ աշխատում էր իր ինքնատիրապետումը չկորցնել, այս անգամ ևս չկարողացավ իրեն զսպել։

— Դիմեցեք ռազմական մինիստրին,— գոռաց նա։— Ես լեռնային ո՛չ մի գնդացիր չունեմ։ Իմ ամբողջ հզորությունը դատարկ խոսակցության մեջ է։ Ես պետության ամենախղճուկ զորավարն եմ։ Ստամբուլի պարոններն ինձ կողոպտել են, խլել ամենավերջին փամփուշտը... Եվ, առհասարակ, այդ ամբողջն ինձ բոլորովին էլ չի վերաբերում։

Կայմակամը խիստ լրջացավ և ձեռքերը կրծքի վրա խաչեց, ինչպես ողջունելիս.

— Ձե՛րդ վսեմություն, ներեցեք, որ համարձակվում եմ առարկել։ Գործը մի փոքր Ձեզ էլ է վերաբերում... Անհաջողության հետևանքով ամբողջ աշխարհում ծաղրուծանակի առարկա են դառնում ոչ միայն քաղաքական իշխանությունները, այլև Ձերդ վսեմության փառապանծ անունը կրող չորրորդ բանակի զորքերը։

— Ինձ ինչի՞ տեղ եք դնում,— հեգնեց Զեմալը,— ինձ այդքան էժան խայծով որսալն անհնարի՞ն է։

Կայմակամն աժդահա Օսմանի մոտով դուրս եկավ փաշայի սենյակից։ Արտաքուստ ընկճված էր թվում, բայց ներքուստ հույսը չէր կորցնում։ Այդ ներշնչումը նրան չխաբեց։ Նույն Օսմանը կեսգիշերին արթնացրեց կայմակամին, առաջարկեց անհապաղ ներկայանալ Զեմալին։ Սիրիայի բռնակալը նման անակնկալ, տարաժամ հրավերքներով սիրում էր ցուցադրել իր ուժն ու ինքնատիպությունը։

Գիշերային հյուրին փաշան ընդունեց ոչ թե համազգեստով, այլ ֆանտաստիկ բուռնուսով։ Այդ զգեստով նրա արտաքինն անթերի էր, և նա նման էր փառահեղ բեգվին-շեյխի։

— Կայմակամ, ես գործը լիովին կշռադատեցի և որոշում կայացրի։

Պլեբեյական կարմիր ձեռքով փաշան խփեց սեղանին.

— Պետությունը մոլորյալների և անճարակ կարիերիստների զոհն է...

Կայմակամը գլխով հաստատեց նրա ասածը և ծանր սրտով սպասեց։

Օսմանն իր ամբողջ շուքով արձանացել էր դռան մոտ։ «Հետաքրքիր է, թե առհասարակ ե՞րբ է քնում այս լակոտը»,— անցավ Անտիոքի գավառապետի մտքով։

Զեմալը ետ ու առաջ էր քայլում։

— Կայմակամ, Դուք իրավացի եք։ Խայտառակությունն ինձ էլ է վերաբերում։ Դա պետք է վերացվի, և դա երբեք չպետք է լիներ, հասկացա՞ք։

Կայմակամը դեռևս անխոս սպասում էր։ Փոքրամարմին գեներալը ներքևից վերև նրան ուղղեց ատելությունից այլայլված, մազմզոտ դեմքը.

— Տասը օր ժամանակ եմ տալիս. այդ պատմությունը պետք է վերացվի և մոռացվի... Ես Ձեզ մոտ կուղարկեմ իմ ամենաեռանդոն հրամանատարներից մեկին և այն ամենը, ինչ անհրաժեշտ է... Բայց իմ առաջ Դո՛ւք եք պատասխանատու... Այդ մասին այլևս ոչինչ չլսեմ...

Կայմակամն այնքան խոհեմ էր, որ ձայն չհանեց։ Ձեմալ փաշան երկու քայլ ետ գնաց։ Այժմ ավելի ընդգծվեց, որ նա սպասատավոր է։

— Ոչինչ այլևս չեմ ուզում լսել այդ գործի վերաբերյալ... Բայց եթե լսեմ, որ ամեն ինչ այնքան էլ հաջող չի անցել, կհրամայեմ մեղավորներին գնդակահարել... Ձեզ էլ, կայմակամ, գրողի ծոցը կուղարկեմ...

Պեպենոտ մյուդիրը, որը Բագրատյանի ամառանոցը դարձրել էր իր պաշտոնատեղին, այդ օրը երկու անգամ քնահարամ եղավ։ Առաջին անգամ պատճառը կայմակամի պաշտոնական հաղորդագրությունն էր։ Գավառապետը նրան տեղեկացնում էր առաջիկա ժամանման մասին։ Բայց երբ զափթիեների ֆելդֆեբելը նորից հայտնվեց և կարևոր գործով նրան ստիպեց դուրս գալ ամառանոցի զով սրահից, այրվել կեսօրվա անտանելի շոգից, մյուդիրը մտքում անիծեց իր զահլան տանող երիտասարդին։ Ի՞նչ հաճույքով դրան ծեծել կտար։

Յողոնօլուքի եկեղեցու հրապարակում մյուդիրը քայլերն արագացրեց, քանի որ նրա աչքի առաջ բացված տեսարանը, հիրավի, անսովոր էր։ Եկեղեցու առաջ կանգնած էր մի յայլի, որին ոչ թե ձիեր, այլ ավանակներ էին լծված։ Ճիշտն ասած դա ոչ թե յայլի էր, այլ խոշոր անիվներով ինչ-որ հնադարյան կառք։ Մեջը նստած էր մի ծեր պարոն, որն իր արտաքինով և հանդերձանքով պատկառանք էր ներշնչում։ Մետաքսյա մուդ կապույտ թիկնոցը հասնում էր այծակաշվե մաշիկների մեջ ամփոփված ոտքերին։ Ազնվականի ֆեսի շուրջը դեղին ժապավեն էր փաթաթված, ինչպես դա ընդունված է բարեպաշտ հավատացյալների մոտ։ Ծերունին քնքուշ, գրեթե կանացի մատներով շարունակ քաշում էր սաթե համրիչի հատիկները։

Մյուդիրն իսկույն ճանաչեց նրան։ Ծերունու տեսքը վկայում էր, որ նա պատկանում է հնադավան թուրք պատրիկներին՝ թշնամական բանակին հարող կուսակցությանը, որը հակառակ հեղափոխության, դեռևս

լիովին չէր կորցրել իր հզորությունը։ Մյուդիրը մտաբերեց, որ ծերունուն երկու թե երեք անգամ հանդիպել է Անթաքիեում։ Բնակչությունն այդ մարդուն պատկառանքով էր ողջունում։ Յայլու ետևում կանգնած էր մի ծանրաբեռ ավանակ։ Կառապանի կողքին մյուդիրը տեսավ ևս երկու տարեց թուրք։ Մեկը բարեհամբույր, գրեթե երանելի արտահայտություն ուներ, իսկ մյուսը նիհար տղամարդ էր։ Սա հենվել էր կառքին։ Դեմքը ծածկված էր շղարշով։

Սալոնիկցի երիտասարդը ձեռքը տարավ դեպի ճակատը, հարգալիր ողջունեց ծերունուն։

Աղա Ռիֆաաթ Բերեքեթը գլխով պատասխանեց։ Իթթիհաթի ջատագովը՝ հնադավանների տրադիցիոն հակառակորդը, մոտեցավ կառքին, որ իմանա, թե ինչ է ցանկանում ծերունին։

— Մենք գնալու ենք հայկական ճամբարը։ Մեզ ուղեցույց տուր, մյուդիր։

Գավառի կառավարիչը զարմացավ.

— Հայկական ճամբա՞ր։ Դուք հոգեկան հիվա՞նդ եք։

Ռիֆաաթ Բերեքեթը անուշադրության մատնեց այս սիրալիր հարցը։ Կառապանի նստարանի ետևում կար կաշվե դեղին, միանգամայն արդիական մի պայուսակ, որը հնադավան առաջյալի լիակատար հակադրությունն էր։ Ծերունին սպիտակ, նուրբ մատներով բացեց պայուսակը.

— Ես առաքված եմ հայերի մոտ։

Աղան շիկահերին մեկնեց իր թեզքերեն։ Մյուդիրն սկսեց քննել փաստաթուղթը։ Երբ աղային թվաց, թե պաշտոնյան գրվածից գլուխ չի հանում, համբերությամբ վրա բերեց.

— Կարդա կնիքի վերևում գրվածը։

Եվ, իրոք, մյուդիրն այնպիսի պատրաստակամությամբ հնազանդվեց, որ նույնիսկ կարդաց բարձրաձայն.

«Այս անցագրի տերը իրավունք ունի մուտք գործելու հայկական բոլոր աքսորավայրերը։ Քաղաքական և զինվորական իշխանությունները ոչ մի արգելք չպետք է հարուցեն»։

Երիտասարդն օրինակելիորեն խնամված երկու ձեռքով փաստաթուղթը վերադարձրեց կառքի խորքում նստած ծերունուն.

— Բայց տվյալ դեպքում խոսքը ոչ թե աքսորավայրի մասին է, այլ ապստամբների, պետական դավաճանների, որոնք վերևում պատսպարվել և թուրքերի արյունն են թափում։

— Իմ առաքելությունը վերաբերում է բոլոր հայերին,— անվրդով բացատրեց աղան և թեզքերեն խնամքով դրեց բոլորովին նոր պայու-

սակի մեջ, որը, երևի, ավելի հարմար կլիներ երիտասարդ, շիկ վաճառականին։ Ծերունին դուրս բերեց մի այլ փաստաթուղթ։ Արտաքուստ դա պետք է ավելի զորեղ ազդեցություն գործեր։ Վարպետորեն ծալված թղթի մեծ թերթի վրա կնիք կար՝ ինչ-որ խրթին մակագրությամբ։

Մյուդիրն ամենից առաջ աշխատեց ընտելանալ արաբական պճնազարդ գեղագրության պաճուճանքներին, ապա կարդաց շեյխ ուլ իսլամի տիտղոսաշարքը, ինչպես նաև հրամանը, որով Թուրքիայի հոգևոր հովվապետը իսլամի բոլոր հպատակներից պահանջում էր սույն վավերաթուղթը ներկայացնողին ցույց տալ ամենայն աջակցություն, ըստ նրա կամքի և ցանկության։

Թե որքան ազդեցիկ անձնավորություն էր այդ քոսոտ ծերունին, մյուդիրը, իհարկե, հասկանում էր։ Հակառակ էնվերի ու Թալիաթի կամքի, շեյխ ուլ իսլամությունը պետական ամենազորեղ պաշտոնատներից մեկն էր։ Կանաչ դրոշը՝ միջնադարյան այդ լվացքաշորը, պաշտոնական հրամանի ուժ ուներ։ Ջենթարկվողի գլխին կարող էր ծանր փորձանք գալ։ Մյուդիրի հայացքը կանգ առավ խոշոր պարկերով ծանրաբեռնված ավանակների վրա.

— Ի՞նչ նպատակի են ծառայում այս պարկերը։

Ռիֆաաթ Բերեքեթը, իր սովորության համաձայն, պատասխանը պարուրեց հանդիսավոր անորոշությամբ.

— Այն նպատակին, ինչ ե՛ս եմ կամենում։

Մյուդիրը աղային դիմեց ճոռոմ խոսքերով, թեև նրան զայրացնում էր, որ այդ ծերունի թուրքը իր՝ պետության ներկայացուցչի հետ խոսում էր անշարժ նստած, կարծես մյուդիրը հին վարշաձևի ինչ-որ ծառա լիներ։

— Էֆենդի՛, ես չգիտեմ, թե արդյոք դու ճիշտ պատկերացում ունե՞ս իրադրության մասին։ Այս գավառի հայերը չեն հնազանդվել կառավարության հրամանին, պատսպարվել են Մուսա լեռան բարձունքներում։ Նրանք հանդգնել են հակառակվել զինվորական իշխանությանը, իրենք են զինվել, սպանել թուրք ռազմիկներին։ Քանի՞-քանի՞ օր է, ինչ մենք ստիպված ենք պաշարել այդ ստոր ոճրագործներին։ Այժմ էլ ուզում ենք դրանց սովամահության մատնել։ Մի քանի օր հետո կփափկեն։ Եվ ահա դու, աղա, քո առաքելությամբ և մթերքի պարկերով ուզում ես օգնե՞լ այդ պետական դավաճաններին, կայսրության թշնամիներին, քո փադիշահի հակառակորդներին։ Ուզում ես, որ դրանք ավելի երկա՞ր կարողանան դիմադրություն ցույց տալ օրինական իշխանություններին։

Ռիֆաաթ Բերեքեթն այս երկարաշունչ ճառը լսելիս գլուխը հոգնածությունից կախեց։ Այնուհետև ծերունին սառը հայացքով ոտքից գլուխ չափեց մյուդիրին։ Փոքր-ինչ շոված և կնճռոտված աչքերը նրան հառելով, ասաց.

— Մի՞թե դուք փադիշահի առավել վատթար թշնամիները չեք, քան հայերը։ Մի՞թե դուք չէիք, որ զենքը ձեռքներիդ դուրս եկաք նրա զինվորների դեմ, այն էլ ոչ թե իբրև պաշտպանվողներ, այլ իբրև հարձակվողներ։ Հեղափոխականները օրինականությունից խոսելու իրավունք չունեն։

Այս ասելով՝ ծերունին ձեռքը երրորդ անգամ տարավ դեպի հրաշագործ պայուսակը։ Կարծես ամեն ինչ կատարվում էր հեքիաթում, երբ իմաստունը գործի է դնում իր ամենազորեղ կախարդանքը։ Աղան դուրս բերեց մագաղաթյա մի փաթեթ, որի կնիքը սուլթանի ադամանդաղարդ շալման էր Մեծ հովվապետ և խալիֆ Մուհամմեդ Հինդերորդը սույն իրադեով[1] իր բոլոր հպատակներին, մանավանդ քաղաքացիական և զինվորական իշխանություններին, հրամայում էր անթաքիեցի աղա Ռիֆաաթ Բերեքեթին պատրաստակամորեն աջակցել, չհարուցելով ոչ մի արգելք։

Շիկահեր մյուդիրը շփոթված նայեց։ Հին աշխարհն այստեղ էր իր ամբողջ զորությամբ։ Մյուդիրը չէր կարող այդ բանն ուրանալ։ Փադիշահի ստորագրությունը թեթևակի և տհաճությամբ հպեց սրտին, բերանին և ճակատին։ Դա այնպիսի մի շարժուձև էր, որ բնավ հարմար չէր մյուդիրի ամառային կոկիկ կոստյումին, վառ կարմիր փողկապին և դեղին կիսակոշիկներին։ Ի՞նչ աներ։ Բյուրոկրատական ամեն պետության մեջ պաշտոնյան ստիպված է հաշվի առնել երկու զորավոր հոսանք, որոնց հորձանուտում նա հեշտությամբ կարող է խեղդվել։ Մի հոսանքը պետական ծառայության ճանապարհն է՝ իր նենգավոր պտուտահողմերով, իսկ մյուս, ավելի վտանգավոր հոսանքը նուրբ հարաբերությունների ասպարեզն է։ Այս հոսանքը հորձանք է տալիս պետությունների, հասարակությունների և անձնավորությունների միջև։ Ուստի և ամենից լավն այն է, եթե մարդ խուսափի սեփական վճիռ կայացնելուց, պատասխանատվությունը թողնի իր վերադասներին։ Բայց տվյալ դեպքում այդպիսի ելք չկար։ Երիտասարդ մյուդիրը ինքն էր իր վերադասը։ Նա պետք է ինքնուրույն վճիռ կայացներ։ Խռովարարներին պարենավորելն անհանդուրժելի էր, սակայն Նորին վեհափառություն սուլթանի առաքյալին մերժելը նույնպես անհնար էր։ Սալոնիկցի խորամանկը զերադասեց չարյաց փոքրագույնը։ Այս միջին ճանապարհը նա ընտրեց ներքին եր-

[1] իրադե — հրամանագիր

կարատև պայքարից և հուսահատ պոռթկումներից հետո։ Աղան թույլ տրվություն ստացավ մտնելու պաշարման գոտին, բայց ալյուրի պարկերը պետք է մնային հովտում։ Այս ուղղությամբ Ռիֆաաթ Բերեքեթի բոլոր ջանքերն իզուր անցան։ Մի՞թե պարոնը չգիտե Նոր օրենքը։ Սիրիայում սով է։ Ալյուրի ճակատագիրը կարող է տնօրինել միայն Անթաքիեի կայմակամը։ Մյուս սննդամթերքների հարցում աղան կարողացավ մյուդիրի հետ լեզու գտնել։ Եղածը մի քանի տոպրակ սուրճ էր, շաքար, մի քանի փաթեթ ծխախոտ։ Դա ոչ մի դեր խաղալ չէր կարող, քանի որ չէր կարող փոխել Դամլաջըքի վիճակը։ Այստեղ մյուդիրը զիջում արեց, թեև պնդեց, թե, իբր, ինքը իրավացի չէ։ Ի վերջո հարցրեց, թե ովքեր են աղային ուղեկցողները։

— Սրանք իմ ծառաներն ու օգնականներն են։ Ահավասիկ նրանց անձնագրերը, նայիր։ Ամեն ինչ կարգին է։

— Սա՞ էլ։ Ինչո՞ւ է կնոջ նման դեմքը շղարշով ծածկել։

— Դեմքի վրա այլանդակ վերք կա. ստիպված է ծածկել։ Ուզո՞մ ես քողը բարձրացնի։

Մյուդիրը բերանը ծամածռեց և ձեռքը թափ տվեց։

Ավելի քան մի ժամ անցավ, մինչև յայլին կարողացավ հեռանալ Բիթիասի ուղղությամբ։ Կառքի երկու կողմից քայլում էր հետևակ մի դասակ՝ մյուլազիմի գլխավորությամբ։ Կառքին հետևում էին սուրճով, շաքարով ու ծխախոտով բեռնավորված երկու ավանակ, ինչպես նաև երեք ուրիշ գրաստ՝ աղայի ու նրա երկու օգնականների համար։

Երբ այնքան մոտեցան, որ ճանապարհն այլևս չէին շփոթի, աղան կառքից իջավ, մյուլազիմին խնդրեց զինվորների հետ սպասել ներքևում։ Այլապես հայերը կարող էին սխալ հասկանալ իրենց առաքելությունը և կրակ բացել։ Սպան այդ առաջարկությունից գոհ մնաց։ Զինվորները մնացին անտառում, չմոռանալով նախազգուշական բոլոր միջոցները։ Երեք ծերունիները ավանակների վրա կողքանց նստելով՝ շարունակեցին ճանապարհը։ Բեռնավորված ավանակները հետևեցին նրանց։ Քողածածկ դեմքով մարդը քայլում էր ծերունիների կողքից։ Աջ ձեռքով առաջ էր պարզել Մարգարեի կանաչ դրոշը, իսկ ձախով՝ խաղաղության սպիտակ դրոշը։

Իրար դիմաց նստել էին վրանում։ Աղան Բագրատյանին խնդրել էր, որ իրենց զրույցը տեղի ունենա առանց վկաների։ Թուրքերին Հյուսիսային լեռնաթամբից այստեղ բերել էին աչքները կապած, ինչպես ընդունված է բանագնացների մոտ։ Աղայի ուղեկիցները պպզել էին

ավանակների մոտ, որոնց վրայից իշապաններն իջեցնում էին տոպրակներն ու փաթեթները։ Խմբի շուրջը բոպե առ բոպե մեծանում էր բազմությունը։ Հայերը թուրքերին չէին մոտենում։ Երևի, ինչ-որ խոր երկյուղից։ Ամեն հայի սիրտ հուզմունքից փոթորկվում էր։ Ի՞նչ նպատակով էր եկել պատվիրակությունը։ Փրկությո՞ւն։ Կյա՞նք։

Աղա Ռիֆաաթ Բերեքեթը վրանում նստած էր նույն անվրդով արժանապատվությամբ, ինչպես ցերեկային մեղմ կիսախավարով պարուրված իր հյուրասրահում։ Նրա մատների արանքում, ժամանակի պես անվերջանալի, շարունակ գլորվում էին համրիչի սաթե հատիկները.

— Գաբրիել, ես այստեղ եմ եկել իբրև քո պապի բարեկամը, իբրև քո հոր բարեկամը, իբրև քո եղբոր բարեկամը։ Ես այստեղ եկել եմ իբրև էրմենի միլեթի բարեկամը։ Դու գիտես, որ ես իմ բոլոր ուժերը նվիրաբերել եմ մեր ժողովուրդների բարեկամությանը, բայց այդ բարեկամությունն արդեն առհավետ կործանված է...

Ծերունին ընդհատեց իր ողբանման խոսքը։ Այնուհետև մտահոգ հայացք նետեց Բագրատյանի դեմքին, որը մի ժամանակ և՛ երիտասարդ էր, և՛ փափկասուն եվրոպացի։ Դժվար էր համաձայնել, թե նախկին Բագրատյանը և խճճված մորուքով, իրար խառնված վայրի դիմագծերով լեռնականը նույն մարդիկն են։ Աղան մի պահ խորասուզվեց իր խոհերի մեջ, ապա շարունակեց.

— Մեղքն ամեն տեղ է՝ այստեղ թե այնտեղ... Այս խոսքն ասում եմ, որպեսզի, հակառակ ամբողջ պատահածին, սխալ վճիռ չկայացնես և սիրտդ չկարծրացնես։

Գաբրիելի դեմքը կարծես ավելի փոքրացավ, ավելի գորշացավ.

— Ով էլ իմ տեղը լինի, մեղքի մասին ոչինչ այլևս չի իմանա։ Ինձ այլևս չի մտահոգում ո՛չ մի մեղք, ո՛չ մի իրավունք, ո՛չ մի վրեժխնդրություն...

Ռիֆաաթի ձեռքերն անշարժացան.

— Դու որդի՞ ես կորցրել...

Գաբրիելը պատահմամբ ձեռքը տարավ գրպանը։ Դուրս բերեց հունական այն դրամը, որը միշտ մոտն էր պահում, իբրև թալիսման։ «Առ անիմանալին ի մեզ և ի վեր քան զմեզ»։ Դրամը բարձր բռնած՝ ասաց.

— Աղա, քո նվերն ինձ քիչ բախտավորություն բերեց։ Թագավորի գլուխը կրող դրամը ես կորցրի այն օրը, երբ կորցրի իմ որդուն։ Իսկ այս մյուսը...

— Դու դեռ չգիտես, թե ո՞րն է քո վերջին օրը։

— Այդ օրը շատ մոտ է, միայն թե շատ դանդաղ է մոտենում։ Հա-

ճախ այնպե՞ս եմ ուզում իջնել ցած, ձերոնց մոտ, որ ամեն ինչ վերջանա, շո՞ւտ վերջանա։

Աղան նայեց իր սպիտակ, լուսավոր ձեռքերին.

— Դու պետք է կյանքդ ոչ թե նսեմացնես, այլ վսեմացնես։ Դուք՝ Բագրատյաններդ, ավելի զորեղ եք, քան մյուս մարդիկ... Սակայն ամեն ինչ կախված է աստծո կամքից։

Մալապատիկ նստած Ռիֆաաթի ոտքերի մոտ դրված էր դեղին պայուսակը։ Վրան պատվելի Հարություն Նոխուդյանի նամակն էր՝ ուղղված Տեր-Հայկազունին.

— Գաբրիել, քեզ հայտնի է, որ ես ամիսներ շարունակ ուղևորություն եմ կատարում ձեզ օգնելու նպատակով։ Արդեն հրաժեշտ եմ տվել իմ հասակին պատշաճ հանգստությանը։ Եվ դեռ աստծո օգնությամբ պետք է գնամ, հասնեմ Դեյր էս Զոր։ Սիրիայում կատարածս առաջին ուղևորությունը քեզ մոտ գալն է։ Դուք բարեկամներ ունեք թե՛ երկրի ներսում, թե՛ արտասահմանում։ Մի գերմանացի հոգևորական ձեզ համար շատ փող է հավաքել։ Ես նրա հետ ծանոթ եմ։ Հիսուն պարկ ցորեն եմ գնել։ Դա դյուրին չէր։ Թույլ չտվին բերել։ Այդպես էլ գիտեի։ Բայց կայմակամին չի հաջողվի դա բռնագրավել։ Այդ ցորենը ձերոնց պետք կգա աքսորավայրում... Բայց այստեղ՝ Մուսա լեռ բարձրանալուս պատճառն այդ պարկերը չեն...

Նա Գաբրիելին մեկնեց Նոխուդյանի նամակը.

— Այս թղթով կիմանաք այն, ինչ երբեք չէիք իմանա՝ ձեր հայրենակիցների ճակատագիրը։ Միաժամանակ կիմանաք, որ մեր ժողովուրդը բաղկացած չէ միայն Իթթիհաթից, Թալիաթից, Էնվերից ու նրանց ծառաներից։ Մերոնցից շատերը տուն ու տեղ թողած՝ ճանապարհ են ընկել դեպի արևելք, օգնում են սովյալներին...

Հիրավի, աղա Ռիֆաաթ Բերեքեթը զարմանալի մարդ էր։ Նա արժանի էր, որ Գաբրիելը հայ ժողովրդի անունից ծունր իջներ նրա առաջ։ Սակայն հանգամանորեն թվարկված բարեգործություններն ու շարշարանքները չէին մեղմացնում Բագրատյանի հոգում կուտակված դառնությունը։ Թեև այդ մահմեդականների կատարած զոհողությունները մեծ էին, համենայն դեպս դրանց վկայակոչումը նրան համբերությունից հանեց.

— Տարագրվածներին երևի օգնեք, բայց մեզ չեք օգնի...

Ներունու ծանրաբարո հավասարակշռությունը մնաց անսասան.

— Քեզ հավանաբար կկարողանամ օգնել։ Դա մեկն է այն կարևորագույն պատճառներից, որ ես ահա նստած եմ այստեղ, քո վրանում։

Եվ աղայի շուրթերից միապաղաղ խոսքերով ծայր առավ փրկության մի ծրագիր, որից քիչ մնաց կանգ առներ Գաբրիելի սիրտը։ Բագրատյանը հավանաբար տեսել է աղային ուղեկցող հինգ ուղեկիցներին։ Այսպես սկսեց Ռիֆաաթ Բերեքեթը։ Երկու ծերունիները բարեպաշտ միաբանության անդամներ են և աղայի նման իրենց նվիրաբերել են միևնույն գործին։ Երկու իշապանները աղայի տանը երկար տարիներ ծառայած սպասավորներ են։ Ինչ վերաբերում է հինգերորդ մարդուն, դրա խնդիրն ավելի բարդ է։ Խղճի վրա ծանրացած է բազմաթիվ հայերի մահը, սակայն Ստամբուլում «Սրտագողերի» շեյխ Ահմեդը նրան վերափոխել է, դարձի բերել։ Այդ մարդն ուխտել է ապաշխարել իր կատարած ստոր գործերի համար, նախկինում ատելի հայերի դեմ գործած մեղքը քավել նույն հայերին լավություն անելով։ Այդ մարդը պատրաստ է Բագրատյանի հետ փոխել հագուստը և անհայտանալ։ Եկեղեցու հրապարակում մյուդիրը բոլոր մարդկանց անձնագրերն ստուգել է, բոլորի անունները ցուցակագրել։ Վերադառնալիս ոչ ոք նորից չի ստուգի թեզքերները։ Եթե մյուդիրը հանկարծ նոր դժվարություններ ստեղծի, ապա Բագրատյանը կարող է ուղղակի ցույց տալ իր կրկնորդի անձնագիրը։ Մյուլաղիմն ու նրա զինվորները նույնպես կլխի չեն ընկնի, թե մեկնումեկին փոխանակել են։ Նրանք վեց հոգու են ուղեկցել, վեց հոգու էլ վերադարձնում են։ Աղայի՝ այդ պատվարժան ծերունու սրտով չեն հակաստիկանական այդպիսի անկարգությունները, բայց այժմ նա այդ քայլը կանի, որպեսզի փրկի Բագրատյանների տոհմի շառավիղի կյանքը, նրան ապահով հասցնի Անթաքիե, իր տունը։ Այդ բանը նա կկատարի ի հիշատակ հանգուցյալ Ավետիսի, նրա հոգու հանգստության համար։ Չէ՞ որ լուսահոգին անթիվ-անհամար լավություններ է արել աղային, երբ սա դեռևս ծաղկահասակ երիտասարդ էր։

Գաբրիելի շունչը կտրվում էր։ Նրա կրծքի տակ կյանքի առագաստն այնպես էր պրկվել, որ նա նետվեց դեպի վրանի մուտքը՝ մաքուր օդ շնչելու։ Նայեց աղայի ուղեկիցներին, որոնք լուռումունջ կուչ էին եկել գետնին։ Տեսավ այն ուխտյալին, որը դեմքից հեռացրել էր շղարշը։ Սովորական բութ դեմք։ Ո՛չ հայասպանի տպավորություն էր թողնում, ո՛չ ապաշխարողի։ Տեսավ անսովոր հետաքրքրությունից լարված բազմությունը, տեսավ Ժուլիեթի վրանի առաջ կանգնած Իսկուհուն։ Ամեն ինչի պես այդ աղջիկն էլ անիրական էր, հեռու։ Իրական էր միայն կյանքի գաղափարը՝ մի մութ սենյակ Ռիֆաաթի տանը։ Փակ են պատուհանի փայտյա փեղկերը։ Դրանք բացվում են բակի վրա, որտեղ ազբյուր է հո-

սում։ Պետք է ամեն ինչ մոռանալ, ոչինչ չիմանալ, սպասել վերածնության....

Մի քանի րոպե հետո, երբ Գաբրիելը հանդարտված վերադարձավ վրան, համբուրեց ծերունու ձեռքը.

— Հա՛յր իմ, ինչո՞ւ այն ժամանակ չեկար, երբ ամեն ինչ դեռևս լավ էր, երբ մենք ապրում էինք ներքևում, ամառանոցում...

— Երկար ժամանակ հույս ունեի, թե փորձանքից կազատվեք։ Դու համենայն դեպս կազատվես։

— Ոչ, ես նույնպես չեմ ազատվի։

— Վախենո՞ւմ ես... Կսպասենք մինչև գիշերը վրա հասնի։ Քեզ ոչ մի վտանգ չի սպառնա։

— Գիշեր թե ցերեկ միևնույն է։ Դա չէ խնդիրը, աղա։— Ամաչելով փոքր-ինչ լռեց։— Այսօր կինս առաջին անգամ է սթափվել. մահամերձ հիվանդ էր։

— Կի՞նդ։ Նոր կանայք կգտնես։

— Երեխաս թաղված է այստեղ, վերևում...

— Դու պարտավոր ես քո ցեղին պարգևել նոր զավակ և տոհմի շառավիղ։

Ծերունու ծանրահայաց աչքերը մնացին անհույզ։ Գաբրիելի պատասխանը հնչեց շատ ցածր, ծերունու համար գրեթե անլսելի.

— Ով էլ իմ տեղը լինի, չի կարող ամեն ինչ սկսել սկզբից։

Աղան իր կորովի ձեռքը գավաթի նմանեցնելով առաջ պարզեց, կարծես ուզում էր մի քանի կաթիլ որսալ ժամանակի անձրևից.

— Ինչո՞ւ ես ապագայի մասին մտածում։ Մտածիր առաջիկա ժամերիդ մասին։

Արևի հետկեսօրյա հրաժեշտի լույսով առատորեն ողողվել էր վրանը։ Գաբրիելն անքաղաքավարությամբ ոտքի ելավ.

— Ե՛ս էի, որ յոթ համայնքին տվի Մուսա լեռը բարձրանալու գաղափարը։ Ե՛ս կազմակերպեցի ամբողջ դիմադրությունը։ Ե՛ս եմ ղեկավարել ձեր զինվորականների դեմ մղված ճակատամարտերը, որոնց շնորհիվ այսօր դեռևս այստեղ ենք։ Ե՛ս եմ պատասխանատուն և ե՛ս եմ մեղավորը, եթե մի քանի օր հետո ձերոնք տանջամահ անեն այս գաղթականի ամբողջ ժողովրդին, անգամ հիվանդներին ու ծծկեր երեխաներին։ Աղա՛, ի՞նչ ես կարծում, կարո՞ղ եմ թողնել ու փախչել։

Այդ խոսքի վրա աղա Ռիֆաաթ Բերեքեթը ոչինչ չասաց։

Գաբրիելը հրամայեց աղայի բերած նվերները իսկույն տանել խորանի հրապարակը, որպեսզի դրանք ավագների խորհուրդը բաժանի ժողովրդին։ Եղածը գլխավորապես շաքար էր, սուրճ և մի քիչ էլ ծխախոտ։ Սակայն իշապաններին հաջողվել էր ճարպկորեն սարը բարձրացնել նաև երկու պարկ բրինձ։ Եթե նկատի ունենանք, որ աղայի բերածը պետք է բաշխվեր ավելի քան հազար ընտանիքի, ապա մարդկանց շատ չնչին բաժին կհասներ։ Փույթ չէ։ Միայն թե մարդիկ մի անգամ էլ փոքրիկ ումպերով տաք սուրճ վայելեին, աշխուժացնեին իրենց ընդարմացած նյարդերը, խո՞րը ներծծեին «բուրումների հոր»՝ ծխախոտի ծուխը, քթից ու բերանից դանդաղ բաց թողնեին ամպի քուլաներ, դրանց նայեին առանց մտորումների, առանց հոգսերի։

Աղայի նվիրած մթերքների նյութական արժեքից շատ ավելի կարևոր էին հոգեբանական վերելքն ու սփոփանքը։ Չէ՞ որ դա տեղի ունեցավ հոտերը կորցնելու օրը։ Թուրքերը գաղթականում թողեցին նաև իրենց ավանակներից չորսը։ Ծերունի աղան դրանցից մեկը միայն տարավ՝ հովտում հեծնելու։

Բարեգործին ու նրա հինգ ուղեկցին տարան դեպի Հյուսիսային լեռնաթամբը։ Այս անգամ թուրքերի աչքերը չկապեցին։ Առջևից քայլում էր ուխտյալը՝ կանաչ և սպիտակ դրոշներով։ Ո՛չ ուրախ էր, ո՛չ էլ տխուր, թեև նրան լավություն անել չհաջողվեց։ Բացառությունից բացի, օտարականներին, իբրև պատվավոր շքախումբ, ուղեկցում էին Տեր-Հայկազունը, բժիշկ Ալթունին և երկու մուխթար։ Նրանց հետևում էր կախարդված ամբոխը։ Վրանում տեղի ունեցած զրույցը, որի բովանդակությանը ոչ ոք իրազեկ չէր, տեղի էր տվել ֆանտաստիկ ակնկալությունների։ Աղան քայլում էր՝ պարուրված օրհնանքի, օգնություն աղերսող կանչերի, արտասվալից թախանձանքի, հուսատուչոր հարցումների մշուշով։ Ոչ մի տեղ, նույնիսկ աքսորավայրերում, Բերեքեթը չէր տեսել այնպիսի դեմքեր, ինչպիսիք տեսավ Դամլաջրքի գաղթականում։ Տղամարդիկ նրան նայում էին տենդոտ, վայրի, անհագ հայացքներով։ Հյուծված կանայք պատառոտված թևքերից դուրս ընկած ձեռքերով ծերունու կողմն էին մեկնում իրենց գրկի երեխաներին։ Գրեթե բոլոր փոքրիկների ջրգողած դեմքերն օրորվում էին բարակ պարանոցների վրա, իսկ խոշոր աչքերի մեջ կար այնպիսի դառը տառապանք, որ հատուկ չէ անչափահասներին։ Աղան զգաց, որ նույնիսկ տարագրության արհավիրքներն այնքան անմարդկայնացնող ազդեցություն չէին թողնում, որքան այս մեկուսացումը։ Աղան համոզվեց, թե կործանումը որքա՞ն ավելի է ազդում մարդկանց հոգևոր ուժերի վրա, քան սպանությունը՝ մարմինների վրա։

Ամենազարհուրելին ոչ թե մի ամբողջ ժողովրդի բնաջնջումն էր, այլ աստվածորդիների բնաջնջումը, հանձին այդ ժողովրդի։ Էնվերի սուրը հայերին խոցելով՝ խոցում էր նաև ալլահին։ Չէ՞ որ հայերի, ինչպես և ամեն մարդու մեջ ալլահն է բնակվում, թեպետ հայերն անհավատ են։ Նա, ով մարդ արարածի մեջ սպանում է նրա արժանապատվությունը, սպանում է նաև արարչին։ Դա աստվածասպանություն է, այնպիսի մեղք, որ չի կարող քավվել հավիտյանս հավիտենից։ Ռիֆաաթ Բերեքեթը՝ այդ բարեպաշտ դերվիշը, որն իր խորհրդածությունների ու թարիքաթյան աղոթամարզանքների ժամանակ հաճախ էր մոտենում հանդերձյալ աշխարհին և հանդերձյալ հոգիների ճակատագրին, մտովի զարհուրելի պատկերներ էր տեսնում։ Նույնիսկ անդրաշխարհում, ընդունարանի դռների առաջ, ներդաշնակության շեմքին քարշ էին գալիս տարագիրների տանջահար քարավանները։ Ոչ ոք նրանց ներս չէր թողնում։ Գաղթականներում իրար վրա դիզված հոգիները համբարձվել չէին կարողանում, քանի որ երկարատև մարտիրոսության, երկարատև հալածանքների պատճառով զրկվել էին թռչելու կարողությունից։ Ամենուրեք զարհուրելի ապաստարաններ, ինչպես այստեղ, Մուսա լեռան բարձունքներում։ Անթիվ-անհամար սովահարների այրվող հայացքներ, որոնք անդրաշխարհում ևս դատապարտված էին տիեզերաթափառ մուրացկանության, գլխիկոր նվաստացման։

Ծեր աղային թվում էր, թե անցնում է հաստ մոխրամպերի՝ հայ ժողովրդի մահվան ամպերի միջով։ Դրանք չփարատվող քուլաներով պլլվում էին իրական և հանդերձյալ աշխարհների սահմանագլխին (Ա՛յան, իրոք, մոխիր էր շնչում, առանց այդ բանը նկատելու։ Այդ մոխիրը անտառային մարող հրդեհի վերջին մոլեգնության արդյունքն էր և ցամաքային քամուն միացած՝ թեթև մշուշի նման շարժվում էր դեպի արևմուտք)։

Մի՞թե վերջ չուներ հայկական ճակատագրի միջով անցնող այս ճանապարհը։ Գավազանին հենված՝ քայլում էր աղան, ավելի ու ավելի ծերանալով, ավելի ու ավելի կռանալով։ Նայում էր հողին, որը ծնել և հանդուրժում էր այդ ամենը։ Փափուկ մաշիկների մեջ ամփոփված և քայլելու անվարժ մանր ոտքերով ծերունին եռանդով դոփում էր հողը։ Սպիտակափառ մորուքը կրծքին ամուր սեղմած, փախստականի նման շտապում էր, չխնայելով իր վերջին ուժերը։ Այլևս չէր կարողանում լսել նեղիսպառ ձայները, թախանձանքը։

Հյուսիսային լեռնաթմբի առաջին խրամատը չհասած՝ Բերեքեթի ուժերը նրան դավաճանեցին։ Չորս կողմից սևեռուն նայող զինվորների աչքի առաջ ծերունին նվաղեց, վայր ընկավ։ Իշապանների հետևից եկող ծառաները վախեցած վրա հասան։ Աղան տկար մարդ էր։ Ստամբուլում ֆրանսիացի բժիշկը պատվիրել էր զգուշանալ լարվածությունից, հոգնելուց։ Երկու ծառաներից առավել ծանրաբարոն մետաքսյա կանաչ տոպրակից, որը միշտ իր տիրոջ ետևից ման էր ածում, հանեց մի դեղասրվակ և մի քիչ մատուտակ։ Դրանք սրտի համար օգտակար դեղամիջոցներ էին։

Երբ աղան իրեն լավ զգաց, ժպտաց Տեր-Հայկազունին և իր վրա խոնարհված Բագրատյանին.

— Դատարկ բան է... Ներացել եմ... Շատ արագ քայլեցի... Հետո էլ... շա՞տ բեռ դրիք ուսերիս...

Ուղեկիցների օգնությամբ ոտքի ելավ։ Պարզորոշ զգաց, որ չի կարողանա գլուխ բերել իր առաքելությունը, չի հաջողվի հասնել Դեյր էս Զոր։

...Ռիֆաաթ Բերեքեթը յայլիով Անթաքիե հասավ կեսգիշերին։ Մարմինը տկարությունից գրեթե ընդարմացել էր։ Բայց և այնպես մարգարտաշար ձեռագրով, Նեզիմի բեյի հաստեղով նամակ գրեց քրիստոնյա հոգևորական Լեփսիուսին, հաշիվ տվեց իր առաջին առաքելության մասին։

Հենց այն պահին, երբ աղա Բերեքեթը շարադրում էր Լեփսիուսին ուղղած նամակը, Գրիգոր Յողոնեոլուքցու հոգին անջատվում էր բազմաչարչար մարմնից։

Ուսուցիչ Շատախյանը քնելուց առաջ հիշեց դեղագործին և խղճի խայթ զգաց։ Ավագների խորհրդի առավոտյան աղմկոտ նիստից հետո նա կույրի նման անցել էր ծերունու մոտով, առանց նույնիսկ նայելու իր վաղեմի ուսուցչի կողմը, այն էլ հոգեվարքի սարսափելի օրը, երբ ոչ ոք չկար հիվանդի մոտ, ոչ ոք չէր օգնում։ Ուշ գիշերով ուսուցիչ Շատախյանը՝ Գրիգորի աշակերտը, զգուշորեն մտավ կառավարչատուն, մատների ծայրերի վրա մոտեցավ կիսախավար խցին, գրքերի պատի վրայից գողունի նայեց, ապա ցածրաձայն, այնպես, որ հիվանդը քնած լինելու դեպքում չզարթներ, հարցրեց.

— Ինչպե՞ս ես, հը՞, վարպե՛տ։

Գրիգորը մեջքի վրա պառկած էր։ Ծանր էր շնչում։ Սակայն բաց աչքերի մեջ անվրդովություն էր տիրում։ Ուսուցչի անիմաստ հարցին դրանք պատասխանեցին լուռ նախատինքով։ Շատախյանը գրքերին կպչելով մոտեցավ անկողնուն։ Մատներով ոտաղեց հիվանդի ձեռքի այլանդակված հոդերը.

— Շա՞տ է ցավում։

Դեղագործը ինչ-որ երկիմաստ ձևով պատասխանեց.

— Երբ դիպչում ես, շատ է ցավում։

Շատախյանը պպզեց հիվանդի կողքին.

— Այս գիշեր կմնամ քեզ մոտ։ Ավելի լավ կլինի... Գուցե որևէ բանի կարիք ունենաս...

Բայց հիվանդը կարծես խուսափում էր որևէ մեկի գիշերային ընկերակցությունից.

— Ոչ մի բանի կարիք չունեմ... Մինչև հիմա ամեն ինչ լավ է գնացել... Այսօր էլ լավ կանցնի... Գնա քնիր, վարժապետ...

— Սրտանց կուզենայի մնալ, եթե, իհարկե, նեղություն չտամ...

Գրիգորը ոչինչ չասաց։ Նա զբաղված էր շունչը տեղը բերելով։ Շատախյանը տխրեց.

— Վարպետ, հիշում եմ այն սքանչելի ժամանակները, մեր շրջագայությունները, քո զրույցները...

Դեղագործի մանդարինյան դեղին դեմքը մնաց անհույզ։ Այծային մորուքը չշարժվեց։ Ձայնը հնչեց ասես գլխի միջից.

— Դատարկ բաներ էին...

Այս հերքման վրա Շատախյանի սենտիմենտալությունը բորբոքվեց.

— Դատարկ բաներ չէին... ինձ համար, մեզ համար... Վարպե՛տ, գիտես, որ ես ապրել եմ Եվրոպայում, կարող եմ ասել, որ ֆրանսիական կուլտուրան ինձ համար միս ու արյուն է դարձել... Այնտեղ մարդ հազար ու մի բան է լսում ու սովորում, հաճախում է թատրոն, կինո, պատկերասրահներ, զեկուցումներ է լսում, համերգներ... Յողոնջուքում մեզ համար այդ ամենը դո՛ւ էիր և ավելի՞ն էիր... Դու մեզ ներկայացնում էիր ամբողջ աշխարհը, լուսաբանում... Ա՜խ, վարպե՛տ, ի՞նչ մարդ կդառնայիր դու Եվրոպայում։

Այս բացականչությունը նկատելիորեն բարկացրեց ծերունուն։ Ամբարտավանորեն թառանչ արձակեց.

— Ես լիովին գոհ եմ... իմ ունեցածից...

Ուսուցիչ Շատախյանը հանկարծ պապանձվեց։ Ահագին ժամանակ չէր կարողանում խոսակցության նյութ գտնել։ Բայց հետո տղայական ինչ-որ կատակ անցավ մտքով, ինչպես սովորաբար վարվում են իրական վիճակը մեռնողից թաքցնելու համար։

— Ի՞նչ տոնական շապիկ ես հագել, վարպետ։ Մի քանի օր հետո երբ հանես, կկեղտոտվի և կտրորվի։ Հետո նոր շապիկ նվեր կստանաս, քանի որ նման շորերը չեն լվանում...

— Իմ շապիկը ո՛չ կկեղտոտվի, ո՛չ էլ կտրորվի,— ասաց դեղագործը։

Շատախյանը հիշեց, որ Գրիգորի մարմինը, իրոք, մարմնեղեն չէր։ Մտքով անցավ, թե ի՞նչ լավ կլիներ, եթե հիվանդը քներ։ Նրան ճնշում էր ծերունու սթափ մտածողությունը։ Հիրավի, Գրիգորը կարծես ուզում էր այդ բավականությունը պատճառել իր հյուրին, չնայած աչքերը բաց էին։ Մոտ կես ժամ անցավ, մինչև նորից լսվեց հիվանդի տարօրինակ, շինծու թվացող ձայնը.

— Վարժապե՛տ, հիմարություններ դուրս տալու փոխարեն օգտակար գործ կատարիր... Մոտեցիր դեղորայքի դարակին... տեսնո՞ւմ ես կլոր, սև շիշը։ Կողքին բաժակ կա... Լիքը լցրու։

Շատախյանն իրեն երջանիկ զգաց, քանի որ ռեալ հանձնարարություն ստացավ։ Գնաց և շուտով բերեց թթի օղիով լի բաժակը։

— Վարպե՛տ, դու բժշկական ամենաճշմարիտ միջոցն ես ընտրել։

Ձեռքը դրեց Գրիգորի գլխի տակ, փոքր-ինչ բարձրացրեց և բաժակը մոտեցրեց բերանին։ Յողոնջուքցի իմաստունը երկար ումպերով դատարկեց օղին, ինչպես ջուրն են խմում։ Տնքալով ետ ընկավ։ Քիչ անց դեմքի վրա կենդանության նշաններ հայտնվեցին, իսկ աչքերում՝ հեգնական զվարթություն։

— Սա... ցավի դեմ է... Հիմա ուզում եմ մենա՛կ մնալ... Գնա քնիր, վարժապետ...

Հիվանդի դեմքի արտահայտությունը և աշխուժացած ձայնը Շատախյանին հանգստացրին։

— Վաղը կգամ, վարպետ, շատ կանուխ...

— Այո, վաղն արի... ինչքան ուզում ես՝ կանուխ... Իսկ հիմա կարող ես լամպը հանգցնել... Վերջին նավթն է վառվում... Այստեղ փոքրիկ մոմ է դրված... Վառիր... Մոմակալը դիր գրքերի վրա... Այդպես... Ուրիշ ոչինչ... Գնա քնիր, վարժապետ...

Երբ Շատախյանն արդեն անցել էր գրքերի պատի ետևը, մի պահ կանգ առավ, ետ դարձավ, նայեց իր ուսուցչին.

— Վարպետ, եթե ես քո տեղը լինեի, Ոսկանյանից չէի վիրավորվի։ Նրան մեկընդմիշտ ճանաչեցինք...

Շատախյանի վերջին խորհուրդը միանգամայն ավելորդ էր։ Դեղագործն այժմ արդեն ապրում էր ամենախոր անդորրության աշխարհում, որտեղ Ոսկանյանի նման ծիծաղելի մարդիկ ոչ մի դեր չէին կարող խաղալ։ Մերունին անթարթ հայացքով նայում էր առաջ, ըմբոշխնում ցավազրկության մեծ բերկրանքը։ Սիրտն անսահմանորեն թեթև էր։ Հանրագումարի էր բերում իր ներքին հարստությունը։ Որքա՜ն թեթև էր բեռը, որքա՜ն երջանիկ էր նա։ Ոչ ոքի չէր կորցնում, ոչ ոք էլ նրան չէր կորց-

նում։ Այն ամենը, ինչ կապված էր մարդկանց հետ, անշափելիորեն հեռու էր և գուցե գոյություն էլ չէր ունեցել։ Գրիգորը, հարկավ, միշտ էլ եղել էր Գրիգոր, մի մարդ, որն իր հատկություններով նման չէր ուրիշներին։ Ժողովուրդը խղճում է այն մարդկանց, ովքեր նման պահերին միայնակ են մնում։ Դեղագործն այդ բանը չէր զգում։ Մի՞թե ավելի սքանչելի բան կար, քան մենությունը։ Նա վայելում էր այն երանությունը, որ ինքը ոտքից գլուխ մաքուր է, ոչ մի պարտականություն չունի, չի խախտել մարդկային կարգն ու կանոնը։ Ոչ մի օտար խառնուրդից չէր պղտորվում նրա մաքուր ես-ի կենսաշունչ հորձանուտը։ Այդ հորձանուտում արյունն ավելի ու ավելի հախուռն էր եռում։ Ինչ-որ սքանչելի ջերմություն էր հառնում։ Գրիգորը նկատում էր, թե ինչպես իր մարմինը կրկին դառնում է դյուրաշարժ, իսկ հոդերն ազատագրվում են իրենց կոշտությունից։ Մերունին կարուկ շարժումով, առանց ցավ զգալու, շրջվեց դեպի լույսը։ Բոցի շուրջը պարում էին փոքրիկ, սպիտակ մժեղուկներ և սև, խոշոր փարվանա թիթեռներ։ Գրիգորը մտածեց. «Եթե այսպես շարունակվի, կառողջանամ»։ Բայց դա նրա համար բնավ կարևոր չէր։ Միտքը ևս սկսեց իր թիթեռնապարը։ Պղպջակների պես վեր էին բարձրանում ինչ-որ խորիմաստ, ցնորական բառեր, և Գրիգորը դրանց վրա ոչ մի իշխանություն չուներ։ «Պոլիդորոսի կենտրոնական արև»։ Գոյություն ունե՞ր, թե՞ չուներ այդ արևը։ Ի՞նչ կարևոր է։ Պոլիդորոսի կենտրոնական արևի շուրջը պարում էին միգամած համաստեղություններն ու ոստայնաձև լուսատուների սփյուռքը, թիթեռնաձև աստղաբույլերը, որոնք բաղկացած էին հրկիզված աշխարհների մանր մոխրափոշուց, ինչպես վկայում է արաբ աստղագետ Իբն Սաադին։ Եվրոպայում ի՞նչ մարդ կարող էր դառնալ։ Է՛շ Շատախյան։ Գրիգոր Յողոնօլուքցին աստծո պես հպարտ էր, որ տեսավ, թե ինչպես են մութ աշխարհները պարում կենտրոնական արևի շուրջը։ Այնքան հպարտ էր, որ ինքն իրեն կորցրեց և քնեց։ Սակայն արթնացումը սոսկալի էր։ Մահճակալը անհասկանալիորեն նեղացել էր։ Հիվանդը գրեթե ոչինչ չէր տեսնում։ Փարվանա թիթեռները հազարապատկվել էին, գրեթե լիովին ծածկել խղճուկ մոմի լույսը։ Գրիգորը շնչել չէր կարողանում։ Հուսահատ գոռաց, գալարվեց, ուշադրություն չդարձնելով ցավերին։ Արտաքուստ դա շնչահեղձության նոպա էր, բայց ներքուստ ինչ-որ ավելի ահավոր երևույթ էր։ Սոսկալի անտանելիության զգացում՝ ժամանակային իմաստով ոչ թե անցողիկ, այլ հարատև։ Եթե գժտություն ուներ, ապա դա էր ամենամեծ պատիժը։ Եվ այդ հարատև անտանելիությունը միանգամայն որոշակի բովանդակություն ուներ։ Թերմբանումների, սկզբնավորվող իմացությունների, փութանցիկ խոհերի, անհասկանալի ուսմունքների, խելքահան անող մոլորությունների այդ ծովը դժվար էր բնորոշել իբրև գիտակցող անգիտություն կամ անգետ գիտակցություն։ Սոսկալի է, երբ գլուխ չես հանում նույնիսկ ամենամաքուր հասկացողություններից։ Ոգու ի՞նչ ահավոր անզորություն, ոգի, որն ավելի դյուրաբեկ է, քան խոտի ցողունը։ Գրիգորին թվաց, թե ինքը խեղդվելու է փլատակներով լեցուն այդ ծովում։ Ուզեց փրկվել, դիմել փախուստի։ Խրխռալով առաջ սողաց, խարխափելով փոքր-ինչ բարձրացավ, կառչեց գրքերի պատից։ Երբ թուլությունից հավասարակշռությունը կորցրեց, մեջքի վրա ընկավ անկողնուն, իր հետ քաշելով վերևում շարված գրքերն ու մարմրող մոմը։ Գրքերն աղմուկով թափվեցին Գրիգորի վրա, կարծես ուզում էին գրկել իրենց տիրոջը, ողջագուրվել։ Հիվանդը երկար ժամանակ մնաց պառկած այնպես, ինչպես վայր էր ընկել։ Գոհ էր, որ դարձյալ կարող է շնչել, որ ազատագրվեց անդիտության խեղդող նոպայից։ Ալիքների պես ետ եկան ցավերը։ Ամեն մի մատն այրվում էր, կարծես հենց նոր էր դուրս քաշել կրակի միջից։ Մերունուն դարձյալ ծառայություն մատուցեցին գրքերը՝ կարդացված ու չկարդացված, միայն թերթված սիրելի՞ գրքերը։ Նա իր այրվող մատները թաղեց դրանց էջերի մեջ։ Հատորների ներսը ջրի պես զով էր։ Ավելին։ Գրքերի հոգևոր արյան միջից ինչ-որ սառցեղեն անդորրություն էր ամբառնում, լցվում իր արյան մեջ։ Խուլ ու կույր մատներով շոշափեց բոլոր գրքերը, բոլորն էլ ճանաչեց։ Վերջին մեղմ նոպան.. Ափսո՜ս, որ զրկվում է այդ բերկրանքից։ Այնուհետև այրուցքն աստիճանաբար տեղի տվեց։ Վերջին ցավը մի անգամ էլ գլուխ բարձրացրեց, սակայն խաղաղավետ անզգայացումը դարձավ տիրապետող։ Գերանների արանքից սարսռալով ներս էր հեղեղվում կապարագույն ծովի խավարը։ Գրիգորը ոչինչ չէր նկատում. նրա միտքը շատ ավելի վսեմ բանով էր զբաղված։ Նա լուռ համակվեց այն գիտակցությամբ, թե իր սրտի յուրաքանչյուր զարկը նշանակում է. «Ես առաջին մա՜րդն եմ, ես առաջին մա՜րդն եմ»։ Հետո սկսեց մոմ դառնալ այն, ինչ կոչվում էր Գրիգոր Յողոնօլուքցի։ Բայց սա արդեն կեղծիք է։ Տեղի ունեցածը չի արտահայտվի ժամանակի ու տարածության մեջ ստեղծված բառերով։ Ոչ թե մոմ դարձավ Գրիգոր Յողոնօլուքցին, այլ թողնեց այն, ինչ ինքը՝ աշխարհն էր։ Այո, զարմանալի արագությամբ կուլ եկավ ամբողջ աշխարհը, կառավարչատունը, Քաղաքաձորը, Մասսա լեռը, ներքևում ծվարած ծննդավայրը, այն ամենը, ինչով շրջապատված էր հայրենիքը։ Այլ կերպ լինել չէր կարող։ Աշխարհը խտություն չուներ, քանի որ այրված աստղերի մոխրից էր գոյացել։ Ի վերջո, Գրիգոր Յողոնօլուքցին

մնաց մեն-մենակ։ Բայց նա մի ամբողջ տիեզերք էր։ Ո՛չ, ավելին էր, քան տիեզերքը, քանի որ նրա գլխի շուրջը պարում էին աշխարհների փարվանաները, թեև նա ոչինչ չէր նկատում։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Դարանի բույր

Տեր-Հայկազունը, պատվելի Արամի և բժիշկ Ալթունու հետ երկար խորհրդակցելուց հետո, կարգադրել էր պարենի մնացորդները գործածել առանց խնայողության։ Մի՞թե անմտություն չէր կյանքը երկարաձգելով երկարաձգել նաև տառապանքը։ Դեռևս վրա չէր հասել իսկական սովը, բայց արդեն ուժասպառ էին եղել բազմաթիվ կանայք, երեխաներ, ծերունիներ։ Մարդիկ վայր էին ընկնում և այլևս չէին կարողանում վեր կենալ։ Այդ դանդաղ հյուծումը կործանման վատթարագույն ձևն էր։ Վարդապետն ուզում էր գործն արագացնել։ Ավելի լավ կլիներ, եթե մարդիկ մի քանի օր կուշտ ուտեին, ապա երես առ երես կանգնեին սովամահության առաջ, քան ծիծաղելի համառությամբ քաղցից տանջվեին, փոքր-ինչ ավելի երկար քարշ տային իրենց խղճուկ գոյությունը։

Սեպտեմբերի առաջին իսկ օրերին մորթվեցին Բագրատյանի տան երկու նիհար կովերը, ինչպես նաև բոլոր այծերն ու խոյերը։ Այլևս կարիք չէին տալիս կաթին. ոչ մի դեր խաղալ չէր կարող ո՛չ դրա պարունակությունը, ո՛չ էլ քանակը։ Հետո հերթը հասավ ավանակներին, որոնց կաշվանման միսը ո՛չ խորոված վիճակում էր ուտվում, ո՛չ էլ խաշած։ Ուրի՞շ բան էր տավարի միսը։ Զնչին մխիթարություն էին Բերթքիթի բերած շաքարն ու սուրճը։ Ամեն ընտանիքի բաժին էր ընկել մի քորոց ֆունտ։ Սուրճի դիրքը նորից ու նորից էին եփում, այնպես որ սրճամանները բիբլիական յուղակճուճի նման երբեք չէին դատարկվում։ Այդ հեղուկը ո՛չ կազդուրում էր, ո՛չ զվարթացնում, բայց և այնպես մարդիկ մի քանի րոպե տրվում էին հաճելի ինքնամոռացության։ Ծխախոտը նույնպես կարևոր դեր էր խաղում։ Տեր-Հայկազունը շատ իմաստուն վճիռ էր կայացրել։ Մուխթարների կամքին հակառակ, առյուծի բաժինը՝ չորս փաթեթ, բաշխել էր Հարավաբերդի զինվորներին, այդ դատարկապորտներին և անվստահելի դասալիքներին։ Թող լիուլի ծխեին, ավելի շատ, քան իրենց կյանքի հաջողակ օրերին։ Այդ բավականությունը նրանց զերծ կպահեր անօգուտ մտքերից։

Սարգիս Կիլիկյանը ևս, մյուսների նման մեջքի վրա պառկած՝ վայելում էր ծխախոտի շնորհած երանությունը։ Կարծես նրա հոգն էլ չէր, թե ինչ է կատարվում աշխարհում։

Հրանտ Ոսկանյանը, իհարկե, ծխող չէր։

Թեթևամիտ թվացող, սակայն կենսական անհրաժեշտության հետ կապված այս կարգադրություններին զուգընթաց, Տեր-Հայկազունը տվեց երկու գաղտնի առաջադրանք, որոնք իրականացվելու էին գիշերները։ Այդ առթիվ վարդապետը երկար բանակցելուց հետո համաձայնության էր եկել բժիշկ Ալթունու հետ։

Մեր բժշկի դեմքը թոշնած տերևի պես օրեցօր չորանում էր, սևանում։ Սմքած կրծքավանդակը ցնցվում էր հազից, թեև խեղճ մարդն աշխատում էր թաքցնել իր ծայրահեղ տկարությունը։ Որքան սպառվում էր կյանքը, այնքան նա ճիգ ու ջանք էր գործադրում այդ կյանքը պահպանելու համար։ Բայց այժմ տեսնում էր, որ Տեր-Հայկազունն ավելի իրավացի է։ Հանգամանքների ազդեցության տակ փոփոխվել էին երկու ծերունիների դերերը։ Տվյալ դեպքում վարդապետն առավել անաստված վճիռ էր կայացրել, քան բժիշկը։

Տարագրության երեսունչորսերորդ օրը, Գրիգորի մահից քսանչորս ժամ հետո, սուր վարակիչ անտառամասում մոտ երկու հարյուր հիվանդ կար, հիվանդանոցի ներսում և շուրջը՝ ավելի քան հարյուր հոգի։ Դրանք, ծանր վիրավորներից բացի, հիմնականում այն մարդիկ էին, որոնք ուժասպառ վայր էին ընկել աշխատանքի ժամանակ կամ ճանապարհին։ Հինգհազարանոց ժողովրդի համար դա սպառնալից թիվ չէր, քանի որ հիվանդների մի մասը վիրավորներ էին։ Բայց այդ օրը, անսպասելիորեն և առանց որևէ հիմունքի, բազմաթիվ մարդիկ մեռան։ Մինչև երեկո մարդկային քառասուներեք կյանք մարեց։ Վտանգ կար, որ առաջիկա ժամերին շատերն են նրանց հետևելու։

Գերեզմանատունը վաղուց արդեն չէր կարող հանգրվան տալ իր շարունակ ավելացող հյուրերին։ Համեմատաբար ավելի խոր հողաշերտի սահմանները վաղուց էին խախտված։ Այժմ ստիպված էին բահերով

չորս ոտք խորությամբ փորել Դամլաջրքի կրաքարե ողնաշարը։ Մշակութային հանգստարանի համար անհրաժեշտ էր շրջակայքում ավելի հարմար հող գտնել։ Բայց դա շատ դժվար խնդիր էր։ Այժմ աշխատանքային ուժերը պետք է զգուշորեն ծախսեին, իզուր չվատնեին մահվան վրա։ Քանի որ զամբյուղներում ոչ մի բուռ հայրենական հող չէր մնացել, որով Տեր-Հայկազունը կարողանար ճանապարհել հանգուցյալներին, ապա սրանք պետք է լիովին ապավինեին աստծո ամենագիտությանը։ Վերջին դատաստանի ժամանակ Տերը պետք է վճռեր, թե ո՞ր հոգին ումն է պատկանում։ Հետևաբար միևնույն էր, թե Մուսա լեռան օրերից հետո ինչպես և որտեղ են հանգչելու մեռյալները։ Իրենց կրած տառապանքներից հետո նրանք շատ խորն ու ամուր էին քնելու։

Դա նկատի ունենալով, Տեր-Հայկազունը թաղման նոր կարգ սահմանեց, առանց այդ բանի շուրջը ժողովրդի հետ նախապես խորհրդակցելու։ Անլուսին գիշերվա ուշ ժամին դիակները հավաքեցին և տարան սկուտեղաձև դարատափը, որը վիթխարի նավաքթի նման խրված էր ծովի մեջ։ Բոլորը գործի անցան՝ հիվանդապահները, գերեզմանաբնակները և նրանք, ովքեր զբաղվում էին գաղթականների կյանքի այդ գիշերային կողմով։ Երեք-չորս անգամ գնացին, եկան, մինչև բոլոր պատանավոր դիակները շարեցին լերկ ժայռի վրա։

Լուսինը նորելուց հետո եղանակը փոխվել էր։ Անձրև չկար, բայց Մուսա լեռան բարձունքներում մոլեգնում էր փոփոխակի, քմահաճ փոթորիկը։ Դա մերթ տափաստանի կողմից էր փչում, իր հոսանքով շընչահեղձ անում, մերթ հայտնվում էր փրփրահույզ ծովի կողմից, գալարվում, իրար խառնում հող ու ջուր՝ միմյանց ներդաշնակ այդ տարրերը։ Եթե Գաբրիել Բագրատյանը Քաղաքաձորի տեղը հաջող ընտրած չլիներ, ոչ մի խրճիթ անվթար չէր մնա։ Փոթորիկը կարծես բույն էր դրել սկուտեղաձև բաց տափարակում։

Երբ փոթորկի նոր հոսանքը վրա պրծավ ժայռին, մարդիկ հազիվ կարողացան ոտքի վրա մնալ։ Հուղարկավորների բռնած ջահերն ու մոմերը առաջին իսկ վայրկյանին հանգան։ Շարունակում էր աղոտ պսպղալ միայն վարդապետի ետևից քայլող տիրացուի բռնած արծաթյա բուրվառը։ Տեր-Հայկազունը մանրաքայլ առաջ էր շարժվում, հերթով օրհնում հանգուցյալներին։ Նունիկին, Վարդուկին խիստ զայրացրել էր թաղման այս նոր կարգը, բայց բարձրաձայն չէին քննադատում, քանի որ Դամլաջրքի գաղթականներում եղերամայրերի գոյությունը մարդիկ հազիվ էին հանդուրժում։ Նրանք շտապեցին քավել վարդապետի մոլորությունը, պատշաճը հատուցել օգնության կարոտ հոգիներին։ Կանայք

առավել եռանդով ծոր տվին իրենց հինավուրց ողբը։ Սակայն կատաղած փոթորկի հետ մրցել չկարողացան և նահանջեցին։ Քամին այնպես էր ոռնում, որ հանգուցյալների հոգիներին ոչ ոք չէր կարող օգնել դժոխքի ուժերի դեմ մղվող պայքարում, ուժեր, որոնք մեռյալներին քաշում էին գեպի սանդարամետ։

Երկու տղամարդ, ուսերից ու ոտքերից բռնած՝ բարձրացրին առաջին դիակը, մոտեցրին ժայռի եզրին։ Այստեղ կանգնած էր վիթխարամարմին մի երիտասարդ։ Առանց փոթորկին ուշադրություն դարձնելու, սա ոտքերը չուած կանգնել էր, առաջ պարզած վայրի հաղար կոչվող բույսի խոշոր, լայն տերևներ հիշեցնող ձեռքերը։ Դա Գևորգն էր՝ արևածաղկով պարողը, ապուշը։ Նրան ահագին դժվարությամբ էին հասկացրել, թե ինչ պետք է անի։ Վերջապես, երբ գլխի էր ընկել, ուրախացած բացականչել էր. «Հա՜, ոնց որ նավերի վրա...»։ Մարդիկ առաջին անգամ իմացան, որ նա իր պատանության տարիներին ածխատար նավով ուղևորություն է կատարել Սև ծովում։ Տկարամիտը չափազանց պատրաստակամ բնավորություն ուներ։ Նրան ոչ մի բան այնքան բավականություն չէր պատճառում, որքան օգտակար լինելու գիտակցությունը։ Հրճվում էր, երբ որևէ գործ էին վստահում։ Աշխատանքի բնույթը ոչ մի նշանակություն չուներ։ Ուրիշները նման հարցերում բծախնդիր էին։ Բարձրաստիճան ռազմիկների, կրակի առաջին գծի վրա գտնվող զինվորների համար պաշտպանության հետ անմիջական առնչություն չունեցող բոլոր աշխատանքներն էլ անպատվաբեր էին։ Պահեստայինները նույնպես նվաստացուցիչ էին համարում մսագործի, հնոցապանի, հիվանդապահի պարտականությունները։ Սրանք էլ, իրենց հերթին, արհամարհանքով էին վերաբերվում մեռել թաղողներին։ Մարդկային էության անբեկանելի օրենքով այստեղ, Դամլաջրքի բարձունքներում ևս, գոյացել էր հիերարխիա, որի հիմունքներն այստեղ էլ նույնքան անորոշ էին, որքան ամենուրեք։ Սակայն Գևորգը՝ Պարողը, Սաթոյի, մուրացկաններից մի քանիսի, հաշմանդամների և հոգեկան հիվանդների նման բարձ ու պատվի հասկացության շրջանակից դուրս էր կանգնած։ Եթե Գևորգին հանձնարարություն էին տալիս, ուրեմն, դրանով իսկ նրան վեհացնում էին, ավելի բարձր դասում, քան նրա դասակարգը, պրոլետարին դարձնում ազնվական։ Նման դեպքերում Գևորգն իրեն բախտավոր էր զգում, քանի որ ցանկալի էր, պիտանի։ Թույլ չէր տալիս, որ մեկնումեկն իր արժանապատվության ամենաչնչին մասն անգամ հափշտակի։

Դիակը վերցնելուց հետո նա արմունկներով ետ հրեց բերողներին։ Թվում էր, թե ծովի վրա գեռևս մնում են անցյալ պայծառ գիշեր-

ների աստղահետքերը։ Սպիտակավուն ալիքներից ինչ-որ աղոտ լույս էր բարձրանում, պարզ ուրվագծում Պարողի կերպարանքը։ Մի քանի լապտեր լուսավորում էին ժայռի սարսափելի եզրը։ Չնայած այդ լույսին, չափազանց վտանգավոր էր Գևորգին հանձնարարված գործը։ Սկուտեղաձև դարատափը տարածվում էր, այսպես կոչված, Բարձր պատի վրա, որը բացարձակապես ուղղահայաց իջնում էր, չորս հարյուր մետր խորանում դեպի ծովը։ Ներքևում ծովը այնքան խորն էր մտել Բարձր պատի տակ, որ ժայռակոփ տափարակը, իրոք, նման էր առաջ պարզված ձեռքի։ Ամբողջ լեռնաբեկորը կարծես կախված էր օդում։ Վերևից չէին նկատվում փրփրահույզ ալիքները։ Եթե մարդ փոքր-ինչ անզգույշ մի քայլ կատարեր այդ վիթխարի նավաքթի վրա, ապա իսկույն և անդառնալիորեն կդատապարտվեր մահվան։ Սակայն Գևորգը գիշերային խավարում ոչ մի երկյուղ չէր զգում։ Գլուխը բոլորովին չէր պտտվում, այնինչ դիակ բերողները շտապ ետ էին քաշվում։ Նա ժայռի աղոտ լուսավորված նեղ եզրին անվրդով պարում էր, օրորվում, օրորելով նաև մեռածներին, իրենց զորավոր դայակ։ Պատանների մեջ ամփոփված և իրենց հոգիներից զրկված հանգուցյալներին նա հեշտությամբ տարուբերում էր, չնայած դրանց պարանոցներից քարեր էին կապված, ապա անհավատալի թեթևությամբ նետում էր ցած։ Դիակները անձայն ու անտեսանելիորեն ընկղմվում էին գիշերվա խորքը։ Հակառակ ծիծաղելիորեն խղճուկ սննդին, Գևորգն իր ուժը բնավ չէր կորցրել։ Երբ մի ժամ հետո, չոված ոտքերի վրա համաչափ օրորվելով, նա քառասուներեքերորդ դիակը նետեց հավերժության գիրկը, կարծես տխրեց, որ աշխատանքը վերջացավ, և ձեռքերը մնացին պարապ։ Թվում էր, թե նա մեծ բավականությամբ կշարունակեր հանդարտ օրորվել, մշտնջենական հանգստի կուղարկեր չորս հարյուր, հազար մարդ, ամբողջ ժողովրդին։ Կողմնակի դիտողը կզարմանար. հուղարկավորումը ոչ միայն քստմնելի չէր, այլև միանգամայն պատշաճ։

Այս առթիվ Տեր-Հայկազունն ու Պետրոս Ալթունին երկար-բարակ չէին խորհրդակցել։ Բժիշկը պայքարում էր ոչ թե մեռածների, այլ ողջերի համար։ Վարդապետը որոշ իմաստով անողոք բան առաջարկեց. ավելի լավ կլինի, եթե անհուսալի հիվանդներին հանգիստ թողնեն, ամենից առաջ նրանց, ովքեր կորցրել են գիտակցությունը կամ հանգչում են առանց որևէ ցանկություն հայտնելու։ Բժիշկն ասաց, թե այդ վիճակում գտնվողները ոչ միայն սնունդ չեն պահանջում, այլև դիմադրում են, երբ հիվանդապահները նրանց տալիս են մի քիչ կաթ կամ մսաջուր։ Այդ հիվանդները չեն տառապում, երբ առանց կողմնակի միջամտության երազում են և երազելով մեռնում։ Տեր-Հայկազունի մտքով բնավ

չէր անցնում այն, թե հիվանդներին տրվելիք սնունդը կարող է խնայվել հօգուտ ողջ մնացածների։ Նրան չէր մտահոգում նաև մահվան դատապարտվածների ծանր բեռից կենսունակներին ազատագրելը։ Վարդապետին միայն մի բան էր հետաքրքրում։ Բոլոր հիվանդներին, ում աստված հայրաբար մտադիր է գեղեցիկ մահ շնորհել, չպետք է զրկել այդ ողորմածությունից։ Արժե՞ր այդ մարդկանց կյանքը խնայել, ապա հանձնել թուրքերի ձեռքը։

Բժիշկն ու վարդապետը այցելում էին բոլոր հիվանդներին։ Ալթունին յուրաքանչյուրի վերաբերյալ կենաց կամ մահվան դատավճիռ էր արձակում։ Չէր վարանում միայն այն դեպքում, երբ հիվանդը բացահայտ կերպով անհուսալի էր։ Կարելի էր ոմանց տառապանքը մեկ-երկու օրով կրճատել։ Բայց եթե բժիշկը մեկնումեկի դեմքին, զարկերակն ստուգելիս, հանկարծ ապագայի նշույլ էր նկատում, ապա սկսում էր մաքառել այդ հիվանդի համար, մանավանդ, եթե դա երիտասարդ էր։ Վարդապետի սրտում շատ ավելի պակաս էր կարեկցանքը, քան բժշկի սրտում։ Տեր-Հայկազունի տեսակետից, մարդը երկու կյանք ունի՝ անցողիկ և հավիտենական։ Քանի դեռ մարդը կենդանի է, երկրային կյանքը պակաս կարևոր չէ, քան հանդերձյալը։ Ով բնական ճանապարհով է անցողիկ կյանքից զրկվում, շատ բան չի կորցնում։ Նույնիսկ պետք է գոհություն հայտնի, որ սպանության դժոխային սարսափով չի խաթարել իր հավիտենական հոգին։ Այսպես էր խորհրդածում Տեր-Հայկազունը։ Սակայն բժիշկը հանդերձյալ կյանքին չէր հավատում։ Նա հավատում էր միայն երկրային կյանքին։ Նրա կարծիքով, ով այս կյանքից է զրկվում, արդեն ոչ թե շատ բան է կորցնում, այլ ոչինչ։ Բայց և այդ ոչինչը մյուս կողմից ամեն ինչ է։ Ոչ մեկն ուրիշ ոչինչ չունի կորցնելու, բացի այդ ամեն ինչ-ոչնչից։ Նայած թե ով ինչպես է մոտենում այս խնդրին։

Այնուհանդերձ, Ալթունին չգիտեր, թե ինչպես է իր սեփական կյանքը գնահատում, ասենք, այս դեռատի կինը, որը նրա ոտքերի տակ պառկած՝ անթարթ նայում էր շողշողուն, արտասվալից աչքերով։ Եթե չապաքինվեր էլ, համենայն դեպս, կարող էր ևս հինգ րոպե վայելել երկրային գոյության երջանկությունը։ Այդ պատճառով էլ տատանվում էր կյանքն արհամարհող բժիշկը։ Սակայն Տեր-Հայկազունի համար ոչինչ չարժեր այդ կնոջ հինգրոպեանոց երջանկությունը ի դեմս հավիտենության, ուր հիվանդը մուտք էր գործելու մաքուր խղճով։ Երբ բժիշկը որոշակի «այո» կամ «ոչ» չէր ասում, վարդապետն անվրդով առաջ էր անցնում։ Երկուսին ուղեկցող սարկավագներից մեկը նման հիվանդների գլխավերևում, ձախ կողմից, հողի մեջ փայտե փոքրիկ ձողեր էր խրում։

Սա հիվանդապահների համար նախազգուշացում էր. եթե մահամերձն ուտելիք կամ ջուր չխնդրի, ապա չպետք է ստիպել։ Երբեմն Ալթունին գաղտագողի ետ էր գալիս, ձողը դուրս քաշում։ Հետաքրքիր երևույթ։ Վարդապետը հաստատ համոզված էր, որ կործանումը մոտ է, բայց և այնպես հավատում էր, թե կարող է հրաշք պատահել։ Իսկ բժիշկը, հաստատ համոզված լինելով, որ կործանումը մոտ է, հավատում էր, թե որևէ կույր պատահականությամբ կարելի է ետ մղել մահը։ Այս երկու մոտեցումը խիստ տարբեր էին, թեև կարծես նման էին։ Ինչպես, Տեր-Հայկազունն ու բժիշկ Ալթունին այս դեպքում լռում էին։

Մինչդեռ Գևորգը՝ Պարողը, շա՜տ գործ ուներ անելու...

Ալեքսանդրեթից անսպասելիորեն վերադարձան լողորդները։

Վաղ առավոտյան տղաները հայտնվեցին հյուսիսային խրամատի մոտ։ Երկուսն էլ բարեհաջող կտրել անցել էին զափթիեների ու զինվորների պարեկային շղթաները, որով արդեն երկու օր գոտևորված էին Մուսա լեռան բոլոր բարձունքները՝ Քեբուսիեից մինչև հյուսիսում ընկած ծովեզրյա Արսուս գյուղը։ Լողորդների արտաքինը հակասում էր նրանց տասնօրյա արկածների տևողությանն ու շարշարանքներին։ Ճիշտ է, նիհարել, կմախք էին դարձել, բայց մկանուտ էին, արևից ու քամուց կազդուրված, սևացած։ Ամենատարօրինակ բանը տղաների հագուստն էր։ Մեկի հագին տղամարդու բրդյա մոխրագույն, արդեն մաշված ննջազգեստ կար, իսկ մյուսի հագին՝ սպիտակ վերնաշապիկ և առասպելական ժամանակներից մնացած սմոկինգի բաճկոն։ Երկուսի շալակին էլ մեկական զինվորական ուսապարկ կար՝ ժողովրդին ծառայելու հերոսական պատրաստակամության առհավատչյան։ Չէ՞ որ Դամլաջրքից Ալեքսանդրեթ կտրել անցել էին անգլիական երեսունհինգ մղոն, այն էլ լեռնային դժվարանց ճանապարհներով։

Լողորդների վերադարձը ցնծությամբ համակեց մարդկանց, որոնք իսկույն հեղեղի պես չորս կողմից եկան հավաքվեցին, սակայն նրանց հաղորդած լուրերը հանգցրին ամենավերջին հույսը։ Տղաները վեց օր մնացել էին Ալեքսանդրեթում, բայց նավահանգստում ոչ մի ռազմանավ չէր երևացել։ Խարսխակայանում կանգնած էին միայն թուրքական մի քանի հին փոխադրանավեր, ածխատար նավեր, ձկնորսանավեր և ռուսներից գրավված մի առևտրական նավ։ Վիթխարի ծովածոցը, որն ուղիղ անկյուն էր կազմում Փոքր Ասիայի և Սիրիայի միջև, ամայի էր, նույնքան ամայի, որքան Մուսա լեռան թիկունքում ընկած ծովեզերքը։ Երկար

ամիսների ընթացքում ոչ մի ալեքսանդրեթցի նույնիսկ հեռվում որևէ ռազմանավ չէր տեսել։

Բնականաբար, տղաներին ճնշում էր ոչ թե այն հանգամանքը, որ ապարդյուն է անցել իրենց ջանքը, այլ այն, որ չկարողացան օգտակար լինել, և ժողովրդի գլխին վտանգը մնում էր կախված։ Իրար ընդհատելով, իրար բերանից խոսք խլելով, պատմո՜ւմ էին, պատմո՜ւմ։ Մանրամասներն նկարագրում էին իրենց ուղևորության յուրաքանչյուր օրը։ Երբ մեկը որևէ մանրուք մոռանում էր, մյուսը անհամբեր լրացնում էր։ Բազմությունը, իր սեփական վիճակը մոռացության տալով, չէր հագենում լսելուց։ Ոմանց կարծիքով, տղաները, երկար ժամանակ դրսի աշխարհում լինելով, կարգին կյանք են քաշել, մի բան, որը Դամլաջրքի գաղթականությունում պատկերացնել անգամ չէր կարելի։

...Իրենց գիշերային թափառումների առաջին իսկ օրը լողորդները լեռնային բարձունքներով կտրեցին անցան Ռես էլ Խընզրը և անվթար հասան ծովեզրյա ճանապարհը, որն Արսուսից ձգվում էր դեպի նավահանգստային քաղաք։ Մի ամբողջ օր անցկացրին Ալեքսանդրեթի մոտակա բլրի գագաթին։ Այստեղից, մրտենիների խիտ թփուտներում թաքնված՝ շարունակ դիտում էին նավահանգիստը։ Կեսօրից հետո, մոտ ժամը չորսին, հեռվում ինչ-որ նեղ, գորշ բան երևաց։ Ալիքները ճեղքելով և փրփուր բարձրացնելով՝ նավն ամբողջ թափով մոտենում էր։ Ամեն զգուշություն մոռացած, տղաները թռչկոտելով սլացան ծովափ, ջուրը նետվեցին և փայտե նավամատույցի մոտով լողացին առաջ։ Ինչպես պատվիրել էին, մոտեցան կարծեցյալ անգլիական կամ ֆրանսիական ականանավին։ Սա նրանց աչքի առաջ հետզհետե խոշորացավ, և լողորդները շուտով սարսափահար նկատեցին նավադրոշի կիսալուսինը։ Տախտակամածից նրանց արդեն նկատել էին։ Հեռվից ձայն տվին։ Պատասխան չստանալով և տղաների շփոթությունը նկատելով, թուրքական նավահանգստի պարեկային նավի անձնակազմը կրակ բացեց։ Տղաները ջրի տակ սուզվեցին, վարպետորեն լողացին ահագին տարածություն։ Այնուհետև թաքնվեցին կիլիկիայան ժայռերի արանքում, որոնց վրա կառուցված էր նավամատույցը։ Բարեբախտաբար արդեն երեկո էր, և նավահանգիստն արդեն ամայի էր, չնայած կամրջի փտած գերանների վրայով շարունակ անցուդարձ էին անում պարեկները։ Նրանց քայլերը դղրդալից արձագանք էին տալիս։ Կուշ էին եկել բոլորովին մերկ ու թրջված։ Շորերն ու պարենը կորցրել էին։ Կարծես եղածը քիչ էր, կես բոպեն մեկ ինչ-որ ուժեղ լույս մոտակայքից ընկնում էր նրանց վրա։ Որքան հնարավոր էր, մտան քարերի արանքը։ Ափ դուրս գալ համար-

ձակվեցին միայն խոր գիշերին, խուսափելով նավահանգստի երկար ճանապարհից։ Ուրիշ ելք չկար. կամ վախից պետք է ծլկեին դեպի բլուրները կամ համարձակորեն փորձեին մտնել քաղաք։ Բայց գտնվեց միջին ճանապարհը։ Պուրականման բարձունքի վրա ամառանոցային բազմաթիվ առանձնատներ կային։ Դրանք լավ ապաստարաններ էին տենդից հեռու մնալու համար։ Տղաները լսել էին, որ Ալեքսանդրեթի այդ ամառանոցներից մեկի տերը հայ է։ Առաջին իսկ այգու դարպասի ցուցանակի վրա լուսնի լույսով կարդացին հայկական ազգանուն։ Բայց դարպասը փակ էր, տան ներսում լույս չէր վառվում, պատուհանների փեղկերը մեխված էին։ Տունը մեռած էր թվում։ Պատվիրակները չհուսահատվեցին։ Պատրաստ էին ամեն գնով ներս սողոսկել, պատսպարվել։ Նկատեցին այգու պարսպին հենված բահն ու քլունգը։ Վերցրին, հուսահատ հարվածներով փորձեցին դարպասը ջարդել, առանց մտածելու, որ աղմուկը կարող է արթնացնել իրենց մահացու թշնամուն։ Մի քանի վայրկյան չանցած տան ներսում շարժում սկսվեց։ Դուռը բացվեց։ Հայտնվեցին մի դողդոջուն լույս և մի դողդոջուն մարդ.

— Ո՞վ է։

— Հայեր ենք։ Ի սեր Քրիստոսի, մի բան տուր ուտենք և թաքցրու մեզ։

— Մարդ թաքցնել չեմ կարող։ Ձափթիեներն ամեն օր տունը վերից վար խուզարկում են։ Այս տանը բնակվելու արտոնությունը մի շաբաթ հետո վերջանալու է։ Ամեն շաբաթն էլ հարյուր ոսկի արժե։ Եթե ձեզ տանը տեսնեն, մենք էլ ձեզ հետ կկորչենք։

— Ովից հենց նոր դուրս եկանք։ Ոտքից գլուխ տկլոր ենք։

Գրպանի լապտերի լույսը թրթռաց ցրտից սրթսրթացող տղաների մերկ մարմինների վրա.

— Ողորմա՜ծ աստված։ Ներս թողնել չեմ կարող։ Դա բոլորիս համար էլ մահ է։ Բայց սպասեցեք։

Րոպեներ անցան, անվերջանալի թվացող րոպեներ։ Այնուհետև դարպասի ճեղքից անծանոթը տղաներին մեկնեց երկու վերնաշապիկ, երկու բարակ վերմակ, ինչպես նաև հաց ու բավականաչափ եփած միս։ Բարերարը տվեց նաև երկու ոսկի։ Սարսափահար հայրենակիցը մրմնջաց.

— Ի սեր աստծո, այստեղ երկար մի՛ մնացեք։ Երևի ձեզ արդեն նկատել են։ Գնացեք գերմանական փոխհյուպատոսի մոտ։ Նա միակ մարդն է, որ կարող է ձեզ օգնել։ Ազգանունը Հոֆման է։ Հետևերդ մի պառավ կին կուղարկեմ, թրքուհի։ Հետևից գնացեք, բայց հեռվից։ Հետդ չխոսեք։

Պարոն Հոֆմանի տունը բարեբախտաբար նույն այգուց հեռու չէր։

Գերմանական փոխհյուպատոսը չափազանց բարեսիրտ մարդ դուրս եկավ։ Նա ջանում էր ամեն կերպ օգնել հայերին, մի բան, որ թույլ չէին տալիս իր պաշտոնական իրավունքները։ Հալեպի գլխավոր հյուպատոս Ռյոսլերի աշխատակիցներից էր։ Ռյոսլերն ի սկզբանե պաշտպանում էր տարագիրներին, մարդասիրաբար պայքարում էր Իթթիհադի, թուրքական կառավարության հայատյաց քաղաքականության, ինչպես նաև իր սեփական պատվի շուրջը պտտվող զրպարտությունների դեմ։

Հոֆմանը բարեկամաբար ընդունեց լողորդներին, հոգ տարավ, սենյակ տրամադրեց, փառահեղ անկողիններ։ Տղաները օրը երեք անգամ հեքիաթային ճաշեր էին վայելում։ Բարերարը խոստացավ տղաներին այդ զարմանահրաշ սենյակում պատսպարել այնքան, մինչև դրությունը կարգավորվի։ Բայց հայ երիտասարդներն իրենց առասպելական կյանքի երրորդ օրը պարոն Հոֆմանին հայտնեցին, թե արդեն ժամանակն է անմիջապես վերադառնալու Մուսա լեռ, յուրայիններին մոտ։ Ճակատագրի բերումով, հենց այդ ժամին, երբ տղաները դիմեցին իրենց բարեգութ հյուրընկալողին, Ալեքսանդրեթ ժամանեց գլխավոր հյուպատոս Ռյոսլերը, այն էլ Բաղդադի երկաթուղու նոր մագիստրալով, որը ձգվում էր Թոփրակ-Կալեից մինչև Նավահանգիստ։ Դա առաջին գնացքն էր։ Ռյոսլերը տղաներին խստորեն ասաց, թե նրանք իրենց փրկության համար պետք է գոհություն հայտնեն արարչին և ոչ մի դեպքում չհեռանան ապահով պատսպարանից։ Ասաց նաև, որ փրկարար ռազմանավերի հետ հույս կապելը պատրանք է, թշվառությունից խելքները թրոցրած մարդկանց ցնորք։ Առաջին, Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան մասում առհասարակ ֆրանսիական ոչ մի հածանավ չկա։ Կիպրոսի նավահանգստում անգլիական մի նավատորմ է գործում, բայց դա Սուեզի ջրանցքի ու Եգիպտոսի պաշտպանությամբ է զբաղված և երբեք չի շեղվի դեպի հյուսիս։ Հանուն ինչի՞։ Սիրիական ծովեզերքին զորք իջեցնելու ոչ մի առիթ չկա։ Երկրորդ, որևէ հյուպատոսարանում փախստական հայերին պատսպարելը կարող է հնարավոր լինել միայն երջանիկ պատահականությամբ։ Իսկ դրա հետ հույսեր կապել չարժե։ Իրականում ո՛չ ինքը՝ Ռյոսլերը, կարող էր հայերին օգնել, ո՛չ էլ Հալեպում պաշտոնավարող նրա ամերիկացի կոլեգան՝ պատվարժան միստր Ջեքսոնը։ Այս առթիվ Ռյոսլերը մեծ գոհունակությամբ տեղեկացրեց, որ Ջեքսոնին մի քանի օր առաջ հաջողվել է պատսպարել Մուսա լեռան գաղթականներից եկած մի այլ հայ պատանու։ Լողորդները սրտանց ուրախացան, որ Հայկի առաքելությունը պսակվել է հաջողությամբ, շնոր-

հակալություն հայտնեցին բարյացակամ խորհուրդների համար, սակայն հայտարարեցին, թե իրենք հնարավորության սահմաններում պետք է վտանգավոր ճանապարհով շտապ վերադառնան իրենց թշվառության հանգրվանը։ Ոչինչ չօգնեց՝ ո՛չ նախազգուշացում, ո՛չ թախանձանք։ Շփոթված տղաներն աղքատիկ բառապաշարով բացատրեցին իրենց ապրումները.

— Վերևում ծնողներ ունենք... հարսնացուներ... Ինչպե՞ս կարող ենք մնալ... Նրանք այնտեղ դժբախտության մեջ են, իսկ մենք այստեղ... ապահով... գեղեցիկ տան մեջ...

Նոր ամսվա երկրորդ օրը փոխհյուպատոս Հոֆմանը ճանապարհ դրեց տղաներին, երբ համոզվեց, որ բոլոր հորդորներն անտեղի են։ Քանի որ գերմանացին նրանցից իմացել էր, թե մուսալեռցիները ինչ նեղություն են քաշում առանց հացի, ոչ այնքան օրինական ճանապարհով օսմանյան կայսրության զինվորական մատակարարներից գնեց երկու պարկ պաքսիմատ, հանձնեց լողորդներին։ Բայց Հոֆմանի ամենամեծ լավությունն այն էր, որ լծել տվեց հյուպատոսության կառքը։ Տղաները նստեցին Հոֆմանի աջ և ձախ կողմերը։ Բարձրադիր փափախ դրած կառապանի կողքին բազմեց համազգեստավոր քավասը[1] և դանդաղ առաջ պարզեց գերմանական կայսրության դրոշը։ Հպարտ-հպարտ անցան զափթիեների պահականոցների մոտով, որոնք աչալուրջ հետևվում էին նավահանգստային քաղաքի երթևեկությանը։ Ժանդարմները ձգվեցին, պատկառանքով ողջունեցին գերմանական պետության ներկայացուցչին, կայսրության դրոշը և փոխհյուպատոսի կասկածելի հովանավորյալներին։ Պարոն Հոֆմանը տղաներին ապահով անցկացրեց Արսուսի ճանապարհին գտնվող երկրորդ պահականոցի մոտով։ Այստեղ լողորդները կառքից իջան և, առանց իրենց արցունքները թաքցնելու, հրաժեշտ տվին գորովասիրտ բարերարին։

Տղաների այս պատմությունը տևեց ավելի քան մի ժամ, քանի որ կողմնակի աղաղակներով, միջանկյալ հարցերով ու միջամտությամբ մարդիկ նրանց շարունակ ընդհատում էին։ Բոլորը մեծ բավականություն ստացան, թեև պատվիրակների հաղորդածը պետք է միայն հուսահատեցնող ազդեցություն գործեր։ Չէ՞ որ նրանց առաքելությունը ապարդյուն էր անցել։ Պարզվեց, որ ծովից փրկություն սպասելը ցնորք է, երևակայության արդյունք։ Այնուհանդերձ երիտասարդ հերոսներին շրջապատած մարդկանց սրտերում ինչ-որ աղոտ հույս էր առկայծում։

[1] Քավաս — շվեյցար, սպասավոր

Լողորդները նստած էին գետնին։ Նրանց պատմածն ավելի լավ լսելու համար յուրայինները սեղմվել էին երկուսին։ Հայրերը լրջադեմ լսում էին։ Կարծես ուզում էին ասել. «Լա՜վ է, լա՜վ։ Հազիվ թե մեկ ուրիշն ավելի խելացի վարվեր»։ Մայրերը մոլեռանդ հպարտությամբ իրենց շուրջն էին նայում։ Երկու հարսնացուները կամ սիրած աղջիկները, հակառակ ընդունված սովորության, իրենց բացեիբաց համարում էին տղաների ընտանիքի անդամները, շոշափում նրանց տարօրինակ զգեստները, իրար հետ անկապ և հուզված քչփչում։ Երբեմն աղջիկների շուրթերից դուրս էին թռչում նրանց ներքին ապրումները մատնող առանձին դավաճան բառեր։

Այս ամենին վերջ տրվեց, երբ հայտնվեց Շուշիկը։ Ինչ-որ մեկը այրում բերել էր խրճիթից։ Չորս կողմից մարդիկ ձայն տվին, թե Հայկը ողջ-առողջ է։ Շուշիկն սկզբում ոչինչ չհասկացավ։ Այդ պահին նա մտամոլոր և գլխիկոր նայում էր գետնին։ Ստեփանի մահից հետո այրին գլուխը գրեթե չէր բարձրացրել։ Նա այժմ ավելի ոսկրոտ էր թվում։ Տղամարդկային կոշտ բռունցքները անզոր կախվել էին ցած։ Նա արդեն շատ անկանոն էր ստանում իր հասանելիք սնունդը։ Երբ մեկը դիմում էր նրան, ավելի կոպտաբար, ավելի թշնամաբար էր պատասխանում, քան առաջ։

Ուրախ կանչերը կրկնվեցին.

— Շուշի՛կ, աչքդ լո՛ւյս. Հայկը ողջ-առո՛ղջ է... Հայկը կենդանի՛ է...

Ահագին ժամանակ անցավ, մինչև այդ խոսքերը թափանցեցին մոր գիտակցության մեջ, մինչև նրա ամբողջ էությունը ներծծեց բարի լուրը, և նրա կոշտ ու կոպիտ մեջքը աստիճանաբար կանացի փափկություն ստացավ։ Դեռևս ընկճված՝ հերթով նայեց բոլորին, ապա թախանձեց, որ իրեն անգթորեն չխաբեն։ Այստեղ լողորդներից մեկը հաստատեց իրողությունը, վավերացրեց Շուշիկի երջանկությունը, իհարկե, փոքրինչ չափազանցնելով, ինչպես դա հատուկ է հաջողակ արկածախնդիրներին.

— Ոյոսլերն ու Ջեքսոնը ամեն օր հանդիպում են։ Գերմանացին ինձ իր բերանով ասաց, թե Հայկին տեսել է։ Ասաց, որ տղայի գործերը շատ հաջող են...

Վերջապես իրողությունը թափանցեց Շուշիկի էության ամենահեռավոր խորքերը։ Երկու անգամ հեկեկանք հիշեցնող երկար ֆառանչ արձակեց։ Գլորվելով մի քանի քայլ առաջ շարժվեց։ Այդ քայլերը տասնհինգամյա մենության խավարից նրան տարան դեպի այն օղակը, որ գոյացել էր լողորդների ու նրանց ընտանիքների շուրջը։ Մի քանի երերուն քայլ

ևս, ապա զորեղ այրին վայր ընկավ, սթափվելով նորից վեր կացավ, ծունր իջավ։ Նրա գունաթափ, չծերացող դեմքին զարմանք դրոշմվեց, ապա ճառագեց անսպասելի և անասելի մարդասիրության արևը։ Բոլորից խուսափող, ամբողջ կյանքում մեկուսացած այդ կինը իր կոշտ ու կոպիտ թևերը թուլացած, կարոտակեզ բարձրացրեց, ընդառաջ պարզեց այն մարդկանց, որոնց կրկին գտել էր։ Այրու թևերը կարծես աղերսում էին.

— Ընդունեցե՞ք ինձ, թողեք միանա՜մ ձեզ, չէ՞ որ ձեր հարազատն եմ...

Վրանի կիսախավարից Ժուլիեթը դուրս չէր գալիս։ Դեռևս հեռու էր մուտքը՝ այդ կլոր լուսանցույցը, որը նման էր թունելի ճեղքի։ Ծայրահեղ տկարության պատճառով պետք է պառկեր տանը՝ բարությամբ լի այդ լաբիրինթոսում։ Այստեղ այլևս կրակ չէր վառվում, ծուխ չէր բարձրանում։ Հիվանդը պարուրված էր լուռ զովությամբ։ Շարունակ շարժուն դեմքեր էր տեսնում։ Եթե ուշադրությունը լարեր, կկարողանար վերծանել այդ դեմքերը։ Սակայն նա այնքան խելացի էր, որ չէր ուզում ջանք գործադրել։ Բոլոր բառերն ու ձայները նրա ականջներին դիպչելիս մնում էին անարձագանք, կարծես փափուկ պաստառներով ծածկված հաստ պատերի էին դիպչում։ Եվ իրոք, Ժուլիեթը կանգնած էր հեռախոսային խցիկում, Շամ Էլիզեի ներքևի ծայրին և հեռախոսի մոտ էր կանչում հայկական ակումբում գտնվող Գաբրիելին։ Այդ պահին Տրոկադերոյում նոր կատակերգություն էր բեմադրվում, և Ժուլիեթն ուզում էր տեսնել այդ ներկայացումը։ Երբ վրանում պարփակված զով, անորոշ կյանքը թանձրանում էր, ֆրանսուհին իսկույն նյարդայնանում էր, դիմում փախուստի։ Միակ զգայարանը, հոտոտելիքը, որին նա բավականությամբ անձնատուր էր լինում, ոչ միայն անվթար էր մնացել, այլև չափից ավելի զարգացել էր, ծայրահեղ սրվել։ Հոտոտելիքով նա իր էության մեջ աշխարհներ էր վերստեղծում, աշխարհներ, որոնք նրան ոչինչ չէին պարտավորեցնում։ ...Երեքնուկի մանուշակագույն դաշտեր, վաղ գարուն, հյուսիսում տարածվող փոքրիկ այգի, որտեղ գույնզգույն ապակեգնդերի մեջ արտացոլվում է ճանապարհը։ Միայն թե ո՞չ մի վարդ, ի սեր աստծո... Մայր տաճարը տանող փայտե լաստակի վրա բացվում է այգու եզրի փոքրիկ դուռը։ Այդտեղից դուրս գալուն պես մարդ իսկույն զգում է արևակեզ փոշու, կեսօրվա ժխորի, ավտոմեքենաների բենզինի, խունկի և նկուղի հաղարապատիկ իրար խառնված հոտը։ Մի անգամ էլ են խոստովանում, ապա հաղորդություն ստանում։ Դա շատ հազվադեպ է պատահում, և հիմա հասել է իսկական ժամանակը, եթե որևէ բան դեռևս կարող է օգնել։ Սակայն իսկական անոմը մտաբերել չի կարողանում։ Իսկ մի՞թե արժե խոստովանել մի բան, որն իրականում տեղի չի ունեցել և, հավանաբար, միայն հիվանդության արդյունք է։ Բայց ահա նորից է փչում մրտենու թփերի ահավոր հոտը։ Միայն թե ո՞չ այդ բանը, ո՞վ մայր աստվածածին։ Մրտենիներին, իբրև զորեղ կախարդանք, Ժուլիեթը հակադրում է մի այլ տեսարան։ Մազերն է լվանում։ Նստած է Ֆոշարդիերի ոյու մադամ 12-ի նեղլիկ, տաք ու խոնավ խցում։ Վրան սպիտակ շոր է գցված։ Ընկղմվել է թիկնաթոռի մեջ։ Ո՞չ մի անուշահոտություն։ Միայն երիցուկի սուր, հասարակ հոտ։ (Գեղջկուհիները կիրակի օրերին գալիս են պատարագի)։ Ժուլիեթի գլուխը պտտվում է երիցուկի թանձր հոտից, որն ամպի նման կախվել է։ Այնուհետև մազերը բոլորովին հարթվում են, ցանցառանում, փունջ-փունջ կախվում դպրոցական նիհար աղջկա մազերի պես։ Բայց ահա անչափահաս ջիկահերի գլխին հպվում է էլեկտրական չորացնող սարքավորումը, և աղջիկը կանացիորեն հպարտանում է։ Գործի են անցնում զգայուն մատները։ Սպիտակ զովություն է սփռվում ճակատին, այտերին, ծնոտի վրա։ Շուտով դառնալու է երեսունչորս տարեկան։ Լինում են պահեր, երբ մաշկը հոգնում է, հատկապես բերանի և աչքերի շուրջը։ ...Պետք է որ երեկո լինի։ Արևի շողը երևի արհեստական լույս է։ Ա՜հ, երանի՜ մի անգամ էլ անձատուր լիներ սիրո վայելքին... Մարդ չպետք է ապրի միայն ուրիշների համար։ Պետք է խորասուզվել սեփական փայփայված մարմնի խորհուրդների մեջ, վհատության պահերին իրեն երջանիկ զգալ այդ մարմնի հմայքով, առանց խորհելու, որ գոյություն ունեն տղամարդիկ...

Հակառակ իր ցնորական մտապատկերներին, Ժուլիեթը երբեմն կարողանում էր տեսնել ու գնահատել նաև ներկան։ (Նույնիսկ իր ծայրահեղ նվաղման պահերին նա երբեք չէր կորցնում ամոթի ու մաքրության զգացողությունը)։ Այժմ պարզ տեսնում էր, թե Մայրիկ Անթառամը ինչպիսի՞ հոգատարությամբ է հետևում իր ապաքինմանը։ Լսում էր, թե ինչպես է բժշկի կինը Իսկուհու հետ խորհրդակցում իր ուտելիքի մասին։ Հեղհեղուկ մտքերի մեջ խորասուզված հիվանդը զարմանում էր, որ Մայրիկ Անթառամը պարենի սնդուկից դեռևս դուրս է բերում շոկոլադի սալիկներ, մի բուռ ձավար։ Չէ՞ որ այդ մթերքները վաղուց պետք է սպառված լինեին։ Ժուլիեթը փորձում է թվել, թե ովքեր էին դրանց հաշվին ապրում։ Ստեփանը։ Այո, հենց ի սեր Ստեփանի պետք է մթերքները ծայրահեղ խնայողությամբ գործածվեին։ Այնուհետև՝ Գաբրիելը, Ավագյանը, Իսկուհին, Թովմասյանները, Քրիստափորը, Միսակը, Օվսաննայի

երեխան և... Անունը ոչ մի կերպ չէր կարողանում մտաբերել։ Մտքերն իսկույն խառնվեցին, և գլխում սկսվեց ինչ-որ ժխոր։ Թվարկել անգամ չէր կարողանում։ Ժամանակի զգացողությունը ևս շատ թույլ էր. ամեն ինչ իրար էր խառնվել՝ վաղուց կատարվածը և քիչ առաջ տեղի ունեցածը։

Ժուլիեթն սթափվել էր, բայց շատ բան աղոտ էր հիշում, շատ բան էլ հիշողության միջից անհետ ջնջվել էր։ Դրան հակառակ, որոշ գաղտնիքներ քողազերծ էին լինում կրկնակի սրությամբ։

Ժուլիեթը պառկած էր մենակ։ Մայրիկ Անթառամը երկու ժամով դուրս էր գնացել։ Ուզում էր հիվանդանոց մտնել։ Հենց այդ պահին վրան մտավ Իսկուհին և նստեց իր սովորական տեղը։ Խեղված թևը, ինչպես միշտ, շորով կապված, կախված էր կրծքին։ Ժուլիեթն իր մաշված, բարակած կոպերի տակից գողումի նայեց աղջկան։ Գիտեր, որ նրա կարծիքով ինքը քնած է, ուստի և չէր կեղծում իր դեմքի իսկական արտահայտությունը, տրվում էր իր ցանկալի խոհերին։ Սակայն Ժուլիեթն ավելին գիտեր։ Գաբրիելն Իսկուհու մոտից հենց նոր էր գնացել։ Դրա համար էլ աղջիկը եկավ վրան։ Դա էլ գիտեր։ Աղջիկը վրանում կմնար այնքան, մինչև Գաբրիելը վերադառնար։ Ժուլիեթը գիտեր նաև, որ Իսկուհու դեմքը, հակառակ իր կեղծավոր արտահայտությանը, ներքուստ կշտամբում է Ֆրանսուհուն։ Կշտամբում էր, քանի որ հիվանդը բաց էր թողել մեռնելու բարեպատեհ առիթը։ Եվ այդ գեղեցիկ, բայց ատելի ու այլանդակ աղջիկն իրավացի էր։ Դեռևս որքա՜ն պետք է հանդուրժեր Ժուլիեթի գոյությունը, այդ անպատասխանատու, կեղծ թագավորությունը։ Որքա՜ն պետք է հիվանդը լուռ և քնած ձևանար Գաբրիելի ներկայությամբ։ Ժուլիեթն իր դեմքի վրա ծակող ճառագայթների պես զգում էր Իսկուհու նախատինքը, մեղադրանքը, թշնամությունը։ Այնտեղ ոչ թե ինչ-որ թշնամի էր նստած և հիվանդին էր նայում լուռ նզովքով, ցանկանալով նրա մահը, այլ հայտնի թշնամին, ամբողջ մեծ օտարությունը, անպարտելի հայությունը, որի զոհն էր ինքը՝ Ֆրանսուհին։ Ժուլիեթը միշտ էլ հավատացած էր, թե ինքը կարծր է, իսկ ասիականը՝ փափուկ։ Սակայն կարծրը լուծվեց փափկության մեջ։ Մինչ նա քնած էր ձևանում, միտքը շարունակ գործում էր, սոսկալի եզրակացությունների հանգում, ինչպե՞ս թե։ Չէ՞ որ Գաբրիելի նկատմամբ ինքն ավելի շատ իրավունքներ ուներ, քան Իսկուհին։ Բայց Իսկուհու իրավունքներն ավելի հին էին, և ոչ ոք չէր կարող դրանցից աղջկան զրկել, եթե նա ուզեր ետ խլել իրեն պատկանող բարիքը։ Ժուլիեթը սարսռաց, իր հանդեպ զգաց խոր կարեկցանք։ Մի՞թե ինքն այդ ասիացի աղջկա համար չի

արել ամեն ինչ, չի ձգտել նվաճել նրա սերը, ինքը, որ հազարապատիկ բարձր էր նրանից։ Մի՞թե Ժուլիեթը ոտքից գլուխ չի հագցրել այդ գռեհիկ աղջկան, չի տրամադրել իր սեփական արդուզարդը, չի սովորեցրել, թե մարդ ինչպես պետք է հետևի դեմքի ու ձեռքերի մաշկին։ (Ա՜հ, մերկ ժամանակ Իսկուհին պետք է որ խեղճ ու կրակ մի բան լինի, չնայած փոքրիկ, հրապուրիչ ստինքներ ունի։ Եվ դեռ ձախ ձեռքն էլ խեղված է։ Ինչպե՞ս կարող է դա դուր գալ Գաբրիելի պես բծախնդիր տղամարդուն)։ Ժուլիեթը զարմանում էր, որ այդ վաղեմի հակառակորդը իր անզգայության օրերին կարողացել է մի բաժակ թեյ կամ գդալով կերակուր մոտեցնել իր բերանին, հոգ է տարել, հակառակ խեղանդամությանը։ Այդ աղջիկը նույն գդալով կարող էր թույն մատուցել։ Եվ նա այդ բանը պետք է աներ. դա նրա պարտականությունն էր։

Փակ կոպերի արանքից Ժուլիեթը նայում էր իր թշնամուն։ Իսկուհին վեր կացավ, թերմոսը սովորականի պես սեղմեց ձախ թևի տակ, աջով պտտեցրեց, հանեց վրայի գավաթը։ Հետո թերմոսը դրեց հայելու սեղանին, գավաթը լիքը լցրեց, զգուշորեն մոտեցրեց հիվանդին։ Ահա՛ թե ինչ։ Կասկածն անտեղի չէր։ Մարդասպանուհին թույն էր ուզում տալ։ Ժուլիեթը սեղմեց աչքերն ու շրթունքները։ Նրան թվաց, թե ոճրագործուհին իր գործն անելիս նույնիսկ ապակեհունչ ձայնով կամացուկ երգում է, մրմնջում։ Այդ ձայնը հնչում է այն մժղուկների բզզոցի նման, որոնք նստում են Ժուլիեթի դեմքին։ Հիվանդը լարեց լսողությունը։

Իսկուհին խոնարհվեց նրա վրա.

— Ժուլիե՛թ, հինգ ժամ է, ինչ ոչ մի բան չես խմել։ Թեյը դեռ տաք է։

Հիվանդը բացեց իր գարանակալ աչքերը։ Իսկուհին ոչինչ չնկատեց։ Գավաթը վայր դնելով, Ֆրանսուհու գլխի տակ մի բարձ էլ ավելացրեց։ Այնուհետև թեյը մոտեցրեց հիվանդի բերանին։ Ժուլիեթն սպասեց (չէր ուզում, որ ոխերիմ թշնամին գլխի ընկնի), ցույց տվեց, թե իրոք ուզում է խմել։ Հանկարծ անվրեպ կատաղությամբ ձեռքով հարվածեց գավաթին, վայր գցեց։ Թեյը թափվեց վերմակին։ Ժուլիեթը տեղից բարձրացավ, հևասպառ ասաց.

— Գնա՛, գնա՛, հեռացի՛ր...

Շատ ավելի ծանր ապրումների մեջ ընկավ հիվանդը, երբ իրիկնամուտին անկողնուն մոտեցավ Գաբրիելը։ Ֆրանսուհին ուզեց իսկույն փախուստի դիմել, վերադառնալ պատրանքների լաբիրինթոսը։ Բայց հանկարծ խավար գետնուղիները չքացան և պարզվեց, որ պատրանք-

ների աշխարհը բաղկացած է միայն մի սենյակից, ծիծաղելիորե՞ն նեղ սենյակից։

Գաբրիելը, ինչպես միշտ, բռնեց կնոջ ձեռքը, ստուգեց զարկերակը։ Հիվանդի սրտի տրոփյունը կանոնավոր էր։ Ժուլիեթը մտածեց. «Գաբրիելը պիտի խոսի՞։ Այսօր ամեն բան կիմանա՞մ։ Այլևս չպետք է թաքնվեմ»։ Նա փորձեց շնչել դանդաղ և համաչափ։ Միաժամանակ զգաց, որ այդ ժամին քնած ձևանալը անբնական է, շինծու։ Գաբրիելը նույնպես ոչինչ չասաց։ Քիչ անց վառեց հայելու սեղանի վրա դրված մոմը (նավթ այլևս չէին վառում) և դուրս գնաց։ Ժուլիեթը շունչ քաշեց։ Բայց երկու րոպե հետո Բագրատյանը վերադարձավ, կնոջ անկողնու վրա դրեց Ստեփանի մեծադիր լուսանկարը։ Դա անցյալ տարվա նկարն էր։ Հայրը միշտ իր գրասեղանին էր դնում՝ թե՛ Փարիզում, թե՛ Յողոնօլուքում։

«Դա բնավ էլ Ստեփանի նկարը չէ,— մտածեց Ժուլիեթը,— դա ինչոր ուրիշ բան է, երևի մի նամակ, որ ես պետք է կարդամ առողջանալուց հետո։ Այլևս չպետք է կյանքից խուսափեմ։ Վրաս վատ է ազդում։ Չէ՞ որ ես իրավունք ունեմ հեռանալու»։

Ժուլիեթը սողաց անկողնու խորքը և սառցեղեն ձեռքով վերմակը վրան քաշեց մինչև բերանը։ Որդու լուսանկարը վայր ընկավ։ Ստեփանը պարզորոշ նայում էր մոր դեմքին (գլուխը մահճակալի եզրին դրած՝ Ժուլիեթն աչքերը հառել էր գետնին)։ Հայելու մեջ արտացոլված մոմի լույսը կրկնապատկվում էր, լուսավորում Ստեփանի դեմքը։

Ահա և հրաշք կատարվեց, որի առաջն առնել Ժուլիեթը չէր կարող։ Բայց Ստեփանի այցելության պատճառը միայն լուսանկարը չէր։ Պատանու էությունը հայտնվեց անկողնու սնարի ետևում։ Թվաց, թե հենց նոր է հևիհև ներս ընկել, հենց նոր է բաժանվել տղաներից՝ Հայկի ավազակախմբից։ Երևի նոր է վերջացրել կապավորի իր առաջադրանքը, կամ որևէ խաղ, շտապ եկել է, որ դժկամությամբ խմի իր բաժին կաթը.

— Մայրի՛կ, դու ի՞նձ էիր որոնում։

— Այսօր դեռ ոչ,— աղերսեց Ժուլիեթը,— այսօր դեռ մի՛ արի։ Ես այնքա՞ն թույլ եմ։ Եկ վաղը։ Այսօր դեռ հիվանդ եմ։ Ավելի լավ կանես, եթե գնաս հայրիկի մոտ...

— Ես միշտ հայրիկի մոտ եմ...

— Գիտեմ, որ ինձ չես սիրում, Ստեփան...

— Իսկ դո՞ւ, մայրիկ...

— Եթե դու լավ տղա լինես, քեզ կսիրեմ։ Դու պետք է նորից հագնես քո երկնագույն կոստյումը։ Թե չէ ոտքից գլուխ նման ես հայի։

Այդ խոսքերից Ստեփանը խիստ դժգոհեց։ Կարծես ոչ մի ցանկություն չուներ կրելու նախկին հագուստը։ Տղայի լռությունը ցույց էր տալիս, որ դեմ է մոր ասածին։ Սակայն Ժուլիեթը ավելի ու ավելի հուզված աղերսեց.

— Միայն թե ո՛չ այսօր, Ստեփան։ Վաղը շուտ արի։ Այս գիշեր ինձ հանգիստ թող...

— Վաղը շո՞ւտ գամ...

Դա խոստում չէր, այլ դատարկ հարց։ Տղան անհամբեր, մտացրիվ, դուրս թռչելու պատրաստ՝ նայում էր ընկերների կողմը։ Երբ Ժուլիեթն իր խնդրանքը կատարված համարեց, անկողնուց վեր կացավ։ Ձայնը դողդողաց, մարեց կոկորդում.

— Ստեփա՛ն... Մնա այստե՛ղ... Դուրս մի՛ գնա... Մնա այստե՛ղ... Ստեփա՛ն...

Մայրիկ Անթառամը վերադառնում էր Երեք վրանի հրապարակը՝ հիվանդին գիշերը խնամելու։ Շուշիկը միացավ նրան։ Հայկի կենդանության լուրն առնելուց հետո թևավորվել էր, ուզում էր օգտակար լինել հասարակությանը։ Ո՞վ կարող էր ավելի լավ ուղի ցույց տալ, քան բոլորին օգնող Մայրիկ Անթառամը։

Կանայք Ժուլիեթին գտան վրանից մոտ երկու հարյուր քայլ հեռավորության վրա ընկած։ Ֆրանսուհին շապկանց կուչ էր եկել թփերի մոտ, լորացած սրունքները սեղմել կզակին։ Ճակատին մահվան սառը քրտինքի կաթիլներ կային, սակայն բուռ արտահայտություն ստացած, լված աչքերը հառել էր դեպի հեռուները։

Մուսա լեռան հյուսիսային բարձունքներից մինչև լեռնաթամբը արձագանք էին տալիս կացնի հարվածները։ Թուրքերը կտրատում էին լեռան կաղնիները։ Արդյոք հրանոթների համար նեցուկնե՞ր էին պատրաստում, թե՞ նահանջի հարմար ապաստարան, եթե նոր հարձակումից հետո հարկ լիներ ետ քաշվելու։ Առանց այդ ապաստարանի ստիպված կլինեին գիշերը բարձունքներից իջնել, թե չէ հայերը կարող էին հանկարծ վրա տալ, ինչպես նախորդ մարտերի ժամանակ։

Հետախույզներ ուղարկվեցին Հյուսիսային լեռնաթամբի հակառակ կողմը։ Դրանք պատանեկան զորաբանակի ամենաճարպիկ տղաներն էին։ Զորսն էլ չվերադարձան։ Լայնատարած հարթավայրի բոլոր ելքերն ու մուտքերը փակված էին, թեև մի քանի օր առաջ մինչև Զանգերան և Ռես էլ խրնգը կարելի էր ազատ երթևեկել։ Ստեղծվել էր մահվան օղակ։ Հայերը խոր շփոթության մատնվեցին։ Ուղարկեցին Սաթոյին՝ հմուտ լրր-

տեսուհուն։ Այդ աղջկան կարելի էր և չափսոսալ։ Վերադարձավ, բայց մարդիկ կարգին բան իմանալ չկարողացան։

— Հազա՜ր-հազա՜ր զինվոր...

Սաթոյին վստահել չէր կարելի։ Նրա թվային ըմբռնումները սահմանափակվում էին ամենաբարձր և ամենացածր աստիճաններով։ Այդ «հազար-հազար զինվորների» գործունեությունը աղջիկը բնորոշեց շատ անորոշ ձևով։

— Ծառ են կտրում...

Կամ՝

— Ճաշ են եփում։

Տրված առաջադրանքը Սաթոյին երևի առանձնապես չէր հետաքրքրում։ Ընդհակառակը, իր անձնական շահերը չէր մոռացել, կողոպուտով էր զբաղվել. մի ահագին բոքոն էր թոցրել։ Լավ եփած, խոշոր հացը իր թռչնային փորին ամուր սեղմած՝ կանգնել էր։ Հագին դեռևս նախշուն շրջազգեստն էր, որն արդեն ծվեն-ծվեն էր եղել և հազիվ էր ծածկում նրա վանող մերկությունը։ Հացը Սաթոն առնետային ատամներով չորս կողմից կծոտել էր, ոչ թե երկու կամ երեք, այլ տասը տեղից, այն էլ անմարդկային ձևով։ Նուրհան Էլլեոնին և մյուս հարցաքննողներին կանգնած թողնելով, նա հանկարծ անհետ կորավ։ Ոչ ոք նրա գանձին չպետք է ձեռք տար, ոչ մի պատառ չպետք է ուտեր՝ ո՛չ պատանեկան զորաբանակի տղաներից մեկնումեկը, ո՛չ նույնիսկ Իսկուհին։ Սրան Սաթոն վերաբերվում էր ճիշտ այնպես, ինչպես Ոսկանյանը՝ Ժուլիեթին։ Ի՜նչ բավականությամբ պատառ-պատառ կաներ երբեմնի սիրեցյալ քյուչյուքհանումին, ի՜նչ բավականությամբ կծվատեր իր թունավոր ու կատաղի ատամներով։ Նա կարողացավ ուտել հացի միայն քառորդը։ Նունիկին ո՛չ կարող էր խաբել, ո՛չ էլ հացը թաքցնել։ Այդ պառավն ամենագիտ էր։ Դրանից բացի միշտ պահանջում էր իր բաժինը, եթե նույնիսկ ավարը տեսած չէր լինում։ Հենց դա էր ամենասոսկալին։ Սաթոն ստիպված էր ճանապարհ ընկնել դեպի իր բարեկամների հեռավոր ապաստարանը։ Ամենագետը կարծես արդեն սպասում էր։ Կանգնած էր քամու դեմ, որից քիչ էր մնում պոկվեին նրա քրքրված շորերը։ Նա ձեռքերը երկարեց դեպի Սաթոյի ավարը։

Լեռը բարձրանալու երեսունվեցերորդ օրն էր, սեպտեմբեր ամսի 4-ը։ Առավոտյան բոլոր ընտանիքներին, կարգադրության համաձայն, բաշխված էր նրանց հասանելիք ավանակի միսը։ Ոչ ոքի մտքով չէր անցնում, թե դա ինքը վերջին անգամ է ստանում։ Միաժամանակ բոլոր հետախույզները հաղորդում էին, թե գյուղերն ու հովտի ամբողջ ստորոտն արտակարգ եռուզեռի մեջ են։ Այնտեղ ոչ միայն նոր զինվորականներ և նոր զափթիեներ էին վխտում, այլև մահմեդական գյուղերից եկած հետաքրքրասեր խաժամուժը։ Այդ հետաքրքրության պատճառը շուտով հայտնի դարձավ։ Հենց որ Սամվել Ավագյանը Գաբրիելի հեռադիտակը վերցնելով՝ բարձրացավ խոշոր լեռնագագաթներից մեկը, որ պարզի իրադրությունը, նրան ընդառաջ վազեցին հուզված սուրհանդակները։ Ինչ-որ արտառոց բան էր կատարվել։ Գեղջուկների մեծամասնությունը առաջին անգամ էր նման բան տեսնում։ Դեպքը տեղի էր ունենում Անթաքիեից Սուեդիա տանող մեծ ճանապարհի վրա, Եդիջե գյուղի մոտ, որտեղ սպասում էր մի փոքրաթիվ հեծելախումբ։ Ավագյանը հեռադիտակով տեսավ զինվորական մոխրագույն մի ավտոմոբիլ, որը մահվան վտանգն արհամարհելով, ճեղքում անցնում էր Այն էլ Երաբի լեռանցքը։ Մեքենայից դուրս եկան երեք սպա և հեծան իրենց սպասող ձիերը։ Փոքրաթիվ հեծյալների խումբը իսկույն թեքվեց դեպի հովիտը։ Առջևից սուրում էին սպաները, այնուհետև՝ շարքային հեծյալները։ Մի քանի րոպեում հասան Վաքըֆ։ Մեջտեղի սպային մյուս երկու սպաները հետևում էին որոշ հեռավորության վրա։ Ետևից արշավող երկուսը աստրախանյան հասարակ փափախներով էին, իսկ առջևի սպայի գլխին խակի գլխարկ կար։ Ավագյանը պարզ տեսավ հեծելազորային անդրավարտիքի գեներալական երիզները։ Խումբն անդադրում սլանում էր գյուղերի միջով։ Մի ժամ չանցած հասան Յողոնօլուք։ Եկեղեցու հրապարակում գեներալին և ուղեկցող սպաներին արդեն սպասում էին մի քանի պարոններ։ Անկասկած, դա Անթաքիեի կայմակամն էր, որը մյուս դերի և մյուս պաշտոնյաների հետ գեներալ-փաշային ու նրա շքախմբի անդամներին տարավ Բագրատյանի ամառանոցը։

Այս մեծ իրադարձությունն անմիջապես հաղորդվեց գլխավոր հրամանատարին։ Սամվել Ավագյանը իր պատասխանատվությամբ մեծ տագնապ հայտարարեց։ Հետագայում Գաբրիելը բարձր գնահատեց այդ նախաձեռնությունը։ Նույնիսկ խստացրեց տագնապը, կարգադրեց, այդ ժամից սկսած, գաղթականներում չվերացնել տագնապային դրությունը, եթե նույնիսկ որևէ բան տեղի չունենա։ Ավագյանը համոզմունք հայտնեց, թե թուրքերը երկար ժամանակ ոչինչ չեն ձեռնարկի, և որևէ բան տեղի չի ունենա ո՛չ այսօր, ո՛չ վաղը, ո՛չ էլ առաջիկա օրերին։ Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ ուսանողը չի սխալվում։ Ամառանոցում երկու ժամ մնալուց հետո օտար սպաները ձի հեծան և առավել թափով ետ սլացան Եդիջեի ուղղությամբ։ Ճակատամարտի վայրում

հազիվ կես օր մնալուց հետո փոքրիկ մեքենան կատաղի հոնդյունով նորից սլացավ դեպի Անթաքիե։ Պարոններին կայմակամն ուղեկցել մինչև իր «գահանիստը»։

Նույն օրը Գաբրիել Բագրատյանը սգից դուրս եկավ և այրական վրդ. ռականությամբ անցավ իր պարտականություններին։ Նրա էության մեջ նորից բորբոքվեց ռազմական ոգին, որի արթնացման խթանը հայկական տարագրությունն էր։ Ի դեպ, վերջին գիշերն արդեն անց էր կացրել հյուսիսային խրամատում։ Սակայն, չուզենալով վրանների կանանց անպաշտպան թողնել, Քրիստափորին և Միսակին ազատեց գիշերային հերթապահությունից, ուղարկեց նրանց հանգիստը հսկելու։ Նա երկյուղ էր կրում շրջապատի անբարյացակամ տրամադրությունից։ Մայրիկ Անթառամը այրի Շուշիկին պատվիրել էր հիվանդին խնամել, այնպես որ պահապանների տրամադրության տակ էր նաև տղամարդկային ուժով օժտված այդ կնոջ բազուկների զորությունը։

Մեկ-երկու ժամում Գաբրիելին հաջողվեց լիովին վերանալ իր ներքին կյանքից։ Ցավը մնում էր ցավ, բայց դրա գիտակցումը ինչ-որ չափով բթացել էր, ինչպես մարմնի հիվանդ մասն է անզգայանում սրբկումից։ Նորից կատաղի եռանդով գործի անցավ։ Կարծես կամքի ուժով նա հանկարծ ավելի կորովի էր դարձել, ավելի անզիջում, ավելի անընկճելի, քան առաջ։ Միայն այժմ նրա համար պարզ դարձավ, թե ի՞նչ անգնահատելի օգնական է իր համհարզը, ավելի ճիշտ, շտաբի պետը՝ Ավագյանը։ Այդ անխոնջ երիտասարդը, այդ հազվագյուտ անձնուրաց տղան, որը երբեք հրամանատարի կեցվածք չէր ընդունում, թեև իր գիտելիքներով և մտավոր կարողությամբ շատ ուրիշ հրամանատարներից տասը գլխով բարձր էր, ուղղակի երկաթյա տոկունություն ուներ։ Բագրատյանն ավելի շատ Ավագյանին էր երախտապարտ, քան Նուրհան Էլլեոնին, եթե մինչև այդ օրը զինվորական կարգն ու կանոնը լրջորեն չէին տուժել։ Շատերն էին ավել-պակաս խոսում ակնոցավոր անճարակ «կարդացվորի» մասին, քանի որ ամենուրեք, որտեղ զենք է գործադրվում, միշտ էլ բանականությանը վերաբերվում են թերագնահատող հեգնանքով։ Այնուհանդերձ, երբ Ավագյանը երևում էր խրամատներում, չորս կողմ ծավալվում էր գրեթե հաճելի խանդավառություն, բարձրանում էր զինվորների այն խիստ կարևոր տրամադրությունը, որ կոչվում է վստահություն հրամանատարության հանդեպ։ Պատճառն այն էր, որ համհարզը գլխավոր հրամանատարի բացակայությամբ լույսի պես անդրադարձնում էր Բագրատյանի առավելությունները։ Ստեփանի մահից հետո ուսանողը նույնպես քուն ու դադար չուներ։ Հոգին մղկտում էր

տառապանքից ու խղճի խայթից։ Չորս տարի ապրել էր Բագրատյանի տանը, և Ստեփանին սիրում էր, ինչպես իր կրտսեր եղբորը։ Վշտից տամներն էր կրճտացնում, արյունը գլխովն էր տալիս։ Արդյոք հնարավոր չէ՞ր կանխել դժբախտությունը։ Ինչո՞ւ ինքն այն սարսափելի օրը չկռահեց, թե ինչ է կատարվում պատանու հոգում։ Դա այնպիսի անգթություն էր, որ երբեք չէր կարելի ներել։ Երբե՞ք։ Ա՜խ, միակ սփոփանքն այն էր, որ այդ «երբեքը» մի քանի օրվա խնդիր էր։ Դրա շնորհիվ ամե՜ն ամե՜ն վիշտ թեթևանում էր։ Սամվել Ավագյանը արտաքուստ ոչինչ ցույց չէր տալիս և Գաբրիելի հետ խոսելիս չէր հիշատակում Ստեփանի անունը։ Այդ անունն ավելի հազվադեպ էին արտասանում հոր շրթունքները։ Բայց, դուցե, հենց այդ պատճառով Ավագյանը ծայրահեղ լարում էր իր վերջին ուժերը Գաբրիելին ծառայելու համար։ Գործի արանքում ուսանողը կազմել էր զինվորների նոր ցուցակը։ Գաբրիելն այդտեղից իմացավ, որ մարտիկների թիվն իջել է, հասել յոթ հարյուրի։ Մահվան առաջացրած վիթխարի ճեղքը դեռևս չէր նշանակում, թե պաշտպանների մարտունակությունը էապես նվազել է։ Ազատ մնացած հրացաններով կարելի էր զինել լավագույն պահեստայիններին։ Դրանից բացի, պաշտպանության ճակատը անտառային հրդեհի շնորհիվ նեղացել էր և այժմ բաղկացած է մի քանի հատվածից։ Կաղնուտը դեռևս իրենից ներկայացնում էր բոցավառ մի հնոց։ Հրդեհի տաքությունը Քաղաքաձորում այժմ էլ առաջվա պես զգացվում էր, մարդկանց վրա ազդում հատկապես երեկոները։ Բայց թե պաշտպանության ամենախոցելի տեղը մեկընդմիշտ փրկված էր թշնամու գրոհներից։ Հրդեհը մոլեգնում էր ոչ միայն Դամլաջրքի այդ խոշորագույն հատվածում, այլև շրջակա լանջերին, դարավանդների, մանր բլուրների վրա տապալված ծառաբների տակ։ Ինչ-որ ողորմած ձեռք այստեղ ամեն բան կատարում էր հօգուտ հայերի։ Բագրատյանը ավելորդ դարձած հատվածների պահակախմբերը վերջնականապես ցրեց, ստեղծեց զորեղ պահակաշղթա, որով կարելի էր լեռան եզրը ապահովել թուրքական լրտեսներից և զանազան անակնկալներից։

Բոլոր նշաններից երևում էր, որ թուրքերը մտադիր են տասնապատիկ գերազանց ուժով վճռական հարված հասցնել հյուսիսից և հրետանու օժանդակությամբ բնաջնջել ուժասպառ հայերին։ Շարունակ կացտանու օժանդակությամբ բնաջնջել ուժասպառ հայերին։ Շարունակ կացտանու հարվածներ էին լսվում։ Չնայած որոշակի զգացվում էր, որ թուրքերը դեռևս շարունակում են նախապատրաստական աշխատանքները, Գաբրիելը չկորցրեց զգուշությունը, հետախույզներ ուղարկեց ավելի հարավ ընկած կողմերը։ Այս խիզախ պատանիները երեկոյան հանդգնորեն հասել էին մինչև Սուեդիա։ Զեկուցեցին, որ Որոնտեսի հարթավայրում

շատ սակավաթիվ զինվորականներ կան, իսկ զափթիեներ գրեթե չկան։ Բոլոր զորքերը կենտրոնացված են հովտում։ Ժայռերեղեն ամրոցը և նոր քարավեժքը դեռևս սարսափախառն հարգանք էին ներշնչում հայերի հանդեպ, թեև գեներալը նրանց հաղթանակի հավատ էր ներշնչում։ Գաբրիելը վճռեց հետևյալ օրն իսկ աչքի անցկացնել Հարավաբերդը։

Երեկոյան նա նստած էր խրամատում, որտեղ գիշերում էր։ Անթարթ հայացքով նայում էր լեռնաթամբի լանջն ի վեր, բարձունքը եզերող ափ ծառախմբերին, որոնց արանքից անհայտացել էր Ստեփանը, և ինքը չէր կանխել։

Հարևաններն իրենց դարձյալ հեռու էին պահում։ Երբ նա եկավ, զինվորներն ընդհատեցին իրենց խոսակցությունը, ոտքի ելան, ողջունեցին զորավարին։ Ուրիշ ոչինչ։ Ստեփանի վերաբերյալ ոչ մեկը մխիթարական խոսք չասաց։ Հավանաբար, սիրտ չարին։ Բոլորը Գաբրիելին նայում էին մտախոհ, տխուր և զննող հայացքով։ Միայն Զաուշ Նուրհանն էր նրան անբաժան հետևում, կարծես շատ բան ուներ ասելու, բայց հարմար առիթ էր փնտրում։ Շուտով քնեց այդ վաստակաբեկ ռազմիկը։ Այդ տարեց մարդու անսպառ եռանդը չուներ և ոչ մի երիտասարդ։

Գաբրիել Բագրատյանն արդեն քանչորս ժամ չէր տեսել ո՛չ Իսկուհուն, ո՛չ Ժուլիեթին։ Այդպես ավելի լավ էր։ Կաշկանդող կապերը խզված էին։ Նա այլևս իրավունք չուներ անձնատուր լինելու թուլությանը։ Գեթ առաջ։ Այո, չնայած անսահման վշտին, նա իրեն սառնասիրտ և անկաշկանդ էր պահում հանուն վերջին ճակատամարտի։

Լեռնային բարձունքների վրա սեպտեմբերյան երեկոներն արդեն զովաշունչ էին։ Քմահաճ քամին դեռևս չէր դադարել, բայց երբեմն-երբեմն հանդարտվում էր։ Ո՞ւր չքացան այն լուսնկա հրաշագեղ գիշերները, երբ Գաբրիելի գիտակցության մեջ դեռևս մխրճված չէր Ստեփանի քառասնապատիկ զարհուրելի սպանությունը։ Գաբրիելը դեռևս նայում էր հանդիպակաց սևասքող պատին։ Երբեմն ծառերի կատարների մեջ վայում էր քամին։ Ի՞նչ երկչոտ էին թշնամիները։ Չէ՞ որ այնքան պարզ էր գիշերը։ Կարող էին լեռնալանջին խրամատ փորել՝ առանց դիմադրության հանդիպելու։ Բայց, ավա՜ղ, նրանք կարիք չունեին նման միջոցների դիմելու. հրանոթնե՞ր ունեին։ Ամեն ինչի կարող էին վերջ տալ մի ակնթարթում։ Սակայն գուցե և այդ բանը չպատահեր։ Երևի, Գաբրիելը չպետք է տեղի տար, պետք է նոր ծրագրեր մշակեր։ Մի՞թե նա միշտ էլ փրկարար մտահղացումներ չէր ունեցել։ Չէ՞ որ դրանց շնորհիվ էր, որ մարդիկ մինչև այսօր մնում էին անընկճելի։ Նախ ի հայտ եկավ պաշտպանության ծրագիրը, ամբողջ սիստեմը, ապա հարվածային զորախումբը, թեթև գվարդիան, անտառային փրկարար հրդեհը... Տեղի՞ տալ։ Նոր մտահղացո՞ւմ էր պետք։ Բայց ի՞նչ, ինչպե՞ս։ Գլուխը թափուր էր։

Հետևյալ օրը Բագրատյանը գնաց Հարավաբերդ, ինչպես վճռել էր։ Բայց մինչ այդ կանգ առավ հառաբիցների մոտ։ Հրանոթների փողերը տարբեր կողմեր էին ուղղված, մեկը՝ դեպի հյուսիսային բարձունքները, մյուսը՝ Սուեդիա։ Գաբրիելը դեռևս Ստեփանի մահից առաջ ուսումնասիրել էր իր քարտեզի բոլոր մանրամասնությունները։ Բոլոր դեպքերում կարելի էր խափանել թշնամու առաջխաղացումը և կասեցնել։ Արկերի արկղերում դեռևս շորս շրապնել կար և տասնհինգ ռումբ։ Հրանոթներն ութ պահապան ունեին և սպասարկող անձնակազմ։ Սրանց Նուրհան էլեոնը սովորեցրել էր ամենապարզ գործողությունները՝ հրանոթներ տեղաշարժելը դրանք խթաններով ամրացնելը, արկեր մոտեցնելը և մյուս կարևոր բաները։

Ստուգատեսի ժամանակ Գաբրիելին ուղեկցում էին Զաուշ Նուրհանը, Ավագյանը և առանձին հատվածների հրամանատարները։ Հարավաբերդում ստացած առաջին տպավորությունը բարենպաստ էր և ոչ մի կասկածի առիթ չէր տալիս։ Ձերբակալությունից ազատվելուց հետո Սարգիս Կիլիկյանն ավելի էր կատարելագործել իր պատրաստած բարանը։ Հարվածող, զորավոր վահաններն ավելի էր խոշորացրել. երկարացրել էր դեպի եզրերը ձգվող ճառագայթաձև երկաթաշերտերը։ Վահաններն արդեն կարող էին խարխուլ պատերին բախվել առավել մեծ տարածության վրա։ Կրկնապատկել էր նաև տախտակների թիվը, ամրացրել երկաթյա կեռերով ու մեխերով։ Կարելի էր վստահ ասել, որ նման բարանով հնարավոր է ցենտներանոց քարաբեկորներ նետել մինչև Սելևկիայի ավերակները։ Կիլիկյանին կարծես ոչինչ չէր հետաքրքրում, բացի այդ զարհուրելի խաղալիքից։ Հիրավի, ինչ-որ մանկական բան կար այն մոլուցքի մեջ, որով դասալիքն անդադրում աշխատում էր իր պատնեշակործան սարքավորման վրա։ Այդ եռանդը բացահայտորեն հակասում էր ճակատագրի հարվածներից ամայացած նրա էությանը։ Ահավոր դիպվածների զոհ դարձած Կիլիկյանի մեջ Գաբրիել Բագրատյանն առաջին իսկ հայացքից ինչ-որ թաքնված ուժի աղբյուր էր տեսնում։ Այդ մարդուն նա վերաբերվում էր շնվազող հետաքրքրությամբ։ Մեծ քաղաքի բարեկիրթ որդին և ազնիվ քաղաքացին վախենում էր դասալիքի մեջ պարփակված արմատական ոչնչությունից։ Բագրատյանի և Կիլիկյանի միջև միայն մի անգամ էր պայքար տեղի ունեցել, և Կիլիկյանը ամոթալի պարտություն

էր կրել։ Սակայն հաղթողը այն ժամանակ չամբարտավանացավ և մինչև այսօր էլ այդ մարդուն հանդիպելիս չէր կարողանում հաղթահարել նրա հանդեպ ունեցած անվստահությունը։ Դա Բագրատյանի բացահայտ թուլությունն էր։ Դժվար էր բացատրել պատճառը։ Կիլիկյանի նկատմամբ տարօրինակ հարգանք էր զգում, թեև դասալիքը դրան չէր արժանացել ո՛չ իր բարեմասնություններով, ո՛չ էլ կատարած գործերով։ Ամեն անգամ նրան հանդիպելիս Գաբրիելը բարեկամական մի քանի խոսքով, մտերմական հարց ու փորձով աշխատում էր Կիլիկյանի լեզուն բացել, բայց ամեն անգամ նրա ջանքերը իզուր էին անցնում, ցավալի հիասթափություն պատճառում։ Մուսա լեռան բարձունքներում այդ դասալիքը միակ մարդն էր, որի հետ խոսելու ճիշտ եղանակը Գաբրիելը չէր կարողանում գտնել։ Կամ շատ ամբարտավան կեցվածք էր ընդունում կամ չափից ավելի մտերմաբար էր հետը խոսում։ Իսկ Ռուսը միշտ էլ գտնում էր Բագրատյանին հուսախաբ անելու ձևը։ Օրինակ, հենց այս րոպեին նա մեջքի վրա հանգիստ մնաց պառկած, երբ գլխավոր հրամանատարը նոր գովասանքներ էր շռայլում նրա պատրաստած բաբանի հասցեին։ Դա ոչ միայն անպատկառություն էր, այլև զինվորական կարգ ու կանոնի կոպիտ խախտում, որի համար հանցավորին հարկավոր էր խստորեն պատժել։ Այդ բանն անելու փոխարեն Գաբրիելը ետ դարձավ, հայացքով որոնեց ուսուցիչ Ոսկանյանին։ Բայց սա Բագրատյանի գալուն պես հիստերիկ վախկոտությամբ ծլկել էր։ Նրա կարծիքով, բոլորին հայտնի էր, թե ինքը Բագրատյանի տան հասցեին որքա՜ն թույն է աջ ու ձախ շաղ տվել։ Մինչդեռ դա հայտնի չէր ո՛չ Տեր-Հայկազունին, ո՛չ բժիշկ Ալթունուն, ո՛չ էլ Շատախյանին։ Ոսկանյանը ավագների խորհրդի նիստից վտարվելուց ի վեր կարծես կորցրել էր հոգեկան հավասարակշռությունը, դարձել ավելի սնափառ։ Հավանաբար, փորձում էր հիմնել սեփական «կուսակցություն»։ Օրեր շարունակ, միանգամայն պատահական մարդկանց մոտ, բերանից ամեն լուտանք թափում էր, ցնդաբանում։ Այդ մարդիկ Հարավաբերդի հետ ոչ մի առնչություն չունեին, սակայն այցելում էին ուսուցչին։ Նրա ուղեղում «գաղափարը», ինչպես ինքն էր դա անվանում, հետզհետե ավելի սուր կերպարանք էր ընդունում։ Այդ գաղափարը նրա սեփականությունը չէր, այլ բխում էր դեղագործ Գրիգորի լուսաճաճանչ մեկնաբանություններից։ Շատ տարիներ առաջ փիլիսոփայական շրջագայություններից մեկի ժամանակ ծերունին կարծիք հայտնեց ազատ մտավոր, «ապրելու պարտականության» և «մեռնելու իրավունքի» վերաբերյալ, վկայակոչելով ինչ-որ անծանոթ, սակայն մեծահամբավ հեղինակների։

Հարավաբերդի դիրքերում Բագրատյանն ու նրա ուղեկիցները ոչ մի կոպիտ զանցառություն չգտան։ Զինվորներն իրենց պարտականությունը կատարում էին կանոնադրության համաձայն, հերթապահներն իրենց տեղերում էին, դիրքերի սահմաններից դուրս ուղարկված դետքերը մեծ քարափի եզրից աչալուրջ հետևում էին իրենց շրջակայքին։ Հրացանների վիճակն ավելի լավ լինել չէր կարող։ Բայց, չնայած արտաքին կարգապահությանը, մարդկանց վերաբերմունքի մեջ անորոշ, տարտամ ու կասկածելի բան կար թաքնված, որը զայրացնում էր Զաուշ Նուրհանին։ Անձնակազմը բաղկացած էր տասնմեկ ջոկից։ Ուիթսունհինգ հոգի դասալիքներ էին։ Դժվար էր բոլորին համարել կասկածելի։ Ընդհակառակը, դրանք մեծ մասամբ անվնաս փախստականներ էին, որոնք խույս էին տվել զինվորական անադորույն խստություններից, գանահարությունից կամ ճանապարհների վրա աշխատելու տաժանքից։ Ինչ էլ լիներ փախստյան պատճառը՝ թշվառություն, բարոյական անկում թե վատ օրինակ, ամեն ինչի վրա իր դրոշմն էր դրել Սարգիս Կիլիկյանի կամակոր անտարբերությունը։ Կարծես հենց դա էր իսկական տղամարդուն վայել կենսաձևը։ Պարապ-սարապ թրև էին գալիս, իրար հեգնում, հանդգնորեն պառկում մեջքներին, ծմկկտում, շինծու մռլտում, սուլում։ Դա առաջիկա ճակատամարտի համար ոչ մի լավ բան չէր խոստանում։ Կարծես ո՛չ ռազմիկներ էին, ո՛չ էլ իսկական ոճրագործներ, այլ բարոյալքված, չորգլուխ շրջմոլիկների մի հրոսակ, որը պատահմամբ հավաքվել է անապատում։ Գաբրիել Բագրատյանը այդ երևույթին առանձին նշանակություն չէր տալիս։ Դասալիքներից շատերը ճակատամարտում իրենց լավ էին դրսևորել։ Մնացածը երկրորդական խնդիր էր։ Իհարկե, բոլոր դեպքերում նրանց հետ պետք է վարվեին ավելի զգուշորեն, քան օրինավոր մարդկանց։

Սակայն խարույկ վառելու հանդգնությունը դուրս էր ամեն չափ ու սահմանից։

Արևմուտքում, որտեղ Դամլաջրքը թեքվում էր դեպի ծովը, Հարավաբերդը թեևային պաշտպանության երեք բարձրադիր նեցուկ ուներ։ Այդ պատնեշները գտնվում էին լեռան գահավեժ եզրին, որը անտառածածկ դարավանդներով իջնում էր դեպի Հաբասթե, անհնարին դարձնելով ամեն մի պաշարում։ Հենց այստեղ, քարապատնեշով պաշտպանված դիրքերից հիսուն քայլ հեռավորության վրա, բաց տեղում, մի ահագին խարույկ էր բոցավառվում, որը կարծես թուրքերին ուղղված բարեկամական հրավերքի ազդանշան էր։ Հրամանատարությունը խստիվ արգելել էր բաց տեղերում խարույկներ վառել, բայց խնդիրը միայն կրակ վառելը չէր։

Խարույկի շուրջը բոլորվել էին ոչ միայն ամենագեղեցիկ դասալիքները, այլև երկու կին, որոնք Քաղաքաձորից տեղափոխվել էին այս աշխարհը։ Կանայք բոցի վրա պատեցնում էին երկար շամփուրների վրա անցկացրած այծի թարմ միս։ Նուրհանն ու մյուսները կատաղած վրա պրծան։ Բագրատյանը դանդաղ հետևեց նրանց։ Զաուշը կառչեց դասալիքներից մեկի կեղտոտ շապկից, վեր բարձրացրեց։ Դա գորշ դեմքով, երկար մազերով և մանր, շարժուն աչքերով տղամարդ էր։ Այդ աչքերը հայկական ոչ մի արտահայտություն չունեին։ Նուրհանի ֆեյդֆեբելական երկար, մոխրագույն բեղերը դայրույթից դողդողում էին.

— Է՛յ, ոչլո՛տ, որտեղի՞ց եք թոցրել այս այծերը։

Երկարամազը փորձեց օձիքն ազատել։ Նա իրեն այնպես էր պահում, կարծես Զաուշ Նուրհանին բոլորովին էլ չէր ճանաչում.

— Քո ի՞նչ գործն է։ Առհասարակ ո՞վ ես դու։

— Դե՛, իմացի՛ր, թե ով եմ։

Բռունցքի հարվածից դասալիքը տապալվեց գետին։ Քիչ մնաց գլորվեր կրակի մեջ։ Խեղճացած ու վիրավորված՝ ոտքի ելավ.

— Ինչո՞ւ ես խփում։ Ի՞նչ եմ արել քեզ։ Այծերն այս գիշեր Հաբասթեից ենք բերել։

— Հաբասթեի՞ց։ Ա՜խ դու, կեղտո՛տ։ Գաղթականից եք գողացել, վախկո՛տ ոճրագործներ։ Քաղցած ժողովրդի վերջին ունեցածն եք թոցրել... Դրա համար հիմա պատասխան կտաք։

Երկարամազը փորձում էր որսալ Գաբրիել Բագրատյանի հայացքը, որը մեկուսի կանգնած՝ տհաճ տեսարանի հաշվեհարդարը թողել էր իր ստորադրյալի տնօրինությանը։

— Պարո՛ն,— գանգատվեց դասալիքների պարագլուխը,— բա մենք մարդիկ չե՞նք, ուրիշներից ավելի քի՞չ ենք քաղցից տանջվում։ Հլա մեզնից աշխատանք եք պահանջում, գիշեր-ցերեկ պետք է ծառայություն անենք, չարչարվենք ավելի, քան ամեն մի զորանոցում...

Բագրատյանը չպատասխանեց, այլ ազդանշան տվեց յուրայիններին, որ հանգցնեն կրակը և բռնագրավեն միսը։ Զաուշ Նուրհանը սպառնալից թափահարեց տապակվող այծերից մեկի արդեն կարմրած ոտքը։

— Դուք ուրիշ ձևով պետք է տանջվեք քաղցից։ Դուք պետք է իրար լափեք։

Երկարամազը մոտեցավ Բագրատյանին։ Ձեռքերը խոնարհաբար խաչեց կրծքին.

— Պարո՛ն, մեզ զինամթերք տվեք։ Մեզնից ամեն մեկը միայն մի փամփշտակալ ունի։ Մնացած բոլորը մեզնից խլել եք։ Չէ՞ որ մենք

կարող ենք ոչխի դուրս գալ, նապաստակ կամ աղվես խփել։ Լավ չէ, որ այսքան քիչ փամփուշտ ունենք։ Գիշերը թուրքերը կարող են գալ...

Գաբրիելը ետ դարձավ և հեռացավ, դասալիքին թողնելով կանգնած։ Հանապարհին դեռևս հուզված Նուրհանը հայտարարեց.

— Մարդ պետք է Հարավարերդը մաքրի։ Ամենից լավն այն կլինի, որ ամենալկտի դասալիքներից մի քանին վռնդենք։

Գաբրիել Բագրատյանի միտքը վաղուց արդեն վերացել էր տհաճ դիպվածից և արդեն զբաղված էր ավելի կարևոր հարցերով։

— Դա անհնարին է,— մտացրիվ պատասխանեց նա,— մենք չենք կարող մեր հայ հայրենակիցներին ուղարկել մահվան գիրկը։

— Հայ հայրենակիցնե՞ր։

Զաուշ Նուրհանը արհամարհանքով թքեց։ Երկարամազի դեմքը կանգնեց Գաբրիելի աչքի առաջ.

— Հինգ հազար հոգու մեջ սրիկաներ էլ կլինեն, ինչպես ամենուրեք։

Զաուշը զժգոհությամբ նայեց Գաբրիելին.

— Լավ չէ, որ սրանց նման ոճրագործներին տեղ ենք տալիս...

Բագրատյանը կանգ առավ, զինվորական երկարամյա ծառայության բովով անցած Զաուշի ձեռքից խլեց մաուզերյան հրացանը, խզակոթով հարվածեց հողին.

— Զաուշ Նուրհան, մենք միայն մի ձևով կարող ենք պատժել՝ ա՛յ, սրանով։ Մնացածը ծիծաղելի բան է։ Մի՞թե ծիծաղելի չէր, որ Կիլիկյանին բանտարկեցինք կառավարչատանը և խեղճ Գրիգորին հարևան դարձրինք։ Եթե այս ավազակախմբին խարույկի համար պատժենք, ուրեմն՝ պետք է բոլորին գնդակահարենք։

— Դա էլ հարկավոր է... Հիմա պետք է նոր զորաբաժանում կատարենք...

Գաբրիելը նորից կանգ առավ.

— Լավ, Նուրհան, նոր զորաբաժանում կանեմ, բոլորովին ուրիշ զորաբաժանում...

Միտքը չավարտեց, քանի որ դեռևս պարզ չէր պատկերացնում իր խոստացած նոր զորաբաժանումը։

Սեպտեմբերի 6-ի առավոտյան, երբ կանայք գնացին իրենց ընտանիքների մսաբաժիններն ստանալու, շատերին միայն մի քանի ոսկոր հասավ, որոնց վրա հազիվ մսածվեններ կային կախված։ Հուսահատությունից վրա պրծան մուխթարներին։ Սրանք, ինչպես միշտ, կանգնած էին իրենց գյուղերին հատկացված մսաբեղանների առաջ։ Գյուղապետ-

ները նահանջեցին։ Վախից կանաչել էին, մոխրի գույն ստացել։ Նրանց խիղճը մաքուր չէր։ Կմկմալով հայտնեցին, թե ավագների խորհրդի կարգադրությամբ մսի լավագույն մասերն ուղարկել են խրամատները, այլապես զինվորները ուժասպառ կլինեն մինչև մոտալուտ ճակատամարտը։ Իսկ վերջին խոյերն ու ավանակները չպետք է մորթել։ Չի կարելի մորթել այծերն ու վերջին չորս ջորիները։ Այծերի կաթը պետք է փոքրիկ երեխաներին, իսկ ջորիները կարող են պետք գալ ճակատամարտի ժամանակ։ Ուրիշ ելք չկա։ Առաջիկա օրերին մայրերն ստիպված կլինեն սնունդ հայթայթել սեփական ուժերով։ Թող փորձեն կերակուր պատրաստել զանազան բանջարաբույսերից, մաթուզենիների պտուղներից, վայրի կաղիններից, վայրի թզից, հատապտուղներից, արմտիքներից ու տերևներից, որ գոնե մեղմացնեն քաղցի պատճառած ցավերը։ Այս ոչ այնքան մխիթարական խորհուրդը տալու պահին մուխթարները կծկվել էին, ձեռքերով պատսպարել դեմքերը։ Կարծում էին, թե կանայք ահ ուր որ է կատաղությունից վրա կհասնեն, կպատառոտեն։ Բայց տեղի ունեցավ բոլորովին հակառակ բան։ Կանայք գլուխները կախեցին, անթարթ հայացքները հառեցին գետնին։ Նրանց աչքերի մեջ բորբոքված տենդային խռովքը տեղի տվեց կաշկանդվածությանը։ Դա նրանց դեմքերին դրոշմվեց նաև այն օրը, երբ հայերի գլխին կայծակի պես ճայթեց տարագրության հրամանը։

Մուխթարները թեթևացած շունչ քաշեցին։ Վախենալու պատճառ այլևս չկար։ Կանանց բազմությունը ցրվեց։ Դրանք մի քանի հարյուր հոգի էին՝ ծեր և երիտասարդ, գեղեցիկ և տգեղ, բայց բոլորն էլ կարեկցության արժանի, բոլորն էլ ողբալի վիճակի մեջ, հյուծված, ուժասպառ։ Քամին նրանցից ամենամարմնեղին անգամ կարող էր թռցնել տանել։ Դատարկ մսասեղանների մոտից դանդաղ հեռացան։ Նրանք այնպես ծանրորեն էին շարժում իրենց ոտքերը, կարծես մերկ ներբաններով կամ ջրբրված մաշիկներով իրենց հետ քարշ էին տալիս Դամլաջրքի ամբողջ քարքարոտ և թշվառությամբ ներծծված հողը։ Քիչ անց կանանց ամբողջ բազմությունը ճառագայթաձև հոսեց սարահարթն ի վեր, գահավեժ ժայռերի արանքում խմբերի բաժանվեց, առանց վախենալու նույնիսկ հովտակողմի կանաչ ծերպերի մեջ մխրճվեց, որոնց վրայից թռել անցել էր մեծ հրդեհը։ Մայրերի հետ վազում էին երեքչորս տարեկան փոքրիկ երեխաները, ընկնում նրանց ոտքերի արանքը, խանգարում։ Եթե առաջվա պես կարողանային Հյուսիսային լեռնաթմբի մյուս կողմն անցնել, ապա կարելի էր հույս դնել անակնկալ հաջողության վրա։ Պաշտպանության սահմաններում ընկած հողամասը լիովին զրկվել էր իր բուսական բարիքներից, մերկացել, ինչպես կրծած ոսկոր։ Կանանց մի մասը հարյուրերորդ անգամ տնտղեց մաթուզենիների և հավամրգի թփերը, փշերի միջից պոկոտեց հատապտղի մոռացված մնացորդները։ Ոմանք էլ մագլցելով բարձրացան ժայռերն ի վեր, որտեղ վայրի թզենիներ էին աճում։ Դրանց խոշոր, մսեղ պտուղները շատ հարգի էին։ Բայց մի՞թե դա փրկություն էր։ Բոլորի ուշքն ու միտքը ճարպն էր, ալյուրը, կարագը, պանիրը։ Ոչ մի բանջարեղեն կամ պտուղ չի կարող փոխարինել հացին ու ճարպին։ Աղայի բերած սուրճն ու շաքարը, որոնցից մարդկանց բերանը շատ քիչ բան հասավ, վերջին օրերին ստացած իշամսի կոշտ պատառները (լողորդների բերած պաքսիմատից մարդիկ բան չհասկացան) միայն բորբոքեցին բացարձակ քաղցի մոլեգնությունը։

Պատվելի Արամի ձկնորսության վրա անեծք կար։ Միջոցների պակասության պատճառով հնարավոր չէր ալեկոծությանը դիմացող լաստ պատրաստել, իսկ ցանցերը անորակ դուրս եկան։ Բախտը չժպտաց նաև թռչնորսներին, թեև նրանց որոգայթներն ու մյուս սարքերը կարգին էին։ Շրջակայքում թռչուններ քիչ կային։ Դրանք դեռևս չէին հեռացել հյուսիսում ընկած իրենց ամառային զով հանգրվաններից։ Իսկ լորերին, կոցարներին ու վայրի աղավնիներին տղաները չէին կարող խաբել իրենց մանկական որոգայթներով։

Ուժասպառ չէին եղել միայն Նունիկը, Վարդուկը, Մանուշակն ու նրանց յուրայինները։ Անհիշելի ժամանակներից ընտելացել էին կիսաքաղց կյանքին։ Երեսունյոթ օրվա ընթացքում հովտում թե Դամլաջրքի բարձունքներում ոչ մի անգամ նրանց ձեռքը կարգին սնունդ չէր ընկել։ Նունիկը խղճում էր թշվառ կանանց։ Դերեզմանաբնակները միշտ էլ ժողովրդից մեկուսացած էին ապրում և բնական էին համարում իրենց արտաքսումը հասարակության միջից։ Եղերամայրերը, մուրացկանները, կույրերը, հաշմանդամները, ախտավորները, խելագարները չպետք է ապրեին օրինավոր մարդկանց շրջանում։ Այդ իրողությունը բոլորի համար պարզ էր, և նրանցից ոչ մեկը հայրենակիցների նկատմամբ վրեժխնդիր ատելություն չէր զգում, հայրենակիցներ, որոնք իրենց գոյությունն ապահովում էին տքնաջան աշխատանքով։ Նույնիսկ եղերամայրերը՝ հանգուցյալների վրա ողբացողները և ծննդկաններին չար ոգիներից պաշտպանողները, հպարտ էին իրենց կարևորության գիտակցությամբ, իրենց անվիճելի արժանիքներով։ Նրանք օգնում էին մարդկանց, երբ նոր սերունդ էր գալիս աշխարհ, և երբ սերունդներ էին հեռանում աշխարհից։ Իրենց կախարդական հնարանքներով նրանք այնպիսի հոգեփրկիչ խորհուրդների

ու գաղտնիքների մեջ էին թափանցել, որոնց հասու չէին ո՛չ Տեր-Հայկազունը, ո՛չ էլ եկեղեցին։ Սակայն Նունիկը ոչ մի կախարդանքով հաց և ճարպ ձեռք բերել չէր կարող։ Այնուհանդերձ պառավը գաղթականի սովալլուկ կանանց օգնեց, բացելով իրենց սնդի աղբյուրներից մեկի գաղտնիքը։ Անհավատալի տեսարան էր, երբ այդ պառավը, որի մասին լուրեր էին շրջում, թե հարյուր տարեկան է, առանց երկյուղի իջավ ուղղաձիգ ժայռն ի վար, սմքած, գորշ ոտքերով ստուգեց կանգնելիք տեղը, վստահ շարունակեց իջնել, ապա շուտով չքացավ ինչ-որ ճեղքի մեջ։ Աղջիկներից միայն երեքը համարձակվեցին հետևել Նունիկի օրինակին։ Մնացած կանայք ապշահար նայում էին։ Բայց թե դեռատի աղջիկները տեղից շարժվելուն պես ջղաձգորեն կառչեցին ժայռի ճեղքերում աճած թփերից։ Նրանց ոտքերն ամեն քայլափոխին դողդողում էին։ Սարսափից զնգզնգում էին ոսկե զարդերը։ Ինչ խոսք, արիությունը երբեմն վարձատրվում է։ Ժայռախոռոչներում Նունիկը ճայերի և ծովային այլ թռչունների բներ էր հայտնաբերել։ Կանայք կարողացան մի քանի զամբյուղ ձու տանել։ Բայց այդ ձվերից ի՞նչ կհասկանային մարդիկ, եթե դրանք բաժանվեին հազար ընտանիքի։

Կանանց հուսահատ արշավանքը դեռևս շարունակվում էր, երբ ավագների խորհուրդը նիստ գումարեց։ Ոչ ոքի մտքով չէր անցնում, թե վերջին անգամ են նստած կառավարչատան խորհրդարանում։ Հանգուցյալ Գրիգոր Յողոնօլուքցու մահվան թափուր մահճի առաջ անփոփոխ կանգնած էր գրքերի պատը, որ դեղագործը կանգնեցրել էր իր և աշխարհի միջև։ Գրքերն իրենց տիրոջից հետո մնառած էին թվում, այնպե՞ս անկյանք ու սառած։ Կարծես դիակնացումը դրանք վեր էր ածել կարծր սալաքարերի։ Մահվան շունչը դրոշմվել էր ոչ միայն գրքերի վրա։ Տեր-Հայկազունի մոմագույն դեմքը նման էր մահադիմակի։ Նա իր վարդապետական խուսափող և անթափանցելի աչքերով հաշվում էր հավաքվածներին։ Բոլորը ներկա էին, բացի հանգուցյալ Գրիգորից և Հրանտ Ոսկանյանից։ Սա չէր հանդգնել զանց առնել Տեր-Հայկազունի արգելքը։ Բայց այնտեղ էր սմքած Ասայանը՝ Ոսկանյանի բարեկամը, Տեր-Հայկազունի հին ախոյանը և ատողը։ Ուրբաթախոսը կես ժամ առաջ դպրապետի գլուխը «լավ լցրել էր»։ Երգիչը պետք է վրեժ լուծեր, գժտեցներ ավագներին, սրեր հակասությունները։ Բոլոր դեպքերում Ասայանը պատրաստ էր անախորժություն պատճառել վարդապետին՝ եկեղեցում և դպրոցում իրեն տանջող ոգուն։

Բոլորից հետո ներս մտավ բժիշկ Ալթունին։ Իր խարխուլ ոտքերով,

որոնք հետզհետե ավելի ու ավելի էին ծռվում, մոտեցավ գրքերին, երբ կա՞ր-երկա՞ր նայեց թափուր անկողնուն։ Այնուհետև շրջվեց ժողովականների կողմը.

— Հիշենք դեղագործին։ Աստծուն է հայտնի, որ մի քիչ խենթ էր, բայց թե Գրիգորի նման մարդ էլ աշխարհ չի գա...

Դա ասվեց փոքր-ինչ կոշտ ու կոպիտ դամբանականի ոճով, բայց հեռուորի վրա այնպես ազդեց, որ նա հանկարծ հառաչեց ի խորոց սրտի։

Տեր-Հայկազունը ձեռքերը ծալեց.

— Բժիշկն իրավացի է։ Մի վայրկյան հիշենք Գրիգորին։ Ջսպասեց մինչև մեր գործի վախճանը։ Աստված հոգին լուսավորի։

Մյուսները ևս ծալեցին իրենց ձեռքերը, տարվեցին խոհերով։ Շատերի համար դա միայն դատարկ ձևականություն էր։ Սակայն Գաբրիել Բագրատյանը գլուխը շատ ցած կախեց։ Չուզեց ցույց տալ իր դեմքը, որը, իհարկե, Գրիգորի պատճառով չէր այլայլված։ Այս կարճատև հուշահանդեսից հետո Տեր-Հայկազունը խոսքն իսկույն տվեց պատվելի Արամին։ Այսօրվա խորհրդակցության ձախողումը մարդիկ նախազգում էին, մտաբերելով Արամ Թովմասյանի և Գաբրիելի միջև ծայր առած անախորժությունը։ Պատվելին դեռևս չէր խոսել Գաբրիելի հետ։ Իր խղճի առաջ սեփական անվճռականությունն արդարացնելու համար բազմաթիվ պատճառներ էր գտնում։ Արդեն մի քանի օր շարունակ ծովափին էր, ապարդյուն սպասում էր, հուսալով, թե իր ձկնորսական մտահղացումը վերջապես կպսակվի հաջողությամբ։ Հազվադեպ էր գալիս գաղթականի, այն էլ երբ կանչում էր Տեր-Հայկազունը։ Դա արտաքին պատճառաբանություն էր միայն։ Դրանից բացի, բժիշկ Ալթունին հիվանդի ամբողջ խնամքը հանձնել էր իր կնոջը, Իսկուհուն փրկել հետագա խայտառակությունից։ Բագրատյանը նորից չէր հեռանում հյուսիսային դիրքերից։ Վկաները հաստատում էին, որ նա այլևս ոտք չի դնում Երեք վրանի հրապարակը։ Նման փաստերով պատվելին փոքր-ինչ հանգստացնում էր իր հոգին։ Բայց ներքուստ գիտեր իր զգացմունքների աշխարհում տիրող բուն ճշմարտությունը։ Տառապում էր ինչ-որ անհաղթահարելի երկչոտությունից և չէր կարողանում քրոջ մասին խոսել Բագրատյանի հետ։ Դա առաքինության, հարգանքի և գժգոհության տանջալի խառնուրդից գոյացած զգացում էր։ Հետո էլ... Արամը սիրում էր Իսկուհուն։ Այժմ, երբ արդեն ընդհարված էր քրոջ հետ, քույր, որին Օվսաննան անզուսպ լուտանքներով շարունակ սևացնում էր, նա Իսկուհուն կրկնակի էր սիրում։ Ականջին միշտ հնչում էին աղջկա խոսքերը.

«Ես տասնինը տարեկան եմ և երբեք քսան տարեկան չեմ դառնա»։ Թովմասյանը չէր ուզում ընդհարումը ծայրահեղության հասցնել։ Գիտեր, որ Իսկուհին ամեն ինչի պատրաստ է. կարող էր մինչև իսկ իր կապը լրիվ խզել ընտանիքի հետ։ Աղջիկն այդ բանն ասել էր հորը, երբ Ծերունին պահանջել էր հեռանալ Երեք վրանի հրապարակից։ Ի՞նչ հարկ կար եղածի վրա նոր տառապանք ավելացնել։ Այսպես էր մտածում Թովմասյանը։ Օրերը մի կերպ գլորվում էին, և շուտով դրանցից մեկը լինելու էր վերջինը։ Մի բան էլ կար։ Իսկուհին երբեք չէր ստում։ Նա ճշմարտությունն ասաց, երբ պնդեց. «Իմ ու Գաբրիելի միջև ոչինչ չի եղել»։ Ուրեմն՝ մեծ մեղքը դեռևս տեղի չէր ունեցել։ Աստված երևի մի նոր, բոլորովին անսպասելի ճանապարհ կբացի, և ամեն ինչ կփոխվի։ Ի սեր այս ճանապարհի կամ միակ ելքի պատվելին ամեն օր աղոթում էր։ Նույնիսկ թվում էր, թե այդ ճանապարհը հեռու չէ։

Առաջին անգամ Գաբրիել Բագրատյանին հանդիպելիս Արամը շփոթվեց, դառնացավ։ Կարեկցական ոչ մի բառ չկարողացավ ասել, թեև Ստեփանի մահից հետո Գաբրիելին ոչ մի անգամ չէր տեսել։ Բոլորն էլ կարող էին նկատել, որ նա անմիջական խոսակցության պահին խուսափում էր նայել գլխավոր հրամանատարին։

Նիստն սկսվեց։ Հուսահատական իրադրության մասին պետք է զեկուցեր Թովմասյանը.

— Ինչ որ լինելու էր, եղավ։ Ամբողջ միսն արդեն սպառել ենք։ Զինվորների համար թաքցրել ենք վերջին մնացորդները։ Դա կբավականացնի ոչ ավելի, քան երկու օր։ Կանայք և երեխաներն այսօր առաջին անգամ լիակատար ծոմ են պահել, եթե, իհարկե, վերջին օրերի խղճուկ սնունդը ծոմ չհամարենք։

Մուխթար Թովմաս Քեքուսյանն իր անհամաչափ աչքերով ստուգեց և համոզվեց, որ իր բոլոր համախոհներն իրենց տեղում են, ապա ձեռքը բարձրացրեց.

— Չեմ հասկանում, թե ինչո՞ւ զինվորներին պետք է ուտելիք տանք, իսկ կանանց ու երեխաներին ստիպենք, որ ծոմ պահեն։ Երիտասարդ, ուժեղ տղամարդիկ քաղցին ավելի երկար կդիմանան։

Այստեղ Գաբրիել Բագրատյանը անմիջապես միջամտեց.

— Դա շատ հեշտ է հասկանալ, Մուխթար Քեքուսյան։ Զինվորներն այժմ պետք է ավելի ուժեղ լինեն, քան երբևէ։

Պաշտպանության գլխավոր հրամանատարին նեցուկ լինելու համար Տեր-Հայկազունը շեղվեց սննդին վերաբերող հարցից։

— Գուցե Գաբրիել Բագրատյանը մեզ հայտնի՞ իր կարծիքը մեր զինվորների իսկական ուժի վերաբերյալ։

Գաբրիելը ձեռքը պարզեց Զաուշ Նուրհանի կողմը.

— Զինվորների վիճակը այնքան էլ վատ չէ, որքան կարող է լինել վերջին ճակատամարտից առաջ։ Բավական զարմանալի է, բայց դա այդպես է, և Զաուշ Նուրհանը դա կհաստատի։ Պաշտպանական ամրություններն այժմ ավելի զորավոր են, ավելի լավ, քան առաջ։ Թուրքերի հարձակման հնարավորությունները շատ սուղ են։ Նրանք, առհասարակ, կարող են հարձակվել միայն հյուսիսից, ինչպես դա ցույց են տալիս բոլոր նախապատրաստությունները։ Չնայած գեներալի ժամանմանը, Թուրքերը չեն հանդգնի հարձակվել Հարավաբերդի վրա։ Սա հաստատ է։ Այնտեղ գտնվող պահակախմբով առանձին հաջողության չի կարելի հասնել, ինչպես գիտենք բոլորս։ Ես մտադիր եմ Զաուշ Նուրհանին մեկ կամ երկու օրով ուղարկել այնտեղ, որ կարգ ու կանոն հաստատի։ Թուրքերի հարձակումը հյուսիսից ավելի սարսափելի է լինելու, քան նախորդ բոլոր ճակատամարտերի ժամանակ։ Դա կախված է նրանից, թե քանի հրանոթ են բերել։ Մինչև այժմ այդ մասին ոչինչ չգիտենք։ Ամեն բան կախված է դրանից։ Նշանակում է, եթե նոր միջոց չգտնենք... Բայց այդ մասին կխոսեմ քիչ հետո...

Տեր-Հայկազունը, որն իր սովորության համաձայն լսում էր գլուխը կախած և այնպիսի կեցվածքով, կարծես մրսում էր, չկարողացավ իրեն զսպել և շտաղ հետևյալ կարևոր հարցը.

— Լա՜վ, բայց ի՞նչ նոր միջոց։

Վերջաբանի և ազատագրության ծարավից տոչորվող Բագրատյանը ձայնը բարձրացրեց, որը և զրնգաց փոքր ու փակ սենյակում.

— Եկեք խորը մտածենք։ Այս ժամին ամբողջ աշխարհի խրամատներում մեզ նման միլիոնավոր տղամարդիկ են կանգնած։ Կամ ճակատամարտի են սպասում, կամ մարտնչում են, արյուն թափում, արյունաքամ լինում, մեռնում, ինչպես մենք։ Սա այն միակ խորհրդածությունն է, որն ինձ հանգստացնում է և սփոփում։ Երբ այդ մասին մտածում եմ, ապա ինձ ավելի վատթար և պատվազուրկ չեմ զգում, քան այդ միլիոններից յուրաքանչյուրը։ Այսպես մտածում եմ ոչ միայն ես, այլև դուք՝ բոլորդ։ Երբ մարտնչում ենք, այլևս աղբ չենք, Եփրատի ափին կամ այլուր փտող դիակներ չենք։ Երբ մարտնչում ենք, ունենք պատիվ ու արժանիք։ Ուստի և մենք ոչ մի այլ բան չպետք է տեսնենք մեր աչքի առաջ, ուրիշ ոչ մի բան չպետք է ցանկանանք, բացի կռվից։

Սակայն իրադրության այս հերոսական ընկալումը քչերն էին բաժա-

նում։ Վարդապետի տված «ի՞նչ նոր միջոց» հարցը չորս կողմը կարծես ծիլեր արձակեց։ Գաբրիելը զարմացած նայեց իր շուրջը.

— Ինչպե՞ս թե «ի՞նչ նոր միջոց»։ Հավատացած էի, թե բոլորս էլ այդ հարցի վերաբերյալ միասնական կարծիքի ենք։ Ի՞նչ նոր միջոց։ Հավանաբար ոչինչ...

Այստեղ Ասայանին ներկայացավ ամենահարմար առիթը՝ լուծելու իր բարեկամի վրեժը։ Սեադեմ ուսուցիչը նրան խնդրել էր ամեն գնով անվստահություն առաջ բերել, ամեն առիթով հիշատակել «մատնիչ» Գոնզագ Մարիսի անունը և ծեր աղայի խորհրդավոր այցելությունը։ Դպրապետը հանդիսավոր ձևով հարց.

— Պարո՛ն, հերոսական մահը այնքան էլ անշահախնդիր երևույթ չէ։ Ինքս այլ բան չեմ ցանկանում։ Չեմ ուզում դատավճիռ կայացնել ձեր թանկագին տիկնոջ վերաբերյալ։ Դուք երևի որևէ համաձայնության եք եկել թուրք փաշայի հետ, որը մի քանի օր առաջ Ձեզ այցելեց։ Ոչ ոք այդ բանն իմանալ չի կարող։ Սակայն ես Ձեզ հարցնում եմ. ի՞նչ է լինելու մեր կանանց, քույրերի, դուստրերի վիճակը։

Զարության ու ստորության թունավոր նետերին անմիջապես հակահարված տալը Գաբրիելի բնավորությանը հատուկ չէր։ Հենց այդ պատճառով էլ միշտ փոքր-ինչ սպասում էր, մինչև հարվածը հասներ գիտակցությանը։ Այժմ էլ անթարթ նայում էր Ասայանին և ոչինչ չէր հասկանում։ Սակայն Տեր-Հայկազունը, որն արդեն լավ էր ծանոթ Բագրատյանի ամբողջ էությանը, թափով վեր թռավ.

— Դպի՛ր, լեզուդ քե՛զ քաշիր, նախազգուշացնո՛ւմ եմ։ Բայց եթե ուզում ես իմանալ, թե ինչու էր Անթաքիից եկել աղա Ռիֆաաթ Բերեքեթը, ապա կասեմ։ Գաբրիել Բագրատյանը վաղուց կարող էր աղայի տունը խաղաղ ու ապահով ուտել իր հացն ու փլավը, քանի որ թուրքը այդ առաջարկն արեց՝ ստեղծելով փրկության հնարավորություն։ Սակայն մեր բարեկամ Բագրատյանը գերադասեց հավատարիմ մնալ մեզ և իր մեծ պարտականությունը կատարել մինչև վերջին ակնթարթը։

Բագրատյանի հանդեպ ստեղծված անվստահությունը ցրող այս կարևոր հայտարարությունից հետո տիրեց երկարատև, անհարմար լռություն։ Տեր-Հայկազունից բացի, ճշմարտությունը գիտեր միայն բժիշկ Ալիունին։ Պայմանավորվել էին, որ աղայի գալը ժողովրդին կներկայացնեն իբրև բարեկամական այցելություն։ Լռությունը շարունակվում էր։ Սխալ կլիներ կարծել, թե դա Գաբրիելի ճշմարտացի վարմունքի հանդեպ ցուցաբերվող հարգանքի նշան էր։ Օրինակ, դա չէր կարելի ասել մուխթարների մասին։ Հասարակ ժողովրդի ծոցից դուրս եկած այդ մարդ-

կանցից յուրաքանչյուրը հոգու խորքում ինքն իրեն հարց էր տալիս. ինչպե՞ս կվարվեր ինքը, եթե նման հնարավորություն ընձեռվեր իրեն։ Եվ յուրաքանչյուրը ներքուստ գալիս էր այն եզրակացության, որ խորամանկ Ավետիսի թոռը՝ Եվրոպայից ժամանած Գաբրիելը, անուղղելի խենթ է, «ծալը պակաս»։ Արամ Թովմասյանն առաջինը խզեց անհարմար լռությունը։

— Գաբրիել Բագրատյանը,— սկսեց նա, բայց չնայեց իր հակառակորդի կողմը,— ամեն ինչ ընկալում է իբրև զինվորական, իբրև սպա։ Վերջին հաշվով, ինձ ևս ոչ ոք չի կարող մեղադրել, թե ես կռվից խուսափող եմ։ Բայց ես երևույթները չեմ ընկալում իբրև զինվորական։ Իմ մոտեցումը այլ է։ Ոչ ոք չի կարող ժխտել, որ մեր բոլորի և Բագրատյանի ընկալումները տարբեր են։ Մի՞թե նպատակ ունի անհավասար ճակատամարտի դուրս գալ, արյուն թափել, որպեսզի հաջողության դեպքում երեք օր հետո սուսուփուս սովամահ լինենք։ Եվ դեռ սա աներևակայելի, պատահական բախտավորություն կլինի։ Ի՞նչ արած կլինենք դրանով։

Մինչ այդ Արամի պատճառաբանությունը մտքի շատ անորոշ մարզանք էր, որը ոչ մի առնչություն չուներ իրադրության հետ։ Բայց հանկարծ Բագրատյանին հակաճառելու անզուսպ մղումը նրա հեղհեղուկ մտահղացմանը տվեց պարզորոշ ձև, առողջ նկատառման երևույթ.

— Տեր-Հայկազունը և դուք՝ բոլոր տղամարդիկդ, պետք է ինձ հետ համաձայն լինեք, որ Դամլաջրքի վրա այլևս չենք կարող դիմանալ։ Ավելի լավ կլինի, եթե նախ սպանենք մեր կանանց, ապա մեզ, քան սպասենք թուրքերին կամ սովամահությանը։ Ուստի և առաջարկում եմ հեռանալ այստեղից վաղը կամ մյուս օրը։ Որքան շուտ, այնքան լավ։ Թե դա ինչ ձևով ավելի լավ կարելի է իրականացնել, պետք է հանգամանորեն խորհրդակցենք։ Իմ կարծիքով, պետք է ճանապարհ ընտրենք դեպի հյուսիս, իհարկե, ոչ թե թուրքերի գրաված բարձունքներով, այլ ծովեզերքի երկայնքով։ Առայժմ կարող ենք պատսպարվել Ռես էլ Խընզրրի լանջերին։ Փոքրիկ ծովախորշն այնտեղ լավ պաշտպանված է, ավելի ձկնառատ, քան մեր ծովեզերքը։ Լաստերի կարիք չենք զգա, իսկ ցանցեր բավականաչափ ունենք, կարող եմ ձեզ վստահեցնել...

Սա այնքան էլ ֆանտաստիկ չթվաց, որքան այդպիսին էր ըստ էության։ Ամենից առաջ Արամի ճառը առաջարկություն էր, անստույգ, բայց համարձակ հեռանկար, Դամլաջրքի մահվան որոգայթից ճողոպրելու միջոց։ Մինչ այդ անշարժ նստած մարդկանց գլուխներն սկսեցին շարժվել, օրորվել, ասես թեթև քամուց։ Փոխվեց մարդկանց դեմքերի գույնը։

Միայն Գաբրիել Բագրատյանը մնաց այնպիսին, ինչպիսին էր մինչ այդ։ Նա ձեռքը բարձրացրեց, ձայն խնդրեց.

— Պատվելի Արամի մտքով անցածը շատ գեղեցիկ երազանք է։ Խոստովանում եմ, որ ես էլ այդպիսի երազանք եմ ունեցել։ Սակայն մենք պարտավոր ենք քննել նման պատրանքներն իրականացնելու հնարավորությունը։ Ես էլ եմ ուզում պատկերացնել այդպիսի երջանիկ մի պատեհություն, չնայած, իբրև պատասխանատու գլխավոր հրամանատար, իրավունք չունեմ։ Ենթադրենք, թե գիշերը մեզ հաջողվի Թուրքերի մոտով անցնել, հասնել Ռես էլ Խընզըր։ Ուզում եմ թեթևամտորեն ենթադրել, թե զափթիեներն ու զինվորականները չեն նկատի չորս-հինգ հազարանոց երկար թափորը, որը շարժվելու է երկրորդ քառորդին հասած լուսնի պայծառ լույսի տակ, մերկ ծովեզերքի երկարությամբ։ Լա՛վ։ Առանց արգելքի կհասնենք հրվանդանի ժայռոտ լանջերը։ Այնտեղ ստիպված կլինենք շրջանցել վիթխարի ժայռացցվածքը, քանի որ փոքրիկ ծովածոցը ժայռերի մեջ է մտնում հրվանդանի մյուս կողմում։ Պատվելի՛, ինձ մի՛ ընդհատեք։ Կարող եք խոսքերիս հավատալ. քարտեզի ճիշտ պատկերն իմ գլխումն է... Արդյոք այդ ծովախորշերը միայն լերկ ժայռաճեղքերի՞ց են բաղկացած, թե՞ բնակության հարմար տեղեր էլ ունեն։ Բայց մի անգամ էլ եմ ուզում, ի նպաստ Թովմասյանի, հնարավոր համարել ամենաերջանիկ պատահականությունը։ Ենթադրենք, թե այնտեղ կտեղավորվենք, և Թուրքերն այնքան կուրացած կլինեն, որ մեր տեղը կհայտնաբերեն, ասենք, վեց, նույնիսկ ութ օր հետո։ Այժմ տամ ամենակարևոր հարցը։ Դրանով ի՞նչ կշահենք։ Պատասխանը։ Մանոթ տեղը կփոխարինենք անծանոթով։ Ուժասպառ, սովատանջ կանայք ու երեխաներն ստիպված կլինեն երկար ժամանակ անճանապարհ ծերպերն ու ժայռերը մագլցելով առաջ շարժվել, մի բան, որ, երևի, չկարողանան։ Մեր գաղթականների փոխարեն, որին այնպես վարժվել ենք, ստիպված կլինենք առանց ուժի ու միջոցների ստեղծել նոր ճամբար։ Բոլորդ էլ պարզ պատկերացնում եք, թե ինչ կստացվի։ Քանի որ գրաստներ չունենք, բնականաբար, այստեղ կմնան մեր բոլոր անկողինները, խոհանոցային սպասքն ու ձեռքի գործիքները։ Մինչդեռ առանց այդ գույքի մենք չենք կարողանա նոր կյանք սկսել, եթե նույնիսկ դրախտ ընկնենք, որտեղ հացը ծառերի վրա է աճում։ Այս բանը չի ժխտի նույնիսկ պատվելին։ Մենք կհեռանանք ստուգված և զորավոր ամրոցից, որի հանդեպ Թուրքերը մեծ հարգանք ունեն։ Բարձունքում գտնվող վայրը կփոխարինենք անճարակ խորխորատով, իսկ դա մեզ պատսպարել չի կարողանա։ Թովմասյան, կես ժամվա ընթացքում ծուղակը կընկնենք։ Անշուշտ, մեծ առավելություն կունենանք։ Դեպի ծովը կատարելիք վերջին փախուստը ներքևում ավելի կարճ կլինի, քան սկուտեղաձև դարավանդից ցած նետվելու տարածությունը։ Բոլոր դեպքերում վախենում եմ, որ ոչ թե մե՛նք ձուկ ուտենք, այլ ձկները՝ մեզ։

Արամ Թովմասյանը Գաբրիելի այս հստակ փաստարկումներին արձագանքում էր գրգռված բացականչություններով։ Այդ վճռական ժամին նրա մեջ ողջամտությունը կորցրել էր իր ամբողջ իշխանությունը, տեղի տվել կույր զայրույթին։ Առանց Բագրատյանին նայելու, անզուսպ կատաղությամբ հարձակման անցավ.

— Գաբրիել Բագրատյանը միշտ էլ իր տեսակետը ներկայացնում է տիրաբար։ Նրա կարծիքով մենք ոչ մի հասկացողություն չունենք։ Մենք խեղճ ու կրակ ռամիկներ ենք։ Նա մեզանից բարձր է կանգնած։ Ի՞նչ արած, ես այդ բանը չեմ ուզում ժխտել։ Մենք պարզ շինականներ ենք, արհեստավորներ, իրեն չենք հասնի։ Բայց քանի որ նա մեզ շատ հարցեր տվեց, ուստի և ինքս էլ կուզենայի մի քանի հարց տալ։ Իբրև ընտիր սպա, նա Դամլաջրքը դարձրեց զորավոր ամրոց։ Բայց ի՞նչ օգուտ այդ ամրոցից և Դամլաջրքից։ Ո՛չ մի։ Ընդհակառակը, Դամլաջրքը մեզ խանգարում է, երբ ուզում ենք գտնել փրկության վերջին ուղին։ Եթե Թուրքերը խելացի լինեն, այլևս չեն կռվի։ Չէ՞ որ մի քանի օրից հետո իրենց նպատակին կհասնեն առանց որևէ կորստի։ Սակայն կռիվ կլինի թե ոչ, դա չէ խնդիրը։ Որտե՞ղ է մահից խուսափելու նոր գաղափարը, նոր ելքը։ Բոլոր դեպքերում ամենահարմար ձևը այստեղ մնալը և սովորական պայմաններում կործանվելն է։ Այլևս հարկ չի լինի ճիգ ու ջանք թափելու։ Սակայն այդ փտած տեսակետը, այդ Թուլամորթ անկումը ես համարում եմ անարգանք։ Ահավասիկ հարցերի հարցը։ Գաբրիել Բագրատյանը ի՞նչ միջոցներ է առաջարկում սովամահության դեմ։ Մինչդեռ նա ծաղրում է իմ ձկնորսական փորձերը։ Չէ՞ որ դա եղել է և մնում է միակ ելքը։ Եթե ինձ օգնեին, առողջ և ուժեղ տղամարդկանց զինավարժություններով չզբաղեցնեին, գործն ավելի հաջող կընթանար...

Պատվելին մինչ այդ մի կերպ կարողանում էր պահպանել արտաքին հանդարտությունը, բայց հանկարծ կրակ կտրած սկսեց գոռգոռալ.

— Տե՛ր-Հայկազուն, ես շատ լուրջ առաջարկ եմ անում։ Պետք է մեր ունեցած բոլոր անասունները մորթենք, եփենք և բաժանենք։ Պետք է ճանապարհ ընկնենք հաջորդ գիշերը, ամենաուշը մի օր հետո։ Կպատրաստվենք ժայռոտ ծովախորշերից մեկում, որտեղ առատ ձուկ կա։

Այս անսպասելի և կտրուկ առաջարկը շփոթ առաջացրեց թմրած գլուխներում։ Մուխթարներն իրենց նստած տեղում դժգոհ օրորվեցին,

ինչպես աղոթող մահմեդականներ։ Ծերունի Թովմասյանը՝ Արամի հայրը, վախեցած թարթում էր աչքերը։ Քեբուսյանը սրբեց քրտնաթոր ճակատը և ողբաձայն հառաչեց.

— Երանի՜ աքսոր գնայինք... մեռած կամ կենդանի... Ավելի լավ կլիներ...

Այդ րոպեին Տեր-Հայկազունը պարեգոտի թևքի միջից դուրս բերեց տրորված մի թուղթ։ Դա ոչ միայն Քեբուսյանի հառաչանքին պատասխանելու, այլ նաև Դամլաջըքը Արամից պաշտպանելու լավագույն միջոցն էր։ Վարդապետը ճակատագրական թուղթը կարդաց կիսաձայն, գրեթե առանց արտահայտիչ առոգանության.

«Հարություն Նոխուդյան, հովիվ Բիթիասի, առ վարդապետն Սուդիայի մոտակա ծովեզերքի, Տեր-Հայկազունն ի Յողոնելուք։ Նախ և առաջ խաղաղություն և երկար կյանք քեզ, ո՛վ սիրեցյալ եղբայր ի Քրիստոս Տեր-Հայկազուն, և ձեզ, իմ բոլոր սիրեցյալ հայրենակիցներ, ապաստանյալ ի վերա լերին Մուսա, որտեղ էլ լինեք, թեև հույս ունեմ, որ տակավին լեռան բարձունքների վրա եք։ Եթե աստված կամենա, ապա քեզ կհասնի սույն նամակը, որ հանձնում եմ մի բարեգութ թուրք ապայի։ Առ աստված տածյալ մեր վստահությունը զարհուրելի փորձության ենթարկվեց, և տերը թող մեզ ների, եթե կորցրինք այդ վստահությունը։ Այն պահին, երբ քեզ նամակ եմ գրում, իմ հրեշտակաբարո, թշվառ կնոջ մահկանացու աճյունը անթաղ ընկած է կողքիս։ Եթե հիշում ես, նա մշտապես դողում էր իմ կյանքի վրա, իմ տկար առողջության պատճառով երբեք չէր հանդուրժում, որ հոգնեմ, գլխաբաց դուրս գամ տնից կամ ոգելից խմիչքներով զվարթանամ (իսկ ասույն մեղավոր թուլությունից զերծ չէի)։ Այժմ ամենայն ինչ հակառակ տեսք է ընդունել։ Նրա աղերսալի աղոթքը տեղ հասավ. ինձանից առաջ մեռավ։ Այդ անգութը սովամահ եղավ և ինձ միայնակ թողեց։ Նրա վերջին գործն այն եղավ, որ բաց դաշտում, առավոտյան ցրտին, իր վզնոցն արձակեց և ինձ ստիպեց վերցնել։ Աստված ինձ պատժում է, ինչպես Հիոբին։ Ես՝ տկարս, հիվանդս, թշվառս, տակավին ուժ ունեմ, որը չի ուզում ինձ լքել և որը ես հազար անգամ նզովել եմ։ Իմ երեքտասներորդ հովանավորուհին մեռավ, իսկ ես մնում եմ կենդանի, տեսնում բոլորի մահը։ Իմ համայնքի երիտասարդներին Անթաքիեում մեզանից բաժանեցին, տարան։ Նրանց մասին ոչինչ հայտնի չէ։ Մնացյալները մեռան մինչև քսանյոթը, և ես երկյուղ եմ կրում, թե կլինեմ վերջինը, ես, որ ո՛չ ուժ ունեմ, ո՛չ էլ արժանի եմ կենդանի մնալու։ Այժմ մենք օրական մի քիչ հաց և բլղուր ենք ստանում, բայց դա միայն երկարացնում է մեր տառապանքները։

Երևի այսօր ինչաաթ թաբուրիներ գան՝ բազո՜ւմ, բազո՜ւմ դիակներ թաղելու։ Կտանեն նաև իմ կնոջը, և ես դրա համար նույնիսկ երախտապարտ պետք է լինեմ։ Թղթի վրա այլևս տեղ չմնաց։ Մնաս բարյա՜վ, Տե՛ր-Հայկազուն։ Ե՞րբ վերստին միմյանց հետ կլինենք...»։

Վարդապետը վերջին տողերն ավելի անարտահայտիչ կարդաց, իբրև կողմնակի տեղեկություն։ Այնուհանդերձ յուրաքանչյուր վանկը տղամարդկանց գլխին իջնում էր իբրև մուրճի հարված։ Եվ այդ գլուխներն ավելի ու ավելի էին ցած խոնարհվում։ Բժիշկ Ալթունին ձայնը բարձրացրեց, որը մաշվել ու ժանգոտել էր, ինչպես հին դանակ։

— Հավատացած եմ, որ այս նամակից հետո Թովմաս Քեբուսյանն այլևս չի փափագի տարագրության բարիքները։ Արդեն երեսունութ օր ապրում ենք այստեղ, վերևում։ Մեր կյանքը լի է դժվարություններով, բայց կարծեմ մարդավայել է։ Ափսո՜ս, որ հետագայում ոչ մեկին չի վիճակվի դրանով հպարտանալ։ Ինչևէ, առաջարկում եմ, որ Տեր-Հայկազունը Նոխուդյանի նամակը ժողովրդի առաջ կարդա խորանի հրապարակում։

Առաջարկությունը ջերմ հավանություն գտավ, քանի որ Քաղաքաձորում արդեն տարածվել էր Քեբուսյանի հառաչանքը. «Երանի՜ աքսոր գնայինք»։ Ամբողջ ժամանակ Գաբրիելն անտարբեր նստած էր՝ խորասուզված իր սեփական խոհերի մեջ։ Արդեն ծանոթ էր փոքրամարմին պատվելու նամակին։ Նրա միտքն զբաղված էր այն բացահայտ թշնամությամբ, որ Արամ Թովմասյանն ի ցույց հանեց խորհրդակցության ժամանակ։ Որոշակի զգաց. պատճառն Իսկուհին է։ Դրա համար էլ չուզեց կարևորություն տալ Արամի վիրավորական խոսելաձևին։ Պատվելու առաջարկը սովորական բնույթ չէր կրում։ Գաբրիելը ջանաց իր խոսքերին հազորդել մեղմություն և հաշտարար շեշտ.

— Մտքովս էլ չի անցնում ծաղրել պատվելի Արամի ծրագրերն ու գործերը։ Սկզբում ես հավանություն տվի ձկնորսության մտահղացմանը։ Եթե հաջողություն չունեցանք, ապա պատճառը ոչ թե լավ մտահղացումն է, այլ վատ տարքավորումները։ Բայց ինչ վերաբերում է նոր գաղթականներին, ապա իմ պարտականությունն եմ համարում ապացուցել, որ դա ոչ միայն անիրագործելի է, այլև կարագացնի և ավելի սոսկալի կդարձնի մեր վախճանը։ Դրան հակառակ, Արամ Թովմասյանը լիակատար իրավունքով ինձ հարց տվեց, թե ես ի՞նչ եմ առաջարկում անել սովամահությունից փրկվելու համար։ Ուշադիր լսեցեք, բարեկամներ։ Այժմ ես բոլոր հարցերին միանգամից մի պատասխան կտամ...

Գաբրիել Բաղրատյանը ես պատվելի Արամի նման խոսեց հան-

պատրաստից։ Նա ևս իր մտահղացումն ամբողջ գիշեր ծանրութեթև էր արել, թեև սեփական խորհրդածություններին առանձնապես լուրջ նշանակություն չէր տվել։ Միշտ էլ այդպես է։ Որևէ գաղափար կամ նկատառում բառերով արտահայտվելուց հետո է բարձրանում իրականացման առաջին աստիճանի վրա, ստանում չափ ու կշիռ։ Բագրատյանը շրջվեց Նուրհան Էլլեոնի, Շատախյանի և նրանց կողմը, ում հետ հույս էր կապում.

— Կա մի հին միջոց, որին դիմում են բոլոր պաշարվածները... Թուրքերն իրենց բանակատեղին հաստատել են Մուսա լեռան վրա։ Եթե նույնիսկ վեցից ութ վաշտ ունենան կամ, աստված գիտե, թե քանի զափթիե, ապա լեռը շրջապատելու համար դրանց մի մասն էլ բավական է։ Նկատի ունեցեք նաև, թե որքա՞ն մեծ է հեռավորությունը Քեբուսիեից մինչև Արսուս։ Պարզ է, որ նրանք ուզում են մեզ սովամահ անել և դրա համար էլ մեծ հարձակումը կձեռնարկեն մի քանի օր հետո։ Դրա վկայությունն է նաև գեներալի մեկնումը, որը և պետք է ղեկավարի հարձակումը։ Տեսնո՞ւմ եք, թե ինչպես են մեզ հետ հաշվի նստում... Այդ գեներալն իր սպաների, կայմակամի և ուրիշ բարձրաստիճան մարդկանց հետ հավանաբար բնակություն կհաստատի իմ տանը... Ուրեմն, պետք է փորձենք ինքներս հարձակում գործել։ Հասկանո՞ւմ ես, Տեր-Հայկազուն։ Լավագույն տասնյակներից պետք է գրոհային մի խումբ կազմենք։ Դեռևս չգիտեմ, թե քանի հոգի կլինեն դրանք՝ չո՞րս, թե՞ հինգ հարյուր զինվոր։ Այսօր մինչև երեկո ամբողջ գործը ուշի-ուշով կկշռադատեմ, կանեմ բոլոր հաշվումները։ Հովիտ իջնելու համար հարդեհված տեղերում բավականաչափ ճանապարհներ կան։ Պետք է լավ հետախուզել։ Որքան գիտեմ, ներքևում միայն պարեկներ կան, որոնք գիշեր-ցերեկ հսկողության տակ են պահում հովիտն ու լեռան ստորոտը։ Այդ պարեկներին որսալը դժվար չէ։ Գիշերվա ժամը երկուսին կամ երեքին կհարձակվենք... Ինչպե՞ս... Ո՛չ, մինչև Յողոնօլուք չենք գնա... Կհարձակվենք միայն իմ տան վրա։ Թուրքական պահակախմբի թիվը, ի՛նչ խոսք, պետք է նախապես իմանանք։ Իմ կարծիքով, սպաների սպասյակներից բացի, այնտեղ կլինի, ամենաշատը, հետևակ զինվորների կամ զափթիեների մի դասակ։ Դռան մոտ հսկող պահակներին կսպանենք, արագ կգրավենք պարտեզն ու ախոռները։ Մնացածի մասին այստեղ խոսել չարժե։ Դա իմ և Ջաուշ Նուրհանի գործն է։ Աստծո օգնությամբ գեներալին, կայմակամին, մյուդիրին, յուզբաշուն ու մյուս սպաներին գերի կվերցնենք։ Եթե դա լիովին հաջողվի, ապա երկու ժամվա ընթաց-

քում Քաղաքաձոր կբերենք նշանավոր մարդկանց, ինչպես նաև ահագին գրաստներ, գուցե նույնիսկ ալյուր և պարեն։

— Գաբրիել Բագրատյանը երազ է տեսնում,— աքլորի ձայնով մեջ ընկավ դպրապետը՝ Ոսկանյանի պատվիրակը։

Մեղմաբարո Շատախյանը թափով վեր թռավ տեղից.

— Գտնում եմ, որ Բագրատյանի առաջարկը միակ խիզախ գաղափարն է։ Դա ավելի հոյակապ է, քան նախկին բոլոր մտահղացումները։ Եթե իրոք հաջողվի ամառանոցը շրջապատել և գեներալին, կայմակամին կամ յուզբաշուն գերի վերցնել, ապա լավ արդյունքի կհասնենք...

— Լավ արդյունքի չե՞նք հասնի, վարժապե՛տ,— ամբարտավան արհամարհանքով նրա խոսքն ընդհատեց Արամ Թովմասյանը։— Եթե մենք բարձրաստիճան սպաներից կամ նշանավոր պաշտոնյաներից մեկին գերի վերցնենք, ապա Թուրքերը մեզ հետ այլևս կատակ չեն անի։ Այդ դեպքում կուղարկեն գնդեր և բրիգադներ։ Եթե Բագրատյանը կարծում է, թե Թուրքական հրամանատարությունը պատանդների կյանքի փրկության համար իր հետ բանակցությունների մեջ կմտնի և զիջումներ կանի, ապա խորապես սխալվում է։ Թուրքերի համար խիստ ձեռնտու է, եթե հայ ապստամբների ձեռքով սպանվի գեներալը կամ կայմակամը։ Ամբողջ արտասահմանի և սեփական երկրի առաջ լիակատար հիմք կունենան արդարացնելու հայերին աքսորելու քաղաքականությունը։ Այդպիսի պատմությունները նրանց սրտին շատ դուր կգա։ Դուք՝ յողոնօլուքցիներդ, ի՞նչ գիտեք։ Իսկ ես տեսե՞լ եմ Զեյթունի արհավիրքները։

— Պատվելի՛, մոլորության մեջ գտնվողը ո՛չ թե Բագրատյանն է, այլ դու, քո Զեյթունով հանդերձ,— բռնկվեց Շատախյանը։— Թեև ես Յողոնօլուքում եմ ապրել, համենայն դեպս ճանաչում եմ Իթթիհաթը, ճանաչում եմ «երիտասարդ Թուրքերին»։ Իրար մեջքի կանգնած են, իրենցից ոչ մեկին չեն զոհի։ Ո՛չ մի գնով։ Պատվի խնդիր է։ Գեներալի կամ կայմակամի ամոթալի մահը նրանց համար սոսկալի անկում կլինի ժողովրդի աչքում։ Այդ բանը նրանք չեն ցանկանա։ Ընդհակառակը, ամեն ինչ կանեն, որպեսզի պատանդների կյանքն ազատեն։ Փրկագին կառաջարկեն՝ ալյուր, ճարպ, միս, նույնիսկ ազատություն...

Ուսուցիչ Շատախյանի ծայրահեղ լավատեսությունը շարժեց հոռետեսների ծիծաղը։ Նորից, ինչպես վերջին խորհրդակցության ժամանակ, սկսեց սնամեջ, կատաղի վիճաբանություն, երբ հնարավոր չէր որևէ հստակ որոշում կայացնել։ Միայն թե այս անգամ չէր միջամտում զայրացած ամբոխը։ Ճիշտ է, խորանի հրապարակում թրև էին գալիս առանձին խմբեր, բայց դրանք չափից ավելի ուժասպառ էին, տկար, ի վի-

ճակի չէին որևէ պահանջ կամ ցանկություն առաջադրելու։ Քաղաքաձորի պահակներից ոմանք ննջում էին, ոմանք էլ քնած էին կառավարչատան առաջ։

Սակայն Ասայանն ամեն ճիգ գործադրում էր վեճը բորբոքելու համար։ Նույնիսկ հանդգնեց անորոշ ձևով ակնարկել Բագրատյանի տան պարենի ենթադրյալ պաշարները, որոնց շուրջը դեռևս առասպելներ էին շրջում։ Նրա ակնարկությունը նպատակին չհասավ։ Գաբրիելն արդեն մի քանի օր առաջ իր ունեցած պահածոները բաժանել էր հյուսիսային խրամատի զինվորներին։ Զաուշ Նուրհան Էլլեոնը՝ այդ հին և ազդու ռազմիկը, սոսկալի զայրացած մոտեցավ շոր ու ցամաք դպրապետին, դաբաղած կաշվի պես կարծր մատներով բռնեց վիզը, սպառնաց, որ, եթե մեկ էլ կեղտոտ բաներ դուրս տա, կխեղդի։

Տեր-Հայկազունը, որն իր սովորության համաձայն աղմուկը որոշ ժամանակ հանդուրժում էր, խիստ դիտողությամբ փորձեց լռություն հաստատել, հայտնելով, թե գեներալի ու կայմակամի մասին թող վիճեն այն ժամանակ, երբ դրանք գերի բռնված կլինեն։ Մինչ այդ Արամ Թովմասյանի դատողության վրա լիակատար իշխանություն էր հաստատել շարությունը։ Նա անհիմն մեղադրանք տեղաց նաև ուղղամիտ վարդապետի գլխին.

— Տե՛ր-Հայկազուն, դու ժողովրդապետ ես, ամենապատասխանատու անձնավորությունը։ Բողոքում եմ քո անվճռականության դեմ։ Ամեն ինչ թողնում ես ինքնահոսի։ Ոչ ոքի հետ չես ուզում հարաբերություններդ փչացնել։ Ուղղակի հրաշք է, որ մենք, հակառակ քո... ինչպե՞ս ասեմ... անհոգությանը, մինչև այսօր կենդանի ենք մնացել...

Ամենահեղինակավոր մարդու դեմ ուղղված այս ամբաստանությունը, որն անլուր հանդգնության առաջին դեպքն էր, զայրացրեց ազատամիտ Ալթունուն։ Ծերունին լուսավորչական եկեղեցու վարդապետին գոռգոռալով պաշտպանեց բողոքական քահանայից.

— Երիտասա՛րդ, այդ ի՞նչ ես ձայնդ գլուխդ գցել։ Արածդ բանի նման չէ։ Դու մեր կյանքից անտեղյակ ես։ Փոքրիկ տղա էիր, երբ հայրդ քեզ տարավ Մարաշ։ Բերանդ եկածը դուրս մի՛ տուր։

Արամը տեսնելով, որ իրեն կարգի են հրավիրում, իբրև հիմար լռոտի և շեշտում իր անպատկառությունը, ձայնն ավելի բարձրացրեց.

— Թող այդպես լինի։ Ենթադրենք, թե ես օտար եմ և ձեզ չեմ հասկանում, թեև դուք շատ լավ գլուխ եք հանում ձեր մեջ եղած իսկական օտարներից։ Բայց ես պնդում եմ իմ առաջարկը։ Ավելին։ Վճռել եմ ինձ և իմ ընտանիքի համար կայացնել սեփական վճիռ։ Առհասարակ

որտե՞ղ է գրված, թե մենք մինչև վերջ պետք է միասին լինենք։ Ավելի խելացի վարված կլինենք, եթե գաղթականը վերացնենք։ Ամեն ընտանիք թող իր կյանքը փրկի, ինչպես կարող է։ Իրար գլխի հավաքված բազմությունն ավելի շուտ կբռնվի։ Իսկ եթե իրարից բաժան-բաժան լինելով՝ ցրիվ գանք ամբողջ ծովեզերքին, ապա այդ դեպքում գոնե մի մասը որևէ ձևով կենդանի կմնա։ Ես իմ ընտանիքը, իմ ամբողջ ընտանիքը կտանեմ իմ ընտրած ճանապարհով։ Ես ասացի, իմ ամբողջ ընտանիքը, Գաբրիե՛լ Բագրատյան...

Ավագների խորհրդի բազմաթիվ և մեծ մասամբ աղմկալից նիստերի ժամանակ Տեր-Հայկազունը երբեք չէր կորցնում իր հավասարակշռությունը։ Նույնիսկ երբ վեց օր առաջ Հրանտ Ոսկանյանին ոտքի հարված դուրս շպրտեց, ապա դա արեց միանգամայն անվրդով, առանց համբերությունից դուրս գալու։ Այժմ էլ նա հուզմունքի ոչ մի նշան ցույց չտվեց, երբ ոտքի ելավ, չափազանց գունատ դեմքով և գրեթե հանդիսավոր եղանակով հայտարարեց.

— Վե՛ր։ Մեր խորհրդակցություններն այլևս որևէ նպատակ չունեն։ Ժողովուրդը մեզ ղեկավարելու իրավասություն էր տվել։ Այսօր, երեսունութերորդ օրը, այդ իրավասությունը հայտարարում եմ չեղյալ, քանի որ ավագների խորհուրդը զրկվել է իր ներքին ուժից ու միասնությունից, այլևս ի վիճակի չէ որոշումներ կայացնելու։ Մենք այլևս ոչ ոքից հնազանդություն և հպատակություն պահանջել չենք կարող, եթե հասարակությունը քայքայել է ուզում Արամ Թովմասյանի նման մի մարդ, որը պատասխանատու է ներքին կարգ ու կանոնի համար։ Այս պահից ի վեր ամեն ինչ թող լինի այնպես, ինչպես եղել է ավագների ընտրությունից առաջ։ Թող մուխթարները դարձյալ ստանձնեն իրենց համայնքների բոլոր հոգսերը, իսկ ես, իբրև շրջանի վարդապետը, կշարունակեմ հովվել ամբողջ ժողովրդին։ Այս տեսակետից ելնելով, Գաբրիել Բագրատյանից պահանջում եմ պաշտպանությունը հետագայում ևս ղեկավարել այնպես, ինչպես առ այսօր։ Նա իր գործողությունների մեջ անկախ է։ Թող ինքը որոշի. հարձակվելո՞ւ է, թե՞ պաշտպանական այլ միջոցներ է ձեռք առնելու։ Ոչ ոք իրավունք չունի նրան առարկելու։ Իբրև վարդապետ, շուտով հանդիսավոր պատարագի եմ կանչելու ժողովրդին։ Պատարագի ժամը կհայտնեմ հետո։ Ես իրավունք չունեմ մերժելու փրկության որևէ հնարավորություն։ Պատարագից հետո Արամ Թովմասյանը թող իր առաջարկը կրկնի հասարակության առաջ և հիմնավորի։ Ժողովրդի մեծամասնությունը կվճռի իր անելիքը՝ հեռանա՞լ գաղթականից, թե՞ այսուհետև ևս ապավինել մեր ռազմիկների արիությանը, իր

գլխավոր հրամանատարի ծրագրերին։ Այդ բանից հետո ժողովուրդը վճիռ կհանի, որ յուրաքանչյուր ոք, ով դեմ գնա ընդհանուր իշխանությանը՝ խոսքով թե գործով, անհապաղ կգնդակահարվի։ Ահավասի՛կ։ Որևէ մեկը ասելիք ունի՞։

— Տասնապատիկ համաձայն ենք։ Դատարկ ասեկոսեին ուշադրություն մի՛ դարձրեք,— քրիստոնյա բժիշկ Ալիոնին, որը վաղուց արդեն կանգնած էր Գրիգորի որբացած գրքերի աշտարակի մոտ և զմայլանքով դիտում էր Բրոքհաուզի հին հրատարակության հատորներից մեկի գույնզգույն նկարները։ Ավագների մեծամասնությունն էլ դժգոհ չէր։ Շատերին դուր եկավ Տեր-Հայկազունի դիկտատորական հայտարարությունը։ Խաղաղ ժամանակաշրջանում հաճելի է առաջնորդի դեր խաղալը, բայց մահվան եզրին շատերը գերադասում են թաքնվել ժողովրդի թիկունքում։ Մուխթարներն արդեն դյուղապետեր էին, ուրիշ ոչինչ։ Բագրատյանի այգում մեծ ժողովի ընտրած խորհուրդը վերացվեց առանց բողոքի, անձայն, անշշուկ։ Տեր-Հայկազունը շախմատային իմաստուն քայլ կատարեց, իհարկե, վիթխարի զոհողության գնով։ Ժողովրդին ղեկավարող խորհուրդը մաքրվեց բոլոր անվստահելիներից և խառնակիչներից։ Վարդապետն այժմ մեն-մենակ պետք է մահվան բովով իր հոտն առաջնորդեր առ աստված։

Մարդիկ կառավարչատնից լուռ հեռացան։

Պատվելի Արամն ատում էր Տեր-Հայկազունին, Գաբրիել Բագրատյանին և այդ երկուսից շատ՝ իրեն։ Հորը կարճ ու կտրուկ հրաժեշտ էր տվել, առանց պատասխանելու նրա հուսահատական հարցերին։ Զեյթունի տարագրության օրերը նա զայրույթով էր մտաբերում։ Մի՞թե այն ժամանակ նա ամոթալիորեն չմեղանչեց ավետարանի դեմ, երբ երրորդ օրն իսկ լքեց իր հոտը, փոքրիկ երեխաներին։ Մի՞թե պարտազանց փախուստ չէր, երբ նա թույլ տվեց, որ տարագրության ճանապարհը բռնի իր պաշտոնակից եղբայրը՝ Հարություն Նոխուդյանը՝ տեր աստծո այդ սուրբ նահատակը, այդ ծեր, տկար մարդը, որն իր վճռի մեջ մնաց անսասան։ Պատվելին դառնությամբ զգաց. պատճառը միշտ էլ նույն մեղքն է, որը մարդկանց գցում է որոգայթի մեջ։ Սակայն նրա առավել ամոթալի, անարգանքի արժանի մոլորությունը, անհիմն դիվահարությունը այսօրվա անկումն էր։

Արամը որոշ ժամանակ թափառեց Դամլաջրքի բարձունքներում, ապա իջավ ծովափ, որ միտքը զբաղեցնի ձկնորսության հետ կապված անլուծելի առեղծվածով։ Իրեն բնավ ճնշված չէր զգում, բայց սարսափով նկատում էր, որ ժամ առ ժամ սիրտը կարծրանում է, դաժանանում։ Ամենից լավն այն կլինի, մտածում էր, եթե ժողովրդի վճռին չսպասի և առանց առաջարկներ անելու, Օվսաննայի ու երեխայի հետ ճանապարհ ընկնի։ Գեորգին հետները կտանեն։ Մի սպասավորը բավական է։ Հորը հավանաբար պետք է լքեն, քանի որ նա փախուստի չի դիմի։ Լողորդները Արսուսի վրայով հեշտ ու հանգիստ հասել էին Ալեքսանդրեթ։ Ինչո՞ւ երեք կայնքով երեք գիշերվա ընթացքում հասնել այդ քաղաքը։ Եթե պարոն Հոֆմանը ապաստանել է լողորդներին, ապա ինչո՞ւ պետք է մերժի բողոքական քահանային, մանավանդ, եթե ինքն էլ բողոքական է։ Բայց թե ամոթալի պարտազանցությունից հետո հոգևոր պաշտոնը պետք է համարել ավարտված։

Թովմասյանը շոշափեց դրամապանակը։ Հիսուն ոսկի ուներ։ Դա ահագին գումար էր։ Այնուհետև, հոգեկան խռովքից այլայլված, սևեռուն հայացքը գամեց իր ոտքերի տակ փշրվող ալիքներին։ Հապա Իսկուհի՞ն։

Ինչ-որ մարդիկ հոգ տարան, որ ո՛չ Գաբրիելի, ո՛չ Արամի ծրագիրն իրականանա, ո՛չ էլ ժողովուրդը վճիռ կայացնի։ Միշտ էլ ամբարտակը փլչում է, նախքան հեղեղը վրայից կանցնի, և մեծ մասամբ փլուզումն սկսվում է անսպասելի տեղից։

Հարավաբերդի շրջակայքում կար դեպի ծովը ձգվող մի լայն սարահարթ, որը ծածկված էր նոսր, չորացած խոտով։ Այստեղ էին հանդիպվանել Սարգիս Կիլիկյանն ու պաշտպանական այդ հատվածի զգուշավոր կոմիսարը՝ Հրանտ Ոսկանյանը։ Նրանցից մի քանի քայլ հեռու երկարամազ դասալիքը ուրիշ երկու կասկածելի դասալիքների հետ խեցախաղով էր զբաղված։ Խաղի ժամանակ Սիրիայի բոլոր լեզուներով երդեցիկ բացականչություններ էին ծոր տալիս, նայած թե հաջողությունը ո՛ւմ կողմն էր թեքվում։ Ուսուցիչը պոռոտախոսությամբ աշխատում էր հարգանք ներշնչել ոչ միայն Ռուսին, այլև այնքան բարձրաձայն էր խոսում, այնքան ազդու, որ բարոյազուրկ խաղացողներն անգամ հավանություն տային նրա հանդուգն մտադրություններին։ Սակայն այդ գաճաճի խռովարարական ջանքերի նկատմամբ Կիլիկյանը մնում էր անտարբեր։ Մեջքի վրա պառկած և Գրիգորի սառը ծխամորճը բերանին՝ այդ ամենը լսում էր համառ լռությամբ։ Կարծես խուլ լիներ։

— Դու կրթված, զարգացած մարդ ես, Կիլիկյա՛ն,— եռանդով ճառում էր գանգրահեր ուսուցիչը,— ուրեմն՝ դու ինձ կհասկանաս։ Ինչպես գիտես, ես շարունակ լռում էի։ Լռում էի, քանի որ իմ մտքերը չափից

ավելի լավն էին։ Այս առթիվ ոչ մի անգամ չեմ խոսել դեղագործի հետ, որն իմ հայացքներից և կարծիքներից շատ բան էր փոխ առնում։ Կիլիկյա՛ն, դու կյանքի փորձ ունես, ոչ ոք քեզ նման չի տառապել։ Երևի հավատում ես, թե Հրանտ Ոսկանյանն իր կյանքում ոչինչ չի եղել, բացի ինչ-որ կեղտոտ գյուղի ծիծաղելի ուսուցչից։ Դու իմ մասին ոչինչ էլ չգիտես։ Ես իմ մտահղացո՛ւմն ունեմ։ Ուզո՞ւմ ես լսել։ Պետք է վերջ տալ, հասկանո՞ւմ ես, վերջ տալ։ Որովհետև ի՞նչ նպատակ ունեն մնացած բոլոր բաները...

Սարգիս Կիլիկյանը արմունկին հենված՝ ձեռքի ափի մեջ արորեց Բագրատյանի նվիրած ծխախոտի մնացորդը։ Մյուսները դեղնավուն ծխախոտին չորացած տերևներ էին խառնում, սակայն Ռուսը մաքուր ծխախոտ էր ծխում, առանց ուշադրություն դարձնելու, որ այդ ձևով երկու անգամ ավելի շուտ կսպառի իր ունեցածը։ Հանձին լռակյաց Կիլիկյանի, նախկին լռակյաց Ոսկանյանը գտել էր իր համախոհին։ Ռուսի լռությունը կարող էր ծառեր տերևաթափ անել։ Մինչդեռ ուսուցչի լռությունը վեր էր ածվել սնապարծ շաղակրատության, որի ջրի երեսին լողում էին Գրիգորի չմարսված, նսեմացված մտքերի բեկորները.

— Կիլիկյա՛ն, դու ինձ հասկանում ես, ինչպես ինքս եմ քեզ հասկանում։ Բոլորովին էլ կարիք չկա, որ խոսես։ Քեզ նման ես էլ չեմ հավատում, թե աստված գոյություն ունի։ Ինչպե՞ս կարող է իրողություն լինել այդպիսի մի հիմարություն։ Աշխարհը կեղտի մի գունդ է, որ պտտվում է իր շուրջը։ Բացարձակ քիմիա և աստղագիտություն, ուրիշ ոչինչ։ Ես քեզ ցույց կտամ դեղագործի աստղագիտական գրքերից մեկը։ Ամեն ինչ կտեսնես նկարների վրա։ Ոչ մի բան, սոսկ բնություն։ Եթե աշխարհը մեկնումեկը ստեղծել է, ապա այդ ստեղծողը սատանան է։ Աշխարհը խոզ է, կեղտոտ խոզ։ Բայց նա չի կարող մեկնից խլել վերջին բանը։ Դու ինձ հասկանում ես, Կիլիկյա՛ն։ Կարող ես թքել աշխարհի դեմքին, կարող ես անպատվել, կարող ես նրա ձեռքը հանձնել առավել զորավորներին, իսկ ինքդ հեռանալ։ Տեսնո՞ւմ ես։ Եվ սա իմ գաղափարն է։ Ես՝ փոքրամարմին Հրանտ Ոսկանյանս, կարող եմ շշպռել, պատժել, կատաղեցնել թե՛ բնությունը, թե՛ սատանային և թե՛ տեր աստծուն։ Թող այդ պարոնայք թո՛ւյն ընդունեն ուսուցիչ Ոսկանյանի երեսից, որի դեմ նրանք անզոր են։ Դու միտքս կռահում ես։ Ես արդեն մարդիկ եմ գտել, որոնք հասկանում են իմ գաղափարը։ Գիշերները մտնում են խրճիթները, և Տեր-Հայկազունը իմ դեմ ոչինչ անել չի կարող... Հա՛, հա՛, հա՛... Դու տեսել ես, թե ապուշ Գևորգը ժայռի գլխից ինչպես է մեռելներին շպրտում ծով։ Սպիտակ թռչունների պես դիակները ցած են սավառնում։ Գևորգ

իմ գաղափա՞րն է։ Մենք էլ պետք է այնտեղից ցա՛ծ թռչենք՝ դու, ես, մյուսները, քանի դեռ շունչներս չենք փչել մեր կամքից անկախ։ Մի քայլ, և դու այլևս ոչինչ չես իմանա, նույնիսկ ջրին չհասած։ Միտքս հասկանո՞ւմ ես։ Այնուհետև կձուլվենք ծովին։ Այդ բանը մենք կընտրենք մեր ազատ կամքով, և բնությունը, սատանան, թուրքերն ու մյուս բոլոր սրիկաները կատաղությունից կպայթեն, քանի որ նրանց պատժած կլինենք, քանի որ նրանք դուրս կգան տակառ, իսկ մենք՝ զորավոր։ Դու միտքս հասկանո՞ւմ ես, Կիլիկյա՛ն...

Սարգիս Կիլիկյանը դարձյալ մեջքի վրա պառկած էր։ Ասես լեթարգիական քնի մեջ էր խորասուզվել։ Մեռելային գլուխն անշարժ ուղղել էր դեպի երկինք և դիտում էր արագասահ ամպերի շուն։ Ոչ մի բանից չէր զգացվում, թե լսում է Ոսկանյանի ինքնասպանության հիմնը։ Բայց երկարամազը խաղն ընդհատեց, ուշադիր նայեց բնության այդ չարասիրա հաղթողին։ Կարծես հասկացել էր «գաղափարը», և դա նրա աչքին այնքան էլ վատ չէր։ Քիչ հետո մոտեցավ.

— Երեք վրանում շա՞տ սնդուկներ կան։

Ուսուցիչը շփոթվեց։ Ինչպիսի՞ խայտառակություն. քարոզն իզուր էր անցել, իբրև «ձայն բարբառո հանապատի»։ Դրանից բացի Երեք վրանի հիշատակությունը միշտ էլ վրան տանջալից ձևով էր անդրադառնում։ Բայց, մյուս կողմից, ներկայացել էր լավագույն առիթը այս բոլոր գոռոզ և պնդագլուխ լակոտներին ցույց տալու, թե ո՛վ է ինքը՝ երևելիներից մեկը, բարձրախոհ աշխարհի ուսյալ անդամը, ժողովրդի ընտրյալ առաջնորդը։ Ոսկանյանի ձայնի մեջ թե՛ արհամարհանք կար, թե՛ սնապարծություն։

— Միայն սնդուկնե՞ր։ Սնդուկներն ի՞նչ են որ... Մեծ պահարաննե՞ր ունեն։ Պահարանների չափ ճամպրուկնե՞ր։ Դրանց մեջ այնքան կանացի զգեստներ կան, որ ամենահարուստ փաշան անգամ երազել չի կարող։ Եվ քանի՞ տեսակի։ Տիկինն օրը երեք անգամ դրանք փոխում է։ Առավոտները լայն շոր է հագնում՝ վարդագույն կամ երկնագույն։ Դրանք նման են նուրբ շղարշի։ Կեսօրվա զգեստները շատ նեղ են, և դրանց տակից երևում են ոտքերը։ Օրը վեց զույգ կոշիկ է փոխում։ Բայց դե դրանք էլ ոչինչ են իրիկնային զգեստների համեմատությամբ...

Երկարամազը հորանջելով ընդհատեց թվարկումը, թեև դա Ոսկանյանի հոգին պարուրում էր վեհացնող թախիծով, որի մշուշում մոլորված դեգերում էր ուսուցչի բանաստեղծական քանքարը.

— Ինչի՞ս են պետք շորերը։ Ես ուզում եմ իմանալ. ի՞նչ մթերքներ ունեն պահած։

Ոսկանյանը գլուխը ետ գցեց։ Դանդուր մորուքն ու դեմքի փշփշոտ մազերն այնքան խիտ էին աճել, որ դեմքից մնացել էր միայն մի փոքրիկ, դեղնավուն կետ.

— Կարող եմ տեղը տեղին ասել։ Այդ բանն ինձանից լավ ոչ ոք չգիտե։ Մթերքներն ընտրելիս և դասավորելիս տիկինն ինձ էր օգնության կանչել։ Արծաթագույն տուփերի աշտարակներ ունեն, որոնց մեջ յուղով եփած ձկներ կան։ Քաղցր հաց, թխվածքներ և շոկոլադ ունեն։ Գինով լի բազմաթիվ սափորներ ունեն։ Ամերիկյան ապխտած միս ունեն, դուլլերով ձավար և հաճար...

Հաճարի վրա Ոսկանյանը կանգ առավ։ Հանկարծ նրան տիրեց ծայրահեղ նողկանքի զգացումը։ Դա լուսավոր պահ էր, երբ ուսուցիչը գիտակցեց իր ամբողջ անհեթեթ ստորությունը, որին եռանդով և անզուսպ նվիրվել էր իր սիրային հուսախաբությունից ի վեր։ Նեղ ճակատի վրա քրտինք հայտնվեց։ Տխուր-տրտում ծունկի եկավ.

— Վերջացնե՛նք... Վերջացնե՛նք...

Սակայն Սարգիս Կիլիկյանը կարճ ու կտրուկ քրթմնջաց.

— Մենք էլ կվերջացնենք... վաղը երեկոյան...

Քնատ եղանակով ասված այս խոսքերից փոքրամարմին ուսուցչի ձեռքերը սառույց կտրեցին։ Դրանք բնավ էլ չտաքացան, երբ Կիլիկյանը շորս անտարբեր, կցկտուր նախադասությամբ հայտնեց իր մտադրությունը. Ոսկանյանը գնդակի պես կլոր աչքերն այնպես էր գնամել Ռուսի դեմքին, կարծես միայն լսողությամբ չէր կարող ընկալել այն, ինչ Հարավաբերդի դասալիքները երկար ժամանակ մտմտում էին։ Սարգիս Կիլիկյանը, մյուս ստահակներն ու նրանց ազդեցության տակ ընկած մի քանի այլ զինվորներ ձանձրացել էին Դամլաջրքից։ Ուզում էին վաղը, մութն ընկնելուն պես, ծլկել։ Ամոթալի դավաճանություն սեփական ժողովրդի հանդեպ։ Այդ բանը գուցե փոքր-ինչ գիտակցում էր միայն Կիլիկյանը։ Մյուսները ամիսներ շարունակ գայլային կյանք վարելուց հետո զրկվել էին բոլոր վսեմ գաղափարներից, որոնք խղճի խայթին սնունդ տվող միակ աղբյուրն են։ Պարզունակ գոհերկության հասած այդ մարդկանց համար Մուսա լեռը ոչ թե ռազմական խստապահանջ ճամբար էր, որտեղ իրենք պետք է հավատով ու հավատարմությամբ ծառայեին, այլ մի իջևանատուն, որի վարձն արդեն վճարել էին գրեթե քառասնօրյա զինվորական ծառայությամբ։ Այժմ սովի պատճառով, բնականաբար, խախտվել էր այդ պայմանը։ Արդեն մի քանի օր էր, ինչ Հարավաբերդցիները ոչ մի սնունդ չէին ստացել, բացի զզվելի ոսկորներից։ Մի՞թե պետք է դանդաղ սովամահ լինեին միայն նրա համար, որ ընկնեին Թուրքերի ձեռքը։ Դասալիքներն ի՞նչ առնչություն ունեին գյուղերի հետ։ Նրանց չնչին մասն էր հայկական հովտում բնակվել։ Վերջապես, այդ մարդիկ իրենց համար ապրում, վատ թե լավ սնվում էին նաև այն ժամանակ, երբ Տեր-Հայկազունն ու Բագրատյանը դեռևս չէին տիրացել Մուսա լեռան բարձունքներին։ Ոչ մեկը մտադիր չէր բաժանել հինգ հազար հոգու ճակատագիրը։ Հանուն ինչի՞։ Առանց դժվարության կարող էին իրենց կյանքը փրկել։ Կապրեին այնպես, ինչպես ապրում էին քառասուն օր առաջ։ Որոնտեսի հարավում մինչև Լաթաքսի ձգվում էր լերկ, երկար Ջեբել էլ Աքրան։ Դա Մուսա լեռան պես աղբյուրներով հարուստ չէր, ոչ էլ նրա պես կանաչ։ Բուսականությունից զուրկ էր, ճաքճքված։ ճանապարհներ չկային։ Հենց այդ տեսակետից էլ դա փախստական դասալիքների համար իդեալական ապաստարան էր։ Հարավաբերդցիների ծրագիրը պարզ էր։ Գիշերը, մոտ հարյուր հոգով, Հաբասթեի և ավերակների մոտով իջնելու էին Որոնտեսի հարթավայրը։ Քանի որ թուրք զինվորները կենտրոնացված էին լեռնահովտում և հյուսիսային բարձունքների վրա, ապա ներքևում հավանաբար մի քանի զափթիական պահակատուն կար, որոնք գիշերները հսկողություն էին անում լեռան ստորոտում և էլ էսքելից ոչ հեռու, Որոնտեսի կամրջի վրա։ Հազիվ թե վտանգավոր դիմադրության հանդիպեին։ Ընդհարում լիներ, թե չլիներ, հարյուր հոգին, անկասկած, կկարողանային արագ կտրել անցնել նեղ հարթավայրը և արևածագին հասնել լեռնաշղթան։ Գաղտնի խորհրդակցությունների ժամանակ առավել ազնիվ դասալիքներից մի քանիսը հարց առաջ քաշեցին, թե արդյոք հնարավոր չէ՞ իրենց մտադրության մասին հայտնել գաղթականների ղեկավարությանը։ Սակայն այդ հարցի պատճառով քիչ մնաց նրանց գանահարեին։ Ի՞նչ կլիներ այդ թեթևամտության հետևանքը։ Բագրատյանն ու Զաուշ Նուրհանը, ըստ երևույթին, նրանց գրողի ծոցը կուղարկեին, բայց մինչ այդ, հյուսիսային դիրքերի անձնակազմի միջոցով, լիովին զինաթափ կանեին, կխլեին հրացանները։ Օրինավորությունը տվյալ դեպքում տեղին չէր, ինչպես հաճախ է պատահում այս աշխարհում։ Դասալիքների մեջ ազնիվ մարդկանց թիվը, ընդհանուր առմամբ, սոսկալի քիչ էր, մինչդեռ անազնիվների հիմնական թևը վիթխարի մեծամասնություն էր կազմում։ Այդ հանցավոր թևը չէր ուզում սահմանափակվել սուսուփուս անհայտանալով։ Դրա համար, անշուշտ, հիմնավոր պատճառներ կային։ Ամենից առաջ ռազմամթերքի պակասը։ Դրանից էր կախված ավազակախմբի զալիք գոյությունը։ Այս նպատակն էր հետապնդում երկարամազը, երբ խարույկի պատճառով ընդհարվելիս, հանդգնորեն փամփուշտ էր պահանջում Բագրատյանից։ Զաուշ Նուրհանը

ծայրահեղ խնայողությամբ էր օգտագործում ռազմամթերքը։ Ճակատամարտի ժամանակ մարտական արկղները բերում էին խրամատները, և ավագների խորհրդի կողմից վստահված անձը ժլատորեն բաժանում էր փամփուշտները։ Այժմ դասալիքներից յուրաքանչյուրի մոտ միայն հինգական փամփուշտ կար։ Անտանելի էր վիճակը։ Մինչդեռ կառավարչատանը իրար վրա դարսված արկղներ և փամփուշտներով լցված տաշտեր կային։ Չէ՞ որ Նուրհանի արհեստանոցը անդադրում գործում էր։ Ոչ միայն օգտագործված պարկուճներն էին լիցքավորում, այլև նոր պարկուճներ ու գնդակներ էին պատրաստում։ Դասալիքներն անդիմադրելի պահանջ էին զգում իրենց ռազմամթերքի պակասը լրացնել ընդհանուր պաշարի հաշվին։ Այս նպատակով պետք է համապատասխան ձևով այցելեին կառավարչատունը, բայց թե ե՛րբ և ինչպե՛ս, դա դեռևս որոշված չէր։ Նման դեպքում պետք է Քաղաքաձորն էլ տնտղեին, հետները տանեին ինչ որ հարկավոր էր։ Ամայի Ջեբել էլ Աքրայի բարձունքներում ապրելու համար գործածության որոշակի պարագաներ էին պետք, որոնք Դամլաջրքի ժողովրդին վաղուց արդեն պետք չէին, քանի որ այդ ժողովրդի ճակատագիրը վճռված էր։ Եթե Քաղաքաձորում պատահեին չսիրված մարդկանցից մի քանիսը, ինչպես, օրինակ, Տեր-Հայկազունը, դասալիքները պետք է դա նկատի ունենային։ Վարդապետը երբեք չէր թաքցնում դասալիքների հանդեպ ունեցած իր ատելությունը և ամեն առիթով զգացնել էր տալիս, գործի դնելով գաղթականության օրենքի ամբողջ խստությունը։ Ընդհանուր հաշիվներով, նա ամբողջ Հարավաբերդը հնգօրյա ծոմապահության էր դատապարտել։ Բայց դրանով էլ չէր գոհանում։ Առանց անհարմար զգալու, հարկ եղած դեպքում այս կամ այն դասալիքին ենթարկում էր խիստ գանահարության։ Այնպես որ վատ չէր լինի մի փոքրիկ հաշվեհարդարի նստել։ Այս իմաստով, փախուստի ծրագրին միանում էր երկրորդը՝ խռովության ծրագիրը, որով և գործը գրեթե գլուխ կգար։ Թե որքանով էր Սարգիս Կիլիկյանը մասնակցում այդ դավադրությանը, դա հավիտյանս հավիտենից չի պարզվի, ճիշտ այնպես, ինչպես չհաստատվեց նրա մասնակցությունը իշխան Գալիցինի դեմ կատարված մահափորձին։ Շարունակ մեջքի վրա պառկած էր և կարծես ո՛չ Ոսկանյանի ցնդաբանությունն էր լսում, ո՛չ էլ երկարամազի կեղտոտ ակնարկները։ Եթե մահկանացու մարդը կարողանար իր ներքնաշխարհը տեսնել, ապա այդ դեպքում Սարգիս Կիլիկյանն իր ներսում միայն մի բան կգտներ՝ ա ն հ ա մ բ ե ր ո ւ թ յ ո ւ ն։ Այդ նույն անհամբերությամբ էին նրա գլխավերևում սահում անցնում ամպերը։ Մեռելային դիմակի տակ բորբոքվել էր մի բանից մյուսը տեղափոխվելու կարոտը։

Ոսկանյանն արդեն ոտքի էր ելել, դուրս գցել իր աքլորային կուրծքը։ Կարծես ինքնասպանության ջատագովն ուզում էր ապացուցել, թե ինքը ոչ մի հանդուգն ոճրագործությունից ետ չի կանգնի։ Նա, իհարկե, իր արիությունը կապացուցեր միայն այն դեպքում, եթե դասալիքների բազմության միջից դուրս վազեր, հայտներ դավադրության մասին։ Բայց Ոսկանյանը տեղից չշարժվեց, չգնաց գաղթականի ժողովրդին նախազգուշացնելու։ Սեղմված շուրթերով մնաց կանգնած և տարուբերեց գլուխը։ Կիլիկյանն ու մյուսները կարող էին դա համարել զարմանքի նշան։ Ուստի՝ չի ուզեցում դավադիրներին մատնելու մտադրությունը թպրտում էր, ինչպես թռչունը վանդակում։ Բայց նրան ավելի տանջում էր այն սնոտի երկյուղը, թե իրեն Կիլիկյանն ու մյուսները կարող են համարել վախկոտ և ոչ թե ավազակների մեջ ընկած ավազակ։ Եվ այնպես պատահեց, որ, անկախ նրա կամքից, շրթունքներից դուրս թռան անորոշ, բայց կործանարար ու դավաճանական խոսքեր.

— Վաղը, կեսօրից հետո, Տեր-Հայկազունը գոհարանական արտակարգ պատարագ է անելու։ Բայց զինվորները մնալու են դիրքերում...

Այդ ասելուց հետո նա խոժոռված և ստրկահաճորեն նայեց դասալիքներին, ճպճպացնելով աչքերը։ Նրա հայացքից կարելի էր կռահել, որ դա արդեն ոչ թե անտանելիորեն ամբարտավան մի հոպոպավոր է, այլ հուսահատ վախկոտի մեկը։ Դավադիրներն արժանի ձևով գնահատեցին Ոսկանյանի ինքնանվաստացումը.

— Վարժապե՛տ, որպեսզի լեզուդ քեզ քաշես, էսօր ու էգուց տեղից չպետք է շարժվես։

Դասալիքները կոպտաբար առաջ հրեցին իրենց կառավարական կոմիսարին, թեև դրա կարիքը բնավ չէր զգացվում, քանի որ ուսուցիչը, իբրև կամավոր գերի, առաջ ընկավ, ցույց չտալով փախուստի ոչ մի մտադրություն։

Հիրավի, Ոսկանյանից ոչ մի վայրկյան աչք չէին թեքում։ Դիտակայանից մեկում տխուր նստած՝ սա դիտում էր ներքևում տարածվող նեղ ճանապարհի ժապավենը, որը Անթաքիեից ձգվում էր դեպի Սուեդիա։ Ջարհուրանքով լցված սրտում թույլ առկայծում էր Գաբրիելի, Ժուլիեթի, Տեր-Հայկազունի հանդեպ ունեցած ատելությունը։ Ինչպե՞ս էր փափագում, որ թուրքերը գրոհի անցնեն։ Սակայն սրանք կարծես գլուխները բաց քարուտում փորձանքի տակ դնելու ոչ մի նպատակ չունեին։ Որոնտեսի դաշտավայրով անցնող ճանապարհի վրա խաղաղ եռուզեռ էր տիրում։ Ո՛չ զինվորներ էին երևում, ո՛չ զափթիեներ։ Եզասայլերը,

բեռնավորված ավանակները և նույնիսկ մի քանի ուղտեր դանդաղ անցնում էին, գնում Սուեզիայի կիրակնօրյա շուկան։ Թվում էր, թե Մուսա լեռան բարձունքներում այլևս ոչ մի հայ չկա։ Միայն Եդիշեի մոտ, լեռան ստորոտում, հանկարծ փոշու ամպ բարձրացավ։ Երբ փոշին ցրվեց, երևաց զինվորական մի փոքրիկ, մոխրագույն ավտոմեքենա։

Մուսա լեռան քառասուներորդ օրն էր, սեպտեմբերի 8-ը, բացարձակ սովի երրորդ օրը։

Կանայք այսօր իրենց խնայեցին, չուզեցին իզուր շարշարվել, բանջարեղեն որոնել, որից դառնահամ ապուր էին պատրաստում։ Դա ավելի չէր օգնում, քան աղբյուրի ջուրը։ Եթե սոսկ ջրի վրայից մի բան կրծեին՝ կանաչ, հյութալի ցողուն, կեղևահան արմտիք, ապա դրանով էլ զբաղեցրած կլինեին իրենց ծնոտները։ Բոլորը, ովքեր դեռևս կարող էին ոտքի վրա մնալ, տեղավորվել էին աղբյուրի մոտ՝ ծերունիներ, կանայք, աղջիկներ, երեխաներ։ Տարօրինակ տեսարան էր, երբ մեռելատիպ, ուժասպառ մարդկանցից մեկնումեկը, առանց ծարավ զգալու, կռանում էր ջրի վրա, ձեռքի ափով ջուր խմում։ Կարծես դա ինչ-որ անխուսափելի պարտականություն էր։ Զարմանալի էր նաև, թե ինչպե՞ս չէին ցամաքում աղբյուրների ստորերկրյա ակունքները, չնայած շաբաթներով անձրև չէր եկել, և հազարավոր մարդիկ ջուր էին խմում։ Այդ մարդիկ արդեն քարշ գալով էին աղբյուրներին մոտենում, ձեռքերով ու բերաններով կառչում կյանքից։ Այլևս ջուր չէին տանում սափորներով ու դույլերով։

Սակայն չի կարելի ժխտել, որ սովյալները բացարձակ ծոմապահության երրորդ օրն իրենց ավելի լավ էին զգում, քան մինչ այդ։ Աղիքների ջղաձգությունը, ստոծանու ցավը տեղի էին տվել թեթև անզգայության։ Շատերը գետնին տարածված՝ խոր շունչ էին քաշում։ Սեփական մարմինները նրանց աչքին արդեն թվում էին բաց օդում կարծրացած ծակոտկեն գաջ։ Ոմանք դարձյալ տարված էին իրենց երանելի երազանքներով։ Նրանց երբեմն թվում էր, թե իրենց մաշկի տակից աստիճանաբար թևեր են աճում, և եթե կամենան, կարող են համարձակորեն սկսել իրենց առաջին թռիչքը։ Շատերն էլ, ինչ-որ տարօրինակ զվարթությամբ բռնված՝ երկար-բարակ պատմություններ էին անում իրենց նախկին կյանքի վերաբերյալ։ Դրանք սեփական տան ու արհեստի, մեղուների ու շերամի, որթատունկի ու փայտի մասին հյուսված շինծու, անհիմն առասպելներ էին, որոնց վրա իրենք ավելի շատ էին ծիծաղում։ Սակայն բոլորի վրա էլ ինչ-որ մեղկության փափուկ շղարշ էր տարածվել։ Փոքրիկ երեխաները խոր քուն էին մտնում, իսկ ավելի չափահասները չէին

աղմկում։ Նույնիսկ պատանեկան ղորաբանակը, որն այլևս ոչ մի պարտականություն չուներ, ոչ մի ծառայություն չէր կատարում, երկյուղ ներշնչող անշարժության էր մատնվել։ Կեսօրից առաջ մեռան երեք ծերունի և երկու կրծքի երեխա։ Մայրերը թշվառ զավակներին ամուր սեղմեցին իրենց ամայացած ստինքներին, մինչև փոքրիկները սառեցին և փայտացան։

Վերջին օրերի փոփոխական փոթորիկն այսօր ավելի էր սաստկացել։ Կարճատև գրոհներով առաջ էր նետվում հարավ-արևելքից, սլանում սարահարթի վրայով։ Քաղաքաձորն այնքան էլ խորն ընկած տեղում չէր և պաշտպանված չէր քամու բերած մանր ավազի ամպերից։ Հաճախ այն տպավորությունն էր ստացվում, թե Դամլաջրքի ամբողջ լանջը ծածկող անտառով մեկ նորից բորբոքվելու է վիթխարի հրդեհը։ Տափաստանային անտանելի տոթն իր կեռնեխային ճիրաններով նորից վրա էր տվել մարդկային ամբողջ կյանքին։ Կաղնիների և հաճարենիների տերևները վաղուց էին չորացել։ Բայց թփերի ու բաղեղազգիների մշտադալար կաշվանման տերևները ևս կնճռոտված կուչ էին եկել, փակվելու վրա էին։ Մինչդեռ մարդիկ բթացել էին և այլևս չէին տառապում եղանակի վատացումից։ Նույնիսկ չէին նկատում, որ իրենց բերանի խոռոչները, քիմքը, լեզուն ու կոկորդը բորբոքվել են ծովափնյա ավազի բյուրեղանման հատիկներից։

Ի հակադրություն գաղթականի ժողովրդի, խրամատներում գտնվող տղամարդիկ դեռևս բավական կենսունակ էին և գործելու ուժ ունեին։ Նրանք ևս շատ հեռու էին կուշտ լինելուց։ Բագրատյանի տանը եղած միսն ու պահածոները հազիվ կարողացան քաղցը փոքր-ինչ մեղմացնել։ Զրկանքները պաշտպաններին տարօրինակ կերպով գրգռում էին, բորբոքում կռվելու արբեցուցիչ մոլուցքով։ Այդ նոր իրադրությունն այն առավելությունն ուներ, որ Գաբրիելը կարող էր նախապատրաստել իր գիշերային հարձակումը, առանց մտահոգվելու՝ ժողովուրդն ուզո՞ւմ է հեռանալ գաղթականից, թե՞ ոչ։ Յուրաքանչյուրի վրա վստահ էր։ Հենց այսօր, գիշերը, ուզում էր թուրքերին հասցնել զորավոր հարված։ Հարձակման մանրամասնությունները մշակված էին ամենայն ճշգրտությամբ։ Գաբրիելը ոչինչ չէր մոռացել։ Հաշվի էր առել յուրաքանչյուր մարդու անելիքը, յուրաքանչյուր րոպեն։ Լինելով գիտնական և ունենալով թեորետիկ հակումներ, ոչինչ չէր թողել բախտի հույսին։ Շարունակ նոր հակասություններ էր գտնում, մի հնարավորությունը հակադրում մյուսին։ Հարձակվող խմբի վերադարձի ճանապարհը ապահովված էր հարվածային զորախմբի խելացի դիրքավորմամբ։ Հարվածայինները

երեք ժամ առաջ արդեն պետք է դարան մտած լիներին։ Գաբրիելը դրանով էլ չբավարարվեց։ Վճռեց հյուսիսային բարձունքներից ամբողջ օրը կեղծ հարձակում ցուցադրել, անսպասելի հրաձգությամբ ամբողջ օրը անհանգստացնել թուրքերին, որպեսզի նրանք ավելի շատ զինվորներ քաշեին դեպի լեռան բարձունքները, ավելի քիչ ուժեր թողնելով հովտում։ Նրա տակտիկական ձգտումներին անսպասելիորեն ընդառաջ եկան թուրքերը։ Սրանց նախապատրաստություններից դժվար չէր եզրակացնել, որ քսանչորս ժամվա ընթացքում ամեն ինչ վճռված կլինի։ Հյուսիսային լեռնաթամբի թիկունքում ընկած բարձունքներին մոտալուտ հարձակման եռուզեռ էր տիրում։ Հայերը դիտում էին ծառերի ու թփերի արանքով դանդաղ ու երկյուղով առաջ շարժվող հետևակ զինվորների շարքերը։ Սրանք ուսերին դրած բերում էին հաստ ծառաբներ, աղմուկով ցած գլորում բարձունքի եզրին։ Այդ վիթխարի գերանները, անկասկած, շարժական թաքստոցների դեր էին խաղալու, երբ զորաշղթաները սողալով առաջ շարժվեին հարձակվելու համար։

Բագրատյանն ու Զաուշ Նուրհանը առաջավոր խրամատում մոտենում էին զինվորներին, ստուգում նշանառությունն ու ճիշտ հեռավորությունը։ Երբ թուրքերից մեկնումեկը ծառերի արանքով շատ էր առաջ գալիս, հրամայում էին կրակ բացել։ Այդ ձևով մինչև կեսօր սպանվեցին մի քանի թուրք։ Ամեն անգամ մահացու գնդակին թուրքերը պատասխանում էին անկանոն հրաձգությամբ։ Գնդակները սուլելով անցնում էին պաշտպանների գլխի վրայով կամ խրվում խրամատի առաջ դիզված քարակույտի մեջ։ Հայ ռազմիկները անզուսպ հպարտությամբ նայում էին իրենց նոր ամրություններին։ Դրանք արդեն այնքան զորավոր էին, որ կարող էին խորտակվել միայն հրետանու հարվածներից։ Սակայն ոչ մի բանից չէր երևում, թե կա այդպիսի հրետանի։ Քաղցից առաջացած տարօրինակ արբեցումը հայերի մեջ խենթ խիզախություն էր բորբոքում։ Ամեն հնարքով աշխատում էին թուրքերին հարձակման դրդել։ Խրամատներից դուրս էին մագլցում, պարում թմբերի վրա, ոմանք նույնիսկ համարձակորեն անցնում էին արգելքի սահմանը։ Զաուշ Նուրհանը և ենթասպաները մեծ դժվարությամբ էին կարողանում զսպել իրենց գլխից ձեռք քաշած այդ խիզախների խենթությունը։ Թուրքերը տեղի չէին տալիս։ Ինչպես երևում էր, նրանց ծայրահեղ շփոթության էր մատնել այն մարդկանց կենսունակ խրոխտությունը, որոնց մասին լսել էին, թե դրանք կամ կիսաքաղց վիճակում են կամ լիակատար քաղցի մատնված։ Եվ երբ ժայռերի մեջ պահակություն անող զինվորների մի մասն ինքնագլուխ կերպով առաջ նետվեց, թուրք պարեկների վրա կրակ բացեց և

անվթար ետ դարձավ, կառավարական զորամասերը նորից պարզ համոզվեցին, որ անիծյալ ցեղի գործերն այնքան էլ վատ չեն։

Միջօրեին Տեր-Հայկազունն այցելեց ռազմիկներին։ Գաբրիելը խնդրեց, որ նա աղոթք կարդա խրամատներում, քանի որ զինվորները չէին կարող ներկա գտնվել գոհաբանական մեծ պատարագին։ Այդպես էլ եղավ։ Այնուհետև Գաբրիելը վարդապետին հայտնեց, թե զինվորներին ժողովրդի վճռի մասին հայտնելն ավելորդ է, քանի որ Զաուշ Նուրհանի միջոցով բոլորն էլ հայտարարել են, թե միշտ և ամենուրեք հղնան իրենց գլխավոր հրամանատարի ետևից։ Տեր-Հայկազունը զարմանքով էր նայում գործելու ավյունով տոգորված Գաբրիելին։ Դեռևս մի քանի օր առաջ նա կարծում էր, թե գլխավոր հրամանատարի հոգին հազիվ թե դիմանա որդու մարտիրոսական մահվան վշտին։ Քաղաքաձոր վերադառնալիս Տեր-Հայկազունը եզրակացրեց, որ Բագրատյանի հոգին ուրիշ ոչինչ չի հաղթահարել, բացի իր սեփական էությունից։ Եվ դա, երևի, տեղի է ունեցել այս ամենալարված իրադրության վերջին ժամերին։

Գեներալ Ալի Ռըզա բեյը օսմանյան բանակի բրիգադային ամենաերիտասարդ գեներալներից էր, հաղիվ քառասուն տարեկան։ Արդեն Լիբիայում ու Բալկանյան պատերազմում աչքի էր ընկել իբրև հակատային սպա և այժմ պատկանում էր Ջեմալ փաշայի մերձավորագույն սպաների թվին։ Ալի Ռըզան արտաքուստ և ներքուստ իր պետի՝ Սիրիայի պենասեր դիկտատորի հակապատկերն էր։ Նա արդիական և եվրոպական զինվորականության ամենացայտուն ներկայացուցիչներից էր։ Պետք էր միայն տեսնել, թե Բագրատյանի ամառանոցի հյուրասրահում ինչպես էր նա ետ ու առաջ քայլում, իսկ սպայական ժողովի մասնակիցները սսկված ու պապանձված հետևում էին նրա բարեկիրթ քայլվածքին։ Ամբողջ տարբերությունը պարզ կզգացվեր, եթե մարդ երիտասարդ գեներալին համեմատեր վիրավոր յուզբաշու հետ, որը դեռևս վիրակապից կախված թևով, հարգալից կեցվածքով սպասում էր իր վերադասի խոսքին։ Գեներալի կողքին յուզբաշին գլանակի ծխից սևացած մատներով և հալումաշ եղած դիմագծերով թվում էր պղտոր, եթե չասենք կեղտոտ։

Գեներալը դժգոհությամբ բացեց հյուրասրահի պատուհանները, որ դուրս գան սպաների գլանակներից բարձրացող ծխի ամպերը։ Ինքը ո՞չ ծխում էր, ո՞չ խմում։ Ո՞չ կանանց էր սիրում, ո՞չ տղամարդկանց։ Լուրեր էին շրջում, թե նա հիվանդ ստամոքսի պատճառով սնվում է բացառապես այծի հում կաթով։ Հայտնի էր իբրև պատերազմի ճգնավոր։

Ահա նրան մոտեցավ մի օնբաշի և պաշտոնական ինչ-որ գրություն մեկնեց։ Գեներալը թեթևակի աչքի անցկացրեց զեկուցագիրը, ապա բացեց իր գունաթափ շրթունքները։

— Հայերի հարձակման պատճառով մենք հյուսիսում կորուստներ ունենք... Վաշտի հրամանատարին խիստ պատասխանատվության կենթարկեմ... Այստեղ գտնվող պարոնայք թող սա ընդունեն ի գիտություն... Նորին գերազանցությանը ես խոստացել եմ, որ ռազմական ամբողջ գործողության ընթացքում մեր կողմից ոչ մի մարդ չպետք է զոհվի... Պետք է քարուքանդ անենք ոճրագործների որջը, այլապես սա անասելի խայտառակություն է... Առանց այն էլ ամոթ է, որ բանը այստեղ է հասել։

Գեներալը հայացքով որոնեց, գտավ իր համհարզին.

— Դեռևս ոչ մի տեղեկություն չկա՞ երկու մարտկոցների մասին։

Համհարզը կարճ ու կտրուկ պատասխանեց՝ «ոչ»։ Արդեն երկու օր անհամբեր սպասում էին Հալեպից ուղարկվելիք լեռնային հրանոթներին։ Քանի որ դրանք պետք է բերվեին ոչ թե Անթաքիեով, այլ Բեյլանով, դժվարանց լեռնաշղթայի վրայով, ապա գործը շարունակ ձգձգվում էր։ Այդ պատճառով էլ գեներալն ստիպված էր գլխավոր հարվածը հետաձգել մի օրից մյուսը։

Ալի Ռըզան հայտնվեց երիտասարդ սպաներից մեկի առաջ.

— Քանի՞ կիլոմետր հեռախոսալար ունեն վաշտերը։

Սպան գունատվեց, ինչ-որ անորոշ բան կմկմաց։ Ալի Ռըզան ոչ մի ուշադրություն չդարձրեց նրա ասածին.

— Ինձ համար միևնույն է։ Դուք ինձ պատասխան կտաք, եթե մինչև երեկո, մայրամուտից ուղիղ մեկ ժամ առաջ, այս տանը պատրաստ չլինի հեռախոսային կայանը, որով պետք է կապ հաստատվի լեռան հետ՝ և՛ հյուսիսում, և՛ հարավում։ Թե այդ բանը ինչպե՞ս գլուխ կբերեք, դա Ձեր գործն է։ Յուզբաշու վաղվա հարձակման մասին կպահանջեմ զեկուցել հեռախոսով։ Այժմ կարող եք գնալ...

Դժբախտ սպան, որը ոչ մի պատկերացում չուներ, թե վաշտերը ինչքան հեռախոսալար ունեն, և որի համար տրված առաջադրանքը անլուծելի էր, հուսահատված դուրս նետվեց։

Գեներալը չափազանց խստորեն գոչեց.

— Յուզբաշի՛... Շատ եմ խնդրում...

Վիրավորը տեղից վեր թռավ, մոտեցավ։ Երկուսով մտան դատարանի նախասրահը։ Ալի Ռըզան թռուցիկ, սառը հայացք նետեց կապիտանի կապված թևին.

— Յուզբաշի՛, ես այսօր Ձեզ լավագույն հնարավորությունն եմ տալիս քավելու Ձեր ծանր պարտության մեղքը։ Սակայն դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե գործը գլուխ բերեք առանց կորուստների։ Յուրաքանչյուր վիրավորված զինվորի համար ինձ հաշիվ եք տալու։ Խնդրում եմ ըստ այսմ էլ շարժվեք... Դասալիքների հետ կապված խնդիրը լիովին պարզվա՞ծ է։

Յուզբաշին վիրավոր թևով ազդու շարժում կատարեց, կարծես ուզում էր ապացուցել, որ ինքը կատարել է ավելին, քան թելադրում է իր պարտքը։

— Պարոն գեներալ, երեկ ես Հաբասթեի կողմերից անձամբ մոտեցա եզրային խրամատներին։ Բոլորն էլ դատարկ են։ Խաժամուժը հեռացել է դիրքերից։ Արևամուտից մեկ ժամ առաջ էր...

— Լավ։ Իսկ Ձեր շորս վա՞շտը։

— Հավատացած եմ, որ գիշերային քողարկված առաջխաղացումը լիովին հաջողվել է։ Ոչ մի լապտեր չէր վառվում։ Երեկ ամբողջ օրը զորամասերը Հաբասթեից դուրս չեն եկել։ Այժմ նրանք ժայռերի տակ լիովին պատսպարված դիրքերում հանգստանում են։ Այնտեղ են նաև իմ զորախմբերին պատկանող երեք գնդացիրները։

— Յուզբաշի, երեկոյան կլինեք հեռախոսի մոտ։ Եթե բարձունքը գրավել եք, ուրեմն՝ առաջ մի՛ գնացեք։ Ես չեմ ցանկանում...

Դրանով խոսակցությունն ավարտվեց, և Ալի Ռըզան արդեն մի կողմ շրջվեց։

Բայց յուզբաշու ձայնը նրան կանգնեցրեց.

— Պարո՛ն գեներալ, խոնարհաբար խնդրում եմ լսել մի խոսք ևս... Դա հետևյալ խնդիրն է... Այդ դասալիքները, ինչպես ինձ հայտնել են, միայն հայեր չեն... Ինչևէ, երեկ ինձ ներկայացավ դավանափոխ մի հայ, որն արդեն ճշմարիտ հավատ է ընդունել։ Փաստաբան է, Հեքիմյան ազգանունով... Այդ մարդը պատրաստ է հայերի հետ բանակցել, որ նրանք դիրքերը հանձնեն կամավոր... Երևի հարկ լինի որոշ զիջումներ անել, որպեսզի բանը վերջանա առանց արյունահեղության...

Գեներալը հանգիստ լսում էր, բայց վերջին խոսքի վրա կապիտանին հանկարծ ընդհատեց.

— Վե՛րջ տուր, յուզբաշի՛։ Մենք չենք կարող թույլ տալ, որ մեզ բամբասեն, թե այդ սատանա հայերի հաշիվը մաքրեցինք միայն հայի դավաճանությամբ։ Հիշեցեք, թե մեզ ինչպե՞ս կծաղրի թշնամական մամուլը, ինչպե՞ս կխայտառակի Նորին պայծառափայլությանն ու Ցորրորդ բանակը։

Բակի մանր խճաքարերը խշխշացին ինչ-որ մարդկանց ծանրաբալ ոտքերի տակ։ Պեպենոտ մյուդիրի ուղեկցությամբ ներս մտավ վիթխարամարմին, պարարտ կայմակամը։ Ձեռքը անտարբեր տարավ դեպի ֆեսը.

— Վերջապե՞ս, պարոնա՛յք։ Գեներա՛լ, երեք ժամ հետո ձեր մարտկոցները կլինեն Զանդերանում։ Կարգն ու կանոնը ձեզ մոտ շատ ավելի վատ է, քան մեզ մոտ...

Ալի Ռըզային կատաղություն պատճառեց հաստափոր և ճարպակալած կայմակամը։ Սա, երևի, վճռել էր վիրավորել զինվորականներին։ Երբ ձեռքն արդեն դրել էր դռան բռնակին և պատրաստվում էր սենյակից դուրս գալ, ետ դարձավ և ամբարտավան եղանակով ասաց.

— Հույս ունեմ, որ մեր զինված ուժերն ինձ չորրորդ անգամ չեն հիասթափեցնի։

Քրիստափորն ու Միսակը Երեք վրանի հրապարակում պահակություն էին անում միայն գիշերները։ Այժմ, ցերեկվա ժամը չորսին, կանայք մնացել էին առանց հսկողության։ Այրի Շուշիկը՝ Հայկի մայրը, Ժուլիեթին խնամում էր որքան սրտաշարժ, նույնքան էլ անճարակ ձևով։ Այդ օգնությունն էլ անհրաժեշտ էր, քանի որ Մայրիկ Անթառամը նորից ստանձնել էր հիվանդանոցի տնօրինությունը և միայն երբեմն էր այցելության գալիս։ Իսկուհու խնդիրը բոլորովին այլ էր։ Ժուլիեթը ֆիզիկապես փոքր-ինչ կազդուրվել էր, թեև դեռ այնքան հյուծված էր, այնքան թույլ, որ ամեն քայլափոխին ուժասպառ էր լինում։ Դեմքին երկնագույն սպիտակություն էր հայտնվել կամ ավելի ճիշտ՝ գունաթափություն։ Այդ դեմքը, սարսափելի հիվանդությունից հետո, լիովին տարբերվում էր շրջապատում եղած արևախանձ դեմքերից։ Ժուլիեթն ամեն օր մեկ-երկու ժամ անց էր կացնում անկողնուց դուրս։ Նստում էր հայելու փոքրիկ սեղանի առաջ, գլուխը հենում ձեռքերին, անշարժանում։ Երբեմն էլ ծունկի էր գալիս անկողնու առաջ և դեմքը սեղմում հայրենիքի վերջին բեկորին՝ փոքրիկ, ժանեկազարդ բարձին, ինչպես անում էր առաջ, հուսահատության պահերին։ Սակայն հոգեկան խանգարման ամենակասկածելի նշանն այն էր, որ Ֆրանսուհու մեջ մարել էր գեղեցիկ ու մաքուր լինելու նախկին բուռն ձգտումը։ Վրանում բաց դրված էր սպիտակեղենի ճամպրուկը։ Բայց Ժուլիեթը ձեռք չէր տալիս դրան, ոչ էլ նոր սպիտակեղենի կարիք էր զգում, թեև տրորված էր հագի շապիկը։ Մայրիկ Անթառամը նրան այդ շապիկը տվել էր այն օրը, երբ իջել էր ջերմությունը։ Ժուլիեթը կարծես չէր էլ նկատում, որ իր հագի բատիստե նուրբ շապկի աջ ուսաթելը կտրվել էր, մերկացրել նի-

հարած կրծքի մեծ մասը։ Հակառակ իր ներքնաշխարհում ծնվող բաղձալի պատկերներին, ձեռք չէր տալիս «օդը պրենտամի» սրվակին, որի մեջ դեռևս մնացած օծանելիքով կարող էր թարմացնել իր մարմնի չոր-բացած մաշկը։ Տնային մաշիկները երբեք չէր հագնում, թեև դրանք դրված էին մահճակալի տակ։ Ուժերը ներածին չափ մի քանի քայլ ոտաբոբիկ ետ ու առաջ էր շարժվում։ Աչքերի մեջ ո՛չ տառապանք կար, ո՛չ երկյուղ։ Կար միայն քարի պես ամուր պրկված պատրաստակամություն՝ պաշտպանվելու նրանցից, ովքեր կարող էին նրան նորից ետ քաշել դեպի կյանքը։

Շուշիկը Ժուլիեթի մեջ տեսնում էր մի մայր, որը միակ որդու զարհուրելի մահից հետո կորցրել է դատողությունը։ Ֆրանսուհու մեջ տեսնում էր իր սեփական դժբախտությունը, որից ինքը խույս էր տվել աստվածային անհասանելի հրաշքով, թեև դրան արժանի չէր։ Հայկը ո՞ղջ էր։ Ավելին. որդու կյանքը առհավետ ապահովության մեջ էր, քանի որ նրա հովանավորներն էին Ջեքսոնն ու Ամերիկան։ Այս բառերը Շուշիկի աչքում գերերկրային զորություն ունեին։ Ջեքսոնը ոչ թե մարդ էր, այլ, գուցե, ինքը՝ հրեշտակապետը, որի ձեռքին հուրհրատում էր հրեղեն սուրը։ Այսպիսով, տեր աստված Շուշիկին այնպիսի ողորմածություն էր շնորհել, որպիսին դեռևս չէր շնորհել Մուսա լեռան բարձունքներին ապավինած մայրերից և ոչ մեկին։ Տերը գթացել էր մի մահկանացուի, որը շատ-շատերի պես երկնքի զայրույթը շարժող մեղավոր կյանք էր վարել, թեև վարդապետն իր քարոզներով ջանում էր ետ պահել այդ մեղավոր կյանքից։ Մի՞թե այրին այժմ չպետք է գիշեր-ցերեկ քրտինք թափեր, ծառայեր և երախտագիտություն հայտներ, երախտագիտություն հայտներ և ծառայեր։ Սակայն ո՞ւմ հայտներ իր երախտագիտությունը, ո՞ւմ ծառայեր, եթե ոչ Ժուլիեթին՝ ճակատագրի անողոք հարվածների տակ ընկած մի այլ մոր։ Ֆրանսուհին հարուստ տիկին էր, ազնվատոհմ, օտարազգի։ Որքա՜ն անծայրածիր էր Շուշիկի և նրա միջև ընկած հեռավորությունը։ Բայց և այնպես վիթխարամարմին կովկասուհին զգում էր, որ այնքան էլ մեծ հեռավորություն լինել չի կարող փրկված որդու մոր և կորած որդու մոր միջև։ Այրին շղթայազերծ էր արել տարիներ շարունակ ժանգոտված իր ձայնը, մեղմ ու քնքուշ երանգ էր տվել դրան, գրեթե երգի նման էր ծոր տալիս մխիթարանքի խոսքերը։ Ամեն ինչ այնքա՜ն պարզ էր ու հասարակ։ Այս աշխարհը այս աշխարհն է, սակայն վերևում Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, այնքան իմաստուն կարգ է հաստատել, որ մարդիկ նորից կարողանան իրար հանդիպել։ Ամենից առաջ մայրերը կտեսնեն իրենց երեխաներին,

բայց այն, ինչ այժմ ասում էր այրին, ո՞չ Նունիկից էր լսել, ո՞չ էլ մեռել լվացող կանանցից։ Այդ հրաշքի մասին նրա հարազատ մայրը լսել էր Վանա լճի կղզու իմաստուն վանահորից։ Այնտեղ, երկնքում, մայրերը կտեսնեն իրենց երեխաներին, բայց դրանք արդեն չեն լինի այն չափահաս տղաներն ու աղջիկները, որոնցից բաժանվել էին իրենց կյանքի վերջում։ Հարազատ զավակներին կտեսնեն իբրև երկուսից-հինգ տարեկան փոքրիկ երեխաների։ Եվ սիրագորով մայրերը երկնքում նորից իրենց գիրկը կառնեն սիրեցյալ որդիներին։

Այս հեռանկարից երջանկացած՝ կոշտ ու կոպիտ այրին ձեռքերը բարձրացնում էր, մտովի օրորում իր փոքրիկ, անտեսանելի Հայկին։

Նման պատմությունների պահերին, Ժուլիեթի աչքերը վանող արտահայտություն էին ընդունում, կարծես սառույց էին կտրում։ Շուշիկը կարծում էր, թե ֆրանսուհին չի հասկանում իր ասածը։ Նունկի էր գալիս տիկնոջ կողքին, մտորում, թե ինչպե՞ս մխիթարի օտար կնոջը, ինչո՞վ օգտակար լինի։ Ձեռքը դնում էր Ժուլիեթի սառած ոտքերին։ Կարեկցանքի մեղմ շշնջյունով այդ ոտքերը սեղմում էր իր կրծքին, դեղջկական կոշտ ձեռքերով զգուշորեն շոյում, տաքացնում։ Ժուլիեթը փակում էր աչքերը, խորասուզվում ինքն իր մեջ։ Շուշիկն սկսում էր կասկածել. գուցե դժբախտ մայրը ցնորվե՞լ է։ Այդ ցնորվածությունը այրու համար լիովին հասկանալի էր, քանի որ ինքն էլ էր բռնել նույն ճանապարհը։ Նրան ետ դարձրեց միայն ու միայն փրկարար լուրը։ Դեղկուհին պարզամտորեն գլխի չէր ընկնում, որ այդ ցնորվածությունը ոչ թե իսկական խելագարություն է, այլ մարմնական տկարությունից, տենդի հետևանքներից, սարսափից, մտամոլորությունից ու ճշմարտության սարսափից գոյացած մի պարիսպ։ Դրա ետևում տիկինը թաքնվում էր արևի լույսի պես պարզ իրականությունից։ Ի դեպ բժիշկ Ալթունին ևս Շուշիկի տեսակետին էր։ Ժուլիեթի վիճակը վերագրում էր հոգեկան հիվանդությանը՝ բծավոր տիֆի հետևանքին։ Այսօր, քառասուներորդ օրվա առավոտյան, բժշկի, այցելության ժամանակ, տեղի ունեցավ անսպասելի մի դեպք, որով բոլոր կասկածները հիմնավորվեցին։

Ծերունին նստած էր անկողնու եզրին և իր ֆրանսագիտական բոլոր կարողությունները գործի դնելով, ջանում էր հույս և լույս ներշնչել հիվանդի քարացած հոգուն։ Ամեն ինչ արդեն բարեհաջող է։ Մի քանի շաբաթ հետո պատերազմը անպայման կավարտվի, և աշխարհի բոլոր պետությունները հաշտության պայմանագիր կկնքեն։ Տիկինը հավանաբար լսել է անտիոքցի աղա Բերեքեթի այցելության մասին։ Ահավասիկ

այս ծեր, ազդեցիկ թուրք պարոնը որոշակիորեն հասկացրել է, որ Գաբրիել Բագրատյանը տիկնոջ հետ կկարողանա մեկնել Ֆրանսիա, այն էլ առաջիկայում։ Մի քանի օր պետք է դիմանալ։ Այնուհետև երիտասարդ և հոյակապ զույգի համար կսկսվի մի նոր ու սքանչելի կյանք։ Բժշկի բարեսրտությունը ամեն ինչ հերքող փնթփնթանին դարձրել էր հնարագետ հեքիաթասաց։ Նրա արհամարհական և խոպոտ ձայնը հնչում էր առանձին հոգածությամբ։

Այս քաղցր առասպելները պատմելու պահին վրանի մուտքի մոտ հանկարծ հայտնվեց Իսկուհին։ Ժուլիեթը, որն ամբողջ ժամանակ բժշկի բանաստեղծական զեղումները լսում էր սիրալիր, սակայն անտարբեր աչքերով, աղջկան տեսնելուն պես սարսափահար ուղղվեց տեղում, ծընկները վեր քաշեց, սկսեց գոռգոռալ.

— Թող չգա՜... Թող չգա՜... Թող հեռանա՜... Նրա ձեռքից ոչինչ չե՛մ վերցնի... Ինձ ուզում է սպանե՜լ...

Զարմանալին այն էր, որ Իսկուհին այս խելագար պոռթկումը տեսնելով՝ չհեռացավ։ Նրա փոքրիկ դեմքին ևս խելագարության դրոշմ կար։ Թվում էր, թե ուր որ է նա էլ կսկսի ճչալ։ Բժիշկ Ալթունին շփոթված նայում էր երկու կանանց։ Ծերունու մտքով սոսկալի բաներ անցան։

Իսկուհու գնալուց հետո էլ Ժուլիեթը երկար ժամանակ չէր հանդարտանում։ Թուլացած սիրտը թպրտում էր։

Ի՞նչ էր պատահել Իսկուհուն։

Արդեն հինգ օր չէր տեսել Գաբրիելին։ Երկու օր ոչ մի պատառ չէր դրել բերանը։ Գիտակցաբար չէր ուտում։ Չէ՞ որ Քրիստափորը վրանում եղած պահածոները հյուսիսային դիրքերը տանելու ժամանակ կանանց բաժինը թողել էր՝ շոկոլադի սալիկներ և պաքսիմատ։ Իսկուհին ուզում էր քաղցած մնալ ո՞չ այն պատճառով, որ ամբողջ ժողովուրդն էր սովի մատնված։ Հի՜նգ օր չէր տեսել Գաբրիելին։ Այդ ժամանակամիջոցում եղբայրը՝ Արամը, երկու անգամ հայտնվել էր վրանի առաջ, և քույրը թաքնվել էր, դուռը չէր բացել։ Այդ հինգ օրն իրենց երկար ու ձիգ ժամերով տարիներ էին թվում, անտանելիորեն երկար։ Ինչո՞ւ չէր գալիս Գաբրիելը։ Իսկուհին նրան էր սպասում գիշերվա և ցերեկվա ամեն մի ակնթարթում։ Եթե նրա ուժասպառ մարմնի մեջ բավականաչափ ուժ էլ լիներ, միևնույն է, չէր գնա խրամատները, իր սիրեցյալի մոտ։ Որքան ժամերն անցնում էին, այնքան ավելի հաստատուն էր դառնում այդ վճիռը։

Թովմասյանների լքած վրանում Իսկուհին ծանր թառանչ էր արձա-

կում։ Ընկել էր անկողնու վրա և անկարող էր շարժվել։ Գլուխը պայթում էր ծովային զորեղ ալեկոծություն հիշեցնող ժխորից, որը երբեք չէր լռում նրա ականջներում։ Բայց և այնպես ականջների խշշոցն այնքան զորավոր չէր, որ դրանից խլանար ճշմարտության ձայնը։ Ինչպես մահամերձն է դողում իր կյանքի վերջին վայրկյանների վրա, այնպես էլ Իսկուհին էր ափսոսում ապարդյուն կորչող ամեն մի րոպեն։ Եվ մի՞թե իրավացի չէր։ Քանի՞ րոպե ունեին Դամլաջըքում իզուր վատնելու։ Սակայն Գաբրիելը ոչ միայն անփոխարինելի րոպեներ էր վատնում, այլև ամբողջ օրեր, իրենց կարճատև սիրո անվերջանալի օրերը... Վատնո՞ւմ էր։ Սե՞ր։ Իսկուհին սոսկումով մտաբերեց ամբողջ ապրածը։ Այո, Գաբրիելը նրա նկատմամբ սիրալիր էր. շոյում էր աղջկան, երբեմն թույլ էր տալիս, որ Իսկուհին ձեռքը դնի իր բաց կրծքին, իր հետ լաց լինի։ Բայց Գաբրիելը լալիս էր Ստեփանի համար։ Իսկ երբ սիրտն էր բաց անում, ապա իսկույն զգացվում էր, թե նա ի՞նչ սիրով ու ներողամտությամբ է լցված Ժուլիեթի՝ ամուսնական ուխտը դրժած կնոջ նկատմամբ։ Այդ անգութը մնում էր «օտարուհուց» կառչած, թեև նա դավաճանել էր։ Ի՞նչ օգուտ, եթե Իսկուհուն «քույրիկ» էր անվանում կամ «ի՛մ հայրենադարձություն»։ Այս բառերն աղջկա համար այլևս դրվատանք չէին, այլ այրող վերքեր։ Շարունակ հիշում էր Գաբրիելի այն պատասխանը, որը նա Ստեփանի մահից առաջ տվեց իր հետևյալ հարցին. «Եթե մենք հանդիպեինք դրսում, ազատ աշխարհում, դու իմ մեջ դարձյա՞լ քույր կտեսնեիր»։ Համենայն դեպս Գաբրիելը կեղծավորություն չէր անում։ Իր ամբողջ վարմունքով ասում էր. «Դու պարզ, միամիտ աղջիկ ես, հասարակ ընտանիքի դուստր։ Եթե իրադարձություններն այսքան զարհուրելի ընթացք չստանային, դու երբեք արժանի չէիր լինի այն բանին, որ վրադ նայեմ։ Իմ փոքրի՜կ քույրիկ, ես անկիրք ձեռքերով, եղբայրական համբույրներով քեզ շնորհակալություն եմ հայտնում նրա համար, որ դու այդքան ջանք ես թափում ինձ համար, ինձ հետ կիսում ես իմ ցավը։ Բայց ինչպե՞ս կարողացար այդ բանն անել, յոզոնօլուքցի խե՜ղճ հայուհի։ Հակառակ ամեն ինչի, ես առհավետ պատկանում եմ օտարին՝ ֆրանսուհուն։ Ես կմեռնեմ ոչ թե Իսկուհու, այլ Ժուլիեթի հետ։ Նա ինձ դավաճանել է, բայց ես նրա առաջ խոնարհվում եմ, իսկ քո առաջ խոնարհվում եմ վերևից նայելով»։

Այս մտորումներից հետո կսկիծը դարձյալ չէր անցնում։ Աղջիկն առավել սաստկությամբ էր գիտակցում ճշմարտությունը։ Գաբրիելի ավածը նորը հատուցում էր աղջկա ծառայության դիմաց, ուրիշ ոչինչ։ Իսկուհին ինքն իրեն հարց էր տալիս. մի՞թե դրությունն այլ կլիներ, եթե

Ժուլիեթը չդիմանար հիվանդությանը, մի բան, որ աղջիկը հարյո՜ւր անգամ սրտանց ցանկացել էր։ Եվ Իսկուհին եզրակացրեց. ո՜չ։ Գաբրիելն այդ դեպքում նրան շատ ավելի քիչ կսիրեր, քան այժմ։ Ա՜հ, այդ խորհրդավոր բաներն ինչպե՜ս էր զգում այդ հիվանդ ֆրանսուհին։ Իսկուհին այլևս չէր ուզում ոտք դնել Ժուլիեթի վրանը, այլևս չէր ուզում նրան տեսնել։ Համենայն դեպս մեղքը ոչ թե Ժուլիեթի, այլ միայն ու միայն Իսկուհու վրա էր ծանրանում։ Բայց հայուհին ինչո՞վ արժանի չէր սիրված լինելու։ Ճիշտ է, նա եվրոպացի աղջիկ չէր։ Հայ ատաղձագործի դուստր էր, յոզոնօլուքցի գեղջկուհի։ Մի՞թե սա կարող էր բավարար հիմք լինել։ Մի՞թե Գաբրիելն ինքը եվրոպացի էր։ Իսկուհու նման նա էլ նույն գյուղի ծնունդը չէ՞ր։ Ամբողջ տարբերությունն այն էր, որ Իսկուհին Լոզանում երկու տարի էր մնացել, իսկ Գաբրիելը Փարիզում՝ քսաներեք տարի։ Սա պատճառ լինել չէր կարող։ Գաբրիելը Իսկուհուն նայելիս նրան գեղեցիկ էր համարում։ Սպասի՛ր, սպասի՛ր։ Ահա՛ բուն պատճառը։ Ինչո՞ւ Գաբրիելը շատ անգամ այնպես տարօրինակ ձևով հեռվից էր նայում։ Ինչ-որ բան խանգարո՞ւմ էր և սառեցնո՞ւմ նրան։

Իր թուլությունը հաղթահարելով, Իսկուհին նետվեց դեպի փոքրիկ հայելին, որը դրված էր սեղանին։ Բայց կարիք չկար հայելին վկայակոչելու։ Առանց այդ էլ ամեն ինչ աղջկան հայտնի էր. նա հաշմանդա՜մ էր։ Ճիշտ է, ոչ ի ծնե, այլ դիպվածի բերումով։ Զեյթունի տարագրությունից կես տարի հետո ձախ թևի վիճակը հետզհետե վատթարացել էր։ Եթե շորով չկապեր, ապա թևը կկախվեր բարակած ու ծռված դրությամբ։ Բայց թե որքան էլ աղջիկը ճարպկորեն քողարկեր իր խեղանդամությունը, Գաբրիելը չէր կարող դա չնկատել։ Օ՜, աղջիկը դա լա՜վ գիտեր։ Մի անգամ Գաբրիելը թեթևակի համբույր դրոշմեց խեղված թևին։ Մինչև այժմ էլ աղջիկը զգում էր, որ Գաբրիելն այդ համբույրը դրոշմեց կարեկցանքից, հաղթահարելով խորշանքը։ Իսկուհին նորից ընկավ անկողնու վրա։ Ականջների խշշոցը սաստկացավ, դարձավ ամեն ինչ կլանող փոթորիկ։ Աղջիկը ջղաձգորեն փորձեց Գաբրիելի բացակայությունն արդարացնել նրա զբաղվածությամբ։ Քաղցը երևի խրամատներում ամեն ինչ տակնուվրա է արել։ Բագրատյանը պետք է ամբողջ պաշտպանության գործը նորից կարգավորի։ Բայց սա դատարկ ինքնահանգստացում էր։ Ողջախոհ եզրակացությունները ոչնչով չթեթևացրին դրությունը։ Ընդհակառակը, ականջների խշշոցի խորքից լսվեց սեփական ձայնը, որն այնքա՜ն օտար էր։ Վերհիշեց այն սիրերգը, որ Բագրատյանի ամառանոցում Ժուլիեթի խնդրանքով մի անգամ երգեց ինքը՝ Իսկուհին։ Ստեփանը ներկա էր, իսկ Գաբրիելը փոքր-ինչ ուշ եկավ։

ժողովրդական հինավուրց երգի առաջին տողերը շարունակ պտտվում էին գլխում, խենթացնելու աստիճան.

Աղջիկ տեսա այգու եզրին,
Ոտից-գլուխ՝ շաղ ու բույր,
Սեղմած կրծքի զույգ նոնարին
Մառից բաղած երկու նուռ...
Սե՜ր տուր, անխի՛ղճ, ոչ թե նուռ...

Երգը դադարեց։ Սակայն կրկնվեց այն սարսափելի տեսարանը, որը վաղուց էր ջնջվել նրա հիշողությունից։ Մարաշի ճանապարհին պատահած թուրքի՝ թավամազ մարդասպանի կալեյդոսկոպային հրեշավոր դեմքը նորից հայտնվեց, նորից խոյացավ աղջկա վրա։ Հանկարծ ահարկու դեմքն արձանացավ, մնաց վրանում։ Կարծես կալեյդոսկոպում ինչ-որ բան խախտվեց։ Ինչ-որ խորհրդավոր ձևով այդ դեմքը փոխվեց, դարձավ Գաբրիելի դեմքը, որն ավելի թշնամական էր, ավելի անագորույն։ Իսկուհու շունչը սարսափից կտրվեց։ Նա իրեն դժբախտ զգաց։ Լուռ օգնություն աղերսեց՝ «Արա՜մ»։

Այդ պահին պատվելի Արամ Թովմասյանը, իրոք, հեռու չէր քրոջ վրանից։ Օվսաննայի հետ մոտենում էր։ Երեխան կնոջ գրկին էր։ Երբ Արամը դրսից կոպտությամբ ձայն տվեց քրոջը, որ դուռը բացի, նրան ոչ ոք չարձագանքեց։ Իսկույն դանակը հանեց, կտրեց դռան պարանը։ Շալակի ահագին պարկը ցած դրեց։ Մանկան անկենդան խանձարուրը գրկած՝ Օվսաննան կանգնեց մի քանի քայլ հեռու։ Այն տպավորությունն էր ստացվում, թե, հիրավի, այդ մոլորյալներն ուզում էին Դամլաջրքից հեռանալ, առանց սպասելու պատարագին և մեծ ժողովին։ Թովմասյանը, երևի, եկել էր Գևորգին փնտրելու, իսկ այնուհետև յուրայինների հետ անհապաղ բռնելու էր բացահայտ անհայտության ճանապարհը։

Եթե պատվելին այդ պահին լիներ նախկին Արամը՝ զեյթունյան օրերի նույն բարեհամբույր, աստվածավախ, մարդասեր, ուժեղ կամքի տեր և կենսուրախ եղբայրը, Իսկուհին, հավանաբար, առանց երկարբարակ տատանվելու նրա հետ ճանապարհ կընկներ։ Ինչո՞ւ պետք է մնար այս լքված վրանում։ Իսկուհին գիտեր, որ իր ուժասպառ ոտքերն իրեն հեռու չեն տանի։ Ամեն ինչ հետզհետե, մեղմորեն կվերջանար՝ թե՛ ականջների խշշոցը, թե՛ Գաբրիելը, թե՛ ինքը։ Սակայն զեյթունցի սիրագորով եղբոր փոխարեն վրանում կանգնած էր ինչ-որ անծանոթ բռնակալ։ Գավազանը թափահարելով, սա վրա պրծավ.

— Վե՜ր կաց, պատրաստվի՛ր, գնալու ենք։

Զարությամբ լի այս խոսքերն Իսկուհու վրա կարծես ժայռեր գլորեցին։ Աղջիկը ձգված, աչքերը չռած՝ նայում էր օտար Արամին։ Եթե նույնիսկ ցանկանար հնազանդվել, ապա դարձյալ չէր կարողանա տեղից շարժվել։

Թովմասյանն ավելի ուժգին սեղմեց գավազանը.

— Չե՞ս լսում։ Հրամայում եմ. իսկույն վե՜ր կաց և պատրաստվի՛ր։ Ես քեզ հրամայում եմ, իբրև քո ավագ եղբայրը և քո հոգևոր հայրը։ Հասկացա՞ր։ Տեսնենք, չե՞մ կարող քեզ մեղքից ազատել։

Մինչև «մեղք» բառը աղջկա մեջ ամեն ինչ քարացել էր, սակայն «մեղք» բառը կյանքի կոչեց ցասկոտ ըմբոստության հարյուրավոր աղբյուրներ։ Ամբողջ տկարությունը չքացավ։ Աղջիկը ոտքի թռավ։ Մահճակալի ետևն անցնելով, սեղմեց իր փոքրիկ աջ բռունցքը, որ պաշտպանվի։ Վրանի մուտքի մոտ հայտնվեց մի նոր թշնամի՝ Օվսաննան։

— Չե՜ռք քաշիր դրանից, պատվելի՛, գործ չունես։ Դա կորած մարդ է։ Խնդրում եմ, մի՛ մոտենա, թե չէ կվարակվես։ Թո՜ղ դրան։ Եթե դա մեզ հետ գա, տեր աստված մեզ ավելի կպատժի։ Միտք չունի։ Ե՛կ, պատվելի՛։ Ես էն գլխից գիտեի, թե դա ինչ պտուղն է։ Բայց թե վրան դողդողում էիր, խենթի պես էիր սիրում։ Դեռևս Զեյթունի դպրոցում երիտասարդ վարժապետների՝ այդ անամոթների հետ կեղտոտ գործեր էր բռնում։ Չե՜ռք քաշիր, խնդրում եմ, ե՛կ գնանք։

Իսկուհու աչքերը զարմանքից չռվեցին։ Ժուլիեթի հիվանդությունից հետո Օվսաննային դեռևս չէր տեսել և չէր պատկերացնում, որ այժմ իր առաջ հարսը կանգնած է իբրև լիակատար խենթ։ Հարսը, որևէ զոհողությամբ աստծո սիրտը շահելու նպատակով, մազերը չափազանց կարճ էր կտրել։ Գլուխը փոքրացել էր, նրան շար, վհուկային տեսք տվել։ Ամբողջ մարմինը մաշվել էր, կուչ եկել, միայն փորն էր կամարաձև դուրս ցցված։ Դա ծանր ծննդաբերության հետևանքն էր։ Օվսաննան մեղադրանքի աննկարագրելի շարժուձևով տալի կողմը մեկնեց երեխայի խանձարուրը և ճչաց.

— Տե՜ս, միայն դո՛ւ ես այս դժբախտության հանցավորը։

Առաջին անգամ Իսկուհու շրթունքներից հնչյուններ դուրս թռան.

— Սո՜ւրբ Մարիամ աստվածածին...

Աղջկա գլուխը կախվեց կրծքին։ Նա մտաբերեց Օվսաննայի ծննդաբերության այն ծանր ժամը, երբ ինքը մեջքով նեցուկ էր դարձել հարսին։ Ի՞նչ էին իրենից ուզում այդ խելագարները։ Ինչո՞ւ գոնե իր կյանքի վերջին ժամերին հանգիստ չէին թողնում։

Այդ միջոցին պատվելին հանեց արծաթյա ժամացույցը և թողեց շղթայից կախված.

— Քեզ տասը րոպե ժամանակ եմ տալիս։ Պատրաստվի՞ր։

Ապա շրջվեց Օվսաննայի կողմը.

— Վե՛րջ տուր, պետք է մեզ հետ գա։ Այստեղ չեմ թողնի։ Ասածս առաջ նրա համար պատասխան եմ տալու...

Իսկուհին անշարժ կանգնած էր մահճակալի ետևում։

Քսաներեք հոգի գող կատուների պես հայտնվեցին երկու վրանի արանքում։ Ամեն ինչից զգացվում էր, որ դասալիքների պարագլուխը երկարամազն է։ Եթե նա իր կասկածելի վարմունքով ավազակապետի տպավորություն էր թողնում, ապա Սաթոն, իբրև քսանչորսերորդը, անշուշտ, ուղեցույցի դեր էր կատարում։ Քիթն անտարբեր սրբում էր թևքով։ Կարծես ուզում էր հասկացնել, թե ինքը անմեղ աղջիկ է և ոչինչ չի հասկանում նման խառը գործերից։ Հավանաբար ուզում էր ցույց տալ, թե «պաշտոնական գործով» է եկել։ Ո՛չ Կիլիկյանը կար, ո՛չ էլ նրա հռչակավոր կոմիսարը։

Դասալիքները շփոթված էին։ Դա նենգությամբ ծանրաբեռնված շփոթություն էր, ոճրագործությանը նախորդող անվճռականություն։

Սկզբում խմբին նայողի մտքով վատ բան չէր անցնի, թեև դասալիքներից մի քանիսը հրացանների վրա ամրացրել էին թուրքերից խլած լայնշեղը սվիները։ Մոտերքով շարունակ անցուդարձ էին անում խրատադեմ զինվորները, վերադառնում պահակությունից կամ գնում պահակության։ Մանավանդ այսօր, երբ հյուսիսում հրաձգությունը բոլորովին չէր լռում, ինչ-որ զինված մի խումբ կասկածի տեղիք տալ չէր կարող։

Երբ Արամը դուրս եկավ Իսկուհու վրանից, գործն սկսում էր բարդանալ։ Սակայն պատվելին որոշ ժամանակ մեծագույն անտարբերությամբ մնաց վրանի առաջ կանգնած։ Միտքը մշուշված էր սեփական հոգսերով։ Կարծես, թե խումբը Բագրատյանի կարգադրությամբ եկել է ինչ-որ հանձնարարություն կատարելու։ Դրանից բացի, նրա ի՞նչ գործն էր Դամլաջրքի պաշտպանությունը, երբ մարդն արդեն ձեռք էր քաշել ժողովրդից։

Սակայն այրի Շուշիկն ավելի սուր աչք ուներ։ Իր վիթխարի մարմնով լրիվ փակեց վրանի մուտքը։ Իսկույն հասկացավ, որ Սաթոյի մատը խառն է, քանի որ աղջիկը վազվզում էր, ձեռքով-ոտքով խոսում, շարունակ մատնացույց անում Ժուլիեթի վրանը։ Շուշիկը ոտքերը լայն բացեց, ձեռքերը պրկեց, պատրաստվեց ամեն շարիք ետ մղելու սեփական մարմնով։ Երկարամազը խմբից անջատվեց.

— Մեզ ուղարկել են, որ տանենք ձեզ մոտ եղած ուտելիքները։

— Ուտելիք-մուտելիք չգիտեմ...

— Գիտե՛ս, գիտե՛ս։ Խոսքս յուղի մեջ լողացող ձկների արծաթե տուփերի մասին է, գինու կժերի, ձավարի ու հաճարի մասին...

— Ո՛չ գինի եմ տեսել, ո՛չ էլ ձավար։ Ո՞վ է քեզ ուղարկել։

— Քո ի՞նչ գործն է։ Հրամանատարը։

— Հրամանատարը թող ինքը գա։

— Գլուխս մի՛ տանի։ Վերջին անգամ եմ ասում, անխե՛լք կնիկ-արմատ։ Հերի՛ք է, ինչքան ուտելիքները տակներդ դրած նստեք։ Մե՛զ էլ բաժին է հասնում։

Շուշիկը ոչինչ չասաց, այլ ըմբշամարտիկի հայացքով հետևեց երկարամազի շարժումներին, որն իր հրացանը մի կողմ նետեց և պատրաստվեց ներս մտնել։ Հենց որ ձախ կողմից մոտեցավ, Շուշիկը կառչեց նրա ազդրերից, երկաթյա ձեռքերով բարձրացրեց ստահակին, շպրտեց խմբի կողմը, վայր տապալելով ևս երկու հոգու։ Ապա հսկա այրին նորից հանգիստ կանգնեց։ Նույնիսկ չէր հևում։ Թևերը պատրաստ պահած՝ սպասեց հաջորդ «այցելուին»։ Բայց մահը վրա հասավ, երբ Շուշիկը չէր էլ կասկածում։ Կողքից հասցված խղակոթի հարվածից գանգը ջախջախվեց։ Այրին մեռավ վայրկենապես, իր երջանկության բարձունքին, քանի որ ընդհարման վայրկյաններին նրա ամբողջ էությունը ներծծված էր մի զգացումով. Հայկը կենդանի՞ է։ Գիտին տապալվելով, նա իր դիակով փակեց մուտքը՝ Ստեփանի տարաբախտ մոր կողմը տանող ճանապարհը։

Արամը միայն այժմ գլխի ընկավ, թե ինչ կատարվեց։ Գոռգոռալով, գավազանը թափահարելով, նետվեց դեպի խումբը, որն այդ պահին սպանությունից շփոթված, երկյուղով ետ էր քաշվել։ Այստեղ Թովմասյանը պետք է գործի դներ իր անձնական ամբողջ զորությունը։ Նա հոգևորական էր և ժողովրդի ավագներից մեկը։ Կարճ ու կտրուկ հրաման արձակեց ավազակախմբին, ապա գետնից թափով վերցրեց երկարամազի հրացանը։ Բազմաթիվ աչքեր հետաքրքրությամբ հետևում էին, թե արդյոք այդ հեղինակավոր մարդը կկարողանա՞ դասալիքներին զրաստել։ Սակայն Արամը, որը վաղուց ի վեր իր հոգևոր ուժերի տերն ու տնօրենը չէր, հակառակ բանն արեց։ Իր ծիծաղելի գավազանով վրա ընկավ ավազակախմբին, կուրորեն ու անմտորեն սկսեց աջ ու ձախ հարվածներ տեղալ։ Պատասխանը եղավ սվինի մի հարված՝ մեջքին, աջ ուսից ներքև։

«Այս ի՞նչ բան է,— մտածեց նա,— և, առհասարակ, այս ամենի հետ ես ի՞նչ առնչություն ունեմ։ Ես աստծո հպատակ մարդ եմ, իմ զեն-

քը քարոզն է, ուրիշ ոչինչ։ Այս օտարականներին պետք է թողնել իրենց կամքին»։

Գավազանը ձեռքից ընկավ։ Բայց իր քահանայական արժանապատվությունը լիովին գիտակցելով, ոտքի ելավ, շրջվեց և հաստատուն քայլերով ետ գնաց։ Ա՛հ, կանայք այնտեղ են։ Արդե՞ն։ Վերջապես Իսկուհին վճռեց հնազանդվե՞լ։ Բայց ինչո՞ւ է սպիտակ զգեստ հագել։ Այո, նորից հաշտ ու խաղաղ կապրեն, ինչպես Զեյթունում։ Այդ բանը Օվսաննան պետք է հասկանա։ Մինչև երրորդ վրանը ճանապարհը տարօրինակ կերպով երկար թվաց։ Պատվելին խրախուսաբար ժպտում էր կնոջը, բայց սա ամուսնուն նայում էր սարսափահար աչքերով։ Օվսաննայից երեք քայլ հեռավորության վրա Արամը վայր գլորվեց, արյամբ ներկելով շրացած խոտը։ Վերքը շատ ծանր չէր, բայց քահանան գիտակցությունը կորցրեց։ Շփոթված, անօգնական, երեխան գրկին՝ Օվսաննան մոտ վազեց։ Բաճկոնը կտրատեցին։ Իսկուհին շորի մի լաթ ամբողջ ուժով սեղմեց վերքի վրա։ Աջ ձեռքը ներկվեց եղբոր արյամբ, եղբայր, որն անդառնալիորեն օտարացել էր։

Երկարամազը, Սաթոն և դասալիքներից մի քանիսը Շուշիկի դիակի վրայով մտան հիվանդի վրանը։ Ժուլիեթը կապարային քնից կիսով չափ արթնացած՝ լսել էր խոսակցությունը, իրարանցումը, գոռգոռոցները։ «Տենդը, փա՛ռք աստծո, տենդն է պատճառը։ Ուրեմն՝ ամեն ինչ պատրանք է, կանցնի»։ Երբ դասալիքները ներս մտան և վրանը լցրին գարշահոտությամբ, հիվանդը ոչ մի երկյուղ չզգաց, քանի որ դեռ պատրանքի ազդեցության տակ էր։ «Եթե սա տենդային զառանցանք է,— մտածեց նա,— ապա ես ուրախ եմ։ Իսկ եթե թուրքերն են, ավելի լավ. կարճատև քնին կհաջորդի հավիտենականը»։

Ոչ ոք մտադիր չէր տիկնոջը վնասել։ Առհասարակ, հիվանդին ոչ մի ուշադրության չարժանացրին։ Նրանց հետաքրքրում էին միայն խոհանոցային գանձերը, որոնց մասին նախանձ գրգռող առասպելներ էին շրջում։ Վիթխարի ճամպրուկն ու մյուս կապոցները դուրս բերին։ Այստեղ կուտակվեց նաև այն ամենը, ինչ դասալիքները գտել էին շեյխ-վրանի սնդուկներում ու ճամպրուկներում։ Ժուլիեթի վրանում ավելի երկար մնացին միայն Սաթոն և երկարամազը։ Այս ավազակն իր անձնական գործածության համար ուզում էր որևէ պիտանի բան գտնել, իսկ աղջիկը մնացել էլ հետաքրքրությունից և չարությունից։ Քանի որ Սաթոյի մտքով ավելի սարսափելի բան չանցավ, հանկարծ Ժուլիեթի վրայից ցած քաշեց վերմակը, որ տղամարդը տեսներ այդ օտար կնոջ մերկությունը։ Բայց ավազակը, ի հիշատակ, վերցրեց կրիայի զրահից պատրաստած մի մեծ սանր՝ անշուշտ, իր երկար, իրար կպած մազերի համար։ Այդ ավարը դիտելով, նա վրանից դուրս եկավ, առանց կնոջ կողմը նայելու։ Դրսում ավազակախումբը դուրս էր թափել բազմաթիվ կապոցների պարունակությունը և ընտրություն էր կատարում։ Դարձյալ լրս կողմ սփռված էին Ժուլիեթի զգեստներն ու սպիտակեղենը, ճիշտ այնպես, ինչպես երբ Յողոնօլուքում խուզարկություն էին կատարում զափթիեները։ Դեսուդեն ընկած էին լաքած, ատլասե, ոսկեճարմանդ կոշիկներ և նուրբ կիսակոշիկներ։ Նույն վիճակում էին ոչ միայն զգեստներն ու ապակեղենը, այլև այն ամենը, ինչ դժվարությամբ բարձրացրել էին Մուսա լեռը։ Սակայն ավազակների տարած ավարը ծիծաղելի էր՝ սարդինի երկու տուփ պահածո, մի քիչ խտացրած կաթ, երեք սալիկ շոկոլադ, թիթեղյա տուփի մեջ մնացած թխվածքի փշրանքներ։ Բայց դրանց եղածն ի՞նչ էր։ Հարկավոր էր արագ տնտղել երրորդ վրանը։ Սաթոն ձեռքով-ոտքով բաներ էր հասկացնում։

Խորանի հրապարակից լսվեց զանգակի ռնգային ղողանջը, որը կանչում էր պատարագի։ Գլխավոր խմբի հետ պայմանավորվել էին, որ այդ ազդանշանը լսելուն պես անցնելու են երկրորդ խնդրի իրագործմանը։ Պետք է շտապեին, գործը գլուխ բերեին։ Պարապ չմնալու համար դասալիքներից ամեն մեկն իր հետ մի բան վերցրեց՝ գդալ, դանակ, ափսե, ջրաման, նույնիսկ մի զույգ կանացի կոշիկ։

Իսկուհին և Օվսաննան լաթերով կանգնեցրել էին վերքի արյունահոսությունը։ Պատվելին ուշքի էր եկել։ Անսահման զարմանքով շուրջը նայեց։ Չէր կարողանում հասկանալ, թե իր ներսում այդ ի՞նչ մոլորյալ մարդ է սպանվել։ Արդեն ցանկություն էր զգում մնալ իր ժողովրդի հետ։ Կամակորությունը նրան այլևս չէր ստիպում երկրորդ անգամ գործել հարազատ ժողովրդից բաժանվելու մեծ մեղքը։ Արյուն էր թափվել։ Եվ այդ թափված արյունը աստվածային ողորմածություն էր, որը նրան ետ պահեց ծանր փորձությունից։ Արամը նայեց Օվսաննային։ Մի փունջ խոտով սա մաքրում էր իր ձեռքերը, որ երեխայի խանձարուրը չարյունոտվի։ Արամը զարմացավ, որ իր գլխի տակ մի քանի վերմակ և բարձ կա դրված։ Նա գրեթե ուղիղ նստած էր։ Իսկուհին աջ ձեռքով շորը դեռևս սեղմում էր վերքին, դրանով խանդարում մեջքի վրա պառկելուն։ Աղջկա մաշված դեմքը անասելի հուզմունքից բոլորովին այլայլվել էր։ Արամը գլուխը ետ գցեց և մրմնջաց՝ «Իսկուհի՜»։ Հինգ թե վեց անգամ հառաչելով՝ կրկնեց. «Իսկուհի՜»։ Այդ անունը հնչում էր իբրև զղջման քնքուշ խոսք. «Ների՛ր ինձ»։

Ժամկոչը խելագարի պես հնչեցնում էր խորանի մոտակա գերանին ամրացված փոքրիկ զանգը։ Այդ պահանջկոտ զողանջը, իհարկե, ավելորդ էր։ Համայնքը՝ ծերունիները, կանայք և երեխաները վաղուց արդեն հավաքվել էին։ Սակայն ժամկոչի մոլեռանդ աջ ձեռքի տակ դեռևս հնծում, ողբում էր զանգը, կարծես ոչ միայն թուրքական վաշտերին, այլև ծովին ու ցամաքին ուզում էր ազդարարել, թե հասել է քրիստոնյա ժողովրդի մահվան ժամը։ Զախ ձեռքով ժամկոչը ոչ պակաս կատաղությամբ թափահարում էր բուրվառը։ Դամլաջրքի գաղթականում, որտեղ երկրային սնունդ այլևս չկար, խնկի պաշարն ամիսներով չէր սպառվի։

Գոհարանական պատարագի այս ուշ ժամին հարավարևելյան քամին բոլորովին չէր թուլանում։ Կրոնական արարողությունը խանգարող անաստվածի պես քամին ավլում էր հրապարակի փոշին, կուլ տալիս զանգակի զողանջը, գազազած ոռնում խրճիթների ճյուղածածկ առաստաղի ճեղքերում, ցնցում խորանը, որի սպասքն այսօր փոթորկի ահից կապկպել, ամրացրել էին։ Սրբարանի չորսմետրանոց ճյուղաշեն բարձ պատը դարձել էր քամու խաղալիք. երերում էր, չորացած տերևները խրթռում էին։ Երբեմն վիթխարի պատն այնպես կասկածելի էր տարուբերվում, կարծես փուլ էր գալու։ Զոհասեղանի առաջ, սանդուղքի ամենարարձր աստիճանի վրա, աջ և ձախ կողմից բարակ պարաններով ամրացված երկու ձող կար։ Դրանց արանքում օղակներով կախված էր վարագույրը, որի ետևում, հայկական սովորության համաձայն, պատարագի ժամանակ նստում էր վարդապետը, և համայնքը նրան չէր տեսնում։ Թանձր վարագույրը շարունակ շարժվում էր, սեղմվում զոհասեղանին։ Վարագույրի ծայրերն ամուր կապել էին, այլապես սեղանի վրայից ցած կգլորվեին սրբազան արարողության պարագաները։ Բարեպաշտներից մի քանիսն ուշի-ուշով հետևում էին այդ սպասքին, մանավանդ արծաթյա երկար աշտանակներին, որոնց մեջ, ապակյա միջնորմի ետևում քամուց պաշտպանված՝ մոմեր էին վառվում։ Քամու հոսանքը երբեմն սատակում էր, երբեմն թուլանում։ Նման պահերին հրապարակում ճնշող լռություն էր տիրում, և այդ լռության մեջ մերթընդմերթ կրակոցներ էին լսվում Հյուսիսային լեռնաթամբից։

Տեր-Հայկազունը կառավարչատան մոտ գտնվող իր խրճիթում վաղուց արդեն հագել էր պատարագի հանդերձանքը։ Դպիրներն ու սարկավագները երկար ժամանակ սպասում էին դռանը։ Սակայն ինչ-որ խոր տարակուսանք վարդապետին կաշկանդում էր, թույլ չէր տալիս դուրս գալ և բարձրանալ խորանը։ Ինչ բան էր դա։ Հավատարակշռությունը երբեք չկորցնող սիրտը թպրտում էր հոգևոր հանդերձանքի տակ։ Արդյոք մոտալուտ անհայտությունի՞ց էր սոսկում։ Կասկածո՞ւմ էր իր վարմունքի իրավացիության վրա։ Ճի՞շտ էր արել, որ ծայրահեղ վտանգի պահին կանչել էր ժողովրդին։ Արդյոք խորամանկ թուլության հետևանք չէ՞ր, որ խուսափում էր անձամբ վճիռ կայացնելուց, այդ բանը վստահելով անխելահաս մարդկանց և անչափահասներին։ Ճիշտ է, բոլոր ռազմիկները Գաբրիել Բագրատյանի թիկունքին կանգնած էին, և Տեր-Հայկազունը չէր կարծում, թե պատվելի Արամը կկարողանա իր առաջարկով շատ համախոհներ գրավել։ Բայց և այնպես, արդյոք վտանգավոր չէ՞ր հանդիսավոր պատարագից անմիջապես հետո պատվելու առաջարկով պղտորել սովալլուկ բազմության միտքը։ Այդ առաջարկն առիթ կտար մոլորության, վեճերի, քայքայման։ Տեր-Հայկազունը, հավանաբար, զգում էր իր առաքելության ամբողջ սպանիչ լրջությունը, առաքելություն, որին ինքն արժանացել էր և որին դատապարտված էր։ Նա մրրսում էր, ինչպես տաք քամի էր փչում։ Գլուխը կարծես ուռչում էր, շարունակ մեծանում, բարակում, ինչպես օդապարիկ։ Դրեթե երկու օր բերանը ոչինչ չէր դրել։ Նստած էր խորին, որը և միաժամանակ նրա անկողինն էր։ Ծունկի վրա դրված էր ահագին ծխամատյանը։ Միջօրեից հետո ամբողջ ժամանակ անուններ էր ցուցակագրել, հանրագումարի բերել քառասուն օրվա անցուդարձը։ Այժմ կյանքի և մահվան այդ մատյանը նա կարելվույն չափ արդեն կարգավորել էր, փակել հաշիվը։ Իր պարտքը կատարել էր և ծխամատյանը կարող էր հանձնել։ Բայց ո՞ւմ։ Տեր-Հայկազունը գլուխն օրորեց։ Համենայն դեպս մեծ գոհունակությամբ մտածեց, որ ողջ մնացածների և մեռածների հոգիները անուն առ անուն արձանագրված են, որ ինքը առ այսօր բարեխղճորեն կատարել է այն, ինչ պահանջում են աստված և մարդիկ։ Յուրաքանչյուր հավերժող հոգի մատյանում մաքուր արձանագրված էր, նշված էին ծննդյան ու մահվան օրերը, անունն ու ազգանունը։ Դրա շնորհիվ աստված առավել դյուրությամբ կշնորհեր իր ողորմածությունը։ Հոգին այլևս ստիպված չէր լինի անտերունչ շան պես թրև գալու դժոխքի դռան առաջ։ Տեր-Հայկազունը խորապես հավատում էր, որ այդ արձանագրության, ինչպես և դրա շարունակությունը հանդիսացող մկրտության սրբազան զորության շնորհիվ հոգիները կփրկվեն։ Նա իր դեղնած մատներով մի անգամ ևս թերթեց մատյանի վերջին էջերը։ Վարդապետը Մուսա լեռան գաղթականում տասնյոթ երեխա էր մկրտել։ Սրանց դիմաց արձանագրված էին չորս հարյուր երեսուներկու հոգի, որոնք, օրհնություն ստանալով, ճանապարհ էին ընկել դեպի հանդերձյալ աշխարհը։ Վիթխարի թիվ էր։

Այնուհանդերձ մի՞թե դա հրաշք չէր. հակառակ թուրքական վաշտերի և սովի պաշարմանը, դեռևս չորսուկես հազար հոգի ողջ էին մնացել։ Նրանցից ավելի քան յոթ հարյուր հոգի փորձված, անվեհեր ռազմիկներ էին և, ըստ երևույթին, մի անգամ էլ կկարողանային ետ մղել թուրքական գերակշիռ ուժերի հարձակումը։ Այո, Գաբրիել Բագրատյանին Յողոնօլուք էր բերել աստվածային ողորմածությունը։

Տեր-Հայկազունի կոպերը կապարի պես ծանրանում էին աչքերին։ Այդ չորսուկես հազար հոգին այլևս չէին ապրում։ Նա իր հոգևոր կարգը հանդերձանքով ասես մեն-մենակ կանգնած էր մեռյալների բազմության մեջ։ Բնավ չէր կասկածում, թե ինքը վերջինը կլինի, որքան էլ անազորույն լինի իրերի ընթացքը։ Սրտի զարկերը կրկին հանդարտվեցին, սակայն նա աննկարագրելի զգացումով մահվանն էր սպասում, մի բան, որը երբեք չէր պատահել նույնիսկ ճակատամարտերի ամենահուսահատական պահերին։ Անկախ իր կամքից, կարմիր հաստ մատիտով ծխամատյանում մի մեծ խաչ նկարեց, վերջին հանգուցյալի անվան տակ։

Սարկավագներից մեկը գլուխը շարունակ ներս էր մտցնում, նախազգուշացնում։ Նշանակված ժամը վաղուց անցել էր, և վտանգ կար, որ մեծ ժողովը կարող է տեսել մինչև գիշեր։ Բայց Տեր-Հայկազունը դեռևս չէր կարողանում տեղից պոկվել։ Նրան թվում էր, թե ինչ-որ ներքին ուժ իրեն կաշկանդում է, թույլ չի տալիս կատարել արտակարգ պատարագը։ Գլխապտույտն ու թուլությունը սպառնում էին անկողին գցել։ Վարդապետը հիվանդ էր, քաղցից ուժասպառ։ Պատարագը չեղյա՞լ հայտարարեր, թե՞ մեկնումեկին ուղարկեր իրեն փոխարինելու։ Տեր-Հայկազունը գիտակցեց, որ այսօրվա առաջադրանքը կատարելուն խանգարում է ոչ թե տկարությունը, այլ երկյուղը և ինչ-որ ուրիշ, անորոշ բան։ Ի վերջո, ոտքի ելավ, նշան տվեց շարժվելու։ Եկեղեցու պատանի սաներից մեկը երկար ձողի վրա ամրացված խաչը բռնելով՝ առաջ ընկավ։ Տեր-Հայկազունը ձեռքերը կրծքին խաչած և գլխահակ հետևեց դպիրներին ու սարկավագներին։ Թվում էր, թե ինքն իր մեջ խորասուզված վարդապետը ոչինչ չի նկատում, ճեղքվող և ճանապարհ տվող բազմության միջով անցնում է այնպես անտարբեր, կարծես մարդիկ թփեր կամ ծառեր լինեն։ Մինչդեռ ամեն ինչ տեսնում էր ծայրահեղ հրատակությամբ։ Մինչև խորան ընկած ճանապարհը հիսուն քայլ չէր լինի, բայց յուրաքանչյուր քայլափոխին նրան խոցում էր ժողովրդի ընկճված վիճակը, ցավ պատճառում։ Առավոտյան թմրությունը տեղի տվեց հուզումնալից կորովի։ Մարդկային էության մեջ նման պահերին ինչ-որ արտակարգ ուժեր են հայտնաբերվում, գուցե և շինծու։

Փոքրիկ երեխաներն անզուսպ աղմկում էին։ Կոկորդով մեկ ճչում էին, ջղաձգվում, գլորվում գետին։ Երևի, նրանց փոքրիկ, ուռած փորերը քաղցից դալարվում էին։ Ջայրացած մայրերը ցնցում էին նրանց, ծեծում, քանի որ հանգստացնելու ուրիշ միջոց չկար։ Գուգռոցներն ու կշտամբանքները հետզհետե ուժգնանում էին։ Սրբազան արարողությունը հավանաբար խանգարվելու էր, քանի որ ժխորն անհնարին էր դարձնում զոհաբանությունն ու աղոթքը։ Ոչ միայն երեխաներն էին իրենց անհանգիստ պահում, այլև մեծահասակների մի մասը։ Դրանք ծեր մարդիկ էին, մեզ ծանոթ «մանր հողատերերը», որոնք անկապ-անկապ խոսում էին, փոխանակ պատկառանքով լռեին, երբ իրենց մոտով դեպի խորանն էր քայլում վարդապետը։ Այդ բանը նկատելով, Տեր-Հայկազունը եզրակացրեց, որ սովին ուղեկցում է ներքին քայքայումը։ «Լավ է, մտածեց նա, որ զինվորները ժողովի չեն եկել։ Քանի դեռ ռազմիկները հաստատակամ կանգնած են, ամեն ինչ կորած չէ»։ Այս խորհրդածությունից հանդարտված՝ նա գլուխը բարձրացրեց և մի վայրկյան քարացավ։ Սա ի՞նչ է նշանակում։ Զինված մարդիկ էլ կային՝ առանձին-առանձին կամ խմբված։ Բոլոր դեպքերում եկել էին հակառակ Գաբրիել Բագրատյանի ցանկության։ Ո՞վ էր այդ մարդկանց խրամատներից ուղարկել այստեղ։ Քանի որ կանայք, օրվա առաջին կեսի թմրությունը հաղթահարելուց հետո, պատարագի առթիվ հագել էին իրենց տոնական զգեստները, կապել նախշուն գլխաշորերը և կախել փայլփլուն դրամազարդերը, ռազմիկների գոյացրած գորշ կետերը ձուլվում էին բազմության ընդհանուր ֆոնին։ Երբ Տեր-Հայկազունը նորից նայեց, համոզվեց, որ դրանք ոչ թե մոտակա հատվածների զինվորներն են, այլ Հարավաբերդից եկած դասալիքները, այն էլ հեռավոր սահմանագլխին ծառայող ոչ տեղացի տղաները, որոնց անունները ծխամատյանում չկային։ Դրանք, բարեբախտաբար, հազվադեպ էին գաղթական գալիս, իսկ պատարագի ժամանակ երբեք չէին երևում։ Մի՞թե այդ մարդիկ միանգամից դարձան աստվածավախ։ Տեր-Հայկազունը գլուխը դարձրեց դեպի աջ, կառավարչատան կողմը։ Որտե՞ղ էր պահակախումբը։ Ա՜խ, այո՜. Բագրատյանը բոլորին, նույնիսկ պահեստայիններից շատերին ուղարկել էր խրամատները։ Վարդապետի միտքը կայծակեց։ Արդյոք որևէ պատրվակով ետ չդառնա՞, չհետաձգի՞ արարողությունը։ Պետք է մարդ ուղարկել Գաբրիելին կանչելու, պետք է հայտնել մուխթարներին, ապահովության միջոցներ ձեռք առնել... Հակառակ այս խորհրդածություններին, նա շարունակեց առաջ գնալ, բայց ավելի դանդաղ, ավելի վարանոտ քայլերով։

Խորանի մոտ խիտ շարքով կանգնած էին հնադավան, նշանավոր ընտանիքների անդամները, մուխթարներն իրենց կանանց ու դուստրերի հետ, պատվարժան ծերունիների բազմությունը՝ նույն կարգով, ինչպես հովտում ապրած ժամանակ, եկեղեցում։ Ավագների խորհրդի ներկայացուցիչներից քչերն էին երևում։ Բժիշկ Ալթունին, որն իր ազատամտությունը երբեք ցույց չէր տալիս, հիվանդանոցից գալ չէր կարող։ Տեր-Հայկազունը հայացքով ապարդյուն որոնեց պատվելի Արամին։ Ուսուցիչ Շատախյանի բացակայությունը հարգելի էր, քանի որ նա, իբրև կապավորների հրամանատար, պետք է մնար հյուսիսային խրամատում։ Ինչ վերաբերում է Բագրատյանին, նա խոստացել էր ճիշտ ժամին ներկա լինել պատարագին, բայց ինչ-որ պատճառով դեռևս ուշանում էր։ Երբ ծեր գյուղացիների շարքերը ետ-ետ գնացին հոգևոր թափորին ճանապարհ տալու, Տեր-Հայկազունի սիրտն ինչ-որ վատ բան նախազգաց։ Սարգիս Կիլիկյանի և մի անծանոթի արանքում սեղմված էր Հրանտ Ոսկանյանը, իբրև կալանավոր։ Գաճաճը հուսահատ ծամածռեց իր սև, մազակալած դեմքը, նշանացի նայեց վարդապետին, բերանն անզոր բացուխուփ արեց, ինչպես ցամաք նետված ձուկ։ Տեր-Հայկազունը մի պահ ուզեց կանգ առնել և վոնդվածին խստությամբ հարցնել. «Ի՞նչ կա։ Ի՞նչ ես ուզում ասել, վարժապե՛տ Ոսկանյան»։ Բայց շարունակեց առաջ գնալ։ Գլուխը գրեթե չէր բարձրացնում, առաջ էր շարժվում՝ հպատակվելով ինչ-որ ուժի, ավելի ճիշտ, ուժասպառության, որից առաջին անգամ Դամլաջրքի բարձունքներում սասանվեց նրա զորավոր կամքը։

Հենց այն վայրկյանին, երբ ոտքը դրեց խորանի սանդուղքին, հիշեց, որ Նոխուդյանի նամակը մոռացել է իր խցում։ Այդ իրողությունը նրան խիստ շփոթության մատնեց։ Չէ՞ որ նա մտադիր էր օրհնությունից հետո կարդալ պատվելու նամակը, հայտնել, թե ինչ վախճան են գտել իրենց հայրենակիցները, դրանով իսկ հուսախաբ անել փախուստի կողմնակիցներին։ Մոռացված թուղթն ու վատ նախազգացումը վարդապետի վրա այնքան խորն ազդեցին, որ ահագին ժամանակ անցավ, մինչև նա սանդուղքով բարձրացավ խորանը։ Թիկունքում հավաքված բազմությունը կարծես պարզորոշ զգաց հոգևորականի մտամոլորությունն ու անզորությունը, քանի որ մանկական ճիչերը, ընդհանուր անհանգստությունն ու անպատկառ շաղակրատանքը հետզհետե ավելի սանձարձակ բնույթ էին ստանում։ Մի՞թե այդ ամայացած սրտերը կարող էին բոցկլտալ բուռն խանդավառությամբ և ջերմեռանդ ազոթքով ոգեկոչել աստծո հրաշագործությունը։

Տեր-Հայկազունը տառապանքով շրջվեց բազմության կողմը։ Ահա և Գաբրիել Բագրատյանը։ Հնասպառ եկավ, կանգնեց առաջին շարքում։ Վարդապետը մի պահ թեթևություն զգաց։ Դպրաց դասն արդեն ծոր տվեց շարականը։ Այդ կարճատև ազատ պահին Տեր-Հայկազունն աչքերը փակեց, որ ի մի բերի մտքերը։ Հրապարակով մեկ խուլ և հոգնաբեկ ծավալվեցին երգի հնչյունները.

Զարարչական բազուկս Քո տարածեցեր ընդդեմ աստեղաց,
Հաստատեա՛ զբազուկս մեր կարողութեամբ,
Համբարձմամբ ձեռաց առ Քեզ միջնորդել։

Իսմամբ թագ ի գլուխ պատեսցես զմիտս եւ զզգայարանս,
Խաչանիշ ուրարմամբ ըստ Անարոնի,
Ծաղկեալ յոսկեթել ի զարդ խորանին։

Բամից քոյորից տիրապես աստուածպետակոն
Նափորտապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր,
Քում սուրբ խարհրդոյդ լինել սպասաւոր։

Երգչաց դասը լռեց։ Տեր-Հայկազունն իր առջև տեսավ սարկավագի մատուցած արծաթյա փոքրիկ տաշտակը։ Վարդապետը մատները թաթախեց ջրի մեջ, բայց այնքան երկար պահեց, որ սարկավագը զարմանքով էտ քաշեց տաշտակը։ Տեր-Հայկազունը կիսով չափ շրջվեց հասարակության կողմը և երիցս խաչակնքեց հավատացյալներին։ Ապա կրկին դարձավ դեպի խորանը, բազկատարած կանգնեց։ Այդ վայրկյանին Տեր-Հայկազունի էությունը բաժանվեց երկու մասի։ Մի կեսը պատարագող վարդապետն էր և հինավուրց կարգով վարում էր արտակարգ արարողությունը, բաց չթողնելով շարականների այն հատվածները, որ պետք է երգեր ինքը։ Մյուս կեսը բաղկացած էր մի քանի խավից։ Դա մահու չափ ուժասպառ մի ռազմիկ էր և պետք է գերմարդկային ուժ դրսևորեր, որպեսզի վարդապետը կարողանար կատարել իր պարտքը։ Ամենից առաջ դա սեփական մարմնի դեմ երկրորդ Տեր-Հայկազունի մղած պայքարն էր։ Արարողության յուրաքանչյուր բառի վրա այդ մարմինն ասում էր. «Մինչև այստեղ, ո՛չ ավելին։ Մի՞թե չես տեսնում, որ գլխումս ոչ մի կաթիլ արյուն այլևս չկա։ Մեկ-երկու բոպե հետո քեզ խայտառակ կանեմ. գետնատարած կընկնես զոհասեղանի առաջ»։ Եթե խոշընդոտը միայն այդ մարմինը լիներ, ռազմիկը մի կերպ կտոկար։ Սակայն մարմնի ետևում բաղմաթիվ նենգ թշնամիներ կային թաքնված։ Դրանցից մեկն աճպարար էր և վարդապետի աչքի առաջ շարունակ այլափոխում էր սուրբ սպասքը։ Արծաթյա մեծ աշտանակները դարձան ցցված սվիններ։ Պատարագամատույցի գեղատիպ էջերից դուրս թռան ծխամատյանում

գրանցված հանգուցյալների անունները։ Ամեն կողմից սպառնում էր կարմիր մատիտով նկարված մեծ խաչը։ Երբ քամու հոսանքը, մերթ-ընդմերթ սաստկանալով սուլում էր, խորանի պատի վրա աղմկում էին չոր ճյուղերը, կատաղի պար էին սկսում թոշնած տերևները, անպատկառորեն իջնում մինչև տապանակը, մինչև ոսկեխաչ կազմով ավետարանը։ Ամենուրեք թափթփված էին այդ չորացած, գորշացած տերևները՝ առանձին-առանձին և շեղջերով։ Պատարագողը՝ Տեր-Հայկազունը, հասավ սաղմոսին։ Կարծես բոլորովին օտար ձայնով նա երգեց.

«Դատ արա ինձ, Աստուած, եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում»։ Սարկավագը մեղմածոր արձագանքեց.

«Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս»։

«Ընդէ՞ր մոռացար զիս։ Ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ»։

«Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ»։

Մինչ Տեր-Հայկազունը սարկավագի հետ անսխալ երգում էր այս երկարաշունչ սաղմոսը, երկրորդ Տեր-Հայկազունի աչքին միանգամայն անտանելի բաներ էին երևում։ Ամենուրեք սփռված չոր տերևները բնավ էլ տերևներ չէին, այլ աստծո ոսոխների, եղեռնագործների կողմից զոհասեղանին շաղ տրված աննկարագրելի աղտեղություն, աղբ, կղկղանք։ Ուրիշ բացատրություն տալ հնարավոր չէր։ Մի՞թե երկինքը կարող էր նման աղտեղություն անձրևել։ Տեր-Հայկազունն աչքերը գամել էր պատարագամատույցին, որպեսզի չտեսնի այդ սահմռկեցուցիչ սրբապղծությունը։ Սակայն մի՞թե ժողովուրդն այդ բանը չէր տեսնում։ Այստեղ առաջին անգամ տեքստն աղավաղվեց։ Սարկավագը երգեց.

«Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցցո՛ եւ ողորմեա՛»։

Վարդապետը պետք է շարունակեր, բայց նա լուռ մնաց։ Սարկավագը չռված աչքերով շրջվեց դեպի դպրաց դասը։ Տեր-Հայկազունի ձայնը դարձյալ լսվեց։ Սարկավագը մի քայլ առաջ եկավ և ականջին ջշնջաց. «Ի յարկի սրբութեան...»։

Տեր-Հայկազունը կարծես ոչինչ չէր լսում։ Սարկավագը կիսաձայն և հուսահատված կրկնեց տողը.

«Ի յարկի սրբութեան եւ ի տեղւոջս...»։

Տեր-Հայկազունն սթափվեց.

«Ի յարկի սրբութեան եւ ի տեղւոջս փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս, առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք...»։

Վարդապետը ծանր էր շնչում։ Վեղարի տակից քրտինք էր հոսում, թրջում ճակատն ու ծոծրակը։ Սիրտ չէր անում սրբել։ Այդ պահին նրա թիկունքից լսվեց դպրապետ Ասայանի ոնգային սուր ձայնը.

«Յայս յարկ նուիրանաց ուխտի Տեառն տաճարիս, ժողովեալքս աստանօր ի խորհուրդ պաշտման...»։

Ամբարտավան և սնափառ Ասայանի ձայնը Տեր-Հայկազունի վրա ազդեց ավելի, քան երբևէ։ «Այժմ օձիքս ազատեմ մարդկանցից»,— մտածեց նա։ Նույն վայրկյանին փոքր-ինչ հանդարտվեց քունքերի ճնշումը։ «Թերևս դիմանամ։ Զորավի՛գ եղիր ինձ, Քրիստո՛ս»։ Պատարագողը սարսափահար աչքերով նայեց խորանի խաչելությանը։ Նրա էության բաղադրիչ մասերից մեկը՝ երկրորդ Տեր-Հայկազունը, նախազգուշացրեց. «Շատ առաջ մի՛ նայիր»։ Բայց հենց այդ նախազգուշացման պատճառով նա նայեց առաջ, դեպի տոսախի ճյուղերից պատրաստված բարձր պատը, որով շրջափակվում էր խորանը։ Այնտեղ, շրջանակի սյանը հենված, կանգնել էր ինչ-որ մեկը։ Ձեռքերը խաչել էր կրծքին, իսկ բերանին ծխում էր գլանակը։ Անլո՜ւր լրբություն։ Տեր Հայկազունը կուլ տվեց աղաղակը։ Երբ նորից նայեց, այդ մարդն այլևս Սարգիս Կիլիկյանը չէր, որից նողկում էր և որին օրեր առաջ շղթայակապ էր արել։ Երբեմն դա կարծես ոչ ոք էլ չէր։ Պատն ամայի էր, քարացած։ Այնուհետև Ռուսը կրկին հայտնվեց, զանազան մարդկանց կերպարանքներ ընդունեց։ Նույնիսկ մի անգամ թվաց, թե դա հանգուցյալ Գրիգորն է։ Ի վերջո, դարձավ պատարագի հանդերձանքներ հագած քահանա։ Սկզբում Տեր-Հայկազունին ծիծաղելի թվաց, որ այդ հոգևորականը կարող է ինքը լինել։ Բայց ինքը չէր, քանի որ զինվորականի բրդյա փափախ չէր կրում, այլ ոսկեզրվագ վեղար։

«Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ...»։

Այլևս չշարունակեց։ Պատի մոտ կանգնած մարդու և նրա միջև բեկբեկվում էր սեփական ձայնը, ետ դառնում, մխրճվում իր լսողության մեջ. «Ի՞նչ ես օրը ցերեկով ձեռնածություն անում։ Ինչի՞ համար է այս պատարագը»։

Տեր-Հայկազունը հայացքով հետևում էր խնկի վեր բարձրացող ամպերին։ Բայց դիմացի մարդու կերպարանքն ու ձայնը նրանից պոկ չէին գալիս. «Ի՞նչ սատանա պետք է լինի այն աստվածը, որն իր բարեպաշտ հայ ազգի գլխին այսպիսի տարի բերեց...»։

Տեր-Հայկազունը, ըստ օրինաց, սկսեց իրիկնային ժամերգությունը.

«Սո՛ւրբ Աստուած, սո՛ւրբ եւ հզօր, սո՛ւրբ եւ անմահ, ողորմեա՛ մեզ։ Պահեա՛ զմեզ ի փորձութենէ եւ յամենայն նեռից»։

Այս խոսքերին պատասխանեց ոչ թե Կիլիկյանը, այլ ներսում հնչող ձայնը.

«Չե՛ս հավատում, բոլորովին էլ չե՛ս հավատում հրաշքին։ Համոզված ես, որ վաղը Դամլաջրքը կծածկվի չորսուկես հազար հայերի դիակներով»։

Սարկավագը Տեր-Հայկազունին մեկնեց բուրվառը, որպեսզի նա, սովորության համաձայն, խնկարկի ժողովրդին։ Տեր-Հայկազունը հանկարծ տոչորվեց ծարավից։ Անմիտ, անտեղի զգացում։ Պատի վրա ոչ ոք այլևս հենված չէր։ Սակայն ձայնը առաջվա պես մոտ էր. «Դու ինձ ուզում ես սպանել։ Սպանիր, եթե այդքան քաջություն ունես»։

Բուրվառը վարդապետի ձեռքից զնգոցով ընկավ տախտակամածին։ Այդ վայրկյանին հայտնվեց մի նոր Տեր-Հայկազուն։ Բարբարոսական աղաղակով նա ձեռքն առավ արծաթյա ծանր աշտանակներից մեկը, թափահարեց իր գլխավերևում։ Բայց ոչ թե իր թշնամու՝ պատին հենված տեսիլքի վրա հարձակվեց, այլ նետվեց բազմության մեջ։

Եթե չլիներին Տեր-Հայկազունի մոտ քաղցից առաջացած մղձավանջը ու զայրույթի նոպան, խռովություն հավանաբար չլիներ։ Հարավաբերդի դասալիքները, մեծ մասամբ հայորդիներ, պատկառանքով ու երկյուղածությամբ կանգնած էին խորանի առաջ։ Երկարամազն իր խմբով հարձակման պատրաստ սպասում էր կառավարչատան մոտակայքում։ Երբ խորանի հրապարակում իրարանցում սկսվեց, երկարամազին թվաց, թե դա ցանկալի ազդանշանն է։ Տասը հոգի սկսեցին անկանոն կրակել՝ խառնաշփոթություն առաջացնելու և սարսափ տարածելու նպատակով։ Մյուսները դուռը ջարդեցին, մի քանի վայրկյանում գտան զինամթերքի արկղերը և դուրս բերին։ Իսկ այն, ինչ տեղի ունեցավ խորանի սանդուղքի մոտ, կատարվեց այնքան արագ, ինչպես կարող է կատարվել միայն երազում։ Ո՛չ մուխթարները գլխի ընկան, թե ինչ պատահեց, ոչ էլ նույնիսկ Գաբրիել Բագրատյանը։ Այստեղ երազայինն ավելի էական դեր խաղաց, քան արագությունը, քանի որ ամբողջ դեպքը տևեց երկու բոպեից ոչ ավելի։ Դրանք, իհարկե, սովորական բոպեներ չէին. կարծես եկան ու անցան ժամանակի ինչ-որ արտասովոր ուղեծրով։

Երբ Տեր-Հայկազունը, աշտանակը գլխավերևում թափահարելով

նետվեց հավատացյալների բազմության մեջ, բոլորը ետ փախան։ Գաբրիելը տեսավ, թե վարդապետը ինչպես է մղվում դեպի դասալիքների խումբը։ Ինքն էլ չհասկացավ, թե այդ խաժամուժին ով է հրավիրել պատարագի կամ ժողովի։ Թվում էր, թե Տեր-Հայկազունը որոշակի մարդու է փնտրում։ Բայց հետևյալ վայրկյանին նրան շրջապատեցին մի խումբ զինված մարդիկ։ Աշտանակը ձեռքից խլեցին, գոռգոռալով դես-դեն քաշքշեցին և, ի վերջո, վայր տապալեցին։ Այժմ կրակոցները լսվեցին բազմության թիկունքից։ Հրապարակում հավաքվածները սարսափահար աղաղակեցին, իրար անցան։ Մուխթարներն իրենց կանանց հետ լեղապատառ փախան։ Բագրատյանը, առաջ պարզելով ատրճանակը, նետվեց Տեր-Հայկազունին ազատելու, բայց դասալիքներից մեկը ետևից վրա հասավ, հրացանի խզակոթով կատաղորեն հարվածեց։ Գաբրիելը ցած փռվեց։ Եթե լայնեզր գլխարկը գլխին չլիներ, հարվածը նրա կյանքին վերջ կտար։ Գլխարկը ճապաղվեց դեմքի վրա, թուլացնելով մահացու հարվածը։ Գաբրիելը վերք չստացավ, բայց կորցրեց գիտակցությունը։

Մինչ այդ Տեր-Հայկազունին մյուս դասալիքները պարաններով ամուր կապեցին խորանի անկյունային սյուներից մեկին, որը հողի մեջ շատ խորն էր թաղված։ Վարդապետն անմռունչ սպասվում էր, զարմանալի դիմադրություն ցույց տալիս։ Եթե դաշույնը մոտ լիներ, որը սովորաբար պահում էր պարեգոտի գրպանում, ապա ոճրագործներից գոնե մեկի բանը բուրդ կաներ։

Մուխթարները հեռվում կանգնած հևում էին, սարսափից դողում։ Բոլորն էլ քաղցից ուժասպառ ծերացած մարդիկ էին։ Նրանք չէին կարող վարդապետին օգնել։ Ի վիճակի չէին պաշտպանելու նույնիսկ իրենց։ Կանայք ու դուստրերն անմարդկային աղաղակներով ջանում էին նրանց ետ քաշել։ Բազմությունը դեռևս ուշքի չէր եկել։ Հրացանային կրակոցներից կիսախելագար եղած մարդիկ նետվեցին դեպի խորանը։ Բայց քանի որ առաջին շարքերը նույն պահին ետ դարձան, ծայր առավ սարսափելի մի քաոս, իրար բախվող մարմինների անկանոն մի հորձանք, պոռթկացին զարհուրանքի և ցավի աղաղակներ։ Ամիսներով կնոջ երես չտեսած սանձարձակ ստահակները ձկնկուլների պես նետվեցին դեպի խառնաշփոթ բազմությունը, կեղտոտ ձեռքերով կառչեցին կանանցից ու աղջիկներից։ Աղիողորմ ճչացող զոհերի վրայից քաշում, պատառոտելով հանում էին տոնական զգեստներն ու զարդարանքները։ Մի այլ, առավել շրջահայաց խումբ գրոհեց դեպի խրճիթները՝ խեղճ ու կրակ բնակիչներին կողոպտելու։ Այդ ամենն այնքան զարհուրելի էր, որ դասալիքների բարբարոսությունը կարելի էր մեկնաբանել միայն իրրև

կատաղության նոպա, իբրև ժողովրդի հոգեվարքային ցնցում, ժողովուրդ, որի յուրաքանչյուր նյարդը առանձին-առանձին կտրատել էր այդ ցեղի թշնամին։ Համենայն դեպս մխիթարականն այն էր, որ ստահակների մեծամասնությունը չարագործությանը չէր մասնակցում, մնում էր հանդիսատեսի, անտարբեր դիտողի դերում։

Մինչ այս, մինչ այն ի հայտ եկան դիմադրության առաջին նշանները։ Գաղթականների բնակիչներից ոմանք, որոնք դեռ լրիվ ուժասպառ չէին եղել, բռունցքներով հաշիվ էին տեսնում իրենց ձեռքն ընկած դասալիքների հետ։ Ավազակներին զինաթափ էին անում, վայր գլորում, ոտքերով տրորում։ Ավելի համարձակներն առաջ նետվեցին Տեր-Հայկազունին ազատելու։ Մեկ-երկու րոպե ևս, և գուցե անլուր արյունահեղություն սկսվեր, քանի որ բնակիչների թվական գերակշռությունից ահաբեկված դասալիքներն արդեն պատրաստ էին պահել հրացանները։ Սակայն քմահաճ ճակատագիրն այս անգամ ևս միջամտեց։ Ինչպես վերջին օրերին հաճախ էր պատահում, քամին հանկարծ ուղղությունը փոխեց։ Հրապարակում գալարվեց պտուտահողմը։ Քանի որ ոչ ոք այլևս խորանը չէր հսկում, փայտե երկու աշտանակ ու մի ծաղկաման շուռ եկան, զոհասեղանից վայր գլորվեցին։

Տեր-Հայկազունը դեռևս լուռ մաքառում էր հաստ պարանների դեմ, որոնցով ինքը կապկված էր։ Երբեմն-երբեմն անշարժանում էր՝ ուժ հավաքելու համար։ Ամեն հարվածից օրորվում էր շինվածքը։ Վարդապետն իր արնակալած աչքերով որոնում էր սարկավագներին, դպիրներին, Ասայանին, ժամկոչին։ Բայց սրանք բոլորն էլ չքացել էին կամ չէին համարձակվում մոտենալ շղթայակապ հովվապետին։ Չէ՞ որ Տեր-Հայկազունին հսկում էին մի խումբ դասալիքներ, որպեսզի մյուսները հանգիստ կողոպտեին զինապահեստը։

Խորանի մոտ խմբված ստահակների հետ էր նաև Սարգիս Կիլիկյանը։ Հետաքրքրությամբ նայում էր վարդապետին, հետևում նրա ազատվելու ապարդյուն ջանքերին։ Նայում էր այնպես, կարծես ինքը մազաչափ անգամ հաղորդակից չէր անցուդարձին և եղելությունը դիտում էր միայն հետաքրքրությունից դրդված։ Քիչ հետո Ռուսը դանդաղաքայլ հեռացավ։ Դասալիքը ձանձրույթից կուչ եկած թիկունքով կարծես ասում էր. «Հերիք է ինչքան նայեցի։ Իսկական ժամանակն է»։

Կիլիկյանը նոր էր հեռացել, երբ տեղի ունեցավ հրեշավոր աղետ։ Քանի որ դասալիքի հեռանալն ու դժբախտությունը տեղի ունեցան միաժամանակ, Տեր-Հայկազունը հետագայում խորանը հրդեհելու մեջ մեղադրում էր Կիլիկյանին։ Իրականում Ռուսն անցավ սանդուղքի մոտով

և նույնիսկ չնայեց ճյուղաշեն պատին, որը երեք քայլ հեռավորության վրա էր։

Սկզբում չոր փայտից ու ճյուղերից պատրաստված պատը թույլ ճարճատեց, բայց հանկարծ բոցն ուժեղացավ, վեր նետվեց պատի կրկնակի բարձրությամբ։ Ծովային քամուց իսկույն թեքվեց դեպի աջ։ Հրեղեն լեզուները դրոշների պես ծածանվելով առաջ նետվեցին, հասան մոտակա խրճիթին։ Դա Թովմաս Քեբուսյանի փառահեղ տունն էր, որի դռանը գրված էր «Թաղապետարան»։ Այստեղ կրակը փոքր-ինչ դանդաղեց, կարծես խղճի խայթ զգաց։ Բայց երբ խրճիթի ճյուղածածկ կտուրը մի քանի րոպեում բոցերի մեջ կորավ, հրդեհը կրկին անզուսպ թափով առաջ սլացավ։ Շուտով բոլոր խրճիթներից հրեղեն խրձեր էին դուրս նետվում։ Դա մեծ քաղաքի զբոսայգում վառվող լույսերի շղթա էր հիշեցնում։ Ստահակ դասալիքները, ըստ երևույթին, կրակի բազմաթիվ օջախներ էին ստեղծել, որպեսզի վիթխարածավալ հրդեհով շփոթության մատնեին ժողովրդին, անհնարին դարձնեին իրենց հետապնդումը։ Հրեղեն դրոշը փողփողաց նաև կառավարչատան վերևում։ Բայց սկզբից ևեթ պարզ էր, որ հրդեհը՝ այդ անցանկալի հյուրը, փոխում է ուղղությունը, հեռանում Քաղաքաձորից։

Երբ խորանի ճյուղաշեն պատը բռնկվեց, բազմությունը ռումբի պես պայթեց։ Ոչ ոք այլևս չէր մտածում ո՛չ ոճրագործների, ո՛չ խորանի, ո՛չ պարաններով կապկված վարդապետի, ո՛չ էլ հնարավոր զոհերի մասին։ Մարդիկ ինչ-որ օտարոտի, գրեթե վրնջյուն հիշեցնող աղաղակներով նետվեցին դեպի խրճիթները։ Ամեն ինչ կորչելու էր, քանի որ հրդեհը հանգցնելու ոչ մի միջոց չկար։ Ո՞վ կարող էր հրդեհի առաջն առնել։ Պետք էր փրկել ամենակարևորը՝ վերմակները, ներքնակները, խսիրները, նաև ձեռքի գործիքները՝ տուն ու տեղից մնացած հիշատակները, այն ամենը, ինչ հարկավոր էր ապրելու համար, ինչ հայրենի հողից դժվարությամբ բարձրացրել էին գաղթականները։ Դրանք հիշատակներ էին, որ մարդկանց պետք է ուղեկցեին մինչև գերեզման։ Սեփականության և կյանքի զգացողությունն այդ պահին այնքան միաձույլ էր, որ հասարակության ամեն անդամ ջանում էր մի բան փրկել։ Ոչ ոքի մտքով չէր անցնում այս պարզ ճշմարտությունը. «Ինչո՞ւ իզուր չարչարվեմ, ի՞նչ օգուտ՝ կա թե չկա այս հնոտիքը։ Ավելի լավ կլինի, եթե հանգիստ նստեմ, նայեմ հրդեհին»։ Բայց ո՛չ։ Մուխթարներն ու հարուստ տնատերերը, այն դողդոջուն ծերունիները, որոնք սարսափից մեխվել էին իրենց տեղում և չէին համարձակվում Տեր-Հայկազունին օգնել, հանկարծ ուժ ստացան։ Նրանց փողե՛րն էին այրվում, խնամքով ծալված թղթա-

դրամնե՛ր, որոնք խրճիթների անկյուններում, ներքնակների տակ պահված՝ այժմ անօգնական սպասում էին իրենց փրկարարներին։ Փողը փող է՝ դառը քրտինքով վաստակած, սրբորեն պահպանված։ Պետք էր փրկել, թեկուզ և կյանքի տվյալ պայմաններում դա էական ոչ մի նշանակություն չուներ։ Մերունիները կանանց ու դուստրերի հետ գլխապատառ վազեցին դեպի իրենց խրճիթները։ Քեբուսյանն ու նրա մերձավորները վաղուց արդեն արիաբար պաշարել էին բոցկլտացող «թաղապետարանը»։

Հապա Տեր-Հայկազո՞ւնը... Է՛հ, երևի մեկնումեկն արդեն ազատել է։

Եվս կատաղի մի փորձ, ապա վարդապետն անձնատուր եղավ իր ճակատագրին։ Կանեփե կոշտ պարանները պատարագի հանդերձանքի կարծը մետաքսը կտրատել, մտել էին թևերի ու կրծքի մաշկի մեջ։ Սառը քրտինքը հոսում էր մեջքն ի վար։ Հրո ճարակ դարձած պատի վրայից բոցավառ ճյուղեր էին թռչում դեպի խորանը, որն արդեն տեղ-տեղ սկսել էր բռնկվել։ Երբեմն-երբեմն կայծեր էին նետվում նաև շղթայված վարդապետի կողմը։ Բեղերն ու մորուքն արդեն խանձվել էին։ Խորանի ծայր վարագույրը բռնկվեց։ Պարանն իսկույն կտրվեց, և վարագույրը, իբրև կրակի հսկայական մի շեղջ, փուլ եկավ սանդուղքի վրա։

Ի՞նչ տարօրինակ բան. հրապարակը դատարկ էր։ Ընտանիքները գոռգոռալով ոստոստում էին այրվող խրճիթների շուրջը։ Օգնության կանչել չարժեր։ Եթե մի քահանա շղթայված է խորանի սյանը և մարտիրոսաբար նահատակվում է, ապա նա, հանդերձյալ աշխարհի փոխարեն, իր մեղքերն արդեն քավում է այս աշխարհում։

Հրեղեն մտրակը շառաչեց Տեր-Հայկազունու կողքին։ Երանի՜ թե նրան սպանողները թուրքեր լինեին, ո՛չ թե հայորդիներ, ո՛չ թե հարազատ ժողովուրդը։

— Ա՜խ, շնե՛ր, շնե՛ր, վայրենի՛ շներ...

Այս բառերը վարդապետի կոկորդից պոռթկացին այնպիսի կատաղությամբ, որ քիչ մնաց խեղճի գլուխը պայթեր։ Ոտքերը պրկեց, գոռգոռալով ավելի ձգեց իր շղթաները, ինչպես ծանրաբեռ սայլին լծված գրաստ։ Տների առաջ մարդիկ հուսահատ աղաղակում էին, բայց երբ հրապարակով մեկ թնդաց Տեր-Հայկազունի կատաղի գոռոցը՝ «Շնե՛ր, շնե՛ր», ապա շահախնդրությունից բթացածները մի մարդու պես նետվեցին դեպի խորանը՝ վարդապետին ազատելու։ Դեռևս տեղ չէին հասել, երբ այրվող սյուները տեղի տվին, խորանը փուլ եկավ, տախտակները նոր ուժով բոցավառվեցին, և վարդապետը վայր գլորվեց։ Մարդիկ նրան

բարձրացրին, արագ-արագ կտրատեցին պարանները։ Տեր-Հայկազունը մի քանի քայլ արեց, բայց իսկույն ուշագնաց ընկավ։

Բժիշկ Ալթունին վրա հասավ այն պահին, երբ մի քանի ծերունիներ ու կանայք ուզում էին օգնություն ցույց տալ անզգա փռված Բագրատյանին։ Զարկերակը բռնելուց առաջ տեսավ, որ Գաբրիելը մեռած չէ։ Բժիշկը թառանչ արձակելով նստեց և գետնին տարածված հրամանատարի գլուխը գիրկն առավ։ Զգուշորեն կուրս բաշեց ծղոտե դլխարկը, որը խղակոթի հարվածից ցած էր իջել, ծածկել նույնիսկ աչքերը։ Գլխարկը հանելուն պես Գաբրիելն աչքերը բացեց։ Նրան թվաց, թե քնած է անցել։ Չէ՞ որ ամեն ինչ անհավատալիորեն արագ կատարվեց, ժամանակի հասկացողության հետ ոչ մի կերպ չառնչվող կարճ ժամանակամիջոցում։ Հետզհետե զգաց իր գլխի այրող ծանրությունը։ Բժիշկն զգուշորեն շոյեց գլխի մաշկը։ Արյան ոչ մի հետք։ Միայն մի մեծ ուռուցք։ Բայց գուցե հարվածից ներսում որևէ երա՞կ է պայթել։ Բժիշկ Ալթունին քնքշանքով տվեց Գաբրիելի անունը։ Սա թերահավատությամբ շուրջը նայեց, ժպտաց։ Ոչինչ չէր հասկանում։ Զորս կողմ այրվում էին խրճիթները։ Կառավարչատունն ահռելի բոցերի մեջ էր։ Դե, իհարկե, դեղագործի գրադարանը բավականաչափ սնունդ էր տվել հրդեհին։ Մարդիկ լաց ու կոծով քարշ էին տալիս վերմակներ ու սավաններ, դես-դեն էին վազվզում, իրենք էլ չիմանալով, թե ուր։ Վերջապես, դեպի փլուզված և բոցերի մեջ կորած խորանը վազեցին գյուղական քահանաներն ու դպիրները՝ սրբազան սպասքը, ավետարանն ու պատարագամատույցը փրկելու։ Բոլորն էլ դեռևս ծիսային հանդերձանքներ էին կրում։

Գաբրիելը փոքրիկ երեխայի պես գլուխը դրել էր ծերունի բժշկի գոգին։ Տեսարանը սրտաշարժ էր, բայց թե դա ի՞նչ էր նշանակում։ Մի քանի քայլ հեռու ընկած էր Տեր-Հայկազունը։ Յողոնջուքի գրասենյակի քարտուղարը թասով ջուր էր մեկնում նրան։ Վարդապետի կուրծքը բաց էր։ Ինչ-որ պառավ կին թաց շոր էր քսում հոգեւոր հոր մարմնին, փորձում ուշքի բերել։ Գաբրիելն անսահման զարմանքով նայեց ծեր բժշկին.

— Այս ի՞նչ է պատահել...

Ալթունին քմծիծաղ տվեց.

— Երանի՜ թե իմանայի, զավա՛կս...

Եվ նա իր գորշ, կնճռոտված ձեռքերով քնքշորեն շոյեց սթափված Գաբրիելի դեմքը.

— Համենայն դեպս քեզ ոչինչ չի պատահել։ Դա հաստատ գիտեմ։

Բագրատյանը ոտքի թռավ։ Հիշողությունը դանդաղ վերադարձվեց։ Բուռ գինովությունից դեռևս լիովին չսթափված՝ հարցրեց.

— Ո՞վ հարձակում գործեց... ինքնե՞րս արինք... Հիսո՜ւս Քրիստոս... Հարավաբե՜րդը... Ամեն ինչ արդեն կորա՜ծ է...

Տեր-Հայկազունը նույնպես տեղից կիսով չափ բարձրացավ։ Նրա ձայնը, նույնպես գինովության խորքերից հնչեց պարզ ու հաստատուն.

— Ո՛չ դեռևս...

Բագրատյանը ոչինչ չլսեց։ Կրակն այնպես էր ճարճատում, այնպես էր շառաչում, որ մարդ չէր լսում նույնիսկ սեփական ձայնը։ Հրդեհը քայլ առ քայլ լափում էր իրճիթները, շարժվում առաջ։ Քաղաքաձորի եզերին գտնվող ծառախմբերը ևս բոցերի մեջ էին։ Հետզհետե ավելի ու ավելի մեծ թվով ընտանիքներ, իրենց փրկած դույքն առած, հավաքվում էին խորանի հրապարակում, սպասում ուղղություն և նպատակ ցույց տվող կարգադրության։ Կանանցից մի քանիսը վերջին ճիգ ու ջանքը գործի դնելով, խրճիթներից դուրս էին բերել իրենց կարի մեքենաները։ Բոլորը հայացքով որոնում էին գլխավոր հրամանատարին։ Բայց սա չէր երևում։ Գաբրիելը Տեր-Հայկազունի պես դեռևս կիսաքուն վիճակում, շփոթված նայում էր շուրջը։ Պետրոս Ալթունին հաշվից դուրս էր. ի՞նչ կարող էր անել խեղճ ծերունին։ Ոչ մի գյուղապետ և ուսուցիչ չէր երևում։ Բոլորն էլ զբաղված էին իրենց սեփականությունը փրկելով։ Լավ էր, որ (թեկուզ բավական ուշացումով) օգնության եկան Հյուսիսային լեռնաթամբից։ Թե իրադարձությունն ինչ ահավոր արագությամբ տեղի ունեցավ, թե Տեր-Հայկազունի նոպայից մինչև այս պահը որքան քիչ ժամանակ անցավ, դրա ապացույցն այն էր, որ մինչև Ավագյանն իր վեց տասնյակներով տեղ հասավ, ամեն ինչ արդեն վերջացել էր։ Դասալիքների կրակոցները լսելուն պես, Ջաուշ Նուրհանը նրան անհապաղ օգնության էր ուղարկել։ Ավագյանը նետվեց դեպի Գաբրիելը.

— Պարո՜ն, վիրավորվա՞ծ եք... Հիսո՜ւս Քրիստոս, այս ի՞նչ օրն եք ընկել... Խոսեցե՛ք ի սե՛ր աստծո...

Բայց Գաբրիել Բագրատյանը ոչինչ չասաց։ Փութկոտ քայլերով անցավ վառվող խորանի մոտով, անցավ հրապարակը, Քաղաքաձորից դուրս եկավ, սկսեց վազել և, ի վերջո, կանգ առավ մի փոքրիկ բարձունքի վրա։ Ավագյանն անխոս հետևում էր։ Գաբրիելը խոտաղեմ առաջ նայեց, լարեց լսողությունը, որ հրդեհի շառաչի տակ կարողանա կողմնակի ձայներ լսել։ Հարավից երկար ու ձիգ ճարճատյուն լսվեց։ Կարծես զենդացիր էին կրակում։ Ահա, նորից։ Բայց դա գուցե պատրանք էր, քանի որ գլուխը ցավից պայթում էր։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Գյուղյուն մեջում

Գրիտասարդ սպային հաջողվեց գլուխ բերել դժվարին գործը։ Իհարկե, նա հեռախոսային գիծն անցկացրեց ոչ թե մինչև Բագրատյանի ամառանոցը (այդքան հեռախոսալար չուներ նույնիսկ ամբողջ շորրորդ բանակը), այլ Հաբասթե գյուղից մինչև լեռան ստորոտը, մինչև Հարավաբերդից մոտ չորս հարյուր ոտնաչափ հեռավորության վրա գտնվող դիրքերը։ Եթե նկատի ունենանք ժայռոտ տեղանքի հարուցած դժվարությունները, ինչպես նաև զորախմբի անկանոն դասավորությունը, ապա դա ակնառու հաջողություն էր։

Գեներալ Ալի Ռըզա բեյը կեսօրից հետո, դամլաջըքցիների ուշադրությունը չգրավելու նպատակով քաղաքացիական շորեր հագած՝ անձամբ ճանապարհ ընկավ դեպի Հաբասթե։

Արևը նոր էր մայր մտել, երբ սեղանի վրա հեռախոսի խղճուկ ապարատն սկսեց ծնգծնգալ։ Ահագին ժամանակ անցավ, տեխնիկական զանազան բարդ հարցեր լուծվեցին, մինչև, վերջապես, հեռախոսային գծի մյուս ծայրին պարզվեց յուզբաշու ձայնը։ Դա շատ հստակ ձայն էր, որի մեջ ակնհայտ զգացվում էր սպայի հպարտ գոհունակությունը.

— Պարո՜ն գեներալ, խոնարհաբար զեկուցում եմ, որ լեռը գրավել ենք։

Ալի Ռըզա բեյը ծալովի բազկաթոռին թիկնած՝ չծխող, չխմող մարդու պայծառ հայացքով լսափողը սեղմել էր ականջին.

— Ինչպե՞ս թե լեռը, յուզբաշի։ Նկատի ունեք լեռան հարավային ե՞զրը։

— Ճիշտ այդպես, էֆենդի՛, լեռան հարավային եզրը։

— Շնորհակալ եմ։ Կորուստներ ունե՞ք։

— Ո՛չ մի կորուստ. ո՛չ մի մարդ չի վնասվել։

— Իսկ քանի՞ գերի եք բռնել, յուզբաշի։

Նորից տեխնիկական ինչ-որ խաթարում տեղի ունեցավ։ Գեներալը սրաթափանց հայացքով նայեց հեռախոսը տեղադրող սպային։ Սակայն շուտով կրկին հնչեց յուզբաշու ձայնը, այս անգամ փոքր-ինչ անվճռականորեն.

— Ես ոչ մի գերի չեմ բռնել։ Հակառակորդի խրամատները դատարկ էին։ Մենք այդ բանը գիտեինք։ Գրեթե դատարկ... Տասը հոգի էին, դրանցից էլ չորսը, կարծեմ, պատանիներ էին...

— Եվ ի՞նչ է պատահել այդ մարդկանց։

— Մերոնք սպանել են...

— Դիմադրության հանդիպելուց հետո՞։

— ...Առանց դիմադրության...

— Դա բավականաչափ նսեմացնում է ձեր հաջողությունը, յուզբաշի։ Գերիները մեզ շատ ու շատ ավելորդ հոգսերից կազատեին։

Նույնիսկ դաշտային հեռախոսի կոպիտ լսափողի միջից զգացվեց յուզբաշու զայրույթը.

— Ես հրաման չեմ տվել։

Գեներալի անհույզ սառնասրտությունը մնաց անփոփոխ.

— Իսկ դասալիքնե՞րը։

— Մերոնք նրանց ցնցոտիներն են միայն գտել, ուրիշ ոչինչ։

— Այդպե՞ս։ Ուրիշ ի՞նչ ունեք զեկուցելու, յուզբաշի։

— Հայերն իրենց ճամբարը կրակի են մատնել։ Վիթխարի հրդեհ է սկսվել...

— Եվ դա ինչպե՞ս եք մեկնաբանում, յուզբաշի։ Ի՞նչ պատճառներ եք տեսնում դրա տակ թաքնված։

Հնչեց կապիտանի ձայնը՝ վրեժխնդիր, խայթող.

— Իմ լուսաբանությունը կարևոր չէ։ Պարոն գեներալն ավելի ճշգրիտ կլուսաբանի։ Երևի գյաուրները հեռանալու են սարից... գիշերը...

Ալի Ռըզա բեյն իր գորշ ու դժգույն աչքերը մի պահ լուռ հառեց դեպի հեռուները, ապա հայտնեց իր տեսակետը.

— Հնարավոր է... Բայց նույնքան էլ հնարավոր է, որ դա որոգայթ է... Խոովարարների պարագլուխը մեր սպաներին արդեն շատ անգամ է դաս տվել... Գուցե և նա հարձակո՞ւմ է ծրագրել...

Այնուհետև գեներալը դիմեց իր շուրջը կանգնած պարոններին.

— Այս գիշեր հովտում պետք է պահակությունը խիստ ուժեղացնել։

Լսափողի մեջ նորից հնչեց յուզբաշու անհամբեր ձայնը.

— Պարո՛ն գեներալ, խոնարհաբար խնդրում եմ հետագա գործողությունների հրաման տալ։

— Որքա՞ն են առաջ շարժվել ձեր վաշտերը։

— Երրորդ վաշտը և գնդացրային երկրորդ ջոկատը գրավել են մոտակա բարձունքը, որն իմ հրամանատարական կետից մոտ հինգ հարյուր քայլ է հեռու։

— Այստեղ, ներքևում, մենք գնդացրային կրակոցներ լսեցինք։ Ի՞նչ է դա նշանակում։

— Միայն մի փոքրիկ ցույց...

— Այդ ցույցը վերին աստիճանի ավելորդ էր, վնասակար... Զորախմբերը պետք է մնան այնտեղ, որտեղ գտնվում են, և պետք է լավ պաշտպանվեն։

Հեռախոսային գծի մյուս ծայրից յուզբաշու ձայնը հնչեց գրեթե նենգորեն.

— Զորախմբերը մնում են այնտեղ, որտեղ գտնվում են։ Խնդրում եմ գրավոր ուղարկեք Ձեր հրամանը, պարոն... Իսկ վա՞ղը։

— Արևածագից կես ժամ հետո հրետանին հյուսիսից կսկսի ռմբակոծել։ Յուզբաշի, ձեր ժամացույցն ուղղեցեք իմ ժամացույցով... Այդպես... Արևածագից անմիջապես հետո ես կլինեմ Ձեզ մոտ, վերևում, և գործը կղեկավարեմ հարավից։ Վե՛րջ։

Լեռան բարձունքում գտնվող յուզբաշին ատամները կրճտացնելով դեն նետեց լսափողը.

— Կալի վրա է գալիս այդ այծի կաթով ապրող փաշան։ Հետո էլ Մուսա լեռան հաղթողի անուն պետք է հանի։

Գաբրիել Բագրատյանն անխոս վերադարձավ խորանի հրապարակը։ Այդ կարճ ճանապարհն անցնելիս նա ջղաձգորեն բռնել էր Ավագյանի ձեռքը։

Հրդեհը շարունակ խորանում էր նեղլիկ փողոցների մեջ։ Արևը նոր էր մայր մտել։ Բայց Գաբրիելի շուրջը հետզհետե թանձրանում էր խավարը, չնայած չորս կողմը մոլեգնում էր հրդեհը։ Խորանի ճյուղաշեն պատը վառվում ու չէր սպառվում։ Սև, ողբալի կերպարանքները, սև ու ողբալի ձայները անհեթեթ պար էին բռնել հրապարակով մեկ։ Գաբրիելի համար կյանքի նժարները տարուբերվում էին։ Մի՞թե նա լիակատար իրավունք չուներ մի անգամ ևս գետնատարած փովելու, արդեն մեկընդմիշտ, որ այլևս ոչինչ, ոչի՞նչ չիմանար։ Ստեփանը մեռած էր։ Եվ ինչո՞ւ ամեն ինչ սկսեր նորից։ Այնուհանդերձ, վայրկյան առ վայրկ-

յան նրա գլուխը՝ ցավերի տակ ճզմված այդ սնոթը, լցվում էր ավելի ու ավելի պայծառ, ավելի կենսունակ խոհերով։

Տեր-Հայկազունը ևս սթափվել էր, ոտքի կանգնել։ Նրա կատարած առաջին գործն այն եղավ, որ խնամքով մի տեղ հավաքեց, կարգի բերեց պատարագի պատառոտված շապիկը, ուրարը և սուրբ սպասարկության մյուս բոլոր հանդերձանքները։ Իր մերկությունը ծածկել էր ինչ-որ մեկի տված բարակ ծածկոցով։ Մորուքի մի փունջը խանձվել էր, իսկ այտի վրա վերք էր գոյացել։ Դեմքը բոլորովին փոխվել էր։ Ներս ընկած այտերի ակնաքարային դեղնությանը խառնվել էր տենդային (կամ բարկության) կրակի խոժոռ փայլը։ Երբ նայեց Բագրատյանին, ոչ մի կերպ չկարողացավ հարմար բառեր գտնել։

Մինչ այդ մուխթարները ևս մտաբերեցին իրենց պարտականությունը, վազեվազ մոտեցան։ Արդյոք բոցերի միջից կարողացա՞ն իրենց լիքը քսակներն ազատել, թե՞ ոչ, դա մնաց գաղտնիք։ Համենայն դեպս բոլորն էլ, Թովմաս Քեբուսյանի գլխավորությամբ, այդ բանը հերքեցին։ Այդ օրհասական ժամին անգամ գյուղապետները ողբում էին իրենց կորցրած կայքն ու կարողությունը։ Տերունիները հետզհետե նրանց շրջապատեցին, նոր թափ հաղորդելով մեծատունների անզուսպ վայնասունին։ Ժողովուրդը հրաժարվել էր կրակի դեմ պայքարելուց։ Նրա կամքի ուժը հաղիվ բավականացներ աննպատակ իրարանցման համար, որն աստիճանաբար սկսում էր տեղի տալ։ Զառուշ Նուրհանի ուղարկած տասնյակները ևս ոչինչ չկարողացան փրկել։ Անտարբեր նայում էին կրակին, որն արդեն խրճիթների վրա դրսից չէր գրոհում, այլ, ընդհակառակը, ներսից էր դուրս նետվում։ Ճյուղածածկ կտուրները ճարճատելով պոկվում էին, քամու հոսանքի հետ օդ բարձրացնում ցնցոտիներ ու զանազան հնոտիներ։

Շուտով մեծ հրապարակում կողք կողքի կուչ եկան գաղթականի բոլոր բնակիչները՝ կանայք, երեխաներ, ծերունիներ։ Սովատանջ մարդիկ այլևս չէին շարժվում։ Նրանց հողագույն դեմքերի վրա թրթռում էր հրացոլքը, բայց աչքերի մեջ անտարբերություն էր տիրում։ Այդ պահին կարծես միայն մի ցանկություն ունեին. ո՛չ մի հրաման լսել, ո՛չ մի քայլ տեղից չշարժվել, ո՛չ մի գործ չանել։ Ուզում էին կծկված նստել և մինչև վերջ ոչ մի դիմադրություն ցույց չտալ։ Հասել էր այն պահը, երբ ստեղծված վիճակը կարելի էր անվանել ոչնչանալու «քաջականություն»։ Բայց ցամաքած մարմիններն ու հոգիները մի անգամ ևս խախտեցին մահվան հետ կնքած իրենց «հաճելի» դաշինքը։

Գաբրիել Բագրատյանը փակ աչքերով ի մի էր բերում իր հոգևոր ուժերը։ Այդ բանը տեղի ունեցավ գրեթե նրա կամքին հակառակ։ Սկզբում նույնիսկ փորձեց խուսափել ցավ պատճառող լարումից, որը պետք էր մտքերը կենտրոնացնելու համար։ Գլուխը կարծես արձաղանք տվող հանքախորշ լիներ, որտեղից հառնող խորհրդածությունները ոչ թե Բագրատյանին էին պատկանում, այլ ծնվում էին դեռևս հովտում կայացրած վճռից՝ պաշտպանության գործը ղեկավարել մինչև վերջին հնարավորությունը։ Սեփական ես-ի գիտակցումը գրեթե լիովին մարել էր, սակայն ներսում կուտակվում էր անկաշառ մի ուժ. մի՞թե, իրոք, կորած է այդ վերջին հնարավորությունը։ Ո՞չ։ Թուրքերը, հավանաբար, գրավել էին Հարավաբերդը։ (Չէ՞ որ գնդացրային կրակ էին բացել)։ Գաղթականությանը բոցերի մեջ էր։ Ի՞նչ կարելի էր անել։ Ստեղծել պաշտպանության նոր գիծ, փակել թուրքերի ճանապարհը, որքան կարելի էր։ Սակայն ամենից առաջ ժողովուրդը պետք է հեռանար սարահարթից, իջներ ծովափ։ Այնուհետև հարկավոր էր գործի դնել հաուբիցները։

Ավագյանը մոտեցավ Բագրատյանին։ Սա գոռաց.

— Ի՞նչ գործ ունեք այստեղ։ Շտապ գնացեք Նուրհանի մոտ։ Ասացեք, որ տեղից չշարժվի։ Հարձակման համար իմ նախապատրաստած բոլոր տասնյակները թող անհապաղ ուղարկի ինձ մոտ։ Կապավորների և հետախույզների կեսը նույնպես։ Մենք պետք է նոր գիծ ստեղծենք, գեթ գլուխներս թաքցնելու խրամատներ փորենք։

Ավագյանը տատանվեց, ուզեց ինչ-որ հարցեր տալ, բայց Գաբրիելը նրան առաջ հրեց, մոտեցավ քարացած ժողովրդին.

— Եղբայրներ և քույրե՛ր, ինչո՞ւ եք հուսահատվել։ Ոչ մի պատճառ չկա։ Մենք դեռևս յոթ հարյուր զինվոր ու հրացան ունենք, երկու հրանոթ։ Կարող եք հանգիստ լինել։ Պաշտպանության համար ավելի լավ կլինի, եթե մեր համայնքներն այս գիշեր իջնեն ծովափ։ Բայց պահեստայինները պետք է մնան այստեղ։

Մուխթարները նորից աշխուժացան։ Տեր-Հայկազունը հրամայեց գյուղ առ գյուղ հավաքվել, ցած իջնել գահավեժ արահետով։ Ինքը՝ վարդապետը, պետք է նախապես գնար ճամբարի համար տեղ ընտրելու։ Նա, իհարկե, տկար էր։ Դեպի կյանք վերադառնալու, իր պարտականությունները կատարելու համար պետք է լարեր կամքի ամբողջ ուժը։ Դեմքը և խանձված մորուքն այնքա՜ն էին փոքրացել ու դժգունել։ Նա գիմեց Գաբրիելին.

— Ամենայն ինչից ավելի կարևոր է պատիժը։ Բագրատյա՛ն, դու պետք է սպանես հանցավորներին։

Գաբրիելն անխոս նայեց վարդապետին։ «Կիլիկյանին այլևս չեմ դտնի»,— անցավ նրա մտքով։ Մինչ այս, մինչ այն, մարդիկ սթափվեցին, ոտքի ելան։ Սկսվեց մահվան թմրության մեջ խորասուզված իրարանցում։ Մովսիսարները, գյուղական քահանաներն ու ուսուցիչներից երկուսը առանձնացնում էին համայնքները։ Մարդիկ առանց դիմադրության հնազանդվում էին։ Նույնիսկ երեխաներն այլևս չէին աղմկում։ Բժիշկ Ալթունին աննկատելիորեն հեռացավ փրկելու երկու հիվանդանոցների այն հիվանդներին, որոնք դեռևս կարող էին շարժվել։ Դժբախտությունը հալից ընկած այս ծերունուն հսկայի ուժ էր տվել։

Գաբրիելը գաղթականների վերացման գործը թողեց Տեր-Հայկազունի տնօրինությանը։ Ոչ մի վայրկյան դանդաղել չէր կարելի։ Ոչ ոք չգիտեր, թե գիշերվա խավարում Թուրքերը որքան կհամարձակվեին առաջ շարժվել։ Հաուբիցներին վտանգ էր սպառնում։ Դասալիքների խմբամուժը ևս մեծ հարցական էր։ Առա՞ջ։ Իրադրությունը կշռադատելու ժամանակ չկար։ Մարդիկ պետք է ուղղակի գործեին՝ կուրորեն և վճռականությամբ։ Գաբրիելը բոլոր տղամարդկանց հավաքեց մի տեղ՝ զինվածներին ու կիսազինվածներին, երիտասարդներին ու ծերերին, նույնիսկ անչափահաս տղաներին։

Քամին դադարել էր։ Փայտի կծու ծուխը խեղդում էր։ Մթին խառնվել էր նաև այրված կտորեղենի խանձահոտը։ Մարդիկ դժվարությամբ էին շնչում։ Բոլորի աչքերն արցունքոտվել էին։

Գաբրիելը շարժվելու ազդանշան տվեց։ Նա Շատախյանի հետ, որն արդեն եկել հասել էր, քայլեց պաշտպանության նոր և լայն գծի երկարությամբ։ Օրորվելով նրանց հետևում էին հոգնատանջ տղամարդիկ՝ մոտ հարյուր հիսուն հոգի։ Դրանց մեկ երրորդը վաթսունամյա ծերունիներ էին։ Եվ մի՞թե այդ խեղճ ու սովատանջ բազմությունը պետք է հաղթականորեն ետ մղեր գնդացիրներով զինված չորս կանոնավոր վաշտ, որոնց ղեկավարում էին մի կապիտան, չորս մարտկոցի հրամանատար, ութ ավագ լեյտենանտ, տասնվեց լեյտենանտ։ Ի՞նչ լավ էր, որ Բագրատյանը ոչինչ չգիտեր հակառակորդի ուժերի մասին։ Բայց եթե իմանար էլ, այլ կերպ չէր վարվի։ Մտքերը հետզհետե պարզվում էին։ Դրան հակառակ, ոտքերն անզգայացել էին։ Նրան թվում էր, թե ինքն իր կողքից է քայլում։

Խումբը շարժվում էր դեպի հաուբիցների բարձունքը։ Ճանապարհն անցնում էր գերեզմանատան մոտով։ Նախկին սովորությամբ, գերեզմանաբնակներն իրենց ունեցվածքը դարձյալ թաքցրել էին հանգուցյալների մոտ։ Այժմ Նունիկը, Վարդուկը, Մանուշակը և մյուսները եռանդով իրար էին անցել, շալակներն էին առել նեխած հնոտիներով լի պարկերը։ Սաթոն օգնում էր նրանց։ Տեղափոխությունը ժողովրդի այդ խավի վրա առանձնապես չէր ազդել։

Վերջին երկու գերեզմանները պատկանում էին Գրիգորին և Բագրատյանի որդուն։ Գրիգորի գերեզմանը, հանգուցյալի կտակի համաձայն, ոչ մի նշան չէր կրում։ Ստեփանի շիրմաթմբի վրա կար կոշտ ու կոպիտ մի խաչափայտ։ Հայրը ձգված անցավ գերեզմանի մոտով, առանց գլուխը թեքելու։

Արդեն խոր գիշեր էր, բայց հրդեհի հրացոլքը կամարաձև կախվել էր Դամլաջրքի վրա, իբրև կարմրափայլ գմբեթ։ Կարելի էր կարծել, թե մեծ քաղաք է վառվում, ոչ թե մի քանի հարյուր ճյուղաշեն խրճիթ և մի քանի ծառախումբ։

Ճանապարհի կեսը նոր էին անցել, հասել այնտեղ, որտեղից սկսվում էր հաուբիցների խոտավետ բարձունքը, երբ անսպասելի բան կատարվեց։ Գաբրիելն ու Շատախյանը կանգ առան։ Նրանց ետևից եկող խումբը փռվեց գետնին։ Բարձունքն ի վար զինված մարդիկ էին վազում։ Դեմքերը պարզ չէին երևում։ Հրացանները հուզված թափահարում էին։ Թուրքե՞ր էին։ Մթության մեջ շատերն սկսեցին թաքստոց որոնել։ Հրկիզվող բարձունքից իջնողները վախվխելով մոտեցան։ Գրեթե երեսուն հոգի էին։ Գաբրիելը նկատեց, որ հրելով բերում են ինչ-որ շղթայակապ մարդու։ Գաբրիելն ընդառաջ գնաց։ Անծանոթները լապտերներ ունեին։ Հինգ քայլ հեռավորությունից նա ճանաչեց շղթայվածին։ Դա Սարգիս Կիլիկյանն էր։ Մյուսները դասալիքներ էին։ Բագրատյանի ոտքերն ընկան, ճակատները քսեցին հողին։ Դա քավության և զղջման հնավանդ շարժուձև էր։ Ի՞նչ կարող էին ասել, ինչպե՞ս կարող էին արդարանալ։ Նրանց առաջ բոլոր ճանապարհները փակ էին։ Կիլիկյանին պարաններով կապկպելը ապացույց էր, որ իրենց հրեշավոր արարքի համար զղջացել են, քավության նոխազ են բերել և պատրաստ են կրելու ամեն մի պատիժ։ Մի քանիսը գրեթե մանկական աճապարանքով Բագրատյանի ոտքերի առաջ դիզեցին իրենց կողոպուտը։ Գողացված իրերի մեջ էին զինամթերքի արկղները և այն ամենը, ինչ հափշտակել էին վրաններից։ Սակայն Գաբրիելը նայում էր միայն Կիլիկյանին։ Շղթայվածին յուրայինները ծունկի բերին։ Թուսը գլուխը ետ գցեց։ Հրացոլքի տակ պարզ երևացին դիմագծերը։ Անվրդով աչքերում շատ քիչ էր զգացվում ինչպես ապրելու, այնպես էլ մեռնելու ցանկությունը։ Այդ աչքերն իրենց դատավորին նայում էին առանց հուզմունքի։ Բագրատյանը խոնարհվեց Կիլիկյանի վրա, որի դեմքից սարսափելի

լություն էր հառնում։ Նույնիսկ այդ վայրկյանին գլխավոր հրամանատարը չկարողացավ հաղթահարել այն հարգանքի ազատ զգացումը, որով համակվում էր ամեն անգամ, երբ հանդիպում էր Ռուսին։ Արդյոք իսկական հանցավորը Կիլիկյա՞նն էր՝ այդ ուրվականատիպ, անտարբեր հանդիսատեսը։ Միևնույն էր։ Գաբրիելը գրպանում քաշեց ատրճանակի ապահովիչը, ապա զենքն արագ ուղղեց Ռուսի ճակատին։ Առաջին անգամ ատրճանակը չխկաց առանց կրակելու։ Կիլիկյանն աչքերը չփակեց։ Ռունգները և շրթունքները դողդողացին։ Կարծես դա զսպված ժպիտ լիներ։ Գաբրիելին թվաց, թե ձախողված կրակոցն ինքն իր անձի դեմ էր ուղղել։ Երբ երկրորդ անգամ քաշեց ձգանը, կրակոցն այնքան թույլ էր, որ դեմքը շրջեց։

Եվ այսպես ընկավ Սարգիս Կիլիկյանը։ Մանուկ հասակում մաղապուրծ եղավ թուրքական ջարդից, հասուն տարիքում բանտային պատերի մեջ անընդունելի կյանք վարեց, խույս տվեց մահապատժից, բայց, ի վերջո, ընկավ իր հայրենակցի գնդակից։

Գաբրիելը նշան տվեց մյուս դասալիքներին, որ հետևեն բազմությանը։

Զղջացող դասալիքներից երկուսը պարտավորվեցին հետախուզել թուրքական զորամասերի դասավորությունը։ Վերադարձան և իրենց բերած տեղեկությամբ ավելի ծանրացրին դառն իրողությունը։ Թերևս պատժի սպասող ստահակները, իրենց ողբալի վիճակը թեթևացնելու նպատակով, չափազանցնում էին ճշմարտությունը, գուցե և թշնամու հզորության նկարագրությամբ ջանում էին նվազեցնել սեփական հանցանքը։ Եթե մեծ ոճիրը կատարված անգամ չլիներ, դասալիքների փոքրաթիվ տասնյակներն ինչպե՞ս պետք է գլուխ հանեին թուրքերի խորամանկ դիտարարությունից։ Բագրատյանը կարևորություն չտվեց այդ լուրերին և ոչինչ չասաց։ Գիտեր, որ հանցանքի մեծագույն մասն ընկնում է իր ուսերին։ Ժամանակին ուշադրություն չէր դարձրել նախազգուշացումներին և ոճրագործների դեմ միջոցներ ձեռք չէր առել։

Սամվել Ավագյանը հարձակման պատրաստ անձնակազմի հետ վաղուց էր ներկայացել Գաբրիելին։ Մի ժամ անցավ, մինչև զինվորները երկու մասի բաժանվելով, շղթա կազմած, բարձունքի լայնքով կտրեցին անցան բազմածավալ սարահարթը, դուրս եկան թփուտների և ժայռերի գոտին։ Եթե նույնիսկ հյուսիսային խրամատի խիզախ երիտասարդներն արդեն ուժասպառ էին եղել, ապա ի՞նչ կարելի էր պահանջել պահեստային տարեց մարդկանցից։ Փտած փայտի պես տեղնուտեղը

վայր ընկան, ուր հրամայված էր, ո՛չ արթուն, ո՛չ քնած։ Քարերից և հողից գլուխները թաքցնելու համար պետք է թմբեր պատրաստեին, բայց ոչ ոք չէր կատարում այդ հրամանը։ Գաբրիելը շրջանցեց պաշտպանության անհուսալիորեն երկար գիծը, հերթով մոտեցավ բոլորին, առաջապահ դետքեր նշանակեց, ապա գնաց դեպի հաուբիցները։ Նրա գլխում պարզ գծագրված էր Դամլաջրքի ամեն մի կետը, ամեն մի հեռավորությունը, տեղանքի բնույթը։ Այնպես որ Հարավաբերդի շրջակայքին վերաբերող կրակային տվյալները նա կարող էր իր հուշատետրում նշել ամենայն ճշտությամբ։

Ցերեկվա անապատային շոգին առաջին անգամ հանկարծ հաջորդեց գիշերվա աշնանաշունչ զովությունը։ Գաբրիելը նստած էր հրանոթների մոտ։ Մեն-մենակ էր։ Սպասարկող զինվորներին ուղարկել էր քնելու։ Ավագյանը նրա համար վերմակ էր ճարել, բայց վրան չէր գցում։ Մարմինն այրվում էր, իսկ գլխում խոհերի քաոս էր ստեղծվել։ Փովել էր գետնին։ Ո՛չ քնած էր, ո՛չ արթուն։ Անթարթ հայացքը սևեռել էր երկնքի ֆոնի վրա ծփացող կարմիր ծուվին։ Հրդեհի հայելին հետզհետե խորանում էր, մեծանում։ Գլխավոր հրամանատարի ուղեղի մեջ մեխվեց և մեղեդու պես սկսեց պտտվել մի հարց. «Որքա՞ն ժամանակ է այրվում խորանը»։ Հետո մի պահ մոռացության տվեց իր գոյությունը, մինչև ինչ-որ մեկի մոտիկությունն զգալով՝ արթնացավ։ Պատճառը ոչ թե ձեռքի հպում էր, ոչ թե ձայն, այլ մեկի մոտիկությունը։ Բայց արթնացման պահը՝ հեքիաթայնորեն երկար թվացող այդ ակնթարթը, այնքան խոր խորհուրդներով էր լի, մայրական այնպիսի ջերմությամբ էր ներծծված, որ Գաբրիելը չուզեց լիովին արթնանալ։ Այդ կարճատև պահին հոգնաբեկ մարդու և մոտեցողի հարազատությունն այնքան մեծ էր, որ Իսկուհու գոյության իրողությունը Գաբրիելին գրեթե հիասթափեցրեց։ Չէ՞ որ աղջիկն իր հետ բերեց անխուսափելին գիտակցելու հոգսը։ Նրան տեսնելուն պես Գաբրիելը ծայրահեղ սարսափով հիշեց Ժուլիեթին։ Կարծես մի ամբողջ հավիտենականություն կնոջը չէր տեսել, չէր մտածել նրա մասին։ Երկյուղով լի առաջին հարցը եղավ.

— Իսկ Ժուլիե՞թը։ Ինչպե՞ս է։

Իսկուհին իր վերջին ուժերը վատնելով՝ մի կերպ հասել էր այստեղ։ Նրա համար բոլոր իրադարձությունները լուծվել էին, ձուլվել մշուշին։ Աղջկա ներսում միայն մի հարց էր շարունակ վառվում. «Ինչո՞ւ չի գալիս, ինչո՞ւ ինձ լքեց, ինչո՞ւ չի կանչում գեթ վերջին ժամին»։ Բայց Ժուլիեթին վերաբերող հարցի սառը մատների տակ Իսկուհու հարցը խեղդվեց։ Աղջիկը լռեց։ Ահագին ժամանակ անցավ, մինչև նա սթափվեց,

կցկտուր բառերով հայտնեց Երեք վրանի հրապարակում տեղի ունեցած ամբողջ անցուդարձը՝ ավազակային հարձակումը, Շուշիկի մահը, պատվելի Արամի վիրավորվելը։ Պատմեց, որ բժիշկ Ալթունին իզուր փորձել էր Ժուլիեթին համոզել, թե Գևորգը նրան պետք է իջեցնի ծովափ։ Ժուլիեթը չէր համաձայնել, գոռգոռացել էր, թե ինքը վրանից դուրս չի գա։ Իսկ վիրավոր Արամը դեռևս պառկած էր վրանում...

Գաբրիելն ամբողջ ժամանակ դիտում էր երկնքի կարմիր ծիծաղը, որը չէր խամրում.

— Այդպես շատ ավելի լավ է... Մինչև առավոտ ոչ մի վատ բան չի լինի... Բավական ժամանակ կա... Բացօթյա մի գիշերը կարող է Ժուլիեթին սպանել։

Այս բառերի մեջ կար մի բան, որը Գաբրիելին ցավ պատճառեց։ Նա գրպանի լապտերը վառեց։ Ուժասպառ մարտկոցը հազիվ մի լուսատիտիկի չափ լույս տվեց։ Հակառակ երկնքի եղերական կարմրությանը և Քաղաքաձորում դեռևս մոլեգնող բոցերին, այդ գիշերն ավելի խավար էր թվում, քան նախորդները։ Իր կողքին նստած Իսկուհու ներկայությունը Գաբրիելը հազիվ էր կարողանում ընկալել իբրև իրականություն։ Նա մեղմ շոյեց աղջկա դեմքը, ձեռքերը և զարմացավ, թե դրանք որքա՜ն սառն են, որքա՜ն նիհարած։ Սիրտը քնքշանքից ալեկոծվեց։ Վերմակը վերցնելով՝ ծածկեց աղջկան.

— Ինչքա՜ն ժամանակ ոչինչ չես կերել, Իսկուհի։

— Վերջերս Մայրիկ Անթառամը մեզ համար ուտելիք էր բերել,— ասաց Իսկուհին,— ես բավականաչափ...

Գաբրիելն աղջկան ամուր սեղմեց իրեն, դարձյալ որոնելով նրա մոտիկության կիսաքուն զգացումը։

— Զարմանալիորեն գեղեցիկ էր այն պահը, երբ քիչ առաջ արթնացա և քեզ տեսա կողքիս... Ինչքա՜ն ժամանակ քեզ չեմ տեսել, Իսկուհի՜, քույրի՜կս... Հիմա ես շա՜տ երջանիկ եմ, որ եկար... Հիմա բախտավո՜ր եմ, Իսկուհի՜...

Աղջկա դեմքը դանդաղ խոնարհվեց դեպի Գաբրիելի դեմքը, կարծես այնքան տկար էր, որ չէր կարողանում ուսերին պահել սեփական գլուխը։

— Իսկ դու չեկար... Ինքս եկա... Իրարից այնքա՜ն հեռու էինք, այնպես չէ՞։

Գաբրիելի ձայնը հնչեց խուլ, ասես խավարի խորքից.

— Այո, կարծում եմ, որ իրարից շա՜տ հեռու էինք...

Իսկուհին խոսեց, և նրա ձայնի մեջ կար սեփական իրավունքը պահանջելու հոգնատանջ, կամակոր պատրաստակամություն.

— Դու գիտես, թե մենք ինչ ենք իրար խոստացել... Դո՜ւ ես ինձ խոստացել... Գաբրիել...

Գաբրիելն աղջկան դուրս քաշեց մոլորության հեռուներից.

— Մենք դեռևս մի ամբողջ օր ունենք...

Խոր թառանչ արձակելով, Իսկուհին կրկնեց այս բառերը, կարծես դրանք մեծ շնորհ էին.

— Դեռևս մի ամբո՜ղջ օր...

Աղջիկն ավելի ու ավելի ջերմորեն կառչեց Գաբրիելի թևից։

— Իսկուհի՜, շա՜տ եմ խնդրում... Մենք հաճախ ենք այդ մասին խոսել... Ժուլիեթն ավելի թշվառ ու դժբախտ է, քան երկուսս...

Իսկուհին իր այտը հեռացրեց Գաբրիելի դեմքից։ Սա բռնեց աղջկա հիվանդ ձեռքը, շոյեց և համբուրեց.

— Իսկուհի՜, եթե ինձ սիրում ես... Ժուլիեթն այնքա՜ն անմարդկայնորեն մենակ է... Անմարդկայնորե՜ն մենակ...

— Ժուլիեթն ինձ ատում է... Ինձ տանել չի կարողանում... Ես նրան նորից տեսնել չեմ ուզում...

Գաբրիելը ձեռքով զգաց աղջկան ցնցող ջղաձգությունը.

— Եթե ինձ սիրում ես, Իսկուհի... Ես քեզ խնդրում եմ. մնա՛ Ժուլիեթի մոտ... Արևածագից առաջ պետք է վրաններից հեռանաք... Ես ավելի հանգիստ կլինեմ... Ժուլիեթի դատողությունը մթագնել է, իսկ դու առողջ ես... Մենք նորից կհանդիպենք... Իսկուհի՜...

Աղջիկը գլուխը կախեց։ Անձայն լալիս էր։ Գաբրիելը շշնջաց.

— Իսկուհի՜, ես քեզ սիրում եմ... Մենք միասին կլինենք...

Քիչ անց Իսկուհին փորձեց ոտքի ելնել.

— Դե, ես գնամ...

Գաբրիելը նրան ամուր գրկեց.

— Իսկուհի, դեռ մի՜ գնա։ Մնա՛ ինձ մոտ, դու ինձ պետք ես...

Երկարատև լռություն։ Գաբրիելն զգաց, որ լեզուն ծանրացել է և չի շարժվում։ Սուր, տրոփող գլխացավը սաստկացավ։ Գանգն ասես փոխվեց կապարե հսկայական գնդի։ Գաբրիելը խորասուզվեց ինքն իր մեջ. կարծես գլխին խզակոթի մի նոր հարված իջավ։ Անտարբեր լրջությամբ նրան նայեցին Կիլիկյանի բութ աչքերը։ Նա ինքն իրենից ուսկաց։ Որտե՞ղ էր ընկած Ռուսը։ Արդյոք հրամայե՞լ էր դիակը հեռացնել։ Այն ամենը, ինչ տեղի էր ունեցել վերջին ժամերին, թվում էր միանգամայն օտար, կարծես ոչ մի առնչություն չուներ իր հետ, կարծես դա ինչ-որ խելացնոր զառանցանք էր, ուրիշից լսած զրույց։ Գաբրիելն ընկավ ծանր, անորոշ մտորումների մեջ, և այդ պահին ալիքի նման հոր-

ձանք տվող, այրող գլխացավի կենտրոնը միայն ու միայն նրա սեփական էությունն էր։

Երբ Գաբրիելը տեղում վախեցած ուղղվեց, Իսկուհին արդեն ոտքի էր ելել։ Գաբրիելը սոսկումով նայեց ժամացույցին.

— Ժամը քանի՞սն է... Հիսո՞ւս Քրիստոս... Ո՛չ, ժամանա՜կ, ժամանա՜կ... Ինչո՞ւ ես ինձ տալիս վերմակը... Չէ՞ որ դու ցրտից դողում ես... Իսկուհի, դու իրավացի ես. լավ կլինի, եթե հիմա գնաս... Գնա Ժուլիեթի մոտ... Դեռևս հինգ-վեց ժամ ունեք... Ավագյանին կուղարկեմ ճիշտ ժամանակին... Բարի գիշեր, Իսկուհի... Սիրիր ինձ և ծածկոցը վրաս գցիր. ինձ պետք չէ...

Նա Իսկուհուն մի անգամ էլ գրկեց, բայց թվաց, թե աղջիկն շտապում է հեռանալ։ Այդ պահին Իսկուհին կարծես անմարմին ստվեր լիներ։ Գաբրիելը մի անգամ էլ խոստումնալից ասաց.

— Սա հրաժեշտ չէ. մենք միասին կլինենք...

Երբ Իսկուհին արդեն բավական հեռացել էր, և Գաբրիելն ուզում էր նորից պառկել, հանկարծ ինչ-որ բան հիշեց, որից սիրտը ճմլվեց։

Իսկուհին ուժասպառ էր եղել և հազիվ թե կարողանար տեղ հասնել։ Ոտքից գլուխ սառել էր։ Նուրբ մարմնի մեջ հազիվ էր զգացվում կենդանությունը։ Արդյոք նա էլ խնամքի կարոտ հիվանդ չէ՞ր։ Իսկ ինքը՝ Գաբրիելը, ի սեր Ժուլիեթի, նրան վռնդեց։ Գլխավոր հրամանատարն իրեն նախատեց. ինչո՞ւ չուղեկցեց, թողեց, որ աղջիկը մեն-մենակ անցնի խավարչտին ու դավադիր ճանապարհը։ Գաբրիելը բարձունքն ի վար վազեվազ իջավ ձայն տվեց.

— Իսկուհի՛, որտե՞ղ ես, սպասի՛ր։

Ոչ մի պատասխան։ Աղջիկը, երևի, շատ էր հեռացել և այլևս չէր կարող որևէ ձայն լսել։

Հրդեհված խրճիթները դեռևս ճարճատում էին, բոցի սյուներ նետում դեպի վեր։ Միայն աստծուն էր հայտնի, թե այդ խեղճ ու կրակ հյուղերում հրդեհը որտեղի՛ց էր այդքան սնունդ ճարում, ինչպես էր ամբողջ գիշերը մոլեգնում ու շառաչում։ Ի դեպ, հրդեհվել էին նաև գաղթականների մոտակա ծառերն ու թփուտները։ Թուրքերը, հավանաբար, առավոտյան իրենց դիմաց տեսնելու էին երկրորդ հրդեհը։ Գաբրիելը փոքր-ինչ վազեց դեպի վրանները, բայց Իսկուհուն չգտավ, և նրա բոլոր կանչերն իզուր անցան։ Դանդաղ վերադարձավ դեպի հաուբիցները։

Քաղաքակիրթ մարդկության հետ ունեցած միակ կապը ժամացույցն էր, որը նա միշտ բարեխղճորեն լարում էր։ Դեռևս ժամը մեկը չկար, բայց այլևս չկարողացավ քնել։

Գիշերվա մոտ ժամը երեքին Քաղաքաձորի հրդեհը մոտեցավ իր վախճանին։ Տեղի ունեցած ավերածությունից, իբրև ապացույց, մնացել էին ածխաբեկորներ, մոխիր, երբեմն-երբեմն հպնկարծ վեր նետվող կրակի կայծեր։ Ծառերի մեջ դեռևս բորբոքվում էր կրակը, թեև այստեղ էլ հրդեհն իր հոգեվարքն էր ապրում։ Միայն թե երկնքի վրա մնացել էր դրոշմված հրո արձագանքը։ Այդ հրեղեն բիծը չէր ջնջվում։ Մշուշը միաձուլվել էր հրացոլքին և իրական հրդեհի տպավորություն էր թողնում։

Հենց այդ ժամին Գաբրիելն Ավագյանին արթնացրեց։ Ուսանողը մյուսների հետ պառկած էր հաուբիցներից ոչ հեռու։ Այնքան խորն էր քնած, որ Բագրատյանը նրան երկար ժամանակ ապարդյուն ցնցում էր։ Մարդու բարությունը կարելի է որոշել արթնանալու ձևից։ Ավագյանը, ասես ինչ-որ մեկից պաշտպանվելով, մի քանի շարժում արեց, ապա շփոթված բարձրացրեց գլուխը։ Իր պարոնի ներկայությունն զգալով, արագ վեր թռավ և մթության մեջ վախեցած ժպտաց, կարծես ուզում էր ներողություն խնդրել, որ այդքան խորն է քնել։ Իհարկե, նրա մեջ պատրաստակամությունն ավելի զորեղ էր, քան սթափ զգացողությունը։ Բագրատյանը նրան մեկնեց շիշը, որի մեջ դեռևս կոնյակ էր մնացել.

— Ավագյա՛ն, խմեցե՛ք... Մի՛ քաշվեք։ Դուք հիմա ինձ պետք եք։ Թե չէ իրար հետ խոսելու ժամանակ այլևս չենք ունենա...

Մեջքները Քաղաքաձորի կողմն արած՝ նստեցին։ Կարող էին պարզ դիտել պաշտպանության նոր գծի պահակներին։ Դրանցից մի քանիսի ձեռքին գրպանի լապտերներ կային։ Ծուլորեն թափառում էին այդ լուսավոր առեղծվածները։ Դարձյալ քամի չկար։

— Ոչ մի վայրկյան չեմ քնել,— խոստովանեց Գաբրիելը,— շատ բաներ եմ մտածել, ծանրութեթև արել, հակառակ գանգիս վրա առաջացած այս ուռուցքին, որը գարշելիորեն զգացնել է տալիս իր գոյությունը։

— Ափսո՜ս։ Պետք է քնած լինեիք, պարոն...

— Ինչո՞ւ։ Փորձանքը, որ շարունակ մի կերպ հետաձգում էինք, վերջապես եկավ։ Այո, Ավագյան, ես ուզում էի ասել, որ մարդիկ ավելի շատ Չե՛զ են պարտական, եթե դժբախտությունը ձգձգվեց մինչ այսօր։ Մենք միասին հիանալի աշխատեցինք։ Դուք իմ ճանաչած բոլոր մարդկանցից ամենավստահելին եք։ Ներեցեք, անմիտ բառի համար։ Դուք, իհարկե, ավելին եք...

Ավագյանը շփոթված շարժվեց տեղում։ Գաբրիելը ձեռքը դրեց նրա ծունկին։

— Մարդ գոնե մի անգամ պետք է անկեղծ լինի։ Ուրիշ էլ ե՞րբ կարող ենք իրար ասել ճշմարտությունը։

— Շներն ամեն ինչ ոչնչացրին,— շփոթմունքը թաքցնելու նպատակով գանգատվեց ուսանողը, բայց Բագրատյանը ձեռքը թափ տվեց անցյալի վրա.

— Այդ մասին այլևս հարկ չկա մտածելու։ Մի օր դա պետք է լիներ։ Այս աշխարհում սպասելիքը միշտ անսպասելիորեն է հայտնվում... Բայց իմ ասելիքը բոլորովին էլ դա չէ... Ավագյան, լսեցեք։ Ես հաստատ նախազգում եմ, որ ամեն ինչ Ձեզ համար բարեհաջող կվերջանա։ Թե ինչու, ասել չեմ կարող։ Գուցե և դա անմտություն է, բայց ես մտովի Ձեզ նորից եմ տեսել Փարիզում։ Սատանան գիտե, թե ինչպես էիք այնտեղ ընկել, ավելի ճիշտ՝ ինչպես եք ընկնելու։

Տնային ուսուցչի գունատ, ներս ընկած ճակատը մթության մեջ փայլփլում էր.

— Ներեցեք, պարոն Բագրատյան, բայց դա բացահայտ անհեթեթություն է։ Ինչ որ Ձեր գլխին է գալու, նույնը գալու է նաև իմ գլխին։ Այլ կերպ լինել չի կարող...

— Ինչո՞ւ չէ... Իհարկե, Դուք տրամաբանորեն իրավացի եք. այլ կերպ լինել չի կարող։ Սակայն մի անգամ էլ հիմք ընդունենք անհեթեթությունը։ Ընդունենք, որ Դուք ինչ-որ ձևով ազատվելու եք...

Բագրատյանն ընդհատեց իր խոսքը և լարված հայացքը գամեց ամայությանը, կարծես այնտեղ կարող էր պարզորոշ կարդալ Ավագյանի երջանիկ ապագան։ Այնուհետև դուրս բերեց դրամապանակը, դրեց կողքին։

— Ես Ձեզ այստեղ երկար չեմ պահի, նորից կուղարկեմ հյուսիսային դիրքերը։ Երբ Դուք Նուրհանի հետ եք, ես ինձ ավելի հանգիստ եմ զգում։ Բայց այժմ այդ ամենն ինձ համար ոչ մի նշանակություն չունի։ Ավագյան, Դուք պետք է ինձ մի շատ ավելի կարևոր ծառայություն մատուցեք։ Մնացեք կանանց մոտ։ Ես նկատի ունեմ կնոջս և օրիորդ Թովմասյանին։ Պատճառն այն լավ նախազգուշացումն է, որ ես կապում եմ Ձեզ հետ։ Երևի Ձեր ոտքը բարի է։ Արեք այն, ինչ կարող եք։ Ամենից առաջ հոգ տարեք, խնդրեմ, որ վրանները քանդեն ժամանակին, ուղիղ արևածագին։ Հոգ տարեք, որ տիկնոջը հնարավորության սահմաններում զգուշորեն իջեցնեն գահավեժ կածանով։ Գևորգի փոխարեն գտեք մեկ ուրիշին։ Նրա ձեռքերի վրա չի կարելի հույս դնել։ Դա անել տվեք Քրիստափորին և Միսակին։

Սամվել Ավագյանը բողոքեց։ Վաղը, վերջին ճակատամարտում, իր

անելիքն ավելի կարևոր է։ Դեռևս շատ անհետաձգելի հարցեր կան լուծելու։ Բարեխիղճ համհարզը շտապ-շտապ թվարկեց հարյուրավոր պարտականություններ, որոնք իրեն էին սպասում։ Սակայն գլխավոր հրամանատարը անհամբերությամբ այդ ամենը մերժեց.

— Ո՛չ, ո՛չ։ Ոչ մի բան այլևս հնարավոր չէ նախապատրաստել։ Ամեն ինչ թողեք ինձ վրա։ Ես այստեղ այլևս Ձեր կարիքը չունեմ։ Ձեր ծառայությունն արդեն ավարտված է, Ավագյան։ Մնում է միայն իմ խնդրանքը, իմ ցանկությունը։

Բագրատյանը Ավագյանին մեկնեց կնքված մի նամակ.

— Բարեկա՛մս, կտակս Ձեզ եմ հանձնում։ Կպահեք այնքան, մինչև տիկինը լրիվ ապաքինվի, հասկանո՞ւմ եք։ Ես վաղօրոք հաշվի եմ առել Ձեր հանդեպ ունեցածս անհեթեթ նախազգացումը։ Այնպես չէ՞։ Այստեղ կա նաև Լիոնի բանկի չեկ։ Ես գիտեմ, թե ինչքան փող եմ Ձեզ պարտք... Դուք, իհարկե, միանգամայն իրավացի կլինեք, եթե ինձ համարեք խենթ։ Մեր այս վիճակում նման հաշիվները բացարձակ անմտություն են։ Ես թծախնդիր մարդ եմ։ Գուցե սա նախապաշարմունք է, և ես կախարդանքի եմ դիմում, հասկանո՞ւմ եք։ Ես կախարդանքից մի քիչ հասկանում եմ...

Բագրատյանը ծիծաղելով ոտքի թռավ։ Այժմ նա առույգ և ինքնավստահ էր թվում.

— Եթե ես ավելի երկար ապրեմ, քան Դուք, ապա ո՛չ կտակը պետք կգա, ո՛չ էլ չեկը։ Ուրեմն՝ սթափվեցեք...

Նրա ծիծաղը բոնազբոսիկ էր։ Ավագյանը թղթերն իրենից հեռու բռնած՝ մի անգամ էլ փորձեց առարկել։ Այս անգամ Դաբրիելը բարկացավ։

— Խնդրում եմ գնացեք, որ ես ինձ ավելի թեթևացած զգամ։

Արևածագին նախորդող վերջին ժամերն անտանելիորեն երկար էին ձգվում։ Ատամները սեղմած՝ Բագրատյանը դարանակալ հետևում էր հալչող խավարին։ Աղջամուղջի առաջին իսկ ցոլքի տակ նա հրանոթն ուղղեց դեպի Հարավաբերդը։ Քանի որ քամի չէր փչում, վաղորդյան թանձր մշուշը երկար ժամանակ չէր փարատվում։

Բոլորովին անսպասելի երևաց կարմրափայլ, ցասկոտ արևը։

Դաբրիելը ծունկի եկավ առաջին հաուբիցի մոտ։ Սոսկալի դղրդյունը, հրետասայլի հետադարձ կատաղի հարվածը, կրակն ու ծուխը, արկի ոռնոցը, պայթյունին նախորդող անողոք վայրկյանները— այս ամենը կարծես թեթևացրին Բագրատյանի ներքին խռովքը։ Այդ կրակոցով նա կարծես ազատվեց հոգեկան անսահման լարումից։ Դամլաջրքի

շրջահայաց զորավարին ի՞նչը ստիպեց Թուրքական հարձակումից առաջ փոշիացնել անգնահատելի ռումբերը։ Արդյոք ուզում էր յուրայիններին արիությո՞ւն ներշնչել, թե՞ հույս ուներ այդ կրակով շփոթության մատնել Թուրքական վաշտերը, որպեսզի սրանք այլևս չհամարձակվեին առաջ շարժվել։ Պատճառը ո՛չ մեկն էր, ո՛չ էլ մյուսը։ Բագրատյանի առաջին կրակոցը տակտիկական ոչ մի հիմք չուներ։ Մարդն ուղղակի չկարողացավ սպասել։ Չէ՞ որ գիշերը վերջանալու վրա էր։ Կրակոցը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ցավի ու բողոքի կանչ, մասամբ օգնության, մասամբ էլ եղբայրական պոռթկման աղաղակ։ Այս բանն զգում էր ոչ միայն Բագրատյանը, այլև պաշտպանության գծի երկայնքով դիրքավորված բոլոր ուժաբեկ, սովատանջ մարդիկ։ Այլայլված դեմքերով նրանք սպասեցին պատասխանի։ Առաջապահ դետքերը բարձրացան մոտակա բարձունքը՝ հեռուն ավելի լավ տեսնելու։ Բայց որքան էլ սարահարթի լայնքն ու երկայնքը ուշի-ուշով դիտեցին, ոչինչ չտեսան։ Դամլաջրքը կարծես մեռած էր։ Թուրքերը, ըստ երևույթին, իրենց հիմնական դիրքերից չէին հեռացել։ Չէին երևում նաև հյուսիսում։ Բայց պատասխանը եկավ։ Մինչ այդ Բագրատյանը երկու անգամ էլ կրակեց։ Այնուհետև լսվեց զարհուրելի դղրդյուն։ Ոչ ոք ոչինչ հասկացավ։ Երկաթյա շառաչյունը պայթեց վերևում, սասանելով Ամանոսից մինչև էլ Աքրա ձգվող լեռնաշղթան։ Որոտը մարեց շատ հեռվում, հավանաբար, Որոնտեսի հարթավայրում։ Բայց և այնպես ահավոր շառաչը եկավ ծովի կողմից։

Գյուղական համայնքները խառնիխուռն տեղավորվել էին խութերի և ժայռերի արանքում, գահավեժ թեքվածքի վրա։

Տեր-Հայկազունը դեռևս գիշերը մուխթարներին հրամայել էր Ոսկանյանին գտնել և բերել մեռած կամ կենդանի։ Վարդապետի հոգին այժմ լցված էր միայն մի այրող ցանկությամբ. ոճրագործներից վրեժ լուծել օրենքն անարգելու, ժողովրդին նողկալի ձևով դավաճանելու համար։ Տեր-Հայկազունի կարծիքով Սարգիս Կիլիկյանից ավելի հանցավոր էր ուսուցիչը՝ «կոմիսարը»։ Վարդապետը պատրաստ էր սեփական ձեռքերով կտոր-կտոր անել սևագույն գաճաճին։ Ժողովուրդը ծանրաբարո Տեր-Հայկազունին նման դրության մեջ երբեք չէր տեսել։ Հովվապետը կուչ էր եկել Յողոնօլուքի բնակիչների կողքին, որոնք ցանուցիր փռվել էին ոլորապտույտ ճանապարհի երկարությամբ, խոտավետ, ծառաշատ տեղերում։ Նա ոչ ոքի հարցերին չէր պատասխանում։ Գլուխը կախել էր մինչև ծնկները։ Երբեմն ձգվում էր, օդում թափահարում բռունցքները,

ահավոր նզովքներ տեղում, իսկ տենդից այրվող դեմքն ի վար գլորվում էին ցասման արցունքները։

Թովմաս Քեբուսյանը նստել էր փրկված ծածկոցներից մեկի վրա և ապշահար տմբտմբացնում էր ճաղատ գլուխը։ Կողքին խելահեղ ճղճղոցով մոլեգնում էր կողակցուհին։ Դողում էր, թե մուխթարն ինքն է մեղավոր, որ բանն այսպես վերջացավ։ Եթե ժամանակին գնար Անթաքիեի հյուրությունը, ասա, ի՞նչ խոսք, կայմակամը մեծահարուստ և նշանավոր Քեբուսյանի ընտանիքի համար անպայման բացառություն կաներ։ Հիմա հանգիստ ու ապահով նստած կլինեին քաղաքային սիրուն բնակարանում, փայտե բաղեղածածկ պատշգամբում։

Քեբուսյանն ուշադրություն չէր դարձնում ո՛չ կնոջ նախատինքներին, ո՛չ էլ տենդով բռնված վարդապետի հրամանին։ Ո՞ւմ ուղարկեր ուսուցչին ձերբակալելու։ Ինչ վերաբերում է պահակներին և Քաղաքաձորի կենսունակ մարդկանց, բոլորն էլ մնացել էին Բագրատյանի մոտ։

Ուսուցիչ Հրանտ Ոսկանյանը թաքնվել էր սկուտեղաձև դարավանդի մոտերքում։ Միայնակ չէր։ Նրա հետ էին ինքնասպանության մի խումբ ջատագովներ։ (Այդ շաբաթներին և ամիսներին հայ ժողովրդի մեջ շատ էին Ոսկանյանի նման «մարգարեները»։ Կային ինքնասպանություն գործող հազարավոր մարդիկ։ Ժողովրդի ամբողջ մարմինը փշաքաղվում էր ինքնասպանության հաճախակի դեպքերից։ Բայց իրենց կյանքին վերջ էին տալիս նաև ապահով վիճակում գտնվողները։ Ոչ միայն փախստական կանայք էին նետվում սրընթաց Եփրատը, այլև եվրոպական մեծ քաղաքներում բավական թվով հայեր իրենց կյանքին վերջ էին տալիս ինչ-որ խորհրդավոր պատճառներով)։ Մուսա լեռան բարձունքներում ինքնասպանության ոչ մի դեպք տեղի չէր ունեցել։ Ուղղակի զարմանալի էր, եթե նկատի ունենանք բարոյալքումը, մահվան ամենօրյա սպառնալիքը, անխուսափելի կործանման նախազգացումը, հազարավոր մարդկանց դանդաղ սովամահությունը։ Նույնիսկ այս գիշեր Ոսկանյանի մոտ ընդամենը չորս խեղճ ու կրակ հետևողներ կային։ Միայն դրանք էին ուսուցչի աղանդավորական «գաղափարի» ջատագովները՝ մի տղամարդ և երեք կին։ Տղամարդը հիսուն տարեկան էր, բայց ծերունու տպավորություն էր թողնում։ Խզբեզցի մետաքսագործ էր։ Հայկական հովտի բոլոր արհեստավորներից տարբերվում էին գլխաշորեր հյուսող վարպետները։ Իրենց մարմնական տկարությամբ դրանք կարծես մի առանձին դասակարգ էին կազմում և պիտանի չէին ո՛չ զինվորական ծառայության, ո՛չ էլ թիկունքային ծանր աշխատանքների համար։ Այդ մար-

դիկ նման էին այն բոլոր ձախողվածներին, որոնց դյուրաղգաց հոգիներն ապավինում են քաղաքական՝ ու կրոնական ամեն տեսակ անհեթեթ քարոզների։ Ոսկանյանի ազատ մահվան վարդապետությունն ամենայն պատրաստակամությամբ էր լսում Մարկոս Արծրունին (այսպես էր մետաքսագործի անունը)։ Կանանցից ամենատարեցը կորցրել էր իր ամբողջ ընտանիքը, իսկ մյուս երկուսը դեռևս երիտասարդ էին։ Սրանցից մեկի երեխան քաղցից մեռել էր մոր գրկին։ Երրորդը Յողոնօլուքի ունևոր ընտանիքներից մեկի դուստրն էր։ Ամուսնացած չէր։ Դա առհասարակ մելամաղձոտ, հեղհեղուկ բնավորության տեր աղջիկ էր։

Ոսկանյանը դեռևս դասալիքների խողովության ժամանակ վախից թաքնվել էր այս խուլ տեղում։ Սակայն Մարկոս Արծրունին՝ «մարգարեի առաքյալը», գտել էր նրա հետքերը, ուսուցչի մոտ բերել երեք հավատացյալ կանանց՝ խոսքը գործի վերածելու։ Եկել էին միասին մեռնելու։ Չէ՞ որ ընկերովի մահը հարսանիք է։ Ի դեպ, մետաքսագործն անողոք «առաքյալ» էր. չէր հանդուրժի, եթե «մարգարեն» մազաչափ անգամ շեղվեր իր վարդապետությունից։ Օրեր շարունակ կանոնավոր ձևով այցելում էր Հարավաբերդում գտնվող ուսուցչին, որպեսզի իր մել կատարելապես պատվաստի նոր վարդապետությունը։

Եվ ահա հինգ հոգի նստած էին վիթխարի ժայռաղանգվածի տակ, որի մոտով անցնում էր սկուտեղաձև դարավանդի ճանապարհը։ Սեղմվել էին իրար, քանի որ ցրտից դողում էին։ Ոսկանյանը մի անգամ ևս ի մի բերեց իր տեսակետը կյանքի ու մահվան վերաբերյալ։ Բայց ուսուցչի խոսքերն այսօր տարօրինակ կերպով անհամոզիչ էին թվում, անգիր արած։ Ուրբաթախոսի սուր ձայնն անգամ կորցրել էր իր սաստկությունը։ Երբեմն թվում էր, թե ճամարտակելիս ձայնը բարձրացնում է միայն ու միայն իր «առաքյալին» չհիասթափեցնելու համար։ Ոսկանյանը նստած էր մելամաղձոտի մոտ, որը բավական սիրունատես աղջիկ էր։ Ազատ մահվան քարոզիչը ինքն էլ զարմացավ, թե ինչպես վսեմ վճիռ կայացնելուց երեք վայրկյան առաջ կանացի մարմնի զիջող մոտիկությունը կարող է այնքա՜ն հոգեպարար, այնքա՜ն կենարար ազդեցություն գործել։ Բայց և այնպես Ոսկանյանը լսեց տարեց կնոջ առարկությունը։ Սա խոր հավատով իր ուսուցչին բացատրեց, թե իրենց արարքը հանդերձյալ աշխարհում կարող է կասկածելի հետևանքներ ունենալ.

— Վարժապե՛տ, սա մեծ մեղք է, աստվա՛ծ վկա։ Էս բանը ես անում եմ միայն նրա համար, որ մերոնց տեսնեմ, շո՛ւտ տեսնեմ։ Բայց մեկ էլ մտածում եմ. հանկարծ ու մերոնց չտեսնեմ, միշտ մնամ դժոխքում։ Չէ՞ որ ինքնասպանությունը մե՛ծ մեղք է...

Ոսկանյանը ցցեց խավարում փայլփլող իր սրածայր քիթը.

— Դու միայն բնությանն ես վերադարձնում այն, ինչ բնությունը քեզ է տվել։

Այս իմաստալից խոսքը վարպետ Արծրունուն դժոխային բավականություն պատճառեց։ Ձեռքերը շփեց, նվազկոտ ձայնով, բայց և լիաթոք վրա բերեց.

— Շա՛տ լավ ասաց, պառա՛վ... Եթե ուզում ես ձերոնց մյուս աշխարհում տեսնել, կարող ես մինչև վաղը սպասել։ Թուրքերը քեզ կարոտ չեն։ Քեզ ոչ ոք հարեմ չի տանի։ Իսկ ես սպասել չեմ ուզում. կյանքից կշտացե՛լ եմ։

Կինը ձեռքերը կրծքին խաչեց, գլուխը կախեց.

— Թող ինձ Հիսուս Քրիստոսը ների... Աստված ամեն բան գիտե...

Ուսուցիչը հիանալի նշանաբան գտավ.

— Աստված ամեն բան գիտե՛,— գոռաց նա։— Աշխարհն ստեղծելու համար աստծուն կարելի է ներել այն միակ պատճառով, որ նա ոչի՛նչ, այո՛, ոչի՛նչ չգիտե... Նա մեր մասին այնքան է հոգ տանում, ինչքան ոջիլների։ Հասկացա՞ր։ Այլապես նա շատ անելիք կունենար...

«Առաքյալ» Արծրունին հեգնական գինովությամբ կրկնեց.

— Այլապես նա շա՛տ անելիք կունենար... Հասկանալի՞ է... Ինչպես ոջիլների՞...

Այստեղ «առաքյալը» սեփական սրամտությունից ձանձրացած՝ շրջվեց մեղքից սոսկացող կնոջ կողմը.

— Աստված ինչպե՞ս կարող է քո մասին հոգ տանել, եթե նա միայն ու միայն քո սեփական գլխի մեջ նստած ցնորք է...

Վարպետը մի պահ խստությամբ աչքերը ոլորեց, ապա խելագար ցնծությամբ աղաղակեց, ձեռքերը խփեց ազդրերին, սկսեց օրորվել աղոթող մահմեդականի նման.

— Ա՛յ պառավ, ցնորքը միայն քո գլխի մե՛ջ է նստած... Հասկանո՞ւմ ես, միայն քո գլխի մե՛ջ... Թքի՛ր քո ցնորքի վրա, գլխիցդ դո՛ւրս գցիր, թքի՛ր...

Արծրունու այս կշտամբանքն ու ծաղրը սոսկալի բորբոքեցին երիտասարդ մորը։ Հիշեց, թե ինչպես իր գրկից, երկարատև մաքառումից հետո, ինչ-որ մեկը խլեց մեռած երեխայի փայտացած գիակը։ Դա հիվանդապահ տղամարդկանցից էր։ Արագ հափշտակելով երեք տարեկան մանկան մարմինը, փախավ՝ դիակը, երևի, ինչ-որ տեղ գցելու։ Մայրն այժմ ուզում էր իր մանկան հետ լինել ծովի խորքում։ Հանկարծ նա սուր ճիչով վեր թռավ.

— Ինչո՞ւ եք ժամերով խոսում։ Եկեք գործի անցնենք։

Ուսուցիչը առարկեց.

— Պետք է կարգ սահմանենք։

Մինչև հերթականություն սահմանեցին, Արծրունին առաջարկեց վիճակ գցել։ Սակայն Ոսկանյանը կարծիք հայտնեց, թե բոլոր դեպքերում գործը պետք է սկսեն կանայք։ Չէ՞ որ, ըստ կարգի, նախապատվությունը պետք է տալ մեծերին։ Այս վճիռը հեշտությամբ չէր հաստատվի, եթե կանայք առարկեին։ Բայց նրանք ոչինչ չասացին։ Ի վերջո, Ոսկանյանը հայտնեց, թե ինքն ու «առաքյալը» պետք է վիճակ գցեն։ Ճակատագիրը վճռեց ի վնաս ուսուցչի, ավելի ճիշտ՝ հօգուտ նրա, քանի որ առաջնությունը տրվեց նրան։

Քամին դադարելուց հետո խոր լռություն էր տիրում։ Բայց ներքևում ալեկոծությունը դեռևս չէր հանդարտվել։ Ծովը մռնչում էր։ Խավարն այնքան թանձր էր, որ թվում էր, թե ձեռքով կարելի է շոշափել։ Ուսուցիչը խարխափելով և անսահման զգուշությամբ սողալով, լապտերը տարավ մինչև ժայռի եզրը, վախից դողդողացող ձեռքով վայր դրեց։ Աղոտ լույսը զարմանալի անխռովությամբ սահմանազատեց իրական և հանդերձյալ աշխարհները։ Ոսկանյանն աճապարանքով ետ քաշվեց, ապա, իբրև անդունդի ուղեցույց և արարողապետ, ձեռքի քաղաքավարի շարժումով մարդկանց հրավիրեց դեպի լապտերը։

Տարեց կինը մի քանի րոպե ծնրադիր խաչակնքեց երեսը։ Հետո շտապ, մանրաքայլ առաջ շարժվեց և անհետացավ առանց աղաղակի։ Երիտասարդ մայրն իսկույն հետևեց նրան։ Սա թափով ցած նետվեց։ Լսվեց կարճատև սուր ճիչ... Մելամաղձոտ աղջիկն ավելի անվճռական դուրս եկավ։ Նա ուսուցչին խնդրեց, որ վերջին վայրկյանին իրեն առաջ հրի։ Ոսկանյանը այս ծառայությունը մատուցելուց կտրականապես հրաժարվեց։ Աղջիկը չորեքթաթ սողաց դեպի անդունդի եզրը։ Այստեղ կարծես նորից կշռադատեց իր վճիռը։ Ձեռքը գցեց լապտերին, որը և շուտ եկավ, գլորվեց անէության խորքը։ Աղջիկը, փոխանակ հանգիստ ետ սողար, ձեռքը երկարեց դեպի լապտերը, թեքվեց առաջ և կորցրեց հավասարակշռությունը։ Լսվեց զարհուրելի, երկարատև աղաղակ, քանի որ նախքան վայր ընկնելը դժբախտ աղջիկը դեռևս երկու րոպե կարողացավ կառչած մնալ ժայռի եզրից...

Ոսկանյանն ու Արծրունին մթության մեջ անխոս կանգնած էին։ Երկա՞ր, երկա՞ր րոպեներ անցան։ Ուսուցչի ուղեղում դեռևս ահավոր արձագանք էր տալիս մելամաղձոտ աղջկա մահասարսուռ ճիչը։ Վերջապես «առաքյալը» դիմեց «մարգարեին».

— Դե՛, վարժապե՛տ, հերթը քոնն է...

Ոսկանյանը կարծես լրջորեն ծանրութեթև էր անում կացությունը։ Այնուհետև հայտնեց իր կարծիքը, չկարողանալով թաքցնել ձայնի մեջ թրթռացող խռովքը.

— Լապտերը չկա։ Մթության մեջ ոչինչ անել չեմ կարող։ Սպասենք, մինչև օրը լուսանա։ Շատ չի մնացել...

Վարպետն իրավացիորեն վրա բերեց.

— Մթության մեջ շատ ավելի հեշտ է վարժապե՛տ։

— Քեզ համար գուցե հեշտ է, բայց ինձ համար՝ ոչ,— կատաղությամբ առարկեց «մարգարեն»,— ինձ լո՞ւս է հարկավոր։

Մարկոս Արծրունին այդ վսեմ պատճառաբանությունից ակնհայտ կերպով գոհ մնաց, բայց մոտեցավ Ոսկանյանին։ Երբ գետնին նստած ուսուցիչը հազիվ նկատելի շարժում կատարեց, վարպետը կառչեց նրա բաճկոնի օձիքից։ (Սա կեղտոտված ու պատառոտված այն ծիծեռնակապոչ բաճկոնն էր, որ մի ժամանակ Ոսկանյանը գնեց՝ Գոնզագին ժուլիեթի աչքից գցելու համար)։ «Մարգարեից» կառչած Արծրունու շարժումների մեջ կար երկյուղ, անձնուրացություն և թերահավատություն։ Այսպիսով Ոսկանյանը դարձավ իր ուսմունքի դերին։ Հանկարծ թափով տեղից բարձրացավ։ Բայց կողքին նստած «առաքյալը» նույնպես ոտքի ելավ։ Ուսուցիչն իր հետևորդից ազատվելու ոչ մի հեռանկար չուներ։ Երբ մի ամբողջ հավիտենականություն անցնելուց հետո ժայռի եզրը դուրս լողաց վաղորդյան գորշ աղջամուղջի միջից, Արծրունին հանեց պիջակը.

— Այսպե՞ս, վարժապե՛տ։ Մութն անցավ...

Ոսկանյանը ձգվեց, հորանջեց, կարծես նոր էր արթնացել թարմացնող քնից։ Անվրդով ոտքի ելավ։ Նախ, քիթը մի քանի անգամ մաքրեց այնպիսի աղմուկով, կարծես շեփոր էր փչում, ապա իր «առաքյալ»-պահակի ուղեկցությամբ կատարեց անհրաժեշտ քայլերը։ Եզրին չհասած՝ ուսուցիչը ետ դարձավ.

— Վարպե՛տ, լավ կանես, եթե դու սկսես։

Կեղտոտ շապկի մեջ կծկված Արծրունին խոժոռվեց, գլուխը զարմանքով մոտեցրեց Ոսկանյանի դեմքին.

— Ինչո՞ւ, վարժապետ։ Վիճակ ենք գցել։ Հերթը քոնն է։ Երեք կինն էլ մեզնից առաջ գնացին...

Ոսկանյանի մազակալած դեմքն սպիտակել էր.

— Ինչո՞ւ։ Որովհետև ես ուզում եմ վերջինը լինել։ Չեմ ուզում, որ հետո փախչես ու վրաս ծիծաղես։

Սկզբում գյուղացին այնպիսի տեսք ընդունեց, թե մտքերի մեջ խո-

բասուզված կշռադատում է Ոսկանյանի ասածը։ Բայց հանկարծ «առաքյալը» հարձակվեց իր «մարգարեի» վրա։ Սա փորձանքի հոտն արդեն առել էր։ Շուտով համոզվեց, որ ինքը, իր փոքրամարմին տեղով ավելի ուժեղ է, քան հյուծված Արծրունին։ Այնուհանդերձ, իր հավատի մեջ խաբված մոլեռանդ մետաքսագործը կարող էր վտանգավոր լինել։ Ոսկանյանը թողեց, որ նա իրեն փոքր-ինչ հրի դեպի ժայռի սուր եզրը։ Կատաղածը, անկասկած, ուզում էր նրան ևս իր հետ քաշել դեպի անդունդը։ Ուսուցիչը հանկարծ փռվեց գետնին, ամուր կառչեց ցածրիկ թփից, իսկ աջով բռնեց հակառակորդի ոտքը, ցած հրեց։ Մետաղալարի պես ամուր թփից կախված ուսուցիչը ոտքերով մոլեգնությամբ հարվածում էր Արծրունու դեմքին ու մարմնին։ Ինքն էլ չիմացավ, թե ինչպես եղավ. հետևյալ վայրկյանին արդեն հարվածներ էր տեղում դատարկ օդի մեջ։ Արծրունին ժայռի եզրից խորասուզվել էր մշուշի մեջ։

Ոսկանյանը քարացած նստեց։ Այդ դրությամբ ետ քաշվեց, հեռացավ։ Իրեն փրկված էր զգում, բայց միայն մի ակնթարթ։ Այնուհետև գիտակցեց, որ այդ հաղթանակն իրեն ոչնչով չի օգնի։ Նա այլևս չէր կարող վերադառնալ արդարամիտ և պարկեշտ հասարակության գիրկը։ Չէր էլ կարող փախչել։ Փոքրամարմին ուսուցիչը ոտքի թռավ, հուզված ետ ու առաջ քայլեց։ Գոտեմարտի ժամանակ Արծրունին նրա բաճկոնի ծիծեռնակային պոչի կեսը պոկել էր։ Նեղ կուրծքը դարձյալ դուրս էր ցցել, ինչպես վարվում էր ծայրահեղ հուզմունքի պահերին, երբ ամբարտավանությունը բռնում էր։ Երբեմն կուլ էր գալիս և թևից վիրավորված թռչունի պես մշուշի մեջ ոստոստում։ Փորձեց ինքն իրեն մխիթարել, արիացնել բանաստեղծական մի արտահայտությամբ, որը հանկարծ ծնվեց նրա գլխում։ Քսան անգամ կրկնեց.

— Դեպի լո՜ւյսը արևի, ո՛չ թե խորքը խավարի...

Այդ պահին Ոսկանյանի ոտքը դեմ առավ ինչ-որ փայտե ձողի։ Դա այն դրոշն էր, որի վրա գրված էր օգնության կոչը՝ «Քրիստոնյաներն աղետի մեջ են»։ Քամին դրոշը վայր էր գցել և նախկին տեղից հեռացրել։ Սկուտեղաձև դարավանդը վաղուց ի վեր լքված էր ոչ միայն իբրև գիտական, այլև իբրև գերեզմանատուն։ Հրանտ Ոսկանյանը, առանց իր արածը գիտակցելու, բարձրացրեց ծանր դրոշակը, շալակեց, ապա, իբրև տարօրինակ դրոշակակիր, սկսեց պտտվել իր չորս կողմը։ Ինչ բավականությամբ նա արևը ետ կուղարկեր Ամանոսի ետևը։ Բայց արևը բարձրանում էր՝ կարմրափայլ և ցասկոտ։ Մի նոր հուսահատ երկչոտ միտք ծնվեց. հետո՛ւ այս նզովյալ ժայռերից։ Պետք է թաքստոց գտնել։ Ավելի լավ է դանդաղ սովամահ լինել։ Բայց Ոսկանյանն այլևս չէր կարող ետ դառնալ. պետք է իրագործեր արևի լույսին վերաբերող իր խոսքը։ Կանայք և Արծրունին սպասում էին։ Դրոշն առաջ պարզած՝ դանդաղաքայլ մոտեցավ ժայռի եզրին։ Նրա ոտքերի տակ հալչում էր մշուշը։ Լայն գերաններ, ծուխ, նստարաններ... Դրանք բոլորն էլ կարծես իրար շուրջ տարօրինակ պար էին բռնել։ Երևում էին, հենց որ բացվում էր ծովի մի մասը, ծով, որը հարթ ու անմռունչ փռված էր, ինչպես մուգ մոխրագույն կտավ։ Այդ կտավի վրա, ինչ-որ տեղից, մի բան փայլատակեց։ Ոսկանյանն աչքերը փակեց։ Համոզվեց, որ արդեն իսկապես խելագարվել է, իսկ դրանից միշտ վախենում էր։ Աչքերը շարունակ բացում էր ու փակում։ Մշուշը փարատվեց, բայց շողշողուն տեսիլքը մնաց լայնատարած կտավի վրա. ասես ամրացված լիներ։ Շողշողուն տեսիլքը մոտեցավ։ Դա քառակայմ մուգ երկնագույն խոշոր նավ էր։ Նավը վերևից շատ փոքր էր թվում և ոչ մի ազդու տպավորություն չէր թողնում։ Շուրջը դեռևս մշուշի մի քանի ծվեններ էին ծփում։

Ուսուցիչը շատ սրատես էր։ Նորածագ արևի ցնծալից շողերի տակ նա հեշտությամբ կարդաց նավաքթին գրված սև, վիթխարի տառերը՝ «Գիշեն»։

Ոսկանյանը մի քանի անգամ ողբաձայն աղաղակեց. «Գիշե՜ն»։ Հրաշքը կատարվե՜ց։ Բայց ո՛չ իր համար։ Բոլորը կարող էին փրկվել, բայց ո՛չ ինքը։ Ամբողջ ուժով սկսեց թափահարել դրոշը՝ «Քրիստոնյաները աղետի մեջ են»։ Առանց հոգնելու, խելագարի պես նա արագ թափահարում էր ծանր դրոշակը։

Զրահապատ հածանավի հրամանատարական կամրջակից նրան պատասխանեցին ֆրանսիական դրոշակային ազդանշաններով։ Ոսկանյանը դա չտեսավ։ Նա գլուխը բոլորովին կորցրել էր։ Կիսաշրջաններ գործելով անդադար թափահարում էր սպիտակ սավանը։ Լարվածությունից հեկեկում էր։ Բայց քանի դեռ ուժ ուներ, պետք է ապրեր։

Վերևում շառաչեցին Բագրատյանի հաուբիցները։ Հայոց դրոշի կիսաշրջանները հետզհետե ավելի փոքրանում էին, դառնում անհամաչափ, զիգզագաձև։ «Գուցե կարողանամ գաղտնի փրկվել նավով»,— անցավ Ոսկանյանի մտքով։ Բայց նույն վայրկյանին, ավելի շուտ դրոշի ծանրությունից, քան սեփական կամքով, առաջ մղվեց և զարհուրանքի վայրագ աղաղակով ընկավ անդունդը։

Նույն վայրկյանին էլ «Գիշենի» քսանչորս սանտիմետր տրամաչափի հրանոթներից մեկը զորավոր հարված ուղղեց դեպի Սուեզիա, թուրքերին հրամայելով՝ դադարեցնել կրակը։

Դադարի ազդանշանը լսելով, մինչև հոգու խորքը ցնցվեցին գեներալը, կայմակամը, յուզբաշին և մյուս սպաները։ Այս պարոնայք մի քանի րոպե առաջ բարձրացել էին լեռնային շտաբը։ Նրանց հետ էր նույնիսկ լերդախտավոր, հսկայամարմին կայմակամը, որի համար կանուխ արթնանալն ու լեռն ի վեր բարձրանալը արտակարգ զոհողություն էր։ Զորս վաշտապետ շրջապատել էին յուզբաշուն՝ առաջխաղացման հրամանն անձամբ ստանալու։ Հետախույզները գիշերվա ընթացքում հիանալի էին աշխատել։ Ամենայն ճշտությամբ հայտնաբերել էին հայերի նոր ապաստարանը գահավեժ ծովեզերքին։ Հայտնի էր նաև, որ հարավային կողմից Դամլաջրք տանող ճանապարհը փակված էր պաշտպանական երկու թույլ, վատ քողարկված կրակային գծով։ Ալի Ռըզայի հրամանով այդ երկու թույլ գծի դեմ ուղարկվելու էին միայն գնդացիրներով զինված երկու վաշտ, իհարկե, այն բանից հետո, երբ հյուսիսից լեռնային հրետանին կործանիչ հարվածներ տեղար հայկական խրամատների վրա։ Կայմակամի ու յուզբաշու համոզմունքով, մոտավորապես մի ժամվա ընթացքում դիմադրությունը հաղթահարված կլիներ։ Դրանից հետո հյուսիսային և հարավային զորախմբերը պետք է միանային, համատեղ ջանքերով ոչնչացնեին ծովափնյա ճամբարը։ Հայերի համար փրկություն այլևս չկար։

Գաբրիելի արձակած առաջին ռումբը պայթեց քարուտում, ժայռակոփ աշտարակի ներքևում, երկրորդը բավական շեղվեց, իսկ երրորդն ընկավ սպայախմբի մոտակայքում։ Օդում շառաչեցին երկաթի ու քարի բեկորները։ Հետևակային երկու զինվոր աղաղակելով փովեցին գետնին։ Յուզբաշին անվրդով վառեց գլանակը.

— Պարո՛ն գեներալ, կորուստներ ունենք...

Ալի Ռըզայի թարմ ու թափանցիկ դեմքը շառագունեց։ Շրթունքներն ավելի նեղացան.

— Յուզբաշի՛, Ձեզ հրամայում եմ այդ Բագրատյանին չսպանել, այլ անձամբ բերել ինձ մոտ։

Հազիվ էր այս խոսքը վերջացրել, երբ լսվեց դադար պահանջող որոտը։ Պարոնները նետվեցին դեպի արևմտյան խրամատները՝ ծովը դիտելու։

Մուգ երկնագույն «Գիշենը» հաստատուն նստած էր կապարածուփ հորձանուտի վրա։ Կարծես սառել էր տեղում։ Կայմերի վերևում պլլվում էր ծխի սև ամպը։ Հրանոթի փողից դուրս նետված ծուխն արդեն փարատվել էր։ Նավապետը, ըստ երևույթին, վախեցնելու նպատակով միայն մի արկ էր արձակել Որոնտեսի դաշտավայրի ուղղությամբ։

Առաջին սթափվողը կայմակամը եղավ։ Հուզմունքից դողացող ձայնով ասաց.

— Գեներա՛լ, իրար հասկանանք։ Դուք զինվորական օժանդակ զորամասերի հրամանատարն եք։ Վճռական խոսքն ինձ է պատկանում։

Ալի Ռըզան, առանց պատասխանելու, հեռադիտակով զննում էր «Գիշենը»։ Սակայն կայմակամը, որը վտանգի պահերին մեծ մասամբ քնկոտ անտարբերությամբ լռում էր, այս անգամ հանգիստը կորցրել էր.

— Գեներա՛լ, ձեղանից պահանջում եմ անմիջապես գործողությունները սկսելու հրաման տալ։ Այս նավը մեզ խանգարել չի կարող...

Ալի Ռըզան հեռադիտակն իջեցրեց և դիմեց իր համհարզին.

— Հեռախոսով կապվեք Հարասթեի հետ։ Հրամանս ամենայն արագությամբ, հանգույց առ հանգույց պետք է հաղորդվի հյուսիսային խրամատները. դադարեցնե՛լ հրետանային կրակը։

— Դադարեցնե՛լ հրետանային կրակը,— կրկնեց համհարզը և դուրս թռավ։

Կայմակամը ոտքի ելավ, իր ճարպակալած, բայց և զորավոր ամբողջ մարմնով ձգվեց.

— Ի՞նչ է նշանակում այդ հրամանը։ Ես բացատրություն եմ պահանջում, էֆենդի՛։

Գեներալը ոչ մի ուշադրության չարժանացրեց նրան, այլ իր մուգ երկնագույն աչքերը հառեց յուզբաշուն.

— Հրամայեցեք, որ առաջ շարժված վաշտերը էլ քաշվեն։ Բոլոր զորամասերը պետք է հեռանան լեռան բարձունքներից և հավաքվեն գյուղահովտում։ Անմիջապես նահանջել։

— Ես բացատրությո՛ւն եմ պահանջում,— զայրույթից իրեն կորցնելով գոռաց կայմակամը, և աչքերի տակի տոպրակները դարձան սև կապտագույն։— Դա վախկոտությո՞ւն է։ Ես Նորին գերազանցության առաջ պատասխանատու եմ։ Գործողությունները դադարեցնելու ոչ մի հիմք չկա՛։

Երիտասարդ գեներալը սևեռուն, սառը հայացքով չափեց նրան.

— Ոչ մի հի՞մք։ Ուզում եք դաշնակից նավատորմին բաց ծովեզերքը գնդակոծելու հնարավորությո՞ւն տալ։ Հեռաձիգ հրանոթների արկերը մինչև Անթաքիե են հասնում։ Կայմակամ, երևի կարծում եք, թե հածանավը միայնա՞կ է մնալու։ Թույլ տանք, որ ֆրանսիացիներն ու անգլիացիները զորք իջեցնեն ցամաք և պատերազմի նոր թատերաբե՞մ ստեղծեն անպաշտպան Սիրիայի կենտրոնում։ Ի՞նչ եք կարծում, կայմակա՛մ։

Բայց գավառապետը կատաղությունից դեղնած և փրփուրը բերանին՝ վրա պրծավ.

— Դա իմ գործը չէ՛։ Ես, իբրև պատասխանատու, Ձեզ հրամայո՛ւմ եմ...

Նա այլևս չշարունակեց։ Գեներալի նոր հրամանը բնականաբար ոչ մի կերպ չէր կարող մի քանի բոպեում հասնել թուրքական հրետանային դիրքերը։

Թուրքական առաջին արկերը շառաչյունով պայթեցին Հյուսիսային լեռնաթամբի բարձունքին, սակայն «Գիշենի» զրահապատ աշտարակների վրա սկսեցին պտտվել հրանոթների երկար, բարեձև փողերը։ Մի քանի վայրկյան չանցած ծանր ռումբերը զարհուրելի ուժով ընկան Սուեդիայի, էլ Էսքելի, Եդիշելի տների վրա։ Սպիրտի գործարանի վիթխարի ծխնելույզն ի վեր նույն պահին սողաց ամերիկյան դրոշը։ Թուրքական մի քանի փայտաշեն տներ սկսեցին այրվել։ Ալի Ռըզան յուղբաշոն հրամայեց.

— Հեռախոսով հայտնեցեք, որ կրակը դադարեցնեն, գրողը տանի։ Ջափթիեները թող բնակիչներին գյուղերից դուրս հանեն։ Բոլորին ուղարկեցեք հովիտը։

Սալոնիկցի պեպենոտ մյուդիրը, որը, իբրև ստորադրյալ, մինչ այդ լռում էր, հանկարծ կատաղեց։ Ձեռքի ափերը բերանին սեղմած՝ այնպես էր գոռգոռում, կարծես ուզում էր խլացնել ռմբակոծության որոտը, իր ձայնը լսելի դարձնել «Գիշենի» համար։

— Սա միջազգային իրավունքի խախտո՛ւմ է... Բաց ծովեզերքի դե՞մ... Սա միջամտությո՛ւն է երկրի ներքին քաղաքականությանը...

Գեներալ Ալի Ռըզան գետնից վերցրեց իր ձեռնափայտը, ուզեց հեռանալ։ Սպաները շրջապատեցին նրան։ Գեներալը մի անգամ էլ ետ նայեց.

— Ինչո՞ւ եք այդպես գոռգոռում, մյուդիր։ Շնորհակալ եղեք Իթթիհաթից...

— Ես ինձ վատ եմ զգում,— հառաչեց կայմակամը, որն այսօր չարաշահել էր իր առողջական վիճակը։ Գավառապետի ծանր մարմինը փլվեց գետնին։ Թվում էր, թե նա իր բոլոր ուժերով մաքառում է ուշագնացության դեմ։ Սևացած շուրթերի միջից խռխռոցով շարունակ դուրս էին նետվում միևնույն բառերը.

— Ամեն բան վերջացա՛վ... Ամեն բան վերջացա՛վ...

Մյուդիրն իր հիվանդ վերադասին չորս ջափթիեի միջոցով ուղարկեց հովիտ։

Կարելի էր կարծել, թե Գաբրիել Բագրատյանը ևս, փրկության լուրն ստանալով, չի դիմանա մեծ երջանկությանը, վայր կընկնի, երբ նրա գիտակցությանը լիովին հասնի կատարված հրաշքը։ Բայց այդպես չեղավ։ Գաբրիելի լարված զգայարանները չկարողացան արձագանքել։ Ամենախորաթափանց մարդն անգամ կդժվարանար ասել, թե ինչ է կատարվում նրա ներսում։ Ո՛չ, ո՛չ մի հիասթափություն։ Հիասթափությունը շատ կոպիտ բառ կլիներ։ Դա ավելի ճիշտ այն անցանկալի ճիգն էր, որ մահու չափ հոգնատանջ օրգանիզմը պետք է գործադրի իր գոյությունը վերահաստատելու համար։ Այդպես մարդկային աչքն է պաշտպանվում, երբ խավարին հանկարծ հաջորդում է պայծառ լույսը, թեկուզ և մարդ դրան ձգտում է իր ամբողջ հոգով։ Բագրատյանի ընկալման առաջին արձագանքը եղավ մի հրաման, որով նա դիմեց պաշտպանության գծի երկայնքով փռված զինվորներին.

— Ոչ ոք տեղից չշարժվի։ Ամեն մարդ թող մնա իր տեղում։

Դա չափազանց կարևոր հրաման էր։ Նախ, Գաբրիելը հաստատ չգիտեր թուրքերի մտադրությունը, ապա ֆրանսիական ռազմանավի դրոշը սեփական աչքով չէր տեսել։ Դրանից բացի, խիստ անհավանական էր թվում, թե այդ նավը կկարողանա կամ կհամաձայնի չորսուկես հազար հոգի վերցնել։

Պակաս տարօրինակ չէր նաև հրաշքի գործած ազդեցությունը պաշտպանների վրա, որոնք այդ վերջին գիշերը մահվան սպասումով կրակային երկար գծի վրա պառկած էին, ինչպես կաթվածահարներ։

Լուրը հեռասպառ բերեց մի պատանի։ Ոչ մի բացականչություն։ Մարդիկ սկզբում կարկամած լռեցին։ Այնուհետև կաշկանդվածությունը փարատվեց։ Հրաշքի լուրն առողջները նետվեցին դեպի բարձունքը, հաուբիցները, գլխավոր հրամանատարը։ Համենայն դեպս դա ավելի քիչ էր զարմանալի, քան մարդկանց խուլ և կոշտ ձայների մեջ կատարված փոփոխությունը։ Բոլորը միանգամից սկսեցին աղմկել։ Խռպոտ և սուր ձայների հորձանքն ամեն կողմից շարժվեց դեպի Գաբրիելը։ Դա կանացի հախուռն լեզվակռիվ էր հիշեցնում կամ խելացնոր տղամարդկանց սարսափի պոռթկում։ Փրկության զգացումը, նախքան մարդկանց հոգիների մեջ թափանցելը, առաջ բերեց ձայների վարակիչ ջղաձգություն։

Շուտով բոլորը հանդարտվեցին։ Նորից պառկեցին իրենց դիրքերում, առաջ մեկնեցին հրացանները։ Կարծես ոչ մի ցնցող բան տեղի չէր ունեցել։ Միայն ուսուցիչ Հաբեթ Շատախյանը գլխավոր հրամանատարին խնդրեց, որ սա իրեն, իբրև պատվիրակ ուղարկի բանակցությունների,

հաշվի առնելով իր քաջահմուտ ֆրանսագիտությունն ու արտասանությունը։ Ուսուցչի դեմքը շողշողում էր։

Գաբրիել Բագրատյանը զինվորներին բացատրեց, որ մինչև թուրքերի հարձակման վտանգը չանցնի, դիրքերը չպետք է լքեն։ Ապա Շատախյանին ծառայությունից ազատեց, տվեց հետևյալ հանձնարարությունը։ Բոլոր պարագաներում ծովափին գտնվող ժողովրդի և լեռան բարձունքներում դիրքավորված պաշտպանների միջև պետք է ստեղծվի մշտական կապ։ Տեր-Հայկազունն ու բժիշկ Ալթունին Շատախյանի հետ պետք է գնան ֆրանսիական նավը։ Այնուհետև հածանավի հրամանատարին խնդրեն պետք է հայտնեն, որ ժողովրդի մեջ կա մի ֆրանսուհի, այն էլ ծանր հիվանդ։

Հյուսիսային լեռնաթամբի դեմ ուղղված հրետանային կրակը հաստատեց Բագրատյանի կասկածը։ Թուրքերը բնավ էլ մտադիր չէին թակարդն ընկած որսը ձեռքից բաց թողնել առանց վրեժ լուծելու։ Գաբրիելը կապավորներից մեկին շտապ ուղարկեց Զաուշ Նուրհանի մոտ, հրամայելով.

— Հյուսիսային լեռնաթամբը պետք է պաշտպանեն մինչև վերջին մարդը։ Մինչև ինձանից համապատասխան հրաման չստանան, զինվորները ոչ մի գնով չպետք է հեռանան խրամատներից կամ ժայռապարսպից, որի տակ ռմբակոծության ժամանակ կարող են ապահով թաքնվել։

Բայց քիչ անց հրետանային կրակը թուլացավ, մինչդեռ նավի հրսկայական հրանոթները ամպրոպային նպատակասլաց հարվածներ էին տեղում, իրենց արկերն ուղարկելով մահմեդական գյուղերի դեմ։ Որոնտեսի հարթավայրում կարծես սկսվել էր վերջին ահեղ դատաստանը։

Երբ Գաբրիելը բարձրացավ դիտակետը, Սուեդիան, էլ էսքելը, Եդիջեն և նույնիսկ հեռավոր Այն Երաբը ծխի և բոցերի մեջ կորել էին։ Թուրք բնակչությունը ձիերով, ավանակներով, եզասայլերով և հետիոտն խուռն բազմությամբ փախչում էր, լցվում հայկական հովիտը։ Շատ չանցած, Բագրատյանը վերադարձավ դեպի հաուբիցները։ Հրանոթների մոտ արդեն դրված էին պատրաստի արկերը։ Մտքով անցավ հրանոթների փողերն ուղղել դեպի հյուսիս և թուրքական նահանջը, հնարավորության չափ, առնել կրակի տակ։ Բայց այդ մտադրությունից հրաժարվեց, թեև վտանգը դեռևս երկար ժամանակ չէր կարելի համարել անցած։ Նստեց հաուբիցների մոտ։ Նայեց հեռուն, խորասուզվեց մտորումների մեջ։ «Մի քանի շաբաթ հետո, թերևս, նորից լինեմ Փարիզում։ Քլեբեր ավենյուի բնակարանում նորից կսկսենք նախկին կյանքը»։ Բայց այս խորհրդածությունը, որը մի ժամ առաջ կարող էր թվալ խելացնոր երազանք, ոչնչով չփոխեց նրա ներքին զարմանալի ամայությունը։ Խանդավառության ոչ մի հետք։ Ո՛չ ծնրադիր ցնծաց, ո՛չ էլ ջերմաջերմ գոհություն հայտնեց աստծուն, որն արդեն շնորհել էր իր աներևակայելի հրաշքողորմածությունը։ Գաբրիելը ո՛չ Փարիզ էր փափագում, ո՛չ բնակարան, ո՛չ քաղաքակիրթ մարդկանց շրջապատ, ո՛չ ճոխություն, ո՛չ ապահով ապրուստ, ո՛չ անկողին, ո՛չ մաքրություն։ Եթե նրա մեջ որևէ ձգտման նշույլ կար, ապա դա մենության անզուսպ պահանջն էր, որը բոպե առ բոպե սաստկանում էր։ Սակայն դա գոյություն չունեցող մենության պետք է լիներ, մի աշխարհ, ուր մարդիկ չլինեին, մի մոլորակ՝ առանց ձգտումների, առանց շարժման, առանց հոգսերի, տիեզերքի խորքերում կորած մի գաղութ, որտեղ նա կարող էր լինել միակ էակը, անխռով դիտեր իր շուրջը, չունենար ո՛չ անցյալ, ո՛չ ներկա, ո՛չ ապագա։

Առանձին գյուղերի համայնքները ծովափին տեղավորվել էին իրարից բավական հեռու։ Յողոնօլուքն ու Հաբիբլին բարձունքի վրա էին, մինչդեռ Բիթիասը, Ազիրն ու Քեբուսիեն ընտրել էին ափին ավելի մոտ տափարակը, որտեղ ետ քաշված ժայռապատնեշի առաջ գոյացել էր կարծր թփերով ծածկված մի քանի խորդուբորդ բացվածք։

Այն ժամանակ, երբ ուսուցիչ Ոսկանյանը թափահարում էր աղետի դրոշը, բոլորը դեռևս քնած էին։ Բայց կարծես ոչ թե մարդիկ էին դրանք, այլ անկենդան զանգված, ժայռաբեկորներ կամ հողակույտեր։

Նավային հրանոթի որոտը խզեց այդ քունը։ Մոտ չորս հազար հոգի կանայք, երեխաներ և ծերունիներ սարսափահար բացեցին իրենց աչքերը, տեսան բացարձակ սովի չորրորդ օրվա լույսը։ Ծովափին փրոված մարդկանց առաջ հայտնվեց մի անհավատալի տեսիլք, որը անշարժ ու հաստատուն օրորվում էր ծովի վրա։ Սովահարներին դա թվաց պատրանք։ Շատերը փորձեցին սթափվել, որ փարատվի երազային պատկերը։ Ոմանք մնացին լերկ ժայռերի վրա անտարբեր պառկած։ Քարերի կարծրությունից մարդկանց մսազուրկ ոսկորները ծածկող մաշկը կապտել էր։ Ոչ ոք մի կողքից մյուսը դառնալ չէր կարողանում։ Այնուամենայնիվ, չափահասների մեջ հանկարծ ծայր առան լացն ու հեկեկանքը։ Դա չորս կողմ տարածվեց իբրև ծանր հիվանդ երեխաների նվաղկոտ հնծեծանք։ Եվ ահա տեղից բարձրացան նույնիսկ ամենաուժասպառ ուրվականները։ Փոքրիկ տղաները, որոնք մեծ մասամբ դեռևս կարողանում էին ոտքի վրա մնալ, մագլցեցին ցցված խութերն ի վեր։ Բոլորը շարժվեցին դեպի ջուրը։

«Գիշեն» մեծ հածանավը խարիսխ գցեց ափից մոտ կես մղոն հեռավորության վրա։ Սպանների և նավաստիների առջև բացվեց ցնցող տեսարան։ Նայում էին հարյուրավոր մերկ, կմախքացած թշվառներին, որոնք նրանց կողմն էին պարզել ողորմություն հայցող ձեռքերը։ Այս տարաբախտներին պատկանող մարդկային կերպարանքները (դրանք արդեն դեմքեր չէին) հեռադիտակի միջից ուրվականներ էին թվում։ Միաժամանակ բարձրացավ աղիողորմ վայնասուն, որը ավելի շատ միջատների բզզոց էր հիշեցնում և կարծես շատ ավելի հեռվից էր գալիս։ Գահավեժ ժայռապարիսպների արանքով հետզհետե ավելի ու ավելի շատ թվով մարդկային միջատներ էին ցած սողում, առաջ մեկնում ողորմություն հայցող ձեռքերը։ Մինչև «Գիշենի» հրամանատարը հալածվածների վերաբերյալ որևէ վճիռ կկայացներ, ջուրը նետվեցին երկու հոգի, անկասկած, տղաներ, և լողացին դեպի նավը։ Գրեթե հարյուր մետր էր մնում, երբ ուժերը նրանց կարծես դավաճանեցին։ Նավից իսկույն մակույկ ուղարկվեց, որը և ջրից դուրս բերեց տղաներին։ Մի այլ նավակ շարժվեց դեպի ափը՝ այդ տարօրինակ «աղետյալ քրիստոնյաների» ներկայացուցիչներին նավ բարձրացնելու։ Բայց շուտով պարզվեց, որ երբ աստված մի հրաշք է առաքում, հետն էլ հարյուրավոր որոգայթներ է լարում, նվազեցնում հրաշքի ուժը։ Գահավեժ ափին մոտենալն այնքան դժվար էր, ալեկոծությունն այնքան ուժեղ էր, որ նույնիսկ «Գիշենի» հմուտ նավաստիները հազիվ կարողացան գործը գլուխ բերել։ Ի դեպ, դա մեծապես արդարացնում էր Արամի ձկնորսական ձախորդությունը։ Գրեթե մի ժամ անցավ, մինչև ֆրանսիացիները ապարդյուն փորձերից հետո կարողացան նավակ նստեցնել Տեր-Հայկազունին, բժիշկ Ալթունին, Հաբեթ Շատախյանին։ Դա կատարվեց այն պահին, երբ Մուսա լեռան բարձունքներում սկսված հրետանային կրակը լսելով, «Գիշենը» հարյուր քսան ծանր արկ նետեց դեպի մահմեդական դաշտավայրը։

Երկրորդ կարգի կապիտան Բրիսոնը պատվիրակությունն ընդունեց սպայական նավասրահում, երբ հրետանին արդեն դադարեցրել էր կրակը։ Բրիսոնը սարսափից այլայլվեց, տեսնելով երեք տղամարդկանց ցնցոտիածածկ, հյուծված մարմինները, մազակալած դեմքերը, լայն ճակատներն ու խոշո՞ր, խոշո՞ր աչքերը։ Տեր-Հայկազունը զարհուրելի տեսք ուներ։ Մորուքի կեսն այրված էր, աջ այտի վրա ահագին վերք կար։ Քանի որ ամենօրյա պարեգոտը զոհ էր գնացել հրդեհի բոցերին, վարդապետն ուսերին դարձյալ գցել էր ինչ-որ մեկի նվիրած ծածկոցը։ Նավապետը ձեռքը մեկնեց անծանոթներին.

— Հոգևոր հա՞յր... ուսուցի՞չ...— հարցրեց նա։

Շատախյանը ժամանակ չտվեց ուրիշ նորություններ իմանալու։ Ամբողջ ուժերը հավաքեց, խոնարհվեց և սկսեց իր այն ճառը, որ անգիր էր արել դեռևս ծովափ տանող ոլորապտույտ ճանապարհին, ապա նավակում։ Սկսեց « մոն ժեներալ» (իմ գեներալ) անհաջող արտահայտությամբ։ Գուցե հուզմունքից շփոթվեց։ Վերջին հաշվով ի՞նչ կարելի էր պահանջել Յողոնսլուքի հայ ծիսական դպրոցի ուսուցչից։ Նա որտեղի՞ց պետք է իմանար ֆրանսիական ռազմածովային կոչումների կարգը, մանավանդ որ Շատախյանի սոկրատեսյան դաստիարակը՝ հանգուցյալ Գրիգորը, ռազմագիտությանը ոչ մի կարևորություն չէր տալիս։

Երբ նավապետ Բրիսոնն արևելյան վերամբարձ ճառից իմացավ կարևոր, ինչպես նաև շատ ու շատ անկարևոր իրողություններ, ինքն իրենով հիացած ճառախոսը հույսով սպասեց, թե իր անթերի արտասանության հասցեին գովեստ կշռայլի այնքա՞ն բարձրաստիճան մի անձնավորություն։ Սակայն նավապետը դանդաղ մերթ մեկին նայեց, մերթ մյուսին, ապա հարցրեց տիկին Բագրատյանի օրիորդական ազգանունը։ Հաբեթ Շատախյանը խիստ ուրախացավ, որ կարող է ի ցույց հանել բուն ֆրանսիացիների հետ ունեցած իր քաջահմուտ ծանոթությունը։ Բայց այս անգամ միջամտեց Տեր-Հայկազունը։ Ի զարմանք և ի շփոթություն Շատախյանի, վարդապետը խոսեց սահուն ֆրանսերենով, մի բան, որ ուսումնական երկար տարիների ընթացքում երբեք չէր զգացել։ Տեր-Հայկազունը պատմեց, որ ժողովուրդը սովի է մատնված և ուժասպառ է եղել։ Խնդրեց անհապաղ օգնություն ցույց տալ, քանի որ առաջիկա ժամերին կանանցից ու երեխաներից շատերը հազիվ թե կենդանի մնան։

Մինչ վարդապետը խոսում էր, բժիշկ Ալթունին ուշագնաց եղավ։ Քիչ մնաց աթոռից վայր գլորվեր։ Բրիսոնը կարգադրեց իսկույն կոնյակ և սուրճ բերել, պատվիրակներին հյուրասիրել առատ ճաշով։ Բայց պարզվեց, որ ոչ միայն ծերունի բժիշկը, այլև մյուս երկուսը ուտել չեն կարող։ Նավապետը կանչեց մատակարարման պետին, կարգադրեց անմիջապես նավակներով սննդամթերք տանել ափ։ Ցամաք դուրս գալու հրաման ստացան նաև բժիշկը, սանիտարական անձնակազմը և մի խումբ զինված նավաստիներ։

Այնուհետև Բրիսոնը հայերին հայտարարեց, թե իր զրահապատ հածանավն անկախ միավոր չէ, այլ անգլո-ֆրանսիական նավախմբի առաջապահը, որին առաջադրանք է տրված լողալ Անատոլիայի հյուսիս-արևմտյան ափի երկարությամբ։ «Գիշենը» երեկ երեկոյան, մյուս նավերից երեք ժամ շուտ, դուրս էր եկել Կիպրոսի Ֆամագուստա նավահանգստից։ Նավատորմի հրամանատարը՝ փոխծովակալը, գտնվում է

«Ժաննա դ'Արկ» գծանավի վրա։ Սպասում են նրա վճռին։ Մի ժամ առաջ ռադիոգիր են ուղարկել։ Պատվիրակները թող չանհանգստանան։ Կասկածից դուրս է, որ ֆրանսիացի ծովակալը բախտի քմահաճույքին չի թողնի հայ քրիստոնյա աղետյալ ժողովրդի այսքան քաջարի մի հատվածը։

Տեր-Հայկազունը խոնարհեց գլուխը, ի ցույց հանելով իր աղավաղված մորուքը.

— Պարոն նավապետ, թույլ տվեք մի հարց։ Դուք ասացիք, որ Ձեր նավը ինքնուրույն չէ, այլ ենթարկվում է Ձեր վերադասի հրամանին։ Հապա ինչպե՞ս պատահեց, որ գնացիք ոչ թե դեպի հյուսիս-արևմուտք, այլ եկաք մեր կողմերը...

— Դուք, ի՜նչ խոսք, երկար ժամանակ գլանակ ծխած չեք լինի, պարոնայք։ Սիրով կուզենայի այս տուփը ձեզ տրամադրել...

Բրիսոնը ուսուցչին մեկնեց գլանակների մի մեծ տուփ, ապա ծովագնացի իր ալեխառն գլուխն ու մտախոհ աչքերը դարձրեց դեպի Տեր-Հայկազունը.

— Մոն պեռ[1], Ձեր հարցն ինձ հետաքրքրում է, որովհետև ես, իրոք, կարգը խախտեցի և ահագին շեղվեցի մեր ուղղությունից։ Ինչո՞ւ։ Ժամը տասին մենք անցանք Կիպրոսի հյուսիսային հրվանդանի մոտով։ Մի ժամ հետո, կեսգիշերին, ինձ զեկուցեցին, թե սիրիական ծովեզերքին մեծ հրդեհ է բռնկվել։ Թվում էր, թե միջին մեծության մի քաղաք է այրվում։ Երկինքն ահագին տեղ կարմրել էր։ Մենք բաց ծովում էինք, ցամաքից ամենաքիչը երեսուն մղոն հեռու։ Այնինչ ձեզանից իմացա, որ ընդամենը մի քանի ճյուղաշեն խրճիթ է այրվել։ Հավանաբար, մշուշը հաճախ խոշորացույցի դեր է կատարում։ Այդպիսի դեպքեր պատահում են։ Հիրավի երկնքի կեսը կարմրել էր։ Ես նավի ուղղությունը փոխել տվի հետաքրքրությունից, այո՜, զուտ հետաքրքրությունից...

Տեր-Հայկազունը աթոռի վրայից վեր կացավ։ Թվաց, թե շատ կարևոր բան է ասելու։ Շուրթերը շարժվեցին։ Բայց հանկարծ մի քանի անհաստատ քայլ արեց դեպի նավասրահի պատը և դեմքը սեղմեց լուսանցույցին։ Նավապետ Բրիսոնն այն կարծիքին էր, թե վարդապետի հետ այժմ կատարվեց այն, ինչ տեղի ունեցավ ծեր բժշկի հետ։ Սակայն Տեր-Հայկազունը շրջվեց։ Արևը ներս հորդեց, լցվեց սպայական ցածրիկ սրահը։ Հովվապետի դեմքը ճաճանչների մեջ շողշողում էր այնպես, կարծես քանդակված լիներ դեղին սաթից։ Տեր-Հայկազունի աչքերի մեջ գինովություն կար, երբ նա հայերեն մրմնջաց.

— Զարիքը կատարվեց միայն նրա համար... որ հնարավոր դառնա աստծո ողորմածությունը...

Նա ձեռքերը թեթևացած բարձրացրեց, կարծես ուզեց ասել, թե խորհրդավոր զորությամբ բոլոր տառապանքներն արդեն հաղթահարված են։ Ֆրանսիացին դա չհասկացավ։ Բժիշկ Ալթունին գլուխը սեղանին դրած՝ քուն էր մտել։ Հաբեթ Շատախյանը այդ պահին այլևս չէր մտածում Քաղաքաձորի հրդեհի մասին, որն սկսվեց խորանի աստվածուրաց բոցով և ավարտվեց փրկությամբ։

Երկու ժամ հետո հորիզոնի վրա հայտնվեց վիթխարի «Ժաննա դ'Արկը»։ Նրան հետևում էին մի անգլիական և երկու ֆրանսիական հածանավ։ Հսկայական մի փոխադրանավ սրանց միացավ կեսօրից առաջ։ Լայն, համաչափ շարք կազմած, երկար, զուգահեռ փրփրաշերտեր գոյացնելով, մոտենում էին մուգ երկնագույն ռազմանավերը, դեպի վեր պարզած իրենց զրահապատ աշտարակները։ Նավախմբի հրամանատարը երկրորդ կարգի կապիտան Բրիսոնին ռադիոյով պատասխանել էր, որ ոչ միայն ուզում է նավերի վրա ընդունել հայ փախստականներին և այդ նպատակով նախատեսված ուղղությունից շեղվել, այլև ցանկանում է անձամբ տեսնել հերոսական մարտերի վայրը, որտեղ քրիստոնյա ազգի մի բեկորը քառասուն օր շարունակ դիմադրել է բարբարոսական գերակշիռ ուժերին։ Փոխծովակալը մեծ համբավ վայելող խստաբարո կաթոլիկ էր, և խաչի համար մարտնչող հայերի պայքարը նրան անկեղծորեն հուզել էր։

Երբ նավախումբն օրինակելի ներդաշնակությամբ խարիսխ գցեց, հայելու պես հստակ ծովի վրա սկսվեց աշխույժ եռուզեռ։ Շեփորային ազդանշաններն իրար էին հաջորդում։ Շղթաներն ու ամբարձիչները ճռընչում էին։ Դանդաղ ցած էին իջնում ահագին նավակները։ Մինչ այդ «Գիշենի» նավաստիները խուրթերի արանքում, առավել մատչելի մի տեղ, հանպատրաստից նավամատույց հիշեցնող հարմարանք պատրաստեցին։ Այստեղ պատվելի Արամի ձկնորսական լաստն անսպասելի պատվի արժանացավ։

Փրկվածները նեղ ժայռաբեկորների վրա պառկած, նստած կամ կուչ եկած՝ մոլորված հայացքներով դիտում էին այդ տեսարանը։ Կարծես դա իրենց չէր վերաբերում։

«Գիշենի» գլխավոր բժիշկն իր օգնականների ու սանիտարների հետ

[1] Մոն պեռ — հայր իմ, տեր հայր

զբաղված էր հիվանդներով և քաղցից ուժասպառ եղածներով։ Նա Պետրոս Ալթունուն գովեց, որ սա դեռևս երեկ, կյանքի ծայրահեղ քայքայման պայմաններում, առանձնացրել է վարակիչ հիվանդներին և կասկածելիներին։ Ալթունին խոր հառաչանքով հայտնեց, թե վերևում, Դամլաջրքի վրա, նման բազմաթիվ թշվառներ անխնամ և անսնունդ թողնված են բախտի քմահաճույքին, թեև դրանց մեծամասնությունը լավ խնամվելու դեպքում կարող էր փրկվել։

Նավի բժիշկը թթու դեմք ընդունեց։ Բծավոր տիֆով հիվանդներին վերցնելը ծանր պատասխանատվության հետ էր կապված։ Բայց ի՞նչ աներ։ Այդ քրիստոնյաներին չէր կարելի հանձնել թուրքերի վայրագ վրիժառությանը։ Գլխավոր բժիշկը մարդասիրությունից մղված՝ իր հայ պաշտոնակցին գլխով արեց.

— Շատ մի՛ խոսեք այդ հարցի շուրջը։

Նա հայտնեց, թե զինվորական փոխադրանավը գրեթե դատարկ է և հիվանդանոցային հարմարավետ նավասենյակներ ունի։ Ֆրանսիացին, աչքերը ճպճպացնելով, Ալթունուն հավաստիացրեց, որ կարող է անհոգ լինել։

Առողջներին (եթե ողջ մնացածների մասին կարելի է այդպես արտահայտվել) նավաստիներն առատորեն հաց և պահածոներ էին բաժանում։ Նավի խոհարարները մի ահագին կաթսա կարտոֆիլի սուպ էին բերել։ Ֆրանսիացի բարեսիրտ նավաստիները սեփական ճաշամաններով աջ ու ձախ ճաշ էին հրամցնում։ Սակայն հայերն այդ ամենն ընկալում էին իբրև անիրական տեսիլք։ Ե՛վ հացն էր անիրական թվում, և՛ ճաշը։ Թվում էր, թե այդ երազային ուտելիքներից իրենք երբեք չեն կշտանա։ Բայց շուտով, երբ ամեն մեկը, գրեթե առանց ծամելու և առանց համը տեսնելու, արդեն կուլ էր տվել իր բաժինը, համայնքների տրամադրությունը բարձրացավ։ Ճիշտ է, մարդիկ մահվան եզրին էին, գրեթե անկենդան, այնուամենայնիվ, քառասուն օրն արդեն մնացել էր ետևում, իբրև կիսով չափ մոռացված առասպել։ Մարմինը դեռևս պաշտպանվում էր անսովոր սննդից (ո՛վ հաց, հազարապատի՜կ բաղձալի հաց), սակայն հոգին ամեն ինչ ընկալում էր այնպես, կարծես դա միանգամայն սովորական երևույթ էր, կարծես աստծո ողորմածությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ իրերի առօրյա ընթացք։

Իր մեծաթիվ շտաբով շրջապատված, փոխծովակալը երերուն կամրջով ափ իջավ։ Նրա մոտորավոր բարկասին մակույկների մի ամբողջ խումբ էր հետևում։ Նավատորմի հրամանատարի անվտանգությունն ապահովելու համար բոլոր նավերից ցամաք շտապեցին գնդացիրներով զինված ծովային հետևակի զինվորները։ Մակույկներից դուրս գալով, նրանք շարվեցին նեղ ժայռացցվածքների մոտ։ Գոյացավ ռազմիկների մի այնպիսի բազմություն, որ փոխծովակալը ֆրանսիական համազգեստների այդ հորձանուտում հազիվ էր կարողանում տեսնել իրեն հետաքրքրող հայերին։ Գյուղական համայնքների միջով դանդաղ անցնելիս նա պահանջեց հանգամանորեն պատմել, թե ինչպես սկսվեցին և շարունակվեցին պաշտպանական ճակատամարտերը։ Այստեղ երկրորդ անգամ և առավել մեծ մասշտաբով ուսուցիչ Շատախյանը հնարավորություն ստացավ բարձրաստիճան ֆրանսիացուն զարմացնել իր հարուստ բառապաշարով։ Փոխծովակալը փոքրամարմին տարեց տղամարդ էր՝ զինվորականի խիստ և զուսպ դեմքով, որի վրա խոժոռության հետ նաև վայելչություն կար դրոշմված։ Մաշկի գույնը ծովայիններին հատուկ թուխ կարմրություն ուներ։ Խոզանակաձև բեղերը ձյան պես սպիտակ էին։ Երկնագույն աչքերի մեջ մռայլություն կար, բայց հայացքը մեղմ էր։ Ծերունու կեցվածքը բարեձև էր։ Հագին ոչ թե ծովային համազգեստ էր, այլ վուշե լայն սպիտակ կոստյում։ Նա զինվորականի տպավորություն էր թողնում միայն կրծքին ամրացված շքանշանների նեղ ժապավենով։ Նա զանազան հարցեր էր տալիս թուրքական զինված ուժերի վերաբերյալ։ Այնուհետև իր բամբուկե բարակ գավազանն ուղղեց դեպի ժայռապարիսպները, ցանկություն հայտնեց սեփական աչքով տեսնել սարահարթն ու ճակատամարտերի վայրը։ Սպաներից մեկը պատճառաբանեց, թե ստիպված կլինեն մի քանի հարյուր մետր բարձրանալ, իսկ դա ծովակալի համար, երևի, դժվար է։ Հետո էլ, հազիվ թե կարողանան ճաշի ժամին վերադառնալ նավ։ Այս խիզախ միջամտությունը առհասարակ ոչ մի պատասխանի չարժանացավ։ Փոխծովակալը նշան տվեց առաջ շարժվելու։ Համհարզը գաղտնի հոգ տարավ, որ ծովային հետևակը ոլորապտույտ ճանապարհով նախապես բարձրանա Դամլաջրք և դիրքավորվի, մինչև նորին պայծառափայլության տեղ հասնելը։ Թշնամական հողի վրա նման քայլի դիմելը խիստ ծայրահեղ հանդգնություն էր։ Լեռը կարող էր պաշարված լինել թուրքական զորքով և հրանոթներով։ Կարող էին ծագել խիստ անախորժ անակնկալներ։ Սակայն բարձրաստիճան պարոնը համառ բնավորության տեր մարդ էր. ոչ մի պատճառաբանություն հաշվի չառավ։ Որոշվեց թուրքերին այդ շրջագայության ժամանակ պատշաճ հեռավորության վրա պահելու նպատակով մի քանի խումբ նետել թուրքական ծովեզրյա գյուղերի վրա։ Դրանից բացի, համհարզը հոգ տարավ նախաճաշի մասին, քանի որ ծերունի ծովագնացի համար լեռնային այդ շրջագայությունը դյուրին չէր։ Փոխծովակալի փա-

ռասիրությունը բռնել էր. ուզում էր շքախմբի երիտասարդ պարոնների մոտ ցուցադրել իր սրտի, թոքերի և ոտքերի զորությունը։ Լեռնային շեղ արահետով նա անդուլ բարձրանում էր, ետ թողնելով բոլորին։

Սաթոն ուղեցույցի դեր էր կատարում։ Նրա ուժերը քաղցից բոլորովին չէին նվազել։ Շարունակ ետ ու առաջ էր վազում, առույգ շան պես ճանապարհը չափչփում մի քանի անգամ։ Որբուհին իր կյանքում երբեք չէր տեսել այսքան շքեղ հագնված մարդկանց։ Բվային անհագուրդ աչքերով ուղղակի կլանում էր համազգեստները, ոսկեգույն երիզներն ու ռազմական կրծքանշանները, մատով պահածոյի տուփի միջից դուրս բերելով սառած հարպի մնացորդները։ Նավաստիների նվիրած օղին կրակի պես այրում էր աղջկա ներսը։ Թիթեռնիկային երբեմնի նախշուն շրջազգեստի աննկարագրելի ծվենները թափահարելով, նա իր վտիտ ազդրերն էր ցուցադրում ճաճանչափայլ աստվածների առաջ։ Երբեմն էլ թուխ, կեղտոտ ձեռքը սպաներին պարզելով և ձայնը տեղացի մուրացկանների ագերսանքին նմանեցնելով, ծոր էր տալիս.

— Բախշի՜ շ։

Շտաբի սպաները շարունակ կանգ էին առնում, նայում իրենց շուրջը, հիանում Մուսա լեռան գեղեցկությամբ, ծառերի և աղբյուրների առատությամբ։ Մի բանիսը տեղանքն անվանեցին Գոնզագ Մարիսի գտած բառով՝ «Ռիվիերա»։ Բայց շատերի կարծիքով, Մուսա լեռան վայրի կուսականությունը չուներ և ոչ մի Ռիվիերա։ Շքախմբի վերջից գնում էին ծովային երկու երիտասարդ սպա։ Մինչ այդ գրեթե ոչ մի բառ չէին փոխանակել, գովասանքի ոչ մի խոսք չէին ասել բնության հասցեին։ Նրանցից մեկը, անգլիացին, կանգնեց, բայց ոչ թե շրջվեց դեպի ծովը, այլ հայացքը մտասույզ հառեց քարքարոտ հողին.

— Լսեցեք, բարեկամ, այդ հայե՜րը... Ես այն տպավորությունն ստացա, որ ոչ թե մարդիկ եմ տեսնում, այլ միայն աչքե՜ր...

Գաբրիել Բագրատյանը դեռևս չէր վերացրել պաշտպանության գիծը։ Թեև նրան հայտնել էին, որ թուրքական զորամասերը հարավից և հյուսիսից նահանջել են, նա դեռևս չէր հավատում խաղաղությանը։ Դա գուցե նրա կողմից ռազմական նկատառո՞ւմ էր։ Չէ՞ որ զինվորները ռազմադաշտից չպետք է հեռանան, եթե դեռևս լիովին չի վճռված ամբողջ ժողովրդի ճակատագիրը։ Սակայն այս խստության պատճառները, երևի, ավելի խորն էին։ Նոր Գաբրիելն անծանոթ ճանապարհով այնքան հեռուն էր գնացել, որ նախկին Գաբրիելին արագ գտնել չէր կարող։ Քառասուն օրում տեղի ունեցած կերպարանափոխությունը նրան գամել

էր տեղում։ Նույն բանն էր կատարվում նաև առավել կոշտ ու կոպիտ մարդկանց հետ։ Զինվորներից ոչ մեկը չբողոքեց, չըմբոստացավ Գաբրիելի ծայրահեղ համբերության դեմ, առավել ևս ժողովրդի դեմ մեղանչած դասալիքները, որոնք շողոքորթաբար արտակարգ պատրաստակամություն էին հանդես բերում։

Գաբրիելը զինվորներին դիմեց մի քանի խոսքով։ Ոչ ոք չի կարող փրկության մասին մտածել, մինչև բոլոր կանայք ու երեխաները նավ չբարձրանան։ Այս համբերատարությամբ իրենք ֆրանսիացիների մոտ կապացուցեն հայ ազգի արժանապատվությունը։ Պապենական հողից իրենք պետք է հեռանան իբրև անպարտելի ռազմիկներ՝ զենքը ձեռքներին, կարգ ու կանոնով։ Ոչ մի դեպքում Դամլաջրքի վրա չեն թողնի այն հաուբիցները, որոնց համար ժողովուրդը երախտապարտ է իր որդուն։ Չէ՞ որ թուրքերը հենց այսօր երեկոյան դրանք կտանեն։ Ինքը՝ Բագրատյանը, ցանկանում է անել ավելին. հաղթության այդ մեծ և կարևոր ավարը կհանձնի ֆրանսիացիներին։

Այս խոսքերից, իհարկե, շատ ավելի կարևոր էր այն իրողությունը, որ Տեր-Հայկազունը լեռ էր ուղարկել ահագին քանակությամբ հաց, մարմելադ, գինի, պահածոներ, ծխախոտ։ Հաճելի թմրությամբ համակված՝ շորս կողմ փռվել էին զինվորները, և նրանց համար ավելի ցանկալի էր այդ համբերատար անդորրությունը, քան նույնիսկ ամենաանշան շարժումը։

Անդորրությանը վերջ տրվեց, երբ սարահարթում հայտնվեց ծովային հետևակը և կանոնավոր շարքով ուղղություն վերցրեց դեպի հաուբիցների բարձունքը։ Հայ զինվորները ոտքի թռան, ցնծության աղաղակներով ընդառաջ վազեցին ֆրանսիացիներին, որոնք իրենց փայլուն համազգեստներով ապշեցուցիչ հակադրություն էին կազմում Մուսա լեռան ցնցոտիավոր, սովալլուկ և ճակատամարտերից ուժասպառ եղած ռազմիկների համեմատությամբ։ Հայ զինվորները միայն այժմ գիտակցեցին իրենց հանդուգն պայքարի, իրենց տարած հաղթանակի ամբողջ մեծությունը։

Երբ սպաների պատկառելի խումբը մոտեցավ, Գաբրիելը դանդաղ ընդառաջ գնաց։ Նա այդ բանն արեց չափազանց սառնասրտորեն, խուսափելով զինվորական ձևականություններից։ Կարծես այդ արարողությունից ամաչում էր։ Հրացանը թողեց գետնին։ Այժմ նա նման էր որսորդի կամ պեղումներ կատարող ինժեների։ Արևադարձային ծղոտե գլխարկը հանեց, ձգված կանգնեց փոխծովակալի առաջ։ Ձեր պարոնը

թափանցող աչքերով մի քանի վայրկյան Գաբրիելին դիտեց, ապա ձեռքը մեկնեց նրան.

— Դո՞ւք եք հրամանատարը։

Գաբրիելն իսկույն մատնացույց արեց հաուբիցները, կարծես փոքրկարարներին ուզեց հասկացնել, թե հայերը նրանց ձեռնունայն չեն դիմավորում։

— Պարո՛ն ծովակալ, ես Ձեզ, հետևաբար, ֆրանսիացի ազգին եմ հանձնում թուրքերից խլած այս երկու հրանոթը։

Հանդիսավորության արժեքն իմացող փոխծովակալը պատվի առավ։ Մյուս սպաները ձգվեցին.

— Պարոն հրամանատար, Ձեզ շնորհակալություն եմ հայտնում ֆրանսիացի ազգի անունից, որը և հայկական հաղթանակի այս ավարը ընդունում է ի պահպանություն։

Նա ձեռքը մի անգամ էլ մեկնեց Բագրատյանին.

— Հաուբիցների գրավումը Ձեր անձնական քաջագործությո՞ւնն է։

— Դա իմ պատանի որդու քաջագործությունն է։ Նա սպանված է։

Այս խոստովանությանը հետևեց երկարատև, ընդհանուր լռություն։ Փոխծովակալը բամբուկե ձեռնափայտով մի քար գլորեց, ապա դիմեց իր ուղեկիցներին.

— Արդյոք հնարավո՞ր է հրանոթները լեռան բարձունքից իջեցնել և նավ բարձրացնել։

Մասնագետ սպան մտահոգ դեմք ընդունեց։ Անհրաժեշտ հրաման լինելու դեպքում մեծ դժվարությամբ կարելի է գործը գլուխ բերել, եթե դրան տրամադրվի մի ամբողջ օր։ Նորին պայծառափայլությունը փոքրինչ խորհրդածելուց հետո հայտնեց իր վճիռը.

— Պետք է հոգ տանել, որ հաուբիցները շարքից հանվեն։ Ամենից լավն այն կլինի, եթե դրանք պայթեցվեն, սակայն զգուշորեն, խնդրեմ։

«Ավելի լավ,— մտածեց Գաբրիելը,— աշխարհից երկու թնդանոթ կպակասի»։ Բայց և ցավ զգաց։ Չէ՞ որ դրանք Ստեփանի անվան հետ էին կապված։

Փոխծովակալն շտապեց մխիթարել.

— Հրամանատար, Դուք արդար գործին մեծ ծառայություն եք մատուցել։ Ցավ չէ, եթե հաուբիցները ոչնչացվեն։

Այդ խոսքերով հանդիսավորությունը տեղի տվեց գործնականին։ Սերունին խնդրեց նկարագրել պաշտպանողական ճակատամարտերը և պաշտպանության սիստեմը։

Երբ Գաբրիելը հակիրճ խոսքերով ուրվագծում էր տեղի ունեցածը,

հանկարծ նրան տիրեց խոր անհամբերություն։ Այդ մաքուր լվացված, անուշահոտ յուղերով օծված, անթերի հանդերձանքով պճնված պարոնները սառը հետաքրքրությամբ էին ունկնդրում քառասուն օրվա սրտաճմլիկ իրողությունը, կարծես դա դիլետանտների ռազմախաղ լիներ։ Երբ ճակատամա՞րտ։ Վերջին հաշվով դրանք չէին ամենակարևորը։ Այս պճնազարդ պարոններն ի՞նչ գիտեին հայոց ճակատագրից, ի՞նչ գիտեին բարձունքներին ապավինած յուրաքանչյուր կյանքի կործանումից։ Անհամբերությունը փոխվեց խորշանքի։ Արդյոք չէ՞ր կարող ուղղակի մեջքը շուռ տալ և հեռանալ։ Նա արդեն իր պաշտոնն ավարտած մարդ էր և այժմ պետք է միայն հոգ տանել Ժուլիեթին ու Իսկուհուն ծովափ իջեցնելու մասին։ Բայց ո՛չ, ի սե՛ր աստծո։ Ֆրանսիացիները հրաշքով հայտնված փրկարարներ էին։ Նրանց պետք է հարգել, անսահման շնորհակալություն հայտնել։

Փոխծովակալը վերջում ցանկություն հայտնեց տեսնել Հյուսիսային լեռնաթամբի գլխավոր մարտավայրը։ Խուլ ձայնով պատվիրեց, որ սպաներն իրենց լսածն ուշի-ուշով գրի առնեն։ Անկասկած, մտադիր էր ճշգրիտ զեկուցագիր ներկայացնել ռազմական մինիստրություն։ Հայկական յոթ համայնքի փրկությունը ոչ միայն կարևոր, այլև չափազանց ցուցադրական երևույթ էր։ Գաբրիել Բագրատյանը, իհարկե, կատարեց նորին պայծառափայլության ցանկությունը։ Լուր ուղարկեց Զաուշ Նուրհան էլլեոնին։ Միաժամանակ, կապավորներից մի քանիսի գլխավորությամբ ծովային հետևակի մի մասը գնդացիրներով ճանապարհ ընկավ՝ նավատորմի հրամանատարի անվտանգությունն ապահովելու։ Երբ կես ժամ հետո Գաբրիելը ֆրանսիական շտաբի հետ հասավ լեռնաթամբի բարձունքը, Զաուշ Նուրհանն արդեն օրինակելի կարգով շարքի էր կանգնեցրել զինվորներին և պատրաստ էր ֆրանսիացիներին ընդունել մարտական շուքով։ Գաբրիելը, ուշադրություն չդարձնելով փոխծովակալի ներկայությանը, գրկեց փոքր-ինչ ծերացած ռազմիկին.

— Զաո՛ւշ Նուրհան, ահա և ամեն ինչ վերջացավ։ Քեզանից շնորհակա՛լ եմ։ Շնորհակա՛լ եմ ձեզանից, բոլորիդդ, տղանե՛ր։

Այդ պահին մազակալած հայորդիները քանդեցին գեղեցիկ շարքը և շրջապատեցին Բագրատյանին։ Շատերը քաշում էին ձեռքը, որ համբուրեն։ Մարտական առաջնորդի հանդեպ ունեցած այս նվիրվածության մեջ աղոտ կերպով զգացվեց ինչ-որ անվստահություն և խորթություն դեպի պճնազարդ հյուրերը։ Բայց սպաները զարմանքով ու հուզմունքով էին դիտում այդ ոչ զինվորական, սակայն դրանով իսկ առավել մարդկային տեսարանը։

Խրամատներն ու ժայռապարիսպները թեթևակի աչքի անցկացնելուց հետո փոխծովակալը իր պարտքը համարեց մեծարանքի խոսք ասել Գաբրիել Բագրատյանին և նրա զինվորներին։ Նա այդ բանն արեց ֆրանսիական պերճախոսությամբ, բայց և իր կոչմանն ու հավատին վայել զուսպ խստությամբ։

— Հրամանատար,— սկսեց նա,— մեր օրերում հերոսական գործեր են կատարվում աշխարհի բոլոր երկրներում և բոլոր ծովերի վրա։ Սակայն դրանք իրար դեմ կանգնած քաջավարժ զինվորներ են։ Այստեղ, Մուսա լեռան բարձունքներում այլ է դրությունը։ Ձեր տրամադրության տակ դուք չունեք նման քաջավարժ զինվորներ։ Ձեր ռազմիկները պարզ ու խաղաղ շինականներ են, արհեստավորներ։ Այնուհանդերձ, Ձեր գլխավորությամբ վատ զինված գեղջուկների այս բազմությունը ոչ միայն ջախջախել է հազարապատիկ զորեղ թշնամուն, այլև կենաց անհավասար պայքարում հաղթականորեն վավերացրել է իր մարդկային արժանիքը։ Այդ սխրագործությունը չի մոռացվի։ Դա հնարավոր է եղել միայն աստծո օգնությամբ։ Աստված ձեզ զորավիգ է եղել, քանի որ դուք պայքարել եք ոչ միայն ձեր անձի համար, այլև հանուն սրբազան խաչի։ Դուք ցուցաբերել եք գերագույն հերոսություն, քրիստոնեական հերոսություն, պաշտպանել մի բան, որ ավելի վսեմ է, քան սեփական օջախը։ Ես ֆրանսիացի ազգի կողմից ձեզ շնորհակալություն եմ հայտնում և հպարտ եմ, որ կարող եմ ձեզ օգնել։ Ուրախ եմ, որ բոլորիդ կարող եմ ապահովություն խոստանալ։ Իմ նավախումբը ձեզ կհասցնի եգիպտական որևէ նավահանգիստ, Պորտ Սաիդ կամ Ալեքսանդրիա...

Այս անկեղծ ու հուզումնալից խոսքերից զգացված՝ Գաբրիելը երախտագիտությամբ խորը գլուխ տվեց, սեղմեց նորին պայծառափայլության փոքրիկ ձեռքը։ Նույն պահին մտքում կայծակեց, «Պորտ Սաի՞դ, Ալեքսանդրիա, ե՞ս... Ի՞նչ գործ ունեմ այնտեղ, ինչ-որ գաղութում։ Ինչո՞ւ»։

Ծեր ծովակալի աչքերում համակրանք, գրեթե հայրական գորովանք խայտաց.

— Պարո՛ն Բագրատյան, Ձեզ առաջարկում եմ ուղևորության ընթացքում լինել «Ժաննա դ՝Արկի» վրա, իբրև իմ հյուրը...

Շնորհակալության չսպասեց։ Կաշվե պատյանի միջից դուրս բերեց ոսկեջրած հաստ ժամացույցը, անհանգստությամբ նայեց թվացույցին.

— Իսկ այժմ կխնդրեի ինձ արժանացնել տիկին Բագրատյանի հետ ծանոթանալու պատվին։ Ժամանակին ես նրա հորը լավ էի ճանաչում։

Գիշերը Ժուլիեթն իր վրանի մուտքն ամուր փակեց փոկերով ու պարաններով։ Հիվանդի թուլացած ձեռքերի համար դա ծանր աշխատանք էր։ Իր գործն ավարտելուց հետո նա հազիվ կարողացավ քարշ դալ մինչև անկողինը։ Վրանն այդպես փակեց ո՛չ այն պատճառով, որ վախենում էր ավազակային նոր հարձակումից։ Ժուլիեթի մտքից, որքան էլ դա տարօրինակ թվա, անհետ ջնջվել էին դասալիքների ներխուժումը, երկարամազի այլանդակ դեմքը և այլն, թե ինչպես Սաթոն իր վրայից քաշեց, վայր գցեց վերմակը։ Այդ ամենը թվում էր անցած-գնացած արթմնի երազ։ Մուտքը պարզապես փակեց, որ լույս չլինի, երբեք չզգա ցերեկվա գոյությունը, մենակ մնա իր անկողնում, գլուխը դնի իր սիրած փոքրիկ բարձին, որից երբեք բաժանվել չէր ուզենա։ Կարծես վճռել էր իր և աշխարհի միջև պատ շարել, կենդանի մարմինը թաղել դրա ետևում։ Երբ նրա պատենավորված ես-ը պարուրվում էր խավարով ու մտերմիկ անդորրությամբ, ապա հիվանդը, սարսռալով հանդերձ, իրեն լավ էր զգում, քանի որ այլևս չէր ապրում Մուսա լեռան բարձունքներում, զրկված չէր իր որդուն տեսնելու հնարավորությունից, այլևս թուրքերը չէին հարձակվում, չէին սպառնում սպանել։ Վրանի ներսն ինչ-որ կախարդական ձևով դարձել էր Ժուլիեթի ներաշխարհը, որից դուրս արտաքին վտանգավոր աշխարհը լի էր անորոշ ձայներով։ Հիվանդի դատողությունը վաղուց ի վեր սասանվել էր, մինչդեռ ներքին էությունն աներևակայելիորեն մնացել էր անխախտ։

Վաղ առավոտյան վրանի մուտքի մոտ կախված փոքրիկ զանգը տագնապալից զողանջեց։ Ժուլիեթը տեղից չշարժվեց։ Պատասխան չտվեց, թեև ճանաչեց Ավագյանի աղերսալից ձայնը։ Այնուհետև որոտացին հաուբիցները, ամպրոպի պես պայթեց «Գիշհնի» հրետանային կրակոցը։ Սակայն Ժուլիեթի համար դեռևս գիշեր էր, և նա ավելի խորն ընկղմվեց իր անկողնու մեջ, որպեսզի ոչ ոք նրան չխանգարի իր այդ շիրմանման մահճում։ Հիվանդի մեջ վախի բնազդից ավելի զորեղ էր գերեզմանային խավար մենությունից զրկվելու երկյուղը։ Նրա հիվանդոտ հիշողությունը իսկույն մոռացության տվեց հրետանային սպառնալից որոտը։ Նա ավելի ու ավելի խորն էր թաղվում իր անկողնու մեջ, որ ձայները չլսի։ Բայց որոտը չէր դադարում։ Այժմ էլ ցնցվում էին վրանի պատերը։ Արդյոք թուրքե՞րն էին եկել։ Ավագյանի ձայնին միացավ Քրիստափորի աղերսանքը.

— Տիկի՛ն, խնդրում եմ, բացե՛ք, իսկույն բացե՛ք, տիկի՛ն։

Ավելի ու ավելի ուժգին էին ցնցվում վրանաձողի վրա մնացած

տերևները։ Ժուլիեթը գլուխը չբարձրացրեց։ Ճանաչեց նաև Մայրիկ Անթառամի ձայնը.

— Ախր պատասխա՛ն տուր, հոգիս, ի սե՛ր Քրիստոսի։ Մե՛ծ, մեծ բախտավորություն է եկել...

Ժուլիեթը երեսը շուռ տվեց. «Ի՞նչն են բախտավորություն համարում այդ հայերը։ Եթե Գաբրիելն ինքն էլ լեղու թափի, ես տեղիցս չեմ շարժվի, չեմ խաբվի։ Առհասարակ ո՞վ է Գաբրիել Բագրատյանը։ Մի՞թե իմ ազգանունն էլ Բագրատյան է։ Ժուլիեթ Բագրատյա՞ն»։

Վերջապես դրսից ինչ-որ մեկը մուտքի պարանները կտրատեց և թափով բացեց Ժուլիեթի երերուն դամբարանի դուռը։ Հիվանդը մեջքն արեց դեպի ներս եկողները։ Դրանով ուզեց ապացուցել, որ ինքն իր սեփական աշխարհում կարող է լինել մեն-մենակ, հենց որ կամենա։

Ավագյանն ու Անթառամ Ալթունին տարօրինակ հուզմունքով ու ոգևորությամբ ինչ-որ բաներ պատմեցին ֆրանսիական «Գիշեն» ռազմանավի մասին։ Ժուլիեթը քնած էր ձևանում, թեև ամեն ինչ ուշի-ուշով լսում էր։ Իրեն խանգարողների մասին կասկածամտորեն իսկույն եզրակացրեց. «Թակա՛րդ են լարում»։ Մի՞թե երեկ երեկոյան բժիշկ Ալթունին չէր ստիպում հեռանալ այս սիրելի վրանից, այս ամենահայրաղատ օթևանից, ապրել ուրիշների՝ այդ կեղտոտ անասունների հետ, որոնցից ինքը խորշում էր, և որոնք իրեն ատում էին։ Իհարկե, այդ անճարակ խորամանկությունը Գաբրիելի և Իսկուհու գործն է։ Ֆրանսիական աշխարհին վերաբերող խոսակցությամբ ուզում էին իրեն գայթակղել, որպեսզի ինքը լիովին հանձնվի նրանց, զրկվի իր օթևանից։ Բայց Ժուլիեթին խաբելն այնքան էլ հեշտ չէ։ Ո՛չ, թշնամիներին չի՞ հաջողվի նրան դուրս բերել այս հրեշտակային, երանավետ պատյանի միջից, որտեղ նա ոչ մի ճշմարտություն չի իմանա։ Ավագյանը, Անթառամն ու Քրիստափորը խնդրում էին, աղաչում, սակայն Ժուլիեթն ամեն ինչ ընկալում էր խանգարված գատողությամբ։

Երբ բոլոր ջանքերն իզուր անցան, պառավ կինն ասաց.

— Լավ, հանգիստ թողեք։ Դեռ ահագին ժամանակ ունենք։

Ավագյանն ու Քրիստափորը վրանից դուրս բերին տակնուվրա արված ճամպրուկներն ու կապոցները, սկսեցին կարգի բերել այն, ինչ ավազակները չէին տարել, չէին պատառոտել, չէին ջարդել։ Աշխատանքը դեռ չէին ավարտել, երբ Գաբրիելը նրանց կանչեց։

Կեսօրից առաջ վրանի վարագույրը եռ քաշվեց։ Մայրիկ Անթառամի ուղեկցությամբ ներս մտան երկու տղամարդ։ Դրանք երկնագույն համազգեստներով, փայլուն կոճակներով և կարմիր խաչի ժապավեններ

կապած երիտասարդներ էին։ Մեջքի վրա անշարժ պառկած Ժուլիեթը նայեց նրանց կաթնագույն, պայծառ դեմքերին և կենսաթրթիռ, ուրախ աչքերին։ Հիվանդին անասելիորեն քաղցր սարսուռ պատեց, երբ իր դիմաց տեսավ հայրենակիցներին։ Առավել երիտասարդը ձգված բարևեց, և նրա եղբայրական ձայնը հնչեց կորած աշխարհի հարազատ շեշտով.

— Տիկի՛ն, ներեցե՛ք, որ անհանգստացնում ենք։ Մենք «Գիշենի» սանիտարներն ենք։ Պարոն գլխավոր բժիշկը հրամայել է տիկնոջը տեղափոխել նավ։ Մենք նորից կգանք։ Մինչ այդ տիկինը կբարեհաճի պատրաստ լինել։

Երիտասարդը ձգվեց, ձեռքը տարավ դեպի ծովային գլխարկը, իսկ մյուսը ծանրաքայլ ու շփոթված մոտեցավ սեղանին, այնտեղ դրեց մի թերմոս, կարագով լի մի աման, երկու հատ սպիտակ, փափուկ հաց։

— Պարոն գլխավոր բժշկի հրամանով՝ թեյ, հաց և կարագ տիկնոջ համար... առայժմ...

Երիտասարդն այս բառերն արտասանեց զինվորական զեկույցի եղանակով, իր կճատ քիթն ու մանկական դեմքը կիսով չափ դարձրեց կնոջ կողմը, առանց նրան նայելու։ Վարանմունքի ու շփոթության սրտաշարժ կեցվածք։

Լսվեց Ժուլիեթի լացակումած հառաչանքը։ Սանիտարները, չուզենալով հիվանդին նեղություն պատճառել, ոտքերի ծայրերին բարձրանալով, դուրս գնացին։ Մայրիկ Անթառամի ուղեկցությամբ գնացին հրդեհից փրկված հիվանդանոցը։ Այստեղ արդեն հավաքվել էր զրահապատ հածանավի սանիտարական ամբողջ անձնակազմը, պատրաստվում էր ծովափ իջեցնել վիրավորներին և հիվանդներին։

Ֆրանսուհին թևերը կարոտով պարզեց դեպի հայրենակիցները, վերմակը մի կողմ նետեց, նստեց մահճակալի եզրին։ Նա իր պատյանից վերջնականորեն դուրս եկավ։ Երկու ձեռքով դեմքը ծածկեց և հանկարծ հիշեց, թե ի՞նչ օրն են ընկել մազերը։ Սարսափահար ճչաց.

— Ֆրանսիացինե՛ր են եկել, ֆրանսիացինե՛ր։ Ինչպե՞ս երևամ աչքներին... Ֆրանսիացինե՛ր են։

Բայց հանկարծ հիվանդի ցամաքած մարմնի ներսում բռնկվեց, դեպի վեր նետվեց նախկին ավյունի հրեղեն սյունը։ Նա նստեց հայելավոր փոքրիկ սեղանի առաջ։ Կոշտացած, գժվարաշարժ մատներով դուրս թափեց գեղեցկության բոլոր օժանդակ միջոցները, որ դեռևս մնացել էին։ Այտերին կարմիր ներկ քսեց, առանց նախկինը մաքրելու։ Դեմքն ավելի հիվանդոտ, ավելի թոշնած արտահայտություն ստացավ։ Սկսեց կարգի բերել գլուխը՝ սանրով ու խոզանակով։ Շարունակ կրկնում էր. «Ինչպե՞ս

երևամ աչքներին»։ Ուժասպառ ձեռքերով նրան ոչ մի կերպ չհաջողվեց ժապավենով կապել կամակոր մազերը։ Գլուխը դրեց թևին, հուսահատությունից հեծկլտաց։ Ինչպես միշտ, ինքնակարեկցանքից նա այնպես սփոփվեց, որ մազերի գոյությունն առհասարակ մոռացավ, դրանք թողնելով ցանուցիր վիճակում։ Նորից սարսռաց. «Ֆրանսիացինե՞ր են եկել, ֆրանսիացինե՞ր։ Ի՞նչ հագնեմ»։ Որոնեց իրերը, մեծ ճամպրուկն ու մյուս կապոցները։ Ոչինչ չգտավ։ Վրանը դատարկ էր։ Անհանգստացած սկսեց չափչփել իր քառանկյուն նեղլիկ օթևանը։ Նրան դարձյալ տիրեց այն սարսափը, որ հաճախ էր զգացել երազում, երբ գիշերանոցով ու ոտաբոբիկ ստիպված էր լինում ներկայանալ ընտիր հասարակությանը։ Երկար ու ապարդյուն որոնումներից հետո Ժուլիեթը դիմեց համարձակ քայլի. վրանից դուրս եկավ։ Սեպտեմբերյան վճիտ ու ոսկեզօծ օրը նրան գրեթե ետ մղեց, բայց հետևյալ վայրկյանին նա ծունկի եկավ ճամպրուկի առաջ։ Ո՞վ էր այդ ստորությունն արել։ Իսկուհի՞ն։ Ամեն ինչ իրար էր խառնված, տրորված, պատառոտված։ Անցյալ տարվա, առանց այդ էլ մոդայից ետ ընկած մի զգեստն օրինավոր վիճակում չէր։ Խեղճ կինը ոչինչ չուներ հագնելու, մինչդեռ նա պետք է գեղեցիկ երևվար, քանի որ ֆրանսիացիներ էին եկել։

Մայրիկ Անթառամը Ժուլիեթին գտավ գետնին նստած։ Կուչ էր եկել ավազակների խնայած շապիկների, գուլպաների, զգեստների ու կոշիկների շեղջի առաջ։ Ուժասպառությունից շարժվել չէր կարողանում, բայց լացակումած գանգատվում էր.

— Ֆրանսիացինե՞ր են եկել, ֆրանսիացինե՞ր են եկել... Ի՞նչ հագնեմ...

Մայրիկ Անթառամն ապշած նայեց հիվանդին։ Ականջներին չէր հավատում։ Հնարավո՞ր բան էր։ Այդ կինը, որը վերակենդանանալուց հետո ոչ մի բառ չէր արտասանել, սոսկում էր որևէ բան իմանալուց և չիմանալու համար գործադրում էր իր բոլոր ուժերը, հիմա կարո՞ղ էր մտածել հագուստի մասին։ Սակայն Մայրիկ Անթառամը հետզհետե հասկացավ, թե ինչ է կատարվում Ժուլիեթի հետ։ Ֆրանսուհու վարմունքը թեթևամտություն չէր. եղբայրնե՞րն էին եկել։ Խեղճ կինն ամաչում էր, ուզում էր արժանի լինել իր եղբայրներին։ Տիկին Ալթունին նույնպես ծունկի եկավ, ինքն էլ սկսեց պրպտումներ կատարել գունագեղ շեղջի մեջ։ Բայց ինչ էլ գտնում հանում էր, Ժուլիեթը զայրանում էր։ Երկար ժամանակ ֆրանսուհին տարօրինակ ձևով ընդվզեց սեփական ճակատագրի դեմ, Մայրիկ Անթառամն էլ գերմարդկային համբերությամբ զինված՝ երկար պեղումներ կատարեց, մինչև, վերջապես, հայտնաբերեց

մի զգեստ, որն արժանացավ տիրուհու հավանությանը։ Դա, հիրավի, տոնական նուրբ շրջազգեստ էր՝ ժանեկազարդ օձիքով։ Երբ այս արվեստից շատ քիչ հասկացող պառավը մեծագույն դժվարությամբ շորը հագցրեց գրեթե անշարժ կանգնած Ժուլիեթին, սա հեծկլտաց.

— Հարմար չէ...

Արդյոք ի՞նչ զգեստով դիմավորեր ազատարար եղբայրներին, որոնք, իհարկե, անկարող էին փրկել մարդկային խորտակված մի կյանք...

Գաբրիելը փոխծովակալից առաջ շտապեց կնոջ մոտ, նախազգուշացրեց այցելության մասին։ Երբ ներս մտավ, Ժուլիեթը նստած էր մահճակալի եզրին։ Մայրիկ Անթառամը, գավաթը ձեռքին, կամակոր հիվանդին ստիպում էր թեյ խմել։ Այնպես էր համոզում, կարծես դիմացինը երես առած երեխա լիներ.

— Ախր, հոգո՛ւդ մատաղ, եթե ուզում ես ֆրանսիացիների աչքին սիրուն երևալ, պետք է մի քիչ ուժ հավաքես։ Թե չէ ոչ մի շոր արժեք չունի...

Ժուլիեթը պաշտպանական ձևականությամբ տեղից վեր կացավ։ Կարծես ներս մտնողն անծանոթ մարդ էր, որի կամքին ինքը պետք է հնազանդվեր։

Երկուսի կողմը մի հայացք նետելով՝ Մայրիկ Անթառամը վրանից դուրս եկավ։ Հացերից մեկը տարավ, քանի որ ինքն էլ սովամահ լինելու վրա էր։

Գաբրիելը սիրտ ճմլող ցավով գիտակցեց, որ այլևս ոչ մի կամուրջ չկա իր նախկին կյանքի և իր միջև։ Այդ նախկին կյանքը՝ Ժուլիեթը, դիպակե ծանր շրջազգեստ էր հագել, որից անցյալի շրշյունն էր հառնում։ Բայց կնոջ այտերն ու մարմինը կորցրել էին իրենց երբեմնի թարմությունն ու հյութեղությունը։ Նա հազիվ էր ոտքի վրա կանգնում և կարեկցանք էր շարժում։ Գաբրիելի կոկորդը սեղմվեց։ Որքա՜ն ավելի մոտ էր թվում Ժուլիեթը իր հիվանդության օրերին։ Միայն այժմ, երբ կնոջը տեսնում էր մետաքսե տոնական շրջազգեստով, լիովին չափեց քառասուն օրվա անդունդը։ Իր վրա մեծ ջանք գործադրելով՝ հազիվ կարողացավ ասել.

— Հիմա նորից առաջվանն ես, շե՞ր, փա՜ռք աստծո...

Հարցրեց, թե Ժուլիեթն արդյոք կարո՞ղ է մի քանի քայլ ընդառաջ գնալ ֆրանսիացի փոխծովակալին։ Չէ՞ որ ինքն էլ չի ցանկանա հյուրին ընդունել խավար վրանում։

Ժուլիեթը մի հայացք նետեց իր պատյան-օթևանին, որը դեռևս մի

քանի ժամ առաջ համարում էր դամբարան։ Կարոտով, դանդաղ մոտեցավ իր փոքրիկ բարձին։ Գաբրիելը բռնեց նրա ձեռքից.

— Երեկոյան բոլոր իրերդ քեզ մոտ կլինեն, Ժուլիեթ։ Ոչինչ չի մոռացվի...

Չնայած հանգստացուցիչ խոստումին, վրանի մուտքի մոտ Ժուլիեթը մի անգամ էլ շրջվեց, նայեց իր խավար օթևանին, ինչպես Էվրիդիկեն՝ Հադեսին*։

Փոխծովակալը եկավ միայն իր համհարզի և մի երիտասարդ սպայի ուղեկցությամբ։ Նախազգուշացրել էին, որ ապաքինվողին առանձնապես շատ չմոտենա։ Մուսա լեռան վրա տարածված հիվանդությունը, ըստ երևույթին, տենդի ամենավտանգավոր տեսակներից էր։ Բայց նավատորմի հրամանատարը խիզախ մարդ էր և նախազգուշացումները նրա վրա մեծ մասամբ հակառակ ազդեցություն էին գործում։ Առույգ քայլվածքով, ավելի երիտասարդ երևալու շարժուձևով մոտեցավ Ժուլիեթին, համբուրեց ձեռքը.

— Տիկի՜ն, Դուք ևս, իբրև ֆրանսուհի, իբրև օտարական, այս լեռան բարձունքներում լիովին հաղորդակից եք եղել մարդկանց տառապանքներին և սխրագործություններին։ Թույլ տվեք Ձեզ շնորհավորել բարեհաջող ելքի առթիվ...

Ժուլիեթի մաշված դեմքին կարոտի ստվեր հայտնվեց.

— Իսկ Ֆրանսիա՞ն, պարոն...

— Ֆրանսիան ահավոր օրեր է ապրում և պետք է ապավինի աստծո ողորմածությանը...

Ժուլիեթի վիճակը, երևի, սաստիկ հուզեց ծեր պարոնին։ Նա բռնեց կնոջ հյուծված ձեռքը.

— Աղջի՜կս, գիտե՞ք, որ ես իմ կյանքում Ձեզ առաջին անգամ չեմ տեսնում... Այն ժամանակ Դուք, իհարկե, շատ փոքրիկ էիք, երբ ես մի ամբողջ օր անցկացրի Ձեր երիտասարդ ծնողների հետ... Թեև Ձեր հոր և իմ միջև սերտ բարեկամություն չկար, մենք մեր երիտասարդական տարիներին գրեթե նույն ոլորտին էինք պատկանում...

Ժուլիեթը թեթևակի հեծկլտաց, բայց դա լացի չփոխվեց, այլ վերածվեց տարօրինակ, կցկտուր շաղակրատության.

— ...Իհարկե... Հայրիկի մահից հետո տունը վաճառվեց... Մայրս հիմա բնակվում է... Ա՜խ, փողոցի անունը մոռացել եմ... Դուք նրա մասին ոչինչ չգիտեք, պարոն... Բայց քրոջս ամուսնուն, հավանաբար, կճանաչեք... Խոսքս ծովային մինիստրությունում ծառայողի մասին է... Բարձրաստիճան պաշտոնյա է... Ի՞նչ է անունը... Վա՜յ գլխիս... Կուլոմ,

իհարկե, Ժակ Կուլոմ... Դուք նրան կճանաչեք... Քույրերիս հազվադեպ եմ տեսնում... Բայց երբ նորից Փարիզում լինեմ, իմ բոլոր բարեկամներին ու բարեկամուհիներին կտեսնեմ... Այնպես չէ՞... Ինձ Փարիզ կտանեք, այո՞...

Ժուլիեթն օրորվեց։ Ծովակալն ամուր բռնեց նրան։ Գաբրիելը վազեց դեպի վրան և աթոռ բերեց։ Հիվանդը նստեց։ Սա, չնայած իր թուլությանը, չհրաժարվեց շաղակրատելուց։ Հավանաբար իրեն պարտավորված էր զգում զրույցը շարունակելու առիթ ստեղծել։ Սակայն նրա շատախոսությունը հետզհետե ավելի չոր ու ցամաք, ավելի թութակային էր դառնում։ Անվերջ նոր անուններ էր թվարկում, հիշատակում ընդհանուր ծանոթներին, որոնց մտաբերում էր։ Խոսքերը հնչում էին անկապ, մի նյութից հանկարծ անցնում էր մյուսին։ Փոխծովակալն ակընհայտ կերպով նեղվում էր։ Վերջապես ձայն տվեց երիտասարդ սպային.

— Բարեկա՜մս, ամեն ինչ կանեք և տիկնոջը կուղեկցեք... «Ժաննա դ'Արկը» ռազմանավ է, իսկ ռազմանավերն առանձնապես հարմարավետ չեն։ Բայց մենք կփորձենք ամեն ինչ անել, որպեսզի ուղևորությունը Ձեզ համար հաճելի լինի, սիրելի՜ զավակս...

Նույնիսկ այն ժամանակ, երբ փոխծովակալը Գաբրիելի ուղեկցությամբ հեռացավ, Ժուլիեթի թութակային շաղակրատության թափը չնվազեց։ Երիտասարդ սպան, որին պետը նրա մոտ թողեց իբրև պահապան և պատվո ասպետ, շփոթված նայում էր խեղճ կնոջ գունաթափ շուրթերին։ Ժուլիեթն առանց դադար առնելու հարցերի տարափ էր տեղում, և սպան անկարող էր դրանց պատասխանել։ Հիվանդի ներսում, հավանաբար, ինչ-որ սարսափելի բան էր կատարվում։ Շնչառությունն արագացավ, պարանոցի զարկերակի թրթռոցը դարձավ նկատելի։ Աչքերի տակ գոյացած ստվերները հետզհետե թանձրանում էին։

Սպան ուրախացավ, երբ Գաբրիելը վերադարձավ, իսկ քիչ հետո պատգարակով հայտնվեցին սանիտարները։

Ժուլիեթն սկզբում առարկեց.

— Չեմ պառկի... Դա ուղղակի խայտառակություն է... Ավելի լավ է՝ ոտքով գնամ...

Գաբրիելը շոյեց նրա ձեռքը.

— Ժուլիեթ, ոտքով գնալ չես կարող։ Խոհեմ եղիր և պառկիր։ Հավատա ինձ. ես էլ սիրով կուզենայի, որ ինձ այդպես տանեն։

Կաթնագույն դեմքերով սանիտարներն ուրախ ծիծաղեցին, հիվանդին քաջալերելու համար ասացին.

— Տիկին, անհոգ եղեք։ Մենք Ձեզ զգուշորեն կտանենք, ինչպես ապակի։ Ոչինչ չեք իմանա։

Ժուլիեթը հնազանդվեց, անխոս պառկեց պատգարակին։ Գաբրիելը վրան ծածկոց գցեց, սիրած բարձը դրեց գլխի տակ, իսկ ձեռքի պայուսակը հանձնեց սպային։ Ձեռքով մի անգամ էլ շոյեց կնոջ մազերը.

— Հանգիստ եղիր... Ոչ մի կարևոր բան չի մոռացվի...

Հանկարծ խոսքն ընդհատեց։ Սպան հարցական հայացքով նայեց նրան։ Գաբրիելը գլխով արեց։ Սանիտարները պատգարակը վերցրին, շարժվեցին առաջ։

Սաթոն մի կողմ կանգնած՝ հուզմունքով սպասում էր, որ դառնա այդ քարավանի ուղեցույցը։

— Ես շուտով կգամ կհասնեմ ձեզ,— կնոջ ետևից ձայն տվեց Բագրատյանը։

Ժուլիեթն այնպես անհանգիստ շարժվեց, որ սանիտարները կանգ առան, պատգարակը ցած դրին։ Ֆրանսուհին Գաբրիելի կողմը դարձրեց իր այլայլված դեմքը, որով այդ պահին նա նման էր խելագարի։ Նա ամուսնուն դիմեց մինչև այդ լսված սուր ձայնով.

— Լսո՞ւմ ես... Ստեփանը... Ստեփանի մասին հոգ տար...

Նույնիսկ փրկության ժամին դեռևս չէին սպառվել տառապանքները։ Թովմասյանների վրանից աղաղակ լսվեց.

— Բագրատյա՜ն, նե՜րս եկեք։

Գաբրիելը կարծեց, թե Իսկուհին վիրավոր եղբոր մոտ է։ Բայց աղջիկն այնտեղ չէր։ Ներս մտավ։ Կամակոր անտարբերությամբ լցվեց այն ամենի հանդեպ, ինչ տեղի էր ունեցել։ Պատվելուն գտավ տենդային նոպայի մեջ։

— Որտե՞ղ է Իսկուհին, Բագրատյան։ Ի սե՜ր Հիսուսի, որտե՞ղ եք թողել քրոջս։

— Իսկուհի՞ն։ Կեսգիշերից անց, որոշ ժամանակ ինձ մոտ էր, հրանոթների բարձունքի վրա։ Հետո ես նրան խնդրեցի, որ գնա կնոջս մոտ...

— Այդ է, որ կա,— գոռաց պատվելին։— Դեռևս առավոտյան հաստատ համոզված էի, թե Ձեզ մոտ է, կրակային գծում... Ետ չի եկել, անհայտացել է... Մարդիկ ուղարկեցի... Արդեն քանի՜ ժամ է փնտրում են... Ֆրանսիացի սանիտար նավաստիներն ինձ վաղուց էին ուզում ցած տանել... Բայց ես առանց Իսկուհու այստեղից չեմ հեռանա... Եթե մի բան է պատահել... Ես այստեղից չե՜մ հեռանա...

Պատվելին ամուր կառչեց Բագրատյանի թևից և ուշադրություն չդարձնելով վերքին, փորձեց տեղից բարձրանալ.

— Մեղավորը ե՜ս եմ, Բագրատյան... Այդ բանը հիմա կարող եմ Ձեզ բացատրել... Բայց ե՜ս եմ մեղավորը... Եթե աստված երեխայիս և քրոջս միջոցով ինձ պատժում է այն ժամանակ, երբ բոլորին փրկություն է առաքում, ուրեմն՝ դա արդար դատավճիռ է... Կինս նույնպես փորձության գործիք դարձավ...

— Իսկ որտե՞ղ է Ձեր կինը,— անվրդով հարցրեց Գաբրիելը։

— Ծովափ վազեց։ Երեխային էլ տարավ։ Ասացին, թե ներքևում կաթ կա։ Այլևս չհամբերեց...

Վիրավորը սաստիկ հուզված էր։ Փորձեց վեր կենալ, բայց նորից վայր ընկավ.

— Նզո՜վք. ոչինչ անել չե՜մ կարողանում, շարժվելու ուժ անգամ չունե՜մ... Բագրատյան, մի բա՜ն արեք... Իսկուհու հարցում դո՜ւք էլ մեղք ունեք... Դո՜ւք էլ...

— Սպասեցե՜ք, պատվելի... Գնում եմ...

Գաբրիելն այս խոսքն ասաց վարանելով, դուրս եկավ, անցավ Երեք վրանի հրապարակը, փոքր-ինչ հեռացավ։ Այլևս չշարունակեց ճանապարհը, այլ նստեց, անթարթ հայացքը հառեց կապույտ երկնակամարին։ Նրա հոգնած ուղեղում նույն միտքն էր պտտվում։ Ահա և փրկությունը։ Փորձեց հիշողության մեջ վերականգնել իր ու Իսկուհու գիշերային խոսակցությունը։ Բայց նրա էության միջից ջնջվել էին առանձին մանրամասնությունները, և մնացել էր միայն համակերպության ուրվականային շունչը։ Իսկուհին եկավ, որ հիշեցնի տված խոստումը. իրար հետ պետք է լինեին ճակատագրական պահին։ Բայց Գաբրիելը նրան իր մոտից ետ դարձրեց, հեռացրեց, ուղարկեց Ժուլիեթի մոտ։ Բայց դա այդպես էլ պետք է լիներ։ Այժմ, երբ գլխավոր հրամանատարն ինքն իրեն ստուգում էր, զգում էր, որ ինքը երեկվա աղետից հետո դեռևս չէր կորցրել փրկության հավատը։ Իսկուհին պետք է ապահով տեղում լիներ։ Չէ՞ որ ինքն էր այդպես ցանկանում։ Սակայն Իսկուհուն նա չէր կարող տալ աղջկա ուզածը՝ կործանման վճռական, երանավետ հավատը։ Գաբրիելը հուսախաբ արեց աղջկան, ի դերև հանեց այդ հավատը։ Որտե՞ղ էր այժմ Իսկուհին։ Չգիտես ինչու, Գաբրիելն իր հոգում հաստատ համոզված էր, որ նա այլևս կենդանի չէ. գիշերն իր գլխին փորձանք է բերել, Դամլաջրքից անհետացել։ Այնպես որ բոլոր որոնումներն ապարդյուն էին անցնելու։ Համենայն դեպս մի կողմ թողեց իր քարա-

ցած հուսալքությունը, տեղից վեր կացավ, որ ձեռք առնի անհրաժեշտ միջոցները։

Գաբրիելը սխալվեց։ Իսկուհին ողջ էր։ Այն պահին, երբ գլխավոր հրամանատարը սուլիչը մոտեցրեց բերանին՝ մեկնումեկին օգնության կանչելու, Գևորգը՝ պարողը, աղջկան արդեն գտել էր, թեև բավական ուշացումով։ Իսկուհին գիշերը կորցրել էր բանուկ արահետը, ընկել մի փոքրիկ ձորակ, ավելի ճիշտ՝ վայրի խոտերով ծածկված մի փոս։ Դա, անշուշտ, սովորական ճանապարհից հեռու էր, սկուտեղաձև դարավանդի ճեղքաշատ հեղեղատներից մեկի մոտ։ Թե աղջիկը արշալույսից առաջ ի՞նչ էր որոնում այդ չարաբաստիկ վայրում, ոչ ոք պատասխան ստանալ չկարողացավ։ Նրան ոչինչ չէր պատահել։ Միայն թևերն ու ոտքերն էին քերծվել։ Ո՛չ վերք, ո՛չ ջարդվածք, ո՛չ ցնցում, ո՛չ էլ մկանային որևէ խախտում։ Բայց և այնպես խավար փոսն ընկնելուց հետո իսկույն վրա էր հասել այն մահացու հոգնածությունը, որի դեմ աղջիկն օրեր շարունակ մաքառում էր, թեև ինքն էր ձգտում հալչել, սպառվել։ Երբ Գևորգը միանգամայն այլ բեռների ընտելացած իր թևերով Իսկուհուն բերեց, սրա գիտակցությունը լիովին տեղն էր։ Լայն բացված աչքերը գրեթե առույգ արտահայտություն ունեին։ Միայն թե խոսել չէր կարողանում։ Բարեբախտաբար սանիտարների հետ, որոնք վերջին հիվանդներին դեռևս չէին տեղափոխել, եկել էր «Գիշենի» երիտասարդ բուժակներից մեկը։ Նա Իսկուհուն սիրտը կազդուրող ուժեղ դեղ տվեց, բայց պնդեց, որ ուժասպառ աղջկան հնարավորության չափ շուտ հասցնեն նավ, քանի դեռ վատ բան չի պատահել։ Անհապաղ, առանց ավելորդ խոսքերի, պատվելի Արամին ու Իսկուհուն պառկեցրին պատգարակների վրա։ Գաբրիելը հազիվ ժամանակ գտավ Քրիստափորին պատվիրելու, որ իրերը դուրս բերելուց հետո երեք վրանն էլ այրի։

Գաբրիելը քայլում էր Իսկուհու կողքից, երբ դա հնարավոր էր լինում։ Վայրէջքի նեղ արահետով հազիվ մի մարդ անցներ, իսկ այնտեղ, ուր աջ կողմից, լերկ ժայռապարիսպն էր ձգվում, սանիտարները մեծ դժվարությամբ էին կարողանում անվթար տանել իրենց բեռը։ Առջևում օրորվում էր վիրավոր պատվելու պատգարակը։ Երկրորդ պատգարակի վրա պառկած էր Իսկուհին, որին ուղեկցում էր նավի բուժակը։ Թափորն այսքանով չէր ավարտվում։ Ետևից բերում էին օգոստոսի 23-ի ճակատամարտում ոտքերից վերք ստացած երեք զինվորի և մի ծննդկան կնոջ։ Սրանցից բացի, ծովափ էին իջնում ետ մնացածների մի ամբողջ բազմություն և տասնյակների այն ռազմիկները, որոնք իրենց ընտանիքներին պատկանող հրդեհված խրճիթների ավերակներում կրակից

փրկված իրեր էին որոնում։ Լեռնային սանդուղքի առավել լայն տեղերում սանիտարները երեք-չորս անգամ վայր դրին պատգարակները՝ հանգստանալու։ Նման պահերին Գաբրիելը մոտենում էր Իսկուհուն, բայց ինքն էլ չէր կարողանում խոսել, քանի որ երկու քայլ առաջ պառկած էր Արամը։ Բուժակը ևս ամեն վայրկյան մոտենում էր, աղջկան մի կում կաթ խմեցնում, ստուգում զարկերակը։

Գաբրիելը խոսեց ցածրաձայն, կցկտուր.

— Ո՞ւր կուզենայիր, Իսկուհի՛... Ի՞նչ ես մտադիր անել... այնտեղ...

Աղջկա աչքերը կարծես պատասխանեցին.

— Ինչո՞ւ ես հարցնում չիմացածս... Եղածը երազ էր... Արդեն շատ ավելի քիչ ժամանակ ունենք, քան գիշերը...

Գաբրիելը ծունկի եկավ, ձեռքը դրեց Իսկուհու գլխի տակ։ Կարծես ուզում էր օգնել, որ աղջկա համար խոսելն ավելի դյուրին լինի։ Հազիվ լսելի ձայնով հարցրեց.

— Ո՞րտեղդ է ցավում։

Աղջկա աչքերն իսկույն հասկացան և լուռ ասացին.

— Ո՛չ մի։ Մարմնիս գոյությունը բոլորովին չեմ զգում։ Բայց շա՜տ եմ ցավում, որ բանն այսպես վերջացավ։ Մի՞թե ավելի լավ չէր լինի, եթե այս նավերը չգային։ Ամեն ինչ բարեհաջող ավարտվեց, միայն ո՛չ մեզ համար, Գաբրիել...

Գաբրիելի աչքերն Իսկուհու աչքերի պես ո՛չ լավ խոսել կարող էին, ո՛չ կարդալ չասածը։ Ինչո՞ւ նույնիսկ կեղծեց.

— Իսկուհի,— թեթև նվաղում է... Քաղցի հետևանք...

Եվ բուժակի կողմը դառնալով, խոսակցությունը շարունակեց ֆրանսերեն.

— Բժիշկը նույնպես այդ կարծիքին է։ Երեք օր հետո, երբ հասնենք Պորտ Սաիդ նավահանգիստը, դու լրիվ կազդուրված կլինես... Չէ՞ որ դեռևս այնքա՜ն երիտասարդ ես, այնքա՜ն երիտասարդ, Իսկուհի՜...

Աղջկա աչքերը մթնեցին, խստորեն պատասխանեցին.

— Գաբրիե՛լ, այս րոպեին դու իրավունք չունես նման հասարակ խոսքեր ասելու։ Ինձ համար միևնույն է՝ կապրե՞մ, թե՞ կմեռնեմ։ Սխալվում ես, եթե կարծում ես, թե ես մահ եմ փափագում։ Հավանաբար, ապաքինվեմ։ Բայց դու չգիտես, որ ամեն ինչ կփոխվի, երբ մեզ նավ բարձրացնեն։ Կփոխվենք նաև ես ու դու։ Քանի դեռ մեր ոտքերի տակ Մուսա լեռան հողն է, մենք իրար ենք պատկանում, դու ինձ՝ իբրև իմ սերը, ես քեզ՝ իբրև քո քույրը։

Ոչ ամեն ինչ, բայց որոշ բան Գաբրիելը կարծես հասկացավ։ Նրա պատասխանը կարծես Իսկուհու հայացք-խոսքերի արտացոլումն էր.

— Այո՛, որտե՞ղ կլինենք... ես ու դու... քույրիկս։

Աղջկա շուրթերն առաջին անգամ բացվեցին, թոթվեցին երկու հուզումնալից վանկ, որոնք հակասում էին այն ամենին, ինչ նա մինչ այդ ասել էր աչքերով.

— Քեզ մոտ...

Պատգարակները բարձրացրին, շարունակեցին ճանապարհի մնացորդը, որն արդեն դժվարանց չէր։ Լսվեց ծովափի ժխորը։ Ներքևում, ժայռերեն նեղ տափարակների վրա ահագին բազմություն էր խռնվել։ Այստեղ կային նաև նավաստիներ, որոնք զանազան պատրվակներով թույլտվություն էին խնդրել ցամաք դուրս գալու։

Մուսալեռցիներին արդեն նավ էին բարձրացնում։ Հարյուրավոր մարդիկ գլուխները կորցրած՝ իրար ձայն էին տալիս, ստեղծում իսկական քաոս։

Չորս կողմից գրոհում էին Բագրատյանի վրա, հայտնում իրենց խնդրանքը, ցանկությունները, հարցեր տալիս, պահանջներ ներկայացնում։ Հայրենակիցները փրկության հրաշքը առանց որևէ հիմնավոր պատճառի վերագրում էին գլխավոր հրամանատարին, խորհրդավոր կապ տեսնում նրա և տեղի ունեցածի միջև։ Հզոր Ֆրանսիայի ազգականն այն աստվածառաք մարդն էր, որն իր մուսալեռցի եղբայրներին ու քույրերին պետք է օգներ նաև օտարության մեջ, աքսորավայրում։ Այժմ Գաբրիելին շողոքորթում, անզուսպ հաճոյանում էին մուխթարները, որոնք ավագների խորհրդի նիստերում միշտ էլ հանդես էին գալիս նրա դեմ։ Կեղծավորության մեջ, իհարկե, ոչ ոք չէր հասնի Թովմաս Քեբուջյանին ու մկան շարժուն աչքերով նրա կնոջը։ Հեղեղի պես հորձանք էին տալիս Բագրատյանի հովանավորությունն աղերսող ձայները։ Մարդը շփոթվեց։ Երբ հասավ նավամատույց, Արամին և Իսկուհուն տանող նավակը շարժվեց։ Հերթապահ սպան հրամայեց առաջին հերթին տեղավորել հիվանդներին։ Ժուլիեթին փոխծովակալի մոտորանավակով վաղուց արդեն տարել էին, բարձրացրել «Ժաննա դ'Արկ»։

Արևն անտանելի պայծառ բեկորների և խեցիների փոխված՝ սփռվել էր ծովի վրա։ Նավակների մի մասը շարժվում էր դեպի ռազմանավերը, մյուս մասն շտապում էր դեպի ցամաք։ Իսկուհին չէր երևում։ Գաբրիելը տեսավ միայն Օվսաննային, որը տեղում քարացած՝ գրկել էր Մուսա լեռան առաջնեկի խղճուկ խանձարուրը։

Նավ բարձրանալու գործը դանդաղ էր առաջ գնում։ Բազմաթիվ

դժվարություններ կային հաղթահարելու։ Գյուղական համայնքների մեծագույն մասը կարող էր տեղավորվել փոխադրանավում, բայց հարցի այս ամենադյուրին լուծման դեմ առարկեցին բժիշկները։ Դա մեծ վտանգ էր ստեղծում։ Հազարավոր առողջ մարդիկ կարող էին հիվանդներից վարակվել։ Հարկավոր էր հիվանդներին, ուժասպառ եղածներին, կասկածելիներին պատսպարել մի տեղ, առանձնացնել անձնակազմից և առողջներից։ Այսպիսով, խեղճ փոխադրանավը, ի տարբերություն հածանավերի ու հզոր «Ժաննա դ'Արկի», դարձավ թշվառության, անկման ու աղտեղության հանգրվան։ Սպաներից ու բժիշկներից կազմված հանձնաժողովն ստուգում էր յուրաքանչյուր հայի առողջությունն ու մաքրությունը, նոր միայն արտոնություն տալիս նավ բարձրանալու։ Ստուգումը կատարվում էր ամենայն խստությամբ։ Ով նվազագույն չափով կասկածելի էր թվում, անմիջապես աքսորում էին փոխադրանավ։ Մուսա լեռան ավագներից հանձնաժողովի աշխատանքին մասնակցում էր միայն Տեր-Հայկազունը։ Բժիշկ Ալթունու վիճակը ժամ առ ժամ վատթարանում էր։ Նավերի գլխավոր բժիշկը նրան վաղուց էր ուղարկել «Գիշեն»։ Հաբեթ Շատախյանը նույնպես այս հածանավի տախտակամածի վրա էր։ Շարունակ պտտվում էր նավի վրա, ըմբոշխնում եվրոպական քաղաքակրթության շնորհած անսովոր բերկրանքը։ Մուխթարներն իրենց գյուղապետական լիազորությունները համարում էին ավարտված և իրենց զգում էին միայն իբրև ընտանիքի հայրեր։ Նույն վիճակում էին նաև ամուսնացյալ քահանաներն ու մնացած ուսուցիչները։ Համենայն դեպս, արդեն ոչ մի հոգս չունեին։ Ժողովրդի շահերի միակ պաշտպանն այժմ Տեր-Հայկազունն էր։ Պետք է հետևեր, որ սպաներն ու բժիշկներն առանց հիմնավոր պատճառի ընտանիքները բաժան-բաժան չանեին, փոխադրանավ ուղարկեին որոշակի մարդկանց։

Գաբրիելը մոտեցավ ստուգող հանձնաժողովին, որը գործի էր անցել նավամատույցի մոտ։ Զույգ ձեռքը դրեց Տեր-Հայկազունի ուսերին։ Վարդապետը նրա կողմը դարձրեց իր մոմագույն, սովորականի պես անվրդով դեմքը։ Միայն խանձված մորուքն ու այտի այրուցքն էին հիշեցնում Դամլաջրքի վերջին իրադարձությունը։ Նա իր հեզ, բայց և հաստատակամ հայացքը սևեռեց Գաբրիելի դեմքին, մի բան, որ վերջին շրջանում հազվադեպ էր լինում։

— Լավ է, որ Քեզ տեսնում եմ, Բագրատյան... Մի հարց եմ ուզում տալ...

Տեր-Հայկազունը ցածրաձայն էր խոսում, թեև ֆրանսիացիները երբեք չէին հասկանա հայերեն բառերը.

— Իմ կարծիքով, այն երկու վատաբարո սրիկաները՝ Ոսկանյանն ու Կիլիկյանը, ինչպես նաև ուրիշ մի քանիսը, չքացել են...

— Կիլիկյանը մեռած է,— ասաց Գաբրիելը, առանց մազաչափ անգամ զգացվելու։

Տեր-Հայկազունի աչքերում վայրկենական սարսուռ ցոլաց։ Կարծես հասկացավ։ Այնուհետև մատնացույց արեց այն ժայռեղեն տափարակներից մեկը, որտեղ մի խումբ հայեր էին կանգնած.

— Ահավասիկ իմ հարցը... Սրիկաներն իրավունք ունե՞ն փրկվելու։ Չպե՞տք է նրանց վոնդել...

Գաբրիելն առանց երկար-բարակ մտածելու ասաց.

— Մի՞թե մենք իրավունք ունենք փրկվելու... Եվ մի՞թե մենք ենք փրկողները... Բոլոր դեպքերում, իբրև փրկվածներ, ինքներս իրավունք չունենք որևէ մեկին զրկելու փրկության հնարավորությունից։

Տեր-Հայկազունը թեթևակի ժպտաց.

— Լա՜վ... Ես միայն ուզում էի խիղճս հանգստացնել...

Վարդապետի տեսքն արդեն այնքան ողորմելի չէր, ինչպես առավոտյան։ Նավի հոգևորականներից մեկը նրան բաճկոն էր նվիրել։ Ձեռքերը պարեգոտի թևքերի մեջ թաքցնելու պահանջ զգալիս այժմ, անսովոր շարժումներ կատարելով, դրանք տանում էր դեպի բաճկոնի գրպանները։

— Բագրատյան, ուրախ եմ, որ այս անգամ էլ մեր տեսակետները նույնն են, ինչպես միշտ...

Եվ առաջին անգամ նրա ժպիտի մեջ մուտք գործեց մի արտահայտություն, որը նման էր ամոթխած քնքշանքի։

Գաբրիելը երկար ժամանակ դիտում էր, թե ինչպես են մարդկանց ստուգում։ Բայց քանի որ միտքը բոլորովին այլ բանով էր զբաղված, մեքենաբար էր նայում անցուդարձին։ Շուտով Տեր-Հայկազունը զարմացած դիմեց նրան.

— Բագրատյա՛ն, Դուք, դեռևս այստե՞ղ եք։ «Ժաննա դ'Արկի» մոտորանավակը ահա ետ է գալիս... Իմացած եղեք, որ Ձեր օգնության կարիքը չկա... Ձեր պարտքը կատարված է և օրհնված։ Իմը դեռ չի ավարտված։ Տերն ընդ Ձեզ։ Գնացեք և հանգստացեք։ Ես «Գիշենի» վրա կլինեմ...

Ինչ-որ ներքին ընդդիմություն թույլ չտվեց վերջնական հրաժեշտի խոսք ասելու։

— Տեր-Հայկազուն, Ձեզանից հետո ես, երևի, մի անգամ էլ այս կողմերում պտտվեմ...

Սպասողների բազմության միջով ետ դարձավ, մի քանի քայլ անսպատակ բարձրացավ լեռնային արահետն ի վեր։ Ավագյանն ընդառաջ եկավ։ Նրան հետևում էին Քրիստափորը, Միսակն ու Գևորգը։ Բերում էին Բագրատյանի տան իրերը։ Ընտանիքի հավատարիմ բարեկամը փրկել էր այն ամենը, ինչ հնարավոր էր ծովափ իջեցնել գահավեժ արահետով։ Մահվան էին դատապարտվել միայն մահճակալներն ու տնային մյուս կահ-կարասին։

Գաբրիելը ժպտաց.

— Օ՜, Ավագյա՜ն... Ինչո՞ւ եք նեղություն քաշել... Կարծես շքեղ զբոսանք ենք կատարելու դեպի Եգիպտոս...

Ավագյանն ակնոցի միջից պարոնին նայեց կշտամբանքով, իբրև չքավոր մի մարդ, որն իրադրությունն ավելի լավ է հասկանում, քան բանից անտեղյակ հարուստը։ Գաբրիելն ամուր բռնեց նրա թևից.

— Ավագյա՜ն, բարեկամս, ինձ մի անգամ էլ պետք է օգնեք... Ամբողջ ժամանակ մտածում եմ, թե ինչպե՜ս կարելի է գլուխ պահել... Հանգստի անսահման կարիք ունեմ, բայց առաջիկա օրերին զրկված կլինեմ այդ հնարավորությունից։ Փոխծովակալն ինձ հրավիրեց իր մոտ, առաջարկեց իր հետ հացի նստել։ Ասել կուզի, ստիպված կլինեմ ժամերով խոսել անտարբեր մարդկանց բազմության հետ, պատմել, կամ գլուխս գովել, կամ համեստ ձևանալ։ Միևնույն է, հավասարաչափ տանջալից բաներ են թե՛ մեկը, թե՛ մյուսը։ Բոլոր դեպքերում դա կլինի նոր բանտարկություն։ Ձեմ ուզում։ Հասկանո՞ւմ եք, Ավագյան։ Ձե՛մ ուզում։ Գոնե այս երեք օրը ես ուզում եմ մեն-մենակ լինել, բոլորովին մենակ։ Դրա համար էլ «Ժաննա դ'Արկ» չեմ բարձրանա, այլ կգնամ փոխադրանավ։ Այնտեղ միայն մի քանի սպաներ կան։ Երևի, առանձին սենյակ տան, և ինձ հանգիստ կզգամ...

Սամվել Ավագյանը սարսափահար դեմք ընդունեց.

— Պարոն, փոխադրանավը, ամենայն հավանականությամբ, կարանտինի մեջ կլինի...

— Կարանտինն ինձ չի վախեցնում...

— Բայց դա կարող է դառնալ գերություն, որը կարող է տևել ավելի, քան քառասուն օր...

— Երբ ցանկություն հայտնեմ, ինձ ազատ կթողնեն...

Ավագյանն ավելի ծանրակշիռ պատրվակ էր որոնում.

— Դրանով կվիրավորեն փոխծովակալին, որը, վերջին հաշվով, մեր պահապան հրեշտակը եղավ...

— Դա ճշմարիտ է... Բայց և այնպես Դուք պետք է ինձ օգնեք, Ավագյան։ Իմ կողմից անմիջապես կներկայանաք, ներողություն կխնդրեք, կգտնեք պատշաճ պատճառաբանություն։ Ասացեք, թե փոխադրանավը լցված է մեր ամենաանհուսալի մարդկանցով, որոնց վրա ոչ մի հսկողություն չի սահմանված։ Ժամանակն այնքան սուղ էր, որ այդ գործը կարգավորել չկարողացանք։ Չէ՞ որ մեկնումեկը պետք է պատասխան տա հիշյալ մարդկանց վարք ու բարքի համար։ Ա՛յ, հենց ես էլ ստանձնել եմ այդ պարտականությունը...

Ավագյանը բնավ չհամոզվեց, բայց Գաբրիելը մնաց անդրդվելի.

— Այս պատճառաբանությունը արժանահավատ հիմք է։ Հիմա ռազմիկն ու ծովագնացը լավ կհասկանա նման կասկածի նշանակությունը։ Ուրիշ բան չի մտածի, հավատացե՛ք ինձ... Դե, ուրեմն, գործի անցեք, Ավագյան...

Ուսանողը դեռևս տատանվում էր.

— Ասել կուզի, մենք իրար մի քանի օր չենք տեսնի...

Այս բառերի մեջ մտահոգություն կար։ Բայց Գաբրիելը նայեց նավամատույցի կողմը.

— Ավագյան, իսկական ժամանակն է։ «Ժաննա դ'Արկի» մոտորանավակն այլևս ետ չի գա։ Թղթերն առայժմ թող մնան Ձեզ մոտ։

Նավակը մեկնելու անհամբեր ազդանշաններ էր տալիս։ Ավագյանը հազիվ ժամանակ գտավ Գաբրիելի ձեռքը սեղմելու։ Սա մտասույզ նայեց ուսանողի ետևից, ապա սպաներից մեկին դիմեց, հարցնելով, թե նավակները ե՛րբ են շարժվելու դեպի փոխադրանավը։ Քանի որ հիվանդների մեծամասնությունն արդեն նավ էր տարված, առանձնացվածներին տեղափոխելու էին վերջում։ Գաբրիելը մի հայացք նետելով դեպի հանձնաժողովն ու նավամատույցը մղվող հոծ բազմությունը, ենթադրեց, թե դա կարող է տևել մի քանի ժամ։ Բայց ոչ թե դժգոհեց, այլ ուրախացավ։ Չէ՞ որ կարողացավ խույս տալ փոխծովակալից և «Ժաննա դ'Արկի» վրա իրեն սպասող հեռանկարից։ Դանդաղ քայլերն ուղղեց դեպի լեռնային արահետը։ Բավական ժամանակ ուներ։ Հաճելի էր հեռանալ կանանց ժխորից, ազատվել սեպտեմբերյան կիզիչ արևից, հանգստանալ անդորրության գրկում, ծառերի հովանու տակ։ Նա անցավ առանձնացվածների մոտով։ Սրանք այստեղ էին ուղարկվում, որպեսզի առնչություն չունենային ժողովրդի առողջ մասի հետ։ Շատերը, ամենից առաջ գերեզմանաբնակները, այստեղ էին եկել առանց ստուգող հանձնաժողովի

գիտության։ Ինչո՞ւ իզուր տեղը չարչարվեին։ Բագրատյանը նայեց իր ապագա ուղեկիցներին։ Սաթոն ժպտաց, փոքր-ինչ ընդառաջ վազեց, մուրացկանի պես ձեռքը երկարացնելով՝ ողորմություն խնդրեց։ Յողոնօլուքում աղջիկը երբեք այդպիսի բան չէր արել։ Դասալիքները ոտքի ելան՝ ճնշված ու խեղճացած։ Նունիկն ու մյուս եղերամայրերը նստած էին իրենց պարկերի վրա։ Մտադիր էին այդ բորբոսնած գանձերը հայրենի երկրից տանել օտար աշխարհ։ Ձախ ձեռքերով գավազանները բռնած՝ աջ ձեռքերը մոտեցրին իրենց կրծքին, բերանին ու ճակատին, ողջունելով պարոն Գաբրիել Բագրատյանին՝ Բագրատյանների տոհմի վերջին շառավիղին, Մեսրոպի որդուն, Ավետիս Բագրատյանի՝ մեծ բարեգործի ու եկեղեցու հիմնադրի թոռանը։ Սակայն Նունիկը՝ այդ չծերացող պառավը, հանձին Գաբրիելի, ողջունում էր այն տղային, որի աշխարհ գալուն ինքն էլ էր օժանդակել։ Չէ՞ որ բժիշկ Ալթունու ետևում թաքնված՝ թոնրի երկաթե կեռով պատերի վրա խաչեր էր գծել, վանել չարքերին։ Մարգարեական գլուխներով կույր ծերունիները հողի վրա կուչ եկած՝ ցածրաձայն երգում էին։ Նրանց ակնակապիճներին խոշոր ճանճեր էին հավաքվել։ Չէին քշում։ Եղածի հանդեպ անտարբեր, գալիքի մասին առանց մտահոգվելու, մարգարեանման ծերունիները երգ էին մրմնջում։ Գրեթե չէին հարցնում, թե ինչ է կատարվել։ Հայրենիք չէին կորցնում։ Միայն իրենց ներքին աշխարհի ձայներն էին լսում։ Միևնույն էր, թե իրենց ուր կտանեն Նունիկը, Վարդուկն ու Մանուշակը՝ կույրերի ռահվիրաները։ Մրմունջը հնչում էր անվրդով ու ողբաձայն, իսկ երբ ծերունիներին համակում էր հափշտակության սարսուռը, նրանք երգում էին սուր ելևէջներով։

Հենց այդ մրմունջից էլ կուչ եկավ Գաբրիելի սիրտը։ Աչքի առաջ կանգնեց Ստեփանը։ Լեռնային արահետով շարունակեց բարձրանալ, որ չլսի կույրերի երգը։ Բայց շուտով ականջին հնչեց Ժուլիեթի թութակային տարօրինակ շաղակրատանքը, ապա ճիչը. «Հոգ.տար Ստեփանի մասին...»։ Քայլերն արագացրեց, ավելի ու ավելի խորասուզվելով իր մտորումների մեջ, որ հայտնվում էին անկախ նրա կամքից։ Ի վերջո, զարմացած կանգ առավ։ Ինչքա՜ն էր լեռն ի վեր բարձրացել։ Բայց լավ տեղ էր հասել։ Դա ժայռակերտ, բնական բազմոց էր՝ մաթուզենիների ու մրտենիների հովանու տակ, փափուկ մամռով ծածկված։ Այդ հիանալի անկյունում էլ նստեց։ Այստեղից ամեն ինչ կարելի էր պարզ դիտել՝ թե՛ խութերի մոտ եռացող քաոսը, թե՛ մուգ երկնագույն հինգ նավերը, որոնք անշարժ մխրճված էին թանձր հալոցք թվացող հորձանուտում։ Փոխադրանավը բավական հեռու էր կանգնած։ Ամենա-

մոտ նավը «Գիշենն» էր, որտեղ Իսկուհին էր։ Պատվելի Արամի լաստը նավային ամուր պարաններով կապված էր խութերից։ Նավաստիները վրան նեղ կամրջակ էին հարմարեցրել։ Փրկվածներն իրար ետևից օրորվելով անցնում էին երկար տախտակի վրայով, նստում նավակները։ Երբեմն ամբողջ սարքավորումը ճռճվում էր, ջուրը ճողփյունով վեր էր նետվում։ Կանայք վախից ճչում էին։ Այդ տեսարանն ուղղակի կլանեց Գաբրիելի ուշադրությունը։ Ժխորը չէր հանդարտվում։ «Դեռ շատ ժամանակ ունեմ»,— մտածեց Գաբրիելը։ Բայց լավ կաներ, եթե այդպես չմտածեր։ Այդ հիասքանչ տեղում նստելը նրա համար նույնքան վտանգավոր էր, որքան կիսացրտահար մարդու համար՝ ձյան վրա պառկելը։ Նրա դիմաց միապաղաղ օրորվում էր նավ բարձրանալու տեսարանը։ Եվ ահավասիկ աստված Գաբրիելի աչքերը փակեց զորավոր քնով, քուն, որ հյուսված էր քառասնօրյա բոլոր տառապանքներից, բոլոր անքուն գիշերներից։ Գաբրիելը մաքառելու ո՛չ կամք ուներ, ո՛չ ուժ։

Երեկոյան, երբ երեխայի աչքերը փակվում են, մայրն ասում է. «Քունը գալիս է...»։ Գաբրիելի քունը նույնպես եկավ, բայց դա ոչ թե քուն էր, այլ մահ։

ԳԱՌԻԿ ՅՈՒԹԵՐՈՎԴ





ինգ նավի շչակներն էլ ոռնում են՝ մերթ կարճ ու հատու, մերթ սպառնալից, մերթ խուլ։

Գաբրիելը հանգիստ բացում է աչքերը։ Հայացքով որոնում է այն երերուն տեսարանը, որն իր կարծիքով հենց նոր է փոխվել։ Աշխուժացած ալիքները պար են բռնել ամայացած խութերի շուրջը։ Լաստն անկանոն դեսուդեն է նետվում։ «Գիշենն» արդեն ուղղություն է վերցնում։ Դեպի հարավ-արևմուտք թեքված նավաքիթը խորը մխրճվում է ծովի մեջ։ Մյուս նավերն առաջ են ընկնում։ Ծանրամարմին, բայց և կայտառ, իրենց

անելիքն իմացող պարողների պես դրանք ջանում են բարեձև դիրք ընդունել։ Նավախմբի կենտրոնում դանդաղ մանևրում է «Ժաննա դ'Արկը»։

Գաբրիելն ուշադիր դիտում է, հետո մտածում. «Հապա Տեր-Հայկազո՞ւնը։ Մի՞թե ոչինչ չի նկատել։ Ո՛չ։ Կարծում է, թե «Ժաննա դ'Արկի» վրա եմ»։ Վեր է թռչում, սկսում է գոռալ, թափահարել թևերը։ Ձայնը տեղ չի հասնում, բայց նրա շարժումները հուսահատ մարդու շարժումներ չեն։

Արևը գգվում է Ռես էլ Խընզրրի սուր ցցվածքին, և Մուսա լեռան ուղղաձիգ ժայռապարիսպները թաղվում են թանձր ստվերի մեջ։ Գաբրիելը խոհեմ վարված կլինի, եթե վազի դեպի խութերը, մագլցի վեր, գործադրի ամեն միջոց, որպեսզի իրեն նկատեն։ Չէ՞ որ «Գիշենի» տախտակամածը լիքն է հայերով, որոնք նավեզրին հենված՝ հրաժեշտ են տալիս իրենց հայրենի լեռանը։ Այս պահին Մուսա լեռը կարծես նրանց ետևից նայում է խոժոռ հայացքով, ինչպես հուսախաբ եղած մարդասպան։ Ճիշտ է, ծովը շառաչում է, նավերի պտուտակներն աղմկում են, բայց մեկնումեկը տախտակամածից կամ դիտանոցներից կարող է նկատել Բագրատյանին։ Սակայն այս չարաբախտ մարդը ոչ միայն չի հեռանում իր ստվերաշատ տեղից, այլև դադարում է ձեռքերը թափահարել և աղաղակել։ Թվում է, թե արդեն ձանձրացավ անիմաստ ձևականությունից։ Հիրավի, Գաբրիելին զարմացնում է իրեն համակած անվրդովությունը։ Նման վիճակում գտնվող մարդը խելագարի պես պետք է օգնություն կանչեր, ջուրը նետվեր, լողար նավի ետևից մինչև նկատեին կամ խեղդվեր։ Միևնույն է։ Պետք է մի բան անել։ Չէ՞ որ նավերը դանդաղ են շարժվում։ Դեռևս ժամանակ կա։

Գաբրիելը չի հասկանում իր անվրդովության իմաստը։ Մի՞թե քնատությունից դեռևս կաշկանդված է արյունը։ Կողքին դրված է տափակաշիշը, որը սև սուրճով ու կոնյակով էին լցրել ֆրանսիացիները։ Ուզում է արթնացնել սեփական վհատությունը։ Լիաումպ խմում է։ Աշխուժացումը հակառակ ազդեցությունն է թողնում։ Արյունը եռում է, մկանները պրկվում են, սակայն անվրդովությունը ոչ մի կերպ չի փոխվում օգնության աղաղակի կամ մահվան սարսափի։ Միայն թե անտարբերությունն ավելի ակտիվ բնույթ է ստանում, վերածվում բերկրալի անդորրության։ Երկրային, նյութեղեն մարդն ամաչում է դրանից։ «Ես պետք է բարձրանամ աչքի ընկնող մի տեղ, բաճկոնս թափահարեմ, իբրև դրոշ»։ Գործնական տեսակետից այդ փորձը ոչ մի արժեք չունի։ Ինքն իրեն խաբում է, ամպարարություն անում։ Ոչ թե ծովափ է իջնում, այլ բարձրանում է լեռն ի վեր։ Ինքնաբերաբար մտածում է. «Ինչո՞վ եմ ապրե-

լու»։ Ձեռքը տանում է դեպի բաճկոնի գրպանը։ Սպիտակ հացի երեք կտոր և շոկոլադի երկու սալիկ։ Ուրիշ ոչինչ։ Ծոցագրպանում Դամլաջրքի քարտեզն է, մի քանի հին նամակ, գրառումներ, մի դատարկ գլանակատուփ և աղա Ռիֆաաթ Բերեքեթի նվիրած ոսկե դրամը՝ հունարեն մակագրությամբ։ Ոսկե բարակ դրամը բռնած՝ նայում է։ Հիշում է, որ լեռը բարձրանալիս ինքը ետ գնաց ամառանոց, վերցրեց մոռացած դրամը։ Երանի այդ բանը չաներ։ Հիմա այնպիսի զգացում ունի, թե այդ աղետաբեր թալիսմանը պետք է դեն նետել։ Բայց իր մտադրությունից հրաժարվում է, ոսկին նորից դնում գրպանը, խորհրդածում մակագրության մասին։ Նա նույնիսկ պաշտպանության առաջին օրերին իրեն երբեք այնքան առողջ, այնքան կորով չէր զգացել, ինչպես այժմ։ Ոտքերի միջից հոգնածությունն անհետացել է, ծնկները շարժվում են եռանդուն, սիրտը չի թպրտում։ Չի էլ նկատում, որ արդեն հասել է ծովի վրա կախված ամենաբարձր դարավանդին։ Մոտենում է ժայռացցվածքին, որ թիկնոցը թափահարի։ Ձեռքը բարձրացնում է, բայց շատ չանցած իջեցնում։ Նույն պահին, առաջին անգամ, կայծակնային պայծառությամբ գիտակցում է. ինքը բնավ չի ուզում, որ նավերն իրեն նկատեն։ Ինքը աղետալի ձախորդության զոհ չէ։ Դիպվածը վերուստ սահմանված վճռի հետևանք է, վճիռ, որ կայացրել է ոչ միայն աստված, այլև ինքը՝ Բագրատյանը։ Նա իր մեջ մտքի կամ զգացմունքի խաթարման ոչ մի հետք չի նկատում։ Միտքը նույնքան է պայծառ, որքան սիրտը՝ հանգիստ։ Նույնիսկ թվում է, թե ինքը միայն այժմ է շղթայազերծ լինում ինչ-որ երկարատև, բթացնող կաշկանդվածությունից։ Ամեն ինչ նրա ներսում մաքրագործվում է գիտակցության մինչ այդ անհայտ զորությամբ։

Թողնում է ծովի տեսարանը, հեռանում։ Լայն քայլերով, թեթևացած բարձրանում է խորդուբորդ արահետով, որը զիգզագաձև ձգվում է ժայռապարիսպների, հեղեղատների ու կիրճերի միջով։ Ճանապարհին փայտի կտորներով ու քարերով նշաններ են արված, որ անցորդը չմոլորվի։ Բայց Գաբրիելի զգոնությունը նույնպես արտասովոր պայծառություն է ստացել, այնպես որ նա ո՛չ այդ նշաններին է ուշադրություն դարձնում, ո՛չ էլ որևէ վտանգի։ Գիտե, որ իր վիճակում մարդ ո՛չ շատ բարձրանալ կարող է, ո՛չ էլ գահավիժել։ Ջարկերակի պես համաչափ գործում է գիտակցությունը։ Ճանապարհի այս հատվածում հպարտորեն ինքն իրեն հաշիվ է տալիս կատարվածի մասին։ Ահա՛ թե ինչու այսօր առավոտ, երբ ծովի կողմից դղրդոցով հայտնվեց հրաշքը, նա գրեթե հիասթափվեց։ Ահա՛ թե ինչու նրան դժվարըմբռնելի անախորժություն պատճառեց նորին պայծառափայլության այն խոստումը, թե ինքը Մուսա լեռան ժողովրդին ափ է հանելու Ալեքսանդրիայում կամ Պորտ Սաիդում։ Այդ անախորժության մեջ արդեն ծիլ էր արձակում այս ժամի մեծ ցանկությունը։ Ընդհանուր փրկության առաջին իսկ վայրկյանին Գաբրիելի մտքով անցավ, որ դեպի կյանք կատարվող այս վերադարձը իր համար չէ։ Քառասուն օրում ի հայտ եկած իսկական Գաբրիելը պետք է իսկապես փրկվի։ Պորտ Սաի՞դ կամ Ալեքսանդրիա՞։ Հայ փախստականների ինչ-որ գաղթակայա՞ն։ Մուսա լեռը փոխանակել ինչ-որ նեղ ու ցածրիկ փարախի՞ հետ։ Նվիրական բարձունքից իջնել ստորկության վի՞հը, հույս դնելով նոր ողորմածության վրա։ Ինչո՞ւ։ Ականջին հնչում է բժիշկ Ալթունու վաղուց ասած խոսքերից մեկը. «Հայ լինելն անելանելի փորձանք է»։ Շա՜տ ճշմարիտ է։ Սակայն Գաբրիելի համար բոլոր անելանելի փորձանքներն արդեն անցած են։ Միակ հնարավորությունը նրան համակում է աննկարագրելի վստահությամբ։ Ինքը հաղորդակից եղավ իր արյան ճակատագրին։ Ղեկավարեց հարազատ ժողովրդի պայքարը։ Բայց արդյոք նոր Գաբրիելն ավելին չէ՞, քան արյունը։ Նոր Գաբրիելն ավելին չէ՞, քան մի հայ։ Անցյալում նա իրեն անիրավացիորեն համարում էր «վերացական մարդ», «ինքնապարփակ մարդ»։ Իսկական մարդ դառնալու համար նա պետք է անցներ հասարակության փարախի միջով։ Ահա թե ինչու նա իրեն այնքան ազատ էր զգում, անսահման ազատ։ Տիեզերական ճգնավորությո՜ւն։ Այսօրվա վաղորդյան բաղձա՜նքը։ Գտնված է այն, ինչ դեռևս ոչ մի մահկանացու չի գտել։ Ամեն ակնթարթը լի է արբեցուցիչ անկախությամբ։

Նավերը հեռանում են, և Գաբրիելը մնում է Մուսա լեռան ժայռոտ բարձունքին, որն այնպես լերկ է, այնպես ամայի, կարծես հենց նոր է արարչագործված։ Երկուսով են՝ աստված և Գաբրիել Բագրատյանը։ Եվ ամենաբարձրյալի ողորմածությամբ Բագրատյանն ավելի իրական է, քան բոլոր մարդիկ, քան բոլոր ժողովուրդները։

Այս հպարտության բարձունքի վրա նրան տիրում է թեթև թուլություն։ Կանա՜յք։ Որտեղ կան կանայք, այնտեղ կա նաև այրական հանցանք։ Գաբրիելը հասել է լեռնային սանդուղքի այն աստիճանին, ուր թեքությունը փոքր-ինչ մեղմանում է։ Այստեղ վայր դրին հիվանդների պատգարակները։ Այստեղ Իսկուհու աչքերը նրան վերջին հրաժեշտի խոսքեր ասացին։ Բայց նա այս պահին ոչ թե Իսկուհուն, այլ Ժուլիեթին է միմիայն տեսնում՝ ճոխ շրջազգեստով։ Ի՞նչ է լինելու արդյոք իր կնոջ ճակատագիրը։ Մի բոպե կանգ է առնում, հայացքը հառում ծովին։ Նավերն այնքա՜ն դանդաղ են լողում։ Դեռևս չեն անցել կապույտ, հոլանի հարթության կեսը։ Դիտանոցներից դեռևս մարդիկ կարող են Գաբրիելին

նկատել, եթե նա թիկնոցը գլխավերևում թափահարի։ Բայց նրա ուշադրությունը գրավում է մի այլ խորհրդածություն։ Ժուլիեթն ազատ կլինի, առանց դժվարության կվերստանա ֆրանսիական քաղաքացիություն։ Երբ պարզվի, որ ինքն անհայտ կորած է, փոխծովակալն ու ամբողջ աշխարհը Ժուլիեթին սիրով կհովանավորեն։ Այս հստակ պատկերացման շնորհիվ մեծանում է ազատության զգացումը։ Գլուխը փոքր-ինչ խոնարհած, ավելի շրջահայաց, քան առաջ, անցնում է քարափի երկայնքով։ Այստեղ արահետը թեքվում է, բարձրանում դեպի անտառն ու թփուտները։ Երկու ոլորան անցնելուց հետո Գաբրիելը հանկարծ սարսափում է։ Հնարավո՞ր բան է։ Մի՞թե Իսկուհին վերջին րոպեին մի տեղ թաքնվել է, որ մնա, իր հետ լինի։ Հետևյալ վայրկյաններին դա նրան պատրանք չի թվում, բորբոքված երևակայության արդյունք։ Նույնիսկ զգայարանները լցվում են բուռն հավատով։ Չէ՞ որ ետևից լսում է Իսկուհու ոտնաձայները։ Մինչև իսկ զանազանում է կրունկների սուր, պարզորոշ կտկտոցը։ «Որտե՞ղ ենք ես ու դու պատսպարվելու, քույրիկս, ես և դու»։ Աղջիկն իր խոսքին հավատարիմ մնաց. «Քեզ մոտ»։ Գաբրիելը ետ չի նայում։ Փոքր-ինչ առաջ է վազում, ապա կանգ առնում։ Ետևից անդադար լսում է Իսկուհու թեթև, համաչափ քայլերի ձայնը։ Կանացի ոտնաձայները շարունակ վեր են բարձրանում։ Ճանապարհին խշշոց է լսվում, հողը թնդում է, քարեր են գլորվում։ Գաբրիելն սպասում է։ Հիմա Իսկուհին կգա կհասնի։ Ոտնաձայներն արդեն հնչում են մերթ մոտ, մերթ հեռու։ Վերջապես գլխի է ընկնում, որ Իսկուհու ոտնաձայները գալիս են ոչ թե դրսից, այլ իր ներսից։ Ձեռքը գրպանն է տանում, բռնում ժամացույցը։ Երբ դուրս է բերում, տկտկոցն այնպես բարձր է հնչում, որ կարծես ժայռերին ոչ թե կանացի ոտքեր են դիպչում, այլ մուրճի ուժեղ հարվածներ։ Մենության մեջ չափազանցվում է ձայնը։ Կամ գուցե դա Գաբրիելի վերջին ժա՞մն է, որը նրա կյանքի վեհացմանը զուգընթաց բարձրացնում է իր ձայնը։

Ժամացույցը դեռևս պահում է ձեռքին, երբ իրողություն թվացող պատրանքից հետք անգամ չի մնում։ Ուրեմն՝ քունը սովորական քուն չէր։ Քունը վերուստ առաքվեց, որպեսզի հաղթահարվի թուլությունը, և նա կարողանա իրագործել նախասահմանվածը։ Առանց այդ քնի ամեն ինչ ի դերև կանցներ։ Այնինչ աստված նրա համար այլ ճակատագիր էր տնօրինել։ Այդ խոսքը ե՞րբ ասաց։ Երևակայության արդյո՞ւնք է դա, թե՞ իրոք այդպիսի բան ասել է։ «Որոշ ժամանակից հետո ես ժայռի պես աներեր այն զգացումն ունեի, թե աստված ինձ հետ ինչ-որ մտահղացում է կապել...»։ Այժմ այդ մտահղացումը նա ըմբռնում է ամենայն

խորությամբ։ Դա այլևս միայն ազատություն և լիառատ բերկրանք չէ։ Ո՛չ, Գաբրիելի էությունը փոթորկվում է ինչ-որ նոր, բոլորովին այլ զգացումից։ Դա իրերի գերբնական կապը հասկանալու ցնծությունն է, հոգևոր ճառագայթումը։ «Նախախնամությունն ինձ հովանավորում էր, ուղղություն տալիս, և դրա շնորհիվ էլ կյանքս անվթար մնաց պատահարներից»։ Թևերը փոքր-ինչ տարածած՝ դեգերում է, առանց նկատելու ճանապարհը։ Ահա և ժայռերի արանքում գոյացած մի ճեղք։ Ծավալվում է ծովահորիզոնը։ Նավախումբը արագիլների եռանկյուն երամի պես առաջ է շարժվում, հետզհետե խորանում հեռաստանների գիրկը։ Սակայն Գաբրիելն այլևս չի նայում նավերի ետևից։ Հայացքը սուզում է եռմիջօրեի երկնքի խորքերը, որի լազուրն ավելի ու ավելի մուգ ոսկեգույն երանգ է ստանում։ Այժմ նա գիտե, թե Հայրը որքան զորավոր է։ Այդ զորությունը նրա աչքին նույնքան մեծ է, ինչքան այն ժամանակ, երբ ինքը տակավին փոքրիկ տղա էր։ Երկնակամարը՝ երկնքի պատյանը, խորանո՜ւմ է, խորանո՜ւմ։ Դա արդեն ոչ թե տիեզերական տարածություն է, աստղաբաշխական սառն անսահմանություն, այլ հանգրվան։

Ճանապարհը կորչում է, ձուլվում բարձունքին։ Գաբրիելը դա չի զգում։ Ձեռքերը թեթևակի տարածած՝ դեռևս նայում է մթնասքող երկընքին։ Ամեն մի քայլը զոհաբերություն է։ Վերևում ևս անշարժություն չի տիրում։ Երկնային ուժերը գրկաբաց ընդառաջ են գալիս իրենց ողջակեզին։

Գաբրիելը կտրում անցնում է մրտենիների ու դափնեվարդերի թփուտները։ Մի՞թե չպետք է մտածի առաջիկա ժամերի, գիշերվա, ապահով ապաստարանի մասին։ Չէ՞ որ մթնշաղից հետո ոչ մի մահկանացու իր գոյությունը չի կարող շարունակել այն վիճակում, ինչ վիճակում Գաբրիելն է։ Ներսում ոչ մի հարց գլուխ չի բարձրացնում։ Ոտքերը նրան տանում են սովոր ճանապարհով։ Ահա Երեք վրանի հրապարակը։ Վրանները ոչ միայն անջրանցիկ են, այլև հրակայուն։ Դրա շնորհիվ էլ դիմացել են բոցերին։ Կրակը ներս չի թափանցել։ Մահճակալներն անվթար կանգնած են։ Գաբրիելն առանց կանգ առնելու անցնում է Ժուլիեթի վրանի մոտով։ Քաղաքաձորի առաջ անվճռականորեն կանգ է առնում։ Նրան ձգում է հյուսիսը, մեծ խրամատը, իր կատարած գործի հիմնական վայրը։ Հետո փոխում է ուղղությունը, շարժվում դեպի հաուբիցների բարձունքը։ Գուցե նույնիսկ հետաքրքրությունից. արդյոք ծովային հետևակին հաջողվե՞ց պայթեցնել հրանոթները։ Քաղաքաձորի և հաուբիցների բարձունքի միջև մեծ գերեզմանատունն է։ Համենայն դեպս, չորս հարյուր շիրիմ տեղ են գտել վտիտ հողի տակ։

Առաջին օրերին փորված գերեզմանների վրա անտաշ կրաքարեր կան, սև տառերով մակագրված սալեր։ Վերջին գերեզմանների վրա միայն խաչափայտեր կան։ Գաբրիելը մոտենում է Ստեփանին։ Շիրմաթմբի հողը դեռևս թարմ է։ Ե՞րբ թաղեցին։ Երեսուներորդ օրը։ Իսկ սա քառասունմեկերորդ օրն է։ «Ե՞րբ էր, որ Ստեփանը վերևում ինձ հանկարծակի բերեց, քնից արթնացրեց։ Այժմ ե՛ս եմ իրեն հանկարծակիի բերում։ Ինչպես այն ժամանակ, Մուսա լեռան բարձունքներում դարձյալ երկուսով ենք»։

Գաբրիելը չի հեռանում, բայց մտածում է ոչ միայն Ստեփանի մասին, այլև մտաբերում է ճակատամարտերի հետ կապված հարյուրավոր դեպքեր։ Ոչինչ չի խռովում նրա ներքին մեծ անդորրությունը։ Հազիվ է նկատում, որ արևը մայր է մտնում։

Երբ միանգամից ցրտում է և մթնում, նա սթափվում է իր մտասույզ վիճակից։ Այս ի՞նչ է։ Հինգ նավաշչակ ազդանշան են տալիս՝ իրար հետ, առանձին-առանձին, սպառնալից, երկար, բայց և անսահման հեռվից։ Գաբրիելը գետնից թափով վերցնում է թիկնոցը։ «Իմ բացակայությունն արդեն նկատե՞լ են։ Ի՞նձ են կանչում։ Շո՛ւտ վազեմ սկուտեղաձև դարատափը։ Կրա՞կ վառեմ։ Երևի՞, երևի՞...»։

Նրա մեջ կյանքը մոլեգնո՞ւմ է։ Բայց առաջին քայլն անելուց հետո ետ է քաշվում։ Գետնի վրա կիսաշրջանաձև սողալով ինչ-որ սև կետեր են մոտենում։ Գուցե վայրի շնե՞ր են։ Բայց կիսախավարում ոչ մի աչք չի պսպղում։ Տասը քայլ հեռավորության վրա կիսաշրջանը քարանում է։ Գաբրիելը ցույց է տալիս, թե ոչինչ չի նկատել, նայում է վեր, մի քայլ ետ է նետվում, կուչ գալիս Ստեփանի շիրմաթմբի ետևում։ Սակայն կողքից անսպասելիորեն կրակ է փայլատակում՝ մեկ, երկու, երեք անգամ։

Գաբրիել Բագրատյանի բախտը բերեց։ Թուրքական երկրորդ գնդակը փշրեց նրա քունքը։ Նա կառչեց փայտից, փայտի հետ փռվեց գետնին։ Ծվ որդու խաչը ընկավ հոր սրտին։

Վերջաբան

այս երկն ուրվագծվեց 1929 թվականի մարտին, երբ հեղինակը մեկնել էր Դամասկոս։ Գորգագործարանում աշխատող գաղթական խեղանդամ և սովալլուկ մանուկների անմխիթար վիճակը վճռական խթան հանդիսացավ՝ ամբողջ իրադարձության մեջալ թագավորությունից դուրս բերելու հայ ժողովրդի անընթեռնելի ճակատագիրը։

Գիրքը շարադրվել է 1932 թվականի հուլիսից մինչև 1933 թվականի մարտը։ Միջանկյալ շրջանում, նոյեմբերին, հեղինակը ուղևորություն է կատարել դեպի գերմանական զանազան քաղաքներ, դասախոսություններ կարդացել։ Իբրև զեկուցման նյութ նա ընտրել է առաջին գրքի հինգերորդ գլուխը, որը լիովին խարսխված է էնվեր փաշայի և պատվելի Յոհաննես Լեփսիուսի զրույցի պատմական հաղորդագրության վրա։

Ֆ. Վ.

Բրայթենշթայն, գարուն, 1933

Ֆրանց Վերֆելի և նրա վերջի տարին



դարի առաջին կեսի ավստրիացի նշանավոր գրողների շարքում աչքի ընկնող տեղ է պատկանում Ֆրանց Վերֆելին։ Ծնվել է նա 1890 թվականին Պրագայում, գործարանատիրող ընտանիքում։

Անցյալ դարի վերջին Պրագայի բնակչությունը կազմում էր մոտ կես միլիոն մարդ և նրա երեսուն հազար քաղաքացիների համար գերմաներենը մայրենի լեզու էր։ Այս էթնիկական կղզյակը 20-րդ դարի առաջին տասնամյակին տվեց այնպիսի նշանավոր գերմանացի գրողներ, ինչպիսիք են Ռայներ Մարիա Ռիլկեն, Ֆրանց Կաֆկան, էգոն Էրվին Կիշը, Լուի Ֆյուրնբերգը, Կարլ Ֆրանց Վայսկոպֆը և, վերջապես, Ֆրանց Վերֆելը։

Վերֆելի հայրը ցանկանում էր, որ միակ որդին (ընտանիքում երկու աղջիկ ևս կային) դառնա իր գործի շարունակողը։ Տարաձայնությունները հոր և որդու միջև վաղ սկիզբ առան։ Իր ընտանիքի, մանկության մասին Վերֆելը համարյա չի հիշում՝ Ջուզեպե Վերդիի նման պաշտպանելով «Ջնջել սեփական կյանքի հետքերը» սկզբունքը։

Եվ, այնուամենայնիվ, Վերֆելի որոշ ստեղծագործություններ լույս են սփռում նրա հայրական տանը տիրող մթնոլորտի վրա։ Վերֆելի նկարագրած հայրական տներում թագավորում են դատարկությունը, տրտմությունն ու անգթությունը («Ոչ թե սպանողը, այլ սպանվածն է մեղավոր», «Հայելու մարդը», «Ընկերը ընկերոջ համար»). նա սիրով է խոսում միայն իր դայակի մասին։

Վերֆելի կենսագրի՝ Ռիխարդ Շպեխտի վկայությամբ դեռևս վաղ պատանեկան տարիներին նա հոր հաշվեթղթերի վրա գրոտում էր բանաստեղծություններ։

Վերֆելի ժամանակակից, գրող Մաքս Բորդը այսպես է նկարագրում նրան. «Շիկահեր, միջին հասակի... ամաչկոտ, նա անմիջապես կերպարանափոխվում էր, հենց որ սկսում էր արտասանել։ Նա իր բոլոր

բանաստեղծություններն անգիր գիտեր, կարդում էր առանց կմկմալու, հիշողությամբ, կրակոտ, երբեմն բարձրաձայն, երբեմն ցնծագին, բայց միշտ էլ նրբերանգներով հարուստ ձայնով։ Ես հմայված էի։ Նման բան երբեք չէի լսել»[1]։

Շատ տարիներ անց նրա մասին գրեց Թոմաս Մանը. «Որքա՜ն բնորոշ էր նրան մանկական խանդավառությունը։ Ես միշտ սիրել եմ Ֆրանց Վերֆելին, հիացել նրանով հաճախ՝ որպես ոգեշունչ քնարերգու, և բարձր գնահատել նրա միշտ էլ հետաքրքիր արձակը»։

Վերֆելի սիրած վայրը Պրագայում «Արգո» սրճարանն էր, որտեղ նա ժամերով զրուցում ու վիճում էր բարեկամների հետ։

Պրագան, որ գտնվում էր Արևմուտքի և Արևելքի սահմանագծին, կրում էր երկու աշխարհների ազդեցությունը։ Վերֆելն իր ստեղծագործություններում քնքուշ սիրով ու մեղմ թախիծով է հիշում այդ հին քաղաքը, բոհեմայի երկիրը։

Հոր հետ բախումը հանգեցնում է այն բանին, որ քսանամյա Ֆրանց Վերֆելը թողնում է հայրական տունը։ Նա փորձում է լրացնել կրթությունը։ Սովորում է Պրագայի, Լայպցիգի, Համբուրգի համալսարաններում։ 1912 թվականին, ավարտելով զինծառայությունը ավստրիական բանակում, ձերբակալվում է երկրում տիրող ռազմամոլության դեմ սուր ելույթների համար։

Այդ շրջանում նա ծանոթանում է հրատարակիչ Կուրտ Վոլֆի հետ, որը հովանավորում էր էքսպրեսիոնիզմ նոր ուղղությունը ներկայացնող գրողներին։ Նա Վերֆելին աշխատանքի է տեղավորում իր հրատարակչությունում և օգնում նրան դառնալու նյութապես անկախ։ Նրանց բարեկամությունը շարունակվեց մինչև գրողի կյանքի վերջին օրերը։

Գերմանացի էքսպրեսիոնիստներն իրենց գաղափարագեղարվեստական նախորդներ էին համարում Ֆեոդոր Դոստոևսկուն, Լև Տոլստոյին, Ուոլտ Ուիթմենին, Արթուր Ռեմբոյին։ Մարդկության վերածնունդը տեսնելով Արևելքի հոգևոր սկզբունքի և Արևմուտքի նյութական սկզբունքի սերտ միասնության մեջ, էքսպրեսիոնիստներն այն կարծիքին էին, որ «Արևմուտքի մարդու թերությունը պետք է լրացվի Արևելքի մարդու ինքնախորասուզվածությամբ»։

Վերֆելը դեպի Վոլֆ ու էքսպրեսիոնիստների խմբակ էր բերում իր բարեկամներին՝ սկսնակ գրող Վիլլի Հասին և Վալտեր Հազենկլեվերին։

---

[1] Expressionismus. Aufzeichnen u Erinnerungen der Zeitgenossen. S. 59, herausgegeben von Paul Raabe.

Այսպես ձևավորվեց բուրժուական աշխարհի նկատմամբ ընդդիմադիր տրամադրված գեղարվեստական մտավորականության միջուկը։

Իր ստեղծագործությունը Վերֆելը սկսեց պոեզիայից՝ յուրատեսակ օրագրից։ «Աշխարհի բարեկամը» բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս տեսավ 1911 թ., «Մենք կանք» երկրորդ ժողովածուն՝ 1913 թ., «Բարեկամը բարեկամի համար» երրորդ ժողովածուն՝ 1915 թ.։

1914 թ. Վերֆելը առաջին համաշխարհային պատերազմի զինվոր էր, ավելի ուշ՝ Հաբսբուրգյան միապետության անկման ականատեսը։

1917 թ. ռազմաճակատից վերադառնալով Վիեննա, նա ծանոթանում է ավստրո-հունգարական հայտնի նկարիչ Էմիլ Շինդլերի դստեր՝ Ալմա Մալերի հետ, որը դարձավ երաժշտության մեջ էքսպրեսիոնիզմի խոշորագույն ներկայացուցիչ, կոմպոզիտոր Գուստավ Մալերի կինը։ Հոր և ամուսնու փառքը նպաստում էին այն բանին, որ ժամանակի ամենաճանաչված մարդիկ հաճույքով հաճախում էին Ալմա Մալերի սալոնը։ Նրանց մեջ էր նաև Վերֆելը։

Երաժշտությունը հաստատուն տեղ է գրավում նրա հոգևոր հետաքրքրությունների մեջ։ Այդ նույն տարիներին մյուս վիեննացի կոմպոզիտոր Ռիխարդ Շտրաուսը դառնում է նրա բարեկամներից մեկը։

Հետպատերազմյան տասնամյակի դրամատուրգների ու կոմպոզիտորների ստեղծագործությունների բնորոշ թեման սարսափն է ամենակործան ուժերի առաջխաղացման հանդեպ։ Ամայացման, բռնության, մահվան, հետադիմության ուժերի դեմ մղվող մեծ գոտեմարտի պատկերները տիրապետող են երաժիշտ-էքսպրեսիոնիստների ստեղծագործություններում։

Ժամանակակից կոմպոզիտորների ազդեցությունը Վերֆելի վրա, ինչպես գրում են նրա ստեղծագործության հետազոտողները, կասկածից վեր է։ Սակայն գրողը նույնպես ուժեղ ազդեցություն է գործել նրանց վրա։ Պատահական չէ, որ նա մեծ նշանակություն էր տալիս իր դրամաների երաժշտությանը։ Նա գրում է. «Եթե հնարավոր լիներ, այնպիսի օպերաներ կհորինեի, որոնց տեքստը կլիներին ցնծության բացականչությունները, հառաչանքները, ցավի տնքոցները, ուրախության ու վրիժառության ճիչերը։ Ինչի են պետք բառաշատ նախադասությունները, որոնք ոչ ոք չի հասկանում, երբ մատուցվում են երաժշտությամբ։ Ուրիշ է երաժշտական խոսքի տրամաբանությունը՝ բառերի տրամաբանությունից տարբեր»։

Եռապատերազմյան տարիներին փոխվում են Վերֆելի քաղաքական հայացքները։ Նա մասնակցում է 1918 թ. հեղափոխական իրադարձություններին, դառնում է հակամիլիտարիստական գաղտնի միության հիմնադիրներից մեկը և էգոն Էրվին Կիշի օգնությամբ հաղորդակցվում մարքսիստական գաղափարներին։ Գրողի բարեկամները, և նրանց թվում՝ Ֆրանց Կաֆկան, Վերֆելին համարում էին իրենց՝ էքսպրեսիոնիստների սերնդի մարգարե։ Բայց ինչպես գրում է Թոմաս Մանը. «Նա շատ շռայլորեն էր օժտված և շատ մեծ անձնավորություն էր, որպեսզի իրեն սահմանափակեր մի դպրոցի շրջանակներով, և դուրս եկավ էքսպրեսիոնիզմի սահմաններից»[1]։

1929 թ. Վերֆելը ճանապարհորդում է Սիրիայում։ Այստեղ էլ նա հղացավ «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը։ Սիրիայից հետո գրողը այցելում է Պաղեստին և Եգիպտոս։

1930 թ. Վերֆելը ամուսնանում է այրիացած Ալմա Մալերի հետ։ Վերֆել ամուսինների տունը դառնում է հայտնի երաժիշտների, նկարիչների, գրողների, դրամատուրգների հանդիպման վայր։

Վերահաս ֆաշիստական տեռորի սպառնալիքը տագնապ էր առաջացնում ոչ միայն Եվրոպայի, այլև Ամերիկայի առաջադեմ մարդկանց սրտերում։

1930 թ. Էռնեստ Հեմինգուեյը «Մեր ժամանակը» ժողովածուն վերահրատարակելիս ընդգրկում է նաև «Իզմիրի նավահանգստում» պատմվածքը։ Մարդկության ճակատագրի հանդեպ տագնապով է ներծծված այդ ստեղծագործությունը։ «Դժվար է մոռանալ Իզմիրի առափնյան։ Ինչ ասես որ չէր լողում դրա ջրերում։ Կյանքում առաջին անգամ այնպիսի վիճակի մեջ ընկա, որ այդ ամենը գիշերները տեսնում էի երազում։ Ծննդաբերող կանայք այնքան սարսափելի չէին, որքան մեռած երեխաներով կանայք... Հնարավոր չէր համոզել կանանց, որ հանձնեին իրենց մեռած երեխաներին։ Երբեմն վեց օր շարունակ գրկից չէին իջեցնում նրանց։ Ոչ մի գնով չէին համաձայնում»[2]։

Եթե Հեմինգուեյը դիմում է թուրքական բռնակալության զոհերի պատկերմանը, ապա Վերֆելը 1915 թ. հայերի ողբերգությունից վերցնում է հերոսական ինքնապաշտպանության էջը, դրանով իսկ հաստատելով բռնության դեմ ակտիվ պայքարի գաղափարը։

---

[1] **Franz Werfel.** Menschenblick Ausgewählte Gedichte. Aufbau—Verlag Berlin u. Weimar. 1967, S. 138.

[2] **Эрнест Хемингуэй.** Избр. произ. в 2-х томах, ГИХЛ, Москва, 1959, т. I, стр. 47.

Հիտլերականների Ավստրիա մտնելու ժամանակ Վերֆելը կնոջ հետ գնում է Հռոմ. որոշ ժամանակ նրանք ապրում են Կապրի կղզում։ Կապրիից հետո մեկնում են Ֆրանսիա։

Ֆրանսիական Ռիվիերայում հանդիպում են վաղեմի բարեկամներ Հաասը, Հազենկլեվերը և Վերֆելը՝ երեքն էլ վտարանդիներ։ Հանդիպում են, որպեսզի մեկընդմիշտ բաժանվեն։ Վերֆելը և Հազենկլեվերը գնում են կայարան՝ Հաասին ճանապարհելու։ Այդ մասին Հաասը պատմում է.

«Ինչքա՞ն փող ունես,— հարցրեց ինձ Վերֆելը, երբ գնացքը մոտեցավ։

— Երկու ֆունտ ստեռլինգ,— ասացի ես նրան։

Վերֆելը արագ գրկեց ինձ, սեղմեց ձեռքս։ Ես ինչ-որ խշխշացող բան զգացի ափիս մեջ։ Հազարֆրանկանոց թղթադրամ էր՝ այն ժամանակվա համար պատկառելի գումար»։

Այս փոքրիկ գրվագում Վերֆելը բացահայտվում է որպես մարդ և բարեկամ։ Ճանապարհելով ընկերոջը, նա մտածում էր միայն նրա մասին, մոռանալով, որ ինքը նույնպես պետք է շարունակի վտարանդիության անծանոթ, հեռավոր ուղին։

Երկու տարի Վերֆելը կնոջ հետ ապրում է Փարիզում։ Այստեղ նա ընդունվում է մշակույթի պաշտպանության գրողների միջազգային ասոցիացիա։

Հիտլերի 1938 թ. ելույթներից մեկին Վերֆելը արձագանքեց սուր քաղաքական պամֆլետով։ «Լավ տեղ Վիեննայում» բանաստեղծության մեջ, մերկացնելով անարդարությունն ու չարիքը, գրողը բնությանը դաշնակցելու կոչ է անում։ Ֆաշիստական տեռորը նա նկարագրում է «Պրագայի բալլադում»։ Այս, ինչպես և «Վտարանդիների երազների քաղաքը» բանաստեղծությունը ներծծված են հայրենիքի նկատմամբ սրտաճմլիկ կարոտով։ Վերֆելը անարգանքի սյունին է գամում հիտլերյան ավազակներին, մերկացնելով գերմանական միլիտարիզմի զավթողական քաղաքականությունը։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նրա ելույթը «Ce soir» թերթի էջերում, ուր նա Ֆրանսիայի ժողովրդին նախազգուշացնում է ֆաշիստական օկուպացիայի վերահաս վտանգից. «Հիտլերն ուզում է ձեռքով սեղմել աշխարհի կյանքի զարկերակը»՝ նպատակ ունենալով մի որոշակի ժամանակահատվածում իրագործել իր ծրագրի ալֆան ու օմեգան. պատժել Ֆրանսիային, ոչնչացնել Ֆրանսիան և, հաղթանակելով, մարել ֆրանսիական միտքը։ Երբ Բոհեմիան հոշոտված կլինի, իսկ չեխոսլովակյան ժողովուրդը՝ ստրկության մատնված, նրա աներևակայելի բուն երազանքի իրագործումը կդառնա

կարճ ժամանակի հարց։ Այդ նպատակին տանող առաջին երկու քայլերը՝ Հունոսի մարզի օկուպացիան և Ավստրիայի բռնակցումը, նացիոնալ-սոցիալիզմին հաջողվեց կատարել՝ չհանդիպելով ոչ մի դիմադրության։ Ըստ որում, անամոթ խաղամոլը չուներ ոչ մի հաղթաթուղթ, եթե չհաշվեն մյուս երկրների վախկոտությունը»։

Իսկ հայտնի է, որ նոր հանցագործությունների համար լավագույն խրախուսանքը լկտիությունն ու անօրինականությունն են։

Վերֆելի մարգարեությունը իրականացավ։ 1940 թ. Փարիզը կապիտուլյացիայի ենթարկվեց։ Գրողը կնոջ հետ թաքնվեց արևմտյան Ֆրանսիայի Լուրդ քաղաքում, որին նվիրում է «Երգ Բեռնարդետի մասին» վեպը։

1940 թ. Վերֆելը կնոջ, Հենրիխ Մաննի, նրա կնոջ որդու և Թոմաս Մաննի հետ Պիրենեյների վրայով վտանգավոր անցում են կատարում Ֆրանսիայից Իսպանիա, իսկ հետո՝ Պորտուգալիա։ Այստեղից էլ նրանք գնում են Ամերիկայի Միացյալ Նահանգներ։ Բիվերլի-Հիլզը՝ Կալիֆոռնիայի այդ փոքրիկ քաղաքը, դառնում է Ֆրանց Վերֆելի առաջին ապաստանը։ Այստեղ էին հիմնվել նաև Թոմաս և Հենրիխ Մաննները, Լիոն Ֆեյխտվանգերը, Ալֆրեդ Նեյմանը, Բլունո Ֆրանկը, Առնոլդ Շենբերգը և մյուս վտարանդիները՝ նշանավոր հակաֆաշիստներն ու գերմանական մշակույթի ականավոր գործիչները...

1944 թ. Թոմաս Մաննը նամակ է ստանում Վերֆելից, որ նա թելադրել էր հիվանդ վիճակում, գուցե և կանխազգալով մահը։ Նամակում «Բուդենբրոկները» Վերֆելն անվանել էր «անմահ գլուխգործոց»։ Նրա նամակը խորապես հուզում է Թոմաս Մաննին, քանի որ նա Վերֆելին համարում էր «ամբողջ էությամբ արվեստագետ»։

Հայրենիքի նկատմամբ կարոտով են ներծծված Վերֆելի վտարանդության շրջանի բոլոր ստեղծագործությունները։ «...Նորից ու նորից ես գալիս եմ անծանոթ քաղաք, և ամենուր՝ օտարություն»,— գրում է նա։

Հայրենիք վերադառնալ գրողին այդպես էլ չվիճակվեց...

1945 թ. օգոստոսի 26-ի երեկոյան դեմ, բանաստեղծությունների վերջին հրատարակությունը սրբագրելու ժամանակ Վերֆելն ընկավ գրասեղանից դուրս քայլելիս։ Ջդիմացավ սիրտը։ Սա էր վտարանդիության շատ ներկայացուցիչների ճակատագիրը։

Հոգեհանգիստը տեղի ունեցավ օգոստոսի 29-ին, Բիվերլի Հիլզ քաղաքի եկեղեցում։ Հսկայական քանակությամբ ծաղիկներ կային, բազ-

մամարդ սգո հանդեսին մասնակցում էին շատ գրողներ, լրագրողներ, երաժիշտներ, նկարիչներ...

Վերֆելի մահն ու թաղումը նկարագրել է Թոմաս Մանը. «Սիրտս պայթում էր, երբ կանգնել էի դագաղի մոտ։ Ժամատան փոքրիկ դահլիճում Վալտեր Զոկելի նվագակցությամբ երգում էր Լոտտա Լեմանը։ Դամբանական խոսք ասաց Վերֆելների տան բարեկամ աբբա Մենիուսը, որը Աստվածաշնչի փոխարեն մեջբերումներ էր կատարում Դանտեից...»։

Վերֆելի բարեկամներից մեկը՝ նրա վերջին բանաստեղծական ժողովածուի վերջաբանի հեղինակը, գրում է. «1945 թվականի Գերմանիան, որը երեք ամիս առաջ կապիտուլյացիայի էր ենթարկվել, դժվարությամբ է հավատում խաղաղությանը և արդեն ֆիզիկայի գերության մեջ է, որը ճապոնական քաղաքները վերածեց հրե գնդերի... Այն ժամանակ ո՞վ ուշադրություն դարձրեց, որ Կալիֆոռնիայում սրտի կաթվածից մահացավ գերմանալեզու գրողը։ Իսկ նրանցից, ովքեր այն օրերի հատուկենտ թերթերում գտան այդ հաղորդագրությունը, ո՞վ հիշեց նրան»։

Գերմանացի հումանիստին հիշեց, խոր սգաց հայ ժողովուրդը։ «Վերֆելի դագաղի մոտ ինձ թվաց, որ Մուսա լեռան զոհվածների հոգիները կանչում էին նրան, որ տանեն նրան հայկական պանթեոն»,— գրում է հայ նշանավոր պատմաբան Հրանդ Արմենը։

Տարիներ հետո Ավստրիայում և Ամերիկայում ապրող հայերը, հարգանքի տուրք մատուցելով գրողի հիշատակին, հակառակ այն տարիների բոլոր արգելքների ու դժվարությունների, Վերֆելի աճյունը Կալիֆոռնիայից բերեցին իր սիրած Վիեննա, որտեղ տեղի ունեցավ երկրորդ հուղարկավորությունը։ Սգո արարողությանը մասնակցում էր ամբողջ Վիեննան։

Քննելով Ֆրանց Վերֆելի ստեղծագործական ճանապարհի հասարակական-պատմական և գաղափարական-գեղարվեստական նախադրյալները, անհրաժեշտ է հատուկ կանգ առնել Պրագայի գերմանական գրականության և մասնավորապես էքսպրեսիոնիզմի վրա։

Պրագայի գերմանական գրականությունը 20-րդ դարի գերմանալեզու խոշոր գրական երևույթներից մեկն է։ Ռայներ Մարիա Ռիլկեի, Ֆրանց Կաֆկայի, Ֆրանց Վերֆելի և մյուս գրողների առկայությամբ այդ դպրոցն սկսեց արտացոլել դարաշրջանի կարևորագույն կենսական պրոբլեմները։

Պրագայի գերմանական գրականության ծագումը համընկավ Գերմանիայում նոր գրական հոսանքի՝ էքսպրեսիոնիզմի ծննդին, որը առավել հակասական և հետաքրքիր ուղղություններից մեկն է 20-րդ դարի արևմտաեվրոպական արվեստում։

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին տարիներին ավելի ու ավելի բացահայտ են երևան գալիս կապիտալիստական հասարակարգի խորքային հակասությունները։ Տնտեսական ճգնաժամերը անողոք հետևողականությամբ ցնցում են գերմանական տնտեսությունը։ Սուր հակադրության մեջ էին հարյուր հազարավոր աշխատավորների աղքատությունն ու հասարակության վերնախավերի հարստությունը։

Գերմանացի երիտասարդ արձակագիրների ու բանաստեղծների ստեղծագործության մեջ իրենց արտացոլումն են գտնում դարի հակասությունները. հին արժեքներն այլևս ուժի մեջ չեն, իսկ նորերը դեռ չեն որոշված, ավելի ու ավելի զգալիորեն է հասունանում դեպի համաշխարհային պատերազմ տանող ճգնաժամը։

Ռազմականացման դեմ տրամադրված դեմոկրատական երիտասարդությունը, միավորված ավագ սերնդի որոշ գրողների հետ, խմբվել էր 1910 թ. հիմնադրված «Ակցիոն» հանդեսի շուրջը։ Նրանց անվանում էին «ակտիվիստներ». նրանք ցանկանում էին, որ իրենց խոսքը գործուն լինի և մասնակցի քաղաքական պայքարին։ «Ակցիոնից» բացի կային էքսպրեսիոնիստական ուրիշ հանդեսներ ևս, այդ թվում նաև «Արարատը», որ հրատարակվում էր Մյունխենում (1919)։

Էքսպրեսիոնիստները չունեին հստակ ծրագիր, բայց նրանց միավորում էր անհաշտելիությունն ազգայնամոլության և ռազմականացման նկատմամբ, նրանք մերժում էին բուրժուական արվեստը, ձգտում արվեստով ստեղծել «արդյունաբերական աշխարհի նոր պատկերը»։ Դրա հետ մեկտեղ էքսպրեսիոնիստները ցանկանում էին, որ ժամանակակից արվեստն արտացոլի սոցիալական ու բարոյական աղաղակող հակասությունները՝ շռայլություն ու աղքատություն, կեղծիք ու ճշմարտություն։

«Շուրջբոլորն ամենուր սառչում են երեխաները, իսկ Նիոբեն* քարից է և օգնել չի կարող»,— գրում է Վերֆելն այդ տարիներին։ Ինչպես իրավացիորեն նշում է սովետական գրականագետ Ն. Պավլովան, օգնելու այդ մշտական կրքոտ ցանկությունը, ողբերգական անօգնականության զգացումը, եթե օգնել հնարավոր չէ, ուղեկցում է էքսպրեսիոնիզմին։

Խորթ, մեկուսացված շրջապատում ապրող Պրագայի գերմանական գրողները ավելի սրությամբ էին ընկալում ժամանակի հակասություն-

ները։ Այստեղից էլ վիրավոր, բողոքարկող հումանիզմի պոռթկումները, այստեղից էլ կասկածներն ու հիասթափությունները։

Էքսպրեսիոնիստ արվեստագետները շատ որոշակի էին իրենց քաղաքական համակրանքներում։ Պատահական չէ, որ Ա. Վ. Լունաչարսկու վկայությամբ, «...շատ մեծ թվով էքսպրեսիոնիստներ բացահայտորեն կանգնեցին հակաիմպերիալիստական, հակաբուրժուական տեսակետի վրա։ Բարձրագույն դասերը ճանաչվեցին աղետի մեղավորներ։ Բայց շատ քչերը գտան իսկական հեղափոխության ուղին, ելքն այն սարսափելի աշխարհից, որ նրանց էր ընձեռել պատերազմը։ Այդ պատճառով էլ... մենք ունենք մի խումբ բուրժուական բանաստեղծներ, անորոշ բողոքականներ, այնուհետև նաև պացիֆիստներ, որոնց ստեղծագործությունները համակված են ամենից առաջ տառապած մարդկության նկատմամբ խղճահարությամբ»[1]։

Այդ պացիֆիստների թվին էր պատկանում Ֆրանց Վերֆելն իր ստեղծագործական ճանապարհի սկզբին։

1918—1919 թթ. հեղափոխական կռիվների օրերին Վերֆելն իր ստեղծագործության մեջ մարմնավորում էր էքսպրեսիոնիստական մեծամասնության բնորոշ հույսերը, երազանքներն ու ողբերգական հակասությունները՝ սոցիալական արդարության ձգտումը մի կողմից, ամեն տեսակի բռնությունների դեմ հակակրանքը՝ մյուս։ Ահա թե ինչու հիտլերականները իշխանության գլուխ անցնելով, ոչնչացնում էին էքսպրեսիոնիստների գրքերն ու կտավները, իսկ էքսպրեսիոնիստական արվեստը հայտարարվեց «խորթ գերմանական ոսային», մի բան, որ մեկ անգամ ևս հաստատում է ֆաշիզմի ատելությունը արվեստի ազատության նկատմամբ։

Հին Արևելքի ժողովուրդների թվում հայերը ու նրա հարուստ մշակութային ժառանգությունը մեծ հետաքրքրություն էին առաջացնում էքսպրեսիոնիստների մեջ։ Ինչպես արդեն ասվեց, առաջին համաշխարհային պատերազմից հետո Մյունխենում հրատարակվում էր «Արարատ» հանդեսը։ «Արևելք» մյուս էքսպրեսիոնիստական հանդեսը խմբագրում էր Արմին Վեգները՝ հայտնի գերմանացի գրող-էքսպրեսիոնիստը, որին նույնպես խորապես հուզում էր հայ ժողովրդի ճակատագիրը։ Լինելով Թուրքիայում գերմանական բանակի սանիտարական ծառայության սպա, նա ականատեսը եղավ 1915 թ. իրադարձությունների, որ նշանավորեցին ֆաշիզմի սկզբնավորումը և 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը։ Վեգները բաց նամակ գրեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին՝ լի վրդովմունքով ու բողոքով։

Տողերիս հեղինակին բախտ է վիճակվել հանդիպելու Արմին Վեգներին Հայաստան կատարած նրա երկրորդ այցելության ժամանակ, 1968 թ., երբ նա ութսուներեք տարեկան էր։

Հիշելով Թուրքական բռնության զոհերի տանջալից տվայտանքները, նա այդ բռնությունները «համեմում էր» խելահեղ հանցագործի գործողությունների հետ։ Սակայն, ինչպես և Անատոլ Ֆրանսը, նա միշտ հավատում էր, որ Հայաստանը կվերածնվի։

«Այն փոքր բաժին արյունը, որ նա պահպանել է, թանկարժեք արյուն է, որից կծնվի հերոսական սերունդ»։ Նրա կանխագուշակումն իրականացավ։ Վեգները նորից եկավ Հայաստան՝ տեսնելու «պարտությունից չհաղթված ժողովրդին»[1]։

Դեռևս «Աշխարհի բարեկամը» բանաստեղծությունների առաջին ժողովածուում Վերֆելը սահմանեց էքսպրեսիոնիզմի հասարակական-էթիկական նորմերը արտահայտող իր գրական հավատամքը՝ հավատ բարու, մարդու նկատմամբ, մարդկանց ծառայելու ցանկություն, եղբայրության դրոշի ներքո նրանց միավորման երազանք։ Վերֆելի հասկացողությամբ մարդկանց բարություն անելով միայն մարդը կարող է երջանիկ լինել. «Ո՜չ, ես միայնակ չեմ, քանի որ ես բարի գործ եմ կատարել»,— բացականչում է նրա քնարական հերոսը։

«Մենք կանք» երկրորդ բանաստեղծական ժողովածուն վկայում է, որ անցած երկու տարվա ընթացքում Վերֆելն իր հայացքներում շատ բան վերագնահատել է, համոզվելով, թե որքան խորն են բուրժուական հասարակության սոցիալական հարաբերությունների ոլորտում գոյություն ունեցող ներքին հակասությունները։ Ներքին ունայնության զգացումը, միայնության գիտակցությունը բանաստեղծին մղում են դեպի միստիկա և աստվածախնդրություն։ Բնությունն այստեղ արդեն կորցնում է լուսավոր գույները, գամմայում տեղ են գտնում գորշ կամ էլ կորուկ հակադրվող սև-սպիտակ երանգները։

Հետագայում Վերֆելն այդ անելանելի շրջանը գնահատում է «Այդպես էլ ոչինչ չիմանալով» բանաստեղծության մեջ։

---

[1] **А. В. Луначарский.** Предисловие к сборнику «Современная революционная поэзия Запада». М., 1930, изд-во «Огонек».

[1] Геноцид армян в Османской империи. Под ред. М. Г. Нерсисяна, изд-во АН Арм. ССР, Ереван, 1960, стр. 395.

Երկու տարի անց Վերֆելը հրատարակեց «բանաստեղծությունների նոր գիրք՝ «Բարեկամը բարեկամի համար»։ Այն բացվում է «Ծիծաղ, շնչառություն, քայլ» ծրագրային բանաստեղծությամբ։

Երրորդ ժողովածուի պաթոսն արտահայտված է հետևյալ խոսքերում. «Արևից չի ճառագում լույսը, մարդու դեմքի ժպիտն է միայն լույս ծնում»։

Վերֆելն այստեղ էլ հավատարիմ է մնում մարդու նկատմամբ անսահման սիրո իր զգացմանը։ Նա ջերմորեն կոչ է անում մարդկանց՝ վերջ տալ սպանություններին։ Պատերազմի դեմ բողոքի արտահայտություն է 1917 թ. գրված նրա «Հեղափոխական կոչ» հայտնի բանաստեղծությունը։ Տասնամյակներ հետո միայն Վերֆելը հասավ այն գիտակցությանը, որ միայն զինված պայքարով կարելի է նվաճել աղատություն և անկախություն։ Միայն վերահաս ֆաշիզմի նախօրյակին է վերացական հումանիզմը զիջում իր տեղը ակտիվ պայքարի կոչին։

Բանաստեղծությունների առաջին ժողովածուի լույս տեսնելուց հետո Վերֆելը շուտով սկսում է զբաղվել դրամատուրգիայով։

Դրամատուրգիայի մեջ, ինչպես և պոեզիայում, նկատելի է Վերֆելի հափշտակվածությունը միստիկայով։ Այսպես, իր առաջին մեկ գործողությամբ «Ժամանում է Էլիզիումից»* (1911 թ.) պիեսում նա նկարագրում է անդրշիրիմյան աշխարհի բնակիչների ժամանումը երկիր։ Պիեսը հագեցած է միստիցիզմի մթնոլորտով, որն այնքան հատուկ էր այն շրջանի գրողներին։

1914 թ-ին գրված և 1915 թ. բեմադրված մյուս՝ «Տրոյուհիներ» պիեսի նախաբանում Վերֆելը գրում է. «Մարդկությունն իր շրջապտույտի մեջ նորից պետք է գար այն կետին, որտեղից ծնունդ է առնում Եվրիպիդեսի ողբերգությունների տիպի դրաման...»։ Այժմեականությունը մոտեցնելով Եվրիպիդեսի դարաշրջանին, Վերֆելն իր ժամանակակիցներին մի տեսակ ապրելու կամքի դաս է տալիս։ Իսկ գերմանացի հանդիսատեսը, որը լցնում էր թատերական դահլիճները, տրոյական պատերազմում կարող էր տեսնել սեփական տառապանքների արձագանքը։

Վերֆելի պիեսում տրոյացիների ընդհանուր վշտի ֆոնի վրա տրված է Հեկուբեի* ողբերգական կերպարը. նա կորցրել է ամեն ինչ՝ մտերիմներին, հարազատներին, հայրենիքը, բայց հրաժարվում է մեռնել։ Դրամատուրգը Հեկուբեին թույլ չի տալիս մահանալ այնտեղ, ուր այնքան մահեր էին տեղի ունեցել, որպեսզի հաստատի կյանքի հաղթանակը մարդկային տառապանքների նկատմամբ։

Վերֆելի առավել նշանակալից դրաման համարվում է «Հայելու մարդը» (1920), որի մասին թատերական քննադատ Ս. Բերեստովը իրավացիորեն գրում է. «Հայելու մարդը» պիեսի բեմադրությունը ռուսական թատրոնի համար, ներթափանցումը այդ եռերգության էության մեջ կլիներ ներթափանցում Տոլստոյի և Դոստոևսկու կախարդանքի մեջ, որ հմայել էր գերմանական միտքն ու արվեստը»[1]։

Դարասկզբին սերունդների պայքարի, ավանդների խզման, նրանց միջև եղած անհաշտ հակասությունների թեման դառնում է գլխավոր թեմաներից մեկը էքսպրեսիոնիստական գրականության մեջ։ «Հայրերի և որդիների» թշնամանքի մեջ էին շատերը տեսնում ոչ միայն իմպերիալիզմի դարաշրջանի հիմնական հասարակական կոնֆլիկտների ակունքը, այլև մարդկության զարգացմանը հատուկ հավերժական ողբերգության դրսևորումը։

Այդ թեման՝ երիտասարդների խռովությունը ավագների դեմ, իր արտացոլումն է գտնում Վերֆելի 1920 թ. գրած «Ոչ թե սպանողը, այլ սպանվածն է մեղավոր» նովելում։ Խորագրի հեգնական ենթատեքստն ինքնին շատ խոսուն է։ Պատանի հերոսի շուրթերով գրողը խիստ դատավճիռ է կարդում համաշխարհային պատերազմ սանձազերծած «հայր-ռազմամոլների» սերնդին։ Վերջերգում Վերֆելն անդրադառնում է իր իսկ պոեզիայից լավ ծանոթ բոլոր մարդկանց եղբայրության սիրած թեմային։

«Համադասարանցիներ» (1928) զուտ ռեալիստական պլանով գրված վեպում Վերֆելն ընթերցողների առջև կանգնում է որպես անմարդկային, սոցիալական անհավասարության աշխարհում մարդկայնություն որոնող։ Ելքը նա տեսնում է մարդու բարոյական մաքրման, նրա նկատմամբ սիրո մեջ։

Վերֆելի ստեղծագործության ըմբռնման համար շատ բան է տալիս նրա արձակի քննությունը, մասնավորապես «Վերդի» վեպը, որը դեպի «Մուսա լեռան քառասուն օրը» տանող կարևոր աստիճան է։

Դրա առաջաբանում հեղինակը մեջբերում է անում իտալացի մեծ կոմպոզիտորի նամակից. «Ճշմարտությունն արտացոլելը գուցե և լավ է, բայց ավելի լավ է, շատ ավելի լավ՝ ճշմարտություն ստեղծելը»։

Այդ ճշմարտության ստեղծման մեջ Վերֆելը տեսնում է իր նվիրական իդեալների մարմնավորումը։

«Վերդի» վեպի հիմնական կոնֆլիկտը արևմտաեվրոպական երկու

[1] **А. Берестов.** Экспрессионизм в немецкой драме — «Театр и музыка», 1922, № 12, стр. 313.

մեծ կոմպոզիտորների՝ Վերդիի և Վագների ստեղծագործական անհատականությունների ծայրաստիճան սրված հակադրությունն է։ Վերֆելը ստեղծում է Վերդիի ի ծնե դեմոկրատիզմը, իր նկատմամբ բարձր պատասխանատվությունը, որն ստիպեց ոչնչացնել երեսուն տարի իր մեջ կրած «Արքա Լիր» օպերայի պարտիտուրան։ Մեծ իտալացու անհանգիստ ոգին ըմբոստանում էր այն ամենի դեմ, ինչը հակասում էր ներքին ճշմարտությանը և հանգեցնում սեփական անձի գերագնահատությանը։ Իսկ Վագները ընդհակառակը, փառքով տարված, հեշտությամբ շրջանցում էր ամեն մի կասկած։

Վերֆելը խոստովանում էր, որ Վագների ստեղծագործությունները «բազմակողմանի պոետիկական-երաժշտական համաձուլվածք են» և ընդգծում էր, որ այդ ստեղծագործությունների հեղինակը, ճախրելով միջմոլորակային տարածություններում, բոլոր օրենքները ստորադասում էր սեփական «ես»-ին։

Վագների և Վերդիի կերպարները մարմնավորում են երկու մեծ արվեստագետ-արարողների հայեցակետերը։ Որպես կյանքի հաղթանակի խորհրդանիշ՝ կենսուրախ վենետիկյան դիմակահանդեսը վեպում հակադրված է Վագների մահվանը։ Վերդիի խմբերգերում Վերֆելը լսում է «Բոլոր բարի ձգտումների ճամփաները բացող մարդու մաքրությունն ու արիությունը»։ Վերդիին տրված վերջնական գնահատականը հետևյալ խոսքերն են. «Նա վերջին ժողովրդական ու համամարդկային արվեստագետն է»[1]։

Պատահական չէ, որ Վերֆելը դիմել է Վերդիին, որին անվանել են «քաղաքական փոթորիկներով ալեկոծ, մոլեգնության աստիճանի համարձակ ու խանդավառ» (Ա. Սերով) Իտալիայի ձայնն ու հոգին։

«Վերդի» վեպը ներքին վեճ է էքսպրեսիոնիզմի հետ դեպի ռեալիզմ, ժողովուրդ տանող ճանապարհին։ «Ապրել է պետք. դա նշանակում է սպանել պատրանքները, ավելի ու ավելի մոտենալ իրականությանը՝ ելնելով Վագներ»,— գրում է Վերֆելը։

Մարդ-արարողի հիմնից Վերֆելը գալիս է դեպի ժողովուրդ-արարողի հիմն, մեծ անհատի թեմայից դեպի Մուսա լեռան թեմա։

«Մուսա լեռան քառասուն օրը» վեպի համար, Ֆրանց Վերֆելի վկայությամբ, առիթ է հանդիսացել հետևյալ դրվագը. 1929 թ. Արևելքում ճանապարհորդելիս, Դամասկոսում նա այցելում է գորգագործական ֆաբրիկա։ Այստեղ տեսնում է աշխատող հայ երեխաներին, որոնց աչքերում սառել էր սարսափը կոտորածի, որի ականատեսն ու զոհերն էին նրանք։ Հայկական կոտորածի որոշ մանրամասներ Վերֆելը գիտեր թերթերից, բայց խոշտանգված երեխաների տանջալից տեսքը այնպիսի ուժով է ազդում նրա վրա, որ Վերֆելը որոշում է գրել այդ մասին։

Հարցազրույցներից մեկում նա ասում է. «Հայերի մասին գրելու գաղափարը իմ մեջ ծնվեց առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ, կարդալով եվրոպական թերթերը, ես ծանոթացա հայ ժողովրդի ողբերգությանը։ Ես այնպես էի ցնցված... որ որոշեցի այդ բոլորը մարդկությանը ներկայացնել պատմական վեպով։ Սիրիայում ես տեսա հայ երեխաներին, պատանիներին, քշված ժողովրդի դժբախտ բեկորներին, որոնց աչքերում դրոշմվել էին անցյալի փառքն ու սարսափները»[1]։

Վիեննայում, գիտական-Մխիթարյանների միաբանությունում, Վերֆելը երեք տարի ուսումնասիրում է Հայաստանի համարյա երեք-հազարամյա պատմությունը, նրա սովորությունները, մշակույթը։ Նա իմանում է, որ, ինչպես և Չեխիան, գտնվելով Արևմուտքի ու Արևելքի ճանապարհների խաչմերուկում և գրավելով ստրատեգիական ու առևտրական հարմար դիրք, Հայաստանը երկար ժամանակ եղել է արյունահեղ պատերազմների ասպարեզ։ Երկիրն անցել է սրընթաց վերելքների ու ողբերգական անկումների շրջաններ. նրա քաղաքներն ու գյուղերը մերթ բուռն ծաղկել են, մերթ վերածվել ծխացող ավերակների։ Սակայն ժողովրդի հոգևոր կյանքը չի մարել նույնիսկ ամենածանր փորձությունների տարիներին։ Պետական անկախությունը կորցրած, աշխարհով մեկ սփռված հայերն ամենուր դարձել են ակտիվ մտավորական ուժ նաև իրենց նոր հայրենիքում։

Գտնվելով ասիական բռնակալների լծի տակ, հայերը միշտ մնացել են քաղաքակրթության կրողներ ու ջատագովներ։ Ուրիշ ժողովուրդների հետ համատեղ, մասնավորապես հույների, նրանք Թուրքիայում զարգացնում էին արդյունաբերությունը, հողագործությունը, առևտուրը, ճարտարապետությունը, թատրոնը։ Նոր կտրեղենը, ասեղնագործվածքները, արծաթագործական արտադրանքի տեսակները, որոնցով մինչև հիմա հիանում են Եվրոպայում, ստեղծվում են գրեթե բացառապես հայերի ձեռքով։ Սուլեյմանյե հիանալի մզկիթը հայ ճարտարապետ Սինանի ստեղծագործությունն է։ Ստամբուլում ապրել և ստեղծագործել

---

1 Франц Верфель. «Верди», ГИХЛ, Москва, 1962, стр 383.

1 «Հերալդ Թրիբ», Նյու Յորք, 1965, № 96

է հայ ճարտարապետներ Պալյանների գերդաստանը, որն օսմանյան մայրաքաղաքում կառուցել է Բեյլերբեյ, Ջրաղան, Դոլմաբախչե պալատները։ Վերջինիս մասին ֆրանսիացի գրող և քննադատ Թեոֆիլ Գոթիեն գրել է, որ այն կարելի է ընդունել որպես «վենետիկյան ապարանք, բայց ավելի շքեղ, ընդարձակ, ավելի խնամքով երևակայած, ավելի նրբին՝ Մեծ Ջրանցքի ափերից տեղափոխված Բոսֆորի ափ»[1]։ Ինչպես հայտնի է, լուսավորչական խոշորագույն օջախներ են Մխիթարյանների միաբանությունները Վենետիկում (Սուրբ Ղազար կղզում) և Վիեննայում։ 1717 թ. Սուրբ Ղազար կղզին, որ ժամանակին ապաստարան էր ծառայում բորոտների համար, որպես պարգև տրվեց հայ աբեղա Մխիթար Սեբաստացուն և նրա աշակերտներին։ Սրանք Վենետիկ էին եկել հունական Մենտոնա քաղաքից, որտեղ նրանք ապրում էին թուրքական հորդաների սպառնալիքի տակ։ Այդ պարգևը հիմնավորվեց Վենետիկյան հանրապետության սենատի դեկրետով։ 1773 թ. Մխիթարյանների մի մասը բաժանվեց և հիմնեց իր մենաստանը նախ Տրիեստում, իսկ հետո՝ 1811 թվականին փոխադրվեց Վիեննա։ Տարեկան միայն վենետիկյան Մխիթարյաններին այցելում են 35—40 հազար զբոսաշրջիկ։ Իր հարստությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայերեն և այլ լեզուներով ձեռագրերի հավաքածուն, ինչպես նաև պատկերասրահը, ուր ցուցադրվում են իտալացի վարպետներ Ջորջոնեի, Տինտորետտոյի, հայ նկարիչներ Էդ. Շահինի, Այվազովսկու, Գ. Բաշինջաղյանի և ուրիշների աշխատանքները։ Մխիթարյաններն ունեն իրենց տպարանը, որտեղ գրքեր են տպագրում 36 լեզուներով։ Մխիթարյաններին անվանում են գիտության օրինակելի մշակներ։ Նրանք ձեռք են բերել ամբողջ գիտական աշխարհի հարգանքը։ Հայտնի է նաև, որ դեռևս Նապոլեոն Առաջինը, կործանելով վենետիկյան վանքերը, անձեռնմխելի է թողել հայկական վանքը Սուրբ Ղազար կղզում, նկատի ունենալով Մխիթարյանների միաբանության գործունեության ակադեմիական ուղղվածությունը։

Մխիթարյանների ամենաաշխատասեր աշակերտը կնախանձեր Վերֆելի ջանասիրությանը։ Նրա տրամադրության տակ դրված միաբանության հարուստ գրադարանը մանրազնին ուսումնասիրվեց։ Լրագրողներից մեկին Վերֆելն ասում է. «Այս գիրքը գրելու համար ես Վիեննայի Մխիթարյանների գրադարանում հարյուրավոր հատորներ եմ կարդացել և ութ ամիս աշխատել եմ գիշեր ու ցերեկ։ Մեկ անգամ մշակել և խմբագրել եմ վեպը և երեք անգամ արտագրել»։

[1] Барби А. В стране ужаса. Мученица Армения. Тифлис, 1919, стр. 119.

Վերֆելի մեծ նախորդ Բայրոնը ոչ պակաս ջանասիրությամբ Վենետիկի Մխիթարյան միաբանությունում ուսումնասիրել է հայերենն ու հայոց պատմությունը։ «Ինչպիսին էլ որ լինի հայերի ճակատագիրը,— գրել է Բայրոնը,— (իսկ այն շատ տխուր է) ինչ էլ նրանց սպասվի ապագայում, նրանց երկիրը միշտ էլ կմնա ամենահետաքրքիր երկրներից մեկը ամբողջ աշխարհում»։

Վերֆելը հայոց պատմությունն ուսումնասիրել է ոչ միայն որպես վեպի համար գործնականորեն անհրաժեշտ նյութ։ Աստիճանաբար նա հանգում է քաղաքական, փիլիսոփայական պրոբլեմների հարցադրման, պրոբլեմներ, որ այդ օրերին դառնում են հրատապ։ «Երբ կարդում ես հայոց պատմությունը, անխուսափելի հարց է ծագում քո մեջ՝ ինչու պետք է խլվեր խաղաղասեր, մեծ տաղանդի, մտքի, հոգու տեր ժողովրդի ապրելու իրավունքը»[1]։

Վերֆելի հարցի պատասխան կարող են դառնալ 1916 թ. ապրիլի 9-ին Փարիզում Անատոլ Ֆրանսի ելույթի հետևյալ խոսքերը. «Մենք հասկացանք, որ երկարամյա անհավասար պայքարը թուրք կեղեքիչի և հայի միջև դեսպոտիզմի, բարբարոսության պայքարն է ընդդեմ արդարացիության և ազատության ոգու։ Եվ երբ մենք տեսանք Թուրքիայի այդ զոհին մեզ հասած մարող աչքերով, որոնցում առկայծում էր հույսի շողը, ի վերջո հասկացանք, որ մեր այդ քույրը մահանում է հենց նրա համար, որ նա մեր քույրն է, և նրա մեղքն այն է, որ բաժանում էր մեր զգացմունքները, սիրում էր այն, ինչ մենք ենք սիրում, հավատում էր նրան, ինչին մենք ենք հավատում, և մեզ նման գնահատում էր իմաստությունը, արդարությունը, պոեզիան և արվեստը։

Այս էր նրա անքավելի հանցանքը...»[2]։

Այս նույն հարցը շուտով պետք է կրկնվեր նաև ուրիշ ժողովուրդների վերաբերյալ։

«Մուսա լեռան քառասուն օրը» վեպը, ինչպես և Վերֆելի ողջ ստեղծագործությունը, աչքի է ընկնում խոր մարդկայնությամբ։ «Այնտեղ, ուր հնարավոր է, ես մարդկայնություն եմ որոնում, որը հակադրվում է բարբարոսությանը. ես հավատում եմ, որ այսօրվա նացիոնալիզմի տեղը վաղը կգրավի բարձր ազգային հասկացողությունը»։

«Մուսա լեռան քառասուն օրը» վեպում Վերֆելը պատկերում է

[1] «Լրաբեր», Նյու Յորք, 1965, 13 նոյեմբերի (№ 36) էջ 1

[2] Геноцид армян в Османской империи. Под. ред. М. Нерсисяна. Изд-во АН Арм. ССР, Ереван, 1966, стр. 394, 395.

ողջ աշխարհից կտրված մի բուռ հայերի ճակատագիրը, որոնք պաշտպանում են իրենց կյանքը, պատիվն ու հավատի ազատությունը օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը կազմակերպած երիտթուրքական բարբարոսներից։

1915 թ. գարնանը, վայրագ բռնությունների օրերին մի շարք հայկական վիլայեթներում բնակիչները դիմադրություն ցույց տվեցին թուրք ժանդարմներին ու կանոնավոր զորքերին։ Այն ճանաչում գտավ ավելի քան մեկ ամիս տևած Վան քաղաքի ինքնապաշտպանությունը։ Հատկանշական է, որ կատաղի մարտերի ժամանակ դպրոցական նվագախմբերից մեկը անվերջ «Մարսելյոզ» էր նվագում և ուրիշ հեղափոխական քայլերգեր։ Թուրքական զորքերի հրամանատար Ջևդեթ բեյը, ինքն իրեն կորցրած, բղավում է. «Սրանք ինձ կատաղության կհասցնեն իրենց երաժշտությամբ»։

Հայերը թուրքական զորքերին նույնպես համառ դիմադրություն ցույց տվին Հարևան Մուշի վիլայեթում, լեռնային Սասունում, որտեղ ապրում էին սասունցիները և որտեղ էլ ստեղծվել է «Սասունցի Դավիթ» հայկական հերոսական էպոսը։

Սասունի երեսուն հազարանոց բնակչությունը, որն ապրում էր անմատչելի քարաժայռերում, միշտ էլ աչքի է ընկել ազատասիրությամբ։ Տեղեկանալով Արևմտահայաստանի մյուս շրջանների հայերի կոտորածների մասին, սասունցիները միասնական ռազմական ճամբար կազմեցին և երդվեցին կռվել մինչև վերջին մարդը։ Թուրքական կանոնավոր զորքերը, որ հաշվվում էին ավելի քան երեսուն հազար մարդ, մի քանի ամսվա ընթացքում չկարողացան թափանցել սասունցիների բանակատեղ։ Միայն զինամթերքի և սննդի պակասը օգնեց դահիճներին գրավելու երկրամասը։

«Երբ թուրքական զորքերը սկսեցին իրենց վերջին գրոհը, Սասունի պաշտպաններն արդեն փամփուշտ չունեին, վերջացել էին վառոդի պաշարները։ Ըստ էության թուրքական բանդաները ներխուժեցին ոչ թե ճամբար, այլ հսկայական դերեզմանատուն ու հիվանդանոց։ Քչերը, որ կենդանի էին մնացել, մորթվեցին... Այսպես ողբերգականորեն ավարտվեց սասունցի հայերի հերոսական պաշտպանությունը»,— գրում են ականատեսները։

Առասպելական ու նշանակալից է եղել նաև հայերի ինքնապաշտպանությունը սիրիական վիլայեթ Ադանայում, Մուսա լեռում։ Մուսա լեռ է կոչվում Ամանոս լեռնաշղթայի գագաթներից մեկը։ Այդ բարձունքը գտնվում է Անտիոքից (որն իր մեջ ընդգրկում է Ալեքսանդրեթի շրջանը)

հյուսիս-արևմուտք՝ երկու հարյուր կիլոմետր հեռու։ Հայերով բնակեցված շրջանը կոչվում է Ջելեբ Մուսա կամ Սուեդիա։ Այստեղ հայտնի են Յողոնօլուք, Խոր բեգ, Քեբուսիե և այլ հայկական գյուղեր։ Քեբուսիե գյուղը հենց Մուսա լեռան ստորոտին է, Միջերկրական ծովի ափին։

Ահա համառոտ պատմությունն այն իրադարձությունների, որ տեղի ունեցան Անտիոքի ծովածոցի ափերին և ընկած են Վերֆելի վեպի հիմքում։

1915 թվականի հուլիսի 13-ին այս երկրամասի հայկական վեց գյուղերում տների պատերին հայտարարություն էր փակցված, որով կարգադրվում էր պատրաստ լինել ութ օրից ուղևորվելու Միջագետք, Դեր Զոր անապատ, ուր, իբր, պետք է վերարնակեցվեր ոչ մուսուլման ազգաբնակչությունը։ Ենթարկվել այդ հրամանին նշանակում էր գնալ բացահայտ կործանման։ Ի պատասխան թուրքական կառավարության հրամանի, Մուսա լեռան յուրաքանչյուր բնակիչ հայտարարում է. «Ես այստեղ եմ ծնվել, այստեղ էլ կմեռնեմ։ Ես թշնամու հրամանով ըստրուկ չեմ դառնա։ Զեռքիս զենք ունենալով, փախստական չեմ դառնա»։ Պետք է նշել, որ հայերն այս հողում ապրում էին ավելի քան երկու հազար տարի։

Դա կասկածի ու հույսի, որոշման, տագնապի ութ երկար գիշեր ու ցերեկ էր։ Վեց գյուղերի բնակչությունը որոշեց Մուսա լեռան գագաթին կազմակերպել պաշտպանություն. ճամբար խփվեց, սկսվեցին դրա ամրապնդման աշխատանքները։ Տղամարդիկ ու կանայք, ծերունիներն ու երեխաները, թողնելով իրենց տները, բարձրացան լեռ։ Իրենց հետ վերցրին միայն հրացան, վառոդ, փամփուշտ, կերակուր ու ջուր։

Համոզված, որ հաղթելու են, թուրքերը որոշեցին գիշերը սպասել անտառում, որպեսզի առավոտյան վերջ տան լեռան գագաթին պաշտպանվող ապստամբներին։ Ինքնավստահությունը թշնամու վրա 200 սպանված նստեց, իսկ հայերին բերեց զենքի ու զինամթերքի համալրում։ Պարտությունից գազազած թուրքական հրամանատարությունը զենքի կոչեց մերձակա գյուղերի ողջ մուսուլմանական բնակչությանը։ Թուրքերը, ի վերջո, որոշեցին ապստամբներին սովամահ անել՝ ցամաքի կողմից կտրելով նրանց աստաքին աշխարհից։ Մյուս կողմից զառիթափն էր ու ծովը։

Օրերն անցնում էին, պաշտպանվածների վիճակը դառնում էր լրիվ հուսահատական։ Եվ ահա հայերը սկսում են փրկություն որոնել ծովի կողմից։ Նամակ է կազմվում երեք օրինակից, որով ապստամբները կոչ էին անում փրկել իրենց ու տանել տեղից ազատ հող։ Ընտրում են

երեք լավագույն լողորդների և նրանցից յուրաքանչյուրին հանձնում մեկական նամակ։

Դիմադրության հիսուներեքերորդ օրը միայն, 1915 թ. սեպտեմբերի 12-ի կիրակի առավոտյան երևում է ֆրանսիական «Գիշեն» ռազմանավը։ Լողալով դրան են մոտենում մի քանի մուսալեռցիներ։ Նավապետը էսկադրայի հրամանատարին հաղորդում է հայերի օգնության խնդրանքը։ Շուտով ափին է մոտենում «Ժաննա դ'Արկ» ռազմանավը ուրիշ պահականավերի ուղեկցությամբ։ Յովից կրակի պաշտպանությամբ Մուսա լեռան ապստամբներն իրենց ընտանիքներով՝ ընդամենը 4058 մարդ նավ են բարձրանում ու փրկվում։

Սեպտեմբերի 14-ին հերոս մուսալեռցիներին իջեցնում են Պորտ Սաիդում։ Այստեղ էլ նրանք հիմնվում են՝ ստեղծելով հայկական գաղութ։

1947 թ. Մուսա լեռան փառապանծ պաշտպանները հայրենադարձվում են Սովետական Հայաստան։ Նրանց մեջ էր նաև պաշտպանության ղեկավարներից մեկը՝ Եսայի Յաղուբյանը։ Մահացավ 1957 թ. Երևանում։ Ներկայումս հերոսական պաշտպանության անմիջական մասնակիցներից կենդանի են մի քանի տասնյակ մարդ։

Ֆրանց Վերֆելն իր վեպը կառուցել է փաստագրական նյութի վրա։ Նա օգտագործել է կոտորածի վերաբերյալ ականատեսների վկայությունները՝ «Հայ ժողովրդի գողգոթան» ժողովածուն, որ կազմել է գերմանա-հայկական ընկերության նախագահ Յոհաննես Լեփսիուսը։ Վեպում ներկայացված է նաև Յոհաննես Լեփսիուսը այնպիսին, ինչպիսին եղել է իրականում[1]։ Լեփսիուսի հումանիզմի բարոյական ըմբռնումները համընկնում են Ֆրանց Վերֆելի ըմբռնումներին, և դա է պատճառը, որ հենց այդ հերոսն է դառնում վեպի առաջատար գաղափարի ու տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ հեղինակային վերաբերմունքի արտահայտիչը։ Նրա խոսակցությունն այն ժամանակվա թուրքական իշխանության ղեկավարներից մեկի՝ Էնվեր փաշայի հետ վեպում հաղորդված է պատմական արժանահավատությամբ։ Խորիմաստ են նաև Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության աստիճանավորի հետ Լեփսիուսի հանդիպման տեսարանները։ Արտաքին գործերի մինիստրության գաղտնի խորհրդակցությունը, խոշընդոտելով Լեփսիուսի հանդիպումը մինիստրի հետ, մի նախադասությամբ արտահայտում է հայերի ողբերգության իմաստը. «Հայերը զոհ դարձան իրենց աշխարհագրական դիրքին։ Ուրեմն, ավելի լավ չէ՞, որ ազգային փոքրամասնությունները վերանան»։ Որպես հիմնավորումն իր խոսքի նա վկայակոչում է Նիցշեի աֆորիզմը՝ «Ընկնողին՝ հրիր»։

«Մուսա լեռան քառասուն օրը» վեպի հերոսներն ունեն նաև այլ իրական նախատիպեր՝ Տիգրան Անդրեասյանը, որի խոսքով տրվում է իրադարձությունների նկարագրությունը, Պետրոս Դմլակյանը և ուրիշներ։

Մուսալեռցիների հերոսական դիմադրության ու «Գիշեն» նավով նրանց փրկության մասին Տիգրան Անդրեասյանի պատմածը տպագրվել էր Լոնդոնում անգլերեն հրատարակվող «Արարատ» ամսագրի 1915 թ. նոյեմբերյան համարում։ Դա զետեղվել է Ջեյմս Բրայսի* ժողովածուի երկու հրատարակությունում, ինչպես նաև հետագայում առանձին բրոշյուրով լույս է տեսել ֆրանսերեն։ 1935 թ. տպագրվեցին Տիգրան Անդրեասյանի հուշերը, որտեղ տրված է Մուսա լեռան վրա հայերի հերոսական ինքնապաշտպանության առավել մանրամասն նկարագրությունը։

Անցյալին դիմելը բնորոշ է էքսպրեսիոնիստ գրողներին, որոնք այդ նյութով առաջադրում էին արդիականության հրատապ հարցերը։ Եվ պատահական չէ, որ նրանցից հետո 1932 թ. Թոմաս Մանն ասում էր. «Եվրոպայում մարդկության ապրած տառապանքներն ու վնասները անսովոր հետաքրքրություն ծնեցին մարդու պրոբլեմի նկատմամբ... նրա անցյալի, նրա ապագայի նկատմամբ»։

Զայրալից դատապարտելով հայերի ցեղասպանությունը, Վերֆելը աշխարհին նախազգուշացնում է Գերմանիայի ռազմամոլ շրջանների նացիոնալիստական քաղաքականության արյունալի հետևանքների մասին։ Իսկ որ կարևորն է, մուսալեռցիների հերոսական պայքարի օրինակով մարդկանց կոչ է անում ազատության ու անկախության համար ինքնազոհ պայքարի։

Լեհաստան ներխուժելու նախօրյակին, հիմնավորելով սլավոններին կոտորելու «իրավունքը», Հիտլերը վկայակոչում էր 1915—1916 թթ. երիտթուրքերի վայրագության անպատիժ մնալը. «Պետք չէ ուշադրություն դարձնել հասարակական կարծիքի վրա, հարկավոր է անխնա կոտորել տղամարդկանց, կանանց, երեխաներին, հարկավոր է ոչնչացնել բոլոր սլավոններին։ Այսօր այլևս ով է խոսում հայերի կոտորածի մասին»[1]։

[1] Материал о политике геноцида армян обобщен И. Лепсиусом в «Отчете о положении армян в Турции» 1916.

[1] Геноцид армян в Османской империи, АН Арм. ССР, 1966, стр. 12.

20-րդ դարի առաջին՝ հայերի ցեղասպանության զոհերի մասին այս ցինիկ դատողությունը ոչ մի կասկած չէր թողնում ուրիշ ժողովուրդների նկատմամբ նացիզմի նպատակների վերաբերյալ։

Իր «Ինքնորոշման վերաբերյալ դիսկուսիայի արդյունքները» հոդվածում Լենինը նշել է հայերի պայքարի արդարացի բնույթը. «Համենայն դեպս, հազիվ թե մեկը հանդգնի ժխտել այն, որ անեքսիայի ենթարկված Բելգիան, Սերբիան, Գալիցիան, Հայաստանը անեքսիա կատարողի դեմ իրենց «ապստամբությունը» կանվանեն «հայրենիքի պաշտպանություն» և ճիշտ էլ կանվանեն»[1]։

Ֆրանց Վերֆելն իրադարձություններն ընտրելիս, իմաստավորելիս և պատկերելիս առաջնորդվել է իր հիմնական գաղափարագեղարվեստական սկզբունքներով։ Վերջնականապես մի կողմ նետելով «չդիմադրելու» պասսիվ քրիստոնեական կանխադրույթները, Վերֆելը կանգնում է չարին ակտիվ, գործուն, հերոսական դիմադրություն ցույց տալու դիրքերում։ «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի հիմնական գաղափարն այն է, որ բռնության դեմ միայն զինված պայքարով ժողովուրդները կարող են ձեռք բերել իրենց ազատությունը։

Երիտթուրքերի կուսակցության գործունեությանը և նրանց վարած քաղաքականությանը Վերֆելի տված գնահատականը քննարկելիս պետք է առանձնացնել այդ պրոբլեմի երկու տեսանկյունները՝ երիտթուրքերի քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանության քաղաքականություն և կայսերական Գերմանիան որպես երիտթուրքերի արյունալի ծրագրի ոգեշնչող ու նրանց ակտիվ օգնական։

1914 թ. Անդրկովկասը դարձավ ռազմական գործողությունների ասպարեզ։ Պատերազմ էր մղվում Ռուսաստանի ու գերմանա-ավստրիական դաշինքին հարող Թուրքիայի միջև։ Կովկասին՝ նրա նավթային հարստություններով, տրվում էր կարևոր տեղ։ Սև ծովից մինչև Իրանի սահմաններն էր ձգվում կովկասյան ռազմաճակատը՝ ընդգրկելով Թուրքիայի հետ Վրաստանի ու Հայաստանի սահմանային շրջանները։ Գործակցելով գերմանական իմպերիալիստների հետ, երիտթուրքերի հետադեմ հանցախումբը Թուրքիան վերածեց Գերմանիայի վասալի և ռազմաքաղաքական դաշնակցի։ «Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին,— հայտարարում էին երիտթուրքերի ղեկավարները,— արդարացվում է մեր ազգային իդեալներով։ Մեր ազգի իդեալը պահանջում է ոչնչացնել մոսկովյան թշնամուն հանուն մեր կայսրության սահմանների հաստատման, որն իր մեջ է ներառնում ու միավորում մեր ռասայի բոլոր ճյուղերը»[1]։

Այս մտքի հաստատումը մենք գտնում ենք Էռնստ Վերների մի աշխատության մեջ, որտեղ հեղինակը բերում է գրող Զիյա Գյոքյալփի խոսքերը, որն առաջին բալկանյան պատերազմից հետո դեկավար տեղ էր գրավում երիտթուրքական կուսակցության մեջ և դարձավ թուրանիզմի «շեփորահարը»։ Գյոքյալփը գրում է. «Թուրքերի հայրենիքը ոչ Թուրքիան է և ոչ էլ Թուրքեստանը, այլ հեռավոր հավերժական երկիրը՝ «Թուրանը»։ Վերները գրում է, որ Գյոքյալփի համար Թուրանը մեծ թուրքերի հայրենիքն էր։ «Նա պետք է ձգվեր Ստամբուլից մինչև Ասիա և մեկընդմիշտ ոչնչացներ ռուսական պետությունը»[2]։

Հիշեցնենք Վերֆելի խոսքերը. «Հիտլերն ուզում է իր ձեռքով ճզմել... վրեժ լուծել Ֆրանսիայից, ոչնչացնել Ֆրանսիան և, հաղթելով, մարել ֆրանսիական միտքը»,— գրել է նա «Ce soir» թերթում։ Երիտթուրքերի կերպարը ներկայացնում է նաև ոչ պակաս դաժան կերպարը ժամանակակից պատմության՝ գերմանական ֆաշիստների։

Երիտթուրքերը համանման ծրագրով էին գործում հայերի նկատմամբ։ Մահը սպառնում էր ողջ ազգին. երկրի երեսից կվերանային նրա հազարամյակների մշակույթի, հնամենի քաղաքակրթության հիանալի նվաճումները, նրա աշխատանքի պտուղները, բարեկարգված գյուղերն ու քաղաքները հայրենիքում և բոլոր այն երկրներում, որտեղ նրան ապաստան էին տալիս։ Կվերանային նաև «Հայաստան» և «հայ» բառերը։ Այդպես էին որոշել երիտթուրքերը։

«Մուսա լեռան քառասուն օրը» վեպում Վերֆելը ստեղծել է բնավորությունների հարուստ ու բազմազան պատկերասրահ. նուրբ հոգեբանական բնութագրով են աչքի ընկնում վեպի գրեթե բոլոր կերպարները, որ խորապես ժողովրդական են և վարպետությամբ ստեղծված։

Գաբրիել Բագրատյանը վեպի գլխավոր գործող անձն է, շռայլորեն օժտված, ոգեշունչ խառնվածք։ Նրան մի տեսակ լրացնում է մեկ այլ հերոս՝ Տեր-Հայկազունը, որի մեջ Վերֆելը բացահայտում է հայ ժողովրդի բնավորությունը, նրա հոգեկան հարստությունը։ Ժողովրդի կերպարը թերի կլիներ առանց մտավորականության տիպիկ ներկայացուցչի,

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 30, էջ 36

[1] Г. В. Гарибджанян. В. И. Ленин и большевистские организации Закавказья, Ереван, 1967, стр. 233.

[2] Э. Вернер. Пантуркизм и некоторые тенденции историографии. Вестник общественных наук, 1966, Ереван, стр. 84.

որը ապրում, տառապում և զոհվում է իր ժողովրդի հետ։ Երբ Բագրատյանը դիմում է ժողովրդին պաշտպանություն կազմակերպելու կոչով՝ «Մենք հինգ հազար հոգի ենք, մենք չենք կարող սպասել ողորմածության», հասարակ մարդիկ պաշտպանում են նրան։ Բագրատյանը մեծ ոգևորություն է ապրում՝ որոշելով սեփական ճակատագիրը կապել իր ժողովրդի հետ։ Ժողովուրդն էլ վստահում է Բագրատյանին լեռան պաշտպանության ռազմական ղեկավարությունը։

Մյուս հերոսը՝ դեղագործ Գրիգորը, Յողոնօլուքի ամենանշանակալից դեմքերից մեկը, Սիրիայի առավել հարուստ գրադարանատերը, զառնում է, սակայն, բարոյական ինքնասպան միայն այն պատճառով, որ չի կարողանում ազատագրվել իր հոգեկան աշխարհի նեղ շրջանակներից և իր ժողովրդի հետ ելնել պայքարի։ Սրա մեջ ենք մենք տեսնում Վերֆելի ստեղծած Գրիգորի կերպարի խոր իմաստը։ Վերֆելը այս բարդ, հակասական կերպարով, ինչպես նաև Սարգիս Կիլիկյանի կերպարով, որի աչքի առաջ կոտորում են նրա ողջ ընտանիքը, ընթերցողին համոզում է, որ ոչ մի վիշտ, ոչ մի անձնական ապրում մարդուն չեն կարող կտրել իր ժողովրդի ճակատագրից։ Մարդու արժանիքների իսկական չափանիշը հայրենիքի նկատմամբ նրա սիրո և հավատարմության ուժն է։

«Մուսա լեռան քառասուն օրը» վեպում Վերֆելը մինչև վերջ բացահայտում է տղամարդկանց հետ հավասարապես պայքարելու պատրաստ հայ կնոջ կերպարը։ Իսկուհու և Անթառամ Մայրիկի կերպարներում տրված է հարազատ ժողովրդի պատվի ու ազատության համար պայքարի պատրաստ հայուհու ընդհանրացված կերպարը։ Իսկուհին օժտված է իր ժողովրդի թանկ հատկությամբ, տառապյալի իր ողբերգության մեջ պահպանում է մարդկայնությունն ու սեփական արժանապատվության զգացումը։

Վեպի էջերում Վերֆելը տալիս է նաև երեխաների կերպարները։ «Արևելքում,— գրում է նա,— հայրերն ու երեխաներն ապրում են համերաշխ և երեխաներն այնտեղ ծնվում են, որպեսզի շարունակեն ու բազմապատկեն իրենց հայրերի փառքը»։ Վեպում ապագա Հայաստանը մարմնավորում են պատանի հերոսներ Հայկն ու Ստեփանը։ Ստեփանի կյանքի փարիզյան տարիները մոռացվում են, չթողնելով և ոչ մի հետք։ Գալով իր հայրերի հայրենիքը, նա իրեն զգում է հայրենիքի հետ խորապես կապված։ Անհոգ մանկության փոխարեն մուսալեռցիների երեխաներին սպասում էր բոլորովին այլ ճակատագիր։ Մեծ ուժով է Վերֆելը նկարագրում ոչ միայն խեղված երեխաներին, Հակոբին ու մյուս-

ներին, որոնց վրա կոտորածը թողել է իր հետքը, այլև նրանց, ովքեր զենքերը ձեռքներին վրեժ լուծելով իրենց ժողովրդի միլիոնավոր զոհերի համար, աշխատում են արժանի լինել իրենց հայրերին։

Իր «Սարսափների երկրում» գրքում Անրի Բարբին, ֆրանսիացի քննադատն ու լրագրողը, նկարագրվող իրադարձությունների մասնակիցը գրում է. «Փայլուն անունով տասը տարեկան մի աղջիկ ասաց. «Երբ իմ մանուկ եղբորը իմ ձեռքերի վրա սպանեցին, ես պապանձվեցի։ Ես դեռ կարող էի գոռալ, երբ սպանեցին մայրիկիս, բայց դրանից հետո՝ երբեք...»։ Նրա լեզուն սկսեց փաթ ընկնել, և նա լռեց։ Այդպես կիսահամր նա մնաց մի քանի շաբաթ և նույնիսկ հիմա էլ, երբ մի փոքր հուզվում է՝ համրանում է»[1]։ Այդ գազանությունները ցնցեցին ամենաանվեհեր մեծերի հոգիները, էլ ինչ մնաց երեխաների փխրուն հոգեկանը չխարխլվեր։

Վերֆելի կինն իր հիշողություններում, հաճախ անդրադառնալով Դամասկոս կատարած իրենց այցելությանը, ընդգծում է. «Ուր էլ որ նա գնում էր, նրան հետապնդում էր Դամասկոսում տեսած հայ փախըստականների երեխաների կերպարը, երեխաներ, որոնք ցնցեցին նրա գիտակցությունը և չէին դադարում ծվատել նրա հոգին»։

Վեպի գեղարվեստական ոճական ինքնատիպությանը բնորոշ է տարբեր արտահայտչամիջոցների համադրությունը. և՛ պատմական իրադարձությունների մասին էպիկական պատումի գծերը, և՛ քնարական պաթոսը՝ հերոսների ապրումները նկարագրելիս, և՛ լայն փիլիսոփայական-էթիկական ընդհանրացումը։

Ինչպես պատմական ժանրի վեպերում, այստեղ ևս գեղարվեստորեն իմաստավորված է պատմական նյութը, որն էլ իր հերթին օգնում է առավել ամբողջությամբ բացահայտելու պատմական ռեալ իրադարձությունների էությունն ու իմաստը։ Վեպի սյուժետային զարգացման հիմք են ծառայում ոչ այնքան հերոսների անձնական ճակատագրերը, որքան հարստահարիչների ու դահիճների դեմ ողջ ժողովրդի անձնազոհ պայքարի բուն պատմական պրոցեսը։

Վերֆելի վեպի նկատմամբ մեծ հետաքրքրությունն են վկայում նրա բազմաթիվ վերահրատարակություններն ու թարգմանությունները։ Միայն երկու տարում՝ 1934—1935 թթ. վեպը թարգմանվեց աշխարհի 36 լեզուներով։ Տողերիս հեղինակին գրած նամակում Աննա Զեգերսը իրավացիորեն նշում է. ««Մուսա լեռան քառասուն օրը» գիրքը Ֆրանց

[1] **Анри Барби.** В стране ужаса. Мученица Армения. Тифлис. 1919, стр. 166.

Վերֆելի իրոք վիթխարի աշխատանքն էր։ Այն անջնջելի տպավորություն է թողել այն մարդկանց վրա, ովքեր ընդհանրապես ոչինչ չգիտեին այդ իրադարձությունների մասին...»[1]։

Ամերիկայում վեպն առաջին անգամ երևաց անգլերեն 1934 թ. նոյեմբերին և լույս ընծայվեց «Վիկինգ պրես» հրատարակչության կողմից 200 հազար օրինակով։ Ավելի քան 30 տարի այդ վեպը տարբեր երկրներում որպես դասական գործ վերահրատարակվել է «Ժամանակակից վեպի գրադարան» շարքով։ Դիրքն այնպիսի տարածում էր գտել, որ 1965 թ. նրա տպաքանակն անցավ մեկ միլիոն օրինակից, իսկ 1979—1981 թթ. վեպը Ավստրիայում լույս տեսավ որպես գրպանի գիրք, մեծ տպաքանակով։

Ընդհանուր առմամբ Վերֆելի ստեղծագործությանը նվիրված հետազոտություններն ու մեկնաբանությունները ստեղծեցին մի գրականություն, ուր դրսևորվում են տարբեր կարծիքներ, դատողություններ։ Սակայն Վերֆելի ստեղծագործության գագաթը հանդիսացող «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը միշտ էլ ծնել է համընդհանուր հիացմունք։

Վերֆելն այստեղ հանդես է գալիս և՛ որպես անցյալի հերոսներին ու տառապյալներին փառահեղ հուշարձան կերտող արվեստագետ-տաբեգիր, և՛ որպես մարդկությանը մեծագույն սպառնալիքներից, նոր ժողովրդասպաններից նախազգուշացնող արվեստագետ-մարգարե։

Դա է վեպի անանց նշանակությունը։ Դա գեղարվեստական վկայություն է տառապանքների ու հերոսության և, դրա հետ մեկտեղ, մարմնավորում ամենաբարձր բարոյական արժանիքների՝ վեհ հայրենասիրության, բռնության ու բարբարոսության դեմ անզիջում պայքարի։ Դա առ այսօր հրատապ նախազգուշացում է՝ մարդկությանը դեռևս սպառնացող վտանգների հիշեցում։

ՄԵՋԻ ՓԻՐՈՒՄՈՎԱ

[1] Из переписки Анны Зегерс с автором этих строк. Письмо Анны Зегерс от 12 декабря 1966 года.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

էջ 8. ԼԵՈՆԻԴԱՍ — Սպարտայի թագավոր, ապրել է մ. թ. ա. VI—V դդ.։ Պայքարել է Պարսկաստանի թագավոր Քսերքսեսի դեմ, զոհվել է Թերմոպիլեի մոտ տեղի ունեցած նշանավոր ճակատամարտում, սպարտացիների փոքրիկ ջոկատով պաշտպանելով հունական զորքերի նահանջը։ Հին գրականության մեջ Լեոնիդասը մարմնավորում էր սեր հայրենիքի նկատմամբ, խիզախություն ու զինվորական սխրանք։

էջ 13. ԱՆՏԻՈՔ (prf.՝ Antakya) — քաղաք Սիրիայում։ Հիմնել է Սելևկոս I-ին Նիկատորը մ.թ.ա. 301 թվականին։ Հելլենիստական մշակույթի խոշորագույն կենտրոն. մեծությամբ ու նշանակությամբ Անտիոքը համեմատվել է Հռոմի հետ։ Քաղաքը հատկապես ծաղկման հասավ հռոմեական կայսրերի օրոք։ Հայոց թագավոր Տիգրան II-ը նվաճելով Անտիոքը, մ.թ.ա. I դարում այն դարձրեց իր արքունական քաղաքը, որտեղ իր պատկերով դրամներ էին հատվում։ Անտիոքում միշտ եղել են բազմաշատ հայ բնակչություն և եպիսկոպոսություն, իսկ XI դարում քաղաքի կառավարիչները եղել են նաև հայեր։ Հետագայում քաղաքը ենթարկվեց խաչակիրների հարձակումներին, իսկ XIII դարում ամբողջովին կործանվեց Եգիպտոսի սուլթան Բեյբարսի կողմից։

էջ 20. ՍԵԼԵՎԿՅԱՆՆԵՐ — թագավորական դինաստիա, կառավարում էր Սելևկոս I Նիկատորի հիմնած Սելևկիան՝ հելլենիստական խոշորագույն պետությունը (IV դ. մ.թ.ա.)։ Նշանավոր էին Տիգրիսի Սելևկիա և Պիերիայի Սելևկիա քաղաքները, որոնք կործանվեցին պարսկական (VI դ.) և արաբական (VII դ.) նվաճումների հետևանքով։

էջ 21. ԻԹԹԻՀԱԹ (prf.՝ Ittihat ve terraki — միություն և առաջադիմություն) — թուրքական բուրժուակալվածատիրական ազգայնամոլական կուսակցության անվանումը։ Երիտթուրքերը այդ կուսակցության անդամներ էին։ Իթթիհաթը կազմակերպվել է 1889 թ.։ 1908 թ. գրաֆելով իշխանությունը, երիտթուրքերը պահպանեցին Օսմանյան կայսրության ժողովուրդներին թուրքացնելու սուլթանի քաղաքականությունը։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, որպես Գերմանիայի դաշնակից, այդ կուսակցության պարագլուխները մարում էին պանթյուրքիզմի և պանիսլամիզմի չարաբնեզ քաղաքակա-

թյուն, որը առավել ցայտուն դրսևորվեց հայ ժողովրդի ցեղասպանությունում: Հետագայում այդ կուսակցությունը կառավարող եռյակը՝ Էնվեր փաշան, Թալիաթ փաշան, Ջեմալ փաշան և այլ հանցագործներ հասարակական կարծիքի ճնշման տակ հեռակա կարգով (քանզի նրանք փախել էին) զինվորական տribունալով դատապարտվեցին մահվան: Երիտթուրքական այլ գործիչների թվում Թալիաթն ու Ջեմալը սպանվեցին հայ վրիժառուների կողմից:

էջ 43. ՍԻՍԻ կամ Փոքր Հայքի կաթողիկոսություն— հոգևոր ու եկեղեցական վարչական դերով էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսությունից հետո երկրորդը: Հիմնվել է 1446 թ. Կիլիկյան Հայաստանի Սիս քաղաքում: Հիմնադրել է Կարապետ 1-ին Եվդոկացին, որը սկզբում հավակնում էր դառնալ ամենայն հայոց կաթողիկոս և պայքարում էր Էջմիածնի դեմ: Սակայն այդ պայքարն աստիճանաբար բուլացավ և նրա հաջորդների օրոք լրիվ դադարեց: XVI դ. սուլթան Սուլեյման I-ը գրավեց Կիլիկիան Սիս մայրաքաղաքով և դարձրեց Օսմանյան կայսրության գավառ: 1909 թ. Ադանայի ջարդերից և 1915 թ. ցեղասպանությունից հետո Կիլիկիայի կաթողիկոսի աթոռանիստը տեղափոխվեց Բեյրութի (Լիբանան) մոտ գտնվող Անթիլիաս գյուղ:

էջ 43. Կոնիա— քաղաք Թուրքիայի հարավում, նույնանուն վիլայեթի վարչական կենտրոնը:

էջ 48. ՍՈՒՐԱՀ (արաբ.)— գրական ստեղծագործության մաս, գլուխ. այդպես է կոչվում իսլամական կրոնի «սրբազան գրքի»՝ Ղուրանի գլուխներից մեկը: Ղուրանը բաղկացած է 114 սուրահից:

էջ 51. Մուսա լեռան շրջակայքում մնացել է դրախտի մուրը... Աստվածաշնչի աշխարհագետ մեկնաբանները հենց այստեղ էլ, սիրիական ծովեզերքին, Միջագետքի խորքերը չհասան, սիրով զետեղում են եդեմի այգին:

Աստվածաշնչի մեկնաբաններից ոմանք դրախտը «զետեղել են» Հնդկաստանի հյուսիսում, ոմանք՝ Ասորիքում, բայց մեկնաբանների մեծամասնությունը զետեղում է այն Տիգրիսի և Եփրատի հովտում, Հայկական լեռնաշխարհում: (Այստեղից էլ հայերի մեջ տարածված են «Հայաստան՝ երկիր դրախտավայր», «Հայաստան՝ դրախտային երկիր» արտահայտությունները): Կարծիքը, որ դրախտը գտնվել է Հայաստանի տարածքում, միջնադարում շատ է տարածված եղել Եվրոպայում: Միջնադարյան «Դոկտոր Ֆաուստի մասին» լեգենդում կարդում ենք. «Կովկասը, որ Հնդկաստանի և Սկյութիայի միջև է, ամենաբարձր կողքն է իր լեռներով ու գագաթներով: Դոկտոր Ֆաուստը... հմտացված էր, որ այնտեղից վերջապես կարող է տեսնել դրախտը: Գտնվելով Կովկաս կողքու այն բարձունքին, տեսավ... հեռվից բարձունքին հեռավոր մի լույս... հրեղեն մի հոսանք, որ գոտեբռում էր կողքակի չափ մի տարածություն: Տեսավ նաև, որ այդ հովտով հոսում

են չորս մեծ գետեր, մեկը՝ Հնդկաստան, մյուսը՝ Եգիպտոս, երրորդը՝ Հայաստան և չորրորդը՝ նույնպես այնտեղ: Եվ ցանկություն ունեցավ իմանալ իր տեսածի պատճառն ու հիմքը, ուստի և վճռեց... հարցում անել իր ոգուն, թե ինչ է այդ: Իսկ ոգին բարյացակամ խոսեց ու ասաց. «Դրախտն է, որ գտնվում է արևելքում ... իսկ այն չուրը, որ բաժանվում է չորս մասի, հոսում է դրախտի ակունքից և կազմում այն գետերը, որոնք կոչվում են Գանգես կամ Փիսոն, Գիհոն կամ Նեղոս, Տիգրիս և Եփրատ»:(«Легенда о докторе Фаусте», изд. АН СССР, М.—Л., 1958, стр. 97—98): Նոր ժամանակների գրողներից այդ վարկածին հետաքրքիր ձևակերպում է տվել Թոմաս Մանը «Հովսեփն ու իր եղբայրները» վեպում. «Իսկ որտե՞ղ է եղել դրախտը», «այգին արևելքի», հանգստի ու երջանկության վայրը, մարդու հայրենիքը...»: Պատանի Հովսեփը դա նույնքան լավ գիտեր, որքան ջրհեղեղի պատմությունը, և նույն աղբյուրներից: Նա միայն ժպտում էր, երբ սիրիացի անապատականները դրախտ էին հայտարարում Դամասկոսի մեծ օազիսը... Քաղաքավարությունից նա ուսերը չէր թոթվում, սակայն ներքուստ՝ թոթվում էր, և այնժամ Միցրաիմի բնակիչները հայտարարում էին, թե այդ այգին, ինքնին հասկանալի է, գտնվում է Եգիպտոսում, քանզի Եգիպտոսն է տիեզերքի կենտրոնը: Սենաարի գանգրամորուս բնակիչները նույնպես գտնում էին, որ... Բաբելոնը... տիեզերքի սուրբ կենտրոնն է... Դրախտի մեզ հասած նկարագրությունը մի բանում է նշմարիտ: Եդեմից... գետ էր դուրս գալիս դրախտը ոռոգելու համար և հետո բաժանվում էր չորս գետերի՝ Փիսոն, Գիհոն, Եփրատ և Հիդեկել: Փիսոնը, ինչպես ավելացնում են մեկնաբանները, կոչվում է նաև Գանգես, Գիհոնը Նեղոսն է... Իսկ ինչ վերաբերում է Հիդեկելին, դա Ասորիքի մոտով հոսող Տիգրիսն է: Վերջինը ոչ մեկի մոտ առարկություն չի առաջացնում: Առարկություններ, այն էլ օտարակշիռ, առաջացնում են Փիսոնն ու Գիհոնը Գանգեսին ու Նեղոսին նույնացնելը: Նեքաղրում են, որ խոսքը վերաբերում է Կասպից ծով թափվող Արաքսին ու Սև ծով թափվող Հալիսին, և հետևաբար, դրախտը թեև գտնվում էր բաբելոնացիների տեսադաշտում, իրականում գտնվում էր ոչ թե Բաբելոնում, այլ Հայաստանի լեռնային շրջանում, Միջագետքի հարթության հյուսիսում, որտեղ իրար մոտիկ էին գտնվում վերոհիշյալ չորս գետերի ակունքները:

Այդ կարծիքը միանգամայն խելամիտ է թվում: Չէ որ, եթե, ինչպես հավաստում են արժանահավատ աղբյուրները, «Փրատը» կամ Եփրատը դուրս է գալիս դրախտից, ապա չի կարելի ընդունելի համարել, որ դրախտը գտնվում է ինչ-որ տեղ Եփրատի մոտ: Բայց, ընդունելով դա և առաջնության դափնին տալով Հայաստանին, ընդամենը մի քայլ կանենք դեպի հաջորդ նշմարտությունը...» (Томас Манн, «Иосиф и его братья», изд. «Художественная литература», М., 1968).

էջ 55. ՌԵՐԴՍՈՆ ԱՆՐԻ (1859—1941)—XIX դարի վերջի և XX դարի առաջին կեսի եվրոպական խոշորագույն մտածողներից մեկը, փիլիսոփա, իդեալիստ, փիլիսոփայության մեջ այսպես կոչված «ինտուիտիվիզմի» ներկայացուցիչ, Նոբելյան մրցանակի (1927) դափնեկիր:

էջ 70. «...մեր հնագույն ազգը Հռոմից առաջ քրիստոնեությունն ընդունել է իբրև պետական կրոն»:

Քրիստոնեությունը Հայաստանում սկսել է տարածվել I դարից. II և III դարերում արդեն կային քրիստոնեական եկեղեցիներ, սակայն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հայտարարվեց 301 թ. Տրդատ 3-րդ թագավորի կողմից, որն ինքն էլ քրիստոնեություն ընդունեց: Հռոմեական կայսրությունը քրիստոնեություն ընդունեց 313 թվականին՝ քրիստոնեական եկեղեցին իրավաբանորեն ընդունելու մասին Միլանի էդիկտով: 321 թ. հռոմեական կայսր Կոստանդին Մեծը (մոտ 285—337) քրիստոնեական եկեղեցուն լայն իրավունքներ տվեց, իսկ ինքը քրիստոնեություն ընդունեց կյանքի վերջում, 337 թ., իր ուպազա կենսագիր եպիսկոպոս Եվսեբիոսից:

էջ 84. ԱԴԱՆԱ — քաղաք հարավարևելյան Կիլիկիայում, Թուրքիայի համանուն վիլայեթի վարչական կենտրոնը: Երևմնի հելլենիստական կուլտուրայի քաղաք, XII—XIV դդ. մտնում էր Կիլիկիայի հայկական թագավորության կազմում: 1909 թ. իշխանության գլուխ նոր անցած Երիտթուրքերը մեծ կոտորած կազմակերպեցին Ադանայում և վիլայեթում, ապրիլի 1—4-ը և 12—14-ը Ադանայի և Հալեպի վիլայեթներում սպանելով 30000-ից ավելի հայերի:

էջ 136 «... Ո՞վ է Գրիգոր Լուսավորիչը, ի՞նչ բան է Քաղկեդոնի ժողովը, ի՞նչ առավելություն ունի համածին ուսմունքը հռոմեական կաթոլիկ աշխարհայացքի համեմատությամբ»:

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ կամ ԳՐԻԳՈՐ ՊԱՐԹԵՎ (մոտ 239—325/326 թթ.) կրոնական-քաղաքական գործիչ, 302 թվականից հայ կաթողիկոս. ըստ մեզ հասած աղբյուրների, մանկությունն ու պատանեկությունը անց է կացրել Կապադովկիայում, Կեսարիա քաղաքում, ուր մկրտվել և կրթություն է ստացել: 287 թ. քարոզելու նպատակով վերադարձել է Մեծ Հայք և ծառայել Տրդատ III թագավորի արքունիքում: Հռոմեական կայսր Դիոկլետիանոսի նման, որի օգնությամբ գահ էր բարձրացել, Տրդատ III-ը շարունակում էր հալածել քրիստոնյաներին, որից չխուսափեց նաև Գրիգոր Լուսավորիչը: Սակայն, որպես դաշնակցի, հիասթափվելով Դիոկլետիանոսից, Տրդատ III-ը վերջ տվեց քրիստոնյաների հալածանքներին, նախընտրելով այդ ուժն օգտագործել իր նպատակներին: Քրիստոնեական համայնքները Հայաստանում գոյություն ունեին I և II դարերից, բայց III դարում արդեն քրիստոնեությունը դադարեց Հայաստանում ճնշվածների կրոն լինելուց, իսկ 301 թ. հաստատվեց որպես պետական կրոն: Բայց Գրիգոր Լուսավորիչը դեռ շատ բան խնդիր ուներ անելու: 302 թվականին նախարարների ուղեկցությամբ թագավորական հրովարտակով մեկնեց Կեսարիա, ուր ձեռնադրվեց Հայոց եպիսկոպոսապետ: Հետո, արամադրության տակ ունենալով մեծ բանակ, սկսեց երկրում ոչնչացնել մեհյանները և եկեղեցիներ հիմնել: Աշտիշատում քանդեց հեթանոսության հնագույն կենտրոններից մեկը և հիմնեց Մայր եկեղեցին: Վաղարշապատում (այժմ էջմիածին) մեհյանի տեղում հիմնեց Կաթողիկե եկեղեցին: Նրա անվան հետ են կապված Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի և Ս. Շողակաթի վկայարանների կառուցումը: Հին հեթանոսական շատ տոներ փոխարինեց քրիստոնեական տոներով, մեհյանների տիրույթները հանձնեց եկեղեցիներին, հիմնեց նոր դպրոցներ, որտեղ ուսուցումը կատարվում էր քրիստոնեական կրոնի պաշտոնական լեզուներով՝ ասորերենով և հունարենով:

ՀԱՄԱԾԻՆ ՈՒՍՄՈՒՆՔ — կրոնաքաղաքական ուսմունք, հիմնադրվել է V դ.: Պաշտպանում էր այն տեսակետը, թե Հիսուս Քրիստոսին հատուկ է միայն աստվածային ծագումը, այսինքն Քրիստոսը ոչ թե մարդ աստված է, այլ՝ աստված: Քաղկեդոնի 451 թ. տիեզերաժողովում համածին ուսմունքը դատապարտվեց: Սակայն հայերը Դվինի 563 թ. ժողովում մերժեցին Քրիստոսի երկակի բնության մասին Քաղկեդոնի ժողովի ձևակերպումը, ընդունելով Քրիստոսի աստվածային և մարդկային ծագման միասնությունը: Այդպիսով անջատվեցին ուղղափառ եկեղեցուց, որպեսզի դիմագրավեն Բյուզանդիայի ագրեսիան, և ստեղծեցին իրենց ինքնուրույն՝ համածին ուսմունքին հետևող եկեղեցին:

էջ 149. ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒ (1856—1946) — ամերիկյան դիվանագետ, 1913—1916-ին ԱՄՆ-ի դեսպանն էր Թուրքիայում: Հայտնի է իր հուշագրություններով, որոնց մեջ շարադրված են իր զրույցները Էնվերի, Թալիաթի և Երիտթուրք այլ պարագլուխների հետ: Իր «Դեսպան Մորգենթաուի հիշողություններ» (1918) գրքում փաստական նյութերի հիման վրա նկարագրել է արևմտահայության ողբերգությունը՝ այն համարելով «պատմության ամենաբարբարոսական իրադարձությունը»:

էջ 163. ԵՆԻՉԵՐԻՆԵՐ (թուրք. yeniçeri-բառացի՝ նոր զորքեր) — թուրքական կանոնավոր հետևակ, որ երկրում ոստիկանության դեր էր կատարում և գահի հենարանն էր: Ստեղծվել է XIV դ.: Սկզբում հավաքագրվում էին ռազմագերիներից, իսկ հետագայում՝ քրիստոնյա պատանիներից, որոնց խլում էին ծնողներից և վարժեցնում ռազմական գործին: Վերացվել է XIXդ.:

«Ենիչերական երաժշտությունը» գերազանցապես կատարվում էր ճարվածային գործիքներով: Աչքի էր ընկնում աղմկալից բնույթով:

էջ 168. ԲԻՍՄԱՐԿ ՕՏՏՈ ԷԴՈՒԱՐԴ ԼԵՈՊՈԼԴ ՖՈՆ ՇԵՆՀԱՈՒԶ (1815—1898) — գերմանացի պետական գործիչ, որ իրականացրեց Գերմանիայի միավորումը «վերևից»: Բերլինի կոնգրեսում (1878) Բիսմարկը բացասական դեր կատարեց արևմտահայության պահանջների բավարարման հարցում:

էջ 168. ՍԱՌԱ ԲԵՌՆԱՐ (1844—1923) — ֆրանսիացի նշանավոր դերասանուհի, աշխատել է «Կոմեդի ֆրանսեզ», «Ժիմնազ», «Ոդեոն» և այլ թատրոններում: 1893 թ. գնել է

«Ռենեսանս» թատրոնը, 1898 թ.՝ Փարիզի Շատլե հրապարակում գտնվող թատրոնը, որը «Սարա Բեռնարի թատրոն» անունը ստացավ: Հյուրախաղերով շատ է հանդես եկել, ինչպես և Ռուսաստանում:

էջ 171 ՁՆԹԵ—XV—XIX դդ.-ում այդպես էին կոչվում պարտիզանական ջոկատների անդամները (գերազանցապես հայդուկներ) Բալկանյան թերակղզում, որոնք կռվում էին օսմանյան լծի դեմ: XX դ.-ում «չեթե» անունը յուրացրին ռեակցիոն տարբեր կազմակերպությունների անդամները:

էջ 185. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ (մոտ 346—407)—բյուզանդական եկեղեցական գործիչ, հռետոր, որի համար էլ ստացել է «Ոսկեբերան» մականունը: Հայտնի էր ազնվական դասի շվայտության ու եկեղեցու վերնախավի դեմ ելույթներով: Որոշ ժամանակ եղել է Կոստանդնուպոլսի պատրիարք, հետո աքսորվել է Կիլիկիա: Հեղինակ է բազմաթիվ քարոզների, ներբողների (որոնցից երկուսը նվիրված են Գրիգոր Լուսավորչին), Աստվածաշնչի մեկնաբանությունների: Նրա գործերում բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ կան Կիլիկիայում ապրող հայերի մասին: Նրա գործերը հայերեն են թարգմանել դեռ V դարում:

էջ 195. ՔԱԹՈՒ ՄԵՆԴԵՍ (1841—1909)—ֆրանսիացի երկրորդական գրող, բանաստեղծություններ է գրել պառնասականների ոճով, նովելներն ու վեպերը հիմնականում պատկերում են հոգեկան հիվանդագին երևույթները:

էջ 195. ՊԻԵՌ ԼՈԹԻ (1850—1923)—ֆրանսիացի գրող, իր ժամանակին մասսայականություն վայելող արևելյան տարաշխարհիկությամբ համակված այսպես կոչված «զգայական վեպերի» հեղինակ:

էջ 201. ԿԱՐԼ ԼԻՆՆԵՅ (1707—1778)—շվեդ բնախույզ, բուսական և կենդանական աշխարհի դասակարգման համակարգի ստեղծողը:

էջ 310. ԹԵՐԹՈՒԼԻԱՆՈՍ ԿՎԻՆՏ ՍԵՊՏԻՄՈՒՍ ՖԼՈՐԵՆՍ (մոտ 160—220)—քրիստոնեական աստվածաբան ու գրող, քրիստոնեական աստվածաբանության հիմնադիրներից մեկը. ծնվել է Կարթագենում, կրթությունը ստացել է Հռոմում: Բացասական վերաբերմունք ցուցաբերելով անտիկ գիտության հանդեպ, Թերթուլիանոսը պնդում էր, թե «աշխարհիկ միտքը» հակասում է միստիկականին, կրոնականին: Այդ միտքն արտահայտված է նրան վերագրվող «ճշմարիտ է, քանզի անհեթեթ է» արտահայտությունում:

էջ 310. ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՑԻ կամ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆ (մոտ 330—390)—հույն բանաստեղծ ու արձակագիր, եկեղեցական գործիչ ու մտածող, եկեղեցու հայրերից մեկը. քառասունհինգից ավելի հատերի, 250 ուղերձների և բանաստեղծական բազմաթիվ գործերի հեղինակ, որոնց մեջ հայտնի են «Ճակատագրիս մասին», «Հոգուս տառապանքների մասին» պոեմները և այլն: Սկսած V դարից նրա գրեթե բոլոր ստեղծագործությունները թարգմանվել են հայերեն:

էջ 329. ՎԱՐԴԱՎԱՌ—հայ ժող. նախաքրիստոնեական տոն: Նվիրված է եղել Աստղիկ դիցուհուն, որին ընծայաբերել են ծաղիկներ, հատկապես վարդեր: Հետագայում Գրիգոր Լուսավորիչը փոխել է Հիսուս Քրիստոսի այլակերպության տոնով:

էջ 365. ՂՈՒՐՔԱՆԵՐ—Նեպալի կենտրոնական և հարավարևմտյան շրջաններում բնակվող ժողովուրդների պայմանական անունը: XIX—XX դդ. դուրքաներից բազմաթիվ զինվորներ հավաքագրվեցին անգլիական զաղութային բանակ:

էջ 389. ԳՈՔԼԵՆՆԵՐ—ֆրանսիական դերասանների ընտանիք: Բենուա Կոնստան (Գոքլեն-ավագ, 1841—1909), էռնեստ Ալեքսանդր Օնորե (Գոքլեն-կրտսեր, 1848—1909), Ժան (Գոքլեն-ավագի որդին, 1865—1944), Ժան-Պոլ (Ժանի որդին, ծնվ. է 1924 թ.): Գոքլենների հայտնին եղել է Բենուա Կոնստանը, այսինքն Գոքլեն-ավագը, որ տարիներ շարունակ խաղացել է «Կոմեդի ֆրանսեզում» և Մոլիերի պիեսներում ստեղծել փայլուն կերպարներ:

էջ 401. ԿԱՐԵՆ ԵՓԵ—կին հասարակական գործիչ, ամբողջ կյանքը նվիրել է եղեռնից հետո որբ մնացած երեխաներին, աշխատել է որբանոցում:

էջ 443. ՍԻԲԻԼԱՆՆԵՐ—գուշակուհիներ հունական դիցաբանության մեջ, որոնք էքստազի մեջ կանխագուշակում էին հատկապես ապագա աղետները:

էջ 477. ՇԱՐԼ ԼՈՒԻ ՖԻԼԻՊ (1874—1909)—ֆրանսիացի ռեալիստ գրող, XX դարի ֆրանսիական դեմոկրատական նոր գրականության նախակարապետներից մեկը, «տխրամտորեն սոցիալիստ և աշխատավոր մարդկանց նվիրված բարեկամ» (Լունաչարսկի):

էջ 866. «... ԻՆՉՊԵՍ ԷՎՐԻԴԻԿԵՆ՝ ՀԱԴԵՍԻՆ»—ըստ հունական դիցաբանության երգիչ Օրփեոսի կնոջը՝ Էվրիդիկեին, զբոսանքի ժամանակ խայթեց օձը, և նա մահացավ: Սիրած կնոջը վերադարձնելու համար, Օրփեոսը նրա հետևից իջավ հադես՝ մեռյալների թագավորություն: Այնտեղ իր քնարի նվագով ու երգով շարժեց մեռյալների թագավորության տիրակալ Հադեսի գութը, և նա թույլ տվեց երկրի երես հանել Էվրիդիկեին, սակայն այն պայմանով, որ Օրփեոսը կնոջը չնայի մինչև տուն հասնելը: Օրփեոսը խախտեց այդ պայմանը, և Էվրիդիկեն կրկին իջավ հադես:

Էջ 893. ՆԻՈԲԵ— հունական դիցաբանության մեջ՝ Թեբեի թագավոր Ամփիոնի կինը: Նիոբեն տասներկու երեխա ուներ, և նա պարծենում էր Լետոյի առջև, որն ուներ ընդամենը երկու երեխա՝ Ապոլլոնն ու Արտեմիսը: Վիրավորված Լետոն դրդեց Ապոլլոնին ու Արտեմիսին, և նրանք նետահար արեցին Նիոբեի երեխաներին: Զոհված երեխաների վշտից Նիոբեն քարացավ: Ասացվածք դարձած «Նիոբեի տառապանքներ» բեմային դիմել են բազմաթիվ հեղինակներ:

Էջ 896. ՀԵԿՈՒԲԵ— Տրոյայի թագավոր Պրիամոսի կինը, տասնինը երեխաների մայր, որոնց թվում էին Հեկտորը, Պարիսը, Կասսանդրան, Պոլիմնեսը և ուրիշներ: Տրոյական պատերազմում նա կորցրեց ամուսնուն, տեսավ իր երեխաների մահն ու գերությունը և ինքն էլ դարձավ Ոդիսևսի գերությունը: Համաշխարհային գրականության մեջ Հեկուբեն դարձել է ծայրահեղ վշտի ու հուսաբեկության մարմնացում:

Էջ 896. ԷԼԻԶԻՈՒՄ (Նլիսեյան դաշտեր), լատ.— անդրշիրիմյան աշխարհ՝ արդարների համար, երանելիների կացարան:

Էջ 905. ՋԵՅՄՍ ԲՐԱՅՍ (1838—1922)— անգլիացի պետական գործիչ, իրավաբան, պատմաբան, լորդերի պալատի անդամ: Հիմնել է անգլո-հայկական ընկերությունը: Նրա «Հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում» գիրքը 1915 թ. եղեռնի մասին փաստաթղթերի արժեքավոր ժողովածու է:

Ի. ԿԱՐՈՒՄՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիրք առաջին

ԳԱԼԻՔԸ

Արիության բարձունքից 5
Գլուխ առաջին. *Թեզքերե* 13
Գլուխ երկրորդ. *Քոնաք-համամ-սելամլըք* 32
Գլուխ երրորդ. *Յողոնօլուքի երևելիները* 52
Գլուխ չորրորդ. *Առաջին իրադարձությունը* 80
Գլուխ հինգերորդ. *Աստվածների միջնախաղը* 138
Գլուխ վեցերորդ. *Մեծ ժողովը* 166
Գլուխ յոթերորդ. *Զանգերի թաղումը* 253

Գիրք երկրորդ

ՏԿԱՐՆԵՐԻ ՄԱՔԱՌՈՒՄՆԵՐԸ

Գլուխ առաջին. *Մեր օթևանը լեռան բարձունքն է* 314
Գլուխ երկրորդ. *Տղաների սխրագործությունը* 362
Գլուխ երրորդ. *Հրո թափորը* 437
Գլուխ չորրորդ. *Սաթոյի հանապարհները* 529

Գիրք երրորդ

ԱՆԿՈՒՄ — ՓՐԿՈՒԹՅՈՒՆ — ԱՆԿՈՒՄ

Գլուխ առաջին. *Աստվածների միջնախաղը* 578
Գլուխ երկրորդ. *Ստեփանը հանապարհ է ընկնում և վերադառնում* . . . 616
Գլուխ երրորդ. *Կսկիծը* 661
Գլուխ չորրորդ. *Քայքայում և գայթակղություն* 687
Գլուխ հինգերորդ. *Խորանի բոցը* 736
Գլուխ վեցերորդ. *Գրություն մշուշում* 821
Գլուխ յոթերորդ. *Առ անիմանպի ի մեզ և ի վերս քան զմեզ* 878
Հեղինակի վերջաբանը 885
Ցրանց Վերֆելի և նրա վեպի մասին 886
Ծանոթագրություններ 911

Ֆրանց Վերֆել

ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԸ

Վեպ

Խմբագիր՝ Օ. Հ. Պապոյան
Նկարիչ՝ Վ. Ք. Մանդակունի
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Չրաղաց.կանյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Խաչատրյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Փ. Առշակյան

ИБ — № 2660

Տպագրված է 1987 թ. մատրիցայից։
Ստորագրված է տպագրության՝ 24. 01. 90 թ.։
Չափսը՝ 60×84 1/16։ Թուղթ՝ տպ. № 2։ Տառատեսակը՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ բարձր։ Պայմ. 53,4 մամ.+0,23 մամ. ֆորզ., տպ. 54,32 գուն. թ. օտ., հրատ. 48,20 մամ.+0,34 մամ. ֆորզ.։ Տպաքանակը՝ 50000։ Պատվեր՝ 2624։ Գինը՝ 5 ռ. 90 կոպ.։

«Լույս» հրատարակչություն, Երևան—9, Կիրովի 19 ա։
Издательство «Луйс», ул. Кирова, 19а.

Հայկ ԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-9, ул. Теряна, 91.

Ես պարզապես զբաղմանում եմ,
թե մարդ, որ ծանոթ է
այս աքսանչելի ժողովրդի
ճակատագրին,
ինչպես կարող է
հոգեկան խորը ցնցում չապրել։

Գրիգոր Զահուկյան